



ISSN 1829-3239

ԵՊՀ  
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՏԱՐԵԳԻՐԲ  
2013



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

# ՏԱՐԵԳԻՐԹ 2013

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
2014

ՀՏԴ 01  
ԳՄԴ 91  
S 261

*Հրատարակության է երաշխավորել  
ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի  
գիտական խորհուրդը*

Գլխավոր խմբագիր՝ **Յ.Լ. Սարգսյան**

խմբագրական հանձնաժողով՝

**Ա.Յ.Առաքելյան, Վ.Բ., Բոստանջյան, Կ.Շ.Եղոյան, Թ.Շ. Թորոսյան,  
Գ.Ա.Ղարիբյան, Ս.Լ.Ղանթարջյան, Թ.Ն. Մանասերյան Ա.Խ. Սարկոսյան,  
Ա.Գ. Սինասյան, Յ.Գ.Մնացականյան, Մ.Վ.Սիքայելյան**

Главный редактор: **Г.Л. Саргсян**

Редакционная коллегия: **А.Г.Аракелян, В.Б.Бостанджян,  
Г.А. Гарибян, К.Ш. Егоян, С.Л. Кантарджян, Т.Н. Манасерян,  
А.Х. Маркосян, М.В. Микаелян,  
А.Г. Минасян, Г.Г. Мнацаканын, Т.Ш. Торосян**

Editor-in-chief: **H.L. Sargsyan**

Editorial board: **A.G. Arakelyan, V.B. Bostanjyan, G.A. Gharibyan,  
K.Sh. Yeghoyan, S.L. Ghantarjyan, T.N. Manasseryan,  
A.Kh. Markosyan, M.V. Mikayelyan, A.G. Minasyan,  
H.G. Mnatsakanyan, T.Sh. Torosyan**

S 261 Տարեգիրք 2013, գլխ խմբ.՝ Յ. Լ. Սարգսյան.-: Եր., ԵՊՀ հրատ., 2014: 736 էջ:

Տարեգրքում ներկայացված է տնտեսագիտական ուսումնասիրությունների ընդարձակ շրջանակ: Հիմնականում պահպանելով մախորդ թողարկման խորագրերը՝ երրորդ թողարկումը ներառում է երկարատև կայուն տնտեսական զարգացման արդիական հիմնախնդիրներին և բնակչության շարժերին նվիրված բաժիններ:

ՀՏԴ 01  
ԳՄԴ 91

ISBN 978-5-8084-1861-5

© ԵՊՀ հրատարակչություն, 2014  
© Հեղ. խումբ, 2014

ԲԱԺԻՆ I

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ԱՐԴԻԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ



**ԱՐԾՎԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ**  
*ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր,  
 տնտեսագիտության թեկնածու*

### ԱՐՏԱԳԱՂԹԻ ԵՎ ՆԵՐԳԱՂԹԻ ԽՐԱԽՈՒՄԱՆ ՀՐԱՄԱՅՆԱԿԱՆԸ

Երրորդ Հանրապետության անկախության ողջ ժամանակաշրջանում արտագաղթի խնդիրը միշտ համարվել է արդիական:

Արտագաղթի վերաբերյալ պետական արժանահավատ տվյալների բացակայության պայմաններում, սոցիալ-ժողովրդագրական բազմաթիվ վերլուծություններ և հարցումներ փաստում են, որ միգրացիոն գործընթացներում երկրից հեռանալ ցանկացողների թիվը չափազանց մեծ է: Հայաստանի միգրացիոն գործընթացներն ու ցուցանիշները էականորեն տարբերվում են համաշխարհային միջին ցուցանիշներից: Այսպես, եթե Հայաստանի բնակչությունը կազմում է աշխարհի բնակչության մոտ 0,05%-ը, ապա աշխարհի միգրանտների մեջ կազմում է 0,5%-ը, այսինքն անհամամասնությունը շուրջ 10 անգամ է: Բացի այդ, եթե աշխարհի միգրանտների թիվը աշխարհի բնակչության մեջ կազմում է շուրջ 0,3%-ը, ապա Հայաստանի միգրանտները կազմում են Հայաստանի բնակչության շուրջ 30%-ը. անհամամասնությունը՝ 100 անգամ<sup>1</sup>:

Ի տարբերություն նախկինում դիտված այս երևույթի տարերային դրսևորումների, ներկայումս Հայաստանում այն ստացել է յուրահատուկ ինքնակազմակերպման ձև և իր բնույթով դարձել է ցանցային<sup>2</sup>: Այսինքն, Հայաստանից հեռացողները նպաստում, իսկ հաճախ նաև կազմակերպում են իրենց բարեկամների, մտերիմների և շրջապատի երկրից մեկնումը:

Արտագաղթողների մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմում երիտասարդները, միջինից բարձր կրթական ցենզ ունեցող, ըստ էության վերարտադրողական տարիքի և առավել մեծ աշխատանքային արտադրողականության պոտենցիալ ունեցող անձինք: Առկա է նաև կրթական, գիտական ու մշակութային ներուժի արտահոսք:

Փաստորեն ստեղծվել է մի վիճակ, երբ լրացնելով ժողովրդագրական բացասական միտումներ առաջացնող ցածր ծնելիության, հիվանդացության և մահացության դեռևս բարձր մակարդակներին, արտագաղթը ստանում է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությանը նշված ազգային անվտանգության սպառնալիքի կարգավիճակ<sup>3</sup>:

<sup>1</sup> Տես՝ **Գ. Պողոսյան**, Արդի ժողովրդագրական վիճակը Հայաստանում և արտագաղթի խնդիրը, ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովի նյութերը 18.04.2012 թ.:

<sup>2</sup> Տես՝ **Պ. Արությունյան**, Новые перипетии армянской миграции: аккумулятивная причинность и возможные последствия // Տարեգիրք 2011, Տնտեսագիտության ֆակուլտետ / Գլխ. խմբ. տ.գ.դ. Հ. Լ. Սարգսյան: - Եր.: ԵՊՀ հրատ., 2011. - 504 էջ (հետագայում «Տարեգիրք 2011»), էջ. 54-69:

<sup>3</sup> Տես՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ռազմավարություն» // Հայկական բանակ, 2(48), 2006 թ.:

Հետևաբար, այսպիսի կարգավիճակ ստացած երևույթի դեմ պայքարը պետք է լինի ծրագրային և համակարգված: Երկրի առջև ծառայած այլ կարևորագույն խնդիրները նույնպես պահանջում են լուծումներ, սակայն պահի հրատապությունը պահանջում է մշակել և գործադրել արտագաղթի տեմպի նվազեցման համալիր ծրագիր:

Միջազգային մակարդակում դիտվող միգրացիոն տեղաշարժերը տարբեր երկրների համար ձևավորում են մարտահրավերներ: Դրանք տարբեր են, ըստ երկրների առանձնահատկությունների, սակայն գրեթե բոլորի հիմքում ընկած է երկրի անվտանգ և կայուն զարգացումը:

Հայտնի է. պետության հզորության հարցում ի թիվս այլ կարևոր գործոնների կենտրոնական տեղում են երկրի ժողովրդագրական բնութագրիչները: Ինչպես գիտականորեն հիմնավորված է, ազգային հզորությունը կարող է ներկայացվել մի բանաձևով, որտեղ պետության կամ ազգային հզորությունը = (բնակչության և ժողովրդագրական, ինչպես նաև տարածքի բնութագրիչներ + տնտեսական կարողություն + ռազմական կարողություն) x (ստրատեգիական նպատակ + ազգային ստրատեգիա հետամտելու կամք)<sup>1</sup>: Այս բանաձևը ցույց է տալիս թե որքան փոխկապված են միմյանց հետ սովորական կյանքում առաջին հայացքից իրար հետ առնչություն չունեցող աշխատավարձի մեծությունը և պետության ռազմական կարողությունը, հարկային համակարգն ու տարածքի օգտագործման (հողերի արդյունավետ յուրացման) մակարդակը և այլն: Սակայն դա փոխկապակցվածության բացակայության միայն թվացյալ տպավորություն է, մինչդեռ խորքում երկրի առջև ծառայած բազմաբնույթ հիմնախնդիրները ոչ միայն սերտորեն կապված են միմյանց հետ, այլև դրանց լուծման համար առաջարկվող ցանկացած առաջարկ պետք է դիտարկել համակարգային լուծման համատեքստում, որպես պատճառների վերացմանը միտված գործողությունների ամբողջություն:

Մեր կարծիքով արտագաղթի պատճառներն առաջանում են արտածին և ներքին մի շարք գործոնների համալիր ազդեցության ներքո: Արտածին գործոնների մեջ հատկապես հարկ է առանձնացնել այլ երկրների կողմից վարվող ներգաղթի քաղաքականությունը, աշխարհաքաղաքական, այդ թվում տարածաշրջանում ձևավորված մարտահրավերները, արտաքին կենտրոնների վարած քաղաքականությունը, Հայաստանի և Արցախի ո՛չ պատերազմ-ո՛չ խաղաղություն փաստացի վիճակը, Հայաստանի տևական շրջափակումը և անորոշությունն այս հարցում և հակահայաստանյան քարոզչությունը:

Արագաղթի ներքին գործոնները առավել շատ սոցիալ-տնտեսական, սոցիալ-քաղաքական և սոցիալ-հոգեբանական են: Սոցիալ-տնտեսական գործոնների ներքո հարկ է առանձնացնել արժանապատիվ վարձատրությամբ աշխատանք ունենալու հնարավորությունների (հատկապես երիտասարդների համար) սահմանափակ լինելը, հասարակության հարուստ և աղքատ շերտերի խիստ գերբևեռացումը, սոցիալական նվազագույնից ցածր եկամուտ ունեցող քաղաքացիների մեծ տեսակար կշիռը, տնտեսության կառուցվածքային և հակամենաշնորհային քաղաքականության գրեթե բացակայությունը, Երևանից դուրս, հատ-

<sup>1</sup> Տես՝ **Լ. Խուրշուդյան**, «Հայոց Ազգային գաղափարախոսություն» աշխատությամբ ներկայացված Դ. Յաբլոնսկու մոտեցումը (Parameters, v27, N1, Spring, 1977), Երևան, 1999 թ.:

կապես գյուղական բնակավայրերի թերազարգացվածությունը, ագրարային հատվածում անարդյունավետ քաղաքականությունը:

Սոցիալ-քաղաքական գործոնների շարքում կանխորոշողը քաղաքական համակարգի չկայացվածությունն է, ընտրական համակարգի անկատար վիճակը, «ամեն ինչ հաղթողին է» կարծրատիպի ամրացումը, անկախ դատական համակարգի չկայացվածությունն ու իրավապահ այլ մարմինների նկատմամբ հասարակության մի ստվար հատվածի անվստահությունը:

Սոցիալ-հոգեբանական գործոնների մեջ առանձնանում է Հայաստանի անկախության վերանվաճումից հետո առավել բարեկեցիկ կյանքով ապրելու չիրականացված ապաստումն ու դա արտահայտող ընդգծված բացասական տեղեկատվությունը: Գաղտնիք չէ, որ փոփոխությունների սպասող հանրությունը, ստանալով բացասական տրամադրություններ առաջացնող մեծածավալ տեղեկատվությունն և համադրելով այն իրականության հետ, սոցիալ-հոգեբանական առումով հայտնվում է մի վիճակում, երբ սասանվում են հույսն ու հավատը, խաթարվում է լավատեսությունը: Այսպիսի հասարակությունում հաջողության հասնելու հիմնական միջոցներ են դիտվում ստորաքարշությունը, կաշառակերությունը, վաշխառությունը, խնամառությունը, ծախվածությունը և նմանատիպ այլ բացասական հատկանիշները, իսկ դրանք չընդունողների մեծամասնության համար՝ այլ երկրներում բախտ որոնելու որոշման կայացումը: Հաճախ գերիշխող է դառնում ապագայի նկատմամբ հոռետեսական պատկերացումն ու սասանված հավատը: Ինչպես արդարացիորեն նշում է ԱՄՆ երեք նախագահների ավագ խորհրդական Փաթ Բյուքենենը. Այս կամ այն ժողովրդին սպանել պետք չէ, նախ սպանեք ազգի հավատը, և նա կդադարի վերարտադրվելուց<sup>1</sup>:

Հասարակության մոտ այս բացասական դրսևորումները կասեցնելու կամ մեղմելու համար կարևորվում են պետական, հասարակական, քաղաքական բոլոր ինստիտուտների կողմից մարտահրավերի ընկալունակության բարձր աստիճանը, իրատեսական նպատակի ձևակերպումն ու դրան հասնելու ժամկետը: Հայտնի է, որ առաջացած իմունային դեֆիցիտը հնարավոր է հաղթահարել ամնվազն նույնքան ժամանակահատվածում որքանում այն առաջացել է, և հաշվի առնելով հրապարակումների և քննարկումների հակառակ ազդեցության ռիսկը, արտագաղթի դեմ պայքարի միջոցառումներում պետք է նպատակադրել դրա տեմպերի նվազեցումը և բացառել ավելորդ շտապողականությունը:

Վերլուծելով արտագաղթի պատճառները կարելի է ձևակերպել, որ նվազագույնը երկրում պետք է ձևավորել մարդու (քաղաքացու) երեք կարևոր՝ կյանքի, ազատության և սեփականության անձեռնամխելի իրավունքների իրացման երաշխավորված համակարգ, որն ունակ կլինի ազդելու հեռացողների որոշումների փոփոխության վրա՝ ի օգուտ երկրում արժանապատիվ ապրելու որոշման:

Այդ առումով, հաշվառելով նաև միջազգային փորձը, կարող ենք ընդհանրացնել, որ մշակման և գործադրման են ենթակա գործողություններ, որոնք ուղղված կլինեն արտագաղթ ծնող պատճառների վերացմանը՝ հիմքեր ստեղծելով ներգաղթի խրախուսման համար:

Մեր կարծիքով դրանք կարող են ամբողջացվել հետևյալ ուղղություններում.

<sup>1</sup> Տես՝ Վ. Թովմասյան, Ժողովրդագրական մարտահրավերները և բնակչության հեռանկարները / Երևան, 2013 թ., էջ 198:

1. Կադրային քաղաքականություն: Հարկ է տարանջատել բիզնեսն ու քաղաքականությունը: Վարել անձի չվարկաբեկվածության, անհրաժեշտ ունակության ու փորձառության վրա հիմնված հանրային կադրային քաղաքականություն: Պաշտոնատար անձի համար պետք է գործի թափանցիկ և հանրությանը հաշվետու լինելու սկզբունքը: Քաղաքացիական ակտիվ դիրքորոշում ունեցող երիտասարդները քաղաքական ու կառավարման համակարգում ինքնադրսևորման լայն հնարավորություններ պետք է ունենան: Բացառությամբ առանձին քաղաքական պաշտոնների, պետք է բացառել կուսակցական պատկանելիությամբ պաշտոնի նշանակման ձևավորված արատավոր պրակտիկան, իսկ պաշտոնի նշանակելուց հետո պաշտոնյան պետք է դադարեցնի իր կուսակցական պատկանելիությունը կամ կասեցնի այն պաշտոնավարման ողջ ժամանակահատվածում:

2. Տնտեսական քաղաքականություն: Հարկային և մաքսային ոլորտը պետք է դարձնել կանխատեսելի, ներդրումները խրախուսող: Օրենքով պետք է ամրագրել, որ հատկապես փոքր ու միջին բիզնեսի համար հարկային դրույքաչափերի բարձրացումը, հարկերի հաշվարկման և վճարման կանոնների բարդացումը չեն կարող ընդունման պահից 3 տարուց ոչ շուտ ուժի մեջ մտնել: Ստեղծել նոր և արդարացի վարձատրությամբ<sup>1</sup> աշխատատեղեր: Սոցիալականից պետք է անցնել արդյունաբերական գյուղատնտեսության: Խոշոր արդյունաբերական և ագրոարդյունաբերական համալիրի ձևավորմանը միտված քաղաքականության հայեցակարգի հետ հարկ է մշակել փոքր ու միջին բիզնեսի զարգացման ամբողջական ծրագիր, որի ելքային արդյունքները պետք է լինեն բարձր արտադրողականություն ունեցող աշխատատեղերը և մրցունակ ապրանքները: Որպես անցումային փուլ առաջիկա 3 տարիների համար պետք է սահմանել շրջանառության հարկի և արտոնագրային վճարների գծով հարկային դրույքաչափերի զրոյացում, ինչի արդյունքում կարող ենք ակնկալել շուրջ 200 հազար հանրագումարային նոր ստեղծվող աշխատատեղ<sup>2</sup>:

Հարկ է ստեղծել արտաքին շուկաներ այլ երկրներից ներմուծվող ապրանքային շուկաների ուսումնասիրման հետազոտական խումբ, որը պետք է ուսումնասիրի այդ ապրանքատեսակների արտադրության կազմակերպման հնարավորությունը Հայաստանում, ներկայացնի դրա համար անհրաժեշտ կադրային-մասնագիտական, ֆինանսական և կազմակերպական պահանջները: Ձևավորված արտադրական պատվերը Հայաստանում տեղաբաշխելու ժամանակ նկատի պետք է առնվեն ինչպես հայաստանցի գործարարները, այնպես էլ այլ երկրներում գործունեություն ծավալող հայերը, որոնք պատրաստ են հայրենիքում կազմակերպել տվյալ արտադրությունը: Տեղաբաշխված արտադրական պատվերների անհրաժեշտ չափանիշները պետք է համարվեն աշխատատեղերի քանակը, վարձատրության համակարգը, ապրանքի որակը, որոնց հսկողության լիազորությունը պետք ստանձնի կառավարությունը՝ աջակցելով նաև այդ ապրանքատեսակների մուտքին տվյալ շուկաներ: Հետազոտական խումբը առանձին ու-

<sup>1</sup> Տե՛ս Ա. Մինասյան, Նվազագույն աշխատավարձի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները և դրանց լուծման օրենսդրական հնարավորությունները Հայաստանում // Տարեգիրք, 2011, էջ 200-210:

<sup>2</sup> Այս արտոնությունը պետական բյուջեի համար կկազմի տարեկան մոտ 21 մլրդ. ՀՀ դրամ հարկային մուտքերից նվազեցում, իսկ երեք տարիների համար, հաշվի առնելով նաև նոր աշխատատեղերից սպասվող եկամտային հարկի մուտքը զուտ չստացվող մուտքը կկազմի մոտ 55 մլրդ. ՀՀ դրամ: Այսինքն մեկ աշխատատեղի ստեղծման բյուջետային ծախսը կկազմի շուրջ 275 հազար դրամ:

շաղրություն պետք է դարձնի նաև այն ձեռնարկությունների արտադրական կարողությունները օգտագործելու վրա, որոնք տարբեր ծրագրերի շրջանակներում հանձնվել են այլ երկրների սեփականությանը (օրինակ՝ գույք պարտքի դիմաց Ռուսաստանին հանձնված ձեռնարկությունները: Սա կարող է դիտվել նաև Ռուսաստանի կողմից իրականացվող «հայրենակիցներ» ծրագրի այլընտրանք):

3. Սոցիալական ոլորտում առաջնահերթությունները պետք է լինեն կրթությունը, այն դարձնելով առավել որակյալ և մատչելի (երեխաներ ունեցող ուսանողներին ազատել ուսման վճարից, ամբողջությամբ գործադրել պարտադիր զինվորական ծառայությունն անցած երիտասարդների՝ ուսումնական հաստատություններում անվճար սովորելու ծրագիրը), աշխատաշուկայի հետ կապ ապահովող<sup>1</sup>, սոցիալական պաշտպանությունը՝ ապահովելով յուրաքանչյուր քաղաքացու՝ նվազագույնից ոչ ցածր եկամուտ և բնակտարածք ունենալու իրավունքի իրացումը, առողջապահությունը՝ ներդնելով առողջության պարտադիր ապահովագրության համակարգ: Պետք է ընդլայնել և առնվազը կրկնակի մեծացնել հանրային ծառայության սոցիալական փաթեթը՝ ներառելով առողջապահության, մշակույթի, կրթության և գիտության ոլորտի բոլոր աշխատակիցներին: Ամբողջությամբ վերանայման կարիք կա անապահովության ընտանեկան նպաստների համակարգում: Մասնավորապես, պետք է ձևավորել հիմնադրամ և սահմանել մինչև 7 տարեկան երեխաների ամենամսյա նպաստ, որը հիմնված է օբյեկտիվ և կոռուպցիոն ռիսկերից զուրկ չափանիշի վրա:

4. Արդարադատության և անվտանգության համակարգերում հրամայական են անպատժելիությունը վերացնելը, արդարադատության հաստատման օրենսդրակիրառական վերափոխումներ իրականացնելը<sup>2</sup>: Պետք է բացառել գերակա հանրային շահի և այլ հիմնավորումներով սեփականության իրավունքից զրկելը: Բարձրացնել երկրի անվտանգության մակարդակը, ընդլայնել սփյուռքին հանրապետության զարգացման գործում ներգրավելու գործիքակազմը<sup>3</sup>, իրականացնել վերաբնակեցման ծրագիր՝ հիմնված տարածքների համաչափ և բազմակենտրոն զարգացման հայեցակետի վրա<sup>4</sup>:

<sup>1</sup> Տնտեսության կարիքներին և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կարևոր է ներդնել կրթական հաստատությունների ռեյտինգավորման համակարգ՝ նպաստելով կրթության նկատմամբ մասնավոր պահանջարկի ձևավորմանը:

<sup>2</sup> Քրեական արդարադատության ոլորտում առաջնահերթ են համարվում հանցագործությունների համար սահմանված պատիժների համապատասխանեցումը հանցագործության հանրային վտանգավորության աստիճանին, պատվիրված քննությունները բացառելը, կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու դեպքերի նվազեցնելը, քրեակատարողական հիմնարկները բեռնաթափելը և այլն:

<sup>3</sup> Սփյուռքի մասնակցությամբ Հայաստանում տեխնոլոգիական նորարարությունների ներդրման, ժողովրդագրական վիճակի բարելավման, ինչպես նաև երկրի անվտանգության համակարգում զինվորական ծառայության մեջ ներգրավելու համակարգերի մշակումն ու գործադրումը կարող է հիմնվել միջազգային լավագույն փորձի վրա:

<sup>4</sup> Վերաբնակեցման ֆինանսավորման նպատակով հարկ է ձևավորել սահմանամերձ բնակավայրերի և ազատագրված տարածքների վերաբնակեցման հիմնադրամ և կազմակերպել վերաբնակեցման աշխատանքները: Վերաբնակեցմանը էականորեն կարող է օգնել նաև ոչ մեծ և միջին ծանրության տնտեսական հանցագործությունների (ինչպես նաև մինչև 4 տարվա ազատազրկման դատապարտված այլ բնույթի հանցագործությունների) համար դատապարտված անձանց սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերում պատժի կրկնակի չափով բնակվելու այլընտրանքային կամ պայմանական պատժատեսակով փոխարինելու հնարավորության տրամադրումը: Ընդ որում, դատապարտվածը կարող է բնակություն հաստատել նաև իր ընտանիքով, որի դեպքում նրանց կտրամադրվի անհրաժեշտ նվազագույն ֆինանսավորում:

5. Քարոզչության բնագավառում պետք է դիմագրավել հակահայաստանյան քարոզչությանը, ձևավորել Հայաստանում արժանապատիվ ապրելու համոզումն ու քաղաքացու կերպարը:

Արդեն վերը նշեցինք, որ արտագաղթի տեմպերի նվազեցման ծրագրի գործադրման մեջ պատասխանատվություն պետք է ստանձնեն պետական և հասարական բոլոր ինստիտուտները՝ քաղաքական իշխանությունն ու ընդդիմությունը, զանգվածային լրատվության միջոցները, քաղաքացիական հասարակությունը, եկեղեցին, սփյուռքի ազդեցիկ շրջանակները, մտավորականությունը և հատկապես երիտասարդությունը:

Որպես ծրագրի կատարման հետևողականության դրսևորում կարևոր է համարվում երկրում իրականացվող բարեփոխումների և այս ծրագրի մշտադիտարկման հանձնաժողովի ձևավորումը՝ հասարակությունում վստահություն վայելող և հեղինակություն ունեցող անձանց մասնակցությամբ:

#### **ԱՍՓՈՓՈՒՄ**

Յոդվածում դիտարկվում է արտագաղթի խնդիրը, որպես Հայաստանի հիմնական ներքին մարտահրավեր և ազգային անվտանգության սպառնալիք: Ներկայացվում են արտագաղթի գլխավոր պատճառները և դրանց վերացման նպատակով առաջարկվում են արտագաղթի նվազեցման ծրագրային հիմնադրույթներ:

#### **АННОТАЦИЯ**

#### **МИНАСЯН А. - ИМПЕРАТИВ СОКРАЩЕНИЯ ЭМИГРАЦИИ И СТИМУЛИРОВАНИЯ ИММИГРАЦИИ**

В статье рассматривается вопрос эмиграции, как основной внутренний вызов и угроза национальной безопасности Армении. Представляются главные причины эмиграции и выдвигаются программные тезисы по её снижению.

#### **SUMMARY**

#### **MINASYAN A. – PRIORITY OF EMIGRATION REDUCTION AND IMMIGRATION STIMULATION**

The emigration issue is considered as the basic internal challenge and threat to national security. The main causes of emigration as well as steps to reduce emigration are stated.

**ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

*տնտեսագիտության դոկտոր,  
ԵՊՀ «Կառավարման և գործարարության» ամբիոնի պրոֆեսոր,  
տնտեսագիտության ֆակուլտետի դեկան  
էլ. փոստ՝ sargsyan.y.su@gmail.com*

**ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒ ԶՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ  
ՄՇԱԿՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐԶ****1. Ներածություն**

ՀՀ տնտեսության կայուն առաջընթացի ապահովման առաջնահերթություններից մեկը հողօգտագործման ու ջրօգտագործման ազգային պետական ծրագրի (ՀԶԱԾ) կենսագործումն է լինելու:

«Եթե հաջողվեր ժողովել մեր երկրի տարեկան բյուջեին համազոր դրամազուլուխ, այն տնտեսության ո՞ր ոլորտներում կներդնեիք» հնարավոր հարցին մեր պատասխանն աներկբա է. նախ և առաջ՝ գյուղատնտեսությունում: Այս պնդումը կատարում են՝ քաջ գիտակցելով, որ կլինեն բազմաթիվ ընդդիմախոսներ, ովքեր գյուղատնտեսության ոլորտի ընտրությունը առնվազն վիճահարույց կհամարեն, քանի որ այն խիստ ռիսկային է: ՀՀ-ում բարձր տեխնոլոգիաներին ու գիտելիքահենք տնտեսությանը նախապատվություն տալը տեսանելի հորիզոնում խիստ ցանկալի, սակայն մեծ արդյունքների ակնկալությունը իրատեսական չէ մեկ պարզ պատճառով՝ բացակայում են անհրաժեշտ տեխնոլոգիաները, գիտակրթական համակարգերն ու կենտրոնները<sup>1</sup>: Խելամիտ մոտեցման դեպքում որոշ բարձր տեխնոլոգիաներ կարող են արդյունավետ կիրառում գտնել նաև գյուղատնտեսության ոլորտում՝ հողօգտագործման, ջրօգտագործման մեջ: Ի վերջո, զարգացած և նորարարություններով առանձնացող երկրների դասակարգումը վկայում է, որ ընդգծված առաջընթաց ունեն այն երկրները, որոնք նախ և առաջ հաջողություններ են արձանագրել ավանդական ռեսուրսների օգտագործման բնագավառում:

Ներկա ոչ բարվոք տնտեսության ոլորտում բեկումն մտցնելու համար գոյություն չունի ներդրումային առավել հավակնոտ ու մասշտաբային այլընտրանք, քան ավանդական ռեսուրսների՝ մեր երկրի հողի, ջրի, «մեզ բաժին հասած» արևի էներգիայի ու մարդկային կապիտալի պաշարամիջոցների արդյունավետ օգտագործումը: Մրցակցային այլընտրանք կարող էր հանդիսանալ հզոր ատոմակայանի կառուցումը:

Սույն հրապարակման առանցքային տրենդը կամ հիմնական գաղափարն այն է, որ Հայաստանի զարգացման ներկա փուլում տնտեսության պետական

---

<sup>1</sup> ՀՀ արտաքին առևտրի հաշվեկշիռը տեղեկատվական տեխնոլոգիաների և սպառողական էլեկտրոնիկայի գծով 2005-2012 թթ. բացասական է: Ավելին, բարձր տեխնոլոգիաների ներմուծումն ավելի քան քսան անգամ գերազանցում է արտահանմանը, իսկ դրա բաժինը չի գերազանցում ընդհանուր արտահանման 1%-ը: Սա այն դեպքում, երբ բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացումը համարվում է տնտեսության գերակա ուղղություններից մեկը:

կարգավորման ու հատկապես խնդրո առարկա՝ գյուղատնտեսության ոլորտին ու գյուղի զարգացման խնդիրներին պետության՝ շատ դեպքերում անհաղորդ լինելը ոչ միայն չի բխում մեր երկրի ազգային շահերից, այլև կորստաբեր է ՀԱԾ-ի կենսագործման հապաղման պարագայում: Տնտեսության անափ լիբերալացումը, եթե չի ուղղորդվում առաջընթացի ապահովման համապարփակ լուծումներով, կարող է առանձին դեպքերում կործանարար հետևանք ունենալ, ինչպես դա եղավ մեզ մոտ և շարունակվում է հողօգտագործման (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և քրօգտագործման բնագավառներում:

Շուկայական տարերքին կուլ չզնայու և տնտեսվարմանը անհարկի միջամտությունից խուսափելու համար, ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, անհրաժեշտ է ճիշտ դիրքավորվել տնտեսության պետական կարգավորման բազմավեկտոր ուղղություններում՝ սկսած արդյունքների ստեղծումից մինչև դրանց բաշխումն ու վերաբաշխումը: Գիշտ դիրքավորումը, որն, ի դեպ, միտված է տնտեսության արդյունավետ ու մրցունակ կառուցվածք ունենալուն, վճռորոշող է եղել ոչ միայն անցումային, այլև զարգացած երկրների համար:

Պետության կամ պետական հատվածի չափերի մասին դատողությունները կարող են տարբեր լինել: Հաճախ դա կախված է քննարկման նպատակից կամ համատեքստից, այսինքն՝ թե ինչ խնդիրների է վերաբերում քննարկումը՝ համախառն թողարկմանը, աշխատանքի շուկայի՞ն, ներդրումների ծավալների՞ն ու ուղղությունների՞ն և այլն, շատ անգամ էլ՝ մենք պետությունը չափելու ենք հենց այդ իրողություններին համապատասխան:

Հայաստանի Հանրապետությունում պետությունը մեծ չէ, տիրապետող է այն տեսակետը, որ անգամ ավելի փոքր է, քան անհրաժեշտ է: Սակայն այդ մասին առավել լրիվ պատկերացում կազմելու համար հարկավոր է Հայաստանի Հանրապետության պետական հատվածը չափել այլ երկրների համատեքստում (տես աղյուսակ 1): Համեմատությունը հաստատում է, որ Հայաստանը պետությամբ հատուկ բնութագրիչների առումով փոքր է, ուստի պետական հատվածի ազդեցությունը տնտեսության վրա ևս չի կարող մեծ լինել:

Համաշխարհային տնտեսությունում տեղի ունեցող խիստ հակասական գործընթացները, որոնք մասնավորաբար դրսևորվում են ծախսերի ու արդյունքների անհամաչափություններով, չեն շրջանցում ՀՀ տնտեսությունը, ուստի չեն փոխում ՀՀ առջև ծառայած նվազագույն խնդիրը՝ մեծացնել դիմադրողականությունը հաղթահարելու տնտեսության տարատեսակ ճգնաժամերը: Հանրային կյանքում, տնտեսությունում ճգնաժամերի հաղթահարումը և, ընդհանրապես ապաքինման գործընթացը բազմապրոֆիլ ու բազմաֆունկցիոնալ է: Եթե բնության մեջ թույլը, տկարը ենթակա է սանձաքրման, ապա տնտեսության մեջ սնանկի առողջացումը իրականացվում է հատուկ ծրագրային գործընթացների կիրառմամբ: Ի դեպ, սնանկ կարող է ճանաչվել և՛ երկիրը, և՛ ընկերությունը, և՛ տնտեսության մի ամբողջ ոլորտ: Մոտեցումների ընդհանրական եղանակների պարագայում՝ հակաճգնաժամային ներազդման ու առողջացման մեթոդներն են տարբեր:

*Աղյուսակ 1*

**Պետական հատվածի չափը մի շարք երկրներում, 2004 թ.  
(ՀՆԱ-ի մեջ տոկոս)**

	Ավելացված արժեք	Եկամուտներ	Ծախսեր	Սպառում
Հայաստան	6	15	17	11
Շվեդիա	19	58	57	27
Դանիա	20	57	55	27
Ֆրանսիա	16	50	53	24
Նորվեգիա	16	58	46	22
Ֆինլանդիա	16	53	51	23
Սեծ Բրիտանիա	11	41	44	21
Գերմանիա	9	43	47	19
Եվրամիության 15 երկիր	13	45	47	21
ԱՄՆ	11	32	36	16
ճապոնիա	9	30	38	18
Ռուսաստան	9	37	34	16
Ուկրաինա	11	36	40	18
Չեխիա	12	41	44	22

*Աղբյուրը՝ 4. Գաբրիելյան, 7. Սարգսյան, Տնտեսության հանրային հատվածի ընդհանուր բնութագիրը // «Հանրային կառավարում», 2009, 2 («Պետական ծառայություն», Երևան, 2009), էջ 73:*

ՀՀ տնտեսության վերելքի ռազմավարության նախապայմանը մրցակցային բարենպաստ միջավայր ստեղծելուն զուգընթաց տնտեսությունում մրցունակ կառուցվածքի ձևավորումն է, որը կարող է խարսխվել հողօգտագործման ու ջրօգտագործման ազգային պետական ծրագրի վրա: Վերջինիս մշակումը հնարավորություն կընձեռի ունենալու ոլորտի զարգացման նպատակային ուղեգիծ՝ հրաժարվելով անցած տարիներին իրականացված պահանջարկային կարճաժամկետ կարգավորման (այն էլ՝ ոչ համալիր) քաղաքականությունից:

**2. ՀՋԱԾ-ի պահանջվածությունը**

Անկախությունից ի վեր այդպես էլ չի ձևավորվել գիտականորեն հիմնավորված ու հետևողականորեն կենսագործվող *զարգացման ամբողջական տեսլական* երկրի տնտեսության երկարաժամկետ զարգացման կտրվածքով, որում առանձնացվեր կոնկրետ ոլորտի, տվյալ դեպքում՝ գյուղատնտեսության ու գյուղի զարգացմանն ուղղված համակարգված գործողությունների ամբողջական փաթեթ, որոնք պետք է մշակվեն ու գործադրվեն՝ առավելագույնս հաշվի առնելով երկրաքաղաքական, ազգային անվտանգության, ռեսուրսային (պաշարամիջոցների), սոցիալ-հոգեբանական, նոր մշակույթի ձևավորման, համեմատական առավելությունների ու այլ առանձնահատկությունները: Հետևաբար, ՀՋԱԾ-ի դրույթները պետք է մշակվեն ու գործադրվեն այս համատեքստում:

Որքան էլ ռեսուրսները սահմանափակ լինեն, միշտ կան դրանց վատ, լավ կամ առավել լավ օգտագործման չափանիշներն ու հնարավոր լուծումները: Ազգային շահի համատեքստում (առողջ սերունդ, պաշտպանունակություն, տնտե-

սական անվտանգություն, արտադրանքի մրցունակություն և այլն) առաջադրվող նպատակների ու բնագծերի հասանելիությունն ապահովող ենթաօրագրերը բազմազան են՝ «Պարեն», «Էներգետիկա», «Տեղեկատվական տեխնոլոգիաներ», «Կրթություն, առողջապահություն և մշակույթ» և այլն, և այս ցանկում՝ «ՀՋԱԾ»-ի ընդգրկումը, ապա և դրանց մանրակրկիտ մշակումն ու իրագործումը կդառնան վերելքի ռազմավարության գործուն միջոցներ:

Ինչպես իրավացիորեն նշվում է. «Դեպի զարգացում անցման և տնտեսությունում էական կառուցվածքային տեղաշարժերի միջոցով է միայն հնարավոր ապահովել իրատեսական համարվող 5-7 %-ից բարձր տնտեսական աճ: Կարելի է նշել, որ Հայաստանի տնտեսությունն ունի 4-4,5 տոկոսանոց աճի միջինժամկետ տրենդը գերազանցելու ներուժ, որը, սակայն, կարող է իրականանալ միայն ուղղորդված ջանքերի շնորհիվ: Այս առումով ՀՀ Կառավարության ծրագրում նախանշված 5-7 տոկոսանոց միջինժամկետ աճը թե՛ հասանելի է, թե՛ հավակնոտ, քանի որ առանց նոր փոփոխությունների, իներցիայով գրեթե անհնար կլինի ոչ միայն 5-7 տոկոսանոց աճն ապահովելը, այլև տրենդային 4-4,5 ցուցանիշին հասնելը»<sup>1</sup>: Ողջ խնդիրը սակայն, այն է, որ նշված 5-7 տոկոս աճը ոչ մի կերպ չպետք է դառնա նպատակային բնագիծ: Դեպի զարգացում անցումն ապահովելու, ստեղծված իրավիճակում բեկում մտցնելու, ՀՀ Կառավարության ծրագրային խնդիրների ու առաջնահերթությունների շարքում չթերազնահատելով մյուս նպատակային ծրագրերի դերը, ՀՋԱԾ-ը պետք է դիտվի մեր հասարակության դեռևս չարժևորված, սակայն իրական առաջընթաց պարունակող մակրոտնտեսական կայունացման ու զարգացման բազային երաշխիք:

Բանն այն է, որ՝ իրականացվող ոչ բավարար տնտեսական քաղաքականության պատճառով սկսած 1992 թ.՝ ՀՀ անհրաժեշտ տնտեսական աճը և սոցիալական առաջընթացը հետաձգվել են անորոշ ժամանակով, հանգեցրել մակրոտնտեսական իռացիոնալ կայունության: Դեռևս չեն ապահովվում տնտեսական կայուն աճը գործազրկության ցածր մակարդակում (ներքին հավասարակշռություն) և դրամական միջոցների ցանկալի ներհոսքը (արտաքին հավասարակշռություն)<sup>2</sup>: Այս ամենի ակունքները պետք է փնտրել նաև ՀՋԱԾ-ի հիմնադրույթների բացակայությամբ: ՀՋԱԾ-ի պահանջվածության առումով, ինչպես նշվել է, ոչ պակաս կարևոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ տնտեսության ագրարային հատվածին բնորոշ են անընդհատ ծագող, առաջացող ռիսկերը, որոնք պետք է հնարավորինս չեզոքացվեն:

Կառավարվող ռիսկայնությամբ, բարձր արտադրողականությամբ գյուղատնտեսությանը ներհատուկ է համեմատական առավելությունը: Բարեբախտաբար, ՀՀ կորցրել է երբեմնի համեմատական առավելություններից մեկը՝ էժան աշխատուժի երկիր լինելը: Միջին աշխատավարձը այլևս գերազանցում է 150 հազար դրամը: Մեր ավանդական ռեսուրսների՝ հողի, ջրի ու մարդկային կապիտալի հնարավորությունների ու տնտեսական բավարար մեխանիզմների գործադրման շնորհիվ Հայաստան երկիրը կարող է վերածվել անդաստանի:

<sup>1</sup> Վ. Գաբրիելյան, Տնտեսագիտության և Հայաստանի տնտեսության մարտահրավերները: ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետ, Տարեգիրք 2012 [Տնտեսագիտության ֆակուլտետ], Երևան, ԵՊՀ հրատ., 2013 թ., էջ 11:

<sup>2</sup> Ս. Դավոյան, Ա. Մարկոսյան, Հ. Սարգսյան, Վերափոխումները անցումային երկրների տնտեսություններում, Երևան, Տիգրան Մեծ հրատ., 2003 թ., էջ 239:

Այս հրապարակման մեջ չենք անդրադառնալու գյուղկոտպերացիայի ու ագրարային տնտեսվարման այլ ձևերի զարգացման, գյուղմթերքների իրացման և վերջապես գյուղական բնակավայրերի կայուն զարգացման խնդիրներին, որոնք դարձել են առանձին ուսումնասիրության առարկա<sup>1</sup>: Շատ խնդիրների լուծումը առանձնահատուկ մոտեցումների մշակումներ է պահանջում՝ երբեմն փոխառնելով այլ ոլորտներ, ինչպես օրինակ՝ բնական մենաշնորհների կարգավորման մեխանիզմները: Գյուղատնտեսության ոլորտում աննպատակահարմար է յուրաքանչյուր ֆերմերի կցել հակակարկտային իր կայանը, ինչպես անիմաստ է յուրաքանչյուր ջրասպառողի համար առանձին ջրատարի կառուցումը:

Բնական հարց կարող է առաջանալ. ՀՀ-ում ծրագիրը չի<sup>2</sup> արտացոլվում արդյոք ՀՀ կառավարության կանխագծումներում, հատկապես երբ ՀՀ կառավարության կողմից ընդունվել է «ՀՀ գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունը» հայեցակարգը: Նախ նկատենք, որ ՀՀ-ում չի ընդունվում համալիր նպատակային ծրագիր է, որը կոչված է լինելու ՀՀ համեմատական առավելությունների կարևոր բաղադրիչները տնտեսության մեջ առավելագույնս ներգրավելու, ոլորտում տնտեսական շրջապտույտը վաճառքի ու մատակարարման ամբողջական շղթաներով, ժամկետայնության նախանշումով ու իրականացման բավարար մեխանիզմներով ամրագրելու միջոցով, և վերջապես՝ արդյունավետությունը գնահատելով՝ ձեռք բերել առավելագույն արդյունքներ: Երկրորդը, հիշատակված փաստաթուղթը դեռևս չի ներառում մոդելներով հիմնավորված արդյունավետ ռեսուրսաօգտագործման կանխատեսումային սցենարներ, որոնք կարող են նպաստել երկրի տնտեսական վերելքին՝ երկարատև կայուն տնտեսական աճի նախադրյալներ ստեղծելու առումով:

**3. ՀՀ-ի քիմիային հիմնական ուղղությունների** թվում են՝ ժողովրդագրական իրավիճակի բարելավումը, բնակչության տարաբնակեցման կարգավորումը, աղքատության կրճատումը, ՀՀ-ից ապրանքների ու ծառայությունների արտահանման խթանումը:

**3.1. Ժողովրդագրական իրավիճակի բարելավումը, արտագաղթի կանխումն ու ներգաղթի խրախուսումը<sup>2</sup>:** Անկախության առաջին տասնամյակում ի չիք դարձան նախընթաց 20-ամյակում ձևավորված ՀՀ բնակչության ընդլայնված վերարտադրությունն ապահովող բնութագրական հայտանիշները՝ բնակչության բարենպաստ կառուցվածքը, միջպետական արտագաղթի ոչ մեծ բացասական մնացորդը և այլն, որոնց պատճառով աստիճանաբար առաջացավ ճգնաժամային իրավիճակ: Ստեղծված վիճակը չչտեղծվելու և ճակատագրի քմահաճույքին թողնելու պարագայում կարող են խարխուլվել ազգային անվտանգության հիմքերը:

Բնակչության շարունակվող արտագաղթի աճող ծավալները հանգեցրին այն բանին, որ ՀՀ 2011 թ. մարդահամարի տվյալների դիտարկման պահին (12 հոկտեմբեր, 2011 թ.) բնակչության թվաքանակը կազմել է ընդամենը 3018,9 հազար մարդ, մինչդեռ եթե չլիներ բնակչության մշտական արտահոսքը, ապա 2012 թ. սկզբին ՀՀ բնակչությունը կկազմեր 3339 հազար մարդ (3213 հազար մարդ՝ ըստ

<sup>1</sup> Հ. Սարգսյան, Խ. Հարությունյան, Վ. Մանասյան, ՀՀ տնտեսության ագրարային հատվածի և գյուղի կայուն զարգացման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները, Երևան, ԵՊՀ հրատ., 2011 թ. (հետագայում՝ «ՀՀ տնտեսության ագրարային...»):

<sup>2</sup> 3.1 ենթահատվածը շարադրված է տնտեսագիտության թեկնածու Ռ. Եզանյանի հետ համատեղ:

2001 թ. Մարդահամարի + 126 հազար մարդ 2002-2011 թթ. բնակչության բնական աճը): Պայմանավորված 2001 թ. և 2011 թ. մարդահամարների միջև ընկած 10-ամյա ժամանակահատվածում երկրից անընդհատ արտագաղթածների շարժի բնույթով տեղի է ունեցել ըստ սեռի բաշխման և տարիքային կառուցվածքի խաթարում, այդ թվում ծերացման երևույթի ոչ բնական արագացում, որը պայմանավորվում է դրսևորվող միտումներով: ՀԱԱԾ-ի թիրախային ուղղություններից մեկը բնակչության արտագաղթի կանխումն ու ներգաղթի խթանումն է լինելու, քանի որ երբ խորամուխ ենք լինում այն ծնող պատճառների մեջ, տեսանելի են դառնում անհապաղ լուծում պահանջող հիմնախնդրի կարգավորման ուղիները:

Երկրից արտագաղթի պատճառների շարքում են ինչպես արտածին, այնպես էլ ներքին գործոնները: Արտածին գործոններից առանձնանում են՝

- տարածաշրջանում ձևավորված աշխարհաքաղաքական մարտահրավերները՝ հատկապես Արցախի չկարգավորված հիմնախնդիրը,
- Հայաստանի ապաշրջափակման հեռանկարի անորոշությունը,
- սոցիալական անարդարությունը և այլն:

Ներքին գործոնները բազմապրոֆիլ են՝ ի պատասխան մեկնելու պատճառները հարցի՝ հարցվածների 2/3-ը հիմնականում «աշխատանք չկա», «հեռանկար չկա» պատասխաններն է տալիս, ապա հավելում են «արդարություն չկա», «ապրուստ չկա»: ՀԱԱԾ-ը այս կենսախնդրի լուծման հարցում կունենա առանցքային նշանակություն:

**3.2. ՀՀ տարաբնակեցման համակարգերը** արմատապես փոխվել են. չեն գործում նախկինում կիրառվող վարչահրամայական մեթոդները (գյուղական բնակավայրերում մասնաճյուղերի ստեղծում և այլն), և այդ վակուումը բավարար չափով չի լրացվում ինքնակազմակերպման ու կառավարման գործընթացներով:

Գյուղական վայրերը մոտավոր հաշվարկներով զբաղեցնում են մեր հանրապետության տարածքի 2/3-ը: Մոտ 950 գյուղական բնակավայրերում ապրում է 1174,1 հազ. մարդ (բնակչության ընդհանուր թվաքանակի 36,0%-ը): Գյուղական տնտեսության հիմնական ճյուղերն են ագրարային հատվածը և անտառային տնտեսությունը, որտեղ, ըստ 2010 թ. տվյալների, զբաղված է գյուղական բնակչության 48%-ը: Արդյունաբերությունում աշխատում է գյուղական բնակչության 12,6%-ը, տրանսպորտի ու կապի ճյուղերում՝ 6.1, շինարարությունում՝ 3.5, առևտրի, հասարակական սննդի և արտադրանքի մթերման ոլորտում՝ 9.5, այլ ճյուղերում (հիմնականում սոցիալական ենթակառուցվածքների ու կառավարման ոլորտներում)՝ 20,3%-ը:

ՀՀ մարզերում նկատվում է առանձին համայնքների դատարկման ու ծնելիության նվազման միտում: 2013 թ. առաջին դասարան չի ձևավորվել Լոռու 6, Սյունիքի 14 համայնքներում, իսկ 8 համայնք ունի ընդամենը 1 առաջին դասարանցի:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) անդամ երկրներում (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Գերմանիա և ուրիշներ) գյուղատնտեսական տարածաշրջան են համարվում 1կմ<sup>2</sup> վրա 150 բնակչից պակաս խտությամբ գյուղական համայնքները, և տարածքային մակարդակով առանձնացվում են՝ գյուղական տարածքներ (այստեղ ապրում է բնակչության

50%-ից ավելին), առավելապես գյուղական տարածքներ (15-ից մինչև 50%), առավելապես քաղաքային տարածքներ (15%-ից պակաս): ՀՀ-ում նման չափանիշներ չեն սահմանվել: Այնուամենայնիվ, ՀՀ մարզերի դասակարգումն ըստ ՏՀԶԿ չափանիշների ցույց է տալիս, որ դրանց ճնշող մասը գյուղական է:

Խիստ բազմազան են գյուղական բնակավայրերի գործառույթները.

- արտադրական՝ հասարակության պահանջումների բավարարումը սննդամթերքով, իսկ արդյունաբերությանը՝ հումքով,
- գյուղական բնակչության կողմից հոգևոր արժեքներ ստեղծելուն, ազգային-մշակութային ավանդույթների պահպանելուն և գյուղական բնակավայրերում գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանություն,
- բնապահպանական՝ ագրոկենսահամակեցություններում էկոլոգիական հավասարակշռության պահպանում և հանրապետության լանդշաֆտային ուղղաձիգ գոտիների, արգելավայրերի, ազգային պարկերի և հատուկ պահպանվող այլ տարածքների նկատմամբ պետական հոգածություն,
- տարածքի նկատմամբ սոցիալական ու անվտանգության հսկողություն:

Վերոհիշյալ գործառույթների իրականացումը ինչպես ողջ հանրապետության, այնպես էլ տնտեսության ագրարային հատվածի հաջող զարգացման կարևորագույն գրավականն է<sup>1</sup>:

Ըստ տարաբնակեցման «մարդակենտրոն» մոտեցման<sup>2</sup> չափանիշների ՀՀԱԾ-ը կարևորագույն նշանակություն է ստանում, քանզի այն նպաստելու է հավասար կենսամիջավայրի ստեղծմանը՝ անկախ բնակավայրի մեծությունից, դիրքից և այլն: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ համեմատաբար բարենպաստ կենսամակարդակը բնութագրական է 2 հազարից ավելի բնակիչ ունեցող համայնքներում: ՀՀ բարձրլեռնային 113 գյուղական համայնքներից միայն 13-ն ունեն 2 հազարից ավելի բնակչություն: ՀՀԱԾ-ը պետք է առաջադրի ոչ ստանդարտ լուծումներ նշված համայնքների վիճակը բարելավելու առումով:

**3.3. Բնակչության աղքատության կրճատումը:** 2000 թ. սկզբներից աղքատության մակարդակն էապես կրճատվեց, փոքրացավ նաև խզումը գյուղական և քաղաքային վայրերի միջև: Տասնամյակի վերջի տնտեսական ճգնաժամը որոշ չափով չեզոքացրեց նախորդ տարիներին ձեռք բերված դրական արդյունքները: Անհանգստացնող է մեկ այլ կարևոր հանգամանք. առկա 35 տոկոս աղքատությունը ուղեկցվում է եկամուտների գերբևեռացմամբ. ըստ Ջինիի գործակցի գերբևեռացումը 0,5 մակարդակում է:

Միևնույն ժամանակ, աղքատության մակարդակն էապես տարբեր է մարզային կտրվածքով: Շիրակի մարզը, որը գտնվում է բարձրլեռնային գոտում, աղքատության տեսակետից ամենախոցելին է: Տավուշի մարզը հանքային ջրերի ու գինեգործության արդյունաբերության և անտառային տնտեսության շնորհիվ առավել բարվոք վիճակում է: Ազգային միջին մակարդակից ցածր աղքատության մա-

<sup>1</sup> «ՀՀ տնտեսության ագրարային...», էջ 34, 35, 36:

<sup>2</sup> **Ս. Մանասյան**, Հայաստանի Հանրապետության տարաբնակեցման կարգավորման հիմնահարցերը: ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետ, Տարեգիրք 2011, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2011 թ., էջ 441:

կարդակ ունեցող մարզերն ավելի դիմակայուն եղան 2009 թ. ճգնաժամի հետևանքներին: Պատկերը հակառակն է այն մարզերում, որտեղ աղքատության մակարդակը գերազանցում է հանրապետության միջին ցուցանիշը: Աղքատության մակարդակն առավել բարձր է Լոռու, Վայոց Ձորի և Արարատի մարզերում<sup>1</sup>:

Գյուղական աղքատության բարձր մակարդակի պատճառներից են մեկուսացվածությունը և գյուղատնտեսական նշանակության հողերի մասնատվածությունը բանուկ, հաղորդակցական ուղիներից: Լեռնային համայնքներում գյուղական աղքատության մակարդակն աճում է բարձրությանը զուգահեռ. 1700 մետրից բարձր գտնվող տարածքներում այն 34,7 տոկոս է, 1300 մետրից ցածր տարածքներում՝ 27,1 տոկոս, իսկ 1300-1700 մետր բարձրության վրա գտնվողներում՝ 29,5 տոկոս: Հողատարածքից զուրկ գյուղական բնակչության շրջանում աղքատությունը 40,6 տոկոս է, մինչև 0,2 հեկտար հողատարածք ունեցողների աղքատությունը չի գերազանցում 30 տոկոսը:

Նշված հիմնախնդիրները մատնանշում են տարածքային զարգացման նպատակայնության բարձրացման կարևորությունը: Լեռնային, նախալեռնային և սահմանամերձ բնակավայրերի համար կիրառելի են ԵՄ-ի գյուղական տարածքների զարգացման քաղաքականությունը և ԵՄ-ի ներազդման գործիքակազմը. 1) նպատակային զանազան արտադրական ներդրումային ծրագրեր, 2) տարածքների հասանելիության և կենցաղային պայմանների որակի բարելավմանը նպաստող ծրագրերում և ենթակառուցվածքներում պետական ներդրումներ, 3) բնական դժվար պայմաններում գտնվող բնակչության ծանր կենսավիճակը մեղմելու նպատակով պետության կողմից տրամադրվող նյութական փոխհատուցում և այդ տարածքներում ֆերմերային տնտեսությունների էկոլոգիապես մաքուր արտադրությունը պահպանելու նպատակով պետական ֆինանսավորում:

**3.4. Արտահանման խթանումը:** Ներկայումս ՀՀ արտահանումը, որը հազիվ է գերազանցում ՀՆԱ-ի 10%-ը, հիմնված է ռեսուրսատար ապրանքների վրա: Ընդամենը երեք հիմնական ապրանքախմբերով (մետաղներ, թանկարժեք քարեր, ալյուր-հոլային խմիչքներ) ապահովվում է արտահանման ավելի քան երկու երրորդը:

Արտահանման ծավալներում հանքանյութի և մետաղների մասնաբաժնի ցուցանիշով Հայաստանն ամենաբարձր դիրքերում է: Իրավիճակը խիստ փխրուն է դարձնում այս ուղղությամբ արտահանման ընդլայնման միտումը. նկատի ունենք համաշխարհային շուկայում չվերամշակված հանքանյութի և մետաղների գների հնարավոր փոփոխությունները: Արտահանման առաջանցիկ աճի հնարավորությունները կարելի է տեսնել ստորև բերված աղյուսակում: Գյուղատնտեսական արտադրանքի, պատրաստի սննդամթերքի և շինանյութերի արտադրությունները աճի մեծ ներուժ են պարունակում: Առանձնակի դերակատարում է վերապահվելու ՀՁԱԾ-ի վերամշակող, գյուղատնտեսական արտադրություններին, այդ թվում՝ խոշորամասշտաբ ջերմոցային տնտեսություններին:

<sup>1</sup> Հայաստան. Ձեկույց գյուղատնտեսության և գյուղական զարգացման քաղաքականության մասին, 8 ապրիլի, 2013 թ., 4այուն զարգացման վարչություն, Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջան, Համաշխարհային բանկ, էջ 71:

*Աղյուսակ 2*

**Արտահանման տեսակարար կշիռը համապատասխան ճյուղերի համախառն թողարկման մեջ 2006-2010 թթ., տոկոս**

	2006	2007	2008	2009	2010
Գյուղատնտեսական արտադրանք	2,0	1,5	1,5	2,3	2,3
Պատրաստի սննդամթերք	19,4	22,3	20,4	5,5	17,6
Հանքահումքային արտադրանք	50,1	51,8	50,1	57,0	71,0
Շինանյութ	12,5	18,0	9,0	12,6	12,1
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	97,9	97,5	85,7	79,7	87,8

*Աղբյուրը՝ Republic of Armenia-Poverty Reduction Strategy Paper – Progress Report, IMF Country Report № 11/191, July 2011.*

Արտաքին ապրանքաշրջանառության մեջ գյուղատնտեսական արտադրատեսակների տեսակարար կշիռը կազմում է շուրջ 20%:

ՀՀ արտահանման միջին հակվածության մակարդակը սոսկ ձևավորված ճյուղային կառուցվածքի հետևանք չէ: Ի վերջո, հավելյալ տնտեսական աճի պայմաններ պետք է ստեղծվեն ավանդաբար արտահանելի հատվածը ներկայացնող հանքահումքային, ֆինանսական, ծրագրավորման ծառայությունների ու այլ ոլորտներում, քանի որ արտադրողականության միջազգային տարբերությունները արտացոլվում են հենց արտահանելի հատվածում: Արտահանման հակվածության արդյունաբերար պատկերացում կարելի է ունենալ համապատասխան ցուցանիշների միջոցով, որը բերված է աղյուսակ 3-ում:

Արտաքին առևտրաշրջանառության ծավալների ավելացմանն ու կառուցվածքի բարելավմանն ուղղված հիմնարար լուծումները, ինստիտուցիոնալ խնդիրներին զուգահեռ, պահանջում են երաշխավորությունների մշակում այնպիսի համալուծ հիմնախնդիրների շրջանակում, ինչպիսիք են.

- ֆինանսական միջնորդման ավելացմամբ տոկոսադրույքի և փոխարժեքի լծակների արդյունավետ փոխգործակցումը այն հաշվով, որ հնարավորինս թուլացվի փոխարժեքի ազդեցությունը,
- «անհնարիճության երրորդություն» խնդրի լուծումը, երբ անհրաժեշտ է դառնում ընտրություն կատարելու կապիտալի սահմանափակումների, փոխարժեքի կայունության և գնաճի կայունության միջև<sup>1</sup>:

Այս ասպարեզում որոշակի գործ արդեն արվում է: ՀՀ կառավարության գերակայություններում ներառված է արտահանմանը միտված արդյունաբերական քաղաքականության իրականացումը, ընտրված են արտահանման առաջնային ոլորտները:

<sup>1</sup> **Հ. Սարգսյան**, Անցումային երկու տասնամյակը Հայաստանի Հանրապետությունում. իրողություններ և մարտահրավերներ // Տարեգիրք, 2011, Տնտեսագիտության ֆակուլտետ / Գլխ. խմբ.: տ.գ.դ. Հ. Լ. Սարգսյան: - Եր.: ԵՊՀ հրատ., 2011. - 504 էջ, էջ. 18, 19, 20:

## Աղյուսակ 3

**Արտահանման հակվածությունը (ապրանքների ու ծառայությունների արտահանման մասնաբաժինը ՀՆԱ-ում) և շնչային ՀՆԱ-ն ՀՀ սահմանակից և Մաքսային միության անդամ երկրներում ու Իսրայելում**

Երկիրը	Արտահանման հակվածությունը					ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով՝ ըստ գնողունակության համարժեքության (\$)				
	1998թ.	2008թ.	2010թ.	2011թ.	2012թ.	1998թ.	2008թ.	2010թ.	2011թ.	2012թ.
Հայաստան	19.0	15.0	20.8	23.8	25.1	1779	8055	7242	7730	8417
Ադրբեջան	22.7	65.8	54.3	56.4	53.7	1821	8653	9800	9869	10125
Վրաստան	16.5	28.6	35.0	36.3	38.4	2018	4872	5002	5417	5806
Թուրքիա	21.3	23.9	21.2	24.0	26.4	8730	15178	15965	17242	18348
Իրան	13.6	30	28	29	18	6161	11159	12677	13174	12986
ՌԴ	31.2	31.3	29.2	30.4	29.4	5493	20276	20770	22408	23501
Ղազախստան	30.3	57.2	44.0	49.5	47.6	4063	11293	12010	12977	13667
Բելառուս	59.1	60.9	54.3	81.1	81.6	4529	12455	13758	14826	15327
Իսրայել	29.9	40.3	35.0	35.5	36.2	20891	25600	28818	30622	31869

Աղբյուրը՝ World Bank, World Development Indicators 2013: Իրանի արտահանման հակվածության 2008-2012 թթ. տվյալները՝ ըստ United Nations, National Accounts Main Aggregates Database, 2-013: Իրանի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի 2010-2012 թթ. տվյալները՝ ըստ IMF, World Economic Outlook Database 2013:

Ակնհայտ է, որ արտահանման ընդլայնման հիմնախնդիրը հնարավոր է լուծել նախ մեր ունեցած մարդկային, հողային, ջրային ռեսուրսներն առավել զործադրելու միջոցով, որին պետք է ուղղված լինի բանկային և ֆինանսական ենթակառուցվածքների զործունեությունը: Արտահանումը պետք է խթանել էժան փոխառու միջոցներով արտոնագրային, ապահովագրական, լիզինգային և ներազդման այլ լծակներով (օրինակ՝ հարկային ոլորտում շահութահարկերի դրույքաչափերը իջեցնելով՝ պայմանավորված թողարկման արտահանելի ծավալով): Նպատակադրումը ենթադրում է արտահանման տեմպերի առաջանցիկությունը ՀՆԱ-ից այն հաշվով, որ առաջիկա 10-15 տարիների կտրվածքով արտահանման ծավալները կազմեն ՀՆԱ-ի 30-40 %-ը (ներկայիս 10%-ի փոխարեն):

ՀՀ կառավարության ծրագրի հաջող իրագործման գրավականը պետք է լինի նաև այնպիսի ենթակառուցվածքների ստեղծումը, որը կնպաստի դրան՝ մասնավորապես պետություն-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում:

#### 4. ՀՋԱԾ պաշարամիջոցները

**4.1. Հողային ռեսուրսները:** ՀՀ բնութագրվում է առավել լեռնային բնապատկերով, սահմանափակ գյուղատնտեսական նշանակության հողերով՝ 2,1 մլն. հեկտար երկրի 2,97 մլն. հեկտար հողատարածքից:

Մինչև հողի լայնածավալ մասնավորեցումը, ի դեպ, մեր երկիրն առաջինն էր ԱՊՀ տարածքում. 1990 թ. դրությամբ հողօգտագործումը իրականացվում էր 283 կոլտնտեսություններում (զբաղեցնում էին 628 հազ. հեկտար, մեկ կոլտնտեսու-

թյանը բաժին էր ընկնում միջինը 2219,1 հա), և 628 սովխոզ (յուրաքանչյուրը միջինը 2610,9 հա հողակտոր): Կոլտնտեսությունների ու սովխոզների տնօրինությանն էր տրված 2267 հազ. հա, այսինքն՝ հանրապետության ընդհանուր տարածքի 76,3 տոկոսը: Թվերը ցույց են տալիս, որ մինչ մասնավորեցումը հողակտորները չափերի ու կառուցվածքի առումով առավել արդյունավետ էին:

1997թ. հողի հաշվեկշռի համաձայն՝ ՀՀ հողային ֆոնդը ներառում էր գյուղատնտեսության հողեր՝ 1329638 հա ընդհանուր տարածքով: Մասնավորեցված հողերի շուրջ 78%-ը բաժանված էր 2-4 հողակտորների, և այն մտայնությունը, որ տնտեսությունների միջև կունենանք մրցակցություն, շատ պարզունակ էր, քանի որ կրճատվեց դրանց մշակման արդյունավետությունը, հետևաբար՝ արտադրողականությունը: Մեկ ամբողջական հողակտոր ունեւր 332 հազար գյուղացիական տնտեսություններից ընդամենը 4,7%-ը: **Հողակտորների մասնատվածությունը** արդյունավետ հողօգտագործման լուրջ խոչընդոտ է դարձել:

Հողակտորների մասնատվածության հիմնախնդրի լուծումը իրագործելի է - հողի շուկաների գործառնման միջոցով (հատկապես վարձակալական ձևի կիրառմամբ): Այս ասպարեզում վերջին տարիներին նկատվում է պահանջարկի աշխուժացում, չնայած արժանահավատ վիճակագրությունը բացակայում է:

Հողերի լքվածությունն ու թերօգտագործումը (օգտագործվում է ընդհանուր - վարելահողերի ընդամենը երկու երրորդը, գյուղնշանակության հողերի մոտ 20 տոկոսը անմշակ է, մարգագետինների միայն 55-60 տոկոսն է հնձվում և այլն): - Չնայած արոտավայրերի հարաբերական առատությանը՝ հողագործության համեմատ անասնաբուծության թույլ զարգացվածությունը կառուցվածքային և սոցիալ-տնտեսական պատճառների հետևանք է<sup>1</sup>: Այս հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները պետք է վեր հանվեն ու ներառվեն ՀԶԱԾ-ում, լայնորեն կիրառելով դրական միջազգային փորձը: Այս առումով դիտարժան են որոշ երկրների (հարևան սահմանակից, մաքսային միության և Իսրայելի) համեմատական բնութագրերը գյուղատնտեսական հիմնական ցուցանիշների կտրվածքով (տես աղյուսակ 4):

<sup>1</sup> Համաշխարհային բանկ. Հայաստան. Չեկույց գյուղատնտեսության և գյուղական զարգացման քաղաքականության մասին: 8 ապրիլի, 2013 թ.:

Աղյուսակ 4

Գյուղատնտեսական հիմնական ցուցանիշները որոշ երկրներում, 2011 թ.

N	Ցուցանիշ	Հայաստան	Վրաստան	Ադրբեջան	Իրան	Թուրքիա	Ուր	Բելառուս	Ղազախստան	Իսրայել
1	Հողային տարածքներ (ք. կմ)	28480	69490	82658	1628550	769630	16376870	202910	2699700	21640
2	Գյուղատնտեսական հողերի տեսակարար կշիռը ընդհանուր տարածքում (%)	60,1	35,5	57,7	30,1	49,7	13,1	43,7	77,5	24,1
3	1 շնչին ընկնող վարելահողերը (հա)	0,15	0,09	0,21	0,23	0,28	0,85	0,58	1,45	0,04
4	Վարելահողերի տեսակարար կշիռը ընդհանուր տարածքի մեջ (%)	15,1	6	22,8	10,8	26,7	7,4	27,2	8,9	14
5	Գյուղատնտեսության ավելացրած արժեքը ՀՆԱ-ում (%)	21	9	6	-	9	4	10	6	-
6	1 աշխատողի հաշվով գյուղատնտեսության - ավելացրած արժեքը (2005 թ. ԱՄՆ դոլարով)	6942	2531	1379	-	6264	6257	7924	4223	-
7	Գյուղական բնակչության տեսակարար կշիռը ընդհանուր բնակչության մեջ (%)	36	47	46	31	28	26	25	46	8
8	Զբաղվածությունը գյուղատնտեսությունում (% ընդհանուր զբաղվածների)	39 <sup>1</sup>	-	38	19,5 <sup>2</sup>	24	10*	-	27	2*
9	Անասնապահական արտադրության ինդեքս (2004-2006 թթ. 100 տուկս)	120,8	70,4	154	98,3	138,7	121	134,7	117,5	112,1
10	Գյուղատնտեսական մեքենաներ, տրակտորներ վարելահողերի 100 ք. կմ-ի հաշվով	325 <sup>1</sup>	-	-	148,6 <sup>2</sup>	547,5 <sup>3</sup>	27,1*	86,8*	-	-

Աղբյուրը: Համաշխարհային Բանկի պաշտոնական կայք. <http://data.worldbank.org/indicator>

\* Բերված են 2009 թ. տվյալները

\*\* Բերված են 2010 թ. տվյալները

1 ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայք. <http://armstat.am>

2 ԻԻՀ վիճակագրական ծառայության պաշտոնական կայք. <http://amar.sci.org.ir>

3 Թուրքիայի վիճակագրական ինստիտուտի պաշտոնական կայք. <http://www.turkstat.gov.tr/>

**4.2. Ջրային ռեսուրսները:** Դեռևս 2000 թվականին խմելու ջրի առաջարկը և պահանջարկը համաշխարհային մասշտաբով հավասարվեցին, և այժմ առաջանցիկ պահանջարկով անհավասարակշռվածությունը տարեցտարի մեծանում է: Այս ամենը վկայում է ջրի՝ որպես անփոխարինելի բնական ռեսուրսի, կարևորության մասին: Ջրի պահանջարկը ժամանակի ընթացքում անընդհատ աճում է, և աշխարհի մի շարք տարածաշրջաններում հաճախադեպ են դարձել միջպետական բախումները ջրի համար:

Հայաստանի Հանրապետության հարաբերական և տարածաշրջանային կարևորագույն առավելություններից մեկը ստորերկրյա և մակերևութային ջրերն են: Բավական է մշել, որ ՀՀ տարածքում տարեկան ձևավորվում է (առանց ստորերկրյա պաշարների) 7,5 մլրդ խմ ջուր, որից օգտագործվում է ընդամենը 2,5 միլիարդը: Ստրատեգիական այդ ռեսուրսի մնացած քանակությունը, փաստորեն «արտահանվում է» հարևան երկրներ՝ գրոյական գնով: Այս ամենը թելադրում է Հայաստանի Հանրապետությունում ունենալ ՀՋԱԾ-ի շրջանակներում գործող *ջրային ռեսուրսների օգտագործման և կառավարման ենթածրագիր*, որտեղ կսահմանվեն այն միջոցառումները, որոնց իրականացմամբ կարելի է հասնել ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման:

Ջրօգտագործման բնագավառում առանձնակի կարևորություն է ստանում ՀՀ խմելու ջրի արտահանման ծավալների ավելացումը<sup>1</sup>: Խմելու ջուրը արտերկրում դարձել է ռազմավարական կարևոր ապրանքատեսակներից մեկը (1լ վաճառվում է 0,37 դոլար մանրածախ գնով), իսկ պահանջարկը աշխարհում անընդհատ ավելանում է: Կանխատեսվում է, որ 2011-2021 թթ. շաղցված ջրի համաշխարհային ծավալը հասնելու է 440 մլրդ և կամ աճելու է շուրջ 170%-ով:

Ջրօգտագործման էֆեկտը ակնառու է դառնում տնտեսական բազմապատկման հետևյալ օրինակով: 10 մլրդ և արտահանման դեպքում կունենանք 3,7 մլրդ դոլարի ներհոսք: Այն ՀՀ արտահանման 2012 թ. ամբողջ ծավալի բերած եկամուտը կգերազանցի ավելի քան 2,5 անգամ: Եթե հանրապետությունից խմելու ջրի արտահանման ծավալը հասցվի 10 մլրդ և, ապա այն կկազմի համաշխարհային շուկայի խմելու ջրի 3,3%-ից մինչև 2,3% (2021 թ. պահանջարկի դեպքում):

ՀՀ արտահանվող խմելու ջրի ծավալների կտրուկ ավելացման և այդ նպատակներին հասնելու տարաբնույթ հիմնախնդիրների շարքում կարևորվելու են հայկական խմելու ջրերի արտահանման ներուժի գույքագրումը, շուկաների բացահայտումը, պահանջարկի մարքեթինգը, սպառողների խմբերի սեզնետավորումը և մատուցվող (վաճառվող) խմելու ջրի տեսակի (գազավորված, թե անգազ) ու տարայի ծավալի մեծության ընտրությունը, առևտրային կազմակերպությունների հետ խմելու ջրերի վաճառքի երկարաժամկետ պայմանագրերի կնքումը, ըստ ժամկետայնության շուկայի սեզնետավորումը, տրանսպորտային միջոցների ընտրությունը, խմելու ջուր շաղցնող կազմակերպությունների հետ պայմանավորվածությունների ձեռքբերումը և այլն:

Հայկական խմելու ջրերի արտահանումն ընդլայնելու ու խթանելու ուղիների հարցը քննարկելիս կարող են դիտարկվել.

- Արտահանում՝ ներկայումս գործող պայմաններով և սխեմաներով:

<sup>1</sup> Մարկոսյան Ա. Խ., Մարգարյան Հ. Լ., Մարտիրոսյան Տ. Ս., Հայաստանի Հանրապետության խմելու ջրի միջազգային առևտրայնացման հիմնախնդիրները // Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի տեղեկագիր, թիվ 3(35), 2013 թ., էջ. 19-20:

• Արտահանում՝ իզոթերմիկ-իզոբար վազոն-ցիստեռներով: Այս պրակտիկան գործել է նախկին ԽՍՀՄ օրոք, երբ հայկական հանքային ջրերը իզոթերմիկ-իզոբար ցիստեռն-վազոններով (60տ. տարողությամբ) Հայաստանից տեղափոխվում և շշալցվում էին Միտիշչիի ոչ ալկոհոլային խմիչքների գործարանում: Նկատենք նաև, որ Ռուսաստանի եվրոպական մասում խմելու հանքային ջրեր չկան, ուստի հայկական հանքային ջրերը մեծ պահանջարկ կունենան ՌԴ-ում՝ հատկապես խոշոր մետալուրգիական ձեռնարկություններում:

• Հանքային ջրերից կորզել դրանց կազմի մեջ մտնող հանքային նյութերը և արտահանել: Հանքային նյութերի առանձնացման տեխնոլոգիան մշակել են հարևան Վրաստանում. մեծ արագությամբ պտտվող սկավառակի վրա վերևից կաթում է հանքային ջուրը, ջրի և պտտվող սկավառակի «հանդիպման» շնորհիվ կաթիլները բաժանվում են հազարավոր մասնիկների և «ցրվում», իսկ բարձր ջերմաստիճանի պայմաններում ջուրը գոլորշիանում է, իսկ ջրում եղած հանքային նյութերը փոշու տեսքով «նստում» են սարքի հատակին: Ստացված փոշին կարող է սպառման կամ օգտագործման վայրերում «բացվել» (լուծվել) ջրում և օգտագործվել խմելու կամ բուժական լոգանք ընդունելու համար: Հանքային ջրերից նյութերի կորզումը աչքի է ընկնում բարձր արդյունավետությամբ, քանի որ 0,5 և հանքային ջրից անջատվում է 3-5 գ հանքային նյութ: Բացի այդ, հանքային ջրերը ապակյա շշերով տեղափոխելու համար անհրաժեշտ են երկաթուղային վազոնները, իսկ դա 600 կմ-ից ավելի հեռավորության դեպքում տնտեսապես ձեռնտու չէ:

• Հայկական խմելու ջրերը կարող են սպառման շուկա հասցվել նաև խողովակաշարերով: Նման եղանակով ՀՀ հատկապես դեպի արաբական աշխարհի երկրներ փոխադրված ջուրը կարող է ավելի փոքր ծավալներով հասցվել սպառողին՝ տեղում կազմակերպելով դրանց տարայավորումը: Ամեն դեպքում խմելու ջրի արտահանման այս կամ այն եղանակի ընտրությունը պետք է հիմնավորվի համապատասխան մասնագիտական հաշվարկներով:

Սևանա լճի քաղցրահամ ջրի ծավալները երաշխիք են, որ ՀՀ-ն ի վիճակի է ապահովելու արտահանվող խմելու ջրի մեծ ծավալներ՝ ջուրը դարձնելով արտահանման գերակա ճյուղերից մեկը և ՀՀ սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման կարևորագույն աղբյուր<sup>1</sup>:

**4.3. Հայաստանի հելիոֆիկացիան և գյուղատնտեսությունը:** Տնտեսության շեշտակի վերելքի ակնկալությունը իրապես պայմանավորված է բարձր արտադրողականության ու արդիական տեխնոլոգիաներ կիրառող ճյուղերով, որը բնավ չի նշանակում, որ գյուղատնտեսությանը պետք չէ այդ ամենը: Հանդիսանալով արդյունաբերական հեղափոխությունների առաջամարտիկը՝ գյուղատնտեսությունը չի կորցրել իր գեներացնող դերը հետինդուստրիալ տնտեսություններում: Գենային ճարտարագիտության, կենսատեխնոլոգիաների ու ինտենսիվ տեխնոլոգիաների (էլեկտրոնիկա, ռոբոտատեխնիկա և այլն) ներդրմանը զուգընթաց չպետք է անտեսել հելիոֆիկացիայի նպաստավոր հնարավորությունները:

<sup>1</sup> Մարկոսյան Ա. Խ., Մկրտումյան Մ. Մ., Թոքմաջյան Հ. Վ., Ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի կառավարումը, Հատոր 1 / Եր.: Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի հրատ., 2011 թ., էջ 615:

Արևային տեխնիկայի զարգացման հայկական տարբերակը<sup>1</sup> էապես տարբերվում է այլ երկրներում կատարվող աշխատանքներից առաջին հերթին իր մոտիվացիայով: Եթե համաշխարհային տնտեսության մեջ այն դիտվում է որպես գործող ատոմակայանների և ջերմակայանների այլընտրանք, եթե արևային էներգետիկան ուղղորդվում է դեպի էներգախնայողության ռեժիմ, ապա հայկական տարբերակում շեշտը դրվում է արևային տեխնիկայի տեխնոլոգիական առանձնահատկությունների վրա: Մասնավորապես.

- Դեպի տեխնիկան՝ որպես գյուղատնտեսության մեջ կիրառելի բարձր տեխնոլոգիա՝ գյուղմթերքներ վերամշակելու և էլիտար շուկաներին էկոլոգիապես մաքուր սննդամթերք մատակարարելու համար:
- Ֆունիզացիայի և թունաքիմիկատների ակտիվացման համար էկոլոգիապես մաքուր և հասանելի միջոց:
- Դեռավոր և սահմանամերձ գյուղերում արտադրված գյուղմթերքները նախնական վերամշակումից հետո ստացված կիսաֆաբրիկ խտանյութերը ապրանքային վերջնական տեսքի բերելու նպատակով վերամշակող ձեռնարկություններ տեղափոխելու համար տեխնոլոգիապես նախընտրելի ձև:
- Գյուղում սոցիալ-տնտեսական և սանիտարահիգիենիկ պայմանների բարելավման միջոց, աղբահանությունը և աղբի վերամշակումը տեղում կազմակերպելու ձև, դպրոցների, հիվանդանոցների ու մանկապարտեզների ջեռուցման էժան և հուսալի եղանակ:
- Ռոռզման ընդհանուր համակարգերի անխափան աշխատանքը ապահովելու և գյուղատնտեսության մեջ կաթիլային ոռոգման եղանակը ներդնելու հասանելի միջոց:
- Գոմաղբից էժան և բարձրորակ բիոպարարտանյութեր ստանալու տեխնոլոգիա:
- Կիոտոյի համաձայնագրի սահմաններում անխաթթու գազի արտանետումների նվազեցում և այրվող թթվածնի խնայում:

Կան արևային տեխնիկական և տեխնոլոգիաները գյուղատնտեսության մեջ կիրառելու բազմաթիվ այլ ուղղություններ, որոնց զարգացումը թույլ կտա օգտագործել նաև հարևան երկրների, օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության և Իրանի գյուղմթերքների հսկայածավալ հումքային բազան՝ դեպի աշխարհի էլիտար շուկաներ էկոլոգիապես մաքուր սնունդ առաքելու համար:

Արդեն առկա են արևային տեխնոլոգիաների կիրառմամբ «Արևային քաղցրավենիքի», «Արևային խտացրած կաթի», «Արևային պանրի», «Արևային հյութերի», «Արևային մուրաբաների», «Արևային կոնյակի», «Արևային լավաշի» և այլնի զանգվածային արտադրություններ կազմակերպելու համար անհրաժեշտ տեխնիկական միջոցները: Մեծ հեռանկար է խոստանում տարբեր երկրների լողափերում և տուրիստական կենտրոններում «Հայկական արևային խոհանոցներ» կազմակերպելու գաղափարը: Միայն այստեղ օգտագործվելիք արևային տեխնիկայի շուկայի ծավալները ահռելի են: Գյուղի և գյուղատնտեսության հեղինակահամարավոր չէ պատկերացնել առանց ժամանակակից հեղինակական

<sup>1</sup> Այն մշակվում է և գործնական կիրառությունների փորձարարական փուլում է, որը ղեկավարվում է տեխնիկական գիտությունների դոկտոր Վ. Համազասայանի կողմից:

արդյունաբերության, որը հելիոֆիկացիայի ծրագրի հեղինակները մտադիր են կազմակերպել աղետի գոտում: Հելիոֆիկացիան Հայաստանին հնարավորություն կընձեռի լուծել իր էներգետիկ անվտանգության խնդիրները, ստանալու արևի «կանաչ» էներգիա:

### **5. ՀԶԱԾ-ի իրականացման ճանապարհային քարտեզը**

ՀԶԱԾ-ի վերջնական աստակը ռեսուրսների արդյունավետ օգտագործումն է՝ հողի, ջրի, արևի ու մարդկային կապիտալի բաղադրիչներով:

Իր ընդգրկունությամբ և վերը նախանշված թիրախային ուղղությունների նպատակայնությամբ ՀԶԱԾ-ը կարող է հավակնել «Ազգային պետական ծրագիր» կարգավիճակի: Ծրագիրը ենթադրվում է իրագործել հետևյալ համալուծ խնդիրների միջոցով.

- ՀԶԱԾ-ի հայեցակարգի և ծրագրի մշակում,
- ՀԶԱԾ-ի կենսագործումը կազմակերպելու խնդիրների (ամրագրված միջոցառումների պլանով) մշակում, որում արտացոլված կլինեն իրականացնող ինստիտուտները, ֆինանսական ապահովման աղբյուրները և սպասվելիք արդյունքներն ըստ ժամկետների:

ՀԶԱԾ գործարկման լավագույն միջոց կարող է լինել *Պետական ներդրումային հիմնադրամի* ստեղծումը, որը մասնակցություն կունենա մասնավոր հատվածի ներդրումային այնպիսի բիզնես նախագծերում, որոնք նպատակաուղղված կլինեն նաև արտահանման աճին: Նմանատիպ ծրագիր պետականորեն կյանքի է կոչվել Իսրայելում 1993 թ.՝ ՅՈՋՄԱ անունով, սատարել է վեներալային - ու մասնավոր բաժնեմասնակցային նախաձեռնությունները:

*Առաջադրվող ՀԶԱԾ ազգային պետական ծրագրի կենսագործման համար հանրապետությունում առկա է գիտական սպասարկման անհրաժեշտ ներուժը:*

### **ԱՍՓՈՓՈՒՄ**

#### **ՍԱՐԳՍՅԱՆ Հ. -ՀՈՐՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒ ԶՐՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ**

Հոդվածում լուսաբանվում են ՀՀ ավանդական ռեսուրսների (հողի, ջրի) ռացիոնալ օգտագործման հիմնահարցերը և ուղիները, երկարատև կայուն տնտեսական աճի նախապայմանների ստեղծման տեսակետից:

### **АННОТАЦИЯ**

#### **САРГСЯН Г. – К ВОПРОСУ О РАЗРАБОТКЕ НАЦИОНАЛЬНОЙ ПРОГРАММЫ ЗЕМЛЕПОЛЬЗОВАНИЯ И ВОДОПОЛЬЗОВАНИЯ**

Статья посвящена вопросам и подходам рационального использования традиционных ресурсов (земли, воды) РА, с точки зрения создания предпосылок долгосрочного стабильного экономического роста.

### **SUMMARY**

#### **SARGSYAN H. – ON THE QUESTION OF LAND AND WATER USAGE NATIONAL PROGRAM ELABORATION**

The article touches upon issues and ways of rational usage of traditional resources from the viewpoint of creating long-term sustainable economic growth preliminaries.

**ՍԱՄՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

*տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,  
ՀԴՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի տնօրեն*

**ՀՐԱԶՅԱ ԾՊՆԵՑՅԱՆ**

*տնտեսագիտության դոկտոր,  
ՀՀ Գյուղատնտեսության նախարարության  
գյուղատնտեսության զարգացման  
ծրագրերի վարչության պետ*

**ԱՇՈՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

*տնտեսագիտության թեկնածու,  
ՀԱԱՀ ապրանքագիտության և մարքեթինգի  
ամբիոնի դասախոս*

**ՀՀ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱԿՈՐ ՌԻՍԿԵՐԸ ՄԱՔՍԱՅԻՆ  
ՄԻՈՒԹՅԱՆ և ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

Վերջին տասնամյակներին միջազգային զարգացման բնութագրիչ առանձնահատկություններից մեկը համաշխարհային տնտեսական տարածքի զլոբալացումն ու տարածաշրջանային միությունների ձևավորումն է: Ի դեպ, տարածաշրջանային միությունը հաճախ հանդես է գալիս որպես զլոբալացման այնպիսի բացասական դրսևորմանը դիմակայող գործոն, ինչպիսին է փոքր կամ թույլ զարգացած երկրների քաղաքական կախվածությունն առավել ուժեղ ու ազդեցիկ երկրներից: Տարածաշրջանային միությանը անդամակցելը թույլ է տալիս ի հաշիվ արտադրության մասշտաբի էֆեկտի, գիտականորեն հիմնավորված տեղաբաշխման, մասնագիտացման և կոոպերացման, նկատելիորեն բարձրացնել իր արտադրանքի մրցունակությունը ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկայում: Այդպիսի տարածաշրջանային խմբավորման ցայտուն օրինակ է Եվրոպական Միությունը (ԵՄ):

Հետխորհրդային տարածքում ներկայումս որպես տնտեսական ինտեգրման առավել արդյունավետ մոդել կարելի է դիտարկել Մաքսային միությունը (ՄՄ), որի հիմնադիր անդամներն են Բելառուսը, Ռուսաստանը և Ղազախստանը: Այս երկրների նախաձեռնությունը տրամաբանված էր, քանի որ Խորհրդային Միության փլուզումից հետո, անցած ավելի քան երկու տասնամյակների ընթացքում նրանք փորձում էին պահպանել նախկինում ձևավորված տնտեսական կապերը և քաղաքական շահերի որոշակի ընդհանրությունը: Ինչպես ԱՊՀ և Եվրասիական տնտեսական հանրության կազմում, այնպես էլ ՄՄ շրջանակներում այս երկրների համագործակցությունն առանձնահատուկ բնույթ ունի և հեռահար նպատակներ է հետապնդում: ՄՄ կազմավորումը դիտվում է որպես Եվրասիայի

համար նոր ինտեգրացման ծրագիր, որը Ռուսաստանի նախագահ Վ. Պուտինի պատկերավոր բնութագրմամբ «ապագա է, որը ծնվում է այսօր»<sup>1</sup>:

ՄՄ բաց է նոր անդամների, հատկապես հետխորհրդային երկրների համար և ներկայումս այդպիսի հետաքրքրվածություն ունեն Ուկրաինան, Ղրղստանը, Տաջիկստանը և Ուզբեկստանը:

Ինչ վերաբերվում է Հայաստանի անդամակցության քաղաքական որոշմանը, որի մասին 2013 թ. սեպտեմբերի 3-ին մոսկովյան այցի ժամանակ հայտարարեց ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը, թեև անսպասելի, բայց անհիմն չէր: Իհարկե, քաղաքական շրջանակներում դեռևս երկար կապահպանվի այդ որոշման արձագանքը, կշարունակվեն ԵՄ-ի հետ ասոցացման պայմանագիր ստորագրելու ջատագովների բանավեճերն ու որոշ ընդվզումները, բայց Վիլնյուսի գագաթնաժողովից հետո կրքերը հանդարտվելու են: Իհարկե, ասում են՝ կանխատեսումն անշնորհակալ գործ է և ոչ ոք չի կարող հստակորեն կանխագուշակել ԵՄ կամ ՄՄ ապագա զարգացումներին Հայաստանի մասնակցության առավելություններն ու թերությունները, բայց այսօր միանգամայն ակնհայտ է, որ Հայաստանը տնտեսական և ռազմաքաղաքական շահերով սերտորեն կապված է Ռուսաստանի հետ և գտնվելով այդ հզոր երկրի ազդեցության գոտում չկշռադատված շեղումների իրավունք չունի: Ուստի մեզ վիճակված է գործել այն շրջանակներում, որտեղ առավել կանխատեսելի են ռիսկերը և առավել սակավ են ազգային անվտանգության սպառնալիքները: Այդուհանդերձ, ՄՄ անդամակցումն ունի որոշակի ընթացակարգեր, իրավական և տնտեսական բնույթի նորմատիվ ակտերի համաձայնեցում և ընդունում, որը հնարավորություն է ընձեռում փոխշահավետ հիմքերի վրա դնել այդ գործընթացը:

Ներկա դրությամբ, ըստ 2009-2012 թթ. վիճակագրության, ՀՀ արտաքին առևտրի հիմնական գործընկերը Եվրամիությունն է, որին բաժին է ընկնում ընդհանուր արտահանման 37,1-48,1 և ներմուծման 22,1-25,2 տոկոսը: ԱՊՀ երկրների հետ այդ ցուցանիշը համապատասխանաբար կազմում է 19.1-24.4 և 22.5-23.5 տոկոս, այդ թվում Մաքսային միության երկրների հետ՝ 16.1-21.0 և 16.7-18.9 տոկոս (աղյուսակ 1):

<sup>1</sup> Таможенный союз в рамках евразийского экономического сообщества: новые вызовы и перспективы. – <http://www.eurasialegal.info/index>.

*Աղյուսակ 1*

**Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի ծավալը և կառուցվածքը (%) ըստ խումբ երկրների 2009-2012 թթ. (հազ. ԱՄՆ դոլար)**

Երկիրը	Արտահանում				Ներմուծում			
	2009	2010	2011	2012	2009	2010	2011	2012
Ընդամենը	710157.5	1041056.6	1334338.8	1380199.2	3321133.9	3748953.5	4145332.0	4261232.7
	100	100	100	100	100	100	100	100
<i>Այդ թվում՝</i>								
ԱՊՀ երկրներ	138327.5	198773.9	268062.3	336 604.2	746223.5	851715.0	939054.8	1000126.6
	19.5	19.1	20.1	24.4	22.5	22.7	22.7	23.5
Որից՝								
Ռուսաստանի Դաշնություն	107426.3	160507.8	222273.7	279109.0	528341.1	603184.2	686106.2	779942.8
	15.1	15.4	16.7	20.2	15.9	16.1	16.6	18.3
Բելառուս	4628.2	4580.7	5950.3	6710.3	21942.5	27868.2	24135.1	23772.6
	0.7	0.4	0.4	0.5	0.7	0.7	0.6	0.6
Ղազախստան	2404.2	3083.3	4398.5	3964.1	5555.1	8253.2	2854.1	1238.8
	0.3	0.3	0.3	0.3	0.2	0.2	0.1	0.0
Ընդամենը Մաքսային միություն	114458.7	168172	232623	289783.4	555839	639305.6	713095	804954
	16.1	16.2	17.4	21.0	16.7	17.1	17.2	18.9
Ոչ ԱՊՀ երկրներ	571830.0	842282.7	1066276.5	1043595.0	2574910.4	2897238.5	3206277.2	3261106.1
	80.5	80.9	79.9	75.6	77.5	77.3	77.3	76.5
Որից՝	310186.4	501120.0	607403.2	511604.6	732771.7	864499.2	999068.1	1073460.4
ԵՄ երկրներ	43.7	48.1	45.5	37.1	22.1	23.1	24.1	25.2

*Աղբյուրը. ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2012 թվականին (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 2-նիշ դասակարգման) – <http://www.armstat.am/am/?nid=82&id=1478>:*

Հիմնական գյուղատնտեսական արտադրանքների գծով այս ցուցանիշները փոքր ինչ տարբերվում են: Ուսումնասիրվող բոլոր տարիներին ակնհայտ է, որ արտահանման տեսակարար կշիռը զգալիորեն բարձր է ԱՊՀ երկրների կտրվածքով, իսկ ներմուծման կառուցվածքում մեծ է ոչ ԱՊՀ երկրների մասնաբաժինը (աղյուսակ 2): Այսպես 2009-2011թթ. տվյալներով ԱՊՀ երկրներին բաժին է ընկել հիմնական գյուղատնտեսական արտադրանքների արտահանման մոտ 74 %-ը, որի 90 %-ից ավելին ՄՄ երկրներ, իսկ ներմուծման մոտ 58 %-ը ոչ ԱՊՀ երկրներին: Այստեղից հետևություն, որ պարենի արտաքին շուկայից մեծ կախվածություն ունեցող Հայաստանի պարենային անվտանգությունը կարող է վտանգվել, եթե ՀՀ-ում սահմանված մաքսատուրքերը միասնականացվեն ՄՄ մաքսատուրքերին: Բարեբախտաբար 2012 թ. ներմուծված մոտ 535.6 հազ. տոննա հացահատիկի 97.4 %-ը բաժին է ընկել ԱՊՀ երկրներին, այդ թվում՝ 88.8 %-ը Ռուսաստանի Դաշնությանը<sup>1</sup>: Բայց 2010 թ. փորձը, երբ երաշտի պատճառով արգելվեց ՌԴ-ից հացահատիկի արտահանումը, վկայում է, որ ինչպես արտահանման, այնպես էլ ներկրման աշխարհագրությունը պետք է դիվերսիֆիկացվի: Ուստի, անգամ հացահատիկի պարագայում ՀՀ համար էական նշանակություն ունի երրորդ երկ-

<sup>1</sup> ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2012 թվականին (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 2-նիշ դասակարգման), էջ 52-55:

րի հետ իրականացվող առևտրային գործարքների ՄՄ կողմից սահմանված մաքսատուրքերի համապատասխանեցումը մեր երկրի շահերին:

**Աղյուսակ 2**

**Հիմնական գյուղատնտեսական արտադրանքների արտաքին առևտրի կառուցվածքը ըստ ԱՊՀ և ոչ ԱՊՀ երկրների**

Երկրները	Զափման միավորը	2009 թ.		2010 թ.		2011 թ.	
		Արտահանում	Ներմուծում	Արտահանում	Ներմուծում	Արտահանում	Ներմուծում
Ընդամենը	Հազ. ԱՄՆ դոլար	126184.8	546340	162184.5	593390.4	220780.7	706391.3
	%	100	100	100	100	100	100
<i>Այդ թվում՝</i>							
ԱՊՀ երկրներ	Հազ. ԱՄՆ դոլար	88914.2	253033.6	121508.9	253885.7	163314.3	280944.5
	%	70.46%	46.31%	74.92%	42.79%	73.97%	39.77%
Ոչ ԱՊՀ երկրներ	Հազ. ԱՄՆ դոլար	37270.6	293306.2	40675.6	339504.7	57466.4	425446.7
	%	29.54%	53.69%	25.08%	57.21%	26.03%	60.23%

*Աղբյուրը՝ հաշվարկվել է հեղինակների կողմից ըստ. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2012-ի, էջ. 440-444:*

ՀՀ ՄՄ անդամակցությունը պահանջում է որոշակի ընթացակարգեր: Մեր կարծիքով հատկապես լուրջ ուշադրության է արժանի մաքսատուրքերի համապատասխանեցման խնդիրը: Դիցուք, պարենային ապրանքների առումով ՀՀ և ՄՄ անդամ երկրների միջև գոյություն ունեն մաքսային քաղաքականության նկատելի տարբերություններ, որոնց մեխանիկական միասնականացումը հղի է որոշակի ռիսկերով: Հիմնական տարբերությունը կայանում է նրանում, որ ներքին շուկայի և տեղական արտադրողների պաշտպանության նկատառումներով ՄՄ այլ երկրներից ներկրվող բուսական և կենդանական ծագման մի շարք արտադրանքների համար սահմանվել է նկատելիորեն բարձր մաքսատուրք: Սա այն դեպքում, երբ ՀՀ պարենային անվտանգության շահերը պահանջում են այդ արտադրանքները ներմուծել ցածր, անգամ 0-ական մաքսատուրքով: Այս խնդրի ողջամիտ և տրամաբանված լուծումն էական նշանակություն ունի ՀՀ պարենային անվտանգության հնարավոր ռիսկերի կանխարգելման համար, ուստի դրան անդրադառնանք ավելի մանրամասն:

Հայտնի է, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված է մաքսատուրքի 0 կամ 10 տոկոս դրույքաչափ: Ընդ որում գյուղատնտեսության ոլորտի առաճճնահատկություններից և երկրի պարենային ապահովության հույժ կարևորությունից ելնելով՝ մի շարք գյուղատնտեսական ծագման արտադրատեսակների (ցորեն, բրինձ, հնդկացորեն, ածիկ, սերմացուներ, տնկանյութ, տոհմային կենդանիներ և այլն), ինչպես նաև գյուղատնտեսության մեջ օգտագործվող կարևոր ռեսուրսների (պարարտանյութեր, թունաքիմիկատներ, գյուղատնտեսական տեխնիկա, գյուղատնտեսական տրակտորներ և այլն) համար սահմանված է ներմուծման

մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ: Մի շարք ապրանքային խմբերի համար 0 տոկոս ներմուծման մաքսատուրքերի սահմանման համար օրենսդրական փոփոխություններ կատարվել են վերջին տարիներին՝ 2011 և 2013 թվականներին (7 հուլիսի 2011 թվական, ՀՕ-213-Ն, 13 ապրիլի 2013 թվական, ՀՕ-18):

Մաքսային Միության կողմից կիրառվող երրորդ երկրներից ներմուծման մաքսատուրքերն ունեն անհամեմատ բարձր մակարդակ և տատանվում են 3.5-80 տոկոսի սահմաններում: Ընդ որում, առավել բարձր մաքսատուրքի դրույքաչափեր սահմանված են այնպիսի պարենամթերքների նկատմամբ, որոնց ինքնաբավության մակարդակը ՀՀ-ում դեռևս ցածր է և ներմուծվում է մեծ ծավալներով, ինչպես նաև այնպիսի ոչ գյուղատնտեսական ապրանքների համար, որոնց պահանջարկը հանրապետությունում բավարարվում է գլխավորապես ներմուծման հաշվին:

Վերջինիս մասին վկայում են ՀՀ ԱՎԾ-ի կողմից հրապարակած ազգային պարենային հաշվեկշռի վերջին՝ 2012 թվականի տվյալները (աղյուսակ 3): Հնթացրս նշենք, որ ՀՀ ԱՎԾ-ի մեթոդաբանությամբ ինքնաբավության մակարդակը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ԻԲ = \frac{Ա}{Ա - Ար} * 100, \text{ որտեղ՝}$$

ԻԲ- ինքնաբավության մակարդակն է, տոկոս,

Ա- տվյալ արտադրանքի տարեկան արտադրությունն, հազ.տոննա,

Ն- տվյալ արտադրանքի տարեկան ներմուծումն է, հազ. տոննա,

Ար- տվյալ արտադրանքի տարեկան արտահանումն է, հազ. տոննա:

Ինչպես նկատում ենք ինքնաբավության մակարդակի գնահատման տրամաբանական հիմքը բնակչության կողմից տվյալ արտադրանքի փաստացի սպառումն է, որն ուղղակիորեն պայմանավորված է սպառողների սննդաբաժնի փաստացի կառուցվածքով և գնողունակության մակարդակով: Այսինքն այս մեթոդաբանությամբ ինքնաբավության գնահատումը զուտ իրավիճակային է և չի դիտարկվում առողջապահական նորմաներով նախատեսված սննդամթերքի պահանջվող չափաքանակն ու սննդաբաժնի հավասարակշռված կառուցվածքը:

*Աղյուսակ 3*

**ՀՀ պարենամթերքների ներմուծման ծավալները և ինքնաբավության մակարդակը (2012 թ.)**

Պարենամթերքի անվանումը	Ներմուծում, հազ. տ	Ներմուծում <sup>1</sup> , հազ. տ	Ինքնաբավության մակարդակ, %
Ցորեն	477.7	502.5	32.9
Եգիպտացորեն	37.8	39.5	32.6
Բրինձ	10.4	10.4	0
Հատիկաընդեղենային մշակաբույսեր	4.0	4.0	56.0
Բուսական յուղ	26.6	26.9	9.1
Տավարի միս (սպանդային քաշով)	8.3	11.3	81.6

<sup>1</sup> Ներառում է նաև ներմուծված վերամշակված արտադրանքը վերածած հունքի ֆիզիկական քաշով:

խոզի միս (սպանդային քաշով)	8.3	15.5	38.3
Թռչնի միս (սպանդային քաշով)	33.6	35.3	19.1

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ-ի Պարենային ապահովություն և աղքատություն, 2013 թ. հունվար-սեպտեմբեր, էջ 71-72: <http://www.armstat.am/am/?nid=82&id=1502>

Այդուհանդերձ, անգամ գործող մեթոդաբանությամբ հաշվարկված կարևորագույն պարենամթերքների ինքնաբավության մակարդակի ցուցանիշները վկայում են, որ հանրապետությունում առաջիկա տարիներին նույնպես պահանջարկի բավարարման համար նշված պարենամթերքների ներմուծումն իրականացվելու է մեծ ծավալներով:

Կատարված ուսումնասիրություններից ելնելով՝ առանձնացրել ենք այն զգայուն ապրանքների ցանկը, որոնց նկատմամբ ՄՄ կողմից սահմանված ներմուծման միասնական մաքսատուրքերի կիրառումը բացասական ազդեցություն կունենա ինչպես բնակչության պարենային ապահովության, այնպես էլ հանրապետության տնտեսության վրա: Օրինակ, պահեցված և սառեցված խոզի մսի համար (0203)<sup>1</sup> Մաքսային միության կողմից սահմանված է 65 տոկոս ներմուծման մաքսային դրույքաչափ, Հայաստանի Հանրապետությունում գործող 10 տոկոսի դիմաց: Նշված ծածկագրին դասվող ապրանքատեսակների համար մաքսային արժեքը կազմել է 19999.7 հազ. ԱՄՆ դոլար, այդ թվում, միայն ՄՄ երկրներից ներմուծվածի մաքսային արժեքը կազմել է 288.3 հազ. ԱՄՆ դոլար կամ 1.4 տոկոս: ՄՄ և ՀՀ դրույքաչափերով հաշվարկված երրորդ երկրներից ներմուծման դեպքում մաքսատուրքերի արժեքի տարբերությունը ըստ կատարված հաշվարկների կազմում է 1084.3 հազ. ԱՄՆ դոլար: Մեկ այլ օրինակ, կաթից և կաթնային մածուկից պատրաստված սերուցքային կարագի և այլ յուղերի համար (0405) ՄՄ կողմից սահմանված է 18.3 տոկոս մաքսատուրքի դրույքաչափ, Հայաստանի Հանրապետությունում սահմանված 10 տոկոսի դիմաց: Նշված ծածկագրին դասվող ապրանքատեսակների համար մաքսային արժեքը կազմում է 21392.2 հազ. ԱՄՆ դոլար, իսկ ՄՄ երկրներից ներմուծվածի մաքսային արժեքը կազմում է 564.9 հազ. ԱՄՆ դոլար կամ 2.6 տոկոս: ՄՄ և ՀՀ դրույքաչափերով հաշվարկված երրորդ երկրներից ներմուծման դեպքում մաքսատուրքերի արժեքի տարբերությունը ըստ կատարված հաշվարկների կազմում է 1728.7 հազ. ԱՄՆ դոլար: Այս սկզբունքով առանձնացրել ենք շուրջ 33 հիմնական ապրանքախումբ, որոնց մաքսատուրքերի կարգավորման հարցը ՄՄ անդամակցության նախապատրաստական փուլում առանձնահատուկ քննարկում են պահանջում: Ներկայումս կոնկրետ առաջարկությունների մշակման նպատակով մեր հետազոտությունը շարունակվում է: Համոզված ենք, որ այս հիմնախնդրի անտեսման պարագայում ՀՀ պարենային շուկայում կդրսևորվի ներմուծվող պարենային ապրանքների նկատելի գնաճ, որը լուրջ սպառնալիք է բնակչության պարենային անվտանգության համար:

<sup>1</sup> Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի կոդը:

**ԱՍՓՈՓՈՒՄ**

Հոդվածում քննարկման առարկա է Հայաստանի համար հնարավոր ռիսկերը Մաքսային միությանն անդամակցելու դեպքում մաքսատուրքերի միասնականացման պայմաններում: Անդրադարձ է կատարվում երկու ապրանքախմբի մաքսատուրքերի կարգավորմանը:

**АННОТАЦИЯ****АВETISYAN C., ЦПНЕЦЯН Г., АВETISYAN A. - ВОЗМОЖНЫЕ РИСКИ ДЛЯ ПРОДОВОЛЬСТВЕННОЙ БЕЗОПАСНОСТИ РА В УСЛОВИЯХ ВСПУПЛЕНИЯ В ТАМОЖЕННЫЙ СОЮЗ**

В статье выдвигается на обсуждение вопрос о возможных рисках для РА в случае унификации таможенных пошлин на продовольственные товары, при вступлении в Таможенный союз. Представлены подходы к регулированию тарифных пошлин двух групп товаров.

**SUMMARY****AVETISYAN S., TSPNETSYAN H., AVETISYAN A. - POSSIBLE RISKS OF RA FOOD SECURITY WITHIN MEMBERSHIP IN CUSTOMS UNION**

The issue of possible risks for RA in is discussed case of introducing common external tariff on food products within the membership in Customs Union. Regulation of custom fees for two types of products is considered.

**ԿԱՐԵՆ ՇԻՐԱԶԻ ԵՂՈՅԱՆ**

*Տնտեսագիտության թեկնածու,  
ԵՊՀ տնտեսագիտության մեջ մաթեմատիկական  
մոդելավորման ամբիոնի դոցենտ  
Էլ. փոստ՝ k.yeghoyan@ysu.am*

**ՎԱՐԴՂՈՒՅԻ ԳԵՎՈՐԳԻ ԳԱՐՐԻԵԼՅԱՆ**

*ԵՊՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի դասախոս  
Էլ. փոստ՝ vardg77@yahoo.com*

**ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

*«Նաիրիտ» ՓԲԸ գլխավոր մասնագետ  
Էլ. փոստ՝ aram\_stepanyan@mail.ru*

**ՀՀ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

Հողը մարդկության գոյության կարևորագույն պայմանն է, նրա տարաբնույթ կարիքների բավարարման անփոխարինելի միջոցը: Հողի դերը հսկայական է և բազմաբնույթ: Հողի, որպես արտադրության միջոցի, առանձնահատկությունները կարելի է նշել.

- բնության «արտադրանք» հանդիսանալը,
- սահմանափակությունը,
- անփոխարինելիությունը,
- անհամասեռությունը,
- տեղափոխման անհնարինությունը,
- «հավերժությունը»,
- և այլն:

Հողօգտագործման մասին խոսելիս նախ և առաջ նկատի ունենք դրա օգտագործումը հասարակական արտադրության մեջ: Նյութական բարիքների ստեղծման կարևորագույն նախապայմանը և հիմքը հողային ռեսուրսներն են:

Հողը մասնակցում է արտադրության բոլոր ոլորտներում՝ գյուղատնտեսությունում, արդյունաբերությունում, շինարարությունում, տրանսպորտում և այլն: Այնուամենայնիվ, հողի դերը առավել մեծ է գյուղատնտեսությունում: Այն հանդես է գալիս որպես աշխատանքի անհրաժեշտ նյութատեխնիկական բազա, արտադրության կարևորագույն գործոն: Գյուղատնտեսությունում հողային ռեսուրսներն ունեն մի շարք առանձնահատկություններ, որոնք հողը առանձնացնում են արտադրության մնացած միջոցներից, ինչպես նաև մեծ ազդեցություն են գործում գյուղատնտեսական արտադրանքի վրա:


Գյուղատնտեսությունում օգտագործվող բնական ռեսուրսներից կարելի է առանձնացնել հողային և կերային ռեսուրսները: Այդ իսկ պատճառով, դրանք պետք է և՛ քանակապես և՛ որակապես ճիշտ գնահատվեն: Անհրաժեշտ է նաև մշակել և ներդնել այնպիսի գործուն մեխանիզմ, որը կապահովի աստիճանական

անցումը պակաս արդյունավետ օգտագործողից դեպի ավելի արդյունավետ օգտագործողը:

Գյուղատնտեսության ոլորտի ուսումնասիրությունն անհնար է պատկերացնել առանց տնտեսագիտա-մաթեմատիկական մեթոդների և մոդելների կիրառման: Համաձայն Ս. Վոլկովի կողմից առաջարկվող մոտեցման հողօգտագործման ոլորտում կիրառվող մաթեմատիկական մոդելները պայմանականորեն կարելի է բաժանել 3 մասի՝ տնտեսագիտա-մաթեմատիկական, տնտեսագիտա-վիճակագրական և վերլուծական [8]: **Տնտեսագիտա-մաթեմատիկական մոդելները**, ըստ նրա, հիմնականում կիրառվում են հողօգտագործման նախագծի օպտիմալ ռեակցիայի և տարբեր տեսակի հաշվեկշռային կապերի բացահայտման նպատակով: **Տնտեսագիտա-վիճակագրական մոդելների** օգնությամբ վերլուծվում է գյուղատնտեսական արտադրությունը, նախապատրաստվում օպտիմիզացիոն մոդելների համար անհրաժեշտ տեղեկատվությունը, զնահատվում կատարված առաջարկությունները: **Վերլուծական մոդելները** կիրառվում են մուտքային տեղեկատվության նախապատրաստման և կատարված առաջարկությունների հիմնավորման նպատակով:

*Գծապատկեր 1*

**Հողօգտագործման ոլորտում կիրառվող մոդելների դասակարգումը**



Աղբյուրը՝ [8]:

Կարևոր հիմնախնդիրներից է հողօգտագործման ոլորտում ներդրումների ապահովումը և հողօգտագործման արդյունավետության բարձրացումը:

Ներդրումային գործընթացները կարևոր նշանակություն ունեն հողօգտագործման ոլորտում: Համաշխարհային զարգացման պրակտիկան ցույց է տալիս, որ ներդրումային գործունեության արդյունավետությունը տնտեսական աճի կարևորագույն գործոններից մեկն է: ՀՀ սեփականության ձևերի բազմազանության վրա հիմնված շուկայական տնտեսական համակարգի ձևավորումը պայմաններ է ստեղծում ներդրումային գործունեության ընդլայնման համար, որն անխուսափելիորեն կապված է շուկայական շրջանառության մեջ անշարժ գույքի, մասնավորապես հողի, ներգրավմամբ: Շուկայական տնտեսության պայմաններում անշարժ գույքը դառնում է բարձրակարգ ապրանք, որը կապված է շուկայական հարաբերությունների մասնակիցների զգալի ֆինանսական միջոցների հետ: Այս առնչությամբ մեծ նշանակություն է ստանում հողօգտագործման ոլորտում ներդրման համակարգի զարգացումը, որի շնորհիվ հողօգտագործումը և անշարժ գույքի շուկայի ակտիվացումը կիրականացվի ազատ դրամական միջոցների ներգրավմամբ, դրանով իսկ ապահովելով նաև ներդրողների շահերը:

Համեմատած երկարաժամկետ ներդրումների այլ տեսակների հետ անշարժ գույքում ներդրումների առավելությունն այն է, որ անշարժ գույքում միջոցների ներդրումը նաև ինֆլյացիայից պաշտպանվելու միջոց է: Անշարժ գույքը, այդ թվում՝ հողը, որպես ներդրումային ակտիվ, օժտված է ֆիզիկական, տնտեսական և իրավական բնութագրիչներով, որոնք որոշում են անշարժ գույքի արժեքը: Ֆիզիկական բնութագրիչներից կարելի է նշել անշարժությունը, տարատեսակությունը, երկարակեցությունը, անշարժ գույքի օբյեկտների ստեղծման երկարատևությունը: Բացի այդ, անհրաժեշտ է հաշվի առնել նաև անշարժ գույքի, որպես տնտեսական ակտիվի առանձնահատկությունները, որոնք են անհավասարաչափ դրամական հոսքերը՝ կապված գործառնության տարբեր փուլերում անշարժ գույքի վիճակի հետ, բարձր «շեմային» մակարդակի ներդրման անհրաժեշտությունը, կառավարման անհրաժեշտությունը, ցածր իրացվելիությունը և այլն:

Հողօգտագործման ոլորտում որպես ներդրումային գործունեության սուբյեկտներ կարող են հանդես գալ ներդրումային նախագծերի բոլոր մասնակիցները՝ անշարժ գույքի օբյեկտների օգտագործողները, մատակարարները, բանկային, ապահովագրական և միջնորդ կազմակերպությունները, ֆոնդերը և այլն:

Ներդրողները ֆիզիկական և իրավաբանական անձինք են, ովքեր իրականացնում են սեփական, փոխառու և ներգրավված միջոցների ներդրում անշարժ գույքի օբյեկտներում ֆինանսավորման միջոցների ձևով և ապահովում են դրանց նպատակային օգտագործումը:

Որպես ներդրող կարող են հանդես գալ.

- ՀՀ պետական մարմինները,
- տեղական ինքնակառավարման մարմինները,
- ձեռնարկատիրական միավորումները, կազմակերպությունները և այլ իրավաբանական անձինք,
- համատեղ կազմակերպությունները,
- արտասահմանյան կազմակերպությունները,
- տվյալ երկրի ռեզիդենտ կամ օտարերկրյա ֆիզիկական անձինք,
- օտարերկրյա պետությունների ներկայացուցչությունները,

- միջազգային կազմակերպությունները:

Ներդրողներ կարող են լինել նաև ֆինանսա-արդյունաբերական խմբերը, ներդրումային ֆոնդերը և այլն:

Հողօգտագործման ոլորտում ներդրումային նախագծերի իրագործման ժամանակ աշխատանքներ կատարողներ, ի թիվս այլոց, կարող են հանդես գալ նաև ինժինիերինգային ֆիրմաները, որոնք չունենալով սեփական արտադրական հզորություններ, սակայն օժտված լինելով մասնագետ-կառավարիչներով, հանդես են գալիս որպես ներդրումային նախագծերի իրագործման գլխավոր կապալառուներ, ներգրավելով ենթակապալառուի պայմաններով շինարարական մոնտաժային և այլ կազմակերպություններ տարբեր աշխատանքների կատարման համար: Մասնագետ-կառավարիչները ձևակերպում և իրագործում են ներդրումային նախագծի շրջանակներում բոլոր աշխատանքների իրականացման կազմակերպչական պլանը, ապահովում են ներգրավված բոլոր կազմակերպությունների աշխատանքների կոորդինացումը:

Հողօգտագործման ոլորտում ներդրումային նախագծերի իրականացումը կապված է մեծ ծավալով շինարարական նյութերի, կոնստրուկցիաների, տեխնոլոգիական սարքավորումների, այդ թվում ոչ ստանդարտ, էլեկտրաարտադրանքի, կաբելային արտադրանքի, խողովակների, մետաղների և այլնի օգտագործման հետ: Այդ պատճառով ներդրումային նախագծերի կարևոր մասնակիցներ են նշված արտադրանքի մատակարարները և նրանց դիլերները:

Անշարժ գույքի օբյեկտներում ներդրումների իրականացմանը և տրված ֆինանսա-տնտեսական, արտադրական և սոցիալական արդյունքների ապահովմանն ուղղված մտադրությունների և գործնական քայլերի ամբողջությունը իրենից ներկայացնում է ներդրումային նախագիծը:

Ըստ ակտիվների տեսակի ներդրումները անշարժ գույքում լինում են իրական (կապիտալաստեղծ), ֆինանսական և ներդրումներ ոչ նյութական ակտիվներում: Ջարգացող երկրներում գերակշռում են իրական ներդրումները, զարգացած շուկայական տնտեսությամբ երկրներում մեծ դեր են խաղում ֆինանսական ներդրումները [13]: Ֆինանսական ներդրումները կապված են արժեթղթերի պորտֆելի ձևավորման, ձեռքբերման և դրանց իրացման հետ, ֆինանսական պարտավորությունների գնման և իրացման, ինչպես նաև արժեթղթերի թողարկման և իրացման հետ: Ֆինանսական ներդրումները լինում են ուղղակի (բաժնետոմսեր, պարտատոմսեր, մուրհակներ և այլ արժեթղթեր) և անուղղակի (թրասթային պասիվ ներդրում և այլն) [21]:

Ֆինանսական ներդրումը արժեթղթերում, որոնք ապահովված են անշարժ գույքի, մասնավորապես, հողի օբյեկտներով միջնորդավորված ներդրում է: Դրանք լրացնում են իրական ներդրումները, այսինքն ներդրումների մեծամասնությունը վերջին հաշվով դառնում է իրական, անցնելով տեխնոլոգիական շրջան:

Ոչ նյութական ակտիվներում կատարվող ներդրումներին են վերաբերվում ներդրումները հողամասերի, անտառային զանգվածների և անշարժ գույքի այլ օբյեկտների տիրապետման իրավունքներ և այլ գույքային իրավունքներ ձեռք բերելու նպատակով:

Կախված ներդրումների ուղղվածությունից և նպատակներից ներդրումային նախագծերը անշարժ գույքի ոլորտում դասակարգվում են բնակարանային,

գյուղատնտեսականի, արտադրականի, առևտրայինի, ֆինանսականի, բնապահպանականի և այլն [5]:

Հայաստանի Հանրապետությունում պետական և կորպորատիվ արժեթղթերի շուկայի զարգացմանը զուգընթաց դեռևս չեն ձևավորվել ներդրումային ինստիտուտներ, որոնք մի կողմից կապահովեն շուկայի բաց և մրցակցային լինելը և մյուս կողմից՝ քաղաքացիների խնայողությունների ներգրավումը անշարժ գույքում ներդրումների համար: Այդ պատճառով անշարժ գույքի շուկայում պետական քաղաքականությունը, որն ուղղված է անշարժ գույքի օգտագործումից ստացվող եկամուտների ավելացմանը, կոչված է ապահովելու կոլեկտիվ ներդրումների ներհույսը դեպի անշարժ գույքի ոլորտ՝ ներդրողների իրավունքների արդյունավետ պաշտպանության համակարգի ստեղծման պայմանով, որը թույլ կտա ամրապնդել վստահությունը ներդրումային ինստիտուտների նկատմամբ:

Նման քաղաքականության հիմնական գործիքներ պետք է դառնան անշարժ գույքի, մասնավորապես հողի, ոլորտի ներդրումային ինստիտուտների գործունեության կոշտ կարգավորումը, և ինչպես ներդրումային ինստիտուտների, այնպես էլ շուկայի այլ մասնակիցների գործունեության մասին նորմատիվորեն ամրագրված տեղեկատվության պարտադիր տրամադրումը:

Ներդրումը հողերում պետք է կատարվի ներդրումային տարբեր գործիքների և տեխնոլոգիաների օգնությամբ: Առավել լայնորեն կիրառվում են սեփական և փոխառու կապիտալը, լիզինգը, պարտքային պարտավորությունները, անշարժ գույքի ներդրումային ֆոնդերը: Միաժամանակ պետք է մշակվեն անշարժ գույքում ֆինանսական ներդրումների նոր ուղիներ և ձևեր:

Անշարժ գույքի ոլորտում ներդրումների հիմնական գործառնություններից է ֆինանսավորման գործառնությունը՝ ֆինանսական ռեսուրսների տեղաբաշխումը ֆինանսավորման աղբյուրներից իրական ներդրումների վերջնական ներդրողներին: Անշարժ գույքում ներդրումների հիմնական ձևերը կարելի է դասակարգել ըստ կապիտալի ձևավորման սկզբունքի, որի օգնությամբ ձեռք է բերվում անշարժ գույքի օբյեկտը.

- ֆինանսավորում միայն սեփական կապիտալի օգնությամբ,
- ֆինանսավորում փոխառու կապիտալի օգնությամբ,
- ֆինանսավորում խառը՝ սեփական և փոխառու, կապիտալի օգնությամբ:

Անշարժ գույքում ներդրումները հիմնականում կատարվում են խառը ֆինանսավորման միջոցով: Ընդ որում, փոխառու կապիտալը կարող է ունենալ բարդ կառուցվածք, որը բաղկացած է մի շարք վարկերից և փոխառություններից: Սեփական կապիտալը կարող է ներդրվել միանգամից, օրինակ, բաժնային մասնակցության ձևով, կարող է և կուտակվել ընդհանուր վարկավորման տեխնոլոգիայում ներառված խնայողությունների տարբեր համակարգերի միջոցով:

Քաղաքացիների և իրավաբանական անձանց միջոցների անշարժ գույքի ոլորտ ներգրավելու բավականին տարածված ձևերից է պարտատոմսային փոխառությունների թողարկումը: Պարտատոմսային փոխառությունների թողարկման և շրջանառության կազմակերպիչների դերում կարող են հանդես գալ ներդրումային բանկերը:

Ջարգացած երկրներում ֆինանսական շուկայի պարտատոմսային փոխառությունների տեսակարար կշիռը (այդ թվում անշարժ գույքի ֆինանսավորման

ուղղված) կազմում է որպես կանոն 10-15-ից մինչև 60-65%, որը վկայում է պարտատոմսերի, որպես անշարժ գույքի շուկայում ներդրումային գործընթացների ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրի, կարևոր դերի մասին [7]:

Պարտատոմսային փոխառության գլխավոր թերությունն անշարժ գույքի անկայուն շուկայում կարելի է համարել այն, որ էմիտենտը կրում է որոշակի ռիսկեր և հեռանկարում միշտ գոյություն ունի հավանականություն, որ նախագիծը կարող է չհաջողվել:

Պարտատոմսային փոխառությունների շուկայի զարգացմանը խոչընդոտող գործոններից է գործառնությունների հարկման «ոչ բանական» բնույթը: Ինչպես հայտնի է, հաշվապահության տեղական պրակտիկայում էմիտենտի կողմից վճարվող պարտատոմսերի տոկոսները չեն վերագրվում ինքնարժեքի մեջ ներառվող ծախսերին և վճարվում են զուտ եկամտից, որը կտրուկ իջեցնում է փոխառության արդյունավետությունը: Այս կարգը հակասում է հաշվապահության միջազգային ստանդարտներին, որոնց համաձայն պարտատոմսերի դիմաց վճարվող տոկոսները պետք է պահվեն եկամտից մինչև հարկումը: Պարտատոմսերի հետ կապված գործառնությունների հարկը էմիտենտը վճարում է դրանց գրանցման և թողարկման վաճառքի դեպքում 0,5 %-ի չափով թողարկման անվանական ծավալից:

Այուս խնդիրը կայանում է նրանում, որ պարտատոմսերի նկատմամբ հաստատված են մի շարք օրենսդրական պահանջներ, որոնք սահմանափակում են դրանց թողարկումը: Պարտատոմսերի թողարկման դեպքում էմիտենտը պետք է պահպանի հետևյալ պայմանները.

- թողարկված բոլոր պարտատոմսերի անվանական արժեքը չպետք է գերազանցի էմիտենտի կանոնադրական կապիտալը, կամ երրորդ անձանց կողմից թողարկման նպատակով էմիտենտին տրամադրված ապահովման մեծությունը,
- պարտատոմսերի թողարկումը թույլատրվում է կանոնադրական կապիտալի լրիվ վճարումից հետո,
- պարտատոմսերի թողարկումն առանց ապահովման թույլատրվում է էմիտենտի գործունեության երրորդ տարում և արդեն հաստատված տարեկան երկու հաշվեկշիռների առկայության դեպքում:

Ձարգացած երկրներում գոյություն ունեն երկու տիպի ֆինանսական ինստիտուտներ, որոնք սկզբունքորեն տարբերվում են մեկը մյուսից, թույլ են տալիս տարբերել «երկար» փողերը «կարճերից», դրանց համար ստեղծել հարկման և կարգավորման տարբեր ռեժիմներ: Առաջին, բանկեր, որոնք իրենց նշանակությամբ հաշվարկների և շրջանառու վարկերի գործիքներ են: Դրանք վարկավորում են շրջանառությունը, այլ ոչ թե ներդրումները և միայն բացառիկ դեպքերում են վարկավորում երկարաժամկետ նախագծերը:

Երկրորդ, ֆոնդեր, որոնք ֆինանսական կազմակերպություններ են, որոնք թույլ են տալիս կուտակել տնային տնտեսությունների, ֆիզիկական և իրավաբանական անձանց խնայողությունները: Դրանք խստորեն կարգավորվում են պետության կողմից: Ֆոնդերը «երկար» փողերի գործիքներ են. մասնագիտական և ինստիտուցիոնալ ներդրողներ:

Ֆինանսական միջոցներ ունեցող ֆիզիկական անձանց համար գոյություն ունեն *փակ բաժնեմասային ներդրումային ֆոնդեր (ԲՆՖ)*: Փակ ԲՆՖ-ն գույքային համալիր է՝ առանց իրավաբանական անձի ձևավորման, որը բաղկացած է հավա-

տարնագրային կառավարման հիմնադրի (հիմնադիրների) կողմից կառավարող ընկերությանը հավատարմագրային կառավարման հանձնված գույքից և այդպիսի կառավարման ընթացքում ստացված գույքից, որի սեփականության իրավունքի բաժինը հավաստվում է կառավարող ընկերության կողմից հանձնված արժեթղթի միջոցով (ներդրումային փայ կամ բաժնեմաս): Փակ ԲՆՖ-ն երկարաժամկետ նախագծերի, այդ թվում նաև՝ բնակարանային, ներդրման ինստիտուտ է:

Փակ ԲՆՖ-երն ունեն մի շարք առավելություններ.

- սահմանափակված է կողմնակի փայատերերի ի հայտ գալը (միայն հիմնադիրների համաձայնությամբ),
- փայատերերն ի վիճակի են վերահսկել կառավարող ընկերության գործողությունները և ազդել ֆոնդի հիմնական չափորոշիչների վրա,
- փակ ԲՆՖ-ն ունի ավելի լայն ներդրումային դեկլարացիա, ըստ ակտիվների կառուցվածքի ավելի փոքր սահմանափակումներ,
- փակ ԲՆՖ-ն կարող է աշխատել անշարժ գույքի շուկայում,
- առանց փայերի քանակի փոքրացման ներդրումային եկամտի ստացման հնարավորություն (դիվիդենդների վճարման մասն),
- կառավարման հիմնադիրը պաշտոնապես կապված չէ այն անձանց հետ, որոնց արժեթղթերը կազմում են փակ ԲՆՖ-ի գույքը,
- փակ ԲՆՖ-ի գույքին կարող են փոխանցվել ոչ միայն դրամական միջոցները, այլև արժեթղթերը, անարժ գույքը և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները,
- հնարավոր է փայերի երկրորդային շրջանառություն:

*Ֆոնդի գործողության մեխանիզմը* կայանում է նրանում, որ փայատերերը կառավարող ընկերությունից ձեռք են բերում ֆոնդի փայեր: Բոլոր փայերի իրացումից հետո կառավարող ընկերությունը ստացված դրամական միջոցներն ուղղում է անշարժ գույքի ոլորտում գործունեության ֆինանսավորմանը, գնում է արժեթղթեր և արտարժույթ: Ֆինանսական տարվա ավարտին կառավարող ընկերությունը որոշում է այն եկամտի չափը, որ բերել են ֆոնդի ներդրումները փայերի հաշվով, և փայերը հետ է գնում ընթացիկ արժեթով (անվանական + եկամուտը): Քանի որ ներդրումային փայը արժեթուղթ է, ապա փայատերը կարող է ժամկետից շուտ իրացնել այն բորսայում շուկայական գնով:

Ոչ պակաս կարևոր է բաժնեմասային ֆոնդի կառուցվածքը: Բավական խիստ պետական սահմանափակումներ գոյություն ունեն կառավարող ընկերության գործունեության տեղեկատվության բացահայտման առումով: Այս տիպի ֆոնդերում կառավարման և տիրապետման գործառույթները առանձնացված են օրենսդրորեն: Եվ պետությունը շուկայի կարգավորիչների, ֆոնդային բորսայի պետական ծառայությունների միջոցով ուշադիր հետևում է դրանց գործունեությանը: Բացի այդ, ֆոնդի կառուցվածքում գոյություն ունեն նաև աուդիտորներ:

Անշարժ գույքի բաժնեմասային ներդրումային ֆոնդերի (ԲՆՖ) ձևավորումը Ռուսաստանում կոլեկտիվ ներդրումների շուկայի զարգացման ամենահեռանկարային ուղղություններից մեկն է: Ավելին, ԲՆՖ-երը հետաքրքրում են ինչպես կառուցապատողներին, այնպես էլ՝ ներդրողներին [6]:

*Առավելությունները կառուցապատողների համար.*

- անշարժ գույքի բաժնեմասային ներդրումային ֆոնդերը թույլ են տալիս լրացուցիչ միջոցներ ներգրավել շինարարության նախագծերի ֆինանսավորման

համար: Քանի որ անշարժ գույքի ԲՆՖ-երը բազմաթիվ ներդրողների միջոցների միավորում է, ապա այն թույլ է տալիս շուկա դուրս գալ անգամ ոչ խոշոր ներդրողներին,

- բնակելի անշարժ գույքի շուկայում ԲՆՖ-ն հիփոթեքային վարկավորման բազմաթիվ ծրագրերի այլընտրանք է: Ի տարբերություն հիփոթեքի, իրենց միջոցները անշարժ գույքի ԲՆՖ-երում ներդնել ցանկացողների համար պետք չէ ունենալ պարտադիր նվազագույն միջոցներ (որպես կանոն բնակարանի արժեքի 30%): Քանի որ բնակելի անշարժ գույքի շուկայում միջոցներ ներդրած ԲՆՖ-ի ունեցվածքի արժեքի հավելածը համարժեք է բնակարանի գների փոփոխությանը, ապա ներդրողը հնարավորություն ունի նվազեցնելու իր ռիսկերը, քանի որ նրա խնայողությունները փաստորեն ինդեքսավորվում են:

*Առավելությունները ներդրողների համար.*

- սեփական ներդրումների թափանցիկության մակարդակի բարձրացման հնարավորություն, քանի որ անշարժ գույքի ԲՆՖ-երի շուկան կարգավորվում է պետության կողմից: Այս շուկայում իրականացվում է երկաստիճան վերահսկողություն. մի կողմից, անշարժ գույքի կառավարման գործունեության և մյուս կողմից՝ ֆինանսական շուկաների,

- հարկային բեռի թեթևացման հնարավորություն, քանի որ անշարժ գույքի ԲՆՖ-ն հարկատու չէ և, հետևաբար, ԲՆՖ-ի անշարժ գույքից գույքահարկ չի գանձվում: Անշարժ գույքի ԲՆՖ-ն նաև ավելացված արժեքի հարկատու չէ, իսկ փայտափորոջ ներդրումային եկամտից գանձվում է միայն եկամտահարկ շահույթի բաշխման ժամանակ: Այսպիսով, ստացած եկամուտը նոր նախագծերի ֆինանսավորմանն ուղղելու դեպքում փայտերը տնտեսում է շահութահարկը,

- գույքի նկատմամբ սեփականության իրավունքների փոխանցման պարզեցման հնարավորություն: Առքուվաճառքի պայմանագրով վաճառողը վաճառում է ոչ թե անշարժ գույքը, այլ արժեթղթերը (ներդրումային փայերը), որոնք սեփականության իրավունք են տալիս այդ գույքի նկատմամբ: Այդպիսով, վերագրանցման ժամկետը սահմանափակվում է երեք աշխատանքային օրով, իսկ բուն վճարումը չի պարունակում ԱԱՀ:

ՀՀ-ում կոլեկտիվ ներդրումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով, որը սահմանում է ՀՀ տարածքում գործող ներդրումային ֆոնդերի տեսակները, դրանց ներդրումային քաղաքականությանը ներկայացվող պահանջները և այլն: ՀՀ ներդրումային ֆոնդը իրավաբանական անձ է կամ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված ֆոնդի կառավարման պայմանագրերի հիման վրա ձևավորված ակտիվների համախումբ, որն ստեղծվել և գործում է նպատակ ունենալով ներդրողներից հավաքագրված միջոցները միասնական ներդրումային քաղաքականության ներքո արժեթղթերում և/կամ այլ ակտիվներում կոլեկտիվ ներդրումների միջոցով ապահովել այդ միջոցների վերադարձը ներդրողներին կապիտալի ավելացման, շահութաբաժինների և/կամ այլ եկամտի տեսքով՝ վերջինների կողմից իրավաբանական անձի կապիտալում (ակտիվների համախմբում) կատարված ներդրումներին համապատասխան<sup>1</sup>:

<sup>1</sup> ՀՀ օրենքը «Ներդրումային ֆոնդերի մասին», ընդունված 22.12.2010 թ.:

Ֆոնդը համարվում է անշարժ գույքում մասնագիտացված, եթե դրա ակտիվների առնվազն 30 տոկոսը ներդրված է անշարժ գույքում, կամ առնվազն 50 տոկոսը ներդրված է անշարժ գույքում և/կամ անշարժ գույքի հետ կապված արժեթղթերում:

Հողային ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը կարևոր նշանակություն ունի գյուղատնտեսության համար, մասնավորապես, և երկրի տնտեսության համար, ընդհանրապես: Այս իմաստով, հողօգտագործման արդյունավետության բարձրացումն առաջնահերթ խնդիր է: Հողօգտագործման արդյունավետության բարձրացման հիմնախնդիրը ենթադրում է այնպիսի խնդիրների լուծում, ինչպիսիք են.

- գյուղատնտեսությունում սեփականության բազմաձևության զարգացումը,
- գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների կառուցվածքի բարելավումը,
- օրգանական և հանքային պարարտանյութերի լայն կիրառությունը,
- գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացումը,
- հողի ներգրավումը ֆինանսական շրջանառությունում, դրա գրավադրման և վարձակալման պայմանների հեշտացման իմաստով,
- հարկային համակարգի բարեփոխումը, միասնական գյուղատնտեսական հարկի կիրառումը,
- գյուղի սոցիալ-տնտեսական զարգացման արագացումը,
- գյուղատնտեսական հողօգտագործման փիլիսոփայության փոփոխությունը՝ սեփական կարիքների համար արտադրությունից անցումը դեպի շուկան ուղղված արտադրության,
- ցանքաշրջանառության ռացիոնալ համակարգի մշակումն ու ներդրումը,
- սերմնաբուծության և տվյալ տարածքին բնորոշ սորտերի ներդրման գործընթացի զարգացումը,
- կրկնակի և այլ ցանքերի կիրառումը,
- վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարի արդյունավետության բարձրացումը,
- մելիորացիայի և հողի որակի բարելավմանն ուղղված այլ միջոցառումների իրականացումը,
- համապատասխան գյուղատնտեսական տեխնիկայի կիրառումը,
- և այլն:

Արդյունավետության բարձրացման վճռորոշ գործոն է նախկինում չօգտագործվող հողատարածքների ներառումը գյուղատնտեսական շրջանառության մեջ:

Անկախության տարիներին շեշտակիորեն կրճատվել են գյուղատնտեսությունում հողօգտագործման ծավալները: Աղուսակ 2-ը վկայում է, որ վերջին տարիներին գյուղատնտեսական շրջանառությունից դուրս է գալիս տարեկան միջին հաշվով 20 հազ. հա հող: Վատթարանում է նաև հողի որակը:

Հողը գյուղատնտեսությունում համարվում է չվերականգնվող ռեսուրս և, այս իմաստով, հողօգտագործման արդյունավետությունը գյուղատնտեսությունում

բնութագրվում է մի շարք բնահորային և արժեքային ցուցանիշներով: Դրանցից առավել հիմնականներն են.

- գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը,
- 1 հա համախառն արտադրանքը, համախառն և զուտ եկամուտը, շահույթը դրամական միավորներով,
- հողային ռեսուրսների վրա կատարված ծախսերի ծախսածածկումը,
- շահութաբերությունը,
- հողի ներգրավվածությունը գյուղատնտեսությունում (գյուղնշանակության հողերը ընդհանուր հողերի մեջ),
- գյուղնշանակության հողերի օպտիմալ կառուցվածքը տոկոսներով,
- տարբեր գյուղնշանակության հողերի օգտագործման մակարդակները տոկոսներով,
- և այլն:

Հողօգտագործման արդյունավետությունը դիտարկելիս պետք է հաշվի առնվի, որ

- արդյունավետության ցուցանիշները տարբեր են հողօգտագործման տարբեր ձևերի դեպքում,
- հողօգտագործման արդյունավետությունը որոշվում է սոցիալ-տնտեսական գործունեության հետևանքների համակողմանի գնահատումից ելնելով,
- տնտեսական արդյունավետությունը որոշելիս անհրաժեշտ է, մասնավորապես, հաշվի առնել հասարակության ծախսած ռեսուրսները: Այսինքն պետք է հաշվի առնվի, թե ինչ գնով է ապահովվում նման արդյունավետությունը:

Հողերի բերրիությունը կարևորվում է միայն դրա գյուղատնտեսական օգտագործման դեպքում: Այն բնութագրվում է գյուղատնտեսական մշակաբույսերի աճի և զարգացման ողջ ընթացքում անհրաժեշտ նյութերով ապահովելու հատկությամբ: Իրականում, հողի բերրիությունը ոչ միայն կախված է դրանում օգտակար նյութերի, խոնավության, ջերմության և այլնի առկայությամբ, այլ նաև հողում և բերքի մշակման ընթացքում կատարվող ներդրումներից: Այսինքն, հողի բերրիությունը պետք է դիտարկել ինչպես բնական, այնպես էլ տնտեսական գործընթացների տեսանկյունից: Թերևս դա է պատճառը, որ տնտեսագիտության մեջ դիտարկվում են հողի բերրիության բնական, արհեստական և տնտեսական ասպեկտները [14, 17]:

Հողի բնական բերրիությունը ձևավորվել է դրա վերին շերտի ձևավորման գործընթացով, որը տեղի է ունեցել բնության ուժերի՝ արևի, քամու, ջրի ազդեցությամբ: Այն բնութագրվում է որոշակի ֆիզիկական, քիմիական և կենսաբանական առանձնահատկություններով: Այնուամենայնիվ, բնական բերրիությունը միայն բնորոշում է հողի պոտենցիալ որակը: Մինչդեռ, խոնավության, ջերմության պակասը (կամ ավելցուկը) կարող են հողը անօգտագործելի դարձնել:

Հողի արհեստական բերրիություն ասելով հասկանում ենք մարդու գործունեության արդյունքում ձևավորված բերրիությունը: Այն մեծապես կախված է արտադրական ուժերի զարգացման մակարդակից և, այդ իսկ պատճառով, տարբեր է մարդկության զարգացման տարբեր փուլերում: Արհեստական բերրիությունն, ի

թիվս այլոց, ապահովվում է ոռոգմամբ, պարարտացմամբ, էրոզիայից հողերի պաշտպանությամբ և այլն:

Հողի տնտեսական բերրիությունը առավել ամբողջությամբ և բազմակողմանիորեն արտացոլում է հողի արտադրական կարողությունը: Այն, կարելի է ասել, իր մեջ ներառում է հողի բնական և արհեստական բերրիության հասկացությունները և ենթադրում է հողի բնական բերրիության պահպանում, արդյունավետ օգտագործում և բարձրացում: Հողի տնտեսական բերրիության կարևոր ցուցանիշ է գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը: Հողի տնտեսական բերրիության համեմատման համար օգտագործում են հողի բերրիության մակարդակի ցուցանիշը, որն արտահայտում է արտադրանքի թողարկումը մակերեսի մեկ միավորի կամ մեկ հողակտորի հաշվով: Հողի ռացիոնալ օգտագործումն ապահովում է նույն մակերեսից ստացվող արտադրանքի մշտական աճ, ինչը հանդիսանում է մարդկության զարգացման նախապայման և հետևանք:

Համաձայն ՀՀ Հողային օրենսգրքի գյուղնշանակության հողեր են համարվում գյուղատնտեսական կարիքների համար առանձնացված և գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով նախատեսված հողատեսքերը՝

- վարելահողեր (այդ թվում՝ ջրովի և անջրդի),
- բազմամյա տնկարկներ (այդ թվում՝ խաղող, կորիզավոր պտուղ և ընդավոր պտուղ),
- խոտհարքներ,
- արոտավայրեր,
- այլ հողատեսքեր:

Դրանք, մասնավորապես, նաև տարբերվում են մշակաբույսերի տեսակներով և հողի վրա ազդեցության եղանակով [11]:

Գյուղատնտեսությունում հողօգտագործման բնույթը կախված է հողատեսքից:

Գյուղնշանակության հողերից առավել մեծ նշանակություն ունեն վարելահողերը, որոնք 2012 թ. կազմում են ՀՀ գյուղնշանակության հողերի 21.8 տոկոսը կամ շուրջ 450 հազար հա [3]: Դա նաև կարևորվում է նաև նրանով, որ վարելահողերի 1 հա-ի տված արդյունքը գյուղնշանակության հողերից ամենաբարձրերից մեկն է և, այս կապակցությամբ, անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել, որպեսզի դրանք օգտագործվեն առավելագույնս արդյունավետ կերպով, թույլ չտրվի դրանց չափերի կրճատում, իսկ, հնարավորության դեպքում, միջոցներ ձեռնարկվեն, որպեսզի դրանք ավելացվեն:

ՀՀ հողերի կառուցվածքը ներկայացված է աղյուսակ 1-ում և մեծապես կախված է նրանից, թե ո՞ր տարածաշրջանում/մարզում են գտնվում դրանք:

Գյուղնշանակության հողերի կառուցվածքը ՀՀ-ում, 2012 թ.

Սարգեր	Ընդամենը հողեր (հա)	Գյուղնշանակության հողեր (հա)	Այր բլուր վարելահողեր (հա)	Հացահատիկային և հատիկաբերեղենային նշակաբույսերի գանձատարածություններ (հա)	Կարտոֆիլի ցանքատարածություններ (հա)	Բանջարեղենային նշակաբույսերի ցանքատարածություններ (հա)	Բուստանային նշակաբույսերի ցանքատարածություններ (հա)	Պտղի և հատապտղի տնկարկների տարածություններ (հա)	Խաղողի տնկարկների տարածություններ (հա)
<b>Հայաստանի Հանրապետություն</b>	<b>2974300</b>	<b>2052400</b>	<b>448400</b>	<b>172206</b>	<b>31243</b>	<b>25211</b>	<b>5128</b>	<b>39285</b>	<b>17 415</b>
ք. Երևան	22300	3355	971	167	93	319	32	1327	612
Արագածոտն	275600	218240	54016	23621	1569	978	158	6486	1694
Արարատ	209000	156970	25501	5516	896	6406	1380	7299	5120
Արմավիր	124200	97067	41576	6569	1567	8790	3438	7729	7033
Գեղարքունիք	534900	345143	81777	44538	14524	2074	-	1488	1
Լոռի	379900	251155	42075	9690	3712	1359	10	2571	64
Կոտայք	208600	154987	37846	10936	843	1356	-	4690	403
Շիրակ	268000	214548	78941	39717	4148	1486	-	494	-
Սյունիք	450600	308482	43837	20415	1703	978	-	2586	185
Վայոց Ձոր	230800	191626	16209	2634	187	454	19	2143	928
Տավուշ	270400	110784	25607	8403	2001	1011	91	2472	1375

\*Ներառելով Աևանային

Աղյուսակը` Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2008-2012, փոփոխագրական ժողովածու, ՀՀ ԱԿԾ, Երևան, 2013 թ.։  
 Քանի որ Հայաստանի Հանրապետության տարածքի մեծ մասը գտնվում է գյուղատնտեսության համար ռիսկային գոտում, ջերմասեր նշակաբույսերի նշանակությունը ինքնին ռիսկային է։ Այդպիսի տարածքներում մահլեռները և, որպեսզի առաջնային նշանակություն տրվի անասնապահությանը։

Հողի ռացիոնալ օգտագործումը և դրա բերրիության անընդհատ բարձրացումը ենթադրում են դրա համակողմանի քանակական և որակական հաշվառում, կադաստրի միասնական համակարգի առկայություն: Հողի կադաստրը, մասնավորապես, պետք է իր մեջ ներառի տվյալներ հողամասերի սեփականության ձևերի, հողի սեփականատերերի, հողերի կատեգորիաների և արժեքների վերաբերյալ: ՀՀ անշարժ գույքի պետական միասնական կադաստրի համակարգը ձևավորվել է ՀՀ կառավարության 30.06.1997թ. թիվ 234 որոշմամբ: Պետական գրանցման օբյեկտներն են պետական գրանցման ենթակա գույքի նկատմամբ սեփականության, օգտագործման իրավունքը, գրավը, հիփոթեքը, սերվիտուտները, ինչպես նաև, օրենքով նախատեսված դեպքերում, այլ իրավունքներ, դրանց ծագումը, փոխանցումը, փոփոխումը, դադարումը: Իրավունքների գրանցումը կատարվում է այդ իրավունքն առաջացնող փաստաթղթի (անշարժ գույքի առք ու վաճառքի կամ վարձակալության պայմանագիր, հողհատկացման ակտ, ժառանգության, նվիրատվության փաստաթղթեր և այլն):

Անշարժ գույքի հաշվառումը (չափագրումը) անշարժ գույքի՝ հողամասերի և դրանց վրա ամրակայված շենքերի, շինությունների (այսուհետ՝ շինություններ) առկայության, նպատակային նշանակության, սեփականության, օգտագործման ձևերի, դրա որակի ու քանակի, տեսքերի ու տեսակների վերաբերյալ հավաք տվյալներ ստանալն է: Հաշվառման (չափագրման) ենթակա են հողամասերը և դրանց վրա ամրակայված շինությունները: Հողամասերի և դրանց վրա ամրակայված շինությունների որակական հաշվառումն իրականացվում է հողամասի նպատակային և գործառնական նշանակության (հողատեսքերի), շինությունների նպատակային, գործառնական նշանակության, կառուցման տարեթվի, արտաքին հարդարման, ավարտվածության աստիճանի, շինանյութի տեսակի (պատերի, միջհարկային ծածկի, տանիքի) և այլ բնույթի որակական տվյալների հավաքագրման միջոցով:

Հողերի մոնիթորինգը հողային ֆոնդի վիճակի մշտական դիտարկման համակարգ է, որի նպատակն է վեր հանել դրա փոփոխությունները, ստեղծել հիմքեր դրա գնահատման, հաշվառման համար:

Հողի գնահատումը իրենից ներկայացնում է գյուղատնտեսական արտադրությունում դրա հարաբերական արժեքավորության որոշումը: Գնահատման հիմքում ընկած է հողի որակը, որի ազդեցությունը համախառն արտադրանքի, համախառն և զուտ եկամտի, շահույթի և այլ ցուցանիշների վրա կասկածից վեր է: Հողի գնահատումն իրականացվում է երկու ուղղությամբ՝ հողի որպես արտադրության միջոցի ընդհանուր տնտեսական գնահատում և ըստ առանձին գյուղատնտեսական մշակաբույսերի վրա ազդեցության արդյունավետության գնահատում: Գնահատվող ցուցանիշները հաշվարկվում են ըստ հողի տարբեր որակական հատկանիշների, ըստ ռոզեվիության, ըստ մելիորացվածության և այլն:

ՀՀ իրականացված հողային բարեփոխումները ցավոք չբերեցին (զոնե անհրաժեշտ չափով) հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկային գործոնի անցանկալի ազդեցության նվազման: Ընդհակառակը, առկա է հողերի բերքատվության մասսայական անկում, հողերի դեգրադացիա, 1 շնչին ընկնող ՀՆԱ-ում գյուղատնտեսության ծավալների նվազում և այլն: Գնահատել այս կորուստների մասշտաբները, ըստ էության դժվար, իսկ երբեմն էլ անհնար է:

Ըստ պաշտոնական տվյալների, 2006-ից մինչև 2012 թ. գյուղնշանակության հողերի մակերեսը կրճատվել է 3.63 տոկոսով: Մասնավորապես, մշակվող ցանքատարածությունները 2005 թվականին կազմում էին 332 հազար հա, 2010 թվականին՝ 283 հազար հա<sup>1</sup>:

**Աղյուսակ 2**


**Գյուղնշանակության հողերի դինամիկան 2006-2012 թթ. (հազ. հա)**

Տարեթիվ	Բոլոր գյուղնշանակության հողեր	Վարելահողեր	Պտղատու և խաղողի այգիներ	Շեղում % (+,-)		
				գյուղնշանակության հողեր	վարելահողեր	պտղատու և խաղողի այգիներ
2006	2129.6	452.9	51.1	-	-	-
2007	2122.1	452.1	53.9	-0.35	-0.18	5.48
2008	2121.2	450.4	53.5	-0.04	-0.38	-0.74
2009	2120.3	449.4	53.5	-0.04	-0.22	0.00
2010	2100.9	448.5	55.1	-0.91	-0.20	2.99
2011	2077.0	449.2	53.4	-1.14	0.16	-3.09
2012	2052.4	448.4	56.7	-1.18	-0.18	6.18

Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական տարեգրքեր 2001 (1996-1998), 2001 (1999-2000), 2002, 2003, 2004, 2005, 2006, 2007, 2008, 2009, 2010, 2011, 2012, 2013:

**Գծապատկեր 2**

**Գյուղնշանակության հողերի դինամիկան 2006-2012 թթ., հազ. հա**




Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական տարեգրքեր 2001 (1996-1998), 2001 (1999-2000), 2002, 2003, 2004, 2005, 2006, 2007, 2008, 2009, 2010, 2011, 2012, 2013:

<sup>1</sup> ՀՀ կառավարության գործունեության արդյունքներ, Գյուղատնտեսություն - տես՝ <http://report.gov.am/?id=4>

Իրավիճակն ավելի է ծանրանում, եթե ՀՀ բերքատվության ցուցանիշները համեմատվում են այլ երկրների համանման ցուցանիշների հետ: Մասնավորապես, հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի միջին բերքատվությունը 2012 թ. ՀՀ կազմել է 26,5 ց 1 հա-ից այն դեպքում, երբ եվրոպական զարգացած երկրներում, ԱՄՆ-ում և Կանադայում այդ ցուցանիշը կազմում է 60-85 ց 1 հա-ից [20]: Նշված տարբերությունը պայմանավորված է գործոնների բարդ համախմբով, այդ թվում՝ գյուղատնտեսական արտադրանքի և հումքի շուկաների ձախողումներով և անկատարությամբ, հանրային ծառայությունների ցածր որակով այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ գյուղատնտեսական կրթությունը, խորհրդատվությունը, հետազոտությունը և շուկայի տեղեկատվության համակարգերը, գյուղացիական տնտեսությունների կառուցվածքային փոփոխությունների ուշացումներով, գյուղընշանակության հողերի շուկայի թերի զարգացվածությամբ, ֆինանսական միջոցների մատչելիության պակասով, հողի ոչ կայուն կառավարմամբ, ոչ բավարար ոռոգմամբ և տարերային աղետների, օրինակ՝ երաշտների, ջրհեղեղների, ցրտահարությունների և կարկտահարությունների նկատմամբ բարձր խոցելիությամբ: Այս գործոններից որոշներն աշխարհագրական են, մյուսները պայմանավորված են ոլորտում տնտեսական զարգացման ցածր աստիճանով:

**Գծապատկեր 3**

**Ֆորենի միջին բերքատվությունը տարբեր երկրներում (տ/հա)**



Աղբյուրը՝ FAOSTAT. 2010. Production

**Աղյուսակ 3**

**ՀՀ գյուղատնտեսական մշակաբույսերի միջին բերքատվությունների դինամիկան (g 1 հա-ից)**

Մշակաբույս	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012
Հացահատիկա- յին և հատիկա- ընդեղենային մշակաբույսեր	18.6	21.9	15.8	22.8	19.4	13.3	25.9	24.1	22.1	20.7	27.9	26.5
Կարտոֆիլ	114.6	122.8	157.2	161.5	164.5	163.4	183.3	188.7	184.4	170.1	194.3	206.7
Պտղի և հատապտղի տնկարկներ	47.6	39.7	48.1	39.1	104.9	93.9	79.7	101.2	104.4	39.2	73.5	97
Խաղողի տնկարկներ	81.4	82.8	71.4	108.9	119.7	141.2	153.6	128.0	144.9	151.5	158.0	151.3
Բանջարեղեն	224.2	232.3	245.7	266.3	289.0	309,8	324	321.4	327.1	294.2	306.7	325

Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական տարեգրքեր 2001 (1996-1998), 2001 (1999-2000), 2002, 2003, 2004, 2005, 2006, 2007, 2008, 2009, 2010, 2011, 2012, 2013:

Նույն պատկերն է նաև պարարտանյութերի օգտագործման առումով: ՀՀ պարարտանյութերի օգտագործման առկա մակարդակը բավարար չէ նույնիսկ հողերի բնական դեգրադացիան չեզոքացնելու համար:

ՀՀ գյուղատնտեսությունում աշխատանքային ռեսուրսների կազմը և կա-  
ռուցվածքը նույնպես հեռու են օպտիմալ համարվելուց: ՀՀ գյուղատնտեսությու-  
նում զբաղվածության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է աղյու-  
սակ 4-ում և 5-ում:

**Աղյուսակ 4**

**ՀՀ գյուղատնտեսությունում զբաղվածների վերաբերյալ  
ամփոփ տեղեկատվությունը**

	2010		2011		2012	
	հազ. մարդ	%	հազ. մարդ	%	հազ. մարդ	%
<b>Ընդամենը զբաղվածները ՀՀ տնտեսությունում</b>	1185.2	100	1175.1	100	1172.8	100
<b>Այդ թվում՝ գյուղատնտեսությունում</b>	457.4	38.6	457.4	38.9	437.2	37.3

Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2013:

**Աղյուսակ 5**

**Զբաղվածներն ըստ գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական գործունեության (միջին տարեկան, հազար մարդ)**

	2008	2009	2010	2011	2012
<b>Զբաղվածներ, ընդամենը</b>	1183.1	1152.8	1185.2	1175.1	1172.8
<i>այդ թվում՝ ըստ գործունեության</i>					
<b>գյուղատնտեսական</b>	445.3	454.8	457.4	457.4	437.2
որից՝ գյուղացիական տնտեսություններում զբաղվածներ	426.5	442.8	422.5	441.4	427.1
<b>ոչ գյուղատնտեսական</b>	737.8	698.0	727.8	717.7	735.6

Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2013:

Հողօգտագործման արդյունավետության գնահատման համար կարևոր նշանակություն ունի աշխատանքի արտադրողականության ցուցանիշը՝  $V=Q/T$  կամ՝ արտադրանքի աշխատատարությունը՝  $t=T/Q$ :

**Աղյուսակ 6**

**ՀՀ գյուղատնտեսության ոլորտի աշխատանքի արտադրողականության դինամիկան**

	2008	2009	2010	2011	2012
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը, մլրդ. դրամ	628.1	552,1	636.7	795	841.5
Գյուղատնտեսությունում զբաղվածների միջին տարեկան թվաքանակ, հազ. մարդ	454.8	457.4	457.4	437.2	437.2
Աշխատանքի արտադրողականությունը՝ դրամ/աշխատողների թվաքանակ	1381047	1207040	1391998	1818390	1924748

Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2013:

**Աղյուսակ 7**


**ՀՀ գյուղատնտեսության ոլորտի ապրանքային արտադրանքի կազմը և կառուցվածքը**

	2008		2009		2010		2011		2012	
	մլրդ. դրամ	%								
Ընդամենը գյուղատնտեսությունում, այդ թվում՝	628.1	100	552.1	100	636.7	100	795,0	100	841.5	100
<i>Բուսաբուծություն</i>	405.9	64.6	346.7	62.8	392.7	61.7	465.1	58.5	516.0	61.3
<i>Անասնապահություն</i>	222.2	35.4	205.4	37.2	244	38.3	329.9	41.5	325.5	38.7

Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2013:

**Գծապատկեր 4**

**ՀՀ գյուղատնտեսության ոլորտի ապրանքային արտադրանքի կազմը և կառուցվածքը, մլրդ դրամ**



Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2013:

**Աղյուսակ 8**

**Գյուղատնտեսական արտադրանքի հիմնական տեսակների արտադրությունը**

	2008	2009	2010	2011	2012
<b>Ընդամենը</b>					
Հացահատիկ և հատիկաբերեղեն (քաշը գտումից հետո), (1000 տոննա)	415.4	374.9	326.4	440.7	456.1
Կարտոֆիլ	648.6	593.6	482.0	557.3	647.2
Պտուղ և հատապտուղ, (1000 տոննա)	317.8	332.2	128.5	239.4	331.7
Բանջարեղեն, (1000 տոննա)	825.3	819.8	707.6	787.1	849.0
Խաղող, (1000 տոննա)	185.8	208.6	222.9	229.6	241.4
Կաթ, (1000 տոննա)	661.9	615.7	600.9	601.5	618.2
Միս, (1000 տոննա)	70.9	70.7	69.5	71.7	73.9
Բուրդ, տ	1332	1307	1188	1230	1280
Ձու, մլն.հատ	576.1	630.1	702.2	633.6	658.1

Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2013:

Մասնագիտացման մակարդակը որոշելու համար նպատակահարմար է օգտվել հետևյալ բանաձևից

$$K = \frac{100}{Y_m(2x_j - 1)}$$

որտեղ  $Y_m$  – ը տարբեր ճյուղերի փայաբաժինն է համախառն արտադրանքի մեջ,  $j$  – արտադրանքի համարն է:

Արտադրության ընդլայնման վրա էական ազդեցություն ունեն արտադրանքի իրացումն ու դրա արդյունքում ձևավորվող ֆինանսական արդյունքները: Եթե ապահովված չէ ժամանակին, շահավետ իրացումը, ապա խոսել արտադրության ընդլայնման մասին նպատակահարմար չէ:

Հողօգտագործման արդյունավետության գնահատման համար կարևոր նշանակություն ունեն հետևյալ ցուցանիշները.

**1. Գյուղատնտեսության մեջ հողի ներգրավվածության ցուցանիշ (%):**

(Գյուղնշանակության հողեր / Ընդամենը հողեր)\*100%;

**2. Գյուղնշանակության հողերի օգտագործման ինտենսիվության ցուցանիշ (%):**

(Վարելահողեր + Բազմամյա տնկարկներ/գյուղնշանակության հողեր) \* 100%;

**3. Վարելահողերի օգտագործման ցուցանիշ (%):**

(Ցանքատարածություններ / Վարելահողեր)\* 100%;

**4. Հողօգտագործման տնտեսական արդյունավետության ցուցանիշ (դրամ/հա):**

Համախառն արտադրանք (դրամ) / Գյուղնշանակության հողեր (հա)

Նշված ցուցանիշների արժեքները ՀՀ գյուղատնտեսության համար տարբեր տարիներին բերված է աղյուսակ 10-ում:

*Աղյուսակ 9***ՀՀ հողօգտագործման հիմնական ցուցանիշները**

	2008	2009	2010	2011	2012
Գյուղատնտեսության մեջ հողի ներգրավվածության ցուցանիշ, %	71.3	71.3	70.6	69.8	69.0
Գյուղնշանակության հողերի օգտագործման ինտենսիվության ցուցանիշ, %	22.7	22.7	22.9	23.2	23.5
Վարելահողերի օգտագործման ցուցանիշ, %	38.4	38.2	35.5	35.1	38.4
Հողօգտագործման տնտեսական արդյունավետության ցուցանիշ (դրամ*/հա)	296106	260388	303061	382764	410008

Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2008-2012, վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2013 թ.:

Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2013, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2013 թ.:

\* Հաշվի չեն առնված ՀՀ դրամի արժեզրկումը և գնաճը:

Ընդհանրապես, կարևորելով վերոհիշյալը, պետք է նշել, որ վերջին շրջանում նկատվում է «հող», «ռեսուրսներ» հասկացությունների մեկնաբանության շեղման միտում դեպի սոցիալ-տնտեսական հայեցակետ, ի վնաս բնական-էկոլոգիական հայեցակետի: Անհրաժեշտ զարգացում չի ստանում հողային հարաբերությունների «էկոլոգիզացիայի» սկզբունքը:

Գյուղացիական կամ գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններն ինքնուրույն չեն կարող լուծել ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման խնդիրը: Միայն պետության հետ համատեղ ուժերով կարելի է բարձրացնել հողօգտագործման արդյունավետությունը:

## Գրականություն

1. Կլիմայի փոփոխությունը և գյուղատնտեսությունը, երկրի մասին զեկույց, Համաշխարհային Բանկ, 2012, [www.worldbank.org/eca/climateandagriculture](http://www.worldbank.org/eca/climateandagriculture)
2. Հայաստանի Հանրապետության մարզերը և երևան քաղաքը թվերով, 2008-2012, Վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2013 թ.:
3. Հայաստանի վիճակագրական տարեգրքեր, 2001-2013, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2001-2013 թթ.:
4. ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայք՝ [www.armstat.am](http://www.armstat.am)
5. **Асаул А. Н.** Экономика недвижимости, 2-е изд. / СПб.: Питер, 2007.
6. **Бузырев В. В., Чекалин В. С.,** Экономика жилищной сферы / М., 2001.
7. **Вахрин Л. И.,** Организация и финансирование инвестиций / М., 2005.
8. **Волков С.,** Некоторые теоретические вопросы математического моделирования в землеустройстве // Землеустройство: науч. тр. - Вып. 82 / Моск. инт инженеров землеустройства, Москва, 1977, сс. 39-48.
9. **Володин В.,** Оценка потенциала земельных ресурсов // Экономика сельского хозяйства России, № 11, 1999, стр. 23.
10. **Кресникова И.,** Роль государства в управлении земельными ресурсами // Экономика сельского хозяйства России, № 5, 2000, с. 21.
11. **Левахин В. Г.,** Понятие сельскохозяйственных угодий // Аграрное и земельное право.-2005. - №3. - сс. 88-97.
12. **Лысенко Е.,** Эффективность использования земель // Экономист, № 6, 2004, сс. 87-92.
13. **Максимов С. Н.,** Рынок недвижимости как сфера инвестиции / СПб., 2005.
14. **Петранева Г.,** Экономика и управление в сельском хозяйстве / Москва, 2003.
15. **Родин В.,** К эффективному использованию сельхозугодий // Экономика сельского хозяйства России, № 5, 2000, с. 32.
16. **Савченко Е.,** Проблемы регулирования земельных отношений на современном этапе // Международный сельскохозяйственный журнал, № 1, 2001, сс. 3-6.
17. **Сорокин В., Орехов С.,** Экономика сельского хозяйства / Москва, 2008.
18. **Чертовичкий А.,** Актуальные вопросы рационального и эффективного использования земельных ресурсов // Международный сельскохозяйственный журнал, № 4, 2002, сс. 44-47.
19. CIA World Factbook: Armenia, 2011. <https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/am.html>
20. FAOSTAT. 2010. Production. <http://faostat.fao.org/default.aspx?PageID=567#ancor>.
21. **Jack Cummings,** Real Estate Investing / McGraw-Hill, 1993.
22. World Bank: World Development Indicators, 2012, <http://data.worldbank.org/country/armenia>. Note that this document does not indicate the income level for determining the poverty line in Armenia.
23. World Bank. 2010. Community Agricultural Resource Management and Competitiveness Project. [http://www-wds.worldbank.org/external/default/main?pagePK=64193027&piPK=64187937&theSitePK=523679&menuPK=64187510&searchMenuPK=64187283&theSitePK=523679&entityID=000104615\\_20101206121403&searchMenuPK=64187283&theSitePK=523679](http://www-wds.worldbank.org/external/default/main?pagePK=64193027&piPK=64187937&theSitePK=523679&menuPK=64187510&searchMenuPK=64187283&theSitePK=523679&entityID=000104615_20101206121403&searchMenuPK=64187283&theSitePK=523679)
24. World Bank. 2007. *Integrating Environment into Agriculture and Forestry Progress and Prospects in Eastern Europe and Central Asia: Volume II, Armenia Country Report.* <http://www.worldbank.org/eca/pubs/envint/Volume%20II/English/Review%20ARM-final.pdf>

**ԱՄՓՈՓՈՒՄ**

Հոդվածը նվիրված է գյուղատնտեսությունում հողօգտագործման արդյունավետության բարձրացման և հողում ներդրումների հնարավորությունների հիմնախնդիրների ուսումնասիրմանը:

**АННОТАЦИЯ****ЕГОЯН К., ГАБРИЕЛЯН В., СТЕПАНЯН А. - НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ  
ЗЕМЛЕПОЛЬЗОВАНИЯ В РА**

Статья посвящена изучению проблем повышения эффективности землепользования в сельском хозяйстве и определению возможностей инвестиций в землю.

**SUMMARY****YEGHOYAN K., GABRIELIAN V., STEPANYAN A. - SEVERAL PROBLEMS OF LAND  
USAGE IN RA**

The article is devoted to the study of the problems of the land usage efficiency rising in agriculture and to the specification of the opportunities of the investment in land.

**ԳՐԻԳՈՐ ՂԱՐԻԲՅԱՆ**

*ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,  
ՀՀ գիտության վաստակավոր  
գործիչ, տնտեսագիտության դոկտոր,  
ԵՊՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի պրոֆեսոր*

**ՈԱԶՄԻԿ ԻՍԱԿՅԱՆ**

*ԵՊՀ տնտեսագիտության տեսության  
ամբիոնի ասպիրանտ  
էլ.փոստ՝ isahakyanrazmik@mail.ru*

**ՄԻԳՐԱՑԻԱՆ ԱՐՏԱԳԱՂԹԻ ՏԵՍԱԿ ԵՎ ԴՐԱ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Արտագաղթը Հայաստանի պատմության անբաժանելի մասն է: Դա համընդհանուր և ծանր բնույթ ընդունեց, երբ Հայաստանն անվերադարձ կորցրեց իր անկախ պետականությունը և բաժանվեց Թուրքիայի և Պարսկաստանի միջև: Արևմտյան Հայաստանից հայերի արտագաղթը զանգվածային բնույթ ընդունեց 1915 թվականի ցեղասպանության հետևանքով: Օսմանյան կառավարությունն այն իրականացնում էր հայ բնակչությանն ինչպես իր բնօրրանում կոտորելու, այնպես էլ տեղահանելու և Տեր Ջորի անապատներում «խաղաղ» ոչնչացնելու մեթոդներով: Հետագա տարիներին, տարբեր ձևերով ու չափերով դա լրացվեց շարունակական արտագաղթով: Հայ մեծ պատմաբան Նիկողայոս Աղոնցը դառնացած գրեց. աշխարհը, այդ թվում և Խորհրդային Ռուսաստանը անտարբեր մնացին և Մեծ Հայաստանի փոխարեն «Երազների բոցավառ խարույկից մնաց միայն մի աղոտ ճրագ, որ առկայծում է Արագածի ստորոտին, ավա՛ղ այնքան թույլ, որ նրա շողերը հազիվ են հասնում մինչև Արաքսի ջրերը և անզոր են լուսավորելու Մասիսի մռայլ ճակատը»<sup>1</sup>:

Զևավորվեց հայրենիքից դուրս հայկական Սփյուռքը, որում այսօր ապրում է 10 միլիոն հայերից 7 միլիոնը: Ահա հայ ժողովրդի ժողովրդագրության այսօրվա տխուր ու դառը պատկերը: Այդ իրավիճակը չէր կարող հենց այնպես անհետ անցնել: Հայը դարձավ գաղթական՝ ներառելով գաղթելով ապրելու ազգային հոգեբանություն: Գիշտ է, Խորհրդային Հայաստան 1921 թ. մինչև 1973 թ. ներգաղթեց 200 հազարից ավելի մարդ, բայց հայրենադարձությունը հետագա զարգացումներ չունեցավ: Ընդհակառակը, տարբեր պատճառներով, տարբեր ժամանակներում, տարբեր չափերով, նորից տեղ գտան հակառակ միտումները:

Հայաստանում բնակչության արտագաղթի, ներգաղթի և աշխատանքային միգրացիոն հոսքերի նոր զանգվածային զարգացումներ դրսևորվեցին 1988 թ. Սպիտակի երկրաշարժի, Ղարաբաղյան հակամարտության, ԽՍՀՄ փլուզման, Հայաստանի տնտեսական շրջափակման և երկրի տրանսֆորմացիոն հանցավոր

<sup>1</sup> Նիկողայոս Աղոնց, Երկեր, հատ. 2, Երևան, 2012, էջ 32:

վերափոխումների, ինչպես նաև արցախյան պատերազմի և այդ բոլորի արդյունքում երկրի սոցիալ-տնտեսական խոր ճգնաժամի հետևանքներում:

Սպիտակի 1988 թ. երկրաշարժը խլեց 25 հազար հայի կյանք: Շուրջ 200 հազար աղետյալներ (հիմնականում կանայք և երեխաներ) տեղափոխվեցին ԽՍՀՄ այլ հանրապետություններ, որոնցից 150 հազարը վերադարձավ Հայաստան, իսկ 50 հազարը չվերադարձան, կորցրինք: Հետևաբար, **երկրաշարժի աղետի հետևանքով Հայաստանն ունեցավ 50 հազար անվերադարձ արտագաղթած**: Այդ տարիներին ունեցանք նաև Ադրբեջանից և ԽՍՀՄ այլ տարածքներից փախստականների մոտ 420 հազար ներհոսք (360 հազար Ադրբեջանից) և 170 հազար հայաստանաբնակ ադրբեջանցիների արտահոսք: Դժբախտաբար, Ադրբեջանից Հայաստանում հայտնված փախստականների մեծ մասը 90-ական թվականների Հայաստանի սոցիալ-տնտեսական և բարոյահոգեբանական ծանր պայմանների պարագաներում արտագաղթեց Ռուսաստանի Դաշնություն և այլ երկրներ: **Այդ արտագաղթն ըստ էության հետևանք էր դարաբաղյան խնդրի հակասությունների սրման, Սումգայիթի և Բաքվի հայերի ջարդերի**, Ադրբեջանից նրանց տեղահանելուն: Դա դարաբաղյան հակամարտությամբ պայմանավորված արտագաղթ էր: Ընդ որում, արտագաղթի այդ պատճառը չի վերացել, քանի որ այն սրվում է տարածաշրջանային քաղաքական անկայունության և անվստահության խորացմամբ: Այդ պատճառով Ադրբեջանի բանակը 4 միլիարդ դոլարով լրացուցիչ զինելու պայմաններում, իշխանություններն ամեն ինչ պետք է անեն, որ մեր բանակի զինվածությունը որակապես չզիջի Ադրբեջանին: Հանրապետության հրապարակի ոչ մի վերակառուցում, Աշտարակում ոչ մի նոր Հալեպի շինարարություն և նման ոչ մի ֆինանսավորում: Ամբողջ հասարակությունը, պետությունը, մասնավորապես մեծահարուստները և անգամ շարքային հայաստանցիները բոլոր ֆինանսական միջոցները պետք է տրամադրեն միայն մեր բանակի ադեկվատ զինման նպատակներին:

Արտահոսքի ծավալներն աճեցին հատկապես 1992-1994 թվականներին: Երկրաշարժի ավերածություններին գումարվեցին ատոմակայանի և «Նաիրիտ» արտադրական միավորման հանցավոր փակումը: Դա կաթվածահար արեց երկրի տնտեսությունը, փակվեցին բազմաթիվ ձեռնարկություններ, հազարավոր մարդիկ դարձան գործազուրկ ապրելով ցրտի և մթի պայմաններում: Հայաստանի բնակչության համար սոցիալական մեծ աղետ էր բանկերում և խնայողաբանարկներում կուտակված շուրջ 11 մլրդ ԱՄՆ դոլարին համարժեք ընտանիքների ավանդների սառեցումը: Սա Հայաստանի բնակչության աննախադեպ ունեզրկում էր, որի պատճառով միջին դաս, փոքր և միջին ձեռնարկատիրություն չկայացավ, իսկ սեփականաշնորհումից ստացած վաուչերները, բնակչությունը չնչին գներով, որպես հացի փող, վաճառեց հին ու նոր սերտաճած նոմենկլատուրային: Բնակչության հարստության և եկամուտների բաշխման բևեռացումը ահռելի չափեր ընդունեց: Ըստ 1998-1999 թվականների ՀՀ ազգային վիճակագրական ծառայության իրականացրած տնային տնտեսությունների հետազոտության արդյունքների, 20 տոկոս ամենաշատ և 20 տոկոս ամենաքիչ ապահովված բնակչության եկամուտների տարբերությունը հասավ 32 անգամի (Ռուսաստանի Դաշնությունում ընդամենը 16 անգամի դիմաց, իսկ եվրոպական զարգացած երկրներում՝ շատ ավելի փոքր): Տնտեսական խոր ճգնաժամը, զանգվածային գործազրկությունը, բնակչության ավանդների սառեցումը, նոմենկլատուրային

անարդար սեփականաշնորհումը և եկամուտների բևեռացումը բնակչության 56 տոկոսին աղքատացրին, և ընդամենը երեք տարում շուրջ մեկ միլիոն մարդ արտագաղթեց երկրից, նրանցից միայն 370 հազարը վերադարձավ: Արտագաղթածներից ավելի քան 610 հազար մարդ կամ երկրի 5 բնակչից մեկը չվերադարձավ: Դա ազգային աղետ էր, երբ ակտիվ տարիքի, միջինից բարձր կրթամակարդակի տղամարդիկ և կանայք հայտնվեցին ԱՊՀ երկրներում, հիմնականում Ռուսաստանի Դաշնությունում, Եվրոպայում և ԱՄՆ-ում: Իր հետևանքներով դա ժողովրդագրական ճգնաժամ էր, որը բնութագրվում է կանանց և տղամարդկանց բնականոն հարաբերակցության խաթարումով, ամուսնության և ծնելիության անկումներով, բնակչության ծերացումով, ամուսնալուծությունների աճով: Չանգվածային այդ արտագաղթից և ժողովրդագրական այդ մեծ խաթարումներից մինչև այսօր երկիրը խելքի չի գալիս:

Ո՞վ էր մեղավոր: 1920-ական թվականներին, հայերի և Հայաստանի համար շատ ծանր օրհասական տարիներին ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանը Իտալիայում գտնվող Ավետիք Իսահակյանին ուղարկած նամակում գրել է. «Մենք թե՛ դրսից, թե՛ ներսից քանդեցինք մեր երկիրը: Գլխավորապես **մենք և մենք** են ասում և սրա մեջ է ճշմարտությունը... Էսքան աղետների և պարտությունների մեջ ոչ մի մեղավոր չերևաց, ոչ ոք պատասխանի չկանչվեց: Եվ ոչ մեկը անձնասպան չեղավ, որ ապացուցաներ, թե գոնե ամոթ ու խղճմտանք կա էս ժողովրդի մեջ: ... Սա ազգ չի, ժողովուրդ չի խալիս է»: Այնուհետև Հ. Թումանյանն ավելացրել է, որ դա մեր զարհուրելի պատմության արդյունքն է, իսկ լուսահոգի ակադեմիկոս Լևոն Հախվերդյանն ավելացնում է «Մեր այսօրվա կյանքը նույնը չէ՞»<sup>1</sup>: Իհարկե նույնն է:

Ինչո՞ւ նորից քանդվեց մեր երկիրը, ինչո՞ւ նորից զանգվածային գործազրկություն, սոցիալական մեծ բևեռացում ու անարդարություն, համատարած աղքատացում, մեկ միլիոնին հասնող չղադարող արտագաղթ, ամուսնությունների կրճատում, ծննդաբերության անկում, ամուսնալուծությունների ավելացում և բնակչության ծերացում: Նորից ոչ մի մեղավոր, ոչ ոք պատասխանի չկանչվեց և ոչ մեկը ինքնասպան չեղավ:

Ինչո՞ւ արցախյան ծանր ու անհավասար կռվում ժողովուրդը հերոսացավ և հաղթեց, իսկ չկարողացավ ճիշտ երկիր կառուցել և հայտնվեց անելանելի ճգնաժամային իրավիճակներում: Ովքե՞ր էին մեղավորները: Թեկուզ մոտավոր ճշտությամբ դա պետք է ասվի: **Մեծ հաշվով մենք, այդ նոր երկիր կառուցողներս:** Մեր առաջին իշխանավորները՝ ՀՀԾ-ականները, որոնք իրականացրեցին շուկայական տնտեսությանն անցնելու կապիտալի նախասկզբնական կուտակման այնպիսի մոդել, որի արդյունքներում այսօր կանք<sup>2</sup>: Դա հատուկ թեմա է, բավարարվենք այսքանով և շարունակենք արտագաղթի և աշխատուժի միգրացիոն հոսքերի ժամանակակից միտումների վերլուծությունը:

<sup>1</sup> Թումանյանը և հայոց պատմության ճակատագիրը: Կազմեց, ծանոթացրեց և առաջաբանը գրեց Լևոն Հախվերդյանը: Երևան, 2000, էջ 27-28, 30:

<sup>2</sup> Կապիտալի նախասկզբնական կուտակման հայաստանյան առանձնահատկությունները շարադրված են դոցենտ **Ա. Խառատյանի** կողմից: Տես, «Կապիտալի նախասկզբնական կուտակման, հարստության ու եկամուտների բևեռացման առանձնահատկությունները... Հայաստանի Հանրապետության անցումային տնտեսությունում», Երևան, 2011, էջ 11-18:

Ժողովրդագրական զարգացումների, այդ թվում արտագաղթի և աշխատուժի միգրացիայի խնդիրների շուրջ լուրջ հետազոտություններ են կատարել ՀՀ ԳԱԱ սկադեմիկոս Վ. Խոջաբեկյանը, պրոֆեսորներ Ա. Խ. Կարապետյանը և Ս. Ա. Կարապետյանը, դոց. Լ. Մ. Դավթյանը, Ռ. Եգանյանը, դոց. Գ. Եգանյանը և ուրիշներ: Վերջին տարիներին մասնավորապես աշխատաշուկայի, աշխատուժի միգրացիայի և ընդհանրապես արտագաղթի հարցերի շուրջ Հայաստանի Հանրապետությունում լույս տեսան բազմաթիվ աշխատանքներ<sup>1</sup>:

Արտագաղթի և աշխատուժի միգրացիայի վերը նշված պատմահոգեբանական, ցեղասպանության, աղետի, դարաբաղյան հակամարտության և պատերազմի պատճառներին ավելանում են ԽՍՀՄ փլուզման, երկրի սոցիալ-տնտեսական ծանր տրանսֆորմացիոն վերափոխումներով պայմանավորված նոր պատճառներ: ՀՀ 6129 տնային տնտեսությունների 2007-2008 թթ. մեր հետազոտության արդյունքներով, 15 տարիներում ՀՀ մեկնել է տնային տնտեսության անդամների 21,6 %-ը: Տնային տնտեսությունների այն հարցին, թե ո՞րն է արտերկիր մեկնելու ձեր պատճառը, արտացոլված է ստորև բերված աղյուսակում.

### Աղյուսակ 1

#### Ի՞նչ պատճառով եք մեկնել արտերկիր

	Պատասխանների թիվը	ճշգրտված տոկոսը
Պարզապես աշխատանք գտնելու	762	22,6
Ըստ մասնագիտության աշխատանքի բացակայությունը	78	2,3
Լավ վարձատրվող աշխատանք գտնելու	814	24,1
Միանալու ընտանիքի մյուս անդամներին	691	20,5
Սոցիալ-տնտեսական և քաղաքական անկայուն վիճակը ՀՀ-ում	101	3,0
Հայաստանում անվստահությունն ապագայի նկատմամբ	49	1,5
Կրթություն	144	4,3
Այլ	733	21,7
Ընդամենը	3372	100,0

Աղբյուրը՝ ՀՀ աշխատանքի շուկայի վերլուծություն (գիտահետազոտական աշխատանք), Երևան, 2010, էջ 47:

Ինչպես նկատում ենք միայն աշխատանքը չէ, որ պատճառ է դառնում արտագաղթի, միգրացիայի: Լուրջ պատճառներ են. լավ վարձատրվող աշխատանք

<sup>1</sup> Տես, Վ. Խոջաբեկյան, Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX, XX դարերում և XXI դարի շեմին, Երևան, 2001 թ.: «ՀՀ աշխատաշուկայի վերլուծությունը (գիտահետազոտական աշխատանք)», գիտ. ղեկավար Գ. Ղարիբյան, Երևան, 2010 թ.: «Կապիտալի նախասկզբնական կուտակման, հարստության ու եկամուտների բևեռացման առանձնահատկությունները... ՀՀ-ում», գիտ. ղեկավար Գ. Ղարիբյան, Երևան, 2011 թ.: «Միգրացիան և հմտությունները, Հայաստանի ազգային զեկույց», Եվրոպական կրթական հիմնադրամ, Թուրին, 2012 (հետագայում «Միգրացիան և հմտությունները...»): Հ. Սարգսյան, Ք. Անտոնյան, Կ. Խաչատրյան «Միգրացիա, միտումներ, հետևանքներ», Երևան, 2013 թ.:

քը, ըստ մասնագիտության աշխատելը, սոցիալ-քաղաքական անկայուն վիճակը, անվստահությունն ապագայի նկատմամբ, կրթությունը և, վերջապես, միանալու ընտանիքի մյուս անդամներին:

Սույն ուսումնասիրության արդյունքներով Հանրապետության տնային տնտեսությունների շուրջ 20 %-ն արտերկրում ունի ընտանիքի անդամներ և նրանց միանալը դարձել է նոր միգրացիոն հոսքերի ածանցյալ պատճառ: Ավելին, եթե արտերկրում գտնվողները չվերադառնան և նրանց թիվն ու բաժինը շարունակ աճի, ապա հեռանկարում կդառնա նոր՝ ավելի մեծ միգրացիոն հոսքերի պատճառ՝ իր բոլոր վտանգավոր հետևանքներով:

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև աշխատանքային միգրացիայի զարգացումները **Հանրապետության տարածքային կտրվածքում:**

*Աղյուսակ 2*

**Ի՞նչ պատճառներով եք փոխել Ձեր մշտական բնակության վայրը Հայաստանում**

	Պատասխանների թիվը	Ճշգրտված տոկոսը
Աշխատանքի բացակայությունը	304	38,5
Ոչ բավարար վարձատրությունը	33	4,1
Սահմանամերձ շրջաններում պատերազմական վտանգի առկայությունը	33	4,1
Հիմնական կրթական օջախներից հեռու գտնվելը	145	18,3
Գյուղմթերքի իրացման դժվարությունները	5	0,7
Դժվարանում են պատասխանել	72	9,1
Այլ պատճառներ	199	25,1
Ընդամենը	791	100,0

*Աղբյուրը՝ ՀՀ աշխատանքի շուկայի վերլուծություն (գիտահետազոտական աշխատանք), Երևան, 2010, էջ 55:*

Մշտական բնակության վայրը Հայաստանում փոխելու հիմնական պատճառը դարձյալ աշխատանքի բացակայությունն է և ոչ բավարար վարձատրությունը: Դրանց գումարվում է կրթական օջախների հեռու գտնվելը և սահմանամերձ շրջաններում պատերազմական վտանգի առկայությունը:

Այժմ տեսնենք, որպես արտագաղթի դրսևորում, որո՞նք են միգրացիոն հոսքերի ժամանակակից միտումները: Դրանք դրսևորվում են Հայաստանից արտերկիր մեկնելու կամ Հայաստանում մշտական բնակության վայրը փոխելու պատճառների մեջ: Ինչպես նկատեցինք, վերը բերված աղյուսակի տվյալներից, միգրացիայի հիմնական պատճառը ոչ միայն և ոչ այնքան ընդհանրապես աշխատանք գտնելն է (22,6%), այլև լավ վարձատրվող աշխատանք ունենալը (24,1%): Մյուս պատճառները նույնպես մեծ դեր ունեն, մասնավորապես, «Միանալու ընտանիքի մյուս անդամներին», սոցիալական և քաղաքական անկայուն վիճակը, անվստահությունը Հայաստանում, կրթությունը և այլն:

Այդ տեսակետից ուշադրության են արժանի «Միգրացիան և հմտությունները, Հայաստանի ազգային զեկույց» աշխատության մեջ ուսումնասիրված պոտենցիալ և վերադարձած միգրանտների հետազոտության արդյունքները: Այսպես, Հայաստանի 18-50 տարեկան քաղաքացիների 36 %-ը լրջորեն մտածում է Հայաստանից հեռանալու մասին: Տղամարդիկ շատ ավելի մեծ հակվածություն ունեն (42%) արտերկիր տեղափոխվելու, քան կանայք (30%): Հատկապես արտագաղթելու ավելի մեծ հակվածություն ունեն երիտասարդները: Միգրացիայի ամենամեծ հավանականությունը բարձրագույն կրթությամբ խումբն է, որը և պայմանավորում է **«ուղեղների» աճող արտահոսքի միտումը:**

Ինչ վերաբերում է վերադարձած միգրանտների հետազոտության արդյունքներին, դրանք նախ հիմնականում տղամարդիկ են (87%), արտերկրում մնալու միջին տևողությունը եղել է մեկ տարի, տուն ուղարկված տրանսֆերտները ծախսվել են հիմնականում ընտանիքի գոյատևման վրա և միայն աննշան մասն է ծախսվել կրթական կամ բիզնես գործունեության մեջ: Ընդ որում վերադարձած միգրանտների շուրջ կեսը արտերկրում կատարել է որակավորում չունեցող աշխատանք, իսկ 28 %-ը նշել է, որ կատարել է իրենց կրթական մակարդակից ցածր աշխատանք, մի հանգամանք, որը տանում է միգրանտների որակազրկմանը: **Ուստի արտագաղթը, միգրացիան ոչ միայն մարդկային կապիտալի բացահայտ, ուղղակի կորուստ է, այլ դրա հետ մեկտեղ աշխատուժի որակազրկմամբ՝ որակական կորուստ է:**

Վերադարձած միգրանտների կեսը նշել է, որ արտերկրում եղած ժամանակ իրենք նոր հմտություններ ձեռք չեն բերել: Ավելին, վերադարձած միգրանտների միայն 42 %-ն է գտել աշխատանք, իսկ 68 %-ը մտածում է նորից արտագաղթելու մասին<sup>1</sup>: Դա ամենավտանգավոր միտումն է, որը հղի է **ժամանակավոր, ոչ ընտանեկան միգրացիան, անվերադարձ ընտանեկան միգրացիայի վերածելուն:** Հետևաբար, որպեսզի դա կանխվի պետք է պետականորեն իրականացվի սոցիալ-տնտեսական այնպիսի քաղաքականություն, որը ենթադրում է.

- մարդկանց կրթությունն ու հմտությունները համապատասխանեցվի առկա և պոտենցիալ մասնագիտացմամբ աշխատատեղերին;
- մարդկանց հմտությունները առկա և պոտենցիալ մասնագիտացմամբ աշխատատեղերին համապատասխանեցնելու համար անհրաժեշտ է իրականացնել կոնկրետ ծրագրեր;
- վերադարձած միգրանտների համար կառավարությունը, տեղական իշխանությունները պետք է զբաղվածության և գործազրկության համար նպաստավոր համապատասխան տնտեսական ու իրավական, ներդրումային, արտոնյալ հարկային խթաններ ստեղծեն և այլն:

Այժմ դիտարկենք ՀՀ միգրացիոն հոսքերի ու դրանց ծավալների պատմական զարգացումները:

XX դարի 80-ական թվականներից սկսած մի կողմից նվազեց սփյուռքահայերի, Ադրբեջանի և Վրաստանի հայազգի քաղաքացիների ներհոսքը Հայաստան, իսկ մյուս կողմից աճեցին դեպի դուրս, հատկապես Ռուսաստանի դաշնություն, Եվրամիության երկրներ և ԱՄՆ ուղղված արտահոսքերը:

<sup>1</sup> Տես, «Միգրացիան և հմտությունները...», էջ 13:

Ընդ որում, այդ առաջին շրջանում տիպիկ էր սեզոնային աշխատանքային միգրացիան, որը 80-ական թվականներին կազմում էր տարեկան շուրջ 30-40 հազար մարդ: Դրանք, ըստ էության, գյուղացիական հարաբերական գործազուրկներն էին, որոնք արտերկրում հիմնականում զբաղվում էին շինարարության մեջ:

Անկախության տարիներին ուշադրության արժանի միգրացիայի հետազոտություն էր 1995 թ. կատարված հետազոտությունը<sup>1</sup>:

2009 թ. Մարդկային զարգացման ազգային զեկուլցով 2001-2005 թթ. միգրացիայի արդյունքում երկիրը կորցրեց իր բնակչության ավելի քան 17 %-ը<sup>2</sup>: Այդ տարիների հետազոտությունների եզրահանգումներով, 1988 թ. Հայաստանում սկիզբ առած միգրացիոն հոսքերը բաժանվում են հետևյալ չորս փուլերի:

*Աղյուսակ 3*

**Հայաստանի բնակչության 1988-2007 թթ. միգրացիոն ծավալների փորձագիտական փուլային գնահատումը, հազար մարդ**

Փուլեր	Ցուցանիշներ	Տարիներ			
		1988-1991	1992-1994	1995-2001	2002-2007
Ապակայունացման փուլ	Ներհոսք	600			
	Արտահոսք	620			
	Շրջանառություն	-20			
Զանգվածային արտահոսքի - փուլ	Ներհոսք		370		
	Արտահոսք		980		
	Շրջանառություն		-610		
Անցում կայունացման	Ներհոսք			350	
	Արտահոսք			600	
	Շրջանառություն			-250	
Շարունակական ժամանակավոր միգրացիա	Ներհոսք				600
	Արտահոսք				750
	Շրջանառություն				-150
<b>Ընդհանուր շրջանառությունը</b>		<b>-1030</b>			

*Աղբյուրը՝ «Միգրացիան և հնտությունները...», էջ 18:*

1. **Ապակայունացման փուլ: Փախստականներ:** Հիմնական հոսքերն էին փախստականները՝ ներհոսք մոտ 420 հազար (շուրջ 360 հազարը Ադրբեջանից, մնացածը ԽՍՀՄ այլ տարածքներից): Արտահոսք՝ մոտ 170 հազար հայաստանաբնակ ադրբեջանցիներ: Սա եղել է հետխորհրդային հոսքերից միակը, որի արդյունքում երկրի բնակչության թիվը մոտ 250 հազարով աճել է: Դժբախտաբար,

<sup>1</sup> Տե՛ս, UNFPA, Անկախ հետազոտական խումբ՝ պրոֆ. Ս.Կարապետյան, հոգ.գ.թ. Ն. Շահնազարյան, տ.գ.դ. Ռ. Եգանյան, Երևան, 1996, էջ 31:

<sup>2</sup> Տե՛ս, «Միգրացիան և հնտությունները...», էջ 17:

տարբեր պատճառներով, նրանց մեծ մասը Հայաստանից արտագաղթեց (ՌԴ և այլ երկրներ):

**Երկրաշարժի գոտու բնակչության էվակուացում և ռեէվակուացում (1989-1990 թթ.):** 200 հազար աղետյալներ էվակուացվեցին ԽՍՀՄ հանրապետություններ, որոնցից շուրջ 50 հազարը չվերադարձան: Վերադարձան 150 հազարը:

**Հասարակական-քաղաքական միգրացիա** (արտահոսք՝ շուրջ 250 հազար, ներհոսք՝ մոտ 30 հազար) աշխատելու համար բարձր որակավորման մասնագետներ և ԽՍՀՄ նոմենկլատուրային մերժվածներ, նորահայտ գործարարներ և այլն:

**Աշխատանքային սեզոնային միգրացիա:** Այդ մեծ խումբն ամբողջովին ընդգրկվեց երկրաշարժի գոտու վերականգնման աշխատանքներում, որը սակայն ԽՍՀՄ փլուզմամբ՝ 1992 թ. դադարեց և հանգեցրեց սեզոնային աշխատանքային միգրացիայի պահանջարկի:

**2. Զանգվածային արտահոսքի փուլը:** Սոցիալ-տնտեսական խոր ճգնաժամը, տնտեսության ընդհանուր կործանումը և կաթվածահար վիճակը, զանգվածային գործազրկությունը, բնակչության մասսայական ունեզրկումը, սպասարկման ողջ համակարգի կործանումը, նոմենկլատուրային սեփականաշնորհումը, ավանդների սառեցումը, Ատոմակայանի և Նաիրիտի կանգնեցումը, զանգվածային աղքատացումը, եկամուտների ահռելի բեռնացումը և այլն: Երեք տարում 980 հազար մարդու էմիգրացիա և միայն 370 հազար՝ իմիգրացիա, հիմնականում ռեէմիգրանտներ (նախկին էմիգրացվածների վերադարձ), արդյունքում մոտ 610 հազար:

Դրանցից հիմնականը **աշխատանքային միգրանտներ էին**, երկրորդը՝ սոցիալ-կենցաղային միգրանտները (ովքեր հեռանում էին երկրից արտառոց սոցիալ-կենցաղային պայմանների՝ էլեկտրականության հովհարային անջատումներ, տրանսպորտային կոլապս, մուս ու ցուրտ օրեր-գիշերներ և այլն): Ընդ որում, եթե մեկնածների թվում գերազանցում էին աշխատանքային միգրանտները (50%), ապա վերադարձողների մոտ՝ հակառակը սոցիալ-կենցաղային միգրանտները (մոտ 60%, աշխատանքայինի 35%-ի դիմաց): Արդյունքում արտերկրում մնացածների թվում աշխատանքային միգրանտների բաժինը (65%) շուրջ 3 անգամ գերազանցեց սոցիալ-կենցաղային միգրանտների թվին:

Ընդ որում արտահոսքի 75-80 % տեղի ունեցավ դեպի ԱՊՀ երկրներ՝ ՌԴ: Մնացածը գրեթե հավասար բաժնեմասերով՝ Եվրոպա և ԱՄՆ: Այդ փուլում գերակշռել են տղամարդիկ (60%)՝ ակտիվ տարիքում գտնվողներ: Այդ բոլորի արդյունքում խաթարվեց բնակչության ժողովրդագրական կառուցվածքը՝ ըստ սեռի և տարիքի համամասնությունը: Աճեց բնակչության ծերացման միտումը, կրճատվեցին ամուսնությունները, ծնելիությունը, աճեցին մահացությունը, ամուսնալուծությունները և այլն:

**3. Կայունության փուլը (1995-2000 թթ.):** Միգրացիոն ակտիվությունը կտրուկ նվազում է, մոտ **600 հազար էմիգրացում** և շուրջ 350 հազար իմիգրացում (հիմնականում ռեէմիգրանտներ), բացասական մնացորդ՝ 250 հազար:

Արտահոսքը նվազեցրել է տրանսֆերտ փոխանցումներով երկրում մնացածների կենսամակարդակի բարձրացումը:

Ռեէմիգրացիայով ավարտվող հոսքի փոխարկումն անվերադարձ հոսքով՝ հույսի խանրման պարագաներով պայմանավորված:

Արդյունքում՝ սեզոնային միգրացիան նվազման միտում է ցուցաբերում, որը - դրսևորվում է ժամկետային անհատակության և բարձր ռիսկայնության մեջ:

Մեծանում են պարտքով մեկնելու ռիսկայնությունը, լավ վարձատրվող աշխատանք գտնելու ռիսկայնությունը, օրինականության ապահովման ռիսկայնությունը:

Այդ բոլորի արդյունքում 900 հազար մարդ չի վերադառնում: Կան հաշվարկներ 1-1,2 միլիոնին հասնող<sup>1</sup>:

**4. Շարունակական ժամանակավոր միգրացիայի փուլ (2002-2007 թթ.):**

*Աղյուսակ 4*

**ՀՀ արտաքին և ներքին միգրացիան 2002-2007 թթ. հետազոտություններով**

	Ընդհանուր	Տարեկան միջին	Մասնակցությունը արտաքին միգրացիային	Արտաքին միգրացիային մասնակցածների ընդհանուր թիվը
Ներհոսք	600 000	100 000	150 000	230 000 ± 15 000
Արտահոսք	750 000	125 000	320 000	
Շրջանառություն	-150 000	-25 000	-170 000	

*Աղբյուրը՝ «Միգրացիան և հմտությունները...», էջ 24:*

Ակնհայտ է արտաքին միգրացիայի աճը:

Վերադարձող և ընթացիկ միգրանտների կառուցվածքային առանձնահատկությունները.

1. Վերադարձողների շուրջ 2/3-ը և բացակաների մոտ 3/4-ը **տղամարդիկ են:**
2. Վերադարձողների 73,2 %-ը և բացակաների 82,8 %-ը 20-45 տարեկան են:
3. Ամուսնացած են վերադարձողների 70,0 %-ը և բացակաների 67,5 %-ը:
4. Վերադարձողների 41,9 %-ն ունեն ընդհանուր միջնակարգ կրթություն, բացականերինը՝ մոտ 41,0%-ը:
5. Աշխատանք ունեցած վերադարձողների 56,7 %-ը աշխատել է շինարարությունում, 15,3 %-ը՝ առևտրում, 10 %-ը՝ արդյունաբերությունում, բացակաների համար՝ համապատասխանաբար 55,7%, 16,1 % և 18,7 %:
6. Արտերկրում գործազուրկ եղել է մեկնողների ընդամենը 2 %-ը:
7. Վերադարձածների 80,8 %-ը, բացակաների 76,8 %-ը եղել են ՌԴ-ում:

Աշխատանքային միգրանտները գտնում են, որ Հայաստանում ամսական միջին հաշվով 200 000 դրամ աշխատավարձ ունենալու դեպքում չէին մեկնի արտագնա աշխատանքի:

- Վերադարձած աշխատանքային միգրանտների մրցունակությունը ներքին աշխատաշուկայում բարձրանում է:

<sup>1</sup> Տես, Վ. Թովմայան, Ժողովրդագրական մարտահրավերները և բնակչության հեռանկարները: Երևան, 2013, էջ 103:

- Նրանց օգուտը Հայաստանի ներդրումների, աշխատատեղերի ստեղծման և բիզնեսի զարգացման առումներով **սահմանափակ է**:

Այդ բոլորի արդյունքում միգրացիոն գործընթացների ժամանակակից առանձնահատկություններն են.

ա) ձևավորվել է աշխատանքային միգրանտների կայուն զանգված, որի արդյունքում տարեկան շուրջ **15 հազար մարդ** մեկնում է արտերկիր;

բ) առկա են նաև ոչ մեծ մշտական արտաքին միգրացիոն հոսքեր, որոնք ևս - ընթանում են բացասական մնացորդով:

ՀՀ բոլոր տնային տնտեսությունների մոտ 36 %-ը (արտերկրում միգրանտ ունեցող տնային տնտեսություններ 70 %-ից ավելին) պարբերաբար դրամական փոխանցումներ է ստանում:

*Դրամական փոխանցումները:* Վերջին 5 տարիներին դրանց ծավալը շուրջ 15 անգամ գերազանցել է պետական տրանսֆերտների ծավալը, 2004-2005 թթ. ավելի քան 40, իսկ 2007 թ.՝ ավելի քան 85 անգամ գերազանցել է պետական մակարդակի այլ ֆինանսական աջակցությունների չափը:

Բնակչության մեկ շնչի հաշվով միգրացիոն դրամական փոխանցումների (ՄԴՓ) ցուցանիշով Հայաստանը 2,5-3 անգամ գերազանցում է աշխարհի ՄԴՓ-ի առավել մեծ գումարներ ստացող 5 երկրների:

ՀՀ բոլոր տնային տնտեսությունների մոտ 36 %-ը (արտերկրում միգրանտ ունեցող տնային տնտեսությունների 70 %-ից ավելին) պարբերաբար դրամական փոխանցումներ է ստանում:

### Աղյուսակ 5

#### Դրամական փոխանցումներ Հայաստանի Հանրապետություն

Միլիոն դոլար	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011
Դրամական փոխանցումների ներհոսք	168	435	498	658	846	1062	769	996	1254
Աշխատողների դրամական փոխանցումներ	9	93	58	74	94	124	86	-	-
Աշխատողների հատուցում	153	382	429	576	743	929	677	-	-
Միգրանտների փոխանցումներ	6	10	11	8	9	9	7	-	-
Դրամական փոխանցումների արտահոսք	27	138	152	154	176	185	145	-	-
Աշխատողների դրամական փոխանցումներ	6	10	16	19	5	11	11	-	-
Գործատուների հատուցում	19	122	133	130	166	169	130	-	-
Միգրանտների փոխանցումներ	2	6	3	6	5	5	4	-	-

*Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի «Միգրացիան և դրամական փոխանցումները» տարեգիրք, 2011:*

Դրամական փոխանցումները Հայաստանի Հանրապետությունում կազմում են ՀՆԱ-ի 8,8 %-ը:

*Աղյուսակ 6*

**ՀՀ կոմերցիոն բանկերից օգտվող անհատների միջև  
ոչ կոմերցիոն դրամական փոխանցումները**

	2005	2006	2007	2008	2009	2010	2011
<b>Ներհոսք</b>	<b>752.819</b>	<b>960.926</b>	<b>1.319.479</b>	<b>1.635.307</b>	<b>1.124.119</b>	<b>1.293.736</b>	<b>1.546.959</b>
որից							
Ռուսաստան	541.308	739.419	1.078.218	1.371.066	904.011	1.062.266	1.295.163
ԱՄՆ	82.628	94.491	76.571	60.958	59.288	67.789	74.380
<b>Արտահոսք</b>	<b>189.793</b>	<b>208.436</b>	<b>261.170</b>	<b>242.240</b>	<b>184.884</b>	<b>221.763</b>	<b>264.609</b>
որից							
Ռուսաստան	83.537	107.835	129.126	122.759	99.524	116.950	141.352
ԱՄՆ	30.671	13.295	23.764	32.110	23.332	24.554	27.331
<b>Զուտ ներհոսք</b>	<b>563.026</b>	<b>752.490</b>	<b>1.058.309</b>	<b>1.393.067</b>	<b>939.235</b>	<b>1.071.973</b>	<b>1.282.350</b>
որից							
Ռուսաստան	457.771	631.584	949.092	1.218.307	804.487	945.316	1.153.811
ԱՄՆ	51.958	81.196	52.808	28.848	35.956	43.235	47.049

*Աղբյուրը՝ «Միգրացիան և հմտություններ...», էջ 28:*

Դրամական փոխանցումների հետևանքները.

1. Դրամական փոխանցումները նպաստում են անհավասարության և աղքատության կրճատմանն ու կենսամակարդակի բարձրացմանը,
2. նպաստում են մարդկային զարգացմանը, կրթության և առողջապահության զարգացումներին,
3. ստացված տրանսֆերտների 90 %-ի 80 %-ը տնային տնտեսությունները ծախսում են ընթացիկ սպառման վրա, 20 %-ն է խնայվում,
4. տնային տնտեսությունների 9 %-ին հաջողվում է խնայել ստացված եկամտի մինչև 20 %-ը:

Միգրացիոն միտումների և հետևանքների մասին ուշագրավ է Հ. Սարգսյանի, Ք. Անտոնյանի և Կ. Խաչատրյանի «Միգրացիա. մտորումներ, հետևանքներ» հետազոտությունը: Նախ ուշադրության է արժանի Հայաստանի Հանրապետությունից մեկնածների ու ժամանածների հարաբերակցությունը:

*Աղյուսակ 7*

**ՀՀ մեկնածներն ու ժամանածները 1992-2011 թթ.**

(հազար մարդ)

Տարի	Ժամանածներ	Մեկնածներ	Միգրացիոն սալդո (+,-)
1992	636,9	865,5	-228,6
1993	686,9	831,0	-141,1
1994	4700,0	597,8	.127,8
1995	469,5	507,0	-37,5
1996	496,5	517,4	-20,5
1997	473,6	504,9	-31,3
1998	415,3	439,7	-24,4
1999	311,4	318,6	-7,2
2000	399,7	457,2	-57,5
2001	508,2	568,6	-60,4

2002	590,7	593,4	-2,7
2003	618,3	628,5	-10,2
2004	739,9	737,8	2,1
2005	845,8	833,3	12,5
2006	983,7	962,0	21,7
2007	1293,6	1296,8	-3,2
2008	1397,2	1420,2	-23,0
2009	1432,0	1457,0	-25,0
1010	1754,2	1800,9	-46,7
2011	1945,1	1988,9	-43,8

Աղբյուրը՝ «Միգրացիա. միտումներ, հետևանքներ», Երևան, 2013, էջ 5,6:

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ 1992 թվականից մինչև 2004 թվականը ՀՀ ունեցել է միգրացիոն բացասական սալդո: Հետևաբար, 1992 թ. սկսած 20 տարիներին միայն երեք տարիներում (2004, 2005 և 2006) ենք ունեցել միգրացիոն դրական սալդո: Այն 2006 թ. կազմեց ամենաբարձր ցուցանիշը՝ 21,7 հազար մարդ: Այստեղ անշուշտ իր բացասական դերը խաղաց համաշխարհային ֆինանսական տնտեսական ճգնաժամը: Վտանգավոր էր 2008 թ. մինչև 2010 թ. ներառյալ միգրացիոն բացասական սալդոյի աճման միտումը, որը բարեբախտաբար 2011 թ. քիչ կրճատվեց և 2010 թ. 46,7 հազարի փոխարեն կազմեց 43,8 հազար: Սակայն ընդհանուր վիճակը շատ նտահոգիչ է, քանի որ Հայաստանի Հանրապետությունից վանող գործոնները ոչ միայն չեն նվազում, այլև ուժեղանում են: Ավելին, դեպի ՀՀ գրավող այնպիսի գործոն, ինչպիսին հայրենասիրությունն է, Հայաստանը սիրելն է, քիչ ներգործություն ունի և կարծես - թե նվազման միտում ունի: Այնպիսի վանող գործոններ՝ քաղաքական անկայունությունը և Հայաստանի ապագայի նկատմամբ անվստահությունն է, Ադրբեջանի տենդազին սպառազինման, մասնավորապես 4 միլիարդ դոլարի Ռուսաստանից հարձակողական զենքի գնման հետևանքով, աճում է և նպաստում է միգրացիայի ավելի ուժեղացմանը:

Ուշադրության է արժանի հեղինակների հետազոտության այն մեթոդաբանությունը, որ հարցումներ կատարվել են աշխատունակ բնակչության «չմեկնած» և «վերադարձած» էմիգրանտների խմբերում: «Վերադարձած» էմիգրանտ է համարվել 18 և ավելի տարիքում Հայաստանից մեկնած և առնվազն երեք ամիս աշխատած անձը, իսկ «չմեկնած» է համարվել 18-50 տարիքային միջանցքում գրտնըրվող անձը: Ընդ որում 35,6 % եղել են տղամարդիկ, իսկ 64 %՝ կանայք: «Չմեկնածների» խմբում Հայաստանից արտագաղթելու մտադրություն չունի 66,1 %, իսկ 39,9 %՝ ունի: «Պոտենցիալ» էմիգրանտների խմբերում բարձրագույն կրթություն ունեցողների տեսակարար կշիռը 8 %-ով քիչ է նվազագույն կրթություն ունեցողներից:

«Չմեկնածների» խմբում «պոտենցիալ» էմիգրանտ են ոչ միայն **աշխատանք չունեցողները**, այլ նաև աշխատանք ունեցողները՝ հատկապես բարձրագույն և միջին մասնագիտական կրթությամբ աշխատողները: Վերջիններս չնայած աշխատում են, սակայն նրա բնույթով և վարձատրության չափերով ունեն անբավարարվածություն: Այդպես է կարծում և գնահատում միջին և բարձրագույն կրթություն ունեցողների շուրջ կեսը (49 %): Մեկնել ցանկացողները նախընտրում են ՌԴ (57,4 %), Եվրամիություն՝ (մինչև 20 %), նոր ԱՄՆ:

Ընդ որում մեկնողները չնայած նախընտրում են ՌԴ, բայց **ԱՄՆ և Եվրամիությունն** պլանավորում են երկարաժամկետ, անգամ անվերադարձ վերաբնակեցում, որը շատ վտանգավոր է:

«Վերադարձած» խմբում գերակշիռ մասը նախընտրում է կրկին մեկնել: Դրանք կազմում են 65,7 % (այդ խմբի): Դա բացատրվում է մի շարք պատճառներով.

1. «Վերադարձածների» խմբում միայն 33,2 %-ն են հայրենիքում աշխատում, իսկ 42,8 %-ը աշխատանք չի գտնում:

2. Ցածր է աշխատավարձը: Ավելին, անգամ աշխատավարձի մակարդակի ավելացումը բավարար չէ երկիրը չլքելու համար:

3. «Վերադարձածները», հատկապես կանայք, գերադասում են կյանքի որակի բարձրացում, հատկապես բարձրագույն կրթությամբ կանայք:

Ուստի միայն աշխատավարձի բարձրացումը արտագաղթի հարցը չի լուծում:

Հեղինակները կատարել են ՀՀ դեմոգրաֆիական կառուցվածքի փոփոխման ուշադրության արժանի կանխատեսումներ, որոնք լրացնում են ՀՀ բնակչության արտագաղթի վարքագծի զարգացումների գնահատումը:

Ստահողություն է առաջացնում այն իրողությունը, որ թե՛ «չմեկնածների» և թե՛ «մեկնածների» խմբերում, ամբողջությամբ վերցրած, իշխում է արտագաղթելու ցանկությունը: Այդ միտումը մեծ է հատկապես երիտասարդների մոտ:

Մասնավորապես, «չմեկնածների» խմբում տղամարդիկ ավելի են հակված մեկնելու: Ուստի, երիտասարդ տղամարդիկ մեկնում են կայուն աշխատանք, բարձր աշխատավարձ և որակյալ կյանք ստեղծելու մղումով: Ընդ որում, դրանց վրա աշխատանք ունենալու իրողությունը էական դեր չի խաղում:

«Վերադարձած» էմիգրանտ կանայք ավելի են հակված նորից գնալու, քան տղամարդիկ:

«Վերադարձած» էմիգրանտների վրա աշխատանքի առկայությունն ունի նշանակալի ազդեցություն, քանի որ նրանք ծանոթ են նաև արտերկրի դժվարություններին: Սակայն այդ բանը չի կարելի ասել «չմեկնած» կին էմիգրանտների մասին: Նրանք ավելի են հակված նորից մեկնելու արտերկիր: Այստեղ չի օգնում նաև աշխատավարձի որոշ բարձրացումը: Բարձր որակավորմամբ կին թե տղամարդ աշխատողները գիտեն, որ արտերկրում կստանան շատ ավելի մեծ աշխատավարձ:

ՀՀ տնտեսության և ընդհանրապես սոցիալական զարգացումների վրա արտագաղթի տրանսֆորմացիոն փոփոխությունները նշանակալի ազդեցություն և հետևանքներ են թողնում:

Կարճաժամկետ միգրացիոն հոսքերը տրանսֆերտների ավելացմամբ նպաստում են Հայաստանի զարգացումներին. մեծանում են սպառողների եկամուտները, ներքին շուկայում աճում է սպառողական պահանջարկը, նպաստում են նաև որոշ չափով ՀՆԱ-ի ավելացմանը:

Երկարատև միգրացիան չունի այդ առավելությունները: Երկարատև միգրացիան հիմնականում **ընտանեկան** է, և այդ պատճառով տրանսֆերտները փոքրանում են: Դա հիմնականում երիտասարդ «ուղեղների հոսք է», որը կնվազեցնի մարդկային որակյալ կապիտալը և կհանգեցնի բնակչության ծերացմանը:

### **Որո՞նք են արտագաղթի հիմնական բացասական հետևանքները:**

- Ժողովրդագրական բացասական զարգացումները հանգեցրել են նրան, որ 1988-2001 թթ. Հայաստանից արտագաղթել է 1-1,1 մլն մարդ<sup>1</sup>: Ծնելիությունը նվազեց 2,2, իսկ ամուսնությունների թիվը՝ 2 անգամ<sup>2</sup>:

- 2002-2007 թթ. միգրացիոն արտահոսքը եղել է շուրջ 250 հազար մարդ, ներհոսքը՝ 100 հազար մարդ, բացասական մնացորդը՝ 150 հազար մարդ<sup>3</sup>: Բնակչության միգրացիոն շրջանառության բացասական մնացորդի միջին տարեկան մեծությունը կազմեց շուրջ 35 հազար մարդ:

- Միգրացիայի տեմպերը զսպելու գործում դանդաղ է ազդում սոցիալտնտեսական, բարոյահոգեբանական և հայրենասիրական գործոնների դերը:

- «Ուղեղների արտահոսքի» հետևանքով նվազում է երկրի տնտեսական ներուժը:

- Ներքին միգրացիոն տեղաշարժերի զարգացման հետևանքով սահմանամերձ և բարձր լեռնային շրջանների բնակչության թվաքանակի կրճատում և երևանում բնակչության խտացում:

- Ծնունդների առաջիկա կրճատումները և ծերացած բնակչության մահվան առկա գործակիցները կարող են ապագայում հասցնել Հայաստանի Հանրապետության բնակչության բացարձակ թվի արագ նվազմանը:

Արտագաղթը մեղմացնելու և կանխելու համար անհրաժեշտ է այն ծնող պատճառները հստակեցնել, խմբավորել և համակարգել: Ժամանակագրական առումով XX դարի վերջերին Հայաստանից զանգվածային արտագաղթը պայմանավորված էր 1988 թ. Սպիտակի երկրաշարժով, դարաբաղյան հակամարտության և Արցախի ազատագրման պատերազմով, ԽՍՀՄ-ի փլուզման և երկրի տրանսֆորմացիոն աղետալի վերափոխումներով: Արտագաղթի այդ շրջանի առանձնահատկությունն այն էր, որ այն հիմնականում **կարճաժամկետ բնույթ ուներ և վերադարձի ակնկալիք:**

Ներկայումս առաջացել են արտագաղթի նոր պատճառներ, իսկ արտագաղթն ընդունել է աշխատանքային արտագնա միգրացիայի ձև: Ընդ որում, փոխվել է նաև աշխատանքային արտագնա միգրացիայի ձևով արտագաղթի բնույթը: Այն միտում ունի դառնալու անվերադարձ միգրացիա, որը շարունակվելու դեպքում կարող է հայաթափել երկիրը: Մասնավորապես, երիտասարդների միգրացիոն վարքագծի վրա ազդում են երկու հակադիր գործոններ.

ա) երկրից գնալու կամ դուրս մղող գործոններ,

բ) երկիր վերադառնալու կամ գրավող գործոններ:

#### **Դուրս մղող գործոններ են.**

- գործազրկությունը, ցածր աշխատավարձը և աղքատությունը,
- հարստության ու եկամուտների բևեռացման, սոցիալական անարդարության ու կոռուպցիայի էլ ավելի խորացումը,
- ընչաքաղցությունը, ամեն գնով շատ ու արագ հարստանալու ձգտումը, - անպատժելիությունը,
- օրենքով ապրելու վստահ համակարգի բացակայությունը,

<sup>1</sup> Հայաստանի մարդկային զարգացման ազգային զեկույց: ՄԱԿ 2009, էջ 51:

<sup>2</sup> ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2002 թ.: Տեղեկատվական ամսական զեկույց, ՀՀ ԱԿԾ, Երևան, 2003, էջ 150:

<sup>3</sup> Հայաստանի մարդկային զարգացման ազգային զեկույց: ՄԱԿ 2009, էջ 46:

- հայ գյուղի և հայկական ընտանիքի ավանդույթների էլ ավելի խաթարումը, գյուղացու տնտեսական վիճակի էլ ավելի վատթարացումը,
- Հայաստանում ապագայի նկատմամբ անվստահությունը,
- չարացած ապրելակերպի մթնոլորտը,
- ժողովրդագրական բացասական միտումների խորացումը,
- Հայաստանը շատ սիրելու պակասը, դժվարություններով ապրելու հոգեբանության նվազման միտումը,
- հայրենասիրության, բարեկամասիրության և ընկերասիրության նվազման միտումը:

**Որո՞նք են արտերկրի գրավիչ գործոնները:**

- Աշխատանքի և նորմալ ապրելու համար պահանջվող աշխատավարձի առկայությունը,
- որակյալ բարձրագույն կրթություն ստանալու և լավ մասնագետ ու բարձր աշխատավարձ ստանալու երաշխիքը,
- սոցիալական արդարության մթնոլորտը,
- օրենքի գերակայությունը,
- արտերկրում կայանալու հնարավորությունը, որպեսզի տնտեսապես, համապատասխան բարոյահոգեբանական խառնվածքով վերադառնալ հայրենիք:

Հայաստանից չմեկնելու, Հայաստանում մնալու միակ անվիճելի ու մաքուր գործոնը միջին հայաստանցու համար, հայրենիքի կարոտն ու սերն է, որը դժբախտաբար, մեր օրերում թուլացած է աշխատում և այլևս վճռող չէ: Եվ դա է ամենատխուր, մտահոգիչ և վտանգավոր միտումը:

Այսպիսով, երբ համադրում ենք երկրից դուրս մղող և արտերկրի գրավիչ գործոնները, Հայաստանում մնալուն նպաստելու գործոններին, տարբերությունն - ահռելի է՝ հօգուտ միգրացիայի և վերջին հաշվով՝ հօգուտ արտագաղթի:

**Որո՞նք են արտագաղթը կանխելու ուղիները:**

- Տնտեսական աճի տեմպերի արագացումը, գործազրկության կրճատումը, աշխատավարձի բարձրացումը և աղքատության հաղթահարումը,
- բնակչության հարստության և եկամուտների ահռելի բևեռացման կրճատումը, արդարացի բաշխման հաստատումը,
- բնակչության բարոյահոգեբանական դժգոհության և լարվածության հաղթահարումը, ապագայի նկատմամբ վստահության հաստատումը,
- բանակի մարտունակության մշտական բարձրացումը, միջազգային հավասարակշռված գործառնություններով քաղաքական կայունության - պահպանումը,
- հարկային, մաքսային և վարկային հարաբերությունների լծակներով մեծաշնորհների սահմանափակումը և շուկայական ազատ ու արդար մրցակցային - օրենսդրական դաշտով փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացումների և նոր աշխատատեղերի խթանումը,
- պետական մակարդակով աշխատանքային միգրացիայի այնպիսի մոդելի ստեղծումը և կիրառումը, որն ապահովի միգրանտների վերադարձը Հայաստան,
- երկրի ժողովրդագրական բացասական զարգացումների հաղթահարումը, ամուսնությունների և ծննդաբերության աճի խրախուսումը,

- հատուկ ֆոնդերով, բարձր աշխատավարձով «ուղեղների» արտահոսքի կանխումը,
- սահմանամերձ գյուղերից արտագաղթի կանխումը և ներգաղթի խթանումը,
- բարձր լեռնային գյուղերի վերակենդանացումը և զարգացումը,
- հայ գյուղի և հայ ընտանիքի ավանդույթների վերակենդանացումը,
- էկոլոգիական վտանգավոր ու աղետալի վիճակների հաղթահարումը,
- երկրում համընդհանուր խնայողական հոգեբանության արմատավորումը, պետական ու մարզային ուռճեցված հաստիքների և թանկարժեք գործուղումների շեշտակի կրճատումը, պաշտոնյաների և մեծահարուստների համար «սափրազլուխներով» անվտանգության «համակարգի» լուծարումը,
- կոռուպցիայի հաղթահարումը և պետության հեղինակության բարձրացումը,
- «սեփական» շքանշաններով մասսայական պարզևատրումների ու խրախճանքների արգելումը, երկրի ծանր խնդիրների լուծմամբ մտահոգությամբ ապրելը,
- արտագաղթի կրճատումը և հաղթահարումը դիտել մեր ողջ ժողովրդի, ԳԳ Ազգային ժողովի, քաղաքական բոլոր կուսակցությունների, իշխանական բոլոր օղակների սրբազան գործը՝ երկրի նախագահի անմիջական գլխավորությամբ:

## ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննարկվում են միգրացիոն պրոցեսների ժամանակակից միտումները, վերլուծվում են միգրացիայի հիմնական տեսակները և առաջադրվում միգրացիայի, հատկապես՝ անվերադարձ միգրացիայի կանխարգելման ուղիները:

## АННОТАЦИЯ

### ГАРИБЯН Г., ИСААКЯН Р. – ЭМИГРАЦИЯ КАК ТИП МИГРАЦИИ И ЕЁ ТЕНДЕНЦИИ В РА

В статье рассматриваются современные тенденции миграционных процессов, анализируются основные виды миграции и предлагаются пути предотвращения миграции в целом и в особенности безвозвратной миграции.

## SUMMARY

### GHARIBYAN G., ISAHAKYAN R. - EMIGRATION AS A TYPE OF MIGRATION AND ITS DEVELOPMENT TRENDS IN RA

The article discusses the current trends of migration processes, analyzes the major types of migration and suggests ways to prevent migration in general and the irrevocable migration in particular.

**ՀԱՅԿ ՍԱՐԳՅԱՆ**

*տնտեսագիտության դոկտոր,  
ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի պրոֆեսոր  
Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան  
Էլ.փոստ՝ sargsyan.yus@gmail.com*

**ՔՐԻՍՏԻՆԵ ԱՆՏՈՆՅԱՆ**

*տնտեսագիտության թեկնածու  
ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի ասիստենտ  
Էլ.փոստ՝ kristine.antonyan@ysu.am*

**ԿԱՌԼԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

*տնտեսագիտության թեկնածու  
ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի ասիստենտ  
Էլ.փոստ՝ karlen.khachatryan@ysu.am*

**ՀՀ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԳԱՂԹԻ ՀԱԿՎԱԾՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆԱՅԻՆ  
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Հայաստանի միգրացիոն իրավիճակը կտրուկ փոփոխությունների ենթարկվեց 1980-ական թվականների վերջերից սկսած՝ պայմանավորված 1988 թ. Սպիտակի երկրաշարժով, ԽՍՀՄ փլուզման հետևանքով քաղաքական և սոցիալ-տնտեսական համակարգերի վերափոխումներով և Ղարաբաղյան պատերազմի ծանր հետևանքներով:

Պետք է նշել նաև, որ վերջին քսան տարիների ընթացքում էապես փոխվել են Հայաստանի Հանրապետության միգրացիոն հոսքերը, դրանց դրդապատճառներն ու հետևանքները, միգրացիոն գործընթացների մեջ ներգրավված խմբերն ու նրանց խնդիրները: Նշված փոփոխությունները պահանջում են միգրացիոն հիմնախնդիրների համակարգային ուսումնասիրություն և առկա բոլոր կապերի վերհանում: Միայն այդ ճանապարհով է հնարավոր մշակել արդյունավետ պետական միգրացիոն քաղաքականություն:

1991 թ. անկախացմանը նախորդած ու հաջորդած տարիներին Հայաստանի Հանրապետությունը ստիպված է եղել դիմագրավել ինտենսիվ միգրացիոն գործընթացներով պայմանավորված բազմապիսի մարտահրավերներով: Պատահական չէ, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը միգրացիայի պետական արդյունավետ կարգավորման հիմնախնդրի լուծումը սահմանել է որպես իր գործունեության առանցքային ուղղություններից մեկը<sup>1</sup>:

<sup>1</sup> Տես՝ «ՀՀ-ում բնակչության միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 2010 թ. դեկտեմբերի 30-ի թիվ 51 որոշում:

Աղյուսակ 1-ում ներկայացված են 1992-2011թթ. Հայաստանի Հանրապետությունից մեկնածների և ժամանածների տվյալները:

*Աղյուսակ 1*

**ՀՀ-ից մեկնածներն ու ՀՀ ժամանածները 1992-2011 թթ.**

*հազար մարդ*

Տարի	Ժամանածներ	Մեկնածներ	Միզրացիոն սալը (+,-)
1992	636.9	865.5	-228.6
1993	689.9	831.0	-141.1
1994	470.0	597.8	-127.8
1995	469.5	507.0	-37.5
1996	496.9	517.4	-20.5
1997	473.6	504.9	-31.3
1998	415.3	439.7	-24.4
1999	311.4	318.6	-7.2
2000	399.7	457.2	-57.5
2001	508.2	568.6	-60.4
2002	590.7	593.4	-2.7
2003	618.3	628.5	-10.2
2004	739.9	737.8	2.1
2005	845.8	833.3	12.5
2006	983.7	962.0	21.7
2007	1293.6	1296.8	-3.2
2008	1397.2	1420.2	-23.0
2009	1432.0	1457.0	-25.0
2010	1754.2	1800.9	-46.7
2011	1945.1	1988.9	-43.8

*Աղբյուրը՝ աղյուսակը կազմվել է ելմելով ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության և ՀՀ տարածքային կառավարման նախարարությանն առընթեր Միզրացիոն պետական ծառայության հրապարակումներից:*

**1988-2001 թթ. հանրապետությունից արտագաղթել են 1,0-1,1 մլն** Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ<sup>1</sup>, ինչը կազմում է մշտական բնակչության ներկայիս թվի 1/3-ից ավելին: Ակնհայտ է, որ նման մասսայական երևույթն էական ազդեցություն է ունեցել և դեռ երկար կունենա երկրի իրողությունների վրա: Ազդեցությունը հատկապես մեծ է ժողովրդագրական պատկերի վրա: Կտրուկ փոփոխություն կրեց ինչպես ժողովրդագրական կազմը, այնպես էլ բնակչության սեռատարիքային կառուցվածքը: Ծնելիությունը նվազեց շուրջ 2.2, իսկ ամուսնությունների թիվը՝ գրեթե երկու անգամ<sup>2</sup>:

**2002-2007թթ. արտաքին միզրացիոն տեղաշարժերի ծավալները կազմել են. արտահոսք՝ մոտ 750 հազար մարդ, ներհոսք՝ գրեթե 600 հազար մարդ, բացա-**

<sup>1</sup> Տե՛ս՝ Հայաստանի Մարդկային զարգացման ազգային զեկույց / ՄԱԿ ԶԾ, 2009 թ., էջ 51:

<sup>2</sup> Տե՛ս՝ Армения в цифрах в 1989 году / Госкомстат Арм. ССР. - Ер., 1990, стр. 20: ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2002 թ. հունվար-դեկտեմբերին, Տեղեկատվական ամսական զեկույց / ՀՀ ԱԿԾ, Եր., 2003, էջ 150:

**սական մնացորդ՝ շուրջ 150 հազար մարդ**<sup>1</sup>: Այս շրջանում տարեկան միջին հաշվով արտաքին միգրացիոն բացասական մնացորդը կազմել է գրեթե 25 հազար, որոնցից շուրջ 9 հազարը էմիգրացվել է մշտապես (դուրս են եկել մշտական հաշվառումից), իսկ 15-20 հազարը աշխատանքային միգրանտներն են, որոնք չեն վերադարձել և շարունակում են մնալ ընդունող երկրներում: Այսինքն՝ նշված ժամանակաշրջանի ընթացքում առաջացել է այդպիսի անձանց շուրջ 110 հազարի հասնող «կուտակումներ», սակայն չի կարելի բացառել հետագայում նրանց վերադարձը հայրենիք<sup>2</sup>:

Մյուս կողմից խոսելով միգրացիայի հետևանքների մասին՝ հարկ է նշել, որ էմիգրանտների կողմից երկիր փոխանցվող դրամական միջոցները, էապես մեղմեցին և շարունակում են մեղմել բնակչության անվճարունակության խնդիրը, սոցիալական և կենցաղային շատ խնդիրներ:

Ակներև է մի բան, որ վերջին քսան տարիների ընթացքում արտագաղթածները հազիվ թե մասսայաբար, խոշոր խմբերով վերադառնան: Բայց մյուս կողմից էլ էական է նրանց հայրենիքի հետ ունեցած կապը (դրամական փոխանցումներ, անշարժ գույքի տեսքով սեփականության առկայություն և այլն), ինչը թույլ չի տալիս բացառել այս սեզմենտի ոչ որոշ ռեէմիգրացիոն հավանականությունը և ոչ էլ արտահոսքածին դերը:

ՀՀ միգրացիոն հոսքերում ավանդաբար իր ուրույն տեղն է ունեցել սեզոնային աշխատանքային միգրացիան (գարուն-աշուն): Այս հոսքը, որն առավելապես Ռուսաստանի Դաշնություն և նախկին ԽՍՀՄ երկրներ է ուղղված, ընդամենը գոյատևած և «օրվա հացի» խնդիր է լուծում: Այս սեզոնային միգրանտները հիմնականում զբաղված են շինարարության և տրանսպորտի, առևտրի և սպասարկման ոլորտներում և կատարում են որպես կանոն ցածր որակավորում պահանջող աշխատանք: Այս միգրանտները բազմաթիվ խնդիրների են առնչվում սկսած վճարման ուշացման, մասնակի և երբեմն նաև բոլորովին չվճարման, աշխատանքային շահագործման խնդիրներից, որոնք հետևանք են աշխատանքի բանավոր պայմանավորվածությունների, վերջացրած մուտքի երկրներում անօրինական վիճակում հայտնվելը: Նշված խնդիրները էլ ավելի կարևոր են դարձնում սեզոնային աշխատանքային միգրացիայի գործընթացներում պետության միջամտությունը, այդ խնդիրների համապատասխան օրենսդրական կարգավորում տալը:

Կասկածից վեր է միայն այն, որ մոտ ապագայում արտաքին միգրացիոն հոսքերը զգալի չափով կանխորոշվելու են արտերկրում կուտակված աշխատանքային տևական միգրանտների հետագա միգրացիոն վարքագծով: Չի բացառվում ինչպես նրանց մեծ մասի մշտական բնակության մնալը, այնպես էլ իրենց ընտանիքների տեղափոխումը: Արդյունքում՝ առաջիկա 5-10 տարիներին Հայաստանի Հանրապետությունից կարող են էմիգրացվել շուրջ 300 հազար քաղաքացիներ: Նման սցենարը բոլոր առումներով ոչ միայն անցանկալի է, այլև կարող է աղետալի լինել:

Այսպիսով, չնայած սրության աստիճանի որոշ մեղմմանը Հայաստանի ներկայիս միգրացիոն իրավիճակն ընդհանուր առմամբ շարունակում է մնալ բարդ,

<sup>1</sup> Տես՝ Հայաստանի մարդկային զարգացման ազգային զեկույց / ՍԱԿ 20 2009 թ., էջ 46:

<sup>2</sup> Տես՝ նույնը, էջ 47:

ուստի և պահանջում է հրատապ լուծումներ: Դրա պատճառներն են. աշխատատեղերի և արժանավայել գոյատևման համար անհրաժեշտ եկամուտների բացակայությունը, սոցիալ-տնտեսական ոլորտում առկա հիմնախնդիրները, տարածքային զարգացման անհամաչափության խնդիրները, ապագայի նկատմամբ վստահության բացակայությունը:

Հայաստանի Հանրապետության արդի միգրացիոն գործընթացների ժողովրդագրական բացասական հետևանքներն են՝

- մշտական բնակչության թվի աճի դանդաղում և առկա բնակչության թվի նվազում,

- բնակչության (հատկապես գյուղական բնակչության), ըստ սեռի և տարիքի բաշխման համամասնությունների խաթարում՝ վերարտադրողական տարիքի անձանց բացարձակ թվի և տեսակարար կշռի նվազում,

- սեռերի հարաբերակցության խախտում ու դրանով պայմանավորված վերարտադրության գործընթացների բարդացում,

- բնակչության ծերացման արագացում,

- արտագնա աշխատանքային միգրանտների տևական բացակայության պատճառով ընտանիքի կայունության նվազում, ամուսնա-ընտանեկան հարաբերությունների համակարգի խաթարում, աճող սերնդի դաստիարակության և սոցիալացման խնդիրների սրում,

- սահմանամերձ և հեռավոր տարածաշրջանների բնակչության թվաքանակի նվազում, գյուղական և փոքր ու միջին քաղաքային բնակավայրերի տնտեսական և սոցիալական ներուժի նվազում,

- երկրի բնակչության երևանում և երևանամերձ մարզերում կենտրոնացման շարունակում և այլն:

Այսպիսով, միգրացիոն իրավիճակի վերլուծությունից հետևում է, որ միգրացիոն հիմնախնդիրները ենթակա չեն ինքնակարգավորման: Ավելին՝ համարժեք և արդյունավետ պետական միջամտության բացակայությունը հավանական է դարձնում դրանց հետագա սրումը:

Պետությունը պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ բարելավելու միգրացիոն գործընթացների հետևանքով առաջացած ժողովրդագրական անբարենպաստ իրավիճակը: Իսկ դա պահանջում է Հայաստանի Հանրապետության բնակչության աճի խթանմանը, բնակչության սեռատարիքային արդյունավետ համամասնությունների ձևավորմանը նպաստող պետական քաղաքականության իրականացում: Ժողովրդագրական բացասական միտումները դասվում են Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքների շարքին<sup>1</sup>: Հայաստանի Հանրապետության բնակչության սեռատարիքային անհամամասնությունները վերացնելու ուղղությամբ կարևոր է երկրից հեռացած վերարտադրողական տարիքի տղամարդկանց կայուն ներհոսքի ապահովումը, արտահոսքի կանխարգելմանը նպաստող սոցիալ-տնտեսական քաղաքականության իրականացումը: Հայաստանի ներկայիս ժողովրդագրական իրավիճակը բնութագրվում է որպես «գրոյական» վերարտադրության իրավիճակ և որպես կառավարության հիմնական գերակայություններից մեկը նախանշված է ժողովրդագրական իրավիճակի բարելավմանն ուղղված միջոցա-

<sup>1</sup> ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն, մաս 1, կետ 3:

ռունները, մասնավորապես ծնելիության աճի և երիտասարդ ընտանիքների աջակցությանն ուղղված քաղաքականության մշակումն ու իրականացումը<sup>1</sup>:

Միգրացիոն երևույթների աշխուժացմանը զուգընթաց հրատապ դարձավ միգրացիոն գործընթացների պետական կարգավորման անհրաժեշտությունը: Ուստի, պետական կառավարման համակարգում ստեղծվեց հատուկ մարմին, որը պետք է զբաղվեր միգրացիոն խնդիրներով: Գիշտ է, իր գոյության ավելի քան 20 տարիների ընթացքում միգրացիոն ծառայությունը տարաբնույթ անվանումներ ու գերատեսչական պատկանելիություն է ունեցել, այն մշտապես կոչված է եղել միգրանտների խնդիրներով զբաղվելուն, համապատասխան միգրացիոն քաղաքականություն մշակելուն և այն կյանքի կոչելուն:

Կարևոր է նաև հիշատակել, որ պետական կառավարման համակարգում համապատասխան մարմինների ձևավորմանը զուգընթաց Հայաստանը ձեռնամուխ եղավ միգրացիոն խնդիրների կարգավորման իրավական դաշտի ստեղծմանը: Առաջին հերթին, անկախացման հետ մեկտեղ՝ Հայաստանի Հանրապետությունը միացավ ՄԱԿ-ի «Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին»<sup>2</sup>, Եվրոպայի խորհրդի «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին»<sup>3</sup> 1950 թ., Աշխատանքի Միջազգային Կազմակերպության «Աշխատանքի և զբաղմունքների բնագավառում խտրականության մասին»<sup>4</sup> կոնվենցիաներին: Այս կոնվենցիաներին միանալով՝ Հայաստանը հաստատեց միջազգային իրավունքի հիմնարար նորմերին համահունչ միգրացիոն քաղաքականություն իրականացնելու պատրաստականությունը: Հայաստանի Հանրապետությունը միացել է նաև բազմաթիվ այլ բազմակողմ համաձայնագրերի:

Մեր երկիրը միգրացիոն գործընթացները պատշաճ կանոնակարգելու և միգրացիոն հոսքերը արդյունավետ կառավարելու նպատակով, ինչպես նաև կարևորելով այս ոլորտներում այլ երկրների հետ համաձայնեցված գործողությունների իրականացումն ու համագործակցությունը կնքել է երկկողմ համաձայնագրեր Ռուսաստանի Դաշնության, Վրաստանի, Բելառուսի, Ուկրաինայի, Չեխիայի Հանրապետության, Նորվեգիայի Թագավորության, Բենիլյուքսի պետությունների, Շվեդիայի Թագավորության, Բուլղարիայի Հանրապետության, Գերմանիայի Դաշնային Հանրապետության, Շվեյցարիայի Դաշնային խորհրդի, Դանիայի Թագավորության հետ:

Անշուշտ պակաս կարևոր չէր նաև ազգային օրենսդրության մշակումը և դրա հետագա կատարելագործումը: Այս առումով հատկանշական էին հատկապես «Քաղաքական ապաստանի մասին», «1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնազաղթած փախստականների համար կառուցված բնակարանների սեփականության իրավունքով փախստականներին հատկացնելու մասին», «Փախստականների և ապաստանի մասին» և «Քաղաքական ապաստանի մասին» ՀՀ օրենքները:

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1207-Ն որոշմամբ հաստատված Կայուն զարգացման ծրագիր, կետ 64, 4-րդ ենթակետ:

<sup>2</sup> The Convention relating to the Status of Stateless Persons, UNHCR, 1954.

<sup>3</sup> The Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms, Council of Europe, 4 November 1950.

<sup>4</sup> Discrimination (Employment and Occupation) Convention, ILO, 1958 (No. 111).

Ինստիտուցիոնալ հենքից և իրավական կարգավորումից զատ, վերջին քսան տարիների ընթացքում թե՛ պետական և միջազգային կառույցների, թե՛ անհատ հետազոտողների կողմից մշտապես հետազոտվել են միգրացիոն երևույթներն ու փորձ է արվել բացահայտել դրանց հիմնական դրդապատճառներն ու մատնանշել դրանց բացասական հետևանքների վերացման ուղիները: Միաժամանակ հարկ է ընդգծել, որ միգրացիոն գործընթացները ուսումնասիրվել են այս կամ այն երևույթի վրա ունեցած ազդեցությունը գնահատելու համատեքստում: Որոշ հետազոտություններում խնդիր է դրվել ուսումնասիրել միգրացիայի և մասնավոր տրանսֆերտների կապը, մեկ այլ հետազոտողներ վերլուծել են միգրացիայի ՀՆԱ փոփոխության վրա ունեցած ազդեցությունը, երրորդները միգրացիոն խնդիրները ուսումնասիրում են առավելապես աշխատանքային միգրացիայի տեսանկյունից և այլն<sup>1</sup>:

Մեր հետազոտությունը **Ուլտալ** է ունեցել բացահայտել ՀՀ արտագաղթի հիմնական կառուցվածքը, միտումները, ուղղությունները, ինչպես նաև դրդապատճառները, և դրանց հիման վրա հանդես գալ պետական քաղաքականության մեջ երկարաժամկետ հատվածում բնակչության աճը խթանող և արտագաղթը զսպող առաջարկներով:

Հետազոտության իրագործման համար մենք կիրառել ենք **քանակական և որակական հետազոտական մեթոդները**:

Քանակական հետազոտության հիմքում ՀՀ ողջ տարածքում կատարված հարցումն է, որը պատվիրել է Եվրոպական Վերապատրաստումների Հիմնադրամը (ETF, [www.etf.eu](http://www.etf.eu)) և իրագործել Հետազոտական Ռեսուրսների Կովկասյան Կենտրոն-Հայաստանը (CRRC Armenia, [www.crrc.am](http://www.crrc.am)): Հարցումն անց է կացվել ՀՀ ողջ տարածքով: Նախապես սահմանված մեթոդաբանությամբ ընտրանքում ընդգրկվել է 2630 և 1426 պատասխանող<sup>2</sup>: Դաշտային աշխատանքներն իրականացվել են 2011 թ. դեկտեմբերի 13-29-ը և 2012 թ. հունվարի 07-30-ը:

Հետազոտության շրջանակներում մեր կողմից ՀՀ բնակչությունը դասակարգվել է երեք խմբի՝ «չմեկնածների», «պոտենցիալ» և «վերադարձած» էմիգրանտների: **«Վերադարձած» էմիգրանտ** է համարվել այն անձը, որը

- մեկնել է Հայաստանից 18 և ավելի տարիքում,

<sup>1</sup> Հատկապես արժանահիշատակ են հետևյալ հետազոտությունները. Migration and Development. Armenia Country Study, ILO, 2009 / ILO Subregional Office for Eastern Europe and Central Asia, 2009; **Alice Johansson**, Return Migration to Armenia. Monitoring the Embeddedness of Returnees / Amsterdam, January 2008; **Minasyan Anna, Poghosyan Alina, Hakobyan Tereza, Hancilova Blanka**, Labor Migration from Armenia in 2005-2007: a survey / Yerevan, Asoghik, 2007; **Aleksandr V. Gevorgyan, Karina Mashuryan, Arkady Gevorgyan**, Economics of Labor Migration from Armenia: a Conceptual Study / AIPRG, Working paper No. 06/05, January 2006; **Геворгян Р.**, Модели бинарного и множественного выборов SPSS / Ер., Лусакн, 2010; **Ռ. Ղևորյան, Ա. Խատաշյան, Ն. Քոչինյան**, Սոցիալական հիմնական զարգացումների վերլուծությունը Հայաստանի անցումային տնտեսությունում // Տարեգիրք, 2011, Տնտեսագիտության ֆակուլտետ / Գլխ. խմբ.՝ տ.գ.դ. Գ. Լ. Սարգսյան: - Եր.: ԵՊՀ հրատ., 2011 (հետագայում «Տարեգիրք 2011...»), էջ 44-53; **Л. Арутюнян**, Новые перипетии армянской миграции: аккумулятивная причинность и возможные последствия // Տարեգիրք 2011..., էջ 54-69:

<sup>2</sup> Հարցման մեթոդաբանությանը կարելի է ծանոթանալ հարցման արդյունքները ամփոփող զեկույցում: Տե՛ս <http://www.crrc.am/research-and-surveys/ongoing-projects/migration-and-skills?lang=hy> (15. 10.2013): Կայքում զետեղված են նաև հարցման արդյունքները ամփոփող տվյալների շտեմարանները SPSS ֆորմատով, որոնք հիմք են հանդիսացել մեր հետազոտության իրականացման համար:

- արտերկրում անդադար աշխատել է առնվազն երեք ամիս ժամանակահատված,
- վերադարձել է Հայաստան ոչ ավելի, քան տասը տարի առաջ,
- պատրաստ է եղել և հասանելի քանակական հարցմանը մասնակցելու համար:

«Չմեկնած» է համարվել այն անձը, որը

- եղել է 18-50 տարիքային միջակայքում,
- վերջին տասը տարիների ընթացքում չի աշխատել արտերկրում կամ աշխատել է երեք ամսից ոչ ավելի ժամանակահատված,
- պատրաստ է եղել և հասանելի քանակական հարցմանը մասնակցելու համար:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ «չմեկնածների» խմբում 34%-ը մտադրություն ունի մեկնելու Հայաստանից, ավելին, այդ մարդկանց 79.3%-ը հավանական է համարում առաջիկա երկու տարում երկրի լքումը: «Վերադարձածների» խմբում, ի տարբերություն «չմեկնածների», կրկին մեկնելու մտադրություն է հայտնել գերակշիռ մասը՝ 68,4%-ը, իսկ առաջիկա երկու տարվա ընթացքում երկրի լքումը հավանական է համարում նրանց 65.7%-ը:


Ելնելով ստացված պատկերից՝ մեր հետազոտության տրամաբանության շրջանակներում «չմեկնածների» և «վերադարձածների» խմբում առանձնացրել ենք «պոտենցիալ էմիգրանտ» կատեգորիան, որը մեր սահմանմամբ համարվել է այն անձը, որը

- մասնակցել է քանակական հարցմանը որպես «չմեկնած» կամ «վերադարձած» խմբերից մեկի ռեսպոնդենտ,
- հայտնել է Հայաստանից առաջիկա երկու տարում իր մեկնելու մտադրության մասին՝ ելնելով հարցաթերթի ձևաչափից խիստ հավանական և բավականին հավանական պատասխանների միջոցով<sup>1</sup>:

Նկար 1-ը և 2-ը ցույց են տալիս «չմեկնածների» և «վերադարձածների» խմբերում առաջիկա երկու տարիներին մեկնելու մտադրությունները:

Նկար 1


**«Չմեկնածների» առաջիկա երկու տարիներին Հայաստանից մեկնելու մտադրությունները (տոկոսներով)**



<sup>1</sup> Նշենք, որ հարցման շրջանակներում նույնպես կիրառվել է պոտենցիալ էմիգրանտ եզրը, սակայն այլ համատեքստում: Մասնավորապես, հարցման ընթացքում պոտենցիալ էմիգրանտ է համարվել այն ռեսպոնդենտը, որը վերադարձածների խմբից չէ: Մեր հետազոտության շրջանակներում դրանց անվանել ենք չմեկնածներ:

Նկար 2

**«Վերադարձածների» առաջիկա երկու տարիներին  
Հայաստանից մեկնելու մտադրությունները (տոկոսներով)**



Այսպիսով, համաձայն նկարներ 1-ի և 2-ի «չմեկնածների» 27%-ը, իսկ «վերադարձածների» 65,7%-ը «պոտենցիալ» էմիգրանտներ են:


Ակնհայտ է, որ հետազոտության շրջանակներում մատնանշված «պոտենցիալ» էմիգրանտների խումբը ամենից կրիտիկականն է, քանի որ ներառում է մեծ քանակությամբ մարդկանց, որոնք մտադիր են առաջիկայում լքել երկիրը: Հետևաբար մեր կողմից փորձ է արվել պարզել, թե ինչպիսի նկարագիր ունեն այս խմբի մարդիկ, այն է՝ ինչպիսի զբաղվածություն, տարիքային կառուցվածք, եկամտի և կրթության մակարդակ ունեն վերջիններս:

**• «Չմեկնածների» խմբում Հայաստանից արտագաղթելու մտադրություն ունեցողներն ըստ կրթության մակարդակի:**

Նկար 3-ը ցույց է տալիս «չմեկնածներ» խմբում մեկնելու ցանկություն արտահայտածների՝ առաջիկա երկու տարում մեկնելու մտադրվածությունն ըստ կրթության մակարդակի:

Նկար 3

**«Չմեկնածների» խմբում մեկնելու ցանկություն արտահայտածների՝  
առաջիկա երկու տարում մեկնելու մտադրվածությունն ըստ կրթության  
մակարդակի**




<sup>1</sup> Նկատենք, որ բարձրագույն, միջին և նվազագույն կրթության մակարդակին համապատասխանում են հետևյալ սահմանումները՝ 1. բարձրագույն կրթություն՝ ստացել է բարձրագույն կրթության ավարտական հավաստագիր և/կամ գիտական աստիճանը հաստատող հավաստագիր, 2. միջին ստացել է միջին մասնագիտական կրթական հաստատության ավարտական հավաստագիր, և/կամ ավագ դպրոցն ավարտելու մասին հավաստագիր, 3. նվազագույն ստացել է ութնամյա կամ ավելի ցածր կրթության հավաստագիր:

• «Չմեկնածների» խմբում առաջիկա երկու տարիներին մեկնելու հավանականությունն ըստ տարիքային կառուցվածքի:

Հետազոտության շրջանակներում վերլուծել ենք «չմեկնածների» խմբի անդամների տարիքային կառուցվածքը: Այդ նպատակով խմբի անդամներին խմբավորել ենք 18-30, 31-40 և 41-50 տարիքային խմբերում:

Նկար 4

**«Չմեկնածների» խմբում առաջիկա երկու տարիներին մեկնելու հավանականությունն ըստ տարիքային խմբի (տոկոսներով, ըստ տարիքային խմբերի)**




Ինչպես վկայում է նկար 4-ը, «չմեկնածների» խմբում «պոտենցիալ» էմիգրանտներն առաջին հերթին պատկանում են 18-30 տարիքային խմբին, ապա՝ 41-50:

• «Չմեկնածների» խմբում ներկայումս աշխատանք ունեցողների Հայաստանից արտագաղթելու մտադրությունը:

«Չմեկնածների» խմբում ներկայումս զբաղվածներից մեկնելու ցանկություն է հայտնել 32.9%-ը, որը համահունչ է ընդհանուր առմամբ մեկնել ցանկացողների տեսակարար կշռին՝ անկախ աշխատանք ունենալուց: Նկար 5-ի միջոցով գնահատել ենք աշխատանք ունեցող «պոտենցիալ» էմիգրանտների քանակը մեկնելու մտադրություն ունեցողների մոտ:

Նկար 5

**Ներկայումս աշխատանք ունեցող «չմեկնածների» առաջիկա երկու տարիներին Հայաստանից մեկնելու մտադրությունները (տոկոսներով)**



Այսպիսով, աշխատանք ունեցող «պոտենցիալ» էմիգրանտ է «չմեկնածների» 25,7%-ը (որը աշխատանք ունեցող և մեկնելու մտադրություն ունեցողների 78 %-ն է):


Հետևաբար, կարող ենք եզրակացնել, որ «պոտենցիալ» էմիգրանտների և աշխատանք ունեցող «պոտենցիալ» էմիգրանտների խմբերում մեկնելու մտադրվածությունները հիմնականում համասեռ բաշխում ունեն, ուստի աշխատանք ունենալը էական նշանակություն չունի մեկնելու վերաբերյալ որոշում կայացնելու համար:

Հետևաբար, այսօր արդեն հայրենիքում աշխատանք ունենալը դեռևս բավարար չէ սեփական երկիրը լքելու մասին մտորելու և այն պլանավորելու համար. գոյություն ունեն այլ դրդապատճառներ:

- «Չմեկնածների» խմբում մեկնելու մտադրություն և աշխատանք ունեցողների՝ ըստ կրթության մակարդակի աշխատանքից բավարարվածության աստիճանը:

*Նկար 6*

**«Չմեկնածների» խմբում աշխատանք և մեկնելու ցանկություն ունեցողների կրթության մակարդակի և կատարած աշխատանքում ունեցած որակավորման օգտագործման համադրումը (տոկոսներով, ըստ կրթության մակարդակի)**




Համաձայն նկար 6-ի աշխատանք և մեկնելու ցանկություն ունեցողների խմբում բարձրագույն և միջին մասնագիտական կրթություն ունեցողների մոտ կեսը նշել է, որ իր որակավորումն առավել է, քան նրանից պահանջվում է իր կատարած աշխատանքի շրջանակներում, որը հանգեցնում է անբավարարվածության:

- «Վերադարձածների» խմբում առաջիկա երկու տարիներին մեկնելու հավանականությունն ըստ տարիքային կառուցվածքի

Նկար 7

**«Վերադարձածների» խմբում առաջիկա երկու տարիներին կրկին մեկնելու մտադրությունը ըստ տարիքային կազմի (տոկոսներով, ըստ տարիքային միջակայքի)**




Այսինքն, առաջիկա երկու տարիներին մեկնելու մտադրությունները, հետևաբար նաև այս խմբում «պոտենցիալ» էմիգրանտները, ըստ տարիքային կազմի համասեռ են:

• «Վերադարձած» էմիգրանտների կրկին մեկնելու մտադրություններն ըստ հայրենիքում աշխատանքի առկայության:

Հետազոտությունը ցույց է տվել, որ «վերադարձած» էմիգրանտների մոտ 1/3-ը միայն հայրենիքում աշխատանք ունի:

Նկար 8

**«Վերադարձածների» կրկին մեկնելու ցանկություններն ըստ վերադառնալուց հետո հայրենիքում աշխատանքի առկայության (տոկոսներով, ըստ աշխատանքի առկայության)**




Համաձայն նկար 8-ի «վերադարձած» էմիգրանտների խմբում աշխատանք ունեցողների կեսը կրկին ցանկություն ունի մեկնելու հայրենիքից, մինչդեռ չաշխատողների խմբում այդ մարդկանց բաժինը հասնում է մոտ ընդհանուր չաշխատողների 3/4-ին:

• «Վերադարձած» աշխատող էմիգրանտների աշխատավարձերի մակարդակի և նրանց մեկնելու մտադրությունները:

*Նկար 9*

**«Վերադարձած» աշխատող էմիգրանտների աշխատավարձի մակարդակի հարաբերակցությունը առաջիկա երկու տարիներին նրանց մեկնելու մտադրություններին (տոկոսներով, ըստ աշխատավարձի մակարդակի)**




Համաձայն նկար 9-ի աշխատողների աշխատավարձի մակարդակի ավելացմանը զուգընթաց նրանց՝ մեկնելու մտադրություններն ավելանում են: Ավելին, ավելանում է նաև այդ մարդկանց մեջ «պոտենցիալ» էմիգրանտների տեսակարար կշիռը: Հետևաբար, այսպիսի օրինաչափությունը միանշանակորեն վկայում է, որ աշխատավարձի ավելացումը բավարար չէ երկիրը չլքելու մտադրության առումով:

Հաշվի առնելով, որ «վերադարձած» էմիգրանտները արտերկրում իրենց վաստակած գումարները գլխավորապես ուղղել են հայրենիքում կենցաղային ծախսերին, պարզ է դառնում, որ այդ մարդիկ հիմնականում հակված են եղել մեկնելու հենց այդ նպատակով՝ կարճաժամկետ: Ուստի, մեր հետազոտության շրջանակներում «վերադարձած» էմիգրանտների խմբում առանձնացրել ենք «սեզոնային էմիգրանտ» կատեգորիան: «Սեզոնային» էմիգրանտ է համարվում այն անձը, ով երկու և/կամ ավելի անգամ եղել է արտերկրում երեք և ավելի ամիս տևողությամբ:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ «վերադարձածների» մոտ 40 %-ը երկու և ավելի անգամ է մեկնել առնվազն երեք ամիս ժամկետով, այսինքն՝ «վերադարձածների» մոտ 40%-ը «սեզոնային» էմիգրանտ է: Նկար 10-ը ցույց է տալիս առհասարակ մեկնելու մտադրությունները «սեզոնային» և «ոչ սեզոնային» էմիգրանտների խմբերում:

Նկար 10

**Հայաստանից գաղթելու մտադրությունները վերադարձածների խմբում՝ ըստ «սեզոնային» և «ոչ սեզոնային» էմիգրանտների խմբերի (տոտոսներով, ըստ խմբերի)**



Այսինքն, մոտ 1/4-ով պակաս են «ոչ սեզոնային» էմիգրանտների՝ կրկին մեկնելու մտադրություններն ի տարբերություն «սեզոնային» էմիգրանտների:

Այսպիսով, հետազոտության շրջանակներում պարզվեց, որ թե՛ «չմեկնածների», թե՛ մեկնածների խմբերում զգալի է արտագաղթելու ցանկություն ունեցող մեր հայրենակիցների թվաքանակը: Ավելին, տարիքը, կրթության մակարդակը, զբաղվածությունը և եկամտի չափը նշանակալի ազդեցություն չունեին մեկնելու մտադրության վրա: Հետազոտության ընթացքում նաև պարզվեց, որ չնայած «վերադարձած» էմիգրանտների խմբում զգալի մաս են կազմում միջինից բարձր տարիքային խմբում գտնվող և «սեզոնային» էմիգրանտ հանդիսացող տղամարդիկ, պակաս չեն նաև երիտասարդ կանանց և բարձրագույն կրթամակարդակ ունեցողների արտագաղթելու մտադրվածությունները: Մյուս կողմից, «չմեկնածների» խմբում մեկնելու մտադրվածություն են հայտնում հիմնականում երիտասարդները՝ կրկին անկախ տարիքային խմբից, աշխատավարձից և աշխատելու փաստից: Սակայն այս եզրակացությունները բավականաչափ հիմնավոր դարձնելու նպատակով անհրաժեշտ է պարզել դրանց վիճակագրական նշանակալիությունը: Ուստի մեր կողմից իրականացվել են որոշ վարկածների ստուգումներ՝ սահմանային ազդեցությունը գնահատող Probit ռեգրեսիոն մոդելի միջոցով:

*Հիպոթեզ 1. «Չմեկնածների» խմբի անդամների սեռը նշանակալի ազդեցություն չի թողնում Հայաստանից արտագաղթելու մտադրության վրա:*

Հիպոթեզը ստուգելու նպատակով իրականացրել ենք վերլուծություն Probit ռեգրեսիոն մոդելի միջոցով: Իբրև կախյալ փոփոխական է հանդիսանում մեկնելու մտադրությունը, իսկ անկախ փոփոխական՝ սեռը: Գնահատել ենք մեկնելու մտադրության փոփոխության հավանականությունը ըստ սեռի փոփոխման: Վերլուծությունը ցույց է տվել, որ այդ գործոնների միջև կապը նշանակալի է՝  $z=4.38$ : 0-ն համապատասխանում է կանանց, 1-ը՝ տղամարդկանց<sup>1</sup>:  $dF/dx=0,0863091$  նշանակում է անցում կատարելով կանանցից տղամարդկանց, մեկնելու ցանկությունը մեծանում է 8.6%-ով: Այսինքն՝ սահմանային ազդեցությունը ցույց է

<sup>1</sup> Հ. Սարգսյան, Ք. Անտոնյան, Կ. Խաչատրյան, «Միգրացիա. միտումներ, հետևանքներ» հետազոտական աշխատանք, Երևան, Հեղ. հրատ., 2013 (հետագայում «Միգրացիա. միտումներ...»):

տալիս մեկնելու մտադրության փոփոխման հավանականությունը: Դրական ազդեցությունը նշանակում է, որ ի տարբերություն կանանց, տղամարդկանց մեկնելու ցանկությունն ավելին է:

Այսպիսով, մեր հիպոթեզը ժխտվել է, քանի որ սեռը մեկնելու մտադրության վրա իրականում ազդեցություն ունի: «Չմեկնածների» խմբում տղամարդիկ առավել հակված են մեկնելու, քան կանայք:

**«Չմեկնածների» խմբում գերակշիռ մասը կազմում են երիտասարդները, որոնց արտագաղթելու ցանկության հիմքում ընկած են արտերկրում նախ կայուն աշխատանք, աշխատավարձ, ապա նաև որակյալ կյանք ունենալու մղումները: Այսինքն, նրանց մեկնելու մտադրությունների հիմքում ընկած են երկարաժամկետ պլանավորումները, նպատակները: Իսկ մեկնելու մտադրություն ունեն գլախվորապես տղամարդիկ:**

*Հիպոթեզ 2. «Չմեկնածների» խմբում աշխատանք ունենալու փաստը նշանակալի ազդեցություն չի թողնում Հայաստանից արտագաղթելու մտադրության վրա:*

Probit ռեգրեսիոն մոդելում իբրև կախյալ փոփոխական է հանդիսացել մեկնելու մտադրությունը, իսկ անկախ փոփոխական՝ աշխատանքի գոյությունը: Գնահատել ենք մեկնելու մտադրության փոփոխության հավանականությունը ըստ աշխատանք ունենալու: Վերլուծությունը ցույց է տվել, որ այդ գործոնների միջև կապը նշանակալի չէ՝  $z = -0.98$ ,  $dF/dx = -0,0548483$ :

Այսպիսով, մեր հիպոթեզը հաստատվել է. **աշխատանքի գոյության ազդեցությունը մեկնելու մտադրության վրա նշանակալի ազդեցություն չունի: Մարդկանց արտագաղթման որոշման հիմքում ընկած են այլ պատճառներ, քան աշխատանքի բացակայությունը:**

*Հիպոթեզ 3. «Չմեկնածների» խմբի անդամների եկամուտները նշանակալի ազդեցություն չեն թողնում Հայաստանից արտագաղթելու մտադրության վրա:*

Այս դեպքում Probit անալիզի համատեքստում իբրև կախյալ փոփոխական է հանդիսացել մեկնելու մտադրությունը, իսկ անկախ փոփոխական՝ սեփական եկամտի փոփոխությունը: Սեփական եկամուտը գնահատելու համար օգտագործել ենք աշխատավարձի մակարդակը:

Գնահատել ենք մեկնելու մտադրության փոփոխության հավանականությունը ըստ աշխատավարձի փոփոխման: Վերլուծությունը ցույց է տվել, որ այդ գործոնների միջև կապը նշանակալի է՝  $z = 2.09$ :  $dF/dx = 0,0001061$  նշանակում է, որ աշխատավարձի 1%-ով ավելացմանը զուգընթաց մեկնելու ցանկությունը մեծանում է 0,01%-ով: Այսինքն՝ սահմանային ազդեցությունը դրական է, ինչը նշանակում է, որ մեկնելու դրական մտադրության փոփոխման հավանականությունը եկամտի ավելացմանը զուգընթաց մեծանում է: Սակայն, թեև եկամտի ազդեցությունը նշանակալի է, սահմանային էֆեկտը՝ 0,01%-ը խիստ փոքր է:

Այսպիսով, մեր հիպոթեզը մասամբ է ժխտվել. եկամտի փոփոխությունը մարդկանց մեկնելու մտադրության վրա ունի ազդեցություն, սակայն, այդպիսի ազդեցության չափը շատ փոքր է:

«Չմեկնածների» խմբում մեկնելու մտադրության վրա իրականում եկամտի ազդեցությունը նշանակալի է՝ մարդկանց մեկնելու ցանկություններն այս խմբում հակված են ավելանալու եկամտի ավելացմանը զուգընթաց: Սակայն այդ ազդեցությունը այնքան էլ մեծ չէ: Դա նշանակում է, որ արտագաղթելու որոշման հիմքում ընկած են այլ պատճառներ, քան մարդկանց եկամուտներն են:

*Հիպոթեզ 4. «Չմեկնածների» խմբի անդամների կրթության մակարդակը նշանակալի ազդեցություն չի թողնում Հայաստանից արտագաղթելու մտադրության վրա:*

Probit ռեգրեսիոն մոդելում իբրև կախյալ փոփոխական է հանդիսացել մեկնելու մտադրությունը, իսկ անկախ փոփոխական՝ կրթության մակարդակը: Իբրև կրթության մակարդակի չափիչ մեր կողմից ընտրվել է կրթության մեջ մարդկանց ներգրավվածությունը՝ ըստ տարիների: Վերլուծությունը ցույց է տվել, որ այդ գործոնների միջև կապը նշանակալի չէ՝  $z=0.7$ ,  $dF/dx=0,0074486$ :

Այսպիսով, մեր հիպոթեզը հաստատվել է. **մարդկանց կրթության մակարդակը մեկնելու մտադրության վրա նշանակալի ազդեցություն չունի: Թե՛ բարձրագույն, թե՛ միջին կրթություն ունեցողները հավասարապես ցանկություն են արտահայտում արտագաղթելու: Մարդկանց արտագաղթման որոշման հիմքում ընկած են այլ պատճառներ, քան կրթվածության աստիճանը: Հետևաբար, երիտասարդների՝ կրթության նպատակով մեկնման հիմքում առավելապես ընկած է ոչ թե կրթության հանդեպ առանձնահատուկ պահանջարկը, որը չի բավարարվում տեղական կրթության առաջարկով, այլ կրթությունը շարունակելու/լրացնելու մտադրությունը դառնում է միջոց՝ արտագաղթելու նպատակի համար:**

*Հիպոթեզ 5. «Վերադարձած» էմիգրանտների խմբի անդամների սեռը նշանակալի ազդեցություն չի թողնում Հայաստանից արտագաղթելու մտադրության վրա:*

Probit ռեգրեսիոն մոդելում իբրև կախյալ փոփոխական է հանդիսացել մեկնելու մտադրությունը, իսկ անկախ փոփոխական՝ սեռը: Մենք զննահատել ենք մեկնելու մտադրության փոփոխության հավանականությունը ըստ սեռի փոփոխման: Վերլուծությունը ցույց է տվել, որ այդ գործոնների միջև կապը նշանակալի է՝  $z=-2.53$ : 0-ն համապատասխանում է կանանց, 1-ը՝ տղամարդկանց:  $dF/dx=-0.0391048$  նշանակում է անցում կատարելով կանանցից տղամարդկանց, մեկնելու ցանկությունը փոքրանում է 3.9%-ով: Այսինքն՝ սահմանային ազդեցությունը ցույց է տվել մեկնելու մտադրության փոփոխման հավանականությունը: Բացասական ազդեցությունը նշանակում է, որ ի տարբերություն տղամարդկանց, այս խմբում կանանց մեկնելու ցանկությունը ավելին է:

Այսպիսով, մեր հիպոթեզը ժխտվել է, քանի որ սեռը մեկնելու մտադրության վրա իրականում ազդեցություն ունի: «Վերադարձած» էմիգրանտների խմբում կանայք առավել հակված են մեկնելու, քան տղամարդիկ:

**«Վերադարձած» էմիգրանտների խմբում գերակշիռ մասը կազմում են բարձր տարիքային խմբի անդամները: Նրանց մի մասն էլ «սեզոնային» էմիգրանտներ են: Սակայն այս խմբում փոխվում է «պոտենցիալ» էմիգրանտների նկարագիրը.**

դրանք առավելապես կանայք են: Նրանց մեկնելու մտադրությունների հիմքում ընկած են նախ ընտանիքի վերամիավորման, ապա արտերկրում կայուն և բարձր վարձատրությամբ աշխատանք գտնելու հնարավորությունները: Հայտնի է նաև, որ 1990-ականների արտագաղթի և պատերազմի գործոններով պայմանավորված մեր երկրի դեմոգրաֆիական կառուցվածքը էապես փոխվել է: Այսօր, հասարակության մեջ մեծ թիվ են կազմում միջին և միջինից բարձր տարիքային խմբում գտնվող միայնակ կանայք, որոնք նույնպես պոտենցիալ էմիգրանտներ են:

*Հիպոթեզ 6. «Վերադարձած» էմիգրանտների խմբի անդամների աշխատանք ունենալու փաստը նշանակալի ազդեցություն չի թողնում Հայաստանից արտագաղթելու մտադրության վրա:*

Probit ռեգրեսիոն մոդելում իբրև կախյալ փոփոխական է հանդիսացել մեկնելու մտադրությունը, իսկ անկախ փոփոխական՝ աշխատանքի գոյությունը: Մենք գնահատել ենք մեկնելու մտադրության փոփոխության հավանականությունը ըստ աշխատանք ունենալու: Վերլուծությունը ցույց է տվել, որ այդ գործոնների միջև կապը նշանակալի է՝  $z = -8.82$ ;  $dF/dx = -0.6560049$ : Դա նշանակում է, որ աշխատանք ունենալու պարագայում այս խմբի մեկնելու մտադրություն ունեցող անդամների 65.6%-ը հակված է փոխելու իր դիրքորոշումը՝ չմեկնելու:

Այսպիսով, մեր հիպոթեզը ժխտվել է. աշխատանքի առկայությունը մեկնելու մտադրության վրա նշանակալի ազդեցություն ունի: Հետազոտությունը ցույց է տվել, որ «վերադարձած» էմիգրանտների շրջանում հիմնականում մարդիկ նախընտրում են կրկին մեկնել աշխատանքի բացակայության պատճառով: Դրանք գլխավորապես միջին և միջինից բարձր տարիքային խմբում գտնվող տղամարդիկ են, հիմնականում «սեզոնային» էմիգրանտներ: Ուստի, աշխատանքի առկայության դեպքում այդ մարդկանց համար Հայաստանում մնալը և աշխատելը նախապատվելի է արտերկիր մեկնելու համեմատ: Պատճառն այն է, որ այս խմբի մարդիկ, ի տարբերություն «չմեկնածների», արդեն տեղյակ են մեկնելու և արտերկրում աշխատելու պարագայում առկա դժվարություններին, որոնք ի հայտ են գալիս հարմարվելու, տրանսպորտային ծախսերի, ինչպես նաև ընտանիքից բաժանվելու պարագայում և այլն, իսկ չմեկնածների խմբի անդամների համար արտերկիր մեկնելու որոշման հիմքում աշխատանքի առկայությունը հիմնական նշանակալի դերակատարությունը չունի: Մյուս կողմից, վերադարձածների մեջ հատկանշական է կանանց դերակատարությունը, որոնց մեջ մեծ է բարձրագույն կրթության առկայությունը: Այդ կանայք խիստ հակված են արտագաղթելու: «Վերադարձած» էմիգրանտների խմբի հետազոտման արդյունքում ուշագրավ էր նաև այն արդյունքը, ըստ որի բարձր կրթամակարդակ և աշխատանքային հմտություններ ունեցողները Հայաստանում աշխատելով աշխատավարձի ավելացմանը զուգընթաց առավելապես դրսևորում են արտագաղթելու վարքագիծ: Դրա պատճառն այն է, որ նրանց աշխատանքային որակավորումը նրանց հուշում է, որ արտերկրում կարող են ունենալ առավել բարեկեցիկ և երկարաժամկետ գրավիչ կյանք:

*Հիպոթեզ 7. «Վերադարձած» էմիգրանտների եկամուտները նշանակալի ազդեցություն չեն թողնում Հայաստանից արտագաղթելու մտադրության վրա:*

Այս դեպքում Probit անալիզի համատեքստում իբրև կախյալ փոփոխական է հանդիսացել մեկնելու մտադրությունը, իսկ անկախ փոփոխական՝ ընտանիքի եկամտի փոփոխությունը:

Մեր կողմից գնահատվել է մեկնելու մտադրության փոփոխության հավանականությունը ըստ եկամտի փոփոխման: Վերլուծությունը ցույց է տվել, որ այդ գործոնների միջև կապը նշանակալի է՝  $z=-6,29$ ;  $dF/dx=-0.0003323$  նշանակում է, որ տնային տնտեսության եկամտի 1%-ով ավելացմանը զուգընթաց մեկնելու ցանկությունը նվազում է 0,033%-ով: Այսինքն՝ սահմանային ազդեցությունը բացասական է, ինչը նշանակում է, որ մեկնելու մտադրության հավանականությունը նվազում է տնային տնտեսության եկամտի ավելացմանը զուգընթաց: Սակայն, թեև եկամտի ազդեցությունը նշանակալի է, սահմանային էֆեկտը՝ 0,033%-ը խիստ փոքր է:

Այսպիսով, մեր հիպոթեզը մասամբ է ժխտվել. եկամտի փոփոխությունը մարդկանց մեկնելու մտադրության վրա ունի ազդեցություն, սակայն, այդպիսի ազդեցության չափը շատ փոքր է:

**«Պոտենցիալ» էմիգրանտների խմբում մեկնելու մտադրության վրա իրականում տնային տնտեսության եկամտի ազդեցությունը նշանակալի է, այսինքն՝ մարդկանց մեկնելու ցանկությունները այս խմբում հակված են նվազելու ընտանիքի եկամտի ավելացմանը զուգընթաց: Սակայն այդ ազդեցությունն այնքան էլ մեծ չէ: Դա նշանակում է, որ արտագաղթելու որոշման հիմքում ընկած են այլ պատճառներ, քան մարդկանց ընտանիքի եկամուտներն են:**

*Հիպոթեզ 8. «Վերադարձած» էմիգրանտների անդամների կրթության մակարդակը նշանակալի ազդեցություն չի թողնում Հայաստանից արտագաղթելու մտադրության վրա:*

Հիպոթեզը ստուգելու համար իրականացրել ենք Probit ռեգրեսիոն մոդելի միջոցով վերլուծություն: Իբրև կախյալ փոփոխական է հանդիսացել մեկնելու մտադրությունը, իսկ անկախ փոփոխական՝ կրթության մակարդակը: Իբրև կրթության մակարդակի չափիչ մեր կողմից ընտրվել է կրթության մեջ մարդկանց ներգրավվածությունը՝ ըստ տարիների: Վերլուծությունը ցույց է տվել, որ այդ գործոնների միջև կապը նշանակալի չէ՝  $z=-0,9$ ;  $dF/dx=-0,0086374$ :

Այսպիսով, մեր հիպոթեզը հաստատվել է. **մարդկանց կրթության մակարդակը մեկնելու մտադրության վրա նշանակալի ազդեցություն չունի: Թե՛ բարձրագույն, թե՛ միջին կրթություն ունեցողները հավասարապես ցանկություն են արտահայտում արտագաղթելու: Մարդկանց արտագաղթման որոշման հիմքում ընկած են այլ պատճառներ, քան կրթվածության աստիճանը:**

Այսպիսով, ամփոփելով մեր հիպոթեզերի արդյունքները, կարող ենք եզրակացնել, որ ներկայումս արտագաղթը իր որակական և քանակական բնութագրմամբ ստանում է միանգամայն նոր տեսք: Այսպես, միգրացիայի հակված են առավելապես երիտասարդները և միջին տարիքի կանայք: Մյուս կողմից, մեկնելու

պատճառները սոսկ աշխատանքի բացակայությունից տեղափոխվում են դեպի երկարաժամկետ պլանավորում, կյանքի որակի բարձրացում:

Դա նշանակում է, որ մեր երկրում ապագայում զնալով նվազելու է ծնելիության մակարդակի աճի տեպը, և պահպանվելու է հասարակության միջին տարիքի բարձրացման միտումը: Իսկ այսպիսի երևույթը էապես նվազեցնելու է երկրում իրականացվող բոլոր տնտեսական բարեփոխումների արդյունավետությունը՝ բիզնես միջավայրի բարելավման, կենսաթոշակային կուտակային համակարգի ներդրման, ապահովագրական ոլորտի զարգացման և այլն: Մյուս կողմից, այս երևույթը ավելացնելու է անվտանգությանն առնչվող հիմնախնդիրները: Հետևաբար, անհրաժեշտություն է առաջանում իրականացնել երևույթի խորքային պատճառների վերլուծություն, ինչպես նաև միջոցառումներ ձեռնարկել դրա շուտափույթ կանխարգելման ուղղությամբ:

Որակական հետազոտության կիրառման միջոցով փորձ ենք կատարել պարզել արտագաղթի հիմնական պատճառները: Այդ նպատակով իրականացրել ենք ֆոկլուս խմբեր հետազոտության մեջ ներառված տարբեր խմբերի հետ (պոտենցիալ և վերադարձած էմիգրանտների խմբեր), դեմ առ դեմ հարցազրույցներ այդ խմբերի անդամների հետ՝ ըստ սեռի, տարիքի, կրթության մակարդակի, եկամտի և սպառման չափի<sup>1</sup>: Հիմք ընդունելով բացահայտված էմիգրացիոն միտումներն ու դրանց պատճառները՝ փորձենք առաջարկներ ներկայացնել ՀՀ արտագաղթի ծավալների կրճատման ուղղությամբ, ինչն ուղղակիորեն կնպաստի նաև երկրում դեմոգրաֆիական (ժողովրդագրական) պատկերի բարելավմանը:

**Նախ, պետության վարած քաղաքականությունը պետք է ելնի այն իրողությունից, որ արտագաղթել ցանկացողները ներկայումս շարժվում են երկարաժամկետ պլանավորմամբ:** Սա նշանակում է, որ առավելապես պետք է ուշադրություն դարձվի բնակչության կողմից պետության նկատմամբ վստահության բարձրացման խնդիրներին: Ակներև է մի բան, որ չնայած վերջին տարիներին պետության կողմից իրականացվել են և շարունակում են իրականացվել բարեփոխումներ հասարակական-տնտեսական տարաբնույթ ոլորտներում (հարկային վարչարարություն, գործարար միջավայրի բարելավում, դատաիրավական համակարգ, խոսքի ազատություն, պետական կառավարման թափանցիկություն և այլն), այնուամենայնիվ այս բարեփոխումները դանդաղ են ընթանում, ինչը հիասթափություն է առաջացնում բնակչության լայն շերտերի՝ հատկապես երիտասարդների շրջանում: Հետազոտության շրջանակներում կազմակերպված ֆոկլուսային խմբերի քննարկումները դրա վառ ապացույցն է: Հատկապես երիտասարդները որպես արտագաղթման հիմնական դրդապատճառ մատնանշում են հեռանկարի բացակայությունն ու վաղվա օրվա անորոշությունը: **Ուստի պետական քաղաքականությունը, նրա գերակայություններն ու հիմնական նպատակները պետք է առաջին հերթին հասանելի ու հասկանալի լինեն բնակչության համար:** Բացի այդ պետք է ներկայացվեն հստակ տեսլականներ ու ամենօրյա աշխատանքով ապացուցվի այդ տեսլականների կենսունակությունը: Այս առումով խիստ կարևոր է բնակչության լայն զանգվածներին իրազեկել իրականացվող ծրագրերի մասին, բացատրել դրանց կարևորությունն ու մատնանշել այդ ծրագրերից ակնկալվող

<sup>1</sup> Ֆոկլուս խմբերի, հարցումների արդյունքներին մանրամասն կարելի է ծանոթանալ «Միգրացիա. միտումներ...» հետազոտական աշխատանքում, էջ 55-58:

արդյունքները: Սա անկասկած բնակչության մոտ լրացուցիչ հավատ և վստահություն կներշնչի վաղվա օրվա նկատմամբ: Այնուամենայնիվ պետք է այնպես անել, որպեսզի հասարակությունը ոչ թե լինի իրականացվող ծրագրերի «հանդիսատեսը», այլև ակտիվորեն ներգրավված լինի դրանց իրականացման գործին: Հասարակության մտածելակերպի մեջ պետք է արմատավորվի սեփական երկրի նկատմամբ պատասխանատվության և պահանջատիրության գաղափարը:

Այուս կարևոր խնդիրը **բնակչության զբաղվածության ապահովումն է**: Հետազոտությունը ցույց է տվել, որ աշխատաշուկայի խնդիրները ուղղակիորեն ազդում են միգրացիոն տրամադրվածության վրա: Ֆոկուսային խմբերում քննարկումները հաստատեցին դրանք: Վերադարձած էմիգրանտները երկրից մեկնելու կարևորագույն դրդապատճառ էին մատնանշում հենց աշխատատեղերի բացակայությունը: Երիտասարդների տարիքային խմբում կատարած մեր վերլուծությունը ցույց տվեց, որ մեկնելու խիստ հակվածություն ունեցող երիտասարդների ճնշող մեծամասնությունը բնական և ճշգրիտ գիտությունների (նաև առողջապահության) ներկայացուցիչներ են: Սա բնականաբար պայմանավորված է աշխատաշուկայի խնդիրներով՝ տվյալ մասնագիտությունների գծով աշխատատեղերի բացակայությամբ: Այս մասնագիտությամբ մարդիկ հիմնականում հակված չեն իրենց մասնագիտությունից տարբեր աշխատանքային գործունեությանը զբաղվել և ՀՀ բախվելով իրենց մասնագիտությամբ աշխատելու անհնարինությունը՝ նրանք բռնում են արտագաղթի ճանապարհը: Աշխատաշուկայում բացի աշխատատեղերի բացակայության խնդրից ևս մի խնդիր կա: Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հատկապես **միջին և բարձր կրթամակարդակ և մեկնելու ցանկություն ունեցող անձանց մոտ կա անբավարարվածության զգացում**: Այսինքն՝ չնայած որ անձը ապահովված է աշխատանքով, բայց և այնպես նա ցանկանում է մեկնել, քանի որ կատարում է իր որակավորումից ցածր որակավորում պահանջող աշխատանք:

Փաստորեն՝ պետությունը այս առումով երկու խնդիր պետք է հոգա. **բարենպաստ գործարար միջավայրի ստեղծում, որի շնորհիվ, նախ, կավելանան աշխատատեղերը և երկրորդ, կապահովվի աշխատատեղերի և աշխատողների որակավորումների համապատասխանությունը**: Աշխատատեղերի ավելացումը ենթադրում է սպառման շուկաների ընդլայնում, իսկ դա հնարավոր է ինտեգրացիոն գործընթացների ակտիվացմամբ:

Խիստ կարևոր է նաև **բուհ – աշխատաշուկա կապի ապահովման խնդիրը**: Որպեսզի հասկանանք, թե ինչ մեթոդներով է հնարավոր դա իրագործել, վերադառնանք հետազոտության արդյունքներին: Այն ցույց է տվել, որ մեր երիտասարդների մոտ գլխավոր խնդիր է անձնական ցածր մոտիվացիան. «լավ կրթություն-լավ աշխատանք-բարեկեցիկ կյանք» արժեքային շղթայում (value-chain), շղթայի յուրաքանչյուր հանգույցում ցածր արժեքների պատճառով: Ուստի, ուսանողի համար կրթության գործընթացը որոշ առումով ինքնանպատակ է դառնում, քանի որ չի երաշխավորում հաջորդ փուլ նրա նպատակային անցումը: *Մեծ է ճեղքվածքը աշխատանքի շուկայի և կրթության միջև: Գործատուն չի հստակեցնում իր պահանջները կրթության ոլորտից, իսկ կրթության ոլորտն էլ չի գործում թիրախային քաղաքականությամբ: Ուրեմն, մոտիվացիայի բարձրացման տեսանկյունից խիստ նպատակահարմար է, որ նվազի բուհի և աշխատաշուկայի միջև ճեղքվածքը:*

Կրթական հաստատությունները իրենց ռազմավարության հիմքում պետք է դնեն ուսանողի և աշխատաշուկայի փոխգործակցության մեխանիզմները: Այդ նպատակով նրանք պետք է ձեռնամուխ լինեն ուսումնական համագործակցային ծրագրերի ներդրմանը, որոնք կկառուցվեն աշխատաշուկայի (բիզնեսի, տարբեր պետական ինստիտուցիոնալ կառույցների) հետ համատեղ: Գործնականում դա կարող է արտահայտվել այսպես. ուսումնառության գործընթացում ուսանողները իրենց դասընթացների մի մասը անց են կացնում այդպիսի հաստատություններում՝ կոնկրետ խնդիրների ուղղությամբ աշխատելով: Դրանք անկասկած արդյունավետ կարող են լինել թե՛ կրթության որակի բարձրացման, թե՛ ուսանողների և դասախոսների մոտիվացիայի ավելացման տեսանկյունից: *Այսպիսի համալիր միջոցառումների իրականացումը պետք է ուղեկցվի պետության կողմից նպատակային ոլորտների հետ համատեղ աջակցող քաղաքականության իրագործմամբ, արդյունքում ուսանողները հեշտորեն աշխատանք կգտնեն այդ կառույցներում:* Այստեղ հատկապես կարևոր է նաև պետության՝ որպես կրթության ոլորտի կարգավորիչի ակտիվ դերակատարումը: **Անհրաժեշտ ենք համարում կրթության ֆինանսավորումն ապահովել ոչ միայն բյուջետային միջոցներից հատկացումների ավելացման հաշվին, այլև պետության կողմից բարեգործական հիմնադրամների և գործատուների կրթահամակարգ մուտքի խրախուսման ու համակարգման միջոցով:** Այս տեսակի ծրագրերի հաջողության պարագայում սրանք կդառնան զանգվածային և կնպաստեն ակադեմիական միջավայրում արժեհամակարգերի վերափոխմանը՝ նվազեցնելով երիտասարդների արտագաղթի միտումները:

*Այսպիսով՝ հետազոտության արդյունքներից կարող ենք եզրակացնել, որ Հայաստանի Հանրապետությունում արտագաղթի ծավալների կրճատման իմաստով կառավարությունը առաջնային ուշադրություն պետք է դարձնի հետևյալ խնդիրներին.*

1. *Իրականացվող պետական քաղաքականությունը պետք է հնարավորինս հասանելի ու հասկանալի դարձնի բնակչության համար:*
2. *Բարենպաստ գործարար միջավայր ստեղծի, որի միջոցով պետք է խրախուսվի աշխատատեղերի ավելացումը և ապահովվի աշխատատեղերի և աշխատողների որակավորումների համապատասխանությունը:*
3. *Աշխատանքի շուկայի և կրթության միջև ճեղքվածքի կրճատման համար ստեղծել բուհ – աշխատաշուկա կապի արդյունավետ փոխգործակցում:*

## ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննարկվել են ՀՀ արտագաղթի ժամանակակից միտումները, փորձ է կատարվել գնահատել առաջիկա երկու տարիների ընթացքում մեկնել ցանկացող պոտենցիալ էմիգրանտների նկարագիրը, նրանց մեկնելու որոշման հիմքում ընկած պատճառները: Արդյունքների հիման վրա կատարվել են գործուն առաջարկներ միգրացիայի միտումների կանխարգելման ուղղությամբ:

**АННОТАЦИЯ****ՏԱՐԳՏՅԱՆ Գ. Լ., ԱՆՏՈՆՅԱՆ Կ. Ա., ԽԱՇԱՏՐՅԱՆ Կ. Գ. – ԲԱԿՏՈՐՆԻԻ ԱՆԱԼԻԶ ՄԻԳՐԱՑԻՈՆՈՒ ՏԿԼՈՆՈՒՄԻ ՆԱՏԵԼԵՆԻԱ ԲԱ**

В статье обсуждаются современные тенденции миграции в РА, сделана попытка получить описание потенциального эмигранта, намеревающегося выехать из страны в течение последующих двух лет, а также выявить причины, стоящие за этим решением. На основе полученных результатов выдвинуты предложения, направленные на предотвращение миграционных тенденций в РА.

**SUMMARY****SARGSYAN H.L., ANTONYAN K.A., KHACHATRYAN K.G. – FACTOR ANALYSIS OF MIGRATION PROPENSITY OF RA POPULATION**

The article discusses contemporary migration trends of RA estimates, the typical potential emigrant as well as the reasons behind his decision, suggesting certain policy to prevent the migration trends.

**ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան,  
Էլ. փոստ՝ sargsyan.y.su@gmail.com

**ԱՇՈՏ ՍԱՐԿՈՍՅԱՆ**

ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության պետի տեղակալ  
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
Էլ. փոստ՝ ashotmarkos@rambler.ru

**ԲՈՐԻՍ ԱՎԱԳՅԱՆ**

տնտեսագիտության թեկնածու,  
ՌԴ պետական ունեցվածքի կոմիտեի տարածքային  
վարչության պետի տեղակալ  
Էլ. փոստ՝ bavag81@mail.ru

### **ՀՀ ԵՎ ԼՂՀ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԿՐԱ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Համաշխարհային տնտեսության զլորբալացման և տնտեսական ինտեգրման խորացման պայմաններում օրըստօրե մեծանում է ամենատարբեր տնտեսական միությունների դերը և, ինչ որ առումով, կարելի է խոսել երկրագնդի տարածքի ամեն մի հատվածի համար նրանց միջև սրվող պայքարի մասին: Դժվար է գտնել այնպիսի ազգային պետություն, որն ընդգրկված չլինի այս կամ այն տնտեսական «բլոկի» մեջ: Նման իրավիճակի հիմքը աշխատանքի միջազգային բաժանման, մասնագիտացման և կոոպերացման մակարդակի բարձրացումն է, ինչի հետևանքով մեծանում է պետությունների տնտեսությունների բացության աստիճանը: Միջազգային նման երևույթների շարժման հիմքում ընկած են արտաքին առևտրի բացարձակ և հարաբերական առավելությունները: Եվ եթե առաջինի դեպքում աշխարհում ձևավորված առավելություններն ունեն սահմանափակումներ (հատկապես տարածաշրջանային և աշխարհաքաղաքական ռեսուրսների ու պայմանների մասերով), ապա երկրորդ առավելությունները գործնականում սահմանափակ չեն և պետք է առևտրի ժամանակ հասնել դրանց բացահայտմանն ու կիրառմանը: Դրանով իսկ արտաքին առևտուրը կրթի ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ դրական էֆեկտներ:

Համաշխարհային տնտեսության հարաբերական առավելությունների բացահայտման դարաշրջանում, իսկ իրականում հենց այդպիսին է զարգացման արդի ժամանակահատվածը, միջազգային տնտեսական ասպարեզում բախվում են ոչ միայն առանձին տնտեսական միությունների շահերն ու նպատակները, այլ նաև հաճախ դրանք խաչաձևվում են: Այդ կատարի մրցավազքի մեջ կարող են կրկնվել ու տուժել առանձնապես «փոքր» ազգային տնտեսություն ունեցող երկրները, քանի որ այդ պայմաններում գործում է «Ուժեղի մոտ միշտ էլ թույլն է

մեղավոր» հնադարյան մոտեցումը: Իրավիճակը ծանրանում է նաև նրանով, որ չկողմնորոշված կամ դեռևս այս կամ այն տնտեսական միությանը չմիացած ազգային տնտեսությունների համար վերջնական որոշման ժամանակ ազդում են ոչ միայն տնտեսական ճիշտ հաշվարկներ կատարելու հնարավորությունները, այլ դրանց շարքում կարևոր են դառնում նաև քաղաքական, տարածաշրջանային, աշխարհաքաղաքական և այլ գործոններ, որոնք էապես ազդում են որոշման կայացման վրա: Այսինքն, շատ քիչ է լինում, որ նման ճակատագրական որոշումը ունենա զուտ միայն «տնտեսական», «քաղաքական» կամ մեկ այլ բնույթ: Առավել ևս, որ այդ գործոնների համակարգը գտնվում է անորոշության մեջ, այն առումով, որ մի դեպքում կարևոր և առաջնային են դառնում տնտեսական դրդապատճառները, մեկ այլ դեպքում քաղաքականները, երրորդ դեպքում տարածաշրջանայինները և այդպես շարունակ: Անկասկած է, որ լավագույն լուծումը բոլոր հանգամանքները համալիր ձևով հաշվի առնելն է, սակայն այս դեպքում էլ միշտ չէ, որ կարելի է հասնել նման լուծումների և համակցությունների:

Հայաստանը նույնպես հայտնվեց «կողմնորոշվելու» երկընտրանքի առջև. ուր գնալ՝ ԵՄ, թե Եվրասիական տնտեսական համագործակցություն (ԵվրԱզԵՍ): Ավելին, այս հարցը երկար ժամանակ գտնվելով հայ հասարակության ուշադրության կենտրոնում դարձել էր սուր քննարկումների առարկա: 2013 թ. սեպտեմբերի 3-ին ՀՀ նախագահ Ս. Սարգսյանի Մոսկվայում արված քաղաքական հայտարարության համաձայն ՀՀ միանալու է Մաքսային միությանը, որի կազմի մեջ ներկայումս գտնվում են ՌԴ-ն, Բելառուսը և Ղազախստանը: Իսկ ինչպիսի՞ն է եղել այդ որոշման ժամանակ տնտեսական գործոնի դերը, որովհետև շատ հաճախ Մաքսային միությանը միանալու ՀՀ որոշումը մեկնաբանվում է որպես տնտեսական անհրաժեշտություն, որն այլընտրանք չունի: Այդ նպատակով պարզենք ՀՀ և ԼՂՀ արտաքին առևտրի վրա տնտեսական միությունների ազդեցության վիճակը և փորձենք հասկանալ, թե ի վերջո ՀՀ համար ճակատագրական հանդիսացող այդ որոշման վրա ինչպիսին է եղել տնտեսական գործոնի կշիռը:

*Այդ նպատակով նախ և առաջ դիտարկենք ՀՀ և ԼՂՀ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների դինամիկան 2008-2012 թթ. ժամանակահատվածում (աղյուսակ 1)*

**Աղյուսակ 1**

**ՀՀ և ԼՂՀ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների դինամիկան 2008-2012 թթ.**

		2008	2009	2010	2011	2012
Տնտեսական աճ. համախառն ներքին արդյունքի հավելածի տեսքով	ՀՀ	6.9	-14.1	2.2	4.7	7.2
	ԼՂՀ	14.3	13.1	5.5	9.1	9.9
<i>ՀՆԱ ճյուղային կառուցվածքը</i>						
Արդյունաբերություն	ՀՀ	13.3	13.5	15.4	17.2	17.2
	ԼՂՀ	13.9	16.4	17.2	16.2	13.6
Շինարարություն	ՀՀ	25.3	18.6	17.3	13.0	12.2
	ԼՂՀ	9.8	11.1	12.4	11.0	8.7
Գյուղատնտեսություն և անտառտնտեսություն	ՀՀ	16.3	16.9	17.1	20.3	19.1
	ԼՂՀ	16.1	13.9	11.3	12.8	14.5
Ծառայություններ	ՀՀ	35.2	42.0	40.9	41.1	42.7
	ԼՂՀ	54.0	53.7	55.0	57.4	61.2

ՀՆԱ 1 շնչի հաշվով, (ԱՄՆ դոլար) (%)	ՀՀ	126.4	74.5	105.9	110.2	104.9
	ԼՂՀ	136.7	97.8	110.6	114.1	101.3
Հարկեր / ՀՆԱ (%)	ՀՀ	16.8	11.4	16.6	16.7	18.1
	ԼՂՀ	14.3	13.0	12.8	12.3	12.3
Վարկեր / ՀՆԱ (%)	ՀՀ	17.6	23.1	25.8	33.1	38.2
	ԼՂՀ	16.9	28.3	35.7	43.9	52.6
Ավանդներ / ՀՆԱ (%)	ՀՀ	5.7	9.3	10.3	12.8	16.0
	ԼՂՀ	6.6	8.9	9.2	10.2	13.2
Արտահանում / ՀՆԱ (%)	ՀՀ	9.2	8.2	10.9	13.1	14.4
	ԼՂՀ	19.3	20.7	23.5	21.9	15.5
Ներմուծում ՀՆԱ%	ՀՀ	37.8	38.5	40.7	41.0	42.9
	ԼՂՀ	87.7	84.4	85.9	86.2	78.1


Աղբյուրը: այս և հետագա արդյունակների և գծապատկերների կազմման համար հիմք են հանդիսացել ՀՀ և ԼՂՀ ԱՎԾ տվյալները:

2008-2012 թթ. ԼՂՀ արձանագրվել է միջինում տարեկան 10.4 տոկոս տնտեսական աճ, որին մասնակցում էին տնտեսության համարյա բոլոր հիմնական ճյուղերը, իսկ ՀՀ արձանագրվել է միջինում տարեկան 1.4 տոկոս տնտեսական աճ, այն դեպքում երբ 2009 թ. ՀՀ տնտեսությունում արձանագրվեց 14.1 տոկոս անկում (տես՝ գծապատկեր 1):

**Գծապատկեր 1**

**Համախառն ներքին արդյունքի դինամիկան**

(%-ով նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ)




ԼՂՀ-ում ՀՆԱ-ում հիմնական ճյուղերից առաջատարը արդյունաբերությունն է (2008-2012 թթ. միջին աճը կազմել է 6.5 տոկոս), հատկապես հանքարդյունաբերությունը, որտեղ կատարվում են մեծ ներդրումներ՝ ուղղված օգտակար հանածոների պաշարների ուսումնասիրման ու արդյունավետ շահագործման աշխատանքների կազմակերպմանը: Ոլորտը կարևոր նշանակություն ունի հատկապես աշխատատեղերի ստեղծման, տնտեսական աճի և բյուջետային մուտքերի ապահովման գործում:

Ծառայությունների մասնաբաժինը ՀՀ ՀՆԱ-ում 2008 թ. կազմել է 35.2 տոկոս, որը 2012 թ. 2008 թ. համեմատ աճել է 7.5 տոկոսային կետով, իսկ ԼՂՀ-ու-

մ 2008 թ. կազմել է 54.0 տոկոս, 2012թ. 2008 թ. համեմատ աճել է 7.2 տոկոսային կետով, պայմանավորված հինգ տարիներին ծառայությունների նկատմամբ բարձր պահանջարկով, որը արդյունք է եկամուտների բարձր աճի (գծապատկեր 2):


*Գծապատկեր 2*

**Արտադրված համախառն ներքին արդյունքի կառուցվածքը  
ՀՀ-ում և ԼՂՀ-ում (%)**



*Գծապատկեր 3*

**Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն ԼՂՀ-ում և ՀՀ-ում (ԱՄՆ դոլար)**



Հարկ է նշել, որ թեև ԼՂՀ-ում աշխատողների միջին ամսական անվանական աշխատավարձը շուրջ 18%-ով զիջում է ՀՀ համապատասխան ցուցանիշին:

Տնտեսության զարգացման նշված միտումներով պայմանավորված մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն դոլարային արտահայտությամբ 2008 թ. կազմել է ԼՂՀ-ում 2036.5 ԱՄՆ դոլար, իսկ ՀՀ-ում 3605.9 ԱՄՆ դոլար: Սակայն այն կտրուկ նվազեց 2009 թ., իսկ հետձգնաժամային ժամանակահատվածում սկսեց աստի-

ճանաբար վերականգնվել՝ 2012 թ. այն կազմեց ԼՂՀ-ում 2546.1 ԱՄՆ դոլար, ՀՀ՝ 3290 ԱՄՆ դոլար (գծապատկեր 3):

*Աղյուսակ 2*

**ՀՀ և ԼՂՀ տնտեսությունների հիմնական ճյուղերի իրական աճի ցուցանիշները (%)**

		2008	2009	2010	2011	2012
Արդյունաբերություն	ՀՀ	101.7	92.4	109.7	113.9	108.8
	ԼՂՀ	111.6	115.6	105.3	100.8	95.5
Շինարարություն	ՀՀ	103.1	62.6	97.5	91.1	100.2
	ԼՂՀ	124.2	133.5	124.0	101.4	87.4
Գյուղատնտեսություն	ՀՀ	103.1	99.5	86.4	113.8	109.5
	ԼՂՀ	125.4	101.1	88.7	120.1	123.9
Ծառայություններ	ՀՀ	113.8	100.9	103.4	106.1	110.8
	ԼՂՀ	128.3	117.1	107.4	108.3	110.2
Որից՝ տեղեկատվական տեխնոլոգիաներ և տեղեկատվական ծառայություններ	ՀՀ	106.6	83.5	104.5	110.6	103.1
	ԼՂՀ	94.8	140.1	54.2	132.5	144.4
Զբոսաշրջություն	ՀՀ	109.4	103.0	118.9	110.8	111.3
	ԼՂՀ	114.7	103.6	142.9	143.4	136.9

2008-2012 թվականներին արդյունաբերության ճյուղում միջին հաշվով ԼՂՀ-ում գրանցվել է 5.8 % իրական աճ, իսկ ՀՀ-ում՝ 5.3% իրական աճ: Արդյունաբերության ոլորտի աճին հիմնականում նպաստել է ԼՂՀ-ում սննդի արդյունաբերությունը, որի զարգացումը կապված է հիմնականում տեղական գյուղատնտեսական մթերքների վերամշակման հետ: Սննդի արդյունաբերության արտադրանքի ծավալը, սկսած 2008 թվականից, անընդմեջ աճել է՝ իրական արտահայտությամբ միջին տարեկան կտրվածքով ապահովելով 39.0 տոկոս աճ:

ԼՂՀ-ում վերջին հինգ տարիների ընթացքում շինարարության ծավալը միջին տարեկան կտրվածքով աճել է 14.1 տոկոսով՝ արձանագրելով ամենաբարձր աճի տեմպը 2009 թ.՝ 33.5 տոկոս: 2008-2012 թթ. շինարարության ծավալների աճին նպաստել է ԼՂՀ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացված շինարարության ծավալների աճը (39.5%-ը իրականացվել է պետական բյուջեի միջոցների հաշվին), ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին իրականացված շինարարության ծավալները կրճատվել են:

Շինարարական աշխատանքներն ըստ տնտեսության ճյուղերի հիմնականում իրականացվել են կոմունալ տնտեսության ոլորտում (19.5 տոկոս), բնակարանային տնտեսության ոլորտում (18.3 տոկոս) և տրանսպորտի և կապի ոլորտում (13.1 տոկոս):

ԼՂՀ-ում 2008-2012 թթ. գյուղատնտեսության ճյուղի միջին տարեկան աճը կազմել է 11.8 տոկոս (ի տարբերություն դրանց նախորդող հինգ տարիների՝ 2007-2011 թթ., երբ միջին տարեկան աճը կազմել է 8.8 տոկոս): Նշված ժամանակահատվածում իրական աճի տարեկան ցուցանիշները դրսևորել են անկայուն վարքագիծ, որի հիմնական պատճառը բուսաբուծության արտադրանքի տատանումներն են (-19.7 տոկոսից մինչև 39.4 տոկոս): Անասնաբուծության ար-

տադրանքի տարեկան ծավալները 2008-2012 թթ. ընթացքում հիմնականում ապահովվել են կայուն աճ, որը միջինում կազմել է 5.7 տոկոս:

ԼՂՀ-ում 2012 թվականին գյուղատնտեսությունը աճել է 23.9 տոկոսով՝ պայմանավորված բուսաբուծության համախառն արտադրանքի ցուցանիշի 32.8 տոկոս աճով, ընդ որում՝ բուսաբուծության նման բարձր աճն ապահովվել է հիմնականում ի հաշիվ հացահատիկի արտադրության աճի:

Աղյուսակ 3-ում բերված են ՀՀ և ԼՂՀ սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ցուցանիշները և դրանց աճի տեմպերը 2008-2012 թթ.: Աղյուսակ 3-ի տվյալներից հետևում է, որ 2008-2012 թթ. ինչպես ՀՀ, այնպես էլ ԼՂՀ բնորոշ են եղել զարգացման բավականին դինամիկ ցուցանիշներ, որոնք վկայում են նաև արտաքին աշխարհի հետ ապրանքների և ծառայությունների համապատասխան շուկաների առկայությամբ և դրանց որպես տնտեսական աճի գործոնի կարևորությամբ:

**Աղյուսակ 3**

**ՀՀ և ԼՂՀ սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ցուցանիշները 2008-2012 թթ.**

Ցուցանիշները		Չ/մ	2008 թ.	2009 թ.	2010 թ.	2011 թ.	2012 թ.
Համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ)	ՀՀ	մլրդ.դրամ	3568,2	3141,7	3460,2	3776,4	3981.5
Աճի տեմպը		%-ով	106,9	85,9	102,2	104,7	107,2
Համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ)	ԼՂՀ	մլրդ.դրամ	87.1	102,3	118.2	135.5	150,0
Աճի տեմպը		%-ով	114.3	113.1	105.5	109.1	109.9
ՀՆԱ մեկ շնչի հաշվով	ՀՀ	հազ.դրամ	1103.3	968.5	1062.7	1155.4	1313.5
Աճի տեմպը		%-ով	113.0	87.8	109.7	108.7	112.5
Համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ)	ԼՂՀ	հազ.դրամ	623.1	723.7	823.2	936.1	1023.0
Աճի տեմպը		%-ով	122.2	116.1	113.7	113.7	109.3
ՀՆԱ մեկ շնչի հաշվով	ՀՀ	ԱՄՆ դոլար	3606.1	2666.1	2844.0	3101.8	3269.0
Աճի տեմպը		%-ով	126.4	73.9	106.7	109.1	104.3
ՀՆԱ մեկ շնչի հաշվով	ԼՂՀ	ԱՄՆ դոլար	2036.5	1992.2	2203.1	2513.1	2546.1
Աճի տեմպը		%-ով	136.7	97.8	110.6	114.1	101.3
Դեֆլյատոր	ՀՀ	%	105.9	102.6	107.8	104.2	98.4
Դեֆլյատոր	ԼՂՀ	%	107.8	103.9	109.5	105.1	100.7
Արդյունաբերություն	ՀՀ	մլրդ.դրամ	739.3	669.4	824.4	999.0	1120.5
Աճի տեմպը		%-ով	101.7	92.4	109.7	113.9	108.8
Արդյունաբերություն	ԼՂՀ	մլրդ.դրամ	25.3	34.1	43.0	45.8	40.9
Աճի տեմպը		%-ով	111.6	115.6	105.3	100.8	99.2
Գյուղատնտեսություն	ՀՀ	մլրդ.դրամ	628.1	552.1	636.7	795.0	840.4
Աճի տեմպը		%-ով	101.3	99.5	86.4	113.9	109.5
Գյուղատնտեսություն	ԼՂՀ	մլրդ.դրամ	31.2	30.7	32.1	39.9	50.3
Աճի տեմպը		%-ով	125.4	101.1	88.7	120.1	123.9
Շինարարություն	ՀՀ	մլրդ.դրամ	666.8	365.8	368.8	328.6	469.7
Աճի տեմպը		%-ով	103.1	62.6	97.5	91.1	100.2

Ցուցանիշները		Չ/մ	2008 թ.	2009 թ.	2010 թ.	2011 թ.	2012 թ.
Շինարարություն	ԼՂՀ	մլրդ.դրամ	25.8	34.5	42.8	43.4	37.9
<i>Աճի տեմպը</i>		<i>%-ով</i>	<i>96.2</i>	<i>153.4</i>	<i>123.3</i>	<i>75.1</i>	<i>90.9</i>
Արդյունաբերական արտադրանքի ծավալը	ՀՀ	մլրդ.դրամ	751,3	669.4	824.4	999.0	1120.5
<i>Աճի տեմպը</i>		<i>%-ով</i>	<i>102,0</i>	<i>92.4</i>	<i>109.7</i>	<i>113.9</i>	<i>108.8</i>
Արդյունաբերական արտադրանքի ծավալը	ԼՂՀ	մլրդ.դրամ	25.3	34.1	43,0	45,8	40,9
<i>Աճի տեմպը</i>		<i>%-ով</i>	<i>111.6</i>	<i>115.6</i>	<i>105.3</i>	<i>100.8</i>	<i>99.2</i>
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը	ՀՀ	մլրդ.դրամ	628.1	552.1	636.7	795.0	840.4
<i>Աճի տեմպը</i>		<i>%-ով</i>	<i>101.3</i>	<i>99.5</i>	<i>86.4</i>	<i>113.9</i>	<i>109.5</i>
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը	ԼՂՀ	մլրդ.դրամ	31.2	30,7	32,1	39,9	50,3
<i>Աճի տեմպը</i>		<i>%-ով</i>	<i>125.4</i>	<i>101.1</i>	<i>88.7</i>	<i>120.1</i>	<i>123.9</i>
Շինարարության ծավալը	ՀՀ	մլրդ.դրամ	858.7	579.7	588.8	504.8	469.7
<i>Աճի տեմպը</i>		<i>%-ով</i>	<i>103.1</i>	<i>62.6</i>	<i>97.5</i>	<i>91.1</i>	<i>100.2</i>
Շինարարության ծավալը	ԼՂՀ	մլրդ.դրամ	25,8	34,5	42,8	43,4	37,9
<i>Աճի տեմպը</i>		<i>%-ով</i>	<i>124.2</i>	<i>133.5</i>	<i>124.0</i>	<i>101.4</i>	<i>87.4</i>
Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը	ՀՀ	մլն.դրամ	1059571,2	1065539,1	1162263,6	1302252,1	1378022,2
<i>Աճի տեմպը</i>		<i>%-ով</i>	<i>104,4</i>	<i>100,1</i>	<i>100,3</i>	<i>102,0</i>	<i>102,3</i>
Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը	ԼՂՀ	մլն.դրամ	62514.7	69215.9	81349.9	95435.9	105044.3
<i>Աճի տեմպը</i>		<i>%-ով</i>	<i>103.2</i>	<i>110.5</i>	<i>108.2</i>	<i>107.3</i>	<i>108.7</i>
Բնակչությանը մատուցված վճարովի ծառայությունների ծավալը	ՀՀ	մլն.դրամ	731657,0	737617,8	791189,5	865591,9	972593,3
<i>Աճի տեմպը</i>		<i>%-ով</i>	<i>113,8</i>	<i>100,9</i>	<i>103,4</i>	<i>106,1</i>	<i>110,8</i>
Բնակչությանը մատուցված վճարովի ծառայությունների ծավալը	ԼՂՀ	մլն.դրամ	11205.9	14481.6	17074.8	15038.0	17205.3
<i>Աճի տեմպը</i>		<i>%-ով</i>	<i>128,3</i>	<i>117,1</i>	<i>107,4</i>	<i>102,4</i>	<i>110,2</i>
Աշխատողների միջին ամսական անվանական աշխատավարձը, դրամ	ՀՀ	դրամ	87406	96 019	102 652	108 092	121 374
<i>Աճի տեմպը</i>		<i>%-ով</i>	<i>117,8</i>	<i>109,9</i>	<i>106,9</i>	<i>105,3</i>	<i>112,3</i>
Աշխատողների միջին ամսական անվանական աշխատավարձը, դրամ	ԼՂՀ	դրամ	80480	88768	92736	98453	102777
<i>Աճի տեմպը</i>		<i>%-ով</i>	<i>117,3</i>	<i>110,3</i>	<i>104,5</i>	<i>106,2</i>	<i>104,4</i>
Պետական բյուջեի եկամուտները	ՀՀ	մլն.դրամ	785355.0	689995.1	780439.4	880851.0	939388.1
<i>Աճի տեմպը</i>		<i>%-ով</i>	<i>137,8</i>	<i>87,9</i>	<i>113,1</i>	<i>112,9</i>	<i>106,6</i>
Պետական բյուջեի եկամուտները	ԼՂՀ	մլն.դրամ	19911.7	21250.8	23807.5	25756.4	28755.6
<i>Աճի տեմպը</i>		<i>%-ով</i>	<i>171,1</i>	<i>106,7</i>	<i>112,0</i>	<i>108,2</i>	<i>111,6</i>
Պետական բյուջեի ծախսերը	ՀՀ	մլն.դրամ	810574,5	929108,6	954316,5	986509,2	1001049,7
<i>Աճի տեմպը</i>		<i>%-ով</i>	<i>136,5</i>	<i>114,6</i>	<i>102,7</i>	<i>103,4</i>	<i>101,5</i>
Պետական բյուջեի ծախսերը	ԼՂՀ	մլն.դրամ	50074.7	55098.5	62182.4	67377.0	67343.8
<i>Աճի տեմպը</i>		<i>%-ով</i>	<i>162,4</i>	<i>110,0</i>	<i>112,9</i>	<i>108,4</i>	<i>100,0</i>

Ցուցանիշները		Չ/մ	2008 թ.	2009 թ.	2010 թ.	2011 թ.	2012 թ.
Պետական բյուջեի հարկային եկամուտներ	ՀՀ	մլն. դրամ	598794.3	503326.5	574064.4	631593.1	725496.9
Աճի տեմպը		%-ով	123,8	84.1	114.1	110.0	114.9
Պետական բյուջեի հարկային եկամուտներ	ԼՂՀ	մլն. դրամ	12462.5	13305.6	15122.7	16659.8	18534.5
Աճի տեմպը		%-ով	124.8	106.8	113.7	110.2	111.3
Վարկային ներդրումներ (ընդգրկված չեն ժամկետանց և երկարաձգված վարկերը)	ՀՀ	մլն. դրամ	628694	724851	891850	1250404	1527886
Աճի տեմպը		%-ով	148.9	115.3	123.0	140.2	122.2
Վարկային ներդրումներ (ներառյալ միջբանկային վարկերը)	ԼՂՀ	մլն. դրամ	17334.2	28994.7	42229.4	59437.1	78927.3
Աճի տեմպը		%-ով	170.3	167.3	145.6	140.7	132.8
Ավանդների գումարը (մնացորդը)	ՀՀ	մլն. դրամ	201939	291619	356325	483592	638349
Աճի տեմպը		%-ով	116,7	144,4	122,2	135,7	132,0
Ավանդների գումարը (մնացորդը)	ԼՂՀ	մլն. դրամ	6796.9	9113.9	10855.9	13879.0	19762.8
Աճի տեմպը		%-ով	134.3	134.1	119.1	127.8	142.4
Արտաքին առևտրաշրջանառությունը	ՀՀ	մլն. ԱՄՆ դոլար	5483.3	4 031.3	4 790.0	5 479.6	5 694.9
Աճի տեմպը		%-ով	124,0	73.5	118.8	114.4	103.9
Արտաքին առևտրաշրջանառությունը	ԼՂՀ	հազ. ԱՄՆ դոլար	305063.9	293967.4	348234.8	392706.9	349012.2
Աճի տեմպը		%-ով	110.0	96.4	118.5	112.8	88.9
արտահանում	ՀՀ	մլն. ԱՄՆ դոլար	1057.2	710.2	1 041.1	1 334.3	1 428.1
Աճի տեմպը		%-ով	91.7	67.2	146.6	128.2	107.0
արտահանում	ԼՂՀ	հազ. ԱՄՆ դոլար	55089.3	57341.2	74821.9	79577.8	57765.7
Աճի տեմպը		%-ով	75.9	104.1	130.5	106.4	72.6
ներմուծում	ՀՀ	մլն. ԱՄՆ դոլար	4426.1	3 321.1	3 748.9	4 145.3	4 266.8
Աճի տեմպը		%-ով	135,4	75.0	112.9	110.6	102.9
ներմուծում	ԼՂՀ	հազ. ԱՄՆ դոլար	249974.6	236626.2	273412.9	313129.1	291246.5
Աճի տեմպը		%-ով	122.0	94.7	115.5	114.5	93.0

Այդուսակ 4-ում բերված են ՀՀ արտաքին առևտրաշրջանառության և առևտրի հաշվեկշռի ցուցանիշներն ու դրանց կառուցվածքը ըստ ԱՊՀ, ԵվրԱզԵՍ, ԵՄ և այլ երկրների 1996-2012 թթ.: Նշված ցուցանիշների անցած 17 տարիների տվյալները վկայում են, որ այդ ընթացքում ՀՀ արտաքին առևտրաշրջանառության մեջ ԱՊՀ երկրների (որոնցից 3-ը ԵվրԱզԵՍ երկրներն են) բաժինը զգալիորեն նվազել է՝ 1996 թ. 35.4%-ից 2012 թ. հասել է 23.5% (նվազման չափը կազմել է 11.9 տոկոսային կետ): ԵվրԱզԵՍ երկրների բաժինը նույնպես նվազել է (0.4 տոկոսային կետով) 2012 թ. կազմելով 19.3%: Աճել է (11.7 տոկոսային կետով) ԵՄ երկրների բաժինը՝ 1996 թ. 17%-ից 2012 թ. հասնելով 28.7%-ի: Կարելի է եզրակացնել, որ ՀՀ արտաքին առևտրաշրջանառության կազմում 1996-2012 թթ.

ընթացքում ԱՊՀ երկրների, մասամբ նաև Եվրոպական երկրների բաժնի նվազեցման մեծությամբ փոխարինվել է ԵՄ բաժնի գրեթե համարժեք փոփոխությամբ: Հետաքրքիր է նաև նշել, որ այլ երկրների բաժինը ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունում 1996 թ. 47.6%-ից 2012 թ. հասել է 47.8%-ի, այսինքն գրեթե մնացել է անփոփոխ: Նկատենք նաև, որ 2010 թ. այլ երկրների բաժինը կազմել է արտաքին առևտրաշրջանառության գրեթե կեսը (49.6%), և այդ ցուցանիշը 2012 թ. ավելի քան երկու անգամ գերազանցել է ԱՊՀ երկրների բաժինը, շուրջ 2.5 անգամ Եվրոպական երկրների բաժինը, և ավելի քան 1.7 անգամ ավելի շատ, քան ԵՄ երկրները: Կատարված համադրությունը ցույց է տալիս, որ ՀՀ արտաքին առևտրաշրջանառության վրա ամենամեծ ազդեցություն են ունեցել ո՛չ ԱՊՀ (այդ թվում Եվրոպական երկրները), և ո՛չ էլ ԵՄ երկրները, քանի որ ՀՀ արտաքին առևտրաշրջանառության շուրջ կեսը պայմանավորում են «Այլ երկրների» խումբը:

Ասվածից կարելի է եզրակացնել, որ 1996-2012 թթ. ժամանակահատվածում ՀՀ արտաքին առևտրաշրջանառության մեծությունը հիմնականում պայմանավորված է եղել

ա) «Այլ երկրների» հետ տնտեսական կապերով,

բ) այդ ժամանակահատվածում զգալիորեն թուլացել են ԱՊՀ երկրների (նկատելի տոկոսի չափով Եվրոպական երկրների) և

գ) զգալիորեն ավելացել են ԵՄ երկրների հետ կապերը և ազդեցությունը:

ՀՀ արտաքին առևտրի հաշվեկշիռի բացասական մնացորդի մեծության կազմում ԱՊՀ երկրների բաժինը 1996 թ. կազմել է 26.5% (Եվրոպական երկրներինը՝ 5.2%), ԵՄ երկրներինը՝ 12.5%, այլ երկրներինը՝ 61.0%: Այդ ցուցանիշները 2012 թ. կազմել են համապատասխանաբար՝ 23.5%, 18.2%, 18.2% և 58.4%:

ա) ԱՊՀ երկրների բաժինը չի փոխվել և նշված ժամանակահատվածի ծայրակետերին (1996 թ. և 2012 թ.) այն մնացել է անփոփոխ (23.5%), թեև այդ վնասի մեծությունը ավելացել է 4.4 անգամ՝ 1996 թ. -149.7 մլն դոլարից 2012 թ. հասնելով -666.1 մլն դոլարի,

բ) զգալիորեն (13.0 տոկոսային կետով) ավելացել է Եվրոպական երկրների բաժինը (ինչը նշանակում է, որ այդ խումբ-երկրների հետ ավելացել են ՀՀ արտաքին առևտրից ստացված վնասները (1996 թ. -29.5 մլն դոլարից այն 2012 թ. հասել է -515.9 մլն դոլարի) ինչը նշանակում է, որ այն ավելացել է ավելի քան 17.5 անգամ,

գ) 5.6 տոկոսային կետով ավելացել է ԵՄ երկրների բաժինը՝ 1996 թ. -70.8 մլն դոլարից 2012 թ. հասնելով -513.7 մլն դոլարի (աճը կազմել է 7.3 անգամ), ինչը եապես ցածր է Եվրոպական երկրների հետ կապված արտաքին առևտրից ստացված վնասներից,

դ) «Այլ երկրների» բաժինը թեև նվազել է 2.6 տոկոսային կետով, սակայն այն շարունակել է մնալ բավականին բարձր և 2012 թ. կազմել է 58.4% (իսկ վերը նշված ժամանակահատվածում այս խումբ երկրների հետ արտաքին առևտրից ՀՀ ստացված վնասները ավելացել են 4.8 անգամ՝ 1996 թ. -345.0 մլն դոլարից 2012 թ. հասնելով -1658.9 մլն դոլարի:

**ՀՀ արտաքին առևտրաշրջանառության և առևտրի հաշվեկշռի ցուցանիշներն ու դրանց կառուցվածքը ըստ ԱՊՀ, ԵվրԱզԵՍ-ի, ԵՄ և այլ երկրների 1996-2012 թթ.**

Երկրների խմբերը	Արտաքին առևտրաշրջանառություն										Առևտրի հաշվեկշիռ				
	1996	2000	2005	2008	2010	2012	1996	2000	2005	2008	2010	2012			
Ընդամենը,	1146.1*	566.1	2775.7	5483.3	4790.0	5694.9	-565.5	-284.1	-827.8	-3369.0	-2707.9	-2838.7			
որից	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0			
ԱՊՀ երկրներ,	405.8	115.8	594.5	1205.7	1050.5	1337.2	-149.7	-45.9	-218.8	-707.3	-652.9	-666.1			
որից	35.4	20.4	21.4	22.0	21.9	23.5	26.5	16.2	26.4	21.0	24.1	23.5			
ԵվրԱզԵՍ-ի երկրներ	226.1	86.1	405.5	897.6	807.4	1097.2	-29.5	-40.7	-157.3	-469.8	-471.1	-515.9			
ԵՄ երկրներ	19.7	15.2	14.6	16.4	16.9	19.3	5.2	14.3	19.0	13.9	17.4	18.2			
Այլ երկրներ	194.6	199.4	1045.4	1746.0	1365.6	1634.3	-70.8	-93.7	-139.2	-600.0	-363.4	-513.7			
	17.0	35.2	37.7	31.8	28.5	28.7	12.5	33.0	16.8	17.8	13.4	18.1			
Այլ երկրներ	545.7	251.1	1135.8	2531.6	2373.9	2723.4	-345.0	-144.5	-469.8	-2061.7	-1691.6	-1658.9			
	47.6	44.3	40.9	46.2	49.6	47.8	61.0	50.9	57.8	61.2	62.5	58.4			

\*Համարիչում մին դոլար, հայտարարում ընդամենի նկատմամբ տոկոսներով:  
Ընդգրկված չէ ԵՄ երկրների ընդհանուր թվի մեջ:  
Ընդգրկված է ԱՊՀ երկրների ընդհանուր թվի մեջ:

Աղբյուրը. «Հայաստանի վիճակագրական տարեգիրք (1997, 1998)» եր., ՀՀ ԱՎԾ 2001, էջ 445-447, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1999 թ. հունվար դեկտեմբերին», եր., ՀՀ ԱՎԾ, 2000, էջ 63, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2006 թ. հունվար դեկտեմբերին», եր., ՀՀ ԱՎԾ, 2007, էջ 126-127, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2009 թ. հունվար դեկտեմբերին», եր., ՀՀ ԱՎԾ, 2010, էջ 116-119, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2011 թ. հունվար դեկտեմբերին», եր., ՀՀ ԱՎԾ, 2012, էջ 117-118, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2012 թ. հունվար դեկտեմբերին», եր., ՀՀ ԱՎԾ, 2013, էջ 115-116:

ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը ԱՊՀ, ԵՄ և այլ երկրների հետ 1996-2012 թթ.

Երկր- ների միավոր- ուման- ները	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	Ընդա- մենը 1996- 2012
Ընդա- մենը, որից	1146.1 100.0	1124.8 100.0	1122.9 100.0	1043.0 100.0	1185.2 100.0	1219.2 100.0	1492.4 100.0	1965.1 100.0	2073.6 100.0	2775.6 100.0	3176.7 100.0	4420.1 100.0	5483.3 100.0	4001.9 100.0	4790.0 100.0	5479.7 100.0	5694.9 100.0	48194.5 100.0
ԱՊՀ	405.8	393.8	310.7	243.6	247.0	307.6	398.1	410.4	512.0	709.7	908.7	1299.9	1512.0	1183.6	1340.9	1476.9	1672.3	13333
Երկր- ների, որից	35.4	35.0	27.7	23.4	20.8	25.2	26.7	20.9	24.7	25.6	28.6	29.4	27.6	29.6	28.0	27.0	29.4	27.7
ԵՄ երկր- ներ	194.6	243.2	335.4	359.3	409.8	340.6	453.4	653.5	690.6	1063.4	1219.5	1698.1	1932.9	1211.3	1528.1	1775.2	1685.3	15794.2
Այլ երկր- ներ	17.0	21.6	29.9	34.4	34.6	27.9	30.4	33.3	33.3	38.3	38.4	38.4	35.3	30.3	31.9	32.4	29.6	32.8
	545.7	487.8	476.8	389.6	528.4	571.0	640.9	901.2	871.0	1002.5	1048.5	1422.1	2038.4	1607.0	1921.0	2227.5	2337.3	19016.7
	47.6	43.4	42.5	37.4	44.6	46.8	42.9	45.9	42.0	36.1	33.0	32.2	37.2	40.2	40.1	40.7	41.0	39.5

Համարիչում մլն. դրաչ, հայտարարումը ընդամենը նկատմամբ, %:

Աղբյուրը. կազմվել է հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2009 թ. հունվար դեկտեմբերին, եր., ՀՀ ԱԿԾ, 2010, էջ 116-119; Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2012 թ. հունվար դեկտեմբերին, եր., ՀՀ ԱԿԾ, 2013, էջ 115-116, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2001, եր., ՀՀ ԱԿԾ, 2001, էջ 445-447, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2011, եր., ՀՀ ԱԿԾ, 2011, էջ 477-479, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2008, եր., ՀՀ ԱԿԾ, 2008, էջ 455-457, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2004, եր., ՀՀ ԱԿԾ, 2004, էջ 489-491, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2002, եր., ՀՀ ԱԿԾ, 2002, էջ 493-495:

ՀՀ արտաքին առևտրի հաշվեկշիռի ցուցանիշները ըստ ԱՄՆ, ԵՄ և այլ երկրների համար 1996-2012 թթ.

Երկրների միավորումները	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	Ընդամենը՝ 1996-2012
Ընդամենը, ուրից	-565.5	-659.8	-681.9	-579.6	-584.2	-535.6	-482.0	-593.9	-627.8	-827.8	-1206.5	-2115.5	-3369.0	-2606.4	-2707.9	-2811.0	-2838.7	-23793.1
	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
ԱՄՆ երկրներ, ուրից	-149.6	-204.4	-149.7	-130.8	-100.2	-129.4	-205.5	-152.2	-261.8	-333.9	-483.7	-764.9	-1013.6	-905.3	-943.4	-940.8	-1001.2	-7870.4
	26.5	31.0	22.0	22.6	17.2	24.2	42.6	25.6	41.7	40.3	40.1	36.2	30.1	34.7	34.8	33.5	35.3	33.1
ԵՄ երկրներ	-70.8	-110.4	-182.8	-146.3	-195.8	-163.4	-58.0	-129.5	-170.4	-154.8	-271.5	-572.5	-787.0	-590.9	-525.8	-560.4	-564.7	-5255
	12.5	16.7	26.8	25.2	33.5	30.5	12.0	21.8	27.1	18.7	22.5	27.1	23.4	22.7	19.4	19.9	19.9	22.1
Այլ երկրներ	-345.1	-345.0	-349.4	-404.8	-288.2	-242.8	-218.5	-312.2	-195.6	-339.1	-451.3	-778.1	-1568.5	-1110.1	-1238.7	-1309.8	-1272.8	-10735.9
	61.0	52.3	51.2	69.8	49.3	45.3	45.3	52.6	31.2	41.0	37.4	36.8	46.6	42.6	45.7	46.6	43.6	45.1

Համարիչում՝ մլն. դոլար, հայտարարում՝ ընդամենի նկատմամբ, %:

Աղբյուրը. կազմվել և հաշվարկվել է՝ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2009 թ. հունվար-դեկտեմբերին, եր., ՀՀ ԱԿԾ, 2010, էջ 116-119, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2012 թ. հունվար-դեկտեմբերին, եր., ՀՀ ԱԿԾ, 2013, էջ 115-116, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2001, եր., ՀՀ ԱԿԾ, 2001, էջ 445-447, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2011, եր., ՀՀ ԱԿԾ, 2011, էջ 477-479, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2008, եր., ՀՀ ԱԿԾ, 2008, էջ 455-457, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2004, եր., ՀՀ ԱԿԾ, 2004, էջ 489-491, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2002, եր., ՀՀ ԱԿԾ, 2002, էջ 493-495:

Աղյուսակ 5-ի տվյալներից հետևում է, որ ՀՀ 1996-2012 թթ. ընդամենը արտաքին առևտրաշրջանառության կառուցվածքում ԱՊՀ երկրների բաժինը կազմել է 27.7%, ԵՄ երկրներինը՝ 32.8%, այլ երկրներինը՝ 39.5%, իսկ ՀՀ 1996-2012 թթ. ընդամենը արտաքին առևտրի հաշվեկշռի վնասները բաժին են ընկել համապատասխանաբար՝ 33.1%, 22.1% և 45.1% (տես աղյուսակ 1):

Զգալի հետաքրքրություն է ներկայացնում նաև ՀՀ արտաքին առևտրաշրջանառության կազմում արտահանման և ներմուծման միտումների փոփոխությունների ուսումնասիրությունը (տես աղյուսակ 5): ՀՀ արտահանման կազմում ԱՊՀ երկրների բաժինը 1996 թ. կազմել է 44.1% ԵվրԱզԵՍ-ի երկրներինը՝ 33.9%, ԵՄ երկրներինը՝ 21.3%, այլ երկրներինը՝ 34.6%: 2012 թ. այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 23.5%, 20.4%, 39.2% և 37.3%: 2012 թ. ցուցանիշները համեմատելով 1996 թ. ցուցանիշների հետ կարելի է եզրակացնել, որ.

ա) ՀՀ արտահանման կազմում 20.6 տոկոսային կետով նվազել է ԱՊՀ երկրների արտահանման բաժինը՝ 1996 թ. 44.1 %-ից 2012 թ. հասնելով 23.5%-ի,

բ) զգալիորեն (13.5 տոկոսային կետով) նվազել է նաև ԵվրԱզԵՍ-ի երկրների բաժինը՝ 1996թ. 33.9%-ից 2012թ. հասնելով 20.4%-ի,

գ) 17.9 տոկոսային կետով ավելացել է ԵՄ երկրների բաժինը՝ 1996թ. 81.3%-ից 2012 թ. հասնելով 39.2 տոկոսի,

դ) «Այլ երկրների» բաժնի փոփոխությունը մեծ չէ (2.7 տոկոսային կետ) և այն 1996 թ. 34.6%-ի փոխարեն 2012 թ. կազմել է 37.3%: Այլ կերպ ասած կարելի է արձանագրել, որ 1996-2012 թթ. ժամանակահատվածում ՀՀ արտահանման կազմում տեղի ունեցած էական փոփոխությունը վերաբերել է ԵվրԱզԵՍ-ի երկրների բաժնի նվազեցմանը և ԵՄ երկրների բաժնի ավելացմանը: Նշենք նաև, որ 1996-2012 թթ. ընթացքում, եթե ՀՀ արտահանման մեծությունը ավելացել է շուրջ 5 անգամ, ԱՊՀ երկրներ՝ 2.6 անգամ, ԵվրԱզԵՍ-ի երկրներ շուրջ 3 անգամ, ԵՄ ավելի քան 9 անգամ, ապա «Այլ երկրներ»-ինը՝ 5.3 անգամ: Այսինքն ՀՀ արտահանումը դեպի ԵՄ երկրներ՝ 3 անգամ գերազանցել է, ԵվրԱզԵՍ-ի երկրներ արտահանման չափերին:

ՀՀ ներմուծման ծավալներում ԱՊՀ երկրների բաժինը 1996 թ. կազմել է 32.4%, ԵվրԱզԵՍ-ի երկրներինը՝ 14.9%, ԵՄ երկրներինը՝ 15.5%, իսկ այլ երկրներինը՝ 52.0%:

ՀՀ արտաքին առևտուրը և դրա կառուցվածքն ըստ ԱՊՀ, ԵվրԱզԵՍ-ի, ԵՄ և այլ երկրների 1996-2012 թթ.

Երկրների խմբերը	Արտահանում										Ներմուծում ըստ առևտուր անող երկրների խմբերի													
	1996	2000	2005	2008	2010	2012	1996	2000	2005	2008	2010	2012	1996	2000	2005	2008	2010	2012						
Ընդամենը,	290.3*	141.1	973.9	1057.2	1041.1	1428.1	855.8	425.2	1801.7	4426.2	3749.0	4266.8	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0						
որից	128.1	34.9	187.9	249.2	198.8	335.5	277.7	80.8	406.6	956.5	851.7	1001.6	44.1	24.7	19.3	23.6	19.1	23.5	32.4	19.0	22.6	21.6	22.7	23.5
ԱՊՀ երկրներ,	98.3	22.6	124.1	213.9	174.8	290.7	127.8	63.2	281.4	683.7	636.4	806.5	33.9	16.0	12.7	20.2	16.8	20.4	14.9	15.6	15.4	17.0	18.9	
ԵվրԱզԵՍ-ի ե-րկրներ	61.9	52.9	453.0	573.0	501.1	560.3	132.7	146.6	592.3	1173.0	864.6	1074.0	21.3	37.5	46.5	54.2	48.1	39.2	15.5	34.5	32.9	26.5	23.1	25.2
ԵՄ երկրներ	100.3	53.3	333.0	235.0	341.2	532.3	445.4	197.8	802.8	2296.7	2032.7	2191.2	34.6	37.8	34.2	22.2	32.8	37.3	52.0	46.5	44.6	51.9	54.2	

\*Համարիչում նմ ղուլադ, հայտարարում ընդամենի նկատմամբ տոկոսներով:  
 Ընդգրկված չէ ԵՄ երկրների ընդհանուր թվի մեջ:  
 Ընդգրկված է ԱՊՀ երկրների ընդհանուր թվի մեջ:

Աղբյուրը. «Հայաստանի վիճակագրական տարեգիրք (1997, 1998)», եր., ՀՀ ԱԿԾ 2001, էջ 445-447, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1999թ. հունվար-դեկտեմբերին», եր., ՀՀ ԱԿԾ, 2000, էջ 63, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2006թ. հունվար-դեկտեմբերին», եր., ՀՀ ԱԿԾ, 2007, էջ 128, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2009թ. հունվար-դեկտեմբերին», եր., ՀՀ ԱԿԾ, 2010, էջ 119-120, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2011թ. հունվար-դեկտեմբերին», եր., ՀՀ ԱԿԾ, 2012, էջ 119-120, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2012թ. հունվար-դեկտեմբերին», եր., ՀՀ ԱԿԾ, 2013, էջ 117-118:

ՀՀ ապրանքների արտահանումն ԱՊՀ, ԵՄ և այլ երկրներ 1996-2012 թթ.

	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	1996-2012
Երկրների միավորումները	290.3	232.5	220.5	231.5	300.5	341.1	505.2	685.6	722.9	973.9	985.1	1152.3	1057.2	710.2	1041.1	1334.3	1428.1	12213.3
Ընդամենը, որից	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100
ԱՊՀ երկրներ, որից	128.1	94.7	80.5	73.4	73.3	89.1	96.3	129.1	125.1	187.9	212.5	267.5	249.2	138.3	198.8	268.1	335.5	2747.5
ԵՄ երկրներ, որից	44.1	40.7	36.5	31.7	24.4	26.1	19.1	18.8	17.3	19.3	21.6	30.8	23.6	19.5	19.1	20.1	23.5	22.5
ԵՄ երկրներ	61.9	66.4	76.3	107	107	88.6	197.7	262	262	453.1	473.5	562.8	573	310.2	501.1	607.4	560.3	5270.3
Այլ երկրներ	21.3	28.6	34.6	46.2	35.6	25.9	39.1	38.2	36	46.4	48.1	48.8	54.1	43.7	48.1	45.5	39.2	43.2
Այլ երկրներ	110.3	71.4	63.7	51.3	120.2	164.1	211.2	294.5	335.8	332.9	299.1	322	235	261.7	341.2	458.8	532.3	4195.5
Այլ երկրներ	34.6	30.7	28.9	22.1	40.0	48	41.8	43	46.7	34.3	30.3	20.4	22.3	36.8	32.8	34.4	37.3	34.3


ՀՀ ապրանքների ներմուծումն ԱՊՀ, ԵՄ և այլ երկրներ 1996-2012 թթ.

Երկրների միավորումներ	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	1996-2012
Ընդամենը, որից	855.8*	892.3	902.4	811.3	884.7	877.4	987.2	1279.5	1350.7	1801.7	2191.6	3267.8	4426.1	3304.2	3749	4145.3	4266.8	3610.7
ԱՊՀ	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100
Երկրներ, որից	277.7	299.1	230.2	187.2	173.6	218.5	301.8	281.3	386.9	406.6	696.2	1032.4	956.5	749.3	851.7	939.1	1001.7	9878.9
ԵՄ	32.4	33.5	25.5	23.1	19.6	24.9	30.6	22	28.6	22.6	31.8	31.6	28.5	31.4	30.5	22.7	23.5	27.4
Այլ երկրներ	132.7	176.8	259.1	252.3	302.8	252	255.7	391.5	430.5	592.3	746	1135.3	1173	735.2	864.5	999.1	1074	102847
Այլ երկրներ	15.5	19.8	28.7	10.9	34.2	28.8	25.9	30.6	31.9	32.8	34	34.7	30.7	27	27.4	24.1	25.2	28.6
Այլ երկրներ	445.4	416.4	413.1	372	408.3	406.9	429.7	606.7	533.3	802.8	749.4	1100.1	2296.6	1819.7	2032.8	-1492.9	2191.1	15847.1
Այլ երկրներ	52.1	46.7	45.8	66	46.2	46.3	43.5	47.4	39.5	44.6	34.2	32.3	40.8	41.6	42.1	53.2	51.3	44

\*Համարիչում՝ մեղրաքար, հայտարարում՝ տոկոսներով ընդամենի նկատմամբ  
 Աղբյուրը: ՀՀ ԱԿԾ-ի տվյալներով:


**Գծապատկեր 4**

**ՀՀ ասպրանքների արտահանումը ԱՊՀ, ԵՄ և այլ երկրներ 1996-2012 թթ., տոկոսներով՝ արտահանման ընդհանուր ծավալից**



**Գծապատկեր 5**

**ՀՀ ասպրանքների ներմուծումը ԱՊՀ, ԵՄ և այլ երկրներ 1996-2012 թթ., տոկոսներով՝ ներմուծման ընդհանուր ծավալից**



Աղբյուր: Կազմվել է Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2011, Եր., ՀՀ ԱԿԾ, 2011, էջ 537, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2008, Եր., ՀՀ ԱԿԾ, 2008, էջ 455, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2004, Եր., ՀՀ ԱԿԾ, 2004, էջ 489, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2002, Եր., ՀՀ ԱԿԾ, 2002, էջ 493, Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը 2012 թ. հունվար-դեկտեմբերին, Եր., ՀՀ ԱԿԾ, 2013, էջ 117-118, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2001, Եր., ՀՀ ԱԿԾ, 2001, էջ 445:

Այդ ցուցանիշները 2012 թ. կազմել են համապատասխանաբար՝ 23.5%, 18.9% և 51.4%: Բերված տվյալներից հեշտ է նկատել, որ ՀՀ ներմուծման կառուցվածքում նշված ժամանակահատվածում «Այլ երկրների» բաժինը փոփոխվել է աննշան չափով (նվազել է 0.6 տոկոսային կետով և 2012 թ. կազմել է 51.4%, այսինքն այդ խումբ երկրների բաժինը ներմուծման կառուցվածքում ամենաբարձրն է և՛ 1996 թ., և՛ 2012 թ. կազմել է ներմուծման կեսից ավելին (բացարձակ չափերով այն ավելացել է 5 անգամ՝ 1996 թ. 445.4 մլն դոլարից 2012 թ. հասնելով 2191.2 մլն դոլարի): Այսինքն ՀՀ ներմուծման կառուցվածքի հիմնական փոփոխությունները վերաբերում են մյուս խումբ երկրներին: Ուստի, ԱՊՀ երկրների բաժինը 1996 թ. 32.4%-ից 2012 թ. կազմել է 23.5%, նվազելով 8 տոկոսային կետով, թեև բացարձակ մեծությամբ այդ երկրների բաժինը ավելացել է 3.6 անգամ՝ 1996 թ. 277.7 մլն դոլարից 2012 թ. հասել է 1001.6 մլն դոլարի, իսկ ԵվրԱզԷՍ-ի երկրներինը համապատասխանաբար՝ 14.9%, 4.0%, 18.9%, 6.3 անգամ 127.8 մլն դոլար և 806.5 մլն դոլար: ԵՄ երկրների բաժինը ՀՀ ներմուծման կառուցվածքում 1996 թ. կազմել է 15.5%, 2012 թ.՝ 25.2%, կամ բացարձակ արժեքով այդ բաժինն ավելացել է 8.1 անգամ: Այլ կերպ ասած ԵՄ երկրներից ՀՀ ներմուծման չափը ԵվրԱզԷՍ-ի երկրների համեմատությամբ ավելացել է 1.3 անգամ ավելի արագ:

Արդյուսակ 8-9-ում բերված են ՀՀ ապրանքների արտահանման և ներմուծման ցուցանիշները ըստ ԱՄՆ, ԵՄ և այլ երկրների 1996-2012 թթ.: Այդ տվյալներից հետևում է (արդյուսակ 8), որ նշված ժամանակահատվածում ՀՀ ապրանքների ընդամենը արտահանման 22.5%-ը բաժին է ընկել ԱՊՀ, 43.2%-ը՝ ԵՄ, 34.3%-ը՝ այլ երկրներին: Այդ ցուցանիշներն ապրանքների ներմուծման համար կազմել են համապատասխանաբար՝ 27,4%, 28,6% և 44,4% (տես նաև գծապատկեր 4-5-ը):

Արդյուսակ 10-ի տվյալներից հետևում է, որ ԼՂՀ արտաքին առևտրի ընդհանուր շրջանառության 97.3%-ը (ըստ քաշի) և 91.0%-ը (ըստ արժեքի) բաժին է ընկնում ՀՀ-ին, ԵվրԱզԷՍ-ի երկրներին համապատասխանաբար՝ 0.9% և 1.5%, իսկ ԵՄ երկրներինը՝ 0.2% և 4.9%, այլ երկրներինը՝ 1.7% և 7.4%: Այլ կերպ ասած, ԼՂՀ արտաքին առևտուրը, ՀՀ արտաքին առևտուրը կանխորոշում է, իսկ այլ հավասար պայմաններում ԼՂՀ արտաքին առևտրի քաշային արժեքային մեծությունների վրա մեծ է «Այլ երկրների» ազդեցությունը (այդ թվում հիմնականում ԵՄ) և ապա ԵվրԱզԷՍ-ի երկրներինը: Բերված տվյալներից հետևում է, որ ԼՂՀ ներմուծման մեծությունը (քաշային), արտահանման չափերը գերազանցում են 2.7 անգամ, իսկ արժեքային արտահայտությամբ՝ ավելի քան 5 անգամ: Ըստ որում, ԵվրԱզԷՍ-ի երկրների համեմատությամբ ԵՄ երկրներից ԼՂՀ ներմուծման մեծությունը (արժեքային արտահայտությամբ) գերազանցում է 6.1 անգամ, իսկ արտահանմանը՝ 3.7 անգամ, իսկ ընդհանուր առևտրաշրջանառությունը՝ 3.4 անգամ:

*Աղյուսակ 10*

**ԼՂՀ արտաքին առևտուրն ու դրա կառուցվածքը ըստ ԱՊՀ, ԵվրԱզԵՍ-ի, ԵՄ և այլ երկրների 2012 թ.**

Երկրների խմբերը	Ընդհանուր առևտրա-չրջանառությունը		Որից			
			Արտահանում		Ներմուծում	
	Քանակը, հազ. տոննա	Արժեքը, մլն դոլար	Քանակը, հազ. - տոննա	Արժեքը, մլն դոլար	Քանակը, հազ. տոննա	Արժեքը, մլն դոլար
Ընդամենը	433.0*	349.0**	116.6	57.8	316.4	291.2
	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
<i>որից՝</i>						
ԱՊՀ երկր-ներ, որից	425.5	323.0	111.9	49.4	313.6	273.6
	98.3	92.6	96.0	85.5	99.1	94.0
ՀՀ	421.2	317.5	111.2	47.2	310.0	270.3
	97.3	91.0	95.4	81.7	98.0	92.8
ԵվրԱզԵՍ-ի երկրներ	4.1	5.1	0.7	2.2	3.4	2.9
	0.9	1.5	0.6	3.8	1.1	1.0
ԵՄ երկր-ներ	1.03	17.2	0.03	8.1	0.1	9.1
	0.2	4.9	0.0	14.0	0.0	0.3
Այլ երկր-ներ	75.5	26.0	4.7	8.4	2.8	17.6
	1.7	7.4	4.0	14.5	0.9	6.0

\*Համարիչում՝ հազ. տոննա, հայտարարում՝ ընդամենի նկատմամբ տոկոսներով:

\*\*Համարիչում՝ մլն դոլար, հայտարարում՝ ընդամենի նկատմամբ տոկոսներով:

Այլ երկրների մեջ մտնում են նաև ԵՄ երկրները:

*Աղբյուրը. կազմվել է հաշվարկվել է «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտաքին առևտուրը 2012 թ.», Վիճակագրական ժողովածու, Ստեփանակերտ, ԼՂՀ ԱԿԾ, 2013, էջ 25-36-ի տվյալների հիման վրա:*


Եթե այս ցուցանիշով գնահատելու լինենք ԼՂՀ արտաքին առևտրի վրա առանձին խումբ երկրների ազդեցությունը (կարևորությունը), ապա ստացվում է ԵՄ երկրները ավելի էական դերակատարում ունեն, քան՝ ԵվրԱզԵՍ-ի: Ըստ որում ԼՂՀ արտահանման կառուցվածքում ամենամեծ բաժինն ունեն հանքահումքային նթերքները, որոնց տեսակարար կշիռը ԼՂՀ արտահանման կազմում 2010 թ. (74.8մլն դոլար) կազմել է 71.7% (53.6մլն դոլար), 2011 թ. 62.1% (49.4մլն դոլար), 2012 թ.՝ 43.1% (24.9 մլն դոլար): Պատրաստի սննդի արտադրանքի բաժինն իր ծավալով ԼՂՀ արտահանման մեջ զբաղեցրել է երկրորդ տեղը, համապատասխանաբար՝ 7.6% (5.7 մլն դոլար), 8.3% (6.6 մլն դոլար), 10.2% (5.9 մլն դոլար): Երրորդ տեղը զբաղեցրել է թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի բաժինը՝ համապատասխանաբար՝ 4.7% (3.5մլն դոլար), 7.4% (5.9 մլն դոլար), 14.0% (8.1 մլն դոլար): Նշված խոշորացված ապրանքախմբերի բաժինը կազմել է համապատաս-

սխանաբար՝ 84.0% (62.8 մլն դոլար), 77.8% (61.9 մլն դոլար), 67.3% (38.9 մլն դոլար):

ԼՂՀ ներմուծման կազմում առաջին տեղն են զբաղեցնում հանքահումքային նթերքները. 2010 թ. այդ ցուցանիշը կազմել է 21.5% (58.6 մլն դոլար), 2011 թ.՝ 20.2% (63.1 մլն դոլար), 2012 թ.՝ 19.7% (57.2 մլն դոլար): Պատրաստի սննդի արտադրանքի բաժինը կազմել է համապատասխանաբար՝ 17.4% (47.6 մլն դոլար), 15.5% (48.7 մլն դոլար), 16.2% (47.2 մլն դոլար), իսկ երրորդ տեղը զբաղեցնող վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներինը համապատասխանաբար՝ 10.9% (49.8 մլն դոլար), 9.9% (31.0 մլն դոլար), 11.0% (32.1 մլն դոլար), կամ ԼՂՀ ներմուծման մեջ նշված երեք խոշորացված ապրանքախմբերի բաժինները կազմել են համապատասխանաբար՝ 49.8% (136.0 մլն դոլար), 45.6% (142.8 մլն դոլար), 46.9% (136.5 մլն դոլար):


**Գծապատկեր 6**

**ՀՀ արտաքին առևտրաշրջանառության կառուցվածքը ըստ ԱՊՀ, ԵվրԱզԵՄ-ի, ԵՄ և այլ երկրների 1996-2012 թթ.**




**Գծապատկեր 7**

**ՀՀ առևտրի հաշվեկշռի կառուցվածքը ըստ ԱՊՀ, ԵվրԱզԵՄ-ի, ԵՄ և այլ երկրների 1996-2012 թթ.**




*Գծապատկեր 8*

**ՀՀ արտահանման կառուցվածքն ըստ ԱՊՀ, ԵվրԱզԵՄ-ի, ԵՄ և այլ երկրների 1996-2012 թթ.**



*Գծապատկեր 9*


**ՀՀ ներմուծում կառուցվածքն ըստ ԱՊՀ, ԵվրԱզԵՄ-ի, ԵՄ և այլ երկրների 1996-2012 թթ.**




*Գծապատկեր 10*

**ԼՂՀ ընդհանուր առևտրաշրջանառության կառուցվածքը ըստ ԱՊՀ, ԵվրԱզԵՍ-ի, ԵՄ և այլ երկրների 2012 թ.**

**Քանակը**





**Արժեքը**



*Գծապատկեր 11*

**ԼՂՀ արտահանման և ներմուծման կառուցվածքը ըստ ԱՊՀ, ԵվրԱզԵՍ-ի, ԵՄ և այլ երկրների 2012 թ.**



Առանձին երկրի, մեկ այլ երկրի կամ երկրների տնտեսական միությունների - հետ արտաքին առևտրի որակական գնահատականը կարելի է տալ հարաբերական առավելությունների գործակիցների (ՀԱԳ) օգնությամբ, որոնց մեծությունը հաշվարկվում է հետևյալ բանաձևի միջոցով.

$$ՀԱԳ = \frac{A}{B}$$

$$\frac{A + B}{2}$$

որտեղ՝ A-ն արտահանման ծավալն է, B-ն՝ ներմուծման ծավալը:

Այս ցուցանիշը գտնվում է [-1,+1] միջակայքում: -1-ի դեպքում երկիրը բացառապես ներմուծող է, +1-ի դեպքում՝ բացառապես արտահանող: Միջանկյալ ցուցանիշները ցույց են տալիս երկրի արտաքին ապրանքաշրջանառության

ծավալում զուտ արտահանման (արտահանման և ներմուծման տարբերությունը) բաժինը: Հաճախ այդ գործակիցը բնութագրում է նաև երկրի մասնագիտացման մակարդակը: Ըստ որում որքան մոտ է այդ գործակիցը +1-ին, այնքան այն մասնագիտացված է, հետևաբար այն ունի ավելի բարձր հարաբերական առավելություններ և որի պատճառով մյուս երկրները կցանկանան առևտուր անել այդ երկրի հետ, որպեսզի օգտվեն այդ երկրի հարաբերական առավելություններից:

Աղյուսակ 11-ում բերված են ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ՀԱԳ-երը ըստ առանձին երկրների 1996-2012 թթ.: Տվյալներից հետևում է, որ նշված - ժամանակահատվածում հանրապետության արտաքին առևտրաշրջանառության ՀԱԳ-երը ունեցել են բացասական նշան, ինչը նշանակում է, որ ողջ ժամանակահատվածում ՀՀ ներմուծումը գերազանցել է արտահանմանը: Ըստ որում, եթե 1996-2005 թթ. այդ գործակիցները նվազել են, ապա 2008-2009 թթ. դրանք հասել են իրենց բարձրագույն արժեքին, իսկ հաջորդող տարիներին դրանք շարունակել են նվազել և 2012 թ. կազմել են -0,498 (ինչը շատ մոտ է 1996 թ. ցուցանիշին): Հետաքրքիր է նշել, որ 1996 և 2000 թվականներին, ինչպես ԱՊՀ, այնպես էլ ոչ ԱՊՀ երկրների ՀԱԳ-երն ավելի մեծ բացասական մեծություն են ունեցել, քան ՀՀ միջին ՀԱԳ-երն են եղել, իսկ 2005-2012 թվականներին ԱՊՀ երկրների ՀԱԳ-երը ավելի մեծ բացասական մեծություն են ունեցել, քան ՀՀ միջին ՀԱԳ-երն են: ԱվրազԷՄ-ի երկրներից Բելառուսի հետ արտաքին առևտրում միայն 2000 և 2005 թվականներին է, որ ՀՀ ունեցել է դրական ՀԱԳ-եր, իսկ Ղազախստանի հետ՝ 1996, 2000 և 2005 թվականներին: ԵՄ երկրների հետ ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ՀԱԳ զգալիորեն ցածր են եղել ՀՀ միջին ՀԱԳ-երից: Այլ և մնացած երկրների ՀԱԳ-երը նույնպես ավելի մեծ բացասական արժեք են ունեցել, քան ՀՀ միջին ՀԱԳ-երի մեծություններն են: Այլ կերպ ասած, 1996-2012 թթ. ժամանակահատվածում ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ծավալի փոփոխությունը հօգուտ ԵՄ երկրների պայմանավորված է եղել այդ առևտրի հարաբերական առավելություններով: Ինչից հետևում է, որ առաջիկա տարիներին ոչ միայն չպետք է կորցնել այդ կապերը, այլ ավելի խորացնել ու զարգացնել դրանք:

Վերը կատարված վերլուծությունը թեև վերաբերում է ՀՀ-ի և ԼՂՀ-ի արտաքին առևտրի քանակական և որակական կողմերին տնտեսական միությունների հետ հարաբերություններում (էական են նաև արտադրության մյուս գործոնների՝ աշխատուժի, ներդրումների, տեխնոլոգիաների ուսումնասիրությունները), սակայն եթե նկատի ունենանք, որ ապրանքների շարժը արտադրության գործոնների մեջ ունեն ավելի կարևոր դեր, ապա պետք է առաջարկել, որ երկրի կողմնորոշման քաղաքական որոշման կայացման ժամանակ պետք է հաշվի առնել առաջին հերթին զարգացման ձեռքբերած տնտեսական իրողությունները և առաջնորդվել տնտեսական շահերով:

*Աղյուսակ 11*

**Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրաշրջանառության համեմատական առավելությունների գործակիցներն ըստ երկրների 1996-2012 թթ.**

	1996	2000	2005	2008	2009	2010	2011	2012
1	2	3	4	5	6	7	8	9
<b>Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը</b>	-0.493	-0.493	-0.298	-0.614	-0.648	-0.565	-0.513	-0.498
<i>որից՝</i>								
<b>ԱՊՅ ԵՐԿՐՆԵՐ</b>	-0.369	-0.406	-0.471	-0.670	-0.766	-0.704	-0.637	-0.599
այդ թվում՝								
Ադրբեջան	-	-	-	-	-	-	-	-
Բելառուս	-0.307	0.182	0.321	-0.821	-0.683	-0.749	-0.665	-0.667
Ղազախստան	0.848	0.185	0.429	-0.729	-0.145	-0.588	-0.704	-0.383
Ղրղզստան	-	0.805	-	0.781	-0.320	0.778	0.996	-
Մոլդովա	-	-0.751	-	0.124	-0.174	-0.198	-0.612	-
Ռուսաստանի Դաշնություն	-0.132	-0.510	0.776	-0.607	-0.761	-0.678	-0.601	-0.582
Տաջիկստան	-	1.000	-	-0.075	0.984	0.018	0.772	-
Թուրքմենստան	-0.663	0.667	-0.785	-0.790	-0.655	-0.488	-0.692	-0.013
Ուզբեկստան	-	-0.636	-	-0.544	-0.332	-0.506	-0.275	-
Ուկրաինա	-0.424	-0.581	-0.669	-0.870	-0.872	-0.900	-0.909	-0.973
ԼՂՀ	-	-	-	-	-	-	-	-
<b>ՈՉ ԱՊՅ ԵՐԿՐՆԵՐ</b>	-0.562	-0.516	-0.239	-0.593	-0.599	-0.512	-0.467	-0.457
<b>ԵՄ ԵՐԿՐՆԵՐ</b>	-0.364	-0.478	-0.056	-0.416	-0.486	-0.344	-0.316	-0.335
այդ թվում՝								
Ավստրիա	-0.769	-0.993	-0.301	-0.993	-0.754	-0.856	-0.889	-0.911
Բելգիա	-0.540	-0.058	-0.073	-0.027	-0.111	0.008	0.044	0.266
Միացյալ Թագա- վորություն	-0.379	-0.710	-0.928	-0.047	-0.891	-0.980	-0.984	-0.951
Գերմանիա	-0.650	-0.477	0.037	-0.163	-0.210	-0.227	-0.216	-0.268
Հունաստան	-0.839	-0.896	-0.938	-0.998	-0.991	-0.996	-0.996	-0.996
Դանիա	-1.000	-1.000	—	-0.992	-0.984	-0.972	-0.988	-0.998
Իռլանդիա	—	-0.999	—	-0.992	—	-0.999	0.886	—
Իսպանիա	0.773	-0.925	-0.542	-0.531	-0.430	-0.237	-	-0.233
Իտալիա	-0.992	-0.811	-0.402	-0.701	-0.885	-0.924	-0.948	-0.913
Լյուքսեմբուրգ	0.270	-1.000	-0.142	0.750	-0.110	-	0.051	-0.947
Նիդերլանդներ	0.208	-0.650	0.873	0.706	0.324	0.615	0.519	0.356
Պորտուգալիա	-	-0.937	-	-1.000	-0.778	-	-0.999	-
Ֆինլանդիա	-0.991	-0.989	-0.517	-0.963	-0.996	-0.975	-0.999	-0.996
Ֆրանսիա	-0.932	-0.948	-0.918	-0.846	-0.857	-0.822	-0.791	-0.877
Շվեդիա	-1.000	-0.885	-	-0.963	-0.898	-0.971	-0.906	-0.524
Հունգարիա	-0.972	-0.651	-	-0.987	-0.945	-0.960	-0.961	-0.907
Չեխիայի Հան- րապետություն	-1.000	-0.924	-0.944	-0.870	-0.806	-0.879	-0.853	-0.865
Սլովենիա	-	-0.974	-	-0.999	-1.000	-0.976	-0.960	-
Սլովակիա	-0.126	-0.988	-0.998	-0.976	-0.976	-0.957	-0.992	-0.945
Լեհաստան	-1.000	-0.967	-0.884	-0.697	-0.962	-0.868	-0.949	-0.972

	1996	2000	2005	2008	2009	2010	2011	2012
1	2	3	4	5	6	7	8	9
Բուլղարիա	-0.973	-0.833	-0.940	-0.331	-0.179	0.164	0.197	0.198
Ռումինիա	-	0.200	-0.992	-0.996	-0.998	-0.993	-0.991	-
Մալթա	-	-	-	-0.882	-0.941	-	-	-
Կիպրոս	-1.000	-	0.165	-0.691	-0.893	-0.449	-0.349	0.560
Լատվիա	-	-0.927	-	-0.793	-0.253	-0.277	-0.389	-
Լիտվա	-	-0.741	-	-0.379	-0.495	-0.486	-0.388	-
Էստոնիա	-	-0.177	-	0.255	-0.817	0.207	-0.908	-
<b>Այլ երկրներ</b>	-0.610	-0.538	-0.398	-0.814	-0.760	-0.713	-0.656	-0.545
այդ թվում՝								
Շվեյցարիա	-0.615	-0.444	-0.138	-0.786	-0.678	-0.747	-0.695	-0.098
Իրանի Իսլամական Հանրապետություն	-0.547	-0.465	-0.515	-0.810	-0.767	-0.411	-0.366	-0.384
Միացյալ Նահանգներ	-0.919	-0.461	-0.283	-0.703	-0.430	-0.242	-0.208	-0.244
Արաբական Միացյալ Էմիրություններ	-0.892	-0.768	-0.345	-0.961	-0.964	-0.953	-0.949	-0.676
Սերբիա	-	-	-	-0.498	-0.409	-0.281	-0.254	-
Լիբանան	-	-0.882	-	-0.955	-0.878	-0.957	-0.715	-
Հնդկաստան	-	-0.876	-0.955	-0.776	-0.769	-0.657	-0.819	-0.959
Չինաստան	-0.941	-0.809	-0.753	-0.979	-0.764	-0.757	-0.856	-0.855
Կանադա	-0.942	-0.690	-0.238	-0.349	0.385	0.383	0.614	0.100
Հարավային Աֆրիկա	-	-0.838	-	-0.996	-0.808	-0.981	-0.974	-
Եգիպտոս	-	0.696	-	-0.974	-0.794	-0.992	-0.917	-
Թուրքիա	-0.018	-0.927	-0.932	-0.983	-0.985	-0.986	-0.990	-0.991
Վրաստան	-	-0.107	0.418	-0.378	-0.482	-0.644	-0.599	0.249
Իսրայել	-	-	0.039	-0.592	-0.794	-0.214	-0.535	-0.913
Ճապոնիա	-	-	-0.945	-0.900	-0.915	-0.981	-0.915	-0.996
Կորեայի Հանրա- պետություն	-	-	-	-0.986	-0.864	-0.898	-0.592	-
Բրազիլիա	-	-	-	-0.995	-1.000	-1.000	-1.000	-1.000
Մնացած երկրներ	-0.676	-0.406	-0.293	-0.766	-0.817	-0.773	-0.703	-0.659

Աղբյուրը. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2001, եր., 33 ԱԿԾ, 2001, էջ 445-447, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2004, եր., 33 ԱԿԾ, 2004, էջ 457-489, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2008, եր., 33 ԱԿԾ, 2008, էջ 455-457, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2012, եր., 33 ԱԿԾ, 2012, էջ 468-470:

Այսպիսով, վերը բերված ՀՀ-ի Մաքսային միությանը միանալու որոշման հիմքում չի կարող լինել տնտեսական բաղադրիչով հիմնավորվածությունը, այն ավելի շատ խարսխվում է քաղաքական և աշխարհաքաղաքական հանգամանքների և պայմանների վրա:

## ԱՍՓՈՓՈՒՄ

Համաշխարհային տնտեսության զլորալացման և տնտեսական ինտեգրման խորացման պայմաններում մեծանում է տնտեսական միությունների դերը և ինչ-որ առումով կարելի է ասել, որ դեռևս վերջնականապես չի ավարտվել այդ գործընթացը, քանի որ կազմալուծվում են հին տնտեսական միությունները և ձևավորվում են նորերը: Ներկայումս այդպիսի իրավիճակում է գտնվում ՀՀ, որը տարիներ շարունակ կողմնորոշված լինելով դեպի ԵՄ և ինտեգրված լինելով «Արևելյան հարևանության» ծրագրում, որոշում է կայացրել անդամագրվել մաքսային միությանը:

Հոդվածում քննարկելով և վերլուծելով ՀՀ և ԼՂՀ արտաքին առևտրի 1996-2012 թթ. զարգացումները՝ հեղինակները նկատում են, որ նշված ժամանակահատվածում ՀՀ ավելի մոտեցել է ԵՄ երկրներին և հեռացել ԱՊՀ երկրներից, միաժամանակ արտաքին առևտրաշրջանառության շուրջ կեսը պահպանելով աշխարհի մնացած երկրների հետ, որոնք չեն մտնում ԵՄ կամ ԱՊՀ երկրների մեջ:

Արտաքին առևտրի հարաբերական առավելությունների գործակիցների ուսումնասիրության արդյունքում եզրակացնում են, որ ԵՄ երկրների հետ արտաքին առևտուրը ավելի ձեռնտու է, քան մյուս տնտեսական միությունների կամ երկրների խմբերի հետ, եթե, իհարկե, խնդիրը դիտարկվում է սուկ տնտեսական բաղադրիչի տեսանկյունից:

## АННОТАЦИЯ

### САРГСЯН Г., МАРКОСЯН А., АВАКЯН Б. – ПРОБЛЕМЫ ВЛИЯНИЯ ЭКОНОМИЧЕСКИХ СОЮЗОВ НА ВНЕШНЮЮ ТОРГОВЛЮ РА И НКР

В условиях глобализации и экономической интеграции мировой экономики, растет и роль экономических союзов, и в некотором смысле можно сказать, что этот процесс еще не закончился, потому что распадаются старые экономические союзы и формируются новые. Такова нынешняя ситуация Армении, которая будучи ориентированной на долгосрочный период в ЕС и интегрируется в программе "Восточного соседства", решила присоединиться к Таможенному Союзу.

В статье обсудив и проанализировав динамику внешней торговли РА и НКР в 1996-2012 гг., авторы отмечают, что в данный период РА значительно приблизилась к странам ЕС и отделилась от странах СНГ, и одновременно сохранила более половины внешней торговли с остальными странами мира, которые не являются членами-участниками ЕС и стран СНГ.

Исследования коэффициентов относительных преимуществ внешней торговли показывает, что внешняя торговля со странами ЕС является более выгодным, чем другие экономические объединения или группы стран.

Авторы приходят к выводу, что основой для принятия важных решений, в дополнение к политическим решениям, должны быть также обоснованы экономической целесообразностью и сравнительных преимуществ.

## SUMMARY

### SARGSYAN H., MARKOSYAN A., AVAGYAN B. -ISSUES ON THE INFLUENCE OF ECONOMIC UNIONS ON THE EXTERNAL TRADE OF RA AND NKR

The process of formulation of economic unions is still under way. While analyzing foreign trade development of RA and NKR in 1996-2012 the author conclude that trading with EU countries is more profitable compared to other economic unions and country groups.

ԲԱԺԻՆ II

# ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ



**ՀԱՄԱԿ ԴԱՅՐԱՄՅԱՆ***տնտեսագիտության թեկնածու**ԵՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի ասիստենտ**Էլ. փոստ՝ hasmikghahramanyan@yahoo.com***ՎԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.  
ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ, ԹԵ՞ ՖԻՆԱՆՍԱՎԿԱՆ**

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը ստիպեց մակրոտնտեսագետներին թե՛ տեսական, թե՛ գործնական տիրույթներում վերաարժեքավորել դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների առաջնահերթությունները և նպատակները: Ծգնաժամի ժամանակ գրեթե բոլոր երկրներում իրավիճակից ելքը տեսնում էին նախ և առաջ դրամավարկային քաղաքականության միջոցով:

Մինչ ճգնաժամը զարգացած տնտեսությունների «մեծ հանդարտության» (Great Moderation) ժամանակաշրջանում, երբ գրանցվում էր կայուն տնտեսական աճ և ցածր գնաճ, հստակորեն տարանջատված էին դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների առաջնահերթությունները: Ժամանակաշրջանի վերջում սկսվեց մեծ կարևորություն տրվել քաղաքականությունների թափանցիկությանը, ինչը. սպասումների խարսխման միջոցով քաղաքականության ավելի կառավարելի և արդյունավետ ընթացք էր երաշխավորում: Միաժամանակ. մի շարք երկրներում բանկային վերահսկողության՝ կենտրոնական բանկերից տարանջատվելու հետ զուգահեռ ակտիվորեն փորձարկվում էր ֆինանսական կայունության քաղաքականության նոր՝ մակրոպրոդեյնցիալ գործիքակազմը: Թեև դեռևս ավարտուն տեսք չունեցող այս գործիքակազմը մի շարք ցուցանիշներով ուղղակիորեն առնչվում էր դրամավարկային քաղաքականությանը, տեսաբանները դեռ լիովին համակարծիք չեն դրանց միջև փոխազդեցությունների ուղղությունների և բնույթի մասին:

«Մեծ հանդարտության» տարիներին՝ տնտեսության համեմատաբար հավասարակշռված իրավիճակում հարկաբյուջետային քաղաքականության դերը ծախսերի օպտիմալացումն էր, ինչն աստիճանաբար հանգեցնում էր տնտեսության կառուցվածքային փոփոխությունների, մրցունակության աճի: Իր հերթին դրամավարկային քաղաքականությունը զարգացած երկրների մեծամասնությունում, ըստ էության, գների կայունության նպատակ էր հետապնդում: «Մեծ հանդարտության» բարենպաստ տնտեսական զարգացումներին և մակրոտնտեսագիտության մեջ «ժամանակային անհամապատասխանության» (time inconsistency) տեսության մշակմանը զուգահեռ շատ երկրներում գների կայունության նպատակն օրենքով ամրագրվեց որպես դրամավարկային քաղաքականության նպատակների մեջ առաջնային, թեև կային և մինչ օրս էլ կան կենտրոնական բանկեր, որոնք, ըստ էության, գերակայություն տալով գների կայունությանը, նման ձևակերպումներից խուսափում են: Օրինակ՝ թեև «ԱՄՆ դաշնային պահուստային համակարգի մասին» օրենքով որպես նպատակ սահմանված է «դրամա-

վարկային ագրեգատների «երկարաժամկետ աճի պահպանում՝ արտադրության աճ ապահովող տնտեսության «երկարաժամկետ ներուժին համաչափ, որն արդյունավետորեն կնպաստի առավելագույն զբաղվածության, կայուն գների և չափավոր «երկարաժամկետ տոկոսադրույքների նպատակներին»<sup>1</sup>, գործնականում «մեծ հանդարտության» տարիներին այն գրեթե միշտ առավել կարևորում էր գների կայունությունը:

Ֆինանսական կայունության պարագայում զարգացումներն այդքան հստակ չէին: Ֆինանսական քաղաքականության դերը ֆինանսական համակարգը ռիսկերից, ցնցումներից, տատանողականությունից զերծ պահելն է: Եվ եթե առաջին երկու նպատակների համար կար քիչ թե շատ համակարծրություն չափանիշների վերաբերյալ՝ դա զնաճն էր (չափված սպառողական գների ցուցիչի հավելաճով) և տնտեսական աճը (չափված ՀՆԱ իրական աճով), ապա ֆինանսական կայունության չափանիշի վերաբերյալ այն բացակայում էր: Սովորաբար վերլուծվում էր մի քանի ենթացուցիչներից կազմված ցուցիչ, որը շատ հաճախ դիտարկվում էր ոչ թե քանակական, այլ որակական տեսանկյունից: Թեև համակարծրության մասին անգամ այժմ խոսելը դեռևս վաղ է, վերջին տարիների զարգացումները բերեցին նրան, որ այս նպատակն այժմ այնքան է կարևորվում, որքան կենտրոնական բանկերի ստեղծման առաջին տարիներին<sup>2</sup> և դրամավարկային (գների) կայունության հետ մեկտեղ հանդիսանում է կենտրոնական բանկերի գերնպատակ՝ ելնելով այն հանգամանքից, որ դրամավարկային կայունությունն անհնար է առանց ֆինանսական կայունության, և հակառակը: Եթե մինչ ճգնաժամը քննարկվում էին այս երկու քաղաքականությունների հնարավոր հակասությունները<sup>3</sup> և առաջարկվում բանկային վերահսկողության դուրսբերումը կենտրոնական բանկերից, ապա այժմ այդ հակասականությունը չի քննարկվում, այլ ընդունվում է որպես երկու քաղաքականությունների համար էլ առկա սահմանափակում: Կարելի է ասել, որ այժմ ընդունվում է, որ ոչ միայն դրամավարկային քաղաքականության միջոցով տոկոսադրույքների ուղղորդումը հնարավոր չէ առանց արդյունավետ աշխատող փոխանցման մեխանիզմի, այլև իրացվելիության սուր ճգնաժամ ապրող ֆինանսական հատվածն անհնար է առողջացնել առանց դրամավարկային (վերջին ատյանի վարկատուի) ակտիվ միջամտությամբ:

Ֆինանսատնտեսական ճգնաժամն այս ակտիվ փոխգործունեությունն առավել քան ակնհայտ դարձրեց: Այդ տարիներին նշված դրամավարկային քաղաքականության առաջնահերթությունների փոփոխությունները պայմանավորվեցին առաջին հերթին ֆինանսական շուկայում իրացվելիության պակասով, դրանից բխող իրական հատվածի վրա ստանդարտ դրամավարկային քաղաքականության գնացող թուլացող ազդեցությամբ: Իրացվելիության ճգնաժամի միջավայրում լուծումները ևս, բնականաբար, նախագծվում էին դրամավարկային քաղա-

<sup>1</sup> Սահմանման համար տե՛ս **Public Law 95-188**, 95th Congress, H.R. 9710: Federal Reserve Reform Act of 1977. Մանրամասների համար տե՛ս **Rotemberg, Julio J.** 2013. "Shifts in US Federal Reserve Goals and Tactics for Monetary Policy: A Role for Penitence?". *Journal of Economic Perspectives*, 27(4): 65-86.

<sup>2</sup> Տե՛ս **Bernanke, Ben S.** 2013. "A Century of US Central Banking: Goals, Frameworks, Accountability". *Journal of Economic Perspectives*, 27(4): 3-16.

<sup>3</sup> Օրինակ՝ փաստարկվում էր, որ ֆինանսական համակարգում առկա խնդիրները կարող են խոչընդոտել կենտրոնական բանկի դրամավարկային պայմանների խստացման քաղաքականությանը:

քականության միջոցով: Գրեթե բոլոր երկրների կենտրոնական բանկերը իրականացրին ոչ ավանդական (unconventional) կամ ոչ ստանդարտ դրամավարկային քաղաքականություն, որը ներառում էր թե՛ քանակական ընդլայնում (փողի քանակի ավելացում՝ ի պատասխան տնտեսությունում արագ կրճատվող իրացվելիության), թե՛ դրան աջակցող վարկային ընդլայնում (իրացվելիության ավելացման համար կենտրոնական բանկի կողմից և դրա միջոցով բոլոր այլ ֆինանսական հաստատությունների կողմից ևս վարկավորման պայմանների դյուրացում), ինչպես նաև բազմաթիվ այլ, այդ թվում՝ ուղղակի վարկավորման գործիքներ, միջամտություն արտարժութային շուկայում: Տեղի ունեցավ դրամավարկային քաղաքականության թե՛ մեխանիզմների, թե՛ նպատակների փոփոխություն<sup>1</sup>: Սակայն ամենաէականն այն էր, որ շատ կենտրոնական բանկեր ժամանակավորապես «անտեսեցին» գլխավոր նպատակի իրագործումը՝ հանուն ֆինանսական կայունության: Սա վերոնշյալ այն իրավիճակն էր, երբ ֆինանսական կայունության և դրամավարկային քաղաքականությունների միջև առկա էր հակասություն. ֆինանսական կայունությունը պահանջում էր փողի ավելի մեծ առաջարկ, քան կենտրոնական բանկերի գործող մոդելները կանխատեսում էին կայուն զնաճային միջավայրի ապահովման համար: Թվում էր, թե արդյունքը կլինի զների մակարդակի աճը, սակայն տնտեսական ակտիվության նվազման պայմաններում այն տեղի չունեցավ: Թե՛ նման երկրներանքի դրվածքը, թե՛ դրա հետագա զարգացումը յուրահատուկ էին բոլոր զարգացած երկրների համար: Նաև նրանց արձագանքները ճգնաժամին թեև նման էին, բայց ամենևին էլ նույնը չէին:


Զնայած քանակական ընդլայնման ընդհանուր սկզբունքներին՝ աշխարհի խոշոր կենտրոնական բանկերի՝ ԱՄՆ դաշնային պահուստային համակարգի, Եվրոպական կենտրոնական բանկի (ԵԿԲ) և Անգլիայի բանկի արձագանքները եղան տարբեր՝ տնտեսության և փոխանցման մեխանիզմների կառուցվածքային տարբերությունների պատճառով: Նշված կառույցները ճգնաժամին արձագանքեցին տարբեր ժամանակներում և միտված էին լուծելու թեև համանման, սակայն տարբեր խնդիրներ. ԱՄՆ ԴՊՅ-ն և Անգլիայի բանկը՝ 2007-08 թթ., ԵԿԲ-ն՝ 2009-11 թթ.: Առաջին երկուսը հիմնականում փորձում էին լուծել վատորակ հիպոթեքային վարկերի բանկային ճգնաժամը, երրորդը՝ առավելապես սուվերեն պարտքի բանկային ճգնաժամը (երբ բանկերի ակտիվներում մեծ տեսակարար կշիռ են կազմում նախկինում բարձր եկամտաբերություն ունեցող, այժմ մարման խնդիր ունեցող պետական պարտատոմսերը), թեև Եվրոպական բանկերը ևս խնդիրներ ունեին ամերիկյան վատորակ հիպոթեքային վարկերի հետ:

Ստորև բերված գծապատկերում ներկայացված են ֆինանսատնտեսական ճգնաժամի ժամանակ աշխարհի խոշոր կենտրոնական բանկերի կողմից քաղաքականության տոկոսադրույթի միջոցով արձագանքը, ինչպես նաև աշխարհի խոշոր տնտեսությունների կառավարությունների արձագանքը, որն արտացոլվել է բյուջեի պակասուրդ/ՅՆԱ ցուցանիշում:

<sup>1</sup> Անընդհատ փորձարկվող նոր հակաճգնաժամային միջոցառումների հորձանուտում այս փոփոխությունները հաճախ դե-յուրե ձևակերպված չէին կամ մեկնաբանվում էին եղած մանդատների շատ լայն ընդգրկումով, ինչն իր հերթին քննարկման այլ թեմա դարձավ. որքանով են անկախ և միաժամանակ հաշվետու կենտրոնական բանկերը:

Գծագիր 1

Աղբյուրը՝ Bank of International Settlements. BIS 79<sup>th</sup> Annual Report, 29 June 2009, p. 91.



Աշխարհի խոշոր կենտրոնական բանկերի արձագանքը տարբեր էր նաև առաջնային նպատակների պատճառով: ԵԿԲ-ն հետամուտ եղավ առաջնային նպատակի իրագործմանը՝ գների կայունության ապահովմանը հակաճգնաժամային քաղաքականության ամբողջ ժամանակահատվածում (մասամբ պայմանավորված Եվրոգոտում միասնական հարկաբյուջետային քաղաքականության անհնարինությանը): ԴԴԳ-ն և Աճգլիայի բանկը, որոնք ունեն մեկից ավելի առաջնային նպատակ (սակայն այդ նպատակներում առկա է էական տարբերություն),

եթե այլ հավասար պայմաններում գերակայությունը տալիս էին դրամավարկային կայունությանը, ապա առաջ եկած խնդիրները ժամանակավորապես հետ մղեցին դրամավարկային կայունությունը. հոգուտ ֆինանսական կայունության՝ Մեծ Բրիտանիայում, հոգուտ զբաղվածության և տնտեսական ակտիվության ավելացման՝ ԱՄՆ-ում<sup>1</sup>: Այդ գործընթացին նպաստեց այն, որ թեև իրականացվում էր քանակական ընդլայնում, սակայն գնաճային ճնշումները չէին ավելանում: Պատճառն այն էր, որ բավականաչափ ժամանակ քանակական ընդլայնումը արդյունավետ չէր. տնտեսությունը մղված գումարները չէին հասնում իրական հատված, այլ առևտրային բանկերը վարկավորման փոխարեն դրանք թողնում էին կենտրոնական բանկերի իրենց թղթակցային հաշիվներում: Արդյունքում քանակական ընդլայնումը կրեց ոչ թե պահային (ինչպես կարծում էին սկզբում), այլ առավել շարունակական բնույթ: Նշված պայմաններում ԴՊՀ-ն և Անգլիայի բանկը նվազեցրել են քաղաքականության տոկոսադրույքը մինչև 0-ի<sup>2</sup>: զուգահեռ քննարկելով «իրացվելիության ծուղակի» մեջ հայտնվելու խնդիրները, իսկ ԵԿԲ-ն, չնայած տնտեսական ակտիվության նվազմանը և ցածր գնաճին դժվարությամբ էր գնում տոկոսադրույքի նվազեցմանը:

Հակաճգնաժամային կամ ոչ ստանդարտ դրամավարկային քաղաքականության արդյունքները դեռևս գնահատման փուլում են: Ըստ էության, իրականացված քաղաքականությունները հիմնականում երաշխավորել են փափուկ վայրէջք՝ թույլ չեն տվել, որ ռեցեսիան վերածվի դեպրեսիայի: Եվ ակնհայտորեն անհնար էր այդ իրավիճակում հաղթահարել ճգնաժամի բացասական հետևանքները՝ առանց ֆինանսական կայունության անհրաժեշտությունը շեշտադրելու: Ընդ որում՝ տեսաբանները միակարծիք չեն, թե արդյոք դրամավարկային քաղաքականությունը կարող էր հասնել ավելիին: Այստեղ ևս բանավեճի առանցքը կենտրոնական բանկերի կողմից դրամավարկային<sup>3</sup>, թե՞ ֆինանսական կայունության ապահովման խնդրին էրբ և ինչ տևողությամբ գերակայություն տալու մեջ է: Այս հարցը ճգնաժամի ժամանակահատվածում արդիական էր նաև ՀՀ-ում: Սակայն մինչ այդ ավելի խնդրահարույց էին իրական հատվածում զարգացումները:

ՀՀ տնտեսությունը համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը ներթափանցեց 2008-ի վերջում և սկզբնական փուլում շրջանցելով ֆինանսական հատվածը՝ անմիջապես ազդեց տնտեսության իրական հատվածի վրա: Սկզբնական փուլում այդ շրջանցումը պայմանավորված էր ֆինանսական շուկայի փոքրությամբ, ՀՀ բանկային համակարգի կողմից ինչպես արտաքին աշխարհի, այնպես էլ ՀՀ տնտեսության խոցելի ճյուղերում տեղաբաշխված ակտիվների ցածր մակարդակով, սակայն ավելի ուշ արդեն իսկ իրական հատվածից եկող ազդեցությունը ֆինանսական հատվածի վրա անխուսափելի էր:

<sup>1</sup> Իհարկե, ԱՄՆ-ում ևս ծախսեր կատարվեցին ֆինանսական կայունության համար, սակայն դրանք ընդհանուր քանակական ընդլայնման մեջ վճռորոշ չէին, իսկ քանակական ընդլայնման վերջին երկու տրանշներն արդեն հստակ զբաղվածության թիրախներ ունեին:

<sup>2</sup> Տոկոսադրույքի մինչև 0 իջեցումը բերեց ակտիվ տեսական և գործնական քննարկումների՝ դրամավարկային քաղաքականությունը նոր պայմաններում իրականացնելու համար: Տե՛ս, օրինակ, **Michael Woodford**, "Methods of Policy Accommodation at the Interest-Rate Lower Bound", presented at the Jackson Hole symposium, August 2012, available at URL: <http://www.columbia.edu/~mw2230/JHole2012final.pdf>

ՀՀ իրական հատվածի վրա ճգնաժամի ազդեցությունը մի քանի ուղղությամբ էր: Մի կողմից մեծամասամբ Ռուսաստանից ՀՀ ներհոսող գործոնային եկամուտները (տրանսֆերտները) կրճատվեցին՝ նվազեցնելով թե՛ սպառումը, թե՛ ներդրումները, հատկապես ազդելով մինչ այդ արագորեն աճող և ՀՆԱ-ում մեծ տեսակարար կշիռ ստացող շինարարության ճյուղի վրա: Տնտեսության ցածր տարազանման պայմաններում ներհոսքի կրճատումը հանգեցրեց տնտեսական զգալի անկման: Մյուս կողմից՝ համաշխարհային պահանջարկի անկումը հանգեցրեց ՀՀ-ից արտահանման տեմպերի կրճատմանը: Այս ամենն իր ազդեցությունն ունեցավ ֆինանսական հատվածի վրա՝ դրամի փոխարժեքի վրա առաջացող ճնշումներով:

Այս պայմաններում ՀՀ-ում ոչ ստանդարտ դրամավարկային քաղաքականությունը (քաղաքականության տոկոսադրույքի 2.5 տոկոսային կետով իջեցում, աննախադեպ ակտիվություն պարտատոմսերի երկրորդային շուկայում և այլն) զուգորդվեց տնտեսության տարազանման կառուցվածքային առաջնահերթությանը ֆինանսական հատվածի ակտիվ մասնակցությամբ: Կառավարության կողմից դրսից ներգրավված միջոցները, ի տարբերություն զարգացած երկրների, հնարավոր եղավ բավականաչափ արագ ուղղորդել տնտեսություն՝ հիմնականում համակարգաստեղծ, փոքր և միջին, ինչպես նաև արտահանման ուղղվածություն ունեցող ձեռնարկություններին, հատկապես դրամական վարկավորման էական ավելացմամբ: Այս մեխանիզմն աշխատեց, քանի որ 2008 թ. վերջում և 2009 թ. սկզբում ֆինանսական կայունությանը սպառնացող ռիսկերը (հատկապես հայտնի «արտարժութային հանկարծակի արգելակման» վտանգը<sup>1</sup>) չեզոքացվեցին մի շարք՝ ակնհայտորեն ֆինանսական կայունությունը դրամավարկային քաղաքականությանը գերադասող միջոցառումների շնորհիվ:<sup>2</sup>

Սակայն, եթե վերը նշված երկրներում դրամավարկային ընդլայնման ընթացքում գնաճային ռիսկեր գրեթե չառաջացան, Հայաստանում դրանք առկա էին և ուժգնանում էին՝ կապված և՛ արտաքին (միջազգային շուկայում գների աճ), և՛ ներքին (ընդլայնողական դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականություններ, բնակլիմայական անբարենպաստ պայմաններ) գործոնների հետ, և իրենց գազաթնակետին հասան 2010 թվականին: Այստեղ քիչ չէր նաև այդ գործոնների պատճառով ձևավորված սպասումների և երկրորդային ազդեցությունների դերը: Հետևաբար, ի տարբերություն զարգացած երկրների, չէր կարող անտեսվել դրամավարկային կայունության կարևորությունը: Իհարկե ֆինանսական կայունության ոչ առաջնահերթ դառնալու փաստին նպաստում էր նաև այն, որ ֆինանսական համակարգը չուներ այն խնդիրները և խոցելիությունը, ինչ որ վերը քննարկված տնտեսություններում:


<sup>1</sup> Տե՛ս **Calvo, Guillermo A.** (1998). "Capital Flows and Capital-Market Crises: The Simple Economics of Sudden Stops". *Journal of Applied Economics* 1 (1): 35-54.

<sup>2</sup> Օրինակ՝ բանկերի կապիտալացումը խրախուսող երկարաժամկետ ստորադաս պարտավորությունների ձևավորման ֆինանսավորումը կենտրոնական բանկի կողմից, մինչև փոխարժեքի անխուսափելի արժեզրկումը ՀՀ արտաքին պահուստներից շուրջ 700 մլն ԱՄՆ դոլարի վաճառքի գնով բանկային պարտավորությունների կառավարելի դոլարիզացիան մինչև համակարգի համար ոչ ռիսկային մակարդակ: Վերջինս հաճախ շահարկվում է քաղաքականության արդյունավետությունը գնահատողների կողմից, սակայն նրանց կողմից չի դիտարկվում այդ միջոցները չժախսելու պարագայում հավանական այլընտրանքային զարգացումները (օրինակ՝ բանկային համակարգի ավանդների գանգվածային արտահոսքը):

Հաջորդ տարիներին ՀՀ մակրոտնտեսական քաղաքականությունը բնութագրվեց ելքի ռազմավարության (exit strategy) սցենարով, որը ենթադրում էր հրաժարում ոչ ստանդարտ միջոցներից դրամավարկային քաղաքականության տեսանկյունից, և դեֆիցիտ/ՀՆԱ ցուցանիշի կրճատում՝ հարկաբյուջետային քաղաքականության տեսանկյունից: ԿԲ-ը շարունակաբար բարձրացրեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 5%-ից հասցնելով 8%-ի (2012), որը գնահատվում էր գնաճային միջավայրի վրա ազդեցության տեսանկյունից չեզոք:

Գծագիր 2

ՀՀ կենտրոնական բանկի քաղաքականության տոկոսադրույքը




Աղբյուրը՝ <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>

Իր հերթին Կառավարությունը ՀՆԱ-ում բյուջեի պակասուրդը 2009 թվականի 7,7%-ից աստիճանական նվազեցրեց 1,5%-ի (2012)՝ պարտքի կայունության ապահովման նպատակով: Ֆինանսական համակարգը ռիսկերից զերծ պահելու նպատակով կիրառվել են և դեռ շարունակվում են կիրառվել դրամի կայունությունն ամրապնդող մակրոպրոդեմսիալ միջոցառումներ, ինչպես նաև հետևողականորեն կենսազործվում են բանկային վերահսկողության Բազելյան կոմիտեի անընդհատ զարգացող սկզբունքները:

Գծագիր 3

Բյուջեի պակասուրդը/ՀՆԱ ցուցանիշը ՀՀ-ում



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն:

Կենտրոնական բանկերի նպատակների առաջնայնության խնդիրը շարունակաբար քննարկվում է ինչպես տեսական այնպես էլ գործնական մակարդակով: Տեսաբաններն առաջարկում են կենտրոնական բանկերի կողմից նույնիսկ անվանական ՀՆԱ-ի նպատակադրում, ինչը ենթադրում է, որ կարևորը կայուն եկամտի ապահովումն է. եթե կայուն է հասարակության եկամուտը, ապա կայուն կլինի նաև զնաճը<sup>1</sup>: Այս ռազմավարության ներդրման նպատակահարմարության մասին էին ճշում Անգլիայի բանկի և ՌԴ կենտրոնական բանկի ներկայիս նախագահները, սակայն մինչև այդ կարգավիճակում հայտնվելը: Սակայն ԿԲ-ի ղեկավարումը ստանձնելուց հետո երկուսն էլ հավատարիմ մնացին այն ռազմավարություններին, որոնք կիրառվում էին մինչ իրենց ճշանակումը: Ավելին, ՌԴ - կենտրոնական բանկը նախատեսում է 2015 թվականից անցնել զնաճի նպատակադրման ռազմավարության, որը 2006 թվականից կիրառում է ՀՀ կենտրոնական բանկը:

Իսկ եթե քննարկենք կենտրոնական բանկերի նպատակներից դրամավարկային<sup>2</sup>, թե՞ ֆինանսական կայունության առաջնայնության խնդիրն այսօր, ապա ՀՀ-ի պարագայում այժմ զների կայունությունն առավել կարևոր է. տնտեսությունն ավելի խոցելի է՝ պայմանավորված առաջացող գնային շոկերի հաճախականությամբ և դրանցից բխող երկրորդային ազդեցություններով և սպասումներով: Սակայն նույն դրամավարկային քաղաքականության իրականացման համար չափազանց կարևոր է ֆինանսական համակարգի բնականոն գործունեությունը, քանի որ դրամավարկային քաղաքականությունը զների նպատակը իրագործելիս կարգավորում է համախառն պահանջարկը, և այդ գործընթացը միջնորդավորված է ֆինանսական համակարգով: Միաժամանակ երբեք պետք չէ մոռանալ, որ զների անկայունությունը ֆինանսական անկայունություն առաջացնող հիմնական գործոններից է,<sup>2</sup> և այս երկու նպատակները մշտապես գտնվելու են բանավեճերի առանցքում:

## ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում ներկայացվում են դրամավարկային քաղաքականության առաջնահերթությունները համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից առաջ և դրա ընթացքում: Համեմատելով աշխարհի խոշոր կենտրոնական բանկերի և ՀՀ կենտրոնական բանկի քաղաքականությունները՝ քննարկվում են տնտեսության տարբեր կառուցվածքի պայմաններում և տարբեր ժամանակահատվածներում ֆինանսական և դրամավարկային կայունության նպատակների զնաճան համադրումները:

<sup>1</sup> Համառոտ ներածության համար տե՛ս **McCallum, Bennett** (October 21, 2011). "Nominal GDP Targeting". Shadow Open Market Committee. Retrieved October 26, 2011. Available at URL: <http://shadowfed.org/wp-content/uploads/2011/10/McCallum-SOMCOct2011.pdf>

<sup>2</sup> Monetary and Financial stability: Is there a Trade-off? Speech by **Otmar Issing** in the ECB Conference on "Monetary stability, financial stability and business cycle", 2003, BIS.

**АННОТАЦИЯ****КАГРАМАНЯН А. – КРЕДИТНО-ДЕНЕЖНАЯ ИЛИ ФИНАНСОВАЯ СТАБИЛЬНОСТЬ?**

В статье представляются приоритеты монетарной политики до и в период мирового финансово-экономического кризиса. Сравнивая политики крупных мировых банков и Центрального банка РА, рассматриваются результаты разнообразных сопоставлений целей финансовой и монетарной стабильности, как в условиях различных экономических структур, так и в разные периоды.

**SUMMARY****GHANRAMANIAN H. – MONETARY OR FINANCIAL STABILITY?**

The article touches monetary policy priorities both before and during the global financial and economic crisis. Comparing monetary policies of world big central banks and the Central Bank of Armenia, various juxtapositions of monetary and fiscal stability goals are discussed under different economic structures and in different time periods.

**ԱՄԱԼՅԱ ՍԱՐԻՔԵԿՅԱՆ**

տնտեսագիտության թեկնածու

ԵՊՀ կառավարման և գործարարության ամբիոնի պրոֆեսոր  
էլ. փոստ՝ [samalja@yahoo.com](mailto:samalja@yahoo.com)**ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴԻ  
ՉԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ*****Հայաստանի հասարակական-տնտեսական կառավարման  
հիմնախնդիրները և ժամանակակից մոտեցումները***

Գլոբալ զարգացումների արդի ժամանակահատվածում տնտեսական համակարգերի առավել դինամիկ, ճկուն և բազմազանեցված նկարագիրն ուղեկցվում է մրցակցության ուժեղացմամբ և համաշխարհային շուկայում անընդհատ ծագող բազմաթիվ դժվարություններով (տնտեսության համակենտրոնացման բարձր մակարդակը՝ արդյունաբերական հսկաների տեսքով, կապիտալի և աշխատանքի միջազգային միգրացիայի արագացող տեմպերը, ֆինանսական լուրջ տեղաշարժերն ու անհավասարակշռությունները և այլն): Իրադրությունն ավելի է բարդանում հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական հարաբերություններում տեղ գտած արմատական տեղաշարժերի հետևանքով:

Ստեղծված իրավիճակում գրեթե բոլոր հետխորհրդային երկրների, այդ թվում՝ Հայաստանի կառավարման համակարգերը, ամբողջ անցումային ժամանակահատվածում ենթարկվելով լուրջ տեղաշարժերի, դեռևս գտնվում են փնտրտուքի մեջ:

Կառավարման ամուր համակարգի ձևավորման հրամայականի պայմաններում առաջնահերթ կարևորվում են հասարակական-տնտեսական զարգացման տարբեր շերտերում առաջացող խնդիրների բացահայտման և դրանց հաղթահարումն ապահովող միջոցառումների ճիշտ համադրման, ինչպես նաև այդ համատեքստում կառավարման համապատասխան ձևաչափերի, սկզբունքների ու մոտեցումների հստակեցման անհրաժեշտությունը:

***Հասարակական-տնտեսական հարաբերությունների արդի դրսևորումները և նոր  
մոտեցումները***

Հետանցումային շարունակական փոփոխությունների ներքո Հայաստանում առանձնապես լուրջ են *հասարակական-տնտեսական հարաբերություններում* տեղի ունեցող տեղաշարժերը և դրանցով պայմանավորված խնդիրները: Հասարակական-տնտեսական հարաբերությունների արդի զարգացումների պայմաններում, երբ վարչարարական մեթոդներն աստիճանաբար (թեկուզ՝ շատ դանդաղ) փոխարինվում են մտավոր մեթոդներով, առանձնահատուկ կարևորվում են հետևյալ խնդիրները.

- կառավարման բուրգի մակարդակային աստիճանների նվազեցում և բուրգի հարթեցում,

- կառավարողների և կառավարվողների միջև մտավոր զարգացվածության ու կրթվածության մակարդակների ճեղքվածքի նվազեցում՝ պայմանավորված գիտելիքի գործոնի կարևորմամբ և բարձրորակ կադրերի դերի մեծացմամբ,

- կառավարողների և կառավարվողների փոխազդեցությունների հակասական բնույթի հարթեցում և փոխհամաձայնության ու համագործակցության ակտիվացում,

- կառավարման գործընթացում կառավարվող սուբյեկտի հետ առողջ հետադարձ կապի ապահովում ոչ միայն հասարակական վերահսկման, այլև երկրի զարգացմանն ուղղված գործընթացները ճիշտ գնահատելու ու սատարելու անհրաժեշտության տեսանկյունից,

- մի խոսքով՝ հայ մարդու, հայ հասարակության յուրաքանչյուր անդամի դերի կարևորում և երկրի կառավարման գործընթացներին նրա առավելագույն ներգրավվածության ապահովում:

Դիտարկված խնդիրներն իրենց հերթին ենթադրում են երկու՝ խիստ փոխկապակցված, համակարգային խնդիրների հաղթահարում.

- երկրում իրականացվող սոցիալ-տնտեսական քաղաքականության, կառավարողների կողմից կայացվող որոշումների թափանցիկության, ինչպես նաև դրանց մատչելիության ու հասանելիության մակարդակի բարձրացման ապահովում,

- հասարակության և անհատի կրթվածության ու տեղեկացվածության մակարդակի բարձրացում, և այդ ճանապարհով երկրի կառավարման գործընթացում հասարակության արդյունավետ ներգրավման ապահովում:

Ցավոք, այս տեսակետից հայ հասարակության դիրքը դեռևս շարունակում է մնալ թույլ: Չկա ստեղծված իրավիճակներին հասարակության կողմից արագ արձագանքելու բավարար կարողություն և ճկունություն: Ոչ կենսունակ և ինչ-որ տեղ նաև ինքնանպաստակ է պետության կողմից ցուցաբերվող կապը հասարակության հետ: Մի խոսքով՝ պետություն-հասարակություն կապը մեր երկրում շատ թույլ է և չի նպաստում արդի խնդիրների լուծմանը, հետևաբար՝ առաջընթացին: Մինչդեռ այսօր արդեն իսկ ակնհայտ է, որ միայն կայացած հասարակությունն է ունակ իր համապատասխան ինստիտուտներով դառնալ երկրի զարգացման շարժիչ ուժը: Այսպիսով կառավարման գործընթացներում հասարակության ներգրավվածությունը և հասարակական կարծիքի կարևորումն այսօր օբյեկտիվ պահանջ է թե՛ *հասարակական վերահսկման*, թե՛ երկրում տեղի ունեցող գործընթացների համար հասարակության պատասխանատվության բարձրացման տեսանկյունից: Հաշվի առնելով ասվածը՝ այսօր՝ առավել քան երբևէ, արդիական է դարձել պետություն-հասարակություն արդյունավետ փոխհամագործակցության խնդիրը և հասարակական-տնտեսական կառավարման համակարգում «*երկու աչքի*» սկզբունքի ներդրման ու *հետևողական կիրարկման հարցը*՝ որպես նշված խնդիրների հաղթահարման կարևոր գրավական: Սա նշանակում է, որ *անցումը հասարակական զարգացման որակական նոր մակարդակին ու նոր մարդու ձևավորումն անհրաժեշտ է դիտարկել որպես հասարակական-տնտեսական կառավարման կարևոր գերակայություն*: Միայն նման մոտեցման դեպքում պետություն-հասարակություն և պետություն-տնտեսություն փոխհամագործակցությունը

կարող է դառնալ լուրջ նախադրյալ՝ զարգացման առավել արդյունավետ հետազոծի անցնելու և ամենաարդյունավետ ուղիով այդ նպատակին հասնելու համար: Այստեղ առանձնահատուկ կարևորվում է պետության դերը:

### ***Կառավարման նոր ձևաչափը. պետության դերն այդ համատեքստում***

Հասարակական-տնտեսական զարգացման պատմական փորձը վկայում է տնտեսության, հասարակության ու պետության սերտ փոխկապվածության մասին: Այն տարբեր ժամանակահատվածներում ունենալով տարբեր դրսևորումներ՝ պայմանավորել է երկրի կառավարման գործում պետական միջամտության բնույթն ու բովանդակությունը: Այս տեսակետից բավական հետաքրքիր է հայաստանյան հետանցումային փորձը: Շուկային անցման սկզբնական փուլում այնպիսի համոզմունք էր իշխում, որ շուկան ինքն իրենով ընդունակ է լուծելու հասարակության առջև ծառայած սոցիալ-տնտեսական խնդիրները: Ազգային տնտեսության արդյունավետության բարձրացման հիմնական ուղին տնտեսական կյանքում պետության դերի արագընթաց նվազումն է, որը, իհարկե, իրական կյանքում չհիմնավորվեց: Ճիշտ հակառակ մոտեցումն է դրսևորվել հետձգնաժամային արդի զարգացումների ներքո. պետության դերն այսօր ավելի քան ակտիվ է, իսկ տնտեսության, հատկապես ձեռնարկատիրական գործունեության պետական աջակցությունը դիտարկվում է որպես պետության կարևորագույն գործառույթ: Ավելին՝ լայն հնչեղություն է ստացել պետության և մասնավոր հատվածի համագործակցության գաղափարը (հանրային-մասնավոր համագործակցություն-ՅՄՀ)՝ որպես պետության և մասնավոր հատվածի ինստիտուցիոնալ և կազմակերպական որոշակի միավորում, որի նպատակն է իրականացնել հանրային կարևոր նշանակություն ունեցող նախագծեր՝ տնտեսության կարևորագույն ճյուղերի զարգացումից մինչև հանրային ծառայությունների մատուցում: ՅՄՀ տարատեսակ ձևերի հախուռն զարգացումն ամբողջ աշխարհում, դրանց լայն տարածումը տնտեսության ամենատարբեր հատվածներում թույլ է տալիս պետության և ձեռներեցության համագործակցությունը դիտարկել որպես ժամանակակից խառը տնտեսության ուրույն դրսևորում:

ՅՄՀ-ի արդիականությունը Հայաստանում պայմանավորված է երկու կարևոր հանգամանքով.

- անհրաժեշտ է զարգացնել ենթակառուցվածքները՝ տնտեսական աճ ապահովելու և աղքատությունը կրճատելու համար,

- պետական բյուջեն ի վիճակի չէ իր վրա վերցնելու բոլոր ծախսերը:

Հայաստանում առկա է ՅՄՀ տարատեսակ ձևերի կիրառման և զարգացման մեծ ներուժ: Այստեղ կարևորը *պետության և ձեռներեցության միջև համագործակցության ճիշտ ընկալումն է*: արդյունավետ համագործակցությունն իրատեսական է միայն երկրի հետագա ռազմավարական զարգացման հստակության և կանխատեսելիության պարագայում: Այս տեսակետից կարևոր է *ճիշտ սահմանել պետության դերը՝ ոչ միայն որպես գլխավոր կարգավորողի, այլև որպես հանրային շահերի և կարիքների ներկայացուցչի և պաշտպանի*: Ընդ որում՝ պետական քաղաքականությունն արդյունավետ է լինում այն դեպքում, երբ համընկնում են պետության և ձեռներեցության նպատակներն ու հետաքրքրությունները: Այստե-

դից էլ հենց բխում է ձեռներեցության խթանմանն ու զարգացմանն ուղղված պետության ռազմավարությունն ու մարտավարությունը: Բազմաշերտ հարաբերությունների այս համալիրում առանձնապես կարևորվում են *պետություն-հասարակություն արդյունավետ փոխհարաբերությունները*: Բավարար կրթված և իրազեկված հասարակությունը, ըստ էության, հասկանալով իր դերը հասարակական, քաղաքական և տնտեսական հարաբերություններում, կկարողանա ճիշտ ըմբռնել կառավարչական որոշումների կայացման հիմքում ընկած տրամաբանությունը: Սա առանձնապես կարևոր է տնտեսական քաղաքականության և պետական կարգավորման իրականացման տեսակետից, քանի որ *ընկալված ու վստահելի իշխանություններն ավելի հեշտ ու նպատակային են իրագործում տնտեսական քաղաքականության ապահովման իրենց խնդիրները*:

Ընդհանրացնելով կարելի է ներկայացնել երկրի *կառավարման ձևաչափը* հասարակական-տնտեսական բազմաշերտ հարաբերությունների ամբողջական տրամաբանության ներքո, մասնավորապես.

- հասարակական-տնտեսական կառավարման համակարգում պետության դերի մեծացում,

- հանրային-մասնավոր համագործակցության՝ ՀՄՀ զարգացումը՝ որպես ժամանակակից խառը տնտեսության ուրույն դրսևորում:

Կառավարման արդյունավետության ապահովման տեսակետից առանձնացվել են հետևյալ հենքային մոտեցումները.

- տնտեսության մեջ կառավարող և կառավարվող սուբյեկտների իրավասությունների և պատասխանատվության հստակեցում,

- պետական կառավարման գործընթացներում հասարակության առավելագույն ներգրավում և հասարակության յուրաքանչյուր անդամի դերի մեծացում, ինչն էլ իր հերթին նշանակում է պետական քաղաքականության մատչելիության ու հասանելիության ապահովում, ինչպես նաև պետության ու հասարակության փոխվստահություն և փոխհամագործակցություն:

Ամփոփելով կարելի է փաստել, որ մի կողմից տնտեսության ձևն անմիջականորեն ածանցյալ է հասարակության ձևից, և այս իմաստով տնտեսության ձևափոխությունը սերտորեն առնչվում է հասարակության ձևափոխմանը, մյուս կողմից՝ տնտեսության վիճակն անմիջականորեն պայմանավորում է հասարակության վիճակը: Իսկ այս ամենն էլ իրենց հերթին պայմանավորում են հասարակական-տնտեսական կառավարման բովանդակությունը:

### ***Մշակույթը՝ որպես հասարակական-տնտեսական կառավարման հենք***

Ներկայումս տեղի ունեցող խորը հասարակական-տնտեսական վերափոխումները կարելի է սահմանել որպես նոր տիպի՝ հոգևոր հասարակության ձևավորման փուլ<sup>1</sup>, քանի որ այսօր ոչ նյութական, մասնավորապես մշակութային ու բարոյահոգեբանական գործոնները սկսել են ավելի որոշիչ ազդեցություն ունենալ հասարակական կեցության և նրա բոլոր (տնտեսական, սոցիալական, էկոլո-

<sup>1</sup> Տե՛ս **Սարիբեկյան Ա.**, Ֆինանսատնտեսական ճգնաժամը. հաղթահարման ուղիները և հետ-ճգնաժամային զարգացումները, Երևան, 2010, էջ 277-281:

գիական, ժողովրդագրական) ձևափոխումների (մոդիֆիկացիաների) վրա: Այսինքն՝ քաղաքակրթության զարգացման ներկա փուլին բնորոշ է ծանրության կենտրոնի տեղափոխում տնտեսական գործոններից դեպի ոչ տնտեսական, ոչ նյութական գործոնները: Իհարկե, այստեղ չի կարելի անտեսել այն փաստը, որ՝

- տեղեկատվությունը վերածվել է հասարակական-տնտեսական զարգացման լրջագույն ռեսուրսի,

- երկրներից շատերն արագորեն փոխում են իրենց սոցիալական նկարագիրը. առավել դինամիկ և արդյունավետ է դառնում տնտեսությունը, որոշակիորեն բարձրանում է բնակչության կյանքի որակը:

Այս պայմաններում բացվում են ռեսուրսներով ապահովելու նոր հնարավորություններ՝ կապված կառավարման գործընթացում սիներգետիկ էֆեկտների ուրուումների հետ: Նրանք ունեն տեղեկատվական բնույթ և լրացնում են անհասանելի նյութական ռեսուրսները: Նման մոտեցումը կառավարման գործընթացում արդիականացնում է ռեսուրսային ապահովման խնդիրը՝ նրանց մեջ առաջնահերթ կարևորելով ոչ նյութական ակտիվները: Այստեղ հատուկ հետաքրքրություն է ներկայացնում մշակույթի ոլորտը, որը նեղ իմաստով ընկալվում է որպես կազմակերպչական մշակույթ, իսկ լայն իմաստով՝ որպես ազգային, էթնիկ և համայնքային մշակույթ:

Ժամանակակից քաղաքակրթության տեղեկատվայնացման գործընթացների լույսի ներքո հարկ է վերանայել ավանդական պատկերացումը մշակույթի՝ որպես սպառման, այսինքն՝ գործունեության բացառապես ծախսատար ոլորտի մասին: Հայաստանի զարգացման ներկա պայմաններում ավելի ու ավելի արդիական է դառնում հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական գործընթացներում մշակույթի դերի և տեղի հստակեցման հարցը: Արդիական է նաև սոցիալ-տնտեսական զարգացման ռեսուրսային ապահովվածության գործընթացում մշակութային բաղադրիչի ներդրման անընդհատ աճի հարցը<sup>1</sup>: Սա առանձնապես պայմանավորված է 20-րդ դարի վերջում «մրցունակություն» հասկացության փոփոխությունների հետ: Այսօր ազգային տնտեսությունների մրցունակությունը առաջին հերթին կախված է աշխատուժի որակից, ինչը սահմանվում է «մարդկային կապիտալ» հասկացությամբ: Այն բնութագրիչների մի համակարգ է, որը սահմանում է մարդու կողմից ստեղծագործական աշխատանք կատարելու ունակությունը՝ ապրանքներ, ծառայություններ, հավելյալ արժեք ստեղծելու նպատակով, այսինքն՝ անհատի, ընկերության, կորպորացիայի, երկրի ամբողջական աշխատուժի որակը, որը դրսևորվում է ընդլայնված արտադրական գործընթացում: Ընդհանուր առմամբ, մարդկային կապիտալի բաղկացուցիչների շարքում կարելի է նշել.

- *առողջական կապիտալը*. առողջության վիճակը և ֆիզիոլոգիական բնութագրիչները,

- *կրթական կապիտալը*. կրթության ընդհանուր և մասնագիտական մակարդակները,

- *սոցիալ-հոգեբանական կապիտալը*. մոտիվացիա և անհատի ու հասարակության հոգեբանական վիճակը,

<sup>1</sup> Տե՛ս նույնը, էջ 281-285:

• *մշակութային կապիտալը*. հասարակական արժեքային համակարգը և կոնկրետ մարդու հոգևոր և բարոյական արժեքները:

Ինչ վերաբերում է առաջին երկու բաղկացուցիչներին, ապա դրանք համարվում են մաշվող. առողջությունը վատանում է և պահանջում է ծախսեր պահպանման համար, իսկ գիտելիքները հնանում են ու պահանջում են անընդհատ լրացումներ: Վերջին երկու բաղկացուցիչներին բնորոշ է անսպառության բացառիկ հատկանիշը: Իսկապես, մոտիվացիան և արժեքների համակարգը, որոնց հենարանը մշակույթն է, ունեն դրականորեն կուտակվելու հատկություն այն դեպքում, երբ մշակույթը, նրա խորը շերտերը չեն ենթարկվում բռնի ոչնչացման: Ցավոք, մեր հասարակությունում տեղի ունեցող փոփոխությունները ապակառուցողական տարրեր մտցրին ազգային մշակույթի միջավայրում՝ նյութական և ֆիզիոլոգիական պահանջմունքների նախապատվություն, քաղաքացիական անտարբերություն և այլն: Ավելին՝ հասարակական-տնտեսական զարգացումների վերջին շրջանում աստիճանաբար ուժեղանում է ինքնության ճգնաժամը՝ որպես աշխարհաքաղաքական լուրջ աղետ: Ասվածը նշանակում է, որ քաղաքացիների շրջանում վերանում է որոշակի սոցիալական խմբի, ազգի, երկրի պատկանելու վստահությունը. չկա ներքին համոզվածություն, թե արդյոք իրենք իրավասու են զբաղեցնել տվյալ տեղը այս կամ այն սոցիալական հիերարխիայում: Եվ հակառակը՝ էլ ավելի է ուժեղանում մարդկանց ինքնանույնացումն իրենց ընտանիքի, ազգության, տարածաշրջանի կամ փոքր տարածքի հետ: Արդյունքում՝ քաղաքացիները ոչ միայն չեն կարող պատասխանել «ո՞վ ենք մենք» հարցին, այլ՝ «ո՞վ եմ ես» հարցին: Այս ամենը մեկ բան է նշանակում՝ քաղաքացիները փախչում են իրենց անբարյացակամ արտաքին աշխարհից դեպի իրենց առանձին աշխարհիկը: Այս տեսակետից *աջակցությունը մարդկանց ինքնության ծանաչման փնտրտուքներում պետք է դիտարկվի որպես ռազմավարական կառավարման գլխավոր խնդիրներից կարևորագույնը*: Նման մոտեցումը հասարակական-տնտեսական արձատական փոփոխությունների արդի պայմաններում առավելագույն չափով կնպաստի ազգային անվտանգության կարևոր խնդիրներից մեկի՝ մարդու և ազգի ինքնանույնացման խնդրի լուծմանը:

Այստեղից էլ բխում է ռազմավարական կառավարման ևս մեկ խնդիր՝ *երկրում մշակույթի ոլորտի զարգացման միջոցով կուտակել յուրաքանչյուր քաղաքացու հոգևոր հատկանիշներից ձևավորված բարոյականության այնպիսի «կրիտիկական զանգված», որն անխուսափելիորեն իր հետևից կբերի տնտեսական, սոցիալ-քաղաքական, ժողովրդագրական և այլ խնդիրների սրության մեղմացում*: Իհարկե խնդիրը հեշտ լուծվողներից չէ, այնուամենայնիվ այն իրագործելի է, ինչը առաջին հերթին ենթադրում է երկրի բնակչության հիմնական՝ աշխատելու, սովորելու, ինչպես նաև այլ ֆիզիոլոգիական պահանջմունքների բավարարումը: Ընդ որում՝ կարևոր է, որ քաղաքացիների նյութական ապահովվածության մեծացումն ու սոցիալ-տնտեսական զարգացումը չառանձնանա հոգևոր պահանջմունքների ձևավորման գործընթացից:

Այստեղ կարևոր է հաշվի առնել մի հանգամանք ևս՝ հասարակության զարգացման ներկա փուլում «մշակույթ» հասկացությունը ապրում է լուրջ վերափոխումներ: Մշակույթն այսօր ոչ միայն նյութական և հոգևոր արժեքների համակարգային համախմբություն է, այլև գործունեություն ծավալելու սոցիալապես մշակված ձև: Նման լայն ընկալմամբ՝ մշակույթը ներխուժում է ցանկացած կազ-

մակերպչական համակարգի մակրոմիջավայրի բոլոր ոլորտները և, բնականաբար, սոցիալ-տնտեսական զարգացման ցանկացած նախագծի մեջ՝ գրավելով տնտեսական, սոցիալական, տեխնոլոգիական, էկոլոգիական և ինստիտուցիոնալ հատվածները: Իսկապես, տնտեսության արդյունավետությունը էապես կախված է տնտեսական գործունեության մշակույթից, ինչը նշանակում է ժամանակակից կազմակերպչական ու կառավարչական մեթոդների և միջոցների կիրառում: Քաղաքական մշակույթը, օրինակ, անմիջականորեն ազդելով փոխհարաբերությունների ու փոխներգործության արդյունավետության վրա, կարող է նպաստել (եթե սլյալ մշակույթը գտնվում է բարձր մակարդակի վրա) երկրի կամ տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացումների արդյունավետության բարձրացմանը: Եվ հակառակը՝ նման քաղաքական մշակույթի բացակայությունը կարող է հանգեցնել տեղեկատվական գործընթացների խաթարման, փոխհարաբերությունների աղճատման և, որպես հետևանք, համակարգային ճգնաժամերի:

*Մշակույթի ոլորտի կառավարման ժամանակակից հայեցակարգը՝ որպես մշակութային հաստատությունների համակարգի գործունեության կառավարում, պետք է ներառի երկու սկզբունք՝ խորը ավանդույթների զգուշավոր պահպանում և հարստացում՝ գունարած կառավարման գործընթացին ցուցաբերվող ժամանակակից մոտեցումների գրագետ օգտագործում:* Սա նշանակում է ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող մի շարք խնդիրների իրագործում:

Մասնավորապես.

- մշակույթի և կրթության ու գիտության ոլորտների միջև համակարգային կապի հաստատում ստեղծագործական և մտավոր ներուժի ներդաշնակ զարգացման, ինչպես նաև յուրաքանչյուր քաղաքացու անհատական աճի ապահովման համար,

- ակտիվ տեղեկատվական քաղաքականության իրականացում երկրի, տարածաշրջանի և աշխարհի տեղեկատվական միջավայրի ձևավորման միջոցով. նման մոտեցումը հնարավորություն կընձեռնի պահպանելու և զարգացնելու մշակութային ավանդույթները՝ ըստ կարելիվույն զերծ պահելով մեր ինքնությունը արտածին վատ ազդեցություններից և նպաստելով ազգային ինքնության գործընթացի պահպանմանն ու զարգացմանը,

- մշակույթի ոլորտում բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացում գաղափարական, ինչպես նաև առարկայական (գրադարաններ, թանգարաններ, թատրոններ, մշակույթի տներ, ստեղծագործական միություններ և կոլեկտիվներ, կինոթատրոններ և այլն) հատվածի զարգացման երկարաժամկետ ծրագրերի իրագործման միջոցով,

- մշակույթի ոլորտի կազմակերպությունների և հաստատությունների եկամտաբերության աճի խթանում և մշակույթ-սպառող գործուն կապի ձևավորում,

- հարուստ մշակութային պահանջմունքներ բավարարող պայմանների ստեղծում. ներկայացումներ, ցուցահանդեսներ այցելելու սովորույթի ձևավորումը, կերպարվեստում, դիզայներական տարբեր ոլորտներում հայկական ավանդույթների օգտագործումը կարող են դառնալ լուրջ հենք՝ զանգվածային գիտակցության վրա ազդելու համար,

- շուկայական հնարքների գինանոցում արդյունավետ միջոց կարող է լինել ճարտարապետական, պատմական, առողջարարական-հոգևոր և այլ տիպի գրոսաշրջության զարգացումը, մշակութային օբյեկտների և մշակույթի ոլորտի

արտադրանքի խթանումը հայկական և համաշխարհային հանրությունում, մշակութային տարաբնույթ ծրագրերի իրականացումը երկրի ներսում և երկրից դուրս:

Այս ամենը պետք է կրի համակարգային բնույթ և լրացնի կառավարման միջոցների ժամանակակից համալիրը: Նման մոտեցումը պահանջում է.

- կառավարման վերաիմաստավորում և կառուցվածքային փոփոխություն. այստեղ առանձնապես կարևորվում է այն փաստը, որ մշակույթի նախարարությունն այս դեպքում պետք է դառնա բնակչության հետ տարվող տեղեկատվական աշխատանքի լուրջ հենք և ոչ թե «ուղղակի» բյուրոկրատական կառույց,

- մշակույթի ոլորտի կառավարման համակարգի՝ համապատասխան կադրերով ապահովում, ինչը նշանակում է կադրերի պատրաստման ու վերապատրաստման ժամանակակից համակարգի, մշակույթի ոլորտի համար կադրերի պլանաչափ զարգացման և ընտրության համապատասխան մոտեցումների ներդրում:

Առաջարկվող դրույթների հետևողականորեն կյանքի կոչումը ենթադրում է մշակութային ավանդույթների, մեր ժողովրդին բնորոշ հոգևոր արժեքային համակարգերի վերականգնման, պահպանման և զարգացման գործընթացների կազմակերպում նորարարական սոցիալական տեխնոլոգիաների և ծրագրերի միջոցով: Դրանք կմեծացնեն հայ հասարակության սոցիալ-հոգեբանական ներուժը, քանի որ պահպանված և զարգացում ապրող մշակույթի տարրերի, ինչպես նաև հայրենասիրական դաստիարակության միջոցով հնարավոր կլինի ապահովել ամուր հոգեբանական հենք այս գործընթացում ներգրավված յուրաքանչյուր անհատի մոտ: Նորարարական սոցիալական ծրագրերի իրագործմամբ հնարավոր կլինի արդյունավետ համալրել մարդկային կապիտալի կարևոր բաղկացուցիչ հանդիսացող սիներգետիկ տեղեկատվական ռեսուրսը՝ հիմնված պահպանվող և զարգացող մշակույթի վրա: Այս տեսակետից մշակույթը գրեթե անսպառ ռեսուրս է, որը վաստակել են մեր նախնիների բոլոր սերունդները: Ուղղակի պահանջվում է միայն մի բան՝ գրագետ գործածություն և ավանդաբար համալրում՝ ելնելով ողջ բնակչության հետաքրքրություններից: Այստեղ լուրջ անելիքներ ունեն ինչպես պետական, այնպես էլ հասարակական կառավարման համակարգերը:

### ***ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՍՍԱՐԳԻ ՍՈՂԵԼԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱԴԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ***

Հայաստանն ամբողջ հետանցումային շրջանում գտնվել է հասարակական-տնտեսական կառավարման արդյունավետ համակարգի փնտրտուքի մեջ: Եվ ինչպես ամբողջ հետխորհրդային երկրներում, այնպես էլ Հայաստանում դեռևս չի ձևավորվել կառավարման հարաբերականորեն ամուր համակարգ: Փորձենք կատարել փոքրիկ վերլուծություն:

### **Հասարակական-տնտեսական կառավարման գործող մոդելները և դրանց հայեցակարգային առանձնահատկությունները**

Հասարակական-տնտեսական կառավարման էությունն ու առանձնահատկությունները առաջին հերթին պայմանավորված են այն *կառուցվածքային հենքով*, որով իրականացվում են պետական քաղաքականությունն ու սոցիալ-տնտեսական ծրագրերը, ինչպես նաև այն *չափորոշիչներով ու մոտեցումներով*, որոնցով ուղղորդվում են այդ գործընթացների կառավարման ժամանակ: Ելնելով ասվածից՝ անհրաժեշտ է նախ և առաջ առանձնացնել հասարակական-տնտեսական կառավարման միջազգայնորեն փորձարկված հիմնական տեսակները՝ օժտված հայեցակարգային հստակ առանձնահատկություններով.

– *սոցիոտնտեսական*. Ենթադրում է, որ պետության հզորությունը գտնվում է ուղղակի կախվածության մեջ տնտեսական աճից ու սոցիալական արդիականացումից (*հայաստանյան կառավարման տրամաբանությունն ինչ-որ տեղ զուգահեռվում է այս մոտեցմանը*),

– *մշակութա-արժեքային*. հիմնված է *ազգային մշակութային ու արժեհամակարգային առանձնահատկությունների վրա* (լայնորեն կիրառվում է Եվրոպայի մայրցամաքային պետություններում և ճապոնիայում),

– *կուսակցական-կառավարչական*. Ենթադրում է կառավարության գործունեության վրա կուսակցական վերահսկողություն՝ որպես պետական կառավարման գործիք (արմատավորված է ԱՄՆ-ում ու Մեծ Բրիտանիայում) (*հայաստանյան հասարակական-քաղաքական ու սոցիալ-տնտեսական իրողության մեջ նույնպես այս գործիքն ունի հստակ ազդեցություն*),

– «*նեոկորպորատիվ*». Ենթադրում է կենտրոնացում մասնավորի շահերի և պետության հետ դրանց փոխկապակցվածության ներկայացման վրա փոխհամագործակցությունների ու պայմանավորվածությունների, պետական և մասնավոր ոլորտների շահերի համաձայնեցման միջոցով (*Հայաստանում այս ուղղությամբ փորձերը նույնպես բավական ակտիվ են եղել, այլ խնդիր է, թե որքանով են դրանք հաջողվել*),

– *ինստիտուցիոնալ-քաղաքական*. պետության և նրա ինստիտուտների գործունեությունը դիտարկում է որպես պետական կառավարման որոշիչ գործոն: Քանի որ սովորաբար, կառավարման համակարգերը բնութագրվում են որոշակի պահպանողականությամբ իսկ կառավարվող օբյեկտները, ընդհակառակը, գտնվում են անընդհատ զարգացման մեջ, ժամանակի ընթացքում նրանց փոխհարաբերություններում ծագում են հակասություններ, իսկ զարգացումը կրում է հատվածային բնույթ (*սա նույնպես տեղ է գտել Հայաստանի պետական կառավարման համակարգում*):

### **Հայաստանի հասարակական-տնտեսական կառավարման ապագա մոդելի ուրվագիծը**

Հայաստանի հետանցումային կառավարման փորձը բավականին բարդ ու խառը, անընդհատ փնտրտուքի գործընթաց է, որտեղ պարբերաբար տեղ են գտել կառավարման դիտարկված մոդելներից յուրաքանչյուրին բնորոշ, հատվա-

ծային տարբեր բաղադրիչներ, երբեմն՝ խիստ հակասական: Այստեղ որոշակի դեր է ունեցել այն հանգամանքը, որ Հայաստանում կառավարման խնդիրներն անմիջականորեն պայմանավորված են եղել այնպիսի երևույթներով, ինչպիսիք են քաղաքական հատվածի գերակայությունը տնտեսականի նկատմամբ, ժողովրդավարության թերզարգացվածությունը, գործազրկության ու կոռուպցիայի բարձր մակարդակները, վերահսկման մեխանիզմների ոչ արդյունավետությունը, ինչպես նաև, որ պակաս կարևոր չէ, հասարակության գրագիտության ու կրթվածության արդի պայմաններին ոչ համարժեք մակարդակը և այլն: Ըստ այդմ՝ կառավարման արդյունավետությունը առաջին հերթին պայմանավորված է հասարակական-տնտեսական զարգացման սկզբունքների ու գործոնների, չափորոշիչների ու մոտեցումների՝ կոնկրետ իրավիճակից բխող տարբեր համակցություններով: Սա նշանակում է կառավարման համակարգերի պարբերական վերանայում և անընդհատ ներդաշնակեցում գործող հասարակական-տնտեսական համակարգին:

Հասարակական-տնտեսական խորը վերափոխումների արդի ժամանակահատվածը՝ արտահայտված հասարակական կեցության ու գիտակցության վրա ունեցած խորքային ազդեցություններով, կարելի է սահմանել որպես նոր՝ հոգևոր հասարակության ձևավորման սկիզբ<sup>1</sup>, որտեղ մարդը միաժամանակ հանդես է գալիս որպես հասարակական-տնտեսական զարգացման:

- Լ՝ օբյեկտ, քանի որ հասարակական-տնտեսական զարգացումը առաջին հերթին ենթադրում է մարդու բարեկեցության բարձրացում՝ որպես հայ հասարակության կենսամակարդակի բարձրացման ու երկրի առաջընթաց զարգացման հիմք,

- Լ՝ սուբյեկտ, այսինքն՝ երկրի կառավարման գործընթացի ակտիվ մասնակիցներ՝ թե՛ որպես կառավարողներ, թե՛ որպես կառավարվողներ:

Սա նշանակում է, որ կառավարման համակարգը նույնպես պետք է ենթարկվի վերանայման՝ այն դարձնելով համահունչ հասարակական-տնտեսական համակարգի փոփոխություններին: Այս տեսակետից Հայաստանի կառավարման համակարգի արդի զարգացումները պետք է համահունչ լինեն հասարակական-տնտեսական արդի զարգացումներին ու կառավարչական գործունեության, ինչպես նաև կորպորատիվ էթիկայի վերափոխումների ժամանակակից միտումներին և *հիմնված լինեն ազգային մշակութային ու արժեհամակարգային առանձնահատկությունների վրա*, որտեղ *որպես հիմնական ռեսուրս հանդես է գալիս մարդը՝ իր մտածելու կարողությամբ ու կրթվածությամբ, որպես շարժիչ ուժ՝ գիտելիքի անընդհատ զարգացումը:*

Հիմք ընդունելով ասվածը, ինչպես նաև հաշվի առնելով, որ Հայաստանն ունի լուրջ մարդկային ու մտավոր ներուժ, ինչպես նաև դարերի խորքից եկող ազգային ավանդույթների մեծ շտեմարան, կարելի է եզրահանգել, որ հայաստանյան արդի իրողության մեջ բավականին արդյունավետ կարող է լինել *կառավարման սոցիո-մշակութային մոդելը:*

<sup>1</sup> Սարիբեկյան Ա., Հասարակական-տնտեսական զարգացման արդի խնդիրները, Երևան, 201, էջ 38-50:

## ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈՒՆԱՐԵՆ

Կառավարման սոցիո-մշակութային մոդելի հիմքում չկա հաջողության հասցելու որևէ կոնկրետ տեսություն կամ գաղտնիք: Ավելին՝ ինչպես գտնում է Ակիո Մորիտան<sup>1</sup>, որևէ տեսություն, ծրագիր կամ պետական քաղաքականություն չի կարող հաջողություն բերել այնպես, ինչպես դա կարող է անել մարդը<sup>2</sup>: Այստեղ առանձնապես կարևորվում է կրթված մարդու դերը: Պատահական չէ, որ երկրները, *կրթությունը* դիտարկելով որպես ազգային հարստության առավել կարևոր բաղկացուցիչ, այն դարձրել են պետական քաղաքականության կարևորագույն խնդիրներից մեկը: Ավելին՝ այդ խնդիրը դարձել է ոչ միայն առանձին երկրների պետական հոգածության հարց, այլ գտնվում է իրավասու միջազգային կառույցների մշտական ուշադրության կենտրոնում: Հայաստանն այս առումով բացառություն չէ:

Հաշվի առնելով, որ երկրի առաջընթաց զարգացման գործում գնալով գերիշխող են դառնում ոչ տնտեսական գործոնները, մասնավորապես մշակույթը, ավելի հստակ է դառնում այն բանի գիտակցումը, որ բոլոր փոփոխությունները սկսվում են մշակույթից, որը, ազդելով մտածելակերպի վրա, ձևավորում է մոր մարդ, մոր գործող անձինք և, ի վերջո, մոր տնտեսական խնդիրների ներքո վերածնվողվում է քաղաքական համակարգը: Հիմնական գաղափարն այն է, որ զարգացման հիմնական ազդակները ծագում են հենց մարդկային մշակույթում, որն էլ սահմանում է հետագա փոփոխությունների ուղին:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննարկվում են ՀՀ հասարակական-տնտեսական կառավարման հիմնախնդիրները և դիտարկվում է կառավարման ազգային հայեցակարգը սոցիալ-մշակութային տեսակետից:

## АННОТАЦИЯ

### САРИБЕКЯН А. – СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ УПРАВЛЕНИЯ ОБЩЕСТВЕННО-ЭКОНОМИЧЕСКИМИ ПРОЦЕССАМИ В АРМЕНИИ

В статье обсуждаются проблемы общественно-экономического управления РА и рассматривается национальный концепт управления, с социально-культурной точки зрения.

## SUMMARY

### SARIBEKYAN A. – CURRENT PROBLEMS OF SOCIAL-ECONOMIC PROCESSES MANAGEMENT IN ARMENIA

The article discusses the problems of social-economic management in RA as well as national concept of governance which is considered from social-cultural viewpoint.

<sup>1</sup> Акио М., Сделано в Японии, М., Альпина Паблишер, 2007, ст. 59.

<sup>2</sup> Համաշխարհային բանկի տվյալներով՝ ազգային հարստության միայն 16%-ն է կազմում արտադրական բաղադրիչը, մնացած մասը կազմում է մարդկային ռեսուրսը՝ օժտված կրթական ու մշակութային լուրջ ներուժով:

**ՄԻՔԱՅԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

*Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,  
ԵՊՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչ,  
էլ. փոստ՝ mmiqayelyan@mail.ru*

**ԳՐԻՇԱ ՉՄՊՈՅԱՆ**

*աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ,  
ՀՀ ՊԿԱ հանրային կառավարման և հանրային  
ֆինանսների ամբիոնի վարիչ,  
էլ. փոստ՝ grishagspoyan@rambler.ru*

### **ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՆՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀՀ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՊԱՅԱՆՋԱՐԿԻ ԱՃԻ ԳՈՐԾՈՆ**

Ազգային ժողովում 2014 թ. պետական բյուջեի նախագծի քննարկման ժամանակ ՀՀ վարչապետը հայտարարեց, որ 2013 թվականի համար նախատեսված տնտեսական աճը ավելի քան մեկ երրորդով չի կատարվելու<sup>1</sup>: Միայն 2013 թվականի հունվար-օգոստոս ամիսների ընթացքում Կառավարությունը 61 մլրդ դրամով թերակատարել է բյուջետային ծախսերը: Ծախսերի կատարումը կհանգեցնե՞ր ամբողջական պահանջարկի բազմակի ավելացմանը: Դրա հետևանքով ամբողջական պահանջարկը չի ավելացել 240 մլրդ դրամի չափով<sup>2</sup>: Հետևաբար նույն չափով չի ավելացել ՀՆԱ-ն: Նույն համամասնության պահպանման դեպքում բյուջետային ծախսերի թերակատարման հետևանքով չարտադրված ՀՆԱ-ն կկազմեր ավելի քան 360 մլրդ դրամ (տես Գծապատկեր 1): Վերջինս այն գումարն է, որը գրեթե երեք անգամ գերազանցում է 2013 թ. բյուջեով նախատեսված պակասուրդը:


Կառավարության նման քայլը բացատրվում է բնական գազի և էլեկտրական էներգիայի սակագների բարձրացման հետևանքով գնաճի ընդհանուր մակարդակի կտրուկ բարձրացում թույլ չտալու մտահոգությամբ: Սակայն, կարծում ենք, ընտրված է գների ընդհանուր մակարդակի բարձրացումը զսպելու ոչ լավագույն ձևը: Անտեսվել է, այսպես կոչված, «արգելանիվի էֆեկտը»: Որպես կանոն, պետական ծախսերի կրճատում կատարվում է զսպող հարկաբյուջետային (ֆիսկալ) քաղաքականության դեպքում: Դրա հետևանքով բազմարկչի էֆեկտով էականորեն կկրճատվի ամբողջական պահանջարկը: Սակայն գների ընդհանուր մակարդակը կմնա նույնը: Հարկ է նշել, որ Հայաստանը դեռևս ամբողջովին չի հաղթահարել

<sup>1</sup> Տես. ՀՀ վարչապետի ելույթը Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների համատեղ նիստում 2014 թ. պետական բյուջեի նախագծի ներկայացման ժամանակ, «Հայաստանի Հանրապետություն», օրաթերթ, 29.10.2013թ., թիվ 195 /5765/:

<sup>2</sup> Եթե ընդունենք սպառման սահմանային հակումը 0.75 (իրականում այն ավելի մեծ է), ապա ամբողջական պահանջարկը այդ 8 ամիսների ընթացքում չիրականացված բյուջետային ծախսերի պատճառով չի ավելացել:

*Գծապատկեր 1*

**Պետական ծախսերի ավելացման շնորհիվ ամբողջական պահանջարկի կորի հնարավոր տեղաշարժը**



համաշխարհային տնտեսական ճգնաժամի բացասական հետևանքները, առավել ևս, որ փորձագետները չեն բացառում համաշխարհային տնտեսական ճգնաժամի նոր ալիքի հնարավորությունը: Այդ պատճառով դեռևս վաղ է մտածել զսպող ֆիսկալ քաղաքականության իրականացման մասին: Ամհրաժեշտ է շարունակել տնտեսությունը խթանող քաղաքականությունը, որը կհանգեցնի ամբողջական պահանջարկի ավելացմանը: Համենայն դեպս, եթե Կառավարության ծախսերի շնորհիվ ամբողջական պահանջարկի ընդլայնումը հանդիպում է որոշակի խոչընդոտների, կարելի է դիտարկել դրա ընդլայնման հնարավոր այլ տարբերակներ:

Ընդհանուր առմամբ ամբողջական պահանջարկի կայունությունը և աճը պայմանավորված են երկրի ազգաբնակչության կենսամակարդակով և դրա բարձրացումով: Կենսամակարդակի բարձրացումը պայմանավորված է հարստանալու (եկամուտների ավելանալու) գործոնով (այսինքն՝ ամբողջական պահանջարկի ավելացման ոչ գնային՝ եկամտային գործոնով): Հարստության ավելացումը սպառողներին կորդի ընթացիկ եկամուտները ավելի քիչ տնտեսել և շատ ծախսել, քան պլանավորել էին: Դրա հետևանքով տեղի կունենա սպառողական ծախսի ավելացում: Այլ կերպ ասած՝ կգործի հարստության էֆեկտը: Իսկ ազգաբնակչության կենսամակարդակը ձևավորվում է հասարակության տարբեր շերտերի եկամուտների աճով: Որքան մեծ է հասարակության տարբեր շերտերի միջև եկամուտների բևեռացումը, այնքան ցածր է ժողովրդի կենսամակարդակը: Հետևաբար խնդիրը պետք է լինի բնակչության կենսամակարդակի բարձրացումը: Այսօր Հայաստանի բնակչության ավելի քան մեկ երրորդը ստանում է աղքատության շեմից ցածր եկամուտ: Իսկ այն քայլերը, որոնք իրականացնում կան

պատրաստվում է իրականացնել Կառավարությունը, չեն կարող արմատական փոփոխություն մտցնել բնակչության եկամուտների առկա վիճակի մեջ և կանխել դրա հետագա բեռնացումը: Մասնավորապես թոշակների բարձրացման հաշվին 2014 թվականի հունվարի 1-ից 32 հազար մարդու՝ աղքատության շեմից դուրս գալու մասին պնդումը<sup>1</sup> կասկածելի է: Բանն այն է, որ կենսաթոշակների ավելացմանը զուգահեռ մեծանում է նաև նվազագույն սպառողական զանբյուրի արժեքը: Դրա պատճառով փոփոխման է ենթակա նաև աղքատության շեմը: Վերջինիս փոփոխման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև ակնկալվող գնաճի ընդհանուր մակարդակով: Ուստի ամբողջական պահանջարկի ավելացման գրավականը պետք է փնտրել հասարակության այլ շերտերի մեջ: Ամբողջական պահանջարկի ավելացման գործոնին չի կարող «հավակնել» ոչ միայն աղքատ, այլ նաև հասարակության առավել հարուստ խավը, քանի որ այդ դեպքում ավելի կխորանա հասարակության եկամուտների բեռնացումը, իսկ դրա հետևանքով, ամբողջական պահանջարկն էլ ավելի կնվազի: Ակնհայտ է, որ նման իրավիճակում շեշտը պետք է դնել հասարակության միջին խավի ձևավորման ու զարգացման վրա:

Ձարգացած երկրների փորձը ցույց է տալիս, որ դրանց տնտեսության զարգացման և ազգաբնակչության կենսամակարդակի բարձրացման գործում վճռորոշ դերը պատկանել է հասարակության միջին խավին: Վերջինս միաժամանակ նպաստել է այդ երկրներում ժողովրդավարության կայացմանն ու զարգացմանը<sup>2</sup>: Իսկ միջին խավի ձևավորման տնտեսական հիմքը երկրում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումն է:

Հայաստանի անկախացման ավելի քան 22 տարիների ընթացքում ձևավորված բոլոր կառավարություններն էլ իրենց տնտեսական ծրագրերում խնդիր են դրել աջակցել փոքր և միջին ձեռնարկությունների զարգացմանը: Սակայն այդ ուղղությամբ նրանց իրականացրած քայլերը համահունչ չեն իրենց իսկ հայտարարած գերակայություններին: Գիշտ է՝ 2000 թվականի դեկտեմբերի 5-ին Ազգային ժողովն ընդունեց «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը<sup>3</sup>, որով փորձ էր արվում կարգավորել փոքր և միջին ձեռնարկությունների պետական աջակցության գործընթացը<sup>4</sup>: ՀՀ Կառավարու-

<sup>1</sup> Տե՛ս. ՀՀ վարչապետի ելույթը Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների համատեղ նիստում 2014 թ. պետական բյուջեի նախագիծը ներկայացնելու ժամանակ («Հայաստանի Հանրապետություն», օրաթերթ, 29.10.2013թ., թիվ 195/5765/):

<sup>2</sup> Միջին խավը հասարակության ամենաանկախ շերտն է: Այն չի առաջնորդվում հասարակության հարուստ խավին բնորոշ՝ նեղ, ավտորիտար համակարգը բնութագրող շահով: Միաժամանակ չի «զայթակղվում» օրվա խնդիրը լուծելու՝ ավտորիտար իշխանությունների կողմից ժամանակ առ ժամանակ (ընտրությունից ընտրություն) աղքատ խավին «նետվող փշրանքներով»: Այդ է պատճառը, որ ավտորիտար երկրներում իշխանությունները շահագրգռված չեն ՓՄՁ-ների զարգացման շնորհիվ միջին խավի ձևավորմանը ու զարգացմանը:

<sup>3</sup> «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-121, Պաշտոնական տեղեկագիր, 2000 թ., 30 դեկտեմբերի, թիվ 33 (131):

<sup>4</sup> Պետական օժանդակությունը կարգավորվում է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-1 հոդվածով: Նշված հոդվածը, ըստ օրենսդրի, նախատեսում է մի կողմից աջակցել ձեռնարկատիրության զարգացմանը, մյուս կողմից՝ թույլ չտալ այլ հավասար պայմաններում անհավասար մրցակցային պայմանների ստեղծում միևնույն շուկայում գործող տնտեսավարող սուբյեկտների համար: Այդ նպատակով նախատեսված է, որ պետական օժանդակություն տրամադրող մարմինը և այդպիսի օժանդակություն ստացող տնտեսավարողը մինչև օժանդակությունը տրամադրելը և ստանալը դիմեն ՀՀ մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին՝

յան 19.03.2002 թ. թիվ 282 որոշմամբ ստեղծվեց ՀՀ ՓՄՁ զարգացման ազգային կենտրոն /ՓՄՁ ՁԱԿ/, որի հիմնական գործառնություններն են ՓՄՁ պետական քաղաքականության և ՓՄՁ ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացումը, ՓՄՁ սուբյեկտներին աջակցությունը, դրանց շահերի պաշտպանությունն ու ներկայացումը ՀՀ Կառավարությունում ու միջազգային դոնոր կազմակերպություններում: Սակայն անցած տարիների ընթացքում այս ոլորտում լուրջ առաջընթացներ չեն արձանագրվել:

ՓՄՁ զարգացումը ենթադրում է մի կողմից դրանց համար ապրանքային շուկաներում ազատ մրցակցային հարաբերությունների ստեղծում, մյուս կողմից՝ խոշոր բիզնեսի հետ մրցակցելու համար որոշակի արտոնությունների տրամադրում:

Ռազմավարական նշանակության 115 ապրանքային շուկաների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց մոտ 60 տոկոսը համակենտրոնացման բարձր մակարդակ ունի և երկու երրորդից ավելին՝ գերիշխող դիրք<sup>1</sup>:

Բնականաբար նման շուկայական կառուցվածքներում փոքր և միջին ձեռնարկություններին անչափ դժվար կլինի մրցակցել խոշորների հետ: Պատահական չէ, որ համաշխարհային տնտեսական ճգնաժամի և դրա հետևանքների վերացման տարիներին կտրուկ կրճատվել է ՓՄՁ-ների թիվը<sup>2</sup>: Միայն 2008-2011 թվականներին խոշոր և միջին առևտրային կազմակերպությունների քանակը 1316-ից դարձել է 1204, այսինքն՝ նվազել է 8,5 տոկոսով<sup>3</sup>: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այդ ընթացքում խոշոր հարկատուների գործունեության դադարեցում չի արձանագրվել: Հետևաբար նշված քանակի կրճատումը տեղի է ունեցել միջին առևտրային կազմակերպությունների հաշվին:

Վերջին տարիներին նվազել է Կառավարության և պետական այլ մարմինների «հետաքրքրությունը» ՓՄՁ ոլորտի նկատմամբ: Եթե մինչև 2010 թվականը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը և ՓՄՁ ՁԱԿ-ը առավել շատ տվյալներ էին հաղորդում այդ ոլորտի վերաբերյալ, ապա 2011 թվականից ո՛չ Ազգային վիճակագրական ծառայությունը և ո՛չ էլ ՓՄՁ ՁԱԿ-ը նման ցուցանիշներ չեն հրապարակում, իսկ հրապարակվածներն էլ աղավաղված պատկերացում են տալիս ոլորտի վերաբերյալ: Սասնավորապես ներկայումս չեն հրապարակվում ՀՆԱ-ի մեջ ՓՄՁ ոլորտի բաժնի վերաբերյալ տվյալները: Ընդհանուր զբաղվածների մեջ ՓՄՁ-ների բաժինը ներկայացված է ոչ ամբողջական՝ որոշ ոլորտներով, այն էլ՝ նախկին չափանիշներով: Մինչդեռ 2011 թվականի հունվարի 1-ից գործում են

---

թույլտվության մասին եզրակացություն ստանալու համար: Չնայած օրենքի այս դրույթի գործունեության մեջ մտնելուց անցել է ավելի քան 6 տարի, հանձնաժողովը դեռևս պետական օժանդակության վերաբերյալ գործ չի քննարկել: Իսկ դրա անհրաժեշտությունը աներկբա է՝ բազում նման օժանդակությունների առկայության պատճառով:

<sup>1</sup> Հեղինակները ապրանքային շուկաները առանձնացրել են ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2007-2012 թվականների տարեկան հաշվետվություններում և 2007-2013 թվականների տարեկան գործունեության ծրագրերում արտացոլված ուսումնասիրություններից: Տես նաև հեղինակների հետևյալ ուսումնասիրությունները՝ Микаелян М.В., Защита конкуренции в Армении и механизмы обеспечения независимости регулирующего органа и лиц принимающих решения в этом органе. В кн. «Проблемы и перспективы сотрудничества между странами Юго-Восточной Европы в рамках Черноморского экономического сотрудничества и ГУАМ» - Сборник научных трудов, часть 2, Одесса-Севастополь-Донецк, 2011, с. 494-497.

<sup>2</sup> 2009 թվականի տնտեսական անկումը հնարավոր կլինի վերականգնել միայն 2013 թվականի տարեվերջին:

<sup>3</sup> Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., 2012 թ., էջ 390:

ՓՄՁ-ների դասակարգման նոր չափանիշներ<sup>1</sup>: Իսկ ՓՄՁ-ների վերաբերյալ լիարժեք և հավաստի տեղեկատվության անհրաժեշտությունը պայմանավորված է ոչ միայն ՓՄՁ-ներին պետական աջակցության արդյունավետության գնահատման, այլև գիտական հետազոտություն կատարելու պահանջով:

Խիստ նվազել են նաև ՓՄՁ ոլորտի աջակցությանը նպաստող պետական միջոցների հատկացումները: Ինչպես նշված է վարչապետի վերոհիշյալ ելույթում, 2014 թվականին իր գործունեությունը կծավալի «արտահանման ապահովագրական ընկերությունը»՝ նպատակ ունենալով «խթանել այն ձեռնարկություններին, առաջին հերթին, փոքր և միջին, որոնք կունենան արտահանման ծրագրեր, և նրանց համար ֆինանսական միջոցները հասանելի կլինեն ավելի ցածր տոկոսադրույքներով, քան նախկինում էր»<sup>2</sup>: Որպես կանոն, ՓՄՁ-ները երկրի ներսում գործունեություն ծավալող (ներքին շուկաների) սուբյեկտներ են: Յետևաբար Կառավարության հովանավորությամբ ստեղծվող ապահովագրական ընկերությունը հիմնականում նպաստելու է ոչ թե փոքր, այլ խոշոր բիզնեսին: ՀՀ վարչապետի վերոհիշյալ ելույթում ՓՄՁ-ներին աջակցելու վերաբերյալ որևէ այլ փաստ չի ներկայացվել: Յետևաբար մնում է ենթադրել, որ 2014 թվականի պետական բյուջեով ՓՄՁ-ներին էական աջակցություն չի նախատեսվում:

Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանը էապես չի նպաստում նաև 2012 թվականին ընդունված «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքին (այսուհետև՝ շրջանառության հարկի մասին օրենք)<sup>3</sup>: Նշված օրենքով տարեկան մինչև 58.35 մլն դրամ իրացում ունեցող տնտեսավարող սուբյեկտների համար տրվել է երկընտրանքի հնարավորություն՝ լինել շրջանառության հարկ վճարող կամ, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն, ավելացված արժեքի հարկ վճարող: Ճիշտ է, երկրորդ դեպքում ավելացված արժեքի հարկի իրական վճարողը ոչ թե տնտեսավարողն է, այլ՝ այդ հարկը գների մեջ ներառվելով՝ վերջնական սպառողը: Սակայն ԱԱՀ վճարելու դեպքում գերփոքր և փոքր ձեռնարկությունների արտադրանքի ինքնարժեքը, համեմատած միջին և խոշոր ձեռնարկությունների համանման արտադրանքի հետ, այլ հավասար պայմաններում կլինի բարձր: Այլ կերպ ասած՝ ավելացված արժեքի հարկը 20 տոկոսով թանկացնում է ապրանքը: Իսկ 20 տոկոսով փոքր և միջին ձեռնարկությունների ապրանքների կամ ծառայությունների թանկացումը խոշոր ձեռնարկությունների հետ հավասար մրցակցելու համար էական խոչընդոտ է: Այդ պատճառով, կարծում ենք, շրջանառության հարկ վճարող գերփոքր և փոքր ձեռնարկությունները պետք է ազատվեն ներմուծման ժամանակ մաքսային սահմանին ԱԱՀ-ի վճարման պարտականությունից: Այդ նպատակով անհրաժեշտ է, օրենքի 11-րդ հոդվածի առաջին մասից հանել «մաքսային սահմանին գանձվող ԱԱՀ-ի» արտահայտությունը:

<sup>1</sup> «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխությունն լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքը, 29.10.2010, ՀՕ-142-Ն, Պաշտոնական տեղեկագիր, 2010 թ., 10 նոյեմբերի, թիվ 57 (791):

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ վարչապետի ելույթը Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների համատեղ նիստում 2014 թ. պետական բյուջեի նախագիծը ներկայացնելու ժամանակ («Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 29.10.2013 թ., թիվ 195 /5765/):

<sup>3</sup> «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքը, ՀՕ-236-Ն, Պաշտոնական տեղեկագիր, 2012 թ., 28 դեկտեմբերի, թիվ 66 (940):

Շրջանառության հարկի մասին օրենքի ընդունումով ենթադրվում էր, որ այն նպաստելու էր ՓՄՁ-ների զարգացմանը: Թեթևացվելու էր այդ օրենքով գործող տնտեսավարողների նկատմամբ նախկինում կիրառվող հարկային վարչարարության բեռը (ՓՄՁ-ների կողմից նախկինում ներկայացվող մեկ տասնյակից ավելի հաշվետվությունների փոխարեն պահանջվում է մեկ հաշվետվություն): Սակայն այն, ըստ էության, միջին ձեռնարկություններին չի վերաբերում, իսկ գերփոքր և փոքր ձեռնարկությունների միայն չնչին մասը կարող է օգտվել այդ օրենքի սահմանած արտոնություններից: Տարեկան մինչև 30 մլն դրամ շրջանառություն ունեցող գերփոքր ձեռնարկությունների համար հարկային բեռը ոչ միայն չի նվազել, այլև ավելացել է շրջանառության հարկի դրույթաչափի մեծ լինելու պատճառով: Ստացվում է, որ օրենքը «ընդունելի» է գերփոքր ձեռնարկությունների (առանձին դեպքերում նաև փոքր ձեռնարկությունների) չնչին մասի համար: Մեր կարծիքով նպատակահարմար է շրջանառության հարկի մասին օրենքում փոփոխություն կատարել՝ բարձրացնելով շրջանառության հարկ վճարողների շեմը (58.35 մլն դրամից դարձնելով 100 մլն դրամ): Նման փոփոխությունով ցանկության դեպքում գերփոքր ձեռնարկություններն ամբողջությամբ և փոքր ձեռնարկությունների որոշ մասը կկարողանան շրջանառության հարկով աշխատել:

Օրենսդիրը շրջանառության հարկը տարբերակել է ըստ առևտրական գործունեությունից ստացվող եկամուտների (դրույթաչափը՝ 3.5 տոկոս), արտադրական գործունեությունից ստացվող եկամուտների (դրույթաչափը՝ 3.5 տոկոս), վարձակալությունից ստացվող եկամուտների, տոկոսների, ռոյալթիների, ակտիվների օտարումից ստացվող եկամուտների (դրույթաչափը՝ 10 տոկոս), նոտարական գործունեությունից ստացվող եկամուտների (դրույթաչափը՝ 20 տոկոս), այլ գործունեության տեսակներից ստացվող եկամուտների (դրույթաչափը՝ 5 տոկոս):

Մեր կարծիքով՝ որպեսզի շրջանառության հարկով աշխատող գերփոքր և փոքր ձեռնարկությունները չլինեն վնասաբեր, հարկավոր է տարբերակել նաև «առևտրական գործունեությամբ» և «արտադրական գործունեությամբ» զբաղվողների դրույթաչափերը: Սննդամթերքի իրացմամբ զբաղվող առևտրական ձեռնարկությունների նկատմամբ հարկավոր է կիրառել 3 տոկոս դրույթաչափ, իսկ այլ ապրանքների իրացմամբ զբաղվող ձեռնարկությունների համար՝ 3.5 տոկոս դրույթաչափ: Գյուղատնտեսական մթերքների վերամշակում իրականացնող և մինչև 100 մլն դրամ տարեկան շրջանառություն ունեցող գերփոքր և փոքր ձեռնարկությունների համար հարկավոր է սահմանել 2 տոկոս դրույթաչափ, իսկ այլ գործունեություն իրականացնողների համար՝ 3 տոկոս:

Այսպիսով՝ տնտեսական ճգնաժամի հետևանքները վերացնելու և տնտեսական աճ ապահովելու նպատակով ՓՄՁ-ների զարգացումը կենսական նշանակություն ունի: Մինչդեռ մեր երկրում էական քայլեր չեն ձեռնարկվում ամբողջական պահանջարկի ավելացման կարևորագույն գործոնի՝ ՓՄՁ-ների զարգացման համար:

**ԱՍՓՈՓՈՒՄ**

Հոդվածում քննարկվում է ՓՄՁ-ների նշանակությունը որպես ՀՀ-ում ամբողջական պահանջարկի աճի գործոնի տնտեսության զարգացման համար: Ներկայացվում են առաջարկություններ դրանց գործունեության բարելավման նպատակով:

**АННОТАЦИЯ****МИКАЕЛЯН М., ГСПОЯН Г. – РАЗВИТИЕ МАЛОГО И СРЕДНЕГО ПРЕДПРИНИМАТЕЛЬСТВА КАК ФАКТОР РОСТА СОВОКУПНОГО СПРОСА В РА**

В статье рассматривается развитие малого и среднего предпринимательства в качестве фактора роста совокупного спроса в РА, для целей стимулирующей экономической политики. Формулируются предложения по улучшению их деятельности.

**SUMMARY****MIKAYELYAN M., GSPOYAN G. – DEVELOPMENT OF SMALL AND MEDIUM ENTERPRISES AS A FACTOR OF AGGREGATE DEMAND GROWTH IN RA**

In the article small and medium enterprises are regarded as a factor of the aggregate demand growth for the aims of RA economic development. Suggestions are made to improve their activity.

**ՀՈՎԱՏՓՅԱՆ ԿՈՆՈՂՅԱ***տնտեսագիտության թեկնածու**ԵՊՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի դոցենտ***ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

Տնտեսական աճը հասարակության և տնտեսության զարգացման գլխավոր ցուցանիշն է: Այն միաժամանակ պետության տնտեսական գործունեության գնահատման ինքնատիպ, յուրահատուկ ցուցանիշն է, տնտեսության անվտանգության և անկախության երաշխիքը: Կայուն և բարձր տեմպերով տնտեսական աճը արտահայտում է հասարակության տնտեսական «առողջության» վիճակը:

Զնայած տնտեսագիտական գրականության մեջ գոյություն ունեն տնտեսական աճի վերաբերյալ բազմաթիվ տեսություններ, սակայն դրանցից առանձնանում են նորքեյնսական և նոր դասական տեսությունները: Մեծ դեպրեսիայի ներքո ծնված քեյնսյան տեսությունը, ստատիստիկ տվյալների հիման վրա վերլուծելով ստեղծված իրավիճակը, «հավասարակշռության ռեսուրսների ոչ լրիվ (թերի) զբաղվածության պայմաններում» հանգեց այնպիսի եզրակացությանը, որ տնտեսական աճի տեմպերի կրճատումը կապված է տնտեսության մեջ կապիտալ ներդրումների և տեխնիկական առաջադիմության խթանման բացակայության հետ: Այդ պատճառով էլ քեյնսյան տեսության մեջ տնտեսությունում պետական միջամտության նպատակը ներդրումների խթանումն էր: Այնուհետև նորքեյնսականները, իրենց հետազոտությունները ծավալելով դիմամիկ տնտեսության պայմաններում, ուշադրությունը կենտրոնացրին այնպիսի պայմանների պարզաբանման հարցերի վրա, որոնք անհրաժեշտ են կայուն և բարձր տեմպերով տնտեսական աճ ապահովելու և պահպանելու համար՝ բնակչության զբաղվածության բարձր մակարդակի և արտադրական հզորությունների լրիվ բեռնվածության պարագայում:

20-րդ դարի 50-ական թվականների կեսերին տնտեսական աճի տեմպերի և գործունեների որոշիչ հնարավոր ներուժի խնդիրներով սկսեց զբաղվել նաև նոր դասական ուղղությունը: Ի տարբերություն նոր քեյնսականների՝ նոր դասականները ուշադրություն սևեռեցին արտադրանքի իրացման պայմանների և արդյունավետ պահանջարկի ստեղծման վրա: Այնուհետև նոր դասական ուղղությունը առաջին պլան մղեց արտադրական սկզբունքը՝ տնտեսական աճի այնպիսի գործոնների վերլուծությունը ինչպիսիք են հիմնական կապիտալը, աշխատուժի արտադրողականության մակարդակը, գիտատեխնիկական առաջադիմությունը և այլն: Այս տեսկետից էական ներդրում կատարեց Նոբելյան մրցանակի դափնեկիր Ռոբերտ Սոլոու: Նա առաջարկեց «կուտակման ոսկյա կանոնի» բանաձևը, որը ցույց է տալիս կապիտալի սպառման համար կապիտալազինվածության օպտիմալ մակարդակը: Ռոբերտ Սոլոուի «ոսկյա կանոնը» որոշում է կապիտալի այն պաշարը, որն անհրաժեշտ է կայուն տնտեսության համար կապիտալի ամենաբարձր սպառման մակարդակում: Սակայն, ի տարբերություն ավանդույթային

մոտեցման եղանակի, ըստ որի՝ կապիտալի ամենաբարձր սպառումը որոշվում է ոչ թե դրա մեծությամբ՝ «ինչքան շատ, այնքան լավ», այլ կապիտալի օպտիմալ չափով և տնտեսական արդյունավետությամբ, որն արտահայտվում է միավոր արտադրանքի կապիտալահատույցով: Ըստ Սոլոուի մոդելի՝ արտադրության թուլացման ծավալը ֆունկցիա է աշխատուժից, կապիտալից և տեխնոլոգիայից: Այսպիսով՝ կարելի է ենթադրել, որ տնտեսական աճի հիմնական գործոններից մեկը կապիտալ ներդրումներն են:

Տնտեսական աճի և ներդրումների փոխառնչություններն էլ ավելի արդիական են դարձել պլանային համակարգից շուկայականին անցնող երկրների համար:

Ներդրումային ոլորտի աղբյուրների և ներդրումային գործընթացի առանձնահատկությունների մասին լավ պատկերացում ունենալու համար անհրաժեշտ է վերլուծել նախ ելակետային վիճակը: Միաժամանակ պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ պլանային տնտեսությունում փաստորեն բացակայում էր ներդրումների գործիքակազմի և պայմանների խորը վերլուծությունը հետևյալ պատճառներով.

- բացակայում էր ներդրող սուբյեկտը, ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որի նպատակը պետք է լիներ շահույթի ստացումը,
- ներդրումային օբյեկտի ընտրության պլաններում առկա էին որոշակի սահմանափակումներ, մասնավորապես գույքը, որը գտնվում էր պետության այլընտրանքային սեփականության ձևերում, ինչպես նաև բացակայում էին արժեթղթերը և արժույթները:

Պլանային տնտեսությունում հիմնական ներդրողը պետությունն էր: Պետությունն էր որոշում երկրի զարգացման սոցիալ-տնտեսական ուղղությունները և առանձնահատկությունները: Պետությունն էր սահմանում առանձին ձեռնարկության «ինվեստիցիոն պորտֆելը»:

Անցումը շուկայական հարաբերություններին ուղեկցվեց ներդրումային ճգնաժամով: Անցումային ժամանակաշրջանի սկզբից ներդրումները կրճատվեցին երեք քառորդով: Ներդրումների ծավալի կրճատումը հիմնականում պայմանավորված էր ներքին խնայողությունների սահմանափակությամբ: Մասնավոր ներդրումները չէին կարող ապահովել անհրաժեշտ քանակի ներդրումներ ճգնաժամը հաղթահարելու համար: Այդ երևույթի առկայությունը ամենից առաջ կախված էր երկրում ծավալվող ինֆլյացիայի աճի տեմպերի արագացումից: Բացի այդ՝ բացակայում էր նաև խնայողությունների և ներդրումների տրանսֆորմացիայի աշխատունակ մեխանիզմը: Գների ազատականացումը նոր թափ հաղորդեց ինֆլյացիայի աճի տեմպերի արագացմանը, որն էլ իր հերթին կրճատեց ներդրումների զարգացման համար ֆինանսական բազան:

Ներդրումների ոլորտի վրա բացասական ազդեցություն է թողնում նաև բարձր տոկոսի նորման (20-24%):

Ներդրումների սահմանափակման լուրջ գործոն դարձան նաև սովետային տնտեսության առկայությունը և դրա բարձր տեսակարար կշիռը: Սովորաբար սովետային տնտեսության գերաճի պայմաններում փորձել տնտեսության իրական հատվածը հագեցնել փողով և կրճատել ֆինանսական դեֆիցիտի սրությունը, դառնում է վճարային միջոցների իրացվելիության վերացում և դրանով իսկ հանգեցնում է ներդրումների կրճատմանը: Այսպիսով՝ շուկայական հարաբերու-

յունների ձևավորման ընթացքում ներդրումների կիրառումը հանդիպեց լուրջ դժվարությունների և խոչընդոտների, որոնք թույլ չէին տալիս կիրառելու խթանիչ գործիքակազմ, որոնց թվին կարելի դասել.

- երկրի սուղ ֆինանսական ներուժը,
- Ձեռնարկությունների աղքատիկ եկամուտները և բնակչության խնայողությունների փոքր ծավալը,
- անցումը ինդուստրիալ զարգացման նոր մոդելին, որը պահանջում էր ֆինանսական ռեսուրսների մեծ ծավալ,
- տնտեսական աճի ձևախախտումը, որը խաչընդոտում էր կապիտալի ներհոսքը արտադրության մեջ և դրա մուտքի պատենեշների ստեղծումը, մասնավորապես արտադրության մոնոպոլացման բարձր մակարդակը, քրեական ուժերի ակտիվացումը, ինֆլյացիան, միջոցների երկարատև ներդրման շահավետության նվազումը և այլն,
- շուկայական տնտեսության զարգացման անբավարար մակարդակը և շուկայական կառուցվածքի շարժունակության հակազդեցությունը, այլ կերպ ասած՝ անկատար շուկայական գործիքակազմը թույլ չէր տալիս ռեսուրսները տեղաբաշխել տնտեսական աճը ապահովող անհրաժեշտ «կետը», որն էլ հանգեցրեց ներդրումների պահանջարկի նվազման:

Այսպիսով՝ Հայաստանում ներքին խնայողությունների ցածր մակարդակը և տնտեսության ներքին հատվածում առկա եկամուտների ցածր մակարդակը, բնականաբար, գրեթե անհնարին են դարձնում տնտեսական աճի ներդրումային գործոնի ֆինանսավորումը միայն ներքին ռեսուրսների հաշվին, հետևաբար ներդրումների լրացուցիչ աղբյուր են ծառայել օտարերկրյա փոխառությունները (վարկերը): Օտարերկրյա ներդրումների հետ հույսեր էին կապվում ֆինանսական կայունությունից անցում կատարել դեպի տնտեսական աճի տեմպերի բարձրացում: Սակայն օտարերկրյա ներդրումները, ինչպես յուրաքանչյուր այլ գործոն ունի «մեղալի հակառակ կողմը»: Դրանք իրականում կարող են ինտենսիվ տնտեսական աճի բացառիկ, կարևոր գործոն լինել, բայց և չի բացառվում վտանգավորությունը տնտեսական զարգացման համար: Հետևաբար կարևոր նշանակություն ունի օտարերկրյա ներդրումների ներգրավման ձևերի, չափերի և պայմանների ճշգրիտ որոշումը, որոնց միջոցով ներդրումները պետք է դառնան տնտեսական աճի ու զարգացման գործոն: Այս տեսակետից անհրաժեշտ է պատասխանել հետևյալ հարցերին՝

- ինչպիսի՞ ձևով կատարել օտարերկրյա ներդրումները (ուղղակի՞, թե՞ փոխառությունների ձևով),
- ինչպիսի՞ մեծություն պետք է ունենան օտարերկրյա ներդրումները,
- որտե՞ղ պետք է օգտագործել ներդրումները, որպեսզի ապահովվեն տնտեսական աճի արագացված և բարձր տեմպեր:

Ներկայումս Հայաստանում տարածված է այսպիսի տեսակետ. «Որքան շատ օտարերկրյա ներդրումներ, այնքան լավ»: Սակայն ինչպես ցույց են տալիս գործնականում առկա վիճակագրական տվյալները, տնտեսական աճի և օտարերկրյա ներդրումների աճի տեմպերը խիստ տատանվում են: Ինչպես հայտնի է, 1994 թ. հաջողվեց կանխել տնտեսական անկումը (մինչ այդ ՀՆԱ-ն կրճատվել էր 59%) և ապահովել մակրոտնտեսական որոշակի կայունություն ու տնտեսական

աճ: Սակայն 1999 թ. տնտեսական աճի տեմպերը դանդաղեցին: Եթե 1998 թ. ՀՆԱ-ի աճը կազմում էր 7.2%, ապա 1999 թ. այն կազմեց ընդամենը 3.3%<sup>1</sup>:

2000 թ. տնտեսական աճի տեմպերը կրկին բարձրացավ և կազմեցին 9.6%: 1995-1998 թթ., կապված տնտեսության կայունացման գործընթացների հետ, երկրում աճեցին օտարերկրյա ներդրումները և 1998 թ. կազմեցին 232,4 մլն ԱՄՆ դոլար<sup>2</sup>:

Սակայն 1999 թ. օտարերկրյա ներդրումների կտրուկ նվազում արձանագրվեց: 2000 թ.՝ մինչև ֆինանսատնտեսական ճգնաժամը պաշտոնական տվյալներով տնտեսական աճը կազմեց 9.6-13.9%, սակայն օտարերկրյա ներդրումները զգալի աճ չարձանագրեցին:

Եվ վերջապես 2012 թ. երկրում տնտեսական աճը կազմեց մոտ 6%, սակայն 40%-ով կրճատվել էին օտարերկրյա ներդրումները: Հետևաբար ամենից առաջ պետք է ճիշտ կողմնորոշվել օտարերկրյա ներդրումների չափի նկատմամբ: Իսկ իրական չափը ճշգրիտ գնահատելու համար անհրաժեշտ է նաև որոշել (սահմանել) տնտեսական աճի հնարավոր և անհրաժեշտ տեմպը: Այն պետք է ապահովի անցում տնտեսության զարգացման ցածր մակարդակից բարձր մակարդակ և այդ հիմքի վրա կրճատի աղքատության տեսակարար կշիռը (35.1%), ապա նպաստի բնակչության միջին խավի ձևավորմանը և բարեկեցության աճին:

Տնտեսական աճի հնարավոր և անհրաժեշտ տեմպի գնահատման համար կարելի է օգտագործել Ֆոն Նոյմանի դինամիկ մոդելը<sup>3</sup>:

Այսպես, եթե երկրի ներուժը ավելի ցածր է, քան տնտեսական աճի անհրաժեշտ տեմպն է, ապա տվյալ երկիրը «դոպինգի», այսինքն՝ լրացուցիչ արտաքին (էկզոգեն) օտարերկրյա ներդրումների կարիք ունի: Իսկ տնտեսական աճի ավելի ցածր մակարդակը ցույց է տալիս, որ երկրի տնտեսության ներածին (էնդոգեն) ներուժը անբավարար է և չի համապատասխանում դրա արագացված զարգացմանը:

Այսպիսով՝ զարգացման հնարավոր և անհրաժեշտ տեմպերի միջև տարբերությունը ոչ այլ ինչ է, քան օտարերկրյա ներդրումների ներգրավման (օգտագործման) չափ: Հենց դա պետք է դառնա անհրաժեշտ «դոպինգի» չափը (մեծությունը), այսինքն՝ էկզոգեն լրացուցիչ «ուժը»:

Սակայն, ինչպես փորձը ցույց է տալիս, «դոպինգի» չափի գերազանցումը կարող է պատճառել բացասական հետևանքներ և ավելորդ կորուստներ:

Օտարերկրյա ներդրումների մեծության որոշումը կապված է նաև այն պայմանների հետ, որոնց դեպքում այդ ներդրումները կվերածվեն տնտեսական աճի իրական գործոնի: Պրակտիկան ցույց է տալիս, որ օտարերկրյա ներդրումների աճը տնտեսապես արդյունավետ կլինի այն դեպքում, երբ նման կերպով հնարավորություն է ստեղծվում ֆինանսավորելու անցումը տնտեսական զարգացման բարձր մակարդակի:

Ներդրումային քաղաքականության կարևոր խնդիրներից է նաև, թե օտարերկրյա ներդրումների որ ձևն է ընդունելի տնտեսական զարգացման համար՝

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 1999 թ. հունվար-դեկտեմբեր, Կիճակագրության պետական ռեգիստրի և վերլուծության նախարարություն, Երևան, 2000, էջ 108:

<sup>2</sup> Տե՛ս Տնտեսական բարեփոխումների առանձնահատկությունները ու փուլերը Հայաստանում 1991-1998 թթ., Երևան, 1999, էջ 11:

<sup>3</sup> Տե՛ս Реформы в постсоциалистическом обществе. М.: Экономика, 2000, с. 269.

ուղղակի ներդրումները, թե՞ վարկերը: Այս երկու ձևերն էլ ունեն և՛ առավելություններ և՛ թերություններ:

Ուղղակի ներդրումները քաղաքական տեսակետից ավելի վտանգավոր են, քանի որ դրանք կապված են երկրում արտադրության միջոցների օտարերկրյա սեփականության ստեղծման և զարգացման հետ, հետևաբար վտանգ են ներկայացնում տնտեսական անկախության համար:

Վարկավորումը նման վտանգ չի պարունակում: Սակայն դա ավելի պակաս հրապուրիչ է, քան ուղղակի ներդրումները: Եթե ուղղակի ներդրումների դեպքում արտադրության տեխնոլոգիայի կատարելագործումը և վաճառահանման շուկաների ձեռքբերման խնդիրը լուծում են օտարերկրյա ներդրողները, իսկ վարկավորման դեպքում այն ամբողջությամբ վերաապահովում է երկրի ներքին գործոններին:

Ուղղակի ներդրումների և վարկավորման առավելությունների գնահատման ցուցանիշ կարող է լինել ներդրումների օգտագործման արդյունավետության աստիճանը:

Այս տեսակետից ուշագրավ է Շվեյցարական բանկերի կոնֆեդերացիայի մեթոդը<sup>1</sup>: Այդ գնահատման մեթոդի հիմքում ընկած են տվյալ երկրի վճարունակությունը բնութագրող հետևյալ հարաբերությունները.

- արտաքին պարտքի մեծության և ապրանքների ու ծառայությունների արտահանման արդյունքում ստացված տարեկան արժույթի հարաբերությունը: Այդ հարաբերությունից ելնելով՝ երկիրը ընդունվում է (գնահատվում է) դրական, երբ արտահանումից ստացված արժույթը ծածկում է արտաքին պարտքը:

Այդ պատճառով որակապես այդպիսի հարաբերության սահմանային արժեքը որոշվում է 100%:

- երկրի արժույթի պահուստի չափի և արտաքին պարտքի հարաբերությունը: Համաձայն այդ հարաբերության երկիրը գնահատվում է դրական (լավ վիճակում), երբ արժութային պահուստը մինիմումում հավասար է արտաքին պարտքի 20%-ին: Երբ արժութային պահուստը 20%-ի մակարդակից ցածր է, գնահատվում է, որ երկիրը չունի անհրաժեշտ երաշխիք իր պարտքը մարելու համար: Այդ պատճառով այդ հարաբերության համար սահմանային արժեքը որոշվում է < 20%:

- երկրի վճարային հաշվեկշռի դեֆիցիտի և արժութային պաշարի հարաբերությունը, որի համաձայն՝ վճարային հաշվեկշռի դեֆիցիտը չպետք է գերազանցի երկրի արժույթի պաշարը ավելի քան 1,5 անգամ: Երբ այդ հարաբերության արժեքը ավելին է, նշանակում է երկիրը չունի արտաքին պարտավորությունները կատարելու հնարավորություն: Այդ հարաբերության արժեքը կազմում է 1.5%:

Հայաստանը վերը նշված բոլոր ցուցանիշներով համարվում է ոչ այնքան գրավիչ կամ էլ միջին պարտավորությունների երկիր:

Շվեյցարական բանկերի կոնֆեդերացիայի հարաբերությունների մեթոդին կարելի է ավելացնել նաև Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կողմից մշակված հարաբերությունը: Դա ամենից առաջ վերաբերում է երկրի արտաքին պարտքի և ՀՆԱ-ի հարաբերությանը: Համաձայն այդ հարաբերության՝ օտա-

<sup>1</sup> Նույնը, էջ 289:

րերկրյա ներդրողները երկիրը գնահատում են դրական, երբ երկրի արտաքին պարտքի մեծությունը չի գերազանցում ՀՆԱ-ի մեծությամբ կամ էլ չի գերազանցում ՀՆԱ-ն ավելի քան 10%:

Այդ ամենի կողքին օտարերկրյա ներդրողները մեծ ուշադրություն են դարձնում նաև երկրի քաղաքական ու սոցիալական կայունության վրա:


Այդուհանդերձ վերոհիշյալ հարաբերությունները չպետք է դիտարկել որպես երկրի արտաքին պարտքի մարման կարողությունները գնահատելու անվիճելի միջոցներ: Սակայն դրանք տալիս են անհրաժեշտ մակարդակի պատկերացումներ օտարերկրյա ներդրումների ներգրավման մասին՝ տվյալ երկրի առկա կարողությունների մասին: Հասկանալի է, որ այդ ցուցանիշները տվյալ երկրի տնտեսության արդյունավետության գնահատման ուղղակի ցուցանիշներ չեն, սակայն բարձր արդյունավետություն ունեցող տնտեսությունը միայն կարող է բավարարել այդ հարաբերությունների պահանջները:

Քանի որ օտարերկրյա վարկերը պետք է վերադարձնել նախորդ կողմը՝ տոկոսներով հանդերձ, հետևաբար անհրաժեշտ է ապահովել դրանց օգտագործման բացառիկ արտադրողական և արդյունավետության բարձր մակարդակ: Այլ կերպ ասած՝ տվյալ երկիրը կարող է ապավինել օտարերկրյա ներդրումների օգտագործմանը, քանի դեռ դրա կապիտալի սահմանային արդյունավետությունը մեծ է փոխառության սահմանային արժեքից (այսինքն՝ այն տոկոսադրույքից, որի դեպքում միջազգային կապիտալի շուկայից կարելի է վերցնել ֆինանսական միջոցներ՝ ներառյալ միջազգային շուկայի տոկոսադրույքի և տվյալ երկրում գործող տոկոսադրույքի տարբերությունը): Որքան արդյունավետ օգտագործվեն այդ ներդրումները, այնքան մեծ կլինի տարբերության արժեքը:

Այսպիսով՝ ըստ վերը նշված դատողությունների՝ օտարերկրյա փոխառությունների (վարկերի) հարաբերական հնարավոր կամ օպտիմալ մակարդակի պահպանումը մի կողմից և ընթացիկ հաշվեկշռի գործառնությունների հնարավոր կամ օպտիմալ մակարդակի պահպանումը մյուս կողմից, որպես արդյունավետության ֆունկցիա, կարելի է պատկերել հետևյալ երկու գրաֆիկների միջոցով:


**Գրաֆիկ 1**

**Օտարերկրյա փոխանցումների և ընթացիկ հաշիվների օպտիմալ մակարդակի պահպանումը**



*Գրաֆիկ 2*

**Օտարերկրյա փոխանցումների և ընթացիկ հաշիվների օպտիմալ մակարդակի պահպանման անհրաժեշտությունը**



Որտեղ՝

ՀՆԱ<sup>օգտ.</sup> - համախառն ներքին արդյունքի օգտագործում, երբ երկիրը չի օգտագործում օտարերկրյա ներդրումներ,

ՀՆԱ<sup>արտ.</sup> - համախառն ներքին արդյունքի արտադրություն, երբ երկրում չեն օգտագործվում օտարերկրյա ներդրումներ,

ՀՆԱ<sup>օգտ<sup>1</sup></sup> - համախառն ներքին արդյունքի օգտագործում, երբ զարգացման համար օգտագործվում են օտարերկրյա ներդրումներ,

ՀՆԱ<sup>արտ<sup>1</sup></sup> - համախառն ներքին արդյունքի արտադրություն, երբ օգտագործվում են օտարերկրյա ներդրումներ:

1-ին գրաֆիկը ցույց է տալիս թե՛ մեկ և թե՛ մյուս հնարավորության պահպանման մակարդակը, իսկ 2-րդ գրաֆիկը՝ այդպիսի հնարավորությունների պահպանման անհնարինությունը:

Բարձր արդյունավետության այդ և միևնույն պահին (t) արտադրված ՀՆԱ-ի կորը (ՀՆԱ-արտ) ներքևից հատում է օգտագործված համախառն ներքին արդյունքի կորը (ՀՆԱ -օգտ), երբ տնտեսության զարգացման համար օգտագործվում են օտարերկրյա ներդրումներ:

Ժամանակային միջակայքով (0-), երբ ՀՆԱ-արտ կորը գտնվում է ՀՆԱ- օգտ կորից ներքև, վճարային հաշվեկշռում ձևավորվում է բացասական մնացորդ: Է կետից հետո երկիրն ի վիճակի չէ մարել իր պարտավորությունները: Տվյալ դեպքում օտարերկրյա ներդրումների օգտագործումը տնտեսության զարգացման համար օգտակար է, որովհետև դա թույլ է տալիս հասնելու արդյունավետության, որը միայն սեփական, ներքին ներդրումներով ձեռք բերել հնարավոր չէ:

Ի տարբերություն 1-ին գրաֆիկի, 2-րդ գրաֆիկում (ցածր արդյունավետության նկատառումով) արտադրված համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ-արտ) կորը, երբ տնտեսության զարգացման համար օգտագործվում են օտարերկրյա ներդրումներ, ներքևից կրկին չի հատում օգտագործված համախառն ներքին արդյունքի կորը (ՀՆԱ-օգտ): Տվյալ դեպքում միշտ առկա է վճարային հաշվեկշռի բացասական մնացորդ: Տվյալ ժամանակաշրջանում անբավարար արդյունավե-

տության պատճառով նկատելի է դառնում արտաքին պարտքի «հուսիճային» աճ, որի հետ գործում է տնտեսությունը, այդ թվում՝ նաև օբյեկտները, որոնք զարգացել են օտարերկրյա ներդրումների հաշվին: Հենց 2-րդ գրաֆիկն է ցույց տալիս, թե որքան կարևոր է տնտեսության արդյունավետ գործունեության հարցը: Այդ գրաֆիկը արտացոլում է, որ օտարերկրյա ներդրումները ինքնաբերաբար չեն կարող որոշել տնտեսական աճի հարցերը: Որքան էլ որ կարևոր լինի օտարերկրյա ներդրումներով տնտեսության ապահովման հարցը, կրկնակի կարևոր է այդ ներդրումների արտադրողաբար և արդյունավետ օգտագործումը: Ներդրումները կարող են լինել բացառիկ բարիք, միաժամանակ կարող են դառնալ նաև երկրի տնտեսական կախվածության պատճառ: 2-րդ գրաֆիկը միաժամանակ ցույց է տալիս, որ ցանկացած երկիր կարող է կատարել մեծ քանակի արտաքին պարտք նույնիսկ այն դեպքում, երբ երկրում բացակայում են արժույթի չարաշահումներ, գողություն և կաշառակերություն: Այդպիսի պարտք կարող է կուտակվել նաև այն պատճառով, երբ տնտեսության գործունեության արդյունավետությունը անթույլատրելի ցածր մակարդակում է:

Եթե ներքին խնայողությունների մակարդակը բավարար չէ տնտեսության վերակառուցման ու զարգացման համար և այդ պակասորդը լրացվում է ոչ թե օտարերկրյա վարկերի, այլ ուղղակի ներդրումների միջոցով, ապա բարձր արդյունավետության ապահովման գործընթացը ընկնում է օտարերկրյա ներդրողների ուսերին: Սակայն օտարերկրյա ներդրումները ևս չի կարելի համարել բացարձակ բարիք: Դեռևս Միլտոն Ֆիրդմենը, նկատի ունենալով այդ հանգամանքը, բազմիցս զգուշացրել է, որ ձեռնարկությունները օտարերկրացիներին վաճառելը նպատակահարմար չէ երկու պատճառով: Առաջին՝ վաճառքը կարող է տեղի ունենալ ցածր գներով, երկրորդ՝ քաղաքական տեսակետից երկարաժամկետ պլանում հնարավոր չէ արտադրության միջոցների զգալի մասը օտարերկրյա ներդրողների ձեռքին երաշխավորված համարել: Օտարերկրացիները, ընդունելով Ֆիրդմենը, ներդրումներ կատարում են ամենից առաջ ելնելով իրենց շահերից: Հետևաբար յուրաքանչյուր երկիր, այդ թվում՝ նաև Հայաստանը պետք է թույլ տա ազատ ներդրումների ներհոսք միայն այն պայմանով, թե որքան է այն նպաստում տնտեսական աճին ու զարգացմանը: Դրա հետ մեկտեղ՝ Հայաստանում օտարերկրյա շահավետ ներդրումները խթանելու համար անհրաժեշտ է զգալիորեն կատարելագործել օրենսդրական դաշտը, հարկային քաղաքականությունը, պետական այրերի կողմից խոչընդոտների վերացումը և այլն:

## ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածը նվիրված է ՀՀ անցումային ժամանակաշրջանի ներդրումային քաղաքականության և տնտեսական աճի հիմնախնդիրներին: Լուսաբանվում են ինչպես ներքին, այնպես էլ օտարերկրյա ներդրումների դերը և անհրաժեշտությունը կայուն և բարձր տեմպերով տնտեսական աճի ապահովման համար: Առաջարկվում են հարկային, վարկային քաղաքականության կատարելագործում և իրավական միջավայրի կարգավորում:

**АННОТАЦИЯ****ОВСЕПЯН В. – ИНВЕСТИЦИИ И ЭКОНОМИЧЕСКИЙ РОСТ В АРМЕНИИ**

Статья посвящена проблемам инвестиционной политики и экономического роста в переходный период. Обсуждается роль и необходимость как отечественных, так и иностранных инвестиций в плане обеспечения стабильных и высоких темпов экономического роста. Предлагаются меры по совершенствованию налоговой, кредитной политики и упорядочению правовой среды.

**SUMMARY****HOVSEPYAN V. – INVESTITIONS AND ECONOMIC GROWTH IN ARMENIA**

The article deals with the problems of investment policy and economic growth in transition period. The role and necessity of both domestic and foreign investment in ensuring the stable and rapid economic growth is discussed. Measures to develop fiscal, monetary regulation and legal environment are suggested.

ԲԱԺԻՆ III

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**



**ԱՐՄԵՆԱԿ ԴԱՐԲԻՆՅԱՆ**

*տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
 77 կենտրոնական բանկի խորհրդի անդամ,  
 էլ. փոստ՝ armenak.darbinyan@cba.am*

**ՄԴԵՐ ԱՐԱԲՅԱՆ**

*77 կենտրոնական բանկի ֆինանսական համակարգի  
 կարգավորման վարչության պետ  
 էլ. փոստ՝ mher.abrahamyan@cba.am*

**ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ  
 ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ**

Համաշխարհային վերջին ֆինանսատնտեսական ճգնաժամը ապացուցեց այն ակնհայտ իրողությունը, որ կայուն բանկային համակարգը առողջ տնտեսության գրավականն է, և բանկային համակարգում առաջացող խնդիրները ակնթարթային արագությամբ իրենց արտացոլումն են գտնում տնտեսության իրական հատվածում՝ խոչընդոտելով վերջինիս զարգացմանը և նույնիսկ դառնալով տնտեսության անկման պատճառ: Իսկ բանկային համակարգի կայուն զարգացումը իր հերթին պայմանավորված է արդյունավետ կարգավորման և վերահսկողության դաշտի առկայությամբ, բանկերում ռիսկերի կառավարման գործում մեխանիզմների ներդրմամբ և կիրառմամբ:

Ռիսկերի ոչ արդյունավետ կառավարումը դիտարկվում է որպես վերջին ֆինանսատնտեսական ճգնաժամի հիմնական պատճառներից մեկը: Չնայած այն հանգամանքին, որ ճգնաժամի ընթացքում մեծ կորուստներ կրած ֆինանսական կազմակերպություններից շատերը ներդրել էին ռիսկերի կառավարման զարգացած համակարգեր, այնուամենայնիվ դրանցից շատերը չկարողացան օպերատիվ կերպով արձագանքել մակրոմիջավայրում տեղի ունեցող փոփոխություններին, քանի որ հիմնականում նախատեսված էին բարենպաստ միջավայրում տեղի ունեցող զարգացումների համար՝ անտեսելով հնարավոր ռիսկերը:

Ռիսկերի կառավարման համակարգում առկա բացթողումների գերակշիռ մասը կապված էր ռիսկերի թերագնահատման, որոշ ղեկավարներ ունեցնող անտեսման հետ: Հատկանշական է, որ մինչև ճգնաժամը ֆինանսական կազմակերպություններից շատերը, ունենալով սթրես թեստեր իրականացնելու գործիքակազմ, անիմաստ էին համարում դրանց կիրառումը՝ պատճառաբանելով, որ իրենց կազմակերպությունները շատ մեծ են, որպեսզի ձախողվեն (Too big to fail): Հիմնականում շեշտը դրվում էր նախկինում տեղի ունեցած իրադարձությունների վրա, և անտեսվում էին ապագայում սպասվող հնարավոր բացասական սցենարները: Սթրես թեստերի կիրառման արդյունքում հնարավոր կլիներ կանխատեսել իրադարձությունների հնարավոր զարգացումները և համապատասխան քայլեր ձեռնարկել դրանց անցանկալի ազդեցությունը նվազեցնելու ուղղությամբ: Ուստի արդյունավետ ռիսկերի կառավարումը ենթադրում է առավել մեծ շեշտա-

դրույթների կատարումն այնպիսի իրադարձությունների վրա, որոնք կարող են տեղի ունենալ:

Ռիսկերի կառավարման ձախողումը չի կարելի վերագրել որևէ կոնկրետ հանգամանքի. այն պայմանավորված էր մի շարք գործոններով: Տվյալ գործոնները վերլուծելիս անհրաժեշտ է դիտարկել բոլորը միասին, քանի որ դրանք անմիջականորեն կապված են միմյանց հետ, և դրանցից որևիցե մեկի փոփոխությունը հանգեցնում է մյուսների փոփոխությանը, որոնց համալիր փոփոխությունն իր հերթին բերում է անկառավարելի հետևանքների: Որպես ռիսկերի կառավարման գործընթացի ձախողման հիմնական գործոններ՝ կարելի է առանձնացնել հետևյալները.

1. *Շուկայում ուժեղ մրցակցության առկայություն:* Ռիսկերի ոչ արդյունավետ կառավարման պատճառներից մեկը ֆինանսական շուկայում ուժեղ մրցակցության առկայությունն է: Հաճախ ֆինանսական կազմակերպությունները ստիպված են լինում ծավալել ռիսկային գործունեություն կամ կնքել բարձր ռիսկեր պարունակող գործարքներ, որպեսզի հնարավոր լինի դիմակայել շուկայում գոյություն ունեցող ուժեղ մրցակցային ճնշումներին՝ առավել հաճախ դիմելով չարդարացված չափազանց ռիսկային գործունեության<sup>1</sup>:

2. *Վարձատրություն:* Ռիսկերի կառավարման ձախողման պատճառներից մեկն էլ ֆինանսական կազմակերպությունների կողմից աշխատակիցներին, մասնավորապես ռիսկերի ստանձնման համար պատասխանատու անձանց բարձր աշխատավարձեր և բոնուսներ սահմանելն է՝ կախված կազմակերպության շահութաբերության մակարդակից: Հիմնական խնդիրն այն է, որ աշխատակիցներից շատերը բարձր բոնուսներ ստանալու ակնկալիքով գնում են չարդարացված ռիսկերի՝ նպատակ հետապնդելով կարճաժամկետ ժամանակահատվածում ապահովել բարձր շահույթ: Վերջինս առաջացնում է բարոյական ռիսկ (moral hazard), քանի որ գործարքներ կնքելիս շեշտը դրվում է ոչ թե երկարաժամկետ հաջողության, այլ կարճաժամկետում բարձր շահույթ ստանալու վրա՝ ի հաշիվ ռիսկային գործունեության<sup>2</sup>:

3. *Ռիսկի թերագնահատում:* Ֆինանսական ինստիտուտների կողմից վարկեր տրամադրելիս վարկառուի ռիսկայնության թերագնահատումը և վարկառուի վարկունակության գնահատման գործընթացի անհարկի պարզեցումը ռիսկերի կառավարման ձախողման հիմնական պատճառներն են: Վարկունակության գնահատման գործընթացը, լինելով ժամանակատար և աշխատատար ընթացակարգ, մեծացնում է բանկի ծախսերը՝ միևնույն ժամանակ չապահովելով տեսանելի օգուտներ: Մյուս կողմից՝ վարկունակության գնահատման գործընթացի կրճատումը և պարզեցումը հնարավորություն են տալիս ընդլայնել վարկային պորտֆելը՝ առանց հաշվի առնելու վարկերի որակը, ինչն էլ միջավայրի փոփոխությունների պարագայում հանգեցնում է խոշոր կորուստների:

4. *Ֆինանսական շուկայի և ֆինանսական գործիքների բարդություն:* Ռիսկերի կառավարման ձախողումը պայմանավորված է նաև ֆինանսական շուկայի բարդությամբ: Մասնավորապես շուկայում իրականացվող գործառնությունների միջև գոյություն ունեցող փոխադարձ կապը, բարդ կառուցվածք ունեցող գոր-

<sup>1</sup> <http://www.nottingham.ac.uk/business/forum/documents/researchreports/paper65.pdf>

<sup>2</sup> <http://www.nottingham.ac.uk/business/forum/documents/researchreports/paper65.pdf>

ծարքները, անկայուն, մշտապես փոփոխվող արտաքին միջավայրը ավելի են բարդացնում ֆինանսական շուկայի իրավիճակը: Ֆինանսական շուկայում առկա նորանմուծությունները առաջ են բերում ռիսկերի կառավարման բարդ գործիքակազմ, և հետևաբար անհրաժեշտություն է առաջանում դրանք հարմարեցնել ֆինանսական շուկայի ընթացիկ իրավիճակին: Շուկայի բարդությամբ պայմանավորված՝ առաջանում են ֆինանսական շուկայի մասնակիցների կողմից տրված և ներգրավված միջոցների ժամկետայնությունների, արժույթների և այլ պարամետրերի տարբերություններ, որոնք պարունակում են հսկայական ռիսկեր<sup>1</sup>:

5. *Կորպորատիվ կառավարում:* Ռիսկերի կառավարման ձախողման պատճառներից դիտարկվում է նաև ռիսկերի կառավարման գործառույթի առանձնացումը կազմակերպության հիմնական գործառույթներից: Մի շարք խոշոր ֆինանսական կազմակերպությունների կողմից ստեղծվել են ռիսկերի կառավարման առանձին ստորաբաժանումներ, որոնք, սակայն, մեկուսացված են եղել կազմակերպության ընդհանուր գործունեությունից և քիչ ազդեցություն են ունեցել կատարված գործարքների վրա<sup>2</sup>: Այս առումով պետք է նշել խորհրդի՝ որպես բանկի կարևորագույն կառավարման մարմնի թերացումների մասին, որը գրեթե մասնակցություն չի ունեցել ռիսկերի կառավարման գործընթացին՝ երբեմն նույնիսկ անտեղյակ լինելով, թե որքանով է բանկի կողմից ստանձնած ռիսկի փաստացի մակարդակը գերազանցում բանկի համար ընդունելի համարվող ռիսկի ախորժակը:

Ռիսկերի կառավարման ձախողման հետևանքով ստեղծված իրավիճակը ենթադրում է բարելավման ուղիների որոնման անհրաժեշտություն և ռիսկերի կառավարման արդյունավետ գործիքակազմի սահմանում: Յաճախ ֆինանսատնտեսական ճգնաժամի ժամանակ ի հայտ եկած խնդիրները վերագրվում են կարգավորման դաշտում առկա բացթողումներին: Մասնավորապես ճգնաժամի ընթացքում ֆինանսական շուկաներում տիրող իրավիճակը, պայմանավորված տարատեսակ ածանցյալ գործիքների կիրառությամբ, միշտ չէ, որ հասկանալի էր կարգավորողների համար և առաջացնում էր մի շարք դժվարություններ գնահատելու և վերլուծելու համար ստեղծված քառասյին իրավիճակում: Նախկինում տարածված (Too big to fail) տերմինը կարելի է ասել փոխարինվեց կամ լրացվեց այնպիսի նոր տերմինով, ինչպիսին է «Too big to supervise». Վերջինիս իմաստն այն է, որ ֆինանսական կազմակերպությունների գերմեծացման արդյունքում դրանց գործունեությունը դարձել է դժվար կառավարելի և չափազանց դժվար վերահսկելի:

Ֆինանսատնտեսական ճգնաժամի ժամանակ բանկային համակարգի կարգավորման և վերահսկողության հետ կապված թերությունների բացահայտումը տվյալ դաշտում փոփոխություններ և լրացումներ իրականացնելու անհրաժեշտություն առաջացրեց: Փոփոխություններ իրականացնելու նախաձեռնությամբ հանդես եկավ Բանկային վերահսկողության Բազելյան կոմիտեն՝ մշակելով և միջազգային հանրությանը ներկայացնելով Բազել III փաստաթուղթը, որը եկավ ոչ թե փոխարինելու, այլ լրացնելու Բազել II-ին: Բազել III-ը սահմանում է ավելի

<sup>1</sup> <http://www.nottingham.ac.uk/business/forum/documents/researchreports/paper65.pdf>

<sup>2</sup> <http://www.europeanfinancialreview.com/?p=6507>

խիստ պահանջներ կապիտալի՝ որպես ռիսկերի կլանման առաջնային աղբյուրի նկատմամբ՝ դրանով իսկ խթանելով ռիսկերի ավելի արդյունավետ կառավարումը: Բազել III-ը, ըստ էության, ուղղված է շտկելու և լրացնելու կարգավորման և վերահսկողության ոլորտում առկա բացթողումները, թերություններն ու խնդիրները: Բազել III-ը կապիտալին, իրացվելիությանը և բանկային վերահսկողության այլ ոլորտներին առնչվող միջազգայնորեն ընդունված պահանջներում փոփոխություններ կատարելու առաջարկների ամբողջություն է: Այն ենթադրում է իրացվելիության բարձրացման, լեերիջի նվազեցման, բանկի կապիտալի նկատմամբ ավելի խիստ պահանջների սահմանման միջոցով բանկային համակարգի կայունության ամրապնդում և ռիսկայնության նվազեցում:

Հակիրճ անդրադառնալով Բազել III-ով առաջարկվող հիմնական փոփոխություններին, որոնք ուղղված են բանկային գործունեության կարգավորման դաշտի բարելավմանը: Բազել III-ը սահմանում է կապիտալի որակի և կառուցվածքի նկատմամբ նոր պահանջներ: Այն ենթադրում է բարձր որակի կապիտալի տեսակարար կշռի ավելացում և խստացում է կապիտալից կատարվող նվազեցումները:

Բազել III-ը, նպատակ ունենալով կրճատել պրոցիկլայնությունը և բարելավել բանկային համակարգի կայունությունը, սահմանել է կապիտալի 2 նոր բուֆերներ՝ կապիտալի պահպանման և հակացիկլիկ բուֆերներ: Կապիտալի պահպանման բուֆերը ենթադրում է նորմատիվային կապիտալի աճ 2.5% չափով: Այլ կերպ ասած՝ բանկերից պահանջվում է ձևավորել կապիտալի ավելցուկային բուֆերներ ոչ ճգնաժամային իրավիճակներում, որոնք բանկի կողմից կարող են օգտագործվել ճգնաժամային իրավիճակներում:

Կապիտալի հակացիկլիկ բուֆերի ներդրման նպատակը ֆինանսական համակարգի կայունության ապահովումն է, ինչպես նաև ճգնաժամի պայմաններում իրական տնտեսության վարկավորման ծավալների կտրուկ կրճատումը և ֆինանսական ոլորտի խնդիրների տարածումը իրական հատվածում կանխելն է: Կապիտալի հակացիկլիկ բուֆերը կարող է սահմանվել ռիսկով կշռված ակտիվների 0-2.5% չափով՝ կախված վարկեր/ՅՆԱ տրենդից: Բուֆեր չի սահմանվում, եթե շեղումը տրենդից 2% է, և սահմանվում է 2.5%, եթե շեղումը կազմում է 10% և ավելի: Բուֆերների պահանջը խախտելու դեպքում բանկերը կենթարկվեն չբաշխված շահույթը բաշխելու (այդ թվում՝ բաժնետոմսերը բանկի նախաձեռնությամբ հետգնելու կամ աշխատակիցներին պարգևատրումներ վճարելու) սահմանափակումների:

Ֆինանսատնտեսական ճգնաժամի ընթացքում ֆինանսական կազմակերպություններից շատերը մեծ կորուստներ կրեցին, ինչը պայմանավորված էր չափից ավելի մեծ ծավալներով միջոցների ներգրավմամբ, որի պարագայում ակտիվների նույնիսկ անցան արժեզրկումը հսկայական կորուստների էր հանգեցնում: Ի լրումն կապիտալի համարժեքության պահանջի՝ Բազել III-ով սահմանվել է լեերիջի գործակից, որը սահմանափակում է ֆինանսական կազմակերպության կողմից ներգրավվող ակտիվների ծավալը՝ անկախ դրանց ներհատուկ ռիսկայնությունից: Մասնավորապես 3% լեերիջի գործակիցի դեպքում բանկի ակտիվները կարող են գերազանցել կապիտալը առավելագույնը 33.3 անգամ, ինչը սահմանափակում է բանկի ակտիվների անհարկի ուռճացումը, թեկուզ եթե ակտիվ-

ները, ըստ տարբեր մոդելներով հաշվարկված գնահատականների, ստացել են ցածր ռիսկի կշիռներ:

Հաջորդ ռիսկը, որին անդրադարձել է Բազելյան կոմիտեն և փորձել է սահմանել նոր կանոններ արդյունավետ կառավարելու համար, իրացվելիության ռիսկն է: Ընդ որում՝ Բազելյան կոմիտեն իր պատմության ընթացքում առաջին անգամ է սահմանում իրացվելիության նորմատիվներ, դրանց ընդունելի սահմանաչափեր և ընդհանրապես անդրադառնում է իրացվելիության ռիսկի կառավարման մեթոդաբանությանը: Իրացվելիության ռիսկի արդյունավետ կառավարման նպատակով Բազել III-ը առաջարկում է հետևյալ իրացվելիության նորմատիվները.

- Կարճաժամկետ իրացվելիության նորմատիվ (LCR), որի նպատակն է ապահովել, որպեսզի բանկը ձևավորի բավարար քանակությամբ բարձր իրացվելի միջոցներ, որոնք, հաշվի առնելով սթրեսային իրավիճակներում միջոցների ներհոսքն ու արտահոսքը, կարող են վերածվել կանխիկի և բավարարել բանկի իրացվելիության պահանջները 30-օրյա ժամանակահատվածում:
- Երկարաժամկետ իրացվելիության գործակից (NSFR), որի նպատակն է վերակառուցել բանկերի ակտիվների ֆինանսավորման կառուցվածքը՝ կարճաժամկետ ֆինանսական աղբյուրներից անցում կատարելով դեպի կայուն և երկարաժամկետ ֆինանսավորում: Նորմատիվը նախատեսված է բանկի ներգրավված և տեղաբաշխված միջոցների միջև ժամկետային ճեղքվածքը կրճատելու համար:

Ֆինանսատնտեսական ճգնաժամը բացահայտեց նաև մի շարք խնդիրներ՝ կապված կորպորատիվ կառավարման հետ: Ենթադրվում է, որ որոշակի առումով ռիսկերի կառավարման ձախողման պատճառը կորպորատիվ կառավարման բնագավառում առկա բացթողումներն են, այլ ոչ թե կապիտալի ոչ բավարար մակարդակը: Միջազգային նշանակություն ունեցող խոշոր բանկերի ձախողման դեպքերի ուսումնասիրումը ցույց տվեց, որ բանկերում առկա խնդիրները հաճախ չեն վերլուծվել բանկի խորհրդի կողմից: Խորհուրդը չի ունեցել բավարար որակավորում և գիտելիքներ ռիսկերի կառավարման ոլորտում, մինչդեռ բանկի ռիսկերի արդյունավետ կառավարման վերջնական պատասխանատուն հենց խորհուրդն է: Շատ դեպքերում բանկի խորհրդի դերը սահմանափակվել է ռիսկերի կառավարման ռազմավարության հաստատմամբ, սակայն գործնականում չի ստուգվել վերջինիս ներդրումը<sup>1</sup>:

Նպատակ ունենալով բարելավել ֆինանսատնտեսական ճգնաժամի ընթացքում բացահայտված կորպորատիվ կառավարման ոլորտում առկա խնդրահարույց իրավիճակը՝ Բազելյան կոմիտեն անդրադարձել է նաև այս բնագավառում առկա խնդիրներին և բացթողումներին ու առաջարկել է համապատասխան բարելավման ուղիներ: Մասնավորապես սահմանվել է, որ բանկի խորհրդի անդամները պետք է լինեն և մնան որակավորված իրենց պաշտոնների համար, պարբերաբար պետք է վերապատրաստվեն և քաջատեղյակ լինեն բանկի գործունեությանն առնչվող հիմնահարցերին:

Նրանք պետք է՝

<sup>1</sup> <http://www.oecd.org/finance/financial-markets/42229620.pdf>

- հստակ պատկերացում ունենան կորպորատիվ կառավարման մեջ իրենց դերի մասին,
- ունակ լինեն կայացնելու որակյալ և օբյեկտիվ որոշումներ բանկի գործունեության վերաբերյալ:

Հատկանշական է, որ մինչև ճգնաժամը բանկերի շուրջ 33%-ը չի ունեցել ռիսկերի գծով կառավարիչ (chief risk officer)<sup>1</sup>: Ուստի Բազելյան կոմիտեի կողմից առաջարկվում է, որ բանկերում ստեղծվի անկախ ռիսկի կառավարման ստորաբաժանում՝ ներառյալ գլխավոր ռիսկերի կառավարիչ կամ դրան համարժեք մարմին, որը պետք է ունենա՝

- բավարար իրավասություններ,
- անկախություն,
- բավարար ռեսուրսներ,
- խորհրդի հետ չմիջնորդավորված շփում:

2007-2009 թթ. ֆինանսատնտեսական ճգնաժամի ի հայտ գալուն պես մեծ ուշադրություն դարձվեց նաև համաշխարհային ֆինանսական համակարգի կայունության համար վտանգ ներկայացնող համակարգային նշանակություն ունեցող բանկերի սնանկացման կանխման հարցին: Այս խնդրի լուծման նպատակով Բազել III-ով սահմանվեցին նոր մոտեցումներ համակարգային նշանակություն ունեցող բանկերի կարգավորման և վերահսկողության համար: Մասնավորապես կոմիտեի կողմից առաջարկվում է համակարգային նշանակություն ունեցող բանկերի կապիտալի համարժեքության նկատմամբ սահմանել ավելի խիստ պահանջներ: Նման մոտեցումը շատերի կողմից քննադատվում է այն պատճառաբանությամբ, որ համակարգային նշանակություն ունեցող բանկերի խնդիրը ոչ թե կապիտալի ցածր մակարդակն է, այլ իրար հետ սերտ փոխկապվածությունը և տնտեսության վրա ունեցած հսկայական ազդեցությունը, որը չի կարող կարգավորվել նոր սահմանված պահանջներով:

Գլոբալ նշանակություն ունեցող բանկերին (G-SIFI) բացահայտելու նպատակով Բազելյան կոմիտեն մշակել է մեթոդաբանություն, համաձայն որի՝ համակարգային նշանակությունը պետք է որոշվի՝ հաշվի առնելով բանկի անվճարունակության դեպքում ֆինանսական համակարգին և իրական հատվածին պատճառվող վնասի (ազդեցության) հնարավոր չափը և ոչ թե հավանականությունը, որ այդ բանկը կարող է անվճարունակ դառնալ: Բազելյան կոմիտեի կողմից սահմանված նոր պահանջները նպատակ ունեն նվազեցնել համակարգային նշանակություն ունեցող բանկերի անվճարունակ դառնալու հավանականությունը, ինչպես նաև նվազեցնել այդ բանկերի անվճարունակ դառնալու դեպքում բացասական ազդեցության չափերը կամ սահմանները:

Չնայած այն հանգամանքին, որ Բազել III-ով նախատեսվում է լրացնել ճգնաժամի ժամանակահատվածում ի հայտ եկած բացթողումները և կանխել դրանց հետագա կրկնումը, հարկ է մշել, որ Բազել III-ի ներդրումը ստացել է տարբեր գնահատականներ: Մասնավորապես որոշ մասնագետների կողմից նշվում են Բազել III-ի հետևյալ թերությունները, որոնք կարող են նվազեցնել արդյունավետությունը.

<sup>1</sup> [http://faculty.chicagobooth.edu/anil.kashyap/research/papers/lesson\\_for\\_fcic.pdf](http://faculty.chicagobooth.edu/anil.kashyap/research/papers/lesson_for_fcic.pdf)

• Բազել III-ով սահմանված կապիտալի պահանջների խստացումը կարող է խոչընդոտել տնտեսական ակտիվությանը՝ որոշակիորեն կրճատելով տնտեսության վարկավորման մակարդակը, հետևաբար խոչընդոտելով նաև տնտեսական աճին: Այս տեսակետի հիմքում ընկած է այն դատողությունը, որ ավելի շատ պետք է կարևորվի կապիտալի կառավարման որակը, քան դրա մակարդակը, քանի որ նույնիսկ կապիտալի բարձր մակարդակի դեպքում կապիտալի ոչ արդյունավետ կառավարումը կարող է հանգեցնել բացասական հետևանքների: Բացի այդ՝ Բազել III-ով կապիտալի վերասահմանումը չի լուծում ռիսկի կշիռների վրա հիմնված կապիտալի հաշվարկի հետ կապված խնդիրները: Այնուամենայնիվ, Բազել III-ի ներդրման դեպքում, հաշվի առնելով վերջինիս հակացիկլիկ բնույթը, և բացի ռիսկի կշիռների վրա հիմնված կապիտալի պահանջից՝ նաև լներիջի պահանջ սահմանելը, էապես նվազում է ապագայում ճգնաժամների ի հայտ գալու հավանականությունը, և հետևաբար բարձրանում է նաև կարգավորման դաշտի արդյունավետությունը:

• Որպես Բազել III-ի էական թերություն՝ նշվում է նաև այն, որ դրանով սահմանված պահանջները հաճախ հակասում են իրար: Մասնավորապես կապիտալի բուֆերների գծով սահմանված է, որ եթե բանկը գտնվում է ֆինանսապես վատ վիճակում, ապա իր բնականոն գործունեությունը շարունակելու համար կարող է օգտվել բուֆերներից: Սակայն բուֆերի օգտագործման դեպքում էլ բանկը կենթարկվի որոշակի սահմանափակումների<sup>1</sup>: Բայց պետք է նկատի ունենալ, որ սահմանափակումները հանդես են գալիս ոչ թե պատժամիջոցների տեսքով, այլ պարզապես կրճատում են շահույթի բաշխման հնարավորությունները՝ այն պահելով բանկի ներսում:

• Զամաձայն Բազել III-ի՝ բանկերը «լավ ժամանակներում» ձևավորում են կապիտալի հակացիկլիկ բուֆեր «վատ ժամանակներում» օգտագործելու համար: Զիմնական խնդիրն այն է, որ «լավ ժամանակների» կամ «վատ ժամանակների» սահմանումը սուբյեկտիվ է, և հետևաբար նման պահանջի առաջադրումը կարող է խնդիրներ առաջացնել<sup>2</sup>: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ Բազել III-ը այս առումով որոշակի ազատություն է տվել ազգային վերահսկողներին, որպեսզի վերջիններս, ելնելով իրենց տնտեսության առանձնահատկություններից, հայեցողականություն ցուցաբերեն «լավ» և «վատ ժամանակների» որոշման հարցում:

• Բազել III-ը նպատակ է հետապնդում, լրացումներ և փոփոխություններ իրականացնելով Բազել II-ում, կանխել ֆինանսատնտեսական ճգնաժամի կրկնությունը: Սակայն Բազել III-ով սահմանված պահանջների ամբողջական ներդրումը նախատեսվում է 10 տարվա ընթացքում, հետևաբար ֆինանսական շուկաներում Բազել III-ով սահմանված պահանջները ամբողջապես կկիրառվեն 10 տարի հետո, որը բավականին երկար ժամանակահատված է, և նշված ժամանակահատվածում չի բացառվում տնտեսական ճգնաժամի ժամանակ տեղի ունեցած իրադարձությունների կրկնությունը<sup>3</sup>: Այնուամենայնիվ, Բազել III-ի՝ ավելի կարճ ժամկետներում ներդրումն էլ կնշանակել դեռևս ճգնաժամի հետևանքները կրող համաշխարհային տնտեսության սահմանափակում նոր կանոններով, ինչը

<sup>1</sup> <http://www.abc.net.au/unleashed/3704426.html>

<sup>2</sup> <http://theconversation.com/why-basel-iii-wont-protect-banks-from-another-global-crisis-1625>

<sup>3</sup> <http://247wallst.com/banking-finance/2010/09/13/why-basel-iii-wont-work/>

կհանգեցնել տնտեսական անկման և բանկերի կողմից նոր պահանջներին բավարարելու անկարողության:

Ստորև բերված աղյուսակներում ներկայացված են Բազել III-ի պահանջների ուժի մեջ մտնելու ժամանակացույցը, ինչպես նաև տարբեր երկրների կողմից Բազել III-ի ներդրման ուղղությամբ ձեռնարկված քայլերը:

**Աղյուսակ 1**

**Բազելյան կոմիտեի կողմից ներկայացված առաջարկությունները ուժի մեջ դնելու ժամանակացույց**

	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019
ԼՆԵՐԻՋԻ ԳՐԹԱԿԻԿ	Վերահսկողական մոնիթորինգ	Չուգահեռ կիրառում 01/01/2012-01/01/2017 Բացահայտում՝ սկսած 01/01/2015						Տեղափոխում Pillar 1	
Նվազագույն CET1			3.5%	4%	4.5%	4.5%	4.5%	4.5%	4.5%
Կապիտալի պահպանման բուֆեր						0.625%	1.25%	1.875%	2.50%
CET1+Կապիտալի պահպանման բուֆեր			3.5%	4%	4.5%	5.125%	5.75%	6.375%	7%
CET1-ից նվազեցումներ				20%	40%	60%	80%	100%	100%
Նվազագույն Tier1			4.5%	5.5%	6%	6%	6%	6%	6%
Նվազագույն ընդհանուր կապիտալ			8%	8%	8%	8%	8%	8%	8%
Կապիտալի գործիքներ, որոնք այլևս չեն համարվում Tier1-ի կամ Tier2-ի տարր			Դուրսգրում 10 տարվա ընթացքում՝ սկսած 2013 թ.						
LCR	Ուսումնասիրության շրջան				Նվազագույն ստանդարտի սահմանում				
NFSR	Ուսումնասիրության շրջան							Նվազագույն ստանդարտի սահմանում	

Աղբյուրը՝ <https://www.cba.am/AM/panalyticalmaterialsresearches/Basel%20III-Final.pdf>

*Աղյուսակ 2*

**Բազել III-ի ներդրումը՝ ըստ երկրների (2013 թվականի մարտի դրությամբ)**

Երկրներ	Բազել III-ի ներդրումը	Ներդրման ծրագիրը
Արգենտինա	Ընթացքի մեջ է	<ul style="list-style-type: none"> <li>2013թ. փետրվարին հրապարակվել է Pillar 3-ի վերջնական տարբերակը, որը կդառնա պարտադիր կատարման համար 2013թ. դեկտեմբերի 31-ից:</li> <li>2013թ. հունվարին Pillar 1-ը և 2-ը կդառնան պարտադիր կատարման համար:</li> </ul>
Բելգիա	Ընթացքի մեջ է	Հետևում է ԵՄ օրինակին:
Բրազիլիա	Ընթացքի մեջ է	2013թ. մարտի 1-ին հրապարակվել է կարգավորումների վերջնական տարբերակը, որը կատարման համար կդառնա պարտադիր 2013թ. հոկտեմբերի 1-ից:
Կանադա	Ավարտվել է	2012թ. դեկտեմբերի 10-ին հրապարակվել են վարկային ռիսկի գնահատման ճշգրտումները, որոնք կդառնան պարտադիր 2014թ. հունվարի 1-ից:
Չինաստան	Ավարտվել է	Նախատեսվում է հրապարակել մեկ փոխառուի գծով ռիսկին վերաբերող կարգավորումները:
Ֆրանսիա	Ընթացքի մեջ է	Հետևում է ԵՄ օրինակին:
Գերմանիա	Ընթացքի մեջ է	Հետևում է ԵՄ օրինակին:
Հոնկ-Կոնգ	Ավարտվել է	<ul style="list-style-type: none"> <li>2013թ. հունվարի 1-ից ուժի մեջ են մտել կապիտալի նվազագույն պահանջները:</li> <li>2014թ. նախատեսվում է հրապարակել կապիտալի բուֆերներին առնչվող կարգավորումները:</li> <li>2013թ. հունիսի 30-ից ուժի մեջ են մտել բացահայտման կանոնները:</li> </ul>
Հնդկաստան	Ավարտվել է	<ul style="list-style-type: none"> <li>Հրապարակվել են վարկային ռիսկի գնահատման ճշգրտումները, որոնք կդառնան պարտադիր կատարման համար 2014թ. հունվարից:</li> <li>2013թ. հունվարի 10-ին հրապարակվել են կապիտալի պահանջները մեկ փոխառուի գծով ռիսկի նկատմամբ, և վերջնական կարգավորումները շուտով կներդրվեն:</li> </ul>
Ինդոնեզիա	Ընթացքի մեջ է	2012թ. հունիսին հրապարակվել է Բազել III-ով կատարվող կարգավորումների նախնական տարբերակը:
Իտալիա	Ընթացքի մեջ է	Հետևում է ԵՄ օրինակին:
Ճապոնիա	Ավարտվել է	Կապիտալի պահպանման և հակացիկլիկ բուֆերներին առնչվող կարգավորումները նախատեսվում են հրապարակել 2014/15թթ.:
Կորեա	Ընթացքի մեջ է	2012թ. սեպտեմբերի 27-ին հրապարակվել են նախնական կարգավորումները: Վերջնական կարգավորումները պատրաստ են, և նախատեսվում է ներդնել այն ժամանակ, երբ վերջինս կներդրվի երկրների մեծամասնության կողմից:
Լյուքսեմբուրգ	Ընթացքի մեջ է	Հետևում է ԵՄ օրինակին:
Մեքսիկա	Ավարտվել է	Մեկ փոխառուի գծով ռիսկի հետ կապված կարգավորումները դեռ չեն հրապարակվել:
Նիդեռլանդներ	Ընթացքի մեջ է	Հետևում է ԵՄ օրինակին:
Ռուսաստան	Ընթացքի մեջ է	<ul style="list-style-type: none"> <li>2013թ. փետրվարին հրապարակվել են կապիտալի սահմանման և կապիտալի համարժեքության նորմատիվի վերջնական կարգավորումները:</li> </ul>

		<ul style="list-style-type: none"> <li>• 2013թ. նախատեսվում է հրապարակել լեռնիցի գործակցին առնչվող նախնական կարգավորումները:</li> <li>• 2013թ. ապրիլ-հոկտեմբեր ժամանակահատվածում նախատեսվում է ներդնել կապիտալի նկատմամբ նոր պահանջներ:</li> </ul>
Սինգապուր	Ավարտվել է	Հրապարակվել է մեկ փոխառուի գծով ռիսկին առնչվող կարգավորումները, որոնք ուժի մեջ են մտել 2013թ. հուլիսի 1-ից:
Իսպանիա	Ընթացքի մեջ է	Հետևում է ԵՄ օրինակին:
Շվեդիա	Ընթացքի մեջ է	Հետևում է ԵՄ օրինակին:
Շվեյցարիա	Ավարտվել է	Փոքր բանկերին թույլատրվել է «Շվեյցարիայի մոտեցման» զուգահեռ կիրառումը մինչև 2018թ.
Թուրքիա	Ընթացքի մեջ է	2013թ. փետրվարի 1-ից հրապարակվել են կապիտալի նկատմամբ պահանջների նախնական կարգավորումները: Կապիտալի բուֆերներին առնչվող կարգավորումները նախատեսվում է հրապարակել 2013թ. ընթացքում:
Միացյալ Թագավորություն	Ընթացքի մեջ է	Հետևում է ԵՄ օրինակին
Ամերիկայի Միացյալ Նահանգներ	Ընթացքի մեջ է	Բազել 2.5-ով և Բազել 3-ով սահմանված կարգավորումները պետք է կորոդինացվեն Dodd-Frank-ի կարգավորմանը համապատասխան:
Եվրոպական միություն	Ընթացքի մեջ է	Եվրոպական խորհրդարանը և ԵՄ խորհուրդը եկել են համաձայնության Բազել 3-ը ներդնելու և կորպորատիվ կառավարման և վարձատրության կառուցվածքի բարելավման շուրջ: Նախատեսվում է, որ դրանց առնչվող կարգավորումները կդառնան պարտադիր կատարման համար 2014թ. հունվարի 1-ից:

Աղբյուրը՝ <http://www.bis.org/publ/bcbs249.pdf>

Հայաստանի Հանրապետությունում բանկային համակարգի կարգավորման դաշտը մշտապես ուղղված է եղել միջազգային լավագույն ստանդարտներին համապատասխանեցմանը, ավելին՝ Հայաստանում բանկային գործունեության կարգավորումը նախատեսել է որոշակիորեն ավելի խիստ ստանդարտներ, քան առաջարկվել է միջազգային կարգավորող մարմինների կողմից: Նման մոտեցման արդյունքում բանկային համակարգում ձևավորվել են որակյալ կապիտալի տարրեր, ինչն իր հերթին նպաստել է բանկային համակարգի կայունության ամրապնդմանը և բանկային համակարգի նկատմամբ վստահության բարձրացմանը:

ՀՀ կենտրոնական բանկում Բազել III-ի ներդրման մասով արդեն տարվում են աշխատանքներ և կատարվում են համապատասխան վերլուծություններ ու ուսումնասիրություններ՝ զնահատելու համար նոր կանոնների ներդրման ազդեցությունը բանկային համակարգի և տնտեսության իրական հատվածի վրա: Ըստ կատարված վերլուծությունների՝ Բազել III-ի ներդրումը էական ազդեցություն չի ունենա թե՛ կապիտալի համարժեքության նորմատիվի փաստացի մակարդակի նվազման, թե՛ տնտեսության վարկավորման ծավալների կրճատման առումով՝ հաշվի առնելով ինչպես ՀՀ-ում արդեն իսկ գործող բավականին խիստ նորմատի-

վային դաշտի առկայությունը, այնպես էլ կապիտալի համարժեքության բավարար մակարդակը: Նշենք նաև, որ վերջերս Կենտրոնական բանկի կողմից փոփոխություններ են կատարվել բանկերի ներքին հսկողության նկատմամբ ներկայացվող նվազագույն պայմանները սահմանող կարգում, որի համաձայն՝ սահմանվել են նոր՝ առավել խիստ պահանջներ բանկերում ռիսկերի կառավարման գործառույթի, ինչպես նաև բանկի կողմից ստանձնած ռիսկերին համարժեք կապիտալ ձևավորելու նկատմամբ:

Ինչ վերաբերում է Բազել III-ի կողմից առաջարկվող իրացվելիության նորմատիվներին, ապա դրանք որոշակիորեն տարբերվում են ՀՀ բանկային համակարգում ներկայումս կիրառվող նորմատիվներից, որոնք ներդրվել են Հայաստանում դեռևս 90-ական թվականների կեսերին: Այս տարիների ընթացքում կիրառվող նորմատիվները ապացուցել են իրենց կենսունակությունը՝ բանկային համակարգի իրացվելիության ռիսկը պահելով կառավարելի մակարդակում: Բայց չնայած այդ հանգամանքին, նպատակահարմար է իրականացնել համեմատական վերլուծություններ Բազել III-ի և ՀՀ-ում կիրառվող նորմատիվների միջև, որից հետո հնարավոր կլինի որոշում կայացնել դրանց համադրման կամ նախապատվության վերաբերյալ:

Բազել III-ի կողմից առաջարկվող լներիջի սահմանափակումը ներկայումս կիրառական չէ Հայաստանի համար, քանի որ դրա մակարդակը Հայաստանում ցածր է և վտանգ չի ներկայացնում բանկային և ֆինանսական համակարգի համար:

Տեղական «Համակարգային նշանակություն ունեցող ֆինանսական կազմակերպությունների» կարգավորման առումով, թերևս, հիմնական ուշադրությունն անհրաժեշտ է սևեռել բանկային համակարգին, քանի որ ֆինանսական համակարգում այն գերիշխող դեր ունի (բանկային համակարգի ակտիվները կազմում են ամբողջ ֆինանսական համակարգի ակտիվների ավելի քան 90%-ը): Այս առումով անհրաժեշտ է մշակել համապատասխան մեթոդաբանություն, որը հնարավորություն կտա տարանջատելու և գնահատելու համակարգային նշանակություն ունեցող բանկերը և դրանց նկատմամբ կիրառելու առավել խիստ և ինտենսիվ կարգավորում ու վերահսկողություն:

Ընդհանրացնելով կարող ենք եզրակացնել, որ նույնիսկ ամենախոշոր և շահութաբեր ֆինանսական հսկաներ հանդիսացող կազմակերպություններում, որոնք կարող են իրենց թույլ տալ մշակել և ներդնել ռիսկերի կառավարման գերզարգացած և համալիր համակարգեր, ռիսկերի կառավարման գործառույթը անթերի չէ, ինչի արդյունքում խաթարվում է թե՛ տվյալ կազմակերպության բնականոն գործունեությունը, թե՛ ողջ ֆինանսական համակարգի կայունությունը: Բնականաբար, այս խնդրի առաջացման հարցում անմասն չեն նաև կարգավորող և վերահսկող մարմինները, որոնց դերը բանկերի ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգերի նկատմամբ համարժեք պահանջների սահմանման և այդ պահանջների պահպանման նկատմամբ արդյունավետ վերահսկողություն իրականացնելն է: Իսկ երբ և՛ բանկերը (միկրոմակարդակով), և՛ վերահսկող մարմինները (մակրո մակարդակով) թերանում կամ ձախողվում են ռիսկերի կառավարման գործընթացի իրենց գործառույթներում, տնտեսությունները բախվում են այնպիսի անկառավարելի երևույթի հետ, ինչպիսին էր վերջին ֆինանսատնտեսական ճգնաժամը կամ առնվազն անկայուն ֆինանսական վիճակը առանձին երկրներում: Ուստի անհրաժեշտ է, որպեսզի թե՛ մակրո, թե՛ միկրո մա-

կարողակով շեշտադրվի ռիսկերի կառավարման գործառույթի կարևորությունը, որն էլ իր հերթին կպահանջի մշտապես թարմացվող և արդիական մոտեցումների և մեթոդների կիրառում ռիսկերի կառավարման բնագավառում: Ընդ որում՝ նշված մոտեցումը պետք է կիրառվի մշտապես՝ անկախ այն հանգամանքից թե երկիրը կամ համաշխարհային տնտեսությունը իր զարգացման որ ցիկլում է գտնվում: Որպես կանոն, ռիսկերի կառավարման գործառույթին տրվող կարևորությունը բարձրանում է, երբ տնտեսությունը հայտնվում է սթրեսային իրավիճակում կամ ճգնաժամային դրությունը հաղթահարելուց հետո՝ սկզբնական շրջանում: Սակայն, երբ սկսվում են «լավ ժամանակները» ռիսկերի կառավարումը մղվում է երկրորդ պլան, և շեշտադրվում է գերշահույթ ապահովելու նպատակը: Հաշվի առնելով ռիսկի և շահույթի մակարդակի միջև առկա դրական կորելացիոն կապը՝ բարձր շահույթ ապահովելու ձգտումը հանգեցնում է ռիսկերի թերագնահատման ու անարդյունավետ կառավարման: Արդյունքում՝ համաշխարհային հանրությունը ականատես է լինում ֆինանսական համակարգի անկայունությանը, խախտվում է գլոբալ տնտեսության բնականոն ընթացքը: Հետևաբար նման իրավիճակներ տեղի ունենալու հավանականությունը նվազեցնելու համար մշտապես պետք է ապահովվել խելամիտ հավասարակշռություն ռիսկայնության և շահույթի մակարդակների միջև ռիսկերի արդյունավետ կառավարման միջոցով:

## ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում ներկայացվում են 2007-2009 թվականների համաշխարհային ֆինանսատրոհ-տեսական ճգնաժամի առաջացման հիմնական պատճառները և արձանագրված բացթողումները բանկային համակարգում: Շեշտադրումներ են կատարվում ռիսկերի արդյունավետ կառավարման անհրաժեշտության վրա ինչպես ճգնաժամային, այնպես էլ կայուն ֆինանսական դրության պայմաններում: Վերլուծվում են ճգնաժամային ժամանակահատվածում ռիսկերի կառավարման հետ կապված բացթողումները և ներկայացվում դրանց լուծմանն ուղղված հնարավոր տարբերակները:

## АННОТАЦИЯ

### ДАРБИНЯН А., АБРААМЯН М. – АКТУАЛЬНЫЕ ВОПРОСЫ РЕГУЛИРОВАНИЯ БАНКОВСКОЙ СИСТЕМЫ И НАПРАВЛЕНИЯ ИХ РЕШЕНИЯ

В статье обсуждаются основные причины возникновения финансово-экономического кризиса 2007-2009 и зафиксированные в этой связи упущения в банковской системе. Основное внимание уделяется повышению эффективности управления рисками как в кризисных условиях, так и при финансовой стабильности. Анализируются недостатки процесса управления рисками в кризисных условиях и представляются возможные пути его совершенствования.

## SUMMARY

### DARBINYAN A., ABRAHAMYAN M. – CURRENT PROBLEMS OF BANKING REGULATION AND THEIR SOLUTION DIRECTIONS

The article discusses main causes of the global financial crisis of 2007-2009 and shortcomings of the banking system. The necessity of effective risk management during crisis as well as in stable financial periods is explicated analyzes the weaknesses of risk management process during the crisis and presents possible options to resolve them.

**ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ**

*տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
Չայաստանի պետական տնտեսագիտական  
համալսարանի ռեկտոր*

**ԱՌՈՂՋԱՊԱՅՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ  
ԴՐԱ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

Չայաստանի Հանրապետությունում կայուն սոցիալ-տնտեսական զարգացման ապահովման կարևոր ուղղություններից է հասարակության առողջական վիճակի պահպանումը, որակյալ և մատչելի առողջապահական ծառայություններով ապահովումը, առողջապահության բնագավառում բարեփոխումների իրականացման արդյունավետության բարձրացումը, ՀՀ բնակչությանը տրամադրվող բժշկական ծառայության և օգնության որակի բարելավումը, առողջապահական համակարգի կառավարման կատարելագործումը և, որ ամենակարևորն է, բժշկական ապահովագրության համակարգի գործունեության կատարելագործումը:<sup>1</sup> Առողջության պահպանումը և առողջ ապրելակերպի համար պայմանների ձևավորումը անհրաժեշտ են բնակչության վերարտադրության, նրա բարեկեցության և երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ապահովման համար:

Չայաստանի Հանրապետության բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության որակի բարելավման և կառավարման հայեցակարգով սահմանվում են այնպիսի պահանջներ, որոնք անհրաժեշտ են հասարակական անվտանգության ու հանրության առողջության պաշտպանության համար:

Բուժօժանդությունների որակի բարելավումը և դրա ապահովման արդյունավետ մեխանիզմների ստեղծումը առողջապահական ոլորտի բարեփոխումների կարևորագույն բաղկացուցիչ մասն են: Հանրապետության բնակչության առողջությունը բնութագրող ցուցանիշների վատթարացման ժամանակակից միտումները պայմանավորված են ոչ միայն վերջին տարիներին երկրի բարդ սոցիալ-տնտեսական իրադրությամբ, այլև բուժօգնություն ստացողի և այն իրականացնողի իրավունքները, շահերն ու պարտականությունները հստակեցնող արդյունավետ մեխանիզմների բացակայությամբ:

Առողջապահության համակարգի ֆինանսավորման աղբյուրներից առավելապես կարևորվում են.

1. **Առողջապահության բյուջետային համակարգը**, որը ձևավորվում է ընդհանուր հարկային մուտքերից:

2. **Նպատակային հարկը**, որը սահմանվում է պետության կողմից՝ մարդու առողջության վրա բացասական ազդեցություն ունեցող գործունեության կամ ապրանքատեսակների վաճառքի վրա: Այս հարկերից ստացված միջոցների համապատասխան մասը նպատակաուղղվում է առողջապահական կարիքների բավարարմանը:

<sup>1</sup> Трушкина Л., Тлепцеришев Р., Трушкин А., Демьянова Л., Малахова Н. Экономика и управление здравоохранением / Ростов-на-Дону, 2012, ст. 63.

3. Պարտադիր բժշկական ապահովագրության նպատակային վճարները, որոնք հանդես են գալիս պարտադիր բժշկական ապահովագրական (ՊԲԱ) կամ սոցիալական ապահովագրության վճարների տեսքով: Սոցիալական ապահովագրության միասնական վճարներից սահմանված միջոցների մի մասը ուղղվում է առողջապահության ֆինանսավորմանը:

4. Բնակչության անձնական միջոցները և այլ աղբյուրները: Ֆինանսական այս միջոցները մուտքագրվում են բուժօգնությունների բժշկական ծառայությունների դիմաց ուղղակի վճարումների տեսքով: Ֆինանսավորման աղբյուրներ են բարեգործական հիմնադրամները, գործատուների կողմից տրամադրվող ֆինանսական միջոցները, նվիրատվությունները և այլն<sup>1</sup>:

Սինչև անկախացումը (1991 թ.) ՀՀ առողջապահության համակարգի ֆինանսավորման հիմնական և գլխավոր աղբյուրը պետական բյուջեն էր: Ընդ որում՝ պետական բյուջեից ֆինանսավորումը կատարվում էր մնացորդային սկզբունքով, և առողջապահական ընդհանուր ծախսերը կազմում էին լավագույն դեպքում պետբյուջեի ծախսային մասի 9-9.5%-ը և ազգային եկամտի 3.3-3.5%-ը: Թեև վերջին տարիներին առողջապահության ֆինանսավորման ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ են կազմել բնակչության կողմից կատարվող վճարումները, այդուհանդերձ առողջապահության ֆինանսավորման համակարգի բարեփոխումները հիմնականում վերաբերել են պետական բյուջեի միջոցների արդյունավետ օգտագործմանը:

Առողջապահության ֆինանսավորման համակարգի բարեփոխումները ՀՀ-ում իրականացվել են մի քանի փուլերով և ներառել են ինչպես բուժօգնություն իրականացնողների ազատ ձեռներեցությանը նպաստող կազմակերպա-իրավական կարգավիճակի փոփոխությունները, այնպես էլ ֆինանսական միջոցների բաշխման, վերաբաշխման, գնումների և մատուցված ծառայությունների փոխհատուցման մեխանիզմները:

Առողջապահության ֆինանսավորման համակարգի բարեփոխումների ուղղությամբ աշխատանքները սկսվել են ՀՀ անկախացումից անմիջապես հետո՝ հանրապետությունում տնտեսավարման շուկայական մեխանիզմների ներդրման և արձատավորման գործընթացին համընթաց: Սկզբնական փուլում բարեփոխումները միտված էին բուժօգնություն իրականացնողների կազմակերպա-իրավական կարգավիճակի փոփոխությանը, ինչը նրանց հնարավորություն էր ընձեռում վճարովի ծառայություններ մատուցելու միջոցով ինքնուրույն տնտեսավարման և ֆինանսավորման այլընտրանքային աղբյուր ունենալու: 1992-1997 թթ. ընթացքում իրականացված առողջապահության ֆինանսավորման մի շարք բարեփոխումները հանգեցրին մասնավոր գործունեության խթանման կազմակերպչական և իրավական փոփոխությունների՝ հնարավորություն ընձեռելով ազատ շուկայական հարաբերությունների պայմաններում բուժաշխատողներին ինքնուրույն գործունեություն ծավալելու, ինչպես նաև ստեղծելու բազմաաղբյուր ֆինանսավորման նոր համակարգ, որը կապահովի ռեսուրսների ձեռքբերումը, բաշխումը և բուժաշխատողների նորմալ վարձատրությունը: Այս փոփոխությունների

<sup>1</sup> Степаненко Р. Национальные системы медицинского страхования: Выборочный отбор международного опыта / М.: Дело, 2012, ст. 87-88.

զնահատման արդյունքում պարզ դարձավ, որ անհրաժեշտ էր բարեփոխումների ավելի համապարփակ, համալիր և երկարաժամկետ ռազմավարություն մշակել:

Առողջապահության ֆինանսավորման համակարգի բարեփոխումների արմատավորման ուղղությամբ շրջադարձային եղավ 1996 թ. մարտի 4-ին «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի ընդունումը, որում ամրագրվեց.

- պետությունը բնակչության առողջության պահպանման իր սահմանադրական պարտականությունները կատարելու նպատակով կազմում և իրականացնում է պետական առողջապահական նպատակային ծրագրեր,
- քաղաքացին ունի բուժօգնություն իրականացնողի ընտրության իրավունք,
- բժշկական օգնության և սպասարկման ֆինանսավորման աղբյուրներն են պետական բյուջեն, ապահովագրական հատուցումները, անմիջական վճարումները և օրենքով չարգելված այլ աղբյուրները<sup>1</sup>:

Սույն օրենքը կիրառելու համար 1996 թ. նոյեմբերի 28-ին ընդունվեց «Առողջապահության և բժշկասանիտարական օգնության ֆինանսավորման» մասին ռազմավարական փաստաթուղթը, որն ուժի մեջ մտավ 1998 թ.: Այս փաստաթուղթը հիմք հանդիսացավ 1997 թ. ՀՀ Կառավարության որոշմամբ նախատեսված բարեփոխումների հաջորդ փուլի համար, որը ապահովեց ՀԾՓ-ի (Հիմնական ծառայությունների փաթեթ) ներդրումը՝ պետական ֆինանսավորումն ուղղելով հիմնականում բնակչության խոցելի խմբերին, ինչպես նաև առաջնահերթ համարվող սոցիալապես կարևոր հիվանդությունների բուժմանը: Բացի դրանից՝ այդ որոշմամբ պաշտոնապես ներդրվեց վճարովի բժշկական ծառայությունների համակարգը, բժշկական հաստատությունների ֆինանսական կառավարման պատասխանատվությունը փոխանցվեց անմիջապես բուժաստատություններին, և խթաններ ստեղծվեցին բյուջետային սահմանափակ միջոցներն արդյունավետորեն օգտագործելու համար:

Պետական նպատակային առողջապահական ծրագրերի ձևավորման համար հիմք է հանդիսանում ՀԾՓ-ն, որը որոշվում է հաշվի առնելով բժշկական սպասարկման գերակայությունները, սոցիալական ուղվածությունը, հիգիենիկ-հակահամաճարակային ծառայությունը: Սակայն ՀԾՓ-ի շրջանակներում ընդգրկված ծառայությունների և անվճար բուժսպասարկման իրավունք ունեցող բնակչության խմբերի ցանկը հաճախ էր փոփոխվում, իսկ Կառավարությունը չէր կարող փաստացի ծախսերի ողջ ծավալով փոխհատուցել բուժաստատությունների կողմից տրամադրված ծառայությունների դիմաց: Հաշվի առնելով առկա խնդիրները՝ ՀՀ Կառավարությունը շարունակեց մշակել պետական ֆինանսավորման առաջնահերթ խնդիրները և մեխանիզմները՝ 2002 թ-ին հիմք ընդունելով ՀՀ-ի պետական առողջապահական նպատակային ծրագրերի շրջանակներում ՀԾՓ-ի հետագա զարգացման ծրագրի ընդունման մասին որոշումը:

ՀԾՓ-ի շրջանակներից դուրս և սոցիալապես անապահով ու առանձին հատուկ խմբերում չընդգրկված մոտ 2.5 մլն բնակչության համար բժշկական օգ-

<sup>1</sup> «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված Ազգային ժողովի կողմից 04.03.1996թ.:

նության ծառայությունները վճարովի են: Այսպիսով՝ ՀԾՓ-ն այլևս չէր կարող ՀՀ ողջ բնակչության համար անհրաժեշտ երաշխիքներ տրամադրել անվճար բժշկական օգնության և ծառայությունների հավասարության ու մատչելիության ուղղությամբ:

Հարկ է նշել, որ ՀԾՓ-ի կիրառումը գործնականում էլ ավելի էր սահմանափակել անվճար բժշկական օգնություն ստանալու ոչ միայն ողջ բնակչության, այլև սոցիալապես անապահով խմբերում ընդգրկված անձանց հնարավորությունները: Նույնիսկ նրանցից շատերը բժշկական ծառայությունների դիմաց անխուսափելի վճարումներ կատարելու ճնշման ներքո հաճախ հրաժարվում էին օրենքով իրենց հասանելիք անվճար բժշկական օգնությունից: Այս ամենը արտացոլված է Աղյուսակի 1-ի մեջ:

Աղյուսակ 1-ի տվյալներից երևում է, որ փաստացի անվճար ծառայություններ ստացած անապահով բնակչության տեսակարար կշիռը փոքր է:

ՀԾՓ-ի կիրառման փորձը ցույց է տալիս, որ ողջ բնակչության համար բժշկական օգնության հավասարության, համընդհանրության և մատչելիության ապահովման նպատակով անհրաժեշտ կլինի հետագա տարիներին ձեռնարկել միջոցառումներ հավելավճարների կիրառման և ՊԲԱ-ի ներդրման ուղղություններով:

### Աղյուսակ 1

#### Անապահով անձանց կողմից բուժօգնության կիրառում

Տարիներ	Անվճար ծառայություններ ստանալու իրավունք ունեցող անապահով անձանց թիվը	Փաստացի բուժօգնություն ստացած անապահով բնակչության թիվը	Ընդգրկման տոկոս (%)
1998 թ.	500.000	38.300	7.66
1999 թ.	500.000	48.000	9.6
2000 թ.	200.000	19.600	9.8
2001 թ.	200.000	21.400	10.7
2002 թ.	203.000	22.350	11.0
2003 թ.	250.000	23.451	11.6
2004 թ.	201.000	21.500	10.7
2005 թ.	236.000	22.300	9.49
2006 թ.	240.000	23.100	9.62
2007 թ.	245.000	24.300	9.68
2008 թ.	265.000	28.900	10.9
2009 թ.	284.000	34.600	12.2
2010 թ.	320.000	33.750	10.5
2011 թ.	350.000	36.600	10.4
2012 թ.	385.000	27.800	7.22

Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրության ծառայության և ՀՀ առողջապահության նախարարության ինտերնետային պաշտոնական կայքերը՝ [www.armstat.am](http://www.armstat.am), [www.moh.am](http://www.moh.am)

ՀՀ առողջապահության նախարարությունը ՊԲԱ-ն դիտարկում է որպես առանցքային բժշկական ծառայությունների ֆինանսավորման հիմնական միջոց, իսկ ԿԲԱ-ն՝ որպես ՀԾՓ-ի շրջանակներում չընդգրկված ծառայությունների դի-

մաց փոխհատուցման միջոց: 2000թ.-ին Կառավարությունն ընդունեց «ՀՀ-ում բժշկական ապահովագրության ներդրման հայեցակարգը»:

ՀՀ առողջապահության համակարգի բյուջետային ֆինանսավորման դինամիկան 2002-2012թթ. բնութագրվում է հետևյալ ցուցանիշներով<sup>1</sup>.

*Աղյուսակ 2*

**ՀՀ առողջապահության համակարգի բյուջետային ֆինանսավորման դինամիկան 2002-2012թթ.**

ՀՆԱ/մլրդ. դրամ	522.3	987.4	1031.3	1175.9	1362.5	1624.6	1907.9	2244.0	2657.1	3194.6	3621.3
Առողջապահության պետական բյուջետային ծախսերը /մլրդ դրամ/											
Պլան	12.6	18.0	19.9	18.6	16.2	21.0	25.0	32.0	41.2	45.1	49.2
Փաստացի	9.6	13.6	9.8	15.7	15.9	19.6	24.7	31.5	39.4	43.0	45.1
Առողջապահության պետական բյուջետային ծախսերը %-ով ՀՆԱ-ի մեջ											
Պլան	2.4	1.8	1.9	1.6	1.2	1.3	2.45	3.1	1.55	1.45	1.35
Փաստացի	1.8	1.4	1.0	1.3	1.2	1.3	2.35	3.0	1.48	1.48	1.45
Առողջապահության պետական բյուջետային ծախսերը %-ով պետական բյուջետային ծախսերի մեջ											
Պլան	10.0	7.0	6.5	7.5	6.2	6.3	7.45	7.51	11.6	19.0	20.5
Փաստացի	7.7	5.6	4.4	6.4	6.0	6.2	7.39	7.44	12.2	12.1	13.2
Պետական բյուջեից առողջապահության ուղղությամբ կատարված փաստացի ծախսերը ըստ մարդաշնչի	18.0	37.0	28.0	47.0	43.0	51.0	54.0	57.0	36.8	40.3	42.1

*Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրության ծառայության և ՀՀ առողջապահության նախարարության ինտերնետային պաշտոնական կայքերը՝ [www.armstat.am](http://www.armstat.am), [www.moh.am](http://www.moh.am)*

Ֆինանսավորման կարևորագույն բարեփոխումներից է առաջնային անվճար բուժօգնության համակարգի ներդրումը: Հաջողությամբ շարունակվում է նաև 2008 թ. հուլիսի 1-ից հանրապետությունում ներդրված ծննդօգնության պետական հավաստագրի տրամադրման ծրագրի իրականացումը, որի շրջանակներում լրացուցիչ ֆինանսական ներդրումները հնարավորություն են տվել շուրջ 3-4 անգամ բարձրացնելու բուժաշխատողների աշխատավարձերը, ինչը զգալիորեն նպաստել է ծրագրի շրջանակներում սահմանված նպատակների իրագործմանը՝ ծննդատներում սովորի առավելագույնս կրճատմանը և բնակչության համար ծննդօգնության իրապես անվճար ու մատչելի ծառայությունների մատուցմանը:

Առողջապահության ֆինանսավորման բարեփոխումների ներկա փուլում քայլերն ուղղված են պետության՝ ֆինանսական ռիսկերից պաշտպանելու գործառույթի ամրապնդմանը, ԱԱՊ համակարգի և հատկապես ընտանեկան

<sup>1</sup> «Պետական պատվերի շրջանակներում արտահիվանդանոցային բուժօգնություն տրամադրման մասին» չափորոշիչը հաստատվել է ՀՀ ԱՆ 25.12.2007 թ.-ի N1924-Ա հրամանով:

բժշկության դերի ընդլայնմանը, բժշկական ծառայությունների դիմաց վճարման արդյունավետ մեխանիզմների և բուժաշխատողների համար խթանների մշակմանը, ռեսուրսների օգտագործման և ֆինանսական կառավարման մոտեցումների բարելավմանը, ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների բացահայտմանը, ինչպես նաև բուժօգնության ստանդարտների մշակմանը և սահմանված նորմատիվների կիրառմանը:

Առողջապահության ֆինանսավորման հիմնական նպատակը միջոցների մոբիլիզացումը, կուտակումը և բաշխումն է, ինչպես նաև բուժօժանդակությունների գնումը՝ ուղղված վերջին տարիներին բնակչության առողջական վիճակի վատթարացման կասեցմանն ու բուժօգնության մատչելիության բարելավմանը:

Պետբյուջեից առողջապահությանն ուղղված ծախսերը մշտապես գրեթե չեն բավարարել բնակչության առողջապահական իրական կարիքներն ապահովելու: 2000 թ. պետբյուջեի հատկացումներն առողջապահության ոլորտին կազմեցին ընդամենը այդ հատկացումների 4.4%-ը, սակայն 2002-2005 թթ. պետբյուջեից առողջապահության ֆինանսավորման բարելավման միտումներ նկատվեցին:

Այժմ ՀՀ առողջապահության համակարգը ֆինանսավորվում է ներքին և արտաքին աղբյուրներից: Ներքին աղբյուրներն են պետբյուջեն և քաղաքացիների անմիջական վճարումները, իսկ արտաքին ֆինանսավորման աղբյուրներն են մարդասիրական օգնությունները և դոնոր կազմակերպությունների ու երկրների կողմից իրականացվող ծրագրերը:

Առողջապահությանը հատկացվող տարեկան պետական բյուջեի աճն աննախադեպ հնարավորություն է ընձեռում ավելի մեծ միջոցների բաշխման և կառավարման տարբեր մոտեցումների կիրառման առումով՝ ապահովելով, որ պետության կողմից ֆինանսավորվող բուժօգնություն ստանալու իրավունք ունեցող անձինք օգտվեն իրենց իրավունքներից, իսկ բնակչության խոցելի խմբերն առավել պաշտպանված լինեն հիվանդության հետ կապված ֆինանսական ռիսկերից:

Աղյուսակով ներկայացնենք ՀՀ առողջապահության ընդհանուր ֆինանսավորման կառուցվածքը՝ ՀՀ-ի հայաստանյան գրասենյակի կողմից 2008-2012 թթ. կատարված հանրային պետական ծախսերի ուսումնասիրության տվյալների համաձայն:

**Աղյուսակ 3**

**Առողջապահության համակարգի փաստացի ֆինանսավորումն ըստ աղբյուրների 2008-2012 թթ.**

Պետական բյուջե	2008	2009	2010	2011	2012
Վճարովի ծառայություններ	49.8	62.2	101.5	107.2	<b>109.1</b>
Համավճար	12.6	13.1	20.2	23.5	<b>24.2</b>
ԿԲՎ	0.06	0.08	0.1	0.13	<b>0.15</b>
Գրպանից դուրս վճարներ	0.3	0.06	0.36	0.39	<b>0.41</b>
Այլ վճարներ	127.1	131.1	133.3	135.6	<b>137.1</b>
Պետական բյուջե	<b>13.7</b>	<b>27.1</b>	<b>43.2</b>	<b>45.1</b>	<b>47.2</b>

Աղբյուրը՝ ՀՀ առողջապահության նախարարության պետական առողջապահական գործակալության ինտերնետային պաշտոնական կայք՝ <http://www.pag.am/>

Աղյուսակից երևում է, որ ֆինանսավորման աղբյուրները տարբեր ժամանակաշրջաններում տարբեր են եղել՝ կախված երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակից և անցումային ժամանակաշրջանի առանձնահատկություններից:

ՀՀ 2009 թ. պետական բյուջեի մասին օրենքով «Առողջապահություն» խմբին հատկացվել է 54.5 մլրդ դրամ, որից հիմնական ծրագրերով հիվանդանոցային բուժօգնության գծով՝ 19.3 մլրդ դրամ, արտահիվանդանոցային բուժօգնության գծով՝ 16.7 մլրդ դրամ: Պետական գնումների գործակալության միջոցով կենտրոնացված կարգով ձեռք են բերվել 1368.3 մլն դրամի նորագույն բժշկական սարքավորումներ և գործիքներ, 1743.6 մլն դրամի դեղեր: ՀՀ 2009 թ. պետբյուջեի մասին օրենքով պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության և սպասարկման իրականացման համար ճշտված բյուջեով հատկացվել է 39.8 մլրդ դրամ:

Այժմ ներկայացնենք ՀՀ 2012 թ. պետական բյուջեի «Առողջապահություն» բաժնին նախատեսված հատկացումների բաշխումն ըստ ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների.

**Աղյուսակ 4**

**ՀՀ 2012 թ. պետական բյուջեի «Առողջապահություն» բաժնին նախատեսված հատկացումների բաշխումը**

Ֆինանսավորվող ծրագրի անվանումը	Գումարը (մլն դրամ)		
	Ընդամենը	ՀՀ առողջապահության նախարարության կողմից իրականացվող ֆինանսավորում	Այլ մարմինների կողմից իրականացվող ֆինանսավորում
Առողջապահություն, այդ թվում՝	66 087.6	64 078.1	<b>2 009.6</b>
Բժշկական ապրանքներ, սարքեր և սարքավորումներ	4 823.8	4 689.0	<b>134.8</b>
Արտահիվանդանոցային ծառայություններ	25 770.4	25 694.2	<b>76.3</b>
Հիվանդանոցային ծառայություններ	23 300.0	23 300.0	—
Հանրային առողջապահական ծառայություններ	3 038.4	2 938.4	<b>100.0</b>
Առողջապահություն (այլ դասերին չպատկանող)	<b>9 155.0</b>	<b>7 456.5</b>	<b>1 698.5</b>

*Աղբյուրը՝ ՀՀ առողջապահության նախարարության պետական առողջապահական գործակալության ինտերնետային պաշտոնական կայք - <http://www.pag.am/>*

2012 թ. ՀՀ պետբյուջեից առողջապահության համակարգին ուղղվող միջոցների արդյունավետությունը բարձրացնելու և իրականացվող ծախսերը վերահսկելի դարձնելու նպատակով շարունակվել է ֆինանսական հոսքերի ամենամսյա և եռամսյակային մոնիթորինգը, առավել մանրամասն և հետևողականորեն դիտարկվել են բուժօգնությունների ֆինանսական ընդհանուր մուտքերը, կատարված ծախսերը, իրականացված վճարումները, մաս հաշվետու ժամանակաշրջանի վերջում կրեդիտորական պարտքերը, որոնք 2010 թ. դրությամբ նվազել են մոտ 1.3 մլրդ դրամով: Մեծ ուշադրություն է հատկացվել

նաև մարզերի և Երևանի բուժհաստատություններում կուտակված աշխատավարձերի և դեղորայքի պարտքերի մարմանը:

Առողջապահության համակարգի ֆինանսավորման գործում մեծ դեր պետք է հատկացնել համավճարների մեխանիզմին: Համավճարը երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում մատուցվող ծառայությունների փոխհատուցման նոր եղանակ է: 2001 թ. փետրվարի 1-ից առողջապահության համակարգում մեկնարկվում է համավճարային մեխանիզմը, որի նպատակն է բարձրացնել բժշկական ծառայությունների որակը և օրինական դաշտ բերել ոչ պաշտոնական վճարումները: Հաստատվել են պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում «Անհետաձգելի բժշկական օգնության ծառայությունների» և «Գինեկոլոգիական բժշկական օգնության ծառայությունների» ծրագրերի շրջանակներում մատուցվող ծառայությունների համավճարի գները: Պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների աշխատողների աշխատանքի վարձատրությունը սահմանված է չափորոշիչով:

Առողջապահության ֆինանսավորման համակարգում համավճարները հիմնականում կիրառվում են այն դեպքում, երբ բժշկական ծառայությունների կամ բուժման գները ավելի ցածր են, քան իրական ծախսերը: Այս պարագայում հնարավոր են 2 տիպի համավճարներ.

- ոչ պաշտոնական, որը գոյություն ունի դեռևս խորհրդային ժամանակներից նաև ՀՀ-ում և լրացրել է բուժաշխատողի աշխատավարձի գծով թերվճարումը,
- պաշտոնական, որը կիրառվում է աշխարհի շատ երկրներում, տարբեր մեխանիզմներով ու նպատակներով և բավականաչափ արդյունավետ է:

Ընդհանրապես ցածր ՀՆԱ, բյուջեի ձևավորման, հավաքագրման և վճարման լուրջ խնդիրներ ունեցող երկրներում համավճարը առողջապահության համակարգի ֆինանսական դժվարությունների հաղթահարման միջոցներից մեկն է:

Զնայած որ համավճարը ինքնին չի կարող լուծել թերֆինանսավորման և ընդհանուր առմամբ առողջապահությանը տրամադրվող անբավարար ֆինանսական միջոցների հարցը, սակայն հստակեցնելով ակնկալվող հավաքագրումը՝ հնարավորություն կստեղծվի կողմնորոշվելու և ճիշտ դիրքորոշում ձևավորելու ֆինանսական հոսքերի կառավարման գործում: Համավճարների պաշտոնական ընդունումը ոչ պաշտոնական վճարների վերացման կարևորագույն պայման է, որը հնարավորություն կտա մեծացնելու բուժօգնություն իրականացնողների եկամուտները:

Շուկայական տնտեսության պայմաններում առավել իրատեսական է բուժօգնությունը տեսնել որպես «մասնակի կարգավորվող ապրանք»: Պետությունը պետք է կարողանա կարգավորել և վերահսկել ֆինանսավորման ու բժշկական ծառայությունների մատուցման գործընթացը, ձգտել դրանց համար ստեղծել առավել արդար մրցակցային միջավայր՝ ապահովելու համար համակարգի և պարտադիր պետական ապահովագրության զարգացման բոլոր հնարավորությունները:

Ելնելով նրանից, որ ֆինանսավորման աղբյուրները բազմազան են, և յուրաքանչյուրն ունի իր դերն առողջապահության համակարգի ֆինանսավորման

ընդհանուր հոսքի մեջ, կարելի է փաստել, որ դրանց մասնակցությունը բուժօգնության և սպասարկման փոխհատուցման գործում անհրաժեշտ է և պարտադիր:

#### **ԱՍՓՈՓՈՒՄ**

Յոդվածում դիտարկվում են առողջապահության ֆինանսավորման համակարգի արդի վիճակն ու զարգացման հեռանկարները ՀՀ-ում, բացահայտվում են դրա բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը ՀՀ-ում:

#### **АННОТАЦИЯ**

##### **АТОЯН К. – СИСТЕМА ФИНАНСИРОВАНИЯ ЗДРАВООХРАНЕНИЯ И ПУТИ ЕЁ СОВЕРШЕНСТВОВАНИЯ В РА**

В статье рассматриваются современное состояние и основные перспективы развития системы финансирования здравоохранения в РА, а также выявляются необходимость и целесообразность осуществления её реформ.

#### **SUMMARY**

##### **ATOYAN K. – HEALTH CARE FINANCING SYSTEM AND WAYS OF ITS IMPROVEMENT IN RA**

The article observes present state and development prospects of healthcare financing system and reveals.

**ԳՐԻԳՈՐ ՂԱՐԻԲՅԱՆ**

*ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ գիտության  
վաստակավոր գործիչ,  
տնտեսագիտության դոկտոր,  
ԵՊՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի պրոֆեսոր*

**ՄԱՐԳԱՐԻՏԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ**

*տնտեսագիտության թեկնածու,  
ԵՊՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի դոցենտ,  
էլ. փոստ՝ a.martirosyan@bk.ru*

**ՈԱԶՄԻԿ ԻՍԱԴԱԿՅԱՆ**

*ԵՊՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի ասպիրանտ,  
էլ. փոստ՝ isahakyanrazmik@mail.ru*

**ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ՝ ՄԱՐՈՂԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԲԱՂԱԴՐԱՄԱՍ.  
ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ ԵՎ ԿԱՆԽՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Առողջությունը մարդկային կապիտալի գոյության հիմքն է, հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման շատ կարևոր պայմանը: Դեռևս Մարշալը գրել է. «Բնակչության ուժն ու առողջությունը արտադրողականության հիմքն են, որից կախված է նյութական հարստության ստեղծումը, երբ իր հերթին նյութական հարստությունն է օգտագործվում խելամիտ, ապա նրա գլխավոր նշանակությունն այն է, որ վերջինս ավելացնում է մարդկային ցեղի ուժն ու առողջությունը՝ ֆիզիկական, մտավոր և բարոյական»<sup>1</sup>: Առողջությունը մարդկային կապիտալի առաջին և գլխավոր պայմանն է: Առանց առողջության պաշարի մարդկային կապիտալը արդյունավետ գործել և իր ֆունկցիոնալ դերը իրագործել չի կարող:

Բնակչության առողջությունը ձևավորվում, կայանում և պահպանվում է հասարակության սոցիալական բազմաբովանդակ կյանքի բազմաստիճան համակարգում: Այն սկսվում է մարդու ծնունդից և մինչև վերջ ընթանում է ընտանիքում, նախադպրոցական հաստատություններում (մսուր-մանկապարտեզ), հանրակրթական դպրոցներում, միջին և բարձրագույն ուսումնական հաստատություններում, աշխատանքային կոլեկտիվում և վերջապես, որը և ամենակարևորն է, առողջապահության համակարգի արդյունավետ գործունեությունում:

Մարդկային զարգացման համաթվում գլխավոր ցուցանիշը կյանքի տևողությունն է, սակայն միաժամանակ նկատի է առնվում, որ մարդու հնարավորությունների ու ազատությունների ընդլայնման տեսանկյունից կարևոր է ոչ միայն կյանքի տևողությունը, այլև նրա առողջ ընթացքը, քանի որ հիվանդությունները խոչընդոտում ու սահմանափակում են մարդու ինքնահաստատման ու ինքնաիրացման հնարավորությունները: Այս առումով առողջական կարիքների բավարարումը հիմնարար նշանակություն ունի մարդկային զարգացման համար և ա-

<sup>1</sup> Маршалл А., Принципы экономической науки / М., 1993, с. 268.

առողջապահական համակարգի խնդիրը ոչ միայն հիվանդությունների բուժումը պետք է լինի, այլև առաջին հերթին դրանց կանխարգելումը, քանի որ հիվանդությունն ինքն արդեն իսկ հնարավորության սահմանափակում է: Ընդ որում հիվանդությունների կանխարգելման արդյունավետության հասարակական, այդ թվում՝ և տնտեսական արժեքը մեծ է հատկապես ծանր և վտանգավոր հիվանդությունների կանխարգելման պարագաներում: Պատահական չէ, որ Եվրամիությունում և ԱՄՆ-ում առողջապահության համակարգում շեշտը դրվում է հիվանդությունների, մասնավորապես՝ դարի վտանգավոր հիվանդությունների շուտ բացահայտման և կանխարգելման վրա:

Առողջապահական ժամանակակից համակարգերը զարգացած բարդ համակարգեր են: Դրանք բարձրարժեք և ծախսատար համակարգեր են: Դրանով է բացատրվում բուժման մեծ արժեքը: Սակայն, որքան էլ թանկ լինի բուժումը, սոցիալական, ինչպես նաև տնտեսական տեսակետից, հասարակությունը շահում է, քանի որ ոչ միայն փրկվում է մարդը, այլև մեծ արտադրողականությամբ օժտված մարդկային կապիտալը:

Առողջապահության համակարգն իր մեջ ընդգրկում է մարդու գոյատևման և վերարտադրության համար անհրաժեշտ կացարանային, գոյատևման բոլոր կենսապայմանները, մարդու ծննդից սկսած նրա պահպանման, կայացման մինչ դպրոցական և ընդհանուր կրթական ու դաստիարակչական, մասնագիտական կրթության աշխատանքային գործունեության և կենսաթոշակային տարիքի ծառայությունները: Ընդ որում՝ այդ բարդ համակարգում, բոլոր ժամանակների համար ելակետային են մարդու ապրելու կացարանային (բնակարանային) բնութագրիչները: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այլ հավասար պայմաններում կորելացիոն ուղղակի կախվածություն գոյություն ունի տնային տնտեսության կացարանային պայմանների ու նրա անդամների առողջական վիճակի միջև: Պատահական չէ, որ ժամանակակից սոցիոլոգիական վիճակագրությունը բնակչության առողջապահական վիճակի և խնդիրների ուսումնասիրությունը սկսում է տնային տնտեսությունների կացարանային բնութագրիչների հետազոտությունից: Այն հանգամանորեն իրականացվել է Հայաստանի ազգային վիճակագրության բոլոր տարեգրքերում՝ «Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի» հետազոտությունում (2012 թ.):

Տնային տնտեսությունների կացարանային բնութագրիչների կազմում շատ կարևոր տեղ ունի երկրի բնակարանային ֆոնդը: Ըստ վիճակագրական ծառայության մեթոդաբանության՝ «բնակարանային ֆոնդը բոլոր բնակարանների ամբողջությունն է, անկախ սեփականության ձևերից, ներառյալ բնակելի տները, մասնագիտացված տները (հանրակացարանները), ապաստարանները, միայնակների և ծերերի համար հատուկ տները, մանկատները, հաշմանդամների, վետերանների համար գիշերօթիկ տները, գիշերօթիկ դպրոցները, բնակարանները, ծառայողական բնակելի շենքերը և այլ շինություններ բնակվելու համար»:

Բնակելի ֆոնդի մեջ հաշվի չեն առնվում ամառանոցները, սպորտային և տուրիստական բազաները, հանգստյան տները, պանսիոնատները, հյուրանոցները և այլն<sup>1</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք. 2012, Երևան, 2013, էջ 187:

*Աղյուսակ 1*

**Բնակարանային ֆոնդը Հայաստանի Հանրապետությունում**  
(տարեվերջին)

	2007	2008	2009	2010	2011
Ամբողջ բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը	84463	84985	86493	88634	92528
այդ թվում՝					
քաղաքային	44396	44709	45673	47206	49627
գյուղական	40067	40276	40820	41428	42971
Բնակչության միջին ապահովվածությունը մեկ բնակչի հաշվով, մ <sup>2</sup> ընդհանուր մակերես, ընդամենը	26.2	26.3	26.7	27.2	28.3
այդ թվում՝					
քաղաքներում	21.5	21.6	22.0	22.6	23.7
գյուղերում	34.6	34.6	35.0	35.4	36.5

*Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք. 2012, Երևան, 2013, էջ 189:*

Անդրադառնանք կացարանային բնութագրիչներին: Դրանցից առաջինը խմելու ջրով ապահովվածությունն է: Հետազոտությունից պարզվում է, որ Հայաստանում տասը տնային տնտեսություններից իննունը առկա է ջրի կենտրոնացված մատակարարում դեպի կացարան: Քաղաքային բնակավայրերում 2010 թվականին տնային տնտեսությունների 97.1%-ը, իսկ գյուղական բնակավայրերում՝ 79.8 %-ը կացարանում ունեն ջրի ծորակ: Ընդհանուր առմամբ Հայաստանի տնային տնտեսությունների 95%-ը օգտվում է խմելու ջրի ապահով աղբյուրից<sup>1</sup>:

Տնային տնտեսությունների մեծամասնությունն ունի բավարար հիգիենիկ-սանիտարական պայմաններ: Տասը տնային տնտեսություններից յոթն օգտվում են դեպի կոյուղի տանող զուգարաններից, և 8%-ը օգտվում է փոսի ձևով սալիկապատ զուգարանից<sup>2</sup>:

Տնային տնտեսության անդամների մեծ մասը ձեռքերը լվանում է օճառով և ջրով:

Բոլոր տնային տնտեսություններն ունեն էլեկտրականություն և բնական գազ՝ կերակուր պատրաստելու և ընտանիքի այլ կարիքները բավարարելու համար:

Հայաստանի տնային տնտեսությունների 98%-ն ունի գունավոր հեռուստացույց, 92%-ը՝ սառնարան, 81%-ը՝ լվացքի մեքենա, 87%-ը՝ բջջային հեռախոս, իսկ 78%-ը՝ ոչ բջջային հեռախոս<sup>3</sup>:

Հայաստանի տնային տնտեսությունների 42%-ն ունի գյուղատնտեսական նշանակության սեփական հողատարածք, իսկ 22%-ը՝ գյուղատնտեսական նշանակության սեփական անասուններ: Ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղերում

<sup>1</sup> Տե՛ս Հայաստան. ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն, 2010, «Տնային տնտեսությունների կազմը և կացարանային բնութագրիչները», էջ 50-57:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 53:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 57:

տնային տնտեսություններն ունեն բավականին շատ երկարատև օգտագործման ունեցվածք (պարագաներ):

Ի տարբերություն քաղաքային բնակավայրերի տնային տնտեսությունների՝ գյուղական բնակավայրերի տնային տնտեսություններն ավելի հակված են սեփական ավտոմեքենա կամ տրակտոր ունենալուն (համապատասխանաբար 27% և 33%):

Բնակչության առողջական մակարդակի վրա ազդող շատ կարևոր ցուցանիշ է տնային տնտեսությունների բարեկեցության մակարդակը: Բնակչության բարեկեցության մակարդակների չափումը կապված է տնային տնտեսության եկամուտների, առողջապահական ծառայություններից օգտվելու մատչելիության հետ, և տարբերակվում են բարեկեցության հինգ մակարդակներ: Այսպես՝ ըստ այդ հաշվարկների՝ գյուղական բնակչության 81%-ը գտնվում է ամենացածր բարեկեցության մակարդակներում: Ի տարբերություն այդ ցուցանիշի՝ քաղաքային բնակավայրերի տասը բնակիչներից վեցը գտնվում են բարեկեցության բարձր կամ ամենաբարձր մակարդակներում (60%)<sup>1</sup>: Նաև դրանով է բացատրվում գյուղական բնակչության առողջության համեմատաբար ցածր մակարդակը:

Տնային տնտեսությունների կացարանային բնութագրիչները և բարեկեցության մակարդակները ոչ միայն զգալի չափերով պայմանավորում են մարդկանց առողջության մակարդակը, այլև ազդում են բնակչության վերարտադրության վրա: Քանի որ տղամարդիկ հակված են ուշ ամուսնության, ուստի, ի տարբերություն 15-49 տարեկան երբևէ չամուսնացած կանանց 32%-ի, հարցման մասնակից տղամարդկանց 45%-ն ամուսնացած չի եղել: Ավելին՝ երբևէ չամուսնացած տղամարդկանց մասնաբաժինը վերջին տարիների ընթացքում կտրուկ աճել է՝ կազմելով 2000 թ. 31% ցուցանիշի փոխարեն 45%՝ 2010 թ., որը չէր կարող բացասաբար չանդրադառնալ ծնելիության գործակցի վրա և չկասեցնել բնակչության՝ մարդկային կապիտալի աճի տեմպերը:

Բնակչության և դրանով պայմանավորված մարդկային կապիտալի վերարտադրության տեմպերի վրա ազդող հիմնական գործոնը ծնելիության միտումներն են, որի բացահայտման մեթոդներից է ԾՏԳ-ների (ծնելիության տարիքային գործակից) ուսումնասիրությունը:

Հետազոտությունները ցույց են տվել, որ ՀՀ-ում վերջին 20 տարիներին պտղաբերությունը նվազել է: 20-24 տարիքային խմբի ԾՏԳ-ն կազմում է 209 ծնունդ 1000 կնոջ հաշվով (հարցմանը նախորդած 15-19 տարիների ժամանակահատվածում), իսկ վերջին 4 տարիների ընթացքում այդ գործակիցը նվազել է 34%-ով՝ կազմելով 138 ծնունդ 1000 կնոջ հաշվով: Նույն ժամանակահատվածի կտրվածքով 15-19 տարիքային խմբի կանանց ԾՏԳ-ը կազմել է 83 ծնունդ 1000 կնոջ հաշվով՝ հարցմանը նախորդած 15-19 տարիներ առաջ, իսկ վերջին 4 տարիների ընթացքում այդ գործակիցը նվազել է 66%-ով՝ կազմելով 28 ծնունդ 1000 կնոջ հաշվով<sup>2</sup>:

Ծնելիության տարիքային գործակցի այդ վտանգավոր միտումն առաջ է բերել մարդկային կապիտալի կորստի նոր ակիբ: Առաջանում է միտում, ըստ որի՝ ծնվողների թիվն ավելի արագ է փոքրանում մեռողների թվից: Դա հանգեցնում է

<sup>1</sup> Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն, 2010, էջ 59:

<sup>2</sup> Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն, 2010, էջ 123:

բնակչության թվաքանակի բացարձակ կրճատման, մարդկային կապիտալի բացարձակ կորստի:

Ծնելիության տարիքային գործակցի նման անկման միտումը շատ անհանգստացնող է, և պահանջվում է իշխանություններից հակազդող լուրջ միջոցառումներ, հակառակ դեպքում, բացի արտագաղթից, մարդկային կապիտալի կորուստները կմեծանան նաև ծննդաբերության կրճատման կորուստներով, և հեռանկարը կլինի աղետալի:

Պետք է նշել, որ վերջին տարիներին իշխանությունները մի շարք միջոցառումներ են իրականացնել ծննդաբերության անկման միտումներին հակազդելու համար: Այսպես՝ Հայաստանում մայրերի 99%-ը ստացել է նախածննդային խնամք: Հարցման արդյունքում չորս կանանցից երեքը (74%) նշել են, որ նրանք ունեցել են անվճար նախածննդային խնամք ստանալու իրավունք, իսկ կեսից ավելին (53%) նշել են նաև անվճար դեղորայք ստանալու իրավասության մասին: Այդ բոլորով հանդերձ՝ անվճար ծննդաբերությունը դեռևս ցանկալի՝ 100%-ի մակարդակին չի հասել: Հարցումները ցույց են տալիս, որ հինգ կանանցից մեկը (21%) վճարել է իր նախածննդյան այցելության ժամանակ: Այս կանանց 84%-ը տրված գումարը նշել է ՀՀ դրամով: Տասը կանանցից երեքը (29%) վճարել է 1000-5000 ՀՀ դրամ, իսկ 20%-ը՝ շուրջ 6000-10000 ՀՀ դրամ: Կանանց մեծամասնությունը (60%) վճարել է լաբորատոր-գործիքային հետազոտության համար և այլն:

Արտագաղթի, ծնունդների թվի անկման միտումի պայմաններում ծնունդների ժամանակ վերը նշված կոռուպցիոն ռիսկերը, հատկապես շատ ծննդաբերող ոչ ապահով խավի համար ծանր հաղթահարելի խոչընդոտներ են, որոնք բոլոր միջոցներով՝ թե՛ բժիշկների վարձատրությունն ավելացնելու և թե՛ օրենքի գերակայության ուժով արգելելու ճանապարհներով պետք է իսպառ վերացվեն: Անվճարունակ խավն է շատ ծննդաբերում, և նրան օգնելու, սատարելու փոխարեն նրանք նորից հայտնվում են կոռուպցիոն ճիրաններում:

Մարդկային կապիտալի բնական վերարտադրության համակարգում հատկապես կարևորվում է մանկական (0-1 տարեկան) և մինչև 6 տարեկան երեխաների մահացությունը: 1988 թ. երկրաշարժի, տնտեսական շրջափակման և Ղարաբաղյան հակամարտության սրման, մասնավորապես Արցախյան ազատագրական պատերազմի և հատկապես ԽՍՀՄ փլուզման ու անցումային տնտեսության սոցիալական կաթվածահար պայմաններում մանկական մահացությունը հասել էր բարձր մակարդակի:

Հայաստանում 1996 թ-ից ի վեր առկա է մանկական մահացության ցուցանիշների կայուն և շարունակական նվազման միտում: Այսպես՝ ՀԺՄՀ 2000 թ. արդյունքներով՝ 1996-2000 թթ. մանկական մահացության ցուցանիշը կազմել է 36՝ 1000 կենդանածին երեխայի հաշվով: ՀԺՄՀ 2005 թ-ի արդյունքներով՝ տվյալ ցուցանիշը նվազել և կազմել է 26՝ 1000 կենդանածին երեխայի հաշվով: ՀԺՄՀ 2010 թ-ի տվյալներով՝ այն ավելի է նվազել և կազմել է 13 մահ՝ 1000 կենդանածին երեխայի հաշվով 2006-2010 թթ. կտրվածքով<sup>1</sup>:

<sup>1</sup> Տե՛ս ինտերնետ-տեղեկատվություն, Մանկական (0-1 տարեկան) և մինչև 5 տարեկան երեխաների մահացություն, էջ 191:

Մինչև 5 տարեկան երեխաների մահացության նվազման միտումը, անշուշտ, պայմանավորված է 1994 թ. ի վեր ԳՅ ԱՆ-ի (Առողջապահության նախարարություն) կողմից իրականացվող այդ տարիքի երեխաների առողջության պահպանման և բարելավման արդյունավետ միջոցառումներով և վերջին տարիներին ներդրված ծննդաբերության պետական հավաստագրի ծրագրի իրականացումով: Ընդգծելով այդ ոլորտի առաջընթացը և իշխանությունների արդյունավետ, նպատակասլաց ու հետևողական աշխատանքը՝ պետք է հասնել նրան, որ ավելի իջնի մինչև 5 տարեկան երեխաների մահացությունը: Սակայն ամբողջությամբ վերցրած՝ առողջապահության ոլորտն ունի լուրջ խնդիրներ, որոնք բարեփոխումների կարիք ունեն:

Անշուշտ ոլորտի բարեփոխումների ցածր արդյունավետությունը ամենից առաջ պայմանավորված է համակարգված քաղաքականության, ինչպես նաև ֆինանսական հոսքերի արդյունավետ կառավարման բացակայությամբ: Ներդրված է պարտադիր բժշկական ապահովագրության համակարգը: Առողջապահության ոլորտում ոչ բավարար ներդրումների պատճառով աճել են կոռուպցիան և ստվերային շրջանառությունը: Հասարակության մեծամասնության համար բժշկական վճարովի ծառայությունները դժվար հասանելի են: Այս ամենը նպաստեց բնակչության առողջության վատթարացմանը, ինչն էլ հանգեցրեց մարդկային կապիտալի լուրջ կորուստների: Դա իր արտացոլումն է գտել ստորև բերվող աղյուսակում:

*Աղյուսակ 2*

**ԳՅ առողջապահության հիմնական ցուցանիշները**

	1997	2001	2005	2009	2011
Բոլոր մասնագիտությունների բժիշկների թիվը	13023	11498	12307	13177	13490
Հիվանդանոցների թիվը	178	142	145	127	130
Հիվանդանոցներում մահճակալների թիվը	25560	16157	14353	12068	12236
Ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկների թիվը	497	460	458	487	506
Ամբուլատոր-պոլիկլինիկաներ հաճախողների թվաքանակը	45561	39347	39236	38783	38734
Շտապ բուժօգնության կայանների թիվը	45	46	58	100	104
Անձանց թվաքանակը, որոնց ցույց է տրվել բուժօգնություն, հազ. մարդ	361.5	281.4	351.3	401.2	
Հիվանդանոցային մահճակալների թիվը 10.000 բնակչի հաշվով	64.4	53.9	44.6	37.1	37.4
Բժիշկների թվաքանակը 10.000 բնակչի հաշվով	33.3	32.3	28.9	40.6	41.2
Մաճկալների տարեկան միջին զբաղվածությունը (օր)	141	136	171	185	190

*Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական տարեգրքերի 1999, 2005, 2009 և 2011 թվականների նյութերը, ԳՅ ԱԿԾ, ԳՅ առողջապահության նախարարության նյութեր:*

Աղյուսակի տվյալները վկայում են, որ վերջին 10-12 տարիներին ՀՀ առողջապահական համակարգը բնութագրող հիմնական ցուցանիշներն ունեցել են նվազման միտում: Այսպես՝ նվազել է ինչպես հիվանդանոցների, այնպես էլ դրանցում բուժում ստացողների թիվը: Դա չի նշանակում, որ նվազել է հիվանդությունների և հիվանդացողների թիվը: Հակառակը՝ ներկայումս արձանագրվող ինչպես ժողովրդագրական, այնպես էլ ամբողջությամբ վերցրած առողջապահական ոլորտի բնութագրող ցուցանիշները և դրանց միտումները մտահոգիչ են:

**Ծնելիության գումարային գործակիցը 2010-2011 թթ. կազմել է 1.6: Այս ցուցանիշը ցածր է բնակչության բնական վերարտադրությունն ապահովող ծնելիության գործակից:** Եթե մինչև 1990 թ. ծնելիության գումարային գործակիցը, այսինքն՝ մեկ կնոջ կողմից իր կյանքի ընթացքում ծնած երեխաների միջին թիվն, ապահովում էր բնակչության ընդլայնված վերարտադրությունը և տատանվում էր 2.2-2.3 շրջանակներում, ապա 1990 թ. հետո այն կտրուկ նվազեց և 1995-2011 թթ. գտնվում է 1.2-1.6 սահմաններում, որը չի ապահովում ոչ միայն ընդլայնված, այլև պարզ վերարտադրություն: Ծնելիության մակարդակի անկման վրա ազդեցությունն են ունեցել նաև բնակչության ընտանեկան դրությունում տեղի ունեցած փոփոխությունները՝ 1988 թվականից մինչ այժմ հանրապետությունում գրանցվել են 3 անգամ ավելի քիչ ամուսնություններ և 6 անգամ ավելի ամուսնալուծություններ: Եթե ամուսնությունների, ամուսնալուծությունների և ծնելիության վերը նշված միտումները պահպանվեն, ապա արտագաղթի ժամանակակից ահռելի ծավալների պայմաններում, մասնագետների կարծիքով, արդեն 20 տարի հետո ՀՀ բնակչությունը կկազմի ընդամենը մոտ 1 միլիոն 200 հազար մարդ:

Սոցիալական կարևորագույն նշանակություն ունեցող այնպիսի հիվանդություններ, ինչպիսիք են սիրտանոթային համակարգի հիվանդությունները, չարորակ նորագոյացությունները, շարունակում են առաջնային տեղեր զբաղեցնել ընդհանուր մահացության կառուցվածքում, ընդ որում՝ տարեցտարի նկատվում է դրանց շարունակական աճի միտում: Սրանք այն հիվանդություններն են, որոնք վաղ կանխորոշման և զգալի ֆինանսական միջոցների առկայության դեպքում կարող են բուժվել: Իսկ եթե ավելացնենք նաև այն, որ բնակչության շրջանում հիվանդությունների տարիքը երիտասարդացել է, ապա կարելի է նշել, որ վերջինիս բացասական ազդեցությունը կարող է ունենալ բազմարկչի էֆեկտ մարդկային կապիտալի կորուստների վրա: Ըստ հիվանդությունների խմբերի հիվանդացության վիճակը արտացոլող ստորև բերվող աղյուսակը վերը շարադրվածի արտացոլումն է:

*Աղյուսակ 3*

**Հիվանդացությունն ըստ հիվանդությունների խմբերի**  
(100 հազ. բնակչի հաշվով)

	2005	2008	2009	2011
Առաջին անգամ բացահայտված ախտորոշումով գրանցված հիվանդությունների քանակը	19814.6	24759.3	27682.2	27659.2
այդ թվում՝ տարափոխիկ և մակաբույծ հիվանդություններ	1796.0	2146.8	2241.5	2628.9
նորագոյացություններ	216.7	264.8	279.7	293.1

արյան և արյունաստեղծ օրգանների հիվանդություններ	247.9	307.6	329.0	340.0
հոգեկան խանգարումներ	177.2	232.3	243.6	278.4
նյարդային համակարգի և զգայական օրգանների հիվանդություններ	1819.2	2935.8	2990.1	3383.3
արյան շրջանառության համակարգի հիվանդություններ	1092.9	1309.9	1497.6	1716.2
շնչառական օրգանների հիվանդություններ	8695.1	10090.2	12682.7	11017.5

Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2010, ԳԳ ԱԿԾ, 2010, էջ 164:

**Առողջապահության ծառայություններից բնակչության օգտվելու աստիճանը բավականին ցածր է, հատկապես գյուղական բնակավայրերում և աղքատ բնակչության շրջանում:** Առողջապահական ծառայությունների օգտագործման ցածր աստիճանի մասին են վկայում տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների տվյալները: 2010 թ. հետազոտության արդյունքներով՝ հիվանդացության դեպքում բժշկական խորհրդատվության կամ բուժման է դիմել համապատասխան բնակչության շուրջ 38 տոկոսը: Մինևույն ժամանակ, թեև ըստ բնակչության բարեկեցության խմբերի համապատասխան ցուցանիշների միջև շեղումները հարաբերականորեն կրճատվել են, այդուհանդերձ այդ տարբերությունները շարունակում են նշանակալի մնալ (տե՛ս Աղյուսակ 4):

**Աղյուսակ 4**

**Հիվանդացության ժամանակ բժշկական խորհրդատվության կամ բուժման դիմած բնակչության մասնաբաժինը՝ ըստ բնակության վայրի և բարեկեցության աստիճանի (տոկոս)**

	2008	2010
Ընդամենը	25.2	37.9
ք. երևան	31.6	40.7
Այլ քաղաքներ	21.1	37.6
Գյուղական բնակավայրեր	21.4	35.3
Ոչ աղքատներ	28.0	41.6
Աղքատ	17.0	30.0
Ծայրահեղ աղքատ	9.0	24.1

Աղբյուրը՝ ԳԳ ազգային վիճակագրական ծառայություն (SS4ԱԴ 2008 թ., SS4ԱԴ 2010 թ.)

Ըստ փորձագետների՝ առողջապահության մատչելիության անկման հետևանքով մարդիկ հաճախ դիմում են բժշկի ծայրահեղ վիճակներում (հարցվածների 70.0%-ը): Ըստ այդմ՝ մարդիկ, հաճախ ունենալով տարբեր կարգի առողջապահական խնդիրներ, խուսափում են բժշկի դիմելուց և դիմում են միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում, երբ արդեն հիվանդի վիճակն էլ ավելի

շատ խորացած է լինում: Նման իրավիճակներում բուժման գործընթացն էլ ավելի երկար ու ծախսատար է լինում և դրա արդյունավետությունը ցածր է: Տարածված է նաև այն կարծիքը (12.5%), որ մարդիկ դիմում են ախտորոշման, սակայն դրանից հետո խուսափում են բժշկի դիմելուց կամ փորձում են տնայնագործական եղանակներով բուժվել: Բնական է, որ լուրջ հիվանդությունների դեպքում նման առողջապահական վարքը հանգեցնում է հիվանդության էլ ավելի խորացման, նոր բարդությունների առաջացման, բուժման ավելի դժվարացման և արդյունքում՝ մարդկային կապիտալի կորուստների: Այն փաստը, որ Հայաստանը ամբուլատոր-պոլիկլինիկական և հիվանդանոցային ծառայությունների օգտագործման դիտարկվող ցուցանիշներով 2-2.5 անգամ գիջում է ԱՊՀ և ԵՄ նորանդան երկրներից, դրա հաստատումն է:

Բավականին ցածր են նաև առողջապահական անհրաժեշտ ծառայությունների համար բնակչության վճարունակ կարողությունները: Փորձագիտական տվյալները ցույց են տալիս, որ բնակչության մեջ մեծամասնություն են կազմում այնպիսի սոցիալական խմբերը, որոնց առողջապահական ծախսերի հնարավորությունները չափազանց փոքր են: Արդյունքում՝ տարեց տարի նվազում են տնային տնտեսությունների կողմից բժշկական ծառայությունների դիմաց տրվող գումարները: Այսպես՝ ըստ 2011 թ. ՏՏԿԱՀ ստացված տվյալների՝ բժշկական ծառայությունների դիմաց կատարված ծախսերը կազմել են տնային տնտեսությունների ծառայությունների վրա կատարված ծախսերի ընդամենը 7.6 տոկոսը՝ 2009 թ. 11.2%-ի դիմաց: Փաստորեն, առողջապահությանը ուղղված ծախսերը մեկ շնչի հաշվով տարեցտարի կրճատվում են. եթե 2009 թ. կազմում էին միջինում ամսական 888 դրամ, ապա 2011 թ.՝ 686 դրամ: Հասկանալի է, որ դրանով հիվանդը չի փրկվի: Վիճակը ավելի վատ է հանրապետության գյուղերում, որտեղ գյուղի բնակիչը մեկ ամսում առողջապահության վրա ծախսում է միջինում 537 դրամ<sup>1</sup>: Առողջապահության համար կատարվող մեծ ծախսերի հետևանքով տնային տնտեսությունները կարող են հայտնվել աղքատության գծից ներքև: Տնային տնտեսությունների հարցման արդյունքում պարզվել է, որ Հայաստանի տնային տնտեսությունների 6 տոկոսն աղքատ է դարձել առողջապահության համար գրպանից ծախսեր կատարելու հետևանքով, ինչը նկատելիորեն բարձր է տարածաշրջանի և աշխարհի մյուս երկրների մեծ մասի համեմատ<sup>2</sup>:

Այդ փաստերն ընդգծում են անվճար բժշկական փաթեթի կարևորությունը, հատկապես աղքատ սպառողների համար: Ուստի, հաշվի առնելով, որ այն կապված է ընտանեկան նպաստ ստանալու հետ, կարևորվում է ոչ միայն նպաստի հասցեականության ապահովումը, այլև աղքատների և ծայրահեղ աղքատների ընդգրկվածության բարձր աստիճանը:

Պատմականորեն և տրամաբանորեն առողջապահական համակարգի ֆինանսավորման առաջնային աղբյուր է պետական բյուջեն: Ներկայումս համակարգը ֆինանսավորվում է ինչպես տեղական (պետական բյուջեն և բնակչության կողմից կատարվող վճարումները), այնպես էլ միջազգային աղբյուրներից (մարդասիրական օգնությունները, միջազգային ծրագրերը և այլն):

<sup>1</sup> Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2012, էջ 133-134:

<sup>2</sup> Ը. Ջնդոյան, Ֆինանսական հոսքերի արդյունավետությունը ՀՀ առողջապահության ոլորտում, ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետ, Տարեգիրք 2012, էջ 187:

ՀՀ-ում մասնավոր ֆինանսական միջոցների սղության (բնակչության 36 տոկոսը աղքատ է), բժշկական ծառայությունների բարձր վճարների պայմաններում էական դեր են կատարում պետական բյուջեով պետության կողմից կատարվող ծախսերը: Սակայն առողջապահական համակարգին հատկացված պետական ծախսերը բավարար չեն համակարգի և բնակչության առողջապահական կարիքները նորմալ հոգալու համար: Այսպես՝ 2005 թ. առողջապահության ոլորտին ուղղված ծախսերը կազմել են համախմբված բյուջեի ծախսերի ընդամենը 6.4 տոկոսը, 2006 թ.՝ 7.0 տոկոսը, 2007 թ.՝ 6.3 տոկոսը, 2008 թ.՝ 6.0 տոկոս 2010-2011 թթ. մնացել է գրեթե անփոփոխ՝ մոտ 6.3 տոկոսի սահմաններում: **Միևնույն ժամանակ այս ծախսերը երբևէ չեն գեևազանցել ՀՆԱ-ի 1.5 տոկոսը:** Ծախսերի նման մակարդակը ամենացածրերից մեկն է աշխարհում և շուրջ չորս անգամ գիջում է ԵՄ անդամ երկրների համապատասխան ցուցանիշին՝ կազմելով ԱՊՀ անդամ երկրների միջինի շուրջ կեսը<sup>1</sup>: ՀՀ-ում առողջապահության մեջ կատարվող ընդհանուր ծախսերում պետության ծախսերի տեսակարար կշիռը կազմում է ընդամենը 24.4% (Շվեդիայում՝ 85%, Ավստրիայում՝ 75%, Հունաստանում՝ 53%, Ղանիայում՝ 82%, Բելգիայում՝ 71.1%), իսկ մասնավոր ծախսերի տեսակարար կշիռը 68.7% (Շվեդիայում՝ 15.1%, Ղանիայում՝ 17.1%, Ավստրիայում՝ 24.4%, Բելգիայում՝ 28.9%, Հունաստանում՝ 47.2%)<sup>2</sup>: Ուստի առողջապահության ոլորտում պետական ծախսերի մակարդակի ավելացումը պետք է հանդիսանա պետական սոցիալական քաղաքականության առաջնահերթ խնդիրներից մեկը:

Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության գնահատականների՝ Հայաստանում առողջապահության ոլորտում կատարվող **մասնավոր ծախսերի մակարդակը բավականին բարձր է** (ՀՆԱ-ի նկատմամբ շուրջ 4 տոկոս), զարգացած երկրներից գիջում է միայն ԱՄՆ-ին և Շվեյցարիային: 2004 թ. օրենսդրության մեջ կատարված փոփոխությունների արդյունքում ՀՀ-ում գործում է նաև մասնավոր կամավոր բժշկական ապահովագրության ինստիտուտը, սակայն 2009 թ. ապահովագրության միջոցով կատարված առողջապահական ծախսերը կազմել են ընդհանուր մասնավոր ծախսերի ընդամենը 0.4 տոկոսը<sup>3</sup>: Ընդհանուր առմամբ Հայաստանում առողջապահության ընդհանուր ծախսերն աշխարհի ցածր և միջին եկամտով երկրներում հանդիպող ցուցանիշների շրջակայքում են: Գրեթե բոլոր ցածր և միջին եկամտով երկրները ընդհանուր առմամբ (**պետական և մասնավոր**) իրենց ՀՆԱ-ի մոտ 4-8%-ն են ծախսում առողջապահության ոլորտում: Հայաստանում առողջապահության ծախսերը կազմում են ՀՆԱ-ի շուրջ 4.6%-ը:

Այս բոլորով հանդերձ՝ Հայաստանի Հանրապետությունում այս ոլորտում կան նաև նվաճումներ: Այսպես՝ 2011 թ. կյանքի սպասվող տևողությունը, ծնվելու պահից՝ կազմել է 74.2 տարի, որն ավելի բարձր ցուցանիշ է, քան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի շատ երկրներում, այդ թվում՝ տղամարդկանց մոտ՝ 70.7 իսկ կանանց մոտ՝ 77.5 տարի: Այդ երկու ցուցանիշներն էլ գերազանցել են

<sup>1</sup> Տե՛ս **Գ. Ղարիբյան, Ա. Հակոբջանյան**, Բնակչության եկամուտների բաշխման և վերաբաշխման հարաբերությունները Հայաստանի Հանրապետության անցումային տնտեսությունում, Երևան, 2011 թ., էջ 95:

<sup>2</sup> ՀՀ առողջապահության ազգային հաշիվների 2006 թ. զեկույց, ՀՀ ԱԾԻԳ, Եր., 2007 ([www.who.int](http://www.who.int)):

<sup>3</sup> ԱՀԿ, 2011 թ.:

1990թ.-ին գրանցված համապատասխան մակարդակները: Ծնվելուց հետո մինչև 5 տարեկան երեխաների մահացության ցուցանիշները, ինչպես նշել ենք, նշանակալիորեն նվազել են: Միևնույն ժամանակ կա կարծիք, որ կյանքի սպասվող տևողությունը 33-ում բարձր է՝ ի հաշիվ ԽՍՀՄ-ի կազմում մեծացած և բժշկական ծառայություններից օգտված տարեցների հաշվին: Եթե պահպանվեն առողջապահության համակարգի արդի ցուցանիշները, ապա մոտ 20 տարի հետո կյանքի սպասվող տևողությունը կտրուկ կնվազի:

Առողջապահության ոլորտում դրական փոփոխությունների շարքին են դասվում նաև հետևյալ ծրագրերը.

1) 2011 թ. փետրվարի 1-ից հանրապետությունում ներդրված, պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների փոխհատուցման համավճարային համակարգը, որը տարածվում է անհետաձգելի և զինեկոլոգիական բժշկական օգնության ծրագրերի վրա,

2) 0-7 տարեկան երեխաներին անվճար բուժօգնության ցուցաբերման ծրագիրը,

3) Անվճար ծննդօգնության ցուցաբերման ծրագիրը,

4) Սոցիալապես անապահով խավերին անվճար բուժօգնության և դեղորայքի հատկացման ծրագիրը:

Ծիշտ է, հատկապես սոցիալական նպաստառուներին անվճար կամ արտոնյալ պայմաններով բուժօգնության ու համավճարային բուժօգնության ծրագրերի հետ կապված կան վարչարարական, կոռուպցիոն ու տեղեկատվական բնույթի խոչընդոտներ, որոնք նվազեցնում են այդ ծրագրերի արդյունավետությունը: Լուրջ հիվանդությունների դեպքում մարդիկ հաճախ չեն վստահում անվճար ծառայության որակին և պատշաճ մակարդակի բուժօգնություն ստանալու համար իրականացնում են ստվերային վճարումներ բուժող բժշկին: Այդ վճարումները չնայած լուրջ լարվածություն են առաջացնում անապահով ու աղքատ ընտանիքների համար, սակայն նրանք հաճախ ստիպված են լինում դիմել վճարովի բուժօգնության պարտքերի, բարեկամների օգնության կամ ընտանիքի ունեցվածքից որևէ բան վաճառելու ճանապարհով:

Զնայած այս ամենին, նշված ընդհանուր բնույթի ծրագրերը ամեն դեպքում որոշակի դրական ազդեցություն ունեն առողջապահական ծառայությունների մակարդակը այնպիսին դարձնելու, որ անհրաժեշտության դեպքում գոնե անվճար նվազագույն բուժօգնություն մարդիկ ստանան: Այսինքն՝ եթե մարդը չունի որակյալ բուժօգնության համար ո՛չ անհրաժեշտ միջոցներ և ո՛չ էլ որևէ կերպ դա ձեռք բերելու հնարավորություն, նա կարող է ապավինել անվճար բուժօգնության գործող ծրագրին: Այսպիսով՝ եթե ընդհանրացնենք, ապա կարելի է առանձնացնել աղքատների ու անապահովների կարիքների հետևյալ խմբերը.

- կանխարգելիչ առողջապահական ծառայությունների կարիք,
- ախտորոշիչ առողջապահական ծառայությունների կարիք,
- հիվանդանոցային որակյալ բուժում ստանալու կարիք,
- դեղորայքի ձեռք բերման կարիք:

Ինչ վերաբերում է համակարգային բնույթի խնդիրներին, ապա դրանց թվում կարելի է առանձնացնել.

1) մարզային ու տարածքային առողջապահական ծառայությունների որակական անհամաչափության հաղթահարումը,

2) որակյալ հիվանդանոցային բուժօգնությունը և դեղորայքի մատչելիությունը խոչընդոտող վարչարարության պարզեցում և կոռուպցիոն մեխանիզմների վերացում,

3) սոցիալական նպաստառուների ցուցակներում չմտնող, սակայն իրականում նման ծանր սոցիալական պայմաններ ունեցող խմբերին առողջապահական ծառայությունների մատչելության բարձրացում:

Հատուկ ուշադրություն է պետք դարձնել հիվանդությունների վաղ ախտորոշմանը, կանխարգելմանն ու բուժմանն ուղղված միջոցառումներին և դրանց իրականացման արդյունավետությանը: Միևնույն ժամանակ պետք է մատչելի դարձնել առանցքային ծառայությունները (հատկապես մարզերում)՝ համապատասխան որակ ապահովելով հանդերձ:

Խիստ կարևոր են սոցիալապես անապահով և առանձին այլ խմբերում ընդգրկված անձանց հիվանդանոցային մասնագիտացված բուժօգնության ապահովման հարցերը: Սոցիալական անապահով խմբերին առողջապահական ծառայությունների մատուցման երաշխիքների ապահովման և համապատասխան ծրագրերի արդյունավետության բարձրացման նպատակով ՀՀ Կառավարությունը պետք է սոցիալական փաթեթի շրջանակում բժշկական ապահովագրության ծրագրի արդյունքների մանրամասն ուսումնասիրման և վերլուծության արդյունքում ապահովի սոցիալապես անապահով խմբերին պետության կողմից տրամադրվող անվճար կամ արտոնյալ պայմաններով առողջապահական ծառայություններ:

Առողջապահության ոլորտում պետական ծախսերի շարունակական ավելացումը դիտվում է սահմանված գերակայությունների ուղղությամբ միջոցառումների իրականացման առանցքային ուղղություններից մեկը: Այսպես՝ ՀՀ 2012-2015 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսվում է առողջապահության ոլորտում **պետական ծախսերի մակարդակը 2017 թ. հասցնել ՀՆԱ-ի նկատմամբ 1.9 տոկոսի, իսկ 2025 թ.՝ շուրջ 3 տոկոսի**: Հաշվի առնելով բյուջետային խիստ սահմանափակումները՝ 2013-2015 թթ. պետական առողջապահական ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունը մնալու է գրեթե անփոփոխ (շուրջ 1.6 տոկոս), չնայած այն հանգամանքին, որ այդ ժամանակահատվածում անվանական արտահայտությամբ առողջապահության ոլորտում պետական ծախսերը միջին հաշվով աճելու են տարեկան մոտ 11 տոկոսով: Այդուհանդերձ, սկսած 2016 թվականից, նախատեսվում է պետական ծախսեր/ՀՆԱ հարաբերակցության տարեկան 0.1-0.2 տոկոսային կետով ավելացում, որի արդյունքում ակնկալվում է ոլորտում իրական արտահայտությամբ պետական ծախսերի ավելացում 2011 թ. համեմատ՝ 2017 թ.՝ 1.6, իսկ 2025 թ.՝ շուրջ 4.2 անգամ:

Ծրագրվող ժամանակահատվածում առողջապահության ոլորտը լինելու է պետական ծախսային գերակայություններից մեկը, և ոլորտին հատկացումներն աճելու են ավելի արագ, քան համախմբված բյուջեի ընդամենը ծախսերը:

Արդյունքում ակնկալվում է, որ առողջապահության ոլորտում պետական ծախսերի մասնաբաժինը համախմբված բյուջեի ընդամենը ծախսերում 2017 թ.

կկազմի 7.1 տոկոս, իսկ 2025 թ.՝ 9.7 տոկոս՝ 2011 թ. արձանագրված փաստացի 6.3 տոկոսի համեմատ<sup>1</sup>:

Ընտանիքի սոցիալ-հոգեբանական մթնոլորտը, ծնողների միջև առկա փոխհարաբերությունները շատ կարևոր են երեխայի, հատկապես դեռահասի ֆիզիկական և հոգեկան բարեկեցության համար: Սոցիոլոգիական հետազոտությունների տվյալների համաձայն՝ այն ընտանիքները, որտեղ ծնողներն իրենց փոխհարաբերությունները գնահատում են լավ, երեխաների 74%-ը ունի «գերազանց» առողջություն, իսկ այն ընտանիքներում որտեղ պահպանվում է լարված ու անառողջ հոգեբանական մթնոլորտ, երեխաների 33%-ը ունի «վատ» առողջություն:

Նշված դրական ու թերի կողմերով հանդերձ հանրապետությունում աղքատ ու սոցիալապես անապահով խավերի համար որակյալ առողջապահական այնպիսի ծառայությունների ստանալը, որը կապահովի նրա մարդկային կայուն զարգացմանը, այսօր հասանելի չէ: Այս առումով կարելի է ներկայացնել մի քանի առաջարկներ, որոնք, մեր կարծիքով, կնպաստեն առաջիկա տարիներին վերը նշված հիմնախնդիրները մեղմելու ու լուծելու համար.

#### **Կարճաժամկետ ծրագրեր՝ հրատապ խնդիրները լուծելու համար.**

1) բնակչության միջավայրում տարեկան նվազագույնը երկու անգամ լայնածավալ անվճար ախտորոշիչ ու կանխարգելիչ առողջապահական ծրագրերի պարբերական իրականացում,

2) մշակել ու իրականացնել սոցիալապես անապահով, բայց որևէ սոցիալական ծրագրի մեջ չներառվածների համար առողջապահական անվճար ծառայություններ ստանալու համակարգ,

3) համավճարային սկզբունքի տարածում առողջապահության բոլոր ոլորտների վրա (ներկայումս այն վերաբերում է միայն գինեկոլոգիական ու անհետաձգելի բժշկական միջամտության կարիք ունեցող հիվանդություններին),

4) առողջապահական որակյալ ծառայությունների ապահովման նպատակով մարզային բնակավայրերի բնակիչների համար առողջապահական որակյալ ծառայությունների մատուցման պարբերական ակցիաների իրականացում,

5) համապատասխան որոշումներով ապահովել նշված ծրագրերի բյուջետային ֆինանսավորումը,

6) ակտիվացնել տարբեր տեսակի բարեգործական կամ հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությունը և առողջապահական ոլորտում նրանց կողմից իրականացվող ծրագրերի հետ պետական ծրագրերի սինխրոնիզացումը: Ձևավորել բնակչության անապահով խավերի առողջապահական կարիքների մասին տեղեկատվական տվյալներ և տարածել դրանք ոլորտում ծրագրեր իրականացնող բոլոր հնարավոր դերակատարներին,

7) աղքատ ու անապահով խավերին տրամադրվող պետապատվերով անվճար կամ արտոնյալ առողջապահական ծառայությունների որակի բարձրացում և կատարելագործում:

Այսպիսով ՀՀ առողջապահական համակարգը դեռևս բավարար չափով չի իրականացնում իր հիմնական առաքելությունը՝ անհրաժեշտ մակարդակով չի նպաստում բնակչության, ինչպես նաև մարդկային կապիտալի ընդլայնված վե-

<sup>1</sup> ՀՀ 2012-2015 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, նոյեմբեր, 2012 թ., էջ 104-105:

րարտադրությանը: Այդ առումով բարեփոխումներն այս համակարգում հիմնականում պետք է ուղղվեն համակարգի կառավարման գործընթացի արդյունավետության բարձրացմանը, կոռուպցիայի և ստվերային շրջանառության կրճատմանն ու վերացմանը և դեղորայքային շուկայում զնագոյացման կարգավորմանը: Այստեղ խիստ կարևոր է համակարգում ֆինանսավորման նոր մեխանիզմների, մասնավորապես բժշկական ապահովագրության համակարգի ներդրումը: Կառավարության խնդիրն է, որպեսզի բժշկական ապահովագրության համակարգի ներդրմանը կրկին չձևավորվի արատավոր ստվերային շրջանառության այնպիսի մեխանիզմ, որն առկա է այսօր: Դրա համար պետք է կիրառվեն ոչ միայն կառավարման վարչական ու տնտեսական լծակները, այլև բարոյահոգեբանական լծակները, բնակչության շրջանում տարվի մեծ ծավալի բացատրական աշխատանք:

### ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում բնակչության առողջությունը դիտարկվում է մարդկային կապիտալի տեսակետից: Վերլուծվում են ծնելիության նվազման և սիրտանոթային հիվանդությունների ու չարորակ նորագոյացությունների արագ աճման միտումները և առաջարկվում դրանք հաղթահարելու ուղիները:

### АННОТАЦИЯ

**ГАРИБЯН Г., ЕГИАЗАРЯН М., ИСААКЯН Р. – ЗДОРОВЬЕ НАСЕЛЕНИЯ КАК КОМПОНЕНТ ЧЕЛОВЕЧЕСКОГО КАПИТАЛА, ЕГО ПОТЕРИ И ПРОБЛЕМЫ ПРЕДОТВРАЩЕНИЯ**

В статье здоровье населения Армении рассматривается с точки зрения человеческого капитала. Анализируются проблемы снижения уровня рождаемости, повышения детской смертности, роста сердечно-сосудистых и злокачественных заболеваний. Обосновываются и предлагаются пути повышения уровня здоровья и рождаемости, снижения заболеваемости в стране.

### SUMMARY

**GHARIBYAN G., EGHIAZARYAN M., ISAHAKYAN R. – PUBLIC HEALTH AS A COMPONENT OF HUMAN CAPITAL, ITS LOSS AND PROBLEMS OF PREVENTION.**

Health is also considered as human capital. The article analyzes the problems of birthrate reduction, increase of child mortality, growth of cardiovascular and malignant diseases and proposes ways to overcome them.

**ՇԵՐԱԶ ԶՆՊՅԱԼ**

*ԵՊՀ կառավարման և գործարարության  
ամբիոնի ասպիրանտ*

**ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՄԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԴՐԱ  
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Արդի փուլում բոլոր երկրները կանգնած են առողջապահության համակարգի ֆինանսավորման ոլորտում որոշումների կայացման բարդ խնդիրների առջև: Դա օբյեկտիվորեն պայմանավորված է նոր բժշկական տեխնոլոգիաների և դեղամիջոցների ներդրման, հիվանդությունների կառուցվածքի փոփոխության, ժողովրդագրական հիմնախնդիրների առաջացման, բնակչության կարիքների բարձրացման, բարեկեցության աճին զուգընթաց մարդկանց աճող սպասումների, որոշ երկրներում նաև բնակչության ծերացման գործոններով, որոնք հանգեցնում են առողջապահական ծախսերի մշտական աճին: Դրա հետ մեկտեղ ֆինանսատնտեսական հետձգնաժամային ֆոնի վրա ընթացող մակրոտնտեսական, հարկաբյուջետային, սոցիալ-տնտեսական, միգրացիոն զարգացումները ուղղակի սահմանափակում են կառավարությունների կարողությունը՝ մեծացնելու առողջապահության ոլորտին հատկացվող պետական միջոցների ծավալը: Ծախսերի մեծացման անհրաժեշտությունը և մյուս կողմից դրանք մեծացնելու կառավարությունների սահմանափակ կարողությունները ստիպում են գնալ առողջապահության համակարգերի ֆինանսավորման սխեմաների արմատական բարեփոխումների: Հայաստանում հետձգնաժամային փուլում, բացի վերը նշված գործոններից, լրացուցիչ ճնշում են ավելացնում աղքատության բարձր մակարդակը, բժշկական ծառայությունների նկատմամբ ցածր վճարունակ պահանջարկը, իսկ առանձին դեպքերում նաև վճարունակ պահանջարկի բացակայությունը, ինչպես նաև հետձգնաժամային փուլում պետական բյուջեի սուղ հնարավորությունները:

Սույն հիմնախնդրի վերաբերյալ Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կողմից իրականացված ռազմավարական հետազոտություններից մեկում նշվում է, որ միանշանակ պատասխան այն հարցին, թե ինչպես կարելի է ֆինանսավորել առողջապահական համակարգը, գոյություն չունի: Երկրները տարբերվում են ոչ միայն որոշակի առկա խնդիրների թնջուկով, այլև որոշակի պատմական ժամանակահատվածում ձևավորված առողջապահության ֆինանսավորման համակարգերով<sup>1</sup>: Յուրաքանչյուր երկրում յուրովի են ձևավորվել և սեփական ճանապարհով են զարգացել բնակչության առողջության պահպանման և բուժօգնության համար անհրաժեշտ միջոցների ձեռքբերման եղանակները: Առողջապահության ոլորտին հատկացվող համրային միջոցների ծավալն ու դրանց օգտագործման արդյունավետությունը պայմանավորված է նաև

<sup>1</sup> **Joseph Kutzin**, Политика финансирования здравоохранения: руководство для лиц, принимающих решения Стратегический документ по вопросам финансирования здравоохранения, 2008, с. 1, <http://www.euro.who.int>

տվյալ երկրում պատմականորեն ձևավորված տնտեսական, քաղաքական, իրավական, բարոյական, էթիկական և այլ հարաբերությունների համալիր բարդ գործոններով:

Համաձայն ԱՀԿ-ի չափորոշիչի բնակչության առողջապահության վրա կատարվող ծախսերը նվազագույնը պետք է կազմեն ՀՆԱ-ի 6-6.5%-ը: ՀՀ-ում 2000 թ. այն կազմել է 6.3%, իսկ 2010 թ. 4.5%, իսկ, օրինակ, ԱՀԿ-ի եվրոպական տարածաշրջանի երկրներում համապատասխանաբար՝ 8.0% և 9.3%: ԱՀԿ-ի անդամ երկրներում առավելագույն ցուցանիշը կազմել է՝ 21.9% և 20.8%, միջինը համապատասխանաբար՝ 5.6% և 6.5%<sup>1</sup>: Կարևոր ցուցանիշ է նաև առողջապահության ընդհանուր ծախսերում պետական ծախսերի տեսակարար կշիռը: Այն ՀՀ-ում 2000 թ. կազմել է 18.1%, իսկ 2010 թ.՝ 40.5%, ԱՀԿ-ի եվրոպական տարածաշրջանի երկրներում համապատասխանաբար՝ 73.9% և 74.4%: ԱՀԿ-ի անդամ երկրներում առավելագույն ցուցանիշը կազմել է համապատասխանաբար՝ 100% և 99.9%, միջինը՝ 58.4% և 60.8%<sup>2</sup>:

Նշված ցուցանիշների դինամիկան և համեմատական պատկերը փաստում են, որ ՀՀ-ում առողջապահության բնագավառի ֆինանսավորումը պահանջում է նոր մոտեցումներ, որոնք պետք է ներառեն հիվանդների կողմից վճարվող պաշտոնական համավճարի, բուժօժանայությունների գների միասնական համակարգի, բուժհաստատությունների բյուջեների հաշվարկման նոր սկզբունքների մշակումը: Դրա համար ելակետ պետք է հանդիսանա առողջապահության ֆինանսավորման բոլոր աղբյուրների կոնսոլիդացման մոտեցումը և բազմախողովակ ֆինանսավորման համակարգի լիարժեք ձևավորումը: Այն արդեն իսկ առկա է և հիմնված է պետական ֆինանսավորման, պաշտոնական համավճարների և առողջապահության ապահովագրության աղբյուրների վրա: Բազմախողովակ ֆինանսավորումը, հնարավորություն տալով մեղմելու առողջապահության պետական աղբյուրի անբավարարության հետևանքով առողջապահության առկա ընդհանուր զգալի թերֆինանսավորումը, միաժամանակ խնդիր է դնում ապահովելու պետական ֆինանսավորման արդյունավետությունը: Նկատենք, որ խնդիրը պետական ֆինանսավորման արդյունավետության ապահովելն է, այլ ոչ թե զուտ բարձրացնելը: Ստեղծված իրավիճակում խնդիրը հանգում է նրան, որ արդեն իսկ գործող պաշտոնական համավճարների համակարգը, զգալի չափով փակելով ընդհանուր ֆինանսավորման ճեղքվածքը, իր հերթին ճնշում է պետական ֆինանսավորման ծավալի ավելացման վրա, որն էլ իր հերթին պայմանավորված է բուժօժանայությունների միասնական գների արդյունավետ համակարգի և ընդհանուր առմամբ առողջապահության համակարգի ծախսերի և բժշկական օգնության արդյունավետության գնահատման խնդրով՝ անկախ դրա ֆինանսավորման աղբյուրներից:

Ինչևիցե, բոլոր երկրների համար առողջապահության ծախսերի մակարդակի ավելացումը սահմանափակված է, որպեսզի տվյալ ժամանակահատվածում ապահովվի բժշկական սպասարկումների առավելագույն պահանջվող ծախսերի մակարդակը: Բուժօգնության համար առկա պահանջվող տարբերակների և առողջապահության սահմանափակ ֆինանսական հնարավորությունների անհա-

<sup>1</sup> World Health Organization, World Health Statistics 2013, p. 131-143, [http://www.who.int/gho/publications/world\\_health\\_statistics/EN\\_WHS2013\\_Full.pdf](http://www.who.int/gho/publications/world_health_statistics/EN_WHS2013_Full.pdf),

<sup>2</sup> Նույնը:

վասարության վերացման համար պահանջվում է, որպեսզի *խնդիրը միաժամանակ կենտրոնացվի առավելապես առողջապահության համակարգի ծախսերի և բժշկական օգնության արդյունավետության վրա*: Ընդ որում՝ առողջապահական զարգացած համակարգեր ունեցող երկրներում կարևոր միտում է ծախսերի առավելագույն խնայողության փոխարինումը առողջապահությունում ներդրված ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործումով: Նշված տեսանկյունից կարևոր է առողջապահական համակարգում արդյունավետության կատեգորիայի առանձնահատկությունների բացահայտումը:

Առողջապահության համակարգի արդյունավետությունը չի նույնացվում հանրնդհանուր տնտեսական արդյունավետության հետ և, որպես կանոն, կապված է կոնկրետ արդյունքների ձեռքբերման մակարդակի հետ: Առողջապահության ոլորտում նույնիսկ առավել որակավորված աշխատանքի և ժամանակակից բժշկական տեխնոլոգիաների օգտագործման դեպքում վերջնական արդյունքը կարող է լինել զրոյական կամ նույնիսկ բացասական: Առողջապահության համակարգի և գործունեության և (կամ) միջոցառումների արդյունավետությունը չափվում է ցուցանիշների համախմբով, որոնցից յուրաքանչյուրը բնութագրում է առողջապահության ծառայության գործունեության որոշակի առանցքը: Առողջապահության համակարգի արդյունավետությունը միանշանակ որոշել, առավել ևս ճշգրիտ չափել հնարավոր չէ: Առողջապահության արդյունավետության դեպքում որոշիչ են արդյունավետության երեք առանցքները՝ սոցիալական, առողջապահական և տնտեսական: Դա նշանակում է, որ ի տարբերություն այլ ոլորտների՝ առողջապահության այս կամ այն միջոցառումների, ծառայությունների և (կամ) ծրագրերի արդյունքները անհրաժեշտ է վերլուծել սոցիալական, առողջապահական, տնտեսական արդյունավետության տեսանկյունից, որոնցում գերակա է առողջապահական և սոցիալական արդյունավետությունը, իսկ տնտեսական արդյունավետությունը որոշ առումով ստորադաս է: Առանց առողջապահական և սոցիալական արդյունավետության գնահատման՝ հնարավոր չէ որոշել տնտեսական արդյունավետությունը: Առողջապահության արդյունավետության նշված երեք ասպեկտների միջև իհարկե առկա է որոշակի փոխադարձ կապ:

Առողջապահական արդյունավետությունը բնութագրվում է առողջապահական արդյունքի ձեռքբերման մակարդակով: Անհատական հիվանդի դեպքում դա ենթադրում է անձի առողջացում և (կամ) վիճակի բարելավում, առանձին օրգանների և (կամ) համակարգերի կորցրած գործառույթների վերականգնում: Առողջապահական հաստատությունների և ընդհանուր առմամբ ոլորտի մակարդակով արդյունավետությունը չափվում է մի շարք առանձնահատուկ ցուցանիշներով՝ բուժված հիվանդների տեսակարար կշռով, հիվանդությունների թրոնիկական ձևի վերածման նվազեցումով, ազգաբնակչության հիվանդությունների ենթարկվելու մակարդակի նվազեցումով:

Սոցիալական արդյունավետությունը բնութագրվում է սոցիալական արդյունքի ձեռքբերման մակարդակով: Անհատական հիվանդի դեպքում կարևոր ցուցանիշ է վերադարձը աշխատունակ վիճակին և ակտիվ սոցիալական կյանքին, ինչպես նաև գոհունակությունը բուժօգնությունից: Երևի մակարդակով կարևոր ամփոփ ցուցանիշ է սպասվելիք կյանքի տևողության ավելացումը, բնակչության մահացության և հաշմանդամության ցուցանիշի նվազումը, հասարակության

կողմից առողջապահության համակարգի կողմից ընդհանուր բուժօգնության նկատմամբ գոհունակությունը:

Տնտեսական արդյունավետությունը հանգում է կատարված ծախսերի և ստացված արդյունքների համադրությանը: Տնտեսական արդյունավետության հաշվարկը կապված է առկա ռեսուրսների առավել խնայողական օգտագործման տարբերակի հետ: Այս ցուցանիշը անհրաժեշտ է առողջապահության համակարգի ընդհանուր գործունեության, դրա առանձին ստորաբաժանումների և կառույցների գնահատման ժամանակ, ինչպես նաև բնակչության առողջապահական միջոցառումների տնտեսական հիմնավորման դեպքում:

Այսպիսով՝ կարելի է փաստել, որ բժշկական պրակտիկայի, առողջապահական համալիր միջոցառումների, հիգիենիկ և կանխարգելիչ միջոցառումների ցանկացած տեսակի խումբ տարբեր մակարդակներով՝ առանձին կոլեկտիվների, վարչական տարածքների, պետք է գնահատվի սոցիալական, բժշկական և տնտեսական արդյունավետության տեսանկյունից: Այստեղ հարկ է նշել առողջապահության արդյունավետության գնահատման առաջնային ևս մեկ չափորոշիչի առողջության դինամիկան արտահայտող ցուցանիշների մասին, օրինակ՝ որոշակի ժամանակահատվածում հիվանդանալու, մահացության, հաշմանդամության կրճատման, աշխատանքի տևողության ժամանակահատվածի բարձրացման և այլն:

Առողջապահության առանձնահատկությունն այն է, որ հաճախ բուժական և կանխարգելիչ բնույթի բժշկական միջոցառումներն ու գործունեությունը կարող են լինել տնտեսապես անարդյունավետ, սակայն բժշկական և սոցիալական ազդեցությունը պահանջում է դրանց իրականացումը: Օրինակ՝ քրոնիկ հիվանդություններ ունեցող տարեց մարդկանց, մտավոր հետամնացություն ունեցող հիվանդների առողջապահական սպասարկումների կազմակերպումը առողջապահական և սոցիալական ակնհայտ արդյունավետության պարագայում բացասական կլինի տնտեսական արդյունավետության առումով: Ժամանակակից բժշկական դեղամիջոցների, ինտենսիվ թերապիայի, վերակենդանացման տեխնոլոգիաների կիրառման դեպքում ձեռք է բերվում առողջապահական և սոցիալական արդյունք՝ փրկվում է մարդու կյանքը, սակայն միևնույն ժամանակ նույն անձը կարող է դառնալ հաշմանդամ և կորցնել աշխատունակությունն ու հանրային աշխատանքով զբաղվելու հնարավորությունը:

Ինչևիցե, այդ իրողության հետ մեկտեղ սահմանափակ ռեսուրսների պայմաններում տնտեսական արդյունավետության չափորոշիչը առողջապահական ու սոցիալական արդյունավետության հետ մեկտեղ օգտակար և անհրաժեշտ է այս կամ այն միջոցառումների հերթականության ընտրության համար: Առողջապահության մյուս առանձնահատկությունն այն էն, որ բուժօգնության համար կատարված ծախսումները կարող են գերազանցել ակնկալվող տնտեսական արդյունքները: Օրինակ՝ աշխատողների աշխատունակության վերականգնումը, որը ենթադրում է ազգային եկամտի կորուստների նվազում, ապրանքների (և ծառայությունների) թերարտադրության կրճատում, բերում է զգալի տնտեսական օգուտներ: Միևնույն ժամանակ հաշմանդամ թոշակառուի կամ հաշմանդամի առողջացումը տնտեսական օգուտներ չի բերում, ավելին՝ նշանակում է լրացուցիչ ծախսերի ավելացում՝ ի հաշիվ ծերության կամ հաշմանդամության նպաստների վճարման անհրաժեշտության: Առողջապահության մեջ բժշկի ծախսած աշխա-

տանքի քանակի և վերջնական արդյունքի միջև հստակ հարաբերակցություն գոյություն չունի: Միշտ չէ, որ առողջության վերականգնման հաշվին պահպանված աշխատանքը գերազանցում է բժշկի ներդրածը՝ նույն գումարի չափով: Օրինակ՝ ծեր անձի նույն պաթոլոգիայի ժամանակ ավելի շատ ժամանակ և գումար կծախսվի, քան երիտասարդի դեպքում, իսկ արդյունքները կարող են լինել ոչ միանշանակ: Այստեղ ավելորդ չէ նաև դիտարկել բժշկի վարձատրության պատճառով երկուսը: Օրինակ՝ հին Եգիպտոսում և Չինաստանում բժշկի հոնորարը որոշվում էր խիստ առանձնահատուկ ձևաչափերով<sup>1</sup>: Այսպես՝ Եգիպտոսում հիվանդը հիվանդությունից հետո ապաքինվելիս վճարում էր արծաթով՝ իր մազերի կշռի չափով: Իմաստն այն էր, որ երակատև հիվանդության դեպքում մազերը երկարում էին, և բժիշկը հետաքրքրված էր հիվանդի երկարաժամկետ բուժմամբ: Չին Չինաստանում էլիտան սպասարկող բժիշկները ստանում էին իրենց վարձատրությունը մինչև այն պահը, երբ անձը առողջ էր, այսինքն՝ փաստացի վարձատրություն ստանում էին առողջության վիճակի համար: Համակարգը ստիպում էր, որպեսզի բժիշկը շահագրգիռ լինի այցելուի առողջության պահպանման հարցում:

Առողջապահության տնտեսական արդյունավետության **(SU)** դրսևորումների ըմբռնման համար հետաքրքիր է առողջապահության գործառույթներ իրականացնող կառույցների և աշխատողների աշխատանքի հաջորդող ներդրումների վերլուծությունը: Առավել արդյունավետ են բուժման սկզբնական ծախսերը, հատկապես այն փուլում, երբ ապահովվում է հիվանդության բեկումնային շրջադարձը: Հետագա ծախսերը օգնում են արագացնել վերականգնումը, սակայն սկզբունքորեն դրանք այլևս այնքան արդյունավետ չեն, որքան սկզբնական կամ «բեկումնային» փուլի աշխատաժամանակի ծախսերը: Առողջապահության համակարգի արդյունավետությունը որոշելու մոտեցումները մեթոդաբանական առումով հիմնականում հանգում են առանձին առողջապահական միջոցառումների ծախսերի և այս կամ այն հիվանդությունների հետևանքով վնասների համեմատական չափմանը:

Առողջապահության համակարգի տնտեսական արդյունավետության **(SU)** հիմքում արժեքային ցուցանիշներն են: Մասնավոր խնդրի դեպքում յուրաքանչյուր միջոցառման տնտեսական արդյունավետությունը (տնտեսական էֆեկտը) չափվում է ստացված օգուտները արտահայտող գումարի և դրա համար պահանջվող ծախսումների հարաբերակցությամբ: Նկատենք, որ տնտեսական արդյունք (էֆեկտ) ասելով, որպես կանոն, հասկանում են կանխարգելված տնտեսական վնասը կամ այն վնասը, որը հաջողվել է կանխել համալիր բժշկական միջոցառումների իրականացման շնորհիվ: Տնտեսական արդյունքը որոշվում է որպես հիվանդության կամ մահացության պատճառած տնտեսական կորուստների և դրանցից առաջ ու հետո կատարված բուժական կանխարգելիչ միջոցառումների ծախսերի տարբերություն: Արդյունավետության ցուցանիշները պետք է համապատասխանեն հետևյալ պահանջներին՝ ունենան քանակական արտահայտություն, մատչելի և հավաստի տեղեկատվական բազա, լինեն պարզ հաշվարկման համար:

<sup>1</sup> Страхование в системе здравоохранения: текущие тенденции и перспективы, Компания «Простобанк Консалтинг», [http://www.prostobank.ua/finansovygy\\_gid/](http://www.prostobank.ua/finansovygy_gid/)

*ըստ վերը նշվածի տնտեսական արդյունավետության՝ ՏԱ տրամաբանության այն կարելի է հաշվարկել հետևյալ բանաձևով.*

$$SU = \frac{S.Արդ.}{ԱԾՏԾ}$$

որտեղ **ԱԾՏԾ**-ն՝ առողջապահական ծրագրի հետ կապված տնտեսական ծախսերն են:

Այլ հարց է առողջապահական և սոցիալական արդյունավետությունների՝ ԱԱ-ի և ՍԱ-ի հաշվարկը: Դրանց գործնական կիրառության համար նպատակահարմար է օգտագործել ինտեգրալ ցուցանիշներ: Առողջապահական և սոցիալական արդյունավետությունների հաշվարկի ելակետը ևս ձեռքբերված արդյունքն է, որը անհրաժեշտ է համադրել դրա դրսևորման հաճախականության հետ: Այստեղ մենք համակարծիք ենք Ե. Օրլովի և Օ. Սոկոլովայի մոտեցման հետ, ըստ որի՝ առողջապահական արդյունավետությունը կարելի է հաշվարկել հետևյալ բանաձևով<sup>1</sup>.

$$ԱԱ = \frac{ՁԱԱՔ}{ԳԴՔ}$$

որտեղ՝ **ՁԱԱՔ**-ն՝ ձեռքբերված առողջապահական արդյունքների քանակն է, իսկ **ԳԴՔ**՝ գնահատվող դեպքերի քանակը:

Մինևույն ժամանակ բանաձևի հայտարարում նշված գնահատվող դեպքերի ցուցանիշը ենթադրում է դրա բացահայտում որևէ պահին՝ դրա համար անցկացված հարցման արդյունքներով: Այդ պատճառով նպատակահարմար է հայտարարի ցուցանիշը փոխարինել որոշակի հաշվետու ժամանակահատվածում գրանցված դեպքերի քանակով, որի վիճակագրությունը նաև առկա է: Վերը նշվածի առումով բանաձևի համարիչը ևս ճշգրտման կարիք ունի, տվյալների մատչելի ձեռքբերման նպատակով այն պետք է սահմանվի հետևյալ կերպ՝ ձեռքբերված առողջապահական արդյունքների քանակը, ըստ հիվանդության համար սահմանված նորմատիվի, այն է՝ սահմանված ժամկետում և ռեսուրսների օգտագործմամբ հիվանդի ապաքինումը: Բանաձևը կունենա հետևյալ տեսքը.

$$ԱԱ = \frac{ՆՁԱԱՔ}{ԳԴՔ}$$

որտեղ **ՆՁԱԱՔ**-ն՝ նորմատիվների միջակայքում ձեռքբերված առողջապահական արդյունքների քանակն է:

<sup>1</sup> Категория эффективности в системе здравоохранения, Е.М. Орлов, О.Н. Соколова, стр. 73, <http://rae.ru/fs/pdf/2010/4/11.pdf>

Մեր կողմից նշված սոցիալական արդյունավետության ցուցանիշը՝ ՍԱ-ն, հաշվարկվում է հետևյալ բանաձևով<sup>1</sup>։

$$\text{ՍԱ} = \frac{\text{ՀԲՕԲՔ}}{\text{ԳՂՔ}}$$

որտեղ, ՀԲՕԲՔ-ն հիվանդի կողմից բժշկական օգնության բավարարվածության դեպքերի քանակն է։

Վերը նշված մեկնաբանության համաձայն՝ բանաձևի հայտարարը առաջարկում ենք փոխարինել գրանցված դեպքերի քանակով, իսկ համարիչում ցուցանիշը նշել որպես ձեռքբերված առողջապահական արդյունքների քանակ, այն է՝ ապաքինումը, որը հանգեցրել է հիվանդի աշխատունակության ամբողջությամբ վերականգման և (կամ) չի հանգեցրել հիվանդության դեպքի հետ կապված հաշմանդամության որևէ խմբի ձեռքբերման։ Բանաձևի տեսքը չի փոխվի, սակայն հարկ կլինի ճշտված ներկայացնել հայտարարն ու համարիչը՝ համաձայն մեր կողմից նշված մեկնաբանության։

Միաժամանակ առողջապահական և սոցիալական արդյունավետության ցուցանիշները կարելի է հաշվարկել վերը նշված ցուցանիշներով, որը կպահանջի նաև որևէ պահի դրությամբ միանվագ հարցախույզի իրականացում։

Արդյունավետության գնահատման ցուցանիշների չափորոշիչները պետք է հանդիսանան.

- 1) ցուցանիշի էտալոնային շեմը, որին պետք է ձգտեն առողջապահության գործառույթ իրականացնող անձինք ( $K=1$ ), իսկ տնտեսական արդյունավետության դեպքում ( $K>1$ ),
- 2) միջինացված ցուցանիշը՝ բուժպրոֆիլակտիկ առողջապահական հաստատության, բաժանմունքի և (կամ) տարածաշրջանի միավորի համար,
- 3) կոնկրետ ցուցանիշի դինամիկան՝ կոնկրետ բժշկի մոտ, բաժանմունքում, առողջապահական հաստատությունում։

Արդյունավետության գնահատման համար էական են տեղեկատվական համակարգերը։ Արդյունավետության ցուցանիշների հաշվարկման համար մի կողմից հիմք են հանդիսանում առողջապահական մարմինների կողմից հավաքագրվող բժշկական վիճակագրության ցուցանիշները (ազգաբնակչության բուժ. սպասարկումները և այլն) և մյուս կողմից՝ բժշկական հաստատությունների կողմից օգտագործվող ֆինանսական ռեսուրսների վերաբերյալ տվյալները։ Այդուհանդերձ, հարկ է նշել, որ առողջապահական ծառայությունների մի շարք ցուցանիշներ պետական վիճակագրության մակարդակով ներկայացված չեն։ Դրանք հիմնականում վերաբերում են առողջապահության ծառայությունների առողջապահական ու սոցիալական արդյունավետությանը և արտացոլում են բուժօգնության որակը։

Ինչպես ցանկացած ոլորտում, այնպես էլ առողջապահության մեջ արդյունավետության գնահատման համար արդյունավետության ցուցանիշների համապարփակ համակարգի հետ մեկտեղ խիստ կարևոր է մշակել ինտեգրալ կամ ամ-

<sup>1</sup> Նույնը։

փոփ ցուցանիշներ, որոնք, կբնութագրեն նպատակադրումներին հասնելու աստիճանը: Մոնիթորինգի համար մշակվող ցուցանիշները պետք է արտացոլեն դիտարկվող ծառայությունների գործունեությունը, լինեն չափման ենթակա, հնարավորություն տան չափելու մատուցված ծառայության արդյունքը և հաշվետու ժամանակահատվածում հասանելի լինեն ձեռքբերման առումով:

Արդյունավետության ինտեգրալ ցուցանիշների կիրառումը հնարավորություն կտա հաշվի առնելու վերջնական արդյունքի վրա բազմաթիվ գործոնների ազդեցությունը, մեթոդաբանական լուծումները կիրառական առումով, դրանք անհրաժեշտ է արտացոլել նորմատիվաիրավական փաստաթղթերում, ըստ որի՝ արդյունավետության ինտեգրալ ցուցանիշները կմտնեն շրջանառության մեջ: Մշակված մեթոդաբանությունը պետք է հիմնված լինի առողջապահական և տնտեսական չափորոշիչների վրա: Կիրարկումը ապահովող մյուս կարևոր գործոնը վերլուծության նպատակով ավտոմատացված տեղեկատվական համակարգերի ներդրումն է:

Արդյունավետության ինտեգրալ ցուցանիշների մշակման առկա դժվարություններով հանդերձ՝ հարկ է նշել, որ առողջապահության ոլորտում տեղեկատվության համալիր, համակարգված կիրառությունը կարևոր է առողջապահության տնտեսական և սոցիալական արդյունավետության բարձրացման առումով:

Տարեկան արդյունքներով տարբեր բուժաբոֆիլակտիկ հաստատությունների արդյունավետության ցուցանիշների համեմատական վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտելու բազմաթիվ կառավարման խնդիրներ, սակայն առավել արժեքավոր տեղեկատվությունը ձեռք է բերվում երկարաժամկետ (մի քանի տարիների) ցուցանիշների մոնիթորինգի ընթացքում: Ընդ որում՝ ցուցանիշների կիրառական հաշվարկի ժամանակ որպես նորմատիվային արժեք պետք է օգտագործվեն որակի չափորոշիչներն ու առողջապահական տնտեսական նորմատիվները:

Վերը նշվածից ելնելով՝ հանգում ենք հետևյալ եզրակացությունների.

- Առողջապահական համակարգի արդյունավետության կատեգորիայի կարևոր առանձնահատկությունն այն է, որ այն անհրաժեշտ է գնահատել երեք առանցքներով՝ սոցիալական, առողջապահական և տնտեսական: Ընդ որում՝ սոցիալական և առողջապահական արդյունավետությունը շատ կարևոր է բժշկական տեխնոլոգիաների ընտրության դեպքում:
- Տնտեսական արդյունավետության ցուցանիշները անհրաժեշտ են ֆինանսավորման առավել ռացիոնալ տարբերակների ընտրության համար և սահմանափակ ֆինանսական ռեսուրսների դեպքում կարող են օգտակար լինել այս կամ այն միջոցառումների առաջնահերթությունների սահմանման համար:
- Այսպիսով՝ արդյունավետությունը դիտարկվում է նվազագույն ֆինանսական ծախսումներով առավելագույն սոցիալական և առողջապահական արդյունք ստանալու տեսանկյունից:

Ընդհանուր առմամբ առողջապահական համակարգի արդյունավետությունը պետք է արտացոլի առողջապահության ծախսերը որակի վերածելու միտումը: Առողջապահական համակարգերի տարբեր մակարդակների արդյունավետության համեմատական գնահատման մեթոդաբանությունը պետք է թույլ տա արտացոլել-

լու բուժհաստատությունների և տարածաշրջանների մակարդակով աշխատանքի արդյունքները՝ հիմնվելով բժշկական օգնությունը բնութագրող քանակական ցուցանիշների հաշվարկի վրա:

Տվյալների համակարգման դեպքում պետք է հիմնվել տվյալների լայն բազայի վրա՝ առողջապահության տարեկան վիճակագրական հաշվետվությունների, կազմակերպությունների կառավարչական և ֆինանսական հաշվետվությունների, որը հնարավորություն կտա վերհանելու առողջապահության համակարգի բացասական միտումները (այդ թվում՝ օպերատիվ ռեժիմով), բացահայտելու պահուստները և բարելավելու դրանք: Անհրաժեշտ է հիմնվել առողջապահության համակարգի արդյունավետության գնահատման նոր մեթոդաբանության վրա՝ ելակետ ընդունելով բժշկական օգնության առողջապահական և տնտեսական չափորոշիչները, և վերլուծության ընթացքում կիրառել ավտոմատացված տեղեկատվական համակարգեր:

Սոցիալական, առողջապահական և տնտեսական արդյունավետության ցուցանիշների համեմատական գնահատումը (ավտոմատացված տեղեկատվական համակարգերի օգտագործմամբ) մարտավարական և ռազմավարական բնույթի արդյունավետ կառավարման որոշումների կայացման հիմքն է, որը առողջապահական ծառայությունների շուկայում հնարավորություն կտա ապահովելու մարդկային, նյութական ռեսուրսների, բյուջետային ծախսերի, բիզնեսի գործունեության արդյունավետությունը:

Առողջապահության համակարգի հաստատություններում ստանդարտացված ցուցանիշների օգտագործումը և դրանց համեմատությունը նորմատիվային մեծությունների (ստանդարտների) հետ թույլ կտա դինամիկայի մեջ իրականացնել առողջապահության համակարգի արդյունավետության մոնիթորինգը տարբեր մակարդակներում, այդ թվում՝ առանձին հաստատությունների մակարդակով, որը թույլ կտա արագ և հիմնավորված կարգով իրականացնել կառավարչական անհրաժեշտ միջամտություն:

## ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում դիտարկվում են ՀՀ-ում առողջապահության համակարգի ֆինանսավորման և դրա արդյունավետության գնահատման խնդիրները: Առանձնացվում են առողջապահության միջոցառումների, ծրագրերի, ծառայությունների և ընդհանուր առմամբ համակարգի արդյունավետության ասպեկտները: Նշվում է առողջապահության համակարգում արդյունավետության կատեգորիայի առանձնահատկության մասին: Խնդիր է դրվում գնահատելու ոլորտի արդյունավետության բոլոր ասպեկտները ամփոփ ցուցանիշներով և կիրառելով չափորոշիչներ այդ ցուցանիշների օգտագործման վերաբերյալ:

**АННОТАЦИЯ****ДЖНДОЯН Ш. – ПРОБЛЕМЫ ФИНАНСИРОВАНИЯ ЗДРАВООХРАНЕНИЯ РА И ОЦЕНКИ ЕГО ЭФФЕКТИВНОСТИ**

В статье рассматриваются проблемы финансирования и оценки эффективности здравоохранения в РА. Выделяются три аспекта эффективности мероприятий здравоохранения и системы здравоохранения в целом. Отмечаются особенности категории эффективности в системе здравоохранения и ставится задача измерения всех аспектов эффективности, посредством интегрированных показателей и с применением определенных критериев при использовании этих показателей.

**SUMMARY****JNDOYAN Sh. - SOME ISSUES OF HEALTH SYSTEM FINANCING AND ITS EFFECTIVENESS ESTIMATION IN RA**

The article considers problems of financing and evaluation of its effectiveness in health care system in RA. Three aspects of health care, i.e arrangements, programs and services are identified while underlining effectiveness in the system as a whole. Approach to measure the effectiveness of all the aspects by integrated indicators is proposed and the importance of certain criteria of their usage is emphasized.

**ՎԱՐՂԱՆ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ**

*տնտեսագիտության դոկտոր,  
ԵՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի պրոֆեսոր*

**ՏԱԹԵՎԻԿ ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ**

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի հայցորդ*

### **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Ժամանակակից աշխարհում զարգացման բուռն տեմպերով պայմանավորված նարտահրավերներին դիմակայելու հիմնական միջոցներից մեկը մրցունակ տնտեսության առկայությունն է: Արագ փոփոխվող աշխարհում այդպիսի տնտեսության դեպքում նույնիսկ կարող են ծագել օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի տարբեր խոչընդոտներ հետագա կայուն զարգացում ապահովելու գործում: Դրանց պատրաստ լինելու համար ակնհայտորեն անհրաժեշտ են սոցիալ-տնտեսական համակարգված քայլեր, որոնցից թերևս կարևորագույնն ազատ մրցակցության ապահովումն ու հակամենաշնորհային քաղաքականության իրականացումն է:

Մրցակցությունը նպաստում է գիտատեխնիկական առաջընթացին և ինովացիոն ծրագրերի ներդրմանը տնտեսության ճյուղերում, խթանում արտադրական տեխնոլոգիաների արդիականացումը, ապահովում ռեսուրսների արդյունավետ օգտագործում, արտադրական ծախսերի կրճատում և արտադրանքի որակի շարունակական բարելավում, գնագոյացման արդյունավետ մեխանիզմների ձևավորում ու տնտեսական ներուժի ընդլայնում՝ ի վերջո հանգեցնելով երկրի սոցիալ-տնտեսական կայուն զարգացման:

Կատարյալ մրցակցային և մաքուր մենաշնորհային շուկաների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ շուկայի ինչպիսին լինելու մեջ չափազորված են թե՛ հասարակությունը, թե՛ պետությունը: Այս դեպքում խնդիրը ոչ միայն տնտեսական արդյունավետության շրջանակում է, այլև սոցիալական հավասարության և արդարության ենթատեքստում: Ընդ որում՝ եթե հասարակությունը հակված է զարգացումներն ու միտումները գնահատել կարճաժամկետ հատվածում, ապա պետությունը պարտավոր է դա անել նաև ավելի երկար ժամանակահատվածի համար: Փաստորեն պետությունը երկատվում է այդ ժամկետներում՝ համապատասխան քաղաքականություն որդեգրելիս: Մենաշնորհների գոյության պայմաններում նա ապահովում է հասարակության մի մասի զբաղվածության խնդիրը՝ մինչև ժամանակ որոշակիորեն անտեսելով հասարակության մյուս մասի (սպառողների) շահերը: Կատարյալ մրցակցության պարագայում լուծելով սոցիալական արդարության խնդիր՝ պետությունը կրում է նկատելի կորուստ ներուժային նորանուծությունների հնարավորության մեջ: Եվ այսպես շարունակ, այսինքն՝ մենաշնորհային և մրցակցային շուկաների գնահատման գործում մշտապես առկա է ընտրության դժվարին խնդիր: Սակայն ակնհայտ է մեկ

այլ նկատառում. պետք չէ ընտրություն կատարել միանշանակ և անվերապահ բոլոր դեպքերի համար: Անընդունելի է ընտրության հետ կապված դժվարություններից խուսափելու նպատակով բացառել դրա հնարավորությունն ընդհանրապես: Հակառակը՝ հենց ընտրություն կատարելու հնարավորությունն է, որ թույլ կտա ճիշտ որոշումներ ընդունելու՝ կախված իրավիճակի թելադրանքից: Մեկ այլ խնդիր է ընտրության ձևախեղում թույլ չտալը, ինչը ենթադրում է ինչպես ճիշտ և հիմնավորված ընտրության իրականացում, այնպես էլ ընտրված մոդելի պատշաճ կիրառում: Ինչ վերաբերում է ընտրության սուբյեկտին, այսինքն՝ թե ով է այն կատարելու, ապա տրամաբանական է, որ դա պետք է լինի բոլոր տեսակի շահերի կրողը: Այնտեղ պետք է հանդես գան և բախվեն այդ շահերը՝ պետությանը պարտադրելով կատարելու իր և հասարակության համար ռացիոնալ քայլեր: Իսկ այդ «սուբյեկտը», մեր կարծիքով, հենց մրցակցային միջավայրն է, որտեղ վերը նշված շահերի բախումը կարող է ծնել բազմաթիվ մրցակիցներ կամ թույլ տալ գոյատևել մենաշնորհին՝ որոշակի ժամկետում, որոշակի նպատակներով:

Հայաստանի Հանրապետությունում մրցակցային միջավայրի բարելավման և ոլորտը կարգավորող պետական կառույցի գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով տնտեսական մրցակցության պաշտպանության իրավական հիմքերի ձևավորման ուղղությամբ իրականացվել են որոշակի բարեփոխումներ, սակայն գործադրված միջոցները մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների առկայության պատճառով մրցակցության պաշտպանության առումով դեռևս ցանկալի արդյունքերի չեն հանգեցրել: Երկրում ազատ մրցակցային հարաբերություններ հաստատելու և դրանք արդյունավետ կարգավորելու համար հանրապետությունում հակամենաշնորհային քաղաքականությունը պետք է դիտարկվի որպես տնտեսական կայուն զարգացման կարևորագույն պետական գործառույթ:

Տնտեսագիտության դասականները, ինչպես նաև շուկայական տնտեսությամբ աշխարհի զարգացած երկրները մշակել են հակամենաշնորհային քաղաքականության կարգավորման տարբեր մոդելներ և ձևավորել են անհրաժեշտ օրենսդրաիրավական հիմքեր՝ համապատասխան մեխանիզմներով՝ կախված իրենց տնտեսությունների կառուցվածքից, զարգացման աստիճանից ու ազգային առանձնահատկություններից:<sup>1</sup> Այս հարցերի ուսումնասիրության և այդ ուղղությամբ ՀՀ-ում անհրաժեշտ պետական քաղաքականության իրականացման առանձնահատկությունների լուսաբանման է նվիրված հայ գիտնականների մի շարք աշխատանքներ:<sup>2</sup>

Շուկայի արդյունավետ գործունեության ընդհանուր պայմաններ թելադրող առավել ազդող գործոն է մրցակցային հարաբերությունների զարգացվածության

<sup>1</sup> Turley G., Luke P., Transition Economics: Two Decades On / Routledge, 2010. - 504 p., Blanchard O., The economics of post-communist transition / Oxford: Oxford University Press, 1997. - 149 p., Միքայելյան Ս., Մրցակցության և մենաշնորհների վերաբերյալ սիթյան մոտեցումների մեկնաբանությունը // Տարեգիրք 2011, Տնտեսագիտության ֆակուլտետ / Գլխ.խմբ.՝ տ.գ.դ. Հ.Լ.Սարգսյան: - Եր., ԵՊՀ հրատ., 2011. - 504 էջ:

<sup>2</sup> Բոստանջյան Վ. Հակամենաշնորհային քաղաքականության միջազգային փորձը և Հայաստանի ներկայիս քաղաքականությունը // «Արդարություն» Մատենաշար, թիվ 7, Մենաշնորհները Հայաստանի Հանրապետությունում: Հիմնախնդիրներ և Լուծումներ / ՀՀ դաշնակցություն, Երևան, 2006; Մարկոսյան Ա.Խ., Մկրտումյան Մ.Մ., Մարտիրոսյան Տ.Ս., Հարությունյան Վ.Ռ. Տնտեսության մենաշնորհացումը և դրսևորման առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում // ԵրճԵՊՀ Տեղեկագիր, N 5, 2012թ., էջ. 56-66:

աստիճանը: Ինչպես մրցակցային միջավայրի զարգացման, այնպես էլ հակամենաշնորհային քաղաքականության ազդեցության նշանակալի շրջանակ են ներկայացնում շուկա կամ արտադրության ճյուղ մուտք գործելու արգելքները: Դրանք ընդհանուր առմամբ պայմանավորված են տվյալ շուկայի կամ ճյուղի առանձնահատկություններով և կարող են լինել կառուցվածքային, կոնյունկտուրային, վարքագծային կամ վարչական: Պետության խնդիրն է կարողանալ տարանջատել ձեռնարկատիրական անբարեխիղճ վարքը հակամրցակցայինից, բացահայտել մրցակիցներին շուկայից դուրս մղելու պատճառները: Հակամրցակցային վարքի դեպքեր կարող են առաջանալ, երբ տեղի է ունենում գերիշխող դիրքի չարաշահում, կամ ստեղծվում են դրա հավանականությունը մեծացնող և մրցակիցներին շուկայից դուրս մղելուն նպաստող համակենտրոնացումներ և համաձայնություններ:

Այդպիսի դեպքեր կարող են առաջանալ նաև, երբ իրականացվում է շուկայի կառուցվածքային տեղաշարժի հետ ուղղակի կապ չունեցող և գործարար շրջանառության սովորույթներին ու ձևավորված սկզբունքներին հակասող ձեռնարկատիրական գործունեություն:

Հաջող փոխհամաձայնեցված գործողությունների համար նպաստավոր պայմաններ են հիմնականում հանդիսանում.

- կայուն շուկայական պայմանները՝ շուկայի կայուն սահմաններ, պահանջարկի ճկունության ցածր մակարդակ, շուկա մուտք գործելու արգելքների առկայություն,
- համաձայնության մասնակիցների ռազմավարությունների թափանցիկությունը,
- մրցակիցների անբավարար ռեսուրսը՝ մոնոպոլ գործողություններին արձագանքելու և համաձայնության մասնակիցների շրջանում մրցելու ձգտումը բարձրացնելու կարողություն:

Մրցակցության պաշտպանության տեսանկյունից համաձայնությունների կարգավորման խնդիրը կարող է լուծվել բազմաթիվ գործոնների ուսումնասիրության և դրանց գնահատման արդյունքում: Դրանցից առավել հատկանշական են իրացվող ապրանքի կամ մատուցվող ծառայության գինը, պահանջարկի ճկունությունը և դինամիկան, արտադրության ծավալները, միմյանց հանդեպ կորոդինացիայի ենթակա մասնակիցների վստահությունը, ապրանքի տարբերակումը և այլն:

Մրցակցային միջավայրը տվյալ շուկայում բնութագրվում է դրանում գործող սուբյեկտների թվով, շուկա մուտք գործելու և դուրս գալու ազատության աստիճանով, շուկայի մենաշնորհային մակարդակով, շուկայական գների տեսակարար կշռով, մրցակցային ուժերի առկայությամբ, դրանց միջև փոխադարձ կապերով ու կախվածությամբ, ձեռնարկատիրական ռիսկի մակարդակով և այլն:

Հակամենաշնորհային արդյունավետ քաղաքականության իրականացումը ենթադրում է նպատակամետ և համալիր քայլեր՝ ուղղված մրցակցային միջավայրի ձևավորմանն ու զարգացմանը: Ընդ որում՝ այդպիսի նպատակի իրագործումը և մրցակցային մշակույթի ձևավորումը պահանջում են որոշակի «ինստրուկցիոն» գործընթաց՝ պայմանավորված քաղաքական, տնտեսական, կազմակերպչական, բարոյափոքեբանական և այլ գործոններով, ինչպես նաև իրավական դաշտի ձևավորմամբ և շարունակական կատարելագործմամբ:

Հակամենաշնորհային քաղաքականության հիմնական նպատակը մենաշնորհներից շուկայի մասնակիցների իրավունքների պաշտպանության և դրանում ազատ մրցակցության ապահովումն է՝ իրականացնելով մենաշնորհային դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների գործունեության սահմանափակում, փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցություն, դրա համար բարենպաստ պայմանների ստեղծում և այլն: Այլ խոսքով՝ մենաշնորհացման բարձր մակարդակը զսպելու և տնտեսության վրա դրա բացասական ազդեցությունը կանխելու համար պետությունը պարտավոր է իրականացնել հակամենաշնորհային քաղաքականություն: Նշենք նաև, որ երբեմն մենաշնորհների գոյությունը կարող է լինել օրինաչափ և անհրաժեշտ, սակայն ամեն դեպքում պետության կողմից դրանց հանդեպ պետք է իրականացվի խիստ վերահսկողություն, որպեսզի թույլ չտրվի մենաշնորհների կողմից իրենց դիրքերի չարաշահում:

Շուկայում բարենպաստ մրցակցային միջավայրի ձևավորման հարցում կարևոր դեր ունեն հակամենաշնորհային օրենսդրությունը, ինչպես նաև դրա գործադրման համար պատասխանատու պետական մարմինները: Ակնհայտ է, որ միայն վերջիններիս ճիշտ և հետևողական աշխատանքի դեպքում է հնարավոր ապահովել տնտեսական համակարգի արդյունավետ զարգացումը: Հակամենաշնորհային քաղաքականություն, ըստ էության, հանդիսանալով պետության կողմից իրականացվող ընդհանուր տնտեսական քաղաքականության կարևոր մասը, կոչված է ստեղծելու նպաստավոր պայմաններ տնտեսության բոլոր ճյուղերի և ոլորտների զարգացման համար, խթանելու տնտեսական աճը՝ չխախտելով մակրոտնտեսական հավասարակշռության ապահովման և հայրենական ապրանքարտադրողների մրցունակության բարձրացման ընթացքը:

Սակայն հարկ է նշել, որ այդպիսի նպատակի իրագործումը չափազանց բարդ խնդիր է, քանի որ տնտեսավարող սուբյեկտների շրջանում մենաշնորհային գործունեություն իրականացնողները և անբարեխիղճ մրցակցության դաշտում գտնվողները, որպես կանոն, դիմում են արգելված այնպիսի քայլերի, որոնց բացահայտումը և համապատասխան պատժամիջոցների կիրառումը երբեմն դառնում են անհնար: Այդ իսկ պատճառով հակամենաշնորհային քաղաքականություն և տնտեսական մրցակցության պաշտպանություն իրականացնող պետական մարմինները ոչ միայն պետք է կարողանան արագորեն հայտնաբերել ու պատժել մենաշնորհային արգելված գործունեության և անբարեխիղճ մրցակցության ամենատարբեր, իսկ հաճախ նաև չափազանց դժվար բացահայտվող դրսևորումները, այլև պետք է տիրապետեն գործունե մեխանիզմների՝ տնտեսական շրջանառության բնականոն ընթացքի խաթարումը բացառելու համար:

Շուկայական հարաբերություններին անցման հիմնական և ամենակարևորը խոչնդոտներից մեկն այն է, որ Հայաստանն, ինչպես և մնացած հետխորհրդային հանրապետությունները տնտեսական հորձանուտի մեջ մտան անկում ապրող տնտեսության ժառանգությամբ: Ընդ որում՝ տարիներ շարունակ այդ անկումը խորանում էր՝ պայմանավորված ոչ միայն վճարունակ պահանջարկի ազդեցությամբ, այլև տոտալիտար երկրներին բնորոշ հոգեբանության պահպանմամբ, ըստ որի՝ տնտեսության հիմք էր համարվում ծանր արդյունաբերությունը: Այս պայմաններում սպառողական ապրանքների արտադրությունը և ծառայությունների ոլորտը, բնականաբար, ստանում էին երկրորդ կարգի դերակատարություն: Նման մտածողությամբ էլ, ըստ էության, պայմանավորված էր պետության կողմից

իրականացվող ներդրումային քաղաքականությունը, ինչի արդյունքում հանրապետությունում ձևավորվեց մի տնտեսություն, որի արտադրական կառուցվածքը հետագայում պետք է մտներ լուրջ հակասությունների մեջ շուկայական տնտեսության պահանջների և սկզբունքների հետ:

ՀՀ արդյունաբերության դինամիկայի վերլուծությունը շուկայական հարաբերությունների ձևավորման անցած ժամանակաշրջանում ցույց է տալիս, որ բարեփոխումների արդեն իսկ առաջին փուլում արձանագրվեցին արտադրության անկման բարձր տեմպեր, ինչը հանգեցրեց եկամուտների և վճարունակ պահանջարկի կտրուկ կրճատման: Այդ միտումը դրսևորվում էր նաև քայքայվող ձեռնարկությունների թվաքանակի աճով, որոնք, անկախ գործունեությունը շարունակելու համար գործադրած ջանքերի, այդուհանդերձ, հայտնվեցին ֆինանսական ծանր վիճակում:

Դիտարկվող ժամանակաշրջանում խիստ կրճատվեց արտադրական պրոտենցիալը և կտրուկ մեծացավ տնտեսության տեխնոլոգիական խզվածքը: Մեծ չափով կրճատվեցին նաև ներդրումները արտադրական ոլորտում, ինչը բացառեց նույնիսկ հիմնական ֆոնդերի պարզ վերարտադրությունը: Ակնհայտ է, որ հիմնական կապիտալում իրական ներդրումների կրճատումը հանգեցնում է բարոյապես և ֆիզիկապես հնացած տեխնիկայի տեսակարար կշռի մեծացման՝ դրանից բխող իր բոլոր հետևանքներով: Հատկապես շուկայական հարաբերությունների պայմաններում ներդրումների ցանկացած կրճատում ուղղակիորեն նշանակում է ձեռնարկությունների մարտավարությունը զարգացման ռազմավարությունով փոխարինելու հնարավորությունների բացառում:

Մրցակցային միջավայրի առկայությունը բնականորեն հանդիսանում է շուկայական հարաբերությունների արդյունք, սակայն առանց հիմնավորված և ուղղակի պետական միջամտության՝ կարող է տեղի ունենալ դրանց միջև գոյություն ունեցող տրամաբանական կապի այլափոխում: Ինչ վերաբերում է մրցակցային միջավայրի, այսպես կոչված, «առկայության չափին», ապա անցումային տնտեսության պայմաններում դրա գոյությունը, անշուշտ, պետք է կարևորվի և գործադրվեն քաղաքական, տնտեսական, կազմակերպչական, իրավական և այլ բնույթի քայլեր՝ հնարավորինս արագ հասնելու ազատ մրցակցության: Միայն այս դեպքում է հնարավոր ապահովել շուկայական հարաբերությունների արդյունավետությունը և հասնել սոցիալ-տնտեսական կայուն զարգացման:<sup>1</sup> Այլ խոսքով՝ Հայաստանում առողջ մրցակցային միջավայր ստեղծելու համար նվազագույն պարտադիր պայման է դառնում հանրապետությունում ազատ տնտեսավարող սուբյեկտների և շուկայական հարաբերություններին «հարմարեցված» պետական մասնակցության հիմնավորված և ճկուն մոդելի առկայությունը:

Շուկայական հարաբերությունների ձևավորման համար Հայաստանում ընտրվեց ազատական բարեփոխումների առավել արմատական, այսպես կոչված, «ցնցումային» տարբերակը, որը հնարավորինս արագ ու արմատական լու-

<sup>1</sup> **Քոստանջյան Վ.**, Տնտեսական մրցակցության և հակամենաշնորհային քաղաքականության զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում // Տարեգիրք 2012 [Տնտեսագիտության ֆակուլտետ] / Գլխ. խմբ.՝ տ.գ.դ. Հ.Լ.Սարգսյան: - Եր., ԵՊՀ հրատ., 2013. - 570 էջ: **Սարկոսյան Ա.**, Տնտեսական մրցակցության պաշտպանությունը՝ որպես ձեռնարկատիրության խթանման հիմք // Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա, 2004թ., N 2-3; **Միքայելյան Մ.**, Մենաշնորհները Հայաստանում. տնտեսության զարգացման խթան, թե՛ խոչընդոտ // «Արդարություն» Մատենաշար, թիվ 7, Մենաշնորհները Հայաստանի Հանրապետությունում: Հիմնախնդիրներ և լուծումներ / ՀՀ դաշնակցություն, Երևան, 2006:

ծուններ էր ենթադրում: Ինչպես Հայաստանի, այնպես էլ հետխորհրդային երկրների կառավարությունների կողմից զարգացման այդպիսի մոդելին գերապատվություն տալը, թերևս, մի շարք բացատրություններ ուներ: Առաջինը՝ քաղաքական առումով որդեգրվել էր ժողովրդավարական արժեքային համակարգը, որն էլ տնտեսության մեջ ենթադրում էր առավել ազատական մոտեցումների կիրառում: Երկրորդը՝ ազատական վերափոխումների սկզբնափուլում կառավարությունները վայելում էին հասարակության եթե չասենք աջակցությունը, ապա զոնե բացակայում էր ընդգծված դիմադրությունը վարվող ուղեգծին: Այդպիսի վերաբերմունքն, անշուշտ, չհանգեցրեց վարվող տնտեսական քաղաքականության այլընտրանքներ ստեղծելու անհրաժեշտության: Երրորդը՝ վերջապես, որ միայն նման մոդելի ընտրության դեպքում էր հնարավոր ակնկալել Արևմուտքի հզոր ֆինանսական կառույցների (Համաշխարհային բանկ, Արժույթի միջազգային հիմնադրամ և այլն) կողմից անհրաժեշտ աջակցություն:

Այսպիսով՝ հարկ է նշել, որ ազատական բարեփոխումների հաջողության կարևոր նախադրյալ էր դիտվում հասարակական համաձայնության և քաղաքական հանդուրժողականության մթնոլորտի ձևավորումը: Դրան հասնելու, ինչպես նաև ազատական հարաբերություններին բնորոշ տրամաբանությամբ առաջնորդվելու համար անհրաժեշտ էր.

- տնտեսական իշխանության և ռեսուրսների բաշխման կենտրոնացված պլանային համակարգից անցում շուկայական հարաբերությունների վրա հիմնված համակարգի,
- պետական սեփականության մենաշնորհի վերացում, տնտեսական իշխանության ապակենտրոնացում և բազմասեփականության սկզբունքների արմատավորում,
- շուկայական ենթակառուցվածքների և մեխանիզմների ստեղծում,
- տնտեսության պետական կարգավորման սկզբունքների վերանայում,
- ներդրումների և մակրոտնտեսական պահանջարկի խրախուսում,
- մակրոտնտեսական կայունության ապահովում՝ սղաճի զսպում, պետական բյուջեի դեֆիցիտի սահմանափակում, հարկաբյուջետային հիմնավորված քաղաքականության իրականացում և այլն,
- արտաքին տնտեսական հարաբերությունների և միջազգային տնտեսական կապերի ազատականացում, ազգային տնտեսության բացության ապահովում:

Անցումը շուկայական հարաբերություններին իրագործելի և իրականանալի է միայն ազատ տնտեսավարող սուբյեկտների՝ արտադրողների և սպառողների առկայության պարագայում, ինչը հնարավոր է պետականին զուգահեռ սեփականության այլ ձևերի առկայության պայմաններում: Հետևապես շուկայի անցման այս հիմնադրույթը ենթադրում էր հանրապետությունում սեփականության ձևերի բազմազանություն և համապատասխան մրցակցային միջավայրի ստեղծում՝ նրանց միջև ապահովվելով շուկայական ազատ մրցակցությամբ բնորոշ նորմալ ապրանքափոխություն: Այդ պատճառով էլ շուկայական հարաբերությունների ձևավորման ու զարգացման գործում պետական սեփականության ապապետականացումը տնտեսության առաջնահերթ լուծում պահանջող անհետաձգելի խնդիրներից էր:

Տնտեսական վերափոխումների պայմաններում, երբ իրականացվում է գնե-րի և արտաքին առևտրի ազատականացում, ազգային փոխարկելի տարադրամի ներմուծում, համապատասխան օրենսդրական դաշտի ձևավորում, մասնավոր ձեռնարկությունների ղեկավարներին գնի, աշխատավարձի, ռեսուրսների բաշխման որոշման իրավունքի տրամադրում և այլն, մասնավորեցման առաջնահերթ խնդիրներ են դառնում.

- արդյունավետության բարձրացումը,
- ապրանքային դեֆիցիտի կամ ավելցուկի չափերի հնարավորինս առավելագույն կրճատումը,
- ազատ մրցակցության համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

Տնտեսական մրցակցության արդյունավետության վրա մեծապես ազդում է սեփականության գործոնը: Միջազգային փորձը վկայում է, որ համակողմանիորեն հիմնավորված մասնավորեցման դեպքում ստեղծվում են բավականին նպաստավոր պայմաններ առողջ մրցակցային միջավայրի ձևավորմանն ուղղված աշխատանքների համար: Այդ փորձի վերլուծությունը ցույց է տալիս նաև, որ սեփականության ապապետականացման դեպքում առանձին ֆինանսական խմբեր կարող են կենտրոնացնել խոշոր դրամական կապիտալ, ինչը ստեղծում է անհրաժեշտ պայմաններ նոր նախագծերի ու ծրագրերի իրականացման և գործող ոլորտների արդիականացման համար: Ակնհայտ է, որ տնտեսության զարգացման և ճգնաժամային երևույթների հաղթահարման արդյունավետ միջոց կարող է դառնալ արտադրության մեջ գիտատեխնիկական առաջընթացի նվաճումների լայնամասշտաբ ներդրումն ռազմավարությունը: Սակայն պետությունն ի վիճակի չէ կատարել այդպիսի ներդրումներ, ավելի՛ն՝ շուկայական տնտեսության պայմաններում դա նաև անցանկալի է: Նման ռազմավարություն, որպես կանոն, իրականացնում են տնտեսավարող սուբյեկտները, քանի որ հենց նրանք են հետապնդում ավելի մեծ շահույթ ստանալու նպատակ:

ՀՀ-ում ապապետականացման գործընթացը սկսվեց առևտրի, հասարակական սննդի, կենցաղային սպասարկման, ծառայությունների ոլորտի և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհմամբ: Այդ գործընթացը, հիմնականում հետապնդելով քաղաքական նպատակ, չապահովեց այնպիսի կարևոր խնդիրների լուծում, ինչպիսիք են արդյունավետ սեփականատերերի ձևավորումը, ձեռնարկատիրությունը խթանող մեխանիզմների ստեղծումը և այլն: Արդյունքում՝ երկրում չձևավորվեցին ձեռնարկատիրության համար անհրաժեշտ պայմաններ, ինչի հետևանքով էլ Հայաստանի տնտեսությունը հայտնվեց լուրջ խնդիրների առջև:

Զնայած որոշ հաջողությունների՝ մասնավորեցման գործընթացը, պայմանավորված տարբեր սուբյեկտիվ և օբյեկտիվ պատճառներով, ընթացավ և այժմ էլ շարունակվում է ընթանալ, մեր կարծիքով, որոշակի վերապահումներով, ինչի հետևանքով խախտվեց սոցիալական արդարության սկզբունքը, և հասարակության ներսում տեղի ունեցավ եկամտային և գույքային կտրուկ բևեռացում: Մասնավորեցմանն ի սկզբանե կարծես թե փորձ էր արվում հաղորդել ժողովրդավարական բնույթ (սերտիֆիկատների միջոցով յուրաքանչյուրը կարող էր դառնալ բաժնետեր), սակայն այդ գործընթացում սեփականատեր դարձավ հասարակության մի խումբ միայն, ինչը և հանգեցրեց որոշակի սոցիալական լարվածության:

Հայաստանում մրցակցային միջավայրի ձևավորումը և զարգացումը ենթադրում են շուկայական և պետական կարգավորման որոշակի հարաբերակցություն: Ընդ որում՝ այդ հարաբերակցության ցանկալի համամասնությունների կարելի է հասնել միայն արդյունավետ մրցակցային միջավայրի ձևավորման և զարգացման ռազմավարության իրականացման արդյունքում: Մյուս կարևոր հիմնախնդիրը պետական և մասնավոր սեփականության հարաբերակցության դինամիկայի կանխորոշումն է, քանի որ այն մեծապես պայմանավորում է մրցակցային հարաբերությունների բնույթը և դրսևորման ձևերը:

Մրցակցության պաշտպանության քաղաքականության արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է.

- նվազեցնել և աստիճանաբար բացառել մրցակցային միջավայրի զարգացման վրա բացասաբար ազդող գործոնների ներգործությունը,
- բարձրացնել հասարակության տեղեկացվածությունն ու դերը մրցակցության սկզբունքների և ավանդույթների պահպանման խնդրում,
- կատարելագործել մրցակցային հարաբերությունների կարգավորման մեթոդական բազան և օրենսդրությունը,
- կորորդինացնել կառավարության և մրցակցության պաշտպանության մարմնի համագործակցությունը,
- ամրապնդել մրցակցության պաշտպանության մարմնի դիրքերը իրավասությունների ընդլայնմամբ, բարձր որակավորում ունեցող մասնագետների համալրմամբ, նյութատեխնիկական գործուն բազայի ապահովմամբ և այլն,
- ձևավորել համապատասխան «դպրոց» բուհերում մրցակցությանն առնչվող մասնագիտությունների ստեղծմամբ և համապատասխան կադրերի պատրաստմամբ:

Մրցակցային միջավայրի ապահովման համար կարևոր նշանակություն ունեն տնտեսական հարաբերությունները կարգավորող օրենսդրական դաշտի ձևավորմանն ու զարգացմանն ուղղված բարեփոխումները: Գիշտ է, բարեփոխման անշրջելի ուղին բռնած Հայաստանում այս ուղղությամբ վերջին տարիներին մշակվել են շուկայական պայմաններում ծագող տնտեսական հարաբերությունները կարգավորող բազմաթիվ օրենքներ և այլ նորմատիվ ակտեր, սակայն դրանք դեռևս չունեն անհրաժեշտ համալիրություն և համակարգված չեն, իսկ երբեմն հանդես են գալիս իրարամերժությամբ և բազմիմաստությամբ: Այդ իսկ պատճառով ոչ միայն մրցակցային միջավայրի բարելավման, այլև տնտեսական գործունեության բոլոր բնագավառներում արդյունավետության ապահովման համար կարևորագույն խնդիր է մնում օրենսդրական դաշտի շարունակական կատարելագործումը և ժամանակակից շուկայական մեխանիզմների ստեղծումը:

Աշխարհի շատ երկրներում գործում են առանձին պետական մարմիններ, որոնք զբաղվում են տվյալ երկրի մրցակցային քաղաքականությամբ: ՀՀ-ում այդ ուղղությամբ տարվում են որոշ աշխատանքներ, մասնավորապես գործում է Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը, մշակվել է «Կայուն տնտեսական զարգացման ռազմավարություն», որի շրջանակներում կատարվում է SWOT վերլուծություն՝ բացահայտելու ՀՀ տնտեսության ուժեղ և թույլ կողմերը: Բացի նշված հայեցակարգից՝ մշակվել են նաև տնտեսության այլ ոլորտների զարգացման ռազմավարություններ: Սակայն մրցակցա-

յին միջավայրի բարելավման և հակամենաշնորհային քաղաքականության իրականացման առումով դեռևս ուղղորդված և արդյունավետ աշխատանքներ չեն տարվում:

Հակամենաշնորհային քաղաքականությունը հետպնդում է մենաշնորհացված ոլորտներում մրցակցային միջավայրի զարգացման նպատակ, որին հասնելու համար իրականացվող միջոցառումների իմաստը պետք է լինի տնտեսության տարբեր ոլորտներում նոր, առաջընթաց ապահովող ձեռնարկությունների ստեղծման խթանման, մենաշնորհացված շուկաներ տեղական և օտարերկրյա ֆիրմաների մուտքի դյուրինացումը: Մրցակցության զարգացմանը կարող են նպաստել նաև հարկային և մաքսային քաղաքականությունները մենաշնորհացված շուկաներ առաջին անգամ մուտք գործող ձեռնարկություններին որոշակի արտոնություններ տրամադրելու և հարկային «արծակուրդներ» սահմանելու ճանապարհով:

Տնտեսական մրցակցության զարգացման հիմք պետք է դառնա գիտելիքահենք տնտեսության կառուցումը՝ հենվելով մարդկային կապիտալի զարգացման վրա՝ խթանելով գիտական մտքի և գիտատեխնիկական առաջընթացի զարգացումը: Ազատ մրցակցությանը նպաստելուն ուղղված քաղաքականության հիմնական նպատակը պետք է դառնա երկրում բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայրի ձևավորումն ու ապահովումը և հակամրցակցային գործունեության կանխարգելումն ու սահմանափակումը, ինչը կհանգեցնի ձեռնարկատիրության զարգացմանը և սպառողների շահերի պաշտպանությանը: Այդպիսի քաղաքականությունն ինչպես սպառողներին, այնպես էլ գործարարներին կընձեռի հնարավորություն՝

- ստանալու բազմատեսակ և բարձորակ ապրանքներ հնարավորինս ցածր կամ զոնե համարժեք գներով,
- օգտվելու ընդհանուր, արդարացի և հավասար խաղի կանոններից, կյանքի կոչել գործարարության և ձեռներեցության իր հակումներն ու կարողությունները,
- մասնակցելու տնտեսական գործընթացների կառավարմանը և դրանց արդյունավետությանն ուղղված որոշումների կայացմանը,
- ամրապնդելու հանրապետությունում տնտեսական ազատական քաղաքականության իրականացման հրամայականը և հետևողականորեն ընթանալու քաղաքակիրթ երկրների հետ ինտեգրվելու ուղով,
- նպաստելու ներդրումների ներգրավմանը և բարեխիղճ մրցակցային միջավայրի ձևավորմանը՝ հայրենական և օտարերկրյա գործարարների համար ստեղծելով շուկա մուտք գործելու հավասար հնարավորություն,
- զարգացնելու փոքր և միջին ձեռնարկատիրությունը,
- ապակենտրոնացնելու տնտեսական որոշումների ընդունման գործընթացը,
- վերացնելու կամ նվազեցնելու շուկա մուտքի և ելքի կառուցվածքային, ինստիտուցիոնալ, վարչական խոչընդոտները,
- աջակցելու աղքատության հաղթահարմանը և կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված քաղաքականության իրականացմանը և այլն:

Տնտեսության զարգացման առավել կարևոր նախադրյալներից են ներդրումները՝ որպես վերարտադրության ապահովման նախապայման: Տնտեսության մեջ ներդրումների հոսք կարող է լինել միայն որոշակի պայմանների և գործոնների առկայության դեպքում: Ընդհանուր առմամբ դրանցով էլ որոշվում է երկրի ներդրումային միջավայրի գրավչության աստիճանը, որը ուղղակիորեն կախված է տվյալ երկրում ձեռնարկատիրության նկատմամբ վարվող պետական քաղաքականությունից և դիտարկվող բնագավառում ձևավորված սկզբունքներից ու ավանդույթներից:

ՀՀ տնտեսության մրցունակության ապահովման համար առաջին հերթին պետք է բարձրացնել այդ ուղղությամբ վարվող պետական քաղաքականության արդյունավետությունը՝ մշակելով և իրականացնելով համակողմանիորեն հիմնավորված ռազմավարություն: Հանրապետությունում տնտեսական մրցակցության պետական կարգավորման հիմնահարցերը ներկայումս գտնվում են Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի գործառույթների տիրույթում: Հանձնաժողովն իր լիազորությունների սահմաններում իրականացնում է որոշակի քաղաքականություն, սակայն այն, մեր կարծիքով, դեռևս չի առանձնանում իր արդյունավետությամբ՝ կապված մենաշնորհային գործունեության և անբարեխիղճ մրցակցության բացահայտման, դրանց գնահատման, ինչպես նաև անհրաժեշտ պատժամիջոցների կիրառման հետ: Այդ գործառույթների կատարման արդյունավետությունը բարձրացնելու համար առաջին հերթին անհրաժեշտ է՝

- ուժեղացնել տնտեսական մրցակցության պաշտպանությանն ուղղված օրենսդրության պահանջների կատարման վերահսկողությունը,
- ձևավորել մենաշնորհային գործունեության և անբարեխիղճ մրցակցության բացահայտման և գնահատման հստակ չափորոշիչներ,
- սահմանել և անվերապահորեն կիրառել անբարեխիղճ մրցակցությանը համարժեք պատժամիջոցներ,
- նպաստել մենաշնորհված ոլորտներում մրցակցային միջավայրի առողջացմանը,
- տրամադրել արտոնություններ մենաշնորհված շուկաներ մուտք գործող կազմակերպություններին,
- անցկացնել ձևավորված մենաշնորհների ապակենտրոնացում,
- կատարելագործել հակամենաշնորհային քաղաքականությամբ պայմանավորված հարաբերությունների կարգավորման իրավական դաշտը:

Նշված գործառույթների հետևողական ու արդյունավետ իրականացումը, հանդիսանալով տնտեսության մեջ բարեխիղճ մրցակցային միջավայրի ձևավորման և զարգացման, տնտեսավարող սուբյեկտների համար մրցակցային հավասար պայմանների ապահովման, գործարար ակտիվության խթանման, ինչպես նաև շուկայական իշխանության չարաշահման կանխարգելման առանցքային նախապայման, միաժամանակ ենթադրում է հակամենաշնորհային քաղաքականության ինչպես ինստիտուցիոնալ, այնպես էլ իրավական անհրաժեշտ հիմքերի ձևավորում: Հակամենաշնորհային օրենսդրության առումով հանրապետությունում որոշակի աշխատանք իրականացված է, մասնավորապես ընդունվել են «Ներքին շուկայի պաշտպանության մասին», «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին», «Հակազնազոյացման (հակադեմփինգային) և փոխհատուցման միջոցների մասին», «Տնտեսական մրցակցության պաշտպանու-

յան մասին» ՀՀ օրենքները և այդ ոլորտի կարգավորմանն ուղղված մի շարք այլ իրավական ակտեր: Նշենք, սակայն, որ ցավոք, դեռևս չի ապահովվում դրանց հետևողական կիրառությունը կյանքում, ինչի հետևանքով հակամենաշնորհային քաղաքականության և մրցակցության պաշտպանության իրավական կարգավորումը հանրապետությունում կրում է մակերեսային ու սուբյեկտիվ բնույթ և չի նպաստում մրցակցային միջավայրի առողջացմանը: Որոշակի վերապահումներով բացառություն է կազմում «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի ընդունումը և դրա գործադրումն ապահովող պետական հանձնաժողովի ստեղծումը, ինչը պետք է համարել կարևոր քայլ Հայաստանում մրցակցային քաղաքականության ձևավորման և իրականացման գործում:

Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի դերն ու նրա կողմից իրականացվող հիմնական գործառույթները շատ մոտ են զարգացած երկրներում գործող նմանատիպ մարմինների առաքելությանն ու գործառույթներին: Թերևս բացառություն է կազմում անբարեխիղճ մրցակցության կանխարգելման և վերացման գործառույթը, որի իրականացման իրավասությունը Հայաստանի նման ոչ մեծ երկրի դեպքում նպատակահարմար է եղել վերապահել մրցակցության պաշտպանության պետական մարմնին: Սակայն տվյալ համեմատության մեջ նկատելի է Հայաստանի մրցակցության պաշտպանության պետական մարմնի գործառույթների իրականացման մեխանիզմների ու գործիքների, ինչպես նաև դրանց գործադրման որոշակի տարբերություններ: Առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնք բացահայտում են հանձնաժողովի լիարժեք գործունեության համար անհրաժեշտ միջոցների և լծակների ոչ բավարար լինելու հանգամանքը: Ընդհանուր առմամբ դրանք վերաբերում են օրենսդրության, մեթոդաբանության, օրենքի դրույթների կիրարկման, տեղեկատվության հավաքագրման, պետական մարմինների հետ համագործակցության կազմակերպման, ինչպես նաև մասնագիտական որակավորման բարձրացման, տեխնիկական հագեցվածության և այլ խնդիրներին: Ավելին՝ եթե կան որոշակի հաջողություններ ապրանքային շուկաներում տնտեսավարող սուբյեկտների գերիշխող դիրքի չարաշահման և անբարեխիղճ մրցակցության դրսևորումների կանխման և վերացման հարցերում, ապա հակամրցակցային համաձայնությունների բացահայտումն ու ապացուցումը և չարտոնված համակենտրոնացումների արգելումը լուրջ խնդիր են մրցակցության պաշտպանության մարմնի համար:

Հայաստանում, ինչպես նաև անցումային փուլում գտնվող ցանկացած երկրում մենաշնորհացման բարձր մակարդակը անխուսափելի է, հետևաբար պետական տնտեսական քաղաքականության հիմնական նպատակը պետք է լինի մրցակցային միջավայրի զարգացումն արգելակող ոլորտներում ժամանակակից ձեռնարկությունների ստեղծման խթանումը և շուկաներ մուտք գործելու հնարավորությունների ընդլայնումը: Ներկայումս հանրապետությունում մրցակցային միջավայրի բարելավման և ներքին շուկայի պաշտպանության ուղղությամբ տարվող աշխատանքները միտված են այդ նպատակով ձևավորված իրավական դաշտը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու, օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության առավել արդյունավետ լծակներ կիրառելու, հայրենական արտադրողների և սպառողների շահերի պաշտպանությունը կազմակերպելու, բարեխիղճ մրցակցային դաշտ ձևավորելու և հակամրցակցային քայլերը կանխարգելելու գործառույթներին:

ՀՀ տնտեսության կառուցվածքի արդիականացման, կառավարման նոր սկզբունքների կիրառման և շուկայական ժամանակակից մեխանիզմների ձևավորման համար կարևոր նշանակություն ունեն արտահանմանն ուղղված ձեռնարկությունների ստեղծումը, արտահանման ծավալների մեծացումը, նոր շուկաներ մուտք գործելու հնարավորությունների ընդլայնումը և այլն: Դա հատկապես կարևորվում է հանրապետության տնտեսության հարաբերական մեկուսացվածության պարագայում, երբ առկա են տրանսպորտային բարդ խնդիրներ, վճարունակ պահանջարկի սահմանափակվածություն և նման այլ հարցեր, որոնք, ըստ էության, մրցակցային ուժերի ակտիվությունը զսպող հիմնական գործոններ են:

Տնտեսական համակարգի արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է հասնել սեփականության և տնտեսավարման տարբեր ձևերի լավագույն հարաբերակցության: Ընդ որում՝ պետք է հատկապես կարևորել պետական և մասնավոր հատվածների միջև հարաբերակցության հաստատման հարցը, քանի որ տնտեսական հարաբերությունների ազատականությունը դեռևս չի կարող երաշխավորել արդյունավետություն գործունեության բոլոր ոլորտներում: Այդ առումով, թերևս, բացառություն կարող է կազմել փոքր և միջին ձեռնարկատիրությունը, որը ճկուն վարկային և հարկային քաղաքականությունների դեպքում կարող է ոչ միայն հասնել ցանկալի զարգացման, այլև նպաստել արտադրության նոր, ավելի պրոգրեսիվ ուղղությունների ձևավորմանը:

Ռազմավարական բնույթի ռեսուրսների և ազատական տնտեսական հարաբերություններին հատուկ արտադրական գործոնների բացակայությունը էականորեն սահմանափակում է միջազգային շուկաներ մուտք գործելու Հայաստանի հնարավորությունները: Այս հանգամանքով պայմանավորված՝ առաջանում է մրցակցային նոր առավելությունների բացահայտման, դրանց համակողմանի զննհատման և նպատկամետ օգտագործման անհրաժեշտություն: Հանրապետության համար դրանցից, թերևս, առավել հեռանկարային կարող է դառնալ գիտելիքահենք տնտեսության ձևավորմամբ ինովացիաների և վեճիչության ձեռնարկատիրության զարգացումը: Միևնույն ժամանակ ակնհայտ է, որ տնտեսության մեջ ցանկացած նորարարական նախաձեռնություն ենթադրում է մեծ ներդրումներ և արտադրական հարաբերությունների համալիր կարգավորվածություն: Այս առումով հանրապետությունում, մեր կարծիքով, չեն կարող լինել անլուծելի խնդիրներ, պարզապես պետք է դրսևորել կամք և վերջապես առողջացնել մրցակցային միջավայրը, մեծացնել ներդրումային գրավչությունը և տնտեսական հարաբերությունների կարգավորման մակարդակը համապատասխանեցնել միջազգային չափանիշներին:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջին տարիների ընթացքում ՀՀ Կառավարության հեռանկարային զարգացման ծրագրերում որոշակիորեն շեշտադրվում է նորարարությունների դերի կարևորման, բարձր տեխնոլոգիաների զարգացման և արդյունաբերական քաղաքականության արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը: Ընդհանուր տնտեսական քաղաքականությունում արդյունաբերական քաղաքականության գերակայությունը թույլ կտա ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման ճանապարհով հասնել արտադրական կարողությունների ընդլայնման և տնտեսության կառուցվածքի բարելավման: Գյուղային առումով տնտեսական զարգացման լոկոմոտիվներ պետք է դառ-

նան լեռնամետալուրգիան, վերամշակող և քիմիական արդյունաբերության ոլորտները: Տնտեսության արդյունավետ ճյուղային և ներճյուղային կառուցվածքների ձևավորման առումով պետք է կարևորել կորպորատիվ կառավարման ժամանակակից ձևերի ներդրումն ու զարգացումը:

Սակայն հարկ է նշել, որ ցանկացած զարգացում շուկայական տնտեսության պայմաններում պետք է տեղի ունենա բացառապես մրցակցային միջավայրում, քանի որ իրական արդյունավետության կարելի է հասնել միայն այդ դեպքում, երբ էականորեն կգապվեն գերակա դիրքի, համաձայնությունների, համակենտրոնացումների և անբարեխիղճ մրցակցության այլ դրսևորումների հետ կապված չարաշահումները: Միևնույն ժամանակ պետք է դրանցից տարանջատել նրանք, որոնք, թեկուզ ժամանակավորապես կարող են խթանել այլ արտադրությունների զարգացումը: Մասնավորապես որպես այդպիսին կարող են լինել հետազոտությունների և դրանց արդյունքների ներդրմանն ուղղված համաձայնությունները: Նման համաձայնությունները կարող են ընկերությունների խմբերին հնարավորություն տալ գործելու ավելի արդյունավետ, նվազեցնելու տեղեկատվական կամ տրանսակցիոն ծախսերը: Այդպիսի համաձայնությունների ուղղակի արգելումը՝ հաշվի առնելով շուկայի զուտ կառուցվածքային ցուցանիշները, փոքր երկրի պայմաններում կարող է արդարացված չլինել, քանի որ դրանք կարող են հնարավորություն տալ ընկերություններին օգտվելու մասշտաբի էֆեկտից, նպաստելու տեխնիկական զարգացմանը, ինչպես նաև հասնելու արտադրական և բաշխման արդյունավետության: Այդպիսի համաձայնությունները հաճախ կարևորագույն գործիք են դառնում որոշ ձեռնարկությունների համար միջազգային շուկայում առավել մրցունակ լինելու առումով, և, ընդհանրապես, դրանց արդյունավետ կարգավորումը փոքր երկրների համապատասխան մարմինների առաջնահերթ խնդիրներից մեկն է:

Մրցակցության կարգավորումը՝ որպես պետական քաղաքականության կարևորագույն ուղղություն, պետք է բացառի.

- անբարեխիղճ մրցակցային ձևերի կիրառումը,
- տնտեսական գործունեության արդյունավետության խաթարումը,
- սպառողների իրավունքների ոտնահարումը,
- շուկայական իշխանության չարաշահումը,
- սպարանքային շուկայում մրցակցության վրա ազդեցության արգելված ձևերի կիրառումը,
- մենաշնորհային գործունությունից սպառողների շահերի վտանգումը և այլն:

Անհրաժեշտ է սակայն նշել, որ Հայաստանում մրցակցության պաշտպանությանն ուղղված գործառույթների իրականացման ժամանակ այդուհանդերձ կարող են կիրառվել որոշակի սուբյեկտիվ մոտեցումներ: Գործնականում օրենսդրության առանձին դրույթների կիրառության ժամանակ կարող են ծագել տարբեր դժվարություններ: Մասնավորապես բարդություններ կարող են առաջանալ թե՛ գերիշխող դիրքի որակման, թե՛ համաձայնությունները հակամրցակցային ճանաչելու, թե՛ մրցակցությունը անբարեխիղճ գնահատելու ժամանակ: Անկախ իրավական ակտերում կարգավորող դրույթի ձևակերպման հստակությունից՝ գործնականում այն կիրառող մարմնի աշխատակիցը, բացի տվյալ դեպքի վերաբերյալ հնարավոր ոչ հիմնավորված որոշում կայացնելուց, կարող է նաև

հանդես բերել անձնական, սուբյեկտիվ մոտեցում: Ամփոփելով հարկ է նշել, որ պետությունը տնտեսական մրցակցության պաշտպանության քաղաքականության սկզբունքները մշակելիս և այդ քաղաքականության իրականացման ուղիները որոշելիս պետք է հաշվի առնի տնտեսական գործընթացների և պետական գործառույթների փոխկապակցվածության և փոխապայմանավորվածության ազդեցությունը ազատ մրցակցային միջավայրի վրա մշտապես ուշադրության կենտրոնում պահելով դրանց հիմնավորված և ռացիոնալ հարաբերակցություն հաստատելու հարցը, քանի որ առանց մրցակցության ոլորտին առնչվող խնդիրների հետևողական ու համալիր լուծման՝ բացառվում է արդյունավետ հակամենաշնորհային քաղաքականության իրականացումը:

### ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում դիտարկվում են ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացման, մրցակցային շուկայի զարգացման և հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետության բարձրացման հարցերը: Հաշվի առնելով հանրապետության առանձնահատկությունները՝ առաջարկվում են դրանց լուծման տեսական և գործնական մոտեցումները:

### АННОТАЦИЯ

#### **БОСТАНДЖЯН В., МУСАЕЛЯН Т. – ПРОБЛЕМЫ ПОВЫШЕНИЯ КОНКУРЕНТОСПОСОБНОСТИ ЭКОНОМИКИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

В статье рассмотрены вопросы конкурентоспособности экономики, развития конкурентного рынка и повышения эффективности антимонопольной политики Армении. Предложены теоретические и практические подходы их решения, с учётом особенностей республики.

### SUMMARY

#### **BOSTANJYAN V., MUSAELYAN T. – THE PROBLEMS OF RA ECONOMY COMPETITIVENESS IMPROVEMENT**

Issues related to the competitiveness of Armenia's economy, competitive market developing and increase of efficiency of antimonopoly policy are considered in the article. Theoretical and practical approaches of their decision are offered taking into account specificity of the republic.

**ՄԻՔԱՅԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,  
ԵՊՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչ,  
էլ. փոստ՝ [mmiqayelyan@mail.ru](mailto:mmiqayelyan@mail.ru)

**ԳԱՐՐԻԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

տնտեսագիտության թեկնածու,  
ԵԿՏԱ հիմնադրամի դասախոս,  
էլ. փոստ՝ [g.mikayelyan@mail.ru](mailto:g.mikayelyan@mail.ru)

### ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ<sup>1</sup>

Ցանկացած իրավական ակտում կատարվող փոփոխությունները և լրացումները թելադրվում են գործնականում առաջացած խնչընդոտները վերացնելու անհրաժեշտությամբ: Սակայն միշտ չէ, որ այդ փոփոխությունները և լրացումները ծառայում են նպատակին: Երբեմն էլ «Աչքը շինելու փոխարեն, ունքն էլ հետն է հանվում»:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 12.04.2011 թվականի ՀՕ-137 ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենքի փոփոխություններ և լրացումներ) 2-րդ հոդվածով առաջարկվում է «ապրանքային շուկա», «ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահման», «ապրանքային շուկայի աշխարհագրական սահման» հասկացությունները նույնանուն բառերից հետո լրացնել «հանձնաժողովի որոշմամբ սահմանված» բառերով<sup>2</sup>: Առաջին հայացքից թվում է՝ միանգամայն տրամաբանական հարցադրում է: Ի վերջո, նման փոփոխությամբ հանձնաժողովն էլ պաշտպանված կլինի և լրացուցիչ ջանքեր չի գործադրի՝ հաշվարկներով հիմնավորելու շուկայի ապրանքատեսակային և աշխարհագրական սահմանները: Առավել ևս, որ նման հաշվարկները մասնագիտական հմտություն և գիտելիքներ են պահանջում<sup>3</sup>: Սակայն առանց հիմնավորելու կարգավորողի կողմից շուկայի վերոհիշյալ սահմանների «որոշումը» որոշ դեպքերում կարող է սուբյեկտիվ գնահատմամբ իրականացվել: Դրա հետևանքով առանձին տնտեսավարողներ արտոնյալ վիճակում կհայտնվեն, մյուսները՝ անհավասար՝ վատագույն մրցակցային վիճակում: Սուբյեկտիվ գնահատականը կարող է պայմանավորված լինել ինչպես կարգավորողի կանխակալ մոտեցմամբ, այնպես էլ օրենսդրական «բացով»: Վերջինիս ցայտուն օրինակ է ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 23-ի թիվ 190-Ն ո-

<sup>1</sup> Սույն հոդվածում անդրադարձ է կատարվելու են միայն «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 12.04.2011 թ. ՀՀ օրենքի որոշ հոդվածների:

<sup>2</sup> «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, ՊՏ, 12.04.2011, ՀՕ-137:

<sup>3</sup> Հանձնաժողովի ծրագրերը և հաշվետվությունները ուսումնասիրելով՝ կարելի է համոզվել, որ նման խնդիր կա: Սակայն մենք դրանց կանդիդատնանք այլ առիթով:

որոշմամբ հաստատված «Ապրանքային շուկաների սահմանների որոշման կարգի»<sup>1</sup> 2-րդ կետը, որի համաձայն «Համապատասխան ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահմանների որոշումը հիմնված է ձեռք բերողների տեսանկյունից ապրանքների փոխադարձ փոխարինելիության վրա»:

**Նախ**՝ ոչ բոլոր ապրանքային շուկաների օբյեկտներն ունեն փոխադարձ փոխարինելի ապրանքներ: Հետևաբար վերոհիշյալ իրավական ակտը կվերաբերի միայն ապրանքային շուկաների մի մասին:

**Երկրորդ**՝ չնայած նշված կարգի 5-րդ կետում գրված է. «Ձեռք բերողների հավանական վարքագծի մասին ուսումնասիրություններ իրականացնելիս Հանձնաժողովը հաշվի է առնում ապրանքների գործածության նշանակությունը, կիրառման որակական, տեխնիկական, զնային կամ այլ հատկանիշները...», այնուամենայնիվ նշված կարգում առկա չեն այն մեխանիզմները, որոնցով հնարավոր կլինի հաշվի առնել այդ հատկանիշները:

Մասամբ կարելի է ընդունել այն կարծիքը, համաձայն որի՝ Օրենքի փոփոխություններով և լրացումներով՝ «Գնային չարաշահումների դեմ առավել արդյունավետ պայքար մղելու նպատակով օրենքում հստակ կարգավորում են ստացել զգների չհիմնավորված բարձրացման, իջեցման և պահպանման հետ կապված հարաբերությունները»<sup>2</sup>: Այսպես, օրինակ, դրական կարելի է համարել «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում (այսուհետև՝ Օրենք) «տնտեսական պայմաններ» (գործոններ), «զգների չհիմնավորված բարձրացում», «զգների չհիմնավորված իջեցում», «զգների չհիմնավորված պահպանում» հասկացությունների ներառումը (հոդված 4) և որպես մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահում (հոդված 7) դիտարկելը:

Արժեքավոր լրացում է հոդված 2-ի վեցերորդ մասը, որը նախատեսում է տնտեսական համակենտրոնացման (միաձուլման, միացման, ֆիրմայի կանոնադրական կապիտալում բաժնի (փայի) ձեռքբերման) դեպքում տնտեսավարող սուբյեկտ դիտել նաև «ֆիզիկական անձին»՝ դրանից բխող հետևանքներով: Դրա անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ այլ տնտեսավարողների բաժնեգրների (փայերի) ձեռքբերման ժամանակ ֆիզիկական անձը կարող է տվյալ սուբյեկտի որոշումների կայացման վրա նույն ազդեցությունը ունենալ, ինչ իրավաբանական անձը: Հետևաբար տնտեսական համակենտրոնացումների կարգավորման դեպքում անհրաժեշտ է ֆիզիկական անձի նկատմամբ էլ նույն մոտեցումը ցուցաբերել:

Ինքնանպատակ է ստացվել հակամրցակցային համաձայնությունների հորիզոնական, ուղղահայաց և խառը տեսակների տարբերակումը<sup>3</sup>: Նման տարբերա-

<sup>1</sup> «Ապրանքային շուկաների սահմանների որոշման կարգ» ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր, 2011թ. հունիսի 17, թիվ 14 /397/:

<sup>2</sup> **Քոչարյան Ն. Ռ.**, Փոքր և միջին ձեռնարկությունների տնտեսական գործունեության արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները, Ը.Ո.Ո.2 «Տնտեսության, դրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2013, էջ 5:

<sup>3</sup> Հակամրցակցային համաձայնությունների, ինչպես նաև տնտեսական համակենտրոնացումների տարբերակման անհրաժեշտության մասին տես **Միքայելյան Մ. Վ.**, Տնտեսական մրցակցության մենաշնորհների պետական կարգավորման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2005, էջ 165, **Միքայելյան Մ. Վ.**, **Միքայելյան Գ. Ս.**, ԱՊՀ-ում համաձայնեցված հակամենաշնորհային քաղաքականության մի քանի հարց // Հայաստանի տնտեսության զարգացման արդի հիմնա-

կունն իմաստավորված կլինեն, եթե այն օգտագործվեր հակամրցակցային համաձայնությունների բացահայտման մեխանիզմներում, և (կամ) տարբերակված պատժամիջոցներ սահմանվեր: Մինչդեռ Օրենքի փոփոխության 5-րդ մասը, որը վերաբերում է հակամրցակցային համաձայնությունների ապացուցմանը, երկու ենթակետ ունի: Դրանցում չի նախատեսվում այդպիսի տարբերակման միջոցով հակամրցակցային համաձայնությունների ապացուցման մեխանիզմ (5-րդ մասի 2-րդ ենթակետ): Այդ հոդվածի 5-րդ մասի առաջին ենթակետը շատ ընդհանուր է<sup>1</sup>: Առանց տարբերակման էլ այն կվերաբերեր հակամրցակցային համաձայնությունների բոլոր տեսակներին: Իսկ երկրորդ ենթակետը հղում է անում Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերին, որոնցում ներկայացված են հորիզոնական, ուղղահայաց և խառը հակամրցակցային համաձայնությունների դրսևորումները: Հակամրցակցային համաձայնությունների բերված դրսևորումները եթե տարբերակված էլ չլինեին հակամրցակցային համաձայնությունների բացահայտման առումով, ապա նույն արդյունքը կունենային, ինչը համաձայնությունների տարբերակումից հետո: Այսինքն՝ Օրենքում արված լրացումների տեսքով հակամրցակցային համաձայնությունների անպտուղ տարբերակումը ապացուցողական ոչ մի մեխանիզմ չի պարունակում: Այն չի պարունակում նաև բացառություններ համաձայնությունների այս կամ այն տեսակի վերաբերյալ: Մինչդեռ միջազգային նման փորձ կա: Օրինակ՝ ՌԴ «Մրցակցության պաշտպանության մասին» օրենքի 12-րդ հոդվածը նման բացառություն նախատեսում է ուղղահայաց համաձայնությունների համար<sup>2</sup>: Հակամրցակցային համաձայնությունների տարբերակում արտացոլված չէ նաև պատժամիջոցների սահմանման ժամանակ: Անկախ հակամրցակցային համաձայնությունների տեսակից Օրենքում մինևույն դրույքաչափն է սահմանված: Սակայն մրցակցության սահմանափակման կամ արգելման առումով առավել վտանգավորը հորիզոնական համաձայնություններն են: Այդ պատճառով էլ հարկավոր է այդպիսի համաձայնությունների նկատմամբ Օրենքում առավել խիստ պատժամիջոց նախատեսել: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ մրցակցության սահմանափակման առումով «պակաս վնասակարը» խառը համաձայնություններն են: Հետևաբար հակամրցակցային համաձայնությունների համար պատժամիջոցներ նախատեսելիս առավել մեղմ պատիժը հարկավոր է սահմանել խառը համաձայնությունների դեպքում: Մրցակցությունը խաթարելու առումով հակամրցակցային համաձայնությունների նշված երկու տեսակների համեմատ՝ միջին ազդեցություն ունի ուղղահայաց համաձայնությունը: Հետևաբար նման համաձայնությունների դեպքում պատժամիջոցն էլ պետք է միջին լինի: Այսպիսով Օրենքում հակամրցակցային համաձայնության տարբերակումը «կլիմաստավորվի», եթե այն օգտագործվի այդպիսի համաձայնությունների բացահայտման մեխանիզմներում և (կամ) տարբերակված արտացոլվի նաև պատժամիջոցների սահմանման ժամանակ:

Ինքնանպատակ է ստացվել նաև Օրենքի փոփոխությունների և լրացումների 4-

խնդիրները (հանրապետական գիտաժողովի նյութեր, 17-18 մայիսի, 2010թ.), եր., «Տնտեսագետ», 2010, էջ 83:

<sup>1</sup> Այն բառացիորեն հետևյալ բովանդակությունն ունի. «1) առկա է այդ մասին վկայող որևէ փաստական տվյալ (այդ թվում՝ ցանկացած գրավոր փաստաթուղթ կամ գրավոր այլ ապացույց, տեսագրություն կամ ձայնագրություն) կամ օրենքով չարգելված ցանկացած այլ ապացույց»:

<sup>2</sup> Федеральный закон N 135-ФЗ “О защите конкуренции”, Российская газета, 27.07.2006.

րդ հողվածում առաջարկված Օրենքի 6-րդ հոդվածի նոր խմբագրված տարբերակը՝ ապրանքային շուկայում «մենաշնորհ» և «գերիշխող» դիրքերը առանձնացելու վերաբերյալ<sup>1</sup>: Տնտեսական մրցակցության պաշտպանության տեսանկյունից թե՛ «մենաշնորհ» և թե՛ «գերիշխող» դիրքերը այդ դիրքերն ունեցող սուբյեկտներին մրցակցային միջավայրի վրա հավասարապես ազդելու հնարավորություն են տալիս: Այդ է պատճառը, որ մրցակցության պաշտպանության համաշխարհային պրակտիկայում այդ դիրքերը չարաշահելու համար միևնույն պատժամիջոցներն են կիրառվում: Միասնական պատժամիջոց է նախատեսված նաև Հայաստանի Օրենքում: Նման փոփոխությունը կհմաստավորվեր, եթե գոնե մենաշնորհների նկատմամբ վերահսկողության հատուկ մեխանիզմներ նախատեսվեին:

Օրենքի փոփոխությունների և լրացումների 3-րդ հոդվածում առաջարկվել է 5-րդ հոդվածի 1-ին մասի ներքոհիշյալ շարադրանքը. «...հակամրցակցային համաձայնություններ են համարվում տնտեսվարող սուբյեկտների միջև կնքված այն գործարքները, նրանց համաձայնությունները, ուղղակի կամ անուղղակի համաձայնեցված գործողությունները կամ վարքագիծը, տնտեսվարող սուբյեկտների միավորումների ընդունած որոշումները (այսուհետև՝ Համաձայնություններ Մ.Մ.), որոնք ուղղակի կամ անուղղակի հանգեցնում են կամ կարող են հանգեցնել մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը...»: Շարադրանքից հետևում է, որ հակամրցակցային կորակվեն այն Համաձայնությունները, որոնք կհանգեցնեն մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը: Իսկ 5-րդ հոդվածի փոփոխված տարբերակի 5-րդ մասի 2-րդ ենթակետի համաձայն՝ «Հակամրցակցային համաձայնությունը համարվում է ապացուցված, եթե՝ 2/ այդ մասին են վկայում տնտեսվարող սուբյեկտների սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում նշված գործողությունները կամ վարքագիծը»: Բայց 5-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը վերաբերում են հորիզոնական, ուղղահայաց և խառը համաձայնությունների դրսևորման ձևերին: Նշանակում է՝ ավելորդ է 5-րդ հոդվածի 5-րդ մասի երկրորդ ենթակետը, քանի որ այն ամբողջապես կրկնում է նույն հոդվածի երրորդ և չորրորդ մասերը: Ստացվեց հակասություն՝ 5-րդ հոդվածի 1-ին մասը հակամրցակցային համաձայնություն որակելու համար «պահանջում» է, որ դրանք ուղղակի կամ անուղղակի հանգեցնեն «մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը...», իսկ նույն հոդվածի 5-րդ մասի երկրորդ ենթակետի համաձայն՝ հակամրցակցային համաձայնությունը ապացուցված կհամարվի, եթե առկա է համաձայնության որևէ ձևի դրսևորումներից մեկը՝ առանց սահմանափակման, կանխման կամ արգելման հետևանքների: Մեր կարծիքով՝ ապացուցման մեխանիզմներից մեկն էլ պետք է ուղղված լինի «մրցակցության սահմանափակման, կանխման կամ արգելման» հիմնավորմանը:

Դրական պետք է համարել Գերիշխող դիրքը ճանաչելու համար որակական չափանիշների սահմանումը<sup>2</sup>: Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի որպես որակական չա-

<sup>1</sup> Օրենքում «մենաշնորհ» և «գերիշխող» դիրքերը առանձնացվել են դեռևս 22.02.2007թ. «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումով (տե՛ս «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդված):

<sup>2</sup> Գերիշխող դիրքի սահմանման որակական չափանիշների անհրաժեշտության մասին տե՛ս. Սիքայեյան Գ. Մ., ԱՊՀ երկրների ապրանքային շուկաներում ֆիրմաների գերիշխող դիրքի կարգավորումը, Լրաբեր հասարակական գիտությունների, 2008, N 3(623), էջ 113-120:

փանիշ դիտվել է «էական մրցակցության չհանդիպելու» հանգամանքը և (կամ) «ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա ազդելու հնարավորությունը»: Սակայն տվյալ փոփոխությամբ նոր անհայտներ են ի հայտ գալիս՝ «էական մրցակցության չհանդիպելու» և «ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա ազդելու հնարավորությունը» տեսքով: Օրենքում նշված հասկացությունները մեկնաբանված չեն: Եթե բաժնետիրական կամ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների համար «ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա ազդելու հնարավորությունը» զարգացած ապրանքային շուկա ունեցող երկրներում կանոնադրական կապիտալի տոկոսից անհամեմատ ցածր տոկոսի դեպքում է հնարավոր, ապա Հայաստանի պայմաններում՝ 50-ից ավելի տոկոսի դեպքում: Օրենքում մեկնաբանության անհրաժեշտություն կա նաև «էական մրցակցության չհանդիպելու» հասկացության վերաբերյալ:

Մեր կարծիքով՝ միանշանակ չէ այն տեսակետը, թե Օրենքի փոփոխություններով և լրացումներով՝ «...առավել հստակեցվել և խստացվել են օրենքով նախատեսվող տուգանքի չափերը»<sup>1</sup>: Օրենքի փոփոխությունների և լրացումների 25-րդ հոդվածով առաջարկվում է 36-րդ հոդվածի նոր խմբագրում, որի համաձայն՝ եթե օրենսդրության որոշ խախտումների համար իրոք խստացվել են պատժամիջոցները, ապա մյուսների համար մեղմացվել են: Մասնավորապես, եթե անբարեխիղճ մրցակցության գործողության համար հանձնաժողովի որոշմամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն չներկայացնելը կամ ոչ հավաստի կամ կեղծ տեղեկատվություն ներկայացնելը, ինչպես նաև հանձնաժողովի անդամների կամ աշխատակիցների՝ օրենքով վերապահված իրավունքները կամ պարտականությունների կատարումը խոչընդոտելը նախկինում առաջացնում էր տուգանքի նշանակում 500 հազար դրամի չափով, ապա Օրենքի փոփոխություններով և լրացումներով՝ անբարեխիղճ մրցակցության դեպքում՝ նախորդ տարվա հասույթի մինչև մեկ տոկոսի չափով, հանձնաժողովի որոշմամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն չներկայացնելու կամ ոչ հավաստի կամ կեղծ տեղեկատվություն ներկայացնելու պարագայում՝ 5 մլն դրամի չափով, հանձնաժողովի անդամների կամ աշխատակիցների՝ օրենքով վերապահված իրավունքները կամ պարտականությունների կատարումը խոչընդոտելու համար՝ 2 մլն դրամի չափով: Դրա հետ միասին մրցակցության պաշտպանության այնպիսի էական խախտումների համար, ինչպիսիք են հակամրցակցային համաձայնությունները, գերիշխող դիրքի չարաշահումները և արգելված պետական օժանդակությունը, պատժամիջոցները, մեղմացվել են: Այսպես, օրինակ, եթե հակամրցակցային համաձայնությունների և գերիշխող դիրքի չարաշահումների համար տուգանքի նախկին չափը նախորդ տարվա հասույթի 2 տոկոսի չափով էր, բայց ոչ ավելի, քան 300 մլն դրամը<sup>2</sup>, ապա Օրենքի փոփոխությամբ՝ տուգանքի չափը 5 միլիոնից մինչև 200 մլն դրամ է սահմանվում: Տվյալ պատժամիջոցը, նախկինի համեմատ ոչ միայն մեղմացվել է, այլև կոռուպցիոն ռիսկ է

<sup>1</sup> Մուսաեյան Ս. Վ., Հակամենաշնորհային քաղաքականության հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Ը.00.02 «Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Եր., 2013, էջ 132:

<sup>2</sup> Խոշոր տնտեսավարող սուբյեկտների տարեկան հասույթների 2 տոկոսը զգալիորեն գերազանցում է 300 մլն դրամը:

պարունակում, ինչն ակնառու է նաև մնացած բոլոր խախտումների համար նախատեսվող տուգանքների դեպքում<sup>1</sup>: Մինչև օրենքի փոփոխությունը արգելված պետական օժանդակություն ստանալու համար տուգանքի չափը նախորդ տարվա հասույթի 2 տոկոսի չափով էր, բայց ոչ ավելի, քան 300 մլն դրամը, ներկայումս նախորդ տարվա հասույթի մինչև 1 տոկոսի չափով է, բայց ոչ ավելի, քան 100 մլն դրամը:

Դրական պետք է համարել հակամրցակցային համաձայնության և գերիշխող դիրքի չարաշահման միջոցով գների չհիմնավորված բարձրացման հետևանքով տնտեսավարող սուբյեկտի ստացած շահույթը Հանձնաժողովի որոշմամբ պետական բյուջե գանձելու վերաբերյալ Օրենքում կատարված լրացումը<sup>2</sup>:

Ուշադրության է արժանի նաև Եվրամիության և եվրոպական երկրների մրցակցության պաշտպանության օրենսդրություններում համատարած կիրառվող «ներման» սկզբունքը՝ պատժից ազատել հակամրցակցային համաձայնության այն մասնակցին, որը մինչև տվյալ համաձայնության առնչությամբ Հանձնաժողովի կողմից վարչական վարույթ հարուցելը իր նախաձեռնությամբ առաջինն է դիմում Հանձնաժողովին՝ ներկայացնելով հակամրցակցային համաձայնության վերաբերյալ վարույթ հարուցելու համար բավարար հիմնավոր ապացույցներ:

Այսպիսով Օրենքի փոփոխությունները և լրացումները, որոշ դեպքերում բարելավելով երկրի մրցակցության պաշտպանության օրենսդրությունը, միաժամանակ պարունակում են այնպիսի սխալներ և բացթողումներ, որոնց վերացումը և լրացումը հրամայական են մրցակցության հուսալի պաշտպանության համար:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում մեկնաբանվում են «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում 12.04.2011 թվականին կատարված մի շարք փոփոխությունները ու լրացումները, և արվում են առաջարկություններ օրենքի որոշ կետերի բարելավման նպատակով:

## АННОТАЦИЯ

### МИКАЕЛЯН М.В., МИКАЕЛЯН Г.М. К ВОПРОСУ О ЗАКОНОДАТЕЛЬНОМ РЕГУЛИРОВАНИИ ЗАЩИТЫ ЭКОНОМИЧЕСКОЙ КОНКУРЕНЦИИ

В статье комментируется ряд изменений и дополнений в законе РА «О защите экономической конкуренции» от 12.04.2011 г. и выдвигаются предложения по улучшению некоторых его пунктов.

## SUMMARY

### MIKAYELYAN M., MIKAYELYAN G. – ON THE QUESTION OF THE LEGISLATIVE REGULATION OF THE ECONOMIC COMPETITION PROTECTION

In the article changes and amendments to the RA “Economic competition protection” law introduced at 12.04.2011 are discussed and suggestions to improve some items are put forward.

<sup>1</sup> Մինչև 2 մլն /5 մլն դրամ/, մինչև մեկ տոկոս և այլն:

<sup>2</sup> Օրենքի սկզբնական տարբերակի դեպքում հոդված 37-ում նախատեսված էր «խախտումով ստացված շահույթը» պետական բյուջե գանձել, որը հետագայում հանվեց Օրենքից՝ խրախուսելով չարաշահելու «հորքի» ունեցող տնտեսավարողների հետագա չարաշահումները:

**ՀՈՎԴԱՆՆԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***տնտեսագիտության դոկտոր,**ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոֆեսոր**ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի խորհրդական***ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍԱՀԱՐԹԵՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ**

Պետություն-համայնք փոխհարաբերությունների մեխանիզմում պաշտոնական տրանսֆերտների հետ կապված խնդիրները՝ պայմանավորված տվյալ պետության կառուցվածքով, նրա կողմից ստանձնած պարտավորություններով, տեղական ինքնակառավարման մարմիններին տրված իրավասություններով և վերջինիս ֆինանսական ապահովման մոդելի ընտրությամբ, տարբեր երկրներում ստացել են տարբեր լուծումներ: Ֆինանսական համահարթեցումը կարևոր տեղ է գրավում համայնքների ֆինանսական կարողությունների ամրապնդման ու դրանց զարգացման ապահովման գործում: Դրա միջոցով իրացվում են կենտրոնական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի միջև ուրուշակի փոխադարձ պարտավորությունները: Կենտրոնական իշխանությունները պարտավորվում են օրենքով սահմանված կարգով ֆինանսական թույլ կարողություններ ունեցող համայնքներին տրամադրել որոշակի ֆինանսական միջոցներ, իսկ վերջիններս պարտավորվում են դրանք ծախսել օրենքով սահմանված իրենց լիազորությունների իրականացման և համայնքային խնդիրների լուծման վրա: Ֆինանսական համահարթեցման արդյունավետ գործող մեխանիզմի կիրառումը հնարավորություն է տալիս մեղմացնելու համայնքների միջև առկա բևեռացումը: Հետևաբար ֆինանսական համահարթեցման մեխանիզմը ձևավորելիս անհրաժեշտաբար համարժեք պատասխաններ պետք է ստանան հետևյալ խնդիրները.

- Ելնելով երկրում հարուստ և աղքատ համայնքների ֆինանսական ներուժի, կարողությունների միջև ճեղքվածքից՝ որոշել ֆինանսական համարաբեցման սահմանները,
- ինչպիսին պետք է լինի ՏԻՄ-երի կողմից իրականացվող լիազորությունների ցանկը և դրանց կատարման մակարդակի գնահատականը,
- հիմնավորել ֆինանսները համայնքների միջև բաշխելիս օգտագործվող համահարթեցման բանաձևը,
- հստակեցնել համահարթեցման իրականացման մեխանիզմը,
- վերահսկել և գնահատել համահարթեցման մեխանիզմի արդյունավետությունը:

Արևմտյան զարգացած երկրներում համայնքներին պետության կողմից տրվող տարաբնույթ ֆինանսական հատկացումներն ընդհանուր առմամբ կոչված են ծածկելու ինչպես տեղական բյուջեների ծախսերը, այնպես էլ ծառայելու համայնքներում սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների համահարթեցմանը, բևեռացման կանխարգելմանը:

Համահարթեցումը կարևոր տեղ է գրավում հանրային կառավարման տարբեր մակարդակների ֆիսկալ փոխհարաբերություններում: Հայտնի են պետական

բյուջեից տեղական բյուջեներ կատարվող տրանսֆերտների տարբեր տեսակներ: Դրանցից են դրամաշնորհները, պետական հարկերից մասհանումները, դոտացիաները և սուբվենցիաները: Նշվածներից միայն դոտացիաներն են լիարժեք ծառայում որպես համահարթեցման ֆինանսական լծակ:

Ցանկացած երկրում ամենահարուստ շրջանների միջին եկամուտը մի քանի անգամ գերազանցում է ամենաաղքատ շրջանների միջին եկամտին: Եթե տվյալ պետությունը ցանկանում է համահարթեցնել իր տարածաշրջանների ֆինանսական կարողությունների տարբերությունները, ապա պետք է կիրառի տրանսֆերտների մեխանիզմը: Համահարթեցմանը հատկացվող ֆինանսական միջոցները, որպես կանոն, տրվում են ՏԻՄ-երին առանց որևէ պայմանի: Դրանք ստացող ՏԻՄ-երն ազատ են այն ծախսելու ըստ իրենց հայեցողության՝ ելնելով տվյալ համայնքի առաջնահերթություններից:

Շատ երկրներում համահարթեցման դոտացիաները տրվում են պետական բյուջեից տեղական բյուջեներին տրանսֆերտների ձևով: Դրանց թվում են Կանադան, Ավստրալիան, Մեծ Բրիտանիան, Ճապոնիան, Հարավային Կորեան, Լատվիան, Հայաստանը: Որոշ երկրներում, ինչպիսիք են, օրինակ, Գերմանիան և Շվեդիան, համահարթեցման դոտացիաները տրվում են միջինից բարձր ֆիսկալ կարողություններ ունեցող նահանգներին: Այլ երկրներում համահարթեցումն իրականացվում է ընդհանուր եկամուտներից մասհանումների կատարման ձևով:

Հայտնի է կենտրոնական իշխանությունների կողմից տարածաշրջանային պահանջներին արձագանքելու երեք մոտեցում: Ըստ առաջին մոտեցման՝ կենտրոնական և տարածաշրջանային կառավարման մարմինների միջև ֆինանսավորումն իրականացվում է անհատական բանակցությունների հիման վրա: Երկրորդ մոտեցմանը բնորոշ է ֆիսկալ ռեժիմը, որի համաձայն՝ որոշ տարածաշրջաններ ստանում են արտոնյալ հարկային իրավունքներ: Երրորդ մոտեցման դեպքում կատարվում է համահարթեցում:

Համահարթեցման մեխանիզմում հիմնական բաղադրամասերն են կիրառվող բանաձևի տարրերը, տվյալները և պայմանները: Դրանցից յուրաքանչյուրը կարևոր դեր ունի համահարթեցման դոտացիաների հաշվարկման համար: Բանաձևի սահմանումը շատ բարդ խնդիր է, որովհետև այն ներկայացնում է համահարթեցման ծրագրի նպատակները: Չնայած երկրների մեծ մասը ռեգիոնալ հիմնահարցերի լուծումը տեսնում է ֆինանսները բանաձևի միջոցով բաշխելու մեջ, սակայն դրանցից քչերն են բանաձևի մեջ ներառում ռեգիոնների իրական պահանջներն արտացոլող բաղադրամասեր: Համահարթեցման բանաձևը ծառայում է որպես եկամուտները որոշակի տեղական ինքնակառավարման միավորների միջև բաշխելու քանակական չափանիշ: Բանաձևի հիմնական նպատակն է ապահովել դոտացիաների բաշխման թափանցիկությունը և որոշակիությունը: Բանաձևը պետք է արտացոլի դրանից բխող խնդիրները, որոնցից, մեր կարծիքով, առավել էական են հետևյալները.

1. կիրառել դոտացիաների բաշխման այնպիսի մեխանիզմ, որում կարտացույվ են ֆինանսական ծախսերի կարիքները բնութագրող տարբեր ցուցանիշներ,
2. իրականացնել եկամուտների կամ ֆիսկալ կարողությունների համահարթեցում,

3. ներառել ֆինանսական համահարթեցման բանաձևում հարկային եկամուտների հավաքագրելիությունը բնութագրող ցուցանիշ,
4. համահարթեցման բանաձևի միջոցով ապահովել եկամուտների հավաքագրման կարողությունների ավելացման ու ֆինանսական ծախսերի կարիքների հաշվեկշիռը:

Առաջին խնդրի հետ կապված՝ կարևորում ենք հետևյալ ցուցանիշները.

- բնակչություն, օրինակ՝ մեկ շնչի հաշվով բաշխում,
- ֆիզիկական գործոններ, որոնք կարող են հանգեցնել ավելի մեծ ծախսերի, օրինակ՝ տարածքը, բնակչության խտությունը, ուրբանիզացիան,
- մեծ ծախսեր պահանջող բնակչության խմբեր, օրինակ՝ աղքատ ընտանիքների, կենսաթոշակառուների, դպրոցահասակ երեխաների տեսակարար կշիռները,
- ենթակառուցվածքների կարիքներ, օրինակ՝ ճանապարհների վերանորոգում կմ-ով, ջրամատակարարում ունեցող տնային տնտեսությունների տեսակարար կշիռը:

Երկրորդ խնդրի լուծման դեպքում փորձ է արվում բանաձևով լրացուցիչ միջոցներ տրամադրել այն համայնքներին, որոնք հարկերն ավելացնելու թույլ կարողություններ ունեն: Այս դեպքում հնարավոր է երկու հիմնական մոտեցում՝

- հիմնադրամների բաշխում՝ ըստ տվյալ վարչատարածքային միավորի միջին եկամտի մակարդակի կամ հարկային բազայի չափի,
- լրացուցիչ գումարի հաշվարկում այն դեպքում, եթե բոլոր համապատասխան հարկային բազաները համապատասխանեցվեն հիմնավորված դրույքաչափերին:

Երրորդ խնդրի առումով նշենք, որ կոնկրետ նպատակ է դրվում բարձրացնել ՏԻՄ-երի հարկերի հավաքագրման ընդհանուր մակարդակը: Այս խնդիրը լուծելիս առաջին մոտեցմամբ բանաձևի մեջ կարող է կիրառվել հարկերի հավաքագրման չափը, իսկ երկրորդի դեպքում՝ գործակիցը: Որպես երրորդ մոտեցում՝ կարող է հանդիսանալ հարկերի հավաքագրման որոշակի մակարդակի պահպանումը, ինչը կհամարվի դոտացիա ստանալու պայման:

Ինչ վերաբերում է վերը նշված խնդիրներից չորրորդին, ապա այս խնդրի լուծման առումով շատ երկրներ օգտագործում են տարբեր մոտեցումներ: Մասնավորապես ծառայությունների ցանկալի մակարդակ ստանալու համար ըստ ֆիզիկական ցուցանիշների վրա հիմնված բանաձևի, տարածված է ծախսերի նորմատիվային մակարդակի սահմանումը: Այս դեպքում առաջնային է համարվում հարկային բազայի չափը, որը նպատակաուղղված է եկամուտների սահմանային մակարդակի ապահովմանը (Չարավային Կորեա): Ըստ մեկ այլ տարբերակի՝ առաջարկվում է բանաձևում ներառել նվազագույն ֆինանսական ծախսերի պահանջները գույքահարկի եկամուտների հետ միասին, եթե գույքահարկի հավաքագրման որոշակի մակարդակի ապահովման խնդիր է դրված (ԱՄՆ): Որոշ անցումային փուլ ապրող երկրներում սահմանվում է ծախսերի պահանջվող մակարդակը: Այդ ծախսերի կատարման համար պահանջվող եկամուտների մակարդակը ապահովվում է տրանսֆերտների միջոցով:

Միջազգային գործընթացում կիրառվում են համահարթեցման մի շարք բանաձևերի մշակման չորս հիմնական մոտեցումներ, որոնք, ըստ դոկտոր Մա Ջունի [3], հետևյալն են.

1. տարածաշրջանների ֆիսկալ կարողությունների և ծախսերի կարիքների համահարթեցումը,
2. միայն ֆիսկալ կարողությունների համահարթեցումը,
3. տարածաշրջանների ֆիսկալ կարիքների որոշումը,
4. բնակչության մեկ շնչի հաշվով հավասար բաշխումը:

Առաջին մոտեցումը իր գործնական կիրառումն է ստացել Ավստրալիայում, Գերմանիայում, Ճապոնիայում, Կորեայում և Մեծ Բրիտանիայում: Տարածաշրջանին տրամադրվող դոտացիայի մեծությունն որոշելու համար օգտագործվում է հետևյալ բանաձևը.

$$S^i = S^{\text{Ֆi}} - S^{\text{ՖԿi}} - \text{ՊԱՏi} \quad (1)$$

որտեղ՝

$S^{\text{Ֆi}}$  - i-րդ տարածաշրջանի ֆիսկալ կարիքներն են,

$S^{\text{ՖԿi}}$  - i-րդ տարածաշրջանի ֆիսկալ կարողություններն են,

$\text{ՊԱՏi}$  - i-րդ տարածաշրջանին տրամադրվող պետական այլ տրանսֆերտներ են,

$S^i$  - i-րդ տարածաշրջանին տրամադրվող համահարթեցման դոտացիան է:

Ներկայացվող առաջին մոտեցման հիմքում օգտագործվող (1) բանաձևի համաձայն՝ պետական բյուջեից հատկացվող դոտացիան նպատակ է հետապնդում լրացնել տարածաշրջանների ֆիսկալ կարիքների և կարողությունների միջև եղած ճեղքվածքը, ինչը հնարավորություն կտա ապահովելու այդ տարածաշրջանների կողմից բավարար մակարդակով ծառայությունների մատուցումը: Այս մոտեցման համաձայն՝ միջբյուջետային հարաբերությունների մեխանիզմը միտված է ապահովելու երկրի բոլոր տարածաշրջանների համաչափ զարգացման ուղղությունները:

Երկրորդ մոտեցման համաձայն՝ միայն ֆիսկալ կարողությունների համահարթեցման դեպքում, որը որպես դասական ձև իր կիրառումը ստացել է Կանադայում, օգտագործվում է հետևյալ բանաձևը.

$$S^i = S^{\text{ԲՆi}}(\text{ԵՅԲ/ԵԲՆ} - S^{\text{ՅԲi}} / S^{\text{ՅԲi}}) \text{ xt}, \quad (2)$$

որտեղ՝

$S^{\text{ԲՆi}}$  - i-րդ տարածաշրջանի բնակչությունը,

$\text{ԵՅԲ}$  - երկրի ընդհանուր հարկային բազան,

$\text{ԵԲՆ}$  - երկրի բնակչությունը,

$S^{\text{ՅԲi}}$  - i-րդ տարածաշրջանի հարկային բազան,

$\text{t}$  - երկրի միջին արդյունավետ հարկային դրույքաչափը հարկային բազայում:

Այս մոտեցումը հաշվի չի առնում ֆինանսական ծախսերի կարիքների նկատմամբ տարածաշրջանների ունեցած էական տարբերությունները: Ըստ (2) բանաձևի՝ պետական տրանսֆերտները պետք է միջինից ցածր տարածաշրջանների ֆիսկալ կարողությունները հասցնեն ազգային միջինին: Այս բանաձևի տարբեր տարբերակներն առկա են այն երկրներում, որոնք օգտագործում են մեկ շնչին ընկնող հարկային բազայի տարբեր «միջին» ցուցանիշներ: Փաստորեն երկրորդ մոտեցման դեպքում էական դեր ունի հարկման մեխանիզմի արդյունավետությունը:

Երրորդ մոտեցումը կառուցված է «կարիքների» ցուցանիշների վրա, որն իր գործնական կիրառումն է ստացել Յնդկաստանում, Իտալիայում և Իսպանիայում: Մասնավորապես տարածաշրջանների ֆիսկալ կարիքների որոշման համար կարող են օգտագործվել հետևյալ ցուցանիշները.

- բնակչության մեկ շնչին ընկնող եկամտի մակարդակը,
- աղքատության մակարդակը,
- գործազրկության մակարդակը,
- բնակչության խտությունը,
- տարածքը,
- մանկամահացությունը,
- կյանքի միջին տևողությունը,
- դպրոցի աշակերտների հավաքագրման նորման,
- ենթակառուցվածքները (օրինակ՝ ճանապարհների և երկաթգծի երկարությունը),
- զարգացման մակարդակի այլ ցուցանիշներ (օրինակ՝ հեռախոս ունեցողների թիվը և էլեկտրաէներգիայի սպառումը):

Անհրաժեշտ է նշել, որ գոյություն ունեն բազմաթիվ ցուցանիշներ, որոնք կարող են արտացոլել տարածաշրջանների ֆիսկալ կարիքները, ուստի դրանց ընտրությունը մեծապես կախված է պետության խնդիրներից ու ՏԻՄ-երին ընձեռված լիազորություններից:

Չորրորդ մոտեցման դեպքում համահարթեցման բանաձևի հիմքում ընկած է բնակչության մեկ շնչի հաշվով հավասար բաշխումը, որն իր կիրառումն է ստացել Գերմանիայում, Կանադայում և Ինդոնեզիայում: Այս մոտեցման պարզագույն բանաձևը հետևյալն է՝

$$S_{\Gamma i} = S_{\text{ԲՆ}i} (\text{ԸԴ/ԲԸԹ}), (3)$$

որտեղ՝

$S_{\Gamma}$ -ն դոտացիայի ընդհանուր գումարն է,

$\text{ԲԸԹ}$ -ն դոտացիայի ծրագրի մեջ ընդգրկված բնակչության ընդհանուր թիվը:

Սակայն նշենք, որ այս մոտեցմանը համապատասխան տրամադրվող դոտացիաներն ամբողջապես չեն կարող ապահովել համահարթեցում: Այս դեպքում մեղմվում են տարածաշրջանների միջև առկա ֆիսկալ կարողությունների տարբերությունները: Ակնհայտ է նաև այն փաստը, որ տվյալ դեպքում շահում են բնակչության մեծ թվաքանակ ունեցող համայնքները:

Ֆինանսական համահարթեցման առկա մեխանիզմների ուսումնասիրությունն ամբողջական դարձնելու նպատակով նպատակահարմար ենք գտնում նաև քննարկել անցումային փուլ ապրած երկրներից Ռուսաստանի Դաշնությունում՝ Ֆինանսական օժանդակության հիմնադրամից տրանսֆերտների հաշվարկման մեթոդական հիմքերը, որոնք իրականացվում են հետևյալ քայլերով.

1. Իրականացվում է ՌԴ բյուջետային համակարգի բոլոր օղակների համար սեփական եկամուտների և կարգավորող եկամտային աղբյուրներից հատկացումների հաշվարկ՝ կիրառելով հետևյալ բանաձևը՝

$$\Gamma_{\text{ՍԵ}i} = \Gamma_i / \text{ԲԹ}i, (4)$$

որտեղ՝  $\Gamma_{\text{ՍԵ}i}$  - համայնքի կամ տարածաշրջանի բյուջեի սեփական եկամուտների և կարգավորող եկամտային աղբյուրներից հատկացումների մեծությունն է,

$\Gamma_i$  - ՌԴ տվյալ սուբյեկտի ամփոփ բյուջեի եկամուտների մեծությունն է,

$\text{ԲԹ}i$  - ՌԴ տվյալ սուբյեկտի բնակչության թվաքանակն է:

Տրանսֆերտների հաշվարկման դեպքում բազային են ընդունվում հաշվարկային տարվան նախորդած երկրորդ տարվա փաստացի տվյալները: Օրինակ՝

2014 թ. համար բազային կհամարվեն 2012 թ. փաստացի տվյալները: Նշենք նաև, որ հեռանկարում խնդիր է դրվել ֆինանսական օժանդակության հաշվարկներում հաշվի առնել տարածքի հարկային ներուժը և դրա օգտագործման մակարդակը:

2. Որոշվում է բյուջետային ծախսերի ինդեքսը: Վերջինս հաշվարկվում է տարածաշրջանների կամ դրանց խմբերի համար միասնական մեթոդաբանության կիրառմամբ, որը հիմնված է օբյեկտիվ փոփոխականների հիման վրա: Դրանք հնարավորություն են տալիս ՌԴ-ի սուբյեկտների բյուջետային եկամուտների կշիռները բերելու համադրելի պայմանների, որոնցից նշենք, օրինակ, կենսամինիմումը, բյուջետային ապահովվածությունը, հաշվարկային եկամուտների և ծախսերի հարաբերակցությունը: Բյուջետային նորմատիվների կիրառման դեպքում բյուջետային ծախսերի ինդեքսի հաշվարկը իրականացվում է ինտեգրացված հաշվառման հիման վրա:

3. Այս փուլում ՌԴ սուբյեկտների բյուջեների եկամտային ցուցանիշները բյուջետային ծախսերի կիրառման օգնությամբ բերվում են համադրելի պայմանների: Յուրաքանչյուր սուբյեկտի համար հաշվարկվում է համադրելի դարձրած բյուջետային սեփական եկամուտը՝ կիրառելով հետևյալ բանաձևը.

$$\Gamma\text{ԴԵ}i = \Gamma\text{ԱԵ}i / \text{ԲԾ}i, (5)$$

որտեղ՝  $\Gamma\text{ԴԵ}i$  - բյուջետային համակարգի կոնկրետ սուբյեկտի համադրելի դարձրած բյուջետային սեփական եկամուտն է,

$\Gamma\text{ԱԵ}i$  - համայնքի կամ տարածաշրջանի բյուջեի սեփական եկամուտների և կարգավորող եկամտային աղբյուրներից հատկացումների մեծությունն է,

$\text{ԲԾ}i$  - բյուջետային ծախսերի ինդեքսն է՝ ըստ այն տարածաշրջանների խմբերի, որոնց մեջ ընդգրկված է տվյալ սուբյեկտը:

4. Իրականացվում է ֆինանսական օժանդակության հիմնադրամից տարածաշրջաններին հատկացվող տրանսֆերտների հաշվարկ և հիմնադրամի ֆինանսական միջոցների բաշխում: Տրանսֆերտներ կհատկացվեն այն սուբյեկտներին, որոնց՝ հաշվարկների արդյունքում որոշված բաժինը մեծ կլինի գրոյից: ՌԴ-ում կիրառվող մեխանիզմի համաձայն՝ տրանսֆերտները բաշխվում են այլ սկզբունքով, որի դեպքում տարածաշրջանի համադրելի դարձրած բյուջետային սեփական եկամուտների ցուցանիշը բերվում է հնարավոր առավելագույնի: Բաշխման հերթականությունը իրականացվում է հետևյալ կերպ. նախ որոշվում է առաջին տարածաշրջանի բյուջեին չբավարարող միջոցների գումարը, այնուհետև տվյալ գումարը բազմապատկվում է առաջին տարածաշրջանի համար նախապես հաշվարկված բյուջետային ծախսերի ինդեքսով և այդ տարածաշրջանի բնակչության թվաքանակով: Ստացված մեծությունը հանվում է ֆինանսական օժանդակության հիմնադրամի միջոցների ընդհանուր ծավալից:

Այսպիսով՝ առաջին փուլից հետո համադրելի դարձրած բյուջետային սեփական եկամուտների նվազագույն ցուցանիշ ունեցող տարածաշրջանների տրանսֆերտի բաժինը որոշվում է այնպես, որ դրա համադրելի սեփական եկամուտը հավասարվի հաշվարկին մասնակցող երկրորդ տարածաշրջանի համանման ցուցանիշին:

Հետագայում համահարթեցումն իրականացվում է այդ նույն սկզբունքով, ընդ որում՝ հաջորդ յուրաքանչյուր փուլում մասնակցում են նախորդից մեկով ա-

վելի տարածաշրջաններ: Ֆինանսական օժանդակության հիմնադրամից բաշխման գործընթացը շարունակվում է մինչև այն պահը, երբ վերջնական արդյունքում կատարվում է հիմնադրամի միջոցների գրոյացում:

Հաշվի առնելով եվրոպական զարգացած երկրներում ժամանակի ընթացքում պետության և տեղական բյուջեների միջև ֆինանսական փոխահարաբերություններում ձևավորված փորձը՝ մեր հանրապետությունում նույնպես այդ հարցի կապակցությամբ պետության կողմից ցուցաբերվեցին կոնկրետ մոտեցումներ: Հատկապես շրջադարձային էր դոտացիաների հատկացման էության և ձևի փոփոխությունը (1998-99 թթ.): Արդյունքում անցում կատարվեց ֆինանսական համահարթեցման սկզբունքով համայնքերին դոտացիաների տրամադրմանը, միևնույն ժամանակ ամրագրվեց պլանավորվող տարվա համար պետական բյուջեից տեղական բյուջեներին տրամադրվող համահարթեցման դոտացիաների պարտադիր ապահովման սկզբունքը: Հետագայում, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, այդ դոտացիաները հանրապետության մի շարք համայնքների համար սկսեցին ծառայել որպես ծախսերի ֆինանսավորման, սոցիալ-տնտեսական, մշակութային խնդիրների լուծման հանգուցային աղբյուր, իսկ որոշ համայնքներում էլ՝ ուղղակի լրացուցիչ ծախսեր կատարելու և, ինչու չէ, նաև բյուջեի ազատ մնացորդ ձևավորելու աղբյուր:

Հանրապետությունում կարևոր նշանակություն ունեցավ նաև 1998 թ. համայնքների ընդհանրական բյուջեներից վարչական և ֆոնդային ենթաբյուջեներին անցման գործընթացը: Նպատակն էր համայնքների հետագա զարգացումը, ավելի կոնկրետ՝ սոցիալական, տնտեսական, մշակութային բնույթի ծրագրերի տարանջատումն ու գործնականում իրականացումը: Նշենք նաև, որ ըստ նախատեսված կարգի՝ և՛ վարչական, և՛ ֆոնդային ենթաբյուջեները պարտադիր ձևով պետք է հաշվեկշռվեն: Տվյալ դեպքում տեղի ունեցավ նաև և՛ եկամուտների, և՛ ծախսերի գծով խմբավորում, որը նույնպես բարձրացրեց վերահսկման արդյունավետությունը:

Զնայած այն հանգամանքին, որ ՀՀ-ում տնտեսական իրավիճակն աստիճանաբար կայունացել է, զգալի են ձեռքբերումները նաև բյուջետային գործընթացի կատարելագործման ուղղությամբ, բայց և այնպես միջբյուջետային հարաբերությունների կարգավորման խնդիրը շարունակում է մնալ արդիական ու հրատապ: Հանրապետությունում իրականացվող բարեփոխումների ընթացքում ակնհայտորեն սպասվում է համայնքների խոշորացման միտում, որն իր հերթին պահանջում է վերակառուցել ներկայումս կիրառվող բյուջետային ֆեդերալիզմի գործող մոդելը դրան բնորոշ համահարթեցման մեխանիզմի կիրառմամբ: Ֆինանսական համահարթեցումը կարևոր տեղ է գրավում ինչպես կառավարման տարբեր մակարդակների միջև փոխհարաբերություններում, այնպես էլ համայնքների ֆինանսական կարողությունների ամրապնդման ու դրանց զարգացման ապահովման գործում: Դրա միջոցով իրացվում է կենտրոնական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի միջև որոշակի փոխադարձ պարտավորությունները: Կենտրոնական իշխանությունները պարտավորվում են օրենքով սահմանված կարգով ֆինանսական թույլ կարողություններ ունեցող համայնքներին տրամադրել որոշակի ֆինանսական միջոցներ, իսկ վերջիններս պարտավորվում են դրանք ծախսել օրենքով սահմանված իրենց լիազորությունների իրականացման և համայնքային խնդիրների լուծման վրա:

Հիմք ընդունելով քննարկված տեսակետները՝ առաջարկում ենք ՀՀ-ում ֆինանսական համահարթեցման մեխանիզմի կատարելագործմանն ուղղված հետևյալ միջոցառումները.

1. Օրենսդրորեն հստակ սահմանազատել իշխանության տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների շրջանակները և տեղական բյուջեներից կատարվող ծախսերի ֆինանսավորման ոլորտները:

2. Պլանավորել տեղական բյուջեներն ըստ ընթացիկ ծախսերի բյուջեի («ընթացիկ բյուջեի») և ըստ կապիտալ ներդրումների բյուջեի («ընդլայնված բյուջեի»), որը հնարավորություն կտա առավել արդյունավետ ձևով կողմնորոշվելու պետական բյուջեից տեղական բյուջեներին ֆինանսական միջոցներ հատկացնելու ոլորտները ճշտորեն ընտրելու գործում:

3. Տեղական բյուջեների համակարգի յուրաքանչյուր օղակի համար ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հստակ հաշվառել «ընթացիկ բյուջեի» սահմանային ծավալը, որը պետք է իր մեջ ամփոփի նվազագույն այն անհրաժեշտ ծախսերը, որոնց մի մասը սեփական եկամուտների անբավարարության դեպքում պետք է ֆինանսավորվի բյուջեից տրվող դոտացիաների հաշվին:

4. Նախապես որոշել ծախսերի այն ոլորտները (բնակարանային-կոմունալ տնտեսություն, տեղական կառավարվման ապարատի պահպանում և այլն), որոնք կարող են ֆինանսավորվել տեղական բյուջեների սեփական եկամուտների հաշվին:

5. Պետական բյուջեից սուբսիդիաներ հատկացնել տեղական բյուջեներին՝ առողջապահության ընդհանուր կրթության և սոցիալական այլ ծրագրերի ծախսերը ֆինանսավորելու համար: Ընդ որում՝ այդ հատկացումները պետք է կատարվեն հանրապետության ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաստատված նորմաների ու նորմատիվների համաձայն:

6. ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված տարածքային տնտեսական ու սոցիալական զարգացման ծրագրերի շրջանակներում պետական բյուջեից սուբվենցիաներ հատկացնել տեղական բյուջեներին՝ կապիտալ ներդրումների առաջնահերթ ուղղությունների ծախսերը ֆինանսավորելու համար:

7. Միջբյուջետային հարաբերությունների կատարելագործման նպատակով վերակառուցել գործող համահարթեցման մեխանիզմը՝ փոփոխելով դոտացիայի հաշվարկման մեթոդական հիմքերը:

Ակնհայտ է, որ առաջարկված մոտեցումները և ամբողջական բարեփոխումներին վերաբերող միջոցառումները կարող են դրականորեն անդրադառնալ ՀՀ-ում միջբյուջետային հարաբերություններում առկա ճգնաժամի հաղթահարմանը: Ժամանակի պահանջներին համապատասխան գործող միջբյուջետային հարաբերությունները ի զորու կլինեն ապահովել տեղական ինքնակառավարման համակարգի կայուն և շարունակական զարգացումը: Այդպիսի պահանջ ներկայումս ձևավորվել է նաև ՀՀ-ում, ուստի կարծում ենք, որ մեր կողմից քննարկված և առաջարկված մոտեցումները ինչ-որ չափով կարող են օժանդակել պետական հոգացության արժանի այդ հույժ կարևոր գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

### Օգտագործված գրականություն

1. Емельянов Н.А. Местное самоуправление: международный опыт / Тула: ГМРИП “Левша”, 1997.
2. Перестройка региональных и местных органов власти в новой Европе / Tacis servises DGIA, European Commision 1995.
3. **Ma, Jun.** Intergovernmental Fiscal Transfer: A Comparison of Nine Countries / Washington D.C.: Pelgrave-Macmillan, 1997.

### ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածում վերլուծվում են ֆինանսական համահարթեցման համաշխարհային փորձը և զարգացման միտումները, ինչպես նաև կատարված բարեփոխումները ՀՀ համայնքների վերաբերյալ: Առաջարկվում են ֆինանսական համահարթեցման մեխանիզմի կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

### АННОТАЦИЯ

#### ԱՐՄՅՈՒՅԱՆ Օ. – К ВОПРОСУ О ФИНАНСОВОМ ВЫРАВНИВАНИИ

В данной статье анализируется международный опыт и тенденции развития финансового выравнивания, а также осуществленные реформы, применительно общин РА. Предлагаются мероприятия по усовершенствованию механизма финансового выравнивания.

### SUMMARY

#### HARUTYUNYAN H. – ON THE QUESTION OF FINANCIAL ALIGNMENT

In the article the international experience of alignment and development tendencies, as well as the accomplished reforms aimed at RA communities is analyzed. Measures to improve the mechanism of financial alignment are proposed.

**ՎԱՐԴԱՆ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ**

*տնտեսագիտության դոկտոր,  
ԵՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի պրոֆեսոր*

**ԹԱՄԱՐԱ ՉՈՎԱԿԻՄՅԱՆ**

*տնտեսագիտության գիտությունների թեկնածու,  
ԵՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի դոցենտ  
Էլ. փոստ՝ tamarhovakimyan@mail.ru*

**ԳԵՎՈՐԳ ՂՈՒԿԱՍՅԱՆ**

*ԵՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի ասպիրանտ,  
Էլ. փոստ՝ ghukasyangev@yahoo.com*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՈՎԱՐՄԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Տնտեսական զարգացման կարևորագույն խնդիրներից մեկը բյուջետային դեֆիցիտի և պետական պարտքի կառավարման հիմնախնդիրներն են: Աճցյալ դարի սկզբներից արդեն զարգացած երկրներում սկսեցին ձևավորվել պարտքային պարտավորություններ, որոնք, պայմանավորված ճգնաժամային երևույթների հետևանքների վերացման, մասնավորապես տնտեսական անկման և հատկապես սոցիալական անհետաձգելի խնդիրների լուծման համար անհրաժեշտ միջոցների հայթայթմամբ, հասան ծայրահեղ մեծ, իսկ երբեմն նույնիսկ անկառավարելի չափերի: Արդյունքում՝ երկրների մեծ մասում բյուջետային դեֆիցիտի, հետևաբար նաև պետական պարտքի ծավալների մեծացմանը զուգահեռ դրանց սպասարկման հետ կապված դժվարությունների կողքին ծագեցին նաև սոցիալական զարգացմանը խոչընդոտող այլ խնդիրներ:

Պետական պարտքի կառավարման հարցերն ավելի սրվեցին ներկա ժամանակներում, երբ բազմաթիվ երկրներ, հրաժարվելով կառավարման նախկին մոդելից, դեռևս գտնվում են շուկայական հարաբերությունների ձևավորման փուլում և գործում են խիստ սահմանափակ եկամուտների պայմաններում: Ներկայումս պարտքի սպասարկման հետ խնդիրներ ունեն ոչ միայն զարգացող, այլև զարգացած շատ երկրներ, ինչպիսիք են Հունաստանը, Իսպանիան, Պորտուգալիան, Իսլանդիան, Իտալիան, Իռլանդիան, Կիպրոսը, Մերձբալթյան հանրապետությունները: Պարտքի կառավարման խնդիրներ ունեն նաև այնպիսի գերիզոտ տերություններ, ինչպիսիք են ԱՄՆ-ն, Ճապոնիան և Գերմանիան: Ավելին՝ կանխատեսումները ցույց են տալիս, որ հեռանկարում տեղի կունենա արտաքին պարտքի բեռի տակ հայտնված երկրների թվի ավելացում:

Ելնելով ստեղծված ֆինանսական բարդ իրավիճակից՝ պարտքային ճգնաժամից դուրս գալու նպատակով Եվրամիության երկրների միջև կնքվել է համաձայնագիր, ըստ որի՝ նախատեսվում է ազգային բյուջեների նկատմամբ վերահսկողության ուժեղացում և համապատասխան պատժամիջոցների կիրառում: Մասնագետների կարծիքով՝ անգամ այդ համաձայնագիրը չի կարող ամ-

բողջությամբ երաշխավորել ֆինանսական կայունություն տարածաշրջանում, քանի որ ճգնաժամից հետո համաշխարհային տնտեսության վերականգնումն ընթանում է դանդաղ տեմպերով, բավականաչափ վտանգավոր, իսկ երբեմն անկառավարելի ռիսկերի ուղեկցությամբ: Նման իրավիճակներում պարտքային բեռի բարձր մակարդակն իր հերթին էականորեն սահմանափակում է պետական միջամտության սահմանները, չի խթանում համախառն պահանջարկի աճը, չի նպաստում տնտեսական աշխուժացմանը և այլն:

Պետական պարտքի ձևավորումը, լինելով ընդհանուր տնտեսական քաղաքականության կարևոր բաղկացուցիչը, հետապնդում է շատ որոշակի նպատակ՝ նպաստել երկրի առջև ծառայած խիստ կարևոր ու անհետաձգելի խնդիրների լուծմանը: Դա, անշուշտ, ենթադրում է մեծ ծախսեր, որոնց իրականացումն անցումային կամ զարգացող երկրների համար, ինչպիսին Հայաստանն է, չափազանց դժվար է և պահանջում է զգալի միջոցների ներգրավում: Ըստ էության, այդպիսի երկրներից գրեթե ոչ մեկն ի զորու չէ առանց անհրաժեշտ ներդրումների ձեռնամուխ լինել իր համար օրախնդիր դարձած հիմնահարցերի լուծմանը: Այդ առումով բնական է պետական պարտքի ձևավորումը, սակայն դրա, այսպես կոչված, «կառավարումը», ինչպես այն իրականացվում է Հայաստանում, անկասկած, կհանգեցնի չափազանց լուրջ հետևանքների: Դա բացառելու համար ինչպես ամեն գործի, առավել ևս պետական պարտքի կառավարման հիմքում պետք է դրվի առողջ տրամաբանություն, ինչը կենթադրի ինչպես տնտեսական, այնպես էլ ֆինանսական արդյունավետ համակարգերի առկայություն և, որ ամենակարևորն է, պետական գործառույթների իրականացման համար մեծ պատասխանատվություն:

Պետական պարտքի կառավարման արդյունավետությունն ապահովելու համար առաջին հերթին պետք է գնահատել դրա ֆինանսավորման ներքին և արտաքին աղբյուրների հնարավորությունները, հիմնավորել պարտքի ձևավորման ենթադրվող դինամիկան, ապահովել պարտքի և մակրոտնտեսական ցուցանիշների ֆունկցիոնալ կապը, իրականացնել այդ գործընթացի մշտադիտարկումը, ինչպես նաև այդ ամենը կենսագործելու համար ստեղծել անհրաժեշտ իրավական հիմքեր:

Հարկ է նշել, որ հանդիսանալով պետական պարտքի առաջացման հիմնական պատճառ, բյուջետային դեֆիցիտի ֆինանսավորման գործընթացը պահանջում է այդ ուղղությամբ հնարավոր աղբյուրների բացահայտում և Հայաստանի համար դրանցից առավել նպատակահարմարների ընտրություն: Հանրապետությունը, դեռևս գտնվելով ճգնաժամի ազդեցության տակ, ունի պետական բյուջեի դեֆիցիտի սպասարկման և պետական պարտքի կառավարման հետ կապված լուրջ խնդիրներ:

Ճգնաժամային տարում միայն հարկային եկամուտների կանխատեսված մակարդակը թերակատարվեց ավելի քան 200 մլրդ դրամով: Արտաքին պահուստների նվազագույն մակարդակն ապահովելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկը ևս ստիպված եղավ ներգրավել մեծածավալ փոխառու միջոցներ: Արդյունքում հանրապետության արտաքին պարտքը ճգնաժամային տարում կրկնապատկվեց, ինչը հիմնականում պայմանավորված էր բյուջետային դեֆիցիտի աննախադեպ աճով: Ընդ որում՝ այս երևույթը շարունակվում է առ այսօր: Աղյուսակում 1-ում բերված են ՀՀ պետական պարտքի դինամիկան 2000-2012 թթ.:

*Աղյուսակ 1*

**Հայաստանի Հանրապետության պետական պարտքը  
2000-2012 թվականներին**

Ցուցանիշ	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012
ՀՀ պետական պարտք, մլրդ ՀՀ դրամ	504.4	545.2	640.6	664.4	621.1	546.2	508.9	516.2	584.6	1270.7	1.379.3	1592.7	1760.6
ՀՀ պետական պարտք, մլն ԱՄՆ դոլար	913.5	970.4	1095.3	1173.9	1278.5	1213.3	1400.1	1696.9	1906.0	3362.7	3795.0	4128.7	4215.5
ՀՀ պետական պարտք / ՀՆԱ %, դրամային	48.9	46.4	47.0	40.9	32.6	24.4	19.2	16.4	16.4	41.0	39.9	42.2	42.1
ՀՀ պետական պարտք / ՀՆԱ %, դոլարային	47.8	45.8	46.1	41.8	35.7	24.8	21.9	18.4	16.3	39.4	43.9	41.3	42.1

*Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության պետական պարտքը. ՀՀ Կառավարության պարտքի կառավարման 2013-2015 թվականների ռազմավարական ծրագիր. հավելված, ՀՀ Կառավարության 2012. 05.31-ի, N 21 արձանագրություն*

Աղյուսակում բերված պարտքի դինամիկան ցույց է տալիս, որ ՀՀ պետական պարտքն այդ ժամանակահատվածում դրամային արտահայտությամբ աճել է 3.6 անգամ՝ 504.4 մլրդ դրամից հասնելով 1760.6 մլրդ դրամի, իսկ դոլարային արտահայտության բարձրագույնը է ավելի մեծ աճ՝ 4.6 անգամ, 913.5 մլն դոլարից հասնելով 4215.5-ի: Այսպիսի դինամիկան արդյունք է նաև փոխարժեքային տատանումների ռիսկի, որը շատ հավանական է արտարժույթային պարտավորությունների գործարքներում: Ընդ որում՝ դա հատկապես վերաբերում է լողացող տոկոսադրույքներով ձևավորվող պարտավորություններին:

Յուրաքանչյուր երկիր ինքն է ընտրում այն հիմնական գործոններն ու ցուցանիշները, որոնք բնութագրում են պարտքի ձևավորման նպատակները՝ ելնելով տնտեսության զարգացման հեռանկարներից և միտումներից: Ենթադրենք, որ այս հրամայականներով են պայմանավորված եղել նախորդ տարիների ընթացքում կազմված ՀՀ պետական բյուջեները, որոնց հիմքում դրված հիմնական ցուցանիշների դինամիկան 2007-2012 թթ. համար ներկայացված է Աղյուսակ 2-ում: Ըստ էության, աղյուսակում նշված են այն թիրախային ցուցանիշները և միտումները, որոնք պայմանավորել են ՀՀ տնտեսության զարգացման արդյունքները 2012 թվականին:

## Աղյուսակ 2

**ՀՀ 2007- 2012 թվականների պետական բյուջեների հիմքում դրված հիմնական տնտեսական ցուցանիշները (%)**


Ցուցանիշ	2007	2008	2009	2010	2011	2012
	փաստ	փաստ	փաստ	փաստ	փաստ	փաստ
Տնտեսական աճ (ՀՆԱ փոփոխություն)	13.7	6.9	-14.1	2.1	4.6	4.2
Ներդրումների մակարդակ (Ներդրումներ/ ՀՆԱ)	37.8	40.9	34.7	33.4	31.3	30.0
Սպառման մակարդակ (Սպառում/ՀՆԱ)	81.8	81.8	93.7	94.0	91.2	89.3
ՀՆԱ-ի դեֆլյատոր	104.2	105.9	102.6	109.2	105.7	104.6
Գնաճ (միջին)	4.4	9.0	3.4	8.2	7.7	4.5
12-ամսյա գնաճ	6.6	5.2	6.5	9.4	4.6	4.1
Պետական բյուջեի պակասորդ/ՀՆԱ	-0.7	-0.7	-7.6	-5	-3.8	-3.1
Բանկային համակարգի ներգրավվածություն(փողի զանգված/ՀՆԱ)	22	19.8	25.9	26.03	27.1	27.5
Ընթացիկ հաշիվ/ՀՆԱ	-6.4	-11.8	-15.8	-14.7	-11.1	-9.8

*Աղբյուրը՝ ՀՀ տնտեսական և հարկաբյուջետային հիմնական ցուցանիշների կանխատեսումներ, մաս 2-Ա, Մակրոտնտեսական կանխատեսումներ և վերլուծություն, ՀՀ կառավարություն, 2012, էջ 50:*

ՀՀ պետական բյուջեի հիմքում դրված մակրոտնտեսական ցուցանիշների դինամիկան վերլուծելու և հանրապետության պարտքային պարտավորությունների հետ դրանց ֆունկցիոնալ կապը գնահատելու համար Գծապատկեր 1-ում ներկայացված է ՀՀ պետական պարտքի դինամիկան՝ ըստ ֆինանսավորման աղբյուրների: Բերված տվյալների վերլուծությունից պարզ է դառնում, որ հետազոտվող ժամանակահատվածում հանրապետության ընդհանուր պետական պարտքի 3.6 անգամ աճի պարագայում 3.38 անգամ աճել է արտաքին պարտքը, իսկ ներքին պարտքը աճել է շուրջ 6.96 անգամ: Այս հանգամանքը թույլ է տալիս արձանագրել, որ պետական պարտքի մեծացումը (որքան էլ այն լինի ոչ ցանկալի երևույթ) տեղի է ունենում երկրի տնային տնտեսությունների և մասնավոր բիզնեսի հաշվին, ինչը, ըստ էության, ավելի նախընտրելի է, քանի որ այդպիսով սահմանափակվում է սեփական կապիտալի հոսքը հանրապետության սահմաններից դուրս:

**Գծապատկեր 1**

**ՀՀ պետական պարտքի 1999-2012 թթ. դինամիկան ըստ ֆինանսավորման աղբյուրների**



*Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության պետական պարտքը. Հաշվետվություն 2012 առաջին կիսամյակ, ՀՀ ֆինանսների նախարարություն, 2012:*

ՀՀ ներքին պետական պարտքի կառուցվածքի վերջին երկու տարիների դինամիկան ներկայացված է Աղյուսակ 4-ում: 2012 թ-ի հունիսի 30-ի դրությամբ ներքին պետական պարտքն անվանական արժեքով կազմել է 217.213.5 մլն դրամ, որից պետական կարճաժամկետ պարտատոմսերը՝ 25.229.0 մլն դրամ, միջին ժամկետայնության պարտատոմսերը՝ 110.629.6 մլն դրամ, երկարաժամկետ պարտատոմսերը՝ 74.696.6 մլն դրամ, խնայողական պարտատոմսերը՝ 0.811 3 մլն դրամ, ՀՀ ռեզիդենտից ստացված վարկը՝ 5,847.0մլն դրամ: Պետական պարտատոմսերի հաշվին պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը կազմել է 1.410.5 մլն դրամ, ներքին պետական պարտքի միջին կշռված եկամտաբերությունը՝ 13.38 տոկոս, իսկ ներքին պետական պարտքի միջին կշռված ժամկետայնությունը կազմել է 1858 օր:

**Աղյուսակ 4**

**2011-2012 թվականների ՀՀ ներքին պետական պարտքի ցուցանիշները (մլն դրամ)**


Ներքին պետական պարտքի կառուցվածքը	30.06.2011թ.	30.12.2011 թ.	30.06.2012 թ.
Ներքին պետական պարտքը,	185,592.6	216,208.8	217,213.5
այդ թվում՝			
պետական պարտատոմսեր, որից՝	178,953.1	210,036.5	211,366.5
կարճաժամկետ պարտատոմսեր	26,970.4	32,951.0	25,229.0
միջնաժամկետ պարտատոմսեր	95,592.5	111,200.6	110,629.6
երկարաժամկետ պարտատոմսեր	55,668.2	65,046.0	74,696.6
խնայողական պարտատոմսեր	721.9	838.9	811.3
ՀՀ ռեզիդենտից ստացված վարկ	6,639.5	6,172.3	5,847.0

Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության պետական պարտքը, Հաշվետվություն 2012, ՀՀ ֆինանսների նախարարություն, 2012:

Հայաստանի Հանրապետության 2012 թվականի հունիսի 30-ի դրությամբ պետական պարտքի կառուցվածքը ներկայացված է գծապատկերներ 2-ում և 3-ում:

**Գծապատկեր 2**


**ՀՀ ներքին պետական պարտքի կառուցվածքը 2012 թվականի հունիսի 30-ի դրությամբ (%)**



Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության պետական պարտքը, Հաշվետվություն 2012, ՀՀ ֆինանսների նախարարություն, 2012:

**Գծապատկեր 3**

**ՀՀ արտաքին պարտքի կառուցվածքը ըստ վարկատուների 30.06.2012 թ**



*Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության պետական պարտքը, Հաշվետվություն 2012, առաջին կիսամյակ, ՀՀ ֆինանսների նախարարություն, 2012, էջ 3:*

Ներքին պետական պարտքի ձևավորումը նպատակ է հետապնդում թեթևացնել բյուջետային քաղաքականության բնագավառում պետության առջև ծառայած հիմնախնդիրների լուծումը: Ձևավորված միջոցներն ուղղելով պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորմանը՝ Կառավարությունը՝ ի դեմս դրանց, միաժամանակ կարողանում է տարվա ընթացքում ապահովել բյուջեի դրամական հոսքերի հարթեցումը: Այդուհանդերձ, ներքին պարտքի և ընդհանրապես պետական պարտքի ձևավորման քաղաքականությունը կարելի է համարել հիմնավորված, երբ այն հանգեցնում է համախառն ներքին արդյունքի աճի, ներդրումների մեծացման, տնտեսության զարգացման, բնակչության կենսամակարդակի բարձրացման և այլն:

Պետական պարտքի արդյունավետ կառավարման գործում կարևորագույն նշանակություն ունի նաև պարտքային պարտավորություններից ծագող այնպիսի ռիսկերի կառավարումը, ինչպիսիք են վերաֆինանսավորման, տոկոսադրույքի, փոխարժեքի ու գործառնական ռիսկերը: Արտաքին պարտքի առումով հատկապես կարևորվում են վերաֆինանսավորման, տոկոսադրույքի և փոխարժեքի, իսկ ներքին պարտքի գծով՝ վերաֆինանսավորման, տոկոսադրույքի և գործառնական ռիսկերը: Վերաֆինանսավորման ռիսկը կարևորվում է միջազգային և ներքին ֆինանսական շուկաներում հնարավոր զարգացումներով, ինչպես նաև պարտքի սպասարկման գծով ՀՀ Կառավարության կողմից վճարման ենթակա գումարների ծավալներով (Աղյուսակ 5):

## Աղյուսակ 5

**ՀՀ Կառավարության ընթացիկ պարտքը 2010-2015 թթ.  
(մլրդ դրամ)**

Ընթացիկ պարտք	2010 փաստ	2011 փաստ	2012 փաստ	2013 ծրագիր	2014 ուղեմիչ	2015 ուղեմիչ
ՀՀ Կառավարության ընթացիկ պարտքը, որից՝	120.7	165.8	177.7	208.3	207.2	213.2
տոկոսավճար	30.4	35.5	47.7	50.7	55.5	60.8
մարում	90.3	130.3	130	157.7	151.7	152.4
ՀՀ Կառավարության արտաքին պարտքը, որից՝	24.3	24.9	48.4	87.9	76.4	69.4
տոկոսավճար	14.6	14.8	21.5	21.6	22.2	22.9
մարում	9.7	10.1	26.9	66.3	54.2	46.5
ՀՀ Կառավարության ներքին պարտքը, որից՝	96.4	140.9	129.3	120.5	130.8	143.8
տոկոսավճար	15.8	20.7	26.2	29.1	33.3	37.9
մարում	80.6	120.2	103.1	91.4	97.5	105.9

*Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության պետական պարտքը, ՀՀ Կառավարության պարտքի կառավարման 2013-2015 թվականների ռազմավարական ծրագիր, Հավելված, ՀՀ Կառավարության 2012. 05.31-ի, N 21 արձանագրություն:*

Վերաֆինանսավորման ռիսկի գնահատման տեսանկյունից կարևոր է նաև ընդհանուր պարտքում ընթացիկ պարտքի տեսակարար կշիռը: Այն անմիջապահորեն առաջացնում է իրացվելության ռիսկ, ինչն էլ կարող է հանգեցնել երկրի վարկանիշի, հետևաբար նաև վստահության մակարդակների անկման: Այդ իսկ պատճառով յուրաքանչյուր երկիր ստեղծում է ընթացիկ իրացվելիության ռիսկի հեջավորման հնարավոր տարբերակներ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանրապետությունում դեռևս չկան հեջավորման համապատասխան գործիքներ, ընթացիկ իրացվելիության ռիսկի կառավարումը հիմնականում իրականացվում է ընթացիկ հաշիվների կառավարման միջոցով:

Փաստորեն, ընթացիկ պարտքի առավելագույն մակարդակ է գրանցվել 2011 թվականին, ընդ որում՝ հիմնականում արտաքին ընթացիկ պարտքի հաշվին, սակայն հաջորդող տարիներին այն աստիճանաբար նվազման միտումներ է դրսևորելու՝ ի հաշիվ ներքին ընթացիկ պարտքի աճի: Հարկ է նկատել, որ ընթացիկ պարտքում այդպիսի տեղաշարժերը, ըստ էության, թույլ կտան համեմատաբար դյուրինացնել ընթացիկ պարտքի կառավարման գործընթացը:

ՀՀ պետական բյուջեի ցուցանիշները և տնտեսության վերականգման դանդաղ տեմպերը ցույց են տալիս, որ առաջիկայում ևս Հայաստանում կշարունակվեն դրսևորվել փոխառու միջոցների ծավալի մեծացման միտումներ, ինչը, անշուշտ, չի կարող բացասաբար չազդել պետական պարտքի կայունության վրա: Այսօր արդեն փոխված է պետական արտաքին պարտքի կառուցվածքը,

դրանում էականորեն փոքրացել է ինչպես արտոնյալ պայմաններով տրամադրված վարկերի, այնպես էլ դրանց լողացող տոկոսադրույքներով մասի տեսակարար կշիռը: Այս պայմաններում, անկասկած, անհրաժեշտ կլինեն պետական պարտքի կառավարման նոր մոտեցումներ և դրա սպասարկման համակարգված միջոցառումներ՝ ուղղված պետական եկամուտների մակարդակի բարձրացմանը, կենտրոնացված միջոցների ռացիոնալ օգտագործմանը, բյուջետային դեֆիցիտի զսպմանը, ֆինանսական միջնորդության ինստիտուտների զարգացմանը և այլն:

Պետական պարտքի արդյունավետ կառավարման, ինչպես նաև տնտեսական զարգացման ժամանակակից մեխանիզմների ձևավորման համար Հայաստանում վաղուց արդեն հասունացել է կայուն ֆինանսական համակարգի ստեղծման անհրաժեշտությունը: Ընդ որում՝ այն ոչ միայն պետք է առանձնաճանա աղյախի համակարգերին բնորոշ համալիրությամբ, այլև ներառի ֆինանսական միջնորդության և ֆինանսական գործարքների իրականացման արդիական մեխանիզմներ: Այս ուղղությամբ ցանկալի արդյունքների հասնելու համար էական դեր կարող է ունենալ հանրապետությունում ֆինանսական ճարտարագիտության ներդրումը: Այն ներառում է հատուկ տեխնոլոգիաներ, որոնց կիրառումը պահանջում է ֆինանսների տեսության, վիճակագրական և քանակական վերլուծության ժամանակակից մեթոդների, ֆինանսական հաշվառման, հարկային հարաբերությունների և օրենսդրության լավ իմացության, ինչպես նաև դրանց կիրառության բարձր մակարդակ: Ֆինանսական ինժեներիայի գործիքակազմն ավանդականի հետ ներառում է նաև ոչ տրադիցիոն գործիքներ: Ֆինանսական ինժեներիայի գործառնական սխեմաները հիմնված են ժամանակակից մոտեցումների և ներկայումս կիրառվող ֆինանսական գործիքների համադրված լուծումների վրա: Գործնական տեսանկյունից ֆինանսական ինժեներիան ընդգրկում է կազմակերպությունների ֆինանսները, առևտուրը, երկարաժամկետ և կարճաժամկետ ներդրումները, ռիսկերի կառավարումը և այլն: Հատկապես կորպորատիվ ֆինանսների բնագավառում, երբ անհրաժեշտություն է առաջանում իրականացնել լայնամասշտաբ ծախսատար գործառնություններ, ֆինանսական ինժեներիան թույլ է տալիս մշակել և կիրառել այնպիսի ֆինանսական գործիքներ, որոնք պաշտպանում են կապիտալը տարաբնույթ ռիսկերից: Հայաստանում արդեն ծագել են խնդիրներ, որոնք իրենց տրամաբանական լուծումը կարող են ստանալ միայն ֆինանսական ճարտարագիտության հմտությունների տիրապետման միջոցով: Հանրապետության համար այդպիսի խնդիրներ են դարձել սովետային տնտեսության սահմանների կրճատումը, հարկային վարչարարության արդյունավետության բարձրացումը, տնտեսության երկարաժամկետ զարգացումն ապահովող ներդրումային միջավայրի ստեղծումը, պարտքի արդյունավետ կառավարումը և նմանատիպ այլ հիմնահարցերի լուծումը:

Բյուջետային դեֆիցիտի, հետևաբար նաև պետական պարտքի կառավարման արդյունավետ ճանապարհներից մեկը ֆինանսավորման համեմատաբար էժան աղբյուրների ընտրությունն է: Հայաստանում այդպիսի այլընտրանքային աղբյուրներ կարող են ձևավորվել, երբ հանրապետությունում կներդրվեն կյանքի և կուտակային կենսաթոշակային ապահովագրության համակարգերը: Դրանք իրենցից ներկայացնում են տնտեսական հարաբերությունների յուրահատուկ ամբողջություն, որոնք ներառում են դրամական միջոցների որոշակի նպատակային ֆոնդերի ձևավորման և օգտագործման հատուկ մեխանիզմներ: Այս հա-

մակարգերի զարգացման անհրաժեշտությունը կարևորվում է նրանով, որ դրանց միջոցով հանրապետությունում կծնավորվեն երկարաժամկետ և միջնաժամկետ ֆինանսական այնպիսի ռեսուրսներ, որոնք պետության համար կարող են դառնալ ինչպես պետական պարտքի սպասարկման այլընտրանքային աղբյուր, այնպես էլ սոցիալական հիմնահարցերի լուծման արդյունավետ գործիք: Բյուջետային դեֆիցիտի ֆինանսավորումը պետական պարտատոմսերի թողարկման միջոցով ամենևին էլ չի կարելի համարել փոխառու միջոցների ներգրավված միակ և լավագույն ձևը: Կյանքի ապահովագրության գործուն համակարգի առկայության դեպքում պարտքի սպասարկման համար կարելի է, անշուշտ, օգտագործել նաև այդ համակարգի միջոցները: Նույնիսկ նույն եկամտաբերության պայմաններում կյանքի ապահովագրության հիմնադրամի միջոցները, պետական պարտատոմսերի թողարկմամբ ձևավորված միջոցների համեմատ, ավելի նախընտրելի են, քանի որ կախված կյանքի ապահովագրության առանձնահատկություններից՝ դրանք հանդիսանում են ոչ միայն տոկոսային աճով պայմանավորված վճարումներ, այլև լրացուցիչ ակտուարային եկամուտներ: Կարևոր հանգամանք է նաև այն, որ Հայաստանը այս ուղղությամբ ունի որոշակի փորձ, և ներկայումս, ի դեմս հանրապետությունում գործող, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» և իրավական այլ ակտերի, ձևավորված են ապահովագրական գործունեության իրականացման օրենսդրաիրավական անհրաժեշտ հիմքեր:

Աշխարհում ֆինանսական ռեսուրսների մոբիլիզացման տարածված և արդյունավետ ձևերից մեկը կյանքի կուտակային ապահովագրությունն է: Վերջինս զարգացած երկրներում օգտագործվում է որպես բյուջեների դեֆիցիտի ֆինանսավորման այլընտրանքային աղբյուր՝ միաժամանակ հասարակության և ներդրումային ընկերությունների համար հանդիսանալով կապիտալի կուտակման կարևոր գործիք: Սակայն մասնավոր ապահովագրական ընկերությունների և ընդհանրապես ֆինանսական ինստիտուտների նկատմամբ դեռևս առկա անվճար տառապանքային պայմաններում պետությունը զոհե սկզբնական փուլում պետք է իր վրա վերցնի կյանքի ապահովագրության գործընթացների կազմակերպման և դրանց ապահովության երաշխավորի գործառույթները: Ապահովագրության այս ձևը էականորեն բարձրացնում է անձի պաշտպանվածության մակարդակը: Սրա վկայությունը պետք է համարել այն, որ զարգացած երկրներում բնակչության 75%-ից ավելին ունի ապահովագրության պոլիսներ:

Կյանքի ապահովագրության համակարգի մասնակից անձի շահերը պաշտպանելիս, ինչպես նաև ապահովագրական ընկերությունների ֆինանսական վիճակի վատթարացման միտումները ժամանակին բացահայտելու և այլ բնույթի ռիսկերը կանխելու նպատակով այս ընկերությունների նկատմամբ պետք է կիրառել հատուկ վերահսկողական մոտեցումներ: Դրանց նկատմամբ խիստ պահանջները, անշուշտ, պետք է հետապնդեն ապահովագրական գործարքների հուսալիության ապահովման նպատակ: Վերահսկողական հատուկ մեխանիզմների անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ տվյալ ոլորտում ծագող ռիսկերը էականորեն տարբերվում են այլ տեսակի ապահովագրական գործարքներին բնորոշ ռիսկերից: Վերջիններիս արդյունավետ կառավարումն ապահովելու համար անհրաժեշտ է.

- տեխնիկական պահուստային ֆոնդին կատարվող հատկացումների համար սահմանել առավելագույն տոկոսադրույքներ,
- ընկերության իրացվելիության պահանջները բավարարելու համար մշակել հիմնադրամի ներդրումային գործարքների հուսալիության և շահութաբերության ապահովման սկզբունքները,
- ռիսկերի դիվերսիկացիայի և ներդրումային հավասարակշռված պորտֆելի ձևավորման համար վերահսկել միջոցների բաշխումն ըստ ներդրողների,
- հիմնադրամի գործունեության կայունության ապահովման համար սահմանել ներդրումների ծածկույթ ստեղծող հատկացումների հիմնավորված մակարդակ,
- հիմնադրամի կառավարման մարմնի գործառույթները չվտանգելու համար բացառել առանց նրա թույլտվության ներդրումային որևէ գործարքի իրականացում,
- ապահովագրական ընկերությունների ֆինանսական վիճակի վատթարացման կամ սնանկացման դեպքում, ապահովագրական գումարների վճարման պարտավորությունների կատարումը երաշխավորելու համար ստեղծել հատուկ մարմին:

Ամփոփելով հարկ է նշել, որ առաջարկվող միջոցառումները կարող են նպատակին ծառայել միայն պետական պարտքի ֆինանսավորման գործընթացի անհրաժեշտ հստակության և թափանցիկության ապահովման դեպքում: Ներկայումս Հայաստանում այդ գործընթացը վերածված է Կառավարության կողմից իրականացվող, մեր կարծիքով՝ պարզագույն մի գործառույթի, երբ պարտքային պարտավորությունների կատարման համար պետական բյուջեից առանձնացվում է պահանջվող ծավալի միջոցներ՝ առանց տվյալ տարվա ծախսային առաջնահերթությունների գնահատման և դրանով պայմանավորված պարտադիր իրագործման ենթակա ծրագրերի ամրագրմամբ: Այդպիսի գործելակերպը, անշուշտ, չի կարող որևէ առնչություն ունենալ հիմնավորված բյուջետային քաղաքականության հետ և միայն պայմանականորեն կարող է անվանվել «կառավարում»: Այս պայմաններում իրականում տեղի է ունենում պարտքի ծավալի անվերահսկելի մեծացում, որի սպասարկումը հետագա սերունդների համար կարող է ստեղծել լուրջ ղժվարություններ: Ինչ վերաբերում է պետական պարտքի սպասարկման ներկա վիճակին, մեր կարծիքով՝ այն պարզապես հետապնդում է պարտավորությունների կատարման հետ կապված գործընթացների համար սահմանված միջազգային նորմերը չխախտելու նպատակ:

## ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում դիտարկվում են ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտի սպասարկման և պետական պարտքի կառավարման արդի հիմնախնդիրները: Առաջարկվում են պետական պարտքի արդյունավետ կառավարման, ինչպես նաև տնտեսական այլ հարաբերությունների կարգավորման հիմնավորված մեխանիզմներ և ուղիներ:

**АННОТАЦИЯ****БОСТАНДЖЯН В., ОВАКИМЯН Т., ГУКАСЯН Г.- ПРОБЛЕМЫ УПРАВЛЕНИЯ ГОСУДАРСТВЕННЫМ ДОЛГОМ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

В статье рассматриваются проблемы обслуживания дефицита и управления государственного долга. Предложены пути и механизмы повышения эффективности управления государственным долгом, обосновано их применение для регулирования различных хозяйственных отношений.

**SUMMARY****BOSTANJYAN V., HOVAKIMYAN T., GUKASYAN G.- THE PROBLEMS OF PUBLIC DEBT MANAGEMENT OF THE REPUBLIC OF ARMENIA**

In the article the problems of budget deficit service and public debt management are considered. The ways, mechanisms and instruments to improve the management of public debt are proposed along with their use for the management of various business relationships.

**ԱՐԵՎԻԿԱ ՍԱՐԳՍՅԱՆ**

*ԵՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի ասպիրանտ  
 էլ.փոստ՝ sargsianarevik@gmail.com*

**ՀՀ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՋԱՐԳԱՅՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Պատմականորեն առաջանալով փոխօգնության և վնասների փոխհատուցման գաղափարից՝ ապահովագրությունն իր զարգացման ընթացքում կրել է եական փոփոխություններ և վերաճել կարևորագույն ֆինանսական ոլորտի: Ջարգացած ապահովագրական համակարգի առկայությունը ժամանակակից շուկայական տնտեսության բնականոն գործունեության կարևոր պայմաններից է: Առողջ և կայուն ֆինանսական հիմք ունեցող ապահովագրական շուկան առավելություններ է տալիս տնտեսությանը մրցունակության բարձրացման, ներդրումային միջավայրի բարելավման, իրական հատվածի զարգացման կայուն տեմպերի ապահովման, ֆինանսական հատվածի համամասնական զարգացման, ինչպես նաև սոցիալական կարևորագույն խնդիրների լուծման առումով:

Հայաստանում ապահովագրական շուկայի ձևավորումը սկսվել է դեռևս կենտրոնացված կառավարման տարիներից, սակայն ապահովագրական գործունեության ծավալման սկզբնական ժամանակաշրջանը հանրապետությունում պետք է համարել անցյալ դարի 90-ական թվականները, երբ ուժի մեջ մտան ոլորտը կարգավորող առաջին իրավական ակտերը: 1991-1996 թթ. ընթացքում ՀՀ ապահովագրական շուկայում արդեն ձևավորվել էին 80-ից ավելի ընկերություններ, սակայն վերահսկողական մեխանիզմների բացակայության և ապահովագրական համակարգի դեռևս մասնակի պետական կարգավորման պայմաններում ապահովագրական շուկայում թե՛ ծավալային և թե՛ որակական առումով չգրանցվեցին ցանկալի արդյունքներ:

Շուկայական տնտեսությանը համահունչ՝ ապահովագրական շուկայի ձևավորման հիմք հանդիսացավ 1996 թ. ընդունված «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքը և դրանից հետևող «Ապահովագրական ընկերությունների գործունեությունը կարգավորելու մասին» կառավարության որոշումը: Ապահովագրական գործունեության օրենսդրական կարգավորման առանցքային մյուս զարգացումներից մեկը 1998 թ. ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի ընդունումն էր, որի 54-րդ՝ «Ապահովագրություն» գլուխն ամբողջությամբ վերաբերում էր տվյալ ոլորտի գործունեությանը:

ՀՀ ֆինանսական համակարգի կայունության ապահովման և ապահովագրության ոլորտի օրենսդրաիրավական դաշտի բարեփոխումների ուղղությամբ կարևոր քայլ էր ֆինանսական համակարգի կարգավորման և վերահսկողության միասնական մոդելին անցումը, որը զարգացած և զարգացող որոշ երկրներում, սկսած նախորդ դարի 90-ական թվականներից, արդյունավետ կիրառություն ունեն: Այս մոդելի ներդրման համար իրավական հիմք հանդիսացավ «Ֆինանսական կարգավորման և վերահսկողության միավորված համակարգի ներդրման մասին» ՀՀ օրենքը: Այդ օրենքի համաձայն՝ 2006 թ. հունվարի 1-ից ՀՀ ֆինանս-

ների և էկոնոմիկայի նախարարությունից ՀՀ Կենտրոնական բանկին փոխանցվեցին ֆինանսական համակարգի երկու կարևոր բաղադրիչների՝ արժեթղթերի և ապահովագրության ոլորտների վերահսկողության և կարգավորման գործառույթները: «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ նոր օրենքն ընդունվեց 2007 թ.: Նույն թվականին վերափոխվեցին ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 54-րդ գլխի գրեթե բոլոր հոդվածները: Կենտրոնական բանկի կողմից վերահաստատվեցին ՀՀ Կառավարության կողմից ապահովագրական գործընթացին առնչվող որոշումները, ընդունվեցին ոլորտը կարգավորող մի շարք ենթաօրենսդրական ակտեր:

Օրենսդրաիրավական դաշտի կանոնակարգման արդյունքում ապահովագրական ընկերությունների թիվը զգալի կրճատվեց, և 2005 թ. հունվարի 1-ի դրությամբ, ըստ պաշտոնական տվյալների, ՀՀ-ում գործում էին 26 լիցենզավորված ապահովագրական ընկերություններ: Հետագայում ևս արձանագրվեց դրանց նվազման միտում, ինչը, անշուշտ, պայմանավորված էր նաև ապահովագրական ընկերությունների համար սահմանված կանոնադրական կապիտալի նվազագույն չափով: 2004 թ. Կառավարության կողմից ընդունվեց որոշում ապահովագրական ընկերությունների կանոնադրական կապիտալի մասին, որի համաձայն սահմանվեց համապատասխան ժամանակացույցը (տե՛ս Աղյուսակ 1):

*Աղյուսակ 1*

**Ապահովագրական ընկերությունների կանոնադրական կապիտալի նվազագույն չափի համալրման ժամանակացույց**

Համալրման ժամանակը	Ապահովագրական ընկերությունների կանոնադրական կապիտալի նվազագույն չափը
2005 հունվարի 1-ից	100 մլն ՀՀ դրամ
2006 հունվարի 1-ից	200 մլն ՀՀ դրամ
2007 հունվարի 1-ից	350 մլն ՀՀ դրամ
2008 հունվարի 1-ից	500 մլն ՀՀ դրամ

*Աղբյուրը՝ ՀՀ կառավարության 30.09.2004թ. «Ապահովագրական ընկերությունների կանոնադրական կապիտալի նվազագույն չափը սահմանելու մասին» թիվ 1345-Ն որոշում:*

Կանոնադրական կապիտալի նվազագույն չափի նկատմամբ սահմանված պահանջները հանրապետության ապահովագրական շուկայի պետական կարգավորման քաղաքականության առումով դարձան շրջադարձային:


Իրականացված բարեփոխումների արդյունքում ապահովագրական շուկան, լինելով օրենսդրորեն կարգավորված, մնում էր դեռևս թույլ զարգացած: Դրա մասին են վկայում մակրոտնտեսական հիմնական ցուցանիշները, որոնք հնարավորություն են տալիս համեմատություններ կատարել տարբեր երկրների ապահովագրական շուկաների միջև: Մասնավորապես հատկանշական է երկրում ապահովագրության մակարդակը բնութագրող գործակիցը, որը որոշվում է ապահովագրական ընկերությունների հաշվեգրված ապահովագրավճարներ/ՀՆԱ հարաբերակցությամբ: ՀՀ Կենտրոնական բանկի տվյալներով՝ 2008 թ. սկզբի դրությամբ

յամբ այդ ցուցանիշը կազմել է 0.16%<sup>1</sup>: 2006-2007 թթ. տվյալներով՝ ապահովագրավճարներ/ՀՆԱ ցուցանիշով Հայաստանը մոտ երկու անգամ զիջում է անմիջական հարևաններ Վրաստանին և Ադրբեջանին: Արդյունաբերապես զարգացած երկրներում այս ցուցանիշի միջին մեծությունը 2006 թվականին կազմել է 3.65%, զարգացող երկրներում՝ 1.27%<sup>2</sup>:

Ստորև ներկայացված գծապատկերում բերված է ապահովագրության ներթափանցման գործակցի մակարդակը 2001-2006 թվականների համար մի քանի երկրների կտրվածքով: Գծապատկերից երևում է, որ ՀՀ ապահովագրական շուկան զարգացման մակարդակով էապես զիջում է ներկայացված երկրներին:

*Գծապատկեր 1*

**Ապահովագրության ներթափանցման գործակիցը ՀՀ-ում և տարածաշրջանի երկրներում 2001-2006 թթ.**



Աղբյուրը՝ USAID Financial Sector Development Project, Armenian Insurance Sector Overview, 2007.

Ապահովագրական շուկայի զարգացման ցածր աստիճանի մասին է վկայում նաև, այսպես կոչված, ապահովագրության խտության ցուցանիշը՝ բնակչության մեկ շնչի հաշվով ապահովագրավճարների մեծությունը, որը, ՀՀ կենտրոնական բանկի տվյալներով, 2008 թ. սկզբի դրությամբ Հայաստանում կազմել է 1537 դրամ: Համեմատության համար նշենք, որ 2006 թվականի տվյալներով՝ զարգացած արդյունաբերական երկրներում մեկ շնչին բաժին է ընկնում միջինը 485704 դրամ՝ ապահովագրավճար, զարգացող երկրներում՝ 10245 դրամ<sup>3</sup>:

<sup>1</sup> «Ֆինանսական կայունության հաշվետվություն 2007» / ՀՀ կենտրոնական բանկ, Երևան, 2008 թ., էջ 48:

<sup>2</sup> Աղբյուրը՝ Swiss Re Sigma No. 4/2007: World Insurance in 2006 / Swiss Reinsurance Company Economic Research and Consulting, 2007.

<sup>3</sup> Աղբյուրը՝ Swiss Re Sigma, No. 4/2007: World Insurance in 2006 / Swiss Reinsurance Company Economic Research and Consulting, 2007.

Ակնհայտ է, որ ՀՀ տնտեսության զարգացման ներկա փուլում ապահովագրական ծառայությունների նկատմամբ պահանջարկը սահմանափակող կարևորագույն գործոն է հանդիսանում բնակչության եկամուտների ցածր մակարդակը: Ապահովագրական գործունեության զարգացման հեռանկարները ցանկացած տնտեսությունում գերազանցապես կախված են հենց ապահովագրության նկատմամբ վճարունակ պահանջարկի ծավալներից և դրա աճի միտումներից: Վերջիններս էլ իրենց հերթին կանխորոշվում են նախևառաջ սպառողների համընդհանուր բարեկեցությամբ, ապա նաև ապահովագրական այս կամ այն ծառայության՝ վճարունակ սպառողի համար ունեցած օգտակարությամբ: Պետք է նշել նաև, որ բնակչության և տնտեսվարող սուբյեկտների շրջանում համեմատաբար բարձր եկամուտների առկայությունն ապահովագրության զարգացման համար թեև անհրաժեշտ, բայց անենևին էլ ոչ բավարար պայման է. բարձր եկամուտներն այս դեպքում պահանջարկատեղծ միակ գործոնը չեն: Մեր երկրում որպես ապահովագրության նկատմամբ պահանջարկը սահմանափակող կարևորագույն գործոններ են հանդես գալիս նաև հասարակության մեջ ապահովագրական մշակույթի ոչ բավարար ներդրման մակարդակն ու համակարգի նկատմամբ վստահության ցածր աստիճանը:

Ստեղծված իրավիճակում խիստ անհրաժեշտ է դառնում ապահովագրական շուկայի զարգացմանն ուղղված քաղաքականության իրականացումն ինչպես մի կրո, այնպես էլ մակրոմակարդակում: Մասնավորապես՝ ՀՀ-ում գործող ապահովագրական ընկերությունների զարգացման ցածր մակարդակի, դեռևս թույլ մրցակցության և համակարգում առկա զարգացման տեխնիկական ու մարդկային ռեսուրսների սակավության պայմաններում մեծ է պետության կարգավորիչ դերը ապահովագրական շուկայի զարգացումը խթանելու և դրանում հետագա կայունությունն ապահովելու գործում:


Ապահովագրական շուկայի զարգացմանը նպաստող պետական քաղաքականության կարևոր ուղղություններից է պարտադիր ապահովագրության համակարգի ներդրումն ու զարգացումը: Այն անցումային մի շարք երկրներում դիտվում է որպես ապահովագրական շուկայի զարգացման արդյունավետ մեխանիզմ, ընդ որում՝ ոչ թե ի հաշիվ համապարտադիր ծածկույթի շնորհիվ ապահովվող շուկայի քանակական ցուցանիշների աճի, այլ սպառողական բազայի ընդլայնման և պարտադիր ձևերին զուգահեռ՝ կամավոր ապահովագրության պոլիսների իրացման աճի հաշիվին: Պարտադիր ապահովագրության ներդրումը բխում է նաև հասարակական շահից, քանի որ այն կոչված է լուծել առավելապես սոցիալական խնդիրներ: Պարտադիր ապահովագրության հիմնական սոցիալական նշանակությունն այն է, որ այդ ձևով ապահովագրվածը պաշտպանվում է հնարավոր վնաս պատճառողի անվճարունակության ռիսկից՝ երաշխավորելով ապահովագրի՝ «անվճարունակության ճեղքով» պայմանավորված հնարավոր հետևանքները բացառելու և տուժողին համարժեք փոխհատուցում տրամադրելու հնարավորությունը:

Հարկ է նշել, որ չափազանց կարևոր է պարտադիր ապահովագրության «ճիշտ» ձևի ընտրությունը: Տրամաբանական է, որ եթե դրանով ենթադրվող հնարավոր ռիսկերն ուղղակիորեն առնչվում են հասարակության լայն շերտերին և բավականաչափ լավ արտահայտված են լինում կյանքում ապահովագրության պարտադիր բնույթ կրելու օգուտներն ավելի ակնհայտ են դառնում: Այս առումով

հեռանկարային կարող է համարվել ավտոտրանսպորտային միջոցների շահագործման հետևանքով երրորդ անձանց պատճառված վնասներից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության ներդրումը ՀՀ-ում: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պարտադիր ապահովագրության այս ձևը ամենատարածվածն է ողջ աշխարհում ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող և անցումային երկրների կտրվածքով<sup>1</sup>: Այլ խոսքով՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության (ԱՊՊԱ) մասին» ՀՀ օրենքի ընդունումը նոր խթան հանդիսացավ Հայաստանում ապահովագրական շուկայի զարգացման համար: Ինչպես ցանկացած նոր համակարգի ներդրում, ԱՊՊԱ համակարգի ներդրումը ևս անխուսափելիորեն ուղեկցվեց որոշակի ճշգրտումների անհրաժեշտությամբ: Այնուամենայնիվ, ՀՀ ապահովագրական շուկայում գործող բոլոր ընկերությունները փաստում են ԱՊՊԱ օրենքի ընդունման դրական հետևանքները, այն է՝ բնակչության իրազեկության մակարդակի բարձրացում, ապահովագրական ոլորտի նկատմամբ վստահության աճ, շուկայում պահանջարկի կտրուկ մեծացում: Հարկ է նշել նաև, որ օրենքի ընդունմանը զուգընթաց ապահովագրական ընկերությունները սկսեցին ակտիվ գործողություններ ծավալել նաև մարզերում (մի մասը նախատեսում է մասնաճյուղերի ստեղծում, իսկ մյուսները գործունեություն են ծավալում գործակալական ցանցի միջոցով), որը հանգեցրեց Երևանի՝ որպես թիրախային կենտրոնի դերի նվազման: Բացի ԱՊՊԱ-ի ներդրումից՝ 2011 թ. նկատվել է ակտիվություն գույքի, ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների, առողջության ապահովագրման դասերում: Գծապատկեր 2-ում ներկայացված են ՀՀ ապահովագրական շուկայի հիմնական բնութագրիչների դինամիկան 2007-2012 թթ.:

**Գծապատկեր 2**

**Ապահովագրավճարներ/ՀՆԱ և բնակչության մեկ շնչին ընկնող ապահովագրական վճարների ցուցանիշների դինամիկան 2007-2012 թթ.**



Աղբյուրը՝ «Ֆինանսական կայունության հաշվետվություն 2012», ՀՀ կենտրոնական բանկ, Երևան, 2013 թ., էջ 47:

<sup>1</sup> Աղբյուրը՝ Insurance Sector Development Trends in Armenia / Financial Sector Deepening Project, USAID, 2008.

Ապահովագրական ընկերությունների ակտիվությունը բնութագրող ապահովագրավճարներ/ՅՆԱ հարաբերակցության ցուցանիշը 2012 թ. դեկտեմբերին կազմել է 0.85%՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 0.26 տոկոսային կետով<sup>1</sup>: Ինչ վերաբերում է բնակչության մեկ շնչին ընկնող ապահովագրավճարներին, ապա այս ցուցանիշը տարեվերջին կազմել է 10800 դրամ՝ նախորդ տարվա 6800 դրամի փոխարեն<sup>2</sup>:

Եթե 2011թ. ցուցանիշների կտրուկ աճը պայմանավորված էր ԱՊՊԱ համակարգի ներդրմամբ, ապա 2012 թ. աճի նախապայման հիմնականում հանդիսացավ կառավարության կողմից սոցիալական փաթեթի շրջանակում առողջության ապահովագրության համակարգի ներդրումը: Համակարգը ստեղծված է ՀՀ պետական ծառայողների համար և ֆինանսավորվում է պետության կողմից: Սոցիալական փաթեթի շրջանակում առողջության ապահովագրությունը հնարավորություն է տալիս պետական կազմակերպությունների աշխատակիցներին ապահովագրավճարների դիմաց անհրաժեշտության դեպքում ստանալ բժշկական հատուցումներ ապահովագրական ընկերությունների կողմից ՀՀ և ԼՂՀ ցանկացած բուժհաստատությունում:

Այսպիսով՝ ՀՀ ապահովագրական շուկան ձևավորման այս փուլում կարելի է համարել դիմամիկ զարգացող: 2012 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ապահովագրական շուկայում գործում են 7 ապահովագրական ընկերություններ («Գարանտ-Լիմենս», «Ինգո Արմենիա», «Նաիրի ինշուրանս», «Ռասկո», «Ռեսսո», «Ռոսգոսստրախ Արմենիա», «Սիլ ինշուրանս»)<sup>3</sup>: Այս ընկերությունները՝ բացառությամբ կյանքի ապահովագրության, իրականացնում են տարբեր ծառայություններ, ընդ որում՝ ըստ լիցենզավորման դասերի՝ դրանք շատ չեն տարբերվում: Ապահովագրության պայմանագրերը հիմնականում կնքվում են այն դասերի գծով, որոնց վերաբերյալ միջազգային համաձայնագրերով բանկերի կողմից վարկերի տրամադրմամբ պայմանավորված, ինչպես նաև շինարարական և այլ աշխատանքների մրցույթների կազմակերպիչների պահանջով սահմանվում է ապահովագրվելու պարտադիր պահանջ: Որոշ պետությունների կողմից էլ իրենց երկրի շահերի պաշտպանության նպատակով սահմանվում է ապահովագրական պաշտպանվածության պարտադիր պայման, մասնավորապես ավիաընկերությունները պարտավոր են ապահովագրել իրենց պատասխանատվությունը երրորդ անձանց նկատմամբ, մատակարարներն առևտրային գործարք իրականացնելիս պարտավոր են ապահովագրել ապրանքների բեռնափոխադրումները, մի շարք երկրներ զբոսաշրջության մեկնելու համար պարտադիր է «Աջակցության ապահովագրության» պայմանագրի առկայությունը, բանկերի կողմից ավտովարկի տրամադրման հետ կապված՝ պահանջվում է ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրությունը:

Ապահովագրական շուկայի շարունակական զարգացումը ապահովելու նպատակով հարկավոր է իրականացնել ինչպես արդեն իսկ ներդրված ԱՊՊԱ

<sup>1</sup> 2011 թ. տվյալներով՝ զարգացած արդյունաբերական երկրներում ոչ կյանքի ապահովագրության գծով ապահովագրավճարներ/ՅՆԱ ցուցանիշը միջինում կազմել է 3.57%, զարգացող երկրներում՝ 1.30% (աղբյուրը՝ Swiss Re Sigma No 3/2012, May 2012):

<sup>2</sup> 2011 թ. տվյալներով զարգացած արդյունաբերությամբ երկրներում մեկ շնչին բաժին է ընկնում միջինում 595436 դրամ ապահովագրավճար, զարգացող երկրներում՝ 21719 դրամ (աղբյուրը՝ Swiss Re, sigma No 3/2012, May 2012):

<sup>3</sup> «Վիճակագրական տեղեկագիր 2012» / ՀՀ կենտրոնական բանկ, Երևան, 2013 թ., էջ 78:

համակարգի գործունեությանն անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծման և կատարելագործման, այնպես էլ ապահովագրության այլ տեսակների ներդրման աշխատանքներ: Ապահովագրական զարգացած շուկա ունեցող երկրներում կիրառվող պարտադիր ապահովագրության տեսակները ներառում են բժշկական, քաղաքացիական ընդհանուր պատասխանատվության, առանձին մասնագիտությունների գծով մասնագիտական պատասխանատվության և արտադրության մեջ դժբախտ պատահարների և առողջության պարտադիր ապահովագրություն: Ուստի անհրաժեշտ է գնահատել Հայաստանում պարտադիր ապահովագրության առանձին տեսակների ներդրման նպատակահարմարությունը, դրանց հիման վրա մշակել ընտրված տեսակների ներդրման արդիական ռազմավարություններ:

## ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածը նվիրված է ՀՀ ապահովագրական շուկայի ծնավորման և զարգացման առանձնահատկություններին՝ հաշվի առնելով դրա իրավական կարգավորման հիմքերը: Շուկայի ակտիվությունը բնութագրող ցուցանիշների միջոցով ներկայացվում են շուկայի արդի վիճակը և զարգացման միտումները:

## АННОТАЦИЯ

### САРГСЯН А. – НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ СТРАХОВОГО РЫНКА РА

Статья посвящена особенностям формирования и развития страхового рынка РА, с учётом юридических основ его регулирования. Посредством показателей, характеризующих активность рынка, представлено его актуальное состояние и тенденции развития.

## SUMMARY

### SARGSYAN A. - ON SOME PROBLEMS OF RA INSURANCE MARKET DEVELOPMENT

The article is dedicated to the formation and development peculiarities of RA insurance market taking into account the legal basis of its regulation. The present state of the market and development tendencies are presented through the indices that define the market activity.

**ԱՐԱՄԱՅԻՍ ԱՎԱԳՅԱՆ**

աշխարհագրական գիտությունների դոկտոր,  
ԵՊՀ սերվիսի ամբիոնի պրոֆեսոր  
Էլ. փոստ՝ aavagyan@ysu.am

**ԳՈՂԱՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ**

ԵՊՀ սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի դասախոս  
Էլ. փոստ՝ ghambaryan.gg@mail.ru

### **ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՅՈՒՂԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ ՈՐՊԵՏ ՄՐՅՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ**

Խորհրդային միության փլուզումից և անկախություն ձեռք բերելուց հետո Հայաստանի տնտեսությունը, ի թիվս նախկին ԽՍՀՄ-ի կազմի մեջ մտնող մյուս հանրապետությունների, հայտնվել է նոր մարտահրավերների առջև: Երկրում առաջնային կարևորություն է ստացել միջազգային տնտեսական ինտեգրման և գլոբալացման գործընթացների մեջ արդյունավետ ներառվելու հիմնախնդիրը:

Օգտվելով Համաշխարհային տնտեսական ֆորումի (ՅՏՖ)<sup>1</sup> (World Economic Forum-WEF) «Մրցունակության համաշխարհային զեկույց»-ից և Վերակառուցման և զարգացման համաշխարհային բանկի (ՎԶԲ)<sup>2</sup> (The International Bank for Reconstruction and Development) «Զբաղվում ենք բիզնեսով» (Doing business) աշխարհին և Հայաստանին նվիրված զեկույցներից<sup>3</sup> լուսաբանենք ՀՀ տնտեսական մրցունակության գնահատման վարկանիշային մի շարք ցուցանիշներ և որոշենք ՀՀ-ի տեղը համաշխարհային տնտեսության մեջ:

- ՀՀ ՀՆԱ-ը 2011 թ-ին կազմել է 10,1 մլրդ դոլար՝ համաշխարհային ամբողջ համախառն արտադրանքի 0.02%-ը, 2012 թ-ին՝ 9,9 մլրդ դոլարը,<sup>2</sup>
- ՀՀ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ը 2011 թ-ին կազմել է 3420 դոլար, 2012 թ-ին՝ 3338 դոլարը,<sup>3</sup>
- ՀՀ համաշխարհային մրցունակության ինդեքսը 2012-2013 թ-ին 144 երկրների շարքում կազմել է 4 միավոր՝ զբաղեցնելով 82-րդ հորիզոնականը, 2011-2012 թթ-ին 142 երկրների շարքում կազմել է 3,9 միավոր՝ զբաղեցնելով 92-րդ հորիզոնականը, 2010-2011 թթ-ին 139-րդ երկրների շարքում՝ 3,8 միավոր՝ 98 հորիզոնականը:
- Բիզնեսի իրականացման դյուրինության ինդեքսով Հայաստանը 185 երկրների շարքում 2013 թ-ին զբաղեցրել է 32-րդ հորիզոնականը, 2012-ին՝ 50-րդ հորիզոնականը:

Ինչպես ակնհայտ է դառնում վերոհիշյալ վերլուծություններից, Հայաստանը իր տնտեսական զարգացմամբ զբաղեցնում է միջին-ցածր հորիզոնականներ:

<sup>1</sup> World Economic Forum, The Global Competitiveness Report, 2012-2013, pp.108-109.; Doing Business 2013, Smarter Regulations for Small and Medium-Size Enterprises, Economy Profile, Armenia, p.8.

<sup>2</sup> The World Bank, <http://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.CD/countries>

<sup>3</sup> The World Bank, <http://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.CD/countries>

Ընդհանուր առմամբ երկրների, այդ թվում Հայաստանի, մրցունակության համաշխարհային ցուցանիշի փոփոխություններն ուղիղ համեմատական կապի մեջ չեն տնտեսական աճի ցուցանիշի հետ: Դրա պատճառները բազմաթիվ են, որոնցից ակնհայտներն են, որ յուրաքանչյուր տարի մրցակից երկրների թիվը փոփոխվում է, մրցակից երկրներն ունենում են տնտեսական աճի փոփոխության տարբեր արդյունքներ և դիտարկվող երկրի մրցունակության վարկանիշն արտահայտում է նրա տեղը աշխարհի բոլոր երկրների շարքում:

ՀՀ տնտեսական աճի դինամիկայի ուսումնասիրությունից երևում է, որ անցումային փուլի առաջին դժվարին տասնամյակից հետո՝ 2001-2008 թթ. ընկած ժամանակահատվածում, Հայաստանի տնտեսությունն անընդմեջ աճել է: Ըստ էության, այդ ժամանակահատվածում Հայաստանը ունեցել է տնտեսական զարգացման կայուն բարձր ցուցանիշներ՝ միջինը 12,6%: Սակայն 2008 թ-ից իրավիճակը փոխվել է: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցության արդյունքում Հայաստանում տնտեսական աճի տեմպերը նվազել են՝ կազմելով 6,9%: 2009 թ-ին արձանագրվել է երկրի նվազագույն տնտեսական աճը՝ -14,1%: Արդեն 2010 թ. տնտեսությունն սկսել է վերականգնվել՝ ապահովելով 2,2%, 2011թ-ին՝ 4,7%, 2012 թ-ին՝ 7,1% տնտեսական աճ:<sup>1</sup>

Մինչճգնաժամային փուլում տնտեսության աննախադեպ աճը բացատրվում էր արտերկրից մասնավոր դրամական փոխանցումների ծավալների և օտարերկրյա ուղղակի ներդրումների անընդհատ աճով: Միջազգային ֆինանսական ճգնաժամի հետևանքով, երբ կտրուկ կրճատվեցին արտաքին մասնավոր տրանսֆերտների ու օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալները, Հայաստանի տնտեսությունն անկում ապրեց: Փաստորեն Հայաստանի տնտեսությունը, անցումային երկրների շարքում արտաքին ազդակների և շուկերի նկատմամբ ամենազգայուններից մեկն է, ինչը մեծապես պայմանավորված է երկրի արտաքին ֆինանսավորումից կախվածության և տնտեսության ճյուղային կառուցվածքի առանձնահատկություններով<sup>2</sup>:

Այսօր, ըստ ՎՋԲԲ-ի տվյալների, ՀՀ տնտեսական աճին նպաստող գործոններից են աշխատուժի շուկայի կանոնակարգումը, հանցագործությունների և ահաբեկչության ցածր մակարդակը, սակագների մակարդակը և այլն, խոչընդոտող գործոնները են կոռուպցիան, կառավարական բյուրոկրատիան, տնտեսության ստվերայնությունը, մենաշնորհությունը, հարկային օրենքները, կրթված աշխատուժի ոչ բավարար քանակը, ենթակառուցվածքների ոչ պատշաճ վիճակը և այլն:

Վերոհիշյալ գործոնների բարելավման միջոցառումները, անկասկած, կարևոր են Հայաստանի տնտեսական մրցակցային միջավայրի բարելավման համար, սակայն այսօր ոչ պակաս առաջնային խնդիր է տնտեսության կառուցվածքային փոփոխությունը, ռազմավարական ուղղությունների գիտական հիմնավորված ընտրությունը, դրանց գործունեության համար բարենպաստ դաշտի ստեղծումը: Ռազմավարական գերակա ճյուղերը կլինեն այն հենասյուները, որ

<sup>1</sup> Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական տարեգրքեր 2006-2012, ԴԴ ԱՎԾ, The World Bank, <http://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.KD.ZG/countries>

<sup>2</sup> Այդ մասին. **Ջրբաշյան Նսիրուհի**, Նախա- և ետճգնաժամային սոցիալ-տնտեսական զարգացումները Հայաստանում/Sարեգիրք 2012 [Տնտեսագիտության ֆակուլտետ], Գլխ. խմբ.՝ տ.գ.դ. Յ. Լ. Սարգսյան: - Եր., ԵՊՀ հրատ., 2013, էջ 342-355:

րոնց վրա կկառուցվի Հայաստանի ազգային տնտեսությունը, ուր բազմապատկան արդյունքի հիման վրա կապահովվի երկրի տնտեսության ամբողջականություն և համալիրություն, դրանով իսկ կայուն և քիչ խոցելի տնտեսության ստեղծում: Օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի տարբեր հանգամանքներով պայմանավորված՝ Հայաստանը դեռևս չի ստեղծել նոր իրավիճակին համապատասխան տնտեսության կառուցվածքի հիմքերը, թեև կան Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության ծրագրեր<sup>1</sup>, ըստ որի՝ ՀՀ Կառավարությունը հայտարարել է գիտելիքահենք տնտեսություն կառուցելու իր երկարաժամկետ ռազմավարական նպատակի մասին:

Մինչխորհրդային Հայաստանը ինդուստրիալ երկիր էր: Արդյունաբերության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 1970-1990 թթ. կազմել է 56-68%: ԽՍՀՄ մյուս հանրապետություններից ներմուծվող հումքատեսակների բազայի վրա ստեղծվել էր ծանր արդյունաբերության շատ ճյուղեր՝ էլեկտրաէներգետիկ, լեռնահանքային արդյունաբերություն, գունավոր մետաղաձուլություն, քիմիական արդյունաբերություն, բազմաճյուղ մեքենաշինություն, շինանյութերի և փայտամշակման արդյունաբերություն: Այդ տարիներին բարձր զարգացման են հասել նաև թեթև ու սննդի արդյունաբերությունները:

Ազատ տնտեսական շուկայի ստեղծմամբ հետխորհրդային Հայաստանում տնտեսության ձևավորված կառուցվածքը կազմալուծվեց: Անցումային փուլում երկիրն ապաարդյունաբերականացվեց: Գերակայող դիրքում հայտնվեց գյուղատնտեսությունը, որի տեսակարար կշիռը գլխավորապես ավելանում էր ի հաշիվ արդյունաբերության: Գյուղատնտեսությունը իր առավելագույն տեսակարար կշիռն ունեցել է 1993 թ-ին՝ կազմելով 51,4%, որից հետո շարունակաբար նվազել է մինչ 2008 թ., ապա կրկին որոշակիորեն ավելացել՝ 2011թ-ը կազմելով 20,7%:

ՀՀ տնտեսության արագ վերականգնման փուլում ՀՆԱ-ի արագ աճը զուգակցվում է տնտեսության կառուցվածքում շինարարության և ծառայությունների ոլորտների մասնաբաժինների աճով՝ ի հաշիվ արդյունաբերության և գյուղատնտեսության մասնաբաժինների կրճատման, որոնց ընդհանուր մասնաբաժինը ՀՆԱ-ում 2008թ.-ին կազմել է 59%:

2009 թ. միջազգային ճգնաժամի հետևանքով կրկին դիտվում են կառուցվածքային փոփոխությունների միտումների տեղաշարժեր: Կրճատվում է շինարարության մասնաբաժինը, ավելանում են ծառայությունների ոլորտի, գյուղատնտեսության, և թեև դանդաղ տեմպերով, նաև արդյունաբերության մասնաբաժինները:

Ներկայումս տնտեսական կառուցվածքում առաջատար դիրքում է ծառայությունների ոլորտը՝ 39,9% (2011թ.), ապա գյուղատնտեսությունը՝ 20,7%, նոր միայն արդյունաբերությունը՝ 15,9%, շինարարությունը՝ 12,7%: Ակնհայտ է, և դա միանշանակորեն ընդունում են բոլորը, որ Հայաստանի առկա տնտեսության կա-

<sup>1</sup> Հավելված ՀՀ Կառավարության 2011 թ. դեկտեմբերի 15-ի նիստի N 49 արձանագրային որոշման, Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարություն:

ռուցվածքը ներկայացնում է «ոչ հաջողված»<sup>1</sup> սցենար: Տնտեսական կառուցվածքում ցածր արտադրողականությամբ ոլորտների գերակայության պատճառով երկիրը հայտնվել է մրցունակության ոչ նպաստավոր պայմաններում: Նկատի ունենալով Հայաստանի տեղը կենտրոն-ծայրամաս համակարգում, նրա գործառույթները աշխատանքի աշխարհագրական բաժանման մեջ՝ կարող ենք հիմնավորել, որ երկրի մրցունակությունն ապահովող ոլորտը արդյունաբերությունն է՝ (լեռնահանքային արդյունաբերությունը, որում մեծ շահագրգռվածություն ունեն գարգացած երկրները՝ ծայրամասն ու կիսածայրամասը դիտելով որպես հույսերի մատակարարներ, և վերամշակող արդյունաբերությունը, որոնք ավելի հարիր են երկրի պոտենցիալ հնարավորություններին):

Հայաստանի Հանրապետությունը այսօր շարունակում է հանդես գալ որպես բազմաճյուղ արդյունաբերական ներուժ ունեցող երկիր, բայց ոչ նախկին բովանդակությամբ, ճյուղային կառուցվածքով ու ներքին արտադրական, տեխնոլոգիական կապերով: Էապես փոխվել է ճյուղային կառուցվածքը և դրանց հարաբերակցությունը: Այժմ հանրապետության արդյունաբերական արտադրանքի կառուցվածքում առավել մեծ մասնաբաժին ունեն վերամշակող արդյունաբերությունը՝ 64,6%, հանքագործական արդյունաբերությունը՝ 17%:

ՀՀ տնտեսության կառուցվածքային բարեփոխումների գործընթացում հատկապես կարևորվում են վերամշակող արդյունաբերության ճյուղային կառուցվածքում ընթացող փոփոխությունները: Այսօր նրա կառուցվածքում առավել մեծ մասնաբաժին ունեն սննդամթերքի արտադրությունը, որին բաժին է ընկնում վերամշակող արդյունաբերության ՀՆԱ-ի 50.2%-ը (2011թ.), հիմնային մետաղների արտադրությունը՝ 24.9%, այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը՝ 7.3%: Սրանք միասին տալիս են վերամշակող արդյունաբերության արտադրանքի 82.4%-ը:

Առաջնային կարևորություն է ներկայացնում ՀՀ վերամշակող արդյունաբերության կառուցվածքում «գարգացման բևեռների» տարբերակումը, որոնց բացահայտման համար, հենվելով վիճակագրական տվյալների վրա, ընտրվել են 7 ցուցանիշներ, յուրաքանչյուրի համար կազմվել գնահատման հնգաստիճան սանդղակ՝ հիմք ունենալով ՀՀ վերամշակող արդյունաբերության վիճակագրական առանձնահատկությունները և մեր ուսումնասիրությունները, իսկ վերջում հաշվարկվել որակական գնահատականների հանրագումարի միջինացված ինդեքսներ՝ տես Աղյուսակներ 1, 2:

*Աղյուսակ 1*

**ՀՀ ՎԵՐԱՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԼԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ**

Ցուցանիշներ	Որակական գնահատում բալերով				
	1	2	3	4	5
1. Արտադրանքի արտադրության մասնաբաժինն ամբողջ արդյունաբերության մեջ (2011 թ., %)	10%-ից բարձր	5-10%	3-5%	1-3%	0-1%

<sup>1</sup> **Սարգսյան Ա.**, Հայաստանի Հանրապետության տնտեսության կառուցվածքային բարեփոխումների կոնցեպտուալ մոտեցումները / Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2008, 212 էջ (հետագայում «Սարգսյան Ա. Հայաստանի...»):

2. Արտադրաքի արտադրության մասնաբաժնի դինամիկան (2002-2011 թթ., միջին, %)	10%-ից բարձր	5-10%	3-5%	1-3%	0-1%
3. Արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսները նախորդ տարվա նկատմամբ, (2011 թ., %).	125%-ից բարձր	100-125%	75-100%	50-75%	50-0%
4. Արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսների դինամիկան (2002-2011թթ., միջինը, %)	125%-ից բարձր	100-125%	75-100%	50-75%	50-0%
5. Արտադրանքի ծավալները (ընթացիկ գներով, 2011թ., մլն. դրամ)	50 000-ից բարձր	25 000-50 000	10 000-25 000	5 000-10 000	0-5 000
6. Արտադրանքի ծավալների դինամիկան (2002-2011թթ., միջին, մլն. դրամ)	10 000-ից բարձր	5 000-10 000	1 000-5 000	0-1 000	0-ից ցածր
7. Արտադրանքի ծավալների դինամիկան (2009-2011թթ., միջին, մլն. դրամ)	5 000-ից բարձր	3 000-5 000	1 000-3 000	0-1 000	0-ից ցածր

Հաջորդիվ տրված է հանրագումարի միջինացված ինդեքսի համակարգված դասակարգված տարբերակը, ուր հստակորեն երևում են առաջատար արտադրությունները: (Տե՛ս Աղյուսակ 2)

*Աղյուսակ 2*

**ՎԵՐԱՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԼԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԻՆՏԵԳՐԱԼ ԻՆԴԵՔՍՆԵՐՆԵՐ՝ ԸՍՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ**

<b>Վերամշակող արդյունաբերության ճյուղային կառուցվածքը</b>	<b>Գումար</b>	<b>Խմբային</b>
Սննդամթերքի արտադրություն	9	1.3
Խմիչքների արտադրություն	9	1.3
Հիմնային մետաղների արտադրություն	9	1.3
Այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	12	1.7
Ռետինե և պլաստմասե արտադրատեսակների արտադրություն	19	2.7
Ծխախոտային արտադրատեսակների արտադրություն	20	2.9
Պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն	20	2.9
Էլեկտրական արտադրություն	22	3.1
Հագուստի արտադրություն	23	3.3
Պոլիգրաֆիական գործունեություն	23	3.3
Թղթի և թղթե արտադրատեսակների արտադրություն	24	3.4
Քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն	24	3.4
Ոսկերչական արտադրատեսակների արտադրություն	24	3.4
Կաշվի, կաշվե արտադրատեսակների և կոշիկեղենի արտադրություն	27	3.9
Բնափայտի մշակում և փայտե արտադրատեսակների արտադրություն	27	3.9
Դեղագործական արտադրանքի արտադրություն	27	3.9
Մանածագործական արտադրատեսակների արտադրություն	28	4.0

Համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական արտադրություն	28	4.0
Մեքենաների և արտադրություն չներառված ուրիշ խմբավորումներում	28	4.0
Կահույքի արտադրություն	28	4.0

Կարևոր հանգամանք է նաև ճգնաժամերի նկատմամբ արդյունաբերության ճյուղերի կայունության աստիճանի պարզումը: Դիտարկելով 2009 թ. ճգնաժամի ժամանակ ճյուղերի աճի անկման փոփոխությունները՝ բացահայտվել են առավել կայուն և առավել խոցելի ճյուղերը (Տե՛ս Աղյուսակներ 3,4):

*Աղյուսակ 3*

**2009 թ. ՃԳՆԱԺԱՄԻ ԺԱՄԱՆԱԿ ԱՌԱՎԵԼ ԿԱՅՈՒՆ ԱՅ ԳՐԱՆՑԱԾ ՎԵՐԱՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԵՐԸ**

Մետաղական հանքաքարի արդյունահանում	110
Ծխախոտային արտադրատեսակների արտադրություն	117.6
Ռետինե և պլաստմասե արտադրատեսակների արտադրություն	116.7
Հիմնային մետաղների արտադրություն	120.9

*Աղյուսակ 4*

**2009 թ. ՃԳՆԱԺԱՄԻ ԺԱՄԱՆԱԿ ԱՌԱՎԵԼ ՄԵԾ ԱՆԿՈՒՄ ԳՐԱՆՑԱԾ ՎԵՐԱՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԵՐԸ (%)**

Հանքագործական արդյունաբերության և բաց հանքերի շահագործման այլ ճյուղեր	85.7
Սանածագործական արտադրատեսակների արտադրություն	49.3
Հագուստի արտադրություն	89
Համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական արտադրություն	45.5
Էլեկտրական արտադրություն	73.9
Քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն	65.9
Ոսկերչական արտադրատեսակների արտադրություն	55.1
Այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	75.7


*Աղբյուրը՝ ՀՀ ԱԿԾ՝ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2009 թ. հունվար-դեկտեմբերին, Իրական հատված*

Ճգնաժամերի և արտաքին ազդակների հանդեպ ՀՀ արդյունաբերության առավել կայուն ճյուղերն են լեռնահանքային արդյունաբերությունը և գունավոր մետաղաձուլությունը:

«Ձարգացման բևեռների» տարբերակման գործում էապես կարևոր է նաև արտաքին առևտրի առանձնահատկությունների բացահայտումը (Տե՛ս Գծագիր 1):

Գծագիր 1

ՀՀ արտաքին առևտրի կառուցվածքը, 2011 թ. (%)



Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության վիճակագրական տարեգրքի 2012 թ. Արտաքին առևտուր

Ներկայումս Հայաստանը թույլ զարգացած ինդուստրիալ երկիր է, որի ապրանքաշրջանառությունում ներմուծումը զգալի տարբերությամբ գերազանցում է արտահանմանը: Հայաստանի արտահանումը խիստ ռեսուրսախնտեմսիվ է և մի քանի ոլորտներում կենտրոնացած: Արտահանման առաջատարներն են հանքահումքային մթերքի, ոչ թանկարժեք մետաղների և իրերի, թանկարժեք քարերի և մետաղների, պատրաստի սննդի արտադրանքի արտահանումը, որոնք կազմում են արդյունաբերական ողջ արտահանման 89,7%-ը 2011թ. դրությամբ: Այսօր տնտեսական քաղաքականության համար կարևոր խնդիր է արտահանման դիվերսիֆիկացիայի խթանումը:

Հայաստանում համախառն կապիտալի կուտակման և տնտեսության ճյուղային կառուցվածքի ձևավորման վրա էական ազդեցություն ունեն օտարերկրյա ուղղակի ներդրումները (ՕՈՒՆ): Թեպետ օտարերկրյա ներդրումների մեծ մասնաբաժինը կապիտալի կուտակման մեջ նպաստավոր է, սակայն այն կարող է մեծացնել տնտեսության կախվածությունը արտաքին աղբյուրներից՝ չնպաստելով կապիտալի կուտակման *սեփական աղբյուրների* զարգացմանը:

Ներդրումների տեսանկյունից սփյուռք ունեցող երկրները ունեն որոշակի առավելություններ, քանի որ սփյուռքը ներդրումների կարևորագույն աղբյուր է հայրենի երկրների համար: Համաձայն փորձագետների գնահատականների՝ Հայաստանում օտարերկրյա ներդրումների ընդհանուր ծավալի մեջ սփյուռքահայերի կողմից կատարված ներդրումները կազմում են շուրջ 50%:

«Վերջին տարիներին Հայաստանն ունեցել է ներդրումների միջին կատարողական և մեծ հաջողությամբ մրցակցել ենթակառուցվածքներում և ռեսուրսահետեմսիվ ոլորտներում օտարերկրյա ուղղակի ներդրումներ ներգրավելու հարցում: Չնայած դրան, որ Հայաստանը վերջին տասնամյակում մեկ շնչին բաժին ընկնող ՕՈՒՆ-ի չափը ավելի քան կրկնապատկվել է, Հայաստանը Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրների հետ համեմատած ունեցել է միջին կատարողական ցուցանիշներ»<sup>1</sup>:

Ներդրումների միջոցով պետք է լուծվեն նաև ՀՀ արդյունաբերության տեխնոլոգիական վերազինման հարցերը, քանի որ նախ առաջավոր տեխնոլոգիաները մրցակցային առավելությունների ձեռքբերման կարևոր նախապայման են, և ապա, ըստ Ա. Սարգսյանի<sup>2</sup>, «հիմնական ֆոնդերի մաշվածքը բնութագրող ցուցանիշները «անցել են ռուբիկոնը» և այն էլ մի քանի անգամ»: Ըստ նրա՝ «Հայաստանի տեխնոլոգիական անկումը չպետք է վերագրել միայն հետխորհրդային ճգնաժամին: Իրականում տեխնոլոգիական անկումը սկսվել էր շատ ավելի շուտ՝ դեռ խորհրդային տարիներին»: Նման նյութատեխնիկական հիմք ունեցող արտադրություններում և ձեռնարկություններում պահաջվում են արմատական և զանգվածային ներդրումներ:

Ոչ պակաս կարևոր խնդիր է ներդրումների ոլորտների հիմնավորված ընտրությունը: Բոլորին է հայտնի հատկապես անցումային տնտեսությամբ ազգային տնտեսություններում օտարերկրյա կապիտալի և ընկերությունների թափանցման և՛ դրական, և՛ բացասական ապակառուցողական ազդեցությունները: Այդ իսկ պատճառով հարկավոր է հնարավորինս առավելագույնի հասցնել դրական և նվազագույնի՝ բացասական արդյունքները: Ըստ Շվեցովի<sup>3</sup> շրջակա սոցիալ-տնտեսական միջավայրի վրա առավել դրական ազդեցություն ունենում են այն ոլորտները (ձեռնարկությունները, ճյուղերը), որոնք՝ բացի հարկերի տեսքով ֆինանսական վճարումներից ու լրացուցիչ աշխատատեղերի ստեղծումից, օգտագործում են սպասարկող և մատակարարող տեղական ձեռնարկությունների և ֆիրմաների արտադրանքն ու ծառայությունները: Այսինքն՝ ներգրավվում են տվյալ սոցիալ-տնտեսական միջավայրի մեջ և բազմապատկման կապերով նպաստում տարածքի և տնտեսության զարգացմանը: Ըստ նրա՝ այդ «զարգացման բևեռների» դրական ազդեցությունն էլ ավելի նշանակալի է, եթե դրանք ունեն արտահանման ուղղություն: Դրանք իրենց զարգացմամբ անուղղակիորեն նպաստում են նաև տեղական՝ բազմապատկման կապերով նրա հետ կապված, ձեռնարկությունների զարգացմանը և արտահանման մեծացմանը:

<sup>1</sup> Քաղվածք ՀՀ Կառավարության միստի արձանագրությունից, 14 հունվար, 2010 թվական, N1, ՀՀ արդյունաբերության զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին, էջ 10:

<sup>2</sup> Սարգսյան Ա., Հայաստանի..., էջ 66:

<sup>3</sup> Швецов И.Ф., Формирование территориальных "точек роста" как фактор развития региона. Диссерт. на соискание учёной степени канд. экон. наук. Специальность 08.00.05. Москва, 2005, сс. 44-45.

Մասնագետների կարծիքով բազմապատկման արդյունքով և զարգացման առավելագույն տարածման ներուժով օժտված են տնտեսության «առաջընթաց» ճյուղերը, ինչպիսին մեր երկրի համար կարող է հանդիսանալ մեքենաշինությունը, մասնավորապես ավտոմոբիլաշինությունը և էլեկտրոտեխնիկական սարքաշինությունը, որոնք կօգտագործեն նաև տեղական կիսաֆաբրիկատներ և հանդես կգան որպես հզոր «զարգացման բևեռներ»:

Առավել «հեշտ ներգրավող», սակայն զարգացման տարածման նվազագույն ներուժով, հետևաբար քիչ հեռանկարային, «զարգացման բևեռներ» են հանդիսանում օտարերկրյա արտադրատեսակների փաթեթավորման, լցավորման, արտաքին ձևավորման ձեռնարկությունները: Սրանց զարգացման տարածման ուղղակի արդյունքը աննշան է, հիմնական խթանիչներ են հանդիսանում միայն զբաղվածության մեծացումը, բյուջետ հարկերը և հնարավոր է նաև, ենթակառուցվածքի զարգացման ներդրումները:

Ազգային տնտեսություններ օտարերկրյա կապիտալի և ընկերությունների քափանցման բացասական ազդեցություն և վտանգ ներկայացնող «զարգացման բևեռներ» են երկրի ռեսուրսները «արտահանող» ձեռնարկությունները, որոնք չեն ներգրավվում ազգային տնտեսության մեջ, այլ արտահանում են հումքային ռեսուրսները կամ էկոլոգիապես խիստ վտանգավոր առաջնային վերամշակված կամ հարստացված հումքը, ինչպես դա տեղի է ունենում երրորդ աշխարհի երկրների հետ:

Այսպիսով՝ Կառավարության առջև խնդիր է դրված հիմնավորված մոտենալ ներդրումներին և օրենսդրական, իրավական, հարկային, մաքսային, վերահսկողության և այլ քաղաքականության դաշտերով կարգավորել այդ դժվարին խնդիրը:

Հայաստանում 2008-2011 թթ. ուղղակի ներդրումների տվյալների վերլուծությունից բացահայտվում է, որ արդյունաբերության ոլորտում ներդրումների տեսակարար կշիռը շատ ցածր է, որը, սակայն, 2011 թ-ին զգալի ավելացել է՝ կազմելով 31.1%, որից 19.3%-ը ներդրվել է հիմնային մետաղների արտադրության, 5.4%-ը լեռնահանքային արդյունաբերության, 5.5%-ը սննդի արդյունաբերության, հատկապես խմիչքների արտադրության մեջ՝ 4.1%: Արդյունաբերության մյուս ենթաճյուղերում ներդրումները կազմել են ընդամենը 0.9%: Իսկ եթե նկատի ունենանք նաև, որ արտահանման տեսակարար կշռում ևս մեծ մասնաբաժին ունեն հանքահումքային ռեսուրսներն ու գունավոր մետաղները, և որ վերջիններիս բազմապատկման արդյունքը ավարտվում է հումքի շահագործմամբ ու արտահանմամբ, ու դրանց հիմքի վրա չեն ստեղծվում արտադրության տնտեսապես առավել շահավետ վերին հարկերը, ապա պետությունը լուրջ մտահոգության խնդիր ունի այս ճյուղերի բացասական ազդեցության «զարգացման բևեռների» վերածվելու հարցում:

Ներդրման շահավետությունից ելնելով՝ ՄԱԿ-ի արդյունաբերության զարգացման կազմակերպության մասնագետները վերամշակող արդյունաբերության ճյուղերը բաժանում են երեք խմբի.

**I խումբ-առավել արտոնյալ:** Այս խումբը ընդգրկում է բարձր տեխնոլոգիաներ և բարձրորակ աշխատուժ պահանջող հավաքման ճյուղերը, ինչպիսիք են մեքենաշինական ու էլեկտրոնիկական ճյուղերը:

**II խումբ-չափավոր արտոնյալ:** Ընդգրկում է թեթև արդյունաբերության ճյուղերը, որտեղ օգտագործվում է շատ աշխատուժ, իսկ ներդրումներն արագ փոխհատուցվում են:

**III խումբ-նվազ արտոնյալ:** Ընդգրկում է տեղական հումքի արդյունահանման և վերամշակման ճյուղերը, որտեղ օգտագործվում է տեղական աշխատուժը և նվազեցվում գործազրկությունը:

Այսպիսով՝ հենվելով վիճակագրական բազմաբնույթ տվյալների, գիտական ուսումնասիրությունների վրա, ուսումնասիրելով տնտեսության աճի, ճյուղային կառուցվածքի, ՀՆԱ-ի, արտադրանքի ծավալի, ֆիզիկական ինդեքսների, արտահանման ծավալների, ներդրումների կառուցվածքի, ծավալների տեսակարար կշիռների և բազմաթիվ այլ ցուցանիշների դինամիկան և մասնաբաժինները բալային գնահատման ինտեգրալ ինդեքսների հաշվառման մեթոդի կիրառմամբ (տե՛ս Աղյուսակ 2), Հայաստանի համար առանձնացրել ենք «զարգացման բևեռների» հետևյալ խմբերը.

1. **Ձևավորված ավանդական բևեռներ**
  - գունավոր մետալուրգիա՝ հիմնային մետաղների արտադրություն
  - շինանյութերի արդյունաբերություն՝ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն
  - սննդի արդյունաբերություն՝ հատկապես խմիչքների արտադրություն
2. **Ռազմավարական ձևավորվող և արագընթաց տեմպեր ունեցող բևեռներ**
  - մեքենաշինություն՝ պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն
  - քիմիական արդյունաբերություն՝ ռետինե և պլաստմասսե արտադրատեսակների արտադրություն
  - սննդի արդյունաբերություն՝ ծխախոտային արտադրատեսակների արտադրություն
  - զբոսաշրջություն
3. **Նոր ձևավորվող և արագընթաց տեմպեր ունեցող բևեռներ**
  - թեթև արդյունաբերություն՝ մանածագործական արտադրատեսակների արտադրություն, հագուստի արտադրություն, կաշվի, կաշվե արտադրատեսակների և կոշիկեղենի արտադրություն
  - քիմիական արդյունաբերություն՝ դեղագործական արտադրանքի արտադրություն, քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն
  - մեքենաշինություն՝ էլեկտրական արտադրություն, համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական արտադրություն
  - ոսկերչական արտադրատեսակների արտադրություն և ակնագործություն
4. **Անհեռանկարային բևեռներ: Տեղական նշանակության բևեռներ**
  - պոլիգրաֆիական գործունեություն
  - թղթի և թղթե արտադրատեսակների արտադրություն
  - բնափայտի մշակում և փայտե արտադրատեսակների արտադրություն
  - կահույքի արտադրություն

### 5. Հեռանկարային, սեփական սոցիալ-տնտեսական ներուժ ունեցող բևեռներ

- ճշգրիտ մեքենաշինության և էլեկտրոնային արտադրություններ
- ավտոմոբիլաշինություն
- կրթություն
- գիտություն
- առողջապահություն
- առևտուր
- հեռահաղորդակցություն

### ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում հիմնավորվում է ՀՀ տնտեսական աճի և մրցունակ տնտեսության ստեղծման գործընթացում ՀՀ տնտեսության կառուցվածքային բարեփոխումների կարևորությունը: Վիճակագրական բազմաթիվ ցուցանիշների ուսումնասիրության հիման վրա պարզաբանվում են ՀՀ տնտեսության կառուցվածքային առանձնահատկությունները, տարբերակվում «զարգացման բևեռներն» ըստ իրենց նշանակության և զարգացման հեռանկարների:

### АННОТАЦИЯ

#### АВАГЯН А., ГАМБАРЯН Г. – СОВЕРШЕНСТВОВАНИЕ ОТРАСЛЕВОЙ СТРУКТУРЫ ЭКОНОМИКИ РА КАК ПРЕДПОСЫЛКА ПОВЫШЕНИЯ КОНКУРЕНТОСПОСОБНОСТИ

В статье обосновывается важность совершенствования отраслевой структуры экономики РА для экономического роста и создания конкурентоспособной экономики. На основе анализа многочисленных статистических данных определены структурные особенности экономики РА, выделены "полюса развития" по их значимости и перспективам развития.

### SUMMARY

#### AVAGIAN A., GHAMBARYAN G. – THE IMPROVEMENT OF RA ECONOMY INDUSTRIAL STRUCTURE AS THE PRECONDITION OF COMPETITIVENESS RISING

The article argues the importance of improving the industrial structure of RA economy in the process of economic growth and creation of competitive economy. Based on the analysis of numerous statistical data the structural features of the economy of Armenia are defined and "poles of development" are marked according to their importance and prospects.

*ԼԻԱՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ*

*ԵՊՀ Ֆինանսահաշվային ամբիոնի հայցորդ  
Էլ. փոստ՝ karlian1@mail.ru*

## **ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԴԵՐՈՂ ՀՀ ԱՐՏԱՅԱՆՄԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

Տնտեսական կյանքի միջազգայնացումը ազգային տնտեսությունների կանգնեցնում է նորանոր մարտահրավերների առաջ՝ ստիպելով հետևողականորեն վերահսկել և կարգավորել ներդրումային ռեսուրսների ներգրավման և օգտագործման մեխանիզմները: Գլոբալիզացիայի պայմաններում շահեկան դիրքերում են հայտնվում այն երկրները, որոնք ակտիվորեն մասնակցում են ռեսուրսային փոխանակության գործընթացներին՝ տնտեսությամբ ապահովելով բավարար պոտենցիալով:

Սակայն հարց է առաջանում, թե Հայաստանում ձևավորված տնտեսական զարգացման մոդելը ինչքանով է համապատասխանում համաշխարհային տնտեսության զարգացման չափանիշներին: Այսօր հանրապետության տնտեսական և վերջինիցս ածանցվող ներդրումային քաղաքականությունը պայմանավորված է բազում ներքին և արտաքին գործոններով: Իրականացվող ներդրումային քաղաքականության արդյունավետության ապահովման անհրաժեշտ նախադրյալներից մեկն էլ, ի թիվս այլ գործոնների, համապատասխանությունն է երկրի ռազմավարական նպատակներին: Եթե նախկին տնտեսական կապերի համատարած խզման, պատերազմի, տևական երկկողմանի շրջափակման գործոնները համարենք որպես օբյեկտիվ գոյություն ունեցող, ապա կարող ենք եզրակացնել, որ տնտեսական վերակառուցման հիմնախնդիրը շարունակում է զգայուն մնալ այնպիսի տնտեսական գործոնների նկատմամբ, ինչպիսիք են ներդրումների և արտահանման կառուցվածքային առանձնահատկությունները՝ ըստ տնտեսության հիմնական ոլորտների: Տրված գնահատականների շրջանակներում պետք է կարողանալ հստակ կերպով տարբերակել առաջնայինը երկրորդայինից և այդ համատեքստում նոր փորձել որոշակիացնել կառավարման եղանակներն ու գործիքակազմը: Ընդ որում՝ տնտեսական համակարգում որդեգրած ռազմավարության նպատակադրումները դիտարկելով որպես տրված մեծություն՝ պետք է փորձել սահմանել տնտեսական համակարգի «խաղի կանոնները»՝ որպես փոփոխական՝ կախված արտաքին և ներքին մի շարք անվերահսկելի գործոններից:

Հանրապետությունում արդեն իսկ սահմանված են ներդրումային քաղաքականության հիմնական սկզբունքներն ու առաջնահերթությունները<sup>1</sup>, որոնք, սակայն, ընդհանրական բնույթ են կրում, և ըստ էության համապատասխանում են շուկայավարման հիմնական օրենքներին: Կարծում ենք՝ ներդրումային քաղաքականության պրակտիկ իրագործման հիմնական արդյունքները հանգում են ներդ-

<sup>1</sup> ՀՀ ներդրումային քաղաքականության հայեցակարգ հաստատված ՀՀ Կառավարության 2005 թ. ապրիլի 21-ի թիվ 15 նիստի արձանագրային որոշմամբ, [http://www.mfa.am/u\\_files/file/businessarm/35\\_am.pdf](http://www.mfa.am/u_files/file/businessarm/35_am.pdf)

րունային ռեսուրսների ներգրավման և առավելագույն արդյունավետությամբ օգտագործման հիմնախնդիրն: Սույն հետազոտության շրջանակներում հանրապետության տնտեսական իրականությունում ներդրումային ռեսուրսների օգտագործման արդյունավետության աստիճանը ուղղակիորեն պայմանավորում ենք արտահանման պոտենցիալ ապահովող տնտեսության ոլորտներում վերջիններիս բաշխվածությամբ:

Աշխարհագրական դիրքավորումը, առևտրային և տրանսպորտային խոչընդոտները, գերփոքր շուկան սահմանափակում են ՀՀ տնտեսության՝ «ներդրումների կլանման հնարավորությունները»: Սույն վերլուծության շրջանակներում վերջինս տրված ենք համարում՝ կախված ՀՀ արտահանման առկա կառուցվածքից: Ստացվում է՝ հանրապետությունում «ներդրումների կլանման հնարավորությունները» որպես փոփոխական ուղղակիորեն կախված են ՀՀ արտահանման կառուցվածքից: Որպես արտահանման ուղղվածություն ունեցող գերփոքր տնտեսություն՝ արտահանման կառուցվածքն է կանխորոշելու ներդրումների կառուցվածքը: Առկա հիմնախնդիրները առավելապես պայմանավորված են ՀՀ տնտեսության՝ արտաքին անվերահսկելի գործոններից բարձր կախվածությամբ: Մասնավորապես հանրապետության տնտեսության վրա արտաքին գործոնների ազդեցության բարձր աստիճանը ուղղակիորեն կախված է առևտրային հաշվեկշռի կառուցվածքային առանձնահատկություններից:

ՀՀ տնտեսական ներուժի գնահատման, կապիտալի ներգրավման նոր հնարավորությունների բացահայտման նպատակով տեղին կլինի հանգամանալիորեն վերլուծել երկրի առևտրային հաշվեկշիռը, որոշակիացնել զարգացման հիմնական միտումներն ու ընդգծել կառուցվածքային հիմնական անհամասնույթությունները: Հանրապետության առևտրային հաշվեկշռի կառուցվածքը մեծամասամբ պայմանավորված լինելով տնտեսության կառուցվածքով՝ պայմանավորում է տնտեսության զարգացման գերակա միտումներն ու կապիտալի կլանման հնարավորությունները տեսանելի ապագայում ունենալով սահմանափակ ներքին շուկա՝ ՀՀ տնտեսությունը չի կարող երկարատև զարգացում ապրել՝ ներդրումները նպատակաուղղելով դեպի տնտեսության այն ոլորտներ, որոնք բավարարում են մեծամասամբ ներքին պահանջարկը: Փոխարենը արտաքին պահանջարկը Հայաստանի համար գրեթե անսահմանափակ է և կարող է տնտեսության հետագա զարգացման շարժիչ ուժը դառնալ:

Սակայն արտահանման կառուցվածքը դեռևս հեռու է կապիտալի ներգրավման գործոն հանդիսանալուց: Մասնավորապես 2012 թ. ներմուծման նկատմամբ արտահանման առաջանցիկ աճի և ՀՆԱ-ի ծավալային աճի պայմաններում զուտ արտահանման տեսակարար կշռի աճ է գրանցվել: Եվ չնայած այն հանգամանքին, որ արտահանման աճի տեմպը ավելի քան երկու անգամ գերազանցում է ներմուծման աճի տեմպը, այնուամենայնիվ, առևտրային հաշվեկշռի պակասորդը ՀՆԱ հարաբերակցությունը 28,7% է կազմում<sup>1</sup>:

Առհասարակ տնտեսության արտահանման հակվածությունը՝ արտահանում/ՀՆԱ հարաբերակցությունը ուղղակիորեն ազդում է տնտեսության՝ կապիտալ ներգրավելու հնարավորության վրա: ՀՀ-ում 2012 թ. տվյալ ցուցանիշը կազ-

<sup>1</sup> Տես ՀՀ սոցիալ- տնտեսական վիճակը 2012թ. հունվար-դեկտեմբերին, արտաքին առևտուր, [http://www.armstat.am/file/article/sv\\_12\\_12a\\_411.pdf](http://www.armstat.am/file/article/sv_12_12a_411.pdf)

մեկ է 14,4%, իսկ 2000-2011 թթ. տվյալ ցուցանիշի միջինը տատանվել է 14%-ի շրջակայքում, որը համաշխարհային մակարդակով համարվում է բավականին լավ ցուցանիշ, սակայն, եթե հաշվի առնենք, որ արտահանումը կառուցվածքային ինչպիսի բնութագիր ունի, պատկերը կտրուկ կփոխվի:

Արտահանման ռիսկերից հիմնականը այն է, որ այն խիստ կենտրոնացված է ինչպես ապրանքային, այնպես էլ տարածքային առումով: Մասնավորապես, հանրապետությունում արտահանումը շարունակում է մնալ խիստ ռեսուրսատար և մի քանի ոլորտներում կենտրոնացված: 2000-2012 թթ. ՀՀ-ում արտահանումը կենտրոնացված է հետևյալ 4 ապրանքախմբերի գծով՝ թանկարժեք քարեր և մետաղներ, ոչ թանկարժեք մետաղներ, պատրաստի սնունդ, հանքահումքային ապրանքներ, որոնց 2012 թ. տվյալներով բաժին էր ընկնում արտահանման մոտավորապես 82,2%-ը<sup>1</sup>:

**Աղյուսակ 1**

**Արտահանման կառուցվածքը ըստ հիմնական արտահանվող ապրանքախմբերի (տեսակարար կշիռը, %)**

	2005թ.	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.
Թանկ. քարեր և մետաղներ	34.5	30.1	18.1	16.4	14.8	12.9	14.7	12.1
Ոչ թանկ. քարեր և մետաղ.	33.1	28.5	33.9	32.8	32.5	32.9	27.3	24.0
Պատրաստի սնունդ	9.9	9.6	12.5	15.9	14.0	12.6	13.8	18.0
Հանքահումք. արտադրանք	9.6	13.9	15.1	16.3	20.5	29.5	30.3	28.1

Աղբյուրը՝ [www.armstat.am](http://www.armstat.am) – հրապարակումներ 2005-2012 թթ., ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2012 թթ. հունվար-դեկտեմբերին, [http://www.armstat.am/file/article/sv\\_12\\_12a\\_411.pdf](http://www.armstat.am/file/article/sv_12_12a_411.pdf)

Ընդ որում՝ արտահանման կենտրոնացվածությունից զատ փաստենք, որ արտահանման մեջ գերակշռում է միջանկյալ արտադրանքը, որի՝ արտադրությունում ստեղծվող ավելացված արժեքի կշիռը խիստ սահմանափակ է և գտնվում է միջազգային գների նշանակալի տատանումների ուղղակի ազդեցության ներքո, ինչն էլ ավելի է մեծացնում երկրի արտահանման խոցելիության աստիճանը: Կարծում ենք՝ վերոնշյալ ոլորտները ՀՀ տնտեսության այն ոլորտներն են, որոնք ներդրումների կլանման պոտենցիալ հնարավորություններ կարող են ստեղծել: Մասնավորապես ներդրումները հանքահումքային արդյունաբերության և կիսաթանկարժեք և թանկարժեք քարերի ու մետաղների արտադրության ոլորտներում հանրապետությանը հնարավորություն կտա տեղում կազմակերպելու արտադրություն, ինչի արդյունքում էլ շեշտակիորեն կնվազի երկրի տնտեսության խոցելիության աստիճանը համաշխարհային հունքի շուկայում գնային տատանումներից:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ԱՎԾ, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2005-2012 թթ., հրապարակումներ:

Հարկ է ընդգծել նաև, որ արտահանման արձանագրված աճը հետճգնաժամային ժամանակահատվածում տնտեսական ակտիվության բարձրացման արդյունք չէ և հիմնականում պայմանավորված է եղել միջազգային շուկաներում հուճքային ապրանքների գների աճով. համաշխարհային հուճքի շուկայում արձանագրված զարգացումները ի շահ հանրապետության տնտեսության է եղել: Մասնավորապես հետճգնաժամային՝ 2009-2010 թթ. արդյունաբերական մետաղների մասով կտրուկ աճ է արձանագրվել. 2010 թ. պղնձի միջին գինը աճել է մոտ 40%-ով, իսկ մոլիբդենի գինը՝ 46%-ով, գների աճը թուլացել է 2011 թ. և 2012 թ. ընթացքում՝ միջինը 17% և 10%: Շարունակաբար աճել են նաև թանկարժեք մետաղների գները. 2010 թ. ոսկու գինը աճել է 26%-ով<sup>1</sup>, աճը շարունակվել է նաև 2011 թ. և 2012 թ. ընթացքում՝ 28% և 6,5%<sup>2</sup>:

Արտահանման կառուցվածքային վերոնշյալ պատկերը իհարկե ավելի խնդրահարույց է դարձնում երկրում արտահանման ընդլայնման հնարավորությունները՝ խոչընդոտներ ստեղծելով նաև նոր կապիտալի կլանման համար:

Անդրադառնալով արտահանման կառուցվածքին տեխնոլոգիատարության տեսանկյունից՝ նախ ընդգծենք, որ տնտեսական աճի բարձր տեմպեր այսօր կարողանում են ապահովել այն տնտեսությունները, որոնց արտահանման կառուցվածքը աչքի է ընկնում «բարձր տեխնոլոգիատարությամբ»: Ուստի արտահանման ու տնտեսական աճի կապը բացահայտելու համար անհրաժեշտ է ՀՀ արտահանման կառուցվածքը դիտարկել նաև տեխնոլոգիատարության տեսանկյունից<sup>3</sup>:

Ինչպես վկայում են ՀՀ ԱԿԾ վիճակագրական տվյալները, ՀՀ արտահանման մեջ ցածր, միջին և բարձր տեխնոլոգիատարության ապրանքների տեսակարար կշիռը 2012 թ. 2005 թ-ի համեմատ, նվազել է, փոխարենն աճել է ռեսուրսատար ապրանքների տեսակարար կշիռը, և դա այն պարագայում, երբ ՏՏ ոլորտը ՀՀ Կառավարության կողմից հայտարարվել է որպես երկրի տնտեսական զերակայություններից մեկը:

<sup>1</sup> [https://www.cba.am/Storage/AM/downloads/parberakan/fin\\_stab/fin\\_stab\\_10.pdf](https://www.cba.am/Storage/AM/downloads/parberakan/fin_stab/fin_stab_10.pdf)

<sup>2</sup> [https://www.cba.am/Storage/AM/downloads/parberakan/fin\\_stab/fin\\_stab\\_12.pdf](https://www.cba.am/Storage/AM/downloads/parberakan/fin_stab/fin_stab_12.pdf)

<sup>3</sup> Ըստ տեխնոլոգիատարության առանձնացմուն ենք 3 ապրանքախումբ՝ ռեսուրսատար (հանքահումքային արտադրանք, գյուղատնտեսական արտադրանք, կենդանական և բուսական արտադրանք՝ բացառությամբ պատրաստի սննդի արտադրանքը), ցածր տեխնոլոգիատար (վերամշակող արդյունաբերություն՝ ներառյալ թանկարժեք և ոչ թանկարժեք քարերից ու մետաղներից իրեր, փայտյա և թղթե արտադրանք, սնունդ, խմիչք, ծխախոտ, տեքստիլ արդյունաբերություն, կաշվե իրեր կոշկեղեն) և միջին ու բարձր տեխնոլոգիատար ապրանքներ (քիմիական արդյունաբերություն՝ ներառյալ դեղագործություն, պլաստմասե իրեր, ռետին, կաուչուկ, մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ, սարքեր և ապարատներ, վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտ):

**Աղյուսակ 2**

**Արտահանման կառուցվածքը ըստ տեխնոլոգիատարության (տես. կշիռը, %)**

	2005թ.	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.
Ռեսուրսատար ապրանք.	11.4	16.6	17.2	19.3	24.0	33.3	34.3	32.9
Ցածր տեխնոլոգիատար ապրանքներ	82.8	74.1	70.5	71.0	67.2	60.1	58.4	58.6
Միջին և բարձր տեխնոլոգ. ապրանքներ	5.8	9.3	12.3	9.7	8.8	6.6	7.3	8.5

Աղբյուրը՝ [www.armstat.am](http://www.armstat.am) – հրապարակումներ 2005-2012 թթ., 77 սոցիալ-տնտեսական վիճակը 2012թթ. հունվար-դեկտեմբերին, [http://www.armstat.am/file/article/sv\\_12\\_12a\\_411.pdf](http://www.armstat.am/file/article/sv_12_12a_411.pdf)

Ընդ որում՝ արտահանման աճ գրանցվել է բոլոր ապրանքախմբերում, սակայն այս ենթախմբի հիմնական մասը բաժին է ընկնում ռեսուրսատար ապրանքներին: Այսպիսով՝ չնայած արձանագրված զարգացումներին՝ ՀՀ արտահանումը նշված ժամանակահատվածում տնտեսական աճին նպաստելու տեսանկյունից այնքան էլ արդյունավետորեն չի զարգացել՝ օգտագործելով տնտեսության առանց այն էլ սահմանափակ ռեսուրսային պոտենցիալը:

Ներդրումների կլանման տեսանկյունից պակաս կարևոր հանգամանք չի նաև ներմուծման տեխնոլոգիական կառուցվածքի վերլուծությունը: Մասնավորապես վիճակագրական տվյալները վկայում են, որ կառուցվածքային առումով ընդգծելի դրական փոփոխություններ 2005-2012 թթ. ընթացքում տեղի չեն ունեցել:

Իրավիճակը, իհարկե, փաստում է, որ հանրապետությունում ներմուծվում են մեծ քանակությամբ տեխնոլոգիատար ապրանքներ, որոնք, բնականաբար, կարող էին արտադրվել հենց տեղում՝ անհրաժեշտ ներդրումների կլանման պարագայում:

**Աղյուսակ 3**

**Ներմուծման կառուցվածքը ըստ տեխնոլոգիատարության (տես. կշիռը, %)**

	2005թ.	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.
Ռեսուրսատար ապրանք.	25.9	24.9	24.4	24.3	26.7	27.5	30.3	32.2
Ցածր տեխնոլոգիատար ապրանքներ	40.4	38.0	35.2	34.5	32.0	32.2	31.8	30.0
Միջին և բարձր տեխնոլոգ. ապրանքներ	33.7	37.1	40.4	41.2	41.3	40.3	37.9	37.8

Աղբյուրը՝ [www.armstat.am](http://www.armstat.am) – հրապարակումներ 2005-2012 թթ., 77 սոցիալ-տնտեսական վիճակը 2012 թթ. հունվար-դեկտեմբերին, [http://www.armstat.am/file/article/sv\\_12\\_12a\\_411.pdf](http://www.armstat.am/file/article/sv_12_12a_411.pdf)

Կարելի է եզրակացնել, որ արտադրության կազմակերպման դեպքում հանրապետությունը սպառման, ճիշտ է ոչ շատ գնողունակ, սակայն բավականին ընդգրկուն շուկա ունի՝ ի հաշիվ ներմուծված արտադրանքի:

#### Աղյուսակ 4

#### «Արտահանում-ներմուծում» կառուցվածքը 2012 թ.

Տնտեսության ոլորտը	2012 թ.	
	Արտահանում	Ներմուծում
Գյուղատնտեսական արտադրանք	4.8%	10.7%
Պատրաստի սնունդ	18.0%	8.4%
Հանքահումքային արտադրանք	28.1%	21.5%
Քիմիական արդյունաբեր. արտադրանք	1.7%	11.6%
Կաշվե, փայտե, թղթե իրեր և պարագաներ, կոշիկեղեն	3.1%	10.2%
Թանկարժ. և ոչ թանկարժ. քարեր և մետաղներ	36.1%	11.5%
Մեքենաներ և սարքավորումներ	4.3%	15.6%
Տրանսպորտային միջոցներ	3.8%	8.2%
Այլ ապրանքներ	0.1%	2.3%

Աղբյուրը՝ 77 սոցիալ-տնտեսական վիճակը 2012 թթ. հունվար - դեկտեմբերին, [http://www.armstat.am/file/article/sv\\_12\\_12a\\_411.pdf](http://www.armstat.am/file/article/sv_12_12a_411.pdf)

Մասնավորապես ներմուծման և արտահանման կառուցվածքը՝ ըստ ապրանքախմբերի, վկայում է, որ բացառությամբ վերամշակման նպատակով ներմուծված հումքի՝ պատրաստի արտադրանքի մասով տնտեսությունը կարող է հսկայական ներդրումներ կլանել:

Ներմուծման մեջ առավել մեծ մասնաբաժին ունեն հանքահումքային արտադրանքն ու մեքենաներն ու սարքավորումները, որոնք միասին կազմում են ներմուծման ընդհանուր ծավալի մեկ երրորդից ավելին՝ 37.1%: Իհարկե պարզ է, որ վառելիքաէներգետիկ պաշարներ չունեցող և արդյունաբերական ուղղվածություն ունեցող այնպիսի երկրում, ինչպիսին Հայաստանն է, ներմուծման կառուցվածքում վառելիքաէներգետիկ ռեսուրսները գերակշիռ դիրք պետք է զբաղեցնեն: Սակայն տվյալ հանգամանքը երկրին ուղղակիորեն կախման մեջ է դնում արտաքին անվերահսկելի գործոններից, ուստի, կարծում ենք, անհրաժեշտ է փորձել տնտեսական մոդելը կառուցել տնտեսության այնպիսի ոլորտների շեշտակի ընդգծմամբ, որտեղ հնարավորինս նվազագույնի կհասցվի ռեսուրսատար արտադրությունը: Ներմուծման մեջ հաջորդ խոշոր ապրանքախմբերը քիմիական արդյունաբերության ապրանքներն են, տրանսպորտային միջոցները, պատրաստի սնունդը, ինչպես նաև թանկարժեք և ոչ թանկարժեք քարերն ու մետաղները: Սակայն, եթե տրանսպորտային միջոցների առումով ներմուծման այլընտրանք գրեթե չենք կարող առանձնացնել, իսկ ներմուծվող թանկարժեք և ոչ թանկարժեք մետաղների ու քարերի զգալի մասը մշակվում ու արտահանվում է, ապա պատրաստի սնունդի ներմուծման մեծ ծավալները այնքան էլ արդարացված համարել չի կարելի: Իհարկե ներմուծվող սննդատեսակների մի մասը հանրապետությունում հումքային ռեսուրսների անբավարարության պատճառով չեն կարող արտադրվել, սակայն կան մի շարք արտադրատեսակներ, որոնց հետ

կապված՝ հայրենական արտադրողները ներմուծման փոխարինման հարցում կանգնած են լուրջ խոչընդոտների առաջ, որոնք առավել խնդրահարույց են դառնում ներմուծման ոլորտում բարձր մոնոպոլիզացիայի պայմաններում:

Վիճակագրությունը այս առումով ևս բավականին խոսում է: Մասնավորապես, կրկին անդրադարձ կատարենք առևտրային հաշվեկշռին՝ այս անգամ ուշադրությունը առավել կենտրոնացնելով տնտեսության մեկ այլ կարևորագույն ոլորտի՝ գյուղատնտեսության վրա: 2012 թ. ընթացքում արտահանվել է 67,9 մլն դոլարի (ընդհանուր արտահանման 4.8%) և ներմուծվել է 455.6 մլն դոլարի (ընդհանուր ներմուծման 10.7%) գյուղատնտեսական արտադրանք: Այսինքն՝ հանրապետությունում ծավալային առումով գյուղատնտեսական արտադրանքի ներմուծումը շուրջ 6.7 անգամ գերազանցում է արտահանումը: Եվ դա այն դեպքում, երբ այս ոլորտում հանրապետությունը հսկայածավալ պոտենցիալ ունի, որը պարզապես չի օգտագործվում: Ստացվում է, որ հայրենական գյուղատնտեսական արտադրանքը մրցակցային չէ անգամ ներքին շուկայում, իսկ մենք խոսում ենք արտահանման չօգտագործված հնարավորությունների մասին:

Այսպիսով՝ ներդրումների խրախուսման քաղաքականության հաջողությունը՝ ի թիվս այլ գործոնների, ուղղակիորեն կախված է արտահանման կառուցվածքային առանձնահատկություններից: Ինչպես վկայում են մի շարք հետազոտություններ, դեպի զարգացող երկրներ ներդրումային հոսքերը ծավալային առումով չնայած որ անկանխատեսելի են, այնուամենայնիվ պայմանավորված են երկրի առևտրային հաշվեկշռի կառուցվածքով: Ուստի արդարացված ենք համարում փորձերը կենտրոնացնել հանրապետություն ներմուծվող կապիտալը տնտեսության այն ոլորտներում, որոնք ունեն աճի պոտենցիալ և նոր շուկաներ գրավելու հնարավորություններ:

Հարց է առաջանում՝ արդյոք արտահանման ձևավորված կառուցվածքը ներդրումների ոչ ճիշտ ֆիրախավորման արդյունք է, թե առկա են նաև այլ գործոններ, որոնք հաշվի չեն առնվում ներդրումային քաղաքականությունը մշակելիս և իրագործելիս:

**Աղյուսակ 5**

**Ներդրումները տնտեսության իրական հատվածում 2004-2012 թթ. մլն դոլար (առանց պետ. կառավարման և բանկային հատվ. ստացվածի)**

	2004թ.	2005թ.	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.
Օտարերկրյա ներդրումներ	305.5	400.4	441.1	845.4	1257.6	935.5	702.7	816.3	751.8
ՕՈՒՆ	226.7	244.4	250.7	582.3	1000.9	731.2	483.0	631.4	567.4

Աղբյուրը՝ ԴՀԱԿԾ հրապարակումներ 2004-2012 թթ. – ԳՂ սոցիալ-տնտեսական վիճակը 2013 թ. հունվար-փետրվարին, [http://www.armstat.am/file/article/sv\\_02\\_13a\\_420.pdf](http://www.armstat.am/file/article/sv_02_13a_420.pdf)

Մասնավորապես 2004-2008 թթ. ընթացքում տնտեսության իրական հատվածում կատարված ներդրումները դրսևորել են զարգացման կայուն աճի միտումներ. իրենց առավելագույն մակարդակին հասել են նախաճգնաժամային 2008 թ.՝ հատելով 1 մլրդ դոլարի սահմանագիծը: Սակայն 2009 թ. կտրուկ փոխեց տնտե-

սուբյան իրական հատվածում կատարված ներդրումների հետազոծը: 2008 թ. ընդհանուր օտարերկրյա ներդրումների 48.8% աճը 2009թ.-ին փոխարինվեց 25.6% նվազմամբ, որը շարունակվեց նաև 2010 թ.-ին՝ 24.9%: Առավել խորն էր անկումը ՕՈՒՆ-ի մասով՝ 2008-2010թթ. ընթացքում նվազելով ավելի քան 2 անգամ: Իհարկե 2011թ. մասամբ հոսքերը չարդարացվեցին 2012 թ. ընթացքում: Մասնավորապես, 2012 թ. տնտեսության իրական հատվածում կատարված ներդրումները նվազել են 7,9%-ով, սակայն ՕՈՒՆ-ի մասով նվազումը ավելի խորն է եղել՝ 10,1%: Հաշվի առնելով համաշխարհային տնտեսական զարգացումները, կարծում ենք, 2009-2012 թթ. ընթացքում ՀՀ տնտեսության իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումները հիմնականում «ռեսուրսների մատչելի աղբյուր և սպառման շուկա փնտրող» ներդրումներ են եղել և հոսել են զարգացած երկրներից համապատասխան շուկաներում գնողունակ պահանջարկի կտրուկ անկման պատճառով:

**Աղյուսակ 6**

**Իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների տեղաբաշխվածությունը ըստ տնտեսության ոլորտների (տես. կշիռը) 2006-2012 թթ.**

	Արդյունաբերություն	Գյուղատնտեսություն	Շինարարություն	Ծառայություններ
2006թ.	39.9	0.1	3.9	56.1
2007թ.	47.3	0	0.2	52.5
2008թ.	49.1	1.9	0.3	48.7
2009թ.	35.1	0.9	0.1	63.9
2010թ.	49.0	0.8	0.5	49.7
2011թ.	52.1	0.5	0.4	47.0
2012թ.	37.0	4.9	2.4	55.7

*Աղբյուրը՝ ՀՀ ԱԿԾ հրապարակումներ 2006-2012 թթ. - ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2013 թ. հունվար-փետրվարին, [http://www.armstat.am/file/article/sv\\_02\\_13a\\_420.pdf](http://www.armstat.am/file/article/sv_02_13a_420.pdf)*

Ինչպես վկայում են գրաֆիկական վերլուծության արդյունքները, տնտեսության իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների առյուծի բաժինը պատկանում է տնտեսության երկու ոլորտների՝ արդյունաբերությանն ու ծառայությունների ոլորտին՝ 2012 թ. փոքր-ինչ նվազելով կազմել է 92,7%, որից 55,7% կեսը բաժին է ընկնում ծառայությունների ոլորտին, իսկ մնացած 37%՝ արդյունաբերությանը: Ցուցանիշը, իհարկե, որոշակի նվազում է արձանագրել ի համեմատություն հետճգնաժամային 2009-2011 թթ.՝ հիմնականում պայմանավորված Կառավարության հակաճգնաժամային միջոցառումներով:

Մասնավորապես ոլորտում գերակշռում են հիմնային մետաղների արտադրության ոլորտը (ներառյալ հանքագործական արդյունաբերության այլ ճյուղերը)՝ 74,9% մասնաբաժնով (2011թ.՝ 63,5%) ինչպես նաև էլեկտրաէներգիայի և զազի արտադրության ոլորտը՝ 11,2% մասնաբաժնով (2011թ.՝ 12,42%-ը): Ընդ որում՝ 2012 թ. զգալի ներդրումներ են իրականացվել նաև խմիչքների արտա-

դրության ոլորտում՝ կլանելով արտադրության ոլորտում կատարված ներդրումների մոտ 11.8%: Ի դեպ, վերջինիս տեսակարար կշռի աճը ոչ թե տվյալ արտադրական ոլորտում ներդրումների աճի արդյունքն է, այլ պայմանավորված է մյուս ենթաօլորտներում ներդրումների ծավալային կրճատմամբ: Սակայն ինչքանով է արդարացված ներդրումների նման բաշխումը արդյունաբերության ոլորտում: Հիմնային մետաղների արտադրության ոլորտին ուշադրությունը մեծացել է թերևս մետաղների միջազգային գների կտրուկ բարձրացման պատճառով: Ընդ որում՝ ակնհայտ ուշադրություն այս ոլորտին ցուցաբերել է ՌԴ-ն, որին պատկանում է ոլորտում իրականացված ներդրումների մոտ 93.5%-ը: Բայց այն, թե վերջինս ինչքանով է նպաստում տնտեսության պոտենցիալի ավելացմանը, իհարկե, խնդրահարույց է:

Արդյունաբերության ոլորտը, ըստ հետճգնաժամային զարգացման ցուցանիշների, կլանում է ներդրումների մոտ կեսը, որից ավելի քան 3/4-ը ուղղվում է հումքի արդյունահանման և վերամշակման ոլորտ, այսինքն՝ արտադրություն որպես այդպիսին, չի կազմակերպվում, սակայն ապահովում է արտահանման մոտ 95%, որից 2/3-ը բաժին է ընկնում մետաղական հումքին: Եվ այսքանով հանդերձ ապահովում է ՀՆԱ-ի 1/5 -ից էլ ավելի փոքր մասը և նպաստում ՀՆԱ-ի աճին մոտ 1/6-ը: Կարծում ենք, օտարերկրյա ներդրումների կառուցվածքը ըստ տնտեսության հիմնական ոլորտների լիովին արտացոլում է նաև ՀՀ արտահանման արձանագրված կառուցվածքը: Սակայն, արդյոք ոլորտի նմանօրինակ ուրվագիծը արդարացված է ռեսուրսային սահմանափակ պոտենցիալ ունեցող այնպիսի երկրի համար, ինչպիսին Հայաստանն է: Ստացվում է, արդյունաբերության ոլորտում իրականացված ներդրումների ընդամենը 1/6-ն է /2012թ./ ուղղվում մշակման արդյունաբերություն<sup>1</sup>, որն ի դեպ, ապահովում է ամբողջ արդյունաբերական արտադրանքի մոտ 62.3%-ը, իսկ արտահանման մոտ 1/3-ը: Այսինքն, մշակող արդյունաբերությունը ներդրումների օգտագործման տեսանկյունից կարող է ապահովել բավարար արդյունավետություն, իսկ արտահանման ընդլայնման տեսանկյունից՝ բավական մեծ պոտենցիալ: Չնայած որ մշակման արդյունաբերության ոլորտումներքին ներդրողների դերակատարումը ևս պետք չէ անտեսել:

Ներդրումների կառուցվածքը ըստ տնտեսության ոլորտների վերլուծելիս, բնականաբար, չենք կարող շրջանցել հանրապետության համար ռազմավարական նշանակություն ունեցող տնտեսության ոլորտը՝ գյուղատնտեսությունը: Գյուղատնտեսության ոլորտում զբաղվածները կազմում են բնակչության ընդհանուր թվի 45,6%, ինչը վկայում է, որ գյուղատնտեսությունը Հայաստանում նաև սոցիալական մեծ նշանակություն ունի<sup>2</sup>: Ինչպես փաստում է վիճակագրությունը, ոլորտում ներդրումները չափազանց սահմանափակ են և նույնիսկ անհանգստացնող: Տարիներ շարունակ ոլորտը անտեսված է եղել ներդրողների կողմից, միայն 2006թ.-ից սկսեցին մասամբ ուշադրություն դարձնել նաև այս ոլորտին : Ինչպես վկայում են գրաֆիկական վերլուծության արդյունքները, ոլորտում ներդրումների կտրուկ աճ արձանագրվել է 2008թ. 23.8 մլն դոլար /ներդրումների մոտ 1.9%-ը/՝ պայմանավորված կառավարության հակաճգնաժամային միջոցառումներով,

<sup>1</sup> [http://www.armstat.am/file/article/sv\\_12\\_12a\\_121\\_.pdf](http://www.armstat.am/file/article/sv_12_12a_121_.pdf)

<sup>2</sup> ՀՀ Կառավարության գործունեության արդյունքները / իրական հատված/ գյուղատնտեսություն, <http://report.gov.am/?id=4>

սակայն 2009-2011թթ. ընթացքում ներդրումները աստիճանաբար կրճատվել են, իսկ 2012թ.՝ արձանագրված ցուցանիշը անգերազանցելի է եղել ԶՅ տնտեսական իրականությունում՝ 36.4 մլն դոլար՝ կլանելով ներդրումների շուրջ 4.9%-ը: Եվ դա այն դեպքում, երբ գյուղատնտեսության ոլորտը արտադրում է ԶՆԱ-ի մոտ 1/5 –ը և ապահովում ԶՆԱ-ի աճի 1/4-ը՝ աշխատելով գերցածր արտադրողականության պայմաններում: Իսկ արտահանման մեջ էլ ունի 4.8% մասնաբաժին: Զաշվի առնելով տնտեսությունում առկա պոտենցիալն ու արձանագրված զարգացումները գյուղատնտեսության ոլորտի ապագան տեսնում ենք որպես մրցունակ և արտահանման ներուժունեցող: Գյուղատնտեսությունը ԶՅ տնտեսության այն ոլորտներից է, որտեղ կուտակված են մի շարք նախադրյալներ, որոնք կարող են խթանել արտահանման ներուժը և ապահովել տնտեսական զարգացում:

Այդուհանդերձ հարց է առաջանում, թե արդյոք տնտեսության և որպես վերջինիս հետևանք նաև արտահանման ձևավորված կառուցվածքի պատճառը ներդրումների ոչ ճիշտ թիրախավորումն է հանդիսանում: Միգուցե, և առկա է նաև արտադրողականությունների տարբերակման գործոնը: Բալասաս-Սամուելսոնի տեսության պնդումներից մեկը բավական խոստում է նաև մեր տնտեսությունում՝ արտադրողականության տարբերությունները տնտեսություններում նախ և առաջ արտահայտվում է վերջիններիս արտահանման հատվածում: Կարծում ենք, արտադրողականության տարբերությունները տնտեսության տարբեր ոլորտներում ուրվագծում է նաև արտահանման կառուցվածքը: Ինչևէ, ներդրումները հոսել են տնտեսության այն ոլորտներ, որոնք հանրապետության տնտեսությունում գնահատվել են տնտեսական ներուժ պարունակող և առավել հեռանկարային: Սակայն վերոնշյալով հանդերձ տնտեսության ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտներում կապիտալի կլանման հնարավորությունների ստեղծման հիմնահարցը շարունակում է արդիական մնալ ԶՅ տնտեսական իրականությունում:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Զոդվածում հիմնական շեշտը դրվում է օտարերկրյա ներդրումների կլանման հնարավորությունների բացահայտման վրա: Մասնավորապես, քննարկվում է արտահանման պոտենցիալ ունեցող տնտեսության ճյուղերում ներդրումների իրականացման հիմնահարցը:

## АННОТАЦИЯ

### КАРАПЕТЯН Л. – РОЛЬ ИНОСТРАННЫХ ИНВЕСТИЦИЙ В СТИМУЛИРОВАНИИ ЭКСПОРТА РА

В статье основное внимание уделяется выявлению возможностей поглощения иностранных инвестиций экономикой. С этой точки зрения, изучается роль инвестиций в экспортно-ориентированных отраслях.

## SUMMARY

### KARAPETYAN L. – THE ROLE OF FOREIGN INVESTMENTS IN EXPORT PROMOTION IN RA

The article focuses on the identification of opportunities to absorb foreign investments. Particularly, the role of investments in export-oriented sectors of economy is investigated.

**ՄԱՐԿՈՍՅԱՆ ԱՇՈՏ**

ՀՀ ԿԱ Պետական գույքի կառավարման  
վարչության պետի տեղակալ  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,  
էլ. փոստ՝ [ashotmarkos@rambler.ru](mailto:ashotmarkos@rambler.ru)

**ՄԱՐԿՈՍՅԱՆ ՀԱՅԿ**

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան,  
էլ. փոստ՝ [sargsyan.ysu@gmail.com](mailto:sargsyan.ysu@gmail.com)

**ԽԱՉԱՏՐՅԱՆ ԼԵՎՈՆ**

«ՀԱՅԲԻՉՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ առաջատար  
մասնագետ, տնտեսագիտության թեկնածու,  
էլ. փոստ՝ [levonkhach@yahoo.com](mailto:levonkhach@yahoo.com)

**ՆԵՐՔԻՆ ՇՈՒԿԱՅԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՐՑԱՎՑՈՒԹՅԱՆ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ  
(ՊԱՐԵՆԱՄԹԵՐՔԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿԱՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)**

Ցանկացած պետության հիմնական գործառույթների շարքում պարենային անվտանգությունն ունի կարևոր և անփոխարինելի դեր: Պետական կառույցներն այս գործում ունեն իրենց օրենսդրական և գործառույթային պարտականությունները, որոնց նպատակն է ոչ միայն ստեղծել բավարար պայմաններ և հնարավորություններ մարդկանց ապահովելու անվտանգության նորմերին համապատասխանող սննդամթերքով, այլև, որը ոչ պակաս կարևոր նշանակություն ունի, նրանք պետք է ունենան բավարար զնոդունակություն ձեռք բերելու անհրաժեշտ պարենամթերք: Ի վերջո յուրաքանչյուր ազգի առողջության հիմնական գրավականներից է ֆիզիոլոգիական նորմերին համապատասխանող առողջ սնունդը և ապրելակերպը: Քաղաքացու կողմից սպառման հիմքում ընկած են պարենային զամբյուղի արժեքը և այն ձևավորող հիմնական պարենամթերքի տեսակները: Պարենային զամբյուղը ձևավորվում է 1 շնչի հաշվով օրական (տարեկան) սպառման նորմայի, օրական էներգետիկայի և միավորի գնի հիման վրա: ՀՀ-ում պարենային արժեքը 2012 թ. IV եռամսյակի միջին ընթացիկ գներով տարեկան կտրվածքով 1 շնչի հաշվով կազմել է 352804,7 դրամ, իսկ նվազագույն սպառողական զամբյուղի տարեկան արժեքը՝ 624463,3 դրամ (տես աղյուսակ 1): Նշված հաշվարկի հիմքում ընկած է 1 շնչի հաշվով օրական 2412,1 կկալ էներգետիկայի ապահովումը, մեկ այլ հաշվարկով (որի հիմքում ընկած է 2232,0 կկալ օրական էներգետիկան 1 շնչի հաշվով) պարենային զամբյուղի ամսական արժեքը (մեկ ամսում սպառված սննդամթերքի արժեքը 1 շնչի հաշվով) կազմել է 22795,3 դրամ, իսկ 1 մեծահասակի հաշվով 25384,5 դրամ (տես աղյուսակ 2):

Ինչպես ՀՀ-ում (աղյուսակ 3), այնպես էլ ԼՂՀ-ում (աղյուսակ 4) սպառողների կողմից հիմնականում հայցվող 25 ապրանքատեսակների ռեսուրսների շարքում

16-ը պարենամթերք են (մնացած 9 ապրանքատեսակներն են՝ գինին, էթիլային սպիրտը, կոնյակը, օղին, գարեջուրը, ծխախոտը (սիգարետը), բենզինը, դիզելային վառելիքը, էլեկտրաէներգիան)<sup>1</sup>, որոնք որ հիմնականում լրացնում են պարենային զամբյուղը: Հատկանշական է ընդգծել, որ վերջին 13-15 տարվա ընթացքում, թեև հատկապես, 2000-ական թվականներին ՀՀ-ում երկնիշ տնտեսական աճին 1 շնչի հաշվով օրական էներգետիկան (2412,1 կկալ) չի փոխվել (իսկ թե ուր է այն գնացել մնում է իր ապագա հետազոտողներին): Չի փոխվել նաև պարենային զամբյուղի կազմը, թեև, օրինակ, ՌԴ պարենային զամբյուղը կազմված է 47 պարենամթերքից, իսկ ԱՄՆ-ում այն հասնում է 100 անվանման:

Մեր նպատակն է պարզել, թե ինչպես են ձևավորվում ՀՀ բնակչության սպառման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող 13 ապրանքատեսակների ռեսուրսները և ինչ կապ գոյություն ունի նշված պարենամթերքի տեսակների համաշխարհային զգների, ՀՀ ներկրվող այդ արտադրատեսակների և ՀՀ մանրածախ ցանցում վաճառվող դրանց զգների միջև: Ուսումնասիրության մեջ չեն ընդգրկվել ձուկ, հաց, ձու պարենամթերքի տեսակները, նկատի ունենալով, որ դրանց հիմնական ռեսուրսները ձևավորում են սեփական արտադրության հաշվին և դրանք ավելի պակաս կախվածություն ունեն դրսից, քան պարենամթերքի մնացած 13 տեսակները:

Այդուսակ 3-ում բերված ՀՀ բնակչության սպառման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող 13 ապրանքատեսակների ռեսուրսների արտահանման և ներմուծման քանակների, դրանց արժեքների և 1 կգ-ի արժեքների տվյալների վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ.

- Ամենամեծ քաշով արտադրված ապրանքատեսակը, որի կշռի փոփոխությունը 2012 թ. 2008 թ. համեմատ կազմել է աննշան մեծություն՝ հացն է: Երկրորդ ծավալային ապրանքատեսակը ցորենն է, որի արտադրության աճը 2012 թ. 2008 թ. համեմատ կազմել է 107,7%: Երրորդ ծավալային պարենամթերքը պանիրն է, որի մեծությունը 2012 թ. 2008 թ. համեմատ ավելացել է 102,3%-ով:

- Ամենամեծ ծավալային ներմուծվող պարենամթերքը ցորենն է, որի ներմուծումը 2012 թ. 2008 թ. համեմատ ավելացել է 161,3%-ով: Երկրորդ ամենաշատ ներմուծվող ապրանքատեսակը հավի միսն է, որի ներմուծումը 2012 թ. 2008 թ. համեմատ պակասել է 8,3%-ով: Երրորդ ամենաշատ ներմուծվող ապրանքատեսակը բուսական յուղն է, որի ծավալը 2012 թ. 2008 թ. համեմատ ավելացել է 117,3%-ով: Նկատենք նաև, որ 2012 թ. ՀՀ ներկրված երկրորդ ծավալային ամենամեծ ապրանքային տեսակը շաքարավազն է (82410,3 տոննա 2008 թ. 102263 տոննայի դիմաց, դա այն դեպքում, երբ Ախուրյանում գործում է շաքարի արտադրության գործարանը):

- 2008 թ. ՀՀ ամենաշատ արտահանված ապրանքատեսակը եղել է սուրճը (հայտնի է, որ ՀՀ-ում սուրճ չի արտադրվում, ուստի խոսքը միայն վերաարտահանման մասին է), 2012 թ. ձկան արտահանման ծավալներից (1827տ) հետո, սուրճի ծավալները (1346 տոննա) զբաղեցրել են երկրորդ տեղը, իսկ երրորդ տեղը զբաղեցրել է (2012 թ.) պանիրը (903,6 տոննա):

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2012 թ. հունվար-դեկտեմբերին, Եր., ՀՀ ԱԿԾ, 2013, էջ 252:

• 2008 թ. ընդամենը ռեսուրսների ( $D=A + B - C$ ) մեջ ամենամեծ ծավալային ցուցանիշը պատկանում է ցորենին, այնուհետև՝ հացին, երրորդ տեղը զբաղեցրել է այլուրը: 2012 թ. ամենամեծ ծավալ է ունեցել ցորենը, ապա հացը և այլուրը:

Աղյուսակ 4-ի տվյալներից հետևում է, որ ԼՂՀ-ում.

• ամենամեծ քաշով 2008 թ. արտադրվել է ցորեն, ապա այլուր: Այդ նույն պատկերն է եղել նաև 2012թ-ին:

• 2009թ.-ին ԼՂՀ ամենաշատ ներմուծվել է շաքարավազ, ապա հավի միս և այլուր: 2012թ.-ին ամենից շատ ներմուծվել է այլուր, ապա շաքարավազ և հավի միս:

• 2009 թ. ԼՂՀ-ից ամենաշատ արտահանվել է ցորեն, ապա հավի միս և այլուր: 2012 թ. համապատասխանաբար՝ ցորեն, հավի միս և տավարի միս:

• Ընդամենը ռեսուրսներում ամենամեծ բաժինը 2009 թ. ընկել է ցորենին, հացին և այլուրին: Նույն պատկերն է նկատվել նաև 2012 թ.:

Աղյուսակ 5-ում բերված են ՀՀ բնակչության սպառման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող 13 ապրանքատեսակների ռեսուրսների արտահանման և ներմուծման քանակները, արժեքները և 1 կգ արժեքները 2008-2012 թվականներին: Բերված տվյալներից հետևում է, որ զրեթե բոլոր ապրանքատեսակների ռեսուրսների արտահանման և ներմուծման գները փոփոխվել են: Այսպես, 2012 թ. 2008 թ. համեմատ տավարի մսի ներմուծման 1 կգ-ի արժեքն ավելացել է 173,0%-ով (դոլարային արտահայտությամբ) և 192,1%-ով (դրամական արտահայտությամբ, խոզի մսինը համապատասխանաբար՝ 88,0% և 97,4%, թռչնի մսինը՝ 117,9% և 130,5%, կարագինը՝ 147,3% և 163,2%, պանիրինը՝ 89,7% և 99,4%, սուրճինը՝ 98,0% և 108,4%, ցորենինը՝ 90,0% և 101,9%, բրինձինը՝ 106,8% և 117,9%, այլուրինը՝ 105,8% և 116,5%, արևածաղկի յուղինը՝ 100,0% և 110,4%, մարգարիտինը՝ 108,4% և 120,5%, շաքարինը՝ 200,0% և 226,0%, մակարոնդեղինը՝ 88,1% և 97,7%):

Գծապատկեր 1-11-ում<sup>1</sup> բերված են ՀՀ բնակչության սպառման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող 11 ապրանքատեսակների համաշխարհային, ՀՀ ներմուծման և ՀՀ մանրածախ ցանցում վաճառքի գները 2008-2012 թթ.: Բերված գծապատկերներից կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները.

• ՀՀ ներմուծված տավարի մսի գները զգալիորեն ցածր են համաշխարհային գներից, ինչը սակայն չի խոչընդոտել, որ դրանք վաճառվեն բավականին բարձր գներով: Այսպես, եթե 2008 թ. տավարի մսի 1 կգ գինը եղել է 832,02 դրամ, այն ՀՀ է ներմուծվել 510,52 դրամով, իսկ ՀՀ-ում վաճառվել է (մանրածախ ցանցում) 1589,90 դրամով կամ ներմուծված գնից 311,4%-ով ավելի: 2012 թ. այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 1664,66 դրամ, 980,72 դրամ, 2576,60 դրամ և 262,7%: Բերված տվյալներից հետևում է, որ ՀՀ է ներմուծվում համաշխարհային գնից զգալիորեն էժան (2012 թ. 58,9%) տավարի միս:

<sup>1</sup> Գծապատկերները կազմվել են հեղինակների կողմից հիմք ընդունելով ՀՀ ԱՎԾ կայքէջի [www.armstat.am](http://www.armstat.am), ԼՂՀ ԱՎԾ կայքէջի [www.stat-nkr.am](http://www.stat-nkr.am) [www.indexmundi.com](http://www.indexmundi.com), <http://www.cheesereporter.com> տվյալները:

- խոզի միսը ՀՀ-ում 2008 թ. վաճառվել է համաշխարհային գնից 562,8%-ով, իսկ 2012 թ.՝ 471,3%-ով ավելի բարձր գնով,
  - հավի միսը ՀՀ-ում 2008 թ. վաճառվել է համաշխարհային գնից 254,7%-ով ավելի բարձր գնով, իսկ 2012 թ.՝ 237,8%-ով ավելի բարձր գնով,
  - կարագը ՀՀ-ում 2012թ.-ին վաճառվել է 250,2%-ով ավելի բարձր գնով, քան համաշխարհային շուկայում դրա վաճառքի գինն է,
  - բուսական յուղը ՀՀ է ներմուծվում ավելի էժան գներով, քան համաշխարհային շուկայի գներն են, իսկ ՀՀ-ում վաճառվում է 238,1%-ով ավելի բարձր գնով,
  - պանրի 1 կգ 2012 թ. համաշխարհային շուկայում վաճառվել է 1503,95 դրամով, ՀՀ ներմուծվել է 2066,85 դրամով, սակայն վաճառվել է 1729,20 դրամով,
  - ալյուրի 1 կգ 2012 թ. համաշխարհային շուկայում վաճառվել է 897,18 դրամով, ՀՀ է ներմուծվել 221,25 դրամ և վաճառվել 334,20 դրամով կամ համաշխարհային գնից 268,5%-ով ավելի պակաս գնով,
  - համաշխարհային շուկայում շաքարավազի գները 2012 թ. 2008 թ. համեմատ ավելացել են 173,1%-ով, ՀՀ ներմուծված շաքարավազինը՝ 226,0%-ով, ՀՀ մանրածախ ցանցում վաճառված շաքարավազինը՝ 187,5%-ով կամ համաշխարհային գնից 181,4%-ով ավելի բարձր գնով:
  - ՀՀ-ում իրացվող բրինձի 1 կգ 2012 թ. վաճառվել է 306,1%-ով ավելի բարձր գնով, քան այն արժե համաշխարհային շուկայում,
  - Եթե 2012 թ. սուրճի 1 կգ համաշխարհային շուկայում արժեցել է 1661,69 դրամ, ՀՀ այն ներմուծվել է 996,44 դրամով, ապա ՀՀ մանրածախ ցանցում այն վաճառվել է 3067,8 դրամով կամ ՀՀ ներմուծված գնից 307,9%-ով ավելի գնով:
- Աղյուսակ 6-ում բերված է «միս և մսից ենթամթերք» ապրանքախմբի ՀՀ ներմուծման ծավալները, արժեքները և 1 կգ ըստ առանձին երկրների: Աղյուսակ 6-ի տվյալներից հետևում է, որ 2012 թ. ՀՀ է ներմուծվել 55205,6 տոննա միս 88696,8 հազ. դոլար արժեքով կամ 1 կգ արժեքը կազմել է 645,49 դրամ, ըստ որում բերված միսը և մսից սննդամթերքը ներմուծվել է սկսած 1,05 դոլարից (Բելգիա) մինչև 23,67 դոլար (Ավստրալիա) միջակայքում գտնվող գներով:
- 2011 թվականին սպառողների կողմից հիմնականում հայցվող 25 ապրանքատեսակների ռեսուրսների կազմում ՀՀ-ում արտադրված տավարի, խոզի և հավի մսի (նշված արտադրատեսակների արտադրության ցուցանիշները բերվում են սպանդային քաշով (հիմնականում արտադրվել են գյուղացիական և բնակչության օժանդակ տնտեսություններում)) մեծությունները կազմել են համապատասխանաբար՝ 37865.6, 5482.6 և 5637.8 տոննա կամ ընդամենը՝ 48986.0 տոննա: ՀՀ-ում արտադրված մսի ընդհանուր ծավալում տավարի մսի կշռի բաժինը կազմել է 77.3%, խոզինը՝ 11.2%, հավինը՝ 11.5%: Հանրապետություն ներմուծված մսի երեք տեսակների կշիռը 2011 թ. կազմել է համապատասխանաբար՝ 10115.5, 5081.6 և 38684.1 տոննա, դրանց արտահանման մեծությունները կազմել են համապատասխանաբար՝ 0.0 (վիճակագրության պայմանականությունների առումով դա նշանակում է «չնչին մեծություն»), 0.006 և 0.0 տոննա, իսկ դրանց ռեսուրսները (արտադրություն+ներմուծում-արտահանում) կազմել են համապատասխանաբար՝ 47981.1, 10564.2 և 38684.1 տոննա կամ ընդամենը՝ 97229.4 տոննա միս, որից տավարի մսի քաշի բաժինը կազմել է

49.3%, խոզի մսինը՝ 10.9%, հավի մսինը՝ 39.8%: Ինչպես տեսնում ենք ՀՀ-ում արտադրված երեք տեսակի մսի քաշերի կշիռների (համապատասխանաբար՝ 77.3%, 11.2% և 11.5%) և սպառման կառուցվածքի (համապատասխանաբար՝ 49.3%, 10.9% և 39.8%) միջև գոյություն ունի որոշակի տարբերություն, որը բացատրվում է մի շարք պատճառներով: Դրանց շարքում կարևոր դերակատարում, ունեն ազգային առանձնահատկությունները (ինչը նկատվում է խոզի մսի օգտագործման ժամանակ, որի դեպքում մսի արտադրության և սպառման կառուցվածքում դրանք գրեթե հավասարակշռված են, կազմելով համապատասխանաբար՝ 10.9% և 11.2%, թեև խոզի մսի ընդամենը ռեսուրսների քաշում արտադրության բաժինը կազմել է 51.9%, ներմուծմանը՝ 48.1%, իսկ արտահանումը վիճակագրական նշանակումներով կազմել է 0.0%): Տավարի մսի ընդամենը ռեսուրսների (47981.1 տոննա) կազմում արտադրության բաժինը կազմել է 78.9%, ներմուծմանը՝ 21.1%, արտահանմանը՝ 0.0%, մինչդեռ հանրապետությունում սպառված մսի քաշի կազմում տավարի մսի քաշի (47981.1 տոննա) բաժինը կազմել է 49.3%:

Հավի մսի սպառման գործում ակնհայտ է դառնում դրա զգի (մանրածախ միջին), որպես գործոնի ազդեցությունը սպառողների վարքագծի վրա: Բանն այն է, որ 2011 թվականին հանրապետությունում 1 կգ հավի մսի (ներառյալ նաև հավի բուրդ) մանրածախ միջին գինը (1123.2 դրամ) տավարի մսի զգի (2507.8 դրամ) համեմատ է ժամ է 223.3%-ով, իսկ խոզի մսի զգի (2783.4 դրամ) համեմատ 247.8%-ով, ինչն էլ վճռորոշ նշանակություն է ունեցել արտադրության ծավալի (5482.6 տոննա) համեմատությամբ սպառման ռեսուրսների (44321.9 տոննա) շուրջ 8 անգամ ավելանալու և մսի ընդամենը ռեսուրսների կազմում 45.6% կազմելու գործում:

Ընդհանուր առմամբ 2011 թվականին հանրապետությունում սպառված մսի արժեքը կազմել է 197.51 մլրդ դրամ, որից տավարի մսի արժեքը՝ 120.33 մլրդ դրամ, խոզի մսի արժեքը՝ 29.40 մլրդ դրամ, հավի մսի արժեքը՝ 47.78 մլրդ դրամ կամ տոկոսային արտահայտությամբ համապատասխանաբար՝ 60.9%, 14.9%, 24.2%: Տավարի մսի ներմուծման համար հանրապետության սպառողները այլ երկրների այդ ապրանքատեսակի ձեռքբերման համար 2011 թվականին վճարել են 20.29 մլրդ դրամ (հաշվարկման ժամանակ մանրածախ միջին գինը նվազել է հաշվարկային առևտրական վերադիրի չափով, որը ընդունվել է մանրածախ զգի 20%-ի չափով), խոզի մսի ձեռքբերման համար՝ 1.32 մլրդ դրամ, հավի մսի ձեռքբերման համար՝ 34.76 մլրդ դրամ, կամ ընդամենը՝ 66.37 դրամ կամ 2011 թվականի 1 դոլարի փոխարժեքի միջին մեծությամբ (372.50 դրամ) հաշվարկված 178.17 մլն դոլար: Ըստ էության այս մեծության չափով հանրապետության սպառողները ֆինանսավորում են այն երկրների անասնապահությունը և թռչնաբուծությունը, որտեղից ներմուծվում են այդ մթերքները: Նկատենք նաև, որ 2011 թ. հանրապետության առևտրի շրջանառության (2042266.0 մլն դրամ) մեջ մսի երեք տեսակների (տավարի, խոզի, հավի մանրածախ առևտրաշրջանառության բաժինը (197510.0 մլն դրամ) կազմել է 9.67%, իսկ ներմուծման ցուցանիշում (1548.4 մլրդ դրամ)՝ 12.76%:

Բերված տվյալներից ակնհայտ դարձավ, որ 2011 թվականին ՀՀ ներմուծված (ներմուծման ցուցանիշները ներառում են նաև ֆիզիկական անձանց կողմից կազմակերպվող առևտրի տվյալները) տավարի, խոզի և հավի մսի քաշը

կազմել է 53881.2 տոննա (համապատասխանաբար՝ 10115.5 տոննա, 5081.6 տոննա, 38684.1 տոննա)<sup>1</sup>: Մինչդեռ «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2011 թվականին (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 2-նիշ դասակարգման) (Եր. ՀՀ ԱԿԾ. 2012 թ., էջ 26)<sup>2</sup> վիճակագրական ժողովածուի (առանց ֆիզիկական անձանց հայտարարագրերի տվյալների) 2011 թ. ՀՀ արտահանվել է 281.0 տոննա քաշով և 1195.8 մլն դոլար արժեքով «Միս և մսից ենթամթերք» (1 կգ արտահանման արժեքը կազմել է 4.25 ԱՄՆ դոլար), որը 2011 թվականին Հայաստանի Հանրապետություն է ներմուծվել 62327.9 տոննա քաշով և 94702.9 մլն դոլար արժեքով «Միս և մսից ենթամթերք» (1 կգ ներմուծման արժեքը կազմել է 1.52 դոլար կամ 566.2 դրամ (2011 թ. ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքը կազմել է 372.50 դրամ): Եթե նկատենք, որ 2011 թ. հանրապետությունում մանրածախ ցանցում իրացված մսի (տավարի, խոզի և հավի 1 կգ) միջին գինը կազմել է 2138.1 դրամ) [(2507.8+2783.4+1123.2):3], ապա ստացվում է, որ ներմուծված միսը ՀՀ-ում վաճառվում է ձեռքբերման գնից շուրջ 4 անգամ բարձր գնով: Իսկ դա նշանակում է, որ մսի նկատմամբ հանրապետությունում առկա է բարձր վճարունակ պահանջարկ և այն կարելի է բավարարել նաև հայրենական արտադրության հաշվին:

Այստեղ գների առումով անհրաժեշտ է հաշվի առնել նաև գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքսը, որը ՀՀ-ում 2011 թ. 2010 թ. նկատմամբ ավելացել է 117.1%-ով, իսկ 2012 թ. 2011 թ. նկատմամբ՝ նվազել է կազմելով 95%: Հետաքրքիր է նաև նշել, որ վերջին տարիներին ՀՀ-ում նկատվել է մսի արտադրողների իրացման միջին գների էական աճ (տե՛ս աղյուսակ 7):

Այսպես, 2007-2011 թթ. 1 կգ տավարի միսը արտադրողների կողմից իրացվել է համապատասխանաբար 1205.8 դրամ, 1263.0 դրամ, 1289.7 դրամ, 1815.1 դրամ և 2187.2 դրամ արժեքով (կամ 2011 թ. 2007 թ. համեմատ ավելացել է 181.4%-ով), ոչխարի միսը՝ համապատասխանաբար՝ 1265.0, 1504.6, 1530.3, 2282.4 և 2633.2 դրամ (208.2%), խոզի միսը՝ 1293.2, 2169.6, 1858.4, 1900.6, և 2406.7 դրամ (186.1%):

Եթե նկատի ունենանք, որ, օրինակ, տավարի մսի արտադրողների իրացման 1 կգ միջին գինը ՀՀ-ում 2011թ. կազմել է 2187.2 դրամ, իսկ մանրածախ միջին գինը՝ 2507.8 դրամ, այսինքն առևտրական վերադիրը (առևտրական կազմակերպությունների ծախսերը և շահույթը) կազմել է 320.6 դրամ կամ մանրածախ գնի 14.7%-ը (խոզի մսի համար համապատասխանաբար՝ 2406.7 դրամ, 2783.4 դրամ, 376.7 դրամ, 13.5%), ապա ստացվում է, որ ներմուծված մսի և դրանց իրացման գների միջև ձևավորված ահռելի ճեղքվածքը (շուրջ 4 անգամ) ստանում են ոչ թե առևտրական կազմակերպությունները, այլ ներկրողները, ինչը մսի շուկայի մենաշնորհացվածության վկայության լուրջ ահագանգ է: Հետաքրքիր է նշել, որ 2011 թ. հանրապետությունում արտադրվել է 17525.0 տոննա պանիր, ներմուծվել՝ 1035.3 տոննա, արտահանվել 439.8 տոննա կամ պանրի ընդամենը ռեսուրսների մեծությունը կազմել է 18120.5 տոննա, իսկ 1 կգ պանրի մանրա-

<sup>1</sup> Տե՛ս, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2011 թվականի հունվար-դեկտեմբերին, Եր., ՀՀ ԱԿԾ, 2012, էջ 238:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 75:

ծախ միջին գինը կազմել է 1783.2 դրամ<sup>1</sup>: 2011 թ. պանիր (յուղոտ) արտադրողների իրացման 1 կգ միջին գինը կազմել է 1525.1 դրամ<sup>2</sup> (2011 թ. 2007 թ. նկատմամբ ավելացել է 165.0%-ով, ինչը զգալիորեն ավելի ցածր է, քան վերը նշված մսի երեք տեսակների գնաճը), այսինքն պանրի 1 կգ հաշվով այն իրացնող առևտրական կազմակերպությունները վաստակել են 258.1 դրամ, կամ մանրածախ գնի 14.5%-ը: Այլ կերպ ասած, եթե տավարի և խոզի մսի, ինչպես նաև պանրի առևտրական վերադիրները գրեթե հավասար են (կամ ինչպես տնտեսագետներն են ասում առկա են այլ հավասար պայմաններ), ապա նույնը չի կարելի ասել առավելապես ներմուծված մսի և պանրի ձեռքբերման և իրացման գների մասին: Այսինքն, եթե դատելու լինենք վերը բերված մեր օրինակից, եզրակացությունն այն է, որ ներմուծված ապրանքները տեղական շուկայում իրացվում են անգամներով բարձր գներով, մինչդեռ հայրենական արտադրության դեպքում (երբ շուկան հագեցած է այդ ապրանքատեսակով, իսկ շուկան մեզանում այդպիսին է) չի նկատվում գների թռիչքաձև արտադրություն: Այսպիսով, որևէ ապրանքի գների բարձրացման դեմ պայքարի ճանապարհը այդ ապրանքի հայրենական արտադրության ծավալների ավելացումն է, ներմուծման նվազեցումը, կամ եթե ավելանում է ներմուծումը, ապա պետք է ներմուծողների համար մշակել մրցակցային միջավայր և համապատասխան մեխանիզմներ: Վերջինիս դեպքում կարևորվում է պետության կարգավորիչ դերը, այդ թվում նաև մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի գործառույթները և ակտիվությունը:

Նկատենք նաև, որ ՀՀ արտաքին առևտրի «Միս և մսից ենթամթերք» խմբի արտահանման տողը 2008-2011թթ. զգալիորեն նվազել է: Այսպես, 2008 թ. այն կազմել է 757.2 հազ. ԱՄՆ դոլար, 2009 թ.՝ 1164.4, 2010թ.՝ 58.8 և 2011 թ. 23.8 հազ. դոլար, այսինքն նշված ցուցանիշը 2011 թ. 2008 թ. համեմատ նվազել է գրեթե 32 անգամ: Նշված տողի 2008 թ. և 2011 թ. ներմուծման ցուցանիշները մնացել են 88-89 մլն դոլարի սահմաններում<sup>3</sup>:

2011 թ. ՀՀ-ից 2.5 տոննա «Միս և մսից ենթամթերքը» արտահանվել է Վրաստան, իսկ այդ ապրանքախմբի ներմուծման վերաբերյալ տվյալները բերված են աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 6-ի տվյալներից հետևում է, որ 2011թ. «Միս և մսից ենթամթերք» ապրանքախմբի ՀՀ ներմուծման քանակի մեջ ամենամեծ բաժինն ունեցել է ԱՄՆ (ամբողջի 45.1%-ը), Բրազիլիան (17.9%) և Հնդկաստանը (17.0%): Նշված երկրների բաժինը կազմել է ներմուծման ողջ քանակի 80.0%-ը: Արժեքային արտահայտությամբ այդ երկրների բաժինը կազմել է ընդհանուրի մեջ համապատասխանաբար՝ 30.8%-ը, 22.0% և 26.2%-ը կամ ընդամենը 79.0%-ը: Այսինքն նշված երեք երկրներն են հիմնականում ձևավորում «Միս և մսից ենթամթերք» ապրանքախմբի ներմուծման արժեքը, այդ թվում նաև 1 կգ հաշվով: 2011 թ. ՀՀ ներմուծված «Միս և մսից ենթամթերք» ապրանքախմբի 1 կգ արժեքը

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2011 թվականի հունվար-դեկտեմբերին, Եր., ՀՀ ԱԿԾ, 2012, էջ 238:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 75:

<sup>3</sup> Տե՛ս, Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2011 թվականին, (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 2-միջ դասակարգման), Եր.,ՀՀ ԱԿԾ, 2012 թ., էջ 152:

կազմել է 1.52 դոլար (567.4 դրամ), ըստ որում ամենացածր արժեքը ունեցել է Բելգիայից ներմուծվածը (0.86 դոլար կամ 319.1 դրամ), իսկ ամենաբարձրը եղել է Ինդոնեզիայի ներմուծվածը (10 դոլար կամ 3725.0 դրամ), թեև այդ երկրից ներմուծվել է ընդամենը 100 կգ «Միս և մսից ենթամթերք»: ԱՄՆ-ից ներմուծվածի 1 կգ-ի արժեքը կազմել է 1.04 դոլար (387.8 դրամ), Բրազիլիայից ներմուծվածը՝ 1.87 դոլար (697.8 դրամ), իսկ Հնդկաստանից ներմուծվածը՝ 2.35 դոլար (874.0 դրամ) կամ նշված 3 երկրներից ներմուծված «Միս և մսից ենթամթերք» ապրանքախմբի 1 կգ միջին արժեքը կազմել է 1.75 դոլար (653.1 դրամ):

Աղյուսակ 5-ում ներկայացված տվյալներից հետևում է, որ 2012 թ. ՀՀ-ից արտահանված արտադրանքի քանակը կազմել է 830.4 հազ. տոննա (1380.2 մլն դոլար արժեքով), իսկ ներմուծման ծավալը կազմել է 4054.5 հազ. տոննա (4261.2 մլն դոլար արժեքով) կամ ՀՀ 2012 թ. ներմուծված արտադրանքի ծավալը գերազանցել է արտահանված արտադրանքի ծավալի շուրջ 5 անգամը, իսկ արժեքային արտահայտությամբ՝ ավելի քան 3 անգամ (308.7%-ով):

Հատկանշական է, որ 2012 թ. ՀՀ-ից արտահանված կենդանի կենդանիներից հիմնական բաժինը (տե՛ս աղյուսակ 8) ընկել է կենդանի ոչխարներին և այծերին՝ 2486.5 տոննա քաշով և 8550.4 հազ. դոլար արժեքով: Ներմուծված տավարի մսի (սառեցրած) 1 կգ արժեքը կազմել է 2.44 դոլար կամ 980.3 դրամ ( $2.44 \times 401.76^1$ ), խոզի մսինը, թարմ, պաղեցրած կամ սառեցրած՝ 2.42 դոլար կամ 972.6 դրամ, մսամթերքինը (տավարի, խոզի, ոչխարի)՝ 1.18 դոլար կամ 474.1 դրամ, ընտանի թռչունների մսինը և ենթասնդամթերքինը՝ 1.25 դոլար կամ 500.9 դրամ: Ընդգծենք նաև, որ 2012թ. ՀՀ ներմուծված խոշոր եղջերավոր անասունների սառեցրած մսի 1 կգ արժեքը տատանվել է 2.41-3.49 դոլարի միջակայքում, խոզի մսինը՝ 2.10-12.35 դոլարի, ոչխարի կամ այծի թարմ մսինը, պաղեցրած կամ սառեցրածը՝ 12.77 դոլար, մսամթերքինը (տավարի, խոզի, ոչխարի)՝ 1.17-2.12, ընտանի թռչունների մսինը և ենթասնդամթերքինը՝ 1.02-2.72 դոլարի սահմաններում<sup>2</sup>:

Ինչպես արդեն նշել էինք ներկայում ներկրված պարենային ապրանքների որակական հատկանիշները խիստ մտահոգիչ են, որը հանդիսանում է ազգային անվտանգության հիմնախնդիր, քանի որ ներկրված ապրանքների ցածր որակի կամ անհայտ ծագման արդյունքում կարող է վտանգվել երկրի ազգաբնակչության առողջությունը: Այս առումով կարևոր ենք համարում արտաքին առևտրում պարենային ապրանքների որակի համապատասխանեցման, մասնավորապես ներմուծման պարագայում որակի ստանդարտներին համապատասխան լինելու գործընթացը, ինչը միտված է պարենային անվտանգության ապահովմանը: Կարևոր ենք համարում նաև ՀՀ մաքսային միասնական միության անդամակցման գործընթացում ստանդարտացման և սերտիֆիկացման գործընթացները, որոնք պարտադիր են միության անդամ երկրների համար: Ինչպես հայտնի է արդեն իսկ մշակված և հաստատված են միասնական մաքսային միության ստանդարտների սերտիֆիկացման կանոնակարգերը, որտեղ ամրագրված են ստանդարտներին

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2012 թ. հունվար-դեկտեմբերին, Եր., ՀՀ ԱՎԾ, 2013, էջ 125:

<sup>2</sup> Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրը 2012 թվականին, (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 8 միջ դասակարգման, Եր., ՀՀ ԱՎԾ, 2013, էջ 7-9:

համապատասխանեցման պայմանները: Այստեղ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հատկապես մասնաբերքի արտադրությանը և արտաքին առևտրին (հատկապես հունքի ներմուծման պարագայում), որոնք մաքսային միության անդամակցման պարագայում խիստ փոխկապված են լինելու և մեր կարծիքով անհրաժեշտ է լինելու «օգտվել առիթից» և ներմուծել հնարավորության սահմաններում բարձրորակ հունք և արտադրանք, իսկ հետագայում վերամշակման գործընթացում օգտագործել որակյալ հունք, որը կապահովի ազգաբնակչության անվտանգությունը:

Այսօր ՀՀ մասնաբերքի շուկան գտնվում է ոչ այնքան լավ վիճակում, քանի որ ցանկացած սպառողի կարող է կասկածի տեղիք տալ մասնաբերքի որակը և դա պայմանավորված է մասնաբերքի գների հետ այսպես օրինակ 1 կգ երշիկի գինը մանրածախ շուկայում կազմում է 1900-2500 ՀՀ դրամ, միևնույն ժամանակ տավարի մսի գինը մանրածախ շուկայում կազմում է 2500-2600 ՀՀ դրամ, իսկ գյուղատնտեսական մթերք արտադրողների կողմից վաճառվող տավարի մսի գինը 2012 թ. կազմել է 2199.2 ՀՀ դրամ, իսկ խոզի մսինը՝ 2795.2 ՀՀ դրամ: Այստեղից կարելի է եզրակացնել որ 2500 ՀՀ դրամ արժեքով մասնաբերքի հունքը ներկրված միս է, որի արժեքը բավականին մատչելի է: Այստեղ առաջանում են խնդիրներ կապված ներկրված մսի որակական հատկանիշների, ինչպես նաև ծագման հետ: Գաղտնիք չէ, որ զարգացած ինչպես նաև զարգացող երկրներում մասնաբերք արտադրող ձեռնարկությունները արտադրանքի ու հունքի մատչելիության համար հաճախ խախտում են չափանիշները: Նման օրինակով կարելի է ներկայացնել ՌԴ, որտեղ ներկրվող ավստրիական «Landhof GesmbH & Co KG» ընկերության արտադրանքի փաթեթավորման վրա նշված 100 տոկոս տավարի մսի փոխարեն, հայտնաբերվել է ձիու, թռչնի միս և սոյայի սպիտակուցներ, սակայն վերոնշյալ տեսականին չի արգելվում օգտագործել արտադրության մեջ, որի օգտագործման պարագայում անհրաժեշտ է սպառողներին իրազեկել դրա մասին: Մեկ այլ օրինակ էլ կարելի է ներկայացնել ՌԴ օրինակով որտեղ Արգենտինայից փորձել են ներկրել միս, որը տասնյակ տարիներ պահվել է մաքսային պահեստների սառնարաններում և ինչ-որ ռուսական մսի վերամշակող ձեռնարկություն ցանկացել էր դա օգտագործել որպես հունք: Հայաստանում մսի ներկրման իրավիճակը հետևյալն է: Մաքսային ծառայության տվյալներով՝ 2013 թ. առաջին կիսամյակին Հայաստան ներկրված խոշոր եղջերավոր անասունների մսի 89 տոկոսը կամ 4.9 հազար տոննա հնդկական արդտադրության ապրանք է: Բրազիլիայում այդ ցուցանիշը կազմում է 255 տոննա պակաս կամ ընդհանուր չափաբաժնի 4.5 տոկոսը: Նշենք, որ տվյալ ժամանակահատվածում Արգենտինայից Հայաստան տավարի միս չի ներկրվել: Գոմեշի մսի ամենախոշոր արտահանողը Հնդկաստանն է:

2012 թ. ապրիլից մինչև 2013 թ. տարվա մարտը տվյալ տեսակի մսի արտահանման ծավալը գերազանցել է 1.1 մլն տոննա: Պատճառը տավարի մսի խոշոր արտահանող Բրազիլիայի պասիվությունն էր: Փորձագետները մեկ այլ պատճառ են համարում Չինաստանում մսի պահանջարկի ավելացումը: Հնդկաստանից արտահանվող գոմեշի մսի մեծ չափաբաժին արտահանվում է տարբեր երկրներ, այդ թվում հետխորհրդային պետություններ: Որպես կանոն, զարգացած երկրներ գոմեշի միս չի ներկրվում, կամ էլ աննշան քանակով: 2013 թ. առաջին կիսամյակում Հնդկաստանից ներկրվող տավարի մսի (որը

իրականում եղել է զոմեշի միս) միջին մաքսային գինը կազմել է մեկ կգ դիմաց 2.49 դոլար: Բրազիլիայի ցուցանիշը մի փոքր ավելի բարձր էր՝ 2.53 դոլար: Առավել բարձր արժեքով տավարի միս Հայաստան ներմուծվել էր Բելառուսից՝ 5,16 դոլար մեկ կիլոգրամի դիմաց, բայց զուտ խորհրդանշական ծավալով՝ 2 տոննայից պակաս: Նշենք, որ համաձայն ՀՀ ԱՎԾ տվյալների 2013 թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին արտադրվել է 30706.7 տոննա միս, որի աճի տեմպը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է 100%, իսկ մասնաբերքը 2013 թ. հունվար-սեպտեմբերին արտադրվել է 3253 տոննա, որի աճի տեմպը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է 102.7%: Հայաստանում տավարի մսի միջին մանրածախ գինը կազմել է մեկ կիլոգրամի դիմաց 6.27 դոլարին համարժեք դրամ: Համաձայն ՀՀ մաքսային ծառայության վիճակագրական ցուցանիշների 2013 թ. հունվար-հունիս ամիսներին ՀՀ է ներմուծվել 2214.4 տոննա (5681.7 հազար դոլար արժեքով) խոշոր եղջերավոր անասունի միս (սառեցված) և խոզի միս՝ 3949.4 տոննա (9914.3 հազար դոլար արժեքով)<sup>1</sup>: Ներմուծման նշված ցուցանիշները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կրճատվել են համապատասխանաբար՝ 42%-ով և 13.8%-ով: Այսպիսով 2013 թ. առաջին կիսամյակում խոշոր եղջերավոր անասունների մսի ներմուծման ծավալը կազմել է ընդհանուր մսի արտադրության ծավալի 7.2%-ը, իսկ խոզի մսինը համապատասխանաբար՝ 12.9%-ը: Տավարի մսի ներմուծման ծավալները վկայում են անասնապահության մեջ առկա լուրջ խնդիրների մասին՝ սահմանափակ արտադարյալներ, գյուղացիների համար անասնակերի բարձր գին, հիվանդության պատճառով կենդանիների կորուստ: Սակայն տավարաբուծության բարելավման համար օտարերկրյա կովերի ներմուծումը պահանջում է հատուկ պայմաններ, որոնք մեր գյուղացիները ֆինանսական ռեսուրսների սղության հետևանքով չեն կարող իրենց թույլ տալ իրականացնել այն: Այնպես որ, մոտ ապագայում տեղական ռեսուրսների վրա հույս դնելու անհրաժեշտություն չի լինի, և շուկայում մսի պակասը շարունակելու է համալրվել ներմուծմամբ:

Հետևաբար, այս ոլորտում խնդիրներից մեկը, սպառողներին տեղեկացնելու է, ինչ որակի միս են առաջարկում՝ փաստացի մսի, երշիկի, ապխտած մսի և այլ մասնաբերքի տեսքով<sup>2</sup>:

ՀՀ կենտրոնական բանկի սեպտեմբերի հրապարակած տվյալների համաձայն «Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) կողմից ս.թ. սեպտեմբերի 5-ին հրապարակվել են տվյալներ համաձայն որոնց պարենի զնեթի ինդեքսը 2013 թ. օգոստոսին՝ նախորդ ամսվա նկատմամբ նվազել է 1.9%-ով, որի պայմաններում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ինդեքսը նվազել է 5.1%-ով»: Սա նշանակում է, որ անցած տարվա օգոստոսի համեմատ՝ աշխարհում պարենային մթերքները էժանացել են ավելի քան 5 տոկոսով: Միևնույն ժամանակ ՀՀ ԱՎԾ տվյալների համաձայն՝ 2013 թ. օգոստոսին 2012 թ. օգոստոսի համեմատ, պարենամթերքը թանկացել է ավելի քան 10 տոկոսով: Եվ դա այն դեպքում, երբ դրամի արժեզրկում 2013 թ. օգոստոսին 2012 թ. օգոստոսի նկատմամբ տեղի չի ունեցել: Այս ամենից կարելի է եզրակացնել, որ

<sup>1</sup> Աղբյուրը՝ ՀՀ մաքսային ծառայության պաշտոնական կայքէջ՝ [www.customs.am](http://www.customs.am)

<sup>2</sup> Աղբյուրը՝ <http://news.am/arm/news/173644.html>

պարենամթերքը իրականում թանկացել է ոչ թե 10 տոկոսով, այլ 15 տոկոսով, ինչը պայմանավորված է երկրում առկա մենաշնորհով<sup>1</sup>:

Կատարված վերլուծությունից հետևում է, որ բնակչության սպառման կառուցվածքում ամենամեծ բաժին ունեցող պարենամթերքի շուկաները մենաշնորհված են (տես՝ աղյուսակ 9-ը, որից հետևում է, որ ՀՀ պարենի ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող ապրանքային շուկաների ընդհանուր թվի 38,6%-ում գործում է 1 տնտեսվարող սուբյեկտը, 31,6%-ում՝ 2, 26,3%-ում՝ 3, և միայն 3,5%-ում՝ 4), ինչի հետևանքով պարենամթերք ներմուծող տնտեսվարող սուբյեկտները ստանում են գերշահույթներ, ինչի հետևանքով ՀՀ սպառողները դրանք ձեռք են բերում բարձր գներով: Ուստի անհրաժեշտ է այդ շուկաների պետական կարգավորման լծակների ուժեղացում և դրանց կիրառում: Ընդհանրապես ներմուծման ծավալների կրճատման մայրուղին սեփական (հայրենական) արտադրության զարգացումն է և դրա հաշվին ներմուծման փոխարինումը հայրենական արտադրանքով: Գոնե հավի մսի ներմուծման բարձր ծավալների պարագայում ասվածը ակնհայտ է:

Կարգավորման հաջորդ ուղին տնտեսական մրցակցության պաշտպանության ուժեղացումն է և գործող օրենքով նախատեսված մրցակցության պաշտպանության միջոցների և լծակների կիրառումն է: Երրորդ ուղին ներքին շուկայի պաշտպանությունն է, որը գործող օրենքի և արդեն ընդունված մյուս իրավական ակտերի առկայության պայմաններում ավելի մեծ դեր և կարևորություն պետք է ունենա: Ինչը մեզանում կիրառվում է ավելի հաճախ ընտրանքային ձևով, թեև մրցակցության պաշտպանությունն ունի լայն հնարավորություններ և գործիքներ, որոնք լայնորեն տարածված են և կիրառվում են աշխարհի բազմաթիվ երկրներում:

**Աղյուսակ 9**

**ՀՀ պարենի ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող ապրանքային շուկաների անվանումը և տնտեսվարող սուբյեկտների քանակը 02.10.2013թ. դրությամբ**

Հ/հ	Ապրանքային շուկայի անվանումը	Տնտեսվարող սուբյեկտների քանակը
1	«Ձկան կեր»	2
2	«Իշխան և կարմրախայտ ձկնատեսակներ»	1
3	Թառափազգիներ	2
4	«Սուրճ»	3
5	«Տոմատի մածուկ»	2
6	Մսի պահածո	2
7	Մինչև հինգ տարի հնացմամբ հայկական արտադրության կոնյակներ	2
8	Հինգ տարուց ավելի հնացմամբ հայկական արտադրության կոնյակներ	2
9	Գարեջուր	3
10	Շոկոլադե սալիկ	2
11	Շոկոլադե բատոն	2

<sup>1</sup> Հայկական ժամանակ, N 170(3324), «Պարենամթերքը թանկացել է», էջ 2:

12	Շոկոլադե դրածե	2
13	Շոկոլադե մածուկ	3
14	Շոկոլադե կոնֆետներ	3
15	Շոկոլադե կոնֆետների հավաքածու (բոնբոներկա)	2
16	Բուսասերուցքային յուղերի խառնուրդներ՝ սփրեդ (յուղածո)	2
17	Մարգարին	3
18	Հավի միս	1
19	Շաքարավազ	1
20	Հավի ձու՝ կծեպով	4
21	Արդյունաբերական վերամշակման նպատակով ձեռքբերվող լուլիկ	2
22	Արդյունահանված հանքային ջուր	2
23	«Շշալցված հանքային ջուր »	3
24	«Լուծվող սուրճ»	3
25	Պաղպաղակ	3
26	Թթվասեր	2
27	Պաստերացված և ստերիլիզացված (մանրէազերծված) կաթ	3
28	Մածուն և քանած մածուն	3
29	Յոգուրտ	3
30	Կեֆիր	3
31	Կաթնաշոռ	3
32	Կաթնաշոռի պանրիկ	2
33	Մայրական կաթին փոխարինող կերեր	3
34	Մանկական շիլաներ	3
35	Մանկական խյուսեր (պյուրեներ)	2
36	Մանկական հյութեր	2
37	«Ջրի սառեցման-տաքացման սարքեր»	1
38	Ցորենի ալյուր	2
39	Սառեցրած ձկներ	1
40	Էթիլային սպիրտ	1
41	Կարագ	1
42	Բրինձ	1
43	«Արևածաղկի և եգիպտացորենի բուսական յուղ (ծեթ)»	1
44	«Ձիթապտղի բուսական յուղ (ծեթ)»	1
45	«Պահածոյացված ձիթապտուղ»	1
46	«Խտացրած կաթ»	1
47	«Մայոնեզ»	1
48	Խմորիչ հացաթխման համար	1
49	Աղամաթուզ (բանան)	1
50	Խմելու ջուր	4
51	Գազավորված (կարբոնացված) քաղցրացված ըմպելիքներ	1
52	Շամպայն և փրփրուն գինիներ	1
53	Կերակրի աղ	1
54	Քարաղ (կերային)	1
55	Աղացած աղ (տեխնիկական)	1
56	Ծխախոտ ֆիլտրով	1
57	Ծխախոտ առանց ֆիլտրի	1

Աղբյուրը. 77 Տնտեսական նրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով:

Համաշխարհային բանկի մասնագետների կողմից նույնպես կարևորվել է մրցակցության խթանումը հայկական շուկաներում: Նրանց կարծիքով. Հայաստանի փոքր շուկայի համար, որտեղ կան առևտրային խոչընդոտներ, տնտեսության դինամիզմի առումով որոշիչ դեր է խաղում ներքին մրցակցության բարձրացումը:

Մանրածախ առևտրի ոլորտ: Առաջարկվող ոլորտային օրենսդրական կարգավորումն օրենսդրական սահմանափակումներ է ստեղծում մանրածախ բիզնեսի զարգացման համար (որոնք կկիրառվեն խոշոր առևտրային օբյեկտների նկատմամբ): Մասնավորապես՝ մանրածախ ընկերությունների հետագա ընդլայնման հնարավորությունները կսահմանափակվեն տեղական մարմիններից հատուկ թույլտվություն ստանալու և խոշոր առևտրային օբյեկտների նկատմամբ տարածքային սահմանափակումներ կիրառելու պատճառով:

**Աղյուսակ 10**

**Որոշ պարենային ապրանքների գնային տարբերությունը Հայաստանում և ԱՊՀ ընտրված երկրներում, 2010 թ.(տոկոսով)**


Հաց	36
Կարագ	23
Ձուլ	25
Կաթ	33
Տարեկանի հաց	45
Միջին տոկոսը, որով Հայաստանում գներն ավելի ցածր են	
Շաքարավազ	9

*Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկ:*

2010 թ. անցկացված պարենային ապրանքների շուկաների ուսումնասիրությունը ցույց տվեց,որ Հայաստանում գները զգալիորեն ավելի բարձր են, քան համեմատելի երկրներում: Միջին հաշվով Հայաստանում գները 17 տոկոսով ավելի բարձր են, քան ԱՊՀ մյուս երկրներում: Գնային տարբերությունը կախված է ապրանքատեսակից, ընդ որում՝ որոշ ապրանքների գներն ավելի բարձր են, իսկ մյուսներիինը համեմատաբար ավելի ցածր (աղյուսակ 1): Վերլուծությունը հաշվի է առնում մեկ շնչի հաշվարկով ՀՆԱ-ի, ներմուծման ծախսերի, ապրանքատեսակի, հարկերի և ժամանակի հետ կապված ծախսերի տարբերությունը:

*Գծապատկեր 2*

**Հայաստանում մի շարք պարենային ապրանքաշուկաների համակենտրոնացման մակարդակը, Հերֆինդալի ինդեքս (ՀՀԻ)\***



Աղբյուրը. *SUՊՊՀ* և *հեղինակների հաշվարկներ: Շենքերը հաշվարկված են ըստ ԱՄՆ-ի Միաձուլումների ուղեցույցի (2010 թ.):*

\*ՀՀԻ-ի մակարդակների հիման վրա (US Merger Guidelines, 2010) շուկաները սովորաբար դասակարգվում են որպես՝

- Ոչ կենտրոնացված շուկաներ. ՀՀԻ-ն 1500-ից բարձր:
- Չափավոր կենտրոնացված շուկաներ. ՀՀԻ-ն 1500-ից մինչև 2500:
- Բարձր կենտրոնացված շուկաներ. ՀՀԻ-ն 2500-ից բարձր:

Սենաշնորհների դեպքում ՀՀԻ-ն հավասար է 10,000-ի:

Շուկայի կառուցվածքը գների մակարդակի և մրցակցության որոշման համար միակ միջոցը չէ: Պարենային ապրանքների տարբեր շուկաների կառուցվածքը կարող է տատանվել. կարող են գործել մեծ թվով ընկերություններից մինչև ընդամենը մեկ մասնակից: Օրինակ՝ մսամթերքի և կաթնամթերքի ոլորտներում կան մոտավորապես նույն չափի բազմաթիվ մրցակիցներ, մինչդեռ շաքարավազի և ալյուրի շուկաներում գործում են, համապատասխանաբար, մեկ և երկու կարևոր ընկերություններ (գծապատկեր 2): Դա վկայում է, որ մրցակցության արդյունավետությունը կախված է այլ գործոններից, այդ թվում՝ արտադրական գործընթացի տնտեսական բնութագրերից, մատակարարման շղթայի աշխատանքից և ընկերությունների կողմից կիրառվող ռազմավարությունից: Միաժամանակ, գներից բացի, ընկերությունները որոշումներ են կայացնում նաև այլ

փոփոխականների վերաբերյալ: Ապրանքատեսակը գնի, որակի, ոչ նյութական արժեքի, հաճախորդների սպասարկման և այլ հատկանիշների միասնական շղթա է, որն ընկերությունները կիրառում են շուկայում հաջողությամբ մրցելու համար: Արդյունքում գնային քաղաքականությունն ու դրանց մակարդակը միշտ է, որ ճշգրիտ է արտացոլում մրցակցության թեթևությունը, հետևաբար անհրաժեշտ է հաշվի առնել նաև ընկերությունների շուկայական վարքագիծը:

Պատշաճ իրականացվող տնտեսական մրցակցության քաղաքականությունը միտված պետք է լինի մրցակցային գործընթացին և միջոցների արդար բաշխմանը սպառնացող խնդիրների վերացմանը, անկախ ընկերությունների մեծությունից: Սեփականության կենտրոնացումն ինքնին միշտ է, որ հակամրցակցային է: Տնտեսական մրցակցության քաղաքականության իրականացումը կարևորվում է այն դեպքում, երբ ընկերությունը, որն ունի զգալի շուկայական ազդեցություն (ինչը նշանակում է գները ինքնարժեքային շեմից բարձր մակարդակի վրա սահմանելու կարողություն), դրսևորում է այնպիսի գործելակերպ, որը խարխլում է հավասար մրցակցային դաշտը և կարող է հանգեցնել բացասական հետևանքների սպառողների համար: Տնտեսական մրցակցության քաղաքականությունը պետք է հաշվի առնի շուկայի տեխնոլոգիական առանձնահատկությունները, քանի որ որոշ դեպքերում, ելնելով ցանցի արտաքին կապի հնարավորություններից, սպառողները կարող են նախընտրել փոքրաթիվ ընկերությունների մասնակցությամբ համակենտրոնացված շուկաները: Օրինակ՝ հաղորդակցման և ենթակառուցվածքային ծառայությունների շուկաներին, այդ թվում՝ հեռախոսակապի և երկաթուղային տրանսպորտի ոլորտներում գործող ընկերություններին, բնորոշ են արտաքին կապի լայն հնարավորություններ:

**Հայաստանի Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (ՏՄՊԳ) կանգնած է մի շարք ինստիտուցիոնալ մարտահրավերների առջև:** ՏՄՊԳ-ն պատասխանատու է տնտեսական մրցակցության կանոնների կիրառման, հակամրցակցային քաղաքականության կանխարգելման համար, պետք է ապահովի, որ ընկերություններին տրամադրվող պետական օժանդակությունը չվնասի մրցակցությունը, ինչպես նաև բարելավի հանրության պատկերացումները տնտեսական մրցակցության ընդհանուր սկզբունքների և դրանցից բխող օգուտների վերաբերյալ և վերահսկի այդ կանոնների կիրառումը: Այդուհանդերձ, իրավական դաշտի որոշ առանձնահատկություններ սահմանափակում են ՏՄՊԳ-ի գործառնությունների կիրառման արդյունավետությունը, մասնավորապես՝ շուկայում գերիշխող դիրք զբաղեցնող ընկերությունների բացահայտման, պատժամիջոցների կառուցվածքի, տնտեսական միավորումների և համակենտրոնացումների որոշման հարցերում:

**Տնտեսության ոլորտներում մրցակցության խթանմանն ուղղված քաղաքականությունը և արդյունավետ մրցակցային քաղաքականության ապահովումը տնտեսության արդյունավետությունն էապես բարձրացնելու հնարավորություն կրնձեռեն:** Չափազանց կարևոր է շուկա մուտք գործելու և մրցակցելու հարցերում խոչընդոտների վերացումը: Շուկա մուտք գործելու խոչընդոտների վերացումը և մրցակցության սկզբունքների հաստատումը պետք է դառնա կառավարության ընդհանուր քաղաքականության անկյունաքարը: Ապրանքաշուկաների գործունեությունը կարգավորող իրավական դաշտի ազատականացմանն ուղղված միջոցառումներին զուգահեռ պետք է իրականացնել հակա-

մենաշնորհային քաղաքականության և պետական օժանդակության շրջանակների բարելավում:

**2010 թ. ընդունված «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում սահմանված են տնտեսական խմբերի գործունեությունը կարգավորող կարևոր դրույթներ, սակայն առանցքային ոլորտներում դեռևս անհրաժեշտ են պարզաբանումներ: Հարկավոր է նաև ընդունել մի շարք ենթօրենսդրական ակտեր, որոնցով կկարգավորվեն հետևյալ խնդիրները.**

- Տնտեսական խմբերի գործունեության կարգավորում, փոխկապակցված սեփականատերերի կողմից իրականացվող ընկերությունների ուղղակի և անուղղակի վերահսկման գնահատում և «տնտեսվարող սուբյեկտ» հասկացության սահմանում:

- Տնտեսական անկախություն գաղափարի սահմանում, որը նշանակում է, որ տնտեսվարող սուբյեկտն իրավասու և ի գորու է վարելու ինքնուրույն մրցակցային ռազմավարություն՝ չենթարկվելով որևէ այլ տնտեսվարող սուբյեկտի միջամտությանը կամ ազդեցությանը:

- Վերահսկման գաղափար: «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում անձանց խմբի սահմանումից բացահայտ չի բխում, որ նման խումբը որոշվում է վերահսկում իրականացնելու գաղափարի հիման վրա:

- «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի կիրառման նպատակով տնտեսվարող սուբյեկտ գաղափարի սահմանման համար ՏՄՊՊՀ-ն պետք է հնարավորություն ունենա ծանոթանալու իր կողմից ուսումնասիրվող ընկերությունների սեփականատերերի մասին տեղեկատվությանը: Այդ նպատակով անհրաժեշտ կլինի ապահովել տեղեկատվության փոխանակում պետական ռեգիստրի, վարկային ռեգիստրի և Կենտրոնական դեպոզիտարիայի հետ: Ցանկալի կլինի ստորագրել փոխընթացման հուշագիր, որում կսահմանվեն գործընկեր կառույցների տրամադրության տակ գտնվող տեղեկատվությունից օգտվելու գործընթացը կարգավորող ընթացակարգերը:

- Միաձուլումների վերահսկողությունը բարելավելու նպատակով անհրաժեշտ է պարզեցնել միաձուլման առկայության մասին ծանուցման ընթացակարգերը և վերանայել միաձուլումների առկայության մասին ծանուցման ներկա չափանիշները:

- ՏՄՊՊՀ-ի տույժերի և տուգանքների ու քննչական իրավասությունների ներկա կառուցվածքը չափազանց սահմանափակ է, որպեսզի դրա միջոցով հնարավոր լինի կանխարգելել հակամրցակցային գործելակերպը: Ներկայումս քայլեր են արվում ենթօրենսդրական ակտերում տույժերի հաշվարկման մեթոդների սահմանման ուղղությամբ<sup>7</sup>:

- Տնտեսական մրցակցության քաղաքականության շրջանակում գների նկատմամբ մոնիթորինգ իրականացնելիս ՏՄՊՊՀ-ն ուշադրությունը պետք է սևեռի համապատասխան շուկայում տնտեսական մրցակցության ապահովման վրա:

- ՏՄՊՊՀ-ն ոլորտը կարգավորող և այլ պետական մարմիններից անկախ քաղաքականություն վարելու համար անհրաժեշտ լիազորություններ չունի:

### Ոլորտային ուսումնասիրություն. պարենային ապրանքների գները

Այս բաժնում ներկայացվում են Հայաստանում և տարածաշրջանի այլ երկրներում գների մակարդակի պարբերական դիտարկման արդյունքները: Պարենային մթերքների բնագավառում վերլուծության իրականացումը պայմանավորված էր հետևյալ հանգամանքներով. (i) բարձր գների վերաբերյալ բողոքները հիմնականում վերաբերում են պարենային ապրանքներին, (ii) պարենային ապրանքների կշիռը միջին սպառողի զամբյուղում մեծ է՝ կազմելով գրեթե նրա կեսը, և (iii) պատրաստի սննդամթերքի արդյունաբերությունը կարևոր տեղ է զբաղեցնում Հայաստանի տնտեսությունում՝ կազմելով արդյունաբերական արտադրանքի գրեթե մեկ երրորդը, իսկ սննդամթերքի մանրածախ վաճառքը կազմում է ընդհանուր մանրածախ վաճառքի 60 տոկոսը:

1. **Էկոնոմետրիկ վերլուծությունը գնահատում է, թե պարենային մթերքների գները Հայաստանում ավելի բարձր են, քան համեմատելի երկրներում, և եթե այո, ապա որո՞նք են դրա հետևանքները սպառողների բարեկեցության տեսանկյունից:** Վերլուծության ժամանակ հաշվի է առնվում մեկ շնչի հաշվով ՀՆԱ, ներկրման ծախսերի, ապրանքատեսակի և ժամանակային գործոնների տարբերությունները: Հարկ է, սակայն, նշել, որ գների համեմատումը կապված է այնպիսի խնդիրների հետ, ինչպիսիք են համեմատելի ապրանքատեսակների առանձնացումն ու յուրաքանչյուր երկրի շուկայում ներկայացված ապրանքների բացահայտումը:

2. **Այդ իսկ պատճառով ապրանքատեսակների ընտրությունը չափազանց մանրակրկիտ է արվել:** Պարենային ապրանքատեսակներն ընտրվել են հետևյալ չափանիշների հիման վրա. (i) կշիռը սպառողական զամբյուղում, (ii) հանրային մտահոգությունը ապրանքատեսակի բարձր գնի կապակցությամբ, (iii) տվյալների առկայությունը, (iv) տարբեր շուկաները հեշտ համեմատելը, (v) շուկայական պայմանների փոփոխականությունը: Անցկացվել է երկու ուսումնասիրություն, առաջին՝ գների համադրում տարբեր երկրներում, և երկրորդ՝ գների համադրում Հայաստանի տարբեր քաղաքներում: Երկրների համեմատության մեջ ներառված ապրանքները ներկայացնում են Հայաստանում սպառողական զամբյուղի 16.9 տոկոսը, իսկ Հայաստանի քաղաքների՝ սպառողական զամբյուղի 25.6 տոկոսը:

3. **Մի շարք շուկաներում մրցակցության վիճակը մտահոգիչ է:** Հայաստանում տնտեսական մրցակցությունը կարգավորող հանձնաժողովը, ՏՄՊԴՀ-ն անց են կացրել շաքարավազի, ցորենի ալյուրի, արևածաղկի սերմի, բուսական յուղի, ձվի և կաթնամթերքի շուկաների ուսումնասիրություն, որոնցից չորս շուկաների ուսումնասիրությունը կատարվել է ակնհայտ հակամրցակցային գործելակերպի պատճառով: Բացի այդ, մամուլի վերջին հաղորդագրություններում մտահոգություն էր արտահայտվում հացի, ձվի, տավարի մսի և շաքարավազի բարձր գների վերաբերյալ: Ուսումնասիրությունում ընդգրկվել են միայն այն ապրանքատեսակները, որոնց մասին 2005-2010 թթ. ամսական տվյալները առկա են ԱՊՀ բոլոր երկրների կամ Հայաստանի բոլոր խոշոր քաղաքների համար: Վերլուծությունում միջին հաշվարկված գները վերաբերում են միևնույն ապրանքատեսակին, որը հնարավորություն է տալիս ուշադրությունը կենտրոնացնել համեմատաբար միատեսակ ապրանքատեսակների վրա՝ նվազեցնելով գների խտրականությունից և ապրանքատեսակի տարբերությունից բխող տարբերություններ:

րը: Դիտարկվող ապրանքատեսակները վաճառվում են տարբեր կառուցվածք և մրցակցային պայմաններ ունեցող շուկաներում: Օրինակ՝ մասմթերքի ու կաթնամթերքի շուկաներն այնքան կենտրոնացած չեն, որքան շաքարավազինը կամ ցորենինը: Շաքարավազի, ցորենի ալյուրի, բրնձի և սուրճի շուկաները կախված են ներկրումից, միջնդեռ ձուն, հացը, կաթնամթերքը հիմնականում արտադրվում են երկրի ներսում:

**4. Ինչպես և ապրանքների ընտրության դեպքում, կարևոր է ընտրել այն երկրները, որոնց գների հետ համեմատությունը իմաստ կունենա:** Տարբեր երկրներում գները կարող են տարբերվել զանազան պատճառներով, այդ թվում համապատասխան տարածաշրջանում նույն ապրանքատեսակների նկատմամբ պահանջարկի և առաջարկի տարբերության պատճառով: Հայաստանում գները ցածր կամ բարձր լինելու մասին որոշում կայացնելու համար նպատակահարմար է համեմատություն անցկացնել այնպիսի երկրների հետ, որոնց տնտեսական պայմանները Հայաստանից էապես չեն տարբերվում: Այդ պատճառով համեմատվող երկրների խմբում ներկայացված են ԱՊՀ երկրները: Այդ երկրները միմյանց հետ ունեն աշխարհագրական և ընդհանուր տնտեսական կապեր, ուստի տնտեսական խոչընդոտների բացակայության դեպքում կարելի է ակնկալել, որ գներն այդ երկրներում կլինեն նույն մակարդակի վրա: Սպառողների նախընտրություններն այդ երկրներում նույնպես միմյանցից շատ չեն տարբերվում, ինչն էլ ավելի է նպաստում շուկաներում գործող գների համադրմանը: Վերջապես, ԱՊՀ երկրների մասին տվյալները վերցվել են մեկ աղբյուրից (ԱՊՀ վիճակագրական ծառայություն), որը երկրների մասին տվյալները հավաքելիս կիրառում է նույն մեթոդաբանությունը, ինչը նույնպես նպաստում է գների մասին տեղեկատվության համադրմանը այս վերլուծությունում:

**5. Կարևոր է, սակայն, նշել, որ այդ երկրներից շատերում բացակայում են կատարյալ շուկայական պայմանները:** Դրանցից մի քանիսը տեղական շուկաներում մրցակցության ինտենսիվության և հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետության տեսանկյունից ետնապահների շարքում են, այդ թվում՝ Ադրբեջանը, Վրաստանը և Տաջիկստանը, որոնց վարկանիշը Հայաստանից մի քիչ է բարձր: Համադրելի երկրներում առկա անբարենպաստ տնտեսական միջավայրը նպաստում է բարձր գներին՝ վկայելով, որ հաշվարկված գների տարբերությունը կարող է իրական տարբերությունից ցածր լինել:

**6. Գյուղատնտեսությունն ու սննդարդյունաբերությունը կարևոր տեղ են զբաղեցնում Հայաստանի տնտեսությունում, ընդ որում՝ երկրորդը մեծապես կախված է միջազգային առևտրից:** Այդ երկու ոլորտների ընդհանուր կշիռը ՀՆԱ կազմում է 40 տոկոս: Հայաստանը պարենային մթերքների զուտ ներկրող է, և ներկրումը գրեթե 5 անգամ գերազանցում է արտահանումը: Սպառողական զամբյուղում ներառված պարենային ապրանքատեսակների հիմնական հումք հանդիսանում է ներկրվողը: Մասնավորապես հացամթերքը՝ հացը, ալյուրը և մակարոնեղենը, կազմում է սպառողական զամբյուղի շուրջ 13 տոկոսը (պարենային մթերքի զամբյուղի շուրջ մեկ երրորդը): Թռչնի միսը կազմում է սպառողական զամբյուղի 1.84 տոկոսը, շաքարավազը՝ 1.44 տոկոսը, իսկ արևածաղկի յուղը՝ 1.25 տոկոսը:

**7. Տարբեր պարենային ապրանքների շուկաների կառուցվածքը նույնպես տարբեր է, և այնտեղ կարող են գործել զգալի թվով մասնակիցներից մինչև**

**ընդամենը մեկ մասնակից:** Սասնաթերքի և կաթնամթերքի ոլորտները սպասարկվում են համեմատելի չափ ունեցող բազմաթիվ մրցակից ընկերությունների կողմից, մինչդեռ ալյուրի և շաքարավազի շուկաներում, համապատասխանաբար, գործում են մեկ և երկու կարևոր ընկերություններ (աղյուսակ 4.2):

**8. Ընդհանուր առմամբ համեմատված ապրանքատեսակների գները Չայաստանում ավելի բարձր են, քան ԱՊՅ այլ երկրներում:** Մեկ շնչին ընկնող ՉՆԱ, ներկրման ծախսերի, ապրանքատեսակների տարբերությունների և ժամանակի գործոնների ճշգրտումից հետո պարզվում է, որ Չայաստանում գները միջինը 17 տոկոսով ավելի բարձր են, քան ԱՊՅ այլ երկրներում (աղյուսակ 10): Գների տարբերությունը պայմանավորված է մեկ շնչին ընկնող ՉՆԱ և ներկրման պայմանների տարբերությամբ:

**9. Գների տարբերությունը պայմանավորված է ապրանքատեսակով, ընդ որում՝ որոշ ապրանքատեսակների հարաբերական գներն ավելի բարձր են, իսկ մյուսներինը՝ ավելի ցածր:** Արևածաղկի յուղի, տավարի մսի և մակարոնեղենի գները Չայաստանում վիճակագրական առումով չեն տարբերվում ԱՊՅ այլ երկրների գներից: Այդ արդյունքները անփոփոխ են նաև գների մակարդակի վրա ազդող այլ գործոններով ճշգրտելուց հետո:

**10. Մի շարք գործոնների, այդ թվում շուկայի պահանջարկի, միջազգային շուկաների հասանելիության և հարկային բեռի ճշգրտումից հետո համեմատության արդյունքները չեն փոխվում:** Մեկ շնչին ընկնող ՉՆԱ-ն արտացոլում է յուրաքանչյուր երկրում սպառողների գնողունակությունը: Բնակչության թվով կամ ՉՆԱ-ով շուկայի մեծության ճշգրտումը չի փոխում այն եզրակացությունը, որ Չայաստանում գներն ավելի բարձր են, քան ԱՊՅ այլ երկրներում: Հաշվի առնելով Չայաստանի ծովային սահմաններ չունենալը և հիմնական ջրային ուղիներից հեռավորությունը՝ որպես ճշգրտիչ գործոն կիրառվել է բեռնարկղերով (կոնտեյներներով) բեռների ներկրման գինը: Հաշվի են առնվել նաև աշխարհագրական փոփոխականները, այդ թվում՝ հեռավորությունը ծովից և այլ հիմնական ջրային ավազաններից: Հարկերի դուրյաբաշափերի տարբերությունները նույնպես կարող են ազդեցություն ունենալ գների մակարդակի վրա՝ ավելացնելով գործառնային ծախսերը, այդ իսկ պատճառով ընկերությունների ընդհանուր հարկային բեռի գնահատման համար կիրառվել են տարբեր հարկային մոտարկումներ:

Հիմնական շուկայական բնութագրիչները և զնեղի համադրման արդյունքները

	Ապրանքատեսակ	Մրցակիցների թիվը	Ներկրման կարևորությունը	Հիմնական մասնակցի մասնաբաժինը շուկայում, %	զնեղը Հայաստանում կրճ երկրների համեմատ (2005-2010 թթ.)
Ստամբերը	Տավարի, հավի և խոզի	Մեծ	Միջին		Տարբերությունը վիճակագրական կարևորություն չունի
Կաթնամթերք	Կաթ, պանիր	Համեմատաբար մեծ	Ցածր	Կթ. 44.54,	Կաթնամթերք
Հացահատիկային արտադրանք (հաց, մակարոնեղեն)	Սպիտակ հած, տարեկանի հած բարձր և ցածր (առաջին) տեսակի ցորենի այլուրից	Մեծ	Ցածր	-	Հացի ղեպքում ավելի բարձր են, մակարոնեղենի ղեպքում էական չեն
Ցորենի այլուր	Ցորենի այլուր՝ բարձր և ցածր (առաջին) տեսակի	Փոքր	Բարձր	47.3	Ցորենի այլուրի ղեպքում ավելի բարձր են
Շաքարավազ	Շաքարավազ	Փոքր (մե-նաշնորի)	Բարձր	99.9	ավելի բարձր են
Ձու	Հավի ձու	Համեմատաբար մեծ	Ցածր	26.06	ավելի բարձր են
Կենդանական և բուսական յուղ	Կարագ, արևածաղկի յուղ, ձիթապտղի յուղ	Համեմատաբար մեծ	Բարձր	Կարագ 35.04 Արևածաղկի յուղ 7.5 Ձիթապտղի յուղ 66	ավելի բարձր են, սակայն տարբերությունը մեծ է միայն կարագի ղեպքում
Ձու	Հավի ձու	Արևածաղկի յուղ 7.5	Ձիթապտղի յուղ 66 ավելի բարձր են, սակայն տարբերությունը մեծ է միայն կարագի ղեպքում		
Համեմատաբար մեծ Ցածր 26.06 ավելի բարձր են	Համեմատական և բուսական յուղ	Համեմատաբար մեծ	Համեմատաբար մեծ		

Աղբյուրը՝ գործադարձների հարցում 2009 թ., ՏՏՄԴԴ (հոկտեմբեր 2010 թ.), UN Com Trade, NSS

1. **Գների տարբերությունը պայմանավորված չէ հարկային բեռով:** Պարենային ապրանքներից գանձվող հարկերը Հայաստանում ավելի ցածր են, քան ԱՊՀ այլ երկրներում: Բացի այդ, քանի որ որոշ երկրների պարենային ապրանքների ոլորտներում գործում են հաստատագրված վճարներ, ընդհանուր հարկային դրույքաչափերի կիրառումը վերլուծության նպատակով նպատակահարմար չէ: Հարկային բեռը տարբեր է յուրաքանչյուր պարենային ապրանքի համար և ենթակա է հարկերից ազատման ըստ տարբեր սխեմաների Հայաստանում, Մոլդովայում, Բելառուսում և Ռուսաստանում: Մի շարք երկրներում, որոնց թվում են Հայաստանը, Վրաստանը և Ռուսաստանը, գործում են ԱԱՀ-ի շեմեր: Հարկային ցուցանիշները, որոնցով կարելի է դատել տնտեսության հարկման ընդհանուր մակարդակի մասին (ինչպիսիք են Doing Business-ի ընդհանուր հարկային դրույքաչափի կամ ՀՆԱ ընդհանուր հարկային դրույքաչափի և հարկային եկամտի կշռի ցուցանիշները), վիճակագրական տեսանկյունից կարող են բացատրել ԱՊՀ տարբեր երկրների գների տարբերությունները: Սակայն երբ օգտագործվում է ավելի բնորոշ հարկային ցուցանիշ՝ որպես ճշգրտող փոփոխական, ինչպիսին է, օրինակ, պարենային ապրանքների ոլորտում ԱԱՀ իջեցված մակարդակը, հարկային բեռը չի պայմանավորում գնային տարբերությունները: ԱԱՀ գործոնով ճշգրտման դեպքում Հայաստանի գները 13-14 տոկոսով ավելի բարձր են, քան ԱՊՀ այլ երկրներում: Նույն արդյունքին ենք հանգում շահութահարկը որպես ճշգրտող գործոն կիրառելու դեպքում: Հարկային պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամանակը նույնպես մեծ ազդեցություն չի թողնում գների վերլուծության արդյունքների վրա:

2. **Գների վերլուծության արդյունքներից հետևում է, որ միջինից բարձր գների հետևանքով սպառողների ընդհանուր եկամտային կորուստը տարեկան կազմում է շուրջ 290 միլիոն դոլար:** Նույնիսկ ենթադրելով, որ գների իջեցման դեպքում սպառողները չեն ավելացնի պահանջարկը պարենային մթերքների նկատմամբ, նրանց տարեկան եկամտային կորուստը մեկ շնչի հաշվով կազմում է 87.7 դոլար, այսինքն՝ մեկ շնչին ընկնող ՀՆԱ շուրջ 2.3 տոկոսը և մեկ շնչին ընկնող սպառման 4.2 տոկոսը:

3. **Սակայն մատակարարման շղթայի մակարդակով գների և շուկայի կառուցվածքի վերլուծությունը կարող է շփոթեցնող լինել, քանի որ արդյունավետ մրցակցությունը պայմանավորված է այլ գործոններով:** Արտադրական գործընթացի տնտեսական բնութագրիչները, մատակարարման շղթայի աշխատանքը և ընկերությունների ռազմավարական վարքագիծը կարող են ազդեցություն թողնել շուկայի կենտրոնացման և գների մակարդակի կապի վրա: Միաժամանակ, գներից բացի, ընկերությունները որոշումներ են կայացնում նաև այլ փոփոխականների վերաբերյալ: Ապրանքատեսակը գնի, որակի, ոչ նյութական արժեքի, հաճախորդների սպասարկման և այլ հատկանիշների համակցություն է, որոնց շուրջ ընկերություններն ընտրություն են կատարում շուկայում հաջողությամբ մրցակցելու համար: Այն դեպքերում, երբ կարծրացած շուկան սահմանափակում է ընկերության ճկուն գներ սահմանելու հնարավորությունները, վերջինս կարող է մրցակցել ոչ գնային փոփոխականների կարգավորման շնորհիվ: Մի ընկերություն կարող է ավելացնել իր գովազդային ծախսերը, որը հնարավորություն կտա բարձրացնելու ընկերության հեղինակությունը և նպաստելու շուկայում վաճառքի ավելացմանը, իսկ մյուսը կարող է նույն նպատակով առաջարկել ավելի

որակյալ հետվաճառքային սպասարկում, մինչդեռ մեկ այլ ընկերություն կարող է բարելավել առաջարկվող ապրանքային փաթեթը (արտաքին տեսքի, փաթեթավորման բարելավման կամ հատուկ առաջարկների շնորհիվ): Հետևաբար, գների մակարդակն ու վարքագիծը միշտ չէ, որ արտացոլում են մրցակցության թեժույունը, և կարիք է առաջանում անդրադառնալու շուկայավարման վարքագծին: Այս եզրահանգումը հատկապես կարևորվում է՝ հաշվի առնելով ՏՄՊԴՀ-ի կողմից իրականացվող տնտեսական վերլուծությունը և ընկերությունների կողմից վարվող հակամրցակցային քաղաքականության ու կառավարության միջամտությունների բացասական հետևանքների փոխարեն ուշադրության սևեռումը գների մակարդակի վրա:

*Աղյուսակ 1*

**Նվազագույն սպառողական զանբյուղի արժեքը 2012 թ.  
IV եռամսյակի միջին ընթացիկ գներով**

(հաշվարկված ՀՀ ԱԿԾ կողմից, ըստ ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակված սննդամթերքի կազմի, կառուցվածքի և էներգետիկայի)

	Պարենամթերքի անվանումը	Օրական սպառման նորման 1 շնչի հաշվով, կգ	Տարեկան սպառման նորման 1 շնչի հաշվով, կգ	Օրական էներգետիկան 1 շնչի հաշվով, կկալ	Միավորի գինը, դրամ	Տարեկան նորմայի արժեքը 1 շնչի հաշվով, դրամ
1.	Հացամթերք այդ թվում՝	0.355		992.2		71 892.9
1.1	հաց	0.25	91.3	622.5	483.7	44 161.8
1.2	ալյուր	0.02	7.3	70.6	365.8	2 670.3
1.3	մակարոնեղեն	0.015	5.5	55.0	503.5	2 769.3
1.4	ծավարեղեն (բրինձ)	0.05	18.3	175.5	763.6	13 973.9
1.5	ընդեղեն (լոբեղեն)	0.02	7.3	68.6	1 139.4	8 317.6
2.	Մսամթերք (տավարի միս)	0.1	36.5	203.0	2 474.3	90 312.0
3.	Կաթնամթերք այդ թվում՝			339.7		71 357.4
3.1	կաթ, լիտր	0.2	73.0	122.0	344.8	25 170.4
3.2	կաթնաշոռ	0.01	3.7	7.5	1762	6 519.4
3.3	կենդանական յուղ	0.02	7.3	143.4	3 363.6	24 554.3
3.4	պանիր	0.025	9.1	66.8	1 660.8	15 113.3
4.	Կարտոֆիլ	0.25	91.3	167.5	142	12 964.6
5.	Բանջարեղեն (կաղամբ, գլուխ սոխ)	0.3	109.5	87.0	206.2	22 578.9
6.	Միրգ (խնձոր)	0.2	73.0	96.0	424.7	31 003.1
7.	Շաքար	0.05	18.3	193.5	442.4	8 095.9
8.	Չու, հատ	0.5	182.5	40.0	57.8	10 548.5
9.	Բուսական յուղ	0.02	7.3	176.8	891.5	6 508.0
10.	Մարգարին	0.01	3.7	72.0	1 202.4	4 448.9
11.	Չուկ	0.03	11	44.4	2 099.5	23 094.5
	<b>Ընդամենը</b>			<b>2 412.1 կկալ</b>		<b>352 804.7</b>
<b>Պարենային զանբյուղի արժեքը տարեկան կտրվածքով</b>						<b>352 804.7 դրամ</b>

Պարենամքերի անվանումը	Օրական սպառման նորման 1 շնչի հաշվով, կգ	Տարեկան սպառման նորման 1 շնչի հաշվով, կգ	Օրական էներգետիկան 1 շնչի հաշվով, կկալ	Միավորի գինը, դրամ	Տարեկան նորմայի արժեքը 1 շնչի հաշվով, դրամ
ամսական կտրվածքով		<b>29 400.4 դրամ</b>			
<b>Նվազագույն սպառողական զանբյուրի արժեքը</b>					
տարեկան կտրվածքով		<b>624 464.3 դրամ (գործակից 1.77)</b>			
ամսական կտրվածքով		<b>52 038.7 դրամ</b>			

Աղբյուրը. ԳԳ սոցիալ-տնտեսական վիճակը 2012 թ. հունվար-դեկտեմբերին, Եր., ԳԳ ԱՎԾ, 2013, էջ 254:

**Աղյուսակ 2**

**Նվազագույն սպառողական զանբյուրի արժեքը 2012 թ. IV եռամսյակի միջին ընթացիկ գներով<sup>1</sup>**

	Պարենամքերի անվանումը	Օրական փաստացի սպառումը 1 շնչի հաշվով, գրամ	Օրական էներգետիկան 1 շնչի հաշվով, կկալ	Մեկ ամսում սպառված սննդամթերքի արժեքը 1 շնչի հաշվով, դրամ	Մեկ ամսում սպառված սննդամթերքի արժեքը 1 մեծահասակի հաշվով, դրամ
1.	Հացամթերք	461.1	1 355.0	7 228.2	8 049.2
2.	Մսամթերք	48.3	87.6	2 633.8	2 933.0
3.	Չկնամթերք	2.5	2.4	612.5	682.1
4.	Կաթնամթերք		144.3	2 665.5	2 968.3
5.	Չուլ	18.6	27.2	645.4	718.7
6.	Յուղ և ճարպ	30.5	229.9	1 198.9	1 335.1
7.	Միրգ	113.9	47.7	1 396.6	1 555.2
8.	Բանջարեղեն	203.7	76.0	3 848.3	4 285.4
9.	Կարտոֆիլ	145.6	109.2	619.9	690.3
10.	Շաքար	24.4	94.4	324.5	361.3
11.	Ոչ ալկոհոլային խմիչքներ	4.2	1.1	22.8	25.4
12.	Այլ սննդամթերք	35.6	57.2	1 598.9	1 780.5
	<b>Ընդամենը</b>		<b>2 232.0 կկալ</b>	<b>22 795.3</b>	<b>25 384.5</b>
<b>Պարենային զանբյուրի ամսական արժեքը</b>				<b>22 795.3 դրամ</b>	<b>25 384.5 դրամ</b>
<b>Նվազագույն սպառողական զանբյուրի ամսական արժեքը</b>				<b>40 347.7 դրամ</b>	<b>44 930.6 դրամ (գործակից 1.77)</b>

<sup>1</sup> Աղբյուրը. նույն տեղում, էջ 255:

ՀՀ բնակչության սպառման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող  
16 ապրանքատեսակների ռեսուրսները 2008-2012 թթ., (տոմսա)

	2008 թ.						2009 թ.					
	A	B	C	D	E		A	B	C	D	E	
1 Տավարի միս	36283	15366.9	396.6	51253.3	1589.9		41147.02	10847.3	164.7	51829.6	1617.9	
2 Խոզի միս	11152	7542.5	0.1	18694.4	2542.1		6213	5130.75	0.04	11343.7	2435.3	
3 Հավի միս	6519.12	36213.8	0	42732.9	977.23		4911.3	27576.9	0	32488.2	1030.2	
4 Չուկ	5701.1	1999.6	72.2	7628.5	2152.7		5858.6	2944.8	19.5	8783.9	2470	
5 Կարագ	1245.7	4581.3	24.3	5802.7	2331.9		1007.2	1782.8	0.16	2789.8	2387.9	
6 Պանիր	17229.8	760	473.8	17516	1295.1		17459.3	587.5	376.9	17669.9	1301	
7 Սուրճ	-	12704.8	5718	6986.6	2496.6		-	11360.1	3334.6	8025.5	2662.3	
8 Տորոն	225734	297735.5	15	523454.2	188.7		198080.3	376825.8	0	574906.1	167.7	
9 Հաց	296454	-	-	296454	447.13		297627.4	-	-	297627.4	428.7	
10 Բիսմ	-	16074.3	0.8	16073.5	497.8		-	11070.1	0.05	11070.1	603	
11 Այուր	128350	18958	0	147308.1	286.7		130861.2	4157.7	0	135018.9	251.1	
12 Չու մմ. հատ	574.9	1.5	2.6	573.8	558.9		630.1	0.26	4.02	626.3	530.9	
13 Բուսական յուղ, տոմս	365.9	22659.3	0.1	23025.1	998.3		954.2	22416.1	2.1	23368.2	749.1	
14 Մարգարին	352.6	7196.3	0.4	7548.5	966.8		241.6	13399.7	0	13641.3	985.3	
15 Շաքարակազ	3826.5	102263	0.1	106089.4	242.3		870	64824.4	0.05	65694.4	286.8	
16 Մակարոնեղեն	2198.8	3499.6	0.2	5698.2	470.4		2433.3	3287.8	8.9	5712.2	438.2	

A-ն՝ արտադրված, B-ն՝ ներմուծված, C-ն՝ արտահանված, D-ն՝ ընդամենը ռեսուրսներ (D=A+B-C), տոմս, E-ն՝ 1կգ մանրածախ միջին գինը, դրամ:

Աղյուսակ 3-ի շարունակությունը

	2010 թ.					2011 թ.					2012 թ.				
	A	B	C	D	E	A	B	C	D	E	A	B	C	D	E
1 Տավարի միս	39443.0	28.2	45492.9	2076.1	37865.6	10115.5	0	47981.1	2507.8	42317	8335.4	0	50652.4	2576.6	
2 Խոզի միս	5567	4608.8	0.1	10175.7	2352.4	5482.6	5081.6	0.006	10564.2	2783.4	6127	8261.5	0	14388.5	3456.8
3 Բալի միս	5014.7	36034.1	0	41048.8	1086	5637.8	38684.1	0	44321.9	1123.2	6980.7	33233.7	16.3	40198.1	1191.4
4 Չուկ	5616.9	1900.9	412.7	7105.1	2658.4	7095	2220.8	1295.8	8020	2151.1	9231.4	2778.8	1827	10183	2164.4
5 Կարագ	950.4	3058.5	0.04	4008.9	2705.1	809.9	4540.2	0	5350.1	3267.4	645.5	4907.4	0.1	5552.8	3327.6
6 Պանիր	17050	725.8	496.4	17279.4	1386.2	17525	1035.3	439.8	18120.5	1783.2	17629	1056.2	903.6	17781.2	1729.2
7 Սուրճ	-	12381.9	1774	10607.9	2710.7	-	11841.9	1446.3	10395.6	3043.1	-	10815.8	1346	9469.7	3067.8
8 Ցորեն	183464	344660.1	0	528124.2	156.6	224081.9	356548.1	22	580608	200.6	243130	480359.2	0.001	723489	187.6
9 Բաց	297715	-	-	297715.3	439.63	297854.4	-	-	297854.4	473.2	296575	-	-	296575	488.7
10 Բրինձ	-	12546.1	13.5	12532.6	647.7	-	10425	0.1	10424.9	651.1	-	10413.1	0	10413.1	713.6
11 Այլուր	155738	782.4	0	156520.1	260.2	156007.4	11769.9	0.1	116777.2	320.4	234856	1289.2	0	236145	334.2
12 Չու մլն. հատ	719.2	4.1	2.7	720.6	484.2	633.6	32.9	0	666.5	588	658.2	0.428	0.029	658.6	582.9
13 Բուսական յուղ	1034.3	23223.8	0.1	24258	787	696.5	23763.1	0.9	24458.7	1408.4	2656.1	26573.1	3	29226.2	1424.9
14 Մարգարին	237.4	12868	0	13105.4	959.3	85.9	10433.7	0	10519.6	1025.8	-	11513	0.015	11513	1158.4
15 Շաքարավազ	32508.4	97752.9	2144	128117.3	343.6	72159.4	91668.4	3434	160393.8	413	69267	82410.3	400	151277	454.3
16 Մակարոնեղեն	2614.8	3521.5	1.5	6134.8	447.1	3247.9	4129	47.9	7329	506.4	3393.4	4315.4	153.5	7555.3	519.5

Աղբյուրը. Զայաստանի Զանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2008-2012 թթ. հունվար-դեկտեմբերին, ԳԳ ԱԿԾ տարեկան տեղեկագրեր:

Աղյուսակ 4

ԼՂՀ բնակչության սպառման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող 16 պարենային ապրանքատեսակների ռեսուրսները 2009-2012 թթ. (տոննա)

	2009 թ.						2010 թ.					
	A	B	C	D	E		A	B	C	D	E	
1	Տավարի միս	205.4	143.8	1707.7	1467.7		1626	359	219.7	1764.9	1902.8	
2	Խոզի միս	220.3	295	80.4	434.9	2793.5	470.2	357.8	0.3	827.7	2627.8	
3	Հավի միս	911.6	1212.2	607	1516.8	1100.7	618.9	799.1	287.2	1130.8	1137.1	
4	Չուկ	-	158.9	-	158.9	1731.4	-	234.3	-	234.3	1929.1	
5	Կարագ	2.1	251.2	0.4	252.9	2380.0	14.2	249.8	-	264	2982.3	
6	Պանիր	41.5	285.1	4	322.6	951.2	50.9	179.6	1.8	228.7	1110.2	
7	Մուրճ	-	289	166.9	122.1	2294.4	-	164.5	57.5	107	2423.4	
8	Ցորեն	71084.5	1053.7	8784.9	63353.3	154.4	43604	3519.6	4891.4	42232.4	166.0	
9	Հաց	12967.8	146.5	-	13114.3	416.5	14291	118	-	14408.5	441.3	
10	Բրինձ	-	402.1	-	402.1	564.3	-	570.4	-	570.4	585.7	
11	Այուր	10117.7	1300.8	520.3	10898.2	210.8	7626	3249.8	40.4	10835.4	220.9	
12	Չու մն. հատ	19.6	5.7	0.04	25.3	546.8	22.7	5.2	-	27.9	546.9	
13	Բուսական յուղ, տոննա	-	831.4	-	831.4	693.1	-	994.4	-	994.4	719.5	
14	Մարգարին	-	152.1	-	152.1	1100.7	-	225.8	-	225.8	1091.5	
15	Շաքարավազ	-	4068.4	-	4068.4	304.3	-	3060.3	-	3060.3	362.6	
16	Մակարոններ	144.8	797.9	176.7	766	414.3	175.9	848.3	157.7	866.5	410.9	

	2011 թ.					2012 թ.				
	A	B	C	D	E	A	B	C	D	E
1	Տավարի միս	621.1	175.8	1978	2272.8	1493.8	680.4	158	2016.2	2504.7
2	Խոզի միս	505.3	161.9	1.5	665.7	518.5	299.2	2.9	814.8	3625.7
3	Հավի միս	460.7	1098.8	124.8	1435	1270.1	966.8	253.3	1983.6	1245.4
4	Չուկ	-	251.3	-	251.3	3.7	302	-	305.7	2159
5	Կարագ	14.9	221.8	-	236.7	22.9	232	-	254.9	3774.8
6	Պանիր	68.8	248.2	13.3	303.7	156.9	263.3	4.3	415.9	1438.3
7	Սուրճ	-	124.3	0.2	124.1	-	159.3	-	159.3	3134.2
8	Ցորեն	75625	991	9405.8	67211	58670.3	366.7	12207	46830	234.8
9	Հաց	16259	120.6	-	16379	17714.3	53.1	-	17767	479.9
10	Բրինձ	-	414.1	-	414.1	-	481.3	-	481.3	585.9
11	Այուր	9396	3939.7	19	13317	9145.8	3253.3	35.5	12364	265.5
12	Չու. մլն. հատ	22.9	7	0.1	29.8	25.9	6.2	1.6	30.5	598
13	Բուսական յուղ, տոննա	-	935.4	-	935.4	124.5	965	7.9	1081.6	877.1
14	Մարգարին	-	132.2	-	132.2	-	102.6	-	102.6	1232.9
15	Շաքարավազ	-	3144.8	-	3145	-	3194.4	-	3194.4	491
16	Մակարոնեղեն	317.9	840	191.1	966.8	430.9	850	118.2	908	420.9
		1532.7	621.1	175.8	1978	2272.8	1493.8	158	2016.2	2504.7

A-ն՝ արտադրված, B-ն՝ ներմուծված, C-ն՝ արտահանված, D-ն՝ ընդամենը ռեսուրսներ, E-ն՝ մանրածախ միջին գինը դրան

Աղբյուրը. ԼՂՀ ԱՎԾ, [www.stat.nkr.am](http://www.stat.nkr.am) պաշտոնական կայքէջ:

Աղյուսակ 5

ՀՀ բնակչության սպառման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող 13 ապրանքատեսակների ռեսուրսների արտահանման և ներմուծման քանակները, արժեքները և 1 կգ արժեքները 2008-2012 թթ.

h/ h	Ապրանքատեսակ ները	Արտահանում				Ներմուծում				2008 թ.	
		քանակը, տոննա		գումարը, հազ. դոլար		քանակը, տոննա		գումարը, հազ. դոլար		1 կգ-ի արժեքը	ՀՀ դրամ
		1 կգ-ի արժեքը	դոլար	ՀՀ դրամ	1 կգ-ի արժեքը	դոլար	ՀՀ դրամ	1 կգ-ի արժեքը	դոլար	ՀՀ դրամ	
1.	Տավարի միս	396.60	755.60	1.91	582.93	15366.90	21595.30	1.41	510.52		
2.	խոզի միս	0.10	0.90	9.00	2753.73	7542.50	20733.40	2.75	998.61		
3.	Թռչնի միս	0.00	0.00	-	-	38284.70	40440.10	1.06	383.73		
4.	Կարագ	24.30	57.50	2.37	724.00	4581.30	13539.30	2.96	1073.62		
5.	Պանիր	473.80	1421.10	3.00	917.72	760.00	4351.40	5.73	2079.97		
6.	Սուրճ	5700.70	15219.7	2.67	816.88	11984.90	30313.10	2.53	918.83		
7.	Ցորեն	15.00	3.00	0.20	61.19	297735.50	88653.80	0.30	108.17		
8.	Բրինձ	0.80	0.30	0.38	114.74	16074.30	9519.50	0.59	215.14		
9.	Այուր	0	0	-7	-7	20407.7	10665.8	0.52	189.86		
10.	Արևածաղկի յուղ	0.00	0.00	-	-	18675.60	24048.80	1.29	467.80		
11.	Մարգարին	0.00	0.00	-	-	7196.20	10512.50	1.46	530.69		
12.	Շաքար	0.10	0.10	1.00	305.97	102262.90	31197.30	0.31	110.83		
13.	Մակարոնեղեն	0.20	0.10	0.50	152.99	3499.30	4134.10	1.18	429.18		

<sup>1</sup> Աղբյուրը՝ ՀՀ արտաքին առևտուրը 2008-2012 թվականներին (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 4-միջ դասակարգման) փոփոխագրական ժողովածու, Եր., ՀՀ ԱՎՍ, 2009-2013, էջ 53-57, 54-59, 59-62:

2008-2012 թթ. ԱՄՆ դոլար/ ՀՀ դրամ ՀՀ կգ փոխարժեքը կազմել է համապատասխանաբար՝ 305.97, 363.28, 373.66, 372.50, 401.76, 412.18 ՀՀ դրամ:

<b>2009 թ.</b>												
1.	Տավարի միս	164.70	333.10	2.02	734.72	10822.20	18452.90	1.71	637.13			
2.	խոզի միս	0.00	0.30	-	-	5130.70	12799.60	2.49	932.17			
3.	Թռչնի միս	0.00	0.00	-	-	28144.60	31566.70	1.12	419.09			
4.	Կարագ	0.20	1.40	7.00	2542.96	1782.80	5602.90	3.14	1174.32			
5.	Պանիր	336.90	1113.00	3.30	1200.15	569.00	3186.20	5.60	2092.36			
6.	Սուրճ	3334.60	9547.00	2.86	1040.08	10697.70	24039.80	2.25	839.69			
7.	Ցորեն	0.00	0.00	-	-	374899.80	94183.10	0.25	93.87			
8.	Բրինձ	0.10	0.10	1.00	363.28	11070.80	6574.30	0.59	221.89			
9.	Այուր	0	0	-	-	4157.6	1753.9	0.42	157.63			
10.	Արևածաղկի յուղ	0.30	0.90	3.00	1089.84	19807.50	20565.00	1.04	387.95			
11.	Մարգարին	0.00	0.00	-	-	13399.70	16985.80	1.27	473.66			
12.	Շաքար	0.10	0.00	0.00	0.00	64822.40	21112.10	0.33	121.70			
13.	Մակարոնեղեն	8.90	15.50	1.74	632.68	3286.20	3405.30	1.04	387.20			
<b>2010 թ.</b>												
1.	Տավարի միս	28.20	42.30	1.50	560.49	6075.30	13613.00	2.24	28.20			
2.	խոզի միս	0.10	0.60	6.00	2241.96	4608.80	10996.80	2.39	0.10			
3.	Թռչնի միս	0.00	0.00	-	-	36434.20	39914.50	1.10	0.00			
4.	Կարագ	0.00	0.30	-	-	3058.50	9304.60	3.04	0.00			
5.	Պանիր	496.40	1688.30	3.40	1270.85	725.70	3836.00	5.29	496.40			
6.	Սուրճ	1761.90	5648.00	3.21	1197.82	11670.20	25723.30	2.20	1761.90			
7.	Ցորեն	0.00	0.00	-	-	344660.40	87876.20	0.25	0.00			
8.	Բրինձ	13.50	7.00	0.52	193.75	12546.10	7155.90	0.57	13.50			
9.	Այուր	0	0	-	-	782.4	317.7	0.41	0			
10.	Արևածաղկի յուղ	0.00	0.00	-	-	19505.40	19878.20	1.02	0.00			
11.	Մարգարին	0.00	0.00	-	-	12325.40	16861.80	1.37	0.00			
12.	Շաքար	2144.00	1474.90	0.69	257.05	97752.10	30811.60	0.32	2144.00			
13.	Մակարոնեղեն	1.50	3.00	2.00	747.32	3521.20	3305.10	0.94	1.50			

2011 թ.												
1.	Տավարի միս	-	-	-	-	-	-	-	10115.50	23823.60	2.36	-
2.	հոգի միս	0.00	0.00	-	-	-	-	-	5081.60	12723.00	2.50	0.00
3.	Թռչնի միս	-	-	-	-	-	-	-	38971.00	47003.30	1.21	-
4.	կարագ	-	-	-	-	-	-	-	4540.20	14444.20	3.18	-
5.	Պանիր	438.90	1850.10	4.22	1570.20	-	-	-	1019.20	5594.00	5.49	438.90
6.	Սուրճ	1437.70	5329.60	3.71	1380.87	-	-	-	11010.60	27586.10	2.51	1437.70
7.	Ցորեն	22.00	4.40	0.20	74.50	-	-	-	356038.30	90407.50	0.25	22.00
8.	Բրինձ	0.10	0.30	3.00	1117.50	-	-	-	10424.90	6454.20	0.62	0.10
9.	Այուր	-	-	-	-	-	-	-	200.5	94.8	0.47	-
10.	Արևածաղկի յուղ	0.40	0.70	1.75	651.88	-	-	-	20988.00	26137.40	1.25	0.40
11.	Մարգարին	-	-	-	-	-	-	-	10412.70	17557.40	1.69	-
12.	Շաքար	3434.00	2739.30	0.80	297.14	-	-	-	91668.40	53799.20	0.59	3434.00
13.	Մակարոնեղեն	47.90	51.90	1.08	403.61	-	-	-	4129.00	4360.30	1.06	47.90
2012թ.												
1.	Տավարի միս	-	-	-	-	-	-	-	8335.40	20347.30	2.44	-
2.	հոգի միս	-	-	-	-	-	-	-	8261.50	19999.70	2.42	-
3.	Թռչնի միս	16.30	45.70	2.80	1126.41	-	-	-	33634.70	41935.00	1.25	16.30
4.	կարագ	0.10	0.30	3.00	1205.28	-	-	-	4907.40	21403.70	4.36	0.10
5.	Պանիր	902.20	2334.50	2.59	1039.58	-	-	-	1056.10	5433.10	5.14	902.20
6.	Սուրճ	1346.10	5522.00	4.10	1648.11	-	-	-	10618.60	26336.20	2.48	1346.10
7.	Ցորեն	0.00	0.00	-	-	-	-	-	477680.70	131112.70	0.27	0.00
8.	Բրինձ	-	-	-	-	-	-	-	10412.90	6572.30	0.63	-
9.	Այուր	-	-	-	-	-	-	-	1285.8	708.1	0.55	-
10.	Արևածաղկի յուղ	-	-	-	-	-	-	-	23942.30	30851.60	1.29	-
11.	Մարգարին	0.00	0.00	-	-	-	-	-	11510.30	18320.00	1.59	0.00
12.	Շաքար	400.00	296.50	0.74	297.80	-	-	-	82410.10	51382.30	0.62	400.00
13.	Մակարոնեղեն	153.50	120.90	0.79	316.44	-	-	-	4315.30	4502.90	1.04	153.50

«Մյու և մսից ենթամթերք» ապրանքախմբի ՀՀ ներմուծման ծավալները, արժեքները և 1 կգ-ի գինը ըստ առանձին երկրների

	2008 թ.				2009 թ.				2010 թ.				2011 թ.			
	Ներմուծում		1 կգ-ի արժեքը		Ներմուծում		1 կգ-ի արժեքը		Ներմուծում		1 կգ-ի արժեքը		Ներմուծում		1 կգ-ի արժեքը	
	A	B	C	D	A	B	C	D	A	B	C	D	A	B	C	D
<b>Ընդամենը</b>	<b>66107.30</b>	<b>89156.40</b>	<b>1.35</b>	<b>412.65</b>	<b>49709.10</b>	<b>69632.10</b>	<b>1.40</b>	<b>508.88</b>	<b>51065.10</b>	<b>69051.30</b>	<b>1.35</b>	<b>505.27</b>	<b>58080.20</b>	<b>88465.60</b>	<b>1.52</b>	<b>567.38</b>
1. Ամհայտ երկիր					0.60	10.60	17.67	6417.95	0.70	7.60	10.86	4056.88				
2. Արգենտինա	125.20	244.80	1.96	598.25	305.20	582.00	1.91	692.76	50.70	62.10	1.22	457.68	25.00	40.90	1.64	609.41
3. Ավստրալիա					74.90	114.80	1.53	556.80	224.60	208.90	0.93	347.54	25.10	27.20	1.08	403.67
4. Ավստրիա																
5. Բելգիա					26.40	31.40	1.19	432.08	11004.80	18511.10	1.68	628.53	754.00	645.90	0.86	319.10
6. Բրազիլիա	11909.10	23704.50	1.99	609.02	12404.00	22545.90	1.82	660.31					10404.30	19491.00	1.87	697.83
7. Բուլղարիա									764.00	1183.20	1.55	578.68	983.60	1667.20	1.69	631.39
8. Բելառուս	46.00	46.00	1.00	305.97					50.70	173.10	3.41	1275.75	27.90	116.30	4.17	1552.75
9. Կանադա	5689.00	8452.00	1.49	454.57	2408.50	3430.90	1.42	517.49	1221.70	2101.90	1.72	642.87	675.50	886.30	1.31	488.74
10. Չինաստան	1002.50	2637.70	2.63	805.04	592.10	1356.10	2.29	832.03	1782.80	4028.10	2.26	844.26	1645.00	3639.80	2.21	824.21
11. Կիպրոս													25.70	29.60	1.15	429.03
12. Դանիա													25.00	78.70	3.15	1172.63
13. Ֆինլանդիա					0.10	5.50	55.00	19980.40								
14. Ֆրանսիա	778.50	967.30	1.24	380.17	895.40	1217.80	1.36	494.08	509.00	617.50	1.21	453.31	933.90	1184.60	1.27	472.50
15. Կոստան	0.00	0.00			0.00	0.00			2.90	7.30	2.52	940.59	-	-		
16. Գերմանիա	159.90	254.10	1.59	486.22	24.50	28.20	1.15	418.14	198.20	288.50	1.46	543.90	386.70	578.60	1.50	557.35
17. Բուլնաստան													25.00	28.80	1.15	429.12
18. Բոլնոնգ									0.40	6.40	16.00	5978.56				
19. Բուլղարիա					0.00	0.80							163.10	305.20	1.87	697.04
20. Բուլնաստան	14623.4	20200.1	1.38	422.65	10241.30	17353.70	1.69	615.57	4899.20	10824.90	2.21	825.61	9866.90	23151.40	2.35	874.02
21. Ինդոնեզիա	0.10	3.20	32.00	9791.04									0.10	1.00	10.0	3725.00



Աղյուսակ 6-ի շարունակությունը

	2012 թ.			
	Սերմունքում			
	A	B	C	D
	<b>55205.60</b>	<b>88696.80</b>	<b>1.61</b>	<b>645.49</b>
1. Անհայտ երկիր	-	-	-	-
2. Արգենտինա	255.10	438.10	1.72	689.97
3. Ավստրալիա	0.30	7.10	23.67	9508.32
4. Ավստրիա	22.00	80.60	3.66	1471.90
5. Բելգիա	773.80	809.30	1.05	420.19
6. Բրազիլիա	14518.1	28803.2	1.98	797.07
7. Բուլղարիա	590.10	995.00	1.69	677.43
8. Բելառուս	4.90	26.10	5.33	2139.99
9. Կանադա	942.70	1196.40	1.27	509.88
10. Հինաստան	1387.60	2791.10	2.01	808.12
11. Կլայրոս	24.40	28.00	1.15	461.04
12. Չեխիայի Համրապետություն	0.30	2.00	6.67	2678.40
13. Ղանիա	20.80	23.90	1.15	461.64
14. Ֆինլանդիա	-	-	-	-
15. Ֆրանսիա	776.40	1002.50	1.29	518.76
16. Վրաստան	-	-	-	-
17. Գերմանիա	534.10	576.90	1.08	433.95
18. Դունաստան	-	-	-	-
19. Ինկոնդ	-	-	-	-
20. Դոմինգարիա	236.80	406.50	1.72	689.68
21. Դերկաստան	8032.70	19258.8	2.40	963.24
22. Ինդոնեզիա	0.20	1.30	6.50	2611.44

	2012 թ.			
	Ներմուծում		1 կգ-ի արժեքը	
	A	B	C	D
23. Իրանի Իսլամական Հանրապետություն	0.30	4.80	16.00	6428.16
24. Իռլանդիա	-	-	-	-
25. Իսրայել	102.30	117.80	1.15	462.63
26. Իտալիա	3356.50	4607.80	1.37	551.54
27. Հորդանան	-	-	-	-
28. Լիբանան	-	-	-	-
29. Սիեռլանդներ	201.90	213.40	1.06	424.64
30. Նոր Զելանդիա	0.20	2.00	10.00	4017.60
31. Նորվեգիա	-	-	-	-
32. Պակիստան	18.40	55.40	3.01	1209.65
33. Պարագվայ	-	-	-	-
34. Լեհաստան	205.20	466.70	2.27	913.75
35. ՌԻ	19.30	46.10	2.39	959.64
36. Սլովակիա	88.00	132.00	1.50	602.64
37. Վիետնամ	-	-	-	-
38. Իսպանիա	686.60	1436.00	2.09	840.27
39. Շվեդիա	25.00	28.70	1.15	461.22
40. Ուկրաինա	419.90	1102.70	2.63	1055.06
41. ՄԾ	94.30	133.70	1.42	569.62
42. ԱՄՆ	21841.6	23861.1	1.09	438.91
43. Ուրուգվայ	26.00	41.70	1.60	644.36

A-ն՝ բանակ (տոննա), B-ն՝ գունալի խազար դրաք, C-ն՝ ՍՄՆ դրաք, D-ն ՀՀ դրամ: Աղբյուրը: ՀՀ արտաքին առևտուրը 2008-2012 թվականներին (ըստ արտաքին տնտեսական գործումության արտաճրային ամփանցամյա 2-նիշ դասակարգման), փճակագրական ժողովածու, եր., ՀՀ ԱԿԾ, 2009-2013, էջ՝ 217-218, 215-216, 152, 211-212:

## Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման միջին գները 2008-2012 թթ., (դրամ)

	Չափի միավորը	2008 թ.	2009 թ.	2010 թ.	2011 թ.	2012 թ.	2012 թ.-2008 թ. նկատմամբ %	
1.	Ցորեն	կգ	120.5	95.5	120.9	138.9	158.2	131.3
2.	Գարի	- ,,	104.0	94.9	121.5	145.0	159.0	152.9
3.	Լոբի	- ,,	693.6	676.9	922.2	1020.3	941.5	135.7
4.	Կարտոֆիլ	- ,,	100.7	70.9	130.0	183.9	111.9	111.1
5.	Կաղամբ	- ,,	65.6	66.4	70.8	83.5	80.0	122.0
6.	Գազար	- ,,	88.9	79.0	115.4	200.2	194.6	218.9
7.	Գլուխ տխ	- ,,	99.7	123.6	209.3	190.0	170.6	171.1
8.	Խնձոր	- ,,	157.6	141.5	290.1	257.8	218.8	138.8
9.	Տանձ	- ,,	282.8	209.0	503.8	307.3	332.4	117.5
10.	Խաղող	- ,,	168.7	131.2	205.7	185.5	181.1	107.4
11.	Ընկույզ (կեղևով)	- ,,	1 208.0	1 003.7	1 032.4	1 087.1	1 302.8	107.8
12.	Մեղր	- ,,	2 663.3	2 701.2	2 851.3	2 931.8	3 175.4	119.2
13.	Միս տավարի	- ,,	1 263.0	1 289.7	1 815.1	2 187.2	2 199.2	174.1
14.	Միս ոչխարի	- ,,	1 504.6	1 530.3	2 282.4	2 633.2	2 599.5	172.8
15.	Միս խոզի	- ,,	2 169.6	1 858.4	1 900.6	2 406.7	2 795.2	128.8
16.	Պանիր (տուրտ)	- ,,	968.0	941.5	1 054.7	1 525.1	1 490.6	154.0
17.	Կաթ	լ	114.7	104.8	113.6	162.6	143.1	124.8
18.	Մածուճ	- ,,	194.3	193.8	202.1	231.7	242.4	124.8
19.	Չու	հատ	48.3	47.9	46.5	55.4	53.6	111.0
20.	Միսնյա խտտեր	կգ	32.8	29.2	26.8	33.6	41.7	127.1
21.	Բազմանյա խտտեր	- ,,	39.7	35.7	44.2	45.7	62.8	158.2

Աղյուսակը կազմել է հաշվարկվել է «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2012 թ. հունվար-դեկտեմբերին, 2013, էջ 76-ի տվյալների հիման վրա:

**Աղյուսակ 8**

**Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը ըստ ապրանքային ենթակայաների 2012 թվականին<sup>1</sup>**


h/h	ապրանքատեսակ	Քանակը, տոննա	Գումարը, հազ. դոլար	1 կգ. արժեքը	
				դոլարով	դրամով
	Ընդամենը	830414.7	1380199.2	4054535.2	4261232.7
	որից				
1.	խոշոր եղջերավոր անասուններ (կենդանի)	-	-	175.7	1077.9
2.	խոզեր (կենդանի)	-	-	212.2	640.2
3.	Ոչխարներ, այծեր (կենդանի)	2486.5	8550.4	-	-
4.	Ընտանի թռչուններ (կենդանի)	10.9	173.5	123.3	1957.1
5.	Այլ կենդանիներ (կենդանի)	2.1	46.2	6.9	419.1
6.	խոշոր եղջերավոր անասունների միս, թարմ կամ պաղեցրած	-	-	0.4	8.2
7.	Տավարի միս (սառեցրած)	-	-	8335.4	20347.6
8.	խոզի միս, թարմ, պաղեցրած կամ սառեցրած	-	-	8261.5	19999.7
9.	Ոչխարի կամ այծի միս, թարմ, պաղեցրած կամ սառեցրած	-	-	0.4	5.1
10.	Սառնեղբ (տավարի, խոզի, ոչխարի)	17	19	1386.1	1633.7
11.	Ընտանի թռչունների միս և ենթասնդամները դասակարգված 0105 ապրանքային դիրքում	16	46	33634.7	41935.0
12.	Այլ մսեղեն և մսից ենթասնդամները՝ թարմ, պաղեցրած կամ սառեցրած	-	-	0.2	1.6
13.	խոզի և ընտանի թռչնի ճարպ (չիպեցրած)	0	0	3585.5	4752.2
1.	Չորացրած, ծխեխաչած, ապխտած միս և մսամթերք	3.4	29.9	1.5	13.6
2.	Չուկ (կենդանի)	16.9	194.0	0.5	27.3
3.	Չուկ (թարմ կամ պաղեցրած), բացառությամբ ձկան տուկին և 0304 ապրանքային դիրքի ձկների այլ միսը	1662.8	13047.5	40.3	350.6

<sup>1</sup> Սղբերով: «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2012 թվականին (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 4-6իչ դասակարգման), եր., ՀՀ ԱՎԾ, 2013, էջ 7-8:


Արդուսակ 8-ի շարունակությունը

4.	Զուկ (սառեցրած), բացառությամբ ձկան սուկին և 0304 ապրանքային դիրքի ձկների այլ միսը	164.4	1212.1	2660.0	3448.7
5.	Զկան սուկի և այլ ձկնամիս (ներառյալ աղացած), բարձր, պաղեցրած կան սառեցրած	0.0	0.7	78.5	153.1
6.	Չողացրած, ծխեխաշած, ապխտած ձուկ	5.6	49.8	36.0	183.9
7.	Կաղամորթեր	1.7	18.1	8.0	58.3
8.	Կաթ և սերուցք, չխտացրած և շաքար կան այլ քաղցրացնող նյութեր չավելացրած	-	-	386.6	528.6
9.	Խտացրած կաթ և սերուցք, կաթի փոշի, շաքար կան քաղցրացնող այլ նյութեր ավելացրած	154.3	414.5	2679.9	7136.0
10.	Թան, կտրված կաթ և կաթնասեր, յոգուրտ, կեֆիր և այլ խմորման ենթարկված կան բովեցրած կաթ ու կաթնասեր	7.5	14.7	946.1	1684.3
11.	Կաթնային շիճուկ	-	-	457.7	682.1
12.	Կարագ և այլ կաթնային յուղեր	0.1	0.3	4907.4	21403.7
13.	Պանիր, կաթնաշոռ	903.6	2335.4	1056.2	5433.9
14.	Թռչնի ձու կճեպով	1.7	2.9	27.1	162.0
15.	Թռչնի ձու առանց կճեպի, ձկի փոշի	-	-	18.1	134.8
16.	Մեղր բնական	5.0	32.2	16.8	63.3


Գծապատկեր 1




Գծապատկեր 2




Գծապատկեր 3




Գծապատկեր 4




Գծապատկեր 5




Գծապատկեր 6




Գծապատկեր 7




Գծապատկեր 8




Գծապատկեր 9



Գծապատկեր 10



Գծապատկեր 11



**ԱՄՓՈՓՈՒՄ**

Հողվածը նվիրված է պարենային ապրանքների ՀՀ գործող գնային քաղաքականությանը, ինչպես նաև արտադրության և արտահանման հիմնախնդիրների բացահայտմանը: Հողվածում հեղինակները իրականացնում են ՀՀ և ԼՂՀ պարենային շուկայի տարբեր ապրանքների գների և արտաքին առևտրի վիճակագրական ցուցանիշների վերլուծություն, որի հիման վրա ներկայացնում են առաջարկներ դրանց բարելավման համար: Հեղինակները ներկայացնում են ՀՀ և ԼՂՀ առկա պարենային անվտանգության հիմնախնդիրները, մասնավորապես պարենի առանձին տեսակների օրինակով արտադրվող ինչպես նաև ներմուծվող պարենի որակական ցուցանիշների բացահայտման տեսանկյունից:

**АННОТАЦИЯ**

**А. МАРКОСЯН, Г. САРГСЯН, Л. ХАЧАТРЯН - О ПРОБЕЛМАХ ЗАЩИТЫ И РАЗВИТИИ КОНКУРЕНЦИИ В РА (НА ПРИМЕРЕ ОПРЕДЕЛЕННЫХ ТИПОВ ПРОДОВОЛЬСТВЕННЫХ ТОВАРОВ)**

Статья посвящена существующей продовольственной политике ценообразования так же как раскрытию проблем производства и экспорта пищи. Авторы анализируют статистические индексы цен разных продовольственных товаров а так же индексы рынка внешней торговли по продовольствию и указывают пути для улучшение вышеуказанного. В статье авторы представляют существующие проблемы продовольственной безопасности в РА и в НКР, особенно в примере определенных типов произведенных продуктов питания так же как импорта продовольствий в случае качественных индикаторов перспективы воздействия.

**SUMMARY****A. MARKOSYAN, H. SARGSYAN, L. KHACHATRYAN – ISSUES CONCERNING INTERNAL MARKET DEFENSE AND COMPETITION DEVELOPMENT IN RA (BY THE EXAMPLE OF SPECIFIC KINDS OF FOOD)**

The article touches upon the present price policy of food products in RA as well as the problems connected with production and export. The authors have analyzed statistic indices of different goods prices and international trade putting forward suggestions to improve them. They also refer to food security issues particularly revealing qualitative indices of specific grocery either produced locally or imported.

ԲԱԺԻՆ IV

ԿԻՐԱՌԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ



**ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

*տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան  
էլ. փոստ՝ sargsyan.yasu@gmail.com*

**ԱՇՈՏ ՍԱՐԿՈՍՅԱՆ**

*ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության պետի տեղակալ  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
էլ. փոստ՝ ashotmarkos@rambler.ru*

**ԼԵՎՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

*տնտեսագիտության թեկնածու  
«ՀԱՅԲԻՉՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ առաջատար մասնագետ  
էլ. փոստ՝ levonkhach@yahoo.com*

**ՊԱՐԵՆԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ  
ԳՆԱԳՈՅԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ**

Պարենային անվտանգության ապահովման հիմնախնդիրը և դրա լուծման ուղիների որոնումները ներկայիս աշխարհի զարգացման համաձուլորակային հիմնախնդիրներից մեկն է: Սեծ թվով պետություններ կանգնած են բնակչության սննդի ապահովման խնդրի առջև, քանի որ պարենային ռեսուրսները սուղ են, իսկ մոլորակի բնակչության թվաքանակը (2013 թ. երրորդ եռամսյակին՝ 7.165 մլրդ մարդ) տարեցտարի աճում է: Ստեղծված նման իրավիճակը պարենի համաշխարհային շուկայում հանգեցրել է ինչպես գյուղատնտեսական հումքի, այնպես էլ վերամշակված սննդամթերքի էական ավելացման, դրանով իսկ ավելի սրելով պարենամթերքի պաշարների առաջարկի և դրա նկատմամբ բնակչության գնողունակ պահանջարկի միջև եղած անհավասարությունը: Արդյունքում ավելացել է բնակչության պարենային զամբյուղի արժեքը, ինչպես նաև ընդհանուր ծախսերի կառուցվածքում սննդամթերքի ծեռքերման համար կատարված ծախսերի տեսակարար կշիռը:

Պարենի պաշարների առաջարկի նվազումը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, որոնց շարքում հիմնական տեղ են զբաղեցնում հետևյալ գործոնները: Նախ, գյուղատնտեսական հումքի մի մասը, որը նախկինում վերամշակվում էր սննդամթերքի , այժմ աշխարհի բազմաթիվ երկրների կողմից (հիմնականում զարգացած) օգտագործվում է վառելիք ստանալու նպատակով: Երկրորդ, տարերային աղետների պատճառով նվազել են ցանքատարածությունների տարածքների մակերեսները: Դրանք նվազում են նաև հողատարածքների ոչ ճիշտ մշակման, ագրոտեխնիկական պայմանները չպահպանելու, հողի էրոզիայի, աղակալման և մարդածին այլ հանգամանքներով: Բնակչության գնողունակ պահանջարկն ավելացել է հիմնականում հարավարևելյան Ասիայի երկրներում և հիմնականում Չինաստանում, որտեղ բնակչության եկամուտների ավելացման հաշվին շուրջ 1 մլրդ մարդ ցածր եկամուտների խմբից տեղափոխվել է միջին եկամուտների խումբ, ինչն էլ զգալիորեն ավելացրել է սննդամթերքի նկատմամբ

բնակչության պահանջարկը: Հատկապես, 2007 թ. սկիզբ առած համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո, որի հետևանքով զգալիորեն նվազեց համաշխարհային տնտեսության տնտեսական աճի տեմպը, երբ նկատվեց արտադրության լճացում, որը բերեց բնակչության իրական եկամուտների էական նվազման, ավելացան աղքատ բնակչության ինչպես բացարձակ, այնպես էլ հարաբերական ցուցանիշները: Ավելին, աշխարհի շատ երկրներում ավելացավ սովյալների թվաքանակը: Այս և վերևում նշված մյուս գործոնները երկրների կառավարություններից պահանջում են ստեղծված իրավիճակում հանդես բերել համապատասխան նախաձեռնություններ և իրականացնել միջոցառումներ, ինչպես նաև մշակել առանձին ծրագրեր ինչպես արգրոարդյունաբերական համալիրի զարգացման, այնպես էլ բնակչության գնողունակության բարձրացման համար: Հասկանալի է նաև, որ այդպիսի ծրագրերը կարող են տարբերվել գյուղատնտեսական հումք և պարենամթերք արտադրող և դրանք ներմուծող երկրների համար: Մասնավորապես, գյուղատնտեսական հումք վերամշակող երկրների կառավարությունները պարտավոր են հաշվի առնել ոչ միայն իրենց երկրների վերամշակող արդյունաբերական կարողությունների և ընդլայնման հնարավորությունները, այլ նաև բնակչության եկամուտների փոփոխության միտումները և պարենային զամբյուղի կառուցվածքը:

Հատկանշական է ընդգծել, որ ինչպես զարգացած այնպես էլ զարգացող երկրներում առկա է պարենի անվտանգության ապահովման հիմնախնդիրը, քանի որ, ունենալով զարգացած տնտեսություն և գյուղատնտեսություն, նույնիսկ զարգացած երկրներում սովյալ խնդիրը վերջնականապես լուծված չէ, ուստի պակասող պարենի ռեսուրսների բացը այդ երկրները ապահովում են այլ երկրներից պարենի ներմուծմամբ, որը սովյալ երկրի պարենային անվտանգության ժամանակավոր միջոցառում է: Պարենի սակավությունը հատկապես նկատելի է բնակչության մեծ թվաքանակ ունեցող երկրներում, ինչպիսիք են օրինակ, Չինաստանը (բնակչությունը՝ 1,353,821,000 մարդ), Հնդկաստանը (բնակչությունը՝ 1,210,193,422 մարդ), Աֆրիկյան պետությունները (բնակչությունը՝ 1,032,532,934 մարդ) և մի շարք տարածաշրջաններ, որտեղ տնտեսության արտադրական ներուժը և ռեսուրսները կենտրոնացված են հիմնականում մայրաքաղաքում և հարակից քաղաքներում: Այստեղ հատկանշական է մահացությունների բարձր թիվը, որը սովի և համաճարակային հիվանդությունների պատճառով տարեցտարի ահագնացող տեմպերով ավելանում է: Հատկապես ցածր կենսամակարդակ ունեցող երկրները մեծ աջակցություն են ստանում ԱՄՆ և ԵՄ կողմից ինչպես ֆինանսական, այնպես էլ պարենի և բնափրային տեսքով, որի արդյունքում այդ երկրներում փոքր-ինչ թուլանում է սոցիալական լարվածությունը: Որպես պարենի բաղադրիչ առաջնահերթ է համարվում ցորենի, եգիպտացորենի, բրինձի և կարտոֆիլի առկայությունը, որոնք լուծում են նվազագույն հացի խնդիրը: Հատկապես վերջին տարիներին բազմաթիվ երկրներում օրհասական է դարձել բնակչությանը նվազագույն ֆիզիոլոգիական նորմերին համապատասխան սննդով ապահովելը: Նկատենք նաև, որ կերային բազայի առկայության դեպքում բնակչությանը հնարավոր է պահովել նաև մսով, ինչը զլխավորապես զարգացած երկրների բնակչության սննդակարգում կարևոր մաս է կազմում:

Հաշվի առնելով վերոգրյալը նախ ներկայացնենք համաշխարհային շուկայում պարենի հիմնական տեսակների՝ ցորենի, շաքարավազի, կաթի, կենդանա-

կան յուղի (կարագ), բուսական յուղի և այլ պարենի արտադրվող և արտահանող աշխարհի խոշոր 20 երկրների վիճակագրական ցուցանիշները և դրանց հիման վրա նաև բացահայտենք այն օրինաչափությունները և գնագոյացման միտումները, որոնք առկա են պարենամթերքի շուկայում և որոնց միջոցով ձևավորվում է պարենի առաջարկը, ինչպես տվյալ երկրում, այնպես էլ համաշխարհային շուկայում: Նշված օրինաչափությունների և գնային միտումների վերլուծությունը հնարավորություն է տալիս համեմատություններ կատարել և զուգահեռներ անցկացնել համաշխարհային և ազգային տնտեսություններում սպառվող պարենամթերքի և գների միջև: Հատկապես կարևոր է անցումային տնտեսությամբ, այդ թվում ՀՀ, երկրներում, որտեղ ամբողջ գործիքակազմով չեն գործում շուկայական մեխանիզմները և որոնցում տեղ գտած թերությունները շատ հաճախ փորձում են բացատրել համաշխարհային տնտեսության «շեղումներով» և թերություններով, բայց բնավ երբեք ազգային տնտեսությունների պետական կարգավորման բացթողումներով:

### **1. Հիմնական պարենամթերքի արտադրության ու արտահանման վիճակը աշխարհի ամենաշատ արտադրող և արտահանող 20 երկրներում և դրանց գները**

Ուսումնասիրելով ցորենի արտադրության և արտահանման վերաբերյալ ներկայացված վիճակագրական ցուցանիշները (տես աղյուսակներ 1 և 2) կարելի է եզրակացնել, որ ցորենի արտադրության հիմնական դերակատարները խոշոր երկրներն են՝ Չինաստանը, Հնդկաստանը, ԱՄՆ-ը, ՌԴ-ն ինչպես նաև ԵՄ անդամ երկրները: Հատկանշական է այն, որ ցորեն արտադրող և արտահանող շատ երկրներ միմյանցից խիստ տարբերվում են: Նման համագամանքը բացատրվում է նրանով, որ ամենից շատ ցորեն արտադրող երկրների արտադրանքի խոշոր ծավալները սպառվում են հենց այդ երկրների ներսում, այդ իսկ պատճառով էլ վերջիններս չեն կարող ապահովել խոշոր ծավալների հասնող ցորենի արտահանում: Բավական է նշել, որ ամենաշատ ցորեն արտադրող 20 երկրների ցանկից Չինաստանը, Հնդկաստանը, Թուրքիան, Իրանը, Եգիպտոսը, Լեհաստանը, Իսպանիան և Իտալիան տեղ չեն գտել ամենաշատ ցորեն արտահանող 20 երկրների ցանկում: Իսկ վերջինիս կազմում ընդգրկված Բուլղարիան, Չեխիան, Հունգարիան, Ուրուգվայը, Դանիան և Մեքսիկան ընդգրկված չեն ամենաշատ ցորեն արտադրող 20 երկրների ցանկում: Իսկ աղյուսակ 2-ում ընդգրկված վերը թվարկված երկրներում քանի որ գոյություն ունի ցորենի պաշարների որոշակի «ավելցուկ», ուստի այդ երկրները ցորենի մի մասը արտահանում են: Բնականաբար, նույնը չի կարելի ասել ԱՄՆ-ի մասին, քանի որ վերջինս համդիսանում է և խոշոր արտադրող, և արտահանող: Այսպես, 2011 թ. ցորենի արտադրության ծավալով առաջին տեղը զբաղեցրած Չինաստանի բաժինը վերը բերված 20 երկրների ընդհանուր ցուցանիշների մեջ կազմել է 19.5% (117.4 մլն տ), Հնդկաստանի բաժինը կազմել է համապատասխանաբար՝ 14.4% (86.9 մլն տ), ՌԴ-ի բաժինը՝ 9.3% (56.2 մլն տ), ԱՄՆ-ի բաժինը՝ 9.04% (54.4 մլն տ), Ֆրանսիայի բաժինը՝ 6.3% (38.0 մլն տ): Ցորենի արտահանման 2011 թ. ցուցանիշների համաձայն առաջին տեղն է զբաղեցնում ԱՄՆ-ը, որը ցորենի արտադրության շուրջ 60.3% արտահա-

նել է այլ երկրներ, որը ընդհանուր արտահանման ծավալում կազմել է 23.4%, արժեքով՝ 25.2% (32.8 մլն տոննա, 11.1 մլրդ ԱՄՆ դոլար): Վերջինիս հետևում են համապատասխանաբար Ֆրանսիան՝ 53% կամ արտահանման 14.5% 15.3% (20.3 մլն տոննա, 6.7 մլրդ ԱՄՆ դոլար), Ավստրալիան՝ 64%, ընդհանուր արտահանման 12.6% և 12.9% (17.6 մլն տոննա, 5.7 մլրդ ԱՄՆ դոլար), Կանադան՝ 65%-ը, ընդհանուր արտահանման 11.6% և 13% (16.3 մլն տոննա, 5.7 մլրդ ԱՄՆ դոլար), ՌԴ-ը՝ 27%, ընդհանուր արտահանման 10.8% և 8.3% (15 մլն տոննա, 3.6 մլրդ ԱՄՆ դոլար): Հատկանշական է այն, որ ցորեն արտահանող շատ երկրներ արտահանման հետ մեկտեղ նաև ներառում են տվյալ ապրանքատեսակից՝ ցորենի տեսականին բազմազանեցնելու (դիվերսիֆիկացնելու) նպատակով: 2011 թ. ցորենի ամենաշատ արտահանում ունեցող 20 երկրներում ցորենի 1 տոննայի արժեքը ամենացածրը եղել է Ղազախստանում՝ 210.76 ԱՄՆ դոլար, իսկ ամենաբարձրը՝ Մեքսիկայում՝ 357.10 ԱՄՆ դոլար:

### Աղյուսակ 1

#### Ցորենի արտադրությունը 2011 թ.

Ջ/հ	Երկիր	Քանակ (տոննա)
1	Չինաստան	117410000
2	Հնդկաստան	86874000
3	ՌԴ	56239990
4	ԱՄՆ	54413310
5	Ֆրանսիա	38021000
6	Ավստրալիա	27410076
7	Կանադա	25261400
8	Պակիստան	25213800
9	Գերմանիա	22800000
10	Ղազախստան	22732000
11	Ուկրաինա	22323600
12	Թուրքիա	21800000
13	ՄԹ	15257000
14	Արգենտինա	14093728
15	Իրան	13500000
16	Լեհաստան	9339200
17	Եգիպտոս	8407126
18	Ռումինիա	7131590
19	Իսպանիա	6876657
20	Իտալիա	6622004
	Ընդամենը	601726481

Աղյուսակներ 1-28-ի աղբյուրը՝ ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության պաշտոնական կայքէջ՝ [www.faostat.fao.org](http://www.faostat.fao.org)

## Աղյուսակ 2

## Ցորենի արտահանումը և 1 տոննայի արժեքը 2011 թ.

Հ/հ	Երկիր	Քանակ (տոննա)	Արժեքը (1000 ԱՄՆ դոլար)	ԱՄՆ դոլար/ տոննա
1	ԱՄՆ	32789893	11134659	339.58
2	Ֆրանսիա	20345934	6738299	331.19
3	Ավստրալիա	17657181	5709036	323.33
4	Կանադա	16335086	5742111	351.52
5	ՌԴ	15185953	3671176	241.75
6	Արգենտինա	8411136	2508660	298.25
7	Գերմանիա	6168890	1981035	321.13
8	Ուկրաինա	4097309	1070292	261.22
9	Ղազախստան	2891482	609419	210.76
10	Բրազիլիա	2350720	699110	297.40
11	ՍԹ	2287100	663553	290.13
12	Բուլղարիա	2137202	577065	270.01
13	Պակիստան	2087422	674424	323.09
14	Ռումինիա	1568735	430919	274.69
15	Չեխիա	1414881	427956	302.47
16	Հունգարիա	1246456	369476	296.42
17	Ուրուգվայ	899616	258266	287.08
18	Դանիա	886924	260121	293.28
19	Մեքսիկա	835908	298502	357.10
20	Լեհաստան	825288	274213	332.26
	Ընդամենը	140423116	44098292	314.04

Զվերամշակված շաքարավազի 20 հիմնական երկրների կողմից արտադրության և արտահանման 2011 թ. ցուցանիշների համաձայն (տե՛ս աղյուսակ 3 և 4) շաքարավազի խոշոր արտադրողներից Բրազիլիան, Հնդկաստանը, Թայլանդը, ԱՄՆ-ը, Մեքսիկան և մի շարք այլ երկրներ միաժամանակ հանդիսանում են նաև խոշոր արտահանողներ, որոնք ներքին շուկան արտադրությամբ ապահովման հետ մեկտեղ շաքարավազը արտահանում են այլ երկրներ: Ինչպես նկատվում է աղյուսակ 3-ից Բրազիլիայի արտադրանքի 53.6%-ը արտահանել է այլ երկրներ, որն ընդհանուր արտահանման ծավալում կազմել է 62.6%-ը, արժեքով՝ 63%-ը (20 մլն տոննա, 11.5 մլրդ ԱՄՆ դոլար), որին հաջորդում են Թայլանդը՝ համապատասխանաբար՝ 42.7%, ընդհանուր արտահանման 12.8%-ը և 11.4%-ը (4.1 մլն տոննա, 2.1 մլրդ ԱՄՆ դոլար), Ավստրալիան՝ 46.7%-ը, ընդհանուր արտահանման 5.3%-ը և 5.4%-ը (1.7 մլն տոննա, 987 մլն ԱՄՆ դոլար), Գվատեմալան՝ 54.9%-ը, ընդհանուր արտահանման 4%-ը և 3.5%-ը (1.3 մլն տոննա, 649 մլն ԱՄՆ դոլար), Հնդկաստանը՝ 3.3%-ը, ընդհանուր արտահանման 2.7%-ը և 3.3%-ը (876 հազար տոննա, 607 մլն ԱՄՆ դոլար): Նշենք նաև, որ չմշակված շաքարավազ արտադրող խոշոր 20 երկրներից Չինաստանը (12.5 մլն տ.) չի ընդգրկվել 20 խոշոր արտահանող երկրների ցանկում: Միաժամանակ չվերամշակված շաքարավազի 1 տոննայի արտահանման գների համաձայն 1 տոննայի ամենաբարձր գինը եղել է Մեքսիկայում՝ 794.6 ԱՄՆ դոլար, իսկ ամենացածրը՝ ԱՄՆ-ում՝ 367.81 ԱՄՆ դոլար:

*Աղյուսակ 3***Չվերամշակված շաքարավազի արտադրությունը 2011 թ.**

Հ/հ	Երկիր	Քանակ (տոննա)
1	Բրազիլիա	37582000
2	Հնդկաստան	26574000
3	Չինաստան	12519000
4	Թայլանդ	9640000
5	ԱՄՆ	7722000
6	Մեքսիկա	5380000
7	Գերմանիա	4772452
8	ՌԴ	4753113
9	Ֆրանսիա	4709000
10	Պակիստան	4320000
11	Ավստրալիա	3662000
12	Ֆիլիպիններ	2597499
13	Թուրքիա	2391000
14	Գվատեմալա	2346108
15	Կոլումբիա	2339988
16	Ուկրաինա	2326910
17	Արգենտինա	2094273
18	Լեհաստան	2052000
19	Եգիպտոս	2024000
20	Հվ. Աֆրիկա	1981186
	Ընդամենը	141786529

*Աղյուսակ 4***Չվերամշակված շաքարավազի արտահանումը և  
1 տոննայի արժեքը 2011 թ.**

Հ/հ	Երկիր	Քանակ (տոննա)	Արժեքը (1000 ԱՄՆ դոլար)	ԱՄՆ դոլար/ տոննա
1	Բրազիլիա	20152914	11548786	573.06
2	Թայլանդ	4122701	2093998	507.92
3	Ավստրալիա	1711488	987118	576.76
4	Գվատեմալա	1289815	648669	502.92
5	Հնդկաստան	876554	607471	693.02
6	Կուբա	639074	373941	585.13
7	Ֆիլիպիններ	580735	354853	611.04
8	Մեքսիկա	286813	227902	794.60
9	Էլ Սալվադոր	276118	132558	480.08
10	Մալավի	267982	191947	716.27
11	Սվազիլենդ	264841	135157	510.33
12	Չամբիա	257730	145686	565.27

13	Գուանա	253021	155675	615.27
14	Դոմինիկ. Հ.	240566	175811	730.82
15	ԱՄՆ	212470	78148	367.81
16	Նիկարագուա	186137	109701	589.36
17	Ֆրանսիա	153148	94131	614.64
18	Մոզամբիկ	151130	98897	654.38
19	Հվ. Աֆրիկա	126849	97036	764.97
20	Ֆիջի	122542	70889	578.49
	Ընդամենը	32172628	18328374	569.69

Ռաֆինացված շաքարավազի 20 հիմնական խոշոր արտադրող և արտահանող երկրների 2011թ. վիճակագրական ցուցանիշների համաձայն (տե՛ս աղյուսակ 5 և 6) արտադրող և արտահանող երկրները խիստ տարբերվում են: Այսպես, արտադրության ծավալներով առաջին հնգյակում են ԱՄԷ-ն՝ 1.26 մլն տոննա (տեսակարար կշիռը ընդհանուրում՝ 10.6%), Իտալիան՝ 1.2 մլն տոննա (տեսակարար կշիռը ընդհանուրում՝ 10.2%), ԱՄՆ-ը՝ 894 հազար տոննա (տեսակարար կշիռը ընդհանուրում՝ 7.5%), Սուդանը՝ 854 հազար տոննա (տեսակարար կշիռը ընդհանուրում՝ 7.2%) և Բելգիան՝ 690 հազար տոննա (տեսակարար կշիռը ընդհանուրում՝ 5.8%): Համաձայն աղյուսակ 6-ի ցուցանիշների ռաֆինացված շաքարավազի արտահանման ծավալներով առաջին հնգյակում են Բրազիլիան՝ որը ընդհանուր արտահանման ծավալում կազմել է 27.8%, արժեքով՝ 25%-ը (5.2 մլն տ., 3.39 մլրդ ԱՄՆ դոլար արժեքով), երկրորդ տեղում է Թայլանդը՝ համապատասխանաբար՝ 12.8%-ը և 11.4%-ը (2.3 մլն տ., 1.54 մլրդ ԱՄՆ դոլար արժեքով), Ֆրանսիան՝ 11.6%-ը և 12.3%-ը (2.2 մլն տ., 1.67 մլրդ ԱՄՆ դոլար արժեքով), Հնդկաստանը՝ 9.8%-ը և 9.6%-ը (1.8 մլն տ., 1.31 մլրդ ԱՄՆ դոլար արժեքով) և Մեքսիկան՝ 6% և 5.6%-ը (1.1 մլն տ., 983 մլն ԱՄՆ դոլար արժեքով): Միաժամանակ նշենք, որ 1 տոննա ռաֆինացված շաքարավազի արտահանման ամենաբարձրը եզիպտոսում է՝ 931.78 ԱՄՆ դոլար, ամենից ցածրը՝ Թայլանդում՝ 642.69 ԱՄՆ դոլար:

*Աղյուսակ 5*

**Ռաֆինացված շաքարավազի արտադրությունը**

Հ/հ	Երկիր	Քանակ (տոննա)
1	ԱՄԷ	1264795
2	Իտալիա	1209483
3	ԱՄՆ	893891
4	Սուդան	854064
5	Բելգիա	690119
6	Մեքսիկա	625873
7	Եմեն	604453
8	Ուզբեկստան	596200
9	Պաղեստին	509203
10	Շրի Լանկա	508397
11	Սիրիա	487850

12	Իսպանիա	459878
13	Նիզերիա	451524
14	Գերմանիա	427814
15	Սինգապուր	420343
16	Չիլի	415044
17	Ինդոնեզիա	405544
18	Կամբոջա	404091
19	Հնդկաստան	321163
20	Ֆրանսիա	307050
	Ընդամենը	11856779

*Աղյուսակ 6*

**Ռաֆինացված շաքարավազի արտահանումը և  
1 տոննայի արժեքը 2011թ.**

Հ/հ	Երկիր	Քանակ (տոննա)	Արժեքը (1000 ԱՄՆ դոլար)	ԱՄՆ դոլար/ տոննա
1	Բրազիլիա	5206237	3392877	651.69
2	Թայլանդ	2397970	1541151	642.69
3	Ֆրանսիա	2177163	1674653	769.19
4	Հնդկաստան	1842467	1310000	711.00
5	Մեքսիկա	1123175	983860	875.96
6	Գերմանիա	941254	763162	810.79
7	Կոլումբիա	729100	512031	702.28
8	Բելգիա	546429	425316	778.36
9	ԱՄԷ	511498	343301	671.17
10	Բելառուս	389462	313914	806.02
11	Կորեայի Հ.	360110	262060	727.72
12	Ալժիր	333373	265236	795.61
13	Մավրիկիոս	317988	218907	688.41
14	Լեհաստան	289280	268393	927.80
15	Մալազիա	279000	207872	745.06
16	Եգիպտոս	277176	258291	931.87
17	Սաուդյան Արաբիա	276890	216389	781.50
18	ՄԹ	258733	208861	807.25
19	Նիդերլանդներ	246053	225162	915.10
20	Դանիա	232264	184359	793.75
	Ընդամենը	18735622	13575795	724.60

Ուսումնասիրելով 2011թ. 20 հիմնական երկրների կողմից կաթի արտադրության և կաթի փոշու արտահանման ցուցանիշները (տես աղյուսակ 7-8) կարելի է նկատել, որ արտադրող և արտահանող երկրները խիստ տարբերվում են, բացառությամբ՝ ԱՄՆ-ի, Գերմանիայի, Նոր Զելանդիայի, Ֆրանսիայի, Ավստրալիայի, Նիդերլանդների և Լեհաստանի: Այսպես՝ կաթի արտադրության ծավալներով առաջին տեղում է ԱՄՆ-ը, որի արտադրության ծավալը ընդհանուր ծավալում կազմել է 19.7%-ը, որը կաթի փոշու ընդհանուր արտահանման ծավալում (1կգ կաթի փոշին համարժեք է 8 լիտր կաթի) կազմել է (89 մլն տոննա), երկրորդ տեղում է

Չնդկաստանը՝ համապատասխանաբար՝ 12.7%-ը (57.4 մլն տոննա), երրորդ տեղում՝ Չինաստանը՝ 8%-ը (36.6 մլն տոննա), Բրազիլիան՝ 7%-ը (32 մլն տոննա) և ՌԴ-ը՝ 7%-ը (31.4 մլն տոննա): Կաթի փոշու 2011 թ. արտահանման ցուցանիշների համաձայն 20 խոշոր արտահանող երկրների ցանկում առաջին տեղում է ԱՄՆ-ը, որի արտահանման ծավալը կազմել է ընդհանուր արտադրության 12.6%-ը, որը ընդհանուր արտահանման ծավալում կազմել է 22%-ը, արժեքով՝ 21.8%-ը (436 հազար տոննա, 1.45 մլրդ ԱՄՆ դոլար), վերջինիս հաջորդում է Գերմանիան՝ համապատասխանաբար՝ 25.7%-ը, ընդհանուր արտահանման 14.8%-ը և 14.2%-ը (295 հազար տոննա, 946 մլն ԱՄՆ դոլար), Նոր Զելանդիան՝ 35.3%-ը, ընդհանուր արտահանման 12.4%-ը և 12.9%-ը (246 հազար տոննա, 859 հազար ԱՄՆ դոլար), Ֆրանսիան՝ 22%-ը, ընդհանուր արտահանման 10.3 %-ը և 10.3%-ը (206 հազար տոննա, 687 մլն ԱՄՆ դոլար): Այուսակում 6-ում հինգերորդ տեղը զբաղեցնողը՝ Բելգիան ընդգրկված չէ 20 խոշոր կաթ արտադրող երկրների ցանկում, սակայն վերջինիս ընդհանուր արտահանման ծավալում կազմել է 8%-ը, իսկ արժեքով՝ 8.3%-ը (161 հազար տոննա, 549 մլն ԱՄՆ դոլար): Կաթի փոշու 2011 թ. արտահանման գները ամենից բարձրը եղել է Բելառուսում՝ 3892.26 ԱՄՆ դոլար և ամենից ցածրը եղել է Սինգապուրում՝ 3083.65 ԱՄՆ դոլար, սակայն հարկ է նշել, որ միայն Սաուդյան Արաբիայում է կաթի փոշու գինը եղել 1617.36 ԱՄՆ դոլար:

### Աղյուսակ 7

#### Կաթի արտադրությունը 2011 թ.

Չ/հ	Երկիր	Քանակ (տոննա)
1	ԱՄՆ	89015235
2	Չնդկաստան	57400000
3	Չինաստան	36578000
4	Բրազիլիա	32096214
5	ՌԴ	31385732
6	Գերմանիա	30301359
7	Ֆրանսիա	24361094.9
8	Նոր Զելանդիա	17893848
9	ՄԹ	13849000
10	Թուրքիա	13802428
11	Պակիստան	12906000
12	Լեհաստան	12413796
13	Նիդերլանդներ	11627312
14	Արգենտինա	11206000
15	Ռեկրահինա	10804000
16	Մեքսիկա	10724288
17	Իտալիա	10479053
18	Ավստրալիա	9101000
19	Կանադա	8400000
20	Ճապոնիա	7474309
	Ընդամենը	451818669

## Աղյուսակ 8

## Կարփի փոշու արտահանումը և 1 տոննայի արժեքը 2011 թ.

Հ/հ	Երկիր	Քանակ (տոննա)	Արժեքը (1000 ԱՄՆ դոլար)	ԱՄՆ դոլար/ տոննա
1	ԱՄՆ	436233	1451942	3328.36
2	Գերմանիա	294757	945849	3208.91
3	Նոր Զելանդիա	246113	858869	3489.73
4	Ֆրանսիա	205547	687090	3342.74
5	Բելգիա	161671	548706	3393.97
6	Ավստրալիա	126697	436404	3444.47
7	Նիդերլանդներ	115688	400646	3463.16
8	Լեհաստան	83412	273578	3279.84
9	Իռլանդիա	60849	206717	3397.21
10	Բելառուս	55181	214779	3892.26
11	Սաուդյան Արաբիա	25042	40502	1617.36
12	ՄԹ	24070	79099	3286.21
13	Ուկրաինա	22274	68938	3095.00
14	Ղանիա	21259	74552	3506.84
15	Շվեդիա	20973	71447	3406.62
16	Ուրուգվայ	19280	64208	3330.29
17	Արգենտինա	18556	68659	3700.10
18	Լիտվա	17147	54874	3200.21
19	Սինգապուր	16999	52419	3083.65
20	Իսպանիա	14905	49496	3320.76
	Ընդամենը	1986653	6648774	3346.72

Կարագի արտադրության և արտահանման 20 հիմնական երկրների 2011 թ. վիճակագրական ցուցանիշների (տե՛ս աղյուսակ 9-10) ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կարագ արտադրող խոշոր երկրները միևնույն ժամանակ համդիսանում են նաև խոշոր արտահանողներ: Կարագի արտադրության ծավալներով առաջին հնգյակում են ԱՄՆ-ը՝ որի բաժինը արտադրության ընդհանուր ծավալում կազմել է շուրջ 21% (821 հազար տոննա), այնուհետև Գերմանիան՝ համապատասխանաբար՝ 11%-ը (425 հազար տոննա), Ֆրանսիան՝ 11%-ը (424 հազար տոննա), Նոր Զելանդիան՝ 10%-ը (385 հազար տոննա) և ՌԴ-ը՝ 5.5%-ը (220 հազար տոննա): Կարագի արտահանման ցուցանիշներով առաջին տեղում է Նոր Զելանդիան, որը արտահանել է արտադրված կարագի 73%-ը, որը ընդհանուր արտահանման ծավալում կազմել է 21.4%-ը, արժեքով՝ 20%-ը (280 հազար տոննա, 1.4 մլրդ ԱՄՆ դոլար): Հարկ է նշել, որ կարագի արտահանման ծավալներով երկրորդ և երրորդ տեղերը զբաղեցնող Նիդերլանդները և Իռլանդիան արտահանման ծավալները գերազանցել են արտադրության ծավալներից համապատասխանաբար 40%-ով, որի արտահանման ծավալը կազմել է ընդհանուր արտահանման ծավալի 13.5%-ը, արժեքով՝ 14.6%-ը և 20%-ով, որի արտահանման ծավալը կազմել է ընդհանուրի 12.5%-ը, արժեքով՝ 11.5%-ը, ինչը պայմանավորված է տվյալ երկրների կողմից կարագի ներմուծման և հետագայում արտահանման հանգամանքով: Միաժամանակ նշենք, որ Նիդերլանդները 2011 թ. ներկրել է 53 հազար տոննա կարագ, որը ամենայն հավանականությամբ հետագայում արտա-

հանվել է: Նույնը կարելի է ասել նաև Իռլանդիայի մասին, քանի, որ 2011թ. ներկրվել է 6604 տոննա կարագ: Արտահանման ծավալներով չորրորդ տեղում է Բելգիան, որի արտահանման ծավալը կազմել է ընդհանուրի 8.7%-ը, արժեքով՝ 9.8%-ը (114 հազար տոննա, 687 մլն ԱՄՆ դոլար), որն ընդգրկված չէ կարագ արտադրող խոշոր 20 երկրների ցանկում: Հինգերորդ տեղում է Գերմանիան, որը արտահանել է արտադրության 25%-ը (107.7 հազար տոննա, 614 մլն ԱՄՆ դոլար արժեքով) որի արտահանման ծավալը կազմել է ընդհանուրի 8.2%-ը, արժեքով՝ 8.8%-ը: Կարագի արտահանման գների համաձայն 1 տոննայի ամենաբարձր գինը եղել է Դանիայում՝ 6364.44 ԱՄՆ դոլար, իսկ ամենացածրը՝ Ուրուգվայում՝ 3811.99 ԱՄՆ դոլար:

*Աղյուսակ 9*

**Կարագի արտադրությունը 2011 թ.**

Ք/հ	Երկիր	Քանակ (տոննա)
1	ԱՄՆ	820898
2	Գերմանիա	424911
3	Ֆրանսիա	424390
4	Նոր Զելանդիա	385000
5	ՌԴ	220000
6	Լեհաստան	177500
7	Իրանի Իսլամ Հանրապ.	171646.2
8	Թուրքիա	151827
9	Իռլանդիա	145900
10	ՄԹ	130000
11	Նիդերլանդներ	125475
12	Ավստրալիա	122486
13	Բելառուս	104207
14	Իտալիա	101925
15	Չինաստան	98009
16	Բրազիլիա	92600
17	Կանադա	86560
18	Ուկրաինա	76683
19	Ճապոնիա	62845
20	Կորեայի Հանրապ.	59006.5
	Ընդամենը	3981868.70

## Աղյուսակ 10

## Կարագի արտահանումը և 1 տոննայի արժեքը 2011 թ.

Հ/հ	Երկիր	Քանակ (տոննա)	Արժեքը (1000 ԱՄՆ դոլար)	ԱՄՆ դոլար/ տոննա
1	Նոր Ջեռանդիա	280409	1397339	4983.22
2	Նիդերլանդներ	175924	1020067	5798.34
3	Իռլանդիա	163781	807011	4927.38
4	Բելգիա	114297	687159	6012.05
5	Գերմանիա	107695	614075	5701.98
6	Ֆրանսիա	78457	462677	5897.20
7	Բելառուս	61878	289184	4673.45
8	ԱՄՆ	53517	234167	4375.56
9	Ղանիա	50749	322989	6364.44
10	Ավստրալիա	36723	189024	5147.29
11	ՄԹ	35737	205327	5745.50
12	Լեհաստան	33668	184239	5472.23
13	Ֆինլանդիա	24700	137684	5574.25
14	Իսպանիա	22071	130636	5918.90
15	Արգենտինա	19345	85564	4423.06
16	Պորտուգալիա	13114	65662	5007.02
17	Ուրուգվայ	11340	43228	3811.99
18	Շվեյցարիա	9517	42957	4513.71
19	Իտալիա	9452	50747	5368.92
20	Չեխիա	5159	26566	5149.45
	Ընդամենը	1307533	6996302	5350.77

Պանրի արտադրության և արտահանման 20 հիմնական երկրների 2011 թ. վիճակագրական ցուցանիշների (տե՛ս աղյուսակ 11-12) ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բացառությամբ Բելգիայի և Լիտվայի մնացած մյուս երկրները միաժամանակ ընդգրկված են և՛ 20 խոշոր արտադրողների և՛ արտահանողների ցանկում: Այսպես, արտադրության ծավալներով առաջին տեղում է ԱՄՆ-ը, որի արտադրության ծավալը կազմել է ընդհանուր ծավալի 34%-ը (4.8 մլն տոննա), Ֆրանսիան՝ համապատասխանաբար 12.4%-ը (1.8 մլն տոննա), Գերմանիան՝ 8.9%-ը (1.3 մլն տոննա), Իտալիան՝ 7.4%-ը (1 մլն տոննա) և Նիդերլանդները՝ 5.2%-ը (7.5 մլն տոննա):

Պանրի արտահանման 2011 թ. ցուցանիշների համաձայն առաջին տեղում է Գերմանիան, որի արտահանման ծավալները կազմել են արտադրության 86.5%, որը ընդհանուր արտահանման ծավալում կազմել է 21.4%, արժեքով՝ 20% (1 մլն տոննա, 4.7 մլրդ ԱՄՆ դոլար արժեքով), երկրորդ տեղում են Նիդերլանդները համապատասխանաբար՝ 91%, ընդհանուր արտահանման 14.4% և 15.7% (678 հազար տոննա, 3.7 մլրդ ԱՄՆ դոլար), Ֆրանսիան՝ 33.5%, ընդհանուր արտահանման 12.6% և 14.4% (594 հազար տոննա, 3.4 մլրդ ԱՄՆ դոլար), Իտալիան՝ 24.3%, ընդհանուր արտահանման 5.5% և 10.4% (258 հազար տոննա, 2.5 մլրդ ԱՄՆ դոլար), Ղանիան՝ 93.5%, ընդհանուր արտահանման 5.5% և 6% (257

հազար տոննա, 1.4 մլրդ ԱՄՆ դոլար): Պանրի արտահանման 2011 թ. գները ամենաբարձրը եղել են Շվեյցարիայում՝ 9957.78 ԱՄՆ դոլար, իսկ ամենացածրը՝ Սաուդյան Արաբիայում՝ 1297.43 ԱՄՆ դոլար տոննա:

*Աղյուսակ 11*

**Պանրի արտադրությունը 2011 թ.**

Հ/հ	Երկիր	Քանակ (տոննա)
1	ԱՄՆ	4805863
2	Ֆրանսիա	1772932
3	Գերմանիա	1268700
4	Իտալիա	1058845
5	Նիդերլանդներ	745984
6	Լեհաստան	650000
7	Արգենտինա	580300
8	ՌԴ	432000
9	ՄԹ	390000
10	Կանադա	378520
11	Ավստրալիա	338680
12	Նոր Զելանդիա	311200
13	Եգիպտոս	285000
14	Դանիա	274800
15	Շվեյցարիա	181674
16	Իռլանդիա	179900
17	Ուկրաինա	177897
18	Ավստրիա	155000
19	Վենեսուելա	150000
20	Բելառուս	148464
	Ընդամենը	14285759

*Աղյուսակ 12*

**Պանրի արտահանումը և 1 տոննայի արժեքը 2011 թ.**

Հ/հ	Երկիր	Քանակ (տոննա)	Արժեքը (1000 ԱՄՆ դոլար)	ԱՄՆ դոլար/ տոննա
1	Գերմանիա	1048632	4695330	4477.58
2	Նիդերլանդներ	678410	3733226	5502.91
3	Ֆրանսիա	594149	3411098	5741.15
4	Իտալիա	258149	2476259	9592.36
5	Դանիա	256961	1435742	5587.39
6	Սաուդյան Արաբիա	252493	327592	1297.43
7	ԱՄՆ	225933	965955	4275.40
8	Նոր Զելանդիա	174383	730734	4190.40
9	Իռլանդիա	166511	781748	4694.87
10	Ավստրալիա	132898	601223	4523.94

11	Բելառուս	122140	557310	4562.88
12	Եգիպտոս	117662	256632	2181.10
13	Լեհաստան	116196	521902	4491.57
14	Բելգիա	113033	623854	5519.22
15	ՄԹ	103776	546760	5268.66
16	Ուկրաինա	80263	444996	5544.22
17	Ավստրիա	73402	447458	6095.99
18	Լիտվա	65207	323602	4962.69
19	Արգենտինա	60626	286444	4724.77
20	Շվեյցարիա	57742	574982	9957.78
	Ընդամենը	4698566	23742847	5053.21

Բուսական յուղի արտադրության և արտահանման 20 հիմնական երկրների 2011 թ. ցուցանիշների համաձայն (տես աղյուսակ 13-14) հիմնական խոշոր արտադրողները միաժամանակ հանդիսանում են նաև խոշոր արտահանողներ: Այսպես, բուսական յուղի արտադրության ծավալներով խոշոր 20 երկրների շարքում առաջին տեղը զբաղեցնում է Ուկրաինան, որի արտադրության ծավալը կազմել է ընդհանուր արտադրության ծավալի 25.6%-ը (3.2 մլն տոննա), երկրորդ տեղում է ՌԴ-ը՝ համապատասխանաբար՝ 20.5%-ը (2.5 մլն տոննա), Արգենտինան՝ 12%-ը (1.5 մլն տոննա), Թուրքիան՝ 6.5%-ը (806 հազար տոննա) և Չինաստանը՝ 4.7%-ը (580 հազար տոննա):

Բուսական յուղի արտահանման 2011 թ. ցուցանիշների համաձայն առաջին տեղում է Ուկրաինան, որի արտահանման ծավալը կազմել է արտադրության 84.5%-ը, որը ընդհանուր արտահանման ծավալում կազմել է 41%-ը, արժեքով՝ 36.2%-ը (2.7 մլն տոննա, 3.1 մլրդ ԱՄՆ դոլար), երկրորդ տեղում է Արգենտինան համապատասխանաբար՝ 60.3%-ը, ընդհանուր արտահանման 13.7%-ը և 13.2% (898 հազար տոննա, 1.1 մլրդ ԱՄՆ դոլար), ՌԴ-ը՝ 19.4%-ը, ընդհանուր արտահանման 7.5%-ը և 7%-ը (493 հազար տոննա, 609 մլն ԱՄՆ դոլար), Ֆրանսիան՝ 85.7%-ը, ընդհանուր արտահանման 6.8%-ը և 7.8%-ը (443 հազար տոննա, 676 մլն ԱՄՆ դոլար) և միայն Նիդերլանդներն է, որը բուսական յուղ է արտահանել արտադրությունից 2 անգամ ավելի կամ ընդհանուր արտահանման 13.7%-ը և 13.2%-ը (426 հազար տոննա, 629 մլն ԱՄՆ դոլար), որը պայմանավորված է 2011 թ. 330923 տոննա ներկրման ծավալներով, որոնք հետագայում արտահանվել են: Բուսական յուղի 1 տոննայի արտահանման գների 2011 թ. ցուցանիշների համաձայն ամենաբարձր գինը եղել է Բելգիայում՝ 1758.2 ԱՄՆ դոլար, իսկ ամենացածրը՝ Մոլդովայում 1160.29 ԱՄՆ դոլար: Նշենք, որ բուսական յուղի գները տատանվել են 1160-1650 ԱՄՆ դոլարի միջակայքում (բացառությամբ Եգիպտոսի՝ 2670.39 ԱՄՆ դոլար):

*Աղյուսակ 13*

**Բուսական յուղի արտադրությունը 2011 թ.**

Յ/հ	Երկիր	Քանակ (տոննա)
1	Ուկրաինա	3177361
2	ՌԴ	2545395
3	Արգենտինա	1489700
4	Թուրքիա	806312
5	Չինաստան	579110.25
6	Ֆրանսիա	516635
7	Իսպանիա	376771
8	Ռումինիա	360040
9	Գերմանիա	357248
10	Հունգարիա	328500
11	Հրվ. Աֆրիկա	277200
12	ԱՄՆ	223621
13	Նիդերլանդներ	221700
14	Պակիստան	184656.13
15	Իտալիա	171000
16	Մյանմար	170636
17	Ղազախստան	166652
18	Բուլղարիա	165474
19	Հնդկաստան	165000
20	Սերբիա	146513
	Ընդամենը	12429524.38

*Աղյուսակ 14*

**Բուսական յուղի արտահանումը և 1 տոննայի արժեքը 2011 թ.**

Յ/հ	Երկիր	Քանակ (տոննա)	Արժեքը (1000 ԱՄՆ դոլար)	ԱՄՆ դոլար/ տոննա
1	Ուկրաինա	2683342	3146065	1172.44
2	Արգենտինա	898115	1144665	1274.52
3	ՌԴ	492886	608894	1235.36
4	Ֆրանսիա	442857	675501	1525.33
5	Նիդերլանդներ	425583	629404	1478.92
6	Հունգարիա	268911	410205	1525.43
7	Թուրքիա	205092	338753	1651.71
8	Ռումինիա	193792	266200	1373.64
9	Բելգիա	136098	239288	1758.20
10	Գերմանիա	121465	195506	1609.57
11	Բուլղարիա	120184	150963	1256.10
12	Իսպանիա	87889	142896	1625.87
13	Սերբիա	80004	114041	1425.44
14	Ավստրիա	67961	112135	1649.99

15	Մուղդվա	59724	69297	1160.29
16	Եգիպտոս	57890	154589	2670.39
17	Բոլիվիա	54265	66852	1231.95
18	Հվ. Աֆրիկա	53197	87046	1636.30
19	Օման	48902	76465	1563.64
20	Մալազիա	42891	66129	1541.792
	Ընդամենը	6541048	8694894	1329.2815

Ուսումնասիրելով մարզարհինի 20 հիմնական երկրների կողմից արտադրության և արտահանման 2011 թ. վիճակագրական ցուցանիշները կարելի է փաստել, որ հիմնական խոշոր արտադրողները միաժամանակ համդիսանում են նաև խոշոր արտահանողներ (տես՝ աղյուսակ 15-16): Այսպես, մարզարհինի արտադրության ծավալներով 2011 թ. առաջին տեղն է զբաղեցնում ԱՄՆ-ը, որի արտադրության ծավալը կազմել է ընդհանուր արտադրության ծավալի 32.7%-ը (3.9 մլն. տոննա), որին հետևում են Պակիստանը համապատասխանաբար՝ 13.2% (1.5 մլն. տոննա), Հնդկաստանը՝ 6.9% (827 հազար տոննա), Գերմանիան՝ 5.6% (673 հազար տոննա), Թուրքիան՝ 5.2% (623 հազար տոննա): Մարզարհինի արտահանման ցուցանիշներով առաջին տեղում է Ինդոնեզիան, որի արտահանման ծավալը ընդհանուր արտահանման ծավալում կազմել է 23.3%, իսկ արժեքով՝ 16.2% (371 հազար տոննա, 400 մլն ԱՄՆ դոլար), սակայն այս երկիրը ընդգրկված չէ խոշոր արտադրող 20 երկրների ցուցակում: Արտահանման ծավալներով երկրորդ տեղում է Բելգիան, որն արտահանել է արտադրության 73.4%, ինչը կազմել է ընդհանուր արտահանման ծավալի 17.9%, արժեքով՝ 19.2% (285 հազար տոննա, 474 մլն ԱՄՆ դոլար), որին հաջորդում է Նիդերլանդները համապատասխանաբար՝ 75.4%, ընդհանուր արտահանման 12% և 14.8% (197 հազար տոննա, 366 մլն ԱՄՆ դոլար), Գերմանիան՝ 16.5%, ընդհանուր արտահանման 7% և 7.9% (111 հազար տոննա, 195 մլն ԱՄՆ դոլար), Լեհաստանը՝ 27%, ընդհանուր արտահանման 6.8% և 6.5% (108 հազար տոննա, 162 մլն ԱՄՆ դոլար): Մարզարհինի 1 տոննայի արտահանման գների 2011 թ. ցուցանիշների համաձայն ամենից բարձր գինը եղել է ՄԹ-ում 2201.75 ԱՄՆ դոլար, իսկ ամենաէժեքը՝ Ինդոնեզիայում՝ 1078.32 ԱՄՆ դոլար:

### Աղյուսակ 15

#### Մարզարհինի արտադրությունը 2011 թ.

Ղ/հ	Երկիր	Քանակ (տոննա)
1	ԱՄՆ	3900000
2	Պակիստան	1570000
3	Հնդկաստան	827000
4	Գերմանիա	673022
5	Թուրքիա	623000
6	Բրազիլիա	513600
7	Մալազիա	482000
8	ՈՂ	432540
9	Լեհաստան	400129

10	Բելգիա	388200
11	Ճապոնիա	361900
12	Ուկրաինա	358814
13	ՄԹ	327000
14	Նիդերլանդներ	262000
15	Քենիա	200880
16	Դանիա	144100
17	Իտալիա	122000
18	Շվեդիա	117000
19	Կանադա	113000
20	Թունիս	102231.6
	Ընդամենը	11918416.6

*Աղյուսակ 16*

**Մարզարհմի արտահանումը և 1 տոննայի արժեքը 2011 թ.**

Հ/հ	Երկիր	Քանակ (տոննա)	Արժեքը (1000 ԱՄՆ դոլար)	ԱՄՆ դոլար/ տոննա
1	Ինդոնեզիա	370870	399917	1078.32
2	Բելգիա	284922	473757	1662.76
3	Նիդերլանդներ	197497	366425	1855.34
4	Գերմանիա	110867	194977	1758.66
5	Լեհաստան	107937	161975	1500.64
6	Դանիա	83304	173223	2079.41
7	Թուրքիա	78976	113255	1434.04
8	Իսպանիա	42426	76961	1814.01
9	Իտալիա	37717	61508	1630.78
10	Ուկրաինա	35926	45419	1264.24
11	Բրազիլիա	35918	64583	1798.07
12	ՄԹ	31792	69998	2201.75
13	Ռումինիա	26927	39680	1473.61
14	Շվեդիա	26894	56407	2097.38
15	ԱՄՆ	26826	36899	1375.49
16	Թունիս	20242	39051	1929.21
17	Հունաստան	19849	29528	1487.63
18	Մալազիա	18648	27556	1477.69
19	ՌԴ	17018	22054	1295.92
20	Քենիա	16786	20496	1221.02
	Ընդամենը	1591342	2473669	1554.45

Մակարոնի արտադրության և արտահանման 20 հիմնական երկրների 2011 թ. ցուցանիշների (տե՛ս աղյուսակ 17-18) համաձայն հիմնական խոշոր արտադրողները միաժամանակ հանդիսանում են մաս խոշոր արտահանողներ: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մակարոնի արտադրության ծավալներով առաջին տեղն է զբաղեցնում Իտալիան, որի մակարոնեղենի արտադրության

ծավալը ընդհանուր արտադրության ծավալի մեջ կազմում է 26.4%-ը (3.3 մլն տոննա), որին հաջորդում են համապատասխանաբար՝ ԱՄՆ-ը՝ 15.9%-ը (2 մլն տոննա), Բրազիլիան՝ 10.3%-ը (1.3 մլն տոննա), ՌԴ-ը՝ 8.6% (1 մլն տոննա), Թուրքիան՝ 6.8% (851 հազար տոննա): Մակարոնի արտահանման ծավալներով առաջին տեղն է զբաղեցնում Իտալիան, որը արտահանել է արտադրության 53.3%, որը ընդհանուր արտահանման ծավալում կազմել է 54%, արժեքով՝ 53.3% (1.8 մլն տոննա, 2.5 մլրդ ԱՄՆ դոլար), որին հաջորդում են համապատասխանաբար՝ Թուրքիան՝ 39.9%-ը, ընդհանուր արտահանման 10.4% և 5.1% (3.4 մլն տոննա, 240 մլն ԱՄՆ դոլար), ԱՄՆ-ը՝ 6.4%, ընդհանուր արտահանման 3.9% և 4.1% (128 հազար տոննա, 194 մլն ԱՄՆ դոլար), չորրորդ տեղում է Բելգիան, որը ընդգրկված չէ մակարոն արտադրող խոշոր 20 երկրների ցանկում և որի արտահանման ծավալները կազմել են մակարոնի ընդհանուր արտահանման 3.9% և 6% (127 հազար տոննա, 194 մլն տոննա), այնուհետև Մեքսիկան, որը արտահանել է արտադրության ծավալի 32.6%, ընդհանուր արտահանման 3.3%-ը և 1.3% (108 հազար տոննա, 63 մլն ԱՄՆ դոլար): Մակարոնի 1 տոննայի արտահանման 2011 թ. ամենաբարձր գինը եղել է Կանադայում՝ 3214.34 ԱՄՆ դոլար, իսկ ամենացածրը՝ Մեքսիկայում՝ 586.88 ԱՄՆ դոլար:

*Աղյուսակ 17*

**Մակարոնի արտադրությունը 2011 թ. (տոննա)**

Յ/հ	Երկիր	Քանակ (տոննա)
1	Իտալիա	3316728
2	ԱՄՆ	2000000
3	Բրազիլիա	1300000
4	ՌԴ	1083000
5	Թուրքիա	851830
6	Իրան	560000
7	Եգիպտոս	400000
8	Վենեսուելա	341554
9	Գերմանիա	334179
10	Մեքսիկա	330000
11	Պերու	297162
12	Արգենտինա	324437
13	Իսպանիա	252208
14	Ֆրանսիա	241933
15	Թունիս	183000
16	Կանադա	170000
17	Լեհաստան	160000
18	Չինաստան	145000
19	Ճապոնիա	144500
20	Կոլումբիա	131270
	Ընդամենը	12566801

*Աղբյուրը՝ աղյուսակը կազմվել է հեղինակների կողմից հիմք ընդունելով մակարոնի Միջազգային Կազմակերպության պաշտոնական տարեգրքի ցուցանիշները: Ավելի մանրամասն տես՝ <http://www.internationalpasta.org/resources/extra/file/IPO%20AGM%202012/IPOreport2012fin2stat.pdf>*

## Աղյուսակ 18

## Մակարոնի արտահանումը և 1 տոննայի արժեքը 2011 թ.

Դ/հ	Երկիր	Քանակ (տոննա)	Արժեքը (1000 ԱՄՆ դոլար)	ԱՄՆ դոլար/ տոննա
1	Իտալիա	1767119	2518465	1425.18
2	Թուրքիա	339575	240194	707.34
3	ԱՄՆ	127789	193826	1516.77
4	Բելգիա	126624	282307	2229.49
5	Սեքսիկա	107657	63181	586.88
6	Չինաստան	102126	224566	2198.91
7	Թայլանդ	71972	153755	2136.32
8	Ֆրանսիա	62486	152710	2443.90
9	Գերմանիա	62430	142918	2289.25
10	Եգիպտոս	59024	88221	1494.66
11	Պերու	58472	48892	836.16
12	Կանադա	50061	160913	3214.34
13	Կոդ դիվուար	49850	30868	619.23
14	Արգենտինա	48588	39600	815.02
15	Չունաստան	46647	48604	1041.95
16	Իսպանիա	45497	71884	1579.96
17	Ավստրիա	45124	136693	3029.27
18	Չեխիա	41642	35943	863.14
19	Իրան	32875	27991	851.45
20	Չրվ. Կորեա	28258	66175	2341.82
	Ընդամենը	3273816	4727706	1444.10

Աղյուսակը կազմվել է հեղինակների կողմից հիմք ընդունելով Միջազգային Կազմակերպության պաշտոնական տարեգրքի ցուցանիշները: Ավելի մանրամասն տես՝  
<http://www.internationalpastas.org/resources/extra/file/IPO%20AGM%202012/IPOreport2012fin2stat.pdf>

Ուսումնասիրելով 20 հիմնական երկրների կողմից բրինձի արտադրության և արտահանման 2011թ. ցուցանիշները (տե՛ս աղյուսակ 19-20) կարելի է փաստել, որ հիմնական երկրները միաժամանակ հանդիսանում են թե՛ արտադրողներ և թե՛ արտահանողներ: Այսպես, բրնձի արտադրության 2011 թ. ցուցանիշների համաձայն առաջին տեղն է զբաղեցնում Չինաստանը, որի ծավալը ընդհանուր արտադրության ծավալի մեջ կազմում է 29.8% (202.6 մլն. տոննա): Այնուհետև, Չնդկաստանը համապատասխանաբար՝ 23.2% (157.9 մլն. տոննա), Ինդոնեզիան՝ 9.7% (65.7 մլն. տոննա), որին հաջորդում է Բանգլադեշը՝ 7.4% (50.6 մլն. տոննա), Վիետնամը՝ 6.2% (42.4 մլն. տոննա) և Թայլանդը՝ 5.1% (34.6 մլն. տոննա): Արտահանման ծավալներով առաջին տեղում է Թայլանդը, որը արտահանել է արտադրության ծավալի 30.9%, որը ընդհանուր արտահանման ծավալում կազմել է 30.4%-ը, արժեքով՝ 29.3% (10.7 մլն տոննա, 6.5 մլրդ ԱՄՆ դոլար), որին հաջորդում են Վիետնամը համապատասխանաբար՝ 16.8, ընդհանուր արտահանման 20.3% և 16.5% (7.1 մլն տոննա, 3.6 մլրդ ԱՄՆ դոլար), Չնդկաստանը՝ 3.2%, ընդհանուր արտահանման 14.3% և 18.4% (5 մլն տոննա,

4.08 մլրդ ԱՄՆ դոլար), Պակիստանը՝ 37.1%, ընդհանուր արտահանման 9.7% և 9.3% (3.4 մլն տոննա, 2.06 մլրդ ԱՄՆ դոլար), ԱՄՆ-ը՝ 37.7%, ընդհանուր արտահանման 9% և 9.4% (3.2 մլն տոննա, 2.09 մլրդ ԱՄՆ դոլար): Բրիճժի արտահանման 1 տոննայի գինը 2011 թ. ամենաբարձրը եղել է Նիդերլանդներում՝ 1194.62 ԱՄՆ դոլար, իսկ ամենացածրը Պարագվայում՝ 333.43 ԱՄՆ դոլար:

*Աղյուսակ 19***Բրիճժի արտադրությունը 2011 թ.**

Ձ/հ	Երկիր	Քանակ (տոննա)
1	Չինաստան	202667173
2	Հնդկաստան	157900000
3	Ինդոնեզիա	65740946
4	Բանգլադեշ	50627000
5	Վիետնամ	42398345.7
6	Թայլանդ	34588355
7	Մյանմար	29009894
8	Ֆիլիպիններ	16684062
9	Բրազիլիա	13476994
10	Պակիստան	9194000
11	Կամբոջա	8779000
12	Ճապոնիա	8402000
13	ԱՄՆ	8388780
14	Կորեա	6304000
15	Եգիպտոս	5675027
16	Նիգերիա	4567320
17	Նեպալ	4460278
18	Մադագասկար	4300185
19	Շրի Լանկա	3874800
20	Լաո	3065760
	Ընդամենը	680103920

*Աղյուսակ 20***Բրիճժի արտահանումը և 1 տոննայի արժեքը 2011 թ.**

Ձ/հ	Երկիր	Քանակ (տոննա)	Արժեքը (1000 ԱՄՆ դոլար)	ԱՄՆ դոլար/ տոննա
1	Թայլանդ	10671194	6507473	609.82
2	Վիետնամ	7112000	3656807	514.17
3	Հնդկաստան	5004280	4081406	815.58
4	Պակիստան	3412499	2062019	604.25
5	ԱՄՆ	3165575	2087302	659.38
6	Բրազիլիա	1291598	612754	474.42
7	Արգենտինա	729411	361811	496.03
8	Իտալիա	722136	685888	949.80
9	Ուրուգվայ	572226	291100	508.72

10	Չինաստան	489104	426959	872.94
11	Ավստրալիա	277992	243306	875.23
12	Բելգիա	272482	292161	1072.22
13	Իսպանիա	246382	191582	777.58
14	Պարագվայ	225938	75334	333.43
15	Մյանմար	224239	98452	439.05
16	Կամբոջա	174045	107917	620.05
17	Նիդերլանդներ	138113	164993	1194.62
18	ՌԴ	132124	87026	658.67
19	Հունաստան	124947	87136	697.38
20	Սենեգալ	108998	52516	481.81
	Ընդամենը	35095283	22173942	631.82

Սուրճի արտադրության և արտահանման 20 հիմնական երկրների 2011 թ. ցուցանիշների (տե՛ս աղյուսակ 19-20) համաձայն այդ երկրները միաժամանակ հանդիսանում են թե՛ արտադրողներ և թե՛ արտահանողներ: Սուրճի արտադրության ծավալներով 2011 թ. առաջին տեղն է զբաղեցնում Բրազիլիան, որի արտադրության ծավալը ընդհանուր արտադրության ծավալի մեջ կազմում է 34.6% (2.7 մլն. տոննա), այնուհետև Վիետնամը՝ համապատասխանաբար՝ 16.4% (1.27 մլն. տոննա), Ինդոնեզիան՝ 8.1% (634 հազար տոննա), Կոլումբիան՝ 6.0%-ը (468.5 հազար տոննա) և Եթովպիան՝ 4.8% (370.6 հազար տոննա): Սուրճի արտահանման ծավալներով առաջին տեղն է զբաղեցնում Բրազիլիան, որն արտահանել է արտադրության 66.3%, ինչը ընդհանուր արտահանման ծավալում կազմել է 28.2%, արժեքով՝ 31% (1.8 մլն տոննա, 8 մլրդ ԱՄՆ դոլար), որին հաջորդում է համապատասխանաբար Վիետնամը՝ 98.4%, ընդհանուր արտահանման 19.8% և 10.7% (1.3 մլն տոննա, 2.7 մլրդ ԱՄՆ դոլար), Կոլումբիան՝ 92.6%, ընդհանուր արտահանման 6.8% և 10.2% (434 հազար տոննա, 2.6 մլրդ ԱՄՆ դոլար), չորրորդ տեղում Գերմանիան է, որը սակայն ընդգրկված չէ սուրճի խոշոր արտադրող 20 երկրների ցանկում և, որի արտահանման ծավալները կազմել են ընդհանուր արտահանման ծավալի 5.5%, արժեքի՝ 6.1% (348.5 հազար տոննա, 1.6 մլրդ ԱՄՆ դոլար), այնուհետև Ինդոնեզիան, որի արտահանման ծավալը կազմել է սուրճի արտադրության ծավալի 54.6%, ընդհանուր արտահանման 5.4% և 4% (346 հազար տոննա, 1 մլրդ ԱՄՆ դոլար): Սուրճի արտահանման 1 տոննայի գների 2011 թ. ցուցանիշների համաձայն ամենաբարձրը եղել է Քենիայում՝ 6488.25 ԱՄՆ դոլար, իսկ ամենացածրը Վիետնամում՝ 2190.72 ԱՄՆ դոլար:

*Աղյուսակ 21*

**Սուրճի արտադրությունը 2011թ.**

Ք/հ	Երկիր	Քանակ (տոննա)
1	Բրազիլիա	2700440
2	Վիետնամ	1276505.9
3	Ինդոնեզիա	634000

4	Կոլումբիա	468540
5	Եթովպիա	370569
6	Պերու	331547
7	Հնդկաստան	302000
8	Հոնդուրաս	282361
9	Գվատեմալա	242839
10	Մեքսիկա	237056
11	Ուգանդա	191371
12	Նիկարագուա	103664
13	Փղոսկրե Ափ	103000
14	Կոստա Րիկա	100083
15	Ֆիլիպիններ	88526
16	Պապուա Նոր Գվինեա	84870
17	Էլ Սալվադոր	82095
18	Կամերուն	70000
19	Վենեսուելա	69138
20	Տանզանիա	60575
	Ընդամենը	7799179.9

*Աղյուսակ 22***Սուրճի արտահանումը և 1 տոննայի արժեքը 2011 թ.**

Ք/հ	Երկիր	Քանակ (տոննա)	Արժեքը (1000 ԱՄՆ դոլար)	ԱՄՆ դոլար/ տոննա
1	Բրազիլիա	1791207	8000416	4466.49
2	Վիետնամ	1256400	2752423	2190.72
3	Ինդոնեզիա	433646	2623212	6049.20
4	Կոլումբիա	348584	1579457	4531.07
5	Եթովպիա	346092	1034815	2990.00
6	Պերու	293638	1580372	5382.04
7	Հնդկաստան	261775	1062969	4060.62
8	Հոնդուրաս	252928	1358438	5370.85
9	Գվատեմալա	231087	677680	2932.58
10	Մեքսիկա	205244	942160	4590.44
11	Ուգանդա	185775	460327	2477.87
12	Նիկարագուա	159135	844555	5307.16
13	Փղոսկրե Ափ	112452	666445	5926.48
14	Կոստա Րիկա	102768	463528	4510.43
15	Ֆիլիպիններ	87190	429299	4923.72
16	Պապուա Նոր Գվինեա	76400	375867	4919.73
17	Էլ Սալվադոր	63913	205903	3221.61
18	Կամերուն	63776	317745	4982.20
19	Վենեսուելա	41276	267809	6488.25
20	Տանզանիա	38708	140043	3617.93
	Ընդամենը	6351994	25783463	4059.11

Ուսումնասիրելով 20 հիմնական երկրների կողմից տավարի մսի արտադրության և արտահանման 2011թ. ցուցանիշները (տե՛ս աղյուսակ 23-24) կարելի է փաստել, որ այդ երկրները խիստ տարբերվում են, ինչը պայմանավորված է նրանով, որ տավարի մսի արտադրողների արտադրանքը հիմնականում սպառվում է այդ երկրների ներսում: Այսպես, տավարի մսի արտադրության ծավալներով 2011 թ. առաջին տեղն է զբաղեցնում է ԱՄՆ-ը, որի արտադրության ծավալը ընդհանուր ծավալի մեջ կազմում է 25.4% (12 մլն տոննա), որին հաջորդում է Բրազիլիան համապատասխանաբար` 19.2% (9 մլն տոննա), Չինաստանը` 13.1% (6.2 մլն տոննա), Արգենտինան` 5.1% (2.4 մլն տոննա) և Ավստրալիան` 4.5% (2.1 մլն տոննա): Տավարի մսի արտահանման 2011 թ. ցուցանիշներով առաջին տեղում է Գերմանիան, որը արտահանել է արտադրության 21.1%, որը ընդհանուր արտահանման ծավալում կազմել է 14.8%, արժեքով` 15.5% (247 հազար տոննա, 1.2 մլրդ ԱՄՆ դոլար), որին հաջորդում է Ֆրանսիան համապատասխանաբար` 13.4%, ընդհանուր արտահանման 12.6% և 14% (210 հազար տոննա, 1.1 մլրդ ԱՄՆ դոլար), երրորդ և չորրորդ տեղերը զբաղեցրած երկրները` Լեհաստանը և Նիդերլանդները ընդգրկված չեն տավարի մսի խոշոր 20 արտադրող երկրների ցանկում: Այսպես Լեհաստանի տավարի մսի արտահանման ծավալը ընդհանուր ծավալում կազմել է 11.5%, արժեքի` 9.4% (191 հազար տոննա, 756 մլն ԱՄՆ դոլար), իսկ Նիդերլանդները համապատասխանաբար` 9.8% և 12.6% (164 հազար տոննա, 1 մլրդ ԱՄՆ դոլար): Արտահանման ծավալով հինգերորդ տեղում է ԱՄՆ-ը, որը արտահանել է արտադրության 0.9%, ինչը ընդհանուր արտահանման ծավալում կազմել է 6.7%, արժեքի` 7.3% (111 հազար տոննա, 593 մլն ԱՄՆ դոլար): Տավարի մսի արտահանման 1 տոննայի գների 2011 թ. ցուցանիշների համաձայն ամենաբարձրը եղել է Նիդերլանդներում` 6196.65 ԱՄՆ դոլար, իսկ ամենաէժանը` Պակիստանում` 2835.7 ԱՄՆ դոլար:

*Աղյուսակ 23*

**Տավարի մսի արտադրությունը 2011 թ.**

Դ/հ	Երկիր	Քանակ (տոննա)
1	ԱՄՆ	11983308
2	Բրազիլիա	9030000
3	Չինաստան	6182155
4	Արգենտինա	2419700
5	Ավստրալիա	2109875
6	Սեքսիկա	1803932
7	ՌԴ	1625469
8	Ֆրանսիա	1566453
9	Գերմանիա	1170376
10	Կանադա	1154240
11	Հնդկաստան	1086500
12	Իտալիա	1000374
13	ՄԹ	936000
14	Հրվ. Աֆրիկա	828609
15	Կոլումբիա	820985

16	Ուզբեկստան	763000
17	Պաղեստին	761000
18	Թուրքիա	644906
19	Նոր Զելանդիա	622676
20	Իսպանիա	604113
	Ընդամենը	47113671.3

*Աղյուսակ 24***Տավարի մսի արտահանումը և 1 տոննայի արժեքը 2011թ.**

Հ/հ	Երկիր	Քանակ (տոննա)	Արժեքը (1000 ԱՄՆ դոլար)	ԱՄՆ դոլար/ տոննա
1	Գերմանիա	247113	1252605	5068.96
2	Ֆրանսիա	210124	1127740	5367.02
3	Լեհաստան	191107	755813	3954.92
4	Նիդերլանդներ	164164	1017267	6196.65
5	ԱՄՆ	111047	592649	5336.92
6	Բելառուս	96586	476970	4938.29
7	Իսպանիա	80971	369948	4568.90
8	Բելգիա	78948	469115	5942.08
9	ՄԹ	72572	257185	3543.86
10	Ավստրիա	54307	273799	5041.69
11	Ավստրալիա	53166	203726	3831.89
12	Իտալիա	52567	202374	3849.83
13	Իռլանդիա	51277	255157	4976.05
14	Դանիա	45336	186239	4107.97
15	Ուրուգվայ	35859	114953	3205.69
16	Կանադա	32529	167677	5154.69
17	Մեքսիկա	27817	134632	4839.92
18	Պակիստան	25295	71729	2835.70
19	Նոր Զելանդիա	23921	73853	3087.37
20	Ուկրաինա	12965	60446	4662.24
	Ընդամենը	1667671	8063877	4835.41

Ուսումնասիրելով 20 հիմնական երկրների կողմից հավի մսի արտադրության և արտահանման 2011 թ. ցուցանիշները (տե՛ս աղյուսակ 25-26) կարելի է նկատել, որ արտադրող և արտահանող երկրները տարբերվում են, բացառությամբ՝ Բրազիլիայի, ԱՄՆ-ի, Լեհաստանի, Արգենտինայի, Թուրքիայի, ՄԹ-ի, Չինաստանի և Իսպանիայի: Այսպես հավի մսի արտադրության ծավալներով 2011 թ. առաջին տեղն է զբաղեցնում ԱՄՆ-ը, որի արտադրության ծավալը ընդհանուր ծավալի մեջ կազմում է 25.3% (17 մլն տոննա), որին հաջորդում է Չինաստանը համապատասխանաբար՝ 18% (12 մլն տոննա), Բրազիլիան՝ 16.9% (11.4 մլն տոննա), ՌԴ-ը՝ 4.3% (2.9 մլն տոննա) և Մեքսիկան՝ 4.1% (2.8 մլն տոննա): Հավի մսի արտահանման 2011 թ. ցուցանիշների համաձայն առաջին հինգ տեղերը զբաղեցնող երկրներից միայն Բրազիլիան և ԱՄՆ-ն են ընդգրկված

հավի մսի խոշոր արտադրող 20 երկրների ցանկում, որոնց արտահանման ծավալները կազմել են արտադրության ծավալի համապատասխանաբար՝ 31.3%, որն ընդհանուր արտահանման ծավալում կազմել է 30.3%, արժեքի՝ 34.1% (3.6 մլն տոննա, 7.1 մլրդ ԱՄՆ դոլար) և 20.1%, որը ընդհանուր արտահանման ծավալում կազմել է 29.2%, արժեքի՝ 19.1% (3.4 մլն տոննա, 4 մլրդ ԱՄՆ դոլար): Հավի մսի արտահանման ծավալով երրորդ տեղում է Նիդերլանդները, որի արտահանման ծավալը ընդհանուր արտահանման ծավալում կազմել է 8.4%, արժեքի՝ 10.7% (996 հազար տոննա, 2.2 մլրդ ԱՄՆ դոլար), որին հաջորդում է Հոնկոնգը համապատասխանաբար՝ 6.5% և 4.1% (761 հազար տոննա, 857 մլն ԱՄՆ դոլար) և Ֆրանսիան՝ 3.6% և 5.2% (426 հազար տոննա, 1.1 մլրդ ԱՄՆ դոլար): Հավի մսի արտահանման 1 տոննայի գների 2011 թ. ցուցանիշների համաձայն ամենաբարձր գինը եղել է Ռումինիայում՝ 2855.48 ԱՄՆ դոլար, իսկ ամենացածրը՝ Հոնկոնգում՝ 1125.66 ԱՄՆ դոլար:

*Աղյուսակ 25*

**Հավի մսի արտադրությունը 2011թ.**

Յ/հ	Երկիր	Քանակ (տոննա)
1	ԱՄՆ	17111240
2	Չինաստան	12170062
3	Բրազիլիա	11421730
4	ՌԴ	2895489
5	Մեքսիկա	2765020
6	Հնդկաստան	2206000
7	Իրան	1686000
8	Արգենտինա	1649000
9	Ինդոնեզիա	1613600
10	Թուրքիա	1613309
11	Հրվ. Աֆրիկա	1485613
12	Ճապոնիա	1382000
13	ՄԹ	1353000
14	Մալազիա	1315000
15	Թայլանդ	1257600
16	Իսպանիա	1205749
17	Լեհաստան	1150000
18	Պերու	1084815
19	Սյամնար	1079062
20	Կոլումբիա	1075135
	Ընդամենը	67519424

Աղյուսակ 26

## Հավի մսի արտահանումը և 1 տոննայի արժեքը 2011 թ.

Դ/հ	Երկիր	Քանակ (տոննա)	Արժեքը (1000 ԱՄՆ դոլար)	ԱՄՆ դոլար/ տոննա
1	Բրազիլիա	3569903	7063214	1978.55
2	ԱՄՆ	3445080	3958840	1149.13
3	Նիդերլանդներ	995945	2208782	2217.78
4	Հոնկոնգ	761453	857134	1125.66
5	Ֆրանսիա	426133	1081883	2538.84
6	Բելգիա	407928	948835	2325.99
7	Լեհաստան	303732	690016	2271.79
8	Գերմանիա	287543	695142	2417.52
9	Արգենտինա	266487	432099	1621.46
10	Թուրքիա	234148	380772	1626.20
11	ՄԹ	225420	358878	1592.04
12	Չինաստան	168243	431820	2566.64
13	Կանադա	124573	199312	1599.96
14	Իսպանիա	113769	207268	1821.83
15	Իտալիա	86759	219499	2529.99
16	Հունգարիա	81178	212105	2612.84
17	Չիլի	80029	219377	2741.22
18	Բելառուս	73605	154558	2099.83
19	Ռումինիա	73182	208970	2855.48
20	Դանիա	72507	171199	2361.14
	Ընդամենը	11797617	20699703	1754.57

Խոզի մսի արտադրության և արտահանման 20 հիմնական երկրների 2011 թ. ցուցանիշների (տե՛ս աղյուսակ 27-28) համաձայն հիմնական երկրները միաժամանակ հանդիսանում են թե՛ արտադրողներ և թե՛ արտահանողներ: Այսպես խոզի մսի 2011 թ. արտադրության ծավալներով առաջին տեղում է Չինաստանը, որի արտադրության ծավալները ընդհանուր արտադրության ծավալում կազմել է 52.4% (51.5 մլն տոննա), որին հաջորդում է ԱՄՆ-ը համապատասխանաբար՝ 10.5% (10.3 մլն տոննա), Գերմանիան՝ 5.7% (5.6 մլն տոննա), Իսպանիան՝ 3.5% (3.5 մլն տոննա) և Բրազիլիան՝ 3.4% (3.4 մլն տոննա): Խոզի մսի արտահանման 2011 թ. ցուցանիշների համաձայն առաջին տեղում է Գերմանիան, որի արտահանման ծավալը կազմել է արտադրության 18.8%, որը ընդհանուր արտահանման ծավալում կազմել է 20.6%, արժեքի՝ 20.6 % (1.1 մլն տոննա, 3.4 մլրդ ԱՄՆ դոլար), որին հաջորդում է համապատասխանաբար Դանիան՝ 43.4%, ընդհանուր արտահանման 14.5% և 15.1% (747 հազար տոննա, 2.5 մլրդ ԱՄՆ դոլար), Կանադան՝ 37.3%, ընդհանուր արտահանման 14.2% և 14% (729 հազար տոննա, 2.3 մլրդ ԱՄՆ դոլար), Իսպանիան՝ 18.5%, ընդհանուր արտահանման 12.5% և 12% (641 հազար տոննա, 2 մլրդ ԱՄՆ դոլար) և Բրազիլիան՝ 11.2%, ընդհանուր արտահանման 7.3% և 7.1% (377 հազար տոննա, 1.2 մլրդ ԱՄՆ դոլար): Խոզի մսի 2011 թ. արտահանման գների ցուցանիշների 1 տոննայի գինը

ամենաբարձրը եղել է Մեքսիկայում 5011.98 ԱՄՆ դոլար, իսկ ամենացածրը՝ ՄԹ-ում 2060.17 ԱՄՆ դոլար:

*Աղյուսակ 27*

**Խոզի մսի արտադրությունը 2011 թ.**

Հ/հ	Երկիր	Քանակ (տոննա)
1	Չինաստան	51519351
2	ԱՄՆ	10330808
3	Գերմանիա	5616074
4	Իսպանիա	3469345
5	Բրազիլիա	3369616
6	Վիետնամ	3098900
7	ՌԴ	2427636
8	Ֆրանսիա	2217950
9	Կանադա	1953550
10	Լեհաստան	1936300
11	Դանիա	1720200
12	Ֆիլիպիններ	1649300
13	Իտալիա	1601877
14	Նիդերլանդներ	1347166
15	Ճապոնիա	1267328
16	Մեքսիկա	1201998
17	Բելգիա	1108255
18	Թայլանդ	867300
19	Կորեայի հանրապ.	837000
20	ՄԹ	806000
	Ընդամենը	98345954

*Աղյուսակ 28*

**Խոզի մսի արտահանումը և 1 տոննայի արժեքը 2011 թ.**

Հ/հ	Երկիր	Քանակ (տոննա)	Արժեքը (1000 ԱՄՆ դոլար)	ԱՄՆ դոլար/ տոննա
1	Գերմանիա	1056470	3352817	3173.60
2	Դանիա	747358	2467689	3301.88
3	Կանադա	729436	2285643	3133.44
4	Իսպանիա	641350	1956029	3049.86
5	Բրազիլիա	377096	1161243	3079.44
6	Նիդերլանդներ	333692	1003872	3008.38
7	Ֆրանսիա	239137	655904	2742.80
8	Բելգիա	214824	652167	3035.82
9	Լեհաստան	146514	452298	3087.06
10	Ավստրիա	113506	386950	3409.07
11	Յունգարիա	89700	313759	3497.87


12	Իռլանդիա	76010	225577	2967.73
13	Չինաստան	71647	283435	3955.99
14	Չիլի	68015	335905	4938.69
15	Մեքսիկա	63839	319960	5011.98
16	ՍԹ	57990	119469	2060.17
17	Իտալիա	43604	125741	2883.70
18	Ֆինլանդիա	30760	94485	3071.68
19	Չեխիա	18759	68050	3627.59
20	Ավստրալիա	17244	51146	2966.02
	Ընդամենը	5136951	16312139	3175.45

**2. Հիմնական պարենի առանձին տեսակների միջազգային գները և դրանց փոփոխությունների միտումները 2008-2013 թթ. (հունիս)**

Ցորենի միջազգային գների 2008-2013 թթ. (հունիս) ցուցանիշների (տե՛ս գծապատկեր 1) ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ գները 2009 թ. նախորդ տարվա նկատմամբ նվազել են 21.2%-ով, սակայն 2010 թ. աճել են 0.1%-ով: 2011 թ. 2010 թ. նկատմամբ նկատվել է ցորենի միջազգային գների աճ միջինը 41.3%-ով, սակայն 2012 թ. գները կրկին աճել են 0.9%-ով, 2013 թ.՝ 1.4%-ով: Ցորենի միջազգային գների վրա ազդում են այնպիսի գործոններ ինչպիսիք են՝ արտահանող երկրների կողմից էմբարգոյի կիրառումը, խոշոր արտահանող երկրում տվյալ տարում ցածր բերքատվությունը, համաշխարհային գնաճը, սպեկուլյացիա և այլն:

*Գծապատկեր 1*

**Ցորենի միջազգային գները 2008-2013թթ. հունիս (ԱՄՆ դոլար/տոննա)**



*Գծապատկեր 1, 2, 4, 7-11-ը կազմվել են հեղինակների կողմից՝ հիմք ընդունելով՝ [www.indexmundi.com](http://www.indexmundi.com) ցուցանիշները:*

Այսպես, եթե ցորենի որևիցե խոշոր արտադրող և արտահանող (ԱՄՆ, Ավստրալիա, ՌԴ, Ֆրանսիա, Կանադա, Ուկրաինա կամ մեկ այլ երկիր) որոշի ար-


գելանք սահմանել արտահանման համար, ապա միջազգային շուկայում ցորենի գները կաճեն, իսկ եթե խոշոր ցորեն ներկրող հայտնվի արգելանքում (էմբարգո), ապա գները կիջնեն: Շուկայական գնազոյացման այս սկզբունքները գործում են նաև պարենամթերքի այլ տեսակների համար:

Որպես գների աճի պատճառ հանդիսացող ցածր բերքատվությունը իր հերթին կարող է առաջանալ չոր բնակլիմայական պայմանների (երաշտի), վնասատու կենդանիների պատճառով: Միջազգային գների աճը կարող է առաջ գալ նաև բորսայում սպասումների արդյունքում: Քանի որ պարենի շուկան շատ անկայուն է, ուստի միջազգային գների տատանումները կարող են ուղղակի կամ անուղղակի ձևով ազդել ներքին շուկայի պարենի գների վրա:

Շաքարավազի միջազգային գների համաձայն (տե՛ս գծապատկեր 2) 2008-2011 թթ. նկատվում է գների կայուն աճ: Այսպիսով տվյալ ժամանակահատվածում գրանցվել է 11-27% աճ, որից հետո 2012-2013 թթ. գները նվազել են համապատասխանաբար՝ 23-29%-ով: Շաքարավազի գները 2013 թ. նվազել են, և՛ միջազգային շուկայում, և՛ հոկտեմբերի պայմանագրերն արդեն իսկ նյութորքյան բորսայում հասել են 354 ԱՄՆ դոլար/տոննա, իսկ լոնդոնյան բորսայում՝ 478.8 ԱՄՆ դոլար/տոննա: Համաձայն վերլուծաբանների՝ Բրազիլիայում և Հնդկաստանում շաքարեղեգի առատ բերքի արդյունքում միջազգային գները փոքր-ինչ նվազել են: Միաժամանակ Մաքսային միության սահմանած ներկրման տուրքերը ազդում են գների վրա, և որքան գները ցածր են, այնքան տուրքերը բարձր են, և հակառակը: Միջազգային գների անկման պարագայում հունքային գները չպետք է լինեն ինքնարժեքից բարձր, որպեսզի խթանվի տեղական արտադրությունը՝ չվնասելով այն: Մաքսային միության սահմանվող տուրքերը որոշվում են նյութորքյան բորսայում ձևավորված գների արդյունքում և ներկայում կազմում են 205 ԱՄՆ դոլար/ տոննա: 2013 թ. տարվա վերջին և 2014 թ. տարվա սկզբին հնարավոր է, որ նյութորքյան բորսայում շաքարավազի գները աճեն և կազմեն 390 ԱՄՆ դոլար/տոննա: Բնականաբար, շաքարավազի մաքսատուրքը կնվազի և կկազմի 140 ԱՄՆ դոլար 1 տոննայի հաշվով:

*Գծապատկեր 2*

**Շաքարավազի միջազգային գները 2008-2013 թթ. հունիս (ԱՄՆ դոլար /տոննա)**




Միաժամանակ, կանխատեսումների համաձայն 2013-2014 թթ. ՌԴ-ում շաքարավազի արտադրության ծավալները կկրճատվեն շուրջ 20%-ով, և առաջացած բացը լրացնելու նպատակով կներկրվի շուրջ 850 հազար տոննա շաքարավազ:

Ինչպես երևում է գծապատկեր 3-ի տվյալներից կաթի փոշու միջազգային գները 2009 թ. նախորդ տարվա համեմատ նվազել են 22.4%-ով, սակայն 2009-2011 թթ. գների աճ է նկատվել 2010 թ.` 40%, 2011թ.` 15.6%: 2012թ. գները նվազել են 13.5%-ով, սակայն 2013 թ. (հունիս) հակառակ դրա գները աճել են` 35%-ով: Հարկ է նշել, որ 2013 թ. բնակլիմայական անբարենպաստ պայմանների արդյունքում կաթի արտադրության ծավալները կճատվել են, ինչը հանգեցրել է գների կտրուկ աճի :

*Գծապատկեր 3*

**Կաթի փոշու միջազգային գները 2008-2013 թ. հունիս**  
(ԱՄՆ դոլար / տոննա)




*Գծապատկեր 3 և 6-ը կազմվել են հեղինակների կողմից` հիմք ընդունելով` [www.fao.org](http://www.fao.org) ցուցանիշները:*

Համաձայն գծապատկեր 4-ի կարագի միջազգային գների ցուցանիշների 2009 թ. սկսած տարեցտարի աճել են 2010 թ.` 173%-ով, 2011 թ.` 110.6%-ով, սակայն 2012 թ. գները նվազել են` 26%-ով, իսկ 2013 թ. հունիս ամսին աճի տեմպը կազմել է 121%: 2013 թ. գների աճը պայմանավորված է միջազգային շուկայում կաթի արտադրության ծավալների կրճատմամբ, ինչը նպաստել է կաթնամթերքի մասնավորապես կարագի գների աճին: 2013 թ. առաջին եռամսյակում կարագի գները աճել են Օվկիանիայում շուրջ 30.77%-ով և 1կգ կարագի գինը 3.25 ԱՄՆ դոլարից հասել է 4.25 ԱՄՆ դոլար: ՌԴ շուկան մույնպես արձագանքել է կարագի միջազգային գներին 7.03%-ով, իսկ 1կգ կարագի գինը 4.98 ԱՄՆ դոլարից հասել է 4.5 ԱՄՆ դոլարի: Ուկրաինայում կարագի գները աճել են 6.9%-ով, իսկ 1կգ կարագի գինը 4.35 ԱՄՆ դոլարից աճել և կազմել է 4.65 ԱՄՆ դոլար: ԵՄ երկրներում աճը կազմել է 2.28%, 1կգ կարագի գինը` 3.51 ԱՄՆ դոլարից աճել է և կազմել 3.59 ԱՄՆ դոլար:

**Գծապատկեր 4**


**Կարագի միջազգային գները 2008-2013 թթ. հունիս (ԱՄՆ դոլար/ տոննա)**



Չեղեր պանրի միջազգային գների 2008-2013 թթ. հունվար-հունիս ցուցանիշների (տես գծապատկեր 5) համաձայն 2009 թ. գները նվազել են 30.2%-ով, իսկ 2010 թ. գները աճել են 15.4%-ով, 2011 թ.՝ 20.7%-ով: Սակայն 2012թ. գները նվազել են 6%-ով, իսկ 2013 թ. հունվար-հունիս ամիսներին գները կրկին աճել են 1.05%-ով:

**Գծապատկեր 5**

**Չեղեր պանրի միջազգային գները 2008-2013 թթ. հունիս (ԱՄՆ դոլար/տոննա)**




Գծապատկերը կազմվել է հեղինակների կողմից, հիմք ընդունելով <http://www.cheesereporter.com> տվյալները:

Համաձայն գծապատկեր 6-ի ցուցանիշների 2009 թ. բուսական յուղի գները կտրուկ նվազել են 43%-ով, 2010 թ. գները աճել են 13.9%-ով, 2011 թ. գների աճը կազմել է 36.7%-ով, իսկ 2012-2013 թ. հունիս ամսին գները նվազել են համապատասխանաբար՝ 8.2%-ով և 0.8%-ով:

*Գծապատկեր 6*


**Բուսական յուղի միջազգային գները 2008-2013 թթ. հունիս (ԱՄՆ դոլար/տոննա)**



Գծապատկեր 7-ի ցուցանիշների համաձայն 2009-2010 թթ. նկատվել են գների նվազման միտումներ համապատասխանաբար՝ 11.5%-ով և 11.7%-ով: Հաջորդ 2 տարիների ցուցանիշները վկայում են բրինձի միջազգային գների տարեց-տարի աճի մասին 2011 թ.՝ 5.9%, 2012 թ.՝ 5.1%, սակայն 2013 թ. նկատվել են գների անկում 3.37%-ով:

*Գծապատկեր 7*


**Բրինձի միջազգային գները 2008-2013 թթ. հունիս (ԱՄՆ դոլար/տոննա)**



Սուրճի միջազգային գների 2008-2013 թ. ցուցանիշների (տե՛ս գծապատկեր 8) համաձայն 2008-2011 թթ. գները կայուն աճել են 2009 թ.՝ 7.4%, 2010թ. 37.2%, 2011 թ. գները հասել են զագաթնակետին աճելով 40.5%-ով, որին հետևել է գների անկումը 2012 թ.՝ 68.6%-ով, իսկ 2013 թ. հունվար-հունիսին՝ 80.6%-ով:

*Գծապատկեր 8*


**Սուրճի միջազգային գները 2008-2013 թթ. հունիս (ԱՄՆ դոլար /տոննա)**



Տավարի մսի միջազգային գների 2008-2013 թթ. ցուցանիշների համաձայն (տե՛ս գծապատկեր 9) 2009 թ. սկսած գները կայուն աճում են: Ինչպես նկատվում է գծապատկերից 2009 թ. տավարի մսի միջազգային գները նվազել են 3%-ով, որից հետո հաջորդ տարիներին գները աճել են: Հատկապես 2010 թ. սկսած գրանցվել են աճի միտումներ՝ 27.4%, 2011 թ.՝ 20.1%, իսկ 2012 թ. աճը դանդաղել է և կազմել 2.6%, 2013 թ. գները նվազել են՝ 0.05%-ով:

*Գծապատկեր 9*


**Տավարի մսի միջազգային գները 2008-2013 թթ. հունիս (ԱՄՆ դոլար/տոննա)**



Հավի մսի միջազգային գների 2008-2013 թթ. ցուցանիշների (տե՛ս գծապատկեր 10) համաձայն 2009 թ. գները նվազել են 2.4%-ով, սակայն 2010 թ. գների 0.3%-ով աճ է նկատվում, 2011 թ.՝ 1.7%, 2012թ.՝ 7.9%, իսկ 2013 թ. հունվար-հունիսին՝ 8.3% աճ:

*Գծապատկեր 10*


**Հավի մսի միջազգային գները 2008-2013 թթ. հունիս (ԱՄՆ դոլար /տոննա)**



Խոզի մսի 2008-2013 թթ. միջազգային գների ցուցանիշների (տե՛ս գծապատկեր 11) համաձայն 2009 թ. գները կտրուկ նվազել են՝ 16.7%-ով, սակայն 2010 թ. նկատվում է գների աճ 33.4%-ով, 2011 թ. 19.6%-ով: 2012 թ. նկատվել է 7% գների անկում, սակայն 2013 թ. գները կրկին աճել են 1.5%-ով:

*Գծապատկեր 11*

**Խոզի մսի միջազգային գները 2008-2013 թթ. հունիս (ԱՄՆ դոլար/տոննա)**



Ամփոփելով համաշխարհային շուկայում պարենային ապրանքների արտադրության և արտաքին առևտրի վիճակագրական ցուցանիշների վերլուծությունը կարելի է եզրակացնել, որ զարգացած ինչպես նաև զարգացող երկրները արտադրում, ինչպես նաև արտահանում են պարենի լայն տեսականի, մասնավորապես ցորեն, շաքարավազ, կաթի փոշի, կարագ, բուսական յուղ, բրինձ, տավարի, խոզի և հավի միս, որի արտադրությունը միևնույն ժամանակ մի շարք այլ

Երկրներում գտնվում է ցածր մակարդակի վրա, ուստի տվյալ երկրները ներկրում են այդ տեսականին բնակչության պահանջարկը բավարարելու համար: Ներկրված ապրանքների գները ազդում են նաև ներքին շուկայի գների վրա, որը հանգեցնում է սպառողական գների տատանմանը: Ինչպես նշել էինք, ակնհայտ է, որ պարենամթերքի տարեցտարի գների աճի դինամիկան առաջիկա տարիներին կպահպանվի: Այսպիսով, կատարած վերլուծության համաձայն զարգացող և զարգացած երկրներում պարենի արտադրության և արտահանման ծավալները տարեցտարի աճում են և հիմնական երկրները պահպանում են իրենց զբաղեցրած դիրքերը:

## ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում դիտարկվում են պարենային անվտանգության խնդիրները և պարենի համաշխարհային շուկան բնութագրող մի շարք ցուցանիշները: Վերլուծվում են պարենի տարբեր տեսակների գների միտումները: Ձևակերպվում են առաջարկություններ պարենամթերքի շուկայի և դրա առանձին տեսակների գների մեծությունների կարգավորման վերաբերյալ:

## АННОТАЦИЯ

**ՏԱՐԳՏՅԱՆ Գ., ՄԱՐԿՕՏՅԱՆ Ա., ԽԱՇԱՏՐՅԱՆ Լ. – ТЕНДЕНЦИИ ПРОИЗВОДСТВА, ЭКСПОРТА И ЦЕНООБРАЗОВАНИЯ ОТДЕЛЬНЫХ ВИДОВ ПРОДОВОЛЬСТВЕННЫХ ТОВАРОВ НА МИРОВОМ РЫНКЕ**

В статье рассматриваются вопросы продовольственной безопасности и показатели, характеризующие ряд сегментов мирового продовольственного рынка. Анализируются тенденции ценообразования на продовольственные товары. Выдвигаются предложения по регулированию рынка продовольствия, в особенности – цен на отдельные виды продовольствия.

## SUMMARY

**H. SARGSYAN, A. MARKOSYAN, L. KHACHATRYAN – CURRENT SITUATION AND DEVELOPMENT TRENDS ON WORLD FOOD MARKET**

In the article food security problems and the world food market features are considered. The tendencies of different kinds of grocery prices are analyzed. Suggestions to regulate the food market and particular item prices are put forward.

**ԳՐԻԳՈՐ ՂԱՐԻԲՅԱՆ**

*ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, տնտեսագիտության դոկտոր, ԵՊՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի պրոֆեսոր*

**ԱՆԱՀԻՏ ՀԱՄԱՐՉՈՒՄՅԱՆ,**

*տնտեսագիտության թեկնածու, ԵՊՀ կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտ*

**ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԿՈՐՈՒՄՏՆԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Մարդկային կապիտալի ավանդական, մշտական կորուստներից է գործազրկությունը, ոչ մասնագիտությամբ աշխատելը և թերզբաղվածությունը: 1990-ական թվականների «վերափոխումների» արդյունքում Հայաստանի տնտեսությունն ամբողջությամբ վերցրած կաթվածահար եղավ: 1990-1993 թվականներին ՀՆԱ-ն կրճատվեց ավելի քան 2 անգամ՝ 1993 թ. կազմելով 1990 թ. մակարդակի 46.9%-ը, որն այդ ժամանակ տնտեսական անկման ամենաբարձր ցուցանիշն էր ԱՊՀ երկրներում: 1993 թվականին 1988 թ. համեմատությամբ ՀՀ-ում արդյունաբերական արտադրանքի թողարկումը նվազեց 64 %-ով, իսկ ճյուղի տեսակարար կշիռն ազգային եկամտում նվազեց և կազմեց շուրջ 31%: 1994 թ. մեկ շնչին ընկնող սննդի օրական կալորիականությունը հասավ կրիտիկական արժեքի՝ 1700 կկալ: Հայաստանն ապրեց հիպերինֆլացիա, որի գագաթնակետը եղավ 1994 թ., երբ այն կազմեց 5273%<sup>1</sup>: 1993 թ. 1988 թ. համեմատությամբ արդյունաբերության անկումը կազմեց 64.0%, էլեկտրաէներգիայի արտադրությունը կրճատվեց 58%-ով, քիմիական և նավթաքիմիական արդյունաբերության ծավալները՝ 80%-ով, իսկ սննդի արդյունաբերությունը՝ 60-90%-ով: Այդ ամենի արդյունքում խիստ վատացան երկրի մակրոտնտեսական ցուցանիշները (տես աղյուսակ 1-ը):

**Աղյուսակ 1**

**ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշները 1992-2000 թթ.**

	1992 թ.	1993 թ.	1995 թ.	1998 թ.	2000 թ.
ՀՆԱ, մլն ԱՄՆ դոլար	323.7	492.2	1286.5	1892.3	1915.2
ՀՆԱ մեկ շնչի հաշվով, մլն ԱՄՆ դոլար	87.8	131.9	342.2	499.0	503.0
Սղաճը, տոկոս, նախորդ տարվա նկատմամբ (անգամ)	13.4	11.0	32.2	8.7	0.8

<sup>1</sup> Տես «Կապիտալի նախասկզբնական կուտակման, հարստության ու եկամտունների բևեռացման առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում անցումային տնտեսությունում», Երևան, 2011, էջ 16:

ՀՀ դրամի և ԱՄՆ դոլարի փոխարժեքը	-	-	405.9	504.8	539.5
Արտահանում (առանց ծառայությունների) մլն ԱՄՆ դոլար	82.9	156.2	270.9	220.7	300.5
Ներմուծում (առանց ծառայությունների) մլն ԱՄՆ դոլար	205.9	254.2	673.9	202.4	884.7
Օտարերկրյա ուղղակի ներդրումներ, մլն ԱՄՆ դոլար	2.4	0.8	24.4	232.4	120
Պետբյուջեի եկամուտները և տրանսֆերտները (տոկոս ՀՆԱ-ից)	-	-	18.1	17.7	16.7
Պետբյուջեի ծախսերը (տոկոս ՀՆԱ-ից)	-	-	24.1	21.5	21.6

Աղբյուրը՝ «Անկախության և անցումային 10 տարիները Հայաստանում», Երևան, 2001, էջ 66:

Այդ բոլորի հետևանքով 1999 թ. տնտեսական աճի ցուցանիշները նախորդ տարիների առավելագույն նակարդակի համեմատությամբ ունեցան հետևյալ տոկոսային չափերը<sup>1</sup>.

- ՀՆԱ՝ 60 (1989 թ. համեմատ),
- Արդյունաբերության արտադրանքը՝ 41 (1986 թ. համեմատ),
- Գյուղատնտեսական արտադրանքը՝ 78 (1986 թ. համեմատ),
- Մանրածախ ապրանքաշրջանառությունը՝ 40 (1990 թ. համեմատ):

Արտադրության ծավալների նման կրճատումը սրեց աշխատաշուկայի լարվածությունը, որը և հանգեցրեց գործազրկության:

**Աղյուսակ 2**

**Աշխատաշուկայի փոփոխությունները և գործազրկությունը ՀՀ-ում**

Ցուցանիշները	1995 թ.	1996 թ.	1997 թ.
Աշխատուժի թիվը (հազար մարդ)	1600.8	1572.6	1564.4
Զբաղվածների թիվը (հազար մարդ)	1468.6	1413.4	1403.4
Գործազուրկների թիվը (հազար մարդ)	131.7	159.2	161.4
Ազատ աշխատատեղերը (աշխատանքի պահանջարկը, մարդ)	1077	525	757

Աղբյուրը՝ *Изменяющееся общество: теория, практика, 1997, 1-2, էջ 64:*

Հանրապետության սովետային տնտեսության մեծ ծավալների, գործազուրկների զգալի մասի չգրանցվելու և այլ պատճառներով, գործազրկության և զբաղվածության վերաբերյալ հրատարակված պաշտոնական տվյալները հեռու են ճշգրիտ լինելուց: Այսպես, եթե Աշխատանքի և զբաղվածության հանրապետական ծառայության տվյալներով 1998 թ. պաշտոնապես գրանցված գործազրկու-

<sup>1</sup> Տես Հայաստանի Հանրապետության սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2001, էջ 10:

թյան մակարդակը կազմել էր 9.4 տոկոս, 1999 թ.՝ 11.2 տոկոս, ապա ըստ ընտրանքային հետազոտության տվյալների այդ տարիներին տնտեսապես ակտիվ բնակչության 27.3 տոկոսը գործազուրկ էր<sup>1</sup>: Այդ ցուցանիշը ՀՀ-ում անհամեմատ բարձր է, քան Ռուսաստանի Դաշնությունում և ԱՊՀ այլ երկրներում: ՀՀ-ում գործազրկության իրական մակարդակը շատ ավելի բարձր կլիներ, եթե աշխատունակ բնակչության շուրջ մեկ միլիոն մարդ չարտագաղթեր:

Բացի գործազրկությունից, մարդկային կապիտալի կորուստ է նաև **թերզբաղվածությունը**: Թերզբաղված են համարվում բոլոր նրանք, ովքեր աշխատում են տվյալ երկրի օրենսդրությամբ սահմանված աշխատաժամանակից պակաս աշխատոր կամ աշխատաշաբաթ: Քանի որ ՀՀ-ում աշխատորվա տևողությունը սահմանված է 8 ժամ, այդ պատճառով թերզբաղված են բոլոր նրանք, ովքեր 8 ժամից պակաս աշխատոր են ունեցել: 2007-2008 թթ. ՀՀ 6129 տնային տնտեսությունների հետազոտության արդյունքներով թերզբաղվածության պատկերն արտացոլված է աղյուսակ 3-ում:

*Աղյուսակ 3*

**Աշխատորվա բնույթը հիմնական աշխատանքում**

Ձեր հիմնական աշխատանքում Դուք աշխատում եք	Պատասխանների թիվը	Ճշգրտված տոկոսը
Լրիվ աշխատոր	6002	71.4
Ոչ լրիվ աշխատոր	1211	14.4
Լրիվ աշխատորից ավելի	1189	14.2
Ընդամենը	8402	100.2

*Աղբյուրը՝ Աշխատանքի շուկայի վերլուծություն, գիտահետազոտական աշխատանք, Երևան, 2010, էջ 31:*

Հիմնական աշխատանքում զբաղվածների 71.4 տոկոսն աշխատել է լրիվ աշխատորով, 14.4 տոկոսը՝ ոչ լրիվ աշխատորով:

*Աղյուսակ 4*

**Աշխատանքից հիմնական աշխատողի բացակայության ընդհանուր տևողությունը**

	Պատասխանների թիվը	Ճշգրտված տոկոսը	Գումարային տոկոսը
Մինչև 1 ամիս	955	70.0	70.0
1-3 ամիս	239	17.5	87.5
4-6 ամիս	111	8.1	95.7
7 ամիս և ավելի	59	4.3	100.0
Ընդամենը	1864	100.0	-

*Աղբյուրը՝ Աշխատանքի շուկայի վերլուծություն, գիտահետազոտական աշխատանք, Երևան, 2010, էջ 32:*

<sup>1</sup> Տես Հայաստանի Հանրապետության սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2001, էջ 47:

Աշխատանքից հիմնական աշխատողի բացակայության ընդհանուր տևողությունը 70 տոկոսի համար կազմել է մինչև մեկ ամիս, 17.5 տոկոսի համար՝ 1-3 ամիս, 8.1 տոկոսի համար՝ 4-6 ամիս, իսկ 4.3 տոկոսի համար՝ 7 ամսից ավելի:

Աղյուսակից հետևում է, որ ոչ լրիվ աշխատաշաբաթով աշխատողների տեսակարար կշիռն ամենաբարձրը Սյունիքի մարզում է՝ 72.1 տոկոս, Լոռու մարզում՝ 64.3 տոկոս և Տավուշի մարզում՝ 62.9 տոկոս:

**Աղյուսակ 5**

**Ոչ լրիվ աշխատոր և ոչ լրիվ աշխատաշաբաթ աշխատողների թվաքանակն ըստ մարզերի (տոկոսներով ընդհանուրի նկատմամբ)**

ՀՀ-ն և մարզերը	Ոչ լրիվ աշխատոր	Ոչ լրիվ աշխատաշաբաթ
ՀՀ	14.4	43.4
ք.երևան	13.1	36.1
Կոտայքի մարզ	15.6	46.0
Շիրակի մարզ	12.6	48.8
Տավուշի մարզ	25.0	62.9
Վայոց Ձորի մարզ	15.6	35.1
Սյունիքի մարզ	6.9	72.1
Արմավիրի մարզ	6.5	18.3
Արարատի մարզ	21.9	49.3
Լոռու մարզ	17.6	64.3
Գեղարքունիքի մարզ	15.8	44.8
Արագածոտնի մարզ	13.4	26.2

*Աղբյուրը՝ Աշխատանքի շուկայի վերլուծություն, գիտահետազոտական աշխատանք, Երևան, 2010, էջ 32:*

Զբաղվածությունը ՀՀ-ում լուրջ փոփոխություններ է կրել անցումային տնտեսության առանձին ճյուղերի և ենթակառուցվածքների տեղաշարժերով պայմանավորված: Քանի որ ԽՍՀՄ փլուզումով Հայաստանի արդյունաբերության խոշոր ճյուղերը, մասնավորապես ծանր արդյունաբերությունը, մեքենաշինությունը, քիմիական արդյունաբերությունը հույսի և մատակարարների շուկաների կորստի պատճառով նույնպես փլուզվեցին, զբաղվածությունն այդ ճյուղերում զգալիորեն կրճատվեց: Միևնույն ժամանակ նկատելի դարձավ, որ գործարար ակտիվությամբ օժտված մի շարք ճյուղերում, ինչպիսիք են առևտուրը, հասարակական սնունդը, միջնորդական ֆինանսական գործունեությունը և ծառայությունների այլ ոլորտները, զբաղվածությունն սկսեց սիստեմատիկ մեծանալ: Ուստի, ճյուղային կառուցվածքի առումով արդյունաբերության մեջ բարձր զբաղվածությունն իր տեղը զիջեց վերը նշված նոր զարգացող ճյուղերին:

Հարկ է նշել, որ 1990 թվականից մինչև 2011 թվականն ընկած ժամանակահատվածում փոփոխության է ենթարկվել ՀՀ բնակչության տարիքային կառուցվածքը: Մինչև 16 տարեկան երեխաների տեսակարար կշիռը 1990 թ. 32.3%-ից 2011 թ. կազմել է 19.6 %: Բայց աշխատունակ տարիքի բնակչության տեսակա-

րար կշիռն ավելացել է 9.2 տոկոսային կետով, 59.7 %-ից 2010թ-ին դառնալով 68.9%<sup>1</sup>: Եթե 2006 թ. բնակչության ընդհանուր թվաքանակի 22.7 % աշխատունակ տարիքից ցածր էր, 64.6 %-ն՝ աշխատունակ տարիքի, իսկ 12.7 %-ն՝ աշխատունակ տարիքից բարձր բնակչությունն էր, ապա 2010 թ. այդ թվերը համապատասխանաբար կազմել են 19.8, 68.7 և 11.5%:

Ընդհանուր բնակչության թվաքանակում քաղաքային բնակչությունը 1990 թ. կազմել է 68.8, իսկ 2011 թ.՝ 64.0 տոկոս, իսկ գյուղական բնակչությունը՝ 31.2 և 36.0 տոկոս:

### Աղյուսակ 6

#### ՀՀ մշտական բնակչության թվաքանակն ըստ մարզերի, 2010 թ. հունվարի 1-ի դրությամբ, (հազ. մարդ)

Մարզերը	Ընդամենը	Քաղաք	Գյուղ
Հայաստանի Հանրապետություն	3249.5	2081.0	1168.5
ք. Երևան	1116.6	1116.6	-
Արագածոտն	141.7	33.1	108.6
Արարատ	278.8	82.2	196.6
Արմավիր	284.1	101.7	182.4
Գեղարքունիք	241.5	79.6	161.9
Լոռի	281.6	165.1	116.5
Կոտայք	280.6	157.4	123.2
Շիրակ	281.5	169.7	111.8
Սյունիք	152.9	103.7	49.2
Վայց Չոր	55.8	19.3	36.5
Տավուշ	134.4	52.6	81.8

*Աղբյուրը՝ աղյուսակը կազմված է «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2010 թ. հունվար-դեկտեմբեր» տեղեկատվական ամսական զեկույցի տվյալների հիման վրա, էջ 134:*

2006 թվականին զբաղվածության հիմնական ոլորտներն էին գյուղատնտեսությունը, որը կազմում է ընդհանուրի 46.2%, այնուհետև արդյունաբերությունը՝ 12.9%, կրթությունը՝ 9.2%, առևտուրն ու հանրային սնունդը՝ 10.4%<sup>2</sup>: Նշենք, որ պետական հատվածում զբաղվածությունը հատկանշական է գիտության, կրթության և մշակույթի ոլորտներին, որոնցում զբաղվածների միայն 11% է գտնվում մասնավոր հատվածում, ինչպես նաև առողջապահության և սոցիալական ապահովության ոլորտներին, որոնցում զբաղվածների 18% է միայն մասնավոր հատվածում: Բնութագրական է, որ պետական հատվածում զբաղվածների ընդհանուր թվի 64% բաժին է ընկնում վերոնշյալ ոլորտներին: Պետական հատվածում զբաղվածների տեսակարար կշիռը հարաբերականորեն նշանակալի է նաև տրանսպորտի և կապի (49%), ինչպես նաև արդյունաբերության (21%) համար: Աղյուսակ 7-ում բերված է զբաղվածության դինամիկան 1985-2010 թվականներին ըստ տնտեսության հիմնական ճյուղերի, որտեղից պարզ երևում

<sup>1</sup> Հայաստանի Սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2011, էջ 25.

<sup>2</sup> Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2007 թ., էջ 55; 2008 թ. էջ 54:

է, որ ընդհանուր զբաղվածության բացարձակ կրճատումն ուղեկցվում է կառուցվածքային փոփոխությունների ամբողջովին հակառակ ուղղություններով: Այսպես օրինակ, արդյունաբերության ու շինարարության ճյուղերում 1985-1990 թվականներին նկատվող մոտավորապես 13.7% աճը հետագա տարիներին փոփոխվում է կտրուկ և անընդհատ անկման: Հակառակ պատկեր է նկատվում գյուղատնտեսության մեջ: Այստեղ 1985-1990 թվականներին զբաղվածությունը նվազել է 2.5%-ով: Սակայն 1991-1992 թվականներին հողի սեփականաշնորհումից հետո աշխատանքային ռեսուրսների ամենից բարձր զբաղվածությունը գյուղատնտեսությունում է, որը միայն այդ երկու տարիների ընթացքում ավելացել է գրեթե 200 հազար մարդով: Ավելին, դրանից հետո ընդհանուր զբաղվածների թվում գյուղատնտեսությունում զբաղվածների տեսակարար կշիռը ոչ միայն չի նվազում, այլև շարունակում է աճել:

**Աղյուսակ 7**

**Զբաղվածների միջին տարեկան թվաքանակն ըստ տնտեսության ճյուղերի (հազար մարդ)**

Տարիներ	Արդյունաբերու- թյուն և շինա- րարություն	Գյուղատնտե- սություն	Ծառայու- թյուններ	Այլ ճյուղեր	Ընդա- մենը
1985	597	313	571	67	1548
1990	679	289	624	39	1630
1995	379	552	532	14	1476
2000	227	567	475	11	1278
2005	169.2	507.1	410.9	10.1	1097.8
2006	170.6	504.3	410.0	6.8	1092.4
2007	166.0	506.8	419.8	8.9	1101.5
2010	141.7	500.7	205.9	256.5	1104.8

*Հայաստանի վիճակագրական տարեգրքեր՝ 1990, 2006, 2007, 2008 թթ. և 2010 թ., էջ 56 տվյալների հիման վրա:*

Այսպես, 1990 թվականին գյուղատնտեսությունում զբաղվածների տեսակարար կշիռը կազմում էր 17.7%, 1993 թ.՝ 33.8%, 2000 թ.՝ 44.4%, իսկ 2005 թ.՝ 46.2%: Բացարձակ արտահայտությամբ 1990-2010 թվականներին գյուղատնտեսությունում զբաղվածների թիվը գրեթե կրկնապատկվել է (տե՛ս աղյուսակ 7-ը):

Ի տարբերություն արդյունաբերության և գյուղատնտեսության, հարաբերականորեն կայուն է եղել զբաղվածների թիվը ծառայությունների ոլորտում (առևտուր և սպասարկում), որտեղ 2001 թ. զբաղված էր ընդհանուր զբաղվածների 37%, որն էականորեն քիչ է տարբերվում նախորդ տարիների ցուցանիշներից, իսկ 2005 թ. այն կազմել է 34.4%: Արդյունքում, զբաղվածության ոչ համազոր միտումները տնտեսության տարբեր հատվածներում կանխորոշեցին որակական փոփոխությունները զբաղվածության ընդհանուր կառուցվածքում, որը կտրուկ կերպով փոխվեց արդյունաբերության ու շինարարության ճյուղերում

զբաղվածների կրճատման հաշվին գյուղատնտեսության մեջ զբաղվածների մասնաբաժնի ավելացմամբ:

Անցումային շրջանում Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակի կարևոր բնութագրիչներից է նաև գործազրկությունը, որը լինելով մակրոտնտեսական ցուցանիշ, նաև իր ամենաուղղակի ազդեցությունն է ունենում յուրաքանչյուր անհատի վրա: Աշխատատեղերի կորուստը բնակչության ամենալայն զանգվածների համար նշանակում է կենսամակարդակի կտրուկ նվազում և բարոյահոգեբանական ծանր հարված: Պատահական չէ, որ գործազրկության հիմնախնդիրը շատ հաճախ գտնվում է քաղաքական քննարկումների կենտրոնում:

Հայաստանում գործազրկության մակարդակը 2009 թվականին 2008 թվականի համեմատ բարձրացել է 2.3 տոկոսային կետով և կազմել ` 18.7 տոկոս, ինչը հիմնականում պայմանավորված է եղել համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքով Հայաստանում արձանագրված տնտեսական կտրուկ անկմամբ` 14.4 տոկոս:

Ճգնաժամը հատկապես բացասական ազդեցություն է ունեցել տղամարդկանց զբաղվածության վրա, մասնավորապես `գործազրկության մակարդակը տղամարդկանց մոտ 2009 թվականին բարձրացել է շուրջ 3.4 տոկոսային կետով, մինչդեռ կանանց մոտ այն բարձր է 2 տոկոսային կետով (տես աղյուսակ 8):

**Աղյուսակ 8**

**Գործազրկության մակարդակն ըստ սեռի և տարիքային խմբերի (տոկոս)**

	Ընդամենը		Տղամարդ		Կին	
	2008	2009	2008	2009	2008	2009
Ընդամենը	16.4	18.7	14.4	17.8	18.6	19.9
15-24	36.5	40.9	32.0	36.0	43.2	47.1
25-34	17.9	22.1	15.7	19.5	21.1	26.1
35-44	12.9	15.8	10.8	14.6	14.8	16.9
45-54	12.0	14.1	7.9	13.5	15.9	14.7
55-64	13.1	11.1	12.3	11.9	14.1	10.3
65-75	4.1	4.9	5.8	7.6	2.5	3.2

*Աղյուսակը հաշվարկված է 77 ԱԾՎ տ/տ ընտրանքային հետազոտության տվյալների հիման վրա:*

Գործազրկության առումով ավելի խոցելի է եղել 15-24 տարեկանների խումբը, որոնց շրջանում գործազրկության մակարդակը 2008-2009 թվականներին մոտ 2.2 անգամ ավելի բարձր է եղել գործազրկության միջին մակարդակից: Կանանց գործազրկության մակարդակը բոլոր տարիքային խմբերում ավելի բարձր է եղել տղամարդկանց գործազրկության մակարդակից: 2011 թվականի դրությամբ զբաղված է եղել կանանց 44.4 և տղամարդկանց 60.1 տոկոսը (տես աղյուսակ 9):

Աղյուսակում ներկայացված տվյալներն ստացվել են տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջական հետազոտության արդյունքում, որն իրականացվել է 7872 տնային տնտեսություններում: Աշխատանքի շուկայի ուսումնասիրման տեսանկյունից աշխատունակ տարիք է համարվել 15-75 տարեկան բնակչությունը:

*Աղյուսակ 9*

**Զբաղվածության մակարդակն ըստ տարիքի և սեռի 2010-2011 թթ. (տոկոս)**

	Ընդամենը		Տղամարդ		Կին	
	2010	2011	2010	2011	2010	2011
Ընդամենը	49.6	51.4	59.9	60.1	41.1	44.4
15-19	7.6	6.9	8.6	6.8	6.5	7.1
20-24	33.4	35.5	46.6	46.1	22.1	25.6
25-29	50.4	52.3	71.5	68.9	32.6	38.9
30-34	59.8	62.1	75.9	77.6	46.4	48.9
35-39	66.2	67.9	77.3	77.5	57.0	61.3
40-44	71.1	73.0	83.4	80.0	62.0	67.9
45-49	68.9	69.6	79.9	79.7	60.9	62.5
50-54	66.2	67.4	78.3	76.6	56.2	60.2
55-59	62.0	62.7	71.6	71.7	54.9	55.7
60-64	56.6	50.1	69.1	60.1	47.6	41.7
65-69	37.2	40.7	43.8	49.4	32.2	35.2
70-75	29.4	32.0	36.1	40.4	24.9	25.9

*Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2012, էջ 71:*

Ինչպես տեսնում ենք զբաղվածության մակարդակը ցածր է հատկապես 15-24 և 65-75 տարեկան բնակչության խմբերում:

2013 թվականի մարտի 1-ի դրությամբ աշխատանք փնտրողների թիվը կազմել է 71.8 հազար մարդ, որից 506 հազարը կանայք են, իսկ 18.5 հազարը՝ երիտասարդներ: Գործազուրկների թվաքանակը կազմել է աշխատանք փնտրողների 85.0 տոկոսը, կամ 61.1 հազար: Շարունակում է բարձր մնալ գործազուրկ կանանց թիվը, որը կազմում է գործազուրկների թվի 72.7 տոկոսը: Երիտասարդների թվաքանակը կազմում է գործազուրկների 23.7 տոկոսը: Գործազուրկ կանանց թվաքանակում մեծ տեսակարար կշիռ ունեն քաղաքաբնակները՝ 88.5 տոկոս: Նրանց հիմնական մասը կենտրոնացած են Երևանում, Գյումրիում, Վանաձորում, Կապանում, Արմավիրում: 2013 թվականի մարտի 1-ի դրությամբ գործազուրկության նպաստի ստացման իրավունք ունեն 10452 գործազուրկներ, որոնցից 7041-ը կանայք են, 1563-ը՝ երիտասարդներ: Աշխատանք փնտրողներից աշխատանքի են ընդունվել միայն 1570-ը, որից 994-ը կին, 461 երիտասարդ<sup>1</sup>:

Երիտասարդների զբաղվածության ապահովման դժվարությունները հիմնականում պայմանավորված են աշխատաշուկայում անմրցունակ մասնագիտություններ ունենալու փաստով:

Նույնիսկ պահանջված մասնագիտություններով աշխատաշուկա մտնող մասնագետների թիվը զգալիորեն գերազանցում է գործատուների կողմից ներկայացվող պահանջարկը: Ավելին, համաձայն «Հայաստանի երիտասարդության ազգային զեկույցի», զբաղված երիտասարդների 56 տոկոսը չի աշխատում իր մասնագիտությամբ: Աշխատանքի տեղավորման դժվարություններ ունեն նաև

<sup>1</sup> «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տվյալները:

50-ից բարձր տարիքի անձինք, որոնք երկարատև գործազրկության հետևանքով կորցնում են իրենց որակավորումը:

ՀՀ-ում անցումային շրջանին բնորոշ երևույթներն իրենց ազդեցությունն ունեցան նաև կրթական համակարգի վրա՝ հանգեցնելով աշխատաշուկայի և կրթական համակարգի անհամահասնությունների, որն էլ աշխատանքի շուկայում առաջարկի և պահանջարկի խզվածության հիմնական պատճառներից մեկն է: Կրթական համակարգը դեռևս գտնվում է բարեփոխումների փուլում, որը միտված է համահունչ դարձնելու տնտեսության, աշխատաշուկայի և մասնագիտական կրթության նպատակները: Հայաստանում ընդգրկվածությունը բարձր է հիմնականում կրթության համակարգում, իսկ համեմատաբար ցածր ավագ դպրոցի համակարգում: 2012 թվականի դրությամբ հանրապետությունում նախնական և միջնակարգ մասնագիտական կրթությունն իրականացվում է 96 միջնակարգ մասնագիտական և 25 նախնական մասնագիտական ուսումնական հաստատություններում: Հայաստանում գործում են 23 պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ<sup>1</sup>:

Աղյուսակ 11-ում ցույց են տրված յուրաքանչյուր կրթական օղակի բնակչության զբաղվածության մակարդակները: Հետաքրքրական է այն հանգամանքը, որ կրթության ամենաբարձր մակարդակ (բարձրագույն, հետբուհական) ունեցողների միայն 60.6 տոկոսն է զբաղված եղել և նրանցից շատերը ոչ իրենց մասնագիտությամբ: Սա վկայում է այն մասին, որ շատ մասնագիտությունների գծով արդեն իսկ բավարար առաջարկ կա և պետք է ուղղորդվել այն մասնագիտությունների պատրաստմանը, որոնց նկատմամբ աշխատաշուկայում առկա է չբավարարված պահանջարկ:

2011 թվականի դրությամբ միջնակարգ կրթություն ունեցող անձինք զբաղված բնակչության թվաքանակում ամենամեծ տեսակարար կշիռն ունեն՝ 40.7 տոկոս, նրանց հաջորդել են մասնագիտական բարձրագույն և հետբուհական կրթական մակարդակներ ունեցողները<sup>2</sup>: Սակայն ակնհայտ է, որ տնտեսությունում գիտելիքն ու ֆորմալ ուսուցումը մրցունակության առումով միշտ էլ անձի զբաղվածության կարևորագույն գործոններից են հանդիսացել:

*Աղյուսակ 10*

**Զբաղվածներն ըստ կրթության 2010-2011 թթ. (տոկոս)**

	Ընդամենը		Տղամարդ		Կին	
	2010	2011	2010	2011	2010	2011
Ընդամենը	49.6	51.4	59.9	60.1	41.1	44.4
Բարձրագույն, հետբուհական	60.5	60.6	71.9	69.6	52.0	53.9
Միջին մասնագիտական, թերի բարձրագույն	50.7	52.6	66.9	64.2	40.8	45.2
Նախամասնագիտական, արհեստագործական	60.4	64.7	76.4	78.4	43.1	48.6
Միջնակարգ ընդհանուր	47.9	50.1	57.4	59.7	39.3	42.0
Հիմնական ընդհանուր	35.6	35.0	41.9	38.4	28.5	31.0
Տարրական	32.8	34.2	34.1	37.6	31.9	31.7

*Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան, 2012, էջ 71:*

<sup>1</sup> Կրթության ազգային ինստիտուտի տվյալները:

<sup>2</sup> Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան, 2012, էջ 55:

Արդյունաբերական զարգացած երկրներում գործազրկության մակարդակն այնքանով ցածր է, որքանով բարձր է աշխատուժի կրթական մակարդակը: Սակայն զարգացող երկրներում գործազրկություն հնարավոր է նույնիսկ բարձր կրթական մակարդակի դեպքում: ՀՀ «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունը գործազրկությունն ըստ կրթական մակարդակի որոշելու համար կիրառում է երկու խումբ՝ միջին մասնագիտական կրթություն և բարձրագույն կրթություն: Աղյուսակ 11-ի տվյալները ցույց են տալիս, որ և՛ բարձրագույն, և՛ միջին մասնագիտական կրթություն ունեցող գործազուրկների թիվը նվազման միտումներ է դրսևորել, բացառություն են կազմել միայն ետճգնաժամային տարիները, երբ տնտեսական անկայուն վիճակով պայմանավորված աճել է գործազրկության մակարդակը: Տվյալներից կարելի է նաև եզրահանգել, որ աշխատաշուկա են մուտք գործում կրթության որոշակի մակարդակ ունեցողները, հատկապես բարձրագույն կրթություն ունեցողները:

**Աղյուսակ 11**

**Գործազուրկների թիվն ըստ կրթության (հազար մարդ)**

	2006	2007	2008	2009	2010	2011	2012
Բարձրագույն	12.6	8.8	10.0	11.9	12.0	11.8	10.1
Միջին մասնագիտական	22.0	16.6	17.0	19.3	18.1	15.4	14.2

*Աղբյուրը՝ «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալություն:*

Զբաղված բնակչության բաշխվածությունը վարձու և ոչ վարձու աշխատատեղերում երևում է աղյուսակ 12–ից: Տվյալները ցույց են տալիս, որ ՀՀ զբաղված բնակչության մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմում վարձու աշխատողները և ինքնազբաղվածները, վերջինների բաժինը տարեցտարի ավելանում է: Ինքնազբաղվածներն ավելի շատ կենտրոնացված են գյուղական վայրերում, իսկ քաղաքներում են գտնվում վարձու աշխատողների զգալի մասը: Դա պայմանավորված է նրանով, որ քաղաքներում աշխատատեղերն ավելի շատ են, ինչպես նաև բարձր է աշխատավարձը:

**Աղյուսակ 12**

**Զբաղվածներն ըստ զբաղվածության կարգավիճակի 2010-2011 թթ.  
(միջին տարեկան, հազար մարդ)**

Ընդամենը		վարձու աշխատող		գործատու		ինքնազբաղված		այլ	
2010	2011	2010	2011	2010	2011	2010	2011	2010	2011
Ընդամենը զբաղված 1185.2	1175.1	673.9	653.0	6.1	7.5	325.5	349.8	179.6	164.9
Տղամարդ 644.8	610.9	401.9	362.0	5.4	5.9	177.0	184.7	60.4	58.4

Կին 540.4	564.2	272.0	291.0	0.7	1.7	148.6	165.1	119.1	106.5
Քաղաք 627.7	631.8	525.5	527.2	5.7	5.7	84.3	90.0	12.2	8.8
Գյուղ 557.5	543.3	148.4	125.7	0.5	1.8	241.2	259.7	167.4	156.1

Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան, 2012, էջ 57:

ՀՀ մարզերում և Երևանում զբաղվածության ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա են տարածքային անհամասնություններ: Բազմաթիվ գործոններ, ինչպիսիք են տարածաշրջանային բարեփոխումների տեմպերը, անհավասար ներդրումները, ապրանքների ու ծառայությունների առաջարկի ու պահանջարկի աշխարհագրական առանձնահատկությունները և այլն, տարբերություններ են առաջացնում զբաղվածության ոլորտում: Տնտեսական աճին զուգահեռ, տարածքային զարգացման անհամաչափությունները խորանում և արտահայտվում են նրանում, որ գնալով մայրաքաղաք Երևանի տնտեսական դերը հանրապետությունում բարձրանում է: Մասնագիտական կրթություն ստացածները գերադասում են աշխատել Երևանում ոչ իրենց մասնագիտությամբ, քան թե գնալ մարզեր իրենց ստացած մասնագիտությամբ աշխատելու: Ըստ մարզերի զբաղվածության իրավիճակը 2012 թվականին ունեցել է հետևյալ պատկերը (տե՛ս աղյուսակ 13-ը):

**Աղյուսակ 13**

**Զբաղվածության ցուցանիշներն ըստ մարզերի և ք. Երևանի 2012 թ. հունվարին**

Ցուցանիշները	Արագածոտնի	Արարատի	Արմավիրի	Գեղարքունիքի	Լոռու	Կոտայքի	Շիրակի	Սյունիքի	Վայոց Ձորի	Տավուշի	Քարվաճառի Երևան
Աշխատուժը (հազ. մարդ)	67.9	121.0	125.5	107.1	103.9	84.4	95.4	57.3	26.6	56.6	348.7
Զբաղվածները (հազ. մարդ)	66.5	117.8	122.6	101.9	93.5	77.7	86.5	52.3	25.7	51.8	323.8
Գործազուրկները (հազ. մարդ)	1.4	3.2	2.9	5.2	10.4	6.7	8.9	5.0	0.9	4.8	24.9
Գործազրկության մակարդակը, %	2.1	2.6	2.3	4.9	10.0	7.9	9.3	8.7	3.4	8.5	7.1

Աղբյուրը՝ «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալություն:

Աղյուսակի տվյալները փաստում են, որ զբաղվածների թիվը հատկապես ցածր է Շիրակի և Լոռու մարզերում, որոնք հանդիսացել են աղետի գոտիներ և դրանց տնտեսությունները դեռևս լրիվ վերականգնված չի կարելի համարել:

Հայաստանի տնտեսության համաչափ տարածքային զարգացումը հանդիսանում է ՀՀ կառավարության հիմնական առաջնահերթություններից մեկը և ուղղորդված է Երևանից դուրս տնտեսական ենթակառուցվածքների ստեղծմանը:

ՀՀ տնտեսության զբաղվածության ոլորտի բնութագրիչներից է համարվում այն, որ շարունակվում է բարձր մնալ ոչ ֆորմալ զբաղվածության մակարդակը: Ոչ ֆորմալ զբաղվածությունն ավելի շատ տարածված է կանանց շրջանում, քան տղամարդկանց, իսկ բնակավայրերի առումով այն ավելի շատ տարածված է գյուղական բնակավայրերում (տե՛ս աղյուսակ 14-ը):

**Աղյուսակ 14**

**Ոչ ֆորմալ զբաղվածությունը ՀՀ տնտեսությունում**

(տոկոսով համապատասխան խմբի ընդամենը զբաղվածների նկատմամբ)

	2010	2011	2012
Ընդամենը	50.4	50.4	50.4
Տղամարդ	46.9	48.9	46.6
Կին	54.6	52.3	53.4
Քաղաք	23.3	22.5	22.4
Գյուղ	79.3	81.7	82.1

*Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան, 2012, էջ 70: 2012 թ. տվյալները վերցված են «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունից:*

Արդյունավետ զբաղվածության հիմնախնդիրներից է այնպիսի զբաղվածության առկայությունը, որն աշխատողի համար կապահովի բավարար եկամուտ: Այս առումով հարցը դիտարկելիս կարող ենք փաստել հետևյալ իրավիճակը: Հայաստանում 2012 թվականին միջին ամսական աշխատավարձը կազմել է 121342 դրամ, 2011 թվականի համեմատ աճելով 13250 դրամով: 2013 թվականի փետրվար ամսվա դրությամբ միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 139331 դրամ<sup>1</sup>: Ընդհանուր առմամբ տղամարդիկ ավելի բարձր են վարձատրվել, քան կանայք, այսպես, հանրապետական միջին ամսական աշխատավարձի նկատմամբ տղամարդկանց միջին ամսական աշխատավարձը գերազանցում է 30.4 տոկոսով, իսկ կանանց մոտ ընդհակառակն է, նրանց միջինը կազմում է հանրապետականի ընդամենը 78.3 տոկոսը<sup>2</sup>:

ՀՀ-ում զբաղվածության կարգավորման 2012 թվականի պետական ծրագրով նախատեսված միջոցառումների արդյունքում արձանագրվել են հետևյալ արդյունքները<sup>3</sup>:

2012 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ զբաղվածների թվի աճով պայմանավորված, հաշվառած աշխատանք փնտրողների թվաքանակը տարեսկզբի նկատմամբ նվազել է 10.9 տոկոսով և կազմել է 73679 մարդ, գործազուրկի կար-

<sup>1</sup> «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տվյալները:

<sup>2</sup> Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան, 2012, էջ 90:

<sup>3</sup> Աղբյուրը՝ «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տեղեկատվությունը:

գավիճակ ստացողների թիվը նվազել է 10.1 տոկոսով, կազմելով 63053 մարդ: Զբաղվածության պետական ծրագրերում ընդգրկվել են 18563 աշխատանք փնտրող անձինք՝ նախատեսված 23169-ի փոխարեն, որը կազմել է աշխատանք փնտրողների 25.2 տոկոսը: Այս ցուցանիշի նվազման պատճառը նպաստառու գործազուրկների ամսական միջին թվի նվազումն է 8743-ով, որը պայմանավորված է տնտեսության մեջ զբաղվածների թվի աճով և օրենսդրական միջոցառումների կիրառմամբ:

Տարեսկզբից գործազրկության նպաստի ստացման իրավունք է ձեռք բերել շուրջ 16257 գործազուրկ՝ նախորդ տարվա 21730-ի փոխարեն: Նպաստառու գործազուրկների թվաքանակը միջին ամսական հաստատված 20850-ի փոխարեն կազմել է 12818 մարդ:

Ինչպես տեսնում ենք, չնայած զբաղվածության պետական կառույցների գործադրած ջանքերին, գործազուրկների թիվը չի նվազում, իսկ եթե դա առկա է, ապա ակնհայտորեն արդյունք է արտագաղթի, որի հոսքը դեռևս ակտիվ է Հայաստանում:

## ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում դիտարկվում են ՀՀ-ում մարդկային կապիտալի հնարավոր կորուստները պայմանավորված թերզբաղվածությամբ և գործազրկությամբ: Այս նկատառումով վերլուծություն են ենթարկվել զբաղվածությունը և գործազրկությունը ՀՀ տնտեսությունում ըստ ճյուղերի, սեռի, տարիքի, կրթական մակարդակի և ըստ մարզերի:

## АННОТАЦИЯ

### ГАРИБЯН Г., АМБАРЦУМЯН А. – ЗАНЯТОСТЬ, БЕЗРАБОТИЦА И ПОТЕРИ ЧЕЛОВЕЧЕСКОГО КАПИТАЛА В РА

В статье рассматриваются возможные потери человеческого капитала, обусловленные неполной занятостью и безработицей. С этой точки зрения анализируются занятость и безработица в экономике РА по отраслям, полу, возрасту, уровню образования и регионам.

## SUMMARY

### GHRIBYAN G., HAMBARDZUMYAN A. EMPLOYMENT, UNEMPLOYMENT AND LOSSES OF HUMAN CAPITAL IN RA

In the article possible losses of the human capital are considered, caused by part-time employment and unemployment. Therefore employment and unemployment in RA economy are analyzed according to branches, sex, age, education level and regions.

**ՍՈՒՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

*տնտեսագիտության թեկնածու ԵՊՀ միջազգային տնտեսական  
հարաբերությունների ամբիոնի դոցենտ  
էլ.փոստ՝ surenpoghosyan@mail.ru*

**ԿԱՊԻՏԱԼԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ ԱՐՈՒԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ**

Տնտեսական և ֆինանսական գլոբալացման դարաշրջանում ֆինանսական շուկաները, այդ թվում կապիտալի շուկան ազգային և համաշխարհային տնտեսությունների ֆինանսական կարիքները սպասարկող ինստիտուտից վերափոխվել է ազգային և համաշխարհային տնտեսական զարգացումները պայմանավորող գլոբալ ուժի և մեխանիզմի: Դրա լավագույն վկայությունը համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամն է, որն իր ազդեցության գլոբալ բնույթի և խորության համար զգալի չափով պարտական է կապիտալի շուկային: Կապիտալի միջազգային շուկայի արդի զարգացումների հետազոտումը թույլ է տալիս բացահայտել կապիտալի գլոբալ շարժի պատճառները, շարժառիթները և միտումները, ազգային տնտեսությունների վրա ազդեցության ուղիները և հնարավոր հետևանքները:

Կապիտալի միջազգային շուկան նվազագույն տրանզակցիոն ծախսերով միջնաժամկետ և երկարաժամկետ ֆինանսական ռեսուրսների միջազգային պահանջարկի ու առաջարկի համապատասխանեցման և ֆինանսական ակտիվների միջազգային առևտրի մեխանիզմ է: Կապիտալի միջազգային շուկայի հիմնական գործառույթներից է երկրների և տարածաշրջանների միջև ֆինանսական ռեսուրսների վերաբաշխումը, միջազգային ակտիվների գների սահմանումը, իրացվելիության ապահովումը, ներդրումային քաղաքականության միջազգային ընդլայնումը և ռիսկերի վերաբաշխումը:

1980-ական թվականների սկզբից համաշխարհային ՀՆԱ-ի համեմատ ֆինանսական շուկաների առաջանցիկ աճը 1990-ին հանգեցրեց ինստիտուցիոնալ և կառուցվածքային լուրջ փոխակերպումների՝ գործընթացների, որոնք ավել կամ պակաս ինտենսիվությամբ շարունակվում են: 2007 թվականին համաշխարհային ֆինանսական ակտիվների ընդհանուր արժեքը հասավ իր բարձրակետին՝ 202 տրլն. դոլար: ճգնաժամի հետևանքով այդ ցուցանիշը անկում ապրեց, սակայն արդեն 2010 թ. գերազանցեց 2007 թ. մակարդակը, կազմելով 212 տրլն. դոլար: 2009 թ. համեմատ ավելի քան 11 տրլն. դոլար ավելացումից 6 տրիլիոնը բաժին էր ընկնում բաժնետոմսերի արժեքի աճին, իսկ 4,4 տրիլյոնը պետական պարտքային թղթերի թողարկումներին, գերազանցապես զարգացած երկրներում:

Համաշխարհային ֆոնդային շուկայի զարգացման ագրեգացված ցուցանիշները պատկերացում չեն տալիս ըստ երկրային խմբերի զգալի տարբերությունների մասին: 2010թվականին և նախորդ տասնամյակում բաժնետոմսերի նետտո-թողարկումների հիմնական մասը բաժին էր ընկնում զարգացող երկրներում:

րին<sup>1</sup>: Ձարգացած երկրների համար բնորոշ էր «ապաբաժնետիրացման» միտումը, երբ հետ զնված բաժնետոմսերի գումարային արժեքը գերազանցում էր նոր թողարկումների արժեքը, ինչը պայմանավորված էր ընկերությունների ֆինանսական կառուցվածքը փոփոխելու, ճգնաժամային կլանումները և միաձուլումները խթանելու անհրաժեշտությամբ:

Համաշխարհային ֆինանսական շուկայի և դրա գործիքային հատվածների զարգացման մասին պատկերացում են տալիս ֆինանսական խորության (financial depth) հետևյալ ցուցանիշները (աղյուսակ 1):

*Աղյուսակ 1*

**Համաշխարհային ֆինանսական շուկայի և հիմնական գործիքների ֆինանսական խորությունը (% , համաշխարհային ՀՆԱ-ի նկատմամբ)**

	1990	1995	2000	2005	2006	2007	2008	2009	2010
Բաժնետոմսերի շուկայի կապիտալացումը	53	62	101	97	111	121	60	85	91
Պետական և պետականին հավասարեցված պարտքային թղթեր	44	47	45	54	56	56	57	66	69
Ֆինանսական ինստիտուտների պարտքային թղթեր	39	40	54	62	70	76	71	78	71
Ոչ ֆինանսական ինստիտուտների պարտքային թղթեր	10	15	17	15	14	15	14	16	18
Արժեթղթավորված վարկեր	10	11	17	24	28	28	28	28	25
Զարժեթղթավորված վարկեր	106	88	87	82	80	80	79	83	82

*Աղբյուրը. հաշվարկված է ըստ McKinsey Global Institute 2008-2011 թթ. տվյալների:*

Աղյուսակ 1-ի տվյալների համաձայն 1990-2007թթ. համաշխարհային ֆինանսական շուկայի հիմնական գործիքային հատվածներում, բացառությամբ չարժեթղթավորված վարկերի, գրանցվել է ֆինանսական խորության էական առաջընթաց: Ճգնաժամով պայմանավորված 2008 թ. անկումից հետո, 2009-2010 թթ. շուկան վերականգնեց իր խորությունը, բացառությամբ բաժնետոմսերի շուկայի: Պետական և կորպորատիվ պարտքային թղթերի ծավալների աճը պայմանավորված էր պարտքային ճգնաժամի հաղթահարմանը միտված պարտքի վերակառուցման միջոցառումներով, հատկապես Եվրամիության երկրներում: Իր հերթին արժեթղթավորված վարկերի շուկայի զարգացմանը մեծապես նպաստեցին ՌԵՊՈ վարկերի արժեթղթային ապահովման թույլտվության Եվրոպայի կենտրոնական բանկի և ԱՆԳԼիայի բանկի որոշումները:

Ֆինանսական շուկայի խորության ցուցանիշը շրջանառության մեջ է դրվել ՎՋՄԲ փորձագետների կողմից, ֆինանսական ռեսուրսներով երկրների խմբերի

<sup>1</sup> Հետազոտության մեջ «զարգացող երկիր» համարվում են ձևավորվող շուկաներով երկրների այն խումբը, որոնք 1990-ական թվականներից լուրջ առաջընթաց են արձանագրել ֆինանսատնտեսական ցուցանիշների առումով: Ձարգացող երկրների առաջատարը BRICS երկրներն են:

ապահովվածությանը նվիրված հետազոտություններում<sup>1</sup>: Ամերիկացի գիտնականներ Ն. Լոյազի և Ռ. Ռանսյեյի կարծիքով ֆինանսական շուկայի խորությունը, երկարաժամկետ հատվածում, ավելի մեծ կայունություն է հաղորդում ֆինանսական համակարգին, քանի որ բարձրանում են կապիտալի հոսքերը առանց ակտիվների գների և փոխարժեքի կտրուկ տատանումների սպասարկելու ունակությունը<sup>2</sup>: Աղյուսակ 1-ի տվյալները չեն հաստատում այդ տեսակետը: Չնայած տևական ժամանակահատված ֆինանսական խորության էական զարգացմանը, մասնավորապես ԱՄՆ-ում ավելի քան երկու անգամ, 2007-2009 թթ. արձանագրվեց ակտիվների գների և փոխարժեքների կտրուկ տատանումներ: Ֆինանսական խորությունը, անկասկած, ֆինանսական համակարգի կայունության և ֆինանսական միջնորդության զարգացվածության կարևոր ցուցիչ է, սակայն եթե համաչափվում է իրական տնտեսության զարգացման և ֆինանսական շուկաների կողմից նրա պահանջների բավարարման հետ:

Ֆինանսական շուկաների խորությունը էականորեն տարբերվում է ըստ երկրային խմբերի, երկրների և ֆինանսավորման մոդելների: ԱՄՆ-ի, ճապոնիայի, Արևմտյան Եվրոպայի և այլ զարգացած երկրների շուկաների խորության գործակիցը 4,0 և բարձր է, Չինաստանում՝ 2,8, իսկ ձևավորվող շուկաներով երկրների մեծ մասում 2,0 և ցածր: Բաժնետոմսերի, կորպորատիվ պարտատոմսերի և արժեթղթավորված ակտիվների խոշորագույն շուկան ԱՄՆ-ինն է, իսկ Եվրոպայում և ճապոնիայում գերակշռում են ֆինանսավորման վարկային գործիքները և բանկային ինստիտուտները: ճապոնիայում շուկայի ֆինանսական խորության գրեթե կեսը բաժին է ընկնում պետական պարտատոմսերին, իսկ բանկային փոխառություններով՝ ավելի քան երկու երրորդը (աղյուսակ 2):

*Աղյուսակ 2*

**Երկրների և ռեգիոնների ֆինանսական խորության գործիքային և ամփոփ ցուցանիշները (% , ռեգիոնալ ՀՆԱ-ի նկատմամբ)**

	Բաժնետոմսերի շուկայի կապիտալացում	Պետական արժեթղթեր	Ֆին. ինստ-ի պարտքային արժեթղթեր	Ոչ ֆին. ինստ. պարտքային արժեթղթեր	Արժեթղթավորված վարկեր	Զարժեթղթավորված վարկեր	Ֆու ընդ
ԱՄՆ	119	75	116	31	77	44	462
Ճապոնիա	72	220	31	18	10	106	457
Արևմտյան Եվրոպա	69	72	115	10	15	110	400
Այլ զարգացած երկրներ	152	40	47	20	29	91	388
Չինաստան	97	28	16	10	2	127	280
Հնդկաստան	93	44	7	4	1	60	209

<sup>1</sup> **Dimitris K. Christopoulosa, Efthymios G. Tsionasb.** Financial development and economic growth: evidence from panel unit root and cointegration tests // Journal of Development Economics. Vol. 73 (2004), pp. 55-74.

<sup>2</sup> **Norman Loayza, Romain Renciere.** Financial Development, Financial Fragility, and Growth / Washington, DC: World Bank. Development Research Group, 2004.

Ասիայի այլ երկրներ	62	34	7	1	10	54	168
Միջին և Մերձ. Արևելք	96	15	5	6	2	66	190
Լատինական Ամերիկա	52	38	20	3	2	27	142
ԱՊՀ և Արևել. Եվրոպա	48	24	6	2	-	62	142

Աղբյուրը. Հաշվարկված է McKinsey Global Institute 2008-2011 թթ. գեկույցների տվյալների հիման վրա:

Վերազգային գործառնությունների և կապիտալի միջազգային շուկայի զարգացումը պահանջեց ֆինանսական խորության հասկացության ընդլայնված մեկնաբանություն և համապատասխան ցուցանիշների փոփոխություն: Ֆինանսական խորության ամփոփ (զլոբալ) ինդեքսը (index of financial depth, IFD) ներառում է ոչ միայն ազգային շուկայի ցուցանիշները, այլև երկրի արտաքին ակտիվները և պարտավորությունները, ինչը թույլ է տալիս ավելի լիարժեք պատկերացում կազմել համաշխարհային ֆինանսական համակարգում երկրի ինտեգրացվածության աստիճանի մասին: ԱՄՀ հաշվարկներով վերջին երկու տասնամյակներին գլոբալ ֆինանսական խորության աստիճանի բարձրացումը զգալի չափով տեղի է ունեցել արտաքին ակտիվների և պարտավորությունների հաշվին, որոնց բաժին է ընկել այդ ցուցանիշի հավելածի շուրջ մեկ երրորդը<sup>1</sup>:

Համաշխարհային ֆինանսական շուկայի ընդարձակման հիմքում կապիտալի վերազգային հոսքերի արագ աճն է և ֆինանսական միասնական տարածքում ազգային շուկաների ինտեգրումը: Գլոբալացումը, ներդրումների և ֆինանսական գործիքների դիվերսիֆիկացումը, կապիտալի շարժի և նորամուծությունների ազատականացումը, ազգային տնտեսությունների և արտաքին տնտեսական կապերի զարգացումը նպաստեցին կապիտալի միջսահմանային հոսքերի կտրուկ ավելացմանը: 1990-ական թվականների սկզբից կապիտալի միջազգային հոսքերը ավելացել են 28-30 անգամ կազմելով համաշխարհային ՀՆԱ-ի շուրջ 15%-ը:

Կապիտալի հիմնական արտահանողները և ներմուծողները զարգացած երկրներն են: Ընդ որում ուղղակի ներդրումային հոսքերի շուրջ 80 տոկոսը իրականացվում է այդ երկրների միջև: Կապիտալ արտահանող տասը խոշորագույն երկրներից ինն այդ խմբին պատկանող երկրներ են, որը պայմանավորված է ավելի տարողունակ շուկայի, որակյալ բանվորական ուժի, զարգացած ֆինանսական ենթակառուցվածքի առավելություններով: ԱՄՆ-ից և ճապոնիայից հետո կապիտալահոսքերի խոշորագույն կենտրոնը Եվրամիությունն է, դրան մեծապես նպաստում է Եվրագոտու ձևավորումը և ներռեզիոնալ ներդրումների կտրուկ աճը: Զարգացած երկրների ներդրումային հոսքերում գերակշռում են վերազգային ընկերությունների կողմից միաձուլումների և կլանումների ձևով իրականացվող ներդրումները: Նոր արդյունաբերական երկրների և ձևավորվող, այդ թվում զարգացող շուկաների, բաժինը կապիտալի միջազգային հոսքերում չի գերազանցում 20%, թեև նկատվում է աճի ակնհայտ միտում<sup>2</sup>:

<sup>1</sup> IMF Staff Discussion Note, SDN/11/16, October, 19, 2011.

<sup>2</sup> Finance and Development, September 2011, p.57.

Վերջին տասնամյակի ընթացքում կապիտալի վերազգային հոսքերի զգալի մասը բաժին է ընկնում օտարերկրյա արժեթղթերի շուկաների միջոցով ներգրավված միջոցներին: Ընդ որում և՛ զարգացած և՛ զարգացող երկրների ներգրավված վերազգային ռեսուրսների ընդհանուր ծավալում դրանց տեսակարար կշիռը գրեթե նույնն է՝ 71% և 69%: Միաժամանակ այդ միջոցների կառուցվածքը ըստ երկրային խմբերի զգալիորեն տարբերվում է: Չարգացած երկրներում գերակշռում են տարբեր ձևերով պարտքային փոխառությունները (համախառն ծավալի 35%), այնուհետև ուղղակի ներդրումները (21%) և բաժնային արժեթղթերում պորտֆելային ներդրումները (13%): Չարգացող երկրներում միջոցների ավելի քան կեսը բաժին է ընկնում ուղղակի ներդրումներին (53%), մինչդեռ պորտֆելային ներդրումներին և պարտքային գործիքներին համապատասխանաբար 10% և 8%:

Միջազգային ֆինանսական հոսքերի ավելացմամբ և ազգային շուկաների ֆինանսական փոխկախվածության աճով բնութագրվող ֆինանսական գլոբալացումը, միաժամանակ նպաստում է ճգնաժամային երևույթների արագ գեներացմանը և գլոբալ դրսևորմանը: 1990-ի սկզբից կարելի է առանձնացնել օտարերկրյա ներդրումների ճգնաժամային անկման չորս փուլեր. 1990-1991 թթ., 1997-1998 թթ., 2000-2002 թթ. և 2007-2009 թթ.: Առավել ուժգինը 2007-2009թթ. անկումն էր, երբ օտարերկրյա ներդրումները կրճատվեցին շուրջ 85%՝ 2007 թվականին 10,9 տրլն. դոլարից մինչև 1,6 տրլն. դոլար 2009 թվականին: Գլոբալ ճգնաժամից հսկայական ֆինանսական կորուստներ կրեցին ոչ միայն ձևավորվող շուկաները, այլև զարգացած երկրները՝ բանկային ինստիտուտների սնանկացում, միջսահմանային բանկային վարկավորման կրճատում, կապիտալի ուղղակի և ներդրումային հոսքերի նվազում: Ճգնաժամի հարուցած ֆինանսական կորուստներին դիմակայելու համար զանգվածային բնույթ ստացավ օտարերկրյա ակտիվների վաճառքը և կապիտալների հայրենադարձումը:

Շարունակվող անկայունությունը և զարգացած երկրներում ներդրումների ցածր եկամտաբերությունը, ներդրողների մոտ որոշակի հետաքրքրություն առաջացրեց զարգացող երկրների արժեթղթերի, հատկապես պարտքային թղթերի նկատմամբ: Կապիտալի միջսահմանային հոսքերը մասամբ վերականգնվեցին 2010 թվականին, մնալով սակայն 1998 թվականի (4,4տրլն. դոլար) մակարդակին<sup>1</sup>:

Վերջին տարիներին կապիտալի միջազգային հոսքերի համար բնութագրական է նաև մեծ տատանողականությունը, ընդ որում զարգացած երկրների միջև ավելի (առանձին տարիներին մինչև 4 տրլն. դոլար), քան զարգացող երկրներում: McKinsey խորհրդատվական ընկերության Գլոբալ հիմնախնդիրների ինստիտուտի գնահատմամբ, միջին տարեկան ցուցանիշներով զարգացած երկրների միջև հոսքերի վալատիվությունը շուրջ մեկ հինգերորդով գերազանցում էր զարգացող երկրների ցուցանիշները: Ընդ որում տատանումների մեծ մասը միջսահմանային վարկավորման հետ էր կապված, որը գրեթե չորս անգամ ավելի էր ՕՈՒՆ-ի տատանողականությունից<sup>2</sup>:

<sup>1</sup> UNCTAD, World Investment Report 2011, pp. 64-65.

<sup>2</sup> Debt and Deleveraging: uneven progress on the path to growth / McKinsey Global Institute, January 2012, p.42.

Կապիտալի միջազգային շարժի արդի փուլի համար բնութագրական է նաև զարգացող շուկաներով երկրների որպես միջազգային ներդրողների դերի բարձրացումը: Նախորդ տասնամյակում այդ երկրների ներդրումների բաժինը կապիտալի գլոբալ հոսքերում ավելացել է 6%-ից մինչև 20%: Թեև միջոցների մեծ մասը զարգացած երկրների արժեթղթերում կենտրոնական բանկերի ներդրումներն են, աճում են նաև պետական ներդրումային ֆոնդերի, ընկերությունների, ֆիզիկական անձանց միջազգային ներդրումները: Մասնավորապես 2010 թվականին զարգացող երկրների ՕՈՒՆ կազմել է 327,7 մլրդ. դոլար, ավելի քան երկու անգամ գերազանցելով 2005 թվականի ծավալները: Հատկապես աճել են Չինաստանի (ներառյալ Հոնկոնգի) և Ռուսաստանի օտարերկրյա ներդրումները<sup>1</sup>:

Վճարային հաշվեկշռի խոշոր դեֆիցիտ ունեցող երկրները, որոնց թվում գերակշռում են զարգացած երկրները, կամա թե ակամա, դառնում են կապիտալի նետտո-ներմուծող երկրներ, ի տարբերություն կապիտալի հաշվի դրական սալդո ունեցող նետտո-արտահանող երկրների (տես աղյուսակ 3):

### Աղյուսակ 3

#### 2010 թվականին կապիտալի նետտո-արտահանող և նետտո-ներմուծող հիմնական երկրները (% , ընդհանուրի նկատմամբ)

Նետտո-արտահանող երկիր	Տեսակարար կշիռը	Նետտո-ներմուծող երկիր	Տեսակարար կշիռը
Չինաստան	20,1	ԱՄՆ	39,7
Ճապոնիա	12,9	Մեծ Բրիտանիա	6,0
Գերմանիա	12,3	Իտալիա	5,7
Շվեյցարիա	5,5	Իսպանիա	5,4
Ռուսաստան	4,7	Կանադա	4,2
Սաուդյան Արաբիա	4,4	Թուրքիա	4,1
Նիդերլանդներ	3,7	Բրազիլիա	4,0
Նորվեգիա	3,4	Այլ երկրներ	30,9
Սինգապուր	3,3		
Թայվան	2,6		
Քուվեյթ	2,4		
Քաթար	2,1		
Շվեդիա	1,9		
Այլ երկրներ	20,7		

Աղբյուրը. *Global Financial Stability Report, IFM, Statistical Appendix, September 2011.*

2010 թվականին, չնայած նախորդ տարիների նվազ արտահայտված աճին, օտարերկրյա ներդրումների ակտիվները հասան պատմական բարձրակետին՝ 96 տրլն. դոլարի, ինչը գրեթե տասն անգամ գերազանցում էր 1990 թ. մակարդակը: Օտարերկրյա ակտիվների առավել արագ աճող մասը՝ կենտրոնական բանկերի արժուքային պահուստները, 2010 թ. վերջին հասավ 8,7 տրլն. դոլարի (ակտիվների 9%-ը): Ռեկորդային 21 տրլն. դոլար կազմեց արտասահմանյան պարտքա-

<sup>1</sup> UNCTAD, World Investment Report 2011, pp. 188-190.

յին թղթերի ձեռքբերումը ինստիտուցիոնալ և մասնավոր ներդրողների կողմից, գրեթե հավասարվելով ուղղակի ներդրումների մակարդակին: Գճնաժամային կրճատումից հետո, միջազգային վարկավորման ընդարձակման շնորհիվ, չմարված միջսահմանային վարկավորման ընդհանուր ծավալը վերադարձավ 2007 թվականի մակարդակին՝ 31 տրլն. դոլար<sup>1</sup>: Գլոբալ ակտիվների ավելի, քան 36%-ը ներկայացված է պարտքային թղթերով և բաժնետոմսերում պորտֆելային ներդրումներով, իսկ ուղղակի ներդրումների հաշվառումով ավելի շատ:

2010 թվականին օտարերկրյա ֆինանսական ակտիվների 87%-ը բաժին էր ընկնում զարգացած երկրների ներդրողներին: 2010 թվականի դրությամբ խոշորագույն ներդրողն Ամերիկայի Միացյալ Նահանգներն էր՝ 15,3 տրլն. դոլար օտարերկրյա ակտիվներով, այնուհետև Մեծ Բրիտանիան (10,9 տրլն. դոլար) և Գերմանիան (7,3 տրլն. դոլար):

Այդուսակ 3-ում բերված տվյալներով ճապոնիան կապիտալի նետոտ-արտահանմամբ գիջում է Չինաստանին, սակայն տևական ժամանակ շարունակում է մնալ խոշորագույն վարկատուն աշխարհում, ավելի քան 3 տրլն. դոլար նետոտ-ակտիվներով: Թեև ճապոնիան խոշորագույն պետական պարտք ունեցող երկրներից է (ՅՆԱ-ի 200%-ը.) դրա հիմնական մասը տիրում են ռեզիդենտ բանկերը, ընկերությունները և մասնավոր ներդրողները:

Չինաստանը երկրորդ խոշորագույն վարկատուն է 2,2 տրլն. դոլար արտաքին նետոտ-ակտիվներով: Գերմանիան որպես վարկատու երրորդն է՝ 1,2 տրլն. դոլար ակտիվներով: Թվարկված երկրների վճարային հաշվեկշիռների ընթացիկ հաշիվները ևս պրոֆիցիտային է, առանձին տարիներին կազմելով զգալի մեծություններ:

Աշխարհում խոշորագույն օտարերկրյա զուտ փոխառուն Միացյալ Նահանգներն է, որի պարտավորությունները 3,1 տրլն. դոլարով գերազանցում են ակտիվները: Այդ ցուցանիշի անընդհատ աճը վճարային հաշվեկշիռի ընթացիկ հաշվի մշտական դեֆիցիտի հետևանք է, որը ֆինանսավորվում է ամերիկյան արժեթղթերում օտարերկրյա ներդրումների և վարկերի ներգրավման միջոցով: Իսպանիան աշխարհում երկրորդ խոշորագույն օտարերկրյա փոխառուն է 1,3 տրլն. դոլար (ՅՆԱ-ի 91%) նետոտ-պարտքային պարտավորությամբ:

2000 թվականից խնայողությունների բարձր մակարդակ ունեցող զարգացող երկրների օտարերկրյա ակտիվները կրկնակի անգամ արագ են աճել, քան զարգացած երկրների արտաքին ակտիվները: Մի կողմից դա զարգացող երկրների կառավարությունների, ընկերությունների, մասնավոր ներդրողների իրենց պորտֆելների դիվերսիֆիկացման ակտիվ քաղաքականության արդյունք է, մյուս կողմից միջազգային ֆինանսական շուկաներին այդ երկրների խորը ինտեգրման վկայություն: Աճում են նաև ռիսկերը, ինչպես արժությային կուրսերի տատանումների, այնպես էլ շուկայի խոշոր խաղացողների քաղաքականությունների փոփոխության հետ կապված: Այդ գործոնների բացասական ազդեցության աստիճանը կախված է զարգացող երկրների օտարերկրյա ակտիվների և պարտավորությունների կառուցվածքից, կապիտալի հայրենադարձման հնարավորությունից: Ավելի կայուն են ուղղակի ներդրումների գերակայությամբ պորտֆելները, որոնք

<sup>1</sup> The Bank of England, Financial Stability Paper, No. 12, December 2011, pp. 15-17.

ռեցիպիենտ երկրում հետապնդում են երկարատև շահեր, նվազ կայուն՝ պարտքային և պորտֆելային ներդրումներով պորտֆելները:

Կապիտալի միջազգային շուկայում առանձին երկրների ներդրումային գործունեության արդյունքների մասին որոշակի պատկերացում է տալիս այդ երկրների միջազգային ներդրումային դիրքը (աղյուսակ 4):

#### Աղյուսակ 4

### Ձարգացած, նոր արդյունաբերական և առաջատար գարգացող երկրների միջազգային զուտ ներդրումային դիրքը 2005-2010 թթ. (% ՅՆԱ-ի նկատմամբ)

Երկրներ	2005	2006	2007	2008	2009	2010
ԱՄՆ	-15,3	-16,4	-12,8	-22,8	-17,2	-17,0
Անգլիա	-20,1	-29,0	-23,0	-7,0	-21,8	-13,7
Ճապոնիա	36,0	42,4	48,5	44,7	56,5	52,5
Գերմանիա	21,1	27,9	26,5	25,0	34,6	37,9
Ֆրանսիա	1,1	1,1	-1,5	-12,9	-9,1	-10,6
Իտալիա	-15,7	-20,6	-24,6	-24,2	-25,8	-24,6
Իսպանիա	-55,6	-65,9	-78,1	-79,3	-94,1	-89,8
Հարավային Կորեա	-20,0	-19,1	-22,0	-7,2	-11,3	-13,2
Հոնկոնգ	-	273,1	233,6	287,8	344,2	309,3
Սինգապուր	-	221,3	193,0	158,9	216,5	224,2
Չինաստան	17,8	22,5	32,7	32,5	30,3	29,8
Հնդկաստան	-5,8	-6,2	-5,9	-7,5	-9,4	-12,7
Բրազիլիա	-34,5	-33,3	-36,0	-21,8	-32,3	-30,3
Ռուսաստան	-4,2	-3,8	-11,2	17,9	7,9	1,0
ՀԱՀ	-13,7	-16,2	-23,1	-4,6	-12,4	-16,2
Թուրքիա	-36,3	-38,4	-43,7	-32,3	-42,9	-49,9
Եվրոյի գոտի	-8,6	-11,4	-13,5	-16,7	-16,2	-13,9

Աղբյուրը. OECD/IFM Statistics, 2011.

Աղյուսակ 4-ի տվյալներից դատելով, ըստ զուտ միջազգային ներդրումային դիրքի հարաբերական ցուցանիշի երկրային խմբերի առանձնացումը բավական պայմանական բնույթ է կրում: Ե՛վ գարգացած, և՛ նոր արդյունաբերական, և՛ առաջատար գարգացող երկրներում կան ինչպես խիստ բացասական ներդրումային դիրքով, չափավոր բացասական, այնպես էլ դրական դինամիկայով երկրներ: Դիրքերը առավել հավասարակշռված են նոր արդյունաբերական երկրների խմբում, որտեղ չափավոր բացասական ներդրումային դիրք ունեցող Հարավային Կորեային լրացնում են խիստ դրական դիրք ունեցող Հոնկոնգը և Սինգապուրը:

Ձարգացած երկրների խմբում ՅՆԱ-ի նկատմամբ խիստ բացասական ներդրումային դիրքով առանձնանում են Իսպանիան և Իտալիան, որոնք լուրջ խնդիրներ ունեն պետական պարտքի կառավարման առումով: Եվրոգոտու երկրների մեծ մասին, և՛ տոկոսային և՛ հատկապես ծավալային առումով գերազանցում է ԱՄՆ-ը: 2008-2010 թթ. արտաքին աշխարհի հետ ԱՄՆ-ի բավական բարձր (-19,0%) բացասական ներդրումային մնացորդը, միաժամանակ այդ երկրի նկատմամբ օտարերկրյա ներդրողների բարձր վստահության վկայություն է:

Այդ իրողությամբ պետք է բացատրել արժութային շուկայում, չնայած հսկայական էմիսիայի, ԱՄՆ դոլարի ամուր դիրքերը, ցածր գնաճը և ամերիկյան արժեթղթերի ցածր եկամտաբերության պահպանումը, ինչը բարենպաստ պայմաններ է ստեղծում պետական պարտքի կառավարման համար:

Ջարգացող երկրների խմբում (BRICS+Թուրքիա) համապատասխանաբար -49,9% և -30,3% ցուցանիշներ ունեն Թուրքիան և Բրազիլիան, ընդ որում Թուրքիայի պարագայում ցուցանիշի դինամիկան արտահայտված բացասական է: Սակայն նկատի ունենալով վերջին տարիներին այդ երկրների տպավորիչ տնտեսական ձեռքբերումները, արտաքին ակտիվների և պարտավորությունների, ի մասնավորի կապիտալի արտահոսքի և ներհոսքի նման բացասական հարաբերակցությունը (տե՛ս աղյուսակ 3), կարող է բացատրվել նաև այդ երկրների ներդրումային գրավչությամբ և տնտեսական զարգացման հեռանկարայնությամբ: Նկատենք, որ Թուրքիայի պարագայում չի գործում իսլամական երկրի և զարգացման անհամատեղելիության կամ զարգացման իսլամական մոդելի անհեռանկարայնության թեզը: Ավելին, տնտեսական զարգացման թուրքական մոդելը ուսանելի կարող է լինել նաև Հայաստանի համար:

Ջարգացած և զարգացող երկրների վերջին երկու տասնամյակների միջազգային ներդրումային դիրքի ակտիվների և պարտավորությունների կառուցվածքի ուսումնասիրությունը, թույլ է տալիս սահմանել հիմնական կանոնը. այն ինչ պարտավորություն է զարգացած երկրների համար, միաժամանակ ակտիվ է զարգացող, նախ և առաջ, BRICS խմբի երկրների համար, և հակառակը: Ջարգացած երկրներում պարտավորությունների գերակշիռ մասը ներկայացված են պետական և կորպորատիվ պարտքային թղթերով, ինչպես նաև բանկային վարկերով, մինչդեռ ուղղակի և պորտֆելային ներդրումները շատ ավելի համեստ տեղ են զբաղեցնում: 2010 թվականի դրությամբ զարգացած երկրների արտաքին պարտավորությունների կառուցվածքում ուղղակի ներդրումները 14,9%, իսկ պորտֆելային ներդրումները 13,6% էին կազմում: Դատելով ձևավորվող շուկաներով երկրների պարտավորություններում ուղղակի ներդրումների 46,4% ցուցանիշից (Չինաստանում 63,2%), զարգացած երկրների արտաքին ակտիվների զգալի մասը ներկայացված է ուղղակի ներդրումներով: Նկատենք, որ արժեթղթերի շուկայի թերզարգացվածության պատճառով ձևավորվող շուկաներով երկրներում պորտֆելային ներդրումները չեն գերազանցում 15%-ը կամ ավելի, քան երեք անգամ զիջում են ուղղակի ներդրումներին: Ուղղակի և պորտֆելային ներդրումների հետ կապված արժույթային ռիսկերը համենատարբար ցածր են, քանի որ գերազանցապես իրականացվում են տվյալ երկրի ազգային արժույթով: 2010 թվականին ձևավորվող շուկաներով երկրների ակտիվների 52,7%-ը (Չինաստանում 69,0%)<sup>1</sup> բաժին էր ընկնում արժույթային պահուստներին, ինչը նրանց կողմից պահուստային ֆոնդերի ձևավորման և ազգային արժույթի փոխարժեքի իջեցմանը միտված արժույթային ինտերվենցիաների ակտիվ քաղաքականության հետևանք է:

2011 թվականին համաշխարհային ֆոնդային կապիտալացման ավելի քան 12% անկումը և 2011-2012 թթ. բազմաթիվ երկրներում ռեցեսիոն միտումների առկայությունը վկայում են, որ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնա-

<sup>1</sup> Finance and Development, December 2011, p. 21.

ժամի բացասական ներուժը չի սպառվել: Մասնավորապես, Ռուսաստանում 2012 թ. սպասվածից ավելի ցածր՝ շուրջ 2% տնտեսական աճը և ըստ երևույթի ավելի ցածր ցուցանիշը 2013 թվականին, ռուսաստանցի շատ վերլուծաբաններ որպես լճացում են բնութագրում: Այնուամենայնիվ, աշխարհի խոշորագույն՝ ԱՄՆ-ի և Չինաստանի տնտեսությունների բարձր կենսունակությունը, վերջին տարիներին ճապոնիայի տնտեսությունում նկատվող դրական միտումները, 2013 թվականի առաջին և երկրորդ եռամսյակներում Եվրամիության առաջատար՝ Գերմանիայի և Ֆրանսիայի տնտեսություններում սպասվածից բարձր աճի ցուցանիշները, Պորտուգալիայի և Իսպանիայի բյուջետային լավ արդյունքները լավատեսության որոշակի հույսեր են ներշնչում:

Կիպրոսի բանկային ճգնաժամից և ահագնացող դոլարային էքսպանսիայից դատելով, համաշխարհային ֆինանսատնտեսական, ի մասնավորի ամերիկյան էլիտան, չի բացառում նաև փոքր ֆինանսական ցնցումների և դոլարից համաշխարհային տնտեսության կախվածության չարաշահման միջոցով, հնարավոր մեծ ճգնաժամի կանխման սցենարի ընտրությունը: Համաշխարհային տնտեսության և ֆինանսական շուկաների հետագա զարգացումները զգալի չափով կախված են միջազգային և ռեգիոնալ ֆինանսատնտեսական կազմակերպությունների, առաջատար տնտեսությունների և պարտքային ճգնաժամում հայտնված երկրների համաձայնեցված գործողություններից, կարգավորման նոր գործիքների արդյունավետությունից, ինչպես նաև միջազգային ֆինանսական ինստիտուտների պատասխանատու գործողություններից:

Կապիտալի շուկայի կայացումը շատ ավելի բարդ խնդիր է Հայաստանում, որը ՀՆԱ-ի մոնետարացման, արժեթղթերի կապիտալիզացիայի, վարկեր/ ՀՆԱ հարաբերակցությամբ, ավանդների և վարկերի տոկոսադրույքների սփրեդի և այլ ֆինանսական ցուցանիշներով միայն մեծ վերապահումով կարող է ձևավորվող շուկա համարվել: Մասնավորապես բաժնետոմսերի կապիտալիզացիան չի գերազանցում ՀՆԱ-ի 1,5 %-ը, որը ամենացածր ցուցանիշներից մեկն է աշխարհում: Հայաստանում կապիտալի շուկայի զարգացմանը խոչընդոտող պատճառներից կարելի է առանձնացնել 1) խնդրահարույց խորհրդային ժառանգությունը, 2) 1991-1994 թթ. ֆինանսական ճգնաժամը և կոշտ հակաինֆլյացիոն քաղաքականությունը, 3) ազգային խնայողությունների ցածր մակարդակը և կապիտալի փախուստը, 4) անարդյունավետ սեփականաշնորհումը, 5) պրոբանկային ֆինանսական զարգացման մոդելը, 6) պետական պարտքային շուկայի արտամղման էֆեկտը:

ՀՀ կապիտալի շուկայի արդի նկարագրի հիմնական բնութագրիչներն են.

- թերզարգացված վիճակը,
- կառուցվածքային անհամաձայնությունները, մասնավորապես փոխառվական կապիտալի շուկայի ակնհայտ գերակայությունը,
- կապիտալի շուկայի արժեթղթային հատվածում պետական պարտատոմսերի շուկայի դոմինանտ կարգավիճակը,
- «երկար փողերի» նկատմամբ սակավ և ոչ որակյալ պահանջարկը,
- գերազանցապես առևտրային բանկերի կողմից միջնորդության իրականացումը:

Նման բնութագրիչներով կապիտալի շուկան չի կարող լուրջ գործընկեր լինել միջազգային շուկաների և ինստիտուտների համար: Պատահական չէ, որ գլոբալ ֆինանսական ճգնաժամը իր իրացվելիության և պարտքային փուլերով,

զգալի բացասական ազդեցություն չունեցավ ՀՀ ֆինանսական շուկաների և ինստիտուտների վրա: Հասկանալի է սակայն, որ ճգնաժամի տիրույթում թերզարգացվածության առավելությունը, լուրջ թերություն է դառնում ոչ ճգնաժամային ժամանակաշրջանում, քանի որ տնտեսությունը զրկվում է «երկար փողեր» ձևավորելու և իրական ներդրումների ձևով վերաբաշխելու ներքին ֆինանսական մեխանիզմից:

ՀՀ կապիտալի շուկայի կայացման և զարգացման համար լուրջ խթան կարող է լինել պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրումը, երկարաժամկետ ներդրումային հորիզոն ունեցող կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների պորտֆելների ձևավորումը: Կենսաթոշակային բարեփոխումների հաջողությունը զգալի չափով կախված է երկրի քաղաքական և տնտեսական զարգացումներից, միջազգային շուկաների կայունությունից, Մաքսային միության հեռանկարից, տնտեսության արդիականացումից, շահառուների սպասումներից, և բնականաբար կառավարիչ ֆիրմաների գործունեության արդյունավետությունից:

## ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում վերլուծվում են կապիտալի միջազգային շուկայի արդի զարգացումները, հիմնական ուշադրությունը հատկացնելով հետճգնաժամային զարգացման միտումներին: Կապիտալի միջազգային շուկայի վերլուծությունը իրականացվել է առանձնացնելով ուղղակի և պորտֆելային հոսքերը: Որպես կապիտալի միջազգային շուկայի հիմնական սուբյեկտներ դիտարկվել են զարգացած երկրները և տնտեսական զարգացման տպավորիչ արդյունքներ գրանցած զարգացող երկրները՝ Չինաստանի գլխավորությամբ:

## АННОТАЦИЯ

### ПОГОСЯН С. О. – СОВРЕМЕННЫЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ МЕЖДУНАРОДНОГО РЫНКА КАПИТАЛА

В статье анализируются современные тенденции развития международного рынка капитала, основное внимание уделяя посткризисным тенденциям развития. Анализ международного рынка капитала проводится на основе разграничения прямых и портфельных потоков. В качестве основных субъектов международного рынка капитала рассмотрены развитые страны и продемонстрировавшие впечатляющие результаты экономического развития развивающиеся страны, во главе с Китаем,.

## SUMMARY

### POGHOSYAN S. H. – RECENT DEVELOPMENTS OF THE INTERNATIONAL CAPITAL MARKET

In the article the recent developments of the international capital market are analyzed paying much attention to the trends of the post-crisis development. The analysis of the international capital market is implemented separating the direct and portfolio flows. Developed countries and developing countries which made spectacular results in the economic development headed by China are considered as the main subjects of the international capital market.

**ԹՈՐՈՍ ԹՈՐՈՍՅԱՆ**

*տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,  
ԵՊՀ միջազգային տնտեսական  
հարաբերությունների ամբիոնի վարիչ  
tstoros@yahoo.com*

**ԼԻԼԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ**

*տնտեսագիտության թեկնածու,  
ԵՊՀ միջազգային տնտեսական  
հարաբերությունների ամբիոնի դասախոս  
sarg.lilit@yahoo.com*

**ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ  
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Ժամանակակից աշխարհի կարևորագույն հատկանիշներից է տարբեր երկրների տնտեսությունների փոխադարձ կախվածության աճը և ինտեգրման գործընթացների զարգացումը մակրո և միկրո մակարդակներում: Տնտեսական ինտեգրման միջոցով արտադրողները հնարավորություն են ստանում իրենց արտադրանքը տվյալ ինտեգրման գործընթացին մասնակից այլ երկրների տարածք արտահանել, իսկ դրանով ընդլայնել վերջիններիս սպառողական շուկան: Մյուս կողմից երկրները հնարավորություն են ստանում ներկրել այն ապրանքատեսակները և ծառայությունները, որոնց նկատմամբ տվյալ երկիրը ունի պահանջարկ, որը կարող է ապահովել մասնակի կամ՝ ընդհանրապես չապահովել (օրինակ՝ Հայաստանի դեպքում նավթի, գազի, ցիտրուսային և ծովային մթերքների, սուրճի, կակաոյի, բրնձի, շաքարի և այլնի ամբողջական ներմուծումը):

Համաաշխարհային տնտեսական ինտեգրման գործընթացներում կարևոր և որոշակի տեղ են գրավում տարածաշրջանային ինտեգրման գործընթացները: Երկրների միջև տարածաշրջանային համագործակցությունը կարող է իրականացվել երկու ճանապարհով՝ տարածքի երկրների շահերը շոշափող ծրագրերի համատեղ իրականացման և տնտեսական ինտեգրման խորացմանը նպաստող կազմակերպման եղանակներով՝ ազատ առևտրի գոտի, մաքսային միություն, ընդհանուր շուկայի ձևավորում և այլն:

Ներկայումս մյուս երկրների հետ ունեցած Իրանի Իսլամական Հանրապետության (այսուհետ՝ ԻԻՀ) փոխհարաբերությունները կարելի է պայմանականորեն բաժանել 2 մակարդակի՝ արտաքին, որը ներառում է առաջին հերթին հարաբերություններ ԱՄՆ-ի, եվրոպական և այլ երկրների հետ, և ներքին՝ տարածաշրջանային հարաբերություններ՝ Ռուսաստանի, Թուրքիայի և Հարավկովկասյան պետությունների հետ:

Իրանը ԱՄՆ-ի համար միշտ դիտվել է որպես վերջինիս անվտանգությանը սպառնալիք հանդիսացող պետություն: 2001 թ. սեպտեմբերի 11-ի դեպքերից հետո ԱՄՆ-ը Իրանին համարում է որպես, այսպես կոչված՝ «չարիքի առանցք»: Մյուս կողմից, երկու երկրների շահերը բախվում են կասսայան տարածաշրջա-

նում (որը ԱՄՆ-ի կողմից հայտարարված է որպես «Վաշինգտոնի ռազմավարական շահերի գոտի»)՝ չսահմանափակվելով միայն տեղական նշանակությամբ և ներգրավելով նաև աշխարհագրորեն միմյանցից հեռու շատ այլ պետությունների:

Ինչ վերաբերում է տարածաշրջանին, ապա այստեղ ԻԻՅ-ի համար ամենահզոր գործընկեր կարող է հանդիսանալ Ռուսաստանը, ինչը բացատրվում է միմյանց նկատմամբ նրանց փոխշահավետ հետաքրքրությամբ: Մասնավորապես, ԻԻՅ-ի միջով է անցնում դեպի Պարսից Ծոց, արաբական աշխարհի և երկրագնդի աշխարհագրական կարևոր կետեր՝ Աֆղանստան և Պակիստան ձգվող ճանապարհը: Սակայն Ռուսաստանը և ԻԻՅ-ն չունեն ընդհանուր սահման, հետևաբար այդ պակասը լրացվում է նրանց՝ Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) նկատմամբ գործընկերային հարաբերությունների պահանջման ձգտումով, որը տվյալ պարագայում հանդիսանում է տարածաշրջանային կապող օղակը:

Ինչպես հայտնի է, տարածաշրջանում ԻԻՅ-ի լուրջ մրցակիցը Թուրքիայի Հանրապետությունն է, մինչդեռ արևմուտքի պետությունների համար առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում աճող պահանջարկը էներգառեսուրսների նկատմամբ և ուժեղանում է պայքարը էներգառեսուրսների արտահանման և փոխադրման գործընթացում: Նշենք, որ այդ հարցում առավելությունն այսօր պատկանում է Թուրքիային, որը ձգտում է իրականացնել իր պլանները՝ շրջանցելով ԻԻՅ-ին և Ռուսաստանին:

Ընդհանուր առմամբ, ԻԻՅ-ն հանդիսանում է ագրարային-արդյունաբերական երկիր, որի տարածքը կազմում է 1648 հազար քկմ: Այն հավասար է Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի, Բելգիայի, Իռլանդիայի և Դանիայի տարածքները՝ միասին վերցրած: ԻԻՅ-ն սահմանակից է ՀՀ-ին, Ադրբեջանի և Թուրքմենստանի հանրապետություններին, Թուրքիային, Իրաքին, Աֆղանստանին և Պակիստանին և ելք ունի դեպի Կասպից և Օմանի ծովեր ու Պարսից ծոց<sup>1</sup>: Բնակչությունը 2013 թ. դրությամբ 79.9 մլն է, որի կեսից ավելին պարսիկներ են, 16%-ը՝ ադրբեջանցիներ, 10%-ը՝ քրդեր, կան նաև արաբներ, թուրքմեններ, հայեր և այլն<sup>2</sup>:

ԻԻՅ-ի ՀՆԱ-ն 2012 թ. կազմում էր 548.9 մլրդ ԱՄՆ դոլար, որի ծավալով երկիրը զբաղեցնում է 18-րդ տեղը աշխարհում՝ տարածաշրջանի երկրներից զիջելով միայն Թուրքիային<sup>3</sup>: Սակայն հարկ է նշել, որ վերջին 2 տարում ԻԻՅ-ի տնտեսությունում գրանցված փոփոխությունները առավելապես բացասական ուղղվածության էին. 2011-2012 թթ. նկատվում է ՀՆԱ-ի աճի տեմպերի նվազման միտում, փոխարենն աճում են գործազրկությունը, ինֆլյացիան և պետական պարտքը (գծապատկեր 1):


<sup>1</sup> La recherche puor l'Iran, l'Universite de Laval, Quebec-  
<http://www.axl.cefan.ulaval.ca/asia/iran.htm>

<sup>2</sup> <https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/ir.html>

<sup>3</sup> <https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/rankorder/2001rank.html?country-name=Iran &countrycode=ir&regionCode=mde&rank=18#ir>

Գծապատկեր 1

ԻԻՅ-ի մակրոտնտեսական ցուցանիշները, %



Աղբյուրը՝ <https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/ir.html>

ԻԻՅ-ի տնտեսության առաջատար ճյուղերից են նավթի և գազի արդյունաբերությունն ու վերամշակումը: Նավթի պաշարներով նա աշխարհում 2-րդն է՝ Սաուդյան Արաբիայից հետո, իսկ արտահանվող նավթի ծավալով 5-րդն է աշխարհում՝ տալով համաշխարհային նավթի արտահանման 5%-ը: ՆԱԵԿ-ում (OPEC) ԻԻՅ-ն 2-րդ տեղն է զբաղեցնում իր նշանակությամբ: Իրանական նավթը հիմնականում արտահանվում է ճապոնիա, Չարավային Կորեա, Չինաստան, Իտալիա, Գերմանիա, Չնդկաստան: Ունեցած գազի պաշարներով ԻԻՅ-ն Մերձավոր Արևելքում զբաղեցնում է 1-ին տեղը, իսկ աշխարհում՝ 2-րդը՝ Ռուսաստանից հետո: Նավթագազային արդյունաբերությունն ապահովում է ԻԻՅ-ի արտահանման 80%-ը: ԻԻՅ-ն ունի նաև ոսկու, արծճի, արծաթի ու ֆոսֆորի զգալի պաշարներ:


Բացի այդ, ԻԻՅ-ում համեմատաբար զարգացած են նաև նավթաքիմիական ապրանքների արտադրությունը, լեռնամետալուրգիական արդյունաբերությունը, մեքենաշինությունը, տեքստիլ արդյունաբերությունը, շինանյութերի և սննդամթերքների արտադրությունները (հատկապես՝ շաքարի վերամշակումը և բուսական յուղերի արտադրությունը) և գյուղատնտեսությունը: ԻԻՅ-ն համարվում է ցեմենտ և պղինձ արտադրող աշխարհի առաջատար 10 երկրներից մեկը, աշխարհում նա 17-րդ տեղն է զբաղեցնում պողպատի արտադրությամբ, 5-րդ տեղը՝ սալիկների և կերամիկայի արտադրությամբ, իսկ փիրուզի արդյունահանմամբ և արտադրությամբ աշխարհում գրավում է 1-ին տեղը, ինչպես նաև՝ 1-ին տեղում է գետնանուշի և զաֆրանի արտահանմամբ: Բացի այդ, ԻԻՅ-ն հանդիսանում է տուրիստների համար ամենագրավիչ 10 երկրներից մեկը: Այստեղ են գտնվում բազմաթիվ սրբավայրեր և հնագույն ճարտարապետական կոթողներ, որոնք գրավում են զբոսաշրջիկներին: Ըստ ՄԱԿԳՄԿ-ի (UNESCO) գնահատման պատմամշակութային արժեքներով ԻԻՅ-ն աշխարհում զբաղեցնում է 3-րդ տեղը<sup>1</sup>:

<sup>1</sup> <http://www.news.iran.ru/news/80702>

ԻԻՅ-ն հանդիսանում է բազմաթիվ տնտեսական կազմակերպությունների (ՄԱԿ-ի (UN) տնտեսական կառույցների, ԱԷՄԳ-ի (МАГАТЭ), ԱՄԲ-ի (IMF), ՎԶԳԲ-ի (IBRD), ՆԱԵԿ-ի (OPEC) և այլն) անդամ և զարգացնում է տնտեսական հարաբերությունները տարածաշրջանի երկրների հետ՝ հիմնական նպատակ ունենալով ստեղծել ազատ տնտեսական գոտիներ սահմանակից երկրների հետ: Արդեն 2013 թ. սկզբին ԻԻՅ-ի Արևմտյան Ադրբեջան նահանգում բացվեց 7-րդ ազատ տնտեսական գոտին: Այսուհանդերձ, ԻԻՅ-ում արտաքին առևտրի ազգայնացումն ամրագրված է սահմանադրությամբ: Արտաքին առևտրային գործարքների մեծ մասը գտնվում է պետության վերահսկողության ներքո: Սկսած 1979 թ. ԱՄՆ-ի և այլ արևմտյան երկրների կողմից ԻԻՅ-ի նկատմամբ կիրառվեցին տնտեսական պատժամիջոցներ, որոնք սահմանափակեցին ԻԻՅ արտահանումը համաշխարհային շուկա: Տնտեսական պատժամիջոցների կիրառումից հետո ԻԻՅ-ի ներմուծման արժեքն աճել է 15-30%-ով<sup>1</sup>: Ընդհանուր առմամբ ԻԻՅ արտաքին առևտրի ծավալները հիմնականում աճել են: 2009 թ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի արդյունքում, բնականաբար, նկատվեց արտաքին առևտրի ծավալների անկում: 2010-2011 թթ. կրկին գրանցվեց թե՛ արտահանման, թե՛ ներմուծման աճ: Դիտարկվող գրեթե ողջ ժամանակահատվածում ԻԻՅ արտաքին առևտրի սաղդոն եղել է դրական՝ շնորհիվ նավթի և գազի զգալի ծավալների արտահանման՝ 2012 թ. առաջին անգամ գրանցելով բացասական հաշվեմնացորդ (զծապատկեր 2):

**Գծապատկեր 2**

**ԻԻՅ արտաքին առևտուրը 2005-2012 թթ.**



Աղբյուրը՝ <http://www.ereport.ru/stat.php?razdel=country&count=iran&table=execia>

ԻԻՅ արտահանման մեջ հիմնական տեսակարար կշիռ ունեցել են նավթն ու նավթամթերքը (73%), որին հաջորդում են մետաղական խտանյութերը, գյուղատնտեսական ապրանքները և գորգերը: Իսկ ներմուծումը, ի տարբերություն արտահանման, աչքի չի ընկնում այդչափ մեծ կենտրոնացվածությամբ, այստեղ հիմնական ապրանքախմբերն են երկաթի և պողպատի կիսաֆաբրիկատները, տրանսպորտային միջոցները, զինամթերքը, ավտոպահեստամասերը, դեղամիջոցները, տեքստիլ արտադրանքը և այլն:

<sup>1</sup> Казнекс Инвест, страновой обзор, Исламская Республика Иран, Астана, 2011, с. 13.

2011 թ. ԻԻՀ արտահանման հիմնական գործընկերները հանդիսացել են Չինաստանը (24,1%), Ճապոնիան (14,8%), Թուրքիան (10,1%), Հարավային Կորեան (9,2%), Իտալիան (8,3%), Իսպանիան (6%) և այլն, իսկ ներմուծման հիմնական գործընկերներն են Չինաստանը (23%), Գերմանիան (10,5%), Հարավային Կորեան (9,6%), Ռուսաստանը (7%) և այլն<sup>1</sup>:

ԻԻՀ արտաքին առևտրային քաղաքականությունը հիմնականում հովանավորչական է: Աղյուսակ 1-ում ներկայացված է ներմուծվող ապրանքների նկատմամբ ԻԻՀ կողմից կիրառվող մաքսադրույքը:

### Աղյուսակ 1

#### Ներմուծվող ապրանքների մաքսադրույքները ԻԻՀ-ում

<i>Ապրանքախումբ</i>	<i>Միջին մաքսադրույք</i>
Բոլոր ապրանքները	23.14%
Գյուղատնտեսական ապրանքներ	18.91%
Արդյունաբերական ապրանքներ	23.66%
<b>Այլ թվում՝</b>	
Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման ապրանքներ	20.63%
Բուսական ծագման ապրանքներ	16.79%
Կենդանական և բուսական ծագման յուղեր	10%
Պատրաստի սնունդ, ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքներ, ծխախոտ	25.53%
Հանքանյութեր	10.09%
Քիմիական արդյունաբերության ապրանքներ	17.96%
Պլաստմասսա, կաուչուկ և դրանցից իրեր	17.21%
Կաշի և մորթի և դրանցից իրեր	73.92%
Փայտ և իրեր դրանից	15.64%
Թուղթ	13.76%
Տեքստիլ արդյունաբերության ապրանքներ	69.46%
Կոշիկ և հագուստի արտադրանքներ	101.98%
Քարից, գիպսից, ցեմենտից իրեր	44.36%
Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր և մետաղներ	7.26%
Ոչ ազնիվ մետաղներ և դրանցից իրեր	14.56%
Մեքենաներ և սարքավորումներ	19.04%
Տրանսպորտային միջոցներ և դրանց մասեր	43.14%
Օպտիկական ապարատներ, տեսախցիկներ, ժամացույցներ, երաժշտական գործիքներ	13.47%
Զինամթերք և դրա բաղկացուցիչներ	20%
Այլ արդյունաբերական ապրանքներ	42.99%
Արվեստի գործեր	4%

Աղբյուրը՝ <http://www.macmap.org/Country.Analysis>

<sup>1</sup> <http://wits.worldbank.org/WITS/WITS/AdvanceQuery/RawTradeData/QueryDefinitionSelection.aspx?Page=RawTradeData&querytoken=239749&selection=Existing>

Ինչպես նկատում ենք, ԻԻՀ ներմուծվող որոշակի ապրանքախմբերի նկատմամբ կիրառում է չափազանց բարձր մաքսադրույքներ՝ ներքին արտադրողին պաշտպանելու նպատակով:

Ինչ վերաբերում է ՀՀ հետ առևտրային հարաբերություններին, ապա նշենք, որ անկախությունից հետո ՀՀ ներքին շուկան միանգամից հագեցվեց իրանական ծագման բազմաթիվ ապրանքատեսակներով, մասնավորապես՝ սննդամթերքով և գյուղատնտեսական ծագման ապրանքներով: Սակայն ներքին պահանջարկի բավարարման տեսանկյունից առաջին հայացքից այդ դրական թվացող երևույթը շատ կարճ ժամանակամիջոցում դրսևորեց նաև բացասական հետևանքներ: Հատկապես դա վերաբերում է տեղական արտադրողների հետ մրցակցությանը, ապրանքների ցածր որակին և էկոլոգիայի պահանջների անհամապատասխանությանը: Ոչ միայն էժան և ցածր որակի իրանական ապրանքների ներմուծումը վնաս պատճառեց համանման ապրանքների ներքին արտադրության զարգացմանը, այլև իրանցիների մուտքը Հայաստան և սեփական բիզնեսի կազմակերպումը իր հերթին նպաստեց հանրապետության բնակչության արտագաղթին:

Երկու երկրների միջև իրականացված առևտրի մասին պատկերացում է տալիս աղյուսակ 2-ը: Ինչպես տեսնում ենք, մինչև 2009 թ. ՀՀ-ից ԻԻՀ արտահանումը կայուն ցածր մակարդակի վրա էր, մինչդեռ իրանական ապրանքների ներմուծումը ՀՀ դրանից մի քանի անգամ ավելին էր: Իսկ ետճգնաժամային տարիներին ՀՀ-ից ԻԻՀ արտահանման ծավալները կտրուկ ավելացան, ինչը հիմնականում պայմանավորված էր «Կենդանի կենդանիներ», «Հանքային նյութեր, քուլքներ և հարակից նյութեր» ապրանքախմբերի արտահանման զգալի աճով:

**Աղյուսակ 2**

**ՀՀ-ից ԻԻՀ արտահանման և ներմուծման ծավալը, հզր ԱՄՆ դոլար**

Տարեթիվ	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012
ՀՀ-ից ԻԻՀ արտահանում	28512,97	29642,86407	38498,96	25056,32	33025,9	84831,2	106250,4	108512,1
ՀՀ-ի ներմուծումը ԻԻՀ-ից	89166,63	114399,5057	141663	202991,2	162398	199884,7	216792,3	219413,1

*Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ հրապարակումներ. ՀՀ արտաքին առևտուրը (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 2-միջ դասակարգման), 2007-2012 թթ.:*

Դիտարկելով երկու երկրների միջև իրականացվող առևտուրն ըստ ապրանքախմբերի՝ կարող ենք փաստել, որ ՀՀ-ից ԻԻՀ հիմնականում արտահանվում են սննդամթերք և կենդանի կենդանիներ, չմշակված նյութեր և սննդի համար ոչ պիտանի նյութեր, հանքային վառելանյութ, քուլքներ և հարակից նյութեր, ինչպես նաև՝ արդյունաբերական ապրանքներ (աղյուսակ 3): Իսկ ԻԻՀ-ից ՀՀ ներմուծվող հիմնական ապրանքատեսակների տեսանկյունից պատկերը գրեթե նույնն է, բացի վերոնշյալ ապրանքախմբերից՝ ԻԻՀ-ից ՀՀ ներմուծվում են նաև քիմիական արտադրության ապրանքներ և հարակից իրեր և տարբեր տեսակի պատրաստի արտադրանք:

*Աղյուսակ 3*

**ՀՀ և ԻԻՀ միջև արտահանվող և ներմուծվող հիմնական ապրանքախմբերը, հզ. ԱՄՆ դոլար**

Ապրանքախումբ	2007	2008	2009	2010	2011	2012
<b>ՀՀ-ից ԻԻՀ արտահանումը</b>						
Սննդամթերք և կենդանի կենդանիներ	183,1	836,285	3155,263	172,031	356,834	2910,159
Զնչակված նյութեր, սննդի համար ոչ պիտանի նյութեր՝ բացառությամբ վառելիքների	9829,308	6208,712	4996,073	6431,191	5888,173	5674,81
Հանքային վառելանյութեր, քսուլքներ և հարակից նյութեր	9751,989	2354,293	529,36	26220,18	82971,43	81173,94
Արդյունաբերական ապրանքներ՝ դասակարգված ըստ հիմնական նյութերի	8796,461	5046,087	1395,161	1250,122	489,108	1447,578
<b>ԻԻՀ-ից ՀՀ ներմուծումը</b>						
Սննդամթերք և կենդանի կենդանիներ	15245,318	18554,819	11977,674	17313,912	16347,850	14409,090
Զնչակված նյութեր, սննդի համար ոչ պիտանի նյութեր՝ բացառությամբ վառելիքների	11856,667	8826,049	15642,042	10349,609	7607,963	5951,244
Հանքային վառելանյութեր, քսուլքներ և հարակից նյութեր	29570,019	49585,075	24042,112	107406,827	113555,948	114354,749
Քիմիական արտադրության ապրանքներ և հարակից իրեր	23723,975	33905,044	36322,462	44427,400	42596,654	46974,606
Արդյունաբերական ապրանքներ՝ դասակարգված ըստ հիմնական նյութերի	44822,777	63242,338	30353,424	27701,238	29082,936	29314,445
Տարբեր տեսակի պատրաստի արտադրանք	4559,992	7351,778	5334,014	3614,032	3327,777	4083,294

*Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ հրապարակումներ. ՀՀ արտաքին առևտուրը (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 2-միջ դասակարգման), 2007-2012 թթ.:*

Անդրադառնալով ԻԻՀ արտահանմանը՝ վերլուծենք դրա հետագա հնարավոր զարգացումները:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր երկրի ներտնտեսական բարենպաստ զարգացումները իրենց արտացոլումն են ստանում արտաքին տնտեսական կապերում արտահանման դիվերսիֆիկացված կառուցվածքի, դրա տեսականու ընդլայնման և որակի բարձրացման, զլրբալ մրցակցային առավելություններ ունեցող ապրանքների արտադրության և արտահանման միջոցով: Այս գործընթացին իր ուրույն մասնակցությունն է ունենում նաև պետությունը՝ վարելով արտահանման խրախուսման քաղաքականություն:

Բնական է, որ պետությունը չի կարող խթանել տնտեսության բոլոր ճյուղերի արտահանումը: Առավել խելամիտ կլինի բացահայտել համեմատական կամ

մրցակցային առավելություն ունեցող ճյուղերը, գնահատել դրանց արտահանման հնարավորությունները, որից հետո էլ անցնել արտահանման խրախուսման ռազմավարությանը: Փորձելով պատասխանել վերոնշյալ հարցին՝ մենք կբացահայտենք ԻԻՅ-ում արտահանման տեսանկյունից համեմատական առավելություններ ունեցող ճյուղերն ու ապրանքատեսակները՝ օգտագործելով Բելլա Բալասայի կողմից մշակված մեթոդաբանությունը<sup>1</sup> և հաշվարկելով բացահայտված համեմատական առավելությունների (ԲՀԱ) ինդեքսը<sup>2</sup> ԻԻՅ համար:

*Աղյուսակ 4*

**ԻԻՅ ԲՀԱ ինդեքսը 2000-2011թթ. համար՝ ըստ ապրանքների միջազգային ՄԱՍԴ 4 (SITC 4) դասակարգման**

Ծածկագիր	Ապրանքախումբ	Տարեթիվ			
		2000	2005	2010	2011
0	Սննդամթերք և կենդանի կենդանիներ	0,53	0,65	1,06	0,61
1	Խմիչքներ և ծխախոտ	0,02	0,13	0,03	0,03
2	Զմշակված նյութեր, սննդի համար ոչ պիտանի նյութեր՝ բացառությամբ վառելիքների	0,23	0,24	0,53	0,26
3	Բանքային վառելանյութեր, քսուքներ և հարակից նյութեր	8,93	6,76	5,07	4,54
4	Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր, սննդային ճարպեր, մեղրամոմ	0,21	0,23	0,18	0,12
5	Քիմիական արտադրության ապրանքներ և հարակից իրեր	0,13	0,25	0,77	0,63
6	Արդյունաբերական ապրանքներ՝ դասակարգված ըստ հիմնական նյութերի	0,35	0,34	0,42	0,32
7	Սեբենաներ և տրանսպորտային միջոցներ	0,01	0,02	0,05	0,03
8	Տարբեր տեսակի պատրաստի արտադրանք	0,09	0,07	0,09	0,09

*Աղբյուրը՝ հաշվարկված է հեղինակների կողմից Գամաշխարհային բանկի տվյալների հիման վրա՝ <http://wits.worldbank.org/>*

Գամաձայն աղյուսակ 4-ի տվյալների՝ ԻԻՅ 2000-2011 թթ. ԲՀԱ ունեցել է հանքային վառելանյութերի արտահանման ոլորտում: Սակայն անհրաժեշտ ենք համարում հաշվարկել նաև վերոնշյալ ապրանքախմբերի մեջ մտնող առանձին ապրանքատեսակների արտահանման համար ԲՀԱ ինդեքսը՝ ԻԻՅ-ի արտահանման ներուժի առավել հստակ պատկեր ստանալու նպատակով (Աղյուսակ 5<sup>3</sup>):

<sup>1</sup> **Balassa, B.** (1965), Trade Liberalization and Revealed Comparative Advantage // The Manchester School, V. 33, May 1965, pp. 99-123.

<sup>2</sup> ԲՀԱ= $(x_i:X)/(x_i^w:X^w)$ , որտեղ՝  $x_i$ -ն տվյալ երկրում  $i$ -րդ ապրանքի արտահանումն է,  $X$ -ը՝ տվյալ երկրի ընդհանուր արտահանումը,  $x_i^w$ -ն՝  $i$ -րդ ապրանքի համաշխարհային արտահանումը, իսկ  $X^w$ -ն ընդհանուր համաշխարհային արտահանումը: Ընդ որում՝ երկիրն ունի  $i$ -րդ ապրանքի արտահանման գծով բացահայտ համեմատական առավելություն, եթե ԲՀԱ $>1$ :

<sup>3</sup> Աղյուսակում ներառել ենք միայն այն խմբերը, որոնց արտահանման մեջ, ըստ մեր կատարած հաշվարկների, Իրանն ունի ԲՀԱ:

## Աղյուսակ 5

ԻԻՅ ԲՀԱ ինդեքսը 2011 թ.՝ ըստ ապրանքների միջազգային ՄԱՍԴ 4 (SITC 4) դասակարգման<sup>1</sup>

Ծածկագիր	Ապրանքախումբ	
05	Մրգեր և բանջարեղեն	1,92
33	Նավթ և նավթամթերք	5,33
34	Բնական և արդյունաբերական գազ	2,11
51	Օրգանական քիմիական միացություններ	1,16
56	Պարարտանյութեր	1,84
57	Պլաստմասսա՝ սկզբնական ձևերով	1,16

Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի տվյալներ՝ <http://wits.worldbank.org/>

Այսպիսով, ստացվում է, որ ԻԻՅ 2011 թ. դրությամբ ԲՀԱ ունի միրգ և բանջարեղեն, նավթ և նավթամթերք, գազ, օրգանական քիմիական միացություններ, պարարտանյութեր, պլաստմասսա ապրանքատեսակների արտահանման բնագավառում: Շեշտադրելով այս առավելությունները՝ ԻԻՅ կարող է կարճաժամկետ հեռանկարում ավելացնել իր արտահանման ծավալները:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ ՀՀ և ԻԻՅ ունեն զարգացման մեծ հնարավորություններ, որոնք պետք է օգտագործվեն լիակատար ձևով: Սակայն, ինչպես ցույց տվեց կատարված ուսումնասիրությունը՝ երկու երկրների միջև ձևավորված արտաքին առևտրային կապերը, հատկապես՝ արտահանման և ներմուծման կառուցվածքի առումով, չեն կարող բավարար լինել տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացների առումով: ԻԻՅ հետ ՀՀ առևտրատնտեսական կապերի կարգավորման համար անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել ԻԻՅ-ից պետական և մասնավոր ներդրումների և առևտրի խրախուսման և պաշտպանության հարցերին: ՀՀ արտաքին տնտեսական քաղաքականության բաղադրիչ մաս պետք է հանդիսանա ԻԻՅ հետ արտաքին առևտրատնտեսական կապերի զարգացումը, իսկ ՀՀ արտաքին տնտեսական քաղաքականության կարևորագույն նպատակներից մեկը պետք է դառնա հայաստանյան արտահանողների համար ԻԻՅ շուկաներում բարենպաստ պայմանների ստեղծումը:

## ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում ուսումնասիրվում են ԻԻՅ առևտրատնտեսական հարաբերությունները տարածաշրջանի երկրների, այդ թվում և՝ ՀՀ հետ, բացահայտվում են ԻԻՅ արտահանման այն ոլորտները, որոնք ունեն համեմատական առավելություն: Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել ԻԻՅ արտաքին առևտրի զարգացման ծրագրեր մշակելիս:

<sup>1</sup> Հաշվարկները կատարվել են հեղինակների կողմից:

**АННОТАЦИЯ****ТОРОСЯН Т., САРГСЯН Л. – ИСЛАМСКАЯ РЕСПУБЛИКА ИРАН В РЕГИОНАЛЬНОЙ ЭКОНОМИЧЕСКОЙ СИСТЕМЕ**

В статье рассматриваются торгово-экономические отношения ИРИ со странами региона, в том числе и с РА, выявляются те сферы экспорта ИРИ, которые имеют сравнительное преимущество. Результаты исследования могут быть использованы в разработках программ развития внешней торговли ИРИ.

**SUMMARY****TOROSYAN T., SARGSYAN L. – ISLAMIC REPUBLIC OF IRAN IN THE REGIONAL ECONOMIC SYSTEM**

The article analyzes trade and economic relations of Iran with the countries of the region, including RA, reveals the areas of foreign trade of Iran with comparative advantage. The research results can be used in designing foreign trade development programs of Iran.

**ՄԵՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

*ԵՊՀ կառավարման և գործարարության  
ամբիոնի հայցորդ*

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԾԳՆԱԺԱՍԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ  
(ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ, ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ, ԿՐԱՍՏԱՆՈՒՄ)**

2007 թ. զարմանն ԱՄՆ-ում սկսված XXI դարի համաշխարհային առաջին ֆինանսատնտեսական ճգնաժամը ցնցեց աշխարհի տնտեսական և քաղաքական վերնախավը: Սկզբնական շրջանում դրա արձագանքները կրում էին քառսային բնույթ: Զարգացած երկրների կառավարությունները փորձում էին կանգնեցնել արագ ծավալվող ճգնաժամը՝ հիմնական ուշադրությունը կենտրոնացնելով հետևյալ խնդիրների լուծման վրա.

- փլուզումից փրկել ֆինանսական ինստիտուտները,
- մեղմել տնտեսական անկումը և թույլ չտալ արտադրության ծավալների

նվազում:

Մի շարք վերլուծաբաններ պնդում էին, որ 2007թ. սկսված ճգնաժամը համակարգային է, և այն կավարտվի այն ժամանակ, երբ համաշխարհային տնտեսության մեջ տեղի կունենան կառուցվածքային վերափոխումներ, ներառյալ տնտեսական կարգավորման, տնտեսական կապերի և արժուքային հարաբերությունների նոր մոդելների ձևավորման գործընթացը<sup>1</sup>: Նման վերակառուցումը բավականին երկարատև գործընթաց է, քանի որ պայմանավորված է տնտեսական զարգացման նոր ինստիտուտների և մեխանիզմների ձևավորմամբ և կյանքի կոչմամբ:

2010 թվականն ապացուցեց նման պնդման ճշմարտացիությունը ինչպես համաշխարհային տնտեսության, այնպես էլ Հայաստանի համար: Տնտեսական աճն իսկապես վերականգնվեց, սակայն զգալիորեն ցածր տեմպերով քան մինչ-ճգնաժամային փուլում էր (բացառություն էր կազմում միայն Գերմանիան): Սակայն տնտեսական անկումից դուրս գալը չի նշանակում ճգնաժամի ավարտ, ինչպես և ճգնաժամը սկիզբ էր առել տնտեսական անկումից բավականին առաջ: 2010 թ. գրանցված տնտեսական աճը հիմնականում պայմանավորված էր կառավարության կողմից իրականացված բյուջետային ծախսերի աճով: Մասնավոր սպառումը սկսեց աճել, սակայն այն դեռ չի դարձել տնտեսության հիմնական շարժիչ ուժը, ինչը կասկածի տակ է դնում առաջատար տնտեսությունների մակրոտնտեսական կայունության հարցը: Ավելի հուսադրող էր վիճակը զարգացող տնտեսությամբ երկրներում, որտեղ զբաղվածության ավելացումը, տնտեսական աճը և կապիտալի ներհոսքը փոխլրացնում են միմյանց:

<sup>1</sup> Российская экономика в 2009 году / М.: ИЭПП, 2010; **May В.** Глобальный кризис: опыт прошлого и вызовы будущего // Экономическая политика, 2009, N. 4; **May В.** Экономическая политика 2009 года: между кризисом и модернизацией // Вопросы экономики, 2010, N. 2.

Եվրոպայում ճգնաժամը մակրոտնտեսական տեսանկյունից հիշեցնում է 1980-ական թվականների ճգնաժամը Լատինական Ամերիկայում, երբ բավականին մեծ փոխառությունների ներգրավման արդյունքում մի շարք պետություններ ընկան անվճարունակության ծուղակի մեջ<sup>1</sup>: Այդ ժամանակ լուծարման եզրին էին գտնվում խոշոր ամերիկյան բանկերը: Ելքը ճգնաժամից պայմանավորված էր փոխառուների և վարկավարողների միջև կնքված կառուցվածքային և փոխադարձ պայմանավորվածություններով, այն է՝ առաջինները պարտավորվեցին արմատապես փոխել սեփական տնտեսական քաղաքականությունը, իսկ երկրորդները՝ համաձայնեցին դուրս գրել պարտքի մի մասը:

Ջարգացած երկրներում ճգնաժամի դեմ պայքարը ընթացել է երկու հիմնական ուղղություններով: ԱՄՆ-ը հանդիսանալով հիմնական պահուստային արժույթի թողարկող և մնացած աշխարհի համար «պարտք ստեղծող» իրականացրեց անմախաղեպ մեղմ դրամավարկային քաղաքականություն՝ թողարկելով դոլարներ պետական բյուջեի ֆինանսավորման համար: Այլ խոսքերով, իրականացրեցին քաղաքականություն, որը լրիվ հակադիր էր այն խորհուրդներին, որոնք տալիս էր ԱՄՆ-ը ճգնաժամի մեջ գտնվող մնացած պետություններին: Փաստացի ԱՄՆ շարունակում է խթանել համախառն պահանջարկը, մեծացնելով ինչպես պետական բյուջեի, այնպես էլ տնային տնտեսությունների ծախսային մասը:

Եվրոպական պետությունները հիմնականում անցան կոշտ հարկաբյուջետային քաղաքականության իրականացմանը: Դա բնութագրական է ինչպես բարենպաստ պայմաններում գտնվող Գերմանիայի, այնպես էլ ճգնաժամի մեջ գտնվող Պորտուգալիայի և Յունաստանի համար: Այստեղ խոսքը բյուջետային ծախսերի և համապատասխանաբար դեֆիցիտի կրճատման և բիզնեսի համար հարկային խթանների ներդրման մասին է: Այլ կերպ ասած հիմնական շեշտը եվրոպական երկրներում դրվել է համախառն առաջարկի խթանման վրա:

Կարելի է ասել, որ 2010 թ. ավարտվեց ճգնաժամի առաջին փուլը և սկսվեց երկրորդ՝ սոցիալ-տնտեսական զարգացման նոր մոդելի կառուցման փուլը:

Առաջատար պետությունները և նրանց կառուցվածքները, որոնք պատասխանատու են տնտեսական և դրամավարկային քաղաքականությունների իրականացման համար, սկսեցին կոորդինացված ընդունել հակաճգնաժամային որոշումներ:

Անհրաժեշտ է Արևմուտքի և Արևելքի տնտեսությունների, առաջնահերթորեն ԱՄՆ-ի և Չինաստանի, Յուսիսի և Հարավի՝ հատկապես ԵՄ շրջանակներում, փոխկապվածության և փոխադարձ գործունեության հիմքերի վերանայում: Դա ենթադրում է խոր մակրոտնտեսական շեղումների և վճարային հաշվեկշիռների կարգավորում: Անհրաժեշտ է մշակել գլոբալ ֆինանսական կարգավորման համապատասխան մոդել, քանի որ բոլորին հայտնի դարձավ, որ հենց ֆինանսական ոլորտից է բխում անկայունության հիմնական վտանգը:

Վերը նշված խնդիրների լուծումը երկարատև ժամանակ կպահանջի, ոչ այնքան լուծման ուղիների հայտնաբերման, որքան դրանց վերաիմաստավորման ու ընկալման առումով: Սրանք են այն հիմնական խնդիրները, որոնք կանգնել են ճգնաժամի նոր փուլում զարգացած և զարգացող երկրների տնտեսությունների

<sup>1</sup> Rathbone J.P. Eurozone can learn grim Latin lessons // Financial Times. 2010. Dec. 22.

առջև: Բացի այս խնդիրներից գերակա խնդիր է նաև աշխատանքի շուկայում տիրող իրավիճակը, քանի որ ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական դրսևորումներից անմասն չի մնացել նաև աշխատանքի շուկան: Այսպես, ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով կոնկրետ փոփոխություններ են տեղի ունեցել ոչ միայն ՀՀ աշխատանքի շուկայում, այլև տարբեր զարգացած և զարգացող երկրների աշխատանքի շուկաներում: Այդ փոփոխությունները դիտարկվում են աշխատանքի շուկայի կարևորագույն ցուցանիշների օրինակով, որոնք փաստացի մեծ դեր ունեն աշխատանքի շուկայի տարրերի կառուցվածքում: Այդպիսի ցուցանիշների թվին են պատկանում զբաղվածությունը, գործազրկությունը, աշխատուժի միգրացիան, աշխատավարձը և այլն: Այս ցուցանիշների դինամիկայի միջոցով հնարավոր է տեսնել բոլոր այն փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել տնտեսությունում և աշխատանքի շուկայում ճգնաժամի տարիներին և դրանից հետո: Ինչպես նաև այդ ցուցանիշների դինամիկաները հնարավորություն կտան համեմատականներ անցկացնել մի քանի երկրների նմանատիպ ցուցանիշների միջև և տեսնել, թե ինչպիսի ազդեցություն է ունեցել ճգնաժամն այս երկրների աշխատանքի շուկաների վրա:

Այժմ համեմատենք Հարավային Կովկասի երկրների (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան) տնտեսական արդյունքները նախաճգնաժամային, ճգնաժամային և ետճգնաժամային փուլերում և այնուհետև կատարենք համեմատական վերլուծություն արդեն աշխատանքի շուկան բնութագրող կոնկրետ ցուցանիշների օրինակով:

Հարավային Կովկասի երկրներում ճգնաժամի առաջին նշաններն ի հայտ են եկել 2008 թ. չորրորդ եռամսյակում: Այս ամենի վառ ապացույցն է ՀՆԱ-ի դինամիկան այս երկրներում (աղ. 1) :

*Աղյուսակ 1*

**ՀՆԱ-ի դինամիկան Հայաստանում, Վրաստանում, Ադրբեջանում 2006-2011 թթ. (մլն. ԱՄՆ դոլար)**

Տարի	Հայաստան	Վրաստան	Ադրբեջան
2006	6384,5	7761,7	20982,3
2007	9206,3	10171,9	33049,4
2008	11662,0	12800,5	48852,5
2009	8648,0	10767,1	44291,5
2010	9260,3	11636,5	52906,0
2011	10138,1	14438,5	63404,0

Աղբյուրը՝ [www.databank.worldbank.org](http://www.databank.worldbank.org)

Ինչպես երևում է աղյուսակ 1-ից այս 3 երկրներում էլ ՀՆԱ-ի դինամիկայի կտրուկ նվազում է դիտվել 2008 թ. սկսած, և շարունակվել է մինչև 2010 թ.: 2006-2008 թթ. դիտված ժամանակահատվածում ՀՆԱ Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում աճել է համապատասխանաբար 1.8, 1.7 և 2.3 անգամ: Կառավարության կողմից իրականացրած հակաճգնաժամային քաղաքականու-

թյունների արդյունքում հաջողվել է այս երկրներում 2010 թ. ՀՆԱ-ի աճ ապահովել, սակայն Հայաստանում և Վրաստանում այն զիջել է 2008 թ. գրանցված ՀՆԱ-ի ցուցանիշին: Ինչն էլ վկայում է որ 2010 թ. այս երկրներում դեռ ինչ-որ չափով պահպանված է եղել ճգնաժամը և տնտեսությունն ամբողջությամբ չի «առողջացել»: Այսպես 2010 թ. – 2008 թ. համեմատ ՀՆԱ-ի անկումը Հայաստանում կազմել է 21%, իսկ Վրաստանում՝ 9.1%: ՀՆԱ-ի դինամիկայից նաև ակնհայտ է դառնում, որ այս երկրներում տնտեսական վերելքը սկսվել է 2011 թ. և շարունակվում է մինչ օրս, իսկ Ադրբեջանում այն ավելի վաղ է սկսվել (2010 թ.)՝ հաշվի առնելով այս երկրի բնական պաշարները և կառավարության իրականացրած ճիշտ քաղաքականությունը:

Չնայած երկրում տիրող ճգնաժամին, ֆինանսական միջոցների կրճատմանը այս երկրներում չի դանդաղել ծնելիությանը և բնակչության թվաքանակն աճել է, ինչը բավականին դրական արդյունք է (Աղ. 2): Բնակչության թվաքանակի աճի տեմպը Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում կազմել է համապատասխանաբար 1.2%, 1.5% և 6.5%: Այս ցուցանիշներին նայելով կարող ենք ասել, որ Հայաստանում և Վրաստանում ծնելիությունը գտնվում է բավական ցածր մակարդակի վրա և անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել ծնելիության խթանման համար, իսկ Ադրբեջանը դեռևս այս հարցի շուրջ մտահոգվելու առիթ չունի, քանի որ իր բնակչության թվաքանակով Հարավային Կովկասում առաջին տեղում է գտնվում:

*Աղյուսակ 2*

**Բնակչության թվաքանակը Հայաստանում, Վրաստանում, Ադրբեջանում 2006-2011 թթ. (հազ. մարդ, տարեվերջ)**

Տարի	Հայաստան	Վրաստան	Ադրբեջան
2006	3222,9	4401,3	8553,1
2007	3229,9	4394,7	8666,1
2008	3230,1	4382,1	8779,9
2009	3249,5	4385,4	8922,4
2010	3262,6	4436,4	8997,6
2011	3274,3	4469,2	9111,1

Աղբյուրը՝ [www.databank.worldbank.org](http://www.databank.worldbank.org)

Ի տարբերություն բնակչության թվաքանակի, որն այս երեք երկրներում էլ գտնվել է անընդհատ աճման փուլում, 2006-2011 թթ. ընթացքում տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակի անընդհատ աճ է դիտվել միայն Հայաստանում և Ադրբեջանում: Այդ աճի տեմպը 2011 թ. 2006 թ. հետ համեմատած Հայաստանում կազմել է 22.1%, իսկ Ադրբեջանում՝ 4.2%: Վրաստանում տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակը միշտ չէ որ կայուն տեմպերով է աճել: Այն 2006 թ. հետո զգալի նվազել է, և չնայած հետո ավելացել է տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակը, սակայն 2011 թ. դրությամբ այն դեռ շարունակում է զիջել 2006 թ. ցուցանիշին (աղ. 3):

*Աղյուսակ 3***Տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակը Հայաստանում, Վրաստանում, Ադրբեջանում 2006-2011 թթ. (հազ. մարդ)**

Տարի	Հայաստան	Վրաստան	Ադրբեջան
2006	1181,3	2021,8	4402,0
2007	1184,3	1965,3	4443,3
2008	1194,6	1917,8	4477,3
2009	1418,8	1991,8	4477,7
2010	1463,3	1944,9	4531,9
2011	1440,9	1959,3	4587,4

Աղբյուրը՝ [www.databank.worldbank.org](http://www.databank.worldbank.org)

Միջազգային ֆինանսատնտեսական ճգնաժամի առանձնահատկություններն ուղղակի ազդեցություն են ունեցել ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրների աշխատանքի շուկաների վրա: Առաջին հերթին դա վերաբերվում է գործազրկության դինամիկային և մակարդակին:

Սակայն գործազրկության վերաբերյալ տվյալների վերլուծությունն և համեմատությունը բավականին դժվար է, քանի որ ոչ բոլոր գործազուրկներ են հաշվառված պաշտոնական վիճակագրությունում: Դա հիմնականում վերաբերվում է զարգացող երկրներին, որտեղ նույնիսկ մինչև ճգնաժամի ի հայտ գալը կար գործազուրկների զգալի թվաքանակ, որոնք հաշվառված չեն եղել վիճակագրական ծառայությունների կողմից: Ուստի ազգային վիճակագրական ծառայության հրապարակած տվյալներն այդքան էլ չեն համապատասխանում երկրում տիրող գործազրկության իրական մակարդակին: Հետևաբար համեմատություններ անելուց առաջ անհրաժեշտ է նշել այն փաստը, որ շեշտը դրվելու է միայն պաշտոնապես գրանցված և վիճակագրական ծառայությունների կողմից տրված ցուցանիշների վրա: Եվ ըստ այդ տվյալների գործազրկության դինամիկան տարածաշրջանի երկրների համար ունի հետևյալ տեսքը (աղ. 4):

*Աղյուսակ 4***Գործազրկության դինամիկան Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում 2006-2011 թթ. (%)**

Տարի	Հայաստան	Վրաստան	Ադրբեջան
2006	7,4	13,6	6,8
2007	7,1	13,3	6,5
2008	16,4	16,5	6,3
2009	18,7	16,9	5,7
2010	19,0	16,3	5,6
2011	18,4	15,1	5,4

Աղբյուրը՝ [www.databank.worldbank.org](http://www.databank.worldbank.org)

Ինչպես երևում է աղյուսակից ՀՀ-ում և տարածաշրջանի երկրներում, բացառությամբ Ադրբեջանի, 2010 թ. ներառյալ գործազրկության մակարդակի շարունակական աճ է դիտվել: Այն իրեն առավել զգացնել է տվել 2008-ից 2010 թթ. ընթացքում, ինչն էլ փաստում է այդ ժամանակահատվածում այս երկրներում ճգնաժամի առկայության մասին: Ճգնաժամյան տարիներին (2007-2010 թթ.) Հայաստանում գործազրկությունը աճել է 12%-ով, իսկ Վրաստանում՝ 3.6%-ով, այսինքն ստացվում է, որ Հայաստանում գործազրկության մակարդակը 3.3 անգամ ավելի շատ է աճել, քան հարևան Վրաստանում: Դա բավականին մտահոգիչ ցուցանիշ է՝ հաշվի առած մեր երկրի թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական վիճակը: Ադրբեջանում կարելի է ասել այս ճգնաժամը թերևս ոչ մի ազդեցություն չի ունեցել գործազրկության մակարդակի վրա, քանի որ ոչ մի բացասական փոփոխություններ չեն նշմարվում գործազրկության դինամիկայի մեջ, ավելին ճգնաժամային տարիներին այս երկրում գործազուրկների թվաքանակը զգալի կրճատվել է: Ի տարբերություն Ադրբեջանի, Հայաստանում 2008 թ. 2010 թթ. ընթացքում գործազուրկների թվաքանակն աճել է, և աճման տեմպը կազմել է 86.3%: Այսինքն մեր երկրի, ինչու չէ՞ նաև Վրաստանի աշխատանքի շուկան լուրջ փոփոխությունների կարիք ունի, և մեր կառավարությունները պետք է քայլեր ձեռնարկեն գործազուրկների թվաքանակի կրճատման համար: Քանի որ, եթե այսպես շարունակվի, կմեծանա արտագաղթողների թվաքանակը, և երկիրը կկանգնի լուրջ միգրացիայի խնդրի առջև:

Այժմ դիտարկենք Հարավային Կովկասի երկրների կողմից իրականացված հակաճգնաժամային քայլերը, համեմատենք տնտեսական արդյունքները ճգնաժամի փուլում 2009-2010 թթ. համար և դիտարկենք աշխատանքի շուկայի ցուցանիշները յուրաքանչյուր երկրի համար: Վերլուծությունը սկսենք Հայաստանից:

2010 թ. ՀՀ-ում հիմնականում շարունակվել է 2009 թ. սկսված քաղաքականությունը: Սակայն այս դեպքում հիմնական շեշտը դրվել է ոչ թե առանձին ոլորտները փրկելու վրա, այլ պայմաններ ստեղծելու տնտեսական և սոցիալական կայունություն ապահովելու համար:

2009 թ. ՀՀ տնտեսությունը կտրուկ անկում ապրեց, երբ ՀՆԱ-ն նվազեց 14.1% ի հաշիվ շինարարության ոլորտի կտրուկ անկման, որն էլ ֆինանսավորվում էր դրամական փոխանցումների միջոցով, ինչպես նաև ի հաշիվ համաշխարհային շուկայում հանքանյութերի գների անկման, որն էլ բացասաբար անդրադարձավ պղնձի և այլ մետաղների արտադրության վրա: Դրան ի պատասխան կառավարությունը ավելացրեց բյուջեի թուլատրելի դեֆիցիտը մինչև ՀՆԱ-ի 6%: Տնտեսության դոլարիզացիայի մակարդակը կտրուկ աճեց, հատկապես 2009 թ. մարտին դրամի արժեզրկման արդյունքում: Չնայած ազգային արժույթի զգալի արժեզրկմանը և ճգնաժամի արդյունքում ներմուծման ծավալների կրճատմանը, ընթացիկ հաշիվների պակասուրդը մնաց բարձր մակարդակի վրա կազմելով ՀՆԱ-ի 16%: Վերջինիս ֆինանսավորումը հիմնականում իրականացվել է դոնորների օգնության և օտարերկրյա ուղղակի ներդրումների հաշվին:

2010 թ. սկսվեց տնտեսության աշխուժացում, որը պայմանավորված էր իշխանությունների հակաճգնաժամային քաղաքականության իրականացմամբ, դոնորների զգալի օգնությամբ և Հայաստանի առևտրային գործընկերների վիճակի լավացմամբ: 2010 թ. համեմատ 2009 թ. աճել են դրամական փոխանցումների

ծավալները, ինչպես նաև գումարավոր մետաղների գները: 2010 թ. ՀՆԱ-ն աճել է 2.6%-ով, իսկ ՍԳԻ-ն՝ 8.2%-ով, ինչը գերազանցում է ԿԲ-ի կողմից նպատակադրած գնաճի շեմը 2.7%-ով: Իշխանությունների կողմից 2010 թ. հուլիսից իրականացվող կայունացման ծրագրերը ֆինանսավորվել են ԱՄՆ-ի կողմից տրամադրված միջնաժամկետ միջոցների շրջանակներում: Դրանց թվում են հարկային համակարգում բարեփոխումների իրականացումը, ֆինանսական համակարգի վերահսկողության հետագա խստացումը և գործարար միջավայրի բարելավման համար կառուցվածքային բարեփոխումները<sup>1</sup>:

Չնայած ձեռնարկված միջոցառումներին՝ իրականացրած հակաճգնաժամային քաղաքականությանը, հայաստանյան աշխատանքի շուկայում գրանցված ցուցանիշները դեռևս մտահոգության տեղիք են տալիս (զծ. 5): Քանի որ դիտարկված ժամանակահատվածում (2007-2010 թթ.) բնակչության թվաքանակի աճին զուգահեռ երկրում գործազուրկների թվաքանակի աճ է դիտվել, ինչը կարող է վկայել, որ ձեռնարկված ոչ բոլոր հակաճգնաժամային միջոցառումներն են իրենց նպատակին ծառայել:

### Աղյուսակ 5

#### Բնակչության, տնտեսության ճյուղերում զբաղվածների և գործազուրկների թվաքանակը Հայաստանում 2006-2011 թթ. (հազ. մարդ տարեվերջին)

Տարի	Բնակչություն (հազ. մարդ, տարեվերջ)	Զբաղվածներ տնտեսության ճյուղերում (հազ. մարդ)	Գործազուրկներ (հազ. մարդ)
2006	3222,9	1092,4	88,9
2007	3229,9	1101,5	82,8
2008	3230,1	1119,7	231,6
2009	3249,5	1152,8	265,9
2010	3262,6	1185,2	278,2
2011	3274,3	1175,1	265,7

Աղբյուրը՝ ԴԴ ԱԿԾ 2006-2012 թթ. տարեգրքեր

Այսպես, եթե 2011 թ. սկսած գործազուրկների թվաքանակի նվազում է դիտվել, ապա դա դեռ չի նշանակում, որ ճգնաժամն ամբողջությամբ հաղթահարված է: Քանի որ 2011 թ. գրանցված ցուցանիշը 3.2 անգամ ավել է 2007 թ. գրանցված նախաճգնաժամյան ցուցանիշից: Այսպիսով ճգնաժամի տարիներին՝ 2010 թ. դրությամբ, մեր երկրի բնակչության ընդհանուր թվաքանակում գործազուրկների թվաքանակն աճել է 195.4 հազար մարդով, որը կազմում է ներկայիս բնակչության 5.9%, մինչդեռ 2007 թվականին ամբողջ բնակչության միայն 2.5% էր գործազուրկ: Իսկ ինչ վերաբերվում է տնտեսությունում զբաղվածների թվաքանակին, ապա այստեղ պատկերը մի փոքր այլ է, քանի որ չնայած

<sup>1</sup> Доклад о процессе перехода, EBRD, (129), 2010 декабрь, сс© 106-107.

գործազուրկների թվաքանակի կտրուկ աճին, զբաղվածների թվաքանակը նվազել կամ աճել է շատ չնչին քանակությամբ, ինչն էլ բավականին տարօրինակ արդյունք է: 2011 թ. դրությամբ, երբ երկրում արդեն նկատվել է տնտեսական աճ, երկրի ողջ բնակչության 8.1% դեռևս գործազուրկ է: Ընդ որում այս 8.1% իրականությունից բավականին շեղված ցուցանիշ է, քանի որ ոչ բոլոր գործազուրկներն են պաշտոնապես գրանցված, և այսօր մեր երկիրը կանգնած է գործազրկության լուրջ խնդրի արագ:

Այժմ անդրադառնանք Վրաստանին: 2009 թվականին Վրաստանի տնտեսությունը չվերականգնվեց երկու խոշոր ազդեցություններից: Առաջինը՝ 2008 թ. պատերազմն էր Ռուսաստանի հետ, իսկ երկրորդը համաշխարհային ֆինանսական ճգնաժամի ազդեցությունը: 2009 թ. Վրաստանի ՀՆԱ-ն նվազեց 3.9%-ով: Մասնավոր ներդրումների ծավալը կտրուկ նվազեց, ինչն ուղեկցվում էր ՕՈՒՆ-երի կրճատմամբ: Կրճատված ներդրումների խնդիրը մասնակի փոխհատուցվում էր պետական միջոցների ներդրմամբ: Թեև ընթացիկ հաշիվների պակասուրդը նվազել էր 2 անգամ՝ ներմուծվող ներդրումային ապրանքների ծավալի և լայն սպառման ապրանքների կրճատման հաշվին, այն մնացել էր զգալի և ծածկվում էր ֆինանսական միջոցների հաշվին: Տնտեսության կայունացման համար կառավարությունը ազատականացրեց բյուջետային և ֆինանսական քաղաքականությունները խոշոր ֆինանսական ինտերվենցիաների օգնությամբ: Փոխարժեքը 2008թ. օգոստոսի կոնֆլիկտից հետո նվազել էր 30%-ով:

2010 թ. առաջին կիսամյակում արդյունաբերության ծավալներն աճեցին 6.6%-ով, ինչը արդյունք էր ինչպես ներքին, այնպես էլ արտահանման պահանջարկի աճի: Մեծ տեմպերով աճեց վերանշակվող արդյունաբերության ոլորտը: Դիտվում են առողջացման միտումներ նաև վարկավորման շուկայում՝ աճում են տրամադրվող փոխառությունների ծավալները և նվազում են տոկոսադրույքները: Նպատակ հետապնդելով նվազեցնել բյուջեի պակասուրդը, որը կազմում էր 2009 թ. ՀՆԱ-ի 9.2%-ը, մինչև բյուջեի պակասուրդի նպատակային ցուցանիշը՝ ՀՆԱ-ի 6.2% 2010 թ., կառավարությունը մասնակիորեն նվազեցրեց պետական ծախսերը: Այնուամենայնիվ պակասուրդի նվազեցումը հիմնականում պայմանավորված է ՕՈՒՆ-երի ծավալների վերականգնմամբ: 2010 թ. երկրորդ կիսամյակում ՕՈՒՆ-երի ներհոսքի որոշակի աճ է գրանցվել, թեև վերջինիս ծավալները դեռ չեն հասել նախաճգնաժամային մակարդակին:

Նախատեսվում է, որ 2011 թ. տնտեսական աճի տեմպերը մի փոքր կնվազեն: 2010 թ. և 2011 թ. ֆինանսական խթանների նվազման հետևանքները փոխհատուցվում էր բանկային համակարգի միջոցով իրականացված վարկավորման միջոցով: Տնտեսական աճի տեմպերի անկման հավանականությունը հիմնականում պայմանավորված է մեծ ծավալով ՕՈՒՆ-երի ներհոսքի բացակայությամբ, ինչն էլ համարվում է կառավարության տնտեսական աճի ապահովման հիմնական ռազմավարական գործոնը: Ֆինանսական համակարգը նույնպես իր մեջ կրում է որոշակի ռիսկեր տնտեսության ակտիվացման տեսանկյունից, քանի որ աչքի է ընկնում դոլարի զացիայի բարձր մակարդակով, իսկ խնդրահարույց վարկերի ծավալը շարունակում է մնալ բավականին մեծ<sup>1</sup>: Իսկ ինչ վերաբերվում է

<sup>1</sup> Տես՝ նույն տեղում, էջ. 110-111:

աշխատանքի շուկայում, ապա այստեղ պատկերը մի փոքր այլ է և գրանցված ցուցանիշների միջև շեղումները մեծ չեն (աղ. 6):

### Աղյուսակ 6

**Բնակչության, տնտեսության ճյուղերում զբաղվածների և գործազուրկների թվաքանակը Վրաստանում 2006-2011 թթ. (հազ. մարդ տարեվերջին)**

Տարի	Բնակչություն (հազ. մարդ, տարեվերջ)	Զբաղվածներ տնտեսության ճյուղերում (հազ. մարդ)	Գործազուրկներ (հազ. մարդ)
2006	4401,3	1747,3	274,5
2007	4394,7	1704,3	261,0
2008	4382,1	1601,9	315,8
2009	4385,4	1656,1	335,9
2010	4436,4	1628,1	316,9
2011	4469,2	1664,2	295,1

Աղբյուրը՝ [www.geostat.ge](http://www.geostat.ge)

Ինչպես երևում է աղյուսակ 6-ից Վրաստանում աշխատանքի շուկայի համար որպես ճգնաժամային տարիներ կարելի է համարել 2008 և 2009 թվականները: Քանի որ հենց այս տարիներին է երկրում ավելացել գործազուրկների թվաքանակը, կամ նվազել բնակչության թվաքանակը: 2008 թ. բնակչության թվաքանակի նվազումը ուղեկցվել է նաև զբաղվածների կրճատմամբ և գործազուրկության աճով, ինչը միանգամայն տրամաբանական է: Բայց ի տարբերություն Հայաստանի այս ճգնաժամային ժամանակահատվածում երկրի բնակչության թվաքանակում գործազուրկների թվաքանակն ավելացել է 74.9 հազար մարդով, մինչդեռ Հայաստանում այդ նույն ժամանակահատվածում գործազուրկների թվաքանակն աճել է 183.1 հազար մարդով, այսինքն 2.5 անգամ ավելի, ինչը բավականին մեծ և մտահոգիչ թիվ է Հայաստանի նման փոքր երկրի համար: Ի տարբերություն Հայաստանի 2011 թ. Վրաստանի ողջ բնակչության մեջ միայն 6.6% է պաշտոնապես գրանցված գործազուրկի կարգավիճակ ունեցել, ինչը թերևս զիջում է Հայաստանի համանման ցուցանիշին 1.5%-ով, բայց չի թուլատրում եզրակացնել, որ այստեղ բնակչությունն ավելի լավ սոցիալական պայմաններում է գտնվում: Քանի որ Վրաստանն իր բնակչության թվաքանակով գերազանցում է Հայաստանի բնակչության թվաքանակին, ապա այստեղ ծագում է մեկ շնչին բաժին ընկնող եկամուտների չափի հարցը: Ուստի Վրաստանի կառավարությունը ևս պետք է մտահոգված լինի նոր աշխատատեղերի ստեղծմամբ և բնակչության կենսամակարդակի բարձրացմամբ:

Իսկ ինչ վերաբերվում է Ադրբեջանին, ապա այս երկիրը համեմատաբար հեշտ հաղթահարեց ճգնաժամի վտանգները: 2009 թ. արդյունաբերական արտադրանքի ծավալները աճել են 9.3%: Պետք է նշել, որ այդ աճի հիմնական շարժիչ ուժը հանդիսացել է նավթային ոլորտը: Ադրբեջանի ֆինանսական համա-

կարգում ճգնաժամի արդյունքում առաջ եկան հետևյալ հիմնախնդիրները՝ իրացվելիության պակասուրդ և վարկավորման ծավալների նվազում: Կառավարությունը որոշեց չծախսել պետական նավթային հիմնադրամի միջոցները և թողեցին առաջնային պակասուրդը անփոփոխ: Կենտրոնական բանկի կողմից իրականացվող քաղաքականությունը, երբ ադրբեջանական ազգային արժույթը փոխկապված է միայն ԱՄՆ դոլարի, այլ ոչ արտարժույթային զամբյուղի հետ, հանգեցրեց ազգային արժույթի և ֆինանսական համակարգի նկատմամբ վստահության աճին, ինչի արդյունքում դոլարիզացիայի մակարդակը չաճեց:

Նավթի հետ չկապված ոլորտներում սկսվել է որոշակի աշխուժություն ճգնաժամից հետո: Սակայն վերջին շրջանում նավթի արտահանման ծավալների կրճատումը հանգեցրեց Ադրբեջանի ՀՆԱ-ի կրճատմանը: 2010 թ. առաջին կիսամյակում ՀՆԱ-ն աճել է 3.8%, այն դեպքում երբ նավթային ոլորտում աճի տեմպերը կազմել են 2%, իսկ ոչ նավթային ոլորտում՝ 4.8% (2009 թ. այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 15% և 3%): Կառավարությունը 2010 թ. հաստատեց բավականին պահպանողական բյուջե, որտեղ պակասուրդը առանց նավթային միջոցների հոսքերը հաշվի առնելու կազմել էր ոչ նավթային ՀՆԱ-ի 35.6%: Այնուհետև ընդունվեց լրացուցիչ բյուջե, որտեղ պակասուրդը աճել էր ոչ նավթային ՀՆԱ-ի 5%-ով: Հաշվի առնելով նավթի գների աճը կանխատեսվում է, որ ամբողջ բյուջեի եկամուտները կաճեն: Թեև վարկավորման ծավալներն աճել են, դրանք դեռ մնում են նախաճգնաժամային մակարդակից ցածր մակարդակի վրա:

Միջնաժամկետ հեռանկարում ՀՆԱ-ի աճի տեմպերը կախված կլինեն նավթազագային ոլորտից: Կանխատեսվում է, որ տնտեսական աճի տեմպերը 2011 թ. կշարունակեն մնալ ցածր մակարդակի վրա: Ապագայում սպասվում է աճի տեմպերի որոշակի աճ, ինչը պայմանավորված է «Շահ Դենիզ 2» նավթահանքի շահագործմամբ, որի արդյունքում տնտեսական աճը նորից կկայունանա, եթե չհայտնաբերվեն նոր նավթահանքեր: Չնայած վարկավորման շուկայի համաչափ աշխուժացմանը, սպասվում է, որ ֆինանսական ոլորտի կողմից նավթային ոլորտի ֆինանսավորման ծավալները կլինեն սահմանափակ ի հաշիվ ճգնաժամի հետևանքով առաջ եկած խնդրահարույց վարկերի մեծ ծավալների<sup>1</sup>:

Ադրբեջանի աշխատանքի շուկայում պատկերը միանգամայն այլ է եղել: Եթե հարևան Հայաստանի և Վրաստանի աշխատանքի շուկաներում լուրջ փոփոխություններ տեղի ունեցան 2008-2010 թթ. կապված գործազուրկների թվաքանակի կտրուկ աճի հետ, ապա Ադրբեջանում այդ նույն ժամանակահատվածում տեղի ունեցավ գործազուրկների թվաքանակի կրճատում և շարունակվեց մինչև 2011 թ.: 2007-2011 թթ. ընթացքում գործազուրկների թվաքանակը նվազել է 1.2%, որը չնայած փոքր թիվ է կազմում ողջ բնակչության հետ համեմատած, բայց դրական փաստ է հարևան երկրների հետ համեմատած: Ադրբեջանում դիտարկվող ժամանակահատվածում բնակչության թվաքանակը ևս ուղեկցվել է տնտեսության մեջ զբաղվածների թվաքանակի աճով, ինչն էլ փաստում է, որ այս երկրում լուրջ քայլեր են ձեռնարկվում զբաղվածության խնդրի լուծման շուրջ (աղ.7):

<sup>1</sup> Տես՝ նույն տեղում, էջ. 104-105:

## Աղյուսակ 7

Բնակչության, տնտեսության ճյուղերում զբաղվածների և գործազուրկների  
թվաքանակը Ադրբեջանում 2006-2011 թթ. (հազ. մարդ տարեվերջին)

Տարի	Բնակչություն (հազ. մարդ, տարեվերջ)	Զբաղվածներ տնտեսության ճյուղերում (հազ. մարդ)	Գործազուրկներ (հազ. մարդ)
2006	8553,1	4110,8	291,2
2007	8666,1	4162,2	281,1
2008	8779,9	4215,5	262,2
2009	8922,4	4271,7	260,2
2010	8997,6	4329,1	258,3
2011	9111,1	4375,2	250,9

Աղբյուրը՝ [www.stat.gov.az](http://www.stat.gov.az)

Այսպիսով, ամփոփելով կարող ենք ասել, որ չնայած ձեռնարկված բոլոր միջոցառումներին ճգնաժամը, այնուամենայնիվ, թափանցեց նաև Հարավային Կովկասի երկրներ և թողեց իր խոր հետևանքները: Մինչև այսօր այս երկրների տնտեսության մեջ կան ուղորտներ, որտեղ դեռ զգացվում է ճգնաժամի շունչը: Գնաժամը դեռևս նկատելի է նաև աշխատանքի շուկայում: Ե՛վ Հայաստանում, և՛ հարևան Վրաստանում ու Ադրբեջանում դեռևս գոյություն ունի աշխատատեղերի պակաս, գործազրկության բարձր մակարդակ, մարդիկ անգամ չունեն իրենց գոյության համար անհրաժեշտ նվազագույն գումարը և գտնվում են ծայրահեղ աղքատության մեջ: Չկարողանալով վաստակել իրենց գոյության համար անհրաժեշտ քանակությամբ գումար՝ դիմում են արտագաղթի, ինչն այսօր զգալի չափերի է հասել հատկապես Հայաստանում, իսկ կառավարության կողմից ձեռնարկված միջոցառումները դեռևս իրեն նպատակին ամբողջությամբ չեն ծառայում:

Ասվածի համատեքստում անհրաժեշտ է, որ կառավարությունն անցում կատարի ձևավորելու համախառն առաջարկի վրա հիմնված տնտեսություն, ինչի արդյունքում կստեղծվեն նոր աշխատատեղեր և երկրում կկրճատվի գործազուրկների թվաքանակը հետևաբար և կնվազի աղքատության մակարդակը :

## ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում դիտարկվում են ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով տեղի ունեցած փոփոխությունները Ադրբեջանի, Հայաստանի, Վրաստանի աշխատանքի շուկաներում, աշխատանքի շուկայի կարևորագույն ցուցանիշների օրինակով, որոնց թվին են պատկանում զբաղվածությունը, գործազրկությունը, աշխատուժի միգրացիան, աշխատավարձը և այլն: Համեմատվում է այդ ցուցանիշների դինամիկան և պարզաբանվում է ճգնաժամի ազդեցությունը այս երկրների աշխատանքի շուկաների վրա:

**АННОТАЦИЯ****ГРИГОРЯН М. – РЫНОК ТРУДА В УСЛОВИЯХ ФИНАНСОВО-ЭКОНОМИЧЕСКОГО КРИЗИСА (АЗЕРБАЙДЖАН, АРМЕНИЯ, ГРУЗИЯ)**

В статье рассматриваются вызванные финансово-экономическим кризисом изменения на рынке труда в Азербайджане, Армении, Грузии, на примере важнейших показателей рынка труда, к которым относятся занятость, безработица, миграция рабочей силы и заработная плата. Сравнивается динамика этих показателей и выясняется влияние кризиса на рынки труда этих стран.

**SUMMARY****GRIGORYAN M. – LABOR MARKET DURING THE FINANCIAL-ECONOMIC CRISIS (IN ARMENIA, AZERBAIJAN, GEORGIA)**

The article touches upon various changes in the labor market of Armenia, Azerbaijan and Georgia under the influence of the financial-economic crisis, on the example of such labor market indicators as employment, unemployment, labor migration, wages. The dynamics of the indicators is compared to find out the crisis impact on the labor markets of these countries.

*ԼԵՆԱ ՉԱՅՐԱՊԵՏՅԱՆ**ԵՊՅ ֆինանսահաշվային ամբիոնի ասպիրանտ***ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ**

Շուկայական տնտեսության պայմաններում զարգացման կարևորագույն գործոններից մեկը ֆինանսական հուսալի և արդյունավետ համակարգի առկայությունն է: Ֆինանսական համակարգը ֆինանսական շուկաների և ֆինանսական ինստիտուտների ամբողջությունն է: ՀՀ ֆինանսական համակարգը, հատկապես բանկային համակարգը, կարևոր դեր է խաղում ՀՀ ընդհանուր տնտեսական համակարգում, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է, որ ֆինանսական համակարգը պահպանի գործընթացների անընդհատությունը և կայունությունը՝ նպաստելով ընդհանուր տնտեսության բնականոն աճին:

Ֆինանսական կայունությունը կարելի է բնորոշել որպես ֆինանսական, մակրոտնտեսական և այլ պայմանների այնպիսի համադրություն, որի դեպքում ֆինանսական համակարգը՝ ֆինանսական հաստատությունները, շուկաները և դրանց ենթակառուցվածքները միասին ունակ են դիմակայելու հնարավոր ցնցումներին և անհավասարակշռություններին՝ այդ կերպ նվազեցնելով ֆինանսական միջնորդության գործառույթների ընդհատման հավանականությունը: Ֆինանսական կայունությունը բնորոշելիս հաշվի է առնվում այն հանգամանքը, որ ֆինանսական կայունությունը կարող է առաջանալ ինչպես ֆինանսական համակարգի ներքին գործընթացների խաթարման, այնպես էլ երկրի ներսում ու համաշխարհային տնտեսությունում անբարենպաստ մակրոտնտեսական զարգացումների, խոշոր փոխառուների ու պարտատերերի հետ կապված խնդիրների, տնտեսական քաղաքականության կամ ենթակառուցվածքների փոփոխությունների հետևանքով:

Վերջին տարիներին ֆինանսական գործիքների ու շուկաների զարգացումներն ու ինտեգրացումը, ինչպես նաև տարբեր երկրներում ֆինանսական ճգնաժամերը պատճառ են հանդիսացել գրեթե բոլոր երկրների իշխանությունների համար, բացի ֆինանսական համակարգի առանձին բաղկացուցիչների զարգացումների ուսումնասիրությունից, քաղաքականություն մշակելիս ուշադրություն դարձնել նաև երկրի ֆինանսական համակարգի կայունությանը, որպես մեկ ամբողջություն:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մի շարք երկրներում ֆինանսական համակարգի կայունության ապահովման պատասխանատուն Կենտրոնական բանկն է: ՀՀ-ում նույնպես Կենտրոնական բանկի խնդիրներից մեկը ՀՀ ֆինանսական համակարգի կայունության և բնականոն գործունեության ապահովումն է:

Ֆինանսական կայունության ապահովումը դա ֆինանսական համակարգը փլուզումից կամ խափանումից զերծ պահելն է, այնպես որ համակարգը շարունակի ապահովել անհրաժեշտ իրացվելիության մակարդակ, գործարքների և

փոխանցումների անխափան իրականացում և խնայողությունների ներդրման ունակության պահպանում:


30.06.2013 թ. դրությամբ Հայաստանի բանկային համակարգին<sup>1</sup> բաժին է ընկնում ֆինանսական համակարգի ակտիվների 89.3%-ը (զծ.1), ուստի Հայաստանի ֆինանսական կայունության գնահատման համատեքստում առավելապես կարևորվում են բանկային համակարգի գործունեության ռիսկայունության բացահայտումն ու գնահատումը: Ապահովագրական, արժեթղթերի շուկաների մասնակիցների, ինչպես նաև ֆինանսական համակարգի մյուս հաստատությունների մասնաբաժինը, բանկային համակարգի համեմատ, շարունակում է մնալ բավականին փոքր, հետևապես, Հայաստանի ֆինանսական համակարգի կայունության վրա վերջիններիս գործունեության ազդեցությունը մեծ չէ: 30.06.2013 թ. դրությամբ բանկային համակարգի`

- ընդհանուր ակտիվները կազմել են 2 տրիլիոն 633 մլրդ դրամ,
- պարտավորությունները կազմել են 2 տրիլիոն 227 մլրդ դրամ,
- կապիտալը կազմել է 406 մլրդ. դրամ:

Հարկ է նշել, որ ՀՆԱ-ի աճին զուգընթաց աճել են նաև բանկային համակարգի ակտիվները, ինչի հետևանքով բանկային համակարգի ակտիվների և ՀՆԱ-ի հարաբերությունը աճել է` 31.12.2012 թ. դրությամբ կազմելով 62.0%, իսկ Բանկային համակարգի վարկերի և ՀՆԱ-ի հարաբերությունը` 40.3% (զծ. 2)<sup>2</sup>:

**Գծապատկեր 1**

**ՀՀ ֆինանսական համակարգի կառուցվածքը**




1. Բանկեր,
2. Վարկային կազմակերպություններ,
3. Ապահովագրական ընկերություններ,
4. Ներդրումային ծառայություններ մատուցող անձինք,
5. Այլ ֆինանսական կազմակերպություններ

<sup>1</sup> ՀՀ տարածքում գործող 21 առևտրային բանկեր` 485 մասնաճյուղեր:  
<sup>2</sup> Բոլոր ֆինանսական ցուցանիշները վերցրած են Կենտրոնական Բանկի կայքից [www.cba.am/am/SitePages/finstabilitycucanish.aspx](http://www.cba.am/am/SitePages/finstabilitycucanish.aspx)

## Գծապատկեր 2

## Բանկային համակարգի ակտիվների և վարկերի մասը ՀՆԱ-ում



Բանկային համակարգի ֆինանսական կայունության ապահովման գործընթացը բաղկացած է հետևյալ երեք հաջորդական փուլերից՝

- Ռիսկերի բացահայտում.
- Ռիսկերի գնահատում.
- Ռիսկերի կառավարում:

Հավանական ռիսկերի բացահայտման և զսպման նպատակով Կենտրոնական բանկը շարունակաբար իրականացնում է ներքին տնտեսության և արտաքին աշխարհի ֆինանսական համակարգի և մակրոմիջավայրի ցուցանիշների վերլուծություն, շուկաների մոնիտորինգ, հայրենական վճարահաշվարկային համակարգերի հսկողություն: Այս փուլում որպես վերլուծության առարկա են հանդիսանում ինչպես բանկային համակարգի բաղադրիչները, այնպես էլ մակրոտնտեսությունը: Ուսումնասիրվում են բոլոր այն գործոնները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կարող են ազդել բանկային համակարգի կայուն գործունեության վրա: Բանկային համակարգի ֆինանսական կայունության գնահատման գործիք է հանդիսանում ֆինանսական կայունության ցուցանիշների համակարգը:

Հավանական ռիսկերն՝ դրսևորելու դեպքում բանկային համակարգի խոցելիության մակարդակը *գնահատելու* նպատակով Կենտրոնական բանկի կողմից կիրառվում են միջազգային փորձում լայն տարածում ունեցող ստրես-տեստեր: Վերջիններս իրենցից ներկայացնում են՝ դիտարկվելի տարբեր շոկային սցենարների հանդես գալու դեպքում բանկային համակարգի, կամ դրա առանձին մասնակիցների վնասների գնահատում:

Ֆինանսական կայունության ապահովման գործընթացի հաջորդ կարևոր փուլը ռիսկերի *կառավարումն* է: Կենտրոնական բանկը ֆինանսական համակարգի ռիսկերի կառավարումն իրականացնում է պրուդենցիալ և մակրոպրուդենցիալ քաղաքականությունների, ինչպես նաև ֆինանսական հաստատությունների վերահսկողության իրականացման միջոցով: Պրուդենցիալ կարգավորումը

ենթադրում է առանձին հաստատությունների համար նորմատիվային, կարգավորիչ որոշակի դաշտի սահմանում, որը թույլ կտա կառավարելի սահմաններում պահել առանձին ֆինանսական հաստատությանը վերաբերող ռիսկերը: Մակրոպրոդեցնցիալ քաղաքականությունը նշանակում է պրոդեցնցիալ գործիքների կիրառում, սակայն այս դեպքում ապահովվելով ամբողջ ֆինանսական համակարգի կայունությունը, և ոչ միայն՝ առանձին հաստատության: Մակրոպրոդեցնցիալ քաղաքականության կիրառման նպատակը համակարգային ռիսկերի նվազեցումն է:

*Ֆինանսական կայունության հիմնական ցուցանիշները բանկային համակարգի համար.*

- Նորմատիվային ընդհանուր կապիտալ/ռիսկով կշռված ակտիվներ,
- Նորմատիվային հիմնական կապիտալ/ռիսկով կշռված ակտիվներ,
- Չաշխատող վարկեր/ընդհանուր վարկեր,
- Շահութաբերություն ըստ ակտիվների,
- Շահութաբերություն ըստ կապիտալի,
- Բարձր իրացվելի ակտիվներ/ընդհանուր ակտիվներ,
- Բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ:

*Համարժեքության նորմատիվները*

Ֆինանսական կայունության առաջին ցուցանիշը կապիտալի համարժեքության նորմատիվն է՝ *Նորմատիվային ընդհանուր կապիտալ<sup>1</sup> և ռիսկով կշռված ակտիվներ<sup>2</sup> հարաբերությունը (Ն1)*: Վերջինս ցույց է տալիս, թե ռիսկային ակտիվների որ մասը պետք է ապահովված լինի նորմատիվային կապիտալով: Այս ցուցանիշը սահմանվում է Կենտրոնական բանկի կողմից և նվազագույն շեմը 12 %-ն է, իսկ բանկային համակարգի այս ցուցանիշի միջինը կազմում է 16.3%: Այս սահմանաչափը հաշվարկվել է Բազելյան կոմիտեի կողմից բազմաթիվ երկրների տվյալների ամփոփման հիման վրա: Այն ավելի բարձր է սահմանվում առավել ռիսկային տնտեսություն ունեցող երկրների համար: Նման հարաբերության էությունն այն է, որ անհրաժեշտ է ունենալ կապիտալի նվազագույն մակարդակ, որը կարող է օգտագործվել հետևյալ նպատակների համար.

1. ունենալ պահուստ հնարավոր վնասների համար, որոնք կարող են առաջանալ թե՛ հաշվեկշռում ներառված, թե՛ արտահաշվեկշռային դիրքերի և պարտավորությունների չկատարումից,

2. ցույց տալ, որ բանկերի տարրերը պատրաստ են ռիսկի դիմել ոչ միայն փոխառնված, այլ սեփական միջոցներով,

3. հավասարեցնել մրցակցային դաշտը,

4. ապահովել միջոցներ բանկային «բիզնեսի» բնականոն ընդարձակման և գործունեության ֆինանսավորման համար:

Ֆինանսական կայունության երկրորդ ցուցանիշը *Նորմատիվային հիմնական կապիտալ<sup>3</sup> և ռիսկով կշռված ակտիվների հարաբերությունն է*, որը ցույց է

<sup>1</sup> Նորմատիվային ընդհանուր կապիտալը հիմնական և լրացուցիչ կապիտալի հանրագումարն է՝ համապատասխան պակասեցումներ կատարելուց հետո:


<sup>2</sup> Ռիսկով կշռված ակտիվները ձևավորվում են վարկային ռիսկի, շուկայական ռիսկի ու գործառնական ռիսկի բաղադրիչներով:

<sup>3</sup> Հիմնական կապիտալը կանոնադրական կապիտալի, բաժնետոմսերի հավելվածարի, գլխավոր պահուստի և չբաշխված շահույթի հանրագումարն է՝ համապատասխան պակասեցումներ կատարելուց հետո:

տալիս ռիսկային ակտիվների որ մասն է ապահովված հիմնական կապիտալով: Այս նորմատիվի մեծությունը ներկայումս Կենտրոնական բանկի կողմից չի սահմանվում, նախկինում այն 8% էր:

**Գծապատկեր 3**

**Նորմատիվային և հիմնական կապիտալների հարաբերությունը ՌԿԱ-ին**



Ինչպես երևում է գծապատկեր 3-ից վերջին յոթ տարիներին վերը նշված 2 ցուցանիշներն էլ անկման միտում ունեն, ինչը պայմանավորված է հիմնականում այն հանգամանքով, որ այդ ժամանակաշրջանում բանկային համակարգի կապիտալի աճն ավելի քիչ է (237%) եղել, քան ռիսկով կշռված ակտիվների աճը՝ առավելապես վարկային պորտֆելի աճը (760%):


Քանի որ ՀՀ բանկային համակարգում ռիսկով կշռված ակտիվների գրեթե 93%-ը կազմում է վարկային ռիսկը, ուստի այն դիտարկվում է որպես բանկային համակարգի կարևոր ռիսկ և դրա կառավարումը խիստ կարևոր է բանկային համակարգի կայունության ապահովման համար:

Ֆինանսական կայունության երրորդ ցուցանիշը *չաշխատող վարկեր<sup>1</sup> և ընդհանուր վարկեր հարաբերությունն* է: Վարկային պորտֆելի աճին զուգահեռ աճել է նաև չաշխատող վարկերի մասնաբաժինը ընդհանուր վարկերում, սակայն այս ցուցանիշը գտնվում է կառավարելի մակարդակի վրա և միջինում այն կազմում է վարկային պորտֆելի 3.5%-ը:

<sup>1</sup> Չաշխատող վարկերը այն վարկերն են, որոնք դասակարգվել են որպես հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի և անհուսալի:

**Գծապատկեր 4**

**Բանկային համակարգերի չաշխատող վարկերի հարաբերությունը ընդհանուր վարկերին**




**Շահութաբերության ցուցանիշներ**

Ֆինանսական կայունության չորրորդ և հինգերորդ ցուցանիշները *շահութաբերություն ըստ ակտիվների (ROA)* և *շահութաբերություն ըստ կապիտալի (ROE)* ցուցանիշներն են: ROA-ն իրենից ներկայացնում է տարեկան զուտ շահույթի և միջին տարեկան ընդհանուր ակտիվների հարաբերությունը (վերջինս ցույց է տալիս կազմակերպության ակտիվների օգտագործման արդյունավետության մակարդակը, այսինքն բանկերի մենեջմենթի մակարդակը), իսկ ROE-ն տարեկան զուտ շահույթի և միջին տարեկան ընդհանուր կապիտալի հարաբերությունը (վերջինս ցույց է տալիս կապիտալի միավորի հաշվով ստացված շահույթը, այսինքն, թե ինչ ռիսկի են գնում բանկի բաժնետերերը՝ իրենց միջոցները ներդնելով կապիտալում՝ շահույթ ստանալու նպատակով): 2013 թ. I կիսամյակի ընթացքում շահույթով է աշխատել 18, իսկ վնասով՝ 3 բանկ: Ինչպես երևում է գծապատկեր 5-ից շահութաբերության ցուցանիշները ունեն անկման միտում, ինչը հիմնականում պայմանավորված է վարկային պորտֆելի որակի վատթարացմամբ, ինչպես նաև շահույթի աճի համեմատությամբ ակտիվների և պարտավորությունների առաջանցիկ աճով:

**Գծապատկեր 5**

**Բանկային համակարգի շահութաբերության ցուցանիշները**



*Իրացվելիության նորմատիվներ*

Ֆինանսական կայունության վեցերորդ ցուցանիշը *բարձր իրացվելի ակտիվներ և ընդհանուր ակտիվներ հարաբերությունն է (Ն2<sup>1</sup>)*: Այս ցուցանիշը նույնպես սահմանվում է Կենտրոնական բանկի կողմից և նվազագույն շենը կազմում է 15%, իսկ բանկային համակարգի այս ցուցանիշի միջինը կազմում է 26%: Վերջինս նշանակում է, որ բանկային համակարգի ակտիվների 26%-ը բարձր իրացվելի են: Այս սահմանափակումը թույլ է տալիս նվազագույնի հասցնել այն կորուստը, որ ավանդատուների մեծ արտահոսքի պայմաններում բանկը կկրեք ցածր իրացվելի ակտիվներ ունենալու դեպքում: Ցածր իրացվելի ակտիվների դեպքում ևս բանկը կարող է ի վերջո բավարարել ավանդատուների պահանջները, սակայն դա կարելի է անել միայն ցածր իրացվելի ակտիվները կարճ ժամանակահատվածում էժան վաճառելու դեպքում, ինչն էլ նվազեցնելով շահույթը՝ էապես ազդում է բանկային համակարգի կենսունակության վրա: Ընդհանուր ակտիվների 15%- բարձր իրացվելի ակտիվների տեսքով պահելը նպատակաուղղված է:


1. բանկերին միշտ իրացվելի վիճակում պահել, որպեսզի վերջիններս պատրաստ լինեն արագորեն արձագանքել շուկայի զարգացումներին,

2. էապես կրճատել այլ ակտիվներն իրացվելի դարձնելու բանկի ծախսերը՝ հնարավորություն տալով բանկերին անընդհատ լինել իրացվելի:

Կայունության այս ցուցանիշի պահանջը նպատակաուղղված է բանկերի գործունեության հարատևության պահպանմանը:

**Գծապատկեր 6**


**Բանկային համակարգի ընդհանուր իրացվելիության ցուցանիշները**



Ֆինանսական կայունության յոթերորդ ցուցանիշը *բարձր իրացվելի ակտիվներ և ցպահանջ պարտավորություններ հարաբերությունն է (Ն2<sup>2</sup>)*: Այս ցուցանիշը նույնպես սահմանվում է Կենտրոնական բանկի կողմից և նվազագույն շենը 60% է, իսկ բանկային համակարգի այս ցուցանիշի միջինը 120% է: Վերջինս նշանակում է, որ ավանդատուների հանկարծակի և մեծ հոսքի դեպքում անմիջապես կրավարարվեն ցպահանջ ավանդների 120%:

**Գծապատկեր 7**

**Բանկային համակարգի ընթացիկ իրացվելիության ցուցանիշները**



Վերլուծությունը ամբողջական դարձնելու համար դիտարկել ենք բանկային համակարգի ֆինանսական կայունության հիմնական ցուցանիշների միջև կապի առկայությունը համապատասխան Կ. Պիրսոնի «Գծային կորելյացիոն գործակցի» միջոցով: Համաձային Պիրսոնի կորելյացիայի սկզբունքի գործակիցը կարող է տատանվել միայն (-1;1) միջակայքում:

**Աղյուսակ 1**

**Կորելյացիայի գործակցի նշանակությունը**

<i>Կորելյացիայի գործակցի նշանակությունը</i>	
0.75 - 1.00	շատ բարձր դրական
0.50 - 0.74	բարձր դրական
0.25 - 0.49	միջին դրական
0.00 - 0.24	թույլ դրական
0.00 - -0.24	թույլ բացասական
-0.25 - -0.49	միջին բացասական
-0.50 - -0.74	բարձր բացասական
-0.75 - -1.00	շատ բարձր բացասական

Կազմելով ՀՀ բանկային համակարգի ֆինանսական ցուցանիշների կորելյացիոն մատրիցը՝ ստացել ենք հետևյալ տեսքը՝


*Աղյուսակ 2*

**Բանկային համակարգի ֆինանսական կայունության ցուցանիշների կորելյացիոն մատրիցը**

<i>Բանկային համակարգի ֆինանսական կայունության ցուցանիշների կորելյացիոն մատրից</i>	Ն1	ROA	ROE	Ն2 <sup>1</sup>	Ն2 <sup>2</sup>
<b>Ն1</b>	1.00				
<b>ROA</b>	0.55	1.00			
<b>ROE</b>	0.37	0.96	1.00		
<b>Ն2<sup>1</sup></b>	0.82	0.30	0.19	1.00	
<b>Ն2<sup>2</sup></b>	-0.54	-0.82	-0.79	-0.25	1.00

*Գծապատկեր 8*

**Բանկային համակարգի ֆինանսական կայունության հիմնական ցուցանիշների միջև կապը<sup>1</sup>**



Ինչպես երևում է աղյուսակ 2-ից և գծապատկեր 8-ից Ուժեղ դրական կապ գոյություն ունի «Նորմատիվային ընդհանուր կապիտալ/Ռիսկով կշռված ակտիվներ» ցուցանիշի և «Իրացվելի ակտիվներ/Ընդհանուր ակտիվներ» ու «Ըստ ակտիվների շահութաբերության» ցուցանիշների միջև, և դա բացատրվում է նրանով, որ որքան բարձր է իրացվելի ակտիվների մասնաբաժինը ընդհանուր ակտիվներում, այնքան փոքր է ռիսկով կշռված ակտիվների մեծությունը, քանի որ

<sup>1</sup> Դիտարկվել է Ընդհանուր կապիտալ/ՌԿԱ և Իրացվելիության ու Շահութաբերության ցուցանիշների միջև կապը:

բարձր իրացվելի ակտիվները հիմնականում ունեն ռիսկի ցածր կշիռներ, հետևաբար և մեծ է կապիտալի համարժեքության ցուցանիշը: Նմանապես, որքան մեծ է շահութաբերությունը ըստ կապիտալի ցուցանիշի, այնքան մեծ է շահույթի մեծությունը նորմատիվային ընդհանուր կապիտալում, հետևաբար և մեծ է համարժեքության նորմատիվը: Ինչպես երևում է աղյուսակից բացասական կապ գոյություն ունի իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ ցուցանիշի և մնացած այլ ցուցանիշների միջև:

Վերլուծելով բանկային համակարգի ֆինանսական կայունության հիմնական ցուցանիշները՝ կարելի է եզրակացնել, որ բոլոր ցուցանիշները գտնվում են կառավարելի մակարդակում, և չնայած այդ հանգամանքին Կենտրոնական բանկը շարունակում է հետևողական լինել Բազելյան վերահսկողության կոմիտեի կողմից առաջարկվող ստանդարտներին բանկային համակարգի հետագա կայունության ապահովման նպատակով:

## ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածը նվիրված է ՀՀ բանկային համակարգի կայունության գնահատմանը: Վերլուծվում են ՀՀ բանկային համակարգի կայունության հիմնական ցուցանիշների դինամիկ շարքերը, որի հիման վրա պարզաբանվում է բանկային համակարգի ֆինանսական կայունության ցուցանիշների կառավարելիության մակարդակը:

## АННОТАЦИЯ

### АЙРАПЕТЯН Л. – ТЕНДЕНЦИИ ОСНОВНЫХ ПОКАЗАТЕЛЕЙ ФИНАНСОВОЙ УСТОЙЧИВОСТИ И УПРАВЛЯЕМОСТЬ БАНКОВСКОЙ СИСТЕМЫ РА

Статья посвящена оценке устойчивости банковской системы РА. Анализируются динамические ряды основных показателей устойчивости банковской системы РА, на основе чего выясняется уровень управляемости показателей финансовой устойчивости банковской системы.

## SUMMARY

### HAYRAPETYAN L. – THE TENDENCIES OF THE FINANCIAL STABILITY INDICATORS OF ARMENIAN BANKING SYSTEM

The article is devoted to the RA banking system financial stability estimation. Banking system's statistical data, dynamic series of stability indicators are analyzed to reveal the level of their controllability.

**ՎԱՀՐԱՄ ԱՐՐԱՀԱՄՅԱՆ**

տնտեսագիտության դոկտոր,  
ԵՊՀ կառավարման և գործարարության  
ամբիոնի դոցենտ  
Էլ. փոստ՝ a.vahram@mail.ru

### **ԱՐՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՎԱՌՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ՄԵՔԵՆԱՇԻՆԱԿԱՆ ԿԱԶՄԱՎԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Ներկա պայմաններում Հայաստանի Հանրապետությունում մեքենաշինական արտադրությունը գտնվում է խոր համակարգային ճգնաժամի մեջ, որն առաջացել է տնտեսության արմատական փոփոխման անցման շրջանում նոր տնտեսական քաղաքականության մշակման և իրականացման ժամանակ թույլտրված բացթողումների հետևանքով: Կուտակվել են բազմաթիվ կառուցվածքային անհամասնություններ տնտեսության վերարտադրության համակարգում, որոնք ուղեկցվել են արտադրության արդյունավետության ու թողարկվող արտադրանքի մրցունակության անկման գործընթացների հետ: Այս ամենը պայմանավորված էր ինչպես ներքին, այնպես էլ արտաքին միջավայրում կատարվող բացասական ու դինամիկ տեսք ունեցող երևույթներով: Անցման շրջանում պետական կառավարման դեռևս չձևավորված ու թույլ համակարգին գումարվեցին պատերազմական իրավիճակի, շրջափակման, էներգետիկ ճգնաժամի և նոր տնտեսական համակարգի ստեղծման հետ պայմանավորված բազմաթիվ հիմնախնդիրներ: Ժամանակային առումով որոշակի ճեղքվածք առաջացավ հին ձևավորված շուկաների քայքայման ու նոր շուկաների ստեղծման գործընթացների միջև, որոնք առաջ բերեցին երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի ընդհանուր անկում ու ստեղծեցին անկայուն դրություն երկրի ֆինանսատնտեսական ոլորտի բոլոր սեգմենտներում:

Նշված գործընթացների բացասական արդյունքները շատ բանով պայմանավորված են եղել ՀՀ կառավարության կողմից իրականացված ոչ հստակ տնտեսական քաղաքականության ու տնտեսապես ոչ հիմնավորված որոշումների հետ: Այն մասնավորապես դրսևորվեց խոշոր արդյունաբերական կազմակերպությունների ապապետականացման ու մասնավորեցման քաղաքականության իրականացման ժամանակ, որի արդյունքում անկառավարելի ձևով փլուզվեցին այդ կազմակերպությունները, փոշիացվեցին արտադրական կարողությունները և առանձնահատուկ տեխնոլոգիական գործընթացները: Ստեղծված իրավիճակը ոչ նպաստավոր էր դարձել հանրապետության արդյունաբերության ու հատկապես մեքենաշինության զարգացման համար, քանի որ այդ ճյուղերի արտադրանքի հիմնական մասը արտահանվում էր հանրապետության սահմաններից դուրս գտնվող շուկաներ, որոնց զգալի մասը արդեն փլուզվել էր: Ներհանրապետական շուկան շատ փոքր ու սահմանափակ է նմանատիպ արտադրանքների իրացման համար:

Ստեղծված տնտեսական նոր իրավիճակի, շրջափակման ու նոր շուկաների ձևավորման պայմաններում հանրապետությունում չստեղծվեցին համապատասխան երկարաժամկետ զարգացման ծրագրեր, որոնք պետք է նպաստեին արտադրության արդյունավետության բարձրացմանը, խրախուսեին մրցունակ արտադրատեսակների արտադրության կազմակերպումը և արտահանումը միջազգային նոր շուկաներ: Ցավալին այն է, որ ձևավորված այս հիմնախնդիրները իրենց լուծումը չեն գտել անցած քսան տարիների ընթացքում: Ավելին, անցած ժամանակահատվածում այդ հիմնախնդիրները ընդունել են ավելի սուր տեսք և ունեն հրատապ լուծման կարիք, քանի որ մեր երկրի առջև ծագած հիմնախնդիրները ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ոլորտներում ավելի են խորացել և ստացել կենսական նշանակություն հատկապես վերջին ժամանակներում տեղի ունեցող ու սպասվող նոր մարտահրավերների պատճառով:

Արդյունաբերության ու հատկապես մեքենաշինության զարգացումը հանդիսանում է երկրի ընդհանուր տնտեսության տեխնիկատնտեսական առաջընթացի ապահովման և մրցունակության մակարդակի բարձրացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական հենքի ձևավորման գլխավոր աղբյուր: Եթե կապի ծառայությունների մակարդակի արմատական բարելավումը և տեղեկատվական տեխնոլոգիաների արդիականացումը նպաստում են տնտեսությունում իրականացվող ինտեգրացման գործընթացներին, կառավարման արդյունավետության ու ճկունության մակարդակի բարձրացմանը, ապա մեքենաշինությունը (հատկապես հաստոցաշինությունը) ունի էական դերակատարություն գործող կամ կառուցվող արտադրական կազմակերպություններում ժամանակի պահանջներին համապատասխան արտադրական կարողությունների ձևավորման և արդիականացման, կազմակերպական ու արտադրական-տեխնոլոգիական գործընթացների արդյունավետ կազմակերպման հիմնախնդիրների լուծման համար: Այդ պատճառով անհրաժեշտ է համակարգել նշված ոլորտների աշխատանքները, որը հնարավորություն կտա հավասարակշռել դրանց զարգացման ուղղությունները և աճի տեմպերը, բարելավել տնտեսության արդյունավետության ու թողարկվող արտադրանքի մրցունակության մակարդակը [1]:

Մեքենաշինության և արդյունաբերության տարբեր ճյուղերի զարգացման մակարդակը շատ բանով պայմանավորված է դրանց կազմի մեջ մտնող արտադրական կազմակերպությունների մեքենայական համակազմի և իրականացվող արտադրական-տեխնոլոգիական գործընթացների առաջադիմության ու տեխնիկական հագեցվածության մակարդակով [3, 5]: Նշված հիմնախնդրի լուծումը հիմնականում պայմանավորված է բազմամանվանացանկային մեքենաշինական արտադրության հիմքը հանդիսացող հաստոցաշինության առաջընթացով ու կարողություններով, դրա տեխնիկական ու տնտեսական ներուժով: Ուստի տնտեսության արդիականացման և արդյունավետության բարձրացման համար կարևոր գործոն է մեքենայական ու, հատկապես, հաստոցային համակազմի և կիրառվող տեխնոլոգիական գործընթացների կատարելագործումը, որոնց առաջանցիկ զարգացումը ունի արմատական նշանակություն տնտեսության մյուս ճյուղերի կատարելագործման ու վերազինման համար [4, 6]: Այդ նպատակով անհրաժեշտ է երկրում ձևավորել տնտեսության ռազմավարական զարգացման համապատասխան հեռանկարային ծրագրեր և իրականացնել այնպիսի օրենսդրական քաղաքականություն, որոնք կնպաստեն տնտեսության արդյունավետ ու

մրցունակ զարգացմանը և կծկավորեն անհրաժեշտ միջավայր բարձրացված հիմնախնդիրների լուծման համար [1, 6]:

Մեքենաշինական արտադրական կազմակերպությունների գործունեության արդյունավետության ու մրցունակության մակարդակի բարձրացման գործընթացների կառավարման աշխատանքների կատարելագործումը նպատակահարմար է իրականացնել հետևյալ երկու հիմնական ուղղություններով՝

- կազմակերպության կազմակերպական-իրավական կարգավիճակի և արտադրական-կորպորատիվ համակարգի կազմակերպական կառուցվածքի կատարելագործման ու ճիշտ ձևավորման հետ կապված գործընթացների կառավարման միջոցով,

- կազմակերպության արտադրական-կորպորատիվ համակարգի արտադրական-տեխնոլոգիական կառուցվածքի կատարելագործման նպատակով իրականացվող վերակառուցման կազմակերպական-ինովացիոն գործընթացների տնտեսապես հիմնավորված կառավարման միջոցով:

Անցումային ժամանակաշրջանում տնտեսության արմատական առողջացման համար առանցքային նշանակություն ունի պետության դերակատարությունը, քանի որ այն կարող է ստեղծել նպաստավոր պայմաններ արտադրության արդյունավետ զարգացման համար ճիշտ հարկային, մաքսային, ֆինանսավարկային և այլ օրենսդրական քաղաքականության իրականացման միջոցով [1, 6]: Նման պայմաններում մեքենաշինական կազմակերպությունների կազմակերպական-իրավական կարգավիճակի և արտադրական-կորպորատիվ համակարգի կազմակերպական կառուցվածքի տնտեսապես հիմնավորված ընտրության ու արդյունավետ գործունեության ապահովման համար կարևոր հիմնախնդիրներ են հանդիսանում կառավարման համակարգի վերակառուցումը և կատարելագործումը, կազմակերպական և արտադրական-տեխնոլոգիական ու ֆինանսական գործընթացների արդյունավետության մակարդակի բարձրացումը, արտադրության արդյունավետ տարբերազատումն ու խոշորացումը և այլն: Կարևոր հիմնախնդիր է համարվում ոչ միայն կազմակերպության առանձին ստորաբաժանումներում ու դրանց միջև իրականացվող գործընթացների կազմակերպական աշխատանքների մակարդակի արմատական բարելավումը, այլև կազմակերպության կազմակերպական-իրավական կարգավիճակի տնտեսապես հիմնավորված ընտրությունը և վերակազմավորումը:

Մեքենաշինական կազմակերպության կազմակերպական-իրավական կարգավիճակի և արտադրական-կորպորատիվ համակարգի կազմակերպական կառուցվածքի տարբեր ձևերի կիրառումը և համադրումը արդյունաբերական կազմակերպություններում իրականացվում է տարբեր կազմակերպական ձևերի միջոցով, որոնցից յուրաքանչյուրն ունի որոշակի տարբերիչ գծեր՝ իրենց էության ընդհանրությամբ հանդերձ [2, 4, 6]:

Մեքենաշինական կազմակերպության կազմակերպական-իրավական կարգավիճակի և արտադրական-կորպորատիվ համակարգի կազմակերպական կառուցվածքի ճիշտ ընտրությունը կարող է ապահովել հետևյալ առավելություններով՝

- փակ տեխնոլոգիական շղթաների ստեղծման հնարավորություն սկսած հունքի ձեռքբերումից մինչև պատրաստի արտադրանքի թողարկում ու տեղափոխում սպառող կազմակերպություններ,

- առևտրային, մարքեթինգային և այլ ծառայությունների իրականացման արդյունքում ստացվող տնտեսում, արտադրության տարանջատման առավելությունների օգտագործման հնարավորություն, միասնական հարկային ու ֆինանսավարկային քաղաքականության իրականացում, ֆինանսական ու ներդրումային միջոցների փոփոխման հնարավորություն,
  - լրացացուցիչ արտադրական կարողությունների ստեղծման և արդյունավետ օգտագործման հնարավորություն,
  - արտադրության մասշտաբի արդյունավետության օգտագործման հնարավորություն,
  - բուֆերի դերի իրականացում, որը մեղմացնում է ուղղակի ձևով կազմակերպության վրա արտաքին միջավայրի ազդեցությունը,
  - արտադրական, ֆինանսական ու գիտատեխնիկական պաշարների կենտրոնացում, որը հնարավորություն է տալիս համապատասխան օգուտներ ստանալու՝ կապված արտադրության խոշոր ծավալների, աշխատանքի մասնագիտացման, արտադրական ծախսերի իջեցման հետ, ստեղծում բարենպաստ պայմաններ գիտահետազոտական ու փորձնական-կոնստրուկտորական մշակումների ֆինանսավորման համար և ապահովում նոր մրցունակ արտադրատեսակների արտադրության ներդրում ու յուրացում սեղմ ժամկետներում,
  - արդյունաբերական ու բանկային կապիտալի միավորման հնարավորություն, որը մրցակիցների հետ պայքարում ստեղծում է անհրաժեշտ հենք արտադրական ու ֆինանսական կայունության ապահովման համար,
  - արտադրության տարբերազատման հնարավորություն, որն ապահովում է տնտեսական իրադրության տատանման միջինացման արդյունավետության բարձրացում ու կապիտալի արագ տեղափոխում մեկ ճյուղից դեպի մյուս ճյուղերը,
  - գործընկերների, մրցակիցների և այլ կառույցների հետ փոխհարաբերությունների բարելավման հնարավորություն ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում,
  - կենտրոնացված ներդրումների, ԳՅՓԿԱ անհրաժեշտ ու ճիշտ ժամանակին ֆինանսավորման, անձնակազմի վերապատրաստման ու տնտեսապես հիմնավորված նախագծերի արդյունավետ իրականացման հնարավորություն:
- Շատ հաճախ կազմակերպությունները միավորվելով ու ձևավորվելով խոշոր միավորումներ ձգտում են լուծել հետևյալ հեռանկարային խնդիրները՝
- «մատակարարում-արտադրություն-առաքում» լոգիստիկական շղթայում կոոպերացիայի սկզբունքների լայն իրականացման միջոցով ծախսերի համապատասխան հողավածների և ընդհանուր լոգիստիկական համակարգի ծախսերի նվազեցում,
  - կազմակերպությունների գործունեության համաձայնեցվածության աստիճանի բարձրացում արտադրական կոոպերացիայի ժամանակ,
  - ներդրողների շրջանակների ընդլայնում ու հարաբերությունների արմատական բարելավում ֆինանսավարկային կազմակերպությունների հետ,
  - ներդրումային պաշարների և հնարավորությունների համախմբում,
  - նյութական ու ֆինանսական հոսքերի օպտիմալացում, այդ թվում հարկային պարտավորությունների արդյունավետ կատարման տեսանկյունից,

• գործնական համբավի բարձրացում ներքին և արտաքին շուկաներում, մասնավորապես հիմնված արտադրատնտեսական գործունեության կայունության մակարդակի և արտադրության ռիթմիկության աստիճանի բարձրացման վրա,

• շահերի նպատակաուղղված և արդյունավետ պաշտպանում:

Կազմակերպության կազմակերպական-իրավական կարգավիճակի և արտադրական-կորպորատիվ համակարգի կազմակերպական կառուցվածքի տնտեսապես հիմնավորված ընտրությունը և ճիշտ ձևավորումը բխում է նաև պետության շահերից, քանի որ այն նպաստում է տնտեսության կառավարելիության, հավասարակշռվածության, դինամիկ զարգացման, մրցունակության և ընդհանուր արդյունավետության մակարդակի բարձրացմանը: Այդ նպատակով պետությունը պետք է ունենա ակտիվ մասնակցություն ռազմավարական ծրագրերի ձևավորման, համակարգման ու լուծման ապահովման գործընթացներում: Պետք է պետության կողմից մշակվեն հավասարակշռված հեռանկարային զարգացման ծրագրեր, որոնց իրականացումը հնարավորություն կտա լուծելու մեր երկրի տնտեսությունում առաջացած բազմաթիվ կառուցվածքային հիմնախնդիրներ: Միայն դրանից հետո հնարավոր կլինի ապահովելու իրական տնտեսական աճ և ստեղծելու մրցակցային առավելություններ մրցակիցների նկատմամբ:

Կազմակերպությունների կազմակերպական-իրավական կարգավիճակի տնտեսապես հիմնավորված ընտրության և արտադրական-կորպորատիվ համակարգի կառուցվածքի վերակառուցման կազմակերպական-ինովացիոն գործընթացների իրականացման գլխավոր նպատակը այնպիսի պայմանների ստեղծումն է, որոնք հնարավորություն կտան կազմակերպությանը, արագ ու համարժեք ձևով արձագանքելով շուկայում տեղի ունեցող դինամիկ փոփոխություններին, բարելավելու կազմակերպության արտադրատնտեսական գործունեության շահութաբերության աստիճանը, թողարկվող արտադրանքի արտադրության ու մատուցվող ծառայությունների արդյունավետության ու մրցունակության մակարդակը:

Արտադրական-կորպորատիվ համակարգի վերակառուցման գործընթացի վրա մեծ ազդեցություն կարող է ունենալ արտադրական կազմակերպության ելակետային վիճակը: Ելակետային վիճակի համալիր գնահատման համար անհրաժեշտ է իրականացնել արտադրական կազմակերպության գործունեության համակարգված վերլուծություն հետևյալ հիմնական ուղղություններով՝

- հիմնական միջոցների ծանրաբեռնվածության վերլուծություն,
- ընդհանուր ծախսերի կառուցվածքի վերլուծություն,
- առանձին ստորաբաժանումների արտադրատնտեսական գործունեության արդյունավետության վերլուծություն,
- ուղղակի ծախսերի (նյութական ռեսուրսներ, աշխատավարձ, էլեկտրաէներգիա և այլն) կառուցվածքի վերլուծություն,
- ծախսերի կառավարման մեխանիզմների արդյունավետության վերլուծություն ու գնահատում,
- անձնակազմի կառուցվածքի կատարելագործման և որակավորման մակարդակի բարձրացման հետ կապված գործընթացների կառավարման աշխատանքների վերլուծություն:

Գործնականում, անկախ կազմակերպության արտադրական-կորպորատիվ համակարգի վերակառուցման պատճառներից ու նպատակներից, այն պետք է իրականացնել երկու հիմնական ուղղություններով՝

- հիմնական միջոցների և արտադրական-տեխնոլոգիական գործընթացների վերակառուցում ու կատարելագործում,
- զննան, վաճառքի և սպասարկման գործընթացների վերակառուցում ու կատարելագործում:

Առաջին ուղղության իրականացումը հիմք է հանդիսանում արտադրության նյութատեխնիկական հենքի արդիականացման աշխատանքների կատարման համար, որը հնարավորություն է տալիս վերակառուցելու արտադրական-տեխնոլոգիական գործընթացները շուկայում ձևավորված նոր պայմաններին ու պահանջներին համապատասխան: Նոր մեքենաների և սարքավորումների, ինչպես նաև նոր տեխնոլոգիական գործընթացների ներդրումը ստեղծում է անհրաժեշտ պայմաններ աշխատանքի և արտադրության կազմակերպման նոր առաջադեմ մեթոդների ներդրման ու կիրառման համար:

Երկրորդ ուղղության իրականացումը հնարավորություն է տալիս շուկայում ձևավորված նոր պահանջներին ու պայմաններին, ինչպես նաև վերակառուցված արտադրական-տեխնոլոգիական գործընթացներին համապատասխան իրականացնելու նոր մատակարարների ճիշտ ընտրություն, որը կստեղծի անհրաժեշտ պայմաններ կայուն ու ռիթմիկ ձևով ապահովելու արտադրական կազմակերպումը և դրա առանձին ստորաբաժանումներին համապատասխան նյութական ռեսուրսներով: Դա հնարավորություններ կստեղծի արտադրական կազմակերպությունում արդյունավետ ձևով իրականացնելու արտադրական-տեխնոլոգիական գործընթացները և նախատեսված ժամկետներում ու կայուն ձևով սպառողներին ապահովելու բարձր պահանջարկ ունեցող որակյալ արտադրանքով:

Արդյունքում ապահովվում է ծախսերի մեծության ճշտում ինչպես ըստ արտադրական ստորաբաժանումների և գործարարության միավորների, այնպես էլ ըստ արտադրական կազմակերպությունում ձևավորված տեխնոլոգիական գործընթացների իրականացման սահմանների:

Արտադրական կազմակերպությունում կատարվող վերակառուցման աշխատանքների վեկտորը պետք է արտացոլի իրականացվող կազմակերպական և արտադրական-տեխնոլոգիական գործընթացներում, ինչպես նաև գործարարության գործընթացներում տեղի ունեցող փոփոխությունների ամբողջությունը և ուղղվածությունը: Այն պետք է համարժեք ձևով արտացոլի և արձագանքի շուկայում տեղի ունեցող բոլոր փոփոխություններին ու օպերատիվ ձևով բավարարի շուկայում ձևավորված նոր պահանջարկը, որը պետք է բարելավի տվյալ կազմակերպության տեղը և դերը արտաքին միջավայրում:

Կազմակերպության արտադրական-կորպորատիվ համակարգի վերակառուցման ցանկացած նախագծի շրջանակում անհրաժեշտ է կատարել համապատասխան հաշվարկներ ու մշակել գործարարության պլաններ սարքավորումների փոխարինման արդյունավետության, կազմակերպական և արտադրական-տեխնոլոգիական գործընթացների փոփոխության, թողարկվող արտադրանքների անվանացանկի ճշտման ու կատարելագործման, արտադրական կարողությունների փոփոխության, պատրաստի արտադրանքի առաքման աշխատանքների հիմնավորման և արդյունավետության գնահատման համար: Այնուհետև

պետք է իրականացնել վերակառուցման կազմակերպական-ինովացիոն գործընթացների տարբերակի ընտրություն, որի իրագործման համար սովորաբար անհրաժեշտ է լինում կատարել միանվագ ներդրումներ երկարաժամկետ կտրվածքով: Ընդ որում արտադրության պարբերաշրջանի, տեխնոլոգիական գործընթացների և սարքավորումների վերակառուցման տարբերակների ուսումնասիրությունը պետք է իրականացնել հիմք ընդունելով ներդրումային մեթոդների վերլուծության արդյունքները կազմակերպության արտադրական-տեխնոլոգիական տարբեր կտրվածքների համար (ըստ տեխնոլոգիական սահմանների, ըստ թողարկվող արտադրանքի տեսակների, ըստ յուրաքանչյուր գործարարության միավորի և այլն):

Արտադրական-տեխնոլոգիական գործընթացների վերակառուցման կազմակերպական-ինովացիոն աշխատանքների իրականացման ժամանակ շատ կարևոր հանգամանք է հանդիսանում տեխնոլոգիական պարբերաշրջանի մեծության փոփոխումը: Արդյունավետ տեխնոլոգիական լուծումների օգտագործումը հնարավորություն է տալիս նվազեցնելու տեխնոլոգիական պարբերաշրջանի տևողությունը, որն ապահովում է նախագծի արդյունավետության համապատասխան մակարդակ: Նման գնահատականներ անհրաժեշտ է տալ թողարկվող բոլոր արտադրատեսակների կտրվածքով, որոնք հնարավորություն են ընձեռում որոշելու արտադրական ծրագրի մեծությունը վերակառուցման գործընթացների իրականացումից հետո:

Առանձին գործարարության նախագծերի մշակումը և դրանց հետ կապված ներդրումների արդյունավետության մակարդակի գնահատումը հնարավորություն են տալիս ընտրելու ոչ միայն լավագույն տարբերակները, այլև դասակարգելու ներդրվող միջոցները ըստ համապատասխան գերակա ուղղությունների: Նախագծերում փոխհամաձայնությունները պետք է իրականացվեն արտադրական կազմակերպությունում կատարվող աշխատանքների կազմակերպման արդյունավետության ու սոցիալական հիմնախնդիրների լուծման հնարավորությունների համադրության միջոցով:

Վերակառուցման նախագծերի ռիսկերի աստիճանի գնահատումը համարվում է կազմակերպության արտադրական-կորպորատիվ համակարգի վերակառուցման կազմակերպական-ինովացիոն գործընթացների իրականացման արդյունքների արդյունավետության մակարդակի գնահատման կարևոր չափանիշ: Վերակառուցման նախագծերի իրականացման ժամանակ ռիսկային երևույթների առաջացման գլխավոր պատճառներ կարող են հանդիսանալ այն սխալները, որոնք կարող են առաջանալ մարքեթինգային ռազմավարական պլանների մշակման ու մշակված նախագծերի իրականացման ժամանակ կատարվող ժամանակավոր փոփոխությունների հետ կապված: Նման դեպքերում լավագույն արդյունքներ կարելի է ապահովել իրավիճակի ճիշտ գնահատման ու մոդելավորման միջոցով: Այն ապահովում է վերը ներկայացված գործոնների համար այնպիսի կտրվածքի ձևավորում, որի արդյունքում ստացված ելքի ցուցանիշները հնարավորություն են տալիս կատարելու անհրաժեշտ համեմատական վերլուծություններ ու գնահատումներ:

Այսպիսով՝ կազմակերպության արտադրական-կորպորատիվ համակարգի վերակառուցման ծրագրի գործարարության պլանը կամ ներդրման նախագիծը ըստ էության կազմված է հիմնականում անկախ հանգույցներից, որոնց պետք է միմյանց հետ համակարգել ու կապակցել ֆինանսական հոսքերի ձևավորման

մակարդակում՝ օգտագործելով յուրաքանչյուր ուղղության արդյունավետության աստիճանը բնութագրող ներդրման չափանիշների մեծությունները: Նման նախագծերի իրականացման արդյունքում վերացվում են ոչ արդյունավետ արտադրությունները և կատարելագործվում թողարկվող արտադրանքի անվանացանկը, ստեղծվում են ռազմավարական պլաններ առանձին ստորաբաժանումների համար, ներդրվում են նոր օպտիմալ մեխանիզմներ ծախսերի վերահսկման ու ֆինանսական հոսքերի կառավարման համար: Որոշումների ընդունման համար որպես չափանիշ է հանդես գալիս արտադրական կազմակերպության գործունեության արդյունավետության աստիճանը:

Խոշոր արտադրական կազմակերպություններում վերակառուցման գործընթացները համարվում են դրանց կյանքի գործունեության ձև և անընդհատ գործընթաց, առանց որի անհնար է դառնալ մրցունակ և ամրապնդվել միջազգային շուկաներում:

Մեքենաշինական կազմակերպության կազմակերպական-իրավական կարգավիճակի տնտեսապես հիմնավորված ձևավորումը և արտադրական-կորպորատիվ համակարգի կազմակերպական կառուցվածքի կատարելագործումը հնարավորություն են տալիս ստեղծելու անհրաժեշտ նախապայմաններ արդյունավետ լոգիստիկական համակարգի ձևավորման համար, որը հանդիսանում է հենք դրա կազմի մեջ մտնող բազմաթիվ արտադրական ստորաբաժանումների և կազմակերպությունների միջև օպտիմալ փոխհարաբերությունների ձևավորման համար:

Կազմակերպության ներքին արտադրատնտեսական գործունեության ներդաշնակության ապահովման համար անհրաժեշտ է ապահովել նաև ներքին համակարգված գործունեություն, որը հնարավորություն կտա արտադրական ստորաբաժանումների աշխատանքների համակարգված և արդյունավետ կազմակերպման շնորհիվ արագ արձագանքելու շուկայում տեղի ունեցող դինամիկ փոփոխություններին և, վերակառուցելով արտադրական-տեխնոլոգիական համակարգը, ապահովելու կազմակերպության գործունեության արդյունավետության ու մրցունակության անհրաժեշտ մակարդակ:

Ներկայացված հիմնախնդիրների մեծ մասը ունեն համապետական նշանակություն, որոնց արդյունավետ լուծման համար անհրաժեշտ է ամբողջ երկրի մասշտաբով ձևավորել համապատասխան միջավայր: Դրա համար առաջին հերթին պետք է մշակել և իրականացնել համապատասխան քաղաքականություն երկրի տնտեսության համակարգված ու մրցունակ զարգացման վերաբերյալ: Այս գործընթացների համակարգման և արդյունավետ իրականացման համար էական դերակատարություն ունի պետությունը, որը տնտեսությունում ձևավորելով համապատասխան կառուցվածք պետք է ուղղորդի և ապահովի հեռանկարային, մասշտաբային ու մրցունակ ծրագրերի մշակման ու ներդրման գործընթացներին:

Մեր երկրում տնտեսության հեռանկարային զարգացումը պետք է իրականացնել ինտեգրելով հանքային, մեքենաշինական և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտների գործունեությունը, որը հնարավորություն կտա արդյունավետ ձևով օգտագործել առկա ռեսուրսները և ապահովել տնտեսության համակարգված ու մրցունակ զարգացումը:

Ինչպես ցույց է տալիս Սինգապուրի հասարակական-տնտեսական զարգացման օրինակը, պետությունը իրեն դրսևորել է որպես շատ լավ մենեջեր և կարողացել է արդյունավետ և համակարգված ձևով ապահովել տնտեսության արագ

վերակառուցում ու զարգացում: Ձևավորելով ու ղեկավարելով պետության համար առանցքային նշանակություն ունեցող մասշտաբային, հեռանկարային ու նրցունակ ծրագրերը Սինգապուրի կառավարությունը կարողացավ ապահովել տնտեսության թռիչքային աճ վերջին երեսուն տարիների ընթացքում, որի արդյունքում այն այժմ դասվում է տնտեսապես ամենազարգացած երկրների շարքին: Սինգապուրում հասարակական-տնտեսական զարգացումը իրականացվում է համալիր ձևով բոլոր ուղղություններով, բայց հիմնական են համարվում գիտության, կրթության, առողջապահության և սպասարկման ոլորտները: Այդ ոլորտներում ապահովվում է շատ բարձր նշաձող, որի համար հիմք են ընդունվում ոլորտում ամենազարգացած երկրներում ձևավորված ստանդարտների պահանջները գերազանցող չափանիշները: Նշված գործընթացները ունեն անընդհատ բնույթ և ներկայացվող պահանջները խստացվում են յուրաքանչյուր տարի: Այդ ամենի հաջող իրականացման հիմքում դրված է օրենքի գերակայությունը, որի ապահովումը բոլոր մակարդակներում հնարավորություն տվեց երկրում ձևավորելու մարդկային արժանիքների վրա հիմնված պետություն: Իսպառ բացառելով կոռուպցիայի երևույթները և ապահովելով ժամանակակից զարգացումները՝ պետությունը կարողանում է պահպանել նաև ազգային հիմնական ավանդույթները: Այդ ամենի հիմքում դրված են Սինգապուրի բազմազգ ժողովրդի և կառավարության միջև ձևավորված ներդաշնակ հարաբերությունները, որոնք արդյունք են երկարաժամկետ կտրվածքով թափանցիկ ու հաշվետու կառավարման սկզբունքների կիրառմանը: Ստեղծված հարաբերություններն ունեն զարգացման դիմանիկ բնույթ, քանի որ ժողովրդի կողմից անընդհատ բարձրացվում ու խստացվում են ներկայացվող պահանջները, իսկ կառավարությունն էլ իր հերթին ջանք չի խնայում անընդհատ բարելավելու իր ժողովրդի սոցիալ-տնտեսական վիճակը: Իրականացնելով ազնիվ, թափանցիկ ու հաշվետու քաղաքականություն՝ պետությունը անընդհատ բարձրացնում է իր ժողովրդի վստահության աստիճանը: Այդ նպատակով հաճախ իրականացվում են համապատասխան հարցումներ հասարակական-տնտեսական զարգացման ուղղությունների ճշտման նպատակով: Վերջին հարցման արդյունքները վկայում են, որ վստահելով իր կառավարությանը ժողովուրդը ցականում է ձևավորել ավելի ներդաշնակ հարաբերություններ հասարակական-տնտեսական կյանքում: Չարցման արդյունքների հիման վրա կառավարությունը ձևավորել է զարգացման հեռանկարային ծրագրեր հետևյալ ուղղություններով՝

- ստեղծել աշխատանքային այնպիսի պայմաններ, հնարավորություններ ու հարաբերություններ, որոնք թույլ կտան մարդկանց իրականացնելու իրենց ձգտումները,
- ձևավորել նպատակ, որի իրականացման արդյունքում հնարավորություն կլինի ստեղծելու ներդաշնակություն հավասարակշռված կյանքի, աշխատանքի և ընտանիքի միջև,
- պարտավորվել ու ստեղծել այնպիսի պայմաններ, որ կյանքի նվազագույն պահանջները (բնակարան, առողջապահություն, տրանսպորտ) հասանելի լինեն բոլոր քաղաքացիներին,
- կարևորել ամուր ընտանիք և հոգ տանել ավագ սերնդի մասին, օգնել անապահով ու հաշմանդամ մարդկանց,
- խորացնել և ամրապնդել վստահություն քաղաքացու ու պետության միջև:

Պետության հասարակական-տնտեսական զարգացման ներկայացված ուղղությունները ամբողջությամբ արդիական ու կիրառելի են նաև մեր երկրի համար, որոնց իրականացումը հնարավորություն կտա ստեղծելու անհրաժեշտ պայմաններ սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների արդյունավետ լուծման ու պետության հասարակական-տնտեսական հեռանկարային և մրցունակ զարգացման ապահովման համար:

### Список литературы

1. **Барич Д.**, Дэн Сяопин / Пер. с венг. - М.: «Международные отношения», 1989. -264 с.
2. **Гэйн К., Сарсон Т.**, Структурный системный анализ: средства и методы / Пер. с англ., - М.: Горячая линия, 2000. - 360 с.
3. **Робертс Дж.**, Современная фирма: структура организации для достижения эффективности и роста / Пер. с англ. - М.: ООО «И. Д. Вильямс», 2007. - 352 с.
4. **Ротман Г.**, 50 компаний, которые изменили мир / Пер. с англ. - М.: АСТ Транзиткнига, 2005. - 381 с.
5. **Фатхутдинов Р. А.**, Управление конкурентоспособностью организации / М.: ЗАО Издательство «Маркет ДС», 2008. -544 с.

### ՄՓՓՓՄ

Հոդվածը նվիրված է արտադրական կազմակերպության վերակառուցման հիմնական ուղղությունների ուսումնասիրությանը: Ներկայացվում են վերակառուցման երկու հիմնական ուղղություններ, որոնց իրականացումը հնարավորություն կտա արագ վերակառուցել արտադրական կազմակերպության կազմակերպական և արտադրական-տեխնոլոգիական կառուցվածքը շուկայում ձևավորված նոր պահանջներին ու պայմաններին համապատասխան:

### АННОТАЦИЯ

#### АБРАМЯН В. – ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ РЕОРГАНИЗАЦИИ ПРОИЗВОДСТВА НА МАШИНОСТРОИТЕЛЬНЫХ ПРЕДПРИЯТИЯХ РА

Статья посвящена исследованию основных направлений реорганизации производственной организации. Представлены два основные направления реорганизации для оперативного приведения организационной и производственно-технологической структуры предприятия в соответствие с новыми рыночными условиями и требованиями.

### SUMMARY

#### ABRAHAMYAN V. – THE MAIN DIRECTIONS OF RECONSTRUCTION CAR-MAKING ORGANIZATIONS IN RA

In the article two main directions of production reconstruction are described to ensure rapid restoring of the industrial-technological structure of an industrial organization according to the newly formulated market conditions and demands.



ԲԱԺԻՆ V

ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ  
ՄԵԹՈԴՆԵՐ



**ՌՈՒԲԻԿ ԿՎԵՏԻՍՅԱՆ**

*Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու  
ԵՊՀ տնտեսագիտության մեջ մաթեմատիկական  
մոդելավորման ամբիոնի դոցենտ*

**ԺԻՐԱՅՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ**

*ԵՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի մագիստրանտ  
tj.phnua`zhirayr.mkhitaryan@yahoo.com*

**ՕՊՏԻՄԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԵՐԿՍԵԿՏՈՐ ՍՈՂԵԼԸ ԵՎ ՆՐԱ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ**

**Ներածություն**

*Տնտեսական աճը* բարդ ու բազմակողմանի երևույթ է ոչ միայն տնտեսագիտության տեսության համար. այն նաև տնտեսական քաղաքականության կարևոր հիմնախնդիրներից է: Դրա գործոնների և օրինաչափությունների ուսումնասիրությունը մակրոտնտեսագիտության կենտրոնական հիմնահարցերից մեկն է: Ցանկացած տնտեսական համակարգում տնտեսական աճը հասարակական արդյունքի ընդլայնված վերարտադրության դրսևորման ձևն է: Տնտեսական աճի բազմագործոնային բնույթը նկատի ունենալով՝ տնտեսագիտական մտքի նշանավոր տեսաբան Բ. Սելիգմենը նշել է. «Տնտեսական աճի համընդհանուր տեսության մշակումը գրեթե անիրագործելի խնդիր է»: Այնուհանդերձ, տնտեսական աճի վերաբերյալ ձևավորվել են տարբեր տեսություններ, մշակվել են տնտեսական շարժընթացի մոդելներ, որոնք հնարավորություն են տալիս բազմակողմանիորեն ուսումնասիրել տնտեսական աճի հիմնախնդիրները, այն պայմանավորող գործոնները, քանակական ու որակական չափորոշիչները:

Ցանկացած տնտեսական համակարգում անպայման կատարվում է ընտրություն ընթացիկ պահանջարկի (սպառման) և ապագա պահանջարկի (կապիտալ ներդրումների) բավարարման միջև: Չնայած նրան, որ սպառման ավելի բարձր մակարդակը միշտ էլ ավելի նախընտրելի է ցածրից, այնուամենայնիվ, սպառման ավելի բարձր մակարդակը նշանակում է ավելի քիչ կապիտալ ներդրումներ, ինչը անխուսափելիորեն կհանգեցնի արտադրության ծավալների կրճատման ապագայում, ինչն էլ ապագա սպառման նվազման պատճառ կդառնա: Այդ պատճառով էլ առաջանում է սպառման այս կամ այն քաղաքականության միջև ընտրության անհրաժեշտություն: Ծայրահեղություններից մեկը իրենից ներկայացնում է սպառման այնպիսի քաղաքականության իրականացումը, որի դեպքում առավելապես բավարարվում են ընթացիկ պահանջումները՝ նույնիսկ եթե դա պարունակում է ապագայում սպառման էական կրճատման սպառնալիք: Մեկ այլ ծայրահեղություն է հանդիսանում սպառման այնպիսի քաղաքականության իրականացումը, որի դեպքում սահմանափակվում է ընթացիկ սպառումը՝ կապիտալի և ապագա սպառման ավելացման նպատակով: Սպառման և կապիտալի կուտակման միջև ընտրություն կատարելիս առաջանում են սպառման, կապիտալի ձևա-

վորման և արտադրանքի թողարկման համար բազմաթիվ ժամանակային ֆունկցիաներ (հետագծեր): Տնտեսական աճի այդ հնարավոր տարբերակների բազմությունից անհրաժեշտ է ընտրել մեկը, բայց նախապես պետք է ստանալ ընթացիկ և ապագա սպառման հարաբերակցության գնահատականը: Հենց որ այդպիսի գնահատականը ստացվում է, ծագում է աճի օպտիմալ հետագծի ընտրության խնդիր, այսինքն *օպտիմալ տնտեսական աճի* խնդիր:

Տնտեսության զարգացման երկարաժամկետ միտումների, տնտեսական աճի գործոնների ուսումնասիրության, մակրոտնտեսական որոշումների այս կամ այն հետևանքների գնահատման համար օգտագործվում են ոչ գծային փոքր սեկտորներից բաղկացած մոդելներ: Դրանք, որպես կանոն, փակ տնտեսական մոդելներ են, այսինքն՝ ամբողջ արտադրանքը կամ սպառվում է, կամ ներդրվում: Տնտեսության կառուցվածքը ներկայացվում է *սեկտորների* միջոցով: Յուրաքանչյուր սեկտոր արտադրում է մեկ ագրեգացված արտադրանք: Սեկտորների ոչ մեծ թիվը թույլ է տալիս անալիտիկորեն ներկայացնել տնտեսության զարգացումը սեկտորների թողարկած արտադրանքի և ռեսուրսների միջև ոչ գծային կախվածությունների պայմաններում՝ էկզոգեն պարամետրերի տարբեր արժեքների դեպքում և այդպիսով ստանալ տնտեսական զարգացման ամբողջական պատկերը:

Որպես հենքային մոդել ծառայում է *տնտեսական աճի մեկ սեկտորից բաղկացած մոդելը* (Սոլոուի մոդել): Այս մոդելում տնտեսական համակարգը դիտարկվում է, որպես մեկ ամբողջություն, որն արտադրում է մեկ ունիվերսալ արտադրանք, որը կարող է ինչպես սպառվել, այնպես էլ ներդրվել: Մոդելը համարժեքորեն արտացոլում է վերարտադրության գործընթացը և թույլ է տալիս ընդհանուր գծերով վերլուծել սպառման և կուտակման միջև առկա փոխհարաբերությունները: Արտահանումը և ներմուծումը մոդելում ակնառու կերպով հաշվի չեն առնվում:

Վերարտադրության գործընթացն առավել համարժեքորեն է ներկայացնում *տնտեսական աճի երկու սեկտորից բաղկացած մոդելը*, որն առաջին անգամ հիմնավոր կերպով ուսումնասիրվել է Կարլ Մարքսի կողմից՝ «Կապիտալում»: Մոդելի մաթեմատիկական ձևակերպումը առաջին անգամ տրվել է Մեադի կողմից, իսկ այնուհետև զարգացվել Ուզավայի կողմից: Այս մոդելում առկա են երկու ագրեգացված արտադրանքներ՝ արտադրության միջոցներ (կապիտալ բարիքներ) և սպառման առարկաներ, ինչպես նաև առկա են արտադրանքի թողարկման տարբեր տեխնոլոգիաներ ունեցող երկու սեկտորներ (ստորաբաժանումներ), որոնցից առաջինը արտադրում է արտադրության միջոցները, իսկ երկրորդը՝ սպառման առարկաները: Մի սեկտորի թողարկումը անմիջականորեն կախված չէ մյուս սեկտորի թողարկման կամ ծախսերի մակարդակից: Արտադրության գործոնները համասեռ են և կարող են հեշտությամբ տեղաշարժվել մի սեկտորից մյուսը:

**Օպտիմալ տնտեսական աճի երկու սեկտորից բաղկացած մոդելի ձևակերպումը**

Եթե  $Y_C(t)$ -ով նշանակենք սպառողական բարիքների թողարկումը  $t$ -րդ ժամանակահատվածում, իսկ  $Y_I(t)$ -ով՝ արտադրության միջոցների թողարկումը, ապա  $t$ -րդ ժամանակահատվածին համապատասխանող համախառն ներքին արդյունքը կկազմի՝

$$Y(t) = Y_C(t) + pY_I(t),$$

որտեղ  $p$ -ն՝ արտադրության միջոցների գինն է՝ արտահայտված սպառողական բարիքների միավորներով:

Արտադրության գործընթացում յուրաքանչյուր սեկտոր արտադրանքի թողարկման համար օգտագործում է երկու գործոններ՝ կապիտալ և աշխատուժ: Թողարկումը որոշվում է նեոդասական արտադրական ֆունկցիաներով՝

$$Y_j = F_j(K_j, L_j), j = C, I,$$

որտեղ  $K_j$ -ն կապիտալի մեծությունն է  $j$ -րդ սեկտորում, իսկ  $L_j$ -ն՝ այդ սեկտորում օգտագործվող աշխատուժը: Ենթադրվում է, որ արտադրական ֆունկցիան ունի մինչև երկրորդ կարգի մասնակի ածանցյալներ ներառյալ: Յուրաքանչյուր  $F_j(\dots)$  արտադրական ֆունկցիա պետք է բավարարի նեոդասական արտադրական ֆունկցիաներին բնորոշ հետևյալ հատկություններին՝

1. արտադրության ծավալը զրոյական է, եթե արտադրության գործոններից զոնե մեկը չի օգտագործվում՝

$$F_j(K_j, 0) = F_j(0, L_j) = F_j(0, 0) = 0,$$

2. արտադրության գործոններից որևէ մեկի աճը ավելացնում է արտադրության ծավալը՝

$$\frac{\partial F_j}{\partial K_j} > 0, \quad \frac{\partial F_j}{\partial L_j} > 0,$$

3. արտադրության գործոնների սահմանային արտադրողականություններն ունեն նվազման միտում՝

$$\frac{\partial^2 F_j}{\partial K_j^2} < 0, \quad \frac{\partial^2 F_j}{\partial L_j^2} < 0,$$

4. երկու սահմանային արդյունքներն էլ սկզբում ընդունում են անվերջ մեծ արժեքներ, այնուհետև հետզհետե նվազում են մինչև զրոյական մակարդակ՝

$$\lim_{K \rightarrow 0} \frac{\partial F_j(K_j, L_j)}{\partial K_j} = \infty, \quad \lim_{K \rightarrow \infty} \frac{\partial F_j(K_j, L_j)}{\partial K_j} = 0,$$

$$\lim_{L \rightarrow 0} \frac{\partial F_j(K_j, L_j)}{\partial L_j} = \infty, \quad \lim_{L \rightarrow \infty} \frac{\partial F_j(K_j, L_j)}{\partial L_j} = 0:$$

Ենթադրենք, արտադրության երկու գործոններն էլ օգտագործվում են ամբողջությամբ, այսինքն՝

$$K_C(t) + K_I(t) = K(t), \quad L_C(t) + L_I(t) = L(t),$$

որտեղ  $K(t)$ -ն և  $L(t)$ -ն՝  $t$ -րդ ժամանակահատվածում առկա կապիտալի և աշխատուժի ընդհանուր ծավալներն են:

Կապիտալի ընդհանուր ծավալը ավելանում է կապիտալ ներդրումների հաշվին և նվազում՝  $\mu$  հաստատուն ամորտիզացիայի նորմով՝

$$\dot{K} = Y_I - \mu K : (1)$$

Աշխատուժը աճում է էքսպոնենցիալ օրենքով՝  $n$  հաստատուն տեմպով՝

$$\dot{L} = nL :$$

Տնտեսական աճի երկու սեկտորից բաղկացած մոդելում ենթադրվում է, որ արտադրական ֆունկցիան ունի մասշտաբից կայուն հատույց, այսինքն ցանկացած  $z > 0$  թվի համար՝

$$zY_j = zF_j(K_j, L_j) = F_j(zK_j, zL_j) :$$

Արտադրական ֆունկցիայի այդ հատկությունից բխում է, որ եթե վերցնենք  $z = \frac{1}{L_j}$ , ապա կստանանք՝

$$\frac{Y_c}{L_c} = F_c\left(\frac{K_c}{L_c}, 1\right) = f_c(k_c),$$

$$\frac{Y_I}{L_I} = F_I\left(\frac{K_I}{L_I}, 1\right) = f_I(k_I) :$$

Վերոնշյալ հավասարումը ցույց է տալիս, որ մեկ աշխատողին բաժին ընկնող արտադրության ծավալը կամ աշխատանքի արտադրողականությունը ֆունկցիա է մեկ աշխատողին բաժին ընկնող կապիտալից կամ կապիտալազինվածությունից (ֆոնդազինվածությունից):

$k_c$ -ն և  $k_I$ -ն ըստ սեկտորների կապիտալազինվածության արժեքներն են՝

$$k_j = \frac{K_j}{L_j} \quad 0 :$$

$f_j(k_j)$  արտադրական ֆունկցիաների համար նեոդասական արտադրական ֆունկցիաներին բնորոշ վերոնշյալ հատկությունները կարող ենք վերաձևակերպել հետևյալ կերպ՝

1.  $k_j(0) = k_j^0 = \frac{K_j^0}{L_j^0} = \frac{K_j(0)}{L_j(0)}$ ,
2.  $f_j'(k_j) = \frac{df_j(k_j)}{dk_j} > 0$ ,
3.  $f_j''(k_j) = \frac{d^2f_j(k_j)}{dk_j^2} < 0$ ,
4.  $\lim_{k_j \rightarrow 0} f_j'(k_j) = \infty$ ,  $\lim_{k_j \rightarrow \infty} f_j'(k_j) = 0$  :

$I_j$ -ով նշանակենք  $j$ -րդ սեկտորին բաժին ընկնող աշխատուժի քանակությունը՝

$$I_j = \frac{L_j}{L} > 0,$$

$$I_c + I_I = 1:$$

Այս դեպքում մեկ աշխատողի հաշվով սպառումը և կապիտալազինվածությունը կլինեն, համապատասխանաբար՝

$$y_c = \frac{Y_c}{L} = I_c f_c(k_c), \quad (2)$$

$$y_I = \frac{Y_I}{L} = I_I f_I(k_I): \quad (3)$$

Սեկ աշխատողի հաշվով համախառն ներքին արդյունքը կկազմի՝

$$y = y_c + p y_I:$$

Աշխատողի ընդհանուր կապիտալազինվածությունը հավասար է՝

$$k = \frac{K}{L} = k_c I_c + k_I I_I:$$

Ուստի համաձայն (1)-ի կունենանք՝

$$\dot{k} = y_I - \lambda k, \text{ որտեղ } \lambda = \mu + n:$$

Ստացված հավասարումը կոչվում է տնտեսական աճի երկու սեկտորից բաղկացած մոդելի հիմնարար հավասարում:

Օպտիմալ տնտեսական աճի խնդիրը երկու սեկտորից բաղկացած տնտեսական համակարգի համար, երբ դիտարկվում է կառավարման անսահման հորիզոն, կայանում է այնպիսի  $\{I_I(t)\}$ ,  $\{I_c(t)\}$ ,  $\{k_I(t)\}$  և  $\{k_c(t)\}$  հետազոծերի ընտրության մեջ, որպեսզի՝

$$\max W = \int_{t_0}^{\infty} e^{-\delta(t-t_0)} y_c dt$$

$$\dot{k} = y_I - \lambda k$$

$$k(t_0) = k_0$$

$$y_c = I_c f_c(k_c)$$

$$y_I = I_I f_I(k_I)$$

$$I_c + I_I = 1$$

$$k = k_c I_c + k_I I_I$$

$$I_I, I_c, k_I, k_c \geq 0,$$

որտեղ  $I_I(t), I_c(t), k_I(t), k_c(t)$  ֆունկցիաները կտոր առ կտոր անընդհատ ֆունկցիաներ են,  $f_c(\bullet)$ -ն և  $f_I(\bullet)$ -ն խիստ զոգավոր ֆունկցիաներ են,  $\delta$ -ն՝

դիսկոնտավորման դրական նորմ է,  $t_0$ -ն՝ ժամանակի սկզբնական պահն է, իսկ  $k_0$ -ն՝ կապիտալազինվածության սկզբնական մակարդակը:

*Այսպիսի խնդիրը հանդիսանում է օպտիմալ կառավարման խնդիր, որում միակ ֆազային կոորդինատը  $k$ -ն է, կառավարող պարամետրերը՝  $I, I_c, k_I, k_c$ -ն են, շարժման հավասարումը՝ տնտեսական աճի երկու սեկտորից բաղկացած մոդելի հիմնարար հավասարումը, իսկ նպատակային ֆունկցիան՝ բարեկեցության ինտեգրալը:*

Այս խնդիրը լուծելու համար ենթադրենք, որ տնտեսությունը ազատ մրցակցային է: Մրցակցային տնտեսությունում արտադրության գործոններից ստացվող եկամուտը միատեսակ է տնտեսության բոլոր սեկտորներում և հավասար է նրանց սահմանային արդյունքներին:  $w$ -ով նշանակենք աշխատավարձի մրցակցային դրույքաչափը, իսկ  $r$ -ով՝ մրցակցային տոկոսադրույթը (կապիտալի դիմաց վճարը), ընդ որում՝  $w$ -ն և  $r$ -ը արտահայտված են սպառողական բարիքների միավորներով: Արտադրական ֆունկցիաները դիֆերենցելով՝ կստանանք՝

$$r = \frac{\partial Y_c}{\partial K_c} = f'_c(k_c), \quad r = p \frac{\partial Y_I}{\partial K_I} = p f'_I(k_I), \tag{4}$$

$$w = \frac{\partial Y_c}{\partial L_c} = f_c(k_c) - k_c f'_c(k_c), \quad w = p \frac{\partial Y_I}{\partial L_I} = p (f_I(k_I) - k_I f'_I(k_I)):$$

Եթե աշխատավարձի դրույքաչափի հարաբերությունը տոկոսադրույթին նշանակենք  $\omega$ -ով՝  $\omega = \frac{w}{r}$ , ապա մրցակցային տնտեսությունում՝

$$\frac{f_c(k_c)}{f'_c(k_c)} - k_c = \omega = \frac{f_I(k_I)}{f'_I(k_I)} - k_I \tag{5}$$

կամ

$$\omega(k_j) = \frac{f_j(k_j)}{f'_j(k_j)} - k_j, \quad j = C, I: \tag{6}$$

$\omega(k_j)$  ֆունկցիան աճող է, քանի որ՝

$$\frac{d\omega(k_j)}{dk_j} = - \frac{f_j(k_j) f''_j(k_j)}{(f'_j(k_j))^2} > 0: \tag{7}$$

Այդ իսկ պատճառով կարելի է գտնել հակադարձ ֆունկցիան՝ այդպիսով ստանալով աշխատողի մրցակցային կապիտալազինվածությունը երկու սեկտորներում՝ որպես աշխատավարձի և կապիտալի հարաբերությունից կախված ֆունկցիա՝

$$k_j = k_j(\omega), \quad k'_j(\omega) > 0,$$

ընդ որում այն պայմաններից, որոնց բավարարում է արտադրական ֆունկցիան հետևում է, որ՝

$$k_j(0) = 0, \quad k_j(\infty) = \infty:$$

Այսպիսով, յուրաքանչյուր սեկտորում  $\omega$ -ի յուրաքանչյուր ոչ բացասական արժեքին համապատասխանում է կապիտալի՝ աշխատուժի նկատմամբ միակ հարաբերություն: Պայմանավորվենք, որ կան կապիտալը օգտագործվում է առավել ինտենսիվորեն սպառողական բարիքների արտադրության սեկտորում՝ կապիտալ բարիքների արտադրության սեկտորի համեմատ՝

$$k_c(\omega) > k_l(\omega), \text{ բոլոր } \omega\text{-ների համար, } 0 < \omega < \infty,$$

կան ընդհակառակը՝

$$k_l(\omega) > k_c(\omega), \text{ բոլոր } \omega\text{-ների համար, } 0 < \omega < \infty:$$

Մասնավորապես, բացառված են այն դեպքերը, երբ որոշ  $\omega$ -ների համար տեղի ունի առաջին, իսկ որոշների համար՝ երկրորդ պայմանը, այսինքն գործոնների ինտենսիվության փոփոխությունը չի դիտարկվում:

Քանի որ  $k_c \neq k_l$ , ապա

$$I_c + I_l = 1, \quad k = k_c I_c + k_l I_l \quad (8)$$

հավասարումների համակարգից միշտ կարելի է որոշել  $I_c$ -ն և  $I_l$ -ն՝

$$I_c = \frac{k - k_l}{k_c - k_l}, \quad I_l = \frac{k_c - k}{k_c - k_l}: \quad (9)$$

Այստեղից կստանանք՝

$$y_c = I_c f_c(k_c) = \frac{k - k_l}{k_c - k_l} f_c(k_c),$$

$$y_l = I_l f_l(k_l) = \frac{k_c - k}{k_c - k_l} f_l(k_l):$$

Բացի այդ, ազատ մրցակցության մասին պայմանի առկայությունից, ըստ (4)-ի բխում է, որ եթե արտադրվում են երկու տեսակի բարիքներն էլ, ապա արտադրության միջոցների միավորի գինը՝ արտահայտված սպառողական բարիքների միավորներով, հանդիսանում է  $\omega$ -ից կախված ֆունկցիա՝

$$p(\omega) = \frac{f'_c(k_c(\omega))}{f'_l(k_l(\omega))}:$$

Լոգարիթմենք, այնուհետև դիֆերենցենք վերոնշյալ հավասարումը՝ օգտագործելով (6)-ը (7)-ը.

$$\log p(\omega) = \log f'_c(k_c(\omega)) - \log f'_l(k_l(\omega)),$$

$$\frac{1}{p} \frac{dp}{d\omega} = \frac{1}{k_l(\omega) + \omega} - \frac{1}{k_c(\omega) + \omega}: \quad (10)$$

Ստացված արտահայտությունը դրական (բացասական) է, եթե  $k_c > (<) k_l$ :

Մինչ այժմ ենթադրել ենք, որ արտադրվում են երկու տեսակի բարիքներն էլ: Եթե տնտեսությունը մասնագիտանում է արտադրության միջոցների արտադրության մեջ, ապա՝

$$I_l = 1, \quad I_c = 0,$$

$$k_I = k, \quad k_c = 0, \\ y_I = f_I(k), \quad y_c = 0:$$


Եթե տնտեսությունը մասնագիտանում է սպառողական բարիքների արտադրության մեջ, ապա՝

$$I_I = 0, \quad I_c = 1, \\ k_I = 0, \quad k_c = k, \\ y_I = 0, \quad y_c = f_c(k):$$

Մասնագիտացման և  $\omega$ -ի միջև կապը ներկայացված է գծապատկեր 1-ում:

**Գծապատկեր 1**

**Մասնագիտացման և  $\omega$ -ի միջև կապը**



Ենթադրվում է, որ  $k_I(\omega) < k_c(\omega)$  բոլոր  $\omega$ -ների համար,  $0 < \omega < \infty$ : Հետևաբար,  $k_c$   $k$  և  $k_I$   $k$ ՝ (8) պայմանների,  $I_c$ -ի և  $I_I$ -ի ոչ բացասական լինելու և  $k_I < k_c$  ենթադրության հիման վրա: Տնտեսությունը մասնագիտանում է արտադրության միջոցների արտադրության մեջ, եթե՝

$$\omega = \frac{f_I(k)}{f_I'(k)} - k = \omega_I(k),$$

և սպառողական բարիքների արտադրության մեջ, եթե՝

$$\omega = \frac{f_c(k)}{f_c'(k)} - k = \omega_c(k):$$

Այսպիսով գծապատկեր 1-ում մասնագիտացումը տեղի է ունենում կորերից մեկի վրա, իսկ միաժամանակ արտադրությունը՝ նրանց միջև ընկած տիրույթում:

Աշխատողի  $k$  ֆիքսված կապիտալազինվածության մակարդակում, *արդյունավետ արտադրության սահման* է կոչվում  $(y_I, y_c)$  կետերի այն երկրաչափական տեղը, որոնցում մեկ աշխատողին բաժին ընկնող բարիքներից մեկի թողարկումը հասնում է իր մաքսիմումին՝ մեկ աշխատողի հաշվով մյուս բարիքի ֆիքսված մեծության դեպքում: Այդ սահմանի համար արտահայտությունը պարամետրական տեսքով կստանանք՝ օգտագործելով (2)-ը, (3)-ը և (9)-ը՝

$$y_c = \frac{k - k_I}{k_c - k_I} f_c(k_c),$$

$$y_I = \frac{k_c - k}{k_c - k_I} f_I(k_I),$$

որտեղ  $k_j = k_j(\omega)$  և  $\omega$ -ն փոփոխվում է  $\omega_c(k)$ -ից մինչև  $\omega_I(k)$ : Եթե երկու բարիքներն էլ արտադրվում են, ապա գների  $p$  հարաբերությունը հավասար է արդյունավետ արտադրության սահմանի թեքության անկյան տանգենսի բացարձակ արժեքին՝

$$\frac{dy_c}{dy_I} = -\frac{f_c'}{f_I'} = -p:$$

Դա ցույց է տրված գծապատկեր 2-ում (II): Սակայն, եթե տնտեսությունը մասնագիտացած է արտադրության միջոցների արտադրության մեջ, ապա՝

$$\omega = \omega_I(k) \text{ և } p < \frac{f_c'}{f_I'}:$$


Եթե տնտեսությունը մասնագիտացած է սպառողական բարիքների արտադրության մեջ, ապա՝

$$\omega = \omega_c(k) \text{ և } p > \frac{f_c'}{f_I'}:$$

Գծապատկեր 2-ում մասնագիտացման կետերը (I և V) գտնվում են արդյունավետ արտադրության սահմանի (III) և կորդինատային առանցքների հետ հատման կետերում: IV-ը իրենից ներկայացնում է թողարկվող բարիքների թույլատրելի համակցությունները:

*Գծապատկեր 2*

**Արդյունավետ արտադրության սահման**



Օպտիմալ տնտեսական աճի խնդիրը այժմ կարելի է ձևակերպել  $\omega$ -ի օգնությամբ հետևյալ կերպ՝

$$\begin{aligned} \max_{\{\omega(t)\}} W &= \int_{t_0}^{\infty} \delta^{t-t_0} \frac{k - k_I}{k_c - k_I} f_c(k_c) dt, \\ \dot{k} &= \frac{k_c - k}{k_c - k_I} f_I(k_I) - \lambda k, \\ k(t_0) &= k_0, \quad k_j = k_j(\omega), \quad j = C, I, \\ \omega_c(k) &\quad \omega \quad \omega_I(k), \end{aligned}$$

որտեղ  $\omega(t)$ -ն կտոր առ կտոր անընդհատ ֆունկցիա է: Այստեղ, ինչպես և նախկինում ֆազային կոորդինատը  $k$ -ն է, սակայն այժմ կառավարող պարամետրը հանդիսանում է աշխատավարձի դրույքաչափի հարաբերությունը տոկոսադրույքին, այսինքն՝  $\omega$ -ն: Պայմանավորվենք, որ  $k_I(\omega) < k_c(\omega)$  բոլոր  $\omega$ -ների համար, ինչպես գծապատկեր 1-ում:

**Օպտիմալ տնտեսական աճի երկու սեկտորից բաղկացած խնդրի լուծումը Պոնտրյագինի մաքսիմումի սկզբունքով**

Քանի որ վերը ձևակերպված խնդիրը հանդիսանում է օպտիմալ կառավարման խնդիր, ուստի այն կարելի է լուծել՝ կիրառելով Պոնտրյագինի մաքսիմումի սկզբունքը: Դրա համար անհրաժեշտ է կազմել Համիլտոնի ֆունկցիան, այն է՝

$$H = e^{-\delta(t-t_0)} \left\{ \frac{k - k_I}{k_c - k_I} f_c(k_c) + q \left[ \frac{k_c - k}{k_c - k_I} f_I(k_I) - \lambda k \right] \right\},$$

որտեղ  $q(t)$ -ն փոխկապված փոփոխականն է և մեկնաբանվում է, որպես կապիտալ ներդրումների ստվերային գին: Կանոնական հավասարումները կլինեն՝

$$\dot{k} = \frac{k_c - k}{k_c - k_I} f_I(k_I) - \lambda k,$$

$$q = (\lambda + \delta)q - \frac{1}{k_c - k_I} f_c(k_c) + \frac{q}{k_c - k_I} f_I(k_I):$$

Պոնտրյագինի մաքսիմումի սկզբունքի համաձայն՝ օպտիմալ կառավարումը մաքսիմալացնում է Համիլտոնի ֆունկցիան ժամանակի յուրաքանչյուր պահի դրությամբ, այսինքն  $\omega$ -ի օպտիմալ արժեքը պետք է մաքսիմալացնի  $H$  ֆունկցիան, կամ որ նույնն է  $He^{\delta(t-t_0)}$ -ն: Օգտագործելով վերոնշյալ հարաբերակցությունները, կստանանք՝

$$\frac{\partial}{\partial \omega} (He^{\delta(t-t_0)}) = [q f'_I(\bullet) - f'_c(\bullet)] \times \left\{ \left( \frac{k - k_I}{k_c - k_I} \right) \left( \frac{\omega + k_I}{k_c - k_I} \right) \frac{dk_I}{d\omega} + \left( \frac{k_c - k}{k_c - k_I} \right) \left( \frac{\omega + k_c}{k_c - k_I} \right) \frac{dk_c}{d\omega} \right\}:$$

Վերոնշյալ արտահայտությունում երկրորդ բազմապատկիչը միշտ դրական է: Ուստի, եթե առաջին բազմապատկիչը դրական է՝

$$q > \frac{f'_c(\bullet)}{f'_I(\bullet)},$$

ապա  $H$ -ը կհասնի իր մաքսիմումին  $\omega = \omega_I(k)$  դեպքում և կարտադրվեն միայն արտադրության միջոցներ: Եթե՝

$$q < \frac{f'_c(\bullet)}{f'_I(\bullet)},$$

ապա  $\omega = \omega_c(k)$  և կարտադրվեն միայն սպառողական բարիքներ: Իսկ եթե՝

$$q = \frac{f'_c(\bullet)}{f'_I(\bullet)},$$

ապա  $\omega_c(k) < \omega < \omega_I(k)$  և կարտադրվեն երկու տեսակի բարիքներն էլ: Այս դեպքում մասնագիտացումը բացակայում է, հաշվի առնելով (5)-ը, կանոնական հավասարումը փոխկապված փոփոխականի համար կարող ենք գրել հետևյալ կերպ՝

$$\dot{q} = [(\lambda + \delta) - f'_I(k_I)]q: \tag{11}$$

Այս դեպքում, սակայն

$$q = p(\omega) = \frac{f'_c(k_c(\omega))}{f'_I(k_I(\omega))},$$

այնպես, որ

$$\frac{\dot{q}}{q} = \frac{1}{p} \frac{dp}{d\omega} \omega:$$

Օգտագործելով (10)-ը և (11)-ը, կստանանք՝

$$\dot{\omega} = \frac{\lambda + \delta - f'_I(k_I(\omega))}{\frac{1}{k_I(\omega) + \omega} - \frac{1}{k_c(\omega) + \omega}}:$$

Այսպիսով, ընդհանուր դեպքում, ֆազային փոփոխականի համար դիֆերենցիալ հավասարումը կընդունի հետևյալ տեսքը՝

$$\dot{k} = \frac{k_c(\omega) - k}{k_c(\omega) - k_I(\omega)} f_I(k_I(\omega)) - \lambda k, \quad (12)$$

**Օպտիմալ տնտեսական աճի երկու սեկտորից բաղկացած մոդելի դրույթների կիրառությունը ԱՄՆ տնտեսության նկատմամբ**

(12) հիմնարար հավասարումը գնահատվել է ԱՄՆ տնտեսության համար՝ օգտագործելով հավասարման մեջ առկա փոփոխականների՝ 1960-2010 թթ. վիճակագրական արժեքները: Գնահատվել են  $k_c(\omega)$ ,  $k_I(\omega)$  և  $f_I(k_I(\omega))$  ֆունկցիաները ԱՄՆ տնտեսության համար, որի արդյունքում (12) հավասարումը ստացել է հետևյալ տեսքը՝

$$\frac{dk}{dt} = \frac{303,5 \omega^{0,406} - k}{303,5 \omega^{0,406} - 20,8 \omega^{0,406}} * 3261147445,2 \omega^{0,573} - \lambda k,$$

Վերոնշյալ հավասարումը պարզեցնելով կստանանք՝

$$\frac{dk}{dt} = \frac{303,5 \omega^{0,406} * 3261147445,2 \omega^{0,573}}{282,7 \omega^{0,406}} - k(3261147445,2 \omega^{0,573} / 282,7 \omega^{0,406} + \lambda),$$

$$\frac{dk}{dt} = 3501090377 \omega^{0,573} - k(11535718 \omega^{0,167} + \lambda),$$

Ստացված հավասարումը դիֆերենցիալ հավասարում է, որը կարելի է լուծել անջատվող փոփոխականների եղանակով, ինչը ներկայացված է ստորև՝

$$\frac{dk}{3501090377 \omega^{0,573} - k(11535718 \omega^{0,167} + \lambda)} = dt,$$

$$\ln|3501090377 \omega^{0,573} - k(11535718 \omega^{0,167} + \lambda)| = t + C,$$

$$3501090377 \omega^{0,573} - k(11535718 \omega^{0,167} + \lambda) = e^{t+C},$$

$$k(11535718 \omega^{0,167} + \lambda) = 3501090377 \omega^{0,573} - e^{t+C},$$

$$k = \frac{3501090377 \omega^{0,573} - e^{t+C}}{11535718 \omega^{0,167} + \lambda} : \tag{13}$$


1960-2010 թթ. ընդունելով ԱՄՆ աշխատուժի աճի միջին տեմպը 0,02, իսկ անդրտիզացիայի նորմը՝ 0,07 կստանանք, որ  $\lambda = 0,09$ :  $t = 0$  ժամանակի սկզբնական պահի դրությամբ,  $\omega = 5669$  և  $k = 5135$  վիճակագրական արժեքների համար (13) հավասարումից կստանանք, որ  $C = 26,2$ : Այսպիսով, (13) հավասարումը, որպես  $\omega$ -ից կախված հավասարում՝ կստանա հետևյալ տեսքը՝

$$k = \frac{3501090377 \omega^{0,573} - e^{26,2}}{11535718 \omega^{0,167} + 0,09} : \tag{14}$$

Օգտագործելով աշխատավարձի և տոկոսադրույքի իրական արժեքները՝ (14) հավասարումից կստանանք կապիտալազինվածության օպտիմալ արժեքները, որոնց միջև կապը, ինչպես նաև շարժի միտումն արտացոլող կորը գրաֆիկորեն ներկայացված են գծապատկեր 3-ում:

**Գծապատկեր 3**

**Մասնագիտացման և  $\omega$ -ի միջև կապը ԱՄՆ տնտեսության համար**



Աղբյուրը՝ կառուցվել է Համաշխարհային բանկի և ԱՄՆ Աշխատանքի վիճակագրության բյուրոյի տվյալների բազաների հիման վրա՝ The World Bank DataBank, <http://www.databank.worldbank.org>, Bureau of Labor statistics, <http://www.bls.gov/data/>, 15.09.2013:

Այսպիսով, համադրելով գծապատկեր 1-ը և 3-ը, կարող ենք եզրակացնել, որ դիտարկված ժամանակահատվածում ԱՄՆ տնտեսությունը մասնագիտացված է եղել սպառողական բարիքների արտադրության մեջ:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Понтрягин Л. С.**, Принцип максимума в оптимальном управлении. - 2-е изд. / М., Едиториал УРСС, 2004.
2. **Болтянский В. Г.**, Математические методы оптимального управления. - 2-е изд. / М., Наука, 1969.
3. **Ногин В. Д.**, Введение в оптимальное управление. Учебно-методическое пособие. / СПб: Изд-во «ЮТАС», 2008.
4. **Интрилигатор М.**, Математические методы оптимизации и экономическая теория / Изд. Прогресс, Москва, 1975.
5. **Колемаев В. А.**, Математическая экономика: Учебник для вузов. / М.: ЮНИТИ, 1998.
6. **Shell K.**, Applications of Pontryagin's Maximum Principle to Economics / Massachusetts Institute of Technology, 1968.
7. Տնտեսագիտության տեսություն (ուսումնական ձեռնարկ) / Խմբ.՝ Գ. Ե. Կիրակոսյանի և Ի. Ե. Խլիլաբյանի. - Եր., Տնտեսագետ, 2009:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում հետազոտվում է ԱՄՆ տնտեսական աճը եւ մասնագիտացումը, հիմնվելով օպտիմալ տնտեսական աճի երկու սեկտորից բաղկացած մոդելի վրա, ձևակերպված որպես օպտիմալ կառավարման խնդիր, Պոնտրյագինի մաքսիմումի սկզբունքի օգտագործմամբ:

## АННОТАЦИЯ

**АВETИСЯН Р., МХИТАРЯН Ж. — ДВУХСЕКТОРНАЯ МОДЕЛЬ ОПТИМАЛЬНОГО ЭКОНОМИЧЕСКОГО РОСТА И ЕЁ ПРИЛОЖЕНИЕ**

В статье исследуется экономический рост и специализация экономики США, на основе двухсекторной модели оптимального экономического роста, сформулированной как задача оптимального управления, с использованием принципа максимума Понтрягина.

## SUMMARY

**AVETISYAN R., MKHITARYAN Zh. — THE TWO-SECTOR MODEL OF OPTIMAL ECONOMIC GROWTH AND ITS APPLICATION**

In the article economic growth and specialization of the USA economy is investigated with the two-sector model of optimal economic growth formulated as a problem of optimal control and using Pontryagin principle.

**ԱՐԱՍ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

*տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
ԵՊՀ տնտեսագիտության մեջ մաթեմատիկական  
մոդելավորման ամբիոնի վարիչ  
Էլ.փոստ՝ aarakelyan@gmail.com*

**ԺԻՐԱՅՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ**

*ԵՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի մագիստրանտ  
Էլ.փոստ՝ zhirayr.mkhitaryan@yahoo.com*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՆԱԾԻ ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՇԱՐՔԻ  
ՍՊԵԿՏՐԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

**Ներածություն**

Ժամանակային շարքերի սպեկտրալ վերլուծությունը լայն կիրառություն է ստացել մակրո- և միկրոտնտեսական հետազոտություններում: Այդ ուղղությամբ առաջին աշխատանքները սկսվել են XX դարի 60-ական թվականներից:

Սկզբնական շրջանում սպեկտրալ վերլուծության մեթոդները կիրառվել են սեզոնային բնույթ կրող հարաբերությունների կարգավորման [1], իսկ այնուհետև նաև տնտեսական տվյալների և [2] տնտեսական գործոնների միջև կապերի ուսումնասիրության համար [3, 4]: Տարիների ընթացքում սպեկտրալ վերլուծության կիրառության շրջանակները ընդլայնվեցին և ընդգրկեցին ինչպես միջազգային, այնպես էլ ազգային տնտեսության գործարար պարբերաշրջանների հետազոտման հիմնախնդիրները:

Սույն աշխատանքը նվիրված է Հայաստանի Հանրապետության գնաճի ժամանակային շարքի սպեկտրալ վերլուծությանը: Հայտնի է, որ սպեկտրալ վերլուծության մեթոդները լայնորեն կիրառվում են բավականաչափ երկար ժամանակային շարքերի ուսումնասիրության ժամանակ, սակայն դրանց կիրառությունը մի շարք մակրոտնտեսական շարքերի համար կապված է որոշ դժվարությունների հետ: Ներկայացվող աշխատանքում ուսումնասիրություններն իրականացված են հետևյալ տրամաբանությամբ. նախ տրվում է ՀՀ գնաճի ժամանակային շարքի նկարագրությունը, այնուհետև ուսումնասիրվում է դրա պարբերականությունը և կիրառելիվ Շուստերի պարբերագրի մեթոդը՝ որոշվել են ուսումնասիրվող շարքի պարբերությունները: Աշխատանքի եզրափակիչ մասում ներկայացվել է ՀՀ գնաճի ժամանակային շարքի մոտարկումը՝ կիրառելիվ Ֆուրյեի շարքը և հիմնվելով արդեն որոշված պարբերությունների վրա:


**ՀՀ գնաճի ժամանակային շարքի նկարագրությունը**

Տարբեր երևույթների հետազոտությամբ բացահայտվել է, որ ժամանակի ընթացքում փոփոխվող բազմաթիվ, այդ թվում նաև տնտեսական գործընթացներ

և դրանց հետագծերի կարգավորմանն ուղղվող գործոնները բնութագրող տվյալների համախումբը կարելի է դիտարկել որպես ժամանակային շարք [3]: Տնտեսական հարաբերություններում դրա օրինակ է հանդիսանում գնաճի ժամանակային շարքը, որի սպեկտրալ վերլուծությունը թույլ է տալիս գնահատել ներկայացվող աշխատանքում դիտարկված ՀՀ գնաճի ժամանակային շարքը՝ կազմված 1996-2013 թթ. գնաճի ամսական տվյալներից: Ժամանակային շարքում ընդգրկված չեն 1990-ականների առաջին կեսի գնաճի ցուցանիշները, քանի որ այդ շրջանը բնութագրվում է, որպես գերգնաճային և քառատրոփ գնաճային ժամանակահատված: Որպես գնաճի չափման ցուցանիշ օգտագործված է ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված սպառողական գների ինդեքսը, որի դինամիկան ներկայացված է գծապատկեր 1-ում:

*Գծապատկեր 1*

**1996-2013թթ. ՀՀ սպառողական գների ինդեքսի դինամիկան**



Աղբյուրը՝ կառուցվել է տվյալների հետևյալ հենքի հիման վրա՝ [https://www.cba.am/Storage/AM/downloads/stat\\_data\\_arm/6.CPI\\_monthly-armenian.xls](https://www.cba.am/Storage/AM/downloads/stat_data_arm/6.CPI_monthly-armenian.xls)

**ՀՀ գնաճի ժամանակային շարքի պարբերությունների որոշումը**

Ժամանակային շարքերի վերլուծությունում կարևոր տեղ է գրավում այսպես կոչված «թաքնված պարբերությունների» հայտնաբերումը, որի համար լավագույն միջոց է հանդիսանում Շուևտերի պարբերագրի մեթոդը:

Շուևտերի պարբերագիրը ներկայացվում է հետևյալ բանաձևի միջոցով՝


$$I_n(\omega) = \frac{1}{n} \left[ \left( \sum_{j=1}^n x_j \cos \frac{2\pi j}{\omega} \right)^2 + \left( \sum_{j=1}^n x_j \sin \frac{2\pi j}{\omega} \right)^2 \right],$$

որտեղ  $x_j, j = \overline{1, n}$  տվյալներն են: Եթե տվյալները պարունակում են  $\omega_0$  պարբերությամբ անդամ, ապա  $I_n(\omega)$ -ն այդ կետում կունենա գագաթ [3]:

Շուտերի պարբերագրի մեթոդը կիրառվել է ՀՀ գնաճի ժամանակային շարքի վերլուծության ընթացքում: Դիտարկվել են 25 պարբերություններ՝  $\omega = \overline{1, 25}$ , 212 տվյալների դեպքում ( $n = 212, j = \overline{1, 212}$ ): Արդյունքում դիտարկված պարբերությունների և տվյալների համար հաշվարկվել են  $I_n(\omega)$  արժեքները, որոնք ներկայացված են գծապատկեր 2-ում:

*Գծապատկեր 2*

**ՀՀ գնաճի ժամանակային շարքի պարբերագրի արժեքները**



Գծապատկեր 2-ից երևում է, որ ՀՀ գնաճի ժամանակային շարքը ունեցել է հինգ նշանակալի գագաթներ՝ 8, 11, 16, 19 և 24-րդ պարբերություններում: Գագաթների արժեքները ամիսներով արտահայտելու համար կիրառվում է հետևյալ բանաձևը՝

$$\frac{j\pi}{n} = \frac{2\pi}{r}, \text{ որտեղից՝ } r = \frac{424}{j}:$$

Այսպիսով ՀՀ գնաճի ժամանակային շարքը ունեցել է 18, 22, 27, 39 և 53 ամսական պարբերություններ:

**ՀՀ գնաճի ժամանակային շարքի Ֆուրյեի մոտարկումը**

Ֆուրյեի շարքը եռանկյունաձևական տեսքով կարելի է ներկայացնել հետևյալ բանաձևի միջոցով՝

$$x_j = A_0 + \sum_{k=1}^s \left[ A_k \sin \frac{2\pi k}{n} j + B_k \cos \frac{2\pi k}{n} j \right], \quad s \leq n/2,$$

որտեղ  $s$ -ը  $x_j$ -ն գեներացնող գործընթացում պարունակվող պարբերությունների թիվն է, իսկ  $k$ -ն՝ առանձին պարբերությունը [5]: Խնդիրը կայանում է նրանում, թե որ պարբերություններն է պետք ներառել մոդելավորման գործընթացում: Օգտագործելով Շուստերի պարբերագրի միջոցով գնաճի ժամանակային շարքի մոդելավորման արդյունքներն որոշվել են  $s$ -ը և  $k$ -ն ( $s = 1,5, k = 1,5$ ): Այժմ կարող ենք Ֆուլյեի մոտարկումը կիրառել ՀՀ գնաճի ժամանակային շարքի նկատմամբ: Փոքրագույն քառակուսիների մեթոդով իրականացված ռեգրեսիոն վերլուծության հիման վրա ստացվել են հետևյալ արդյունքները (աղյուսակ 1)՝

*Աղյուսակ 1*

**Ֆուլյեի շարքի մոտարկման հավասարման ռեգրեսիոն վերլուծության արդյունքները**

Adjusted R Square	0.316
Std. Error of the Estimate	3.274
F	10.745
Sig.	.000

Ինչպես երևում է աղյուսակ 1-ից դետերմինացիայի գործակիցը բավական ցածր է (31.6%): Այն բարելավելու համար գնաճի ժամանակային շարքի նկատմամբ իրականացվել է էքսպոնենցիալ ողորկում (exponential smoothing) հետևյալ բանաձևով [6]՝

$$y_j = \alpha x_j + (1 - \alpha)y_{j-1}, \alpha \in [0,1]:$$

$\alpha = 0.05$  գործակցի դեպքում էքսպոնենցիալ ողորկման արդյունքում կստանանք գնաճի  $y_j$  ողորկված ժամանակային շարքը, որի նկատմամբ էլ կվերափրականացնենք վերոնշյալ ռեգրեսիոն վերլուծությունը: Վերջինիս արդյունքները ներկայացված են աղյուսակ 2-ում:

*Աղյուսակ 2*

**Ֆուլյեի շարքի մոտարկման հավասարման ռեգրեսիոն վերլուծության արդյունքները էքսպոնենցիալ ողորկված գնաճի ժամանակային շարքի համար**

Adjusted R Square	0.745
Std. Error of the Estimate	9.576
F	62.546
Sig.	.000

Բազմապատկիչ	Գնահատական	t-վիճակագրի p-արժեք
$A_0$	93.743	.000
$A_1$	-7.893	.000
$A_2$	-8.718	.000
$A_3$	-7.739	.000

$A_4$	-7.024	.000
$A_5$	-6.039	.000
$B_1$	-12.402	.000
$B_2$	-8.031	.000
$B_3$	-5.152	.000
$B_4$	-3.001	.001
$B_5$	-1.979	.035

Ինչպես երևում է աղյուսակ 2-ից, ողորկման արդյունքում դետերմինացիայի գործակիցը էապես աճել է՝ հասնելով 74.5%-ի: Բոլոր գործակիցների  $t$ -վիճակագրերը նշանակալի են:

**Գծային տրենդով Ֆուրյեի շարքի միագործոն մոտարկման կիրառությունը ՀՀ գնաճի ժամանակային շարքի նկատմամբ**

Գծային տրենդով Ֆուրյեի շարքի միագործոն մոտարկումը կարելի է ներկայացնել հետևյալ բանաձևի միջոցով [5]

$$\Delta\pi_j = A_0 - A_1 \sin\left(\frac{2\pi t}{T}\right) - A_2 \cos\left(\frac{2\pi t}{T}\right) - A_2 \pi_{j-1} + \sum_{i=1}^4 B_i \Delta\pi_{j-i} + \varepsilon_j$$

Վերոնշյալ հավասարումը կիրառվել է ՀՀ գնաճի ժամանակային շարքի նկատմամբ: Փոքրագույն քառակուսիների մեթոդով իրականացված ռեգրեսիոն վերլուծության արդյունքում ստացվել են հավասարման գործակիցները, որոնք ներկայացված են աղյուսակ 3-ում:

*Աղյուսակ 3*

**Գծային տրենդով Ֆուրյեի շարքի միագործոն մոտարկման հավասարման ռեգրեսիոն վերլուծության արդյունքները**

Adjusted R Square	0.999
Std. Error of the Estimate	.00089
F	2.527E4
Sig.	.000

Բազմապատկիչ	Գնահատական	t-վիճակագրի p-արժեք
$A_0$	.004	.000
$A_1$	.000	.013
$A_2$	.000	.012
$A_3$	-4.806E-5	.000
$B_1$	1.082	.000

$B_2$	.004	.972
$B_3$	-.211	.002
$B_4$	.031	.031

Ինչպես երևում է աղյուսակ 3-ից, դետերմինացիայի գործակիցը բավական բարձր է (0.99%), իսկ գործակիցները՝ հիմնականում նշանակալի:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Nerlove M.**, Spectral Analysis of Seasonal Adjustment Procedures // *Econometrica*, vol. 32(3), (1964), pp. 241–286.
2. **Granger C. W. J.** The Typical Spectral Shape of an Economic Variable // *Econometrica*, vol. 34(1), (1966), pp. 150–161.
3. **Granger C. W. J. and M. Hatanaka** Spectral Analysis of Economic Time Series / Princeton University Press, Princeton, New Jersey (1964).
4. **Granger C. W. J.** Investigating Casual Relations by Econometric Models and Cross-Spectral Methods // *Econometrica*, vol. 37(3), (1969), pp. 424–438.
5. **Becker R., Enders W., Hurn S.** “Modeling Inflation and Money Demand Using a Fourier-Series Approximation // *Nonlinear Time Series Analysis of Business Cycles (Contributions to Economic Analysis, Volume 276)*, Emerald Group Publishing Limited, pp.221-246.
6. **Pindyck R. S. and Rubinfeld D. L.** *Econometric models and economic forecasts / McGraw-Hill international editions: Economics series. - New York, 1998, pp. 423-424.*

#### ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում ուսումնասիրվում է ՀՀ-ում զնաճի ժամանակային շարքը, հիմնվելով գծային տրենդով ֆուրյեի շարքի միագործոն մոտարկման վրա:

#### АННОТАЦИЯ

#### ԱՐԱԿԵԼՅԱՆ Ա., ՄԽԻՏԱՐՅԱՆ Ջ. – СПЕКТРАЛЬНЫЙ АНАЛИЗ ВРЕМЕННОГО РЯДА ИНФЛЯЦИИ В РА

В статье исследуется временной ряд инфляции в Армении, на основе однофакторной аппроксимации ряда Фурье с линейным трендом.

#### SUMMARY

#### ԱՐԱԿԵԼՅԱՆ Ա., ՄԽԻՏԱՐՅԱՆ Ջ. – SPECTRAL ANALYSIS OF INFLATION TIME SERIES IN RA

The article touches upon inflation time series in Armenia based on unifactor approximation of Fourier series with linear trend.

**ՄԵԼՍ ՍԱՀԱԿՅԱՆ**

*Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների  
թեկնածու, ԵՊՀ տնտեսագիտության մեջ մաթեմատիկական  
մոդելավորման ամբիոնի պրոֆեսոր  
էլ.փոստ՝ mels.sahakyan@gmail.com*

**ԳԱՅԱՆԵ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

*հայցորդ, ԵՊՀ  
էլ.փոստ՝ tum.gayane@gmail.com*

**ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՏԵՍԱՀՈԼՈՎԱԿՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ ԸՍՏ ԴԵՌՈՒՄՏԱԱԼԻՔՆԵՐԻ**

Հոդվածում ներկայացված է հեռուստաալիքների միջև գովազդային տեսա-  
հոլովակների բաշխման խնդրի երկու մոդելներ և դրանց գործնական օրինակ-  
ների լուծումները:

**Հեռուստաալիքների ընտրության խնդրի դրվածքը**

Ընկերությունը ցանկանում է  $m$  տարբեր հեռուստաալիքների ( $h/w_i \leftrightarrow i, i=1,2,\dots,m$ ) միջոցով գովազդել իր արտադրանքը և գովազդման հատկացված  $C$  բյուջեի սահմաններում ստանալ առավելագույն համախառն վարկանիշի աս-  
տիճան, միաժամանակ ապահովելով.

որոշակի հավելյալ եկամուտ, գովազդման համար նախատեսված տեսա-  
հոլովակների որոշակի քանակ:

Ընկերությունը ցանկանում է  $m$  տարբեր հեռուստաալիքների ( $h/w_i \leftrightarrow i, i = 1, 2, \dots, m$ ) միջոցով գովազդել իր արտադրանքը և գովազդման հատկացված  $C$  բյուջեի սահմաններում ստանալ առավելագույն համախառն վարկանիշի աստի-  
ճան,միաժամանակ ապահովելով՝ որոշակի հավելյալ եկամուտ և գովազդման համար նախատեսված տեսահոլովակների որոշակի քանակ:

**Եզրերի սահմանումները, որոնք օգտագործվում են հոդվածում<sup>1,2</sup>**

Գովազդային ընդմիջում - *այն եթերաժամը, որի ընթացքում կատարվում է գովազդ:*

Սփոթ /Spot/ - *գովազդային ընդմիջման ընթացքում գովազդային տե-  
սահոլովակի մեկ ցուցադրում:*

Սփոթը կարող է լինել տարբեր տևողություն ունեցող (վայրկյան) գովազ-  
դային տեսահոլովակ:

<sup>1</sup> Sissors J., Roger B. Advertising Media Planning, 2010:

<sup>2</sup> Stu՝ Nielsen Media Research - <http://nielsenmedia.com>

Հեռուստաալիքի լսարան – *տվյալ հեռուստաալիքը դիտող մարդկանց քանակը:*

Պոտենցիալ լսարան – *այն մարդկանց քանակն է, ովքեր ունեն հեռուստացույց:*

Նպատակային լսարան - *այն հեռուստադիտողների բազմությունը, որոնք ունեն համանման պարամետրեր. տարիք, սեռ, սոցիալական կարգավիճակ, սովորություններ, կրթություն և այլն:*

Հեռուստաալիքի վարկանիշ (Rating-R) – *որոշակի սկեռած եթերաժամի կամ ծրագրի ցուցադրման ընթացքում դիտողների գումարի հարաբերությունը պոտենցիալ լսարանին:*

Հեռուստավարկանիշ /TV Rating - TVR/ - Տվյալ ժամանակահատվածի համար դիտարկվող հեռուստաալիքների վարկանիշների գումարը:

Լսարանի մասնաբաժնի վարկանիշ` (Share of Audience Rating - Shr) - *որոշակի սկեռած եթերաժամների կամ ծրագրի լսարանի հարաբերությունն է դիտարկվող հեռուստաալիքների վարկանիշների գումարին:* Լսարանի մասնաբաժնի վարկանիշը հավասար է հեռուստաալիքի վարկանիշը հարաբերած հեռուստավարկանիշին`  $Shr = R / TVR$  :

Համախառն վարկանիշ /GRPs (Gross rating points)/ - *տվյալ գովազդարշավի ընթացքում հեռուստաալիքներով ցուցադրված գովազդի /հոլովակների/ վարկանիշների գումարն է:*

$$GRPs = \sum_{i=1}^m q_i n_i,$$

որտեղ  $q_i$  և  $n_i$  համապատասխանաբար  $i$  -րդ հեռուստաալիքի վարկանիշն է և ցուցադրվող հոլովակների (սպոտերի) քանակը:

Նշենք, որ GRPs-ը կիրառվում է միայն գովազդի վարկանիշը հաշվելու համար:

## Հեռուստաալիքների / $i=1,2,\dots,m$ / էկզոգեն տվյալները

Նշանակենք՝

$q_i$  - եթերի տվյալ ժամանակահատվածի հեռուստաալիքի վարկանիշը

$d_i$  - գովազդի մեկ րոպեի արժեքը (դրամ/)

$r_i$  - գովազդման մեկ րոպեից ակնկալվող եկամուտը (դրամ)

C - գովազդի ընդհանուր բյուջեն (դրամ)

N - գովազդման տեսահոլովակների (սպոտերի) ընդհանուր քանակը

R- ակնկալվող եկամուտ (դրամ)

t – մեկ սպոտի տևողությունը արտահայտված վայրկյաններով:

Խնդրի փոփոխականներն են. յուրաքանչյուր հ/ա-ին տրամադրված սպոտերի քանակը՝  $n_i$  ( $i=1,2,\dots,m$ ): Պահանջվում է գտնել սպոտերի՝ ( $n_1, n_2, \dots, n_m$ ) այնպիսի բաշխման համակցություն ըստ հ/ա)-ի, որի դեպքում համախառն վարկանիշը՝ GRPs կլինի առավելագույնը պայմանով, ընդ որում ամբողջ ոչ բացասական  $n_i$  ( $i=1,2,\dots,m$ ) թվերը պետք է բավարարեն որոշակի սահմանափակումների:

**Տեսահոլովակների (սպոտերի) ընտրության ամբողջաթիվ գծային ծրագրման մոդել 1**

Նպատակային ֆունկցիա. ընտրված նպատակային լսարանի GRPs-ի մաքսիմացում`

$$GRPs = \sum_{i=1}^m q_i n_i \rightarrow \max \quad (1)$$

Հետևյալ սահմանափակումների համակարգի առկայությամբ. սահմանափակում սպոտերի ընդհանուր քանակի վրա`

$$\sum_{i=1}^m n_i = N \quad (2)$$

սահմանափակում գովազդման բյուջեի վրա`

$$\sum_{i=1}^m d_i n_i * t/60 \leq C \quad (3)$$

սահմանափակում ակնկալվող եկամուտի վրա`

$$\sum_{i=1}^m r_i n_i * t/60 \geq R \quad (4)$$

սահմանափակումներ փոփոխականների նշանի վրա`

$$n_i \geq 0, \text{ ամբողջ թվեր են } (i=1,2,\dots,m): \quad (5)$$

Քանի որ գովազդի գները արտահայտված են 1րոպեի արժեքով, ապա (3)-րդ և (4)-րդ սահմանափակումներում սպոտերի քանակը վերածված է րոպեի`  $n_i * t / (1 \text{ րոպե})$  արտահայտված վայրկյանով`  $n_i * \frac{t}{60}$ :  $t$  - ն բաժանում ենք 60-ի, բազմապատկում համապատասխան սպոտերի քանակով և ստանում ընդհանուր գովազդման տևողությունը րոպեով:

Լուծելով (1) - (5) խնդիրը կստանանք սպոտերի այնպիսի  $(n_1, n_2, \dots, n_m)$  բաշխում, որի դեպքում GRPs-ը առավելագույնն է:

**Դիտողություն.** Հիշեցնենք, որ ցանկացած գծային ծրագրման խնդրի պարամետրերի արժեքները պետք է լինեն հավաստի (արժանահավատ): Այդ պարտադիր պայմանը տեղի չունի վերը ներկայացված սպոտերի ընտրության ամբողջաթիվ գծային ծրագրման խնդրի պարամետրերի նկատմամբ, որովհետև դրանք հիմնականում որոշված են վիճակագրական տվյալների հիման վրա, այսինքն դետերմինացված ստույգ արժեքներ չեն և պարունակում են անորոշություն: Հետևաբար խնդրի թույլատրելի լուծումների բազմությունն ունի հավանականային բնույթ:

Անորոշության (հավանականային) պայմաններում օպտիմացման խնդիրներ լուծելու համար կիրառում են ստորև բերված էնթրոպիայի մաքսիմումի սկզբունքը:

**Տեսաօրինակների (սպոտերի) ընտրության ամբողջաթիվ ոչ գծային ծրագրման մոդել 2**

**Էնթրոպիայի մաքսիմումի սկզբունք<sup>1</sup>**

Դիցուք`  $N$  թվով սպոտերի բազմությունը բաժանվում է`  $m \geq 2$  ենթաբազմությունների` առաջինում  $n_1$  սպոտ, երկրորդում  $n_2$  սպոտ, ...,  $m$ -րդում`  $n_m$  սպոտ ( $n_1 +$

<sup>1</sup> Enrico Scalas and Ubaldo Garibaldi. A Dynamic Probabilistic Version of the Aoki-Yoshikawa Sectoral Productivity Model // Economics, E-journal, Vol. 3, 2009.

$n_2 + \dots + n_m = N$ ):  $N$  տարրերից  $n_1, n_2, \dots, n_m$  տարրերով (սպոտերով) զուգորդությունների  $W(\{n_i\})$  թիվը հավասար է՝

$$W(\{n_i\}) = \frac{N!}{n_1! n_2! \dots n_m!}$$

Ընդունենք, որ ցանկացած սպոտ հավասար հնարավորություն ունի ընտրվելու որևէ ենթաբազմության մեջ (( $h/w$ -ի եթեր): Մեր խնդիրն է պարզել, թե ինչպես կբաշխվեն սպոտերը  $h/w$ -ի միջև, երբ դրանց ընտրությունը որևէ  $h/w$  հավասարահավանական է: Դրա պատասխանը 1877թ. տվել է Լյուդվիգ Բոլցմանը<sup>1</sup>: Նա առաջարկել է օգտագործել “most probable occupation vector” գաղափարը, որը համարժեք է ամենահավանական  $(n_1, n_2, \dots, n_m)$  համակցություն գտնելու խնդրին: Այսինքն հետևյալ խնդրին՝ գտնել  $W(\{n_i\}) \rightarrow \max$ , պայմանով, որ  $n_i \geq 0$  ( $i=1, 2, \dots, m$ ) փոփոխականները բավարարեն հետևյալ սահմանափակումներին.

$$\sum_{i=1}^m n_i = N,$$

$$\sum_{i=1}^m q_i n_i \geq \text{GRPs}$$

$$\sum_{i=1}^m d_i n_i * t/60 \leq C$$

$$\sum_{i=1}^m r_i n_i * \frac{t}{60} \geq R,$$

որտեղ GRPs ստացված է գծային ծրագրման մոդելի լուծումից:

Համաձայն Ստիրլիցի բանաձևի՝  $\ln n_i! \approx n_i \ln n_i - n_i$  ( $i=1, 2, \dots, m$ ): Հարմարության համար մաքսիմալացնենք  $\ln W(\{n_i\})$ ՝ ֆունկցիան: Կիրառելով Ստիրլինգի բանաձևը  $n_i! -$ ի  $n_i \geq 0$  ( $i=1, 2, \dots, m$ ) թվերի նկատմամբ ստանում ենք՝

$$\ln W(\{n_i\}) \approx \ln N! - \sum_{i=1}^m (n_i \ln n_i - n_i):$$

Նշանակենք  $p_i = \frac{n_i}{N}$  ( $i=1, 2, \dots, m$ ): Պարզ է, որ

$$\ln W(\{n_i\}) \approx \ln N! - \sum_{i=1}^m (n_i \ln n_i - n_i) = \ln N! - \sum_{i=1}^m N(p_i [(\ln p_i + \ln N) - N p_i]),$$

որտեղից հետևում է, որ  $\ln W(\{n_i\})$  մաքսիմացման խնդիրը հանգեց ենթոպիայի՝  $S(p)$  ֆունկցիայի մաքսիմացմանը՝

$$\ln W \rightarrow \max \approx - \sum_{i=1}^m n_i \ln n_i \rightarrow \max \approx S(p) = - \sum_{i=1}^m p_i \ln p_i \rightarrow \max:$$

Մենք հանգեցինք ենթոպիայի մաքսիմումի սկզբունքին [Jaynes<sup>2</sup> 1957]:

Տեղին է նշել, որ գիտական գրականությունում, կախված քննարկվող խնդրի բնույթից, ենթոպիայի

$S(p)$  անորոշության ֆունկցիան կրում է նաև հետևյալ անվանումները՝ բազմազանության, կառուցվածքային, օգտակարության, կոմպրոմիսային<sup>3,1,2</sup>:

<sup>1</sup> J.N.Kapur, H.K.Kesavan. Entropy, Optimization, Principles with Application / Academic Press, 1992.

<sup>2</sup> Jaynes E. T. Information Theory and Statistical Mechanics. II // Physical Review, vol. 108, no. 2, pp. 171-190; October 15, 1957. - <http://bayes.wustl.edu/etj/articles/theory.1.pdf>

<sup>3</sup> Саакян М. А., Прогнозирование наиболее вероятного распределения национального экономического потенциала // Труды конференции “Айк” // Ереван, 1995 (октябрь).

**Ամբողջաթիվ ոչ զծային ծրագրման մոդել** (էնթրոպիայի մաքսիմումի սկզբունքի կիրառում):

Գտնել սպոտերի ամենահավանական բաշխումը ըստ  $h/w$ -ի՝

$$H(n) = -\sum_{i=1}^m n_i \ln n_i \rightarrow \max \quad (1.1)$$

Հետևյալ պայմանների առկայությամբ.

Ապահովել (1)- (5) խնդրի նպատակային ֆունկցիայի՝ GRPs լավագույն արժեքը՝

$$\sum_{i=1}^m q_i n_i \geq \text{GRPs} \quad (1.2)$$

Ապահովել գովազդման սպոտերի ընդհանուր քանակը՝

$$\sum_{i=1}^m n_i = N \quad (1.3)$$

Բավարարել գովազդման բյուջեի սահմանափակմանը՝

$$\sum_{i=1}^m d_i n_i * t/60 \leq C \quad (1.4)$$

Ապահովել որոշակի եկամուտ՝

$$\sum_{i=1}^m r_i n_i * t/60 \geq R \quad (1.5)$$

Փոփոխականների ամբողջաթիվ և ոչ բացասական լինելը՝

$$n_i \geq 0, (i=1,2,\dots,m): \quad (1.6)$$

Լուծելով (1.1)-(1.6) խնդիրը գտնում ենք  $n_i \geq 0, (i=1,2,\dots,m)$  թվերի ամենահավանական համակցությունը, այսինքն ընկերության  $h/w$ -ի միջև սպոտերի ամենահավանական բաշխումը, որն ապահովում է նաև GRPs առավելագույն աստիճանը:

### Գործնական օրինակների լուծումներ. սկզբնական տվյալներ<sup>3</sup>

Ընկերությունը արտադրանքը գովազդելու համար դիմել է երկու հեռուստա-ալիքների: Խնդրի լուծման համար անհրաժեշտ տվյալները բերված են աղյուսակ 1-ում:

<sup>1</sup> **Саакян М. А., Киракосян Ш. В.**, Энтропийный подход исследования экономических систем // Проблемы развития и размещения производительных сил в союзной республике: Сборник научных трудов НИИЭП при Госплане Арм.ССР / Ереван, 1983.

<sup>2</sup> **Опойцев В. И.**, Нелинейная системостатика / М., Наука, 1986.

<sup>3</sup> Ընկերության անվանումը նրբակցային գաղտնիությունից ելնելով չի նշվում:

**Աղյուսակ 1**

Գովազդի մոդել 1-ի գործակիցների բովանդակությունը	h/w` i = 1 Գործ. արժեքը	h/w` i = 2 Գործ. արժեքը
18:00 - 24:00 եթերաժամի հեռուստաալիքի վարկա- նիշը	q <sub>1</sub> =7.4	q <sub>2</sub> = 0.5
Գովազդման 1 թույ. արժեքը` d (դրամ)	d <sub>1</sub> =120000	d <sub>2</sub> =24000
1 թույ. ակնկալվող եկամուտը` r (դրամ)	r <sub>1</sub> =200000	r <sub>2</sub> = 60000
Գովազդման բյուջեն` C (դրամ)	5100000	
Գովազդման սպոտերի ընդհանուր քանակ` N, (րոպե)	110	
Ակնկալվող եկամուտը` R, (ՀՀ դրամ)	9500000	
Գովազդվող սպոտիտևողությունը (վայրկյան)	t = 60	

**Ամբողջաթիվ գծային ծրագրման` մոդել 1-ի գործնական լուծման օրինակ<sup>1</sup>**

Լուծելով ամբողջաթիվ գծային ծրագրման խնդիրը (աղյուսակ 1-ում բերված տվյալներով)

ստանում ենք` n<sub>1</sub>= 25, n<sub>2</sub>= 85; GRPs = 227.5:

Հետևաբար առաջին հ/կ-ին պետք է գովազդին տրամադրի 25 անգամ 60 վ. տևողությամբ հոլովակ,

երկրորդ հ/կ-ն 85 անգամ մեկ թույե տևողությամբ հոլովակ և լսարանի առավելագույն ընկալման ցուցանիշն է` GRPs=227.5 միավոր:

Հոդվածի ծավալի սահմանափակումը թույլ չի տալիս ներկայացնել մոդելավորման արդյունքների ամբողջ փաթեթը: Մենք կքննարկենք ընդամենը երեք դիտարկում:

Աղյուսակ 2-ում բերված են սպոտերի ընդհանուր թվի փոփոխության հաշվարկների արդյունքները (մնացած պայմանները չեն փոխվում): Հաշվարկները ցույց են տալիս, որ առաջին հ/ա-ի սպոտերի քանակը լավագույնն է նաև ընդհանուր սպոտերի քանակի բաշխման տեսանկյունից, օրինակ, եթե առաջին հ/ա-ով ցուցադրվեր 21-ից ոչ ավել սպոտ, ապա GRPs 27.6% նվազում է:

**Աղյուսակ 2**

# Spots	n <sub>1</sub>	n <sub>2</sub>	GRPs	GRPs տարբերություն -%
104	24	80	217.6	
109	25	84	227	
<b>110</b>	<b>25</b>	<b>85</b>	<b>227.5</b>	
111	25	86	228	
112	25	87	228.5	
113	25	88	229	
110 /n <sub>1</sub> ≤ 21/	21	89	199.9	- 27.6
110 /n <sub>1</sub> ≤ 26/	25.4	84.6	230.26	2.76
110 /n <sub>1</sub> ≤ 30/...	25.4	84.6	230.26	2.76

<sup>1</sup> Սահակյան Մ., Թումանյան Գ. Ձեռնարկության գովազդի մաթեմատիկական մոդել // Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա, 2010, 10.

21-ից ոչ ավել սպոտ, ապա GRPs 27.6% նվազում է: Երբ  $26 \leq n_1 \leq 30$ , ապա լուծումը փոխվում և GRPs աճում է ընդամենը 2.7%, սակայն այս դեպքում լուծումները ամբողջաթիվ չեն, իսկ ամբողջաթիվ լինելու դեպքում GRPs միայն նվազում է:

Եթե խնդրի 6-րդ սահմանափակման պահանջը հանենք սահմանափակումների համակարգից, ապա լուծումը չի փոխվում, հետևաբար այն ավելորդ է:

Պարզվում է, որ եթե գովազդման բյուջեն նվազեցվի 50000 դրամի չափով, ապա լավագույն լուծումը չի փոխվում:

### Ամբողջաթիվ ոչ գծային ծրագրման՝ մոդել 2-ի գործնական օրինակի լուծում

Լուծելով ամբողջաթիվ ոչ գծային ծրագրման խնդիրը (աղյուսակ 1-ում բերված տվյալներով) ստանում ենք նույն պատասխանը՝  $n_1 = 25$ ,  $n_2 = 85$ ; (1.2) պայմանը վերածվում է հավասարման և  $GRPs = 227.5$ :

Ստացվում է, որ ամբողջաթիվ գծային ծրագրման և ոչ գծային ծրագրման (էնթրոպիայի մաքսիմումի սկզբունքի կիրառությամբ) խնդիրների լուծումները հանրակնում են: Հետևաբար մենք հանգում ենք հետաքրքիր եզրակացության՝ մոդել 1-ի լուծումը նաև օժտված է ամենահավանական լինելու հատկությամբ: Տեղին է նշել, որ նման արդյունք ստացել են մատրիցային խաղերի լուծումների նկատմամբ<sup>1</sup>:

### ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում մոդելավորվում է հեռուստաալիքների միջև գովազդային տեսահոլովակների բաշխումը ամբողջաթիվ գծային ծրագրավորման ու էնտրոպիայի մաքսիմալացման սկզբունքի հիման վրա, լուծելով գործնական խնդիրներ:

### АННОТАЦИЯ

#### СААКЯН М., ТУМАНЯН Г. - ЗАДАЧА РАСПРЕДЕЛЕНИЯ РЕКЛАМНЫХ ТЕЛЕРОЛИКОВ ПО ТЕЛЕКАНАЛАМИ

В статье моделируется распределение рекламных телероликов по каналам телевидения, на основе целочисленного линейного прогнмммирования и принципа максимума энтропии, с решением практических задач.

### SUMMARY

#### SAHAKYAN M., TUMANYAN G. - ALLOCATION OF TV COMMERCIALS BETWEEN CHANNELS

In the article commercials allocation problem between TV channels is modeled using integer linear programming and entropy maximization principle and solving practical problems.

<sup>1</sup> Chandan Bikash Dasg and Sankar Kumar Roy. An Approach to Solve Two-Person Matrix Game via Entropy // Advanced Modeling and Optimization, Volume 11, Number 4, 2009.

**ՄԵԼՍ ՍԱՀԱԿՅԱՆ**

*Ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու,  
ԵՊՀ տնտեսագիտության մեջ մաթեմատիկական  
մոդելավորման ամբիոնի պրոֆեսոր  
Էլ.փոստ՝ mels.sahakyan@gmail.com*

**ԳԱՅԱՆԵ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

*ԵՊՀ տնտեսագիտության մեջ մաթեմատիկական  
մոդելավորման ամբիոնի հայցորդ  
Էլ.փոստ՝ tum.gayane@gmail.com*

**ԳՈՎԱԶԳԱՐԾԱՎԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ****Խնդրի ընդհանուր դրվածքը**

Ընկերությունը ցանկանում է իրականացնել գովազդարշավ որոշակի տևողությամբ՝ շաբաթ, ամիս, եռամսյակ և այլն: Գովազդարշավը կազմակերպելու համար անհրաժեշտ է՝

1. կատարել հեռուստաալիքների նախնական ընտրություն,
2. գտնել յուրաքանչյուր հեռուստաալիքի համար սպոտերի այն քանակը, որոնց դեպքում GRPs կլինի առավելագույնը, և որոշել յուրաքանչյուր ալիքի բյուջեն,
3. գտնել բյուջեի նվազագույն արժեքը՝ GRPs-ի որոշակի մակարդակի ապահովման դեպքում:
4. գնահատել իրականացվող գովազդարշավի արդյունավետությունը,

**1. Հեռուստաալիքների ընտրությունը**

Օգտվելով վերլուծական ընկերության<sup>1</sup> կողմից տրամադրված տվյալներից, ընտրենք այն հեռուստաալիքները, որոնցով նպատակահարմար է իրականացնել գովազդարշավը: Գործնականում հեռուստաալիքներ ընտրելիս առաջնորդվում են Shr (Share of Audience Rating)՝ լսարանի մասնաբաժնի վարկանիշը ցուցանիչից<sup>2</sup>: Լսարանի մասնաբաժնի վարկանիշը՝ որոշակի սևեռած եթերաժամի կամ ծրագրի լսարանի հարաբերությունն է նույն եթերաժամին դիտարկվող հեռուստաալիքների վարկանիշների գումարին: Ընտրվում են այն հեռուստաալիքները, որոնց  $Shr \geq 1$ -ից (տես աղյուսակ 1):

<sup>1</sup> «Տելեմեդիակոնտրոլ» ՓԲԸ – տես՝ <http://www.telemediacontrol.am>

<sup>2</sup> Sissors J., Roger B. Advertising Media Planning, 2010

*Աղյուսակ 1*

TV	Shr% PT	shr% NPT
1	27,96	23,25
2	22,84	21,77
3	14,02	12,05
4	4,82	5,73
5	2,39	3,16
6	1,37	1,40
7	1,16	2,02
8	1,09	1,42
9	1,00	1,29
10	0,92	1,54

*Հեռուստաալիքների shr ցուցանիշներ*

PT /Prime time/ - 18:00-ից 01:00 ընկած ժամանակահատվածն է

NPT /Non-prime time/ - 01:00 –ից -18:00 ընկած ժամանակահատվածը:

PT-ի համար ընտրվում են 1-9 հեռուստաալիքները: Գովազդարշավ պատվիրող ընկերության ցանկությամբ NPT-ի համար ընտրվում են 5-րդ, 7-րդ և 10-րդ հ/ա-երը, որոնք բավարարում են որոշակի պայմանների, որոնց քննարկումը դուրս է հոդվածի շրջանակներից:

**2. Գովազդման սպոտերի քանակի որոշումը յուրաքանչյուր հեռուստաալիքի՝ PT և NPT ժամանակահատվածների համար.**

Մոդել 1 կիրառում<sup>1</sup>

Նպատակային ֆունկցիա՝ ընտրված նպատակային լսարանի GRPs-ի մաքսիմացում՝

$$GRPs = \sum_{i=1}^m q_i n_i \rightarrow \max \quad (1)$$

Հետևյալ սահմանափակումների համակարգի առկայությամբ. սահմանափակում սպոտերի ընդհանուր քանակի վրա

$$\sum_{i=1}^m n_i \geq N \quad (2)$$

սահմանափակում գովազդման բյուջեի վրա՝

$$\sum_{i=1}^m d_i n_i * t/60 \leq C \quad (3)$$

սահմանափակումներ փոփոխականների նշանի վրա՝

$$n_i \geq 0, \text{ ամբողջ թվեր են } (i=1,2,\dots,m): \quad (4)$$

<sup>1</sup> Սահակյան Մ., Թումանյան Գ., Գովազդային տեսաիդրոլակների բաշխումը ըստ հեռուստաալիքների, տես սույն Տարեգիրքը:

Քանի որ գովազդի գները արտահայտված են 1 ռուպեի արժեքով, ապա (3)-րդ և (4)-րդ սահմանափակումներում սպոտերի քանակը վերածված է ռուպեի՝  $n_i * t / (1 \text{ ռուպե})$  արտահայտված վայրկյանով  $= n_i * \frac{t}{60}$ :  $t$  - ն բաժանում ենք 60-ի, բազմապատկում համապատասխան սպոտերի քանակով և ստանում ընդհանուր գովազդման տևողությունը ռուպեով:

Այստեղ  $i=1,2,\dots,m$ , որտեղ  $m$  - PT-ի և NPT-ի՝ ընտրված հ/ա-ների քանակը (ընտրության կարգը նշված է վերևում),

$q_i$  - եթերի տվյալ ժամանակահատվածի հեռուստաալիքի վարկանիշը,

$d_i$  - գովազդի մեկ ռուպեի արժեքը (դրամ),

$C$  - գովազդի ընդհանուր բյուջեն (դրամ),

$N$  - գովազդման տեսաիզույթների (սպոտերի) ընդհանուր քանակը,

$t$  – մեկ սպոտի տևողությունը արտահայտված վայրկյաններով:

$C_{PT}$ ,  $C_{NPT}$  - գովազդարշավի համար հատկացված PT-ի և NPT-ի համապատասխան բյուջեն

$N_{PT}, N_{NPT}$  - PT-ի և NPT-ի սպոտերի ընդհանուր քանակի սահմանափակում:

Խնդրի փոփոխականներն են. յուրաքանչյուր հ/ա-ին տրամադրված սպոտերի քանակը՝  $n_i$  ( $i=1,2,\dots,m$ ): Պահանջվում է գտնել սպոտերի ( $n_1, n_2, \dots, n_m$ ) այնպիսի բաշխման համակցություն ըստ հ/ա-ի, որի դեպքում ընդհանուր /NPT-ի և NPT-ի/համախառն վարկանիշը՝ GRPs կլինի առավելագույնը պայմանով, որ ամբողջ ոչ բացասական  $n_i$  ( $i=1,2,\dots,m$ ) թվերը պետք է բավարարեն (2)-(4) սահմանափակումներին: Լուծելով (1) - (4) խնդիրը կստանանք սպոտերի այնպիսի ( $n_1, n_2, \dots, n_m$ ) բաշխում ըստ հ/ա-րի, որի դեպքում GRPs-ը առավելագույնն է:

Այժմ ներկայացնենք մոդել 1-ի փոխադարձ<sup>1</sup> խնդիրը. գտնել բյուջեի նվազագույն արժեքը՝ GRPs-ի ցանկալի մակարդակի ապահովման պայմանով:

Մոդել 2

Նպատակային ֆունկցիա. գովազդման բյուջեն հասցնել նվազագույնի

$$\sum_{i=1}^m d_i n_i * t / 60 \rightarrow \min \tag{5}$$

Հետևյալ սահմանափակումների համակարգի առկայությամբ սահմանափակում սպոտերի ընդհանուր քանակի վրա

$$\sum_{i=1}^m n_i \geq N \tag{6}$$

ապահովել GRPs ցանկալի մակարդակ՝

$$GRPs = \sum_{i=1}^m q_i n_i \geq GRPs^* \tag{7}$$

սահմանափակումներ փոփոխականների նշանի վրա՝

$$n_i \geq 0, \text{ ամբողջ թվեր են } (i=1,2,\dots,m) \tag{8}$$

<sup>1</sup> Аганбегян А. Г., Багриновский К. А., Гранберг А. О., Система моделей народнохозяйственного планирования / М.: Мысль, 1972.

Հասկանալի է, որ լուծելով (5) - (8) խնդիրը մենք կստանանք գովազդարշավը ապահովող նվազագույն բյուջեն:

Աղյուսակ 2-ում և 3-ում ներկայացված են վերը նշված տվյալները համապատասխանաբար PT-ի և NPT-ի համար:

*Աղյուսակ 2 (PT- համար)*

$V_{NPT}$	NPT-ի 1րոպեի արժեքը (դրամ) $d_{NPT}$	$q_{NPT} \%$
5	12000	0,47
7	10200	0,30
10	7000	0,23
$C_{NPT}$	1460000	
$N_{NPT}$	400	
t /վ/	30	

*Աղյուսակ 3 (NPT- համար)*

$TV_{PT}$	PT-ի 1րոպեի արժեքը (դրամ) $d_{PT}$	$q_{PT} \%$
1	180000	8,05
2	150000	6,57
3	150000	4,04
4	72000	1,39
5	25000	0,69
6	20000	0,39
7	20400	0,32
8	20000	0,31
9	20000	0,29
$C_{PT}$	43884000	
$N_{PT}$	1501	
t /վ/	30	

**Խնդիր 1.1/PT- համար:** Կիրառելով մոդել 1 ստանում ենք հետևյալ լուծումը. յուրաքանչյուր հեռուստաալիքի սպոտերի օպտիմալ քանակը՝  $n_1=121, n_2=120, n_3=120, n_4=120, n_5=180, n_6=240, n_7=120, n_8=240, n_9= 240$ :  $GRPs_{max} = 2814.25$ : Յուրաքանչյուր ալիքի GRPs կլինի՝  $GRPs = (974.05; 788,4; 484,8; 166.8; 124.2; 93.6; 38.4; 74.4; 69,6)$ : Յուրաքանչյուր հեռուստաալիքի բյուջեն՝ (10890000; 9000000; 9000000; 4320000; 2250000; 2400000; 1224000; 2400000; 2400000):

**Խնդիր 2.1 (PT- համար):** Գովազդարշավ պլանավորելիս ընկերությունները սովորաբար ձգտում են հնարավորինս նվազեցնել գովազդման բյուջեն, միաժամանակ ձգտելով ստանալ օպտիմալ GRPs-ի մակարդակ: Օպտիմալ GRPs -ի մակարդակ է համարվում, երբ  $300 \leq GRPs \leq 1200$ : Ինչպես տեսնում ենք տվյալ դեպքում  $GRPs_{max} = 2814.25$ , ինչը գերազանցում է GRPs-ի օպտիմալ

մակարդակի վերին աստիճանը՝ 1200-ը: Այնպես որ տվյալ դեպքում բյուջեն բավականին մեծ է և ընկերությունը կարող է նվազեցնել բյուջեն՝ ապահովելով առնվազն 1200 GRPs:

Այժմ գտնենք բյուջեի նվազագույն արժեքը՝ լուծենք մոդել 2-ի պարզեցված տարբերակը:

Նպատակային ֆունկցիա՝ բյուջեի նվազեցում

$$\sum_{i=1}^m d_i n_i * t / 60 \rightarrow \min \quad (2.1)$$

սահմանափակում GRPs-ի ցանկալի մակարդակի վրա

$$\text{GRPs} = \sum_{i=1}^m q_i n_i \geq 1200 \quad (2.2)$$

սահմանափակումներ սպոտերի քանակի վրա՝

$$\sum_{i=1}^m n_i \geq N \quad (2.3)$$

սահմանափակումներ փոփոխականների նշանի վրա՝

$$n_i \geq 0, \text{ ամբողջ թվեր են } (i=1,2,\dots,m) \quad (2.4)$$

Մոդել 2.1-ի լուծումն է՝  $n_1=23$ ,  $n_5=1478$  բյուջեն՝ 20545000:

Բնականաբար լուծման այս տարբերակը ընդունելի չէ, քանի որ չի կատարվում հեռուստաալիքների ընդգրկման բազմազանությունը՝ հիմնգերող ալիքում նպատակահարմար չէ 1478 սպոտ տեղադրել, հիշեցնենք, որ ընկերությունը ցանկանում է բոլոր ընտրված ալիքներով գովազդել: Այդ պատճառով նպատակահարմար է (2.3) սահմանափակումը փոխարինել (2.5) պայմանով՝ բոլոր ալիքների համար՝ պահանջելով տեղադրել առնվազն 50 սպոտ՝

$$n_i \geq 50, i=1,2,\dots,9 \quad (2.5)$$

Այս դեպքում լուծումը հետևյալն է՝  $n_1=63$ ,  $n_2=50$ ,  $n_3=50$ ,  $n_4=50$ ,  $n_5=50$ ,  $n_6=50$ ,  $n_7=50$ ,  $n_8=50$ ,  $n_9=50$ : 1800000; 625000; 500000; 5100000; 500000; 5000000): Յուրաքանչյուր ալիքի GRPs (507,15; 328,5; 202; 69,5; 34,5; 19,5; 15,5; 14,5):

*Յետևաբար ընկերությունը կխնայի 26279000 դրամ: Այս հաշվարկները ցույց են տալիս, որ պարտադիր չէ ծախսել մեծ գումար արդյունավետության հասնելու համար:*

**Խնդիր 1.2 (NPT- համար):** Լուծում.  $n_{5NPT}=8$ ,  $n_{7NPT}=25$ ,  $n_{10NPT}=367$ :  $GRPs_{5NPT}=3,76$ ,  $GRPs_{7NPT}=7,5$ ,  $GRPs_{10NPT}=84,41$ ,  $GRPs_{NPT_{max}}=95.67$ : Յուրաքանչյուր ալիքի բյուջեն է. 5-րդ հ/ա՝ 48000, 7-րդ հ/ա՝ 127500, 10-րդ հ/ա՝ 1284500 դրամ:

Դիտողություն. հաշվի առնելով, որ NPT-ն և PT-ն ընդգրկված են մեկ գովազդարշավի շրջանակում, ապա գովազդարշավի  $GRPs_{max} = GRPs_{PT_{max}} + GRPs_{NPT_{max}}$ :

Գովազդարշավի շրջանակներում ընտրվել են NPT ժամերը՝ նպատակ ունենալով գրավել համապատասխան թիրախային լսարան, և տվյալ դեպքում

GRPs-ի մակարդակի նվազագույն սահմանափակման պայման չի դրվել (նայել դիտողությունը):

**3. Գովազդարշավի արդյունավետության գնահատում. պարփակող տվյալների վերլուծության /Data Envelopment Analysis/ DEA եղանակ<sup>1</sup>**

Պարփակող տվյալների վերլուծությունը էմպիրիկ, ոչ պարամետրական մեթոդ է՝ հիմնված գծային ծրագրավորման վրա: ՊՏՎ-ը համեմատական արդյունավետությունը չափելու տեխնիկա է, քանի որ այն ընդգրկում է որոշում կայացնող միավորների համախումբ, որոնք համեմատվում են իրար հետ: Որոշում կայացնող միավորները պետք է լինեն համասեռ այն իմաստով, որ օգտագործեն միևնույն ռեսուրսները և արտադրեն նույնանման արդյունքներ:

Դիտարկվում են որոշում կայացնող  $n$  միավորներ: Դիցուք՝ դիտարկվող ժամանակահատվածում  $j$ -րդ ( $j = 1, 2, \dots, n$ ) որոշում կայացնող միավորը օգտագործել է  $i$ -րդ տեսակի ( $i = 1, \dots, m$ )  $x_{ij}$  քանակով ռեսուրս և թողարկել է  $r$ -րդ տեսակի ( $r = 1, \dots, l$ )  $y_{rj}$  քանակով արդյունք ( $x_{ij} > 0, y_{rj} > 0$ ): CCR մոդելում յուրաքանչյուր  $j$ -րդ ( $j = 1, \dots, n$ ) ՈԿՄ համար կառուցվում է «կշռված արդյունք»

$-\sum_{r=1}^l u_r y_{rj}$ , «կշռված ռեսուրս» -  $\sum_{i=1}^m v_i x_{ij}$ , որտեղ  $u_r$  ( $r = 1, \dots, l$ ) և  $v_i$  ( $i = 1, \dots, m$ ) կշռային բազմապատկիչներ են, որոնք պետք է որոշվեն:

Ռեսուրսների կողմնորոշմամբ մոդելում յուրաքանչյուր  $j$ -րդ ( $j = 1, \dots, n$ ) ՈԿՄ գործունեության համեմատական արդյունավետությունը գնահատվում է

$$h_j(u, v) = \frac{\sum_{r=1}^l u_r y_{rj}}{\sum_{i=1}^m v_i x_{ij}}$$

հարաբերությամբ, որը  $j$ -րդ ( $j = 1, \dots, n$ ) ՈԿՄ կողմից միավոր «կշռված ռեսուրսով» թողարկված ընդհանրացված «կշռված արդյունքի» քանակն է:

$j_0$  ՈԿՄ գործունեության համեմատական արդյունավետության գնահատումը ձևակերպվում է հետևյալ կոտորակագծային ծրագրման խնդրի տեսքով.

<sup>1</sup> William W.Cooper, Laurence M. Seiford and Kaoru Tone, Introduction Date Envelopment Analysis and its Uses / Springer, 2006©

$$\begin{aligned}
 h_{j_0}(u, v) &= \frac{\sum_{r=1}^l u_r y_{rj_0}}{\sum_{i=1}^m v_i x_{ij_0}} \rightarrow \max \\
 \frac{\sum_{r=1}^l u_r y_{rj}}{\sum_{i=1}^m v_i x_{ij}} &\leq 1, \quad j = 1, \dots, n, \\
 u_r, v_i &\geq 0, \quad r = 1, \dots, l; \quad i = 1, \dots, m
 \end{aligned} \tag{3.1}$$

Նպատակային ֆունկցիայի օպտիմալ  $h_0^*$  արժեքը բավարարում է  $0 \leq h_0^* \leq 1$  պայմանին և մեկնաբանվում է որպես ՈԿՄ գործունեության համեմատական արդյունավետության գնահատական:  $h_0^* = 1$  արժեքը համապատասխանում է լրիվ արդյունավետության, երբ ռեսուրսներն օգտագործվում են առավելագույն արդյունավետությամբ, իսկ  $h_0^* < 1$  արժեքը մատնանշում է, որ ՈԿՄ գործունեության մեջ առկա է ոչ արդյունավետություն: Խնդրի լուծման արդյունքում ստացվող  $(u_r^*, v_i^*)$  օպտիմալ արժեքները մեկնաբանվում են որպես կշիռներ: Դրանք  $u_r$  և  $v_i$  բազմապատկիչների այն լավագույն արժեքներն են, որոնցով ստեղծվում է  $y_{j_0} = \sum_{r=1}^l u_r^* y_{rj_0}$  լավագույն արդյունքը՝ օգտագործելով  $x_{j_0} = \sum_{i=1}^m v_i^* x_{ij_0}$

ռեսուրսները:

Որոշ ձևափոխությունների շնորհիվ (3.1) խնդիրը բերվում է հետևյալ գծային ծրագրման խնդրին.

$$\begin{aligned}
 z^* &= \max z = \sum_{r=1}^l u_r^* y_{rj_0} \\
 \sum_{r=1}^l u_r^* y_{rj_0} - \sum_{i=1}^m v_i x_{ij} &\leq 0, \quad j = 1, \dots, n \\
 \sum_{i=1}^m v_i x_{ij_0} &= 1 \\
 u_r, v_i &\geq 0, \quad r = 1, \dots, l; \quad i = 1, \dots, m
 \end{aligned} \tag{3.2}$$

*Ռեսուրսների կողմնորոշմամբ խնդրի երկակի խնդիրը (Ֆարրելի մոդելը):* Վեկտորական տեսքով (3.2) գծային ծրագրման խնդրի երկակի խնդիրն է.

$$\begin{aligned}
 & \min_{\theta, \lambda} \theta \\
 & - y_i + Y\lambda \geq 0 \\
 & \theta x_i - X\lambda \geq 0 \\
 & \lambda \geq 0
 \end{aligned}
 \tag{3.3}$$

**Գովազդարշավի հարաբերական արդյունավետության գնահատում**

Գովազդարշավի հարաբերական արդյունավետությունը գնահատելու համար կիրառում ենք DEA եղանակը: Յուրաքանչյուր ալիքին հատկացված անհրաժեշտ բյուջեն ընդունենք որպես ռեսուրս (input), իսկ GRPs ցուցանիշը՝ (output), արդյունք:

**Հարաբերական արդյունավետությունը PT-ի համար**

4-րդ աղյուսակում բերված են PT-ի համար խնդիր 1.1-ի հարաբերական արդյունավետության գնահատման տվյալները և արդյունքը:

*Աղյուսակ 4 (PT)*

TV <sub>PT</sub>	Գովազդի բյուջե (ռեսուրս)	GRPsPT-ի համար (արդյունք)	Հարաբերական արդյունավետություն՝ θ
1	10890000	974.05	1
2	9000000	788.4	0.98
3	9000000	484.8	0.60
4	4320000	166.8	0.43
5	2250000	124.2	0.62
6	2400000	93.6	0.44
7	1224000	38.4	0.35
8	2400000	74.4	0.35
9	2400000	69.6	0.33

Խնդիրը լուծված է Input (տե՛ս մոդել(3.3)) կողմնորոշմամբ: Եվ ստացվում է՝ առաջին ալիքով գովազդելը հարաբերականորեն արդյունավետ է (θ = 1): Այս արդյունքը տրամաբանական է, քանի որ տվյալ հեռուստաալիքին հատկացված բյուջեի դիմաց ստացված GRPs ամենամեծն է: Եվ եթե փորձենք համեմատական կարգով մյուս ալիքների բյուջեն մեծացնել այնքան անգամ, որ ստացվի 10890000, և հետո այդքան անգամ մեծացնենք GRPs-ն, միևնույնն է այն կլինի ավելի փոքր, քան 974.05-ը:

### Հարաբերական արդյունավետությունը NPT-ի համար

Խնդիրը լուծված է Input (տե՛ս մոդել(2.3)) կողմնորոշմամբ: 5-րդ աղյուսակում բերված են NPT-ի համար հարաբերական արդյունավետության գնահատման տվյալները և արդյունքը:

#### *Աղյուսակ 5 ( NPT)*

TV <sub>NPT</sub>	Գովազդի բյուջե (ռեսուրս)	GRPs NPT-ի համար (արդյունք)	Հարաբերական արդյունավետություն $\theta$
5	48000	3,76	1
7	127500	7,5	0.75
10	1284500	84,41	0.84

Այս դեպքում, չնայած 10-րդ հեռուստաալիքի GRPs –ն ամենամեծն է, սակայն հարաբերական արդյունավետ է 5-րդ հեռուստաալիքի գովազդարշավը, քանի որ 5-րդ ալիքի GRPs-ն ստացվում է հարաբերական փոքր ծախսի դիմաց:

Նշենք, որ գովազդման գործընթացում առավելագույն GRPs–ի ստացումը դեռ չի նշանակում, որ կստացվի առավելագույն արդյունավետություն գովազդարշավից: Գովազդի վրա ազդում են մի շարք այլ գործոններ, որոնցից է գովազդման վրա կատարած ծախսը, ինչպես ցույց տրվեց մոդել 2-ում պարտադիր չէ մեծ բյուջե տրամադրել գովազդարշավին, որպեսզի հավաքել գործնականում ընդունված GRPs-ի միջակայքին պատկանող ցուցանիշ: Արդյունավետության գործոններից է նաև ճիշտ ընդգրկած թիրախային լսարանը, այս հանգամանքով է բացատրվում NPT ժամանակահատվածում գովազդելը, անկախ նրանից, որ վերջինիս համախառն վարկանիշը բավականին փոքր էր:

### ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում ներկայացվում են հեռուստատեսային գովազդարշավի պլանավորման մոդելը և դրա արդյունավետության գնահատումը DEA եղանակով: Բերվում են գործնական հաշվարկների օրինակներ:

### РЕЗЮМЕ

#### **СААКЯН М., ТУМАНЯН Г. – ЗАДАЧА ПЛАНИРОВАНИЯ И ОЦЕНКИ ЭФФЕКТИВНОСТИ РЕКЛАМНОЙ КАМПАНИИ**

В статье представляются модель планирования телерекламной кампании и оценки ее эффективности методом DEA, с решением практических задач.

### SUMMARY

#### **SAHAKYAN M., TUMANYAN G. - ADVERTISING CAMPAIGN PLANNING AND ITS EFFECTIVENESS ESTIMATION**

The article presents model of TV advertising campaign planning and its effectiveness estimation based on DEA method with practical calculations.

**ԱՆԻ ԽԱԼԱԹՅԱՆ**

*ԵՊՀ տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դասախոս  
էլ.փոստ՝ a.khalatyan@mail.ru*

**ԱՇՈՏ ԿԱԿՈՍՅԱՆ**

*Ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու,  
ԵՊՀ տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դոցենտ  
էլ.փոստ՝ ashot.kakosyan@yahoo.com*

**ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՄՊԱՈՍԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ  
ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆՑ**

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Հայաստանի էներգետիկ ոլորտը, մասնավորապես էլեկտրաէներգետիկան, բնական գազի և ջեռուցման ենթաոլորտները 1990-ական թվականների խոր ճգնաժամից հետո հասել են զարգացած, այլ ոչ թե ձևավորվող շուկայական տնտեսությամբ երկրներին բնորոշ կայունությանը՝ ապահովելով նկատելի արդյունքներ [1]: Այնուամենայնիվ, կարող են առաջանալ նաև նոր խնդիրներ՝ կապված էլեկտրաէներգետիկ ենթակառուցվածքների հին ու ոչ բավարար չափով պահպանված վիճակի և վառելիքի աճող գների հետ: Այսպես, էներգետիկ անվտանգությունը հատուկ տեղ է զբաղեցնում Հայաստանի ազգային անվտանգության համակարգում [2]՝ կենտրոնանալով նաև սպառողների համար էներգամատակարարման մատչելիության պահպանման վրա: Էներգետիկ անվտանգության տեսանկյունից հնարավոր է առաջարկել երկրնտրամբներ՝ խթանելով ոլորտում կատարվող ներդրումները: Այս նպատակով ուսումնասիրվել է բնակչության կողմից էլեկտրաէներգիայի և բնական գազի սպառման միջև գոյություն ունեցող դինամիկական վեկտորական ավտոռեգրեսիոն մոդելի միջոցով: Այնուհետև, գնահատվել է միաժամանակյա հավասարումների համակարգ էլեկտրաէներգիայի և բնական գազի սպառման վրա վարկային ներդրումների ազդեցությունը պարզելու համար:

Բազմաթիվ հետազոտություններ են կատարվել էներգետիկ համակարգի վրա ազդող գործոնների, մակրոտնտեսական ցուցանիշների միջև փոխազդեցությունների պարզաբանման ուղղությամբ: Այսպես, Zhang Xing-Hong-ը վերլուծել է երկարաժամկետ հավասարակշռությունը և կարճաժամկետ դինամիկ փոխազդեցությունները էներգիայի սպառման, ածխաթթու գազի արտանետումների և տնտեսական աճի միջև թայլանդի և Չինաստանի 1980-2008 թվականների տվյալների հիման վրա՝ կիրառելով վեկտորական ավտոռեգրեսիոն մոդելներ [3]: Նա ցույց է տվել, որ առկա է երկարաժամկետ հավասարակշռություն էներգետիկ արդյունավետության, ածխաթթու գազի արտանետումների և տնտեսական աճի միջև ինչպես Չինաստանում, այնպես էլ Թայլանդում: Paul Crompton-ը և Yanrui Wu-ը կանխատեսել են էներգիայի սպառման պահանջարկը: Հետազոտության նպատակը Բայեսյան վեկտորական ավտոռեգրեսիոն մեթոդաբանության կիրա-

ռումն էր երկրի էներգիայի սպառումը և հնարավոր ներուժը կանխատեսելու համար [4]: Cerdeira Bento-ն և Joaõ Paulo-ն իրենց աշխատությունում կոինտեգրացիոն վերլուծություն են իրականացրել առաջնային էներգիայի սպառման, տնտեսական աճի և օտարերկրյա ուղղակի զուտ հոսքերի միջև փոխազդեցությունները հետազոտելու համար: Engle և Granger-ի, Stock-Watson-ի փոքրագույն քառակուսիների դինամիկ մեթոդներով ցույց են տվել, որ նշված փոփոխականների միջև առկա է կայուն երկարաժամկետ գծային կոինտեգրացիոն կախվածություն: Այս պարզաբանումները կարևոր քաղաքական կիրառություններ են ունեցել օտարերկրյա ներդրումների ծրագրերի ներգրավման հարցում [5]:

### Էլեկտրաէներգիայի և բնական գազի սպառման միջև լագային կախվածությունը

Էլեկտրաէներգիայի և բնական գազի սպառման միջև լագային կախվածությունը կներկայացվի հետևյալ կերպ՝ հիմնվելով վեկտորական ավտոռեգրեսիոն մոդելների վրա.

$$ENPOP(t) = a_{10} \sum_{j=1}^2 a_{11,j} ENPOP(t-j) + \sum_{j=1}^2 a_{12,j} ENPOP(t-j) + \varepsilon_{1,t}$$

$$GAZPOP(t) = a_{20} \sum_{j=1}^2 a_{21,j} GAZPOP(t-j) + \sum_{j=1}^2 a_{22,j} GAZPOP(t-j) + \varepsilon_{2,t}$$

որտեղ ENPOP(t)-ն բնակչության կողմից էլեկտրաէներգիայի սպառման արժեքը ժամանակի t-պահին, GAZPOP(t)-ն բնակչության կողմից բնական գազի սպառման արժեքը ժամանակի t-պահին:

Բնակչության կողմից էլեկտրաէներգիայի և բնական գազի սպառման միջև փոխազդեցությունների ուսումնասիրման համար օգտագործվել է ՀՀ-ում բնակչության կողմից էլեկտրաէներգիայի և բնական գազի սպառման 2003-2012 թթ. ցուցանիշները ամսական կտրվածքով:

Գնահատված մոդելն ունի հետևյալ տեսքը.

$$ENPOP = 0.83 * ENPOP(-1) - 0.2 * ENPOP(-2) + 0.39 * GAZPOP(-1) - 0.46 * GAZPOP(-2) + 52.21, R^2 = 0.68$$

$$[4.21] [-1.08] [1.75] [-2.2] [4.2]$$

$$GAZPOP = 0.29 * ENPOP(-1) - 0.27 * ENPOP(-2) + 1.12 * GAZPOP(-1) - 0.45 * GAZPOP(-2) + 11.73, R^2 = 0.83$$

$$[2.06] [-2.04] [6.91] [-3] [1.03]$$

որտեղ փակագծերում տրված են t-վիճականու արժեքները: Գնահատված մոդելում գործակիցների նշանակալիությունը որոշվում է t-վիճականու միջոցով (նշանակալի են այն գործակիցները, որոնք բացարձակ արժեքով մեծ են երկուսից), իսկ մոդելի նշանակալիությունը՝ դետերմինացիայի գործակցով՝ R<sup>2</sup>: Վերջինիս արժեքները երկու մոդելների համար էլ նշանակալի է: Մոդելում նշանակալի չեն միայն էլեկտրաէներգիայի սպառման վրա մեկ լագ առաջվա բնական գազի և երկու լագ առաջվա էլեկտրաէներգիայի ազդեցությունները: Մյուս փոփոխականները դրսևորում են նշանակալի ազդեցություններ:

**Էլեկտրաէներգիայի և բնական գազի սպառման միջև լազային կախվածության կայունության պայմանը**


Ուսումնասիրվող ցուցանիշների միջև լազային կախվածության կայունության պայմանը ստուգվել է միավոր արմատի թեստի միջոցով: Մեր կողմից գնահատված մոդելը բավարարում է կայունության պայմանին, քանի որ բնութագրիչ հավասարումների արմատները իրենց բացարձակ արժեքներով փոքր են 1-ից, դրանք են.

Արմատներ	Բացարձակ արժեքներ
0.671156 - 0.500277i	0.837094
0.671156 + 0.500277i	0.837094
0.675934	0.675934
-0.074065	0.074065

Գնահատված մոդելի հետագա վերլուծության համար կառուցվել են ակնթարթային արձագանքի ֆունկցիաները, և կատարվել է ակնթարթային արձագանքի վերլուծություն: Ակնթարթային արձագանքի վերլուծությունը ցույց է տալիս, թե ինչպես է յուրաքանչյուր էնդոգեն փոփոխական արձագանքում հենց այդ փոփոխականի և մյուս էնդոգեն փոփոխականների ցնցումներին:

*Նկար 1*

**Բնակչության կողմից էլեկտրաէներգիայի սպառման իմպուլսային արձագանքները համապատասխանաբար էլեկտրաէներգիայի և բնական գազի սպառման շոկերի նկատմամբ՝ վերևի երկու զծապատկերները, ա և բ**



Բնակչության կողմից բնական գազի սպառման իմպուլսային արձագանքները համապատասխանաբար էլեկտրաէներգիայի և բնական գազի սպառման շոկերի նկատմամբ՝ ներքևի երկու գրաֆիկները, գ և դ:

Արցսիսների առանցքը ներկայացնում է ժամանակային լազերը, իսկ օրդինատների առանցքը՝ համապատասխան փոփոխականների իմպուլսային արձագանքները:

Նկար 1-ում ներկայացրել ենք 2 ստանդարտ շեղումով ակնթարթային արձագանքի ֆունկցիաները, որտեղ կետագծերով տրված են սխալների սահմանները՝ մատնանշելով արձագանքի նշանակալիությունը: Վերլուծենք համապատասխան իմպուլսային արձագանքի ազդեցությունները: ա) և բ)-ում ցույց է տրվում բնակչության կողմից էլեկտրաէներգիայի սպառման արձագանքն իր և բնակչության կողմից բնական գազի սպառման շուկերի նկատմամբ: ա)-ում էլեկտրաէներգիայի սպառման ծավալը առաջին լագում կայուն է, 2-րդ լագից սկսած մինչև 7-րդ լագը ունի սահուն կերպով նվազման միտում, որից հետո միայն սկսում է աճել: Իսկ նկ.1 բ)-ում էլեկտրաէներգիայի սպառման ծավալները մեծանում են առաջին լագում բնական գազի սպառման շուկի հետևանքով, իսկ 2-րդ լագից մինչև 6-րդ լագը նվազում են, որից հետո կրկին աճում են:

Նկ.1 գ) և դ)-ում երևում է թե էլեկտրաէներգիայի սպառման ցնցմանը ինչպես են արձագանքում բնական գազի և էլեկտրաէներգիայի սպառման ծավալները, որտեղ ընթացքը գրեթե նույնն է, ինչ նախորդ պարագայում: Տարբերությունը կայանում է միայն տատանման չափերի միջև:

Վերոնշյալ վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանում բնակչության կողմից էլեկտրաէներգիայի և բնական գազի սպառման ծավալների միջև գոյություն ունի դինամիկ կապ մեկ և երկու լագ ազդեցությամբ: Ավելին, մեկ լագի ազդեցությունները դրական են, իսկ երկրորդինը՝ բացասական: Ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ բնակչությունը, հիմնվելով նախորդ ժամանակահատվածի սպառողական ծախսումների վրա, կարող է հաջորդ ժամանակահատվածում որոշում կայացնել էներգիայի երկու աղբյուրների այլընտրանքային ընտրության վերաբերյալ: Այսինքն, օգտվելով ներկայացված մոդելի գնահատականներից, կարելի է որոշակիորեն լուծումներ առաջարկել նաև էներգետիկ անվտանգությանն առնչվող խնդիրների համար:

Կարևոր նշանակություն կունենա ներմուծվող վառելիքից կախվածության, թեկուզ փոքր չափով, նվազեցումը՝ շնորհիվ սեփական ռեսուրսների առավելագույն օգտագործման: Ներդրումների ներգրավումը հիդրոէներգետիկ ռեսուրսների շահագործման գործընթացին կարող են նպաստել զոնե պիկային պահանջարկի բավարարմանը՝ համեմատաբար էժան արտադրական ծախսերով: Այս առումով գնահատվել է հետևյալ միաժամանակյա հավասարումների համակարգը.

$$\begin{cases} GAZPOP = 10.57 - 8.3 * LINVEST(-6) + 0.82 * ENPOP(-1) \\ ENPOP = -20.76 + 13.58 * LINVEST(-6) + 0.65 * GAZPOP(-1) \end{cases}$$

որտեղ  $LINVEST$ -ը էներգետիկ ոլորտին տրամադրված վարկային ներդրումներն են:

Սողելում ներառվել է ներդրումների ազդեցության վեցերորդ լագը, ինչը մեկնաբանվում է անհրաժեշտ ժամանակով մինչև ներդրումներով պայմանավորված գործողությունների ավարտը: Սողելը գնահատվել է փոքրագույն քառակուսիների եղանակով, ստացվել են դետերմինացիայի հետևյալ գործակիցները համապատասխանաբար՝ 0.66 և 0.43, որոնք էլ թույլ են տալիս այն համարել նշանակալի:

## Եզրակացություն

Ներդրումների շնորհիվ կարելի է կրճատել բնական գազի սպառումը և միևնույն ժամանակ մեծացնել էլեկտրաէներգիայի սպառման մակարդակը: Այսպիսի ազդեցությունը կարող է հնարավորություն տալ փոխարինել բնական գազի սպառումը էլեկտրաէներգիայի սպառումով: ՀՀ ի վիճակի կլիմայի նվազեցնել բնական գազի ներկրումից կախվածությունը, եթե համապատասխան ներդրումների շնորհիվ ընդլայնի սեփական էլեկտրաէներգետիկ արտադրական հզորությունները: Բացի այդ, էլեկտրահաղորդման ակտիվների, ցածրավոլտ ենթակայանների տեխնիկական վիճակի բարելավմանն ուղղված ներդրումները ևս նպաստավոր կլիման, կորուստների նվազեցմանն ուղղված ներդրումները կնպաստեն էներգախնայողության բարձրացմանը:

Հետևաբար էներգետիկ ոլորտի բարեփոխումներին ուղղված ներդրումները կարող են նշանակալի ազդեցություն ունենալ ոլորտում գոյություն ունեցող մի շարք խնդիրների լուծման համար գոնե կարճաժամկետ հատվածում:

## Գրականություն

1. **Թաթուլ Սանասերյան**, Տարածաշրջանային էներգիայի շուկաներ և էներգետիկ արդյունավետություն, - <http://alternative.am/books/project.pdf>:

2. Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ռազմավարությունն ընդունվել է 2007 թվականի հունվարի 26-ին Անվտանգության խորհրդի կողմից: ՀՀ նախագահի ղեկավարությամբ: Ստորագրված է ՀՀ նախագահի կողմից: 2007 թվականի փետրվարի 7, Երևան, ԵՀ- 37-Լ:

3. **Zhang Xing-Hong**. Research on the Relationship of Energy Efficiency, Carbon Emissions and Economic Growth in China and Thailand / Bangkok, 2012.

4. **Paul Crompton and Yanrui W.** Energy consumption in China: past trends and future directions / Crawley, WA, 6009 AUSTRALIA , Q41, C53.

5. **Cerdeira Bento, Jojo Paulo**. Cointegration Models Applied For Portugal's Energy Consumption // Inward FDI and GDP Series, (2012).

6. **Pindyck R.S., Rubinfeld D. L.** Econometric Models and Econometric forecast / McGraw-Hill, New York, 1998.

7. **Носко В.П.**, Эконометрика для начинающих. Москва, 2005.

## ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ուսումնասիրվում է բնակչության կողմից էլեկտրաէներգիայի և բնական գազի սպառման միջև գոյություն ունեցող կապը վեկտոր ավտոռեգրեսիոն մոդելի միջոցով: Դիտարկվել է նաև միաժամանակյա հավասարումների համակարգ էլեկտրաէներգիայի և բնական գազի սպառման վրա վարկային ներդրումների ազդեցությունը պարզելու համար:

**АННОТАЦИЯ****ХАЛАТЯН А., КАКОСЯН А. - АНАЛИЗ ПОТРЕБЛЕНИЯ ЭЛЕКТРОЭНЕРГИИ И ПРИРОДНОГО ГАЗА С ТОЧКИ ЗРЕНИЯ ЭНЕРГЕТИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ**

В статье исследуется связь между потреблением электроэнергии и природного газа населения с помощью модели VAR. Изучается влияние кредитных инвестиций на потребление электроэнергии и природного газа, посредством системы одновременных уравнений.

**SUMMARY****KHALATYAN A., KAKOSYAN A. – ELECTRICITY AND NATURAL GAS CONSUMPTION ANALISIS FROM ENERGY SECURITY VIEWPOINT**

The article refersthe connection between electricity and natural gas consumption of population through VAR model. The impact of loan investments on electricity and natural gas consumption is studied by a system of simultaneous equations.

**ՎԵՂԱՆՈՒՇ ՄԱՐՈՒԽՅԱՆ**

*ԵՊՀ տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի հայցորդ էլ.փոստ՝ vmarukhyan@mail.ru*

**ԱՇՈՏ ԿԱԿՈՍՅԱՆ**

*Ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու, ԵՊՀ տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դոցենտ էլ.փոստ՝ ashot.kakosyan@yahoo.com*

**ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇՂԹԱՅԻ ՑԱՆՑԱՅԻՆ ՄՈՂԵԼԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԴՅ  
ԷԼԵԿՏՐՈՒԼՆԵՐԳԵՏԻԿ ՈԼՈՐՏՈՒՄ**

Ժամանակակից տնտեսությունների և հասարակությունների կայուն զարգացման համար անհրաժեշտ է ապահովել էլեկտրաէներգետիկ համակարգերի ճկուն ենթակառուցվածքներ: Էլեկտրաէներգիան էներգիայի այն կարևորագույն տեսակն է, որի բացակայությունը կամ անհասանելությունը հզոր և տևական ազդեցություն է ունենում աշխարհի ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրների վրա: Վերջին տասնամյակների ընթացքում մի շարք հետազոտությունների առանցքային ուսումնասիրման թեմա է հանդիսանում հուսալի էլեկտրաէներգետիկ համակարգի ստեղծման գործընթացը: Մատակարարման շղթաների միջոցով էներգետիկ շուկաների վերլուծությունները հետաքրքրել է տարբեր հեղինակների: Nagurney and Matsypura-ն մոդելավորել և վերլուծել են ԱՄՆ-ի էլեկտրաէներգետիկ շուկաները, մասնավորապես կառուցել են մատակարարման շղթայի ցանցային մոդել էլեկտրաէներգիայի արտադրողների, մատակարարների, տեղափոխում իրականացնողների և սպառողների համար, որտեղ որոշում կայացնողները գործում են ապակենտրոնացված: Նրանց կառուցած մոդելը տարբերվում էր մյուս մոդելներից, նրանով, որ հեղինակները ներկայացրել են տարբեր տիպի որոշում կայացնողների վարքը, ուղղակի փոխազդեցությունները մատակարարման շղթայում և հավասարակշռության պայմանները որոշում կայացնողների աղելների միջև՝ տարբեր տեղափոխումներին համապատասխան: Matsypura, Nagurney, and Liu ներկայացրել են առաջին ցանցային մոդելը, որը միավորել է վառելիքի և էլեկտրաէներգետիկ մատակարարման շղթաները: Նրանց մոդելում հիմնական շեշտադրումը դրված էր էլեկտրաէներգիայի սեփականության համաձայնագրերի վրա, ինչպես նաև շուկայի մասնակիցների որոշում կայացնելու գործընթացի վրա: Հեղինակները շրջանցել են էլեկտրաէներգիայի տեղափոխման ցանցի ֆիզիկական սահմանափակումները և էլեկտրաէներգիայի պահանջարկի վարիացիաները:


Այս աշխատանքում փորձել ենք կառուցել մատակարարման շղթայի ցանցային մոդելը ՀՀ էլեկտրաէներգետիկ համակարգի համար: ՀՀ էներգետիկայի բնագավառում իրականացվող քաղաքականության հիմնահարցերից մեկն է

հանդիսանում ժամանակակից էներգետիկ սարքավորումների կիրառմամբ ապահովել ցածր գներով հուսալի էներգամատակարարում՝ սպառողների կարիքները բավարարելու համար: Մենք փորձել ենք մատակարարման շղթայի միջոցով ներկայացնել ՀՀ էլեկտրաէներգիայի շուկան, նկարագրել որոշում կայացնողների վարքը և օպտիմացման պայմանները ինչպես նրանցից յուրաքանչյուրի, այնպես էլ համակարգի համար: ՀՀ էներգետիկ համակարգի մատակարարման շղթայի բաղադրիչներն են՝ էլեկտրաէներգիա արտադրող կայանները, մատակարարները և սպառողները: Հայաստանում էլեկտրական և ջերմային էներգիաներն արտադրվում են տարբեր եղանակներով: Էլեկտրական էներգիան արտադրվում է կենտրոնացված, իսկ ջերմային էներգիան՝ անհատական եղանակով, այսինքն կենտրոնացված ջերմամատակարարումը բացակայում է: Այսօր Հայաստանում էլեկտրաէներգիան արտադրվում է հիմնականում ՀԱԷԿ-ում, Հրազդանի և Երևանի շոգեգազային ցիկլով աշխատող ՋԷԿ-երում և տարբեր հզորության ՀԷԿ-երում: ՀՀ-ն էլեկտրաէներգետիկ համակարգում որպես արտադրողներ առանձնացված են հետևյալ կայանները՝ ՀԱԷԿ, Հրազդանի ՋԷԿ, Երևանի ՋԷԿ, Որոտանի կասկադ, Սևան-Հրազդան կասկադ և Փոքր ՀԷԿ-ը:

Էլեկտրաէներգիայի մատակարար ասելով հասկանում ենք էլեկտրաէներգիայի շուկայի այն մասնակիցները (առևտրականները և բրոկերները), որոնք էլեկտրաէներգիայի վաճառքի և գնման համար պայմանավորվածություն ունեն արտադրող կայաններից կամ միջանկյալ (տեղափոխման ծառայություններ իրականացնող կամ լարումն իջեցնող) ընկերություններից: Նրանք խաղում են հիմնական դեր մեր դիտարկված մոդելում, քանի որ կրում են պատասխանատվություն գեներատորներից էլեկտրաէներգիայի ձեռքբերման համար և մատակարարում են այն սպառողներին:

Նկար 1

Էլեկտրաէներգիայի մատակարարման շղթան ՀՀ-ում



Նկարում ներկայացված է էլեկտրաէներգիայի մատակարարման շղթան ԶԶ-ում, նկարի ձախ հատվածում էլեկտրաէներգիա արտադրող կայաններն են: Բացի Փոքր ՅԷԿ-ից, մյուս արտադրող կայանների արտադրած էլեկտրաէներգիան նախ մտնում է բարձրավոլտ էլեկտրական ցանցեր, որտեղ էլեկտրաէներգիայի լարումն իջեցվում է, այնուհետև էլեկտրաէներգիայի արտադրության հիմնական մասը ուղղվում է ներքին շուկա՝ ՅԷՑ, իսկ մյուս մասը բարձրավոլտ էլ. ցանցերը արտահանում են: Նկարում միջանկյալ հանգույցներում ներկայացված են բարձրավոլտ էլ. ցանցերը և ՅԷՑ-ը: Փոքր ՅԷԿ-երի արտադրանքն անմիջապես մտնում է մեծածախ շուկա: Նկարի վերջին հանգույցներում ներկայացված են սպառողները, որոնց բաժանել ենք երկու խոշոր խմբի՝ բնակչություն և այլ սպառողներ:

Տարբերում ենք մատակարարների երկու տեսակներ՝ ընդհանուր մատակարարներ և տիպային մատակարարներ: Ընդհանուր մատակարարները նշանակված են S-ով, իսկ տիպային մատակարարները՝ s-ով: ԶԶ-ն էլեկտրաէներգետիկ համակարգում որպես մատակարար դիտարկված է՝ «Հայաստանի էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն: ԶԶ էներգետիկ շուկայում «Հայաստանի էլեկտրացանցերը» հանդես են գալիս որպես մեծածախ շուկա, որտեղ առևտուր են կատարում սպառողները: Արտադրող կայանների և մատակարարների, միջև գործում են նաև միջանկյալ ընկերություններ, որոնք իրականացնում են կամ փոխադրման, կամ լարումն իջեցնող ծառայություններ: Մենք ենթադրում ենք, որ մատակարարման ցանցում կան T միջանկյալ ընկերություններ, իսկ տիպային լարում իջեցնող ընկերությունները նշանակված են t-ով: ԶԶ էլեկտրաէներգետիկ շուկայում միջանկյալ ծառայություններն իրականացնում են բարձրավոլտ էլեկտրացանցեր՝ ՓԲԸ-ն, որի հիմնական խնդիրներն են 220-110 կՎ էլեկտրական ցանցերի սպասարկումը, շահագործումը, վերակառուցումը, տեխնիկական վերազինումը և նախագծային աշխատանքների կատարումը, հաղորդման ցանցերի ընդլայնումն ու զարգացումը և այլն:

Մատակարարների միջոցով էլեկտրաէներգիան գեներատորներից տեղափոխվում է դեպի պահանջարկի շուկաներ՝ տնային տնտեսություններ և ձեռնարկություններ: ԶԶ-ում էլեկտրաէներգիա արտադրողը կարող է այն օգտագործել սեփական կարիքների համար կամ վաճառել ՅԷՑ-ին, հետևաբար արտադրողը չի կարող էլեկտրաէներգիա վաճառել բնակչությանը կամ այլ սպառողի: ՅԷՑ<sup>1</sup>-ը հիմնականում զբաղվում է էլեկտրաէներգիայի բաշխմամբ և իրացմամբ: Բարձրավոլտ էլեկտրացանցեր ընկերությունն էլեկտրաէներգիա արտադրող էլեկտրականայանների և ՅԷՑ-ի միջև էլեկտրաէներգիա վերավաճառողի դեր չի կատարում և ֆինանսավորվում է ՅԷՑ-ի կողմից՝ նրան մատուցված ծառայության դիմաց: Քանի որ լարումն իջեցնող ընկերությունները որոշում չեն կայացնում, մենք նրանց չենք ներառում մոդելում որպես հանգույցներ: Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում էլեկտրաէներգիայի և հզորության հաշվարկները հստակեցնելու և թափանցիկ դարձնելու նպատակով ստեղծվել է «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ն<sup>2</sup>: 2003թ. հիմնադրվել է «էլեկտրաէներգետիկական համակարգի օպերա-

<sup>1</sup> Ընկերությունը Հայաստանի Հանրապետության տարածքում ունի էլեկտրաէներգիայի բաշխման բացառիկ արտոնագիր: Էլեկտրաէներգիայի բաշխումն իրականացվում է ԶԶ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հաստատագրված սակագներով:

<sup>2</sup> «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից էլեկտրաէներգետիկական շուկային ծառայություն մատուցելու սակագինը սահմանվում է ԶԶ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժո-

տոր» փակ բաժնետիրական ընկերությունը: Ընկերությանը բացառիկ իրավունք է տրված իրականացնել տեղնուլոգիական և տնտեսական կարգավորում, համակարգային պլանավորում ու կորորինացում, աշխատանքի հսկում և այլն:

Վերջապես որոշում կայացնողների վերջին տիպը մոդելում սպառողներն են: Նրանք ներկայացված են մատակարարման շղթային ստորին օղակում: Սպառողները շուկայում ներկայացնում են էլեկտրաէներգիայի նկատմամբ պահանջարկ, որին համապատասխան էլեկտրակայանները ներկայացնում են իրենց առաջարկը: Ցանցում դիտարկվում է  $K$  պահանջարկի շուկաներ, որոնք տարբերվում են մեկը մյուսից սպառողների տեսակով:

Մոդելի շրջանակներում ենթադրում ենք, որ որոշում կայացնողները միևնույն աղեղի վրա դրսևորում են ոչ կոոպերատիվ վարքագիծ, իսկ աղեղների միջև կոոպերատիվ վարք: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս օգտագործել ցանցի տոպոլոգիան, որը չի սահմանափակում արտադրողների, մատակարարների և սպառողների քանակը, հաշվարկներ կատարելու համար:

### Էլեկտրաէներգիա արտադրող կայանների վարքագծի նկարագրությունը

Ընդհանուր արտադրող կայանների բազմությունը նշանակված է  $G$ -ով, իսկ տիպային էլեկտրաէներգիայի արտադրողները՝  $g$ -ով: Ենթադրենք  $q_g$ -ն էլեկտրաէներգիայի ոչ բացասական քանակն է վատերով, որը արտադրվում է  $g$  գեներատորի կողմից, իսկ  $q_{gs}$ -ով նշանակենք էլեկտրաէներգիայի այն քանակը, որը փոխանցվել է  $g$  գեներատորից դեպի  $s$  մատակարարին: Նշենք որ  $q_{gs}$  համապատասխանում է  $g$  հանգույցը  $s$  հանգույցը միացնող աղեղի հոսքին:  $g$  գեներատորի ծախսերի ֆունկցիան նշանակում ենք  $f_g$ -ով այնպես, որ  $f_g = f_g(q)$ ,  $\forall g$  (1): Ենթադրվում է, որ էլեկտրաէներգիայի արտադրման ֆունկցիան ուռուցիկ է և անընդհատ դիֆերենցելի, մասնավոր դեպքում  $f_g = f_g(q_g)$ , էլեկտրաէներգիայի տեխափոխման ընթացքում  $g$  հանգույցից դեպի  $s$  հանգույց առաջանում են տեխափոխման կամ տրանսակցիոն ծախսեր: Այդ ծախսերի մի մասը ծածկվում է գեներատորի կողմից:  $c_{gs}$ -ով նշանակենք  $g$  գեներատորի տեխափոխման ծախսերի ֆունկցիան էլեկտրաէներգիա տեղափոխելիս դեպի  $s$  մատակարար: Մոդելում դիտարկվում է ընդհանուր իրավիճակ, որտեղ մասնավոր գեներատորի տեղափոխման ծախսերը ֆունկցիա է ոչ միայն տրված գեներատորի կողմից տեղափոխված էլեկտրաէներգիայի քանակից, այլ նաև բոլոր գեներատորների կողմից տեխափոխված էլեկտրաէներգիայի քանակից: Ընդհանուր դեպքը ներկայացնելու համար, ունենք  $c_{gs} = c_{gs}(Q^1)$ ,  $\forall g, \forall s$ , (2):

դրվի կողմից: Ծառայությունների համար սահմանված անսակական հաստատագրված վճարները կատարում է «Հայաստանի էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն:

Ենթադրում ենք նաև, որ այս ֆունկցիաները ուռուցիկ են և անընդհատ դիֆերենցելի: Ենթադրում ենք, որ տիպային գեներատորի համար հիմնական խնդիրը շահույթի մաքսիմալացումն է:

$P_{1gs}^*$  -ով նշանակենք  $g$  գեներատորի սահմանած գինը  $s$  մատակարարի նկատմամբ միավոր էլեկտրաէներգիայի դիմաց: Մոդելում թույլ է տրված գեներատորներին սահմանել տարբեր գներ տարբեր մատակարարներին: Ուստի, օպտիմալացման խնդիրը գեներատորների համար կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

$$Maximize \sum_{s=1}^S p_{1gs}^* q_{gs} - f_g(Q^1) - \sum_{s=1}^S c_{gs}(Q^1) q_{gs} \geq 0, \quad \forall s \quad (4)$$

ՀՀ-ում արտադրության ամբողջ ծավալի մոտավորապես 39.5%-ը ապահովում է ԱԷԿ-ը, որի համար բեռնվածքի կշիռը չի փոփոխվում: Հաջորդ արտադրող կայանները Սևան-Հրազդանի և Որոտանի կասկադներն են, որոնք ապահովում են արտադրության համապատասխանաբար՝ 9.4 % և 18.7%-ը: Որոտանի հիդրոէլեկտրակայանների համակարգը կարևորագույն նշանակություն ունի հայկական էներգահամակարգում, նշանակությունը մեծ է առանձնապես օրվա ծանրաբեռնված ժամերին պահանջվող բեռի ապահովման գործում<sup>1</sup>: Սևանա լճի և Հրազդանի գետի ջրի օգտագործումը (որը հանդիսանում և արտադրության հիմնական աղբյուրը) հնարավորություն է տալիս ոռոգել Հայաստանի գյուղատնտեսական հողերի 70%-ը:

Փորձել ենք ռեգրեսիոն վերլուծության միջոցով գնահատել էլեկտրաէներգիայի արտադրությունը: Որպես կախյալ փոփոխական դիտարկել 2003-2013 թթ. ընթացքում հանրապետությունում արտադրված էլեկտրաէներգիայի քանակը ( $Q_e$ ) ամսական կտրվածքով, իսկ անկախ փոփոխական՝ հանրապետություն մուտք գործած գազի ծավալը ( $Q_g$ ): Ստացվել է հետևյալ մոդելը.

$$Q_e = 401,2693 + 0,67424 \cdot AR(1) + 0,79445 \cdot Q_g \\ (13,093) \quad (10,393) \quad (4,969)$$

ՀՀ էլեկտրաէներգիայի արտադրությունը կախված է նախորդ ամսվա արտադրության ծավալից և բնական գազի մուտքի ծավալից, մոդելը կայուն է: Փակագծերում ներկայացված են գործակիցների է վիճակագրականի արժեքները, որոնք բացարձակ արժեքով մեծ են երկուսից, այսինքն՝ գործակիցները նշանակալի են:

Արտադրող կայաններից դիտարկել ենք միայն Երևանի ՋԷԿ-ի և Հրազդանի ՋԷԿ-ի արտադրության ծավալների փոփոխությունը, քանի որ ՀԱԷԿ-ը հանդիսանում է բազիսային կայան, իսկ Սևան-Հրազդան և Որոտանի կասկադի արտադրության ծավալները ամբողջ արտադրության մեջ մնում են անփոփոխ: Գնահատվել են Երևանի ՋԷԿ-ի և Հրազդանի ՋԷԿ-ի ծախսերի ֆունկցիաները:

Երևանի ՋԷԿ-ի համար դիտարկել ենք ծախսերի ( $C_Y$ ) կախվածությունը արտադրության մակարդակից ( $Q_Y$ ), հետևյալ մոդելը.

$$C_Y = 2.498 + 0.3691 \cdot Q_Y - 0,001 \cdot Q_Y^2 \\ (1,408) \quad (5,119) \quad (-3,399)$$

<sup>1</sup> Stu՝ <http://www.minenergy.am>

R Square=0,59345, F = 67,14836 Signif F = 0,0000

Գնահատված ծախսերի ֆունկցիան ունի քառակուսային տեսք, մոդելը կայուն է, F վիճակագրականի հավանականությունը 0 է, դետերմինացիայի գործակիցը 0,59-ն է, նշանակում է, որ արտադրության ծավալի փոփոխությունը նկարագրում է ծախսերի փոփոխությունը մոտավորապես 60%-ով: Մոդելում գործակիցները նշանակալի են, եթե ուշադիր նայել, որ գործակիցները զրոյական են մերժվում: Փակագծերում ներկայացված են գործակիցների t վիճակագրականի արժեքները, որոնք գտնվում են սահմանված միջակայքում, այսինքն գործակիցները նշանակալի են:

Հրազդանի ՋԷԿ-ի համար ծախսերի ֆունկցիան ևս գնահատել ենք ռեգրեսիոն վերլուծությամբ: Դիտարկել ենք Հրազդանի ՋԷԿ-ի ծախսերի ( $C_H$ ) կախվածությունը Հրազդանի արտադրության ծավալից ( $Q_H$ ): Լավագույն մոդել ստացվել է Power մեթոդով և ունի հետևյալ տեսքը.

$$C_H = 0.8355 * Q_H^{4.825} \quad (4,825) \quad (17,341)$$

R Square = 0,71477, F = 300,71499 Signif F = 0 ,0000

Մոդելը կայուն է, գործակիցները նշանակալի են: Դետերմինացիայի գործակիցը 0,71 է, իսկ գործակիցների համար t վիճակագրականի արժեքը ընկած է 95% վստահելիության միջակայքում:

Ունենալով ծախսերի ֆունկցիաների տեսքը, հաշվի առնելով, որ վաճառքի գները արտադրող կայանների համար սահմանում է Հանրային ծառայությունները կարգավորող մարմինը, և այն փաստը որ արտադրության ծավալը ևս գնահատել ենք, կարող ենք լուծել արտադրող կայանների համար շահույթի մաքսիմալացման խնդիրը:

### Էլեկտրաէներգիայի մատակարարի վարքագծի նկարագրությունը

Էլեկտրաէներգիայի մատակարարը՝ s-ը, առնչվում է այնպիսի ծախսերի հետ, որոնք ներառում են լիցենզավորման և պահպանման ծախսերը: Այս մոդելում այն դիտարկում ենք օպերացիոն ծախսերի տեսքով և նշանակում՝  $c_s$ -ով: Նշանակենք  $q_{sk}^i$ -ով էլեկտրաէներգիայի այն քանակը, որը փոխանցվում է մատակարար s-ից դեպի k պահանջարկի շուկա t տեղափոխման ծառայություններ իրականացնող ընկերության միջոցով: Համախմբում ենք բոլոր փոխանցումները s մատակարարից դեպի k պահանջարկի շուկա մեկ վեկտորում՝  $q_{sk} \in R_+^{STK}$ -ում: Այնուհետև, այս բոլոր վեկտորները ըստ բոլոր մատակարարների՝ համախմբում ենք հետևյալ վեկտորում՝  $Q^2 \in R_+^{STK}$ : Ընդհանուր պայմաններից ելնելով և մրցակցությունը մոդելավորելու համար, ենթադրում ենք, որ  $c_s = c_s(Q^1, Q^2), \forall s$ .

Ենթադրում ենք, որ մատակարարները առնչվում են մալ տրանսակցիոն ծախսերի հետ: Յուրաքանչյուր մատակարար իրականացնում է էլեկտրաէներգիայի տեղափոխում բոլոր գեներատորներից դեպի պահանջարկի շուկաներ: Այդ իսկ պատճառով յուրաքանչյուր տեղափոխմանը համապատասխանում է տրանսակցիոն ծախսեր: Այս ծախսերը ներառում են պահպանման հետ կապված

ծախսերը: Որպեսզի բոլոր հնարավոր իրավիճակները ներկայացնենք, մենք դիտարկում ենք տրանսակցիոն ծախսերի ընդհանուր ձևը: Ենթադրենք  $\hat{c}_{gs}$  տրանսակցիոն ծախսերն են, որոնք իրականացնում են  $s$  մատակարարները  $g$  գեներատորներից էլեկտրաէներգիա գնելիս և այն ունի հետևյալ տեսքը.

$$\hat{c}_{gs} = \hat{c}_{gs}(Q^1), \forall g, \forall s.$$

Նմանապես,  $c'_{sk}$  -ով նշանակենք  $s$  մատակարարի  $k$  պահանջարկի շուկա տեխնիկական էլեկտրաէներգիայի տրանսակցիոն ծախսերը:

$$\hat{c}'_{sk} = \hat{c}'_{sk}(Q^2), \forall s, \forall k, \forall t.$$

Սողելում ենթադրվում է, որ վերը քննարկված տրանսակցիոն ծախսերի ֆունկցիան ուռուցիկ է և անընդհատ դիֆերենցելի: Նշանակենք  $p'_{2sk}$  -ով այն գինը, որով  $s$  մատակարարները տեղափոխում են էլեկտրաէներգիան դեպի  $k$  պահանջարկի շուկա  $t$  տրանսակցիոն ծառայությունների իրականացնող ֆիրմաների միջոցով, իսկ  $p_{2sk}^*$  -ն փաստացի նշանակված գինն է:

Ենթադրում ենք, որ էլեկտրաէներգիայի մատակարարը՝  $s$ -ը, ցանկանում է մաքսիմալացնել իր շահույթը, հետևաբար օպտիմացման խնդիրը  $s$  մատակարարի համար կունենա հետևյալ տեսքը,

maximize

$$\sum_{k=1}^K \sum_{t=1}^T p_{sk}^* q_{sk} - c_s(Q^1, Q^2) - \sum_{g=1}^G p_{gs}^* q_{gs} - \sum_{g=1}^G \hat{c}_{gs}(Q^1) - \sum_{k=1}^K \sum_{t=1}^T c'_{sk}(Q^2) \quad (5)$$

Որտեղ խնդրի սահմանափակումներն են.

$$\sum_{k=1}^K \sum_{t=1}^T q_{sk}^t \leq \sum_{g=1}^G q_{gs}, \quad (6)$$

$$q_{sk}^t \geq 0, \forall k, \forall t$$

$$q_{gs} \geq 0, \forall g$$

Նպատակային ֆունկցիան (5) ցույց է տալիս  $s$  մատակարարի շահույթը, առաջին կրկնակի գումարը ստացված հասույթն է, իսկ մնացած տարբերությունները համապատասխան ծախսերը և վճարումներն են, որոնք մատակարարները կատարում են: Սահմանափակումը ցույց է տալիս, որ  $s$  մատակարարը չի կարող ապահովել ավելի էլեկտրաէներգիա, քան նա ստանում է էլեկտրաէներգիայի արտադրողներից:

Ստացել ենք, որ 33 էլեկտրաէներգետիկայում մատակարարի օպտիմալացման խնդիրը ունի հետևյալ տեսքը.

maximize

$$\sum_{k=1}^K \sum_{s=1}^S p_{sk} q_{sk} - \left( \frac{\sum_{g=1}^{G-1} p_g q_g^*}{\sum_{i=1}^n q_g^*} + p^t + p_{op} + p_{ps} \right) q_s^t - p_G q_G - \sum_{g=1}^G \hat{c}_{gs} (Q^1)$$

սահմանափակումները կլինեն.

$$q_g^* \geq q_g^t \quad \sum_{g=1}^{G-1} q_g^t \geq q_s^t$$

$$\sum_{k=1}^K \sum_{s=1}^S q_{sk} \leq \sum_{g=1}^G q_{gs}^* \quad , \quad q_k \geq 0, \forall k, \quad q_g^* \geq 0, \forall g$$

Որտեղ  $q_s^t$  -ի գործակիցը ՀԷՑ-ի միավոր կվտ էլեկտրաէներգիայի համար մշակված է մուտքի գինն է,  $p^t$  -ն ԲԷՑ-ի սահմանած մարժան է յուրաքանչյուր կվտ-ի դիմաց,  $q_g^t$  -ն էլեկտրաէներգիայի այն քանակն է, որ մտնում է ԲԷՑ, իսկ  $q_g^*$  -ն համապատասխանաբար ԷՅՕ -ի և ՀԿ -ի կողմից սահմանված սակագներն են: Ռեգրեսիոն վերլուծության արդյունքում ստացել ենք ՀԷՑ-ի ծախսերի մոտարկային ֆունկցիաների տեսքը ՀԿ-ի համար Growth մեթոդով: Ծախսերի մոտարկային ֆունկցիան ունի հետևյալ տեսքը.

$$\hat{c}_{gs} = e^{6,706+0,003 \cdot q_g^*}$$

Սողելը կայուն է, գործակիցները՝ նշանակալի:

Այժմ կանդրադառնանք հավասարակշիռ պայմաններին սպառողների համար: Ենթադրենք  $p_{3k}$ -ն միավոր էլեկտրաէներգիայի գինն է, որը համապատասխանում է պահանջարկի շուկային: Այստեղ ենթադրվում է, որ տարբեր պահանջարկի շուկաների համար գները տարբեր են: Մենք ենթադրում ենք, որ էլեկտրաէներգիայի նկատմամբ պահանջարկը  $k$  յուրաքանչյուր պահանջարկի շուկայի համար էլաստիկ է և կախված է միայն էլեկտրաէներգիայի գնից, բայց ընդհանուր առմամբ այն կախված է վերջնական գների ամբողջական վեկտորից մատակարարման շղթայի տնտեսությունում, այսինքն.  $d_k = d_k(p_3)$ ,

Որտեղ  $p_3 = (p_{31}, \dots, p_{3k}, \dots, p_{3K})^T$ : Այս ընդհանրացումը հնարավորություն է տալիս հեշտացնել սպառման տեսանկյունից մոդելի մրցակցությունը:

Նշանակենք  $\hat{c}'_{sk}$  -ով միավոր տեղափոխման ծախսերը էլեկտրաէներգիայի մատակարարից դեպի պահանջարկի շուկա, այդ տեղափոխման ծախսերը անընդհատ են և ընդհանուր դեպքում ունեն հետևյալ տեսքը.  $\hat{c}'_{sk} = \hat{c}'_{sk}(Q^2), \forall s, \forall k, \forall t$ .

Հավասարակշռության պայմանները մատակարարներից դեպի պահանջարկի շուկաներ կունենան հետևյալ տեսքը: Մենք ենթադրում ենք, որ  $(Q^{2*}, p_3^*) \in R_+^{K(ST+1)}$  հավասարակշիռ վեկտորն է յուրաքանչյուր  $s, k$ -ի համար, եթե

$$p_{2sk}^{t*} + \hat{c}_{sk}^t(Q^{2*}) \begin{cases} = p_{3k}^*, q_{sk}^{t*} > 0 \\ \geq p_{3k}^*, q_{sk}^{t*} = 0 \end{cases} \quad (1) \text{ և } d_k(p_3^*) \begin{cases} = \sum_{s=1}^S \sum_{t=1}^T q_{sk}^{t*}, p_{3k}^* > 0 \\ \leq \sum_{s=1}^S \sum_{t=1}^T q_{sk}^{t*}, p_{3k}^* = 0 \end{cases} \quad (2)$$

(1) պայմանը ցույց է տալիս, որ սպառողները  $k$  պահանջարկի շուկայում կգնեն էլեկտրաէներգիա  $s$  մատակարարից, եթե մատակարարի կողմից առաջարկվող գինը գումարած տեղափոխման ծախսը չի գերազանցում այն գինը, որ սպառողը պատրաստ է վճարել էլեկտրաէներգիայի դիմաց: Եթե տեղափոխման ծախսերը հավասար են զրոյի, ապա սպառողին առաջարկվող էլեկտրաէներգիայի գինը հավասար է մատակարարի առաջարկած գնին:

(2) պայմանը մյուս կողմից ցույց է տալիս, որ եթե պահանջարկի շուկայում էլեկտրաէներգիայի գինը, որ սպառողը պատրաստ է վճարել դրական է, ապա էլեկտրաէներգիայի քանակը որ տեղափոխվում է մատակարարից դեպի պահանջարկի շուկա հավասար է էլեկտրաէներգիայի նկատմամբ պահանջարկին:

2003-2013 թթ. էլեկտրաէներգիայի սակագները փոփոխվել են<sup>1</sup>: 1999 թ. հունվարի 1-ից սպառողներին առաքվող էլեկտրաէներգիայի միջին սակագինը բնակչության համար կազմել է 25 դրամ/կՎտժ, իսկ նույն թվականի մայիսի 31-ի որոշմամբ ընդունվել է ցածր լարման սպառողներին (ներառյալ՝ բնակչությանը) առաքվող էլեկտրական էներգիայի գիշերային սակագին՝ 15 դրամ/կՎտժ, հետևաբար միջին սակագինը կազմել է 20 դրամ/կՎտժ: Այլ սպառողների համար 1999 թ. գործում է 20 դրամ/կՎտժ սակագինը: 2009 թվականին Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի կողմից սահմանված սակագները բնակչության համար կազմել են 25 դրամ/կՎտժ, իսկ այլ սպառողների խմբի համար՝ 22,1 դրամ/կՎտժ: 2013 թ. սահմանվել են նոր սակագներ: Համաձայն դրանց բնակչության համար միջին սակագինը կազմել է 30 դրամ/կՎտժ, իսկ այլ սպառողների համար՝ 33 դրամ/կՎտժ: 2003-2013 թթ. ժամանակային միջակայքը բաժանել ենք 3 ժամանակային հատվածների՝ 2003-2009, 2009-2012 և 2013՝ հիմք ընդունելով սակագների փոփոխությունները: Եթե  $T$ -ով նշանակենք դիտարկված ժամանակները, ապա  $T=1,2,3$ , եթե  $k$ -ով նշանակենք սպառողների խմբերը, ապա մեր մոդելում  $k=1,2$  (բնակչություն, այլ սպառողներ), իսկ  $p_3$  –ով սպառողների համար սահմանված միջին սակագինը, հետևաբար  $d_k(p_{3T}^*)$  -ն կստացվի յուրաքանչյուր  $k$  սպառողների խմբի սպառման մակարդակը  $T$  ժամանակահատվածի գնին համապատասխան: Էլեկտրաէներգիայի սպառման մակարդակը նշված ժամանակահատվածներում ՀՀ-ում ունի հետևյալ տեսքը

<sup>1</sup> Stu՝ <http://www.psrc.am/am/>

$$d_k(p_{3T}) = \sum_{t=1}^T \sum_{s=1}^S q_{sk} \cdot p_k = p_{kT}$$

$$d(p_3) = \begin{cases} 9006,1 & p_{11} = 20 \\ 16322,2 & p_{21} = 20,3 \\ 6874,7 & p_{12} = 25 \\ 12001,1 & p_{22} = 22,1 \\ 2981,8 & p_{13} = 33 \\ 4873,6 & p_{23} = 30 \end{cases}$$

Ստացված համակարգը ցույց է տալիս, որ օրինակ՝ 2003-2009 թվականներին միջին զները բնակչության և այլ սպառողների համար կազմել են 20 և 20, 3 դրամ/կվտժ, այդ զների դեպքում էլեկտրաէներգիայի գումարային սպառումը կազմել է բնակչության համար՝ 9006,1 մլն կվտ, իսկ այլ սպառողների համար՝ 16322,2 մլն կվտ: 2013 թ. համար կատարված հաշվարկում ներառվել են միայն առաջին երեք եռամսակային տվյալները:

Հայաստանում արտադրված էլեկտրաէներգիայի մեծ մասը սպառվում է հենց ՀՀ-ում: Օրինակ 2010 և 2011 թվականներին Հայաստանի ներքին շուկայում սպառվել է համապատասխանաբար մոտ 5.3 և 5.8 մլրդ կվտժ էլեկտրաէներգիա: 2011 թ. ՀՀ-ում արտադրված 7.1 մլրդ կվտժ էլեկտրաէներգիայի մոտ 82 %-ը (5.8 մլրդ կվտժ) սպառվել է Հայաստանի ներքին շուկայում: ՀՀ-ում էլեկտրաէներգիայի նկատմամբ սակագները որոշվում են օրենքի սահմաններում, հետևաբար զնի տատանումների նկատմամբ պահանջարկի գնահատումը ոչ մի արդյունք չտվեց: Պահանջարկի գնահատումը կատարել ենք ավտոռեգրեսիոն վերլուծության միջոցով, այսինքն առաջ ենք քաշել այն վարկածը, որ սպառողների ներկայացրած էլեկտրաէներգիայի պահանջարկը տվյալ պահին կախված է իր նախորդ պահերի ընդունած արժեքներից: Սպառողների համար առանձնացրել ենք երկու խոշոր խումբ՝ բնակչություն և այլ սպառողներ, որոնց մեջ մտնում են բյուջետային կազմակերպությունները, արդյունաբերություն, տրանսպորտ և այլն:

Բնակչության կողմից էլեկտրաէներգիայի սպառման ( $D_p$ ) աճի տեմպը կախված է իր նախորդ ժամանակահատվածի սպառման աճի տեմպից,

$$\ln(D_p)_t = 4,896 + 0,2343 * \ln(D_p)_{t-1}$$

Նման կախվածությունը բացատրում է այն փաստը, որ սպառման ֆունկցիան պարբերական ֆունկցիա է և ունի սեզոնային միտում: Գնահատված մոդելը նշանակալի է:

Այլ սպառողների էլեկտրաէներգիայի սպառումը ( $D_o$ ) գնահատելիս որպես անկախ փոփոխական դիտարկել ենք հանրապետություն ներմուծած գազի ծավալը: էլեկտրաէներգիայի արտադրությունում գազի ծախսերը գերակշիռ մաս են կազմում, հետևաբար ընտրված փոփոխականի ծավալային փոփոխությունը կունենա իր ազդեցությունը էլեկտրաէներգիայի սպառման վրա: Գնահատվել է ռեգրեսիոն մոդել, որպես մեթոդ ընտրվել է գծայինը, ստացված բանաձևը հետևյալն է.

$D_o = 188,296 + 0,321 * Q_g$ : Դետերմինացիայի գործակիցը 0,45 է, գործակիցները նշանակալի են:

### Հավասարակշռության պայմանները էլեկտրաէներգիայի մատակարարման շղթայի համար

Մատակարարման շղթայի (ՄՇ-ի) հիմնական նպատակն է գործառնական արդյունավետության բարձրացումը, ֆիրմաների և մատակարարման շղթայի գործընկերների շուկայում շահութաբեր և մրցակցային դիրքի ապահովումը: Հավասարակշռություն ասելով հասկանում ենք էլեկտրաէներգիայի այն քանակը, որի դեպքում մատակարարման շղթայի հանգույցներից յուրաքանչյուրի վարքը օպտիմացվում է: Արտադրողներից դեպի մատակարարներ տեղափոխված էլեկտրաէներգիայի քանակը հավասարակշռության դեպքում պետք է համապատասխանի այն քանակին, որ մատակարարները ստանում են: Ինչպես նաև էլեկտրաէներգիայի քանակը, որ սպառողները ստանում են պետք է հավասար լինի այն քանակին, որ մատակարարները մատակարարում են: Այդ դեպքում միևնույն աղբյուրի վրա արտադրանքի հոսքը պետք է համապատասխանի մատակարարման շղթայի յուրաքանչյուր անդամի օպտիմալ պայմանների համախմբությանը:

ՀՀ էլեկտրաէներգետիկ շուկայի յուրաքանչյուր հանգույցի համար ստացել ենք օպտիմացման պայմանները: Եթե համադրենք հանգույցների օպտիմացման խնդիրները, ապա կարող ենք ստանալ նաև մատակարարման շղթայի հավասարակշռության պայմանը:

### Գրականության ցանկ

1. **Hokey Min** and **Gengui Zhou**. Supply chain modeling: past, present and future // University of Louisville, July 2002, pp. 231–249.
2. **A. Nagurney** and **D. Matsypura**. A Supply Chain Network Perspective for Electric Power Generation, Supply, Transmission, and Consumption // University of Massachusetts, May, 2004; revised January 2005, pp. 3-27.
3. **Dominik MØst** and **Dogan Keles**. A survey of stochastic modelling approaches for liberalised electricity markets // UniversitØt Karlsruhe, December 2010, pp. 543–556.

### ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում ուսումնասիրվում է ՀՀ էլեկտրաէներգետիկ շուկայի համար մատակարարման շղթայի ցանցային մոդելը, որտեղ որպես հանգույցներ դիտարկվում են էլեկտրաէներգիա արտադրող կայանները, մատակարարները և սպառողները: Կատարվում է էլեկտրաէներգետիկ շղթայի հանգույցների միջև էլեկտրաէներգիայի հավասարակշիռ հոսքի քանակական գնահատում:

**АННОТАЦИЯ****МАРУХЯН В., КАКОСЯН А. – МОДЕЛИРОВАНИЕ ЦЕПИ ПОСТАВОК ЭЛЕКТРО-ЭНЕРГИИ В РА**

В статье исследуется сетевая модель цепи поставок для рынка электроэнергии РА, где узлы - генераторы электроэнергии, поставщики и потребители. Описывается оптимальное поведение для лиц принимающих решения в цепи поставок и условия общего равновесия. Представляются качественные свойства шаблона равновесия.

**SUMMARY****MARUKHYAN V. , KAKOSYAN A. – MODELLING OF ELECTRICITY SUPPLY CHAIN NETWORK IN RA**

The article states the supply chain network model for RA electricity market, where supply chain nodes are electric power generators, power suppliers and consumers it describes decision-makers' optimal behavior and equilibrium conditions as well as. Qualitative properties of the equilibrium pattern.

**ԹԱՄԱՐԱ ՉՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ**

ԵՊՀ կառավարման և գործարարության  
ամբիոնի ասպիրանտ  
Էլ.փոստ՝ tamhovhannisyanyan@yahoo.com

**ԱՊՈՒԳԱ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉՈՒ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ  
ՁԻՐՔԻ ՉԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

**Ներածություն**

Սկսած Գռոմի անկումից (մ.թ. 476) մինչև 18-րդ դարը արևմուտքում մեկ շնչի հաշվով ազգային հարստության կուտակման աճ չի գրանցվել: Ձեռնարկատիրության հայտնությանն ու զարգացմանը համընթաց այս ցուցանիշը, ինչպես նաև մեկ շնչի հաշվով եկամուտն սկսեց աճել երկրաչափական պրոգրեսիայով (20%-ով 1700-ականներին, 200%-ով 1800-ականներին, 740%-ով 1900-ականներին)<sup>1</sup>: Ձեռնարկատիրության ու ձեռնարկատերերի ուսումնասիրության անհրաժեշտությունն այսօր կա, որովհետև զարգացած երկրների համար ձեռնարկատիրական գործունեությունը տնտեսության աշխուժության, վերակենդանացման, գործազրկության դեմ պայքարի, տեխնոլոգիական զարգացման ինկուբատորների ստեղծման միջոց է: Իսկ զարգացող երկրների համար, ինչպիսին Հայաստանն է, ձեռնարկատիրությունը պետք է լինի շարժիչ ուժ և լծակ տնտեսության զարգացման, նոր աշխատատեղերի ստեղծման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, հասարակության միջին խավի ձևավորման, երկրում սոցիալական և քաղաքական կայունության ապահովման համար:

Երիտասարդ և պոտենցիալ կառավարիչների, մասնավորապես բուհերի շրջանավարտների համար ձեռնարկատիրական գործունեության մի շարք խոչընդոտների կողքին (բիզնեսի սխալ պլանավորումը, պետական կառույցների և ձեռնարկությունների միջև թույլ կապը, ցածր մրցունակությունը, բիզնեսի զարգացման ծառայությունների ու թրեյնինգների պակասը, ֆինանսական ռեսուրսների դժվար հասանելիության արդյունքում հնարավորությունների ու ցանկությունների անհամապատասխանությունը և գործունեության միջազգայնացման խոչընդոտները) բուհն ավարտելուց հետո ավելանում է նաև կարիերայի սխալ ընտրությունը: Սա արդյունք է նաև սխալ մասնագիտության ընտրության: Շատ հաճախ ծնողներն իրենց անկատար երազանքների իրականացումը տեսնում են երեխաների մեջ՝ նրանց նախապես թելադրելով այս կամ այն մասնագիտությունը: Իրականում ամեն ինչ այդքան էլ հեշտ չէ: Մասնագիտության գիտակցված ընտրությունը պետք է կատարվի հաշվի առնելով անձնային հատկությունները: Նրանք, անցնելով վարձու աշխատանքի, տարիներ հետո զոջում

<sup>1</sup> Drayton, W. The citizen sector transformed, in Parrish, G. (Ed.), Leading Social Entrepreneurs, Preface, Ashoka: Innovators for the Public, Arlington, VA., 2004, շարադրված է ըստ՝ Patrick J. Murphy, Jianwen Liao, Harold P. Welsch, A conceptual history of entrepreneurial thought, *Journal of Management History*, 2006, Vol. 12 Iss: 1, pp.12 – 35.

են, որովհետև հաշվի առնելով բնավորության գծերն ու անձնային հատկությունները՝ իրենց պատկերացնում են միայն որպես ինքնագործունյա կամ ձեռնարկատեր: Պատկերը նաև հակառակն է լինում, երբ համապատասխան ձիրք ու ունակություններ չունենալով, սկսում են զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ: Ինչպես գրում է Ֆրանկ Նայթը. «...ցանկությունն ու ձիրքը կազմում են ձեռնարկատիրության առաջարկի գործոնները...բայց ցանկությունը կտանի դեպի ռեսուրսների վատնում, եթե բացակայում է այդ ձիրքը»<sup>1</sup>:

Ձեռնարկատիրական ձիրքի ու ձեռքբերումների պահանջունքի, վերահսկողության լոկուսի, անորոշության նկատմամբ տոլերոնտության, ռիսկի և նորարարության հակվածության, ինքնավստահության կապի վերաբերյալ տարբեր երկրներում MBA ուսանողների շրջանակներում կատարվել են բազմաթիվ հետազոտություններ:1993 թվականին առաջին անգամ այսպիսի էմպիրիկ հետազոտություն կատարել է Հոն Կոնգուն Նանյանգի տեխնոլոգիական համալսարանի դոկտոր-պրոֆեսոր Հիան Շի Կոն (Hian Chye Koh):Նա ուսումնասիրել է 54 MBA ուսանողների: Նրանից հետո համարյա նույն գործիքներով ու մեթոդներով հետազոտությունը կատարվել է մի շարք համալսարաններում (Մասաչուսեթսի տեխնոլոգիական համալսարան, Պորտ Էլիզաբեթի համալսարան, Մալազիայի UNITAR համալսարան, Արևելյան Կարոլինայի համալսարան, Իրանի Ազադի իսլամական համալսարան և այլն):

Հեղինակի կողմից սույն հետազոտությունը կատարվել է 2013 թվականին 261 ապագա կառավարիչների և 256 վարձու աշխատողների շրջանակներում: Այն ունի մի քանի առավելություններ վերը թվարկված հետազոտությունների համեմատ՝

1. Այն ընդգրկում է ոչ թե հանրապետության մեկ բուհի մագիստրանտների, այլ հինգ բուհերի (ԵՊՀ՝ տնտեսագիտության ֆակուլտետի ինովացիոն և գործարար կառավարում մասնագիտացումներ, ԵՊՏՀ՝ մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման և կառավարման ֆակուլտետներ, ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի կառավարում և բիզնես կառավարում մասնագիտացումներ, Հայաստանի ազգային ագրարային համալսարան՝ ագրոբիզնեսի, ագրարային արտադրության էկոնոմիկա և կառավարում, սննդարդյունաբերության էկոնոմիկա և կառավարում մասնագիտացումներ և Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա):

2. Այն մագիստրանտների հետազոտությունից ստացված արդյունքները համեմատում է վարձու աշխատողների նույն հետազոտության տվյալների հետ: Ընդ որում վարձու աշխատողները ՀՀ ֆինանսական, արդյունաբերության, առևտրի, տեղեկատվական տեխնոլոգիաների և ծառայության ոլորտների մշտական աշխատավարձ ստացող 20-60 տարեկան անձինք են:

3. Այն ստուգում ու վերլուծում է այդ անձնային հատկությունների և վարձու աշխատողների՝ հանուն ձեռնարկատիրական գործունեության իրենց աշխատանքը լքելու պատրաստականության կապը:

<sup>1</sup> Knight, F.H. Risk, Uncertainty and Profit, G.J. Stigler (ed.), University of Chicago Press, Chicago, 1971 (հետագայում՝ «Knight, F.H. Risk...»).

4. Ձեռնարկատիրական ձիրքի վերաբերյալ նմանատիպ խոր հետազոտությունն Հայաստանի Հանրապետությունում վերջին 20 տարիների ընթացքում չի կատարվել:

**Չետագոտության հիմնախնդիրը** կայանում է նրանում, որ բացահայտվի թե արդյո՞ք կան որոշակի անձնային հատկություններ, որոնք պայմանավորում են անձի ձեռնարկատիրական ձիրքը: Որո՞նք են դրանք, արդյո՞ք դրանք տարբերվում են ըստ տարիքի, զբաղմունքի, սեռի և այլն: Արդյոք այդ անձնային հատկությունների միջին ցուցանիշները տարբեր են ապագա կառավարիչների և վարձու աշխատողների շրջանակներում: Եվ վերջապես արդյո՞ք այդ անձնային հատկությունները կարող են պայմանավորել վարձու աշխատողների պատրաստակամությունը հանուն ձեռնարկատիրական գործունեության լքելու իրենց մշտական աշխատանքը, երբ

ա. երաշխավորվի իրենց ներկայիս ամսական աշխատավարձի չափով եկամուտ,

բ. երաշխավորվի իրենց ներկայիս ամսական աշխատավարձից կրկնապատիկ ավել եկամուտ:

**Հիպոթեզ 1.** Ձեռնարկատիրական ձիրքով օժտված և ձեռնարկատիրական ձիրքով չօժտված մարդիկ ունեն ձեռքբերումների միևնույն պահանջումները:

**Հիպոթեզ 2.** Ձեռնարկատիրական ձիրքով օժտված և ձեռնարկատիրական ձիրքով չօժտված մարդիկ իրենց կյանքում առաջնորդվում են ներքին, այլ ոչ թե արտաքին լոկուսով: Այսինքն իրենց հետ կատարվող և՛ լավ, և՛ վատ իրադարձությունները կապում են իրենց, այլ ոչ թե արտաքին գործոնների հետ(ինտերնալիստներ են):

**Հիպոթեզ 3.** Ձեռնարկատիրական ձիրքով օժտված և ձեռնարկատիրական ձիրքով չօժտված մարդիկ ունեն ռիսկի միևնույն հակվածությունը:

**Հիպոթեզ 4.** Ձեռնարկատիրական ձիրք ունեցողները և ձեռնարկատիրական ձիրք չունեցողներն ունեն անորոշության նկատմամբ միևնույն տոլերանտությունը, այսինքն համբերատարություն ու հանդուրժողականություն անորոշության նկատմամբ:

**Հիպոթեզ 5.** Ձեռնարկատիրական ձիրք ունեցողները և ձեռնարկատիրական ձիրք չունեցողներն ունեն ինքնավստահության միևնույն մակարդակը :

**Հիպոթեզ 6.** Ձեռնարկատիրական ձիրք ունեցողները և ձեռնարկատիրական ձիրք չունեցողները նորարարության նկատմամբ ունեն միևնույն հակումը:

**Հիպոթեզ 7.** Վերը նշված 6 անձնային հատկությունների միջին ցուցանիշները ավելի բարձր են ապագա կառավարիչների մոտ քան վարձու աշխատողների մոտ:

**Հիպոթեզ 8.** Վարձու աշխատողների պատրաստակամությունը լքելու իրենց աշխատանքը հանուն ձեռնարկատիրական գործունեության առկա է միայն արական սեռի, ավելի երիտասարդ ու ռիսկի ավելի մեծ հակվածություն ունեցող անձանց մոտ:

**Հիմնախնդրի լուծման նպատակով** հայ պատասխանողների համար ադապտացվել է Հոն Կոնգի Նանյանգի տեխնոլոգիական համալսարանի դոկտոր-պրոֆեսոր Հիան Շի Կոի կողմից տրամադրված հարցաթերթիկը: Հատուկ հարցերին պատասխանելուց հետո պարզ դարձավ, որ 261 մագիստրանտներից 47.5%-ը ունեն ձեռնարկատիրական ձիրք, իսկ 52.5%-ը՝ չունեն:

*Աղյուսակ 1*

**Ձեռնարկատիրական ձիրք ունեցող և չունեցող ապագա կառավարիչները**

Ձեռնարկատիրական ձիրք ունի	124	47.5%
Ձեռնարկատիրական ձիրք չունի	137	52.5%
Ընդ.	261	100.0%

*Աղյուսակ 2*

**Ձեռնարկատիրական ձիրքը պայմանավորող անձնային հատկությունները**

Ձեռնարկատիրական ձիրքը պայմանավորող առանձնահատկությունները	Asymp. Sig. (2-tailed)
Ինքնավստահություն	0.001
Անորոշության նկատմամբ տոլերանտություն	0.000
Նորարարության նկատմամբ հակվածություն	0.000
Ռիսկի նկատմամբ հակվածություն	0.009
Վերահսկողության լոկուս	0.027
Ձեռքբերումների պահանջմունք	0.406

Այսպիսով, ձեռնարկատիրական ձիրքով օժտված մագիստրանտներն ավելի ինքնավստահ են, ավելի շատ են հակված նորարարության ու ռիսկի, անորոշության նկատմամբ ավելի տոլերանտ են և չափավոր ինտերնալիստ, այսինքն հերքվում են հիպոթեզներ 2,3,4,5,6-ը: Չնայած այլ երկրներում համանման հետազոտություններում ստացվում է, որ նրանք ձեռքբերումների նկատմամբ ունեն ավելի շատ պահանջմունքներ, սակայն սույն հետազոտությունը հերքում է դա, այսինքն հաստատվում է հիպոթեզ 1-ը: Միգուցե սրա պատճառն այն է, որ նույնիսկ այս տարիքում մագիստրանտների մոտ առկա է ընտանեկան վերահսկողություն և ինքնուրույնության բացակայություն: Դեռևս Մաքս Վեբերը իր «Բողոքականության էթիկան և կապիտալիզմի ոգին» դասական աշխատության մեջ, առաջ քաշելով բողոքականության էթիկայի ու կապիտալիզմի ոգու միջև կապի վարկածը, պնդում է, որ եթե երեխան դաստիարակվի բողոքականության ոգով նրա մոտ կզարգանա ինքնուրույնություն, պատասխանատվություն, աշխատասիրություն և հետևաբար ձեռքբերումների նկատմամբ ավելի մեծ ձգտում:

Որպեսզի ստուգվի հիպոթեզ 7-ը նույն հարցաթերթիկներով հետազոտվեցին 33 ֆինանսական, արդյունաբերության, առևտրի, տեղեկատվական տեխնոլոգիաների և ծառայության ոլորտների մշտական աշխատավարձ ստացող 20-60 տարեկան 256 պատահական վարձու աշխատողներ: Ինչպես վարձու աշխատողների դեպքում, այնպես էլ ապագա կառավարիչների դեպքում Լայկերտի սանդղակով զնահատվող 30 հարցերի համար կատարվեց գործոնային վերլուծություն և՛ Principal components և՛ Principal axis factoring վարիմաքս եղանակներով, որպեսզի համոզվենք, որ պատասխանողները անձնային հատկություն-

ներին վերաբերող հարցերը ճիշտ են ընկալել: Ի տարբերություն մագիստրանտների, վարձու աշխատողները ձեռքբերումների պահանջմունքի և անորոշության նկատմամբ տոլերանտության վերաբերյալ հարցերը ճիշտ չէին ընկալել: Արդյունքում հարցերը խմբավորվել են ըստ 4 անձնային հատկությունների և ստեղծվել են 4 նոր փոփոխականներ՝ վերլուծությունից հանելով ձեռքբերումների պահանջմունքը և անորոշության նկատմամբ տոլերանտությունը

*Աղյուսակ 3*

**Հաճախականության տվյալներ**

<b>Հաճախականության նկարագրություն (261 մագիստրանտ)</b>	
<b>Ձեր մեջ տեսնու՞մ եք ձեռնարկատիրական ունակություններ</b>	
ոչ	5.7%
Չգիտեմ	13.4%
Այո	80.8%
<b>Արդյոք նախատեսում եք նոր գործ ձեռնարկել նոտակա 3 տարում</b>	
Ոչ	17.2%
Չգիտեմ	29.5%
Այո	53.3%
<b>Ձեր ընտանիքում կա ձեռնարկատիրությամբ զբաղվող որևէ մեկը</b>	
Չկա	65.5%
Ես	1.9%
Հայրս	24.9%
Մայրս	1.1%
Եղբայրս	2.7%
<b>Արդյոք ներկայումս զբաղվում եք ձեռնարկատիրությամբ</b>	
Ոչ	88.9%
Այո	11.1%
<b>Ընտանիքի որերոջ երեխան եք</b>	
Առաջին	46.7%
Երկրորդ	35.2%
Երրորդ	17.2%
Չորրորդ և ավելի	0.8%
<b>Արդյոք ամուսնացած եք</b>	
ոչ	90.8%
այո	9.2%
<b>Տարիք</b>	
Մինչև 20	2.7%
21-25	89.7%
26-30	5.4%
30-ից բարձր	2.3%
<b>սեռ</b>	
իգական	73.9%
արական	26.1%

<b>Հաճախականության նկարագրություն (256 վարձու աշխատող)</b>	
<b>Արդյո՞ք կգբաղվեիք ձեռնարկատիրությամբ, եթե երաշխավորվեր նույնքան ամսական եկամուտ որքան հիմա էք ստանում</b>	
ոչ	59.4%
այո	40.6%
<b>Արդյո՞ք կգբաղվեիք ձեռնարկատիրությամբ, եթե երաշխավորվեր կրկնակի շատ ամսական եկամուտ որքան հիմա էք ստանում</b>	
ոչ	19.9%
այո	80.1%
<b>Ձեր ընտանիքում կա ձեռնարկատիրությամբ զբաղվող որևէ մեկը</b>	
չկա	78%
Ամուսին/կին	8.3%
հայր	8.3%
մայր	2.0%
եղբայր	3.1%
զավակ	0.4%
<b>Ընտանիքի որերրդ երեխան էք</b>	
Առաջին	43.9%
երկրորդ	36.8%
երրորդ	13.8%
չորրորդ	4.3%
հինգերորդ և ավելի	1.2%
<b>Արդյոք ամուսնացած էք</b>	
ոչ	44.7%
այո	55.3%
<b>Տարիք</b>	
20-25	25.5%
26-30	28.3%
31-35	19.5%
36-40	10.8%
41-45	7.2%
46-50	3.2%
51-55	3.2%
56-60	2.4%
<b>սեռ</b>	
իգական	73%
արական	27%

Համեմատվել են մագիստրանտների ու վարձու աշխատողների վերահսկողության լոկուսի, ռիսկի նկատմամբ հակվածության, ինքնավստահության ու նորարարության հակման միջին ցուցանիշները (աղ. 4):

*Աղյուսակ 4*

**Վարձու աշխատողների և անձնային հատկությունների միջինների համեմատությունը**

	վարձու աշխատող (միջին)	ապագա կառավարիչ (միջին)
Վերահսկողության լոկուս (ինտերնալություն)	3.52	3.91
Ռիսկի հակվածություն	<b>3.45</b>	<b>2.29</b>
Ինքնավստահություն	2.67	3.40
Նորարարության հակվածություն	3.75	4.09

Ինչպես երևում է աղ. 4-ից մագիստրանտներն ավելի ինտերնալիստ են, այսինքն իրենց կյանքում կողմնորոշվում ու առաջնորդվում են վերահսկողության ներքին լոկուսով: Նրանք նորարարության նկատմամբ ավելի մեծ հակումներ ունեն և ավելի ինքնավստահ են, քան վարձու աշխատողները: Միակ հատկության միջինը, որ վարձու աշխատողների մոտ ավելի բարձր է, դա ռիսկի նկատմամբ հակվածությունն է, այսինքն հիպոթեզ 8-ը հաստատվում է նորարարության հակման, ինքնավստահության և վերահսկողության լոկուսի համար, իսկ ռիսկի հակվածության համար՝ հերքվում է:

Որպեսզի աղյուսակ 4-ի տվյալների կայունությունն ստուգվի, վերցվեց վարձու աշխատողների ու մագիստրանտների միանման խմբեր, այսինքն առաջին դեպքում՝ միայն մինչև 25 տարեկան անձինք, երկրորդ դեպքում՝ միայն մինչև 25 տարեկան ամուսնացած անձինք, իսկ երրորդ՝ դեպքում միայն մինչև 25 տարեկան չամուսնացած անձինք (աղ. 5,6,7): Արդյունքում ստացվեց, որ բոլոր դեպքերում էլ մագիստրանտներն ավելի շատ են հակված նորարարության, ավելի ինտերնալիստ են ու ինքնավստահ:

Ստացված արդյունքները վկայում են այն մասին, որ եթե վարձու աշխատողները լինեին ավելի ինտերնալիստ, ավելի ինքնավստահ ու ավելի շատ հակված լինեին նորարարության, նրանք չէին լինի վարձու աշխատողներ, այլ կգրադվեին ձեռնարկատիրական գործուներությամբ:

*Աղյուսակ 5*

	վարձու աշխատող մինչև 25 տարեկան (միջին)	մագիստրանտ մինչև 25 տարեկան (միջին)
Վերահսկողության լոկուս	<b>3.68</b>	<b>3.90</b>
Ռիսկի հակվածություն	3.53	2.28
Ինքնավստահություն	<b>2.71</b>	<b>3.41</b>
Նորարարության հակվածություն	3.93	4.08

*Աղյուսակ 6*

	վարձու աշխատող մինչև 25տարեկան ամուսնացած (միջին)	մագիստրանտ մինչև 25 տարեկան ամուսնացած (միջին)
Վերահսկողության լոկուս	3.41	3.93
Ռիսկի հակվածություն	3.25	2.25
Ինքնավստահություն	2.91	3.31
Նորարարության հակվածություն	3.83	3.84

*Աղյուսակ 7*

	վարձու աշխատող մինչև 25 տարեկան չամուսնացած (միջին)	մագիստրանտ մինչև 25 տարեկան չամուսնացած (միջին)
Վերահսկողության լոկուս	3.71	3.91
Ռիսկի հակվածություն	3.57	2.29
Ինքնավստահություն	2.71	3.43
Նորարարության հակվածություն	3.93	4.09

Երբ վարձու աշխատողներին հարց տրվեց, թե արդյո՞ք նրանք կգբաղվեին ձեռնարկատիրությամբ, եթե երաշխավորվեր նույնքան ամսական եկամուտ, որքան հիմա են ստանում, ստացվեց, որ այդ են պատասխանում 40.6%-ը, իսկ ոչ՝ 59.4%-ը: Այս երկու խմբերի համար կատարվեց վերլուծություն ( $\chi^2$  թեսթ) ըստ ընտանիքում ձեռնարկատիրոջ առկայության, ծնվելու հաջորդականության, ամուսնական կարգավիճակի, սեռի: Իսկ ըստ տարիքի և 4 անձնային հատկությունների կատարվեց Mann-Whitney թեսթը (աղ. 8):

*Աղյուսակ 8*

**Արդյո՞ք կգբաղվեիք ձեռնարկատիրությամբ, եթե երաշխավորվեր նույնքան ամսական եկամուտ, որքան հիմա եք ստանում**

	$\chi^2$	df	Asymp. Sig. (2-sided)	correlation
Ընտանիքում ո՞վ է ձեռնարկատիրությամբ զբաղվում	11.430	5	0.043	-0.104
Ընտանիքի որերորդ երեխան եք	4.390	4	0.356	0.004
Արդյոք ամուսնացած եք	8.812	1	0.003	-0.187
Սեռը	6.616	1	0.010	-0.161

	Mann-Whitney U	Wilcoxon W	Asymp. Sig. (2-tailed)
Տարիք	5.940E3	1.119E4	0.003
Վերահսկողության լոկուս	6775.500	18403.500	0.050
Ռիսկի հակվածություն	7325.000	12785.000	0.312
Ինքնավստահություն	7872.500	13332.500	0.956
Նորարարության հակվածություն	7250.000	18878.000	0.254

Ինչպես երևում է աղյուսակ 8-ից, եթե վարձու աշխատողի ընտանիքում ձեռնարկատիրությամբ զբաղվող անձ չկա, ապա 95% ճշտությամբ նա ավելի շատ հակված է հրաժարվել ներկայիս աշխատավարձին համարժեք եկամուտ երաշխավորող ձեռնարկատիրական գործունեությունից (Sig.=0.043): Վարձու աշխատողի ծնվելու հաջորդականության և այս ընտրության միջև կապ չկա (Sig.=0.356): Մինչդեռ ամուսնական կարգավիճակը, տարիքը և սեռը խիստ ազդում են այս ընտրության վրա:

Այսպես, 99% ճշտությամբ ամուսնացած վարձու աշխատողը կիրառարվի այս առաջարկից (Sig.=0.003): Սա վկայում է այն մասին, որ ամուսնացած վարձու աշխատողը, իր ընտանիքի համար պատասխանատվություն կրելով, գերադասում է իր մշտական աշխատանքը սեփական աշխատավարձի չափով եկամուտ երաշխավորող ձեռնարկատիրական գործունեությունից, որովհետև ապրելով Հայաստանում վստահ չէ այս գործունեության կայունության հարցում: 99% ճշտությամբ տարիքի աճի հետ համընթաց նրանք հակված են հրաժարվել այս ընտրությունից (Sig.=0.003): Այսինքն ավելի երիտասարդները կիրառարվեն իրենց մշտական աշխատանքից հանուն նույն աշխատավարձի չափով եկամուտ խոստացող ձեռնարկատիրության գործունեության: 99% ճշտությամբ իգական սեռի վարձու աշխատողները հակված են հրաժարվելու միևնույն աշխատավարձը երաշխավորող ձեռնարկատիրական գործունեությունից (Sig.=0.010): Սա վկայում է այն մասին, որ արական սեռի ներկայացուցիչները, ավելի շատ հակված լինելով ռիսկային որոշումների, պատրաստ են թողնել մշտական աշխատավարձ ապահովող իրենց աշխատանքն ու զբաղվել նույնքան եկամուտ խոստացող ձեռնարկատիրությամբ:

Երբ այս բոլոր գործոնները և չորս անձնային հատկությունները դիտարկվեցին միաժամանակ, երկակի լոջիստիկ ռեգրեսիոն մոդելում (որը աղեկվատ է ըստ Չոսմեր Լեմեշովի թեսթի), ապա ստացվում է, որ «Արդյո՞ք կզբաղվեիք ձեռնարկատիրությամբ, եթե երաշխավորվեր նույնքան ամսական եկամուտ, որքան հիմա եք ստանում» հարցին դրական են պատասխանում միայն ռիսկի հակում ունեցող ավելի երիտասարդ արական սեռի վարձու աշխատողները (աղ. 9. 10): Այսինքն այս հարցի պատասխանը կախված է միաժամանակ և՛ սեռից, և՛ տարիքից, և՛ ռիսկի հակումից, հետևաբար հիպոթեզ 8-ը հաստատվում է, եթե վարձու աշխատողին երաշխավորվում է իր ամսական աշխատավարձի չափով ամսական եկամուտ:

*Աղյուսակ 9*

**Երկակի լոջիստիկ ռեգրեսիա**

Հավասարման փոփոխականները						
	B	S.E.	Wald	Df	Sig.	Exp(B)
Տարիքը	-0.285	0.090	10.029	1	0.002	0.752
Սեռը	-0.613	0.299	4.190	1	0.041	0.542
Ռիսկի նկտ. հակում	-0.454	0.197	5.309	1	0.021	0.635
հաստատուն	1.443	0.558	6.681	1	0.010	4.234
a. Variable(s) entered on step 1: tariq.						
b. Variable(s) entered on step 2: FAC4_2RH.						
c. Variable(s) entered on step 3: ser.						

<b>Հավասարմանը չմասնակցող փոփոխականները</b>			
	Score	df	Sig.
Ընտանիքում ո՞վ է ձեռնարկատիրությանը զբաղվում	1.280	1	0.258
Ընտանիքի որերորդ երեխան եք	0.043	1	0.836
Արդյոք ամուսնացած եք	3.019	1	0.082
Վերահսկողության լոկուս	0.999	1	0.318
Նորարարության հակվածություն	0.367	1	0.545
Ինքնավստահություն	0.074	1	0.786
Overall Statistics	6.907	6	0.329

*Աղյուսակ 10*

**Հոսմեր Լեմեշովի թեսթը**

Step	Chi-square	df	Sig.
1	1.375	4	0.849
2	4.255	8	0.833
3	13.163	8	0.106

Երբ վարձու աշխատողներին հարց տրվեց, թե արդյո՞ք նրանք կզբաղվեին ձեռնարկատիրությամբ, եթե երաշխավորվեր **կրկնակի** շատ ամսական եկամուտ, որքան հիմա են ստանում, այո պատասխանեց 80.1%-ը, իսկ՝ ոչ՝ 19.9%-ը: Այս երկու խմբերի համար կատարվեց խաչաձև վերլուծություն ( $\chi^2$  թեսթ)՝ ըստ ընտանիքում ձեռնարկատիրոջ առկայության, ծնվելու հաջորդականության, ամուսնական կարգավիճակի և սեռի: Իսկ ըստ տարիքի ու 4 անձնային հատկությունների կատարվեց Mann-Whitney թեսթը (աղ. 11):

*Աղյուսակ 11*

**Արդյո՞ք կզբաղվեիք ձեռնարկատիրությամբ, եթե երաշխավորվեր կրկնակի բարձր ամսական եկամուտ, որքան հիմա եք ստանում**

	$\chi^2$	Df	Asymp. Sig. (2-sided)	correlatoion
Ընտանիքում ո՞վ է ձեռնարկատիրությամբ զբաղվում	10.202	5	0.070	-0.108
Ընտանիքի որերորդ երեխան եք	1.790	4	0.774	0.001
Արդյոք ամուսնացած եք	1.120	1	0.290	-0.067
Սեռը	4.106	1	0.043	-0.127

	Mann-Whitney U	Wilcoxon W	Asymp. Sig. (2-tailed)	Sig.
Տարիքը	4.022E3	2.412E4	0.017	
Վերահսկողության լոկուս	4375.500	5701.500	0.069	
Ռիսկի հակվածություն	4585.500	5911.500	0.168	
Ինքնավստահություն	5092.500	6418.500	0.773	
Նորարարության հակվածություն	4437.500	5763.500	0.090	

Ինչպես երևում է աղյուսակ 11-ից՝ վարձու աշխատողի ընտանիքում ձեռնարկատիրությամբ զբաղվողի առկայությունը, ծնվելու հաջորդականությունը և ամուսնական կարգավիճակը կապ չունեն այս ընտրության հետ (Sig.=0.07, Sig.=0.77, Sig.=0.29): Մինչդեռ տարիքը և սեռը խիստ ազդում են այն ընտրության վրա, թե արդյո՞ք վարձու աշխատողը կլքի իր մշտական աշխատանքն ու կզբաղվի ձեռնարկատիրական գործունեությամբ, որը կապահովի երկու անգամ ավելի ամսական եկամուտ, ինչ նա ներկայում ստանում է աշխատավարձի տեսքով: 95% ճշտությամբ տարիքի աճի հետ համընթաց նրանք հակված են մնալու իրենց մշտական աշխատատեղում (Sig.=0.017): Այսինքն միայն ավելի երիտասարդները կիրառարվեն իրենց մշտական աշխատանքից հանուն կրկնակի շատ աշխատավարձի չափով եկամուտ խոստացող ձեռնարկատիրության գործունեության: 95% ճշտությամբ իգական սեռի վարձու աշխատողներն ի հակառակ արական սեռի, հակված են հրաժարվելու **նույնիսկ կրկնակի** բարձր աշխատավարձ երաշխավորող ձեռնարկատիրական գործունեությունից (Sig.=0.043):

Բայց երբ այս բոլոր գործոնները և չորս անձնային հատկությունները դիտարկում ենք միաժամանակ երկակի լոջիստիկ ռեգրեսիոն մոդելում (որն աղեկվատ է ըստ Չոսմեր Լենեշովի թեսթի), ապա ստացվում է, որ «Արդյո՞ք կզբաղվեիք ձեռնարկատիրությամբ, եթե երաշխավորվեր կրկնակի շատ ամսական եկամուտ, որքան հիմա եք ստանում» հարցին դրական են պատասխանում միայն երիտասարդ վարձու աշխատողները: Սա նշանակում է, որ վարձու աշխատողի ընտանիքում ձեռնարկատիրությամբ զբաղվողի առկայությունը, ծնվելու հաջորդականությունը, ամուսնական կարգավիճակը, սեռը, նորարարության ու ռիսկի հակվածությունները, ինքնավստահությունը և վերահսկողության լոկուսը միասին վերցրած չեն պայմանավորում նրանց այս հարցի պատասխանը: Ներկայիս աշխատավարձից երկու անգամ շատ եկամտով ձեռնարկատիրական գործունեություն ընտրում են 256 վարձու աշխատողների 80.1%-ը: Իսկ 19.9%-ը հիմնականում կամ ամուսնացած, կամ իգական սեռի, կամ էլ ընտանիքում ձեռնարկատեր անդամ չունեցող անձինք են:

Աղյուսակ 12

**Երկակի լոջիստիկ ռեգրեսիա**

Հավասարման փոփոխականները						
	B	S.E.	Wald	Df	Sig.	Exp(B)
տարիք	-.220	.084	6.765	1	.009	.803
հաստատուն	2.028	.312	42.169	1	.000	7.596
a. Variable(s) entered on step 1: tariq.						

Հավասարմանը չմասնակցող փոփոխականները			
	Score	df	Sig.
Ընտանիքում ո՞վ է ձեռնարկատիրությամբ զբաղվում	2.082	1	.149
Ընտանիքի որեորոշ երեխան եք	.209	1	.648
Արդյոք ամուսնացած եք	0.004	1	0.947
Սեռը	2.632	1	0.105
Վերահսկողության լոկուս	3.193	1	0.074
Նորարարության հակվածություն	2.287	1	0.130

Ինքնավստահություն	1.483	1	0.223
Ռիսկի հակվածություն	0.012	1	0.911
Overall Statistics	6.907	6	0.329

Hosmer and Lemeshow Test			
Step	Chi-square	df	Sig.
1	1.166	4	0.884

## Եզրակացություններ

1. Մագիստրանտները առաջնորդվում են իրենց ներքին լոկուսով, այսինքն ավելի ինտերնալիստ են, ունեն ավելի մեծ ինքնավստահություն ու ավելի շատ նորարարության հակվածություն, քան վարձու աշխատողները: Սա ևս մեկ անգամ հաստատում է 2013 թվականի ապրիլ-մայիս ամիսներին կատարված հետազոտության այն արդյունքները, որ ձեռնարկատիրական ձիրքով օժտված մագիստրանտները նորարարության ավելի մեծ հակում ունեն, ինտերնալիստ են ու ավելի ինքնավստահ: Չէ՞ որ, եթե այս 256 վարձու աշխատողների մոտ վերը նշված անձնային հատկությունների միջին ցուցանիշներն ավելի բարձր լինեին, ապա նրանք վարձու աշխատող չէին լինի: Միայն ռիսկի հակվածության միջին ցուցանիշն է, որ ապագա կառավարիչների մոտ ավելի ցածր է քան վարձու աշխատողների մոտ: Միգուցե սրա պատճառը պոստեմպիալ կառավարիչների ձեռնարկատիրական գործունեության փորձի պակասն է (նրանց միայն 11.1%-ն է ներկա ձեռնարկատեր): Ամեն դեպքում չնայած ձեռնարկատիրական ձիրքով օժտված անձինք պետք է ունենան ռիսկի նկատմամբ մեծ հակում, տարբեր երկրների լայնածավալ էմպիրիկ հետազոտությունները ցույց են տվել, որ թե միաչափ (univariate), թե բազմաչափ (multivariate) մակարդակներում հնարավոր չէ միանշանակ պատասխանել այն հարցին, թե արդյոք ձեռնարկատերերի ռիսկի հակումը մեծ է, թե՞ ոչ: 2004 թվականին բազմաթիվ մետավերլուծություններից հետո Մայները և Ռեյուն եզրակացնում ու հայտարարում են, որ ռիսկի հետ կապված այս խնդիրը դեռևս մնում է անլուծելի<sup>1</sup>: Գուցե պատճառն այն է, որ մինչև հիմա ռիսկի հակվածությունը ճիշտ եղանակով չափող գործիքներ դեռևս գիտնականները չունեն: Գուցե ավելի ճիշտ կլինի այն չափել էքսպերիմենտալ-լաբորատոր խաղերի միջոցով, քան հարցաթերթիկների: Նույնիսկ դասական տնտեսագետների մեջ (Կանտիլիոն, Սեյ, Շումպետեր, Կիրզներ, Նայթ, Սարշալ) չկա համընդհանուր կարծիք կապված ձեռնարկատիրության ու ռիսկի գնալու մասին: Ըստ Նայթի ձեռնարկատերը գործ ունի ոչ թե ռիսկի, այլ անորոշության հետ<sup>2</sup>: Սա դեռևս մնում է բաց հարց ձեռնարկատիրության տնտեսագիտության մեջ:

2. Այս անձնային հատկություններից միայն ռիսկի հակումն է, որ պայմանավորում է վարձու աշխատողների պատրաստակամությունը լքելու իրենց մշտական աշխատանքը, երբ երաշխավորվում է նույնքան ամսական եկամուտ, ինչ-

<sup>1</sup> Miner, J. B. and N. S. Raju. Risk propensity differences between managers and entrepreneurs and between low- and high-growth entrepreneurs: a reply in a more conservative vein, *Journal of Applied Psychology*, 2004, 89(1), pp. 3–13.

<sup>2</sup> Stu Knight, F.H. Risk...

քան իրենց անսակաճ աշխատավարձն է: Դրա փոխարեն այնպիսի դեմոգրաֆիական գործոնները, ինչպիսիք են տարիքը և սեռը խիստ ազդում են այս ընտրության վրա: Այսինքն միայն արական սեռի, ավելի երիտասարդ ու ռիսկի հակում ունեցող աշխատողները կլքեն իրենց աշխատանքը, եթե համոզված են, որ կստանան իրենց աշխատավարձին համարժեք եկամուտ: Սա նշանակում է, որ նրանց համար նյութական օգուտից բացի կարևոր է նաև աշխատանքային ավելի լավ պայմանները, անկախությունը, ունակությունների ավելի լավ իրացումը, որն ապահովում է ձեռնարկատիրական գործունեությունը:

3. Ինչ վերաբերում է կրկնակի ավելի աշխատավարձի չափով եկամուտ խոստացող ձեռնարկատիրությանը, ապա 80.1%-ը համաձայն են լքել իրենց աշխատանքը: Չեն լքի միայն ամուսնացածները, իգական սեռի ներկայացուցիչները և ընտանիքում ձեռնարկատեր անդամ չունեցողները:

Չնայած այն փաստին, որ վարձու աշխատողների 80.1%-ը, լքելով իրենց աշխատանքը, կհամաձայնի ձեռնարկատիրությամբ զբաղվել՝ իրենց աշխատավարձի համեմատ կրկնակի մեծ եկամտով, այնուամենայնիվ պետք է գործի էդուլարդ Լազրի առաջարկած “jack-of-all-trades” կամ JAT վարկածը՝ ըստ որի ձեռնարկատիրոջ համար կրթությունը, փորձն ու հմտությունները որքան հնարավոր է պետք է բազմազան լինեն<sup>1</sup>: Այսինքն, ասում են ձեռնարկատերը պետք է լինի ջեներալիստ (generalist), իսկ աշխատողները՝ մասնագետներ (specialist):

Իհարկե այսօր Հայաստանի տնտեսությանն անհրաժեշտ են և՛ լավ նեղ մասնագետներ (specialist), և՛ լավ ջեներալիստներ կամ ձեռնարկատերեր (generalist): Խնդիրը նրանում է, որ այս երկու ճանապարհներից մեկն ընտրելիս, անձը պետք է հաշվի առնի և ունենա գործիք գնահատելու իր անձնային հատկություններն ու ձեռնարկատիրական ձիքը: Այլապես ինչպես գրում է Ֆրանկ Նայթը՝ «...ցանկությունը կտանի դեպի ռեսուրսների վատնում, եթե բացակայում է այդ ձիրքը»<sup>2</sup>:

Այս հետազոտությունը՝ մասնավորապես հարցաթերթիկը, ունի պրակտիկ նշանակություն: Աշխատանքի և սոցիալական հարցերով նախարարությանը կից «Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոնը» ցանկություն է հայտնել օգտագործելու այս կողմնորոշիչ հարցաթերթիկը: Սրա հետ համադրելով հոգեբանական անհատական հարցազրույցներ՝ 2014 թվականից ՀՀ-ում կներդրվի ողջ կյանքի ընթացքում, սկսած ավագ դպրոցի աշակերտներից ավարտած սոցիալ-աշխատանքային տարբեր իրավիճակներում գտնվող անձանց մասնագիտության արդյունավետ ընտրության, փոփոխության և կարիերայի շարունակական զարգացման համակարգ՝ հաշվի առնելով մարդու անձնային հատկությունները, ինչպես նաև աշխատաշուկայի պահանջարկի փոփոխվող իրավիճակը:

<sup>1</sup> Lazear, E. P. Entrepreneurship, *Journal of Labor Economics*, 2005, 23(4).

<sup>2</sup> Stbu Knight, F.H. Risk...

**ԱՍՓՈՓՈՒՄ**

Հոդվածում ուսումնասիրվում են ձեռնարկատիրական ձիրքի ու անձնային բնութագրիչների փոխկապակցվածության մասին վարկածները, ՀՀ հինգ բուհերի 261 կառավարման մագիստրանտների ու մշտական աշխատանք ունեցող 256 աշխատողների՝ տնտեսության տարբեր ոլորտներից, հարցման հիման վրա: Հետազոտվում են այն գործոններն ու անձնային հատկանիշները, որոնք ազդում են վարձու աշխատողների իրենց մշտական աշխատանքը հանուն ձեռնարկատիրական գործունեության լքելու հնարավոր որոշման վրա:

**АННОТАЦИЯ****ОГАНЕСЯН Т. – СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ПРЕДПРИНИМАТЕЛЬСКОЙ СКЛОННОСТИ БУДУЩИХ МЕНЕДЖЕРОВ И НАЁМНЫХ РАБОТНИКОВ**

В статье исследуются гипотезы о взаимосвязи предпринимательской склонности и психологических характеристик, на основе опроса 261 MBA магистрантов из пяти Армянских вузов и 256 наемных работников из разных сфер экономики. Изучаются факторы и характеристики, влияющие на потенциальное решение покинуть стабильную работу и начать собственный бизнес.

**SUMMARY****HOVHANNISYAN T. – THE COMPARATIVE ANALYSIS OF FUTURE MANAGERS' AND WAGE EMPLOYEES' ENTREPRENEURIAL INCLINATION**

In the article the hypotheses about the relationship of entrepreneurial inclination and psychological characteristics are researched based on survey of 261 MBA graduate students from Armenian 5 universities and 256 wage employees. Factors and characteristics influencing the potential decision of an employee to leave his or her stable occupation and to start his or her own business are investigated.

**ԱՐԱՍ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

*տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
ԵՊՀ տնտեսագիտության մեջ մաթեմատիկական  
մոդելավորման ամբիոնի վարիչ  
Էլ. փոստ՝ aram.arakelyan@ysu.am*

**ՆԱՐԵԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ**

*ԵՊՀ հավանականությունների տեսության և  
մաթեմատիկական վիճակագրության  
ամբիոնի ասպիրանտ  
Էլ. փոստ՝ n.melkonyan@ysu.am*

**ԱԿՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՎԿՃԱՐՆԵՐԻ ԵՎ ՎՅԱՐՆԵՐՈՎ  
ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԿՈՐՈՒՄՏՆԵՐԻ ՓՈԽԿԱՆՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ**

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Գոյություն ունի տնտեսագիտական տեսություն, որն ապահովագրվողի կորուստների մաթեմատիկական սպասման միջոցով բացատրում է, թե ինչու ապահովագրվողները պատրաստակամ են վճարել ապահովագրության համար ավելի մեծ ապահովագրական գումար, քան նետոտ դրույքաչափն է: Այդ տեսության համաձայն որոշում կայացնողը, հիմնականում չգիտակցելով, իր հարստությանը վերագրում է օգտակարության արժեք, որը կոչվում է օգտակարության ֆունկցիա: Ընդհանրապես անհնար է ճշգրիտ որոշել անհատի օգտակարության ֆունկցիան, սակայն կիրառելով կորստից խուսափելու չափը ըստ Պրատի [1], օգտակարության ֆունկցիան ավելի հարմար է դառնում օգտագործման համար: Այս աշխատանքում, որպես օգտակարության ֆունկցիա դիտարկվել է լոգարիթմական օգտակարության ֆունկցիան [2]: Անհատը համեմատում է հնարավոր կորուստների օգտակարության մաթեմատիկական սպասումը (երբ նա չի ապահովագրվում) ու ապահովագրման արդյունքում ստացված օգտակարությունը և ընտրում է այն դեպքը, որից նրա սպասվող օգտակարությունը ավելի մեծ է: Ընդհանրապես ապահովագրավճարների հաշվարկման հիմքում ընկած է հնարավոր կորուստների մաթեմատիկական սպասումը, սակայն սպասվող օգտակարության տեսության օգնությամբ նաև հաշվարկվում է ապահովագրավճարի մաքսիմալ չափը, որը գերազանցվելու դեպքում անհատին օգտակար չի լինի ապահովագրության ձեռքբերումը: Այսպիսով, հնարավոր է դառնում միմիմալ և մաքսիմալ ապահովագրավճարների համար տալ քանակական գնահատականներ: Այդ գնահատականներից է հանդիսանում հնարավոր կորուստների և մաքսիմում ապահովագրավճարների միջև գոյություն ունեցող փոխկապակցվածությունը: Ընդհանրապես պետությունը հնարավորություն ունի ազդելու հնարավոր կորուստների չափերի վրա՝ մասնավորապես ավտոմեքենաների ապահովագրության մեջ հնարավոր է մեծացնել կորուստների չափերը՝ ավելացնելով մաքսային տուրքերը ներմուծվող ավտոմասերի համար, մեծացնելով հարկային պարտավոր-

րությունները այդ ոլորտում և այլն: Հնարավոր կորուստների չափերի մեծանալուն զուգնթաց կավելանա նաև ապահովագրավճարների մաքսիմալ չափը և այս գործնթացը օպտիմալ կառավարելու դեպքում հնարավոր է ապահովագրությունը դարձնել օգտակար հասարակության ավելի լայն շերտերի համար:

**ՉԻՆԱԿԱՆ ՍՈՂԵԼԸ**

U(.) օգտակարության ֆունկցիա ունեցող անհատը, որպեսզի ընտրությունը կատարի x և y պատահական կորուստների միջև, նա համեմատում է E(U(w-x)) և E(U(w-y)) և ընտրում է այն կորուստը, որի դեպքում իր սպասվող օգտակարությունը ավելի մեծ է: Այս մոդելի օգնությամբ w հարստություն ունեցող ապահովագրվողը ունակ է որոշել այն P\* մաքսիմում ապահովագրավճարը, որը նա պատրաստ է վճարել պատահական x կորստի դիմաց: Դա ստացվում է լուծելով հետևյալ հավասարումը.

$$E(U(w-x))=U(w-P): \quad (1)$$

(1) հավասարման մեջ ֆիքսենք անհատի հարստությունը և օգտակարության ֆունկցիան, իսկ x-ը դիտարկենք, որպես դիսկրետ պատահական մեծություն՝ անհատը կունենա x կորուստ q հավանականությամբ և (1-q) հավանականությամբ կորուստ չի ունենա: Այժմ (1) հավասարումը կարող ենք գրել հետևյալ տեսքով՝

$$(1-q)U(w)+qU(w-x)=U(w-P): \quad (2)$$

Սպասվող օգտակարության տեսությունից մեզ հայտնի է, որ ռիսկից խուսափող անհատի օգտակարության ֆունկցիան կրկնակի դիֆերենցելի է [2], ուստի կարող ենք U(.) ֆունկցիան w կետի շրջակայքում վերլուծել Թեյլորի շարքի [3].

$$\begin{aligned} U(w-x) &= U(w) - xU'(w) + (x^2/2)U''(w) + \text{բարձր կարգի ածանցյալներ,} \\ U(w-P) &= U(w) - PU'(w) + (P^2/2)U''(w) + \text{բարձր կարգի ածանցյալներ:} \end{aligned} \quad (3)$$

(3)-ը տեղադրելով (2) հավասարման մեջ և կատարելով նման անդամների միացում, կստանանք՝

$$-U''(w)/U'(w) = 2(P-qx)/(x^2q - P^2), \quad (4)$$

որտեղ (-U''(w)/U'(w)) իրենից ներկայացնում է անհատի ռիսկից խուսափելու գործակից և հանդիսանում է նվազող ֆունկցիա ըստ անհատի հարստության: (4)-ի մեջ անհատի ռիսկից խուսափելու նշանակելով r(w)-ով և կատարելով որոշ ձևափոխություններ, կստանանք x-ի և P-ի փոխկապակցվածությունը բնութագրող հետևյալ քառակուսային հավասարումը՝

$$rqx^2 + 2qx - rP^2 - 2P = 0, \quad (5)$$

որը լուծելով x-ի և P-ի նկատմամբ, համապատասխանաբար կստանանք՝

$$\begin{aligned} x &= ((1+rP(rP+2)/q)^{1/2} - 1)/r \\ P &= ((1+rxq(rx+2))^{1/2} - 1)/r: \end{aligned} \quad (6)$$

Այժմ որոշենք, թե ինչ չափով կփոփոխվի  $x$  կորուստը, եթե  $P^+$  հնարավոր մաքսիմում ապահովագրավճարը մեծացնենք  $k$  անգամ: Ենթադրենք  $x$  կորուստը կփոփոխվի  $a$  անգամ և գտնենք  $k$ -ի և  $a$ -ի փոխկապակցվածությունը:  $a$ -ի համար կստանանք՝

$$a = \left( \frac{(1+kP(kP+2)/q)^{1/2}-1}{(1+rP(rP+2)/q)^{1/2}-1} \right): \quad (7)$$

Տույց տանք, որ հնարավոր մաքսիմում ապահովագրավճարը  $k$  անգամ մեծացնելիս, համապատասխան կորուստի չափը, որը որոշվում է (2) բանաձևով, երբ մնացած փոփոխականները հայտնի են, ավելի դանդաղ է աճում  $k > a$ : Դրա համար (7) հավասարման ձախ մասի  $a$ -ն փոխարինենք  $k$ -ով և գտնենք այդ երկու արտահայտությունների միջև գոյություն ունեցող անհավասարության նշանը: Չաշվարկները պարզեցնելու համար  $\left( \frac{(1+rP(rP+2)/q)^{1/2}-1}{(1+kP(kP+2)/q)^{1/2}-1} \right)$  նշանակենք  $B$ -ով և քանի որ  $B$ -ն մեծ է զրոյից, կարող ենք գրել.

$$kB \text{ և } (1+kP(kP+2)/q)^{1/2}-1,$$

կամ որ նույնն է

$$(kB-1)^2 \text{ և } (1+kP(kP+2)/q),$$

որտեղից կստանանք՝

$$B^2k^2+2Bk-k^2r^2P^2/q-2krP/q \text{ և } 0:$$

Անհավասարման երկու կողմը բաժանելով  $k$ -ի վրա ( $k > 0$ ) և  $k$  չափարունակող անդամները տեղափոխելով աջ կողմ, կստանանք՝

$$k(B^2-r^2P^2/q) \text{ և } 2(rP/q-B): \quad (8)$$

$(B^2-r^2P^2/q)$  արտահայտության մեջ տեղադրելով  $B$ -ի իրական արժեքը, կունենանք՝

$$\begin{aligned} (B^2-r^2P^2/q) &= 1+1+rP(rP+2)/q-2(1+rP(rP+2)/q)^{1/2}-r^2P^2/q= \\ &= 2rP/q+2-2(1+rP(rP+2)/q)^{1/2}=2(rP/q-B): \end{aligned} \quad (9)$$

$(B^2-r^2P^2/q)$  արտահայտության համար (9)-ում ստացած արժեքը տեղադրենք (8)-ի մեջ և կստանանք՝

$$k \text{ և } 1,$$

և քանի որ մաքսիմում ապահովագրավճարը  $k$  անգամ մեծացրել էինք, ուստի  $k > 1$ , այսինքն ստացանք այն ինչ պետք էր ապացուցել:

Որպեսզի ապացույցը լինի լիարժեք, ցույց տանք, որ (8) անհավասարման երկու կողմը կարող էինք բաժանել  $(rP/q-B)$ -ի վրա, այսինքն՝  $rP/q > B$ : Կրկին օգտվելով  $B$ -ի նշանակումից, կունենանք՝

$$(rP/q+1)^2 > (1+rP(rP+2)/q),$$

կամ՝

$$r^2P^2/q^2+1+2rP/q > 1+r^2P^2/q+2rP/q,$$

որտեղից՝

$$1/q > 1,$$

որը միշտ տեղի ունի, քանի որ  $q$  հավանականությունը պատկանում է զրոյից մեկ միջակայքին:

Ընդհանրապես  $k$ -ի և  $a$ -ի փոխկապակցվածությունը բնութագրվում է նաև նրանց հարաբերությամբ, որը իրենից ներկայացնում է աճող ֆունկցիա ըստ  $k$ -ի և ընդունում է իր մաքսիմում արժեքը, երբ  $k$ -ն ձգտում է անվերջության՝

$$\lim_{k \rightarrow +\infty} \frac{k}{a} = \lim_{k \rightarrow +\infty} \frac{k \left( \sqrt{1 + \frac{rP(rP+2)}{q}} - 1 \right)}{\sqrt{1 + \frac{krP(krP+2)}{q}} - 1} = \frac{\sqrt{q}}{rP} \left( \sqrt{1 + \frac{rP(rP+2)}{q}} - 1 \right): \quad (10)$$


#### ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Այս մոդելում ստացված արդյունքները կիրառենք ՀՀ-ում ապահովագրավճարների հաշվարկման համար՝ մասնավորապես ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության (այսուհետև ԱՊՊԱ) ոլորտում: ՀՀ-ում ԱՊՊԱ-ն գործում է զրեթե երեք տարի և արդեն գոյություն ունեն վիճակագրական տվյալներ և հետազոտություններ ԱՊՊԱ-ի վերաբերյալ: Հայտնի են տարեկան փոխհատուցման պահանջների հաճախականությունը, տարեկան միջին փոխհատուցման չափը, ապահովադիրների օգտակարությունը [4] և այլ անհրաժեշտ տվյալները: 2012 թ. վիճակագրական տվյալների համաձայն<sup>1</sup> միջին փոխհատուցման չափը և փոխհատուցման պահանջների հաճախականությունը կազմել են համապատասխանաբար 204000 դրամ և 13%, իսկ անհատի հարստության չափը, որից հետո օգտակար չէ ապահովագրական պայմանագրի ձեռքբերումը կազմել է 350000 դրամ: Նաև, «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ-ի կողմից հրապարակված վիճակագրական տվյալների հիման վրա, մեր կողմից հաշվարկվել է ապահովագրավճարի միջին չափը, որը 2012 թ. կազմել է 36000 դրամ: Քանի որ փոխհատուցման պահանջների հաճախականությունը հանդիսանում է (2) հավասարման այնպիսի փոփոխական, որի վրա էական ազդեցություն կարճաժամկետ հատվածում անհնար է թողնել, ուստի այն մեր հաշվարկներում կդիտարկենք, որպես հաստատուն պարամետր և կթողնենք հավասար 13%-ի: Որպես օգտակարության ֆունկցիա ընտրվել է լոգարիթմական օգտակարության ֆունկցիան, իսկ անհատի հարստության հետ կապված ընտրվել են հարստության դասեր, որոնց նկատմամբ դիտարկվել են համապատասխան հնարավոր մաքսիմում ապահովագրավճարների և պոտենցիալ կորուստների մակարդակները: Տեղադրելով վերոնշյալ տվյալները (5) հավասարման մեջ, ստանում ենք իրական կոնի հավասարում: Նկար 1-ում պատկերված է ստացված իրական կոնը, որտեղ  $x$ -ը անհատի հնարավոր կորուստի չափն է,  $y$ -ը մաքսիմում ապահովագրավճարի չափն է, իսկ  $z$ -ը անհատի հարստության չափն է: Այս իրական կոնի մակերևույթով պարփակված տարածությունում գտնվող կետերը իրենցից ներկայացնում են հնարավոր վնասի, ապահովագրավճարի և անհատի հարստության այն եռյակը, որի դեպքում անհատին օգտակար է ապահովագրության ձեռքբերումը, իսկ իրական կոնի մակերևույթը իրենից ներկայացնում է անհատի անտարբերության մակերևույթը ապահովագրության ձեռքբերման նկատմամբ (այստեղ ենթադրվում է, որ  $x$ -ի,  $y$ -ի և  $z$ -ի վրա այլ պայմաններ դրված չեն):

<sup>1</sup> Տես՝ «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ պաշտոնական կայքէջ - <http://paap.am>

*Նկար 1*

*Անհատի անտարբերության մակերևույթը ապահովագրության ձեռքբերման նկատմամբ, որտեղ x-ը անհատի հնարավոր կորստի չափն է, y-ը մաքսիմում ապահովագրավճարի չափն է, իսկ z-ը անհատի հարստության չափն է (դրամ)*



Եթե ԱՊՊԱ պայմանագիր ունեցող անհատի հարստությունը դիտարկենք հավասար երկու միլիոն դրամի և օգտագործենք վերոնշյալ վիճակագրական տվյալները, ապա անհատի կորստի չափի և անհատի մաքսիմում ապահովագրավճարի փոխկապակցվածությունը բնութագրող (5) հավասարումնր կընդունի հետևյալ տեսքը՝

$$0,13x^2+520000x-P^2-4000000P=0: \quad (11)$$

(11)-ը իրենից ներկայացնում է հիպերբոլի հավասարում: Եթե այս հավասարմանը ավելացնենք հնարավոր կորստի և մաքսիմում ապահովագրավճարի մեկից մեծ լինելու պայմանը, ապա կստանանք երկու միլիոն դրամ հարստություն ունեցող անհատի անտարբերության կորը ԱՊՊԱ ձեռք բերելու նկատմամբ:

Հավասարումների օգնությամբ կառուցվել է անհատի տարբեր հարստությունների մակարդակների և տարբեր կորուստների չափերի դեպքերում անհատի մաքսիմում ապահովագրավճարների օպտիմալ տարբերակների աղյուսակը, ԱՊՊԱ-ի համար:

*Աղյուսակ 1*

**Մաքսիմում ապահովագրավճարները ԱՊՊԱ-ի դեպքում**

Կորուստ / Հարստություն	180000	200000	250000	300000	350000
1000000	25188	28202	43887	35917	52105
2000000	24305	27116	41494	34238	48883
5000000	23764	26450	40009	33202	46872
10000000	23582	26225	39507	32852	46189
20000000	23491	26113	39254	32676	45845

### Գրականություն

1. **Pratt J. W.**, Risk aversion in the small and in the large // *Econometrica* 32 (1/2) 1964, pp. 122–136.
2. **David C. M. Dickson**. Insurance Risk and Ruin / Cambridge University Press, January 10, 2005.
3. **Фихтенгольц Г. М.**, Курс дифференциального и интегрального исчисления: Том 1 / Москва, 1969.
4. **Մելքոնյան Ն.**, Ապահովադրի օգտակարությունը ՀՀ-ում // Հայաստանի ճարտարագիտական ակադեմիայի լրագրեր / Եր. 2013, էջ. 632-640:

### ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում ուսումնասիրվում է մաքսիմում ապահովագրավճարների և հնարավոր կորուստների փոխկապակցվածությունը: Որոշվում է անհատի անտարբերության մակերևույթը ապահովագրության ձեռքբերման նկատմամբ: Առաջարկվում է նոր ապահովագրավճարի չափ ԱՊՊԱ-ի համար:

### АННОТАЦИЯ

#### **АРАКЕЛЯН А., МЕЛКОНЯН Н. – ВЗАИМОСВЯЗЬ АВТОМОБИЛЬНЫХ СТРАХОВЫХ ПРЕМИЙ И ПОТЕРЬ, ВЫЗВАННЫХ АВАРИЯМИ**

В статье исследуется взаимосвязь максимальных страховых взносов и возможных потерь. Выявляется поверхность безразличия индивида в отношении приобретения страховки. Предложен новый размер страховых выплат для ОСАГО.

### SUMMARY

#### **ARAKELYAN A., MELKONYAN N. – THE INTERCONNECTION BETWEEN CAR INSURANCE PREMIUMS AND CRASH CONDITIONED LOSSES**

The article touches upon interconnection between maximum premiums and possible losses. Individual's attitude to being insured proved to be superficial thus a new compulsory MTPL premium is suggested.

**ՀԵՆՐԻԿ ԹԱՂԵՎՈՍՅԱՆ**

*ԵՊՀ տնտեսագիտության մեջ մաթեմատիկական  
մոդելավորման ասֆրոնի ասպիրանտ  
Էլ.փոստ՝ henriktadevosyan@gmail.com*

**ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼՈՒՄ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՄԱՐԿՈՎՅԱՆ ՇՐՁԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ**

Վերջին տարիների փորձը ցուցադրեց բանկային ժամկետանց պարտավորությունների՝ վարկային դասերի վերլուծության արդիականությունը: Կարևոր է հասկանալ վարկային դասերի միջև անցումների օրինաչափությունները և հետևություններ անել ռիսկային վարկերը կանխարգելու և ֆինանսական կայունություն ասպահովելու համար: Վերոնշյալ անցումների դինամիկան մանրակրկին է վարկառուի որակի էվոլյուցիան վարկառուների բազմության մեջ և գնահատում վերջինիս սնանկացման մոտեցման հավանականությունը:

Ընդունում ենք

- վարկառու համակարգ է, որը ժամանակի ընթացքում կարող է գտնվել չորս ( $i, j = 1, 2, 3, 4$ ) վիճակներում՝ ստանդարտ, հսկվող, ոչ ստանդարտ և կասկածելի վարկային դասերում,
- համակարգի  $I$  վիճակից  $j$  վիճակ անցումը ստոխաստիկ է և անցումային  $p_{ij}$  հավանականությունները բնորոշվում են մարկովյան հատկությամբ,
- համակարգի որևէ վիճակից մեկ այլ վիճակ անցումը կազմում է համասեռ մարկովյան շղթա:

Բանկերի և վարկային կազմակերպությունների համար հիմնական ռիսկը դա վարկային ռիսկն է: Վարկային ռիսկի մշտական մոնիթորինգը, ուշադրության կենտրոնում պահելը և կառավարելը, պայմանավորված է նրանով, որ այս տիպի ռիսկի մեծությունը շոշափելի է և այդպիսի ռիսկի տեղի ունենալու դեպքում կարող է բերել անդառնալի հետևանքների:

Մոտեցումը, որը ներկայացվելու է ստորև վարկային ռիսկը գնահատելու համար ասպահովում է մշտական մոնիթորինգ՝ թուլատրելի ռիսկային սահմանը ասպահանելու համար:

Ներկայումս բանկերի և վարկային կազմակերպությունների ակտիվների հիմնական մասը այսպես կոչված, անտեսանելի ակտիվներն են (օրինակ վարկեր), որոնցից յուրաքանչյուրը կապիտալի հետ հարաբերակցության ժամանակ աննշան մեծություն է կազմում և չի կարող սնանկացման պատճառ դառնալ, սակայն մինևույն ժամանակ անհատապես յուրաքանչյուր ակտիվի շահույթի ասպահովման մեջ իր դերը նույնպես աննշան է: Այսպիսով այս տիպի ակտիվները անհատապես կառավարելը եկամտաբեր չէ, այդ իսկ պատճառով ակտիվները խմբավորվում են պորտֆելի մեջ (վարկային պորտֆել): Վարկային ռիսկի կառավարումը կատարվում է պորտֆելով: Մոտեցումները, որոնք կարող են հիմք ծառայել վարկային ռիսկը գնահատելու համար, հիմնված են հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության վրա: Ստորև

ուսումնասիրված մոդելը հիմնվում է մարկովյան գործընթացների կամ այլ կերպ ասած մարկովյան շղթաների հիման վրա:

Այս մոդելների հիմնական հատկությունը կայանում է նրանում, որ նա թողնում է կիրառել զարգացած մաթեմատիկական մոտեցումներ հավանականությունների տեսության ոլորտում ակտիվների պորտֆելի նկատմամբ և կարելի է հասնել կոնկրետ արդյունքի, որը ներկայացվում է ակտիվների սնանկացման մոտեցման հավանականությամբ:

Մոդելի բացասական կողմը տվյալների մեծ բազաների կիրառում: Մոդելի համար պետք է նաև անցկացնել տեստավորումն է: Այսպիսի տեստավորումը իրականում հնարավոր է, քանի որ ակտիվների մի մասը երկարաժամկետ է (օրինակ հիփոթեթային վարկեր) և իրական տվյալների հետ համադրելով կարելի է տեսականորեն ստացված տվյալները համեմատել:

Մոդելը հիմնված է ժամկետանց պարտավորությունների հիման վրա: Յուրաքանչյուր պորտֆելի տարր կարող է նույն հավանականությամբ լինել ժամկետանց: Կարելի է ենթադրել, որ յուրաքանչյուր տարրի ժամկետանց լինելու հավանականությունը պատահական մեծություն է: Պորտֆելի տարրերը ժամանակի յուրաքանչյուր պահին կարող են ժամկետանց չլինել, բայց և կարող են ժամկետանց լինել մեկ օրից սկսած, և մենք չգիտենք նախօրոք հաջորդ ուսումնասիրության ժամանակ ինչ դիրքում է լինելու (ուսումնասիրություն – ժամանակի պահն է, որը վերաբերվում է հաջորդ ամսվա 1-ին օրը): Օրինակ՝ ակտիվը կարող է ժամկետանց լինել 1 օր, 12 օր կամ 185 օր, սակայն կարևոր չէ առանձին օրերի ուշացումը, քանի որ կոնկրետ ժամկետանց օրերով չենք վերլուծում այլ դասերով, այլ կարևոր է թե կոնկրետ այդ ուշացումը, որ դասին է պատկանում: Դասերի օրինակ՝

- 1-ին դաս (Ստանդարտ ակտիվներ) – պայմանագրի համաձայն վճարվող
- 2-րդ դաս (Հսկվող ակտիվ) - մինչև 90 օր ուշացում
- 3-րդ դաս (Ոչ ստանդարտ ակտիվ) - 91-180 օր ուշացում
- 4-րդ դաս (Կասկածելի ակտիվ) - 181-ից 270 օր ուշացում:

**Ստանդարտ** ակտիվների պորտֆելին իրենից ներկայացնում է համախառն և խնդրահարույց ակտիվների տարբերությունը: Ստանդարտ են դասակարգվում այն ակտիվները, որոնք սպասարկվում են պայմանագրի համաձայն և ժամկետանց չեն: Ակտիվն աշխատող է և գտնվում է սպասարկման ընթացքում համաձայն պայմանագրի:

**Հսկվող** են դասակարգվում այն ակտիվները, որոնք չնայած սպասարկվում են սկզբնական պայմանագրի համաձայն, սակայն տեղի է ունեցել փոխառուի (պարտապանի) ֆինանսական վիճակի վատթարացում կամ ի հայտ են եկել այնպիսի պայմաններ, որոնց պարագայում հնարավոր է փոխառուի (պարտապանի) ֆինանսական վիճակի վատթարացում, որի արդյունքում կարող է վտանգվել ակտիվը մարելու (սպասարկելու) փոխառուի (պարտապանի) բավարար ունակությունը: Ակտիվը չաշխատող է մինչև 90 օր:

**Ոչ ստանդարտ** են դասակարգվում այն ակտիվները, որոնց գծով պայմանագրային պարտավորությունները չեն կատարվում՝ կապված վարկառուի (պարտապանի) ֆինանսական վատ դրության կամ նրա պարտքը մարելու անկարողության հետ: Ակտիվը չաշխատող է 91-180 օր:

**Կասկածելի** ակտիվների շարքին են դասվում այն ակտիվները, որոնք ունեն ոչ ստանդարտ ակտիվների հատկանիշներ, սակայն առավել խնդրահարույց են, ինչի արդյունքում դրանց հավաքագրումը տվյալ պահին չափազանց դժվար կամ անհնարին է: Կասկածելի ակտիվների դեպքում զգալի կորուստների հավանականությունը բարձր է: Ակտիվը չաշխատող է 181-ից 270 օր:

Այսպիսով մենք ունենում ենք ակտիվներ, որոնք տեղաշարժվում են վերոնշյալ դասերով՝ մի վիճակից անցնելով մյուս վիճակի, սակայն կարող են նաև չտեղաշարժվել և մնալ նույն վիճակում: Ակնհայտ է նաև, որ ուսումնասիրվող մեծությունները կարող են միայն տեղափոխվել ավելի բարձր դաս՝ միայն իր հարևանությամբ կամ ավելի ցածր ցանկացած դաս: Օրինակ 2-րդ դասից հնարավոր է օբյեկտիվ չափանիշների հիման վրա տեղափոխվել 3-րդ դաս, սակայն օբյեկտիվ չափանիշների հիման վրա չի կարող տեղափոխվել 4-րդ դաս: 3-րդ դասից հնարավոր է տեղափոխվել 1-ին դաս (հաճախորդը մեկ մուծումով մարել է իր ամբողջ ժամկետանց պարտավորությունները և տեղափոխվել է 1-ին դաս): Այն վիճակները, որոնք կարող են տեղի ունենալ նշանակեմք  $x$ , որտեղ  $i$ -ին ընդունում է 1, 2, 3 և 4:

**Ուսումնասիրվող պատահական մեծության վիճակները, որոնք պարունակում են նկարագրված հատկություններով անվանում են մարկովյան շղթա՝:**

Քանի որ մենք չենք ուսումնասիրում առանձին տարրերը, ապա մենք կոնկրետ չենք կարող իմանալ ուսումնասիրվող մեծությունը, որ դասը կտեղափոխվի հաջորդ ժամանակում: Այլ կերպ ասած, մենք կարող ենք միայն ենթադրել, որ որոշակի հավանականությամբ ուսումնասիրվող մեծությունը կարող է տեղափոխվել թույլատրելի վիճակ՝ հաջորդ ժամանակահատվածի համար: Օրինակ. 3-րդ վիճակից պատահական մեծությունը կարող է տեղափոխվել 4-րդ վիճակի 0.1 հավանականությամբ, 2-րդ վիճակի 0.4 հավանականությամբ, 1-ին վիճակի՝ 0.3 հավանականությամբ կամ մնալ նույն վիճակում 0.2 հավանականությամբ: Այս բոլոր հավանականությունների գումարը հավասար է 1-ի: Այս հավանականությունները անվանենք անցումային հավանականություններ և  $i$  վիճակից  $j$  վիճակի անցումները նշանակենք  $p_{ij}$ : Այս  $ij$  անցումները իհարկե նախապես հայտնի չեն: Կարելի է նշել նաև, որ մեր մոդելում 4-րդ դասը իր մեջ ներառում է նաև այն դեպքերը, երբ պորտֆելի տարրը վերջնականապես դառնում է չաշխատող: Եթե առանձին ուսումնասիրենք 4-րդ դասը, ապա այն կլինի կլանման վիճակում, և հավանականությունը, որ կմնա դասում հավասար է 1: Ենթադրում ենք, որ մեր ուսումնասիրության ժամանակ 4-րդ դասից դեպի դուրս տեղափոխվելը քիչ հավանական է, բայց հնարավոր է:

Անցումների հավանականությունը հարմար է դասավորել աղյուսակի ձևով, որը կանվանենք  $P$  անցումային հավանականությունների մատրից:

$$P = \begin{pmatrix} p_{11} & p_{12} & 0 & 0 \\ p_{21} & p_{22} & p_{32} & 0 \\ p_{31} & p_{32} & p_{33} & p_{34} \\ p_{41} & p_{42} & p_{43} & p_{44} \end{pmatrix}$$

<sup>1</sup> **Феллер И. В.**, Введение в теорию вероятностей и ее приложения. М.: Мир, 1984. Մելս Սահակյան, Նորայր Բեկնազարյան, Համլետ Հակոբյան, Խանիկ Քերոբյան, Տնտեսության վերլուծության մաթեմատիկական եղանակներ, Երևան, 2001:

Այն փաստը, որ մեր կողմից մարկովյան շղթայի բոլոր վիճակները հասանելի են, ապա մաթեմատիկորեն կարելի է գրել հետևյալ կերպ յուրաքանչյուր  $n$ -երի համար գոյություն ունի այնպիսի  $n$ , որ  $p > 0$ , որտեղ  $p$ -ն նշանակում է հավանականության անցումներ  $ij$ ,  $i$  վիճակից  $j$  վիճակի  $n$  ժամանակահատվածի համար: Անցումային մատրիցի գրառումը ֆորմալ ձևով նկարագրում է մեր խնդիրը:

Ենթադրենք, որ սկզբնական բաշխումը պատահական մեծությունների ցուցադրում է.  $a$  վեկտորը՝  $a=(a_1, a_2, a_3, a_4)$  այս բաշխումը նախապես հայտնի է: Կարելի է ենթադրել, երբ բանկը կամ վարկային կազմակերպությունը տրամադրում է վարկ և ենթադրվում է, որ վարկը մարվելու է ժամանակին, ապա հավանականությունը հավասար է  $(1, 0, 0, 0)$ : Երբ պետք է որոշվի հավանականությունը մյուս ժամանակահատվածի համար, ապա պետք է վեկտորը բազմապատկել  $p$  մատրիցով: Որպեսզի հաշվարկենք հավանականությունը մյուս ժամանակահատվածի համար պետք է նախորդ ժամանակահատվածի վեկտորը բազմապատկել  $p$  մատրիցով և այդպես հաջորդաբար:

Մարկովյան շղթաների համար ինչպիսիսն մերն է, կարելի է կարճ ներկայացնել հետևյալ տեսքով՝  $p$  անցումային հավանականությունների մատրիցի համար գոյություն ունի

$$\lim_{n \rightarrow \infty} p^n = A$$

( $A$  մատրիցի բոլոր տողերը նման են):

Օրինակ եթե մենք ստացել ենք վերջնական բաշխումը  $f=(0.8; 0.1; 0.05; 0.05)$ , ապա սա նշանակում է, որ 0.05 հավանականությամբ պատահական մեծությունը գտնվում է 4-րդ դասում, այսինքն ամենապրոբլեմային դասում: Պրակտիկայում կարելի է ասել, որ վարկային պորտֆելի 5%-ը գտնվում է 4-րդ՝ կասկածելի դասում:

Ունենալով վերջնական ակտիվների դասավորվածությունը (0.8; 0.1; 0.05; 0.05) և ընդհանուր պորտֆելի մնացորդը, որը օրինակ հավասար է 1.000՝ կարելի կանխատեսել կորուստների պահուստը:

$$ԿՊԿ = 1000 * 0.8 * 2\% + 1000 * 0.1 * 10\% + 1000 * 0.05 * 20\% + 1000 * 0.05 * 50\% = 61$$

ընդհանուր տեսքով կորուստների պահուստի կանխատեսումը կարելի է գրել՝

$$ԿՊԿ = D * f * 1 + D * f * 1 + D * f * 1 + D * f * 1 \quad (1)$$

որտեղ՝

$D$ -ն ընդհանուր պորտֆելի մնացորդն է տվյալ ժամանակահատվածում,

$f$ -ը վեկտորի բաղադրիչներն են,

$i$ -ին կորուստների արտացոլումն է (%):

Դժվարությունը կայանում է նրանում թե ինչպես գտնել անցումային հավանականությունը: Հաշվարկը կարող է հիմնված լինել գոյություն ունեցող պորտֆելի տվյալների վրա: Այս դեպքում հավանականության անցումը  $i$  վիճակից  $j$  վիճակի պետք է հաշվարկվեն որպես առանձին միավորներ ընդհանուր վարկային պորտֆելի մեջ: Հարմարության համար պետք է հաշվարկները բերել մի կետի: Բացատրենք օրինակի հիման վրա:

**Վարկառուների վարքի կանխատեսման գնահատում**

P մատրիցի միջոցով ստանում ենք՝

$$\bar{p}^{(t+1)} = \bar{p}^{(t)} P$$

$$\bar{p}^{(t)} = (\bar{p}_1^{(t)}, \bar{p}_2^{(t)}, \bar{p}_3^{(t)}, \bar{p}_4^{(t)})$$

որտեղ  $\bar{p}^{(t)}$ -ն մեզ t պահին հայտնի հավանականային բաշխման վեկտորն է ըստ դասերի: Ստացանք ռեկուրենտ հավասարում, որի միջոցով կարելի է կանխատեսել հաջորդաբար ցանկած տարիների համար վարկերի դասերի բաշխումը ըստ տարիների: Սահմանային բաշխման  $\bar{p} = (p_1, p_2, p_3, p_4)$  վեկտորը գտնում ենք՝

$$\bar{p} = P * \bar{p}$$

$$(p_1 + p_2 + p_3 + p_4) = 1$$

համակարգից:

**Չաշվարկներ**

Չաշվարկները կատարվել են բանկի մասնաճյուղի իրական տվյալների հիման վրա՝

*Աղյուսակ 1*

**Վարկային պորտֆել մեկ մասնաճյուղի օրինակով**

հազ. դրամ

Պահեր (ժամանակի)	01.01	01.02	01.03	01.04	01.05	01.06	01.07	01.08	01.09	01.10	01.11	01.12
Վարկերի դասեր (2011 թ.)												
1	1394490	1329822	1372793	1351357	1301553	1289285	1377704	1406750	1421002	1441391	1545556	1609552
2	846	2.415	555	230	2.097	308	152	803	579	756	472	1.216
3		724	416	416								
4					416							



Դժվարությունը կկայանա նաև նրանում, որ վարկային պորտֆելները կարող են պարունակել հարյուրավոր կամ հազարավոր տարրեր (վարկեր), որոնք առանց համապատասխան ծրագրային ապահովման հաշվելը անհնարին է:

Մոդելի համար հիմնական խնդիրն է գտնել անցումային հավանականությունների մատրիցը, որոնք յուրաքանչյուր տարվա համար տարբեր են՝ օրինակ 2012 թ. անցումային հավանականությունների մատրիցը տարբերվում է 2011 թ., քանի որ տարբեր անցումներ են տեղի ունենում: Օրինակի ալգորիթը մասնավոր դեպք է: Կատարված են հաշվարկներ իրական տվյալների հիման վրա, որոնց արդյունքը ցույց է տալիս՝

- ստանդարտ վարկերի տոկոսային նվազման միտում, որը կազդի երկրի տնտեսական աճի վրա
- 2011 թ. ստանդարտ վարկերի տոկոսային հարաբերությունը կնվազի 98.16%-ից – 95.78 %,
- հսկվող, վարկերը նույնպես կաճեն և այդպես ժամկետանց պարտավորությունների քանակը կավելանա:
- Կարելի է առանձնացնել մի փաստ, որ ժամկետանց պարտավորություններից միայն հսկվող դասի վարկերն են ավելանում, իսկ մյուս բոլոր դասերը մնում են նույն դիրքում:

### Գրականություն

1. Մելս Սահակյան, Նորայր Բեկնազարյան, Համլետ Հակոբյան, Խանիկ Քերոբյան, Տնտեսության վերլուծության մաթեմատիկական եղանակներ / Երևան, 2001:

### ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում մոդելավորվում է վարկառուների վարքը և նրա ազդեցությունը վարկային պորտֆելի վրա՝ մասնավորապես ժամկետանց պարտավորությունների գծով և ապագայում ժամկետանց պարտավորությունների շարժը:

### АННОТАЦИЯ

#### ТАДЕВОСЯН Г. – ОЦЕНКА РИСКОВАННОСТИ ПРОСРОЧЕННЫХ ОБЯЗАТЕЛЬСТВ В КРЕДИТНОМ ПОРТФЕЛЕ ПОСРЕДСТВОМ МАРКОВСКИХ ЦЕПЕЙ

В статье моделируется поведение заемщиков и его влияние на кредитный портфель, в частности, применительно просроченных обязательств и их будущего движения, с целью оценки кредитного риска и формирования здорового кредитного портфеля.

### SUMMARY

#### TADEVOSYAN H. – OVERDUE LOANS RISK MODELING IN LOAN PORTFOLIO BY MARKOV CHAIN

The article presents the behavior of loan takers and its influence on loan portfolio concerning overdue loans and their future movements in order to estimate credit risk and form a good banking portfolio.



ԲԱԺԻՆ VI

ԳԻՏԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ



**ՍԱՄՍՈՆ ԴԱՎՈՅԱՆ**

*տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,  
ՀՊՏՀ Գյուլմրիի մասնաճյուղի տնօրեն*

**ՏԱՐԲԵՐ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՍԱՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ**

Աշխարհի տարբեր երկրներում օբյեկտիվորեն իրականացվում են վերափոխումներ, որոնք նպատակ են հետապնդում բարելավել կյանքի որակը, բարձրացնել երկրի վարկանիշը, ինչպես նաև ապահովել երկրի զարգացման կայունությունը: Մեր հետազոտության նպատակով մենք հաշվի ենք առել առավել կարևոր հետևյալ համաթվերը, քանի որ դրանց համախումբը ներկայացնում է յուրաքանչյուր երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական առանձնահատկությունները: Այս տեսանկյունից, վերջին տասնամյակների ընթացքում տարբեր միջազգային կազմակերպությունների և ոչ պետական կորպորացիաների կողմից տարբեր համաթվեր են մշակվել, որոնք գնահատում են տարբեր ինստիտուտները: Մեր կողմից առաջարկվող նոր մեթոդաբանության միջոցով մենք փորձ ենք արել ձևավորել առավել ընդհանրական համաթիվ, որը հնարավորություն է տալիս գնահատել տարբեր երկրներում իրականացրած բազմաբնույթ վերափոխումների համեմատական արդյունավետությունը: Մենք ընտրել ենք երեք խումբ երկրներ՝ 15 զարգացած, 10 թույլ զարգացող և 24 անցումային տնտեսություն ունեցող երկրներ: Ուսումնասիրել ենք 15 զարգացած տնտեսություն ունեցող հետևյալ երկրները՝ Ավստրիա, Բելգիա, Դանիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Գերմանիա, Ճապոնիա, Նիդերլանդներ, Նորվեգիա, Պորտուգալիա, Սինգապուր, Շվեդիա, Շվեյցարիա, Միացյալ Թագավորություն և ԱՄՆ: Մեր կողմից գնահատվել է համեմատական արդյունավետությունը 24 անցումային տնտեսություն ունեցող երկրներում, ինչպիսիք են Ալբանիան, Հայաստանը, Ադրբեջանը, Բուլղարիան, Կամբոջան, Չինաստանը, Խորվաթիան, Չեխիան, Էստոնիան, Վրաստանը, Հունգարիան, Ղազախստանը, Ղրղզստանը, Լատվիան, Լիտվան, Մակեդոնիան, Մոլդովան, Լեհաստանը, Ռումինիան, Ռուսաստանը, Սլովակիան, Սլովենիան, Ուկրաինան, Վիետնամը: Մեր կողմից ընտրվել են նաև թույլ զարգացած տնտեսություն ունեցող հետևյալ երկրները՝ Բանգլադեշ, Բենին, Կոտ դե Վուար, Գամբիա, Լեսոտո, Մալի, Նեպալ, Սենեգալ, Ուգանդա և Ջամբիա:

Վերափոխումների ընդհանրական համաթիվը հաշվարկվում է վերջին չորս տարիների կտրվածքով հետևյալ յոթ համաթվերի հիման վրա.

**1. Համաշխարհային մրցունակության համաթիվ (The Global Competitiveness Index)**

Համաշխարհային տնտեսական ֆորումի հրապարակած համաշխարհային մրցունակության համաթիվը (ՀՄՀ), որը համակողմանիորեն գնահատում է երկրների մրցունակությունը, բաղկացած է 3 ենթահամաթվերից՝ հիմնական պայմաններ, արդյունավետության խթաններ, նորարարության և կատարելագործ-

վածության գործոններ, որոնք հաշվարկվում են 119 ենթաբաղադրիչներ ունեցող 12 բաղադրիչների գնահատականների հիման վրա<sup>1</sup>: Աղյուսակ 1-ում ներկայացված է համաշխարհային մրցունակության համաթիվը 24 անցումային տնտեսություն ունեցող երկրների համար:

### Աղյուսակ 1

**Համաշխարհային մրցունակության համաթվի փոփոխման միտումները անցումային տնտեսություն ունեցող 24 երկրներում 2009-2013 թթ.**

	ՀՄՀ 2013–2014	ՀՄՀ 2012–2013	ՀՄՀ 2011–2012	ՀՄՀ 2010–2011
Ալբանիա	95	89	78	88
Հայաստան	79	82	92	98
Ադրբեջան	39	46	55	57
Բուլղարիա	57	62	74	71
Կամբոջա	88	85	97	109
Չինաստան	29	29	26	27
Խորվաթիա	75	81	76	77
Չեխիա	46	39	38	36
Էստոնիա	32	34	33	33
Վրաստան	72	77	88	93
Հունգարիա	63	60	48	52
Ղազախստան	50	51	72	72
Ղրղզստան	121	127	126	121
Լատվիա	52	55	64	70
Լիտվա	48	45	44	47
Մակեդոնիա	73	80	79	79
Մոլդովա	89	87	93	94
Լեհաստան	42	41	41	39
Ռումինիա	76	78	77	67
Ռուսաստան	64	67	66	63
Սլովակիա	78	71	69	60
Սլովենիա	62	56	57	45
Ուկրաինա	84	73	82	89
Վիետնամ	70	75	65	59

*Աղբյուրը՝ աղյուսակը կառուցվել է հեղինակի կողմից Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից վերջին չորս տարիներին հրապարակված համաշխարհային մրցունակության զեկույցների հիման վրա:*

## 2. «Գործարար ակտիվության» համաթիվ (Doing Business)

Համաշխարհային բանկի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի կողմից մշակած «Գործարար ակտիվության» համաթիվը գնահատում է գործարար ակտիվությունը 189 երկրներում 36 ենթաբաղադրիչներ ունեցող 10 չափորո-

<sup>1</sup> Համաշխարհային մրցունակության զեկույց, Համաշխարհային տնտեսական ֆորում, <http://weforum.org>

շիջների հիման վրա: Համաթիվը հաշվարկվում է հետևյալ 10 չափորոշիչների հիման վրա՝ ձեռնարկությունների հիմնադրում, շինարարական աշխատանքների համար թույլտվության ստացում, էլեկտրամատակարարման համակարգին միացումը. սեփականության գրանցում, վարկերի ստացում, ներդրողների պաշտպանություն, վարկերի վճարում, միջազգային առևտուր, պայմանագրերի իրականացման ապահովում և ձեռնարկության լուծարում<sup>1</sup>: Աղյուսակ 2-ում ներկայացված է 24 անցումային տնտեսություն ունեցող երկրների վարկանիշը ըստ գործարար ակտիվության համաթվի 2010-2013 թթ. համար:

*Աղյուսակ 2*

**«Գործարար ակտիվության» համաթվի փոփոխման միտումները անցումային տնտեսություն ունեցող 24 երկրների համար 2010-2013 թթ.**

	2014	2013	2012	2011
Ալբանիա	90	85	82	82
Հայաստան	37	32	55	61
Ադրբեջան	70	67	66	69
Բուլղարիա	58	66	59	57
Կամբոջա	137	133	138	147
Չինաստան	96	91	91	79
Խորվաթիա	89	84	80	79
Չեխիա	75	65	64	70
Էստոնիա	22	21	24	18
Վրաստան	8	9	16	17
Հունգարիա	54	54	51	46
Ղազախստան	50	49	47	58
Ղրղզստան	68	70	70	67
Լատվիա	24	25	21	31
Լիտվա	17	27	27	25
Մակեդոնիա	25	23	22	38
Սլովակիա	78	83	81	90
Լեհաստան	45	55	62	59
Ռումինիա	73	72	72	65
Ռուսաստան	92	112	120	124
Սլովակիա	49	46	48	43
Սլովենիա	33	35	37	37
Ուկրաինա	112	137	152	149
Վիետնամ	99	99	98	90

*Աղբյուրը՝ աղյուսակը կառուցվել է հեղինակի կողմից Համաշխարհային բանկի կողմից վերջին չորս տարիներին հրապարակված «Գործարար ակտիվության» զեկույցների հիման վրա:*

**3. «Կոռուպցիայի ընկալման» համաթիվ (The Corruption Perception Index)**

«Կոռուպցիայի ընկալման» համաթիվը, որը հրապարակվում է Transparency International միջազգային հակակոռուպցիոն կենտրոնի կողմից, չափում է տվյալ երկրի հանրային ոլորտի կոռումպացվածության աստիճանի ընկալումը, որը

<sup>1</sup> Գործարար ակտիվության զեկույց, Համաշխարհային բանկ, <http://doingbusiness.org>

կազմված է փորձագետների և գործարարների շրջանում անցկացված հարցումներից ստացված համաթվերի համակցությունից<sup>1</sup>: Կոռուպցիայի ընկալման համաթի ցուցակում ընդգրկված աշխարհի 177 երկրներ դասակարգված են 0-10 սանդղակով, որտեղ 0-ն բացարձակ կոռումպացված լինելու ընկալումն է քաղաքական, օրենսդրական, ոստիկանության, գործարար, լրատվության, դատական համակարգում, հասարակական ծառայությունների մատուցման, կրթական, պաշտպանության ոլորտում, իսկ 10-ը՝ կոռուպցիայի բացակայությունը<sup>2</sup>:

Այդուսակ 3-ում ներկայացված է Կոռուպցիայի ընկալման համաթիվը 24 անցումային տնտեսություն ունեցող երկրների համար:

**Աղյուսակ 3**

**«Կոռուպցիայի ընկալման» համաթիվի փոփոխման միտումները անցումային տնտեսություն ունեցող 24 երկրների համար 2009-2012 թթ.**

	2010	2011	2012	2013
Ալբանիա	87	95	113	116
Հայաստան	123	129	105	94
Ադրբեջան	134	143	139	127
Բուլղարիա	73	86	75	77
Կամբոջա	154	164	157	160
Չինաստան	78	75	80	80
Խորվաթիա	62	66	62	57
Չեխիա	53	57	54	57
Էստոնիա	26	29	32	28
Վրաստան	68	64	51	55
Հունգարիա	50	54	46	47
Ղազախստան	105	120	133	140
Ղրղզստան	164	164	154	150
Լատվիա	59	61	54	49
Լիտվա	46	50	48	43
Մակեդոնիա	62	69	69	67
Մոլդովա	105	112	94	102
Լեհաստան	41	41	41	38
Ռումինիա	69	75	66	69
Ռուսաստան	154	143	133	127
Սլովակիա	59	66	62	61
Սլովենիա	27	35	37	43
Ուկրաինա	134	152	144	144
Վիետնամ	116	112	123	116

Աղբյուրը՝ աղյուսակը կառուցվել է հեղինակի կողմից Transparency International միջազգային հակակոռուպցիոն կենտրոնի կողմից վերջին չորս տարիներին հրատարակած «Կոռուպցիայի ընկալման» զեկույցների հիման վրա:

<sup>1</sup> Kaufmann, Daniel. Corruption, Governance and Security: Challenges for the Rich Countries and the World // MPRA Paper 8207, University Library of Munich, Germany, 2004, p. 77.

<sup>2</sup> Corruption Perceptions Index 2012: Full Source Description / Transparency International, p. 45, 2012, <http://www.transparency.org>

**4. Տնտեսական ազատության համաթիվ (The Index of Economic Freedom)**

Տնտեսական ազատության համաթիվը հաշվարկվում է 1995 թ. սկսած ԱՄՆ-ի «Ժառանգություն» հիմնադրամի հետազոտական կենտրոնի կողմից 185 երկրների համար: «Ժառանգություն» հիմնադրամի փորձագետները բնորոշում են տնտեսական ազատությունը որպես՝ պետական միջամտության կամ ապրանքների և ծառայությունների արտադրության, տեղաբաշխման և սպառման գործընթացների խոչընդոտի բացակայություն՝ բացառությամբ քաղաքացիների պաշտպանության և ազատության պահպանության հետ կապված խնդիրների<sup>1</sup>: Տնտեսական ազատության համաթիվը բաղկացած է տասը տարրերից, որոնք գնահատվում են 0-100 սանդղակով, որտեղ 100-ը համապատասխանում է առավելագույն ազատության, իսկ 0-ն դրա ընդհանրապես բացակայությանը<sup>2</sup>:

Աղյուսակ 4-ում ներկայացված է 24 անցումային տնտեսություն ունեցող երկրների վարկանիշը ըստ գործարար ակտիվության համաթվի 2010-2013 թթ. համար:

*Աղյուսակ 4*

**«Տնտեսական ազատության» համաթվի փոփոխման միտումները անցումային տնտեսություն ունեցող 24 երկրների համար 2010-2013 թթ.**

	2010	2011	2012	2013
Ալբանիա	53	70	57	58
Հայաստան	38	36	39	38
Ադրբեջան	96	92	91	88
Բուլղարիա	75	60	61	60
Կամբոջա	107	102	102	95
Չինաստան	140	135	138	136
Խորվաթիա	92	82	83	78
Չեխիա	34	28	30	29
Էստոնիա	16	14	16	13
Վրաստան	26	29	34	21
Հունգարիա	51	51	49	48
Ղազախստան	82	78	65	68
Ղրղզստան	80	83	88	89
Լատվիա	50	56	56	55
Լիտվա	29	24	23	22
Մակեդոնիա	56	55	43	43
Մոլդովա	125	120	124	115
Լեհաստան	71	68	64	57
Ռումինիա	63	63	62	59
Ռուսաստան	143	143	144	139
Սլովակիա	35	37	51	42

<sup>1</sup> **Ambassador Terry Miller, Kim R. Holmes, Edwin J. Feulner.** 2012 Index of Economic Freedom // The Heritage Foundation and The Wall Street Journal, New York, 2012, p. 62, <http://www.heritage.org>.

<sup>2</sup> **Samson Davoyan, Tatevik Sahakyan.** The assessment of reforms in different countries by social-economic development integral index // World Academy of Science , Engineering and Technology, Issue 79, Stockholm, July 2013, p. 1324.

Սլովենիա	61	66	69	76
Ուկրաինա	162	164	163	161
Վիետնամ	144	139	136	140

Աղբյուրը՝ աղյուսակը կառուցվել է հեղինակի կողմից «Ժառանգություն հիմնադրամ» հետազոտական կենտրոնի կողմից վերջին չորս տարիներին հրապարակած «Տնտեսական ազատության» զեկուլյցների հիման վրա:

### 5. Մարդկային զարգացման համաթիվ (The Human Development Index)

Մարդկային զարգացման համաթիվը գնահատում և համեմատում է տարբեր երկրների մարդկային պոտենցիալը՝ չափելով բնակչության կենսամակարդակը, գրագիտության մակարդակը և կյանքի միջին տևողությունը (աղյուսակ 5)<sup>1</sup>:

#### Աղյուսակ 5

Մարդկային զարգացման համաթվի փոփոխման միտումները անցումային տնտեսություն ունեցող 24 երկրների համար 2010-2013 թթ.

	2012	2011	2010	2009
Վլբանիա	70	70	64	70
Հայաստան	87	86	76	84
Ադրբեջան	82	91	67	86
Բուլղարիա	57	55	58	61
Կամբոջա	138	139	124	137
Չինաստան	101	101	89	92
Խորվաթիա	47	46	51	45
Չեխիա	28	27	28	36
Էստոնիա	33	34	34	40
Վրաստան	72	75	74	89
Հունգարիա	37	38	36	43
Ղազախստան	69	68	66	82
Ղրղզստան	125	126	109	120
Լատվիա	44	43	48	48
Լիտվա	41	40	44	46
Մակեդոնիա	78	78	71	72
Մոլդովա	113	111	99	117
Լեհաստան	39	39	41	41
Ռումինիա	56	50	50	63
Ռուսաստան	55	66	65	71
Սլովակիա	35	35	31	42
Սլովենիա	21	21	29	29
Ուկրաինա	78	76	69	85
Վիետնամ	127	128	113	116

Աղբյուրը՝ աղյուսակը կառուցվել է հեղինակի կողմից «Ժառանգություն հիմնադրամ» հետազոտական կենտրոնի կողմից վերջին չորս տարիներին հրապարակած «Տնտեսական ազատության» զեկուլյցների հիման վրա:

<sup>1</sup> ՄԱԿ-ի պաշտոնական ինտերնետային կայք, <http://UNDP.org>

**6. Ժողովրդավարության համաթիվ (The Democracy Index)**

Economist Intelligence Unit-ից կողմից հաշվարկվող ժողովրդավարության համաթիվը վարկանիշավորում է 167 երկրներ ըստ ժողովրդավարության մակարդակի: Համաթիվը ներառում է 60 ցուցանիշ՝ խմբավորված 5 կատեգորիաներում. ընտրական գործընթացներ, քաղաքացիական ազատություն, կառավարության գործունեությունը, քաղաքական մասնակցություն և քաղաքական մշակույթ: Այնուհասակ 6-ում ներկայացված է երկրների դասակարգումը ըստ ժողովրդավարության համաթվի:

*Աղյուսակ 6*

**Ժողովրդավարության համաթվի փոփոխման միտումները անցումային տնտեսություն ունեցող 24 երկրների համար 2010-2013 թթ.**

	2012	2011	2010	2008
Ալբանիա	90	87	84	81
Հայաստան	114	111	109	113
Ադրբեջան	139	140	135	135
Բուլղարիա	54	52	51	52
Կամբոջա	100	101	100	102
Չինաստան	142	141	136	136
Խորվաթիա	50	53	53	51
Չեխիա	17	16	16	19
Էստոնիա	34	34	33	37
Վրաստան	93	102	103	104
Հունգարիա	49	49	43	40
Ղազախստան	143	137	132	127
Ղրղզստան	106	107	106	114
Լատվիա	47	48	48	46
Լիտվա	42	41	41	42
Մակեդոնիա	73	73	73	72
Մոլդովա	67	64	65	62
Լեհաստան	44	45	48	45
Ռումինիա	59	59	56	50
Ռուսաստան	122	117	107	107
Սլովակիա	40	38	38	44
Սլովենիա	28	30	32	30
Ուկրաինա	80	79	67	53
Վիետնամ	144	143	140	149

*Աղբյուրը՝ աղյուսակը կառուցվել է հեղինակի կողմից Economist Intelligence Unit-ից կողմից միջազգային հակակոռուպցիոն կենտրոնի կողմից վերջին չորս տարիներին հրապարակած ժողովրդավարության համաթվի հիման վրա:*

**7. Գլոբալիզացիայի համաթիվ (KOF Index of Globalization)**

Գլոբալիզացիայի համաթիվը գնահատում է գլոբալիզացիան տնտեսական, սոցիալական և քաղաքական ասպեկտներով 207 երկրների համար: Գլոբալիզացիայի համաթիվը հաշվարկվում է հետևյալ ենթահամաթվերի վրա՝ տնտեսական

սահմանափակումներ, տեղեկատվական հոսքերի վերաբերյալ տվյալներ, անձնական կապերի վերաբերյալ տվյալներ և մշակութային նույնականության վերաբերյալ տվյալներ (աղյուսակ 7)<sup>1</sup>:

### Աղյուսակ 7

**Գլոբալիզացիայի համաթվի փոփոխման միտումները անցումային տնտեսություն ունեցող 24 երկրների համար 2010-2013 թթ.**

	2013	2012	2011	2010
Ալբանիա	78	78	88	94
Հայաստան	94	97	102	96
Ադրբեջան	86	83	82	95
Բուլղարիա	40	38	32	32
Կամբոջա	125	131	127	116
Չինաստան	73	73	73	63
Խորվաթիա	33	32	31	29
Չեխիա	15	13	12	12
Էստոնիա	25	26	24	26
Վրաստան	64	69	74	69
Հունգարիա	9	8	8	10
Ղազախստան	82	76	77	73
Ղրղզստան	87	88	86	82
Լատվիա	44	50	41	37
Լիտվա	36	48	36	33
Մակեդոնիա	70	71	65	65
Մոլդովա	58	67	63	60
Լեհաստան	26	25	28	23
Ռումինիա	38	34	39	39
Ռուսաստան	48	47	52	42
Սլովակիա	19	19	15	16
Սլովենիա	30	28	26	28
Ուկրաինա	47	44	53	46
Վիետնամ	126	130	125	124

*Աղբյուրը՝ աղյուսակը կառուցվել է հեղինակի կողմից վերջին չորս տարիներին հրապարակած Գլոբալիզացիայի համաթվի հիման վրա:*

Վերափոխումների ընդհանրական համաթվի կառուցման առաջին փուլը երկրների վերադասավորվումն է՝ հիմք ընդունելով տվյալ երկրի՝ տեղի փոփոխությունը նախորդ ժամանակահատվածի նկատմամբ, ինչպես նաև երկու ժամանակահատվածների համար վարկանիշի միջին մեծությունը: Արդյունքում յուրաքանչյուր համաթվի համար վերլուծությունը կատարվում է 4 տարվա համար 3 ժամանակային շարքերով: Այնուհետև, երկրների՝ նախորդ տարվա նկատմամբ տվյալ համաթվով ունեցած վարկանիշի և միավորի փոփոխությունները ճշգրտվում են համապատասխան կշռային գործակիցներով և բերվում հանրագումարի: Նշենք, որ կշռային գործակիցները սահմանվում են ելնելով տեղի փո-

<sup>1</sup> Գլոբալիզացիայի համաթիվ, <http://globalization.kof.ethz.ch/>

փոփոխության մեծությունից: Այսպես, եթե տվյալ տարում երկիրն իր դիրքը բարելավել է 4-ից 6 տեղով, ապա որպես տեղի փոփոխության կշռային գործակից սահմանվում է 0.3-ը, իսկ վարկանիշի միջին մեծության կշռային գործակից՝ 0.4: Մինչդեռ եթե երկիրն իր դիրքը բարելավել է 7 և ավելի տեղով, ապա որպես տեղի փոփոխության ճշգրտող գործակից կիրառվում է 0.1-ը, իսկ վարկանիշի փոփոխության կշռային գործակից՝ 0.9:

Երկրորդ փուլը ենթադրում է երկրների վերադասավորումը միջին թվաբանականի միջոցով 3 ժամանակային միջակայքերում ըստ յուրաքանչյուր համաթվի:

Երկրորդ փուլում յոթ համաթվերից յուրաքանչյուրին տալով համապատասխան կշռային գործակիցներ՝ հիմք ընդունելով յուրաքանչյուրի կարևորությունը և ներառող ցուցանիշների բազմազանությունը, բացառելով միևնույն ցուցանիշի օգտագործումը, հաշվարկում ենք յուրաքանչյուր երկրի համար վերափոխումների ընդհանրական համաթիվը<sup>1</sup>:

$\alpha_i^j$  - j-րդ երկրի համար i-րդ համաթվի կշռային գործակիցն է:

$i=1,2,3,\dots,7$  –յոթ համաթվերն են,

$j_1=1,2,\dots,24$  – մեր կողմից դիտարկվող անցումային տնտեսության 24 երկրները,  $j_2=1,2,\dots,15$  - զարգացած տնտեսություն ունեցող 15 երկրները,  $j_3=1,2,\dots,10$  – թույլ զարգացած տնտեսություն ունեցող 10 երկրները: Օրինակ՝

$\alpha_4^j=0,12$  - Տնտեսական ազատության համաթվի տեսակարար կշիռը վերափոխումների ընդհանրական համաթվի մեջ  $j_2=1, 2,\dots,24$  անցումային տնտեսություն ունեցող երկրների համար:

$\alpha_4^j=0,13$  - Տնտեսական ազատության համաթվի տեսակարար կշիռը վերափոխումների ընդհանրական համաթվի մեջ  $j_1=1, 2,\dots,15$  զարգացած տնտեսություն ունեցող երկրների համար:

$\alpha_4^j=0,16$  - Տնտեսական ազատության համաթվի տեսակարար կշիռը վերափոխումների ընդհանրական համաթվի մեջ  $j_3=1, 2,\dots,10$  թույլ զարգացող տնտեսություն ունեցող երկրների համար:

$$\alpha_1^j + \alpha_2^j + \alpha_3^j + \alpha_4^j + \alpha_5^j + \alpha_6^j + \alpha_7^j = \sum_{i=1}^7 \alpha_i^j = 1,$$

$$H_{\rho\sigma\eta}^j = \sum_{i=1}^7 \alpha_i^j N_i^j,$$

որտեղ՝  $H_{\rho\sigma\eta}^j$  -ն վերափոխումների ընդհանրական համաթիվն է դիտարկվող ժամանակային միջակայքում,

$i=1,2,3,\dots,7$  –յոթ համաթվերն են,

<sup>1</sup> Սամսոն Դավիթյան, Տարբեր երկրների վերափոխումների գնահատումը սոցիալ-տնտեսական զարգացման ընդհանրական համաթվի միջոցով // «Համաշխարհային տնտեսության փոփոխման միտումները և Հայաստանի մարտահրավերները», Հանրապետական գիտաժողով / Գյումրի «Դպիր» հրատարակչություն, 2012:

$j_1=1,2,\dots,24$  – մեր կողմից դիտարկվող անցումային տնտեսության 24 երկրները,

$j_2=1$  - Ալբանիա,  $j_2=2$  – Հայաստան, ...  $j_2=24$  – Վիետնամ,  $j_3=1,2,\dots,15$  - զարգացած տնտեսություն ունեցող 15 երկրները,  $j_3=1,2,\dots,10$  – թույլ զարգացած տնտեսություն ունեցող 10 երկրները,


$\alpha_j^j$  - յուրաքանչյուր համաթվի տեսակարար կշիռը,

$N_j^j$  -  $j$ -րդ երկրի վարկանիշը ըստ  $i$ -րդ համաթվի, օրինակ՝ Հայաստանը Համաշխարհային մրցունակության համաթվով 24 երկրների ցանկում զբաղեցնում է 4-րդ տեղը 2009-2013 թթ. համար, ուստի  $N_1^2 = 4$  :

Գծ. 1-ում ներկայացված է վերափոխումների ընդհանրական համաթիվը 2009-2013 թ. ժամանակահատվածի համար բազիսային տարվա (2009 թ.) 24 անցումային տնտեսություն ունեցող երկրներում:

**Գծապատկեր 1**

**Ըստ հաշվետվությունների անցումային տնտեսությամբ երկրների դասակարգումը նոր մեթոդաբանության օգնությամբ՝ ողջ ժամանակահատվածի միջինը բազիսային տարվա նկատմամբ**




Աղբյուրը՝ գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից՝ առաջարկված նոր մեթոդաբանության արդյունքների հիման վրա:

Գծ. 2-ում ներկայացված է վերափոխումների ընդհանրական համաթիվը նոր մեթոդաբանությամբ 2009-2013 թթ. համար համեմատած բազիսային տարվա (2009 թ.) հետ:

*Գծապատկեր 2*

**Ըստ նոր մեթոդաբանությամբ վերափոխումների ընդհանրական համաթվի միջոցով անցումային տնտեսությամբ երկրների դասակարգումը ողջ ժամանակահատվածի միջինը բազիսային տարվա նկատմամբ**



*Աղբյուրը՝ գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից՝ առաջարկված նոր մեթոդաբանության արդյունքների հիման վրա:*

Տեղադրելով  $\alpha_i^j$  և  $N_i^j$  բոլոր ցուցանիշները հավասարման մեջ կստանանք  $H_i^j$  ողջ ժամանակահատվածի համար

$$(H_{i_1}^j + H_{i_2}^j + H_{i_3}^j + H_{i_4}^j) / 4$$


Օրինակ, ըստ Տնտեսական ազատության համաթվի վերափոխումների ընդհանրական համաթվի Չայաստանի համար կլինի.

$$(H_{4_1}^2 + H_{4_2}^2 + H_{4_3}^2 + H_{4_4}^2) / 4 :$$

Գծ. 3, 4, 5 -ում արտացոլված է 15 զարգացած, 10 թույլ զարգացող, 24 անցումային տնտեսություն ունեցող երկրների դասակարգումը նոր մեթոդաբանությամբ ըստ հաշվետվության և վերափոխումների ընդհանրական համաթվի 2009-2013 թթ. համար:

**Գծապատկեր 3**


**Նոր մեթոդաբանությամբ ըստ հաշվետվության և վերափոխումների ընդհանրական համաթվի (ՎԸՀ) միջոցով անցումային տնտեսությամբ երկրների դասակարգումը ողջ ժամանակահատվածի համար**



Աղբյուրը՝ գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից՝ առաջարկված նոր մեթոդաբանության արդյունքների հիման վրա:

**Գծապատկեր 4**


**Նոր մեթոդաբանությամբ ըստ հաշվետվության և վերափոխումների ընդհանրական համաթվի միջոցով զարգացած տնտեսություն ունեցող երկրների դասակարգումը ողջ ժամանակահատվածի համար**



Աղբյուրը՝ գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից՝ առաջարկված նոր մեթոդաբանության արդյունքների հիման վրա:

**Գծապատկեր 5**

**Նոր մեթոդաբանությանը ըստ հաշվետվության և վերափոխումների ընդհանրական համաթվի (ՎԸԳ) միջոցով թույլ զարգացած տնտեսություն ունեցող երկրների դասակարգումը ողջ ժամանակահատվածի համար**



*Աղբյուրը՝ գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից՝ առաջարկված նոր մեթոդաբանության արդյունքների հիման վրա:*

Համաձայն առաջարկվող մեթոդաբանության՝ մենք գնահատում ենք վերափոխումների ընդհանրական համաթիվը 15 զարգացած, 10 թույլ զարգացող և 24 անցումային տնտեսություն ունեցող երկրների համար՝ հաշվի առնելով վարկանիշի և միավորի փոփոխությունը ճշգրտված համապատասխան կշռային գործակիցներով 2009-2013 թ. համար: Արդյունքները վկայում են, որ 2009-2013 թթ. համար վերափոխումները առավել արդյունավետ են իրականացվել Վրաստանում, Ռուսաստանում, Լեհաստանում, Ադրբեջանում, Մոլդովայում, Խորվաթիայում և Հայաստանում, իսկ առավել քիչ արդյունավետությամբ Ռումինիայում և Վիետնամում: Իսկ մեր կողմից ընտրված զարգացած տնտեսություն ունեցող 15 երկրների ցանկում առաջատարներն են Շվեյցարիան, Դանիան և Միացյալ Թագավորությունը:

Մեր կարծիքով, վերափոխումների ընդհանրական համաթիվը կարող է արտահայտել յուրաքանչյուր երկրում իրականացրած վերափոխումները առավել համընդգրկուն, քան ոչ միայն հողվածում նշված համաթվերից յուրաքանչյուրը,

այլ նաև որոշ համաթվեր, որոնք ներկայացված չեն հողվածում այնպիսիք, ինչպիսիք են վերափոխումների համաթիվը (*Transformation Index BTI*) և Տնտեսական բարեկեցության կայունության համաթիվը (*The index of Sustainable Economic Welfare*) և այլ նմանատիպ համաթվեր:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Հողվածում առաջարկվում է տարբեր բնութագիր ունեցող վերափոխումների ընդհանրական համաթվի ձևավորման մեթոդաբանությունը, տարատեսակ մասնավոր համաթվերի հիման վրա: Հաշվարկվում է ընդհանրական համաթիվը և անց է կացվում վերափոխումների արդյունավետության համեմատական վերլուծություն, ըստ երեք խումբ երկրների:

## АННОТАЦИЯ

### ДАВОЯН С.- ОЦЕНКА СРАВНИТЕЛЬНОЙ ЭФФЕКТИВНОСТИ РЕФОРМ В РАЗЛИЧНЫХ СТРАНАХ.

В статье предлагается методика формирования обобщенного индекса разнохарактерных реформ, на основе частных индексов. Рассчитывается обобщенный индекс и проводится сравнительный анализ эффективности реформ по трем группам стран в период 2009-2013гг.

## SUMMARY

### DAVOYAN S. – THE ASSESSMENT OF THE COMPARATIVE EFFICIENCY OF THE REFORMS FOR DIFFERENT COUNTRIES

In the article a methodology to create an integral index of reforms is suggested based on particulare indices. The integral index is calculated for 15 developed, 24 countries in transition and 10 least developed countries, considering the change of rank and score adjusted with scale coefficients for 2009-2013.

**ՍԱՄՎԵԼ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

*սոցիոլոգիական գիտությունների թեկնածու,  
«Այ Փի Էս ՄԻ» քաղաքական և սոցիոլոգիական  
խորհրդատվությունների ինստիտուտի վերլուծաբան  
Էլ. փոստ՝ samvelmanukyana@gmail.com*

**ՁԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐՈՒՄ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ԻՆԴԻԿԱՏՈՐՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ  
ԱՂԵԿՎԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

**Ներածություն**

Բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի, այդ թվում աղքատության կամ բարեկեցության մակարդակի գնահատմանն ուղղված մասնագիտացված հետազոտությունների իրականացման համար մշակված են տարբեր մոտեցումներ, որոնց հիման վրա ճշգրիտ կերպով հաշվառում և գնահատում են տնային տնտեսությունների եկամուտներն ու ծախսերը: Բնակչության կենսամակարդակի գնահատմանն ուղղված մասնագիտացված կոնկրետ սոցիոլոգիական և տնտեսագիտական հետազոտություններում այդ մոտեցումներն իրականացվում են բավական ծավալուն հարցաթերթերի միջոցով: Օրինակ, Հայաստանում ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից ամեն տարի իրականացվող տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություններում (ՏՏԿԱՀ)<sup>1</sup> բարեկեցության մակարդակի գնահատման համար օգտագործվում է սպառման ազդեցացված ցուցանիշը, որը ներառում է հետևյալ բաղկացուցիչները. (ա) սպառված պարենային և ոչ պարենային ապրանքների արժեքը, ներառյալ սեփական արտադրության ապրանքները, մարդասիրական կազմակերպություններից ստացված օգնությունը և այլ աղբյուրներից ստացված օգնությունը և (բ) երկարատև օգտագործման ապրանքների հաշվարկային արժեքը: Այս հետազոտությունում կիրառվում են օրագրեր, որոնցում տնային տնտեսությունը գրանցում է իր ծախսերը: Օրագրային գրանցումները կատարվում են տարվա ընթացքում վեր հանելու և հաշվառելու համար ծախսերի սեզոնային տատանումները:

Ակնհայտ է, որ «զուտ սոցիոլոգիական» հետազոտություններում, որոնց նպատակն է մարդկանց դիրքորոշումների, կողմնորոշումների և պատկերացումների ուսումնասիրությունը, այսպիսի մանրամասնությամբ հարցաթերթերը հնարավոր չէ օգտագործել, քանի որ ինչքան ավելի շատ են բարեկեցության գնահատման համար կիրառվող հարցերը, այնքան ավելի քիչ հարցազրուցային ժամանակ և, հետևաբար, հարցաթերթային տեղ է մնում բուն սոցիոլոգիական հետազոտության նպատակային հարցերի համար: Հիշենք, որ սոցիոլոգիական

<sup>1</sup> Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը. Վիճակագրական - վերլուծական զեկույց: Ըստ 2011 թ. տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքներ - Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայություն, 2012 թ.:

զանգվածային հետազոտության հարցազրույցի իրականացման համար օպտիմալ է համարվում մոտ 40 րոպե տևողությունը:

Մյուս կողմից, սոցիոլոգիական հետազոտություններում, հարցվողի բարեկեցությունը, ավելի ճիշտ բարեկեցության բացարձակ գնահատականը՝ արտահայտված, օրինակ, դրամական տեսքով, ամենակարևոր խնդիրը չէ (չնայած, անշուշտ, կան դեպքեր, երբ այդ բնութագրի ճշգրիտ արժեքը կարևորվում է): Այս հետազոտություններում բարեկեցությունը, որպես կանոն օգտագործվում է պատկերացում կազմելու համար, թե ինչպես է այն շաղկապված սոցիալական խմբերի դիրքորոշումների, պատկերացումների և գնահատականների հետ: Այդ նպատակի համար, որպես կանոն, բավարար է ամբողջ ընտրանքն աղեկվատ կերպով բաժանել բարեկեցության խմբերի և դիտել ուսումնասիրվող բնութագրի արժեքները (մակարդակները) այդ խմբերում:

### Չետազոտական խնդիրը

Ամնիջապես հարցեր են առաջանում՝ իսկ ի՞նչ է նշանակում ընտրանքի աղեկվատ ստորաբաժանում ըստ բարեկեցության խմբերի, որո՞նք են աղեկվատության չափանիշները և այլն:

Ներկայացվող հոդվածում միմյանց հետ համեմատված են տնային տնտեսության բարեկեցության գնահատման մի քանի մոտեցումներ, որոնք հաճախ կիրառվում են սոցիոլոգիական հետազոտություններում և փորձ է կատարվել էվրիստիկ կերպով գնահատել, թե դրանցից ո՞րն է հետազոտության ընտրանքն ավելի «աղեկվատ» ստորաբաժանում բարեկեցության խմբերի:

Չամեմատվել են բարեկեցության գնահատման հետևյալ մեթոդները.

**Մեթոդ 1.** Բարեկեցության գնահատումը ըստ տնային տնտեսության նախորդ ամսվա ընթացքում կատարած ընդհանուր ծախսերի (դրամական արտահայտությամբ բերված 4 հոգուց կազմված ընտանիքի համար),

**Մեթոդ 2.** Բարեկեցության գնահատումն ըստ ընտանիքի ունեցվածքի, այսինքն՝ անշարժ գույքի և կենցաղային իրերի հաշվառման (գնահատվել է երկու տարբերակ),

**Մեթոդ 3.** Բարեկեցության գնահատումը, երբ որպես այն մոտարկող փոփոխական (proxy) է սահմանվում անձի կողմից իր ընտանիքի դիրքավորումը սոցիալական կարգավիճակի «աստիճանի» վրա<sup>1</sup>:

Ներկայացված աշխատանքը իրականացվել է «Չայաստանի Չանրապետությունում կյանքի որակի հետազոտություն, 2012» տվյալների երկրորդային վերլուծությամբ<sup>2</sup>: Չետազոտության դաշտային փուլը տեղի է ունեցել 2012 թ. դեկտեմբերին: Չարկ է նշել, որ ներկայում, երբ սոցիոլոգիական հետազոտությունների իրականացումը մեծ ընտրանքներով (1000 և ավելի հարցվող) հայաստանյան պայմաններում բավական թանկարժեք է, սոցիոլոգիական հետազոտություն-

<sup>1</sup> Որպես կանոն օգտագործվում է աստիճանների դասակարգումը 1-10 թվերով, որտեղ 1-ը ամենացածր աստիճանն է, իսկ 10-ը, ամենաբարձր: Երբեմն այդ թվային սանդղակին է կցվում նաև «սոցիալական սանդղակ» գծապատկերը:

<sup>2</sup> Չետազոտությունն իրականացվել է «Այ Փի Ես Սի» քաղաքական և սոցիոլոգիական խորհրդավոլությունների ինստիտուտի կողմից՝ ՉՉ կառավարության պատվերով:

ների մեթոդիկայի հետ կապված հարցերի գիտական փորձարկումները դժվարացել են:

*Մեթոդ 1.* Այս մեթոդի կիրառման համար տվյալների շտեմարանում տնային տնտեսությունների նախորդ ամսվա ընթացքում կատարած ընդհանուր ծախսերը գնահատվել են հետևյալ հարցով. «Որքա՞ն են կազմել Ձեր ընտանիքի նախորդ ամսվա բոլոր ծախսերը միասին՝ հայկական դրամով»: Պատասխանները ստացվել և գրանցվել են հարցվողի կողմից նշված գումարով: Նշենք, որ այդ հարցին նախորդել են նախորդ ամսվա համար ընտանիքում սննդի, էլեկտրաէներգիայի, գազի (ներառյալ բալոններով գնվող), խմելու ջրի, գծային և բջջային հեռախոսների և ինտերնետի համար կատարված ծախսերի չափի մասին հարցերը, ինչպես նաև այդ ամսվա ընթացքում 150,000 և ավելի դրամի խոշոր ծախսի կատարման մասին հարցերը: Դրա արդյունքում հարցվողի մոտ «թարմացվել» են ընտանիքի ամսական ծախսերի տարբեր կատեգորիաների վերաբերյալ հիշողությունները, որի հետևանքով ամսական ընդհանուր ծախս հասկացությունը հարցվողի գնահատմամբ «մոտեցվել է» իրականությանը<sup>1</sup>:

Ընտանիքի ծախսերի հաշվառման համար հաճախ հարցվողին ներկայացնում են ծախսերի դրամական միջակայքեր և խնդրում են նշել, թե ո՞ր միջակայքին է պատկանում ընտանիքի ամսական ծախսի մեծությունը: Համարվում է, որ այս դեպքում նվազում են հարցվողների պատասխանից խուսափելու դեպքերը, սակայն, որպես կանոն ստացվում են անհավասար ծավալներ ունեցող միջակայքեր, որտեղ փոքր ծավալ ունեցող խմբերում դժվարանում է վիճակագրորեն հավաստի գնահատականների ստացումը, իսկ խմբերի համապատասխան խոշորացումը դժվարանում է նույն այդ միջակայքերի սահմանափակ քանակի հետևանքով: Հավաքագրված ծախսերի մեծությունները կոնկրետացնելուց հետո՝ արտապատկերվում են հարաբերական սանդղակով, ինչը հեշտացնում է ընտրանքը հավասար ծավալներով խմբերի, օրինակ՝ քվինտիլների կամ քվարտիլների բաժանման գործընթացը:

*Մեթոդ 2.* Նշված հետազոտությունում ըստ ընտանիքի ունեցվածքի բարեկեցության գնահատման համար կիրառվել է գործոնային գնահատականների մեթոդը, որը հետևյալն է: Յուրաքանչյուր հարցվածի ընտանիքի բարեկեցության գնահատականը հաշվարկվում է հետևյալ բանաձևի կիրառմամբ.

$$w_i = \sum_{k=1}^n \frac{(X_i - \bar{X}_i) * f_i}{\sigma_i}$$

որտեղ՝

- i – հարցվածի համարը ընտրանքում (տվյալների շտեմարանի տողը),
- w<sub>i</sub> – i-րդ հարցվածի ընտանիքի բարեկեցության գնահատականը,

<sup>1</sup> Նշենք, որ առանձին ծախսերի վերաբերյալ հավաքագրված տվյալներում (դաշտերում) բավական մեծ տոկոս էին կազմում «դժվարանում են պատասխանել» տարբերակները, ինչի հետևանքով այդ ծախսերի բացակայող արժեքների մոտարկման (Imputation) մեթոդների կիրառման աղեկվատությունը հարցականի տակ էր:

$n$  – ընտանիքում ունեցվածքի տեսակների քանակն է, որոնք կիրառվել են կշիռները հաշվարկելու համար,

$x_i = 1$ , եթե ընտանիքն ունի  $i$ -րդ ունեցվածքը և  $x_i = 0$ , եթե չունի,

$\bar{x}_i$  -  $x_i$  փոփոխականի ընտրամքային միջին արժեքը,

$\sigma_i$  -  $x_i$  փոփոխականի ընտրամքային ստանդարտ շեղումը,

$f_i$  -  $x_1 - x_n$  փոփոխականների գլխավոր կոմպոնենտի գործոնային բեռնվածքները:

«Կյանքի որակի հետազոտությունում» հաշվառվել են ընտանիքի ունեցվածքը, անշարժ գույքը, շարժական և արտադրական գույքը, ընդամենը՝ 26 տեսակ: Սասնավորապես, դիտարկվել է ընտանիքում կենցաղային գույքի հետևյալ տեսակների ամկայությունը.

1. սառնարան,
2. գազօջախ կամ էլեկտրական օջախ,
3. ավտոմատ լվացքի մեքենա,
4. միկրոալիքային վառարան,
5. փոշեկուլ,
6. հարթ (LCD) էկրանով հեռուստացույց,
7. ջեռուցման համակարգ (օրինակ Baxi ),
8. օդորակիչ/կոնդիցիոներ,
9. նոթբուք/նեթբուք,
10. համակարգիչ,
11. պլանշետ/iPad/GALAXY,
12. ճաշասրահի կահույք,
13. խոհանոցի կահույք,
14. ննջարանի կահույք,

Կենցաղային գույքի նշված 14 տեսակներով կազմավորվել է **մեթոդ 2-ի** կիրառման **առաջին տարբերակին** համապատասխանող փոփոխականը:

Անշարժ, շարժական և արտադրական գույքի միջոցներից դիտարկվել են հետևյալները.

15. բնակարան/սեփական տուն,
16. ավտոտնակ,
17. ամառանոց,
18. հողատարածք,
19. մարդատար ավտոմեքենա,
20. բեռնատար ավտոմեքենա,
21. արտադրական տեխնիկա՝ հաստոցներ, սարքավորումներ,
22. արտադրական կամ առևտրային տարածք/պահեստ:  
Գյուղական ընտանիքների համար հաշվառվել են նաև.
23. գյուղատնտեսական տեխնիկայի (կոմբայն, տրակտոր) ամկայությունը,
24. գոմ/ամբար,
25. անասուններ՝ կով/ոչխար/խոզ/ճագար,
26. հավ/հնդկահավ/բադ/սագ:

Նշված 26 տեսակի կենցաղային, անշարժ, շարժական և արտադրական գույքի տեսակներով կազմավորվել է **մեթոդ 2-ի** կիրառման **երկրորդ տարբերակին** համապատասխանող փոփոխականը:

*Մեթոդ 3.* Ընտանիքի կարգավիճակի գնահատման համար կիրառվել է հետևյալ հարցը. «Ասացեք խնդրեմ, 0-10 բալանոց սանդղակով հասարակության ո՞ր աստիճանի վրա կտեղադրեիք Ձեր ընտանիքը, որտեղ 0-ն նշանակում է հասարակության ամենացածր, իսկ 10-ը՝ ամենաբարձր աստիճանը»: Քանի որ կապիտալիստական հասարակությունում ընտանիքի սոցիալական կարգավիճակը էապես շաղկապված է ընտանիքի հարստության հետ, ապա առաջին մոտավորությամբ կարելի է ենթադրել, որ այս հարցի միջոցով կարելի է «բավականաչափ լավ» մոտարկել ընտանիքի բարեկեցության մակարդակը:

### Սահմանումներ

Ներկայացված աշխատանքում ենթադրվում է, որ ընտանիքի բարեկեցության ճշգրիտ գնահատականը մնում է անհայտ և գլխավոր խնդիրն է դրա գնահատման (մոտարկման) մեթոդներից ընտրել որևէ չափանիշով լավագույնը:

Ընտանիքի բարեկեցության լավագույն **մոտարկող մեթոդի** ընտրության համար կիրառվել է հետևյալ մոտեցումը: Ենթադրենք ունենք ընտանիքի վիճակը նկարագրող բնութագիր, որի համար առողջ բանականությունը հուշում է, որ այդ բնութագրի արժեքները բարձր և ցածր բարեկեցությամբ ընտանիքների համար պետք է տարբերվեն: Այդ բնութագիրը կանվանենք **բարեկեցության գնահատման մեթոդի աղեկատվության չափանիշ**:

Օրինակ, բանական է ենթադրել, որ առողջապահական ծառայությունների ֆինանսական մատչելիությունը, այլ հավասար պայմաններում, ավելի բարեկեցիկ ընտանիքի համար ավելի բարձր է՝ համեմատած պակաս բարեկեցիկ ընտանիքի հետ: Այսինքն՝ «Առողջապահական ծառայությունները ընտանիքի համար ֆինանսապես մատչելի համարող հարցվածների քանակը» ինդիկատորը կարող է կիրառվել որպես բարեկեցության գնահատման մեթոդի աղեկատվության չափանիշ:

Այս մոտեցման դեպքում, կարելի է ձևակերպել հետևյալ սահմանումը: **Բարեկեցության գնահատման երկու մեթոդներից առավել աղեկատ է այն, որի կիրառման դեպքում ընտրանքի ստորաբաժանումից ստացված խմբերում բարեկեցության գնահատման մեթոդի աղեկատվության չափանիշի արժեքները միմյանցից ավելի մեծ չափով են տարբերվում:** Այլ կերպ՝ բարեկեցության գնահատման համար ավելի աղեկատ է այն մեթոդը, որն ավելի ուժեղ է դիֆերենցում աղեկատվության չափանիշը բարեկեցության խմբերում:

Շարունակենք վերոբերյալ օրինակը: Ենթադրենք, որ ամբողջ ընտրանքում առողջապահական ծառայություններն իրենց ընտանիքի համար մատչելի են համարել հարցվածների 60%-ը: Եթադրենք նաև, որ ընտրանքը բարձր և ցածր բարեկեցությամբ երկու հավասար ծավալներով խմբի ստորաբաժանելու համար<sup>1</sup> կիրառվել են երկու մեթոդ՝ A և B: Ենթադրենք, որ A մեթոդով ընտրանքը

<sup>1</sup> Ընդհանուր դեպքում կիրառական նշանակություն ունեն ընտրանքի բաժանումը՝ կախված նրա ծավալից և պահանջվող վիճակագրական ճշտությունից, տեղիների (երեք հավասար մասերի), կվարտիլների և կվինտիլների:

երկու հավասար խմբի բաժանելուց հետո ցածր բարեկեցությամբ ընտանիքների խմբում հարցվածների 40% է հաղորդել է, որ իրենց ընտանիքը կարողանում է բավարար չափով հոգալ անհրաժեշտ առողջապահական ծախսերը, իսկ բարձր բարեկեցությամբ ընտանիքներում նման պատասխաններ են հաղորդել 80%: Իսկ B մեթոդով ընտրանքը երկու հավասար խմբի բաժանելու դեպքում ցածր բարեկեցությամբ խմբում առողջապահական ծառայություններն իրենց ընտանիքի համար մատչելի են համարել հարցվածների 50%ը, իսկ բարձր բարեկեցությամբ խմբում՝ 70%: Այս օրինակում ակնհայտ է, որ A մեթոդն ավելի ուժեղ է դիֆերենցել բարեկեցության գնահատման չափանիշը, քան B մեթոդը, քանի որ առաջին (A) դեպքում աղեկվատության չափանիշի արժեքները բարձր և ցածր բարեկեցության խմբերում տարբերվում են 40%ով, իսկ երկրորդ (B) դեպքում՝ 20%ով:

### Ստացված արդյունքներ

Բարեկեցության գնահատման դիտարկվող երեք մեթոդների (որոնցից մեկը ներկայացված է երկու տարբերակով) համեմատության համար լավագույնը կլինեն դրանց միջոցով ընտրանքը հավասար մասերի բաժանելը: Դա հնարավոր էր հարաբերականորեն լավ իրականացնել համեմատվող երեք մեթոդներից երկուսի դեպքում, այն է.

- Բարեկեցության գնահատումը ըստ տնային տնտեսության նախորդ ամսվա ընթացքում կատարած ընդհանուր ծախսերի (բերված 4 անձից ընտանիքի համար) և

- Բարեկեցության գնահատումն ըստ ընտանիքի ունեցվածքի, այսինքն՝ կենցաղային, անշարժ, շարժական և արտադրական գույքի հաշվառման:

Սակայն երրորդ մեթոդի դեպքում, որն էր.

- Բարեկեցության գնահատումը, երբ որպես այն մոտարկող փոփոխական է սահմանվում անձի կողմից իր ընտանիքի դիրքավորումը սոցիալական կարգավիճակի «աստիճանի» վրա, դա հնարավոր չէր: Այդ մեթոդի կիրառման դեպքում ընտրանքը ստորաբաժանվում է աղյուսակ 1-ի «Վալիդ տոկոս» սյունակում ներկայացված բաշխմամբ:

Բաշխումից երևում է, որ այն հնարավոր չէ տրոհել հավասար ծավալներով խմբերի: Հնարավոր ստորաբաժանումներից մեկը, որի դեպքում ստացվում է չորս միմյանցից քիչ տարբերվող 4 խումբ, ներկայացված է Հավելվածի ներկայացված աղյուսակ 1-ի «Դասակարգում ըստ 4 խմբի» սյունակում:

Այդ պատճառով առաջին երկու բնութագրերի (որոնցից երկրորդը ներկայացված է երկու տարբերակով) կիրառմամբ ընտրանքը ստորաբաժանվել է նույն ծավալներն ունեցող չորսական խմբերի: Դա հնարավոր էր, քանի որ այդ բնութագրերի արժեքների բազմությունը բավականաչափ մեծ էր:

Այսպիսով, տվյալների շտեմարանում կառուցվել են ամբողջ ընտրանքը 4 խմբի բաժանող չորս փոփոխականներ, որոնց միջոցով ընտրանքի խմբերի ստորաբաժանման դեպքում ստացվում են բարեկեցության խմբերի հավասար ծավալներ:

Կյանքի որակի հետազոտության հարցաշարից ընտրվել են բարեկեցության գնահատման մեթոդի աղեկվատության 17 չափանիշներ (փոփոխականներ): Դրանց համապատասխանող հարցաթերթային հարցերը (անհրաժեշտության

դեպքում նաև նախորդող ընդհանուր հարցը) և պատասխանների տարբերակները ներկայացված են Հավելվածի աղյուսակ 2-ում:

Հավելվածի Աղյուսակ 3-ում ներկայացված են բարեկեցության գնահատման մեթոդի աղեկատվության 17 չափանիշների (փոփոխականների) բաշխումները բարեկեցության գնահատման չորս մեթոդներով կառուցված բարեկեցության խմբերում: Աղյուսակում դյուրինացնելու համար դրա պատկերումը հարցաթերթում նշված հարցերի փոխարեն առաջին սյունակում տրված են դրանց համապատասխանող համարները, որոնք համապատասխանում են աղյուսակ 2-ի համարներին: Նկատենք, որ աղյուսակ 3-ում բարեկեցության գնահատման մեթոդների աղեկատվության չափանիշների արժեքները բարեկեցության խմբերում կամ մոնոտոն աճում են, կամ՝ նվազում, ինչը նշանակում է, որ դրանք աղեկվատ են դիֆերենցում բարեկեցության խմբերը<sup>1</sup>:

Այժմ անհրաժեշտ է սահմանել այնպիսի մոտեցում, որով հնարավոր լինի օգտագործելով այդ բաշխումները գնահատել, թե կիրառված չորս մոտեցումներից ո՞րն է համեմատաբար «ավելի լավը»: Նախ սահմանենք, թե ի՞նչ է նշանակում «ավելի լավը»:

Դրա համար հիմնվենք վերը նշված սահմանումից, որ բարեկեցության գնահատման համար ավելի աղեկվատ է այն մեթոդը, որը բարեկեցության խմբերում ավելի ուժեղ է դիֆերենցում աղեկվատության չափանիշը: Աղեկվատության չափանիշի դիֆերենցվածության աստիճանի գնահատման համար կիրառենք երկու վիճակագրական ցուցանիշ.

- աղեկվատության չափանիշի թռիչքը (размах, range) բարեկեցության խմբերում, որն իրենից ներկայացնում է բարեկեցության խմբերում ցուցանիշի առավելագույն և նվազագույն միջին արժեքների տարբերությունը և

- աղեկվատության չափանիշի դիսպերսիան բարեկեցության խմբերում:

Եթե ցուցանիշի արժեքների թռիչքի անհրաժեշտությունն ակնհայտ է, ապա դիսպերսիայի դիտարկման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ այն նկարագրում է ցուցանիշի փոփոխականությունը, երբ ունենք բարեկեցության երկուսից ավելի խմբեր: Որքան մեծ է դիսպերսիան, այնքան, այլ հավասար պայմաններում, ավելի «հեռու են» միմյանցից ցուցանիշի արժեքները բարեկեցության տարբեր խմբերում: Այդ ցուցանիշները ներկայացված են Հավելվածի աղյուսակ 4-ում:

Այսպիսով ունենք բարեկեցության խմբերի բաժանման յուրաքանչյուր մեթոդի աղեկվատության գնահատման 34 ցուցանիշ՝ 17 թռիչք և 17 դիսպերսիա: Առողջ բանականությունը հուշում է, որ առավել աղեկվատ է բարեկեցության խմբերի սահմանման այն մեթոդը, որ 17 չափանիշներից ավելի մեծ քանակով դեպքերում է ունեցել չափանիշի ամենամեծ դիֆերենցող ուժը: Մյուս կողմից, ցանկալի կլիներ նաև հաշվառել ցուցանիշի արժեքների միջև հարաբերական տարբերությունները, քանի որ, ինչպես հայտնի է, տոկոսային գնահատականների կիրառման դեպքում 50-ի մոտ արժեքների միջակայքում տարբերությունների վիճակագրական հավաստիությունների միջակայքերը լինում են ավելի մեծ:

<sup>1</sup> Իհարկե, այն ենթադրությամբ, որ զանգվածային հետազոտությունը իր բոլոր փուլերում՝ ընդհուպ մինչև տվյալների շտեմարանի կազմավորումը, իրականացվել է սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդիկայի բոլոր պահանջների պահպանմամբ:

Դրա համար աղյուսակ 4-ի տվյալները նորմավորվել են ըստ յուրաքանչյուր չափանիշի դիսպերսիաների և թռիչքների քառյակների: Նորմավորված արժեքերը ներկայացված են Հավելվածի Աղյուսակ 5-ում: Նորմավորված արժեքների դեպքում արդեն թույլատրելի է բարեկեցության գնահատման մեթոդները համեմատելու համար կիրառել գնահատման 17 չափանիշների միջինացված արժեքները: Դրանք տրված են աղյուսակ 5-ի վերջին տողում:

Աղյուսակի տվյալներից ակնհայտ է, որ և՛ թռիչքների, և՛ միջինների քառյակներում մեթոդների ռանգերը բաշխվել են ըստ էության համանման կերպով: Գործոնային գնահատականների մեթոդի երկրորդ տարբերակը (26 փոփոխականների կիրառմամբ) և ընտանիքի ամսական բերված եկամտի մեթոդները լավագույն կերպով են դիֆերենցում բարեկեցության մակարդակները: Գործոնային գնահատականների մեթոդի երկրորդ տարբերակը (14 փոփոխականների կիրառմամբ) և՛ ռանգերի, և՛ դիսպերսիաների միջինների ռանգերով երրորդն է, իսկ ընտանիքի կարգավիճակի մեթոդով բարեկեցության գնահատման մեթոդը չորրորդն է:

### Եզրակացություններ

Այդ աժեքների դիտարկումից բխում է, որ բարեկեցության գնահատման կիրառված չորս մեթոդներն ըստ ադեկվատության դասակարգվում են նվազման կարգով հետևյալ կերպ.

1. Գործոնային գնահատականները՝ հաշվարկված կենցաղային, անշարժ, շարժական և արտադրական գույքի 26 տեսակների հաշվառմամբ, տվել է լավագույն արդյունքները:

2. Ընտանիքի ամսական եկամուտը՝ բերված տեսքով (չորս անձից կազմված ընտանիքի համար), տվել է համարյա նմանատիպ արդյունք, ինչ առաջինը:

3. Գործոնային գնահատականները՝ հաշվարկված միայն կենցաղային գույքի 14 տեսակների հաշվառմամբ՝ տվել է երրորդ արդյունքը:

4. Բարեկեցության մոտարկումը ընտանիքի կարգավիճակային խմբերի միջոցով՝ տվել է ամենավատ արդյունքը:

Ընդ որում, 1-ին և 2-րդ մեթոդների ադեկվատության գնահատականները միմյանցից ըստ էության չեն տարբերվում և ձևական թվային գնահատականները (միջինացված թռիչքները և դիսպերսիաները) հիմք չեն հանդիսանում դրանցից որևէ մեկին առավելություն տալու համար: Դրանք կարող են կիրառվել ըստ հետազոտողի հայեցողության ընտրված այլ չափանիշների հիման վրա:

Այլ հավասար պայմաններում առավել նպատակահամար է կիրառել «Ընտանիքի ամսական եկամուտը՝ բերված տեսքով», քանի որ այն ձևավորվում է ավելի կոմպակտ հարցաթերթով և չի պահանջում ծավալուն հաշվարկներ:

Աշխատանքում ստացված առավել կարևոր արդյունքն այն է, որ ստացված արդյունքները բարձրացնում են վստահությունը դրամական տեսքով հավաքագրված տվյալների միջոցով ընտրանքը բարեկեցության խմբերի բաժանման ադեկվատության նկատմամբ, քանի որ այն՝ տվյալ աշխատանքում կիրառված մոտեցման շրջանակներում, իր դիֆերենցող ուժով հավասարազոր էր բարեկեցության 26 տարաբնույթ օբյեկտիվ (ունեցվածքի առկայություն/բացակայություն) ցուցանիշների կիրառմամբ կառուցված բնութագրին:

Հավելված

Աղյուսակ 1

«Ասացե, խնդրեն, 0-10 բալանոց սանդղակով հասարակության ո՞ր աստիճանի վրա կտեղադրեիք Ձեր ընտանիքը, որտեղ 0-ն նշանակում է հասարակության ամենացածր, իսկ 10-ը՝ հասարակության ամենաբարձր աստիճանը»

Կարգավիճակ	Քանակ	Տոկոս	Վալիդ տոկոս	Դասակարգում 4 խմբի
0	26	1.3	1.3	
1	16	0.8	0.8	
2	30	1.5	1.5	0-4 կարգավիճակներում՝ ընդամենը 18.1
3	115	5.8	5.9	
4	168	8.4	8.6	
5	499	25	25.4	5 կարգավիճակում ընդամենը՝ 25.4
6	219	11	11.2	
7	255	12.8	13.0	6-8 կարգավիճակում՝ ընդամենը 37.0
8	251	12.6	12.8	
9	103	5.2	5.3	9-10 կարգավիճակում ընդամենը՝ 19.5
10	279	14	14.2	
Ընդամենը վալիդ արժեքների	1,961	98.2	100.0	
Զկա պատասխան	1	0.1		
Դժվարացել են պատասխանել	35	1.8		
Ընդամենը բացակայող արժեքների	36	1.8		
Ընդամենը՝ ամբողջ ընտրանքը	1,997	100		

Բարեկեցության գնահատման մեթոդի արեկվատության գնահատման չափանիշները

N	Չափ	Պատասխանի տարբերակներ
1	«Վերջին տարվա ընթացքում եղել է դեպք, երբ Դուք համարել եք որ պետք է դիմել բժշկի ասկայն չեք դիմել»: Եթե «այո», ապա. «Ո՞րն էր չդիմելու հիմնական պատճառը»	1. Ֆինանսական 2. բժիշկը/բուժաօգնությունը հեռու էր 3. ժամանակ չկար 4. այլ պատասխան
2	«Վերջին մեկ տարվա ընթացքում հետևյալ ճանապարհորդություններից որո՞նք եք իրականացրել, միայն Դուք կամ Ձեր ընտանիքի անդամները». «Համզատանալ Հայաստանում»	1. Այո 2. Ոչ
3	«Վերջին մեկ տարվա ընթացքում հետևյալ ճանապարհորդություններից որո՞նք եք իրականացրել միայն Դուք կամ Ձեր ընտանիքի անդամները». «Համզատանալ Վրաստանում՝ ծովափին»	1. Այո 2. Ոչ
4	«Վերջին մեկ տարվա ընթացքում հետևյալ ճանապարհորդություններից որո՞նք եք իրականացրել միայն Դուք կամ Ձեր ընտանիքի անդամները». «Համզատանալ արտասահմանում»,	1. Այո 2. Ոչ
5	Որքա՞ն հաճախ եք «ռեստորան այցելում»	1. Անճն օր <sup>2</sup> 2. Շաբաթը մի քանի անգամ 3. Ամիսը մի քանի անգամ 4. Տարեկան մի քանի անգամ
6	«Եղել է արդյոք անցյալ տարվա ընթացքում, որ Դուք ֆինանսական պատճառով իրաժարվել եք հետևյալ միջոցառումից» «Ձեք նշել ընտանիքի անդամի ծնունդը կամ հյուր չեք իրավիլել»:	1. Այո <sup>3</sup> 2. Ոչ
7	«Եղել է արդյոք անցյալ տարվա ընթացքում, որ Դուք ֆինանսական պատճառով իրաժարվել եք հետևյալ միջոցառումներից» «Հարսանիք/կնունք/ծնունդ չեք գնացել»	1. Այո 2. Ոչ

<sup>1</sup> Որպես չափանիշ կիրառվել է «Ֆինանսական» պատճառով բժշկի չդիմած անձանց քանակը:  
<sup>2</sup> Որպես չափանիշ կիրառվել է «Անճն օր» կամ «Շաբաթը մի քանի անգամ» ռեստորան այցելած անձանց քանակը:  
<sup>3</sup> 6-9 հարցերի դեպքում որպես չափանիշ է կիրառվել «Այո» պատասխանների տոկոսը:

8	«Եղե՛լ լ է արոյոք անցյալ տարվա ընթացքում, որ Դուք ֆինանսական պատճառով իրաժարվել եք հետևյալ միջոցառումից». «Չեք մասնակցել որևէ տոմսի կամ ընկերական/բարեկամական հավաքի»	1. Այո 2. Ոչ
9	«Եղե՛լ լ է արոյոք անցյալ տարվա ընթացքում, որ Դուք ֆինանսական պատճառով իրաժարվել եք հետևյալ միջոցառումից». «Ցանկացել եք, սակայն՝ հյուր չեք գնացել»	1. Այո 2. Ոչ
10	«Որքանո՞վ է հավանական, որ կարող է տեղի ունենալ հետևյալը՝ «Չվանդանայու դեպքում չեք կարողանա ստանալ ամհրաժեշտ բուժում»	1. Ընդհանրապես հավանական չէ՝ 2. Ավելի շուտ հավանական չէ 3. Ավելի շուտ հավանական է 4. Լիովին հավանական է
11	«Որքանո՞վ է Ձեզ համար ֆինանսապես մատչելի հետևյալ հաստատություններում բուժումը». «Բուժվետ/ամբուլատորիա (միայն գյուղերում)»	1. Ընդհանրապես մատչելի չէ՝ 2. Ավելի շուտ մատչելի չէ 3. Ավելի շուտ մատչելի է 4. Լիովին մատչելի է
12	«Որքանո՞վ է Ձեզ համար ֆինանսապես մատչելի հետևյալ հաստատություններում բուժումը». «Պոլիկլինիկա»	1. Ընդհանրապես մատչելի չէ 2. Ավելի շուտ մատչելի չէ 3. Ավելի շուտ մատչելի է 4. Լիովին մատչելի է
13	«Որքանո՞վ է Ձեզ համար ֆինանսապես մատչելի հետևյալ հաստատություններում բուժումը». «Ատանաբուժարան»	1. Ընդհանրապես մատչելի չէ 2. Ավելի շուտ մատչելի չէ 3. Ավելի շուտ մատչելի է 4. Լիովին մատչելի է
14	«Որքանո՞վ է Ձեզ համար ֆինանսապես մատչելի հետևյալ հաստատություններում բուժումը». «Սասնավոր բժշկական կենտրոն»	1. Ընդհանրապես մատչելի չէ 2. Ավելի շուտ մատչելի չէ 3. Ավելի շուտ մատչելի է 4. Լիովին մատչելի է

<sup>1</sup> 10 հարցի դեպքում որպես չափանիշ է կիրառվել «Ընդհանրապես հավանական չէ» կամ «Ավելի շուտ հավանական չէ» պատասխաններ տված հարցվածների տոկոսը:

<sup>2</sup> 11-17 հարցերի դեպքում որպես չափանիշ է կիրառվել «Ընդհանրապես մատչելի չէ» կամ «Ավելի շուտ մատչելի չէ» պատասխաններ տված հարցվածների տոկոսը:

15	«Որքանո՞վ է Ձեզ համար ֆինանսապես մատչելի հետևյալ հաստատություններում բուժումը» «Դիագնոստիկ կենտրոն»	<ol style="list-style-type: none"> <li>1. Ընդհանրապես մատչելի չէ</li> <li>2. Ավելի շուտ մատչելի չէ</li> <li>3. Ավելի շուտ մատչելի է</li> <li>4. Լիովին մատչելի է</li> </ol>
16	«Որքանո՞վ է Ձեզ համար ֆինանսապես մատչելի հետևյալ հաստատություններում բուժումը». «Հիվանդանոց»	<ol style="list-style-type: none"> <li>1. Ընդհանրապես մատչելի չէ</li> <li>2. Ավելի շուտ մատչելի չէ</li> <li>3. Ավելի շուտ մատչելի է</li> <li>4. Լիովին մատչելի է</li> </ol>
17	«Որքանո՞վ է Ձեզ համար ֆինանսապես մատչելի հետևյալ հաստատություններում բուժումը». «Ծննդատուն (միայն կանանց համար)»	<ol style="list-style-type: none"> <li>1. Ընդհանրապես մատչելի չէ</li> <li>2. Ավելի շուտ մատչելի չէ</li> <li>3. Ավելի շուտ մատչելի է</li> <li>4. Լիովին մատչելի է</li> </ol>

**Աղյուսակ 3**

**Բարենկեցության գնահատման մեթոդի արելակատության 17 չափանիշների (փոփոխականների) բաշխումները բարենկեցության գնահատման չորս մեթոդներով կառուցված բարենկեցության խմբերում (թվային տվյալները տրված են տոկոսներով)**

N	Ընտանիքի կարգավիճակը			Գործնային գնահատականներ՝ 26 փոփոխական			Գործնային գնահատականներ՝ 14 փոփոխական			Ընտանիքի բերված եկամուտը			ամսական			
	Ց	ՍՑ	ՍՄ	Ց	ՍՑ	ՍՄ	Ց	ՍՑ	ՍՄ	Ց	ՍՑ	ՍՄ	Ց	ՍՑ	ՍՄ	
1	89.8	82.6%	72.8%	75.8%	89.7%	86.6%	78.3%	60.4%	92.7%	85.4%	79.0%	56.5%	93.4%	94.2%	73.8%	55.3%
2	7.9	12.2%	24.1%	19.9%	7.2%	11.2%	19.1%	30.5%	5.5%	10.7%	19.4%	32.3%	7.3%	11.3%	20.1%	27.2%
3	3.4	7.0	8.7	5.8	1.7	3.2	7.6	14.4	0.6	1.4	6.6	19.5	1.6	2.9	7.6	13.0
4	2.3	4.2	7.6	5.5	0.3	2.6	6.5	11.3	0.6	1.4	5.5	14.4	0.6	1.8	6.4	12.4
5	4.8	9.6	16.1	15.8	4.2	7.8	12.8	23.7	2.8	8.2	12.9	24.4	4.5	4.4	14.9	26.3
6	73.7	62.2	48.1	49.6	70.6	65.9	52.8	39.0	73.4	65.5	53.0	36.4	76.4	67.0	51.3	40.9
7	56.1	46.1	34.4	35.6	56.5	48.4	38.0	25.4	59.3	46.0	38.9	24.2	62.6	52.5	34.7	26.1
8	57.1	48.9	35.8	38.6	57.5	51.5	39.8	26.9	58.1	50.2	41.2	25.4	60.3	52.3	37.1	31.1
9	75.4	59.7	46.3	51.3	75.7	63.6	50.9	37.4	76.2	64.3	52.2	33.6	75.7	67.5	49.1	37.9
10	69.5	69.3	54.5	61.7	69.9	69.4	58.2	55.6	66.2	70.2	60.3	53.9	67.8	69.2	58.7	57.1
11	59.3	69.8	75.8	67.3	61.8	58.3	74.9	75.1	62.5	68.2	75.7	76.6	64.8	74.0	71.1	74.3
12	49.6	55.2	62.9	63.1	50.1	55.4	60.2	66.1	51.8	58.0	56.5	68.2	49.2	51.6	61.5	70.4
13	25.9	32.9	41.8	42.1	24.9	31.4	38.2	50.0	29.9	35.1	36.1	44.4	29.8	28.3	37.5	51.5
14	10.7	15.6	25.4	25.2	12.2	15.8	20.8	31.2	15.5	17.8	19.4	28.2	13.7	13.6	22.9	31.7
15	11.0	15.2	23.8	21.2	11.6	14.6	19.6	28.2	12.5	17.2	18.5	26.2	13.0	13.3	19.8	30.2
16	13.3	19.2	32.4	29.1	20.3	17.9	25.4	36.2	18.9	25.4	22.6	33.1	18.2	19.9	28.2	34.3
17	33.3	49.4	50.0	44.9	33.7	47.4	47.4	53.0	36.5	46.8	49.9	46.9	38.7	47.4	50.2	51.5

Չ – ցածր, ՍՑ – Միջին ցածր, ՍՄ – Միջին բարձր, Բ – Բարձր

**Աղյուսակ 4**  
**Բարենեցության գնահատման մեթոդների արեկվատության 17 չափանիշների բռնիքներն ու դիսպերսիաները բարենեցության գնահատման չորս մեթոդների դեպքում**

N	Դիսպերսիա				Թռիչք			
	Ընտանիքի կարգավիճակը	Փորձումային գնահատականներ՝ 26 փուլիդիտական	Փորձումային գնահատականներ՝ 14 փուլիդիտական	Ընտանիքի ամսական բերված եկամուտը	Ընտանիքի կարգավիճակը	Փորձումային գնահատականներ՝ 26 փուլիդիտական	Փորձումային գնահատականներ՝ 14 փուլիդիտական	Ընտանիքի ամսական բերված եկամուտը
1	0.006	0.017	0.024	0.034	14.0	29.3	36.2	38.1
2	0.005	0.011	0.014	0.008	12.0	23.3	26.8	19.9
3	0.000	0.003	0.008	0.003	2.4	12.7	18.9	11.4
4	0.000	0.002	0.004	0.003	3.2	11.0	13.8	11.8
5	0.003	0.007	0.008	0.011	11.0	19.5	21.6	21.8
6	0.014	0.020	0.026	0.025	24.1	31.6	37.0	35.5
7	0.010	0.018	0.021	0.028	20.5	31.1	35.1	36.5
8	0.010	0.018	0.020	0.018	18.5	30.6	32.7	29.2
9	0.016	0.027	0.033	0.030	24.1	38.3	42.6	37.8
10	0.005	0.006	0.005	0.004	7.8	14.3	12.3	10.7
11	0.005	0.008	0.004	0.002	8.0	13.3	14.1	9.5
12	0.004	0.005	0.005	0.009	13.5	16.0	16.4	21.2
13	0.006	0.012	0.004	0.011	16.2	25.1	14.5	21.7
14	0.005	0.007	0.003	0.008	14.5	19.0	12.7	18.0
15	0.003	0.005	0.003	0.006	10.2	16.6	13.7	17.2
16	0.008	0.007	0.004	0.006	15.8	15.9	14.2	16.1
17	0.006	0.007	0.003	0.003	11.6	19.3	10.4	12.8

Բարելեցության գնահատման մեթոդների արեկվատության 17 չափանիշների նորմավորված բաղադրանքները ու դիսպերսիաները բարելեցության գնահատման չորս մեթոդների դեպքում

N	Նորմավորված դիսպերսիաներ				Նորմավորված բաղադրանքներ			
	Ընտանիքի կարգավիճակը	Գործնային գնահատականներ՝ 26 փուլից	Գործնային գնահատականներ՝ 14 փուլից	Ընտանիքի անասկան ընթացակարգի վերականգնումը	Ընտանիքի կարգավիճակը	Գործնային գնահատականներ՝ 26 փուլից	Գործնային գնահատականներ՝ 14 փուլից	Ընտանիքի անասկան ընթացակարգի վերականգնումը
1	0.00	0.41	0.66	1.00	0.00	0.63	0.92	1.00
2	0.00	0.62	1.00	0.31	0.00	0.76	1.00	0.53
3	0.00	0.39	1.00	0.31	0.00	0.62	1.00	0.55
4	0.00	0.52	1.00	0.68	0.00	0.74	1.00	0.81
5	0.00	0.54	0.70	1.00	0.00	0.79	0.98	1.00
6	0.00	0.50	1.00	0.92	0.00	0.58	1.00	0.88
7	0.00	0.45	0.64	1.00	0.00	0.66	0.91	1.00
8	0.00	0.86	1.00	0.84	0.00	0.85	1.00	0.75
9	0.00	0.65	1.00	0.79	0.00	0.77	1.00	0.74
10	0.76	1.00	0.72	0.00	0.00	1.00	0.69	0.45
11	0.48	1.00	0.44	0.00	0.00	0.87	1.00	0.25
12	0.00	0.07	0.10	1.00	0.00	0.32	0.38	1.00
13	0.31	1.00	0.00	0.97	0.16	1.00	0.00	0.68
14	0.51	0.85	0.00	1.00	0.29	1.00	0.00	0.84
15	0.04	0.63	0.00	1.00	0.00	0.91	0.50	1.00
16	1.00	0.72	0.00	0.48	0.84	0.89	0.00	1.00
17	0.78	1.00	0.03	0.00	0.13	1.00	0.00	0.27
Միջիններ	0.23	0.66	0.55	0.66	0.08	0.79	0.67	0.75
Ռանգեր	4	1-2	3	1-2	4	1	3	2

**ԱՄՓՈՓՈՒՄ**

Հոդվածում առաջարկվում է մոտեցում սոցիոլոգիական և տնտեսագիտական զանգվածային հետազոտություններում տնային տնտեսությունների բարեկեցության գնահատման երեք մեթոդների որակի համեմատության համար, հիմնված յուրաքանչյուր մեթոդով ստացված բարեկեցության խմբերում տնային տնտեսության բարեկեցությունից կախված 17 բնութագրերի գնահատականների մակարդակների միջև թռիչքի և միջխմբային դիսպերսիաների հաշվարկի վրա:

**АННОТАЦИЯ****МАНУКЯН С. А. - ОЦЕНКА СРАВНИТЕЛЬНОЙ АДЕКВАТНОСТИ ИНДИКАТОРОВ ОЦЕНКИ БЛАГОСОСТОЯНИЯ В МАССОВЫХ ОПРОСАХ**

В статье предлагается подход к сопоставительной оценке качества трёх методов разбиения выборки домашних хозяйств на группы благосостояния в социологических и экономических массовых исследованиях, с использованием средних значений размаха и межгрупповой дисперсии уровней оценок 17-и характеристик благосостояния домашних хозяйств для каждого из методов.

**SUMMARY****MANUKYAN S. – EVALUATION OF COMPARATIVE ADEQUACY OF HOUSEHOLD WELFARE INDICATORS IN MASS SURVEYS**

The article suggests an approach to compare the quality of three methods of households division into welfare groups in sociological and economical surveys using the mean range and inter- group variance of seventeen welfare characteristics of households for each method.

**ՍԱՐԳԻՍ ՂԱՆԹԱՐՋՅԱՆ**

*տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,  
ԵՊՀ կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ  
էլ.փոստ՝ intellekt13@rambler.ru*

**ՌԻՍԿԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԻՆՈՎԱՑԻՈՆ ՆԱԽԱԳԾԵՐՈՒՄ**

Ինովացիոն նախագծերի իրականացման կարևորագույն փուլերից մեկը ռիսկերի որոշումն է:

Հայտնի է, որ ռիսկը ոչ բարենպաստ արդյունքի հավանականություն է, այսինքն կորուստների ծագումը կամ եկամուտների պակաս ստանալը՝ կանխատեսված տարբերակի համեմատ:

Ռիսկերի կառավարման այս կամ այն մեխանիզմների օգտագործումը զգալիորեն կախված է այն ռիսկերի բազմությունից, որոնք ուղեկցում են ինովացիոն նախագիծը և նրանց ազդեցության աստիճանից նախագծի արդյունքների վրա: Ռիսկերը կարող են լինել ինչպես ընդհանուր բոլոր նախագծերի համար, այնպես էլ յուրահատուկ, կախված կոնկրետ ինովացիոն նախագծի առանձնահատկությունից:

Որպես հետևանք, առաջնային նշանակություն ունի նախագծային ռիսկերի նույնականացումը:

Գրականությունում [1] առանձնացվում են ռիսկերի ղեկավարման համակարգի վեց ընթացակարգեր՝

1. ռիսկերի ղեկավարման պլանավորում,
2. ռիսկերի նույնացում,
3. ռիսկերի որակական գնահատում,
4. քանակական գնահատում,
5. ռիսկերի հետևանքների պլանավորում,
6. ռիսկերի մոնիտորինգ և վերահսկում:

Այս բոլոր ընթացակարգերը փոխներգործում են միմյանց հետ: Նրանցից յուրաքանչյուրը կատարվում է զոնե մեկ անգամ յուրաքանչյուր ինովացիոն նախագծի իրագործման ժամանակ:

Անկախ ճյուղից, որում իրագործվում է ինովացիոն նախագիծը, վերլուծենք յուրաքանչյուր ընթացակարգի առանձնահատկությունները:

1. Ռիսկերի կառավարման պլանավորումը.

Ռիսկերի կառավարման պլանավորում ասելով գրականությունում հասկանում են այն ընթացակարգը, որը օգտագործվում է ինովացիոն նախագծի օգտագործման որոշում ընդունելու և ռիսկերի ղեկավարման պլանավորման ժամանակ [1]:

Մեր կարծիքով այդ գործընթացն իր մեջ պետք է ընդգրկի բոլոր որոշումները, որոնք ընդունվել են նախագծերի ռիսկերի ղեկավարման՝ կազմակերպման, կադրային ապահովման, նախընտրելի մեթոդաբանության, ռիսկերի նույնացման համար տվյալների աղբյուրների որոշման ժամանակ:

2. Ռիսկերի նույնացումը.

Այս ընթացակարգի ժամանակ որոշվում են այն ռիսկերը, որոնք կարող են էականորեն ազդել նախագծի վրա: Վերջին հինգ տարիների ընթացքում ՀՀ-ում տեղի ունեցող դոլարի կուրսի շեշտակի անկումը և հայկական դրամի կուրսի ամրապնդումը չեն կարող չազդել տնտեսական գործընթացների վրա: Հետևաբար փոխվելու են այս կամ այն ճյուղում իրագործվող ինովացիոն նախագծերում նախատեսված նոր տեխնոլոգիաների մեջ օգտագործվող հումքերի և սարքավորումների գները:

3. Ռիսկերի որակական գնահատումը.

Որակական վերլուծությունը ենթադրում է ռիսկերի ծագման պայմանների գնահատում և նրանց ազդեցությունը նախագծի վրա ստանդարտ կամ ոչ ստանդարտ մեթոդներով և միջոցներով:

Որակական գնահատման խնդիրը յուրաքանչյուր ռիսկի կարևորության աստիճանի որոշման մեջ է, որպեսզի այնուհետև հնարավոր լինի ընտրել հակազդելու ձևը:

4. Քանակական գնահատումը.

Գրականությունում [1] ռիսկերի քանակական գնահատում անելիս հասկանում են ռիսկերի ծագման հավանականության որոշումը և ռիսկերի հետևանքների ազդեցությունը նախագծի վրա: Բարդ ինովացիոն նախագծերի համար պետք է ընտրել քանակական գնահատման այնպիսի մեթոդներ, որոնք հիմնվում են նախագծերի որակական գնահատման արդյունքների վրա:

5. Ռիսկերի հետևանքների պլանավորումը.

Գրականությունում ռիսկերի հետևանքների պլանավորման տակ հասկանում են նախագծերի վրա ռիսկերի բացասական ազդեցության հաշվարկների այնպիսի մեթոդների և տեխնոլոգիաների մշակումը, որոնք թույլ են տալիս բաշխել նույնացված ռիսկերն ըստ տեսակների, հաշվի առնելով օգտագործվող վերլուծության մեթոդաբանությունը [1]:

Պլանավորումը` ռիսկ-մեներջմենթի կարևորագույն գործառնություններից մեկն է: Արձագանքի պլանավորման ռազմավարությունը պետք է մաքսիմալ աստիճանով հաշվի առնի ռիսկերի տեսակները, որոնք ազդում են նախագծի վրա, այսինքն հիմնվեն ռիսկերի նույնացման ընթացակարգերի արդյունքների վրա:

6. Ռիսկերի մոնիտորինգը և վերահսկումը.

Այս ընթացակարգի սահմաններում կատարվում է նույնացված ռիսկերի կազմի կայունության վերահսկում, մնացորդային ռիսկերի որոշում, ռիսկերից պաշտպանության պլանների կատարում և նրանց արդյունավետության որոշում [1]:

Այս ընթացակարգի անցկացման արդյունքում կատարվում է ինֆորմացիայի ընտրություն, որն անհրաժեշտ է այլընտրանքային ստրատեգիաների իրագործման համար և նախագծերի մեջ անհրաժեշտության դեպքում փոփոխությունների ներմուծում:

Նախագծային ռիսկերի տարբեր տեսակներն ունեն տարբեր բնութագրեր: Այդ իսկ պատճառով անհրաժեշտություն է ծագում առանձնացնել այդ ռիսկերը, որոնք ամենաբարդն են ղեկավարման տեսակետից, ինչը թույլ կտա մշակել պաշտպանության արդյունավետ մեխանիզմներ:

Այս խնդրի լուծման համար որպես մեթոդական բազա ծառայում է ռիսկերի դասակարգումը: Վերլուծելով տարբեր հետազոտողների մոտեցումները (Մ. Լի-

միտոսկոպի [2], Կ. Ռեդիսեդ և Ս. Խյուս [3], Մ. Բադիևա [4]) մենք եզրակացնում ենք, որ ռիսկերի դասակարգման ամենակարևոր չափանիշերն են. 1. դրսևորման փուլը, 2. ծագման աղբյուրները:

Ըստ առաջին չափանիշի ռիսկերը դասակարգվում են նախագործառութային և գործառութային [2]:

Նախագործառութային ռիսկերի հետազոտումը ենթադրում է պարտակա-նությունների և իրավունքի ստույգ բաժանում հիմնադիրների և տնօրենների միջև, հեղինակային իրավունքների առկայության ստուգում, բանվորական ուժի առկայություն և այլն:

Գործառութային ռիսկի հետազոտման ժամանակ, ըստ Դ. Ենդովիցկու [5], անհրաժեշտ է զննահատել.

1. արտադրության ծավալի անկման հավանականությունը,
2. հարկման և տարադրամի փոխանակման կուրսի կայունությունը,
3. օրենսդրական սահմանափակումները, որոնք կախված են ապրանքի ելքի – մուտքի հետ, կապիտալից և շահույթի վրա (մաքսային արգելքներ, հարկեր),

4. ներդրված միջոցների օգտագործման ժամանակ (այլընտրանքային հումքի զնում, սարքավորումներ և այլն) նախագծային պայմաններից շեղման հնարավորությունը,

5. անհրաժեշտ ռեսուրսներով արտադրության մատակարարման կայունությունը և հաճախականությունը,

6. երաշխավորությունների մակարդակն ըստ վարկերի (զննահատումը կատարվում է որպեսզի որոշվի այն կազմակերպության կայունությունը, որը իրագործում է ինովացիոն նախագիծը):

Ռիսկերի դասակարգումն ըստ ծագման աղբյուրների բաժանվում է հետևյալ տեսակների՝

1. տեխնոլոգիական ռիսկեր,
2. շուկայական և գործառութային ռիսկեր,
3. ֆինանսական ռիսկեր,
4. քաղաքական անկայունության ռիսկեր,
5. օրենսդրական և իրավունքային ռիսկեր,
6. էկոլոգիական ռիսկեր:

Տեխնոլոգիական ռիսկերը ծագում են այն դեպքում, եմբ խախտվում է արտադրության տեխնոլոգիան:

Մեքենաշինության մեջ, կախված ենթաճյուղերի տեսակից, այդպիսի ռիսկերը կարող են ունենալ բավականին լուրջ հետևանքներ, օրինակ՝ մարդկանց առողջության քայքայումը:

Տեխնոլոգիական ռիսկերը կարող են արտահայտվել տարբեր տեսանկյուններից, ինչպիսիք են բանվորական ուժի կամ հումքի որակը, արտադրության անվտանգությունը և այլն:

Շուկայական և գործառութային ռիսկերը կախված են շուկայական այն պայմաններից, որոնցում իրագործվում է ինովացիոն նախագիծը և ընդգրկում են զնորդների և պատվիրատուների վճարողական կարգապահությունը, արտադրանքի վրա պահանջարկի փոփոխությունը և հումքի գների ոչ բարենպաստ փոփոխությունը:

Ֆինանսական ռիսկերի հիմնական աղբյուրներն են՝ անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների անմատչելիությունը, ինֆլացիան, տարադրամի կուրսի փոփոխությունը:

Ռիսկերի մնացած տեսակները, մասնավորապես քաղաքական անկայունության ռիսկը, օրենսդրական և իրավունքային ռիսկը և էկոլոգիական ռիսկը բնորոշ են տնտեսության բոլոր ճյուղերի համար:

Ե. Ս. Տուրմաչովը առաջարկում է ռիսկերի ինդիկատորների երեք բնութագրող մեծություններ [6]

1. կուտակված մաքուր դրամական եկամուտ (ԿՄԴԵ),
2. ընթացիկ իրացվելիության գործակից (ԸԻԳ),
3. ակնթարթային իրացվելիության գործակից (ԱԻԳ),

ԿՄԴԵ-ն ձևավորվում է որպես դրամական միջոցների հետհոսքի և արտահոսքի կատարված բալանս, այսինքն

$$\text{ԿՄԴԵ} = \sum_t^n (\sum_i a_{it} - \sum_j b_{jt}) \quad (1)$$

որտեղ

$a_{it}$  –ն ներհոսումներ, եկամուտներ  $t$  – ժամանակամիջոցում;

$b_{jt}$  –ն ծախսեր  $t$  – ժամանակամիջոցում;

$n$  –ն նախագծի կյանքի ցիկլի ժամանակամիջոցների քանակը:

Յուրաքանչյուր  $a_i$  և  $b_j$  պայմանականորեն որոշվում են որպես գծային ֆունկցիա  $m_i$ ,  $m_j$  ֆիզիկական բնութագրումներից և համապատասխան  $c_i$ ,  $c_j$  գներից, որոնք նախագծում կանխագուշակվող սկզբնական մեծություններ են: Այս դեպքում

$$\text{ԿՄԴԵ} = \sum_t^n (\sum_i c_{it} m_{it} - \sum_j c_{jt} m_{jt}) \quad (2)$$

Զգայունության գնահատումը կատարվում է որպես հաջորդական ընթացակարգ յուրաքանչյուր  $i$ -ի կամ  $j$ -ի համար:

Ինվեստիցիոն վերլուծության պրակտիկայում հաշվարկների ժամանակ որոշվում է ԿՄԴԵ-ի նշանակությունների հակազդման որոշմամբ (%), երբ 1% աճում կամ նվազում են  $c_i$ ,  $c_j$ ,  $m_i$ ,  $m_j$  մակարդակները:

Նմանատիպ ձևով կատարվում է ռիսկերը բնութագրող մնացած երկու մեծությունների ԸԻԳ-ի և ԱԻԳ-ի գնահատումը:

Համաձայն հեղինակի ռիսկերի առաջին և երկրորդ մակարդակներում գտնվող նախագծերի սնանկացման բարձր հավանականությունը դուրս է մղում նրանց գրավիչ ինովացիոն նախագծերի շարքից:

Արտասահմանյան վիճակագրության հիման վրա Ե. Ս. Տուրմաչովը եզրակացրել է, որ վերամշակող ճյուղերի համար առաջարկվող նախագծերի սնանկացումը, երբ  $\text{ԿՄԴԵ} \leq 0$ , կազմում է 69%, իսկ եթե  $\text{ԸԻԳ} \leq 2$  -ից ապա՝ 57%: Եթե այս երկու ցուցանիշները գործում են համատեղ, ապա սնանկացումը կազմում է 86% ավելի: Երբ այս երկու ցուցանիշներին միանում է երրորդը ԱԻԳ  $< 0,5$ , ապա սնանկացման հավանականությունը դառնում է անխուսափելի (98%):

Երբ  $\chi^2 > 0$ ,  $\rho > 1$  և  $\rho > 0,5$ , նախագծերի սնանկացման հավանականության միջին նշանակությունը կազմում է ոչ ավելի 50%:

Ինովացիոն նախագծերի ռիսկերը ինվեստիցիոն փուլում (մինչև արտադրության սկիզբը) և նախագծի կյանքի ցիկլի ավարտից հետո պահանջում են հատուկ վերլուծություն:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. A Guide to the Project Management Body of Knowledge – <http://www.pmi.org>
2. **Лимитовский М. А.**, Основы оценки инвестиционных и финансовых решений // М.: ООО Издательско-Консалтинговая Компания “ДеКа”, 1998. – 232 с.
3. **Редхэд К., Хьюс С.** Управление финансовыми рисками / Пер. с англ. – М.: ИНФРА-М, 1996. – 258 с.
4. **Багиева М. Н.**, Комплексная оценка рисков коммерческого предприятия. Дисс. канд. эк. наук, спец. 08.00.05. СПб., 1999 – 170 с.
5. **Ендовицкий Д.** Оценка проектного риска: аналитические подходы и процедуры // Инвестиции в России, 2000, N 9, сс. 35-46.
6. **Турмачев Е. С.**, Методические проблемы количественного определения рисков инвестиционных проектов – [http://cfm.ru/press/afa/97\\_3\\_232-240.pdf](http://cfm.ru/press/afa/97_3_232-240.pdf)

#### ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննարկվում են գրականությունում նկարագրված տարբեր մոտեցումներ ռիսկերի գնահատման գործընթացի վերաբերյալ՝ կախված ինովացիոն նախագծի իրացման փուլից:

#### АННОТАЦИЯ

##### КАНТАРДЖЯН С - ИДЕНТИФИКАЦИЯ РИСКОВ В ИННОВАЦИОННЫХ ПРОЕКТАХ

В статье обсуждаются описанные в литературе подходы к оценке риска, в зависимости от стадии реализации инновационного проекта.

#### SUMMARY

##### KHANTARDJYAN S.- IDENTIFICATION OF RISK IN INNOVATIVE PROJECTS

The article discusses approaches to risk assessment depending on the implementation stage of innovative projects.

**ՍԱՐԳԻՍ ՂԱՆԹԱՐՁՅԱՆ**

*տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,  
ԵՊՀ կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ  
էլ.փոստ՝ intellekt13@rambler.ru*

**ՄՍԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԱՅՆԱՑՄԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

Մտավոր սեփականությունը բաժանված է երկու ճյուղի՝ հեղինակային իրավունք և արդյունաբերական սեփականություն: Երկու ճյուղերն էլ մեծ դեր են խաղում զարգացած երկրներում՝ ազգային եկամտի աճի վրա, ինչը չի կարելի պնդել ՀՀ տնտեսության համար, որտեղ ՄՍՕ շուկայնացման գործընթացը բացարձակապես բացակայում է:

Արդյունաբերական սեփականության օբյեկտը, լինի գյուտ, արդյունաբերական նմուշ կամ ապրանքային նշան, իր հեղինակի կամ ձեռնարկության կողմից ներկայացվում է արտոնագրման կամ վկայական ստանալու: Երբ արտոնագրային վարչությունը ընդունում է դրական որոշում, հեղինակը ցանկության դեպքում կարող է սկսել շուկայնացման գործընթացը: Դրա համար հաջորդ փուլում հեղինակի կամ գյուտի ներդրման մեջ շահագրգռված ներդրողի պահանջով կատարվում է օբյեկտի արժեքի գնահատում: Շուկայնացման փուլը սկսվում է լիցենզիոն պայմանագրի կնքումով և ավարտվում է օբյեկտի ներդրումով: Քանի որ վերը նշված փուլերից գնահատման փուլը կարևորագույններից մեկն է, ավելի հանգամանալից վերլուծենք այդ փուլի առանձնահատկությունները:

Արդյունաբերական սեփականության օբյեկտների գնահատումը իրավաբանական, տնտեսագիտական, կազմակերպատեխնիկական և այլ բնույթի միջոցառումների համալիր է, որոնք ուղղված են գնահատվող օբյեկտի՝ որպես ապրանքի արժեքի որոշմանը:

Սովորաբար ցանկացած երկրի օրենսդրությունը հաստատում է տարբեր օբյեկտների գնահատման միասնական կանոններ: Օրենքով առաջին հերթին սահմանվում են այն դեպքերը, երբ պետք է իրականացվի մտավոր սեփականության պարտադիր գնահատում, այսինքն՝ նախատեսվում է պարտադիր և ոչ պարտադիր գնահատում:

Այսօրվա դրությամբ Հայաստանի Հանրապետությունում մտավոր սեփականության գնահատումը ոչ պարտադիր է, մինչդեռ Ռուսաստանի Դաշնությունում պարտադիր է:

Գնահատման օբյեկտ են իրավաբանական կամ ֆիզիկական անձանց պատկանող սեփականության բացառիկ կամ սեփականության ոչ բացառիկ իրավունքները մտավոր սեփականության օբյեկտի նկատմամբ, ինչպես նաև սեփականատերերի կողմից երրորդ անձանց տրամադրված մտավոր սեփականության օբյեկտի օգտագործման իրավունքները: Իրավունքների այս համալիրը սովորաբար անվանում են «մտավոր սեփականություն»:

Գնահատման առարկա է հանդիսանում գնահատվող օբյեկտի արժեքը, արտահայտված դրամական տեսքով (արժեք, գին) կամ հարաբերական տեսքով (եկամտաբերություն, շահութաբերություն և այլն):

Դրամական տեսքով արտահայտված արժողությանն են պատկանում հետևյալ ցուցանիշները՝ շուկայական արժեք, ներդրումային արժեք, սկզբնական հաշվեկշռային արժեք, մնացորդային հաշվեկշռային արժեք, փաստացի լիկվիդացիոն արժեք, բանակցությունների մեկնարկային գին, իրացվելիության առավել հավանական արժեք, լիցենզիայի արժեք, լիցենզիոն վճարումներ: Տեսականորեն դրամական տեսքով արժեքին կարելի է վերագրել նաև ապահովագրական և կանխավճարային արժեքները: Սակայն գործնականում Հայաստանի Հանրապետությունում մտավոր սեփականությունը չի կիրառվում գործարքների և վարկերի ապահովման համար, և մտավոր սեփականության օբյեկտների իրավունքները չեն ապահովագրվում նյութական սեփականության ապահովագրության սկզբունքներով: Ռուսաստանի օրենսդրությունը հաստատում է, որ մտավոր սեփականության պարտադիր գնահատման ժամանակ գնահատման առարկա է հանդիսանում նրա շուկայական արժեքը:

Հարաբերական տեսքով արժողությանը վերաբերվում են հետևյալ ցուցանիշները՝ սպասվող շահույթի նորմա, եկամտաբերություն, օգտակար օգտագործման ժամկետ, փոխհատուցման ստացման ժամկետ և այլն:

Պետք է նշել նաև, որ գնահատման միջանկյալ արդյունքները, կախված կիրառվող մեթոդներից, կարող են լինել կատարված կամ հնարավոր ծախսերը, ստացված կամ հնարավոր եկամուտները: Սակայն քանի որ այս ցուցանիշները օգտագործվում են հեղինակային օգուտների կամ գործընկերների մասնաբաժինների որոշման ժամանակ, ապա գնահատման վերջնական արդյունք կարող է լինել ոչ միայն մտավոր սեփականության արժեքը որոշակի պայմանների դեպքում, այլ նաև ուրիշ տնտեսական չափանիշներ:

Մտավոր սեփականության արժողությունը նույնը չէ ոչ միայն դրա առևտրայնացման տարբեր պայմանների համար, այլ նաև պատվիրատուի տարբեր նպատակների համար:

Գրականությունում առանձնացվում է պատվիրատուի նպատակների գնահատման երկու հիմնական տեսակ՝ առևտրական և ոչ առևտրական [1]: Պատվիրատուի նպատակների գնահատման ընտրությունից կախված հաստատվում են մտավոր սեփականության արժողության որոշակի կատեգորիաներ և կիրառվում են գնահատման համապատասխան մեթոդներ:

Գնահատման առևտրային նպատակներին են պատկանում.

Առաջին նպատակը՝ մտավոր սեփականության արժեքի որոշումը զիջման պայմանագրի սահմաններում իրավունքների (արտոնագիր, ապրանքանիշ, սպասարկման նշան) զիջման կամ ձեռնարկության վաճառքի պայմանագրի կնքման դեպքում: Այստեղ մտավոր սեփականությունը կարող է հանդես գալ առանձին իրավունքների կամ ձեռնարկության սեփականության համալիրի մեջ ներառվող իրավունքների տեսքով, այսինքն՝ որպես ձեռնարկության ոչ նյութական ակտիվի էլեմենտ:

Երկրորդ նպատակը՝ լիցենզիոն վճարումների ձևի և մեծության որոշումը (այդ թվում՝ վճարման կարգը), լիցենզիոն պայմանագրի, նոու-հաուի փոխանց-

ման պայմանագրի կամ առևտրային համաձայնագրի սահմաններում լիցենզիայի տրամադրման տնտեսական արդյունավետությունը:

Երրորդ նպատակը՝ իրավատիրոջ մասնաբաժնի որոշումը, երբ նրա իրավունքները ներդրվում են հիմնադիր կապիտալում կամ վճարվում են բաժնեմասերի դիմաց:

Չորրորդ նպատակը՝ ապահովագրական գործարքների չափանիշների որոշումը:

Հինգերորդ նպատակը՝ ձեռնարկության սեփականության արժեքի (փաստացի կամ սպասվող) գնահատումը դրամական և այլ ներդրումների ներգրավման, սեփականության իրավունքների պահպանման պայմանով տարբեր նախագծերի մշակման և վերլուծությունների իրականացման համար:

Վեցերորդ նպատակը՝ ապահովագրության և տրվող վարկի մեծությունների որոշումը, երբ իրավունքի սեփականատիրոջը վարկ է տրվում՝ գրավ դնելով մտավոր սեփականության կամ մտավոր սեփականության օգտագործումից ստացվող շահույթի նկատմամբ նրա իրավունքները:

Առևտրային նպատակներով պարտադիր գնահատում իրականացնելու դեպքում մտավոր սեփականության գնահատման արդյունքների բնույթը կարգավորվում է գործող օրենսդրությամբ, պետական մարմինների կողմից և դատական որոշումներով:

Մտավոր սեփականության ոչ պարտադիր գնահատման առևտրային նպատակների դեպքում գնահատման արդյունքներ ունեն խորհրդատվական բնույթ: Այսպիսի արդյունքները օգտագործվում են որպես հիմք կառավարման և այլ որոշումների ընդունման, ներդրումային նախագծերի, տեխնիկատնտեսական հիմնադրույթների, բիզնես ծրագրերի մշակման, ինչպես նաև այն առևտրային գործարքների վերաբերյալ բանակցությունների իրականացման ժամանակ, որոնց առարկա է համարվում մտավոր սեփականությունը:

Գնահատման ոչ առևտրական նպատակներին են պատկանում՝

Առաջին նպատակը՝ հեղինակի օգուտի մեծության որոշումը: Գնահատման առարկա են համարվում շուկայական արժեքը, ներդրումային արժեքը, շահութաբերությունը:

Երկրորդ նպատակը՝ մտավոր սեփականության հաշվեկշռային արժեքի որոշումը՝ իրավունքները ամրագրելով հաշվապահական հաշվառման մեջ որպես ոչ նյութական ակտիվ: Գնահատման առարկա կարող են լինել շուկայական արժեքը, սկզբնական հաշվեկշռային արժեքը, մնացորդային հաշվեկշռային արժեքը, փաստացի իրացվելիության արժեքը, օգտակար օգտագործման ժամկետը:

Երրորդ նպատակը՝ բացթողնված օգուտի և ՄՍՕ իրավունքների խախտման արդյունքում վնասի, ինչպես նաև անբարեխիղճ մրցակցության այլ դեպքերում առաջացող այլ վնասների հաշվարկումը: Գնահատման առարկա են շուկայական արժեքը, ներդրումային արժեքը, շահութաբերությունը, ինչպես նաև փաստացի և հնարավոր ծախսերն ու եկամուտը:

Չորրորդ նպատակը՝ նպաստների որոշումը հարկման և պետության կողմից տնտեսական կարգավորման այլ միջոցառումների իրականացման դեպքում: Եթե այսպիսի նպաստները նախատեսված են ազգային օրենսդրությամբ, ապա գնահատման առարկա պետք է լինի նորմատիվային ակտով հաստատված չափորոշիչը:

Հինգերորդ նպատակը՝ մտավոր սեփականության արժեքի որոշումը պետական մարմինների, ձեռնարկությունների և կազմակերպությունների, պարտատերերի ընդունած որոշումների հիմնավորվածության, ճշտության վերահսկման, ինչպես նաև նախօրոք իրականացված մտավոր սեփականության գնահատման արդյունքների ճշտման համար: Տվյալ դեպքում արժեքի կատեգորիան հաստատվում է՝ կախված կոնկրետ իրավիճակներից:

Մտավոր սեփականության գնահատումը իր մեջ ներառում է հետևյալ փուլերը [2].

1) Իրավունքների ծավալի և բնույթի որոշում, իրավունքների պատկանելության վերահսկում, իրավունքների իրավացիության վերահսկում և մտավոր սեփականության նկարագրություն՝ որպես գնահատման օբյեկտ, իրավունքի օբյեկտ (գյուտ, ապրանքանիշ և այլն) նկարագրություն,

2) Գնահատման առարկայի հաստատում ըստ նախօրոք սահմանված գնահատման նպատակների,

3) Գնահատվող մտավոր սեփականության, նրա իրավատերերի, մտավոր սեփականություն օգտագործող շուկայական հատվածի օգտագործման ծավալների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում՝ հաշվի առնելով սահմանված գնահատման նպատակները,

4) Հավաքագրված տեղեկատվության վերլուծություն, մտավոր սեփականության օբյեկտների և իրավունքների որակական և քանակական բնութագրիչների որոշում, ինչպես նաև դրա օգտագործման տարբերակների և չափորոշիչների հստակեցում, նախնական տեղեկատվության հավաստիության որոշում,

5) Մտավոր սեփականության օբյեկտների գնահատման մեթոդների և մոտեցումների ընտրություն և հիմնավորում,

6) Արդյունքների մաթեմատիկական հաշվարկում և համապատասխանեցում հավաքագրված և վերլուծված տեղեկատվության հիման վրա,

7) Կարծիքների և հետևությունների ձևավորում գնահատվող օբյեկտի՝ որպես ապրանքի, դրա արժեքի որոշման ժամանակ գնահատման պահի դրությամբ, շուկայի ուսումնասիրություն և անհրաժեշտության դեպքում՝ գնահատվող օբյեկտը շուկայի պահանջներին համապատասխանելու վերաբերյալ հետևությունների իրականացում,

8) Մտավոր սեփականության գնահատման արդյունքների հավաստիության որոշում և դրանց օգտագործման վերաբերյալ առաջարկությունների ձևակերպում,

9) հաշվետվությունների կազմում:

Գնահատման օբյեկտի արժեքի որոշման համար կիրառվում են մտավոր սեփականության գնահատման ծախսային, համեմատական և եկամտային մոտեցումները: Այս մոտեցումների սահմաններում ձևավորվում են ավելի հստակեցված գնահատման մեթոդներ, որոնք միմյանցից կարող են աննշան տարբերվել: Մտավոր սեփականության արժեքի որոշումը, ինչպես և գույքի ու այլ օբյեկտների գնահատումը առաջին հերթին հիմնված է ֆինանսական հաշվարկների վրա և հաճախ լրացվում է մասնագիտական մեթոդներով: Գոյություն ունեն նաև ավելի բարդ մեթոդներ, որոնք խարսխված են բարձրագույն մաթեմատիկայի, վերլուծության վիճակագրական մեթոդների վրա: Սակայն դրանք նույնպես մշակված են ըստ վերը թվարկված երեք գնահատման մոտեցումների:

Մտավոր սեփականության գնահատման եկամտային մոտեցումը մտավոր սեփականության գնահատման ընդհանրացված մոտեցումներից մեկն է, որը հիմնված է գնահատման օբյեկտի արժեքի որոշմանը, որպես այդ մտավոր սեփականության ապագա օգտագործումից ստացվող շահույթ՝ հաշվարկված գնահատման պահի դրությամբ:

Մտավոր սեփականության գնահատման ծախսային մոտեցումը մտավոր սեփականության գնահատման ընդհանրացված մյուս մոտեցումն է, որը հիմնված է մտավոր սեփականության ստեղծման կամ ձեռքբերման հետ կապված փաստացի կրած, անհրաժեշտ կամ հնարավոր ծախսերի ամբողջության վրա՝ հաշվարկված գնահատման պահի դրությամբ:

Մտավոր սեփականության գնահատման համեմատական մոտեցումը մտավոր սեփականության գնահատման ընդհանրացված երրորդ մոտեցումն է, որը հիմնված է գնահատման օբյեկտի արժեքի որոշման վրա՝ շուկայում գոյություն ունեցող համանման մտավոր սեփականության շուկայական արժեքի հետ համեմատած, հաշվի առնելով գործարքների նմանությունը և գնահատման օբյեկտի յուրահատկությունները:

#### Գրականության ցանկ

1. **Лынный Н.**, Методика стимулирования авторов объектов промышленной собственности // Интеллектуальная собственность, 1998, N 3, сс.14-18.
2. **Конов Ю.**, Цена ноу-хау // Экономика и жизнь, 1995, N 1. С. IX.

#### ԱՄՓՈՓՈՒՄ

Չորվածում դիտարկվում են մտավոր, մասնավորապես՝ արդյունաբերական, սեփականության օբյեկտների, շուկայնացման հետ կապված հիմնախնդիրները, շեշտը դնելով այդ օբյեկտների գնահատման առանձնահատկությունների վրա:

#### АННОТАЦИЯ

##### **КАНТАРДЖЯН С. - ПРОБЛЕМЫ КОММЕРЦИАЛИЗАЦИИ ОБЪЕКТОВ ИНТЕЛЛЕКТУАЛЬНОЙ СОБСТВЕННОСТИ В РА.**

В статье рассматриваются проблемы коммерциализации объектов интеллектуальной, в частности – промышленной, собственности, с упором на особенности оценки их стоимости.

#### SUMMARY

##### **KHANTARJYAN S. – ISSUES OF INTELLECTUAL PROPERTY COMMERCIALIZATION IN RA**

The article refers commercialization issues of intellectual as well as industrial property rights focusing on the features of their value estimation.

**ՄԻՔԱՅԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

*տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,  
ԵՊՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչ,  
էլ.փոստ՝ mmiqayelyan@mail.ru*

**ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԵԶՐՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ**

Վերջին ժամանակներս տնտեսագիտական հայալեզու գրականության մեջ ատենախոսությունների պաշտպանության ժամանակ հաճախակի են դարձել տնտեսագիտական հասկացությունների ու տերմինների անհարկի, ձևափոխված, երբեմն նաև սխալ գործածության ու մեկնաբանության դեպքեր<sup>1</sup>:

Տնտեսագիտական առումով առավել հաճախակի է նույնաբովանդակ կամ մասամբ նույնաբովանդակ տնտեսագիտական տերմինների միաժամանակ օգտագործումը, օրինակ, «ֆինանսատնտեսական ճգնաժամ», «ֆինանսաբանկային համակարգ», «ֆինանսադրամական միջոցներ» և այլն<sup>2</sup>: Բովանդակային առումով, տնտեսական ճգնաժամը, տնտեսության այլ հատվածների հետ ներառում է նաև ֆինանսական հատվածը: Հետևաբար, եթե նկատի ունենք ամբողջ տնտեսությունը, ապա պետք է կիրառել «տնտեսական ճգնաժամ» եզրույթը: Իսկ, եթե ուզում ենք շեշտել ֆինանսական հատվածի ճգնաժամը, ապա տերմինը պետք է օգտագործել առանց «տնտեսական» բառի<sup>3</sup>:

<sup>1</sup> Սույն հոդվածում հեղինակն անդրադառնում է տնտեսագիտական մասնագիտություններով, հիմնականում ԵՊՀ-ում, թեկնածուական ու դոկտորական ատենախոսությունների պաշտպանությունների ընթացքում հանդիպած սխալ կամ թերի մեկնաբանված հասկացություններին և տերմիններին: Որոշ հղումներ էլ արված են գիտական հոդվածներում նկատված, ըստ հեղինակի, ոչ ճիշտ ձևակերպումներից:

<sup>2</sup> Հեղինակը չի վիճարկում հղում կատարված աշխատանքների գիտական արժանիքները, առավել ևս, որ դրանք ճշգրտ մեծամասնությամբ գիտական որոշակի արժեք են ներկայացնում: Այլ ընդամենը անդրադարձ է կատարում առանձին վրիպումներին, որոնցից և ոչ մեկը, այդ թվում և հեղինակը, չի կարող զերծ մնալ:

<sup>3</sup> Տե՛ս, օրինակ, **Դանիելյան Ա. Դ.**, Փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության կատարելագործման ուղիները ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում (ՀՀ օրինակով) Ը.00.03 «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2013, էջ 1, **Խաչատրյան Շ. Ա.**, Բանկերի իրացվելիության բարձրացումը որպես ֆինանսական միջնորդության աճի գործոն, Ը.00.03 «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2013, էջ 5, **Սայաթյան Ա. Մ.**, Հիփոթեքային շուկայի զարգացման ու կայացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Ը.00.03 «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2013, էջ 11, **Սանամյան Է. Ա.**, Հակաճգնաժամային միջոցառումները և դրանց արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ-ում, Ը.00.03 «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2013, էջ 3, **Քոչարյան Ն. Ռ.**, Փոքր և միջին ձեռնարկությունների տնտեսական գործունեության արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները, Ը.00.02 «Տնտեսության, դրա ծյուղերի տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2013, էջ 11 և ուրիշներ:

<sup>3</sup> Համանման մոտեցում պետք է ցուցաբերել նաև «ֆինանսաբանկային» և «ֆինանսադրամական» տերմինների նկատմամբ:

Առանձին դեպքերում շփոթում, ոչ ճիշտ կամ ոչ տեղին են կիրառում «աճի տեմպ» ու «հավելաճի տեմպ», «տոկոս» և «տոկոսային նիշ (կամ կետ)», «գործակից» հասկացությունները: Այսպես, օրինակ, «ծախսերի բաժինը ՀՆԱ-ում» արտահայտությունը<sup>1</sup> տեղին չի օգտագործված: Ինչպես հայտնի է. ՀՆԱ-ն միավոր ժամանակահատվածում որոշակի երկրում արտադրված վերջնական ապրանքների և մատուցված ծառայությունների գումարն է դրամական արտահայտությամբ<sup>2</sup>: Այլ կերպ ասած, ՀՆԱ-ն ոչ թե ծախս է, այլ ծախսերի շնորհիվ արտադրված վերջնական արտադրանքների և մատուցված ծառայությունների գումարը՝ արժեքային արտահայտությամբ: Հետևաբար, «ծախսերի բաժինը ՀՆԱ-ում» արտահայտության փոխարեն, մեր կարծիքով, ճիշտ կլինի օգտագործել «ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ» կամ «ծախսեր-ՀՆԱ հարաբերակցություն» եզրույթները: Մեկ այլ սեղմագրում նշված է. «Մեծացնել երկրի ՀՆԱ-ի մեջ ՓՄՁ-ների ավելացված արժեքը 10 %-ով»<sup>3</sup>: Իհարկե, ՓՄՁ-ների կողմից արժեքների ավելացում կարող է տեղի ունենալ (տվյալ դեպքում՝ 10 %-ով): Սակայն, բերված օրինակում խոսքը վերաբերում է ՀՆԱ-ի մեջ ՓՄՁ-ների բաժնի ավելացմանը. այսպես՝ եթե այդ բաժինը 40 % է, դարձնել 50 %: Հետևաբար, վերոհիշյալ նախադասությունը, մեր կարծիքով, ճիշտ կլինի ներկայացնել հետևյալ կերպ. «Մեծացնել ՓՄՁ-ների բաժինը ՀՆԱ-ի մեջ 10 տոկոսային նիշով (կամ կետով)»: Համանման ձևով, «արտահանման ծավալը ՀՆԱ-ի ծավալում կազմել էր միայն 16,7 տոկոս» արտահայտությամբ<sup>4</sup> փոխարեն ճիշտ կլինի գրել. «արտահանման ծավալը ՀՆԱ-ի նկատմամբ կազմել էր միայն 16,7 տոկոս»: Ոչ պակաս զավեշտալի ձևակերպում է հետևյալ նախադասությունը. «Նման պայմաններում անորտիզացիոն հատկացումների տեսակարար ծախսերն ինքնարժեքում աճել են 141,2 %-ով, իսկ ինքնարժեքի աճը նշված ծախսերի փոփոխման հաշվին կազմել է 11,52 տոկոս»<sup>5</sup>: Լախյ, տնտեսագիտության մեջ «ինքնարժեք» հասկացությունն օգտագործվում է «արտադրանք» և «արտադրություն» հասկացությունների հետ: Երրորդ, «տեսակարար ծախսերը» վերաբերում են միավոր արտադրանքին: Երրորդ, արտադրանքի (արտադրության) ինքնարժեքի տարրը ոչ թե անորտիզացիոն հատկացումն է, այլ՝ հիմնական միջոցների մաշվածքը: Չորրորդ, ինքնարժեքի մեջ որևէ տարրի բաժինն աճում կամ նվազում է ոչ թե տոկոսով, այլ՝ տոկոսային նիշով<sup>6</sup>: Հինգերորդ, հեղինակի ներկայացրած 11,52 տոկոսը վերաբերում է

<sup>1</sup> Տե՛ս. **Բաղդասարյան Ա. Յու.**, Ծրագրային բյուջետավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Ը.00.03 «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2013, էջ 7:

<sup>2</sup> Տե՛ս, օրինակ, **Макконнелл К. Р., Брю С. Л., Флинн Ш. М.**, Экономикс, Учебник, 18-ое издание / М., 2011, с.598:

<sup>3</sup> **Ղանիելյան Ա.Ղ.**, նշված աշխ., էջ 11:

<sup>4</sup> Տե՛ս.**Գալստյան Բ. Է.**, Արտաքին առևտրի զարգացման պետական կարգավորման հիմնախնդիրները (ՀՀ օրինակով), Ը.00.02 «Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2013, էջ 4:

<sup>5</sup> **Հարությունյան Մ.Ա.**, Արտադրության ծախսերի կրճատման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետության սննդի արդյունաբերությունում, Ը.00.02 «Տնտեսության, դրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2002, էջ 16:

<sup>6</sup> Տե՛ս նաև **Մուրադյան Ղ. Օ.**, Հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման ուղիները Հայաստանի Հանրապետությունում, Ը.00.03 «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և

ոչ թե «ինքնարժեքի» աճին, այլ՝ հավելաճի տեմպին<sup>1</sup>: Գրեթե նման օրինակ է նաև «...նոտ 10 %-ով ֆոնդահատույցի բարձրացումը անորտիզացիոն ծախսերը ինքնարժեքում կրճատումն է շուրջ 1.5-2%-ով»<sup>2</sup> «եզրակացությունը»: Վերջին նախադասության մեջ թույլ է տրված մի քանի սխալ: Նախ, հետևանքը (արդյունքը) ոչ թե ինքնարժեքի մեջ «անորտիզացիոն ծախսերի կրճատումն է», այլ՝ ֆոնդահատույցի բարձրացումը: Երկրորդ, արտադրանքի ինքնարժեքի տարրը, ինչպես արդեն նշեցինք, ոչ թե անորտիզացիոն հատկացումն է, այլ՝ հիմնական միջոցների մաշվածքը: Երրորդ, արտադրանքի ինքնարժեքի մեջ ոչ թե անորտիզացիոն ծախսերն են (եթե ընդունենք, որ «անորտիզացիոն ծախսեր» արտահայտությունը տեղին է) կրճատվում, այլ՝ անորտիզացիոն ծախսերի բաժինը: Հետևաբար, վերոհիշյալ նախադասությունը, մեր կարծիքով, ճիշտ կլինի հետևյալ կերպ շարադրել. «Արտադրանքի ինքնարժեքի նկատմամբ անորտիզացիոն ծախսերի (գուցե հիմնական միջոցների մաշվածքի) 1,5-2,0 %-ային նիշով կրճատումը մոտ 10 %-ով կբարձրացնի ֆոնդահատույցը»:

Առանձին դեպքերում աղյուսակներում տնտեսական ցուցանիշների դինամիկական տոկոսներով ներկայացնելիս ցույց չի տրվում բազիսային տարին, որի նկատմամբ կատարվել է տոկոսային փոփոխությունը<sup>3</sup>:

Երբեմն տնտեսագիտական հասկացության որևէ հայտանիշը շեշտելու համար ոչ անհրաժեշտ և ավելորդ տերմիններ են օգտագործվում: Օրինակ, «գնողունակ (վճարունակ) պահանջարկ»<sup>4</sup> կամ «սպառողական պահանջարկ», «տնտեսության (առևտրի) զարգացման կարգավորում»<sup>5</sup> և այլն: Անդրադառնանք դրանցից մեկ - երկուսին:

Տնտեսագիտական դասագրքերում և ձեռնարկներում «պահանջարկ» հասկացության սահմանումը շատ հստակ է տրված: Պահանջարկը կարելի է ներկայացնել արդյունքի քանակություն ցույց տվող սանդղակի կամ կորի տեսքով, որը սպառողները որոշակի ժամանակահատվածում պատրաստ են և հնարավորություն ունեն գնելու մի շարք հնարավոր՝ յուրաքանչյուր որոշակի գնի դեպքում<sup>6</sup>: Այլ կերպ ասած, պահանջարկը որոշակի ժամանակահատվածում ապրանքը կամ դրա փոխադարձ փոխարինելի ապրանքը (շուկայի օբյեկտը) մի շարք գներից

վարկ» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2013, էջ 13:

<sup>1</sup> «Աճ» և «հավելաճի տեմպ» հասկացությունների ոչ ճիշտ կիրառումը տե՛ս նաև **Աղաջանյան Ա. Ա.**, Վերազգային կորպորացիաների գործունեությունը զարգացող երկրների տնտեսություններում (ՀՀ օրինակով), Ը.00.06 «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2007, էջ 8, աղյուսակ 1, **Սուվարյան Ա. Ս.**, Առևտրային բանկերի կորպորատիվ ռազմավարությունը և դրա արդյունավետությունը (ՀՀ բանկային համակարգի նյութերով), Ը.00.02 «Տնտեսության, դրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2009, էջ 16, **Սարգսյան Ա. Ա.**, Ռազմավարական կառավարման հիմնախնդիրները հանրային քաղաքականության ոլորտում, Ը.00.02 «Տնտեսության, դրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր. 2007, էջ 14, աղյուսակ 1 և ուրիշներ:

<sup>2</sup> **Հարությունյան Ա. Ա.**, նշվ. աշխ.:

<sup>3</sup> Տե՛ս. **Սայադյան Ա. Ա.**, նշվ. աշխ., Սուվարյան Ա. Ս., նշվ. աշխ.:

<sup>4</sup> Տե՛ս. **Սայադյան Ա. Ա.**, նշվ. աշխ., էջ 13:

<sup>5</sup> Տե՛ս. **Գալստյան Ք. Է.**, նշվ. աշխ., էջ 1:

<sup>6</sup> Տե՛ս. **Макконнелл К. Р., Брю С. Л., Флинн Ш. М.**, նշված աշխ., էջ 53.

յուրաքանչյուրի դեպքում գնորդների (սպառողների) կողմից որոշակի քանակությամբ ձեռքբերելու պատրաստակամությունն է: Այսինքն, պահանջարկը ենթադրում է սպառողների (գնորդների) վճարունակությունը (գնողունակությունը): Հետևաբար, անհիմաստ է «պահանջարկ» հասկացության հետ «գնողունակ (վճարունակ)» կամ «սպառողական» ածականների կիրառումը:

Երբ խոսում ենք տնտեսության կամ դրա առանձին ճյուղերի կարգավորման մասին, նկատի ունենք ոչ միայն դրանց ակնթաթային վիճակը, այլև՝ զարգացումը: Այդ պատճառով հարկավոր է գրել ոչ թե «առևտրի, արդյունաբերության կամ տնտեսության զարգացման կարգավորում», ինչպես վերնագրված է վերոհիշյալ ատենախոսություններից մեկը<sup>1</sup>, այլ՝ «առևտրի, արդյունաբերության կամ տնտեսության կարգավորում»:

Առավել հաճախ նկատվում են «մրցակցություն», «մրցունակություն» հասկացությունների մեկնաբանության կամ դրանց ոչ ճիշտ կիրառման դեպքեր: Օրինակ, «լուսաբանվել են մաքսային տուրքի կիրառման նպատակային խնդիրները, որոնց նպատակն է խթանելու հայրենական արտադրողների գործունեությունը, մաքսային տուրքի ուղղությամբ ավելացնել պետական բյուջեի եկամուտները և ուժեղացնել մրցունակությունը անբարեխիղճ մրցակիցների նկատմամբ»<sup>2</sup> արտահայտությունը վկայում է, որ հեղինակը սխալ է ընկալել թե «մրցունակություն» և թե «անբարեխիղճ մրցակցություն», հետևաբար, և «անբարեխիղճ մրցակից» հասկացությունները: «Մրցունակություն» ասելով՝ նկատի է առնվում որոշակի շուկայում տնտեսվարող սուբյեկտների՝ այլ սուբյեկտների հետ մրցակցելու ունակությունը (հնարավորությունը): Իսկ անբարեխիղճ մրցակցությունը, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ «ձեռնարկատիրական գործունեության ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը... խախտում է մրցակիցների միջև կամ վերջիններիս և սպառողների միջև բարեխիղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության, անաչառության սկզբունքները»<sup>3</sup>: Իսկ Օրենքի 12-16-րդ հոդվածներում նշված են անբարեխիղճ մրցակցության դրսևորման հետևյալ ձևերը. տնտեսվարող սուբյեկտի կամ նրա գործունեության վերաբերյալ շփոթություն առաջացնելը, տնտեսվարող սուբյեկտի կամ նրա գործունեության վարկաբեկումը, հասարակությանը մոլորեցնելը, տնտեսվարող սուբյեկտի համբավի, վարկաթեքի վնասումը և անբարեխիղճ մրցակցությունը չբացահայտված տեղեկատվության նկատմամբ: Այն, որ պետական տուրքի միջոցով հնարավոր է ավելացնել բյուջեի եկամուտները՝ աներկբա է: Սակայն պետական տուրքի ավելացումը որոշ դեպքերում կարող է հանգեցնել շուկայից ՓՍԶ-ների դուրս մղմանը, այլ ոչ թե վերջիններիս մրցունակության բարձրացմանը: Ինչպես նկատեց ընթերցողը, պետական տուրքի բարձրացումն աղերս չունի անբարեխիղճ մրցակցության, հետևաբար, նաև անբարեխիղճ մրցակիցների հետ:

«Անբարեխիղճ մրցակցություն» հասկացության ոչ ճիշտ ընկալման պատճառով որոշ հեղինակներ աշխատանքի նպատակից չբխող քննարկումներ են անում: Այդ մասին է վկայում հետևյալ օրինակը. «Աշխատանքի այս գլխում

<sup>1</sup> Տե՛ս. **Գալստյան Ք. Է.**, նշվ. աշխ., էջ 1:

<sup>2</sup> Տե՛ս. **Գալստյան Ք. Է.**, նշվ. աշխ., էջ 19:

<sup>3</sup> «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, Պաշտոնական տեղեկագիր 30, 2000 թ.:

քննարկվել են նաև հակամենաշնորհային կարգավորման ուրույն բնագավառներ հանդիսացող շուկայում գերիշխող դիրքի չարաշահումների, անբարեխիղճ մրցակցության դրսևորումների հակամրցակցային համաձայնությունների և համակենտրոնացման գործընթացների հետ կապված հարցերը...»<sup>1</sup>: Անբարեխիղճ մրցակցության դրսևորումներ կարող են տեղի ունենալ շուկայական բոլոր կառուցվածքներում: Դրանք բնորոշ չեն մենաշնորհներին: Անբարեխիղճ մրցակցություն կարող են լինել, ինչպես փոքր և միջին ձեռնարկությունները, այնպես էլ՝ խոշորները: Առանձին դեպքերում, իհարկե, մենաշնորհներն էլ կարող են նման դրսևորում ցուցաբերել: Սակայն դրանց դեմ պայքարը չի կարող հակամենաշնորհային կարգավորման առանցքում լինել:

Առավել տարածված սխալ է «գների (վարձի) թանկացում» արտահայտությունը: Այն հատկապես հաճախակի է կիրառվում ՋԼՄ-ներում<sup>2</sup>: Թանկանում է ոչ թե գինը (վարձը), այլ՝ ապրանքը (ծառայությունը): Այսպես՝ գազը թանկացել է 20 տոկոսով, կամ գազի գինը բարձրացել է 20 տոկոսով, կամ գազի գնի հավելածի տեմպը կազմել է 20 տոկոս:

Երբեմն տեղին չի օգտագործվում նաև «իրացվելիություն» տերմինը: Իրացվելի կարող են լինել ապրանքները, ծառայությունները, ակտիվները, ձեռնարկությունները և այլն: Թվարկված գոյականների հետ «իրացվելի» եզրույթի կիրառումը կվերաբերի միայն որոշակի առարկայի: Այս առումով, կարծում ենք, Շ. Ս. Խաչատրյանի՝ «Բանկերի իրացվելիության բարձրացումը որպես ֆինանսական միջնորդության աճի գործոն» ատենախոսությունը, ճիշտ չի վերնագրված, քանի որ, ատենախոսությունում քննարկվում է ոչ թե բանկերի իրացվելիության, այլ՝ բանկային ծառայությունների իրացվելիության խնդիրը:

Մեր կարծիքով, բովանդակային առումով, ճիշտ չի թարգմանվում «ինֆլացիա» տերմինը՝ գնաճ<sup>3</sup>, սղաճ<sup>4</sup>: Տնտեսագիտական դասագրքերում ինֆլացիան ներկայացվում է որպես գների ընդհանուր մակարդակի աճ, երբ յուրաքանչյուր դոլար եկամտով կարելի է ավելի քիչ ապրանքներ ու ծառայություններ գնել, քան նախկինում<sup>5</sup>: Գնաճ (գների բարձրացում) կարող է տեղի ունենալ, ինչպես առանձին ապրանքների, ծառայությունների ու աշխատավարձի (այսուհետև՝ ապրանքների), ապրանքների խմբի, այլև՝ բոլոր (գրեթե բոլոր) ապրանքների հետ: Դետաբար, «գնաճ» տերմինը չի արտացոլում «ինֆլացիայի» բովանդակու-

<sup>1</sup> Տե՛ս. **Գրիգորյան Ա. Ա.**, Տնտեսության հակամենաշնորհային կարգավորման հիմնահանդիսները (ՀՀ նյութերով), Ը.00.02 «Տնտեսության, դրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2006, էջ 9:

<sup>2</sup> Տե՛ս, մասնավորապես. Ինչպես «Գազարումը» հերթական անգամ «ծակեց» ՀՀ իշխանություններին, «168 ժամ» թերթ, թիվ 67 (1084) 29.06-01.07 2013 թ.: Վարչապետը բացահայտում է գազի գնի թանկացման և սուբսիդավորման գաղտնիքը. «168 ժամ» թերթ, թիվ 54 (1071) 21-22 մայիսի 2013 թ.: Երևանյան հանելուկ: Տներն էժանանում են, վարձերը՝ թանկանում, «168 ժամ» թերթ, թիվ 55 (1072) 23-24 մայիսի 2013 թ.:

<sup>3</sup> **Սանամյան Է. Ս.**, նշվ. աշխ., էջ 7:

<sup>4</sup> Թադևոս Ավդալբեկյանի տնտեսագիտական տերմինների Ռուս-հայերեն շատ հաջող բառարանում առաջարկվում է «գերալցում» եզրույթը, որը մեր կարծիքով նույնպես լիարժեք չի արտացոլում ինֆլացիայի էությունը (տե՛ս Թադ. Ավդալբեկյան, Ռուս-հայերեն տնտեսագիտական տերմինների բառարան, Եր., «Հայաստան» հրատ., 1964, էջ 167):

<sup>5</sup> Տե՛ս. **Макконнелл К. Р., Брю С. Л., Флинн Ш. М.**, նշվ. աշխ., էջ 656:

թյունը: Գների ընդհանուր մակարդակի աճը բնութագրելու համար կարելի է այն չթարգմանել՝ օգտագործել «ինֆլացիա» տերմինը:

Բովանդակային առումով, մեր կարծիքով, սխալ է՝ «գնաճային ճգնաժամ» արտահայտությունը<sup>1</sup>: Հարցն այն է, որ ինֆլացիան, որպես կանոն, դիտվում է բացասական առումով: Բացասական է նաև «ճգնաժամ» հասկացությունը: Ուստի, «գնաճային ճգնաժամ» արտահայտությունը, կարծում ենք, սխալ է: Առավել ևս, տնտեսագիտական դասագրքերում նման արտահայտություն չի օգտագործվում<sup>2</sup>:

Այսպիսով, դիտարկված հասկացությունները և տերմինները, մեր կարծիքով, առավել հաճախակի սխալ կամ ոչ տեղին նշանակությամբ են օգտագործվել: Դրանց գործածության ժամանակ, գիտական հետազոտություն կատարողները հարկավոր է առավել ուշադիր լինեն:

## ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում դիտարկվում են որոշ տնտեսագիտական կատեգորիաներ ու եզրույթներ, որոնք սխալ կամ անտեղի են օգտագործվում հայալեզու գրականությունում:

## АННОТАЦИЯ

### МИКАЕЛЯН М. – ОБ ИСПОЛЬЗОВАНИИ НЕКОТОРЫХ ЭКОНОМИЧЕСКИХ ТЕРМИНОВ

В статье рассматриваются некоторые экономические категории и термины, ошибочно или неуместно применяемые в армяноязычной литературе.

## SUMMARY

### MIKAELYAN M. – ON THE USAGE OF SOME ECONOMIC TERMINOLOGY

The article considers some economic categories and terminology used incorrectly or inappropriately in Armenian-language literature.

<sup>1</sup> Տե՛ս. **Սանճյան Է. Ս.**, նույն տեղում:

<sup>2</sup> Մենք այն կարծիքին չենք, որ, եթե դասագրքերում որևէ հասկացություն դիտարկված չէ, այն չի կարող երբևիցե գործածվել: Գործածության համար պարզապես պետք է դրա կարևորությունը նախապես հիմնավորել, հետո կիրառել, որի շնորհիվ էլ այն կդառնա «դասագրքային ճշմարտություն»:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԶԱՔՈՅԱԼ**

տեխնիկական գիտությունների թեկնածու,  
ԵՊՀ կառավարման ու գործարարության ամբիոնի դոցենտ  
Էլ. փոստ՝ harutyunzakoyan@yahoo.com

**ԻՐԱԳՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՅՈՒՑԵՐ**

Սույն մեթոդիկայի նպատակն է նկարագրել առևտրային բանկերի (այսուհետև՝ բանկ) կողմից ընդունվող իրացվելիության ռիսկի գնահատման առաջավոր պրակտիկան: Սույն մեթոդիկայի շրջանակներում քննարկման օբյեկտ են հանդիսանում ըստ ժամկետների բաշխված բանկի ակտիվների ու պարտավորությունների կառուցվածքը և դրանց գծով պայմանագրային կամ սպասվող (պլանավորվող) դրամական միջոցների ներհոսքերը և արտահոսքերը: Իրացվելիության ռիսկի գնահատման առաջարկվող մեթոդիկան կարող է օգտագործվել բանկի գործունեության պլանավորման և վերլուծության համակարգում իրացվելիության ռիսկի ընդունելի մակարդակը սահմանելու, հիմնական տնտեսական նորմատիվների սահմանաչափերը որոշելու, բանկի ստանձնած պարտավորությունները կատարելու ունակությունը և վարկային գործառնությունների ֆինանսավորման հնարավորությունների գնահատելու, ինչպես նաև իրացվելիության ռիսկի վերաբերյալ հաշվետվողականության գործընթացներում:

Բանկի կողմից ընդունվող իրացվելիության ռիսկի մեծության սահմանակալումն իրականացվում է իրացվելի ակտիվների պաշարի նորմատիվային արժեքների և դրամական ներհոսքերի և արտահոսքերի հարաբերակցությունների գործակիցները որոշելու միջոցով: Սույն մեթոդիկայում վերլուծության առարկա են հանդիսանում բանկի պորտֆելները: Հեռանկարային իրացվելիությունը գնահատելիս հաշվի են առնվում բանկի հետևյալ պորտֆելները. դրամարկղում կանխիկ դրամական միջոցների պորտֆելը. «Նոստրո» հաշիվներում տեղաբաշխված միջոցների պորտֆելը. տեղաբաշխված միջբանկային վարկերի ու ավանդների պորտֆելը. տրամադրված կորպորատիվ վարկերի պորտֆելը. կողմնակի, ներառյալ պետական, էմիտենտների արժեթղթերի պորտֆելը. ներգրավված միջբանկային վարկերի և ավանդների պորտֆելը. «Լորո» հաշիվներում տեղաբաշխված միջոցների պորտֆելը. սեփական արժեթղթերի պորտֆելը. իրավաբանական անձանց (ոչ բանկերի) ավանդների պորտֆելը. ֆիզիկական անձանց ավանդների պորտֆելը. ոչ բանկային հաճախորդների ցպահանջ հաշիվներում տեղաբաշխված միջոցների պորտֆելը. փաստաթղթային գործառնությունների ու երաշխիքների պորտֆելը. բանկի ֆինանսական կառավարման ստորաբաժանման ժամկետային գործառնությունների պորտֆելը. կանխատեսվող գործառնությունների պորտֆելը (որոնց վերաբերյալ կան ստորագրված համաձայնագրեր, բայց իրականացումը դեռևս չի սկսվել). անժամկետ գործառնությունների պորտֆելը (այն բոլոր գործառնությունները/գործիքները, որոնց ամենչությամբ անհնար է որոշել ժամկետը, բացառությամբ ցպահանջ գործառնությունների/գործիքների և բարձր իրացվելի ակտիվների թվին դասված գործիքների):

Բանկի համար ընդունելի իրացվելիության ռիսկի մակարդակը սահմանափակելու նպատակով սահմանվում է իրացվելիության ռիսկի գնահատման համակարգ, որը ներառում է՝

- իրացվելի ակտիվների պաշարի գնահատումը, որը թույլ է տալիս կարճ ժամկետում (մինչև երկու շաբաթ) գնահատելու բանկի հնարավորությունները՝ ապահովելու բոլոր խմբերի կոնտրահենտների հանդեպ պարտավորությունների կատարումը առկա իրացվելի ակտիվների հաշվին.

- իրացվելիության ներբանկային գործակիցների համակարգը, որը սահմանում է բանկի հեռանկարային վճարունակությունը, բնութագրում ակտիվների ու պասիվների հաշվեկշռվածությունը ըստ ժամկետների, համապատասխանաբար և բանկի ընդունակությունը՝ մարելու պարտավորությունները ակտիվների վերադարձման կամ հավաքագրման հաշվին և արդյունավետ կառավարելու ակտիվների պորտֆելը.

- հեռանկարային իրացվելիության գնահատումը որոշակի ժամանակահատվածների ընթացքում՝ դրամական միջոցների ներհոսքերի և արտահոսքերի համեմատության հիման վրա:

Գնահատումների նշված համակարգը, ներառյալ սցենարային վերլուծության միջոցով նախապատրաստված բանկի իրացվելիության կանխատեսումը, թույլ է տալիս որոշել ակտիվային գործառնություններ իրականացնելու բանկի հնարավորությունները (ռեսուրսների բավարար լինելը)՝ ներառյալ նոր վարկային գործառնությունների ֆինանսավորումը: Իրացվելի ակտիվների պաշարը հաշվարկվում է որպես միասնական ցուցանիշ ամբողջությամբ վերցված ըստ բոլոր արտարժույթների և առանձին՝ ըստ գործառնությունների: Արտարժույթներով տվյալները պետք է վերահաշվարկվեն տվյալ երկրի ԿԲ-ի այն աշխատանքային օրվա համար սահմանված փոխարժեքի, որը համապատասխանում է հաշվետու ամսաթվին: Իրացվելի ակտիվների պաշարը ներառում է՝

- Իրացվելիության առաջնային պաշարները, որոնք բնութագրում են բանկի ունակությունը կատարելու իր պարտավորությունները առկա դրամական միջոցների և դրանց հավասարեցված միջոցների հաշվին՝ առանց այլ իրացվելի ակտիվները դրամական միջոցների փոխարկելու: Նման ակտիվների թվին են դասվում՝

- դրամական միջոցների մնացորդները դրամարկղում,
- միջոցների մնացորդները տվյալ երկրի ԿԲ-ի թղթակցային հաշվում,
- միջոցների մնացորդները «Նոստրո» հաշիվներում, բացառությամբ «Էսքրոու» հաշիվներում, արգելափակված և կալանքի տակ գտնվող հաշիվներում և ոչ ազատ փոխարկելի ու քլիրինգային արտարժույթներով «Նոստրո» հաշիվներում միջոցների մնացորդների.

- Միջբանկային վարկերն ու ավանդները, որոնք բաշխված են «overnight» պայմաններով, կամ երկուսից մինչև ներառյալ յոթ օր մարման ժամկետով, բացառությամբ բանկի հետ կապված գործառնությունների գծով միջբանկային վարկերի և ավանդների, ինչպես նաև ապահովագրական ավանդների և վարկերի, որոնց առնչությամբ տեղեկատվություն կա ժամկետների երկարաձգման հնարավորության մասին:

- Այն միջոցները, որոնք բանկի ստորաբաժանումների տվյալներով, կանխատեսվում են մուտք արվել հաշվարկման օրվանից 7 օրվա ընթացքում

առավել հուսալի փոխառուների կողմից առևտրային վարկերի մասնակի կամ լրիվ մարման ձևով:

- Բանկի պորտֆելի այն արժեթղթերը, որոնք դասվում են «շուկայուն գնանշվող արժեթղթեր», «գնանշվող արժեթղթեր» և «մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր» կատեգորիաների շարքը:

- Թանկարժեք մետաղների տեսքով և «Նոստրո» հաշիվներում եղած այն միջոցները, որոնք կարող են իրացվել 14 օրվա ընթացքում:

Իրացվելի ակտիվների փաստացի պաշարի բավարարությունը որոշվում է նորմատիվային արժեքի հետ այն համեմատելու միջոցով: Իրացվելի ակտիվների պաշարի նորմատիվային արժեքը (ՆԻԱ) որոշում է իրացվելի ակտիվների այն նվազագույն պաշարը, որն անհրաժեշտ է ամբողջությամբ վերցված բանկի կարճաժամկետ (մինչև 1 ամիս կատարման ժամկետով) պարտավորությունները ժամանակին կատարելու համար և որոշվում է հետևյալ բանաձևով.

$$ՆԻԱ = U_{1w} + ՄԲԱ_{1w} * n, \text{ որտեղ} \quad (1)$$

- $U_{1w}$ -ն ցպահանջ հաշիվներում միջոցների մնացորդների անկայուն մասն է և պայմանականորեն անկայուն մասը և իրավաբանական (բացի միջբանկային ներգրավված ժամկետային ռեսուրսների) ու ֆիզիկական անձանց մինչև մեկամսյա ժամկետով միջոցները,

- $ՄԲԱ_{1w}$ -ն ներգրավված «overnight» միջբանկային ավանդներն են և մարման մեկամսյա ժամկետով միջբանկային վարկերն ու ավանդները,

- $n$ -ը ներգրավված միջբանկային վարկերի ու ավանդների ընթացիկ ծավալի այն մասնաբաժինն է, որը չի կարող օպերատիվորեն ներգրավվել շուկայի աննպաստ իրադրության դեպքում:

Իրացվելի ակտիվների պաշարի նորմատիվային արժեքը հաշվարկելիս օգտագործվում են վիճակագրական տվյալներն ըստ  $U_{1w}$  և  $ՄԲԱ_{1w}$  ցուցանիշների՝ անցած եռամսյակի համար:

Իրացվելի ակտիվների բավարարության գործակիցը ( $Գ_{ԻԱ}$ ) սահմանում է իրացվելի ակտիվների մասնաբաժինը, ներառյալ մինչև 1 ամիս կատարման ժամկետով (ըստ մինչև մարման ժամկետի) պահանջները՝ ցպահանջ և մինչև 1 ամիս կատարման ժամկետով իրավաբանական (բացի բանկերից) և ֆիզիկական անձանց հանդեպ բանկի ստանձնած պարտավորություններում:

Գործակիցը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Գ_{ԻԱ} = \frac{ԻԱ - ՄԲԱ_{1w} * n + \mathcal{M}_U + \mathcal{M}_U * (1-2)}{U_U + \mathcal{M}_\sigma + U_n + U_U} * 100\%, \text{ որտեղ} \quad (2)$$

- $ԻԱ$ -ն իրացվելի ակտիվներն են.

- $ՄԲԱ_{1w}$ -ն ներգրավված «overnight» միջբանկային ավանդներն են և մարման մեկամսյա ժամկետով միջբանկային ավանդները.

- $n$ -ը ներգրավված միջբանկային ավանդների ընթացիկ ծավալի այն մասնաբաժինն է, որը չի կարող ներգրավվել շուկայի աննպաստ իրադրության դեպքում:

Իրացվելի ակտիվները պետք է նվազեցվեն ներգրավված միջբանկային ավանդների մեծությամբ՝ բազմապատկած  $n$  գործակիցով, ինչը ենթադրում է

նշված ավանդների ոչ լրիվ ծավալով երկարաձգման կամ վերականգնման հնարավորություն:

- Պ<sub>ս</sub>-ն այն միջոցների վճարման պահանջներն են, որոնք բանկը ձեռք է բերել ժամկետային գործարքներ կնքելիս.

- Պ<sub>ս</sub>-ն «շուկայում գնանշվող արժեթղթեր» և «գնանշվող արժեթղթեր» կատեգորիաների կարգը դասված արժեթղթերի շուկայական արժեքն է.

- Ձ-ն արժեթղթերի հաշվարկային գեղչատոկոսն է.

- Մ<sub>ս</sub>-ն իրավաբանական (բացի բանկերից) և ֆիզիկական անձանց ցպահանջ հաշիվներում միջոցների և մինչև մեկամսյա ժամկետով միջոցների մնացորդներն են և վարկերի տրամադրման արտահաշվեկշռային պարտավորությունները.

- Պ<sub>ժ</sub> –ն այն միջոցների վճարման պարտավորություններն են, որոնք բանկը ձեռք է բերել ժամկետային գործարքներ կնքելիս.

- Ա<sub>ո</sub>-ն ըստ կնքված «ռեպո» գործարքների գնվող արժեթղթերի արժեքն է.

- Ա<sub>ս</sub>-ն ըստ «հետադարձ ռեպո» կնքված գործարքների վաճառվող արժեթղթերի շուկայական կամ հաշվեկշռային (դրանց շուկայական գնանշումների բացակայության դեպքում) արժեքն է:

Իրացվելի ակտիվների պաշարի բավարարության գործակցի նորմատիվային մեծությունը որոշվում է միջինացված փաստացի մեծությունների հաշվարկմամբ (տոկոսներով)՝ հաշվի առնելով հնարավոր ճշգրտումները բանկի ռիսկերի ու ֆինանսական կառավարման ստորաբաժանումների կողմից:

Իրացվելիության գործակիցները (Գ<sub>ր</sub>) սահմանում են համապատասխան ժամանակահատվածներում մարվող ակտիվների գումարի և մարման համանման ժամկետներով ցպահանջ ու ժամկետային պարտավորությունների գումարի միջև եղած տարբերությունը կամ իրացվելիության ճեղքվածքը.

Գ<sub>ց</sub> – ցպահանջ և 1 օր ներառյալ,

Գ<sub>1շ</sub> – 1 շաբաթ (մինչև 7 օր ներառյալ),

Գ<sub>1ա</sub> – մինչև 1 ամիս (մինչև 30 օր ներառյալ),

Գ<sub>3ա</sub> – մինչև 3 ամիս (մինչև 91 օր ներառյալ),

Գ<sub>6ա</sub> – մինչև 6 ամիս (մինչև 182 օր ներառյալ),

Գ<sub>9ա</sub> – մինչև 9 ամիս (մինչև 273 օր ներառյալ),

Գ<sub>1տ</sub> – մինչև 1 տարի (մինչև 365 օր ներառյալ),

Գ<sub>տա</sub> – 1 տարուց ավելի (366 օրից ներառյալ):

Իրացվելիության գործակիցների հաշվարկը կատարվում է ըստ հետևյալ բանաձևի.

$$G_r = \frac{F \cdot U + U_i}{\eta_i} * 100 \%, \text{ որտեղ } \quad (3)$$

- ԲԻՎ-ն բարձր իրացվելի ակտիվներն են,

- Ա<sub>ր</sub>-ն մեթոդիկայի սկզբում թվարկված պորտֆելների թվին դասվող ակտիվներն են՝ որոշակի ժամանակահատվածի (i) և դրան նախորդող բոլոր ժամանակահատվածների սահմաններում վերադարձման ժամկետներով,

- Պ<sub>ր</sub>-ն մեթոդիկայի սկզբում թվարկված պորտֆելների թվին դասվող պարտավորություններն են՝ որոշակի ժամանակահատվածի (i) և դրան նախորդող բոլոր ժամանակահատվածների սահմաններում կատարման ժամկետներով, հաշվի առնելով ճշգրտումները:

Իրացվելիության գործակիցները հաշվարկելիս բանկի ակտիվների և պարտավորությունների ծավալները ներառվում են աճող հանրագումարով: Իրացվելիության գործակիցները հաշվարկելիս հաշվի են առնվում միջոցների ներգրավման ու տեղաբաշխման պայմանագրային գործառնությունների գծով դրամական հոսքերը և այն կանխատեսվող գործառնությունները, որոնց իրականացման համաձայնագրերն արդեն ստորագրված են: Գործակիցների պահպանումը /չպահպանումը որոշվում է դրանց փաստացի մեծությունները նորմատիվայինների հետ համեմատելու միջոցով:  $Q_9$ ,  $Q_{12}$ ,  $Q_{1ա}$  իրացվելիության գործակիցների համար իրացվելիության գործակիցների նվազագույն նորմատիվային մեծությունները սահմանվում են 100 %-ի չափով:  $Q_{3ա}$ ,  $Q_{6ա}$ ,  $Q_{9ա}$ ,  $Q_{1տ}$ ,  $Q_{տա}$  գործակիցների համար նվազագույն նորմատիվային մեծությունները որոշվում են միջինացված փաստացի մեծությունների հաշվարկման միջոցով (տոկոսներով)՝ հաշվի առնելով բանկի կանխատեսվող գործառնությունների և հնարավոր շտկումների ազդեցությունը, որը որոշվում է բանկի ռիսկերի կառավարման ստորաբաժանման կողմից՝ ֆինանսական կառավարման ստորաբաժանման մասնակցությամբ:

Բանկի հեռանկարային իրացվելիության գնահատումը կատարվում է ըստ առանձին արժույթների գործառնությունների և ըստ ամփոփ տվյալների: Բանկի բոլոր գործառնությունները՝ նայած դրանց բնույթին և պլանավորման կիրառվող սկզբունքներին, պայմանականորեն բաժանվում են 3 խմբի.

- Կապիտալ գործառնություններ – կապիտալի փոփոխման գործառնություններ, բանկի հիմնական միջոցների և գույքի կառավարման գործառնություններ, բանկի բաժնետերերի ընթացիկ պահանջումների բավարարման համար բանկի խորհրդի և բարձրագույն ղեկավարության որոշմամբ իրականացվող գործառնություններ:

- Ներդրումային գործառնություններ – գործառնություններ, որոնք իրականացվում են բանկի կոլեգիալ մարմինների և/կամ բարձրագույն ղեկավարության որոշմամբ ակտիվների ու պասիվների երկարաժամկետ պորտֆել ձևավորելու նպատակով, 12 ամսից ավելի ժամկետով գործառնությունները, ցպահանջ պասիվների կայուն մասը:

- Ընթացիկ գործառնություններ – իրենց լիազորությունների շրջանակներում բանկի ստորաբաժանումների կողմից կատարվող գործառնություններ, դրանց կանոնավոր գործունեության ընթացքում մինչև 12 ամիս ժամկետով վարկերի տրամադրում հաճախորդներին, ավանդների ներգրավում և սեփական արժեթղթերի էմիսիա մինչև 12 ամիս ժամկետով, հաճախորդների հաշվարկադրամարկային սպասարկում, միջբանկային վարկավորման գործառնություններ, գործառնություններ արտարժույթի շուկայում, թանկարժեք մետաղների միջբանկային շուկայում, կանխիկ արտարժույթի միջբանկային շուկայում, բանկի ստորաբաժանումների ընթացիկ այլ ակտիվ-պասիվ գործառնություններ մինչև 12 ամիս ժամկետով, ցպահանջ պասիվների անկայուն մաս և պայմանականորեն անկայուն մաս:

Սույն մեթոդիկայի շրջանակներում բանկի հեռանկարային իրացվելիությունը գնահատելիս հաշվարկման մեջ ներառվում են այն պորտֆելների թվին դասվող գործառնությունները, որոնք թվարկված են մեթոդիկայի սկզբում՝ բաշխված ըստ վերը նշված խմբերի: Իրացվելիության կանխատեսվող վիճակի գնահատումն իրականացվում է ժամանակահատվածի շրջանակներում հիմնական պարտքի գծով դրամական միջոցների ներհոսքերի (ներառյալ բարձր իրացվելի

ակտիվները) և դրամական արտահոսքերի մնացորդը որոշելու միջոցով, ինչպես նաև ըստ տոկոսային, կուպոնային և զեղչային վճարումների (բացառությամբ այն դեպքերի, որոնք նախատեսված են մեթոդիկայի վերջում): Դրամական միջոցների ներհոսքերի և արտահոսքերի դրական տարբերությունը նշանակում է բանկի միջոցներն ավելին քան բավարար են տվյալ ժամկետայնության պարտավորությունները կատարելու համար, իսկ տարբերությունը կարող է օգտագործվել հաջորդ ժամկետային խմբի հնարավոր իրացվելիության պակասուրդը ծածկելու նպատակով կամ կարող է տեղաբաշխվել ակտիվային գործառնությունների միջոցով (օրինակ՝ վարկեր, արժեթղթեր):

Բանկի հեռանկարային իրացվելիության ռիսկի գնահատումը իրականացվում է իրադարձությունների զարգացման երկու հնարավոր սցենարների՝ առավել հավանականի և սթրեսային վերլուծության միջոցով, որոնք իրենցից ներկայացնում են բանկի իրացվելիության վիճակի փոփոխության տարբերակները: Առավել հավանական սցենարի տակ ենթադրվում է այնպիսի իրավիճակ, որի դեպքում բանկը գործառնություններն իրականացնում է՝ ելնելով վերլուծություն կատարելու պահին բիզնեսը վարելու նորմալ պայմաններից և այն ժամկետներում, որոնք նախատեսված են կնքված պայմանագրերով, կամ առավել հավանական ժամկետներում: Աննպաստ սցենար ասելով ենթադրվում է այնպիսի իրավիճակ, որի դեպքում բանկը հնարավորություն չունի գործառնություն իրականացնել սովորական ռեժիմով: Ընդամին, հաշվի են առնվում հետևյալ գործոնները.

- ներբանկային, որոնց տակ հասկացվում են որևէ խոշոր գործառնությունների պայմանների (ժամկետների, ծավալների) կտրուկ, աննպաստ փոփոխություն բանկի համար.

- ընդհանուր համակարգային գործոններ, որոնք կարող են հարուցվել քաղաքական և/կամ տնտեսական բնույթի պատճառներով և ազդել ընդհանուր առմամբ ամբողջ ֆինանսական համակարգի վրա:

Բանկի ռիսկերի կառավարման ստորաբաժանումը ինքնուրույն պետք է սահմանի սցենարի կոնկրետ պայմանները և դրանք նկարագրի համապատասխան հաշվետվության մեջ: Սցենարներից յուրաքանչյուրի վերլուծությունը ներառում է հետևյալ փուլերը՝ պայմանագրային գործառնությունների գծով իրացվելիության ռիսկի վերլուծություն և բանկի կանխատեսվող գործառնությունների գծով իրացվելիության ռիսկի վերլուծություն: Պայմանագրային գործառնությունների գծով բանկի իրացվելիության վերլուծության համար գործառնությունների գծով բոլոր դրամական միջոցների ներհոսքերը և արտահոսքերը բաշխվում են ըստ ժամանակահատվածների՝ սկսած հաշվետու ամսաթվից այն ժամկետներին համապատասխան, որոնք մնում են մինչև պարտավորությունների կատարման և ակտիվների վերադարձման ամսաթիվը: Սահմանվում են հետևյալ ժամանակահատվածները՝ ցպահանջ, 2-ից մինչև 7 օր, 8-ից մինչև 14 օր, 15 օրից մինչև 1 ամիս, 1-ից մինչև 2 ամիս, 2-ից մինչև 3 ամիս, 3-ից մինչև 4 ամիս, 4-ից մինչև 5 ամիս, 5-ից մինչև 6 ամիս, 6-ից մինչև 9 ամիս, 9 ամսից մինչև 1 տարի, 1 տարվանից մինչև 1,5 տարի, 1,5 տարվանից մինչև 2 տարի, 2 տարվանից մինչև 3 տարի, 3 տարվանից մինչև 5 տարի, 5 տարուց ավելի, անժամկետ: Ընդ որում՝ ամիսներով չափվող ժամանակահատվածում օրերի քանակը համապատասխանում է այն ամսի/ամիսների օրացուցային օրերի փաստացի քանակին, որոնք այդ ժամանակահատվածի մեջ են ընկնում հաշվարկման պահին: Ապագա

գործառնությունների գծով իրացվելիության վերլուծության համար դրամական միջոցների ներհոսքերի և արտահոսքերի կուտակային մնացորդը (այսինքն՝ ավելի վաղ ժամանակահատվածների մնացորդը ներառող), որն ստացվել է ըստ պայմանագրային ժամկետների բաշխման հիման վրա, ճշգրտվում է՝ նկատի առնելով ապագա գործառնությունների գծով դրամական միջոցների կանխատեսվող շարժը: Դրամական միջոցների շարժի անորոշության դեպքում օգտագործվում է կանխատեսվող դրամական միջոցների ներհոսքերի և ենթադրվող արտահոսքերի գնահատման նկատմամբ պահպանողական մոտեցում (խելամիտ գույշավորության սկզբունքը), որը կայանում է հետևյալում՝

- ժամկետային գործիքների գծով դրամական միջոցների ներհոսքերը (ներառյալ առաջիկա տոկոսային և այլ ներհոսքերը) ժամանակահատվածների են բաշխվում այն ժամկետներին համապատասխան, որոնք մնում են մինչև ակտիվների վերադարձման պայմանագրային ամսաթիվը, օրինակ, եթե փոխառուն իրավունք ունի վաղաժամկետ մարել վարկը, ապա համարվում է, որ նա չի օգտվի իր իրավունքից և վարկը կմարի պայմանագրով սահմանված ժամկետում:

- ժամկետային գործիքների գծով վճարումները (ներառյալ առաջիկա տոկոսային ու մյուս վճարումները) ժամանակահատվածների են բաշխվում այն ժամկետներին համապատասխան, որոնք մնում են մինչև պարտավորությունների մարման պայմանագրային ամսաթիվը, օրինակ, եթե բանկի սեփական արժեթուղթն ունի «ներկայացնելուց 35 օր անց» ժամկետ և դեռևս չի ներկայացված վճարման (ակցեպտի), ապա համարվում է, որ ըստ դրա վճարումը կկատարվի հաշվետու ամսաթվից մեկ ամիս անց, այսինքն՝ 1-ից մինչև 2 ամիս ժամանակահատվածում:

Յուրաքանչյուր ժամանակահատվածի գծով աճող հանրագումարով կատարված հաշվարկումների արդյունքը (հաշվի առնելով ստորև բերված ճշգրտումները) դրամական միջոցների ներհոսքերի և արտահոսքերի մնացորդն է (ներառյալ նախորդ ժամանակահատվածի մնացորդը): Որևէ ժամանակահատվածի բացասական մնացորդը վկայում է տվյալ ժամանակահատվածում ոչ բավարար իրացվելիության առաջացման և ժամանակին լրացուցիչ ռեսուրսներ ներգրավելու նկատմամբ արդեն ունեցած պասիվները, նկատմամբ ակտիվները վերակազմավորելու վերաբերյալ որոշումներ ընդունելու անհրաժեշտության մասին: Որևէ ժամանակահատվածի դրական մնացորդը նշանակում է իրացվելիության ավելցուկի առկայություն և բանկի ակտիվները ավելի հեռավոր (և ավելի եկամտաբեր) ժամանակահատվածների կամ այն ժամանակահատվածների վերաբաշխելու անհրաժեշտություն, որոնցում բանկին սպասվում է միջոցների պակաս իր պարտավորությունների կատարման համար: Հաշվետու ամսաթվին դրամական միջոցների ներհոսքերի և արտահոսքերի մնացորդը պետք է համեմատվի նախորդ հաշվետու ամսաթվերի համամասն ցուցանիշների հետ: Բանկի ակտիվների և պասիվների կառավարման կոմիտեն ռիսկի և ֆինանսական կառավարման ստորաբաժանումների առաջարկությամբ անհրաժեշտության դեպքում կարող է սահմանափակումներ սահմանել դրամական միջոցների ներհոսքերի և արտահոսքերի ինչպես դրական, այնպես էլ բացասական մնացորդի նկատմամբ:

Իրացվելիության հաշվարկից պետք է հանվեն այն գործառնությունները, որոնք ազդեցություն չեն գործում բանկի իրացվելիության վրա (կապակցված գործառնություններ, «էքսբոու» հաշիվներում արգելափակված միջոցների գումարները և այլն):

Եզրակացություն: Առաջարկվում է ՀՀ առևտրային բանկերում ավելի լայնորեն կիրառել իրացվելիության ռիսկի գնահատման առաջավոր փորձը, մասնավորապես ներառել հետևյալ մոտեցումները՝

- ըստ վերը նշված ժամկետների բաշխել բանկի ակտիվների և պարտավորությունների կառուցվածքը և դրանց գծով պլանավորվող դրամական միջոցների ներհոսքերը և արտահոսքերը.
- ցպահանջ հաշիվների միջոցների մնացորդը պայմանականորեն բաժանել կայուն, պայմանական անկայուն և անկայուն մասերի.
- հաշվարկել իրացվելի ակտիվների փաստացի պաշարի բավարարության և պաշարի նորմատիվային արժեքները:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Астрелина В. В., Бондарчук П. К., Шальнов П. С.,** Управление ликвидностью в российском коммерческом банке: Учебное пособие. М.: ИД “Форум”; ИНФРА-М, 2012 – 176 с.
2. **Банковские риски:** Учебник / Под ред. О.И. Лаврушина, Н.И. Валенцевой – 3-ое изд., перераб. и доп.– М. КНОРУС, 2013. – 296 с.
3. **Банковский менеджмент:** Учебник / Под. ред. д-ра эконом. наук, проф. О. И. Лаврушина,- 4-ое изд., стер. – КНОРУС, 2011. –560 с.
4. **Финансовый анализ деятельности коммерческого банка:** Учебник / Под.ред. Е. П. Жарковской. – 2-ое изд. , стер. – М.: Омега– Л, 2011. – 325 с.

### ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում նկարագրվում է առևտրային բանկերի իրացվելիության ռիսկի գնահատման առաջավոր մեթոդիկան, լրամշակված հեղինակի կողմից, որի շրջանակներում դիտարկվում են ըստ ժամկետների բաշխված բանկի ակտիվների ու պասիվների կառուցվածքը և բանկի պայմանագրային (պլանավորվող) դրամական միջոցների ներհոսքերն ու արտահոսքերը:

### АННОТАЦИЯ

#### **ЗАКОЯН А. – МЕТОДИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ УПРАВЛЕНИЯ РИСКОМ ЛИКВИДНОСТИ**

В статье описывается доработанная автором передовая методика оценки риска ликвидности, принимаемого коммерческими банками, в рамках которой рассматриваются структура активов и пассивов банка и фактические и ожидаемые (планируемые) денежные поступления и платежи банка, в разбивке по срокам.

### SUMMARY

#### **ZAKOYAN H. – Methodical issues of liquidity risk management**

The article refers to a methodical approach of liquidity risk estimation in commercial banks based on advanced practice and revised by the author. The structure of assets and liabilities allocated by their terms and the expected (planned) cash inflows and outflows is also considered within the frame of the method.

**ԱԼՎԱՐԴ ԽԱՌԱՏՅԱՆ**

*տնտեսագիտության թեկնածու,  
ԵՊՀ տնտեսագիտության մեջ մաթեմատիկական  
մոդելավորման ամբիոնի դոցենտ  
էլ.փոստ` alvardkharatyan@yahoo.com*

**ՍԻՐԱՆՈՒՇ ՍԱՐԳՍՅԱՆ**

*ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու,  
ԵՊՀ ծրագրավորման և ինֆորմացիոն  
տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ  
էլ.փոստ` siranushs@ysu.am*

**ԱՆՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

*ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու,  
ԵՊՀ ծրագրավորման և ինֆորմացիոն  
տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ  
էլ.փոստ` ahovakimyan@ysu.am*

**ԱՐՇԵՍՏԱԿԱՆ ՆԵՅՐՈՆԱՅԻՆ ՑԱՆՑԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՏՆՏԵՍԱ-ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ  
ՄՈԴԵԼԱՎՈՐՄԱՆ ՄԵՋ (ՀՀ-ՈՒՄ ԳՆԱԾԻ ԿԱՆԽԱՏԵՍՄԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ)**

**Ներածություն**

Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից վարվող դրամավարկային քաղաքականության գլխավոր նպատակը գների կայունության ապահովումն է: Այս նպատակն իրագործելու համար Կենտրոնական բանկը սահմանում է գնաճի նպատակային թիրախը: Գների կայունության ապահովմամբ կենտրոնական բանկը նպաստում է երկարաժամկետ հատվածում կայուն տնտեսական աճին և բնակչության կենսամակարդակի բարձրացմանը: Այս պարագայում կարևորվում է գնաճի միտումների ճիշտ կանխատեսումը, որը կնպաստի արդյունավետ դրամավարկային քաղաքականության իրագործմանը:

Գնաճի կանխատեսման վերաբերյալ կան շատ աշխատանքներ: Որոշ հեղինակներ առաջարկում են գնաճի կանխատեսման համար կիրառել ագրեգացված առաջնորդող կամ համընկնող ինդիկատորներ: Այդ մեթոդի էությունը հետևյալն է. տարբեր մակրոտնտեսական ժամանակային շարքերի հիման վրա կառուցվում են միասնական ագրեգացված ինդիկատորներ, որոնք կիրառվում են գնաճի դինամիկան կանխատեսելու համար: Մի շարք աշխատանքներում առաջարկվում է գնաճի կանխատեսումը իրականացնել բազմաչափ ռեգրեսիոն վերլուծության օգնությամբ՝ գնաճը կախվածության մեջ դնելով այլ մակրոտնտեսական ցուցանիշներից: Հեղինակների մեկ այլ խումբ առաջարկում է գնաճի կանխատեսումը իրականացնել գների ժամանակային շարքերի վերլուծության հիման վրա, հիմք ընդունելով վերջին հինգ տարիների միտումները: Վերլուծության հիմքում ընկած

է գնաճի ամսական շարքի տրոհումը ըստ տրենդի, սեզոնային և պատահական բաղադրատարրերի<sup>1</sup>:

Գոյություն ունեցող աշխատանքներում բացակայում է գնաճի կանխատեսումը արհեստական նեյրոնային ցանցերի կիրառմամբ: Սույն հոդվածի նպատակն է.

- ներկայացնել արհեստական նեյրոցանցի էությունը, կիրառման առավելությունները որոշ տնտեսագիտական խնդիրներում,
- կանխատեսել ՀՀ գնաճի միտումները արհեստական նեյրոնային ցանցերի միջոցով,
- կառուցել գնաճի ժամանակային շարքի ARIMA և էքսպոնենցիալ հարթեցման մոդելները և կատարել կանխատեսում այդ մոդելների օգնությամբ,
- գնահատել կանխատեսումների արդյունքները:

### Արհեստական նեյրոնային ցանցերը

Արհեստական նեյրոցանցերի (ԱՆՑ) ստեղծման գործում մեծ ներդրում ունի ամերիկացի նյարդաֆիզիոլոգ Ֆրենկ Ռոզենբլատը, որն առաջարկել է մարդու ընկալելու գործընթացը մոդելավորող կառուցվածքի սխեմա և այն անվանել «պերսեպտրոն»<sup>2</sup>: Ա. Բ. Բարսկին հիմնավորում է արհեստական նեյրոցանցերի, որպես կենսաբանական նեյրոնների նմանակների, ստեղծման անհրաժեշտությունը, ուշադրություն հրավիրելով գլխուղեղի տրամաբանական մոդելավորման գործընթացների վրա. բարդ տրամաբանական կառուցվածքների ստեղծման մեծ արագություն, գործողությունների զուգահեռ կատարում, գլխուղեղի տրամաբանական գործողությունների ալգորիթմի պարզություն, դժվար ֆորմալացվող խնդիրների լուծման հնարավորություն և այլն<sup>3</sup>:

Արհեստական նեյրոնային ցանցը հանդիսանում է արհեստական նեյրոնների ամբողջություն, որոնք միմյանց հետ կապված են սինապտիկ միացություններով: Նեյրոնների գործառույթը որոշվում է ցանցի կառուցվածքով և նեյրոնների միջև եղած կապերի բնույթով<sup>4</sup>: Գոյություն ունեն բազմաթիվ նեյրոցանցային կառուցվածքներ, որոնք միմյանցից տարբերվում են նեյրոնների և սինապտիկ կապերի (կշռային գործակիցների) քանակությամբ և տեղաբաշխվածությամբ: Առավել հայտնի կառուցվածքը բազմաշերտ պերսեպտրոնն է: Նրա շերտերի և նեյրոնների քանակը պայմանավորված է խնդրի դրվածքով:

Նեյրոնային ցանցերը ոչ թե ծրագրավորվում են այս բառի սովորական իմաստով, այլ ինքնաուսուցվող համակարգ են հանդիսանում: Ուսանելու հատկությունը ավանդական ալգորիթմների համեմատ նեյրոնային ցանցի կարևոր առավելություններից մեկն է: Ինքնաուսուցման ընթացքում ցանցը ընդունակ է

<sup>1</sup> Stu Forecasting methods and formulas with Excel - <http://www.lokad.com/forecasting-methods-and-formulas-with-excel/>; Methods for forecasting price. Personal Finance and Money - <http://money.stackexchange.com/questions/16187/methods-for-forecasting-price>; **Armstrong, J. S.** Selecting Forecasting Methods // Principles of Forecasting: A Handbook for Researchers and Practitioners (Ed. J. Scott Armstrong) / Kluwer, 2001.

<sup>2</sup> **Розенблатт Ф.**, Принципы нейродинамики: Перцептроны и теория механизмов мозга / М., 1962.

<sup>3</sup> **Барский А. Б.**, Нейронные сети: распознавание, управление, принятие решений / Москва, 2004.

<sup>4</sup> **Шитиков В. К., Розенберг Г. С., Зинченко Т. Д.**, Нейросетевое моделирование: многослойный перцептрон – <http://www.ievbran.ru/kiril/Library/Book1/content394/content394.htm>

դառնում բացահայտել *մուտքային և ելքային տվյալների միջև եղած թաքնված բարդ կախվածությունները*, ինչպես նաև՝ կատարել ընդհանրացումներ: Դա նշանակում է, որ հաջող ուսուցման դեպքում ցանցը կարող է տալ ճիշտ արդյունքներ նույնիսկ ուսուցման հաջորդականությունում բացակայող, ոչ լրիվ, աղավաղված տվյալների դեպքում: Ուսանելուց հետո ցանցը կարող է կանխատեսել որոշակի հաջորդականության ապագա արժեքները<sup>1,2</sup>:

Նեյրոնային ցանցի օգտագործումն ունի ևս մի քանի առավելություններ: Դասական մեթոդներով կանխատեսումն օրվա մեջ օպերատիվ փոփոխվող ինֆորմացիայի դեպքում ոչ մասնագետի համար (վիճակագրության բնագավառի) կապված է որոշ դժվարությունների հետ ինչպես վերլուծության մեթոդն ընտրելու, այնպես էլ արդյունքների մեկնաբանման տեսանկյունից: Դա էական թերություն է, քանի որ կանխատեսման արագությունը նման դեպքերում շատ կարևոր է: Ի տարբերություն տեխնիկական անալիզի, նեյրոցանցը ընդունակ է գտնել տվյալ շարքի կանխատեսման համար *օպտիմալ ռազմավարություն*:

Ֆինանսական շուկայի տվյալների նեյրոցանցային վերլուծությունը, ի տարբերություն հայտնի մեթոդների, *չի ենթադրում մուտքային տեղեկատվության սահմանափակումներ*<sup>3</sup>:

Նեյրոնային ցանցի միջոցով կանխատեսման համակարգին կարելի է սովորեցնել բավական մեծ ծավալի տեղեկատվություն, որտեղ ցանցը կարող է հայտնաբերել կախվածություններ: Դա հնարավոր չէ կատարել տեղեկատվության մշակման այլ մեթոդների կիրառման դեպքում:

Երբ կանխատեսման խնդիրներ լուծելիս անհրաժեշտություն է առաջանում հաղթահարել տվյալների այնպիսի առանձնահատկությունների հետ կապված դժվարությունները, ինչպիսիք են *ոչ ստացիոնարությունը, ոչ լիարժեքությունը, բաշխման ֆունկցիայի անհայտ լինելը կամ վիճակագրական մեթոդների ոչ լիովին բավարար լինելը*, նախընտրելի է կատարել կանխատեսում ԱՆՑ միջոցով<sup>4</sup>:

Նեյրոցանցի կարևոր առանձնահատկությունը, որը վկայում է նրա լայն կիրառական հնարավորությունների և մեծ ներուժի մասին, կայանում է միաժամանակ բոլոր օղակներով (նեյրոններով) տեղեկատվության զուգահեռ մշակման մեջ, որը հնարավորություն է տալիս *արագացնել* տեղեկատվության մշակման գործընթացը: Նեյրոնային ցանցում կատարվում է տեղեկատվության արդյունավետ մշակում՝ պայմանավորված նեյրոհաշվարկների զուգահեռ իրականացմամբ:

Միջնեյրոնային կապերի մեծ թվաքանակի դեպքում *ցանցը սխալների հանդեպ ձեռք է բերում որոշակի կայունություն*:

<sup>1</sup> **Солдатова О. П., Семенов В. В.**, Применение нейронных сетей для решения задач прогнозирования // Электронный научный журнал «Исследовано в России» - <http://zhurnal.gpi.ru/articles/2006/136.pdf>

<sup>2</sup> **Laura E. Carter-Greaves.** Time Series prediction with Feed-Forward Neural Networks <http://neuroph.sourceforge.net>

<sup>3</sup> **Rune Aamodt.** Using Artificial Neural Networks to Forecast Financial Time Series / Oslo. 2010.

<sup>4</sup> **Stu` Gheyas I. A., Smith L. S.,** A Neural Network Approach to Time Series Forecasting // Proceedings of the World Congress on Engineering 2009. Vol.II, WCE 2009, July 1-3, 2009, London, U.K.; **Крисилов В. А., Чумичкин К. В., Кондратюк А. В.**, Представление исходных данных в задачах нейросетевого прогнозирования // Конференция "Нейроинформатика 2003". – М.: научная сессия МИФИ, 2003, сс.184-191; **Бакаев В. Н., Владимирова Н. В., Васильева Е. Ю.**, Методы обучения нейросистем (глава из электронного учебника) – [http://zdo.vstu.edu.ru/umk/html/manual/L5\\_6.html](http://zdo.vstu.edu.ru/umk/html/manual/L5_6.html)

**ՀՀ գնաճի կանխատեսումը արհեստական նեյրոնային ցանցի միջոցով**

Ընդհանուր դեպքում խնդրի դրվածքը հետևյալն է: Դիցուք հայտնի են  $\{x_t\}_{t=1}^T$  սկալյար կամ վեկտորական ժամանակային շարքի արժեքները ժամանակի վերջավոր  $t = 1 \dots T$  հատվածի վրա:  $x_{T+1}, x_{T+2}$  և այլ արժեքները որոշելու համար օգտագործվում է  $x_{t+1} = f(x_t, \dots, x_{t-k+1})$  ռեկուրենտ


հարաբերությունը գտնելու մեթոդը, որտեղ  $k$ -ն այնպիսի թիվ է, որ ժամանակային շարքի  $k$  նախորդ արժեքները միանշանակ որոշում են շարքի հաջորդ արժեքը:

Կանխատեսման խնդրի լուծման նպատակով նեյրոնային ցանցի կառուցման գործընթացը ներառում է տվյալների նախնական մշակման, ուսուցման համար տվյալների նախապատրաստման, ցանցի կառուցվածքային և պարամետրական սինթեզի, ստուգիչ ընտրանքի վրա նեյրոնային ցանցի աշխատանքի կոռեկտուրայան ստուգման և այդ ընտրանքի վրա կանխատեսման սխալի գնահատման փուլերը:

Տվյալների նախնական մշակումը ուղղված է ժամանակային շարքի ստացիոնարության ապահովմանը: ՀՀ գնաճի միտումների կանխատեսման նպատակով դիտարկվել է 1996-2013 թթ. ՀՀ սպառողական գների ինդեքսի (ՍԳԻ) դինամիկան ներկայացնող ժամանակային շարքը եռամսյակային կտրվածքով (տես՝ զծանկար 1-ը): Շարքը ստացիոնար չէ, որը ստուգվել է EViews ծրագրային փաթեթի կիրառմամբ՝ Դիկի-Ֆոլլերի թեստի միջոցով: Առաջին կարգի տարբերությունները ( $\Delta X_i = X_i - X_{i-1}$ ) ՍԳԻ ժամանակային շարքը դարձնում են ստացիոնար (տես՝ աղյուսակ 1-ը և զծանկար 2-ը):

*Գծանկար 1*

**ՀՀ ՍԳԻ դինամիկան 1996-2013 թթ. եռամսյակային կտրվածքով<sup>1</sup>**



<sup>1</sup>ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության 1997-2013 թթ. Տարեգրքեր:

*Աղյուսակ 1*

**Առաջին կարգի տարբերություններով ԱԳԻ ժամանակային շարքի ստացիոնարության ստուգումը Դիկի-Ֆուլլերի թեստի միջոցով**

ADF Test Statistic	-10.47475	1% Critical Value*	-3.5297
		5% Critical Value	-2.9048
		10% Critical Value	-2.5896

\*MacKinnon critical values for rejection of hypothesis of a unit root.

Augmented Dickey-Fuller Test Equation

Dependent Variable: D(CPI,2)

Method: Least Squares

Date: 10/12/13 Time: 20:02

Sample(adjusted): 1997:1 2013:3

Included observations: 67 after adjusting endpoints


Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
D(CPI(-1))	-2.488990	0.237618	-10.47475	0.0000
D(CPI(-1),2)	1.098148	0.145396	7.552795	0.0000
D(CPI(-2),2)	0.348763	0.110241	3.163636	0.0024
C	0.076541	0.366758	0.208696	0.8354
R-squared	0.810421	Mean dependent var		-0.062687
Adjusted R-squared	0.801394	S.D. dependent var		6.733000
S.E. of regression	3.000580	Akaike info criterion		5.093333
Sum squared resid	567.2193	Schwarz criterion		5.224957
Log likelihood	-166.6267	F-statistic		89.77186
Durbin-Watson stat	1.829901	Prob(F-statistic)		0.000000

Ներյոնային ցանցի ուսուցման որակը և արագությունը բարելավելու համար անհրաժեշտ է մուտքային տվյալները ձևափոխել [-1,1] միջակայքի: Ընտրանքի i-րդ տարրի համար  $\chi$  ցուցանիշի արժեքի վերահաշվարկը [a,b] միջակայքում իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$\tilde{x}_i = \frac{(x_i - x_{\min})(b - a)}{(x_{\max} - x_{\min})} + a$$

որտեղ  $x_{\min}$  -ը և  $x_{\max}$ -ը ցուցանիշի նվազագույն և առավելագույն ընտրանքային արժեքներն են:

Գծանկար 2



Ստացված բազմությունից առանձնացվում է երկու չհատվող ենթաբազմություն՝ ուսուցողական և ստուգող:

Ուսուցման փուլում նեյրոնային ցանցը ուսուցողական ընտրանքի հիման վրա վերծանում է նպատակային ֆունկցիան, այսինքն լուծում է ինտերպոլյացիայի խնդիր:

Օգտագործման (կանխատեսման) փուլում կանխատեսվող արժեքը որոշելու նպատակով նեյրոնային ցանցն օգտագործում է ստացված կախվածությունը՝ լուծում է էքստրապոլյացիայի խնդիր:

Նեյրոնային ցանցի կառուցման փուլում իրականացվում է ցանցի ճարտարապետության և միջնեյրոնային կապերի ընտրությունը: ՀՀ ՍԳԻ ժամանակային շարքի հետազոտության արդյունքում որպես նեյրոնային ցանցի տիպ ընտրվել է ցանց 30 մուտքով, գաղտնի շերտի 5 նեյրոնով և մեկ ելքային նեյրոնով (տես՝ գծանկար 3):

Նեյրոնային ցանցի պարամետրական կարգավորումը կատարվում է նեյրոցանցի ուսուցման գործընթացում, որի արդյունքում հաշվարկվում են սինապտիկ կշիռները: Նեյրոնի մուտքային  $x_1, x_2, \dots, x_n$  տվյալները, կապերի  $w_1, w_2, \dots, w_n$  կշիռների միջոցով ձևափոխվում են գումարային  $S$  ազդանշանի, ելքային ազդանշանի արժեքը հաշվվում է ըստ  $f$  ակտիվացման ֆունկցիայի  $Y = f(S)$ : Առավել

հաճախ օգտագործվող ակտիվացման ֆունկցիան սիգմոիդային կամ լոգիստիկ կոչվող հետևյալ ֆունկցիան է.


$$Y = \frac{1}{1 + e^{-x}}$$

Դրա հիմնական առավելությունը մյուս ակտիվացման ֆունկցիաների համեմատ ամբողջ առանցքի վրա դիֆերենցելիությունն է և պարզ տեսքի ածանցյալ ունենալը:

Ուսուցման նպատակը ցանցի սինապտիկ կշիռների այնպիսի ընտրությունն է, որոնք ցանցի իրական ելքը մոտեցնում են նպատակային ելքին: Հաշվարկվել է ելքային և նպատակային վեկտորների միջև սխալի չափը և կշռային գործակիցները համալրվել են ուսուցման ընտրանքի յուրաքանչյուր զույգի համար: Ուսուցման գործընթացը կարելի է դիտարկել որպես օպտիմալացման խնդրի լուծում, որի նպատակը սինապտիկ գործակիցների արժեքների ընտրության միջոցով ուսուցանվող բազմության վրա սխալի ֆունկցիայի մինիմալացումն է: Ցանցի ուսուցման լավ արդյունքների մասին է վկայում գծանկար 4-ը:


*Գծանկար 3*

**ՍԳԻ կանխատեսման նպատակով կառուցված նեյրոնային ցանցի սխեման**



**Գծանկար 4**

**Ուսուցանված նեյրոնային ցանցի ստուգումը**




Կանխատեսման սխալի ստուգման փուլում ստուգիչ ընտրանքի համար ստացված սխալի արժեքի թույլատրելի սահմաններում գտնվելու դեպքում ցանցը համարվում է ուսուցանված և կարող է օգտագործվել կանխատեսման համար: Մեր օրինակում *ցանցի ուսուցման սխալանքի շեմը` threshold=0.01*: 40 ստուգիչ ընտրանքների համար ցանցի միջոցով ստացվել են գծանկար 4-ում բերված արդյունքները:

Արհեստական նեյրոնային ցանցի կիրառմամբ կատարված կանխատեսման արդյունքներն են՝ 2013 թ. չորրորդ եռամսյակի համար կանխատեսված արժեքը 105.4 է, իսկ 2014 թ. առաջին եռամսյակինը՝ 106,0: Արդյունքները ներկայացված են գծանկար 5-ում:

**Գծանկար 5**

**Նեյրոնային ցանցով կանխատեսված արժեքներ (cpi արժեքներով)**



**ՍԳԻ Ժամանակային շարքի կանխատեսումը ARIMA և էքսպոնենցիալ հարթեցման մոդելների կիրառմամբ**

Չետագոտվող ՍԳԻ շարքի վարքը ներկայացնող լավագույն մոդելը ARIMA(0,0,1)x(0,1,1)<sup>4</sup> մոդելն է, որը ստացել ենք SPSS ծրագրային փաթեթի կիրառմամբ: Մոդելի *համապատասխանության վիճակագրություններն են*. Stationary R-squared =0.391; R-squared=0.497; Normalized BIC=2.302 (տես՝ աղյուսակ 2): Մոդելի գնահատված MA(1) և SMA(1) գործակիցները նշանակալի են (տես՝ աղյուսակ 3):

*Աղյուսակ 2*

**ARIMA(0,0,1)x(0,1,1)<sup>4</sup> մոդելի վիճակագրությունները**

Model	Number of Predictors	Model Fit statistics			Ljung-Box Q(18)			Number of Outliers
		Stationary R-squared	R-squared	Normalized BIC	Statistics	DF	Sig.	
cpi-Model_1	0	.391	.497	2.302	10.375	16	.846	0

*Աղյուսակ 3*


**ARIMA(0,0,1)x(0,1,1)<sup>4</sup> մոդելի պարամետրերի գնահատականները**

					Estimate	SE	t	Sig.
cpi-Model_1	cpi	No Transfor- mation	MA	Lag 1	-.495	.111	-4.455	.000
			Seasonal Difference		1			
			MA, Seasonal	Lag 1	.593	.109	5.460	.000

Մնացորդները ներկայացնում են «սպիտակ աղմուկ» ստացիոնար գործընթաց, որի արժեքները ժամանակի ցանկացած ֆիքսված պահի բաշխված են նորմալ բաշխման օրենքի համաձայն 0 միջինով և  $\sigma^2$  դիսպերսիայով.  $\epsilon \sim iid(0, \sigma^2)$ : Դա երևում է մնացորդների շարքի կորելոգրամից (տես՝ գծանկար 6): ARIMA(0,0,1)x(0,1,1)<sup>4</sup> մոդելի կանխատեսման արդյունքները ներկայացված են աղյուսակ 4-ում և գծանկար 8-ում:

**Գծանկար 6**

**ARIMA(0,0,1)x(0,1,1)4 մոդելի մնացորդների ավտոկորելյացիան**



**Աղյուսակ 4**

**ARIMA մոդելի կանխատեսումները**

Model		Q4 2013	Q1 2014
cpi-Model_1	Forecast	105.3	104.8
	UCL	111.0	111.2
	LCL	99.6	98.5

Գնաճի կանխատեսումը **էքսպոնենցիալ հարթեցման մոդելով** ARIMA մոդելի համեմատ տվել է ավելի լավ արդյունքներ՝ հարաբերականորեն փոքր Բայեզի ինֆորմացիոն չափանիշ և հարաբերականորեն մեծ դետերմինացիայի գործակից (տես՝ աղյուսակներ 2-ը և 5-ը): Մոդելի պարամետրերի գնահատականները վիճակագրորեն նշանակալի են (տես՝ աղյուսակ 6):

**Աղյուսակ 5**

**էքսպոնենցիալ հարթեցման մոդելի վիճակագրությունները**

Model	Number of Predictors	Model Fit statistics			Ljung-Box Q(18)			Number of Outliers
		Stationary R-squared	R-squared	Normalized BIC	Statistics	DF	Sig.	
cpi-Model_1	0	.448	.572	2.197	21.855	16	.148	0

**Աղյուսակ 6**

**էքսպոնենցիալ հարթեցման մոդելի պարամետրերի գնահատականները**

Model			Estimate	SE	t	Sig.
cpi-Model_1	No Transformation	Alpha (Level)	.562	.098	5.723	.000
		Delta (Season)	.692	.231	2.989	.004

ՍԳԻ վիճակագրական և էքսպոնենցիալ հարթեցման մեթոդով կանխատեսված արժեքների համադրումը ներկայացված է գծանկար 8-ում, իսկ էքսպոնենցիալ հարթեցման մոդելով կատարված կանխատեսումների արդյունքները՝ աղյուսակ 7-ում և գծանկար 7-ում:


Աղյուսակ 7

էքսպոնենցիալ հարթեցման մոդելի կանխատեսումները

Model		Q4 2013	Q1 2014
cpi- Model_ 1	Forecast	103.9	104.8
	UCL	109.6	111.3
	LCL	98.3	98.4

Գծանկար 7

ՍԳԻ ժամանակային շարքի վիճակագրական (Observed) և ARIMA(0,0,1)x(0,1,1)<sup>4</sup> մոդելով կանխատեսված (Fit) արժեքների համադրումը<sup>1</sup>



**Եզրակացություն:** Տնտեսական գործոնների դինամիկան ներկայացնող վիճակագրական տվյալները ժամանակային շարքեր են: Ժամանակային շարքերի կանխատեսման նպատակով կիրառվում են մի շարք մոդելներ, որոնցից յուրաքանչյուրը պահանջում է որոշակի նախնական պայմանների բավարարում: Այսպես, ARIMA(p, d, q) (Autoregressive Integrated Moving Average) մոդելների կիրառումը պահանջում է ստացիոնարության պայմանի բավարարում: ARIMA մո-


<sup>1</sup> 95 % վստահելիության վերին (UCL) ու ստորին սահմանները (LCL): Forecast-ը ներկայացնում է կանխատեսված արժեքները հաջորդ երկու եռամսյակների համար:

դելների ընդհանուր թերությունը մոդելի տիպն ընտրելու բարդությունն է, որը զգալիորեն մեծացնում է ժամանակային շարքերի վերլուծության և կանխատեսման գործընթացի մասնակիցների *սուբյեկտիվ ներդրումը*<sup>1</sup>: Երկրաչափական լագերի կան էքսպոնենցիալ հարթեցման մոդելներում ենթադրվում է, որ X փոփոխականի ազդեցությունը q ժամանակ անց չի ավարտվում, այլ անվերջ շարունակվում է, ժամանակի յուրաքանչյուր պահի նվազելով *նույն տոկոսով*:

Արհեստական նեյրոնային ցանցի ապարատը ենթադրում է մոդելի ձևավորման գործում *վերլուծաբանի նվազագույն մասնակցություն*, քանի որ ինքնաուսուցման ունակությունը բնորոշ է բոլոր նեյրոցանցային մոդելներին (ուսուցման ալգորիթմները կշռային գործակիցները հարմարեցնում են ներկայացված տվյալների կառուցվածքին):

**Գծանկար 8**

**ՍԳԻ ժամանակային շարքի վիճակագրական (Observed) և էքսպոնենցիալ հարթեցման մոդելով կանխատեսված (Fit) արժեքները:**



ՍԳԻ 2013 թ. չորրորդ եռամսյակի կանխատեսված արժեքը էքսպոնենցիալ հարթեցման մոդելով 103,9 է, ARIMA մոդելով՝ 105,3: 2014 թ. առաջին եռամսյակի արժեքի կանխատեսումների արդյունքները համընկել են՝ 104,8: Արհեստական նեյրոնային ցանցի կիրառմամբ կատարված կանխատեսման արդյունքներն են 105,4 և 106,0:

Կատարված վերլուծությունից երևում է, որ վերը ներկայացված մոդելների կանխատեսումների արդյունքները գրեթե համընկնում են: Կանխատեսման ճշտության գնահատականները *համադրելի են միայն* ARIMA և էքսպոնենցիալ հարթեցման մոդելների համար: Մոդելների համապատասխան վիճակագրու-

<sup>1</sup> Бокс Дж., Дженкинс Г., Анализ временных рядов. Прогноз и управление / М.: Мир, 1974; Бриллинджер Д. Временные ряды / М.: Мир, 1980.

թյունները հիմք են տալիս նախապատվությունը տալ էքսպոնենցիալ մոդելի կանխատեսմանը (տես՝ աղյուսակներ 2-ը և 5-ը):

Ցույց ենք տվել, որ արհեստական նեյրոնային ցանցի կիրառմամբ ստացված գծանկար 6-ը ներկայացնում է ՍԳԻ փաստացի և կանխատեսված տվյալների համընկնելու ավելի բարձր աստիճան, քան գծանկարներ 7-ը և 8-ը, որոնք ստացվել են ARIMA և էքսպոնենցիալ հարթեցման մոդելներով:

Այսպիսով, արհեստական նեյրոնային ցանցերը արդյունավետ միջոց են տնտեսական ցուցանիշների դինամիկան կանխատեսելու համար: ՀՀ գնաճի դինամիկան կանխատեսելու նպատակով կիրառվող մոդելների բազմազանությունը հնարավորություն կտա կենտրոնական բանկին ունենալ ընտրության ավելի մեծ հնարավորություն:

ԱՆՑ-ը կարող են օգտագործվել բոլոր այն բնագավառներում, որտեղ անհրաժեշտ է լուծել ապրոկսիմացիայի և ինտերպոլացիայի, կերպարների ճանաչման և դասակարգման, կանխատեսման, գնահատման և կառավարման խնդիրներ:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննարկվում է տնտեսական ցուցանիշների կանխատեսման համար նեյրոցանցի կիրառման հնարավորությունը և արդյունավետությունը: Համեմատվում են ժամանակային շարքերի վերլուծության ARIMA և էքսպոնենցիալ հարթեցման մոդելների կիրառմամբ և նեյրոցանցի օգտագործմամբ ստացված կանխատեսումների արդյունքները:

## АННОТАЦИЯ

### **ХАРАТЯН А., САРКИСЯН С., ОВАКИМЯН А. – ПРИМЕНЕНИЕ ИСКУССТВЕННЫХ НЕЙРОННЫХ СЕТЕЙ В ЭКОНОМИКО-МАТЕМАТИЧЕСКОМ МОДЕЛИРОВАНИИ (НА ПРИМЕРЕ ПРОГНОЗИРОВАНИЯ ИНФЛЯЦИИ В РА)**

В статье обсуждается возможность использования и эффективность нейронной сети для прогнозирования экономических показателей. Сопоставляются результаты прогнозирования, полученные с применением моделей ARIMA и экспоненциального сглаживания и с использованием нейронной сети, для анализа временных рядов.

## SUMMARY

### **KHARATYAN A., SARGSYAN S., HOVAKIMYAN A. – THE USAGE OF ARTIFICIAL NEURAL NETWORKS IN ECONOMIC-MATHEMATICAL MODELING (ON THE EXAMPLE OF INFLATION FORESIGHT IN RA)**

Authors discuss possibility and efficiency of artificial neural network application for economic indicators prediction and compare. Results of predictions using ARIMA, exponential smoothing models and an artificial neural network for time series analysis.

*ԱՐՄԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ*

*տնտեսագիտության թեկնածու,*

*ԵՊՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի դոցենտ,*

*էլ. փոստ՝ a.martirosyan@ro.ru*

### **ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏԻ ՈԱՑԻՈՆԱԼ ՎԱՐՔԱԳԾԻ ԻՆՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԸՆԿԱԼՈՒՄԸ**

Տնտեսագիտությունում տնտեսական վարքագծի ռացիոնալության կանխավարկածի գաղափարական հենքը շարադրվեց Ա. Սմիթի «Ազգերի հարստության բնույթի և պատճառների ուսումնասիրություն» աշխատանքում: Աշխատության առաջին գրքի երկրորդ՝ Աշխատանքի բաժանում բերող պատճառների վերաբերյալ, գլխում նկարագրվում է հայտնի սկզբունքը<sup>1</sup>, որ մարդիկ առաջնորդվելով անձնական շահի առավելագույն բավարարման սկզբունքով, չմտածելով հասարակական շահի վերաբերյալ, այնուամենայնիվ նպաստում են վերջինի առավելագույն բավարարմանը:

Անշուշտ գաղափարը մասամբ փոխառնված էր Կ. Չելվեցիուսից և այդ առումով առանցքային նշանակությամբ արծարծվում էր էգոիզմի, անձնական շահի առավելագույն բավարարման սկզբունքը: Մարդու էությունը, տնտեսական վարքագիծը, թերևս այս ամենից մեծապես բխեցվող ռացիոնալության կանխավարկածը ներառում է բազում ենթաշերտեր ու ենթադրություններ: Ուշագրավ է, որ վարքաբանական տեսանկյունից Ա. Սմիթը դիտարկում է կենդանիների վարքը, որ դիցուք ընդհանուր նպատակի հասնելու համար կենդանիները չեն փոխանակում ոսկորները<sup>2</sup>: Ինչը չի կարելի ասել մարդկանց մասին: Նրանք իրենց նպատակներին հասնելու համար կարիք ունեն այլոց հետ համագործակցության: Սակայն միաժամանակ լինելով սոցիալական, հասարակական, հոգեբանական, հուզական էակ մարդն առաջնորդվում է այլ դրդապատճառներով:

Դիցուք «ֆիզիկական տեսանկյունից» մարդը լինելով սահմանափակ էներգիա կրող, պարունակող էակ, առաջնորդվում է էներգիայի պահպանման սկզբունքով, ինչպես ցանկացած կենդանի օրգանիզմ բնության մեջ: Ըստ որի տնտեսավարող սուբյեկտը տարիներ շարունակ զբաղվելով տնտեսական գործունեությամբ կարող է չստանալ առավելագույն շահույթի մեծություն, այլ՝ բավարարվել շահութաբերության որաշակի իրեն հասանելի մեծությամբ: Ինչպես նաև ապրանքը գնելիս առաջին իսկ իրեն բավարարող բարիքը, ծառայությունը կամ պայմանը ստանալիս կարող է դադարեցնել շփինգի գործընթացի իրականացումը:

Մարդը գործունեության այլ տեսակների համեմատ առավելագույն էներգիա է ծախսում մտածողության ընթացքում, ուստի և հասունացմանը համընթաց ձևավորվում են մտածողական հստակ կոնստրուկցիաներ, կարծրատիպեր, գեշտալտներ, որոնցով առաջնորդվում է ամենօրյա մտածողությունում և որոնք գործում են վերագրյալ սկզբունքի կենսունակության հիմքի վրա, այս տեսանկյունից ևս ռացիոնալության կանխավարկածի շեղման հնարավորություններ են ընձեռնվում: Քանզի մարդը

<sup>1</sup> **Смит А.**, Исследование о природе и причинах богатства народов / М.: Изд-во социально-экономической литературы, 1962, сс. 27 – 30.

<sup>2</sup> Նույն տեղում:

փորձում է խնդիրների լուծումները մոտարկել իր ունեցած ալգորիթմներին, ինչն էլ կապահովի էներգիայի ապահովման սկզբունքի կենսունակությունը:

Դեռ Անտիկ աշխարհում էր ընդունված, որ մարդը հասարակական, քաղաքական էակ է և աշխարհի ողջ հարստության դիմաց չի նախընտրի միայնակ կյանքը, որն էլ արտահայտվում է մարդու տնտեսական վարքագծում. այն համապատասխանեցվում է հասարակությունում ընդունված նորմերին և բխեցվում է տվյալ սոցիումում գործող չափանիշներից:

Բացարձակ առումով քանի դեռ բավարարված չեն մարդու ֆիզիկական գոյության համար անհրաժեշտ պահանջումները, հոգեբանական, հասարակական և/կամ այլ մակարդակներում ընկած պահանջումների ձևավորման և բավարարման հիմքեր չեն ձևավորվում<sup>1</sup>:

Այս առումներով 2002 թվականը աննախադեպ էր տնտեսագիտությունում: Նորեյլան մրցանակը շնորհվեց տնտեսագետ Վ. Սմիթին և հոգեբան Դ. Կահնեմանին: Վ. Սմիթն այդ պատվին է արժանացել տնտեսագիտական էմպիրիկ վերլուծություններում որպես լաբորատոր փորձարարական մեթոդի հիմնադիր, իսկ Դ. Կահնեմանը՝ հոգեբանական ուսումնասիրությունները տնտեսագիտական վերլուծություններում ինտեգրելու համար:

Դասական տնտեսագիտությամբ սահմանվում է տնտեսվարող սուբյեկտի ռացիոնալության կանխավարկածը, որի բաղկացուցիչ մասն է կազմում իրագրականության, անվճար տեղեկատվության ստացման հնարավորությունը: Ժամանակ առ ժամանակ մասնագիտական քննարկումներում այս ուղղությամբ տարակարծություններ էին դրսևորվում: Այդ ամենը համակարգված և տնտեսագիտության զարգացման արդի մակարդակում ներկայացրին Դ. Կահնեմանը, Ա. Թվերսկին, Վ. Սմիթը, Գ. Կաթոնան և այլք, ովքեր հասարակագիտական տեսանկյունից գործնականում հիմնավորում են մարդու վարքագիծը պայմանավորող դրոպապատճառների առավել ընդգրկուն ցանկ, քան պատկերագրված է դասական տնտեսագիտությունում: Հասարակական, տնտեսական զարգացման արդի հարթությունում, երբ հանրությունը գտնվում է հետինդուստրիալ հասարակարգի<sup>2</sup>, շուկայական տնտեսության<sup>3</sup> կամ կյանքի որակական պայմանների բարելավման<sup>4</sup> շրջանում, երբ առկա են ապահովվածության զգացում, ապագայի հանդեպ վստահության և ընդհանրապես քաղաքակիրթ հասարակության գործունեության համար անհրաժեշտ պայմանները: Անշուշտ մարդու վարքագիծը տնտեսական տարաբնույթ միջավայրերում, ռիսկային և անորոշ իրավիճակներում կարող է փոփոխվել, տարակերպ դրսևորումներ ունենալ<sup>5</sup>: Այս ամենին դասական տնտեսագիտությունում, թերևս հատուկ ուշադրություն չի դարձվում և գործնականում այսօրինակ հիմնախնդիրների առաջացման և լուծման գործում, որպես «փրկողակ» առանձնացվում է ժամանակի երկարատև

<sup>1</sup> Лей Г., Очерк истории средневекового материализма. М.: Изд-во иностранной литературы, 1962.

<sup>2</sup> Տես՝ **Иноземцев В.**, Постиндустриальное общество. Основные направления исследования современного общества, Дата опубликования 06.09.2011 - <http://www.analysisclub.ru/index.php?page=social&art=2094>, **Емелин В. А.**, Постиндустриальное общество и культура постмодерна - <http://emeline.narod.ru/postindustrial.htm>

<sup>3</sup> **Обминский Э. Б.**, Концепции международного экономического порядка / М.: Мысль, 1977; Буржуазные теории экономического развития (Критический анализ) / М.: Мысль, 1978.

<sup>4</sup> **Rostow W. W.** The Stages of Economic Growth. Cambridge, 1960.

<sup>5</sup> Judgement under uncertainty: Heuristics and biases / Edited by D. Kahneman, P. Slovic, A. Tversky. – Cambridge University Press, 2001.

հատվածի զաղափարը, որի դեպքում լրիվ զբաղվածության պայմաններում տնտեսությունում հաստատվում է հավասարակշռություն: Սա վերլուծական յուրատեսական մեկնակետ է, կատարյալ վիճակի նկարագրության մի մոդել, որով առաջնորդվում են դասական ուղղության շրջանակներում: Մեթոդական տեսանկյունից այդպիսի իդեալական պայմաններ նույնիսկ առկա են ճշգրիտ գիտություններում՝ ֆիզիկայում՝ ձգողության ուժի դասական պատկերացումները, քիմիայում՝ վակուումի դեպքում վերլուծությունը և այլն: Սակայն այս ամենին համատեղ ուսումնասիրվում են բնությունից ինչպես նաև արհեստական ճանապարհով ստացվող տարրերի բնական վիճակը և փոփոխությունները գործնականում ու այն ի՞նչ չափով են համապատասխանում կամ տարբերվում իդեալական պայմաններում ներկայացված ձևաչափից:

Այս մասով տնտեսագիտական համակարգում դասական և ոչ դասական ուղղություններում նկատելի է որոշակի տարակարծություն: Մեթոդաբանական տեսանկյունից փեղկվում է տնտեսական գիտության ուսումնասիրության առարկան: Արտադրության բնագավառում դրսևորվող օրինաչափությունները համեմատվում են ֆիզիկայում և ընդհանրապես ճշգրիտ գիտական դիսցիպլիններում առկա սկզբունքների և օրենքների հետ: Նշվածին հակադրում է բաշխման, սպառման բնագավառը, որում ևս թեև առկա են օրինաչափություններ, սակայն այս պարագայում օրինաչափությունները թերևս կարելի է համեմատել հասարակագիտությունում դրսևորվող օրինաչափությունների հետ: Արդյունքում այն դիտարկվում է հասարակական սովորույթներից, ավանդույթներից կախվածությամբ:

Քննարկումների այս համատեքստում հատկապես ուշագրավ է ներդրումն տնտեսագիտության ձևավորումը, որն էլ թերևս նյարդակենսաբանության, նյարդաֆիզիոլոգիայի, տնտեսագիտության, ինչպես նաև հոգեբանության<sup>1</sup> փոխառնչման արգասիք է<sup>2</sup>: Նախորդ դարավարտից այս ուղղությամբ կատարվում են որոշակի աշխատանքներ: Ժամանակի ընթացքում վերոգրյալ ոլորտների մասնագետները նկատեցին, որ շատ հաճախ իրենց վերլուծությունների առարկան համընկնում է և ջանքերի համադրմամբ կարելի է ավելի մեծ արդյունքների հասնել: Դիցուք, 1997 թ. ԱՄՆ-ի Քարնեգի Մեյլուն համալսարանում տնտեսագետներ Ք. Քամերերը և Գ. Լովենշտեյնը, ԱՄՆ-ի Պրինսթոնի համալսարանում նյարդակենսաբան Ջ. Քոհենը և տնտեսագետ Ք. Պաքսոնը (2001), ԱՄՆ-ի Էմորի (2003) և մի շարք այլ համալսարաններում բազում տնտեսագետներ, նյարդակենսաբաններ, նյարդաֆիզիոլոգներ, հոգեբաններ կազմակերպեցին հանդիպումներ, սեմինարներ, համաժողովներ: Արդյունքում 2004 թ. ԱՄՆ-ի Կիպլահ կղզում հիմնադրվեց միջազգային գիտական նյարդատնտեսագիտական ընկերությունը<sup>3</sup>: Տվյալ ուղղությամբ

<sup>1</sup> Տնտեսագիտության և հոգեբանության փոխառնչման արգասիքն էր համարվում հոգեբանական տնտեսագիտության «պաշտոնական մկրտությունը»՝ 2002 թ. Նոբելյան մրցանակի շնորհումը մասնագիտությամբ հոգեբան՝ Դ. Կահնեմանին և տնտեսագետ՝ Կ. Սմիթին: Ներկայում այս հիմքի վրա ներդրումն տնտեսագիտության առաջացմամբ տեղի է ունենում տնտեսագիտական վերլուծությունների օբյեկտի ընդլայնման միտում:

<sup>2</sup> Կարծում ենք ինչպե՞ս եղավ տնտեսագիտության հոգեբանական ուղղության մասնագետների պարագայում, երբ սկզբում մերժվում էր, հետագայում այս ուղղության մասնագետներին շնորհվեց Նոբելյան մրցանակ, այս դեպքում ևս համապատասխան հասարակական, տնտեսական զարգացման դեպքում համապատասխան մասնագետներին շնորհվելու է Նոբելյան մրցանակ:

<sup>3</sup> ԱՄՆ – ում՝ Քալիֆորնիայի Քլեյմոնի համալսարանում, Կիրքինիայի Ջ. Մեյսոնի համալսարանում և մի շարք նահանգների բուհական հաստատություններում գործում են նյարդատնտեսագիտական հետազոտությունների կատարման կենտրոններ. միջազգային գիտական նյարդատնտեսագի-

հրատարակված առաջին աշխատություններում առանցքային էին դիտվում մարդու էությունից բխող (տնտեսական) մրցակցությունում գոյատևելու և հաղթելու հատկանիշները:

Նյարդատնտեսագիտական ուսումնասիրություններում հնարավորություն ընձեռվեց հետազոտել գլխուղեղն ընդհանրապես և հատկապես վերլուծել մարդու մտածողության ընթացքը տնտեսական որոշումներ կայացնելիս, դրանից առաջ և հետո: Տնտեսագիտությունում մնանօրինակ աշխատանքներ երբևէ չեն կատարվել: Սահմանվել է ապրանքների և ծառայությունների նախընտրությունների շարք՝ ապրանքը սպառելիս ստացվող բավարարվածության, սահմանային օգտակարության և մի շարք այլ մեծություններ, սակայն այդ ամենն առանց դրամական չափման ինչպես է մարդու ուղեղում ընկալվում, հստակեցված չէր: Ի վերջո փողն ինքնին օժտված է օգտակարությամբ, ինչը կարող է էական դեր խաղալ տնտեսական վարքագծում<sup>1</sup>: Ըստ այդմ տվյալ պահի տնտեսական որոշումները համապատասխանեցվում են ապագայի գնահատականներին ու սպասումներին: Եթե նախկինում այս մոտեցումն արդարացված էր, ապա գիտության զարգացման արդի պայմաններում տվյալ մոտեցումն էապես փոխվում է: Տեխնիկական միջոցները հնարավորություն են ընձեռում բացահայտել ուղեղի ակտիվացված շրջանները տնտեսագիտական որոշումներ կայացնելիս: Իհարկե, որպես այս մեթոդի թերություն առանձնացվում էր տեսանկարահանման աշխատանքի հապաղումը, քանի որ այն հիմնված էր գլխուղեղի ակտիվացած հատվածների արյան ճնշման փոփոխության վրա: Գլխուղեղի որոշակի հատվածի թույլ ակտիվացումը կարող է չնչին դեր խաղալ տվյալ գաղափարի ձևավորման վրա, սակայն առանց որի տվյալ մտքի առաջացումն անհնարին կլիներ, որը կարող է առանցքայնորեն չարձանագրվել լազերային տոմոգրաֆի միջոցով: Անշուշտ պետք է հաշվի առնել այն, որ մարդու հնարավորությունները և գլխուղեղի գործունեության առանձնահատկություններն ամբողջովին բացահայտված չեն, ինչը բարդացնում է այս ուղղությամբ աշխատանքների ծավալումը (մարդու գլխուղեղը ինքնին բարդ «համակարգ է»՝ բաղկացած բազմաթիվ կապերով միացած միլիարդավոր նեյրոններից): Ինչպես գիտության մի շարք բնագավառներում, նեյրոտնտեսագիտությունում նույնպես, ներդրվում են փորձարարական մեթոդները: Այս հարթությունում ուշագրավ կարող են լինել ԱՄՆ-ում Յոուսթոնի բժշկական քոլեջի նյարդաբան Ռ. Մոնտեքյուլի կատարած նեյրոտնտեսագիտական դիտարկումները հատկապես կոկա-կոլա և պեպսի-կոլա ըմպելիքների սպառումից ստացվող բավարարվածության առնչությամբ: Հաճախ սպառողները միանման տարաներում զետեղված ըմպելիքները չեն կարողանում տարբերել: Միայն ապրանքանշունից հետո մարդիկ նախընտրությունը տալիս են իրենց «քիմքին

տական ընկերությունը աշխարհի տարբեր երկրներում կազմակերպում է այս ուղղությամբ ստեղծագործող մասնագետների ամենամյա հանդիպումներ: Ուշագրավ էր այն, որ (հոգեբանական) տնտեսագիտության մի շարք ներկայացուցիչներ սկզբնական շրջանում գրեթե չէին մասնակցում այսօրինակ հանդիպումներին, սակայն տակավին վերջերս շատերը, նույնիսկ նրբեյյան մրցանակակիր Դ. Կահնեմանը, իրենց համարում են այս նոր ուղղության թերևս ակտիվիստներից: Սա ևս փաստում է նեյրոտնտեսագիտության զարգացման կարևորությունը:

<sup>1</sup> ՝«*Хикс Д. Р.*, Стоимость и капитал / Пер. с английского, общая редакция и вступительная статья доктора экономических наук Р. М. Энтова, М.: Издательская Группа “Прогресс” “Универс”, 1993, Часть I. Теория субъективной стоимости – Глава II. Теория потребительского спроса, сс. 103 – 186.

հաճելի» ըմպելիքի: Պարադոքսն այն է, որ դա նախընտրելի է, քանի որ մարդիկ գիտեն, որ այն կոկա-կոլա է<sup>1</sup>: Օրինակ կոկա-կոլա նախընտրողների մագնիսա-ռեզոնանսային շերտագրությամբ գլխուղեղի տարբեր կենտրոնների ակտիվության աստիճանը հետազոտելիս դիտվել է այն հատվածների ակտիվացում, որոնք պատասխանատու են հիմնականում հաճելի մտքերի, զգացողությունների, դրական հույզերի առաջացման համար՝ նախաճակատային կեղևի թիկնակողմնային հատվածը և հիպոկամպը<sup>2</sup>:

Ուշագրավ հետևություններ է կատարվում Յուրիխի համալսարանի մասնագետների հետազոտությունների ընթացքում, երբ մագնիսային ազդակներով գլխուղեղի, հատկապես ճակատային կեղևի աջ կողմի աշխատանքը կասեցվում էր, ապա մարդու վարքագիծը ավելի մոտ է լինում հատկապես դասական տեսությունում ներկայացված ռացիոնալության ընկալմանը<sup>3</sup>: Տնտեսվարող սուբյեկտները կարող են դրսևորել ռիսկախույս վարքագիծ՝ գերազնահատել ապագայում սպասելիքների դերը, անորոշությունը և ռիսկը: Նեյրոտնտեսագիտական տեսանկյունից, երբ մագնիսային ռեզոնանսի միջոցով ժամանակավոր դադարեցվում է գլխուղեղի հույզերի համար պատասխանատու հատվածների գործունեությունը, մարդու վարքագիծն առավել մոտարկելի է դառնում դասական ռացիոնալության ձևաչափին: Օրինակ, երբ մարդուն տրվում է որոշակի գումար, սակայն ժամեր անց այն հետ է վերցվում, ապա ավստսանքի ու կորստի զգացումներ են առաջանում: Գլխուղեղի հատկապես այս հատվածն է ակտիվանում ռիսկախույս վարքագծի դրսևորման պարագայում: Մարդիկ հրաժարվում են գործունեություն ծավալելուց, գործարքներ կնքելուց, որպեսզի չսխալվեն, չապրեն ավստսանքի, կորստի զգացում: Հատկապես շուկայական մեխանիզմն այն կատարյալ համակարգը չէ, ինչպես նկարագրված է դասագրքերում, որն ապահովում է ռեսուրսների արդյունավետ բաշխումը: Հաճախ սխալների հիման վրա լավագույն որոշումները կարող են չկայացվել և սա կարող է հանգեցնել բարդությունների ու բարդությունների ի հայտ գալուն: Դրանց ազդեցությունը կարող է պայմանավորել տնտեսական այնպիսի վարքագիծ, որն էապես տարբերվում է դասական տեսությունում ներկայացված ռացիոնալության դրույթակարգից: Նյարդաֆիզիոլոգիական, հոգեբանական տեսանկյունից մարդու մտածողու-

<sup>1</sup> Գազավորված, ոչ ակտիվային ըմպելիքների ԱՄՆ-ի շուկայում կոկա-կոլան զբաղեցնում է շուկայի 17,3 %, պեպսի-կոլան՝ 10,3 % - [http://thestar.com.my/news/story.asp%3Ffile%3D/2009/8/25/worldupdates/2009-08-25T015240Z\\_01\\_NOOTR\\_RTRMDNC\\_0\\_-419501](http://thestar.com.my/news/story.asp%3Ffile%3D/2009/8/25/worldupdates/2009-08-25T015240Z_01_NOOTR_RTRMDNC_0_-419501) :

Կոկա-կոլա և պեպսի-կոլա ապրանքանիշների առավել քան հարյուրամյա մրցակցության պայմաններում շուկայում դոմինանտ դեր է զբաղեցնում կոկա-կոլան: Այս ապարտեզում կոկա-կոլան գրավում է շուկայի առավել քան 50 %, պեպսի-կոլան՝ 21 % - [http://langpair=en%7Cru&u=http://blogs.indews.com/business/pepsi\\_vs\\_coca\\_cola\\_case\\_answer.php](http://langpair=en%7Cru&u=http://blogs.indews.com/business/pepsi_vs_coca_cola_case_answer.php) :

<sup>2</sup> Հիպոկամպը հուզական ոլորտի համար պատասխանատու նյարդային համակարգի այն կարևոր գոյացությունն է, որը հսկում է հուզական վարքագիծը: Այդ գոյացությունը մտնում է մարդու հուզական վարքը հսկող երիզային համակարգի մեջ: Այդ համակարգին բնորոշ են դրոման բազմաթիվ շղթաներ նյարդային տարբեր կարևոր գոյացություններից, որոնք պատասխանատու են հույզերի՝ ենթատեսաթումբ և հիշողության հետքերի ձևավորման համար: Միաժամանակ գործուն է գիտակցական գործունեության համար պատասխանատու նախաճակատային թիկնակողմնային կեղևը, ակնակապիճի հատվածի ճակատային կեղևը:

<sup>3</sup> Տես՝ <http://www.nkj.ru/archive/articles/11826/> (В материалах рубрики использованы сообщения следующих изданий: "New Scientist" и "Economist" (Англия), "Natur und Kosmos" (Германия), "The Futurist", "Science News" и "Technology Review" (США), "Science et Vie" и "Sciences et Avenir" (Франция), а также сообщения агентств печати и информация из Интернета).

թյունը այլ է, երբ չէզոքացվում է հույզերի գործունեության համար պատասխանատու հատվածների գործունեությունը: Մարդն առավել կշռադատված է մոտենում տվյալ հիմնախնդրին: Ասվածը մասնագիտական գրականության մեջ շրջանառվում է սահմանափակ ռացիոնալության տիրույթում ներկայացվող բնորոշումներում:

Մարդու գլխուղեղում, համակարգչի նման, միևնույն «օղակների» (նեյրոնների) միջև նույն կապերը չեն դրսևորվում: Նեյրոնների միջև կապը տարիների ընթացքում կարող է թուլանալ, կարծրանալ՝ ձևավորելով «կարծրատիպային մտածողություն»<sup>1</sup>: Վերհիշենք՝ մարդն առավելագույն էներգիա է ծախսում մտածելիս, ուստի և կարծրատիպերի ձևավորումը կարող է ռացիոնալ լինել էներգիայի պահպանման սկզբունքի գործարկման տեսանկյունից, սակայն տնտեսապես հիմք լինի ոչ ռացիոնալ վարքագծի դրսևորման համար: Տնտեսագիտորեն սա հարափոփոխ ռացիոնալության յուրատեսակ դրսևորում է:

Թերևս, այսօրինակ վերլուծությունների իրականացմամբ հնարավորություն է ընձեռվում տնտեսագիտական բազում տեսությունները առավել մոտեցնել իրականությանը և իրապես համակողմանիորեն ընկալել մարդու տնտեսական վարքագծի առանձնահատկությունները: Այսօրինակ վերլուծությունները շարունակական են քանի դեռ ամբողջովին բացահայտված չեն գլխուղեղի գործունեության առանձնահատկությունները:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում անդրադարձ է կատարվում տնտեսվարող սուբյեկտի ռացիոնալության կանխավարկածին, նկատի ունենալով նեյրոտնտեսագիտության զարգացումը և դիտարկվում են ազդեցությունները ռացիոնալ վարքագծի վրա:

## АННОТАЦИЯ

### МАРТИРОСЯН А. – ИНСТИТУЦИОНАЛЬНОЕ ВОСПРИЯТИЕ РАЦИОНАЛЬНОГО ПОВЕДЕНИЯ ХОЗЯЙСТВУЮЩЕГО СУБЪЕКТА

В статье обсуждаются вопросы связанные с гипотезой рациональности экономического субъекта, принимая во внимание развитие нейроэкономики, и рассматриваются влияния на рациональное поведение.

## SUMMARY

### MARTIROSYAN A. – INSTITUTIONAL PERCEPTION OF RATIONAL BEHAVIOR OF THE ECONOMIC ENTITY

In the article issues related to hypothesis of economic entity rationality is discussed in the context of institutional economics and neuroeconomics while considering influences on rational behavior.

<sup>1</sup>Տե՛ս Սարտիրոսյան Ա., «Սեփականության տնօրինման իրավունքից անցում օգտագործման իրավունքին. ֆիզիոհոգեբանական առնչություններ» // Հայաստան. Ֆինանսներ և Էկոնոմիկա, # 2 (66), փետրվար 2006 թ., էջ. 73 – 76:

**ԿԱՐԻՆԵ ԶՈՒՐԱԲՅԱՆ**

*տնտեսագիտության թեկնածու,  
ԵՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի դոցենտ  
էլ.փոստ՝ kazurab@mail.ru*

**ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՃԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄՆ ԸՍՏ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ  
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ**

Հայաստանում հաշվապահական հաշվառման ոլորտում տեղի ունեցող բարեփոխումները նպատակ են հետապնդում մեր երկրում գործող հաշվապահական հաշվառման համակարգը համապատասխանեցնել միջազգային ստանդարտներին, ինչը կհանգեցնի շուկայական տնտեսության պահանջներին համապատասխան ֆինանսական տեղեկատվական հիմքի ձևավորմանը, որն օգտագործողների բոլոր խմբերին կապահովի կազմակերպության ֆինանսական վիճակի, գործունեության արդյունքների և ֆինանսական վիճակում փոփոխությունների վերաբերյալ անկողմնակալ տեղեկատվությամբ: 1998 թ. մայիսին առաջին անգամ ՀՀ-ում ընդունվեց «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքը: Օրենքով սահմանվեց ՀՀ-ում հաշվապահական հաշվառման հայեցակարգը, այսինքն՝ այն նպատակը, ինչի համար վարվում է հաշվապահական հաշվառումը, կազմվում ու ներկայացվում են ֆինանսական հաշվետվություններ: 2002 թ. «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքը լրամշակվեց և նույն թվականի դեկտեմբերին ընդունվեց նոր խմբագրությամբ:

Հաշվառման բնագավառում իրականացվող բարեփոխումներն արդյունավետ անցկացնելու համար ՀՀ կառավարությունը 1998 թ. նոյեմբերին ընդունեց «Հաշվապահական հաշվառման համակարգի բարեփոխումների մասին» 740 ծրագրային որոշումը: Այս որոշման համաձայն՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը, հիմք ընդունելով Հաշվապահական հաշվառման Սիջազգային Կոմիտեի կողմից հրապարակված Հաշվապահական հաշվառման Սիջազգային Ստանդարտները (ՀՀՄՍ-ները), 1999-2000 թթ. ընդունեց Հայաստանի Հանրապետության Հաշվապահական հաշվառման Ստանդարտները (ՀՀՀՄՍ-ները)՝ թվով 34 ստանդարտ: Ընդունված ՀՀՀՄՍ-ների հիման վրա ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը 2000 թ. հաստատեց «Կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլանը»:

2001 թվականից հետո փոփոխվել են Հաշվապահական հաշվառման Սիջազգային Ստանդարտները, որոնք վերանվանվել են Ֆինանսական հաշվետվությունների Սիջազգային Ստանդարտների (ՖՀՄՍ-ների), որոնք ներառում են.

- ա) Ֆինանսական հաշվետվությունների Սիջազգային Ստանդարտները,
- բ) Հաշվապահական հաշվառման Սիջազգային Ստանդարտները,
- գ) Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների մեկնաբանությունների կոմիտեի (ՖՀՄՄԿ) կամ նախկին Մեկնաբանությունների Մշտական Կոմիտեի (ՄՄԿ) կողմից մշակված մեկնաբանությունները:

Ձգալի փոփոխության են ենթարկվել թվով 18 ՀՀՄՍ-ներ, որոշակի փոփոխության՝ մնացած ՀՀՄՍ-ները, ընդունվել են նոր 8 ՀՀՄՍ-ներ: Երկու ՀՀՄՍ-ներ ուժը կորցրած են ճանաչվել<sup>1</sup>:

2008 թ. «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխության համաձայն՝ նախատեսվեց, որ Հայաստանում ուղղակիորեն կիրառվելու են ՀՀՄՍ-ները, այլ ոչ թե 1999-2000 թթ ՀՀ-ում պաշտոնապես հրատարակված և գործող ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտները (ՀՀՀՀՄ): 2009 թ. ՀՀՄՍ-ները պաշտոնապես թարգմանվեցին հայերեն և հրապարակվեցին 2010-ի մարտին<sup>2</sup>: 2010 թ. սեպտեմբերին հրապարակվեց «ՓՄԿ համար» ՀՀՄՍ-ն<sup>3</sup>:

«Կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլանը և դրա կիրառման հրահանգը» հաստատելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2000 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 319 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ ֆինանսների նախարարի 17.04.2012 թիվ 353-Ն հրամանով հաստատվեց ՀՀՄՍ-ների հիման վրա լրամշակված նոր հաշվային պլան, որն ուժի մեջ է մտել 2012 թ. ապրիլի 27-ից: Հին հաշվային պլանը համալրվել է բացարձակապես նոր հաշիվներով, ինչպես նաև կրել է ցանկային և անվանական փոփոխություններ: Ընդ որում, զգալի փոփոխություններ են կրել եկամուտների և ծախսերի հաշվառման համար նախատեսված վեցերորդ և յոթերորդ հաշվային դասերը, որոնց ուսումնասիրությանն ու մեկնաբանմանն էլ նվիրված է ներկայացված հոդվածը:

Կազմակերպության տնտեսական գործունեության արդյունքների՝ շահույթի կամ վնասի վերլուծությունը հանդիսանում է կառավարչական որոշումների ընդունման հիմքը: Այսպես, անհրաժեշտ է բացահայտել և կանխագուշակել առկա և պոտենցիալ խնդիրները, արտադրական, ֆինանսական և այլ ռիսկերը, որոշել և չափել ընդունված որոշումների արդյունավետությունը հնարավոր կորուստների և եկամուտների մակարդակով: Քանի որ կազմակերպության տարբեր գործունեությունների, գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների հետևանքները տարբեր են իրենց հաճախականությամբ, օգուտ կամ վնաս ստեղծելու պոտենցիալով և կանխատեսելիությամբ, ֆինանսական արդյունքների տարրերի բացահայտումն օգտագործողներին օգնում է հասկանալ ձեռքբերված ֆինանսական արդյունքները և գնահատել ապագա ֆինանսական արդյունքները<sup>4</sup>:

«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով (26.12.2002 թ.) եկամուտը հաշվետու ժամանակաշրջանում տնտեսական օգուտների ավելացումն է, որը տեղի է ունենում ակտիվների ներհոսքի կամ աճի, կամ պարտավորությունների նվազման ձևով, և որը հանգեցնում է սեփական կապիտալի աճի՝ բացառությամբ մասնակիցների կողմից սեփական կապիտալում կատարված ներդրումների հետևանքով սեփական կապիտալի ավելացման:

1 ՀՀ ԿԼ Հարկային պետական ծառայության հարկային ծառայողների վերապատրաստման դասընթաց «Ֆինանսական և հարկային հաշվառում. հարկային ստուգումների հայաստանյան և միջազգային փորձը», Երևան, 2007, էջ 9-11:

<sup>2</sup> ՀՀ պաշտոնառման տեղեկագիր թիվ 12 (746), 24 մարտի 2010:

<sup>3</sup> ՀՀ պաշտոնառման տեղեկագիր թիվ 47 (781), 24 սեպտեմբերի 2010:

<sup>4</sup> ՀՀՄՍ1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»:

Բերված սահմանումից հետևում է, որ եկամտի առկա լինելու հարցը քննարկելիս պետք է դիտարկել, թե արդյոք կազմակերպության ակտիվներում (պարտավորություններում) առկա է համապատասխան փոփոխություն, թե ոչ, ընդ որում, մասնակիցների կողմից սեփական կապիտալում ներդրումների հետևանքով ակտիվների ավելացումը (պարտավորությունների նվազումը) եկամուտ չի համարվում:

Ծախսը հաշվետու ժամանակաշրջանում տնտեսական օգուտների նվազումն է, որը տեղի է ունենում ակտիվների արտահոսքի կամ նվազման, կամ պարտավորությունների առաջացման, կամ աճի ձևով, և որը հանգեցնում է սեփական կապիտալի նվազման՝ բացառությամբ մասնակիցների միջև սեփական կապիտալի բաշխման հետեւանքով դրա նվազման դեպքի:

Բերված սահմանումից հետևում է, որ ծախսի առկա լինելու հարցը քննարկելիս դարձյալ պետք է դիտարկել, թե արդյոք կազմակերպության ակտիվներում (պարտավորություններում) առկա է համապատասխան փոփոխություն, թե ոչ, ընդ որում, մասնակիցների միջև սեփական կապիտալի բաշխման հետևանքով ակտիվների նվազումը (պարտավորությունների ավելացումը) ծախս չի համարվում:

Օրինակ՝ նյութերի բացթողումը արտադրություն ծախս չի համարվում<sup>1</sup>, քանի որ դրա արդյունքում սեփական կապիտալի նվազում տեղի չի ունենում, այլ ակտիվի մի տեսակը (նյութը) փոխակերպվում է ակտիվի մեկ այլ տեսակի (արտադրանքի), սակայն արտադրանքի վաճառքի դեպքում վաճառված արտադրանքի ինքնարժեքի դուրսգրումը բավարարում է ծախսի սահմանմանը, քանի որ առկա է ակտիվների նվազում, որը հանգեցնում է սեփական կապիտալի նվազման (այս դեպքում ստացված կամ ստացման ենթակա ակտիվների չափով իր հերթին գրանցվում է եկամուտ): Մյուս կողմից, ծախսի սահմանմանը բավարարում են նաև կազմակերպության կողմից կատարվող բոլոր նվիրատվությունները, աշխատակիցներին շահույթի բաշխումները, օգնությունները և պարգևավճարները, բոլոր տեսակի կորուստները (անկախ նրանից, թե հարկային նպատակներով այդ կորուստները ինչպես են դիտարկվում)<sup>2</sup>:

Ներկայացնենք եկամուտների և պարտքերի սահմանումը Վենի դիագրամի տեսքով:


Եկամուտների ու ծախսերի վերլուծությունն իրականացնելու, ինչպես նաև դրանց նշանակությունն ու էությունը ճիշտ հասկանալու համար կարևոր է եկամուտների ու ծախսերի դասակարգման ուսումնասիրությունը: Եկամուտները հին հաշվային պլանով, ըստ ստացման բնույթի, ստորաբաժանվում էին հետևյալ չորս խմբերի.

1. Գործառնական գործունեությունից եկամուտներ,
2. Ոչ գործառնական եկամուտներ,
3. Արտասովոր եկամուտներ,
4. Նախորդ տարիների եկամուտներ:

<sup>1</sup> Այլ ակտիվների ստեղծման նպատակով ռեսուրսների օգտագործման (ակտիվների ավելացման կամ պարտավորությունների նվազման) համար օգտագործվում է «ծախսում» տերմինը:

<sup>2</sup> «Հաշվապահական հաշվառում» Ուսումնական ձեռնարկ, ՀՈՒՄԱ կրթական հիմնադրամ հրատարակչություն, Երևան, 2012, էջ 10-11:

Գծապատկեր 1



Ներկայումս, 2012 թ. ընդունված նոր հաշվային պլանով եկամուտներն, ըստ ստացման բնույթի, դասակարգվում են հինգ խմբի (տես գծապատկեր 2).

- Գործառնական գործունեությունից եկամուտներ,
- Շարունակվող գործունեության այլ եկամուտներ,
- Ընդհատված գործունեությունից եկամուտներ,
- Վերադասակարգման ճշգրտումներ. օգուտներ,
- Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչվող եկամուտներ: Ծախսերը հին հաշվային պլանով, ըստ ստացման բնույթի, ստորաբաժանվում էին հետևյալ հինգ խմբերի.

1. Գործառնական գործունեությունից ծախսեր,
2. Ոչ գործառնական ծախսեր,
3. Արտասովոր ծախսեր,
4. Նախորդ տարիների ծախսեր,
5. Շահութահարկի գծով ծախս:


Ներկայումս , 2012 թ. ընդունված նոր հաշվային պլանով ծախսերը, ըստ ստացման բնույթի, դասակարգվում են վեց խմբի (տես գծապատկեր 3).

- Գործառնական գործունեությունից ծախսեր,
- Շարունակվող գործունեության այլ ծախսեր,
- Ընդհատված գործունեությունից ծախսեր,
- Վերադասակարգման ճշգրտումներ. կորուստներ,
- Շահութահարկի գծով ծախս (եկամուտ),
- Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչվող եկամուտներ:

<sup>1</sup> Գծապատկերը կազմված է հեղինակի կողմից:

## Գծապատկեր 2


### Եկամուտների դասակարգումը գծապատկերի միջոցով<sup>8</sup> Եկամուտներ



<sup>8</sup> Գծապատկերը կազմված է հերթմասի կողմից:

**Գծապատկեր 3**

**Ծախսերի դասակարգումը գծապատկերի միջոցով<sup>9</sup>**



<sup>9</sup> Գծապատկերը կազմված է հերիմակի կողմից

Այժմ ներկայացնենք եկամուտներն ու ծախսերն՝ ըստ դրանց խմբերի:

**Գործառնական գործունեությունից եկամուտները** ներառում են՝ արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթը, գործառնական այլ եկամուտները, գյուղատնտեսական գործունեությունից եկամուտները: Հարկ է նշել, որ «Գյուղատնտեսություն» ՀՀՄՍ 41-ը նոր ընդունված ստանդարտների ցանկում է և դրա ընդունմամբ էլ պայմանավորված է գյուղատնտեսական գործունեությունից եկամտային և համապատասխանաբար գյուղատնտեսական գործունեությունից ծախսային նոր հաշիվների ընդունումը:

615 «Գյուղատնտեսական գործունեությունից եկամուտներն» առաջանում են ծնաճից կամ այլ կերպ գյուղատնտեսական գործունեությունից ստացված կենսաբանական ակտիվների մուտքագրման ժամանակ, ինչպես նաև երբ կենսաբանական ակտիվների «իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումներ»-ով վերաչափումից ստացվում է օգուտ, որը պայմանավորված է գնի կամ ֆիզիկական փոփոխությամբ: Սակայն, երբ վաճառված կենսաբանական ակտիվների հաշվեկշռային արժեքը դուրս գրելիս ստացված կամ ստացվելիք հատուցումը գերազանցում է դրանց հաշվեկշռային արժեքը, ապա այդ չափով կազմակերպությունները պետք է ճանաչեն 715 «Գյուղատնտեսական գործունեությունից ծախսեր»:

Տնտեսական գործունեություն իրականացնելիս լինում են դեպքեր, երբ գնորդները գնված արտադրանքը, ապրանքները հետ են վերադարձնում կազմակերպությանը կամ իրացված արտադրանքի, ապրանքների գներն իջեցվում են: Այդ դեպքերի ազդեցությունն իրացման ծավալների վրա կարգավորելու համար հաշվառման մեջ օգտագործվում էր 612 «Իրացված արտադրանքի, ապրանքների հետ վերադարձումից և գների իջեցումից հասույթի ճշգրտում» ակտիվային, կարգավորող հաշիվը, որն իր հերթին, ստորաբաժանվում էր 6121 «Իրացված արտադրանքի, ապրանքների հետ վերադարձումից հասույթի ճշգրտում» և 6122 «Իրացված արտադրանքի, ապրանքների, ծառայությունների, աշխատանքների գների իջեցումից հասույթի ճշգրտում» երկրորդ կարգի հաշիվների: Ներկայումս այս հաշիվը ենթարկվել է փոփոխության, այն չունի երկրորդ կարգի հաշիվներ և արտացոլում է միայն արտադրանքի, ապրանքների հետ վերադարձումից հասույթի ճշգրտումը: Սակայն, մեր կարծիքով, 6122 «Իրացված արտադրանքի, ապրանքների, ծառայությունների, աշխատանքների գների իջեցումից հասույթի ճշգրտում» հաշիվը պետք էր ոչ թե հանել, այլ վերանվանել «Վաղաժամկետ վճարման դիմաց դեբիտորներին տրված զեղչերից հասույթի ճշգրտում»: Ներկայումս աշխարհի շատ երկրներում, որտեղ գերակայում է ապառիկ առևտուրը, կազմակերպություններն իրենց հաճախորդներին հաճախ առաջարկում են զեղչեր դեբիտորական պարտքերի վաղաժամկետ վճարման դիմաց: Դա այն գումարն է, որը հանվում է դեբիտորական պարտքի ընդհանուր գումարից և նվազեցնում հասույթը, եթե վճարումը կատարվում է համաձայնեցված ժամանակահատվածի ընթացքում: Վաղաժամկետ վճարման զեղչի առաջարկը հաճախորդներին գրավելու և վաղաժամկետ վճարումը խրախուսելու եղանակ է:

**Գործառնական գործունեությունից ծախսերը** ներառում են իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեքը, իրացման, վարչական, գործառնական այլ ծախսերը, որոնք չեն ենթարկվել որևէ փոփոխության: Դրանք համալրվել են 715 «Գյուղատնտեսական գործունեություն-

նից ծախսեր» նոր հաշվով, ինչը, ինչպես վերը նշվեց, պայմանավորված էր ՀՀՄՍ 41 «Գյուղատնտեսություն» նոր ստանդարտի ընդունմամբ:

Գործառնական գործունեությունից եկամուտների և ծախսերի ճանաչման, չափման և զնահատման մոտեցումները նկարագրված են «Հասույթ» ՀՀՄՍ 18-ում, «Կառուցման պայմանագրեր» ՀՀՄՍ 11-ում և «Գյուղատնտեսություն» ՀՀՄՍ 41-ում:

Ոչ գործառնական եկամուտներ ու ծախսեր խմբերը վերանվանվել են շարունակվող գործունեության այլ եկամուտներ և ծախսեր խմբերի, որոնցից բնականաբար պետք է հանվեին և հանվել են 623 «Ընդհատված գործունեությանը վերագրելի ակտիվների վաճառքներից (օտարումներից) և պարտավորությունների մարումներից եկամուտներ» և 723 «Ընդհատված գործունեությանը վերագրելի ակտիվների վաճառքների (օտարումների) և պարտավորությունների մարումների ծախսեր» երկրորդ կարգի հաշիվները:

**Շարունակվող գործունեության այլ եկամուտները** ներառում են ոչ ընթացիկ ակտիվների օտարումից եկամուտներ, ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից եկամուտներ, ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ, արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ, ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկման (անհավաքելիության) հակադարձումից օգուտներ, ֆինանսական ներդրումներից եկամուտներ, շնորհներից և անհատույց ստացումներից եկամուտներ, այլ եկամուտներ:

Ինչպես վերը նշվել է, որոշ եկամտային, ինչպես նաև դրանց համապատասխան ծախսային հաշիվներ կրել են ցանկային և անվանական փոփոխություններ: Այդ հաշիվների թվում են 621 «Ոչ ընթացիկ ակտիվների վաճառքներից (օտարումներից) եկամուտներ», 622 «Ընթացիկ ֆինանսական ակտիվների վաճառքներից (օտարումներից) եկամուտներ» առաջին կարգի և դրանց կից բացված երկրորդ կարգի հաշիվները: Դրանք վերանվանվել են 621 «Ոչ ընթացիկ ակտիվների օտարումներից եկամուտներ», 622 «Ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումներից եկամուտներ»: Հանվել է ընդամենը մեկ՝ «վաճառքներ»-ից բառը, որը փոխարինվել է «օտարում»-ից բառով, սակայն իմաստային առումով դա հանգեցնում է որոշակի անորոշությունների, ինչը շատ կարևոր է ճիշտ հաշվապահական թղթակցություններ ներկայացնելու տեսանկյունից: Օտարումը գույքը մեկ այլ անձին փոխանցումն է, ինչպես նաև սեփականության կամ այլ գույքային իրավունքի փոխանցումը: Օտարման տակ կարող ենք հասկանալ և՛ վաճառքը, և՛ ակտիվի անհատույց տրամադրումը, և՛ լուծարումը: Ինչ վերաբերվում է 624 «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտներ», 625 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ», 626 «Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկման (անհավաքելիության) հակադարձումից օգուտներ» հաշիվներին, ապա դրանցում «եկամուտներ» բառի վերանվանումը օգուտներ բառով ճիշտ և ամբողջովին արտահայտում է այդ հաշիվների բովանդակությունը:

**Շարունակվող գործունեության այլ ծախսերը** ներառում են ոչ ընթացիկ ակտիվների օտարումից ծախսեր, ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից ծախսեր, ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ, արտարժույթի փոխարժեքային տարբերություն-

ներից կորուստներ, ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկման (անհավաքելիության) հակադարձումից կորուստներ, ֆինանսական ծախսեր, անհատույց ստացումներից տրված ակտիվների գծով ծախսեր ու այլ ծախսեր:

Շարունակվող գործունեության այլ եկամուտների փոփոխությունների հետ կապված՝ մեր կողմից կատարված մեկնաբանություններն ամբողջովին վերագրելի են նաև շարունակվող գործունեության այլ ծախսերին: Ճիշտ չէր 721 «Ոչ ընթացիկ ակտիվների վաճառքներից (օտարումներից) ծախսեր», 722 «Ընթացիկ ֆինանսական ակտիվների վաճառքներից (օտարումներից) ծախսեր», առաջին կարգի և դրանց կից բացված երկրորդ կարգի հաշիվները վերանվանվել են 721 «Ոչ ընթացիկ ակտիվների օտարումներից ծախսեր», 722 «Ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումներից ծախսեր», հանելով վաճառքներից բառը: Այդուհանդերձ, ամբողջովին արդարացված է որոշ ծախսային հոդվածներում դրանց վերանվանումը, փոխարինումը կորուստներով:

Շարունակվող գործունեության այլ եկամուտների և ծախսերի ճանաչման, չափման և գնահատման մոտեցումները նկարագրված են «Հիմնական միջոցներ» ՀՀՄՍ 16-ում «Վարձակալություն» ՀՀՄՍ 17-ում, «Հասույթ» ՀՀՄՍ 18-ում, «Պետական շնորհների հաշվառում և պետական օգնության բացահայտում» ՀՀՄՍ 20-ում, «Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ» ՀՀՄՍ 21-ում, «Համախմբված և առանձին ֆինանսական հաշվետվություններ» ՀՀՄՍ 27-ում, «Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում» ՀՀՄՍ 28-ում, «Մասնակցություն համատեղ ձեռնարկումներում» ՀՀՄՍ 31-ում, «Ակտիվների արժեզրկում» ՀՀՄՍ 36-ում, «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ում, «Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատված գործունեություն» ՖՀՄՍ 5-ում:

Նոր հաշվային պլանով գործածությունից հանվել են 631 «Արտասովոր եկամուտներ» (համապատասխանաբար՝ 731 «Արտասովոր ծախսեր») հաշիվները, այս տեղը զբաղեցրել է հաշիվների նոր խումբ 63 «Ընդհատված գործունեությունից եկամուտներ» (համապատասխանաբար՝ 73 «Ընդհատված գործունեությունից ծախսեր»):

**Ընդհատված գործունեությունից եկամուտներ և ծախսեր** խմբերն իրենց մեջ ներառում են արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթը՝ ընդհատված գործունեությունից, ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից և (կամ) վերաչափումից եկամուտները, ինչպես նաև ընդհատված գործունեությանը վերագրվող ծախսերի հաշվառման համար նախատեսված համանման հաշիվները, որոնք եզրափակվում են «Շահութահարկ ընդհատված գործունեության» հաշվով:

Ընդհատված գործունեություն հասկացությունը, դրան վերաբերող եկամուտների ճանաչման, չափման և ներկայացման գծով առանձնահատկությունները սահմանված են «Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատված գործունեություն» ՖՀՄՍ 5-ում:

75 «Շահութահարկի գծով ծախս» եկամուտ խումբը նախատեսված է շահութահարկի գծով ծախսերի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Համաձայն ՀՀՄՍ 12-ի՝ շահութահարկի հաշվապահական հաշվառման

հիմնական հարցն այն է, թե ինչպես հաշվառել կազմակերպության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվների (պարտավորությունների) հաշվեկշռային արժեքի ապագա փոխհատուցման (մարման) և կազմակերպության ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ընթացիկ ժամանակաշրջանի գործարքների և այլ իրադարձությունների ընթացիկ և ապագա հարկային հետևանքները: Ակտիվի կամ պարտավորության ճանաչումից բխում է, որ հաշվետու կազմակերպությունն ակնկալում է փոխհատուցել կամ մարել այդ ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային արժեքը: Այսպիսով, շահույթում կամ վնասում ճանաչված գործարքների և այլ իրադարձությունների հետ կապված հարկային հետևանքները նույնպես ճանաչվում են շահույթում կամ վնասում: Շահույթից կամ վնասից դուրս (կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, կամ ուղղակիորեն սեփական կապիտալում) ճանաչված գործարքների և այլ իրադարձությունների հետ կապված հարկային հետևանքները ևս ճանաչվում են շահույթից կամ վնասից դուրս:

Հաշվային պլանում կատարված վերջին փոփոխություններով գործածությունից հանվել են նաև 641 «Նախորդ տարիների եկամուտներ» (համապատասխանաբար՝ 741 «Նախորդ տարիների ծախսեր») հաշիվները: Վերջինը պայմանավորված է նախորդ տարիների սխալների ուղղման և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների կիրառման արդյունքում առաջացող ճշգրտումների հաշվառման մոտեցումներում կատարված փոփոխություններով, որոնք նկարագրված են «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ» ՀՀՄՍ 8-ում: Ներկայումս այդ հաշիվները փոխարինվել են «Վերադասակարգման ճշգրտումներ. օգուտներ» և «Վերադասակարգման ճշգրտումներ. կորուստներ» խմբերով:

Հարկ է նշել, որ հաշվային պլանում կատարված արմատական փոփոխությունները պայմանավորված են հենց վերադասակարգման ճշգրտումներ, օգուտներ, կորուստներ և այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչվող եկամուտներ և ծախսեր նոր դասերի ներդրմամբ: Վերադասակարգման ճշգրտումները նախապես՝ ընթացիկ կամ նախորդ ժամանակաշրջաններում, այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված և ընթացիկ ժամանակաշրջանում սեփական կապիտալից շահույթին կամ վնասին վերադասակարգված գումարներն են:

#### **Վերադասակարգման ճշգրտումներ. օգուտները** ներառում են՝

- վերադասակարգման ճշգրտումներ. վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափումից իրացված օգուտները,
- վերադասակարգման ճշգրտումներ. հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից իրացված օգուտները,
- վերադասակարգման ճշգրտումներ. արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված՝ փոխարժեքային տարբերություններից իրացված օգուտները:

#### **Վերադասակարգման ճշգրտումներ. կորուստները** ներառում են՝

- վերադասակարգման ճշգրտումներ. վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափումից իրացված կորուստները,
- վերադասակարգման ճշգրտումներ. հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից իրացված կորուստները,

• վերադասակարգման ճշգրտումներ. արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված՝ փոխարժեքային տարբերություններից իրացված կորուստները:

վերադասակարգման ճշգրտումների հաշվապահական հաշվառման մոտեցումները նկարագրված են «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումները ՀՀՄՍ 1-ում», «Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները» ՀՀՄՍ 21-ում», «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ում:

**Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչվող եկամուտները** ներառում են՝

• հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից օգուտները,

• վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից օգուտները,

• հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից օգուտները,

• արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային օգուտները,

• ակտուարային օգուտները:

**Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչվող ծախսերը** ներառում են՝

• հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստները,

• վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից կորուստները,

• հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից կորուստները,

• արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային կորուստները,

• ակտուարային վնասները:

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից, արժեզրկումից կորստի և արժեզրկման հակադարձումից օգուտների հաշվապահական հաշվառման մեջ արտացոլման մոտեցումները (մասնավորապես՝ այն, թե օգուտի կամ կորստի ո՞ր մասն է ենթակա ճանաչման շահույթում կամ վնասում, և ո՞ր մասը՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում) նկարագրված են «Հիմնական միջոցներ» ՀՀՄՍ 16-ում և «Ոչ նյութական ակտիվներ» ՀՀՄՍ 38-ում:

վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի աճից օգուտների և կորուստների հաշվապահական հաշվառման մեջ արտացոլման մոտեցումները նկարագրված են «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ում:

Որպես հեջավորման գործիք նախատեսված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտների և կորուստների հաշվապահական հաշվառման մեջ արտացոլման մոտեցումները նույնպես նկարագրված են «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ում:

**Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային օգուտները և կորուստները** ներառում են արտերկրյա ստորաբաժանումների (մասնաճյուղերի) ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկումից առաջացող փոխարժեքային տարբերություններից օգուտները և կորուստները, և արտերկրյա ստորաբաժանումներում զուտ ներդրման հեջում հեջավորման գործիքի գծով փոխարժեքային տարբերություններից օգուտները և կորուստները: Այդպիսի փոխարժեքային տարբերություններ կարող են առաջանալ, երբ արտերկրյա ստորաբաժանման (մասնաճյուղի) ֆունկցիոնալ արժույթը տարբեր է հաշվետու կազմակերպության ֆունկցիոնալ արժույթից: Արտերկրյա ստորաբաժանումների հետ փոխարժեքային տարբերությունների հաշվապահական հաշվառման մեջ արտացոլման մոտեցումները (ճանաչումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, կուտակումը սեփական կապիտալում և վերադասակարգումը շահույթում կամ վնասում) նկարագրված են «Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները» ՀՀՄՍ 21-ում և «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ում:

**Ակտուարային օգուտներ և վնասներ** հաշիվները նախատեսված են հետաշխատանքային սահմանված հատուցումների պլանների ներքո պարտականության գծով կամ պլանների ակտիվների գծով առաջացած այն ակտուարային օգուտների և վնասների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար, որոնք «Աշխատակիցների հատուցումներ» ՀՀՄՍ 19-ին և կազմակերպության ընտրած հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն՝ ճանաչվում են առաջացման ժամանակաշրջանում՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

Այսպիսով, ինչպես վերը ներկայացվեց, նոր հաշվային պլանում կատարվել են եկամուտների ու ծախսերի հոդվածների զգալի փոփոխություններ, ինչը պայմանավորված էր նոր ՀՀՄՍ-ների ընդունմամբ: Նախկինում Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը բաղկացած էր միայն մեկ բաժնից, որտեղ ներառված էին վերը նշված գործառնական գործունեությունից եկամուտները և ծախսերը, ոչ գործառնական եկամուտները և ծախսերը, արտասովոր եկամուտները և ծախսերը, նախորդ տարիների եկամուտներն ու ծախսերը, ինչպես նաև շահութահարկի գծով ծախսը: «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ՀՀՄՍ 1-ի ընդունմամբ այդ հաշվետվությունը փոխարինվեց Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունով, որը բաղկացած է ժամանակաշրջանի շահույթ կամ վնաս և ժամանակաշրջանի այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ բաժիններից, որտեղ կազմակերպությունը պետք է ներկայացնի ժամանակաշրջանում ճանաչված եկամուտների ու ծախսերի բոլոր հոդվածներն այն հերթականությամբ, ինչպես դա ներկայացվել է նոր հաշվային պլանում:

Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի (26.12.2002 թ.) 21-րդ հոդվածի՝ հաշվապահական հաշվառումը կարգավորող պետական մարմինը սահմանում էր ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերը և դրանց լրացման ցուցումները, պարտադիր պահանջները: Կազմակերպությունները կարող էին օգտագործել այդ ձևերը կամ սահմանել դրանք ինքնուրույն՝ պահպանելով հաշվապահական հաշվառումը կարգավորող պետական մարմնի պարտադիր պահանջները: Ներկայումս օրենքի այդ հոդվածն իր ուժը

կորցրել է (26.12.2008 ՅՕ-226-Ն) և յուրաքանչյուր կազմակերպություն կարող է սահմանել հաշվետվությունների ձևերն ինքնուրույն՝ պահպանելով «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ՀՀՄՍ 1-ի պահանջները:

Հաշվի առնելով վերը նշվածը և եկամուտների ու ծախսերի հողվածներում կատարված փոփոխությունները՝ ներկայացնենք Համապարփակ ֆինանսական արդյունքների հաշվետվությունը՝ համաձայն ՀՀՄՍ 1-ի :

**Ձև N 2  
ՀԱՄԱՊԱՐՓԱԿ  
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

		(հաշվետու տարին (ժամանակաշրջանը))
		ծածկագիրը
Կազմակերպության անվանումը	_____	<input type="text"/>
Փաստացի գործունեության	_____	<input type="text"/>
հիմնական երկու տեսակները	_____	<input type="text"/>
Պետական ռեգիստրում գրանցման համարը		<input type="text"/>
Հարկ վճարողի հաշվառման համարը		<input type="text"/>
Չափի միավորը		<input type="text"/>
Գտնվելու վայրը	_____ հեռախոսը	<input type="text"/>
Փաստացի գործունեու- թյան իրականացման վայրը	_____ հեռախոսը	<input type="text"/>
	_____	<input type="text"/>

<b>Ցուցանիշի անվանումը</b>	<b>Ժամանակաշրջանի շահույթ կամ վնաս</b>			
<b>Գործառնական գործունեություն</b>				
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ				
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք				
<b>Համախառն շահույթ (վնաս)</b>				
Իրացման ծախսեր				
Վարչական ծախսեր				
Գործառնական այլ ծախսեր, այդ թվում՝				
Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում՝				
Գործառնական շահույթ (վնաս)				
<b>Շարունակվող գործունեություն</b>				
Ֆինանսական ծախսեր				
Ֆինանսական ներդրումներից եկամուտներ				
Ոչ ընթացիկ ակտիվների վաճառքից օգուտ (վնաս)				
<b>Ընդհատված գործունեություն</b>				
Ընդհատված գործունեությունից տարվա շահույթ (վնաս)				
<b>Վերազնահատման ճշգրտումներ</b>				
Վերազնահատման ճշգրտումներ օգուտներ (կորուստներ)				
Ջուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը				
Շահութահարկի գծով ծախս				
Ջուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո				
	<b>Ժամանակաշրջանի այլ համապարփակ ֆինանսական արդյունք</b>			
Հիմնական միջոցների վերազնահատումից օգուտներ (կորուստներ)				
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից օգուտներ (կորուստներ)				
Դեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից օգուտներ (կորուստներ)				
Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային տարբերություններից օգուտներ (կորուստներ)				
Ակտուարային օգուտներ (վնասներ)				
Շահութահարկի գծով ծախս				
Ընդամենը ժամանակաշրջանի այլ համապարփակ ֆինանսական արդյունք				

կ.տ Դեկավար՝ անուն, ազգանուն

Գլխավոր հաշվապահ անուն, ազգանուն

Վերը ներկայացված «Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին» հաշվետվության ձևը կարող է օգտագործվել կազմակերպությունների կողմից, միաժամանակ այն կարող է օգտակար լինել ուսանողներին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների, եկամուտների և ծախսերի հետ կապված նյութերի ուսումնասիրության ընթացքում:

**ԱՍՓՈՓՈՒՄ**

Հոդվածում շարադրվում և մեկնաբանվում են եկամուտների ու ծախսերի հոդվածների փոփոխությունները համապատասխան ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (գործում են Հայաստանում 2010 թ. մարտից) ու նոր հաշվային պլանին (2012): Առաջարկվում է ֆինանսական արդյունքների մասին համապարփակ հաշվետվության նոր ձևը:

**АННОТАЦИЯ****ЗУРАБЯН К.А. – УЧЕТ ДОХОДОВ И РАСХОДОВ В СООТВЕТСТВИИ СО СВОДНЫМ ОТЧЕТОМ О ФИНАНСОВЫХ РЕЗУЛЬТАТАХ**

В статье излагаются и интерпретируются изменения статей доходов и расходов, в соответствии с Международными стандартами финансовой отчётности (действуют в Армении с марта 2010) и с новым планом счетов (2012). Предлагается новая форма сводного отчёта о финансовых результатах.

**SUMMARY****ZURABYAN K. – INCOME AND EXPENSE ACCOUNTING ACCORDING TO STATEMENT OF COMPREHENSIVE INCOME**

The author describes and interprets the changes of income and expense provisions in accordance with the International Financial Reporting Standards (in operation in Armenia since March 2010) and the new chart of accounts (2012) suggesting a new comprehensive income statement form.

ԲԱԺԻՆ VII

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ



**ԹԱՐՈՒԼ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ**  
 տնտեսագիտության դոկտոր,  
 ԵՊՀ միջազգային տնտեսական  
 հարաբերությունների ամբիոնի պրոֆեսոր,  
 «ԱՅԼԸՆՏՐԱՆՔ» հետազոտական կենտրոնի ղեկավար  
 էլ.փոստ՝ [tatoulm@gmail.com](mailto:tatoulm@gmail.com)

### ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ. ՏԵՍՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՊԻ ԻՐԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Հանրապետությունում իրականացվող երկրորդ սերնդի տնտեսական բարեփոխումների արդյունավետությունը, մեր համոզմամբ, մեծապես պայմանավորված է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին մարտահրավերներին համարժեք արձագանքելու կարողությամբ: Եթե ներքին մարտահրավերները, հիմնականում, կարող են գնահատվել տնտեսական սպառնալիքների արժեզավիան տիրույթում և արտահայտել պետության՝ տնտեսական անվտանգության ապահովման համապատասխան ներուժը, ապա արտաքին մարտահրավերները, բացի արտաքին տնտեսական սպառնալիքների վնասագերծման հրամայականից, պահանջում են նաև տնտեսական դիվանագիտության հստակ ուղղվածություն և ծրագիր:

Ակնհայտ է, որ տնտեսական դիվանագիտության էությունը, ձևերը և դրսևորումները տարբեր են տնտեսության զարգացման տարբեր մակարդակներ ունեցող երկրներում<sup>1</sup>: Միաժամանակ, ժամանակակից աշխարհում գրեթե յուրաքանչյուր պետություն առանձնակի ուշադրություն է դարձնում քաղաքական գործընթացներում տնտեսական շահերի արժևորմանը, միջազգային տնտեսական կապերի զարգացման օրինաչափություններին, պետության նոր դերի բացահայտմանը՝ արտաքին տնտեսական կապերի կարգավորման գործում: Հետևաբար, անհրաժեշտություն է առաջացել ինչպես գործնական, այնպես էլ գիտական և տեսական առումներով համապատասխան մոտեցումներ և մեթոդաբանական հիմքեր ձևավորել տնտեսական դիվանագիտության և դրա զարգացման հնարավոր ուղղությունների վերաբերյալ: Ընդամին, կարևորվում են միջազգային տնտեսական հարաբերություններում տնտեսական գործակալների մասնակցության բարձր արդյունավետության և նպաստավոր պայմանների ապահովման, պետական խնդիրների լուծման մեթոդների և միջոցների դիվանագիտական առանձնահատկությունների ներդաշնակեցման հիմնահարցերը:

Թեև ժամանակակից տնտեսագիտական գրականության մեջ հանդիպող տարբեր ձևակերպումներին, դեռևս չկա միասնական կարծիք այս հարցի առնչությամբ<sup>2</sup>: Այսուհանդերձ, մեր կարծիքով, *տնտեսական դիվանագիտությունը*

<sup>1</sup> R. Saner, L. Yiu, *International Economic Diplomacy: Mutations in Post-modern Times*, Discussion Papers in Diplomacy, Netherlands Institute of International Relations "Clingendael", p.10.

<sup>2</sup> Moons, Selwyn and Van Bergeijk, Peter A. G., *Economic Diplomacy and Economic Security*, New Frontiers for Economic Diplomacy, pp. 37-54, Carla Guapo Costa, ed., Instituto Superior de Ciências Sociais e Políticas, 2009; Van Bergeijk, Peter A. G., "Economic Diplomacy and the Geography of International Trade", Edward Elgar Publishing, North Hampton, 2009; Juma, Caletous, "Africa and Brazil at the Dawn of New Economic Diplomacy", The Belfer Center for Science and

կարելի է բնութագրել որպես պետության գործունեության այնպիսի ոլորտ, որը ներառում է միջազգային տնտեսական հարաբերություններում արդյունավետ մրցակցության կամ համագործակցության համար անհրաժեշտ դիվանագիտական (տնտեսական և քաղաքական) գործիքների և մեթոդների օգտագործում՝ ուղղված երկրի մրցակցային առավելությունների և պետության տնտեսական շահերի իրացմանը արտահանման աճին, ՕՈՒՆ ծավալների ավելացմանը, վճարային հաշվեկշռի կարգավորմանը և այլն: Տնտեսական դիվանագիտության ասպարեզում իր առջև դրված խնդիրների արդյունավետ լուծման համար պետությունը կարող է օգտագործել գործարար շրջանակների, ոչ կառավարական կազմակերպությունների, գիտական շրջանակների, ինչպես նաև՝ Սկյուռքի, գործընկերներ երկրների և միջազգային կառույցների տնտեսական և քաղաքական ներուժը:

Այլ խոսքով, տնտեսական դիվանագիտությունը միջազգային ասպարեզում ազգային տնտեսական շահերի իրացմանը և տնտեսական անվտանգության ապահովմանն ուղղված նպատակային գործունեություն է՝ դիվանագիտական մեթոդներով:

Առանձնապես կարևորվում է տնտեսական դիվանագիտության գործառնան հայեցակարգի մշակման անհրաժեշտությունը տնտեսական գլոբալացման ներկա փուլում, երբ ազգային տնտեսության վրա վերջինիս ոչ միանշանակ գնահատվող ազդեցությունները ստիպում են նոր ելքեր որոնել իրավիճակի կայունացման և հետագա առաջընթացի համար: Ինչպես պետական կառավարման մարմինները, այնպես էլ երկրի հանրությունը պետք է ավելի հստակ խնդիրներ ձևակերպեն անկախացումից ի վեր ստեղծված Հայաստանի դիվանագիտական կառույցներին՝ տնտեսությանն աջակցող, տնտեսությանը ծառայող դիվանագիտություն ձևավորելու և համարժեք բանիմաց կադրեր պատրաստելու նպատակով:

Հատկանշական է, որ համաշխարհային տնտեսության դինամիկ զարգացումներն իրենց անմիջական ազդեցությունն են թողնում տնտեսական դիվանագիտության ձևերի, մեթոդների, գործիքակազմի և սկզբունքների վրա, միաժամանակ ընդլայնելով նաև դրա սուբյեկտների շրջանակը: Ներկայումս տնտեսական դիվանագիտության կարևորագույն սուբյեկտներ են հանդիսանում ոչ միայն պետությունները և միջազգային կազմակերպությունները, այլև տարեցտարի ավելացող տարածաշրջանային տնտեսական և ֆինանսական կազմակերպությունները, մասնագիտացված կառույցները, մասնավոր ընկերությունները և ոչ կառավարական հասարակական կազմակերպությունները (արդյունաբերողների և գործարարների միություններ, առևտրային պալատներ), ֆիզիկական և իրավաբանական անձինք և այլ սուբյեկտներ: Էական փոփոխություններ են կրել տնտեսական դիվանագիտության ինչպես գործիքակազմն ու զինանոցը, այնպես էլ ժամանակակից տեխնոլոգիաները: Դրանք առավել հաճախակի օգտագործ-

International Affairs, Kennedy School of Government. February 26, 2013; **Bijian, Zheng**, "China's 'Peaceful Rise' to Great-Power Status", Foreign Relations, October 2005; **Glaser, Bonnie**, "China's coercive economic diplomacy: a new and worrying trend", Center for Strategic and International Studies, August 6, 2012; **MacLeod, Calum**, "China asserts its territorial claims in South China Sea", USA Today, April 26, 2012; "Remarks by Secretary of State Hillary Rodham Clinton". Economic Club of New York. October 14, 2011. Retrieved 4/10/2013; **Bose, PratimRanjan**, "Economic Diplomacy, Indian Style", *The Hindu Business Line*, 28 March 2013; **Roche, Elizabeth**, "India goes from aid beneficiary to donor", Ministry of External Affairs, Government of India, July 1, 2012.

վում և կատարելագործվում են երկկողմ և բազմակողմ բանակցությունների ժամանակ<sup>1</sup>: Նշված գործոնները մասնակիորեն օգտագործվեցին հատկապես Չայաստանի Հանրապետության Առևտրի համաշխարհային կազմակերպությանն (ԱՀԿ) անդամակցությանը նախորդած շրջանում, երբ երկկողմ և բազմակողմ ձևաչափերով քննարկվում էին մեր երկրի տնտեսության և կառավարման համակարգի՝ ԱՀԿ պահանջներին համապատասխանության խնդիրները, ինչպես նաև ԱՀԿ անդամ պետությունների հետ փոխշահավետ առևտրի և համագործակցության հեռանկարները: Հարկ է նկատել, որ ԱՀԿ-ին անդամակցելուց՝ 2003 թ. ի վեր տնտեսական դիվանագիտության ասպարեզում գոյություն ունեցող մարտահրավերները գնալով ավելանում են: Ի լրումն միջազգային ֆինանսական և տնտեսական կազմակերպությունների, Չայաստանը ներկայումս հարկադրված է հստակեցնել նաև արտաքին տնտեսական համագործակցության գլխավոր ուղղությունները նաև տարածաշրջանային տնտեսական և քաղաքական կազմավորումներում: Առավել բարդ իրավիճակ ձևավորվեց վերջին տարիներին Եվրամիության և ԱՊՀ Մաքսային միության հետ տնտեսական համագործակցության շրջանակներում՝ դրանց իրարամերժ որոշ հիմնադրույթների առկայության պայմաններում: Տվյալ դեպքում արդյունավետ ընտրության հնարավորությունը Չայաստանի տնտեսական դիվանագիտության օգնությամբ կարող է սահմանափակ լինել՝ առանց երրորդ կողմի մասնակցության կամ Մաքսային միության ու Եվրամիության միջև հիշյալ հիմնադրույթների, սակագների և սկզբունքների համաձայնեցման և ներդաշնակեցման: Այս քաղաքատնտեսական թնջուկի տարինաստություններից մեկն այն է, որ Մաքսային միության և Եվրամիության միջև ընտրության առջև կանգնած երկրներից ՀՀ-ը, Ուկրաինան և Մոլդովան Ռուսաստանի հետ միասին հանդիսանում են ԱՀԿ անդամ երկրներ, ինչն, ըստ էության, միջազգային չափորոշիչների և սկզբունքների կիրառման լրացուցիչ հնարավորություն է ընձեռում: Ընդհանուր առմամբ, հետխորհրդային երկրների կեսից ավելին անդամակցում է ԱՀԿ-ին, ինչն, ըստ էության պետք է նպաստեր միջազգային նույն չափորոշիչներով տնտեսական ինտեգրման որևէ ձևաչափի կիրառումն այս տարածաշրջանում:

<sup>1</sup> Juma, Calestous, "Africa and Brazil at the Dawn of New Economic Diplomacy", The Belfer Center for Science and International Affairs, Kennedy School of Government. February 26, 2013. <http://belfercenter.ksg.harvard.edu/publication/22793/>

Նկար 1

ԱՊՅ երկրների քաղաքական քարտեզը



Ինչ վերաբերվում է երկկողմ և բազմակողմ ընթացակարգերին և սկզբունքներին, ապա դրանք մշակվել և արդյունավետ կիրառվում են ՄԱԿ-ի, Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի, ԱՀԿ-ի և այլ միջազգային կառույցների կողմից: Ավելին, դրանք հարստանում են համաշխարհային տնտեսության ներսում նկատվող նոր միտումների և զարգացումների անմիջական ազդեցությամբ: Այս առումով հատկապես կարևորվում են ԱՀԿ գործառույթները, երկրների համար պարտադիր վավերացման ենթակա հիմնական համաձայնագրերը, սկզբունքները և առևտրի միջազգային կանոնների պահպանման ապահովման մեխանիզմները<sup>1</sup>:

Ինչ վերաբերվում է ԱՀԿ-ին Հայաստանի անդամակցությանը, ապա այդ գործընթացի նպատակը և խնդիրները մանրակրկիտ քննարկվել են բանակցությունների գործընթացում հատուկ աշխատանքային խմբի, տնտեսական դիվանագիտության խողովակներով իրականացված երկկողմ և բազմակողմ կոնսուլտացիաների միջոցով, ինչն իր հերթին, պայմանավորել է բանակցությունների հաջորդական փուլերում գրանցված կարևորագույն արդյունքները:

Տնտեսական դիվանագիտության դերի բարձրացումը, մեր համոզմամբ, մեծապես պայմանավորված է տնտեսական գլոբալացման և տարածաշրջանայնացման մարտահրավերներով և ազգային տնտեսությունների համար նոր ձևավորվող պայմաններով ու հնարավորություններով, ինչն, իր հերթին ենթադրում է բիզնեսի և պետության իրական, ռազմավարական գործընկերություն<sup>2</sup>: Միաժամանակ, գլոբալ տնտեսական փոփոխվող ռեժիմների նպատակներն ու խնդիրները պահանջում են գործընթացների կառավարման նոր մոտեցումներ և դրանց օգնությամբ մշակված ժամանակակից հայեցակարգեր: Այս ամենում իր կարևոր դերն ունի նաև ժողովրդական դիվանագիտությունը, որը ոչ պաշտոնական մակարդակում և առավել անկաշկանդ մթնոլորտում հնարավորություն է ընձեռում

<sup>1</sup> Տես՝ <http://www.wto.org>

<sup>2</sup> Պետություն – մասնավոր հատված համագործակցությունն ընկած է ներկայումս իրականացվող երկրորդ սերնդի բարեփոխումների հիմքում:


Կենտրոնանալ տարբեր երկրների շահերի համադրման և մրցակցային առավելությունների արդյունավետ իրացման հեռանկարների վրա: Ինչպես վկայում է միջազգային փորձը, ժողովրդական դիվանագիտությունն իր հերթին, ավելի արդյունավետ է դառնում, երբ իրականացվում է տարբերակված թիրախային և մասնագիտացված խմբերով՝ միկրո և փոքր բիզնեսի, գիտության, տեխնիկայի, արվեստի և այլ բնագավառների առավել հեղինակավոր ներկայացուցիչների գործուն մասնակցությամբ:

Չափազանցություն չի լինի նաև նկատել, որ տնտեսական դիվանագիտությունն այսօր Հայաստանի համար լրացուցիչ հնարավորություն է՝ նորովի և ավելի իրատեսորեն ձևակերպելու ռազմավարական խնդիրները և ընտրել դրանց լուծման արդյունավետ եղանակներ ու մեթոդներ: Հատկապես այն կարող է ավելի արդյունավետ դարձնել Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական քաղաքականությունը սոցիալ-տնտեսական բարեփոխումների ներկայիս պայմաններում, երբ վերարժևորելով պետության դերը, որոշակիորեն վերարժևորվում են նաև արտաքին տնտեսական քաղաքականության էությունը, նպատակներն ու սկզբունքները:

*Աղյուսակ 1*

**Ներդաշնակեցմանը միտված պետական կարգավորման փոփոխությունները 1991-2011 թթ.**

	1991	1993	1995	1997	1999	2001	2003	2005	2007	2009	2011
Ներդրումային միջավայրը կարգավորող օրենքների փոփոխություններ ներկայացրած երկրների քանակը	35	57	64	76	63	51	59	77	49	45	44
Օրենսդրական, կանոնակարգող փոփոխությունների քանակը, այդ թվում՝											
- արտաքին ներդրումները խթանող	80	101	106	135	131	85	114	119	59	61	52
- արտաքին ներդրումներին խոչընդոտող	2	1	6	16	9	2	12	25	19	24	15



Աղբյուրը՝ United Nations Conference on Trade and Development, World Investment Report Foreign Direct Investment and the Challenge of Development, United Nations, New York and Geneva, 1999-2012, p.6.

Առավել միասնական տեսակետ է ձևավորվել, հատկապես, շուկայական հարաբերություններում գերկենտրոնացած կապիտալի պայմաններում մենաշնորհի սահմանափակմանն ուղղված պետական միջամտության, հակամենաշնորհային օրենքների կիրառման, դրանց կիրառման անհրաժեշտության շուրջ: Ինչպես վկայում են աղյուսակում միջամտության ներկայացված տվյալները, պետական կարգավորմանը միտված օրենսդրական փոփոխությունները, որոշ բացառությամբ, հիմնականում աճի միտում ունեն: Հիշյալ հիմնահարցերին անդրառնալը հավասարապես կարևոր է ինչպես ներտնտեսական հարաբերությունների կարգավորման, այնպես էլ արտաքին, միջազգային առևտրում տեղի ունեցող երևույթների ճիշտ գնահատման, մեկնաբանման և երկրի տնտեսական դիվանագիտությունն ի նպաստ նոր ձևավորվող տնտեսակարգին հնարավորինս արդյունավետ օգտագործելու տեսանկյունից:

Միաժամանակ, այս ամենն օգնում է պետության աջակցությամբ ընտրել տնտեսական քաղաքականության խնդիրների հանգուցալուծման առավել իրատեսական ձևերը: Հատկանշական է, որ երկրի զարգացմանն ուղղված դիվանագիտական օգնությունը դիտարկվում է որպես արտաքին քաղաքական և տնտեսական շահերի ապահովման գործիք, ինչը մեծապես պայմանավորված է աջակցության աշխարհագրական և ճյուղային կառուցվածքով, ծավալներով և դինամիկայով, քաղաքական և տնտեսական պայմաններով: Ջարգացման հիմնահարցերը մշտապես քննարկման առարկա են նաև տարբեր ձևաչափերով կազմակերպվող հատուկ համաժողովներում, մասնավորապես, ուշադրության կենտրոնում պահելով զարգացմանն ուղղված օգնության առաջնահերթություններն ու նպաստավոր պայմանների ձևավորման խնդիրները, բանակցությունների և որոշումների կայացման կանոնները, միջազգային կառույցների դերը դոնորների մոբիլիզացման և համակարգման, ինչպես նաև ռազմավարական գործընկերության, բիզնեսի աշխուժացման գործում: Ջարգացմանն ուղղված տնտեսական դիվանագիտության դերին, մասնավորապես, հատուկ ուշադրություն են դարձնում «Մեծ ութնյակի», «Մեծ քսանյակի», ՄԱԿ-ի գլոբալ համաժողովները և ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան, Վերակառուցման և Ջարգացման Միջազգային բանկը (ՎՋՄԲ) և Համաշխարհային բանկի մյուս կառույցները, տարածաշրջանային բանկերը (Ասիական Ջարգացման, Աֆրիկյան Ջարգացման, Ջարգացման Միջամերիկյան, Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական բանկերը), ՄԱԿ-ի հատուկ կազմակերպությունները և հիմնադրամները, ԱՄՆ-ի Միջազգային Ջարգացման Գործակալությունը, Միջազգային Ջարգացման Կանադական Գործակալությունը և այլն:

Տնտեսական աճի և մարդկային զարգացման ապահովման գործում, ինչպես վկայում են միջազգային փորձագետներից շատերը, տնտեսական դիվանագիտության խնդիրները սերտորեն առնչվում են երկրի տնտեսական անվտանգությանը և դրա հայեցակարգերին<sup>1</sup>: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տնտեսական անվտանգության ավանդական սպառնալիքներն օրեցօր համալրվում են

<sup>1</sup> Moons, Selwyn and Van Bergeijk, Peter A. G., *Economic Diplomacy and Economic Security*, New Frontiers for Economic Diplomacy, Carla Guapo Costa, ed., Instituto Superior de Ciências Sociais e Políticas, 2009, pp. 37-54; Экономическая дипломатия в условиях глобализации. / под общей ред. Л.М. Капицы (авторы: Л.М. Капица, Горбанёв В.А., Мавланов И.Р. и др.)// - М.: "ГГИМО-Университет", 2010. 62- 63с.,

նոր աղբյուրներով<sup>1</sup>, ակնհայտորեն մեծանում է տնտեսական դիվանագիտության դերը երկրի տնտեսական անվտանգությանն առնչվող սպառնալիքների վնասազերծման գործում (մրցակցության հավասար պայմանների ապահովում, արտերկրի ապրանքային-հումքային և այլ շուկաներին անարգել ելքի ապահովում, համաշխարհային օվկիանոսի և տիեզերքի օգտագործման համար համատեղ ծրագրերի, միջազգային տրանսպորտային փոխադրումների անվտանգության ապահովում, բնապահպանական աղետների կանխում, համաշխարհային տնտեսական գործընթացներում Հայաստանի Հանրապետության ինտեգրման աջակցություն և քաղաքական ու տնտեսական վարկանիշի բարձրացում և այլն): Տնտեսական անվտանգության ցուցանիշներն, ընդհանուր առմամբ, ունեն սահմանային մեծություններ, որոնց գերազանցման պարագայում դրանք վերածվում են սպառնալիքների: Հայաստանի Հանրապետությունում հիշյալ ցուցանիշներն, ըստ Ա.Գլազևի, ունեն հետևյալ պատկերը:

*Աղյուսակ 2*

**Տնտեսական անվտանգության ցուցանիշների սահմանային մեծությունները**

Տնտեսական անվտանգության ցուցանիշները	Սահմանային մեծությունը %	Վաստագի ԳԳ-ում
1. ՀՆԱ-ի ծավալը, այդ թվում՝ յոթնյակի միջինի նկատմամբ, %	75	0,03
միջին հաշվով յոթնյակի բնակչության մեկ շնչին ընկնող, %	50	1,08
միջին հաշվով աշխարհի բնակչության մեկ շնչին ընկնող, %	100	33
2. Վերամշակող արդյունաբերության տեսակարար կշիռն արդյունաբերական արտադրության մեջ, %	70	12
3. Մեքենաշինության տեսակարար կշիռն արդյունաբերական արտադրության մեջ, %	20	2,1
4. Ներդրումների ծավալը, ՀՆԱ-ի նկատմամբ, %	25	30
5. Պաշտպանության ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ, %	5	3,9
6. Գիտական հետազոտության վրա ծախսերը, ՀՆԱ-ի նկ. %	2	1,2
7. Թողարկվող արտադրանքի ծավալում նոր արտադրատեսակների տեսակարար կշիռը (մեքենաշինություն), %-ով	6	0,1
8. Նվազագույն կենսամակարդակից ցածր եկամուտներ ունեցող մարդկանց տեսակարար կշիռը բնակչության մեջ, %	7	35
9. Բնակչության երկարակեցությունը	70 տարի	74
10. 10% ամենաբարձր և 10% ամենացածր եկամուտներ ունեցող բնակչության խմբերի եկամուտների միջև տարբերությունը	8 անգամ	30 անգամ
11. Հանցագործության մակարդակը (100.000 բնակչ. հաշվով հանցագործությունների քանակը)	5000	868
12. Կրթության ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ, %	10	2,8
13. Գործազրկության մակարդակը, %	7	15,2
14. Ինֆլյացիայի տարեկան մակարդակը, %	20	4
15. Ներքին պարտքի ծավալը, ՀՆԱ-ի նկատմամբ %	30	35
16. Ներքին պարտքի սպասարկման և մարման ընթացիկ պահանջը, բյուջեի հարկային մուտքերի նկատմամբ %	25	32
17. Արտաքին պարտքի ծավալը, ՀՆԱ-ի նկատմամբ %	25	41
18. Արտաքին փոխառությունների տեսակարար կշիռը բյուջեի	30	38,3

<sup>1</sup> **Глазьев С.**, Основы обеспечения экономической безопасности страны- альтернативный реформационный курс. РЭЖ N 1 и 2, 1997; **Глазьев С.**, Стабилизация и экономический рост. Вопросы экономики N 1, 1997; **Глазьев С.**, Центральный Банк против промышленности России. Вопросы экономики N 1 и 2, 1998; **Глазьев С.**, Геноцид. Россия и новый мировой порядок. Стратегия экономического роста на пороге XXI века. Москва, 1997.

դեֆիցիտի ծածկման մեջ, %		
19. Բյուջեի դեֆիցիտը, ՀՆԱ-ի նկատմամբ %	5	3
20. Դրամական զանգվածի նկատմամբ արտադրության ծավալը, %	10	23,2
21. Կանխիկ արտադրության ծավալը կանխիկ դրամի նկատմամբ, %	25	32,1
22. Դրամական զանգված, M2, ՀՆԱ-ի նկատմամբ %	50	29,5
23. Ներքին սպառման մեջ ներմուծման տես. կշիռը, %	30	73,8
Այդ թվում պարենային՝	25	60,64

*Աղբյուրը՝ հաշվարկված է հեղինակի կողմից ԴԴ Վիճակագրության ազգային ծառայության տվյալներով:*

Ներկայումս երկրի տնտեսության առջև ծառայած կարևորագույն խնդիրներից են երկրի պետական բյուջեի, վճարային և առևտրային հաշվեկշիռների խրոնիկ պակասուրդները: Ուստի կասկածից վեր է առևտրի շահավետ պայմանների ապահովման և արտահանման զարգացման անհրաժեշտությունը դիվանագիտական մեթոդներով<sup>1</sup>: Մասնավորապես, կարևորվում է արտաքին երկկողմ և բազմակողմ առևտրի դերը տնտեսական զարգացման մեջ: Միաժամանակ, արդյունավետ արտաքին առևտրի միջոցով հնարավոր է էապես ամրապնդել երկրի դիրքերն ինչպես միջազգային մասնագիտացման, այնպես էլ տնտեսական բազմակողմանի համագործակցության ասպարեզներում, ինչն, իր հերթին, կարող է իրականություն դառնալ երկրի բանիմաց և փորձառու արտաքին տնտեսական հարաբերությունների գործակալների հետևողական և համադրված աշխատանքի պարագայում: Իսկ աշխատանքի հիմնական առանցքը, բնականաբար, երկկողմ և բազմակողմ բանակցություններն են, որոնց նպատակներից և հիմնական ուղղություններից, բանակցությունների առարկա հանդիսացող առևտրային համաձայնագրերի նախագծերից են կախված բանակցության մյուս կողմերի՝ երկրների տարբեր խմբերի և առանձին երկրների դիրքորոշումները: Հայաստանի համար ներկայումս առավել կարևորվում են երկրի արտահանման կարողությունը ներկայացնող գիտատար ճյուղերի, ինչպես նաև գյուղատնտեսական ապրանքների և ծառայությունների արտահանման հարցերով երկարաժամկետ առևտրային համաձայնագրերը: Հատկապես կարևորվում է գիտությանը տրամադրվող ռեսուրսների ավելացման խնդիրները, որոնք կարող են լուծվել տվյալ դեպքում ոչ միայն ներքին, այլև արտաքին աղբյուրների հաշվին: Իսկ ներկայումս, ինչպես հայտնի է, դրանք խիստ անբավարար ծավալներ են կազմում: ՀՆԱ-ում գիտությանը տրամադրվող հատկացումների փոփոխության դինամիկան ԱՊՀ երկրների համար 1990-2011թթ. ներկայացված է աղյուսակում:

<sup>1</sup> **Glasser, Bonnie**, "China's Coercive Economic Diplomacy: A New and Worrying Trend", Center for Strategic and International Studies, August 6, 2012. – <http://csis.org/publication/chinas-coercive-economic-diplomacy-new-and-worrying-trend>

*Աղյուսակ 3*

**ԱՊՅ երկրների ՀՆԱ-ում գիտության վրա կատարված ծախսերը 1990- 2011 թթ.**

Երկիր	1990	1995	2001	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011
Հայաստան	2.5	0.1	0.3	0.2	0.2	0.2	0.2	0.2	0.2	0.3	0.2	0.3
Ադրբեջան	1	0.3	0.3	0.3	0.3	0.2	0.2	0.2	0.2	0.3	0.2	0.2
Բելառուս	2.3	1	0.8	0.6	0.6	0.7	0.7	1.0	0.7	0.6	0.8	0.9
Վրաստան	1.2	0.1	0.2	0.1	0.2	0.2	-	-	-	-	-	-
Ղազախստան	0.7	0.3	0.3	0.3	0.2	0.3	0.2	0.2	0.2	0.2	0.2	0.2
Ղրղզստան	0.7	0.3	0.2	0.2	0.2	0.2	0.2	0.2	0.2	0.2	0.3	0.3
Մոլդովա	1.6	0.8	0.5	0.3	0.3	0.4	0.4	0.5	0.5	0.5	0.5	0.5
Ռուսաստան	3	0.8	1.1	1.3	1.2	1.1	1.1	1.1	1.0	1.3	1.2	-
Տաջիկստան	0.7	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	-	-
Ուկրաինա	2.3	1.3	1.1	1.1	1.1	1.2	0.9	0.9	0.8	0.9	0.9	0.8

*Աղբյուրը՝ <http://www.azstat.org>, <http://www.armstat.am>, <http://www.belstat.gov.by>, <http://www.stat.kz>, <http://www.stat.kg>, <http://www.statistica.md>, <http://www.gks.ru>, <http://www.stat.tj>, <http://www.ukrstat.gov.ua>*

Իրականում, երկկողմ և բազմակողմ բանակցությունների դիվանագիտական աջակցությունն էական դեր է խաղում հատկապես միջազգային բանակցություններում ազգային պատվիրակության դիրքորոշման ձևավորման, ինչպես նաև հնարավոր գործընկերների աջակցության մոբիլիզացիայի, կարևորագույն հիմնախնդիրների շուրջ կոնսենսուսի կամ փոխզիջումային լուծումների մշակման և շահագրգիռ ազգային տնտեսական գործակալների մասնակցության ապահովման գործում: Տնտեսական դիվանագիտությունը կարևոր դերակատարություն ունի նաև երկրի կառավարման մարմինների տեղեկատվական-վերլուծական ապահովման և երկրի համար առավել կարևոր խնդիրների շուրջ առանձին բանակցությունների ընթացքի վերաբերյալ հավաստի և սպառնիչ հանրային իրազեկման ապահովման հարցում<sup>1</sup>:

Տնտեսական դիվանագիտության աջակցությունն առավել պահանջարկված է նաև ներդրումային գործունեության ոլորտում: Մասնավորապես, միջազգային ներդրումային գործունեության շրջանակներում նման աջակցությամբ կարելի է ակնկալել ներդրումային ռեժիմների միջազգային համակարգի, համապատասխան չափորոշիչների ներդրումը և միջակայքերի ներդաշնակեցումը: Վերջին տարիներին հատուկ կարևորություն են ձեռք բերում երկկողմ և տարածաշրջանային ներդրումային համաձայնությունները՝ բարենպաստ ներդրումային միջավայրի ապահովման գործում: Ընդսմին, առավել արդյունավետ են ներդրումային համաձայնությունների այն հիմնական բաղադրիչները, ներդրումային գործունեության ռեժիմները, որոնք հիմնված են ազգային շահերի, առավել բարենպաստ, խելամիտ և արդյունավետ սկզբունքների վրա: Հենց նման սկզբունքների օգնությամբ կարելի է տարբերակել, մասնավորապես, վերազգային ընկե-

<sup>1</sup> "Remarks by Secretary of State Hillary Rodham Clinton". Economic Club of New York. October 14, 2011. Retrieved 4/10/2013.<http://www.state.gov/secretary/rm/2011/10/175552.htm> ; **MacLeod, Calum**, "China asserts its territorial claims in South China Sea", USA Today, April 26, 2012. - <http://usatoday30.usatoday.com/news/world/story/2012-04-26/south-china-sea-philippines/54566350/1>

րությունների կողմից նախաձեռնած միջազգային ներդրումային ծրագրերը, որոնք ոչ միշտ կարող են հավասարապես օգտակար և արդյունավետ լինել տվյալ ընկերությունների և ներդրումներ ընդունող երկրի համար: Սա, իր հերթին, վկայում է, որ առավել հաճախ պետք է կողմնորոշվել ոչ միայն արտերկրից առաջարկվող ներդրումային ծրագրերով, այլ, լինելով ավելի նախաձեռնողական և նախահարձակ, լավագույնս օգտագործել արտաքին ներդրումների ներգրավման դիվանագիտական մեթոդները: Դրանք ներառում են ներդրողների ֆորումների կազմակերպումն ինչպես տվյալ երկրում, այնպես էլ առավել իրատեսական սպասելիքներ պարունակող գործընկեր-երկրներում, հյուրընկալող երկրում ազգային ներդրումների համար բարենպաստ պայմանների ապահովումը, դեսպանատների կողմից հյուրընկալող երկրում ազգային ներդրողների գործունեության համակարգումը և այլն: Ներդրումային գործընթացում առանձնահատուկ ուշադրության են արժանի նաև համապատասխան վերլուծական և տեղեկատվական գործունեությունը, ներդրումային ծրագրերի իրավաբանական աջակցության ապահովումը և այլն: Միաժամանակ, մեր համոզմամբ, կարևորվում է ազգային ներդրումների խրախուսումը, առանձին համապետական նշանակության ծրագրերի լրբեհնգը, ներդրումային դաշտում քաղաքական ճնշումների թուլացումը և տեղական ներդրողի համար տնտեսական շահագրգիռ մեխանիզմների ձևավորումը: Պակաս կարևոր չէ նաև ազգային ներդրողների համար արտերկրում կազմակերպվող ներդրումային մրցույթներին մասնակցության աջակցությունը, ինչը ևս տնտեսական դիվանագիտության կարևոր գործառնություններից մեկը պետք է դասվի<sup>1</sup>:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի կարևորագույն մրցակցային առավելություններից մեկը երկրի գիտական միտքն է ու մտավոր կարողությունը, տնտեսական դիվանագիտությունը պետք ուղղված լինի նաև արտերկրում Հայաստանի մտավոր ռեսուրսը պատշաճ ներկայացնելու, երկրում հավատարմագրված դիվանագիտական կառույցների, միջազգային կազմակերպությունների օգնությամբ ազգային մտավոր ռեսուրսների առևտրայնացմանը և նոր տեխնոլոգիաների միջազգային շուկաների մուտքն ապահովելու գործին:

Ի տարբերություն այլ ապրանքների և ծառայությունների, մտավոր ռեսուրսներն ունեն իրենց յուրահատկությունները: Երկրի մտավոր սեփականությունը և դրա հիմնական ձևերը ենթակա են ոչ միայն տեղական օրենսդրությամբ սահմանված կանոնակարգման, այլև պարտադիր կարգով գործում են մտավոր սեփականության պաշտպանության միջազգային ռեժիմի շրջանակներում և պետք է համարժեք լինեն ԱՀԿ և ՄՍՄԿ (Մտավոր սեփականության միջազգային կազմակերպություն) սահմանած չափորոշիչներին, ինչն էլ կարգավորում է մտավոր արտադրանքի միջազգային առևտուրը: Միջազգային կազմակերպությունների կողմից, ի թիվս մտավոր ռեսուրսների առևտրայնացման այլ հիմնահարցերի (գնահատում, պատենտների պաշտպանություն, մտավոր արտադրանքի շուկայի կառուցվածքի արդյունավետություն), հստակ կանոնակարգվում են միջազգային պատենտների և լիցենզիաների (արտոնագրեր) ձեռքբերման գործընթացները,

<sup>1</sup> Bose, PratimRanjan, "Economic Diplomacy, Indian Style", The Hindu Business Line, March 28, 2013. — <http://www.thehindubusinessline.com/opinion/columns/economic-diplomacy-indian-style/article4558849.ece>; Мировая экономика, 2-ое издание. Под. ред. д.э.н., проф. Булатова А. С., М.: ЭКОНОМИСТ, 2007.

ինչն էլ պայմանավորում է մտավոր սեփականության մեջ ներդրումների որոշակի առանձնահատկությունները:


Կասկածից վեր է, որ առանց դիվանագիտական մեթոդների օգտագործման, առանձին գիտնականների և նորարարների համար անհաղթահարելի դժվարություն կարող է ներկայացնել ազգային մտավոր արտադրանքի առաջխաղացումն արտերկրում: Ուստի տնտեսական դիվանագիտությունը կոչված է, մի կողմից, ապահովել երկրի գիտնականների և մասնագետների մասնակցությունը միջազգային գիտահետազոտական և գիտելիքների փոխանակման նախագծերում, իսկ մյուս կողմից՝ ազգային տնտեսական գործակալների համար նոր տեխնոլոգիաների միջազգային շուկաների մատչելիություն, ինչպես նաև արտերկրի մտավոր ռեսուրսներ, նոր տեխնոլոգիաներ ներգրավել ազգային տնտեսությունում: Նույն նպատակին պետք է ծառայի նաև նոր տեխնոլոգիաների շուկաներում մրցակցության հավասար պայմանների ապահովումը և համատեղ ներդրումային և գիտատեխնիկական, ինովացիոն նախագծերին դիվանագիտական աջակցությունը: Ըստ 2009-2010 թվականների Ինովացիայի համաշխարհային ցուցչի (INSEAD & CII, 2010)<sup>1</sup>՝ Չայաստանն առաջադիմել է ինովացիոն ոլորտում՝ 104-րդ տեղից բարձրանալով 82-րդ տեղը, իսկ 2013 թ. զբաղեցրել է 59-րդ տեղը<sup>1</sup>: Սակայն սա հիմնականում պայմանավորված է մեթոդաբանության փոփոխությամբ և առավել թարմ տվյալների օգտագործմամբ, քան կտրուկ քայլերի իրականացմամբ կամ Չայաստանի տնտեսության մեջ դրական զարգացումներով: Չայաստանի դիրքերը համեմատաբար նպաստավոր են ինովացիայի արտադրանքի ցուցանիշների, օրինակ՝ գիտելիքի կիրառման, սոցիալական բարեկեցության օգուտների և այլնի առումով, ինչը խոսում է այն մասին, որ գիտության բնագավառում օժտված աշխատողները շարունակում են արտադրանք ապահովել ի հեճուկս արագորեն վատթարացող ներդրանքի կամ միջավայրի գործոնների: Այնուհանդերձ, Չայաստանի ինովացիային առնչվող բոլոր ցուցիչները ցածր են 100-րդ հորիզոնականից՝ ուսումնական հաստատությունների որակ, ենթակառուցվածքի յուրացում և օգտագործում, մասնավոր վարկերի հասանելիություն, ինովացիոն միջավայրն ընկերություններում և ինովացիոն ընդհանուր միջավայրը, ինչպես նաև արտաքին և ներքին մրցակցության նկատմամբ բաց լինելը: Ներքին ինովացիան կայուն չէ և սպառում է խոչընդոտել միջազգային մրցունակությանը: Ժառանգության և ռեսուրսների սպառումն ու քայքայումը սպառնալիք է, որն անհրաժեշտ է անհապաղ վերացնել: Պարբերաբար հրապարակվող նորարարությունների՝ ինովացիայի միջազգային համաթվով մեր երկիրը 110 երկրների մեջ զբաղեցրել է 75-րդ տեղը: Չայաստանը ներկայումս այն երկրների թվում է, որոնք լուրջ խնդիրներ են դիմագրավում նորարարական ծրագրերի իրականացման բնագավառում:

<sup>1</sup>[http://www.insead.edu/facultyresearch/centres/elab/rightnav/documents/BOOK\\_INNOVATION.pdf](http://www.insead.edu/facultyresearch/centres/elab/rightnav/documents/BOOK_INNOVATION.pdf)  
<http://www.globalinnovationindex.org/content.aspx?page=gii-full-report-2013#pdfopener>



Նկար 3

**Կառավարության ընթացիկ պարտքի և կառավարության պարտքի հարաբերակցությունը 2010-2015 թթ.**



Աղբյուրը՝ 33 ֆինանսների նախարարության, 33 պետական պարտքի կառավարման վարչության տվյալները:

Արտաքին և ներքին պարտքի սպասարկման խնդիրներին, երկրի կառավարության կողմից իրականացվող ֆինանսական ռեսուրսների տրամադրման ձևերի և պայմանների կարգավորման քաղաքականությունից բացի, պարբերաբար անդրադառնում են նաև միջազգային ֆինանսավարկային կազմակերպությունները, ՄԱԿ-ի մասնագիտացված կառույցներից՝ Զարգացման Ծրագիրը (UNDP) և այլն:

Զարգացմանն աջակցող գործառույթներ ունեն նաև ազգային տարբեր գործակալությունները, ինչպես նաև դոնոր երկրների և կազմակերպությունների միությունները, որոնք համադրում են տարբեր կողմերի գործունեությունը՝ միևնույն խնդիրների հանգուցալուծման գործում: Մեր երկրում այդ գործառույթներն իրականացնում է Զարգացման հայկական գործակալությունը, որի գործունեությունն առայժմ հեռու է բավարար գնահատականից:

Անդրադառնալով առանձին երկրների, տարածաշրջանային խմբավորումներին՝ տնտեսական դիվանագիտության ասպարեզում կուտակած փորձին, հարկ է նկատել, որ Արևմուտքի զարգացած մի շարք երկրների տնտեսական դիվանագիտության նպատակները, խնդիրները և գործիքները երբեմն տարբերվում են զարգացող և անցումային տնտեսություններ ունեցող երկրներից: Այսպես օրինակ, որոշ փորձագետների վկայությամբ<sup>1</sup>, ԱՄՆ-ի տնտեսական դիվանագիտությունը հիմնված է «տնտեսական էքսպանսիայի» սցենարի վրա, մինչդեռ Մեծ Բրիտանիայի տնտեսական դիվանագիտությանը հատուկ է «կոնսերվատիվ» տարբերակը, իսկ Գերմանիայի տնտեսական դիվանագիտությանը բնորոշ է համենատա-

<sup>1</sup> Roche, Elizabeth, "India goes from aid beneficiary to donor", Ministry of External Affairs, Government of India, July 1, 2012. – <http://www.mea.gov.in/articles-in-indian-media.htm?dtl/19976>

բար ավելի «ճկուն» գործելաոճը: Թեև զարգացող երկրները փորձում են փոխառել զարգացած երկրներին հատուկ տնտեսական դիվանագիտության նպատակները, խնդիրները և կիրառել դրանց առավել արդյունավետ գործիքները, այնուհանդերձ քիչ չեն նաև էական տարբերությունները: Չինաստանի պարագայում տնտեսական դիվանագիտությունը սերտորեն առնչվում է «մեծ թվերի» էֆեկտի կիրառման և չինական սփյուռքի ներուժի օգտագործման հետ<sup>1</sup>: Չնդկաստանի տնտեսական դիվանագիտությունն առանձնանում է տեղեկատվական և հեռահաղորդակցությունների ոլորտի տեխնոլոգիաների, դեղագործության, գյուղատնտեսության ոլորտների զարգացմանն ուղղված հստակ հայեցակարգերի և արտոնությունների համակարգով: Հատուկ վերլուծության առարկա է նաև Հարավային Կորեայի տնտեսական դիվանագիտությունը, որը համեմատաբար կարճ ժամանակահատվածում նպաստեց երկրի մրցակցային առավելությունների առավել արդյունավետ իրացմանը: Վերջապես, զարգացող երկրների տնտեսական դիվանագիտության ասպարեզում եզակի երևույթ է «կոլեկտիվ-խմբային» տարբերակը (77-ի խումբը): Մի շարք երկրներ իրենց տնտեսական շահերն առաջ են մղում ոչ թե առանձին-առանձին, այլ՝ համատեղ, երբեմն նախընտրելով նաև ռազմավարական դաշինքների ստեղծումը: Դրանցից առավել հայտնի են հունք արդյունահանող երկրների տնտեսական դիվանագիտությունը և ՕՊԵԿ-ի՝ նավթ արդյունահանող երկրների կազմակերպության օրինակը<sup>2</sup>, ինչը գործնականում թույլ տվեց ոչ միայն համատեղել և պաշտպանել այդ երկրների շահերը, այլև որոշակի իմաստով ձևավորել և վերահսկել նավթամթերքների գները համաշխարհային շուկայում:

Ներկայումս գնալով ավելի մեծ տարածում է գտնում տարածաշրջանային տնտեսական դիվանագիտությունը: Դա իր դրսևորումներն է գտնում հատկապես տարածաշրջանային տնտեսական խմբավորումներում՝ Հյուսիս Ամերիկյան ազատ առևտրի գոտում, Հարավարևելյան Ասիայի երկրների ասոցիացիայի շրջանակներում, Մաքսային միությունում, իսկ Եվրոպական Միության տնտեսական դիվանագիտությունը կրում է «մայրցամաքային» համագործակցության բնույթ: Այն վերածվել է ազդեցության ուղեծիր ներգրավելու միասնական քաղաքականության և իր մեջ ներառում է Եվրոպական Միության ընդհանուր ռազմավարություն՝ երրորդ երկրների նկատմամբ: Վերջինս ունի միանգամից մի քանի արտահայտչաձևեր և համագործակցության ձևաչափեր. «Եվրոպական Միության ընդարձակում», «Եվրոպական հարևանության քաղաքականություն», «Բարի դրացիական համաձայնություններ», Կայունության պակտ, «Ընդհանուր տնտեսական տարածք», «Արևելյան գործընկերություն», որոնք անհրաժեշտաբար ենթադրում են գործիքների, չափորոշիչների, ընթացակարգերի և կանոնների ներդաշնակեցում, առևտրի ազատականացում և զարգացում, ներդրումային ռեժիմների համահարթեցում, տնտեսական և տեխնիկական օգնություն<sup>3</sup>:

<sup>1</sup> Brijan, Zheng, "China's 'Peaceful Rise' to Great-Power Status", Foreign Relations, October 2005; Glaser, Bonnie, "China's coercive economic diplomacy: a new and worrying trend", Center for Strategic and International Studies, August 6, 2012. – <http://csis.org/publication/chinas-coercive-economic-diplomacy-new-and-worrying-trend>

<sup>2</sup> Տես՝ <http://www.opec.org>

<sup>3</sup> Van Bergeij, Peter A. G., "Economic Diplomacy and the Geography of International Trade", Edward Elgar Publishing, North Hampton, 2009, pp. 127.

Կարևոր է դիտարկել նաև միջխմբային տնտեսական դիվանագիտության ձևերը, մասնավորապես զարգացած և զարգացող երկրների միջև դինամիկ զարգացող հարաբերությունների համատեքստում<sup>1</sup>: Դրանք պահանջում են նաև զարգացող երկրների հետ դոնոր կազմակերպությունների և երկրների ընդհանուր մոտեցումների մեխանիզմների մշակում, ինչը վերջին տարիներին հնարավորություն է ստեղծել ձևավորել Փարիզի ակումբը, Տրանսատլանտյան գործընկերությունը, տարածել Վաշինգտոնյան կոնսենսուսի սկզբունքները և այդ նպատակին ծառայեցնել «զարգացած երկրների ակումբի»՝ Տնտեսական Զամագործակցության և Ջարգացման Կազմակերպության երկրների խորհրդակցությունները, բանակցային նոր մարտավարությունները, ինչպես նաև տնտեսական խթանների և քաղաքական ճնշումների օգտագործումը: Զայաստանի համար նման ձևաչափ կարող է դառնալ Մաքսային միությունը, որի շրջանակներում հնարավոր է դիտարկել նաև տարածաշրջանային տնտեսական ինտեգրման նոր ձևերն ու հնարավորությունները:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Յոդվածում քննարկվում է տնտեսական դիվանագիտության կարևորությունը Զայաստանի տնտեսության աճի և մարդկային զարգացման գործընթացներում: Հիմնավորվում է տնտեսական դիվանագիտության հայեցակարգի մշակման անհրաժեշտությունը: Դիտարկվում է երկրորդ սերնդի տնտեսական բարեփոխումներում տնտեսական դիվանագիտության դերը: Բացահայտվում է նրա անմիջական կապը՝ տնտեսական անվտանգության ապահովման և մի շարք նշանակալից տնտեսական խնդիրների լուծման հետ:

## АННОТАЦИЯ

### МАНАСЕРЯН Т. – ЭКОНОМИЧЕСКАЯ ДИПЛОМАТИЯ: ОТ ТЕОРИИ К РЕАЛЬНОЙ ЖИЗНИ

В статье обсуждаются вопросы, связанные с важностью экономической дипломатии для экономического роста и человеческого развития. Обосновывается необходимость разработки концепции экономической дипломатии и выявления ее основных тенденций. Рассматривается роль экономической дипломатии в реформах второго поколения, её главные принципы, формы, методы и тенденции. Выявляется связь экономической дипломатии с обеспечением экономической безопасности и решением ряда значимых экономических задач.

## SUMMARY

### MANASSERIAN T. – ECONOMIC DIPLOMACY: FROM THEORY TO REAL LIFE

In the article issues related to the importance of economic diplomacy in economic growth and human development are discussed justifying need a working out the concept of economic diplomacy argued. The role of economic diplomacy in second generation economic reforms, as well as major principles, forms, methods and trends is emphasized. The economic diplomacy relationship with the process of providing economic security and solving some significant economic problems is revealed.

<sup>1</sup> Каррон де ла Каррьер Г., Экономическая дипломатия. Дипломат и рынок. – М.: «Российская политическая энциклопедия» (РОССПЭН), 2005, с. 201.

**ՎԱՆՅԱ ՂԱԶԱՐՅԱՆ**

*ԵՊՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի հայցորդ,  
 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի պետական  
 եկամուտների քաղաքականության և վարչարարության  
 մեթոդաբանության վարչության առաջատար մասնագետ  
 էլ. փոստ՝ vanya.ghazaryan@minfin.am*

**ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
 ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԻԶՆԵՍ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ**

Հայտնի է, որ երկրի տնտեսության զարգացման վրա էական ազդեցություն ունի ճկուն հարկային համակարգի առկայությունը: Հետևաբար հարկային համակարգի շարունակական բարեփոխումներն ու կատարելագործումը հատկապես անցումային տնտեսությամբ երկրների համար պետք է լինի պետության տնտեսական քաղաքականության առանցքային բաղադրիչներից: Մեր հանրապետությունում տնտեսական ազատական հարաբերություններին անցման փուլում իրականացված բարեփոխումների կարևոր ուղղություններից էր հարկային ոլորտի կատարելագործմանն ուղղված մի շարք միջոցառումների իրականացումը: Ակնհայտորեն, իրականացված քայլերի արդյունքում արժանագրվել են դրական տեղաշարժեր: Հարկային համակարգում դրական տեղաշարժերի ընդլայնման և զարգացման նկատառումներով 2012 թվականի տարեվերջին ևս ընդունվեցին հարկային համակարգում փոփոխություններ նախատեսող մի շարք իրավական ակտեր: Ինչպես նախորդ տարիներին, 2012 թվականի ընթացքում մշակված և ներկայումս իրականացվող քաղաքականությունը ևս կողմնորոշված է հարկային քաղաքականության կատարելագործմանն ու հարկահավաքման գործընթացի արդյունավետության բարձրացմանը: Այլ կերպ ասած՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվող հարկային քաղաքականությունը նպատակադրված է մի կողմից նպաստավոր ձեռնարկատիրական միջավայրի ձևավորմանը, մյուս կողմից՝ պետական եկամուտների հավաքագրման օպտիմալ մակարդակի ապահովմանը: Այսպես, 2012 թվականի տարեվերջին ընդունված՝ հարկային օրենսդրության փոփոխություններ նախատեսող իրավական ակտերով պետական եկամուտների քաղաքականության բնագավառում կատարված փոփոխությունները և լրացումները ձեռնարկատիրական միջավայրի վրա ունեցել են ազդեցության դրսևորման հետևյալ հիմնական ուղղվածությունները:

Մասնավորապես, փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) սուբյեկտների համար տարեկան կտրվածքով մինչև 58.35 մլն. դրամ իրացման շրջանառություն ունեցող տնտեսավարող սուբյեկտների մասով ներդրվել է շրջանառության հարկի համակարգ<sup>1</sup>, որի կիրառության ժամանակ հարկային պարտավորությունը հաշվարկվում է պարզ հարկային հաշվառմամբ՝ շրջանառության նկատմամբ որոշակի տոկոսներով՝ ՓՄՁ սուբյեկտներին ազատելով ծախսերի հաշվառման աշխատատար և բարդ ընթացակարգերից: Միաժամանակ, շրջանառության հար-

<sup>1</sup> «Շրջանառության հարկի մասին» ՀՀ 2012 թ. ՀՕ-236-Ն օրենք, հոդված 4:

կի համակարգի ներդրման նպատակն է էականորեն պարզեցնել ՓՍՁ սուբյեկտների հաշվետվողական համակարգը: Մասնավորապես, սահմանվել է, որ շրջանառության հարկ վճարող անձինք շրջանառության հարկի հաշվարկները կներկայացնեն եռամսյակային կտրվածքով՝ դրանում ներառելով նաև շրջանառության հարկ վճարողների համար յուրաքանչյուր հսկիչ-դրամարկղային մեքենայով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկություններ<sup>1</sup>: Արդյունքում, կկրճատվեն ներկայումս ՓՍՁ սուբյեկտների կողմից հարկային մարմին ներկայացվող շուրջ 13 հաշվարկներ: Բացի վերոնշյալը, եթե տնտեսվարող սուբյեկտը չի ցանկանում աշխատել շրջանառության հարկի համակարգում, նա կարող է օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել հարկային մարմին և դառնալ ավելացված արժեքի հարկ վճարող<sup>2</sup>: Սա հարկատուին հնարավորություն կընձեռի նաև հարկման նպատակով հաշվի առնել իր կողմից կատարված ծախսերը: Այնուամենայնիվ, շրջանառության հարկի համակարգի կիրառման ընթացքում մի շարք տնտեսվարողների կողմից եղան դժգոհություններ, կապված հատկապես հարկային բեռի ավելացման հետ: Խնդիրը կայանում է նրանում, որ շրջանառության հարկի սահմանած դրույքաչափերը միջինացված ցուցանիշներ են, որոնք ստացվել են ՓՍՁ սուբյեկտների նախորդ տարիների հաշվարկներով ներկայացված շահույթների և ծախսերի համադրման միջոցով, իսկ այդ մոտեցմամբ հաշվարկված դրույքաչափերը հատկապես գերփոքրերի համար լրացուցիչ հարկային բեռի խնդիր են առաջացրել:

Հարկային քաղաքականության փոփոխությունների շրջանակներում ընդհանուր մոտեցմամբ նախատեսվել են մի շարք հարկային արտոնություններ, որոնք նպատակ ունեն խթանելու ինչպես նոր աշխատատեղերի ստեղծումը, այնպես էլ տնտեսության որոշակի ոլորտների զարգացումը: Մասնավորապես, ներկայումս սահմանվել են նոր հարկային արտոնություններ այն տնտեսվարող սուբյեկտների համար, որոնք 2013 թվականի հունվարի 1-ից հետո կստեղծեն նոր աշխատատեղեր: Արդյունքում, նոր աշխատատեղեր ստեղծող տնտեսվարող սուբյեկտներն իրենց կողմից ստեղծված նոր աշխատատեղերի մասով հաշվարկված լրացուցիչ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների 100 տոկոսի չափով շահութահարկի գումարից նվազեցումներ կատարելու հնարավորություն կունենան<sup>3</sup>: Անշուշտ, այս մոտեցումը տնտեսվարողների կողմից նոր աշխատատեղերի ստեղծումը խթանող քաղաքականություն է, ինչն իր դրական, խթանիչ ազդեցությունը կունենա գործարարությամբ զբաղվելու համար: Հետագայում խթանող հարկային վերոնշյալ քաղաքականության շրջանակների ընդլայնման և արդյունավետության բարձրացման նպատակով հարկավոր է սահմանել արտոնությունից օգտվելու համար կառավարության կողմից գործարար ծրագրերի հավանության արժանացման այնպիսի կարգ, որն առանց լրացուցիչ վարչարարական խնդիրների հնարավորինս լայն շրջանակի տնտեսվարող սուբյեկտների հնարավորություն կընձեռնի օգտվելու հարկային քաղաքականության շրջանակներում նախատեսված այս արտոնությունից, ինչն էլ իր հերթին դրական ազդեցություն կունենա զբաղվածության մակարդակի և ՀՆԱ-ի աճի վրա:

<sup>1</sup> «Շրջանառության հարկի մասին» ՀՀ 2012 թ. ՀՕ-236-Ն օրենք, հոդված 9:

<sup>2</sup> «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ 1997 ՀՕ-118-Ն օրենք, հոդված 3, կետ 4-րդ:

<sup>3</sup> «Շահութահարկի մասին» ՀՀ 1997 թ. ՀՕ-115-Ն օրենք, հոդված 39.3:

Կոնյակագործությունը մեր երկրի արտադրության ավանդական ճյուղերից է: Այն կառավարության կողմից ընդգրկվել է արտահանման ռազմավարական ուղղվածություն ունեցող ծրագրերով նախատեսված արտադրության ուղղությունների մեջ: Այս ոլորտի արտադրության խթանման և արտահանման ընդլայնմանը նպաստելու նպատակով հարկային քաղաքականության շրջանակներում ևս կատարվեցին փոփոխություններ: Մասնավորապես, 40 տոկոս և բարձր սպիրտայնությամբ չշաղկված կոնյակի օտարումը կոնյակ արտադրող այլ անձանց ազատվեց ակցիզային հարկով հարկումից<sup>1</sup>, ինչի արդյունքում կոնյակի արտադրությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների համար էականորեն կնվազեն կոնյակի արտադրության հումքի գները, որն էլ իր հերթին միջազգային շուկաներում կնպաստի գնային առումով ամրապնդելու մեր հայրենական կոնյակի մրցակցային դիրքերը: Շարունակելով կոնյակագործության և զինեզործության ոլորտում հարկային խթանման քաղաքականությունը, հարկային օրենսդրության ոլորտում իրականացված փոփոխությունների շրջանակներում իջեցվել են տեղական արտադրության պտղային, հատապտղային և մրգային այլ զինիների համար կիրառվող ակցիզային հարկի դրույքաչափերը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ-ում ներկայումս կայուն կերպով զարգանում է պտղային, հատապտղային և մրգային զինիների արտադրությունը: Արդյունքում էականորեն կնվազեն պտղային, հատապտղային և մրգային զինիների գները՝ նպաստելով պտղային, հատապտղային և մրգային զինիների իրացման ծավալների աճին: Հետևելով հարկային խթանման քաղաքականության դրական ազդեցության դրսևորումներին և ձեռնարկատիրության արդյունքների ավելացման ու արտոնությունների հետևանքով պետական բյուջեի հնարավոր կրած կորուստների (ծախսերի) համադրված ցուցանիշներին՝ դրանց արդարացված, սպասված մեծություններ ընդունելու դեպքում, հարկավոր է հետազայում ըստ առաջնահերթությունների ընդլայնել այդ մոտեցման կիրառումը՝ հիմնավորված կերպով ընդգրկելով նոր ճյուղեր:

Ներդրվել է ստվերային շրջանառությունների հայտարարագրման համակարգ, որի շրջանակներում տույժերից կազատվեն բոլոր այն հարկ վճարողները, որոնք 2013 թվականի ընթացքում ինքնուրույն կհայտնաբերեն նախկինում պակաս հաշվարկած կամ չհաշվարկած հարկերը<sup>2</sup>: Այստեղ խնդիրը կայանում էր նրանում, որ հարկ վճարողների կողմից օրենսդրությամբ սահմանված ճշտված հաշվարկները հարկերի լրացուցիչ գումարներով ներկայացնելու դեպքում այդ գումարների գծով առաջացող տույժերն ու տուգանքները հարկ վճարողներին հաճախ հետ են պահում ճշտված հաշվարկներ ներկայացնելուց: Արդյունքում, թաքցված կամ պակաս ցույց տրված հարկային պարտավորության գումարները կարող են արձանագրվել կամ չարձանագրվել հարկային մարմինների կողմից իրականացվող ստուգումների ժամանակ: Այս մոտեցման կիրառումը նախկինում հարկային ապառքներ կուտակած հարկ վճարողներին, որոնք ցանկանում են իրենց գործունեությունն ամբողջովին դուրս բերել ստվերից և այսուհետ գործել օրինականության դաշտում, ինչպես նաև հետազայում հարկային մարմնի կողմից

<sup>1</sup> «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2012 թ. ՀՕ-250-Ն օրենք, հոդված 5:

<sup>2</sup> «Հարկային և պարտադիր սոցիալական վճարների արտոնություններ սահմանելու մասին» 2012 թ. ՀՕ-258-Ն օրենք, հոդված 1:

ստուգմամբ բացահայտված խախտումների համար տուգանքներից ազատվելու, շահեկան հնարավորություն է ընձեռում առանց տուգանք վճարելու իրագործել այս նպատակները: Վերոնշյալ օրենսդրական փոփոխությունների շրջանակներում անհատ ձեռնարկատերերն ազատվել են եկամտահարկի և (կամ) պարտադիր սոցիալական ապահովության վճարների նվազագույն գումարների գծով հաշվարկված և չվճարված պարտավորություններից: Մասնավորապես նախատեսվել է անհատ ձեռնարկատերերին ազատել մինչև 2005 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար եկամտահարկի և (կամ) պարտադիր սոցիալական ապահովության վճարների նվազագույն գումարների գծով հաշվարկված և չվճարված պարտավորություններից<sup>1</sup>:

Ներդրվել է արդյունաբերական նշանակության քայուղերի մասով ներմուծման ժամանակ վճարվող ակցիզային հարկի վերադարձի համակարգը<sup>2</sup>, նպատակ ունենալով բացառելու արդյունաբերական արտադրանքի ինքնարժեքի բարձրացումը և խթանելու ոլորտի զարգացումը:

2012 թվականի տարեվերջին հաստատված պետական եկամուտների քաղաքականության փոփոխված նոր մոտեցմամբ նախատեսվել են նաև մի շարք դրույթներ, որոնք հնարավորություն կընձեռեն առավել պարզեցնելու և կրճատելու տնտեսվարող սուբյեկտների հաշվետվողական համակարգը: Մասնավորապես հարկային ոլորտներում պետական քաղաքականության նոր մոտեցմամբ իրականացվել է՝

1. ամսական կտրվածքով ավելացված արժեքի հարկ վճարողների համար՝ դուրս գրված և ստացված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկանքների ներկայացման հաճախականության կրճատում: Արդյունքում, նշյալ տնտեսվարող սուբյեկտները ներկայումս տարեկան 12 անգամ ներկայացնելու փոխարեն տեղեկանքները կներկայացնեն տարեկան 4 անգամ<sup>3</sup>,

2. 2014 թվականի հունվարի 1-ից էլեկտրոնային եղանակով հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման հնարավորությունների ստեղծում: Առաջարկվող փոփոխության արդյունքում տնտեսվարող սուբյեկտները հնարավորություն կունենան առաքվող ապրանքների ուղեկցող փաստաթղթերի դուրսգրումը կազմակերպել նաև էլեկտրոնային համակարգի միջոցով՝ խուսափելով թղթային կրիչների օգտագործումից, որը էականորեն նվազեցնի ուղեկցող փաստաթղթերի դուրսգրման վրա ծախսվող ժամանակը<sup>4</sup>,

3. առանց նոր իրավաբանական անձ կազմավորելու, համատեղ գործունեության մասով հարկ վճարողներին հարկերի հաշվարկման և վճարման հնարավորության ընձեռում<sup>5</sup>,

<sup>1</sup> «Հարկային և պարտադիր սոցիալական վճարների արտոնություններ սահմանելու մասին» 2012 թ. ՀՕ-258-Ն օրենք, հոդված 2:

<sup>2</sup> «Ակցիզային հարկի մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2012 թ. ՀՕ-250-Ն օրենք, հոդված 9:

<sup>3</sup> «Ավելացված արժեքի հարկի մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2012 թ. ՀՕ-240-Ն օրենք, հոդված 16:

<sup>4</sup> «Հարկերի մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2012 թ. ՀՕ-237-Ն օրենք, հոդված 26:

<sup>5</sup> «Հարկերի մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2012 թ. ՀՕ-237-Ն օրենք, հոդված 2:

4. հարկային մարմնին հայտնի դարձած՝ հարկ վճարողների կողմից ներկայացված հաշվարկներում տեղ գտած անճշտությունների ճշգրտում հարկային մարմնի սահմանած կարգով՝ առանց հարկ վճարողների մոտ ստուգումների (այդ թվում՝ վերստուգումների) իրականացման<sup>1</sup>,

5. 2014 թվականի հունվարի 1-ից վերացնել նվազագույն շահութահարկի համակարգը: Արդյունքում, տնտեսվարող սուբյեկտները 2014 թվականից չեն կատարի նվազագույն շահութահարկի վճարումներ, ինչպես նաև կազատվեն նվազագույն շահութահարկի հաշվարկման համար կատարվող ժամանակային ծախսերից<sup>2</sup>,

6. 2014 թվականի հունվարի 1-ից ներդնել ամորտիզացիոն մասհանումների կատարման խմբավորված (փուլիկնգային) համակարգը, ինչը հնարավորություն կտա ազատվել յուրաքանչյուր միավոր հիմնական միջոցների գծով ամորտիզացիոն մասհանումներ հաշվարկելու ներկայումս գործող բարդ և ժամանակատար համակարգից: Բացի այդ, նոր համակարգը նպատակ ունի խթանելու արտադրության մեջ նոր հիմնական միջոցների օգտագործումը՝ հաշվի առնելով այն, որ նախագծերով առաջարկվում են նոր հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումների ավելի բարձր դրույքաչափեր<sup>3</sup>:

Պետական եկամուտների հավաքագրման բնագավառում համաձայն ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականության սկզբունքների առաջիկա տարիներին հարկային եկամուտների ապահովումը կատարվելու է ի հաշիվ հարկային վարչարարության բարելավման՝ հաշվի առնելով տնտեսական աճի տեմպը, հարկման բազայի հետ կապված փոփոխությունները, ինչպես նաև հարկ վճարողների կողմից իրենց հարկային պարտավորությունների կամավոր կատարման պատրաստակամությունը<sup>4</sup>: Հարկային վարչարարության հետագա բարելավման և կատարելագործման միջոցով վերոնշյալ նպատակադրումներին հասնելու համար առաջիկայում անհրաժեշտ է իրականացնել հետևյալ աշխատանքները: Մասնավորապես.

- փոփոխություններ կատարել գրանցման գործընթացում և «Հարկատու-3»-ում այնպես, որ ապահովվի հարկատուների ռեգիստրում հաշվառված յուրաքանչյուր հարկատուի հարկային պարտավորությունների գրանցումն ըստ հարկատեսակների, ինչպես նաև քայլեր ձեռնարկել՝ ուղղված հարկատուների ռեգիստրում յուրաքանչյուր հարկատուի «ակտիվ» կամ «ոչ ակտիվ» կարգավիճակի ճշգրիտ գրանցումն ապահովելու ուղղությամբ,
- հարկատուների ռեգիստրում փոփոխություն անելուց հետո, երբ ակտիվ հարկատուները և յուրաքանչյուր հարկատեսակի գծով նրանց հաշվետվական պարտականությունները ճշգրտորեն կգրանցվեն ռեգիստրում (ինչպես առաջարկվում է վերը), պատրաստել հավաստի տեղեկանքներ հաշվետվություններ չներկա-

<sup>1</sup> «Հարկերի մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2012 թ. ԴՕ-237-Ն օրենք, հոդված 24:

<sup>2</sup> «Շահութահարկի մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2012 թ. ԴՕ-238-Ն օրենք, հոդված 30:

<sup>3</sup> «Շահութահարկի մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2012 թ. ԴՕ-238-Ն օրենք, հոդված 7:

<sup>4</sup> ՀՀ կառավարության 2012 թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային վարչարարության 2012-2014 թվականների ռազմավարությունը հաստատելու մասին» թիվ 195 որոշում:

յացնող հարկատուների վերաբերյալ, որոնցով այնուհետև կգբաղվեն յուրաքանչ-յուր հարկային տեսչության հարկադիր գանձումների բաժնի աշխատողները,

- կիրառել ավելի համագործակցային մոտեցում այն հարկատուների նկատմամբ, որոնք, ընդհանուր առմամբ, ունեն հարկային օրինապահության լավ պատմություն՝ նրանց համար սահմանելով հարկերի հետաձգման և մասնաբաժիններով հարկերի վճարման ավելի մեղմ քաղաքականություն, ինչպես նաև անհուսալի պարտքերի կապակցությամբ իրականացնել պարտքի դուրսգրման ավելի ակտիվ քաղաքականություն,

- շարունակվեն աշխատանքները ռիսկային չափանիշների հիման վրա իրականացվող ստուգումների գործընթացի կատարելագործման ուղղությամբ՝ դրանց արդյունավետության մոնիտորինգի և գնահատման միջոցով,

- երրորդ անձանցից ստացվող տեղեկությունների համակարգված կիրառմամբ հսկողական աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով ընդլայնել այլ մարմինների հետ համագործակցության և վերջիններիս միջև տեղեկությունների փոխանակման շրջանակները,

- սահմանային անցակետերի արդիականացում՝ ժամանակակից պահանջներին դրանք համապատասխանեցնելու նպատակով,

- քայլեր ձեռնարկել ԱԱՀ-ի գերավճարի ավելցուկն ամբողջությամբ վերադարձնելու համակարգին աստիճանաբար անցնելու ուղղությամբ և իրագործել ռազմավարություն՝ ուղղված գոյություն ունեցող ԱԱՀ-ի գերավճարների կուտակված պաշարների կառավարմանը,

- իրականացվեն աշխատանքներ հայփոստի բաժանմունքներում հարկ վճարողների սպասարկման կետերի ընդլայնման ուղղությամբ,

- շարունակվեն աշխատանքները տնտեսության մեջ փաստաթղթաշրջանառության ներդրման մշակույթի ամրապնդման ուղղությամբ:

## ԱՍՓՈՓՈՒՄ

Այս հոդվածում ներկայացվում են 2012 տարեվերջին ՀՀ-ում հարկային օրենսդրության մեջ կատարված փոփոխությունները, որոնք ազդեցություն ունեն բիզնես միջավայրի վրա և առաջարկություններ հարկային համակարգի կատարելագործման ուղղությամբ:

## АННОТАЦИЯ

### КАЗАРЯН В. – ВЛИЯНИЕ ИЗМЕНЕНИЙ В НАЛОГОВОМ И ТАМОЖЕННОМ ЗАКОНОДАТЕЛЬСТВЕ НА БИЗНЕС-СРЕДУ

В настоящей статье представляются изменения налогового законодательства РА, внесённые к концу 2012-ого года и имевшие влияние на бизнес-среду, а также рекомендации по улучшению налоговой системы.

## SUMMARY

### GHAZARYAN V. – THE INFLUENCE OF TAX AND CUSTOM SYSTEM CHANGES ON BUSINESS ENVIRONMENT

The author presents RA TAX Legislation amendments of late 2012, which influence business environment, as well as recommendations to improve the tax system.

**ԳՐԻԳՐ ԴԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

*տնտեսագիտության թեկնածու,  
ԵՊՀ միջազգային տնտեսական  
հարաբերությունների ամբիոնի դոցենտ  
Էլ. փոստ՝ grigor.hayrapetyan@yahoo.com*

**ՎԻԿՏՈՐՅԱ ԴԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

*տնտեսագիտության թեկնածու,  
ՀՈ(Ս)Հ տնտեսության և ֆինանսների ամբիոնի ավագ դասախոս  
Էլ. փոստ՝ hayrapetyanv@rambler.ru*

**ԻՐԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՍԱՐՏԱԳՐԱՎԵՐՆԵՐԸ**

Իրանի Իսլամական Հանրապետությունը համարվում է Հայաստանի 4 հարևան երկրներից մեկը, որի հետ անկախությունից ի վեր Հայաստանն ունեցել և զարգացրել է բարիդրացիական հարաբերություններ բոլոր ոլորտներում: Հայաստանի և Իրանի միջև երբևէ չեն եղել վեճեր տնտեսական համագործակցության ոլորտում կամ կապված երկու երկրների ընդհանուր սահմանների հետ: Իրանի Իսլամական Հանրապետությունը ճանաչել է Հայաստանի անկախությունը 1991 թ. դեկտեմբերի 25-ին<sup>1</sup>: Հայաստանի անկախացումից հետո Իրանի հետ աստիճանաբար սկսեցին հաստատվել սերտ, բարիդրացիական հարաբերություններ բոլոր բնագավառներում: Արդյունավետ համագործակցություն ծավալվեց էներգետիկայի, տրանսպորտի, բնապահպանության, առողջապահության, գյուղատնտեսության, գիտության, կրթության, մշակույթի բնագավառներում, ինչպես նաև միջմարզային գործակցության ոլորտում: Ներկայումս Իրանը համարվում է Հայաստանի գլխավոր առևտրային գործընկեր երկրներից մեկը: Այսպես, 2012 թ. տվյալներով արտահանման և ներմուծման ծավալներով Իրանը դասվում էր Հայաստանի գլխավոր առևտրային գործընկեր երկրների հնգակում<sup>2</sup>: Ավելի քան 100000 հայ այսօր բնակվում է Իրանում, նրանց գերակշիռ մեծամասնությունը գտնվում է Թեհրանում<sup>3</sup>: Հայաստանի համար Իրանի հետ արտաքին տնտեսական հարաբերությունների զարգացումը միջոց է շրջանցել Թուրքիայի և Ադրբեջանի կողմից շրջափակումը: Մյուս կողմից Իրանի համար Հայաստանի հետ արտաքին տնտեսական հարաբերությունների զարգացումը միջոց է լուծելու բազմաթիվ աշխարհաքաղաքական հարցեր:

Իրանի Իսլամական Հանրապետությունը բնական և աշխատուժ ռեսուրսներով հարուստ տնտեսություն ունի: 1979 թ. Իսլամական հեղափոխությունը փոխեց Իրանի ժամանակակից տնտեսական և քաղաքական պատմությունը: Իրանը ձևափոխվեց Իսլամական պետության, իսկ տնտեսության մեջ զգալի ավելացավ

<sup>1</sup> Տես՝ <http://mfa.am/hy/country-by-country/ir/> - ՀՀ արտաքին գործերի նախարարություն: Ինտերնետային կայքն այցելվել է 03.10.2013 թ.:

<sup>2</sup> Տես՝ <http://www.armstat.am> ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն: ՀՀ արտաքին առևտուր: Ինտերնետային կայքն այցելվել է 03.10.2013 թ.:

<sup>3</sup> Տես՝ <http://www.armeniadiaspora.com/population.html> - Armenia Diaspora: Ինտերնետային կայքն այցելվել է 03.10.2013 թ.:

պետական հատվածի մասնաբաժինը: Իրանի տնտեսությունը մեծ կորուստներ կրեց երկարատև իրանա-իրաքյան պատերազմի հետևանքով<sup>1</sup>: Պատերազմի ավարտից հետո, Իրանը փորձեց վերակառուցել տեղական արտադրությունը, ներգրավել օտարերկրյա ներդրումներ, խթանել արտաքին տնտեսական կապերը, ազատականացնել արտաքին առևտուրը և վերաբաշխել ազգային հարստությունը հնգամյա տնտեսական զարգացման պլանների միջոցով: Ընդհանուր առմամբ 1979 թ. հեղափոխությունից հետո Իրանի տնտեսության զարգացումը կարելի է բաժանել երկու փուլերի: Առաջին փուլի զարգացումը սկսեց հեղափոխությունից հետո և դրա վրա մեծ ազդեցություն ունեցավ Իրաքի հետ ութ տարի տևած պատերազմը: Այս ժամանակահատվածում Իրանի տնտեսության զարգացմանը բնութագրական էր ռեսուրսների մոբիլիզացում, որպեսզի դիմակայի ներքին և արտաքին կոնֆլիկտներին, տնտեսության մեջ պետության դերի զգալի ավելացում, նոր քաղաքական համակարգի (Իսլամական Հանրապետություն) համար ինստիտուտների հաստատում: Տնտեսական զարգացման երկրորդ փուլը սկիզբ առավ 1989 թ., որը բնութագրվում է տնտեսության հետպատերազմյան վերակառուցմամբ և տնտեսության մեջ իրականացվող տնտեսական ու ինստիտուցիոնալ բարեփոխումներով: Շուկայական տնտեսությանն ուղղված մի շարք բարեփոխումներ իրականացնելուց հետո Իրանի կառավարությունը փորձեց ազատականացնել արտադրության շուկան և 1993 թ. բացեց վճարային հաշվեկշռի կապիտալի հաշիվը: Այստեղ հարկ է նշել, որ արդյունքում Իրանը շատ արագ ձեռք բերեց վիթխարի կարճաժամկետ պետական պարտք, իսկ վերջինս իր հերթին բերեց 1993-1994 թթ. վճարային հաշվեկշռի ճգնաժամի: Պարտքային ճգնաժամը դանդաղեցրեց տնտեսության մեջ իրականացվող տնտեսական բարեփոխումները և նույնիսկ որոշ ոլորտներում դրանք կասեցվեցին: 1990-ական թվականների երկրորդ կեսից սկսած Իրանի տնտեսության մեջ բարեփոխումներն իրականացվում են աստիճանական կարգով՝ փորձելով հաշվի առնել տնտեսության յուրաքանչյուր ոլորտի առանձնահատկությունները:

Տնտեսության մեջ մասնավոր հատվածի ավելացման համար 2006 թ. Իրանը նախաձեռնեց լայնածավալ սեփականաշնորհման ծրագրեր: Արդյունքում բազմաթիվ ռազմավարական նշանակություն ունեցող արդյունաբերությունների բաժնետոմսեր վերաբաշխվեցին բաժնետոմսերի շուկայի միջոցով<sup>2</sup>: Սեփականաշնորհումը, հատկապես ներառում էր նավթարդյունաբերությունը, բանկային համակարգը, ապահովագրությունը և տրանսպորտը: Այնուամենայնիվ շատ մասնագետներ, այն կարծիքին են, որ Իրանի կառավարությունը շարունակում է ակտիվ միջամտություն ունենալ տնտեսության մեջ: Ներկայումս Իրանի տնտեսությունը իրենից ներկայացնում է խառը տնտեսություն, որտեղ ամբողջ տնտեսության ավելի քան 50% ենթարկվում է կենտրոնացված համակարգման, իսկ ֆինանսական ոլորտում պետության մասնաբաժինը շատ ավելի մեծ է: Իրանի տնտեսության մեջ պետական հատվածի բաժինը, հատկապես զգալի մեծ է հետևյալ ոլորտներում՝ նավթարդյունաբերություն ու գազարդյունաբերություն, ֆինանսական հատված (բանկային գործ), տրանսպորտ (երկաթուղային և ծովային փոխադրումներ) և արտաքին առևտուր: Մասնավոր հատվածի դերը շարունա-

<sup>1</sup> Իրանա-իրաքյան պատերազմը սկսել է 1980 թ. և ավարտվել է 1988 թ.:

<sup>2</sup> Shayerah Ilias. Iran's Economy / CRS Report for Congress, 2008.

կում է թույլ մնալ Իրանի տնտեսության մեջ, որը և իր հերթին զսպում է Իրանի տնտեսական զարգացմանը: Մասնավոր հատվածի դերի մեծացման և շուկայական տնտեսությանն անցման համար կառավարությունը հայտարարել է լայնածավալ սեփականաշնորհման գործընթաց, համաձայն որի նախատեսվում է ամեն տարի սեփականաշնորհել պետական ձեռնարկությունների 20%: Տնտեսության մեջ իրականացվող և նախատեսվող բարեփոխումները և անցումը շուկայական տնտեսության հիմք կհանդիսանա ԱՅԿ անդամակցության համար: ԱՅԿ անդամակցությունը ներկայումս հանդիսանում է Իրանի կառավարության հիմնական առաջնայնություններից մեկը: 1995 թ. Իրանը ստացավ դիտորդի կարգավիճակ ԱՅԿ-ում, սակայն ԱՄՆ անընդհատ խոչընդոտում է Իրանի անդամակցության գործընթացին:

Իրանը նավթ արտահանող երկրների կազմակերպության (Organization of Petroleum Exporting Countries, OPEC) անդամ երկրների շարքում նավթի արդյունահանման ծավալով գրավում է երկրորդ տեղը, իսկ նավթի ու գազի պաշարներով աշխարհում գրավում է առաջատար դիրքեր<sup>1</sup>: Իրանի տնտեսությունը մեծապես կախված է նավթից և շատ զգայուն է նավթի միջազգային գնի տատանումներին: 1973 թ. նավթային ճգնաժամի պատճառով Իրանի տնտեսությունը հայտնվեց ճգնաժամի մեջ, իսկ վերջին շրջանում, մինչև գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամը՝ նավթի միջազգային գնի բարձրացումը, զգալի ավելացրեց Իրանի արտահանման ծավալը և արտարժույթի պաշարները<sup>2</sup>:

1979 թ. ի վեր ԱՄՆ կիրառում է տարբեր տնտեսական պատժամիջոցներ Իրանի նկատմամբ: ԱՄՆ ցանկանում է մեկուսացնել Իրանին ԱՄՆ ֆինանսական և առևտրային համակարգերից, ավելին՝ ԱՄՆ նաև դիվանագիտական ճնշումներ է գործադրում այլ երկրների և ընկերությունների վրա, որպեսզի վերջիններս սահմանափակեն իրենց տնտեսական գործունեությունը Իրանի հետ<sup>3</sup>: Յամաձայն Սիացյալ Նահանգների Իրանը ապակայունացնող ուժ է հանդիսանում Մերձավոր Արևելքում և այդ պատճառով ԱՄՆ իր մտավախությունն է հայտնում տարածաշրջանում և միջազգային մակարդակներում վերջինիս աճող ազդեցության վերաբերյալ: Այսպես, համաձայն ԱՄՆ կառավարության 2006 թ. Ազգային անվտանգության ռազմավարության (U.S. National Security Strategy) ԱՄՆ աշխարհում որևէ այլ երկրից չի ակնկալում ավելի շատ մարտահրավերներ, քանի Իրանից<sup>4</sup>:

Իրանի տնտեսության մեջ մեծ դեր ունի արդյունաբերությունը, որին բաժին է ընկնում ՅՆԱ-ի մոտ 45% և ներառում է նավթի ու գազի քիմիական արդյունաբերությունները, մետաղագործությունը, ավտոմոբիլաշինությունը և տեքստիլ արդյունաբերությունը: Գյուղատնտեսությանը բաժին է ընկնում ՅՆԱ-ի 12%, իսկ ծառայությունների ոլորտին 43%:

<sup>1</sup> Նավթի արդյունահանման ծավալով OPEC-ի անդամ երկրների շարքում առաջին տեղը գրավում է Սաուդյան Արաբիան, իսկ գազի պաշարների ծավալով Իրանը աշխարհում զիջում է միայն Ռուսաստանին: Աղբյուր՝ International Energy Outlook 2013:

<sup>2</sup> Նավթի միջազգային գինը մեկ բարելի դիմաց 2007 թ. 50 ԱՄՆ դոլարից բարձրացավ մինչև 140 ԱՄՆ դոլար 2008 թ.:

<sup>3</sup> Kenneth Katzman. Iran: U.S. Concerns and Policy Responses / CRS Report RL32048, 2013.

<sup>4</sup> The National Security Strategy of the United States of America – 2006 / The White House Washington, March 2006.

Նավթի և գազի արդյունահանումը շատ կարևոր դեր են խաղում Իրանի տնտեսության համար: Այս ոլորտը հիմնականում գտնվում է պետության վերահսկողության տակ: Այսպես, նավթի և գազի արդյունահանումը և նոր հանքահորերի հետազոտությունն իրականացվում է Իրանի Ազգային նավթային ընկերության կողմից (National Iranian Oil Company, NIOC): Արտահանումից ստացվող եկամուտների մեծ մասը բաժին են ընկնում նավթին և գազին, ինչպես նաև դրանք ապահովում են կառավարության եկամուտների մոտ 40%: Այս ոլորտներին է բաժին ընկնում նաև տեղական և արտասահմանյան ներդրումների մեծ մասը: Որոշ հետազոտողներ գտնում են, որ Իրանի կառավարությունը նավթից ստացած եկամուտները պետք է ներդնի մասնավոր հատվածի զարգացման համար, այլ ոչ, թե օգտագործի դրանք ներմուծումը ֆինանսավորելու և այլ սոցիալական ծրագրեր իրականացնելու համար:

Գյուղատնտեսությունը մեծ դեր ունի Իրանի տնտեսության մեջ, քանի որ արտահանման մեջ (նավթարդյունաբերությունը և գազարդյունաբերությունը բացառած) բավականին մեծ է դրա մասնաբաժինը: Մյուս կողմից Իրանն օգտագործում է նավթի արտահանումից ստացվող միջոցները գյուղատնտեսական մթերքների ներմուծումը ֆինանսավորելու համար (հատկապես հացահատիկ): Այստեղ հարկ է նշել, որ չնայած վերջին շրջանում նավթի միջազգային գների աճին, սննդամթերքի աճող միջազգային գները և բնակչության թվաքանակի աճը Իրանի տնտեսության համար լուրջ հիմնախնդիր են ստեղծում բնակչությանը պարենամթերքով ապահովելու գործընթացում<sup>1</sup>:

Իրանը բավականին մեծ ջանքեր է գործադրում վերանշակող արդյունաբերության տարբեր ոլորտների ստեղծման և զարգացման համար: Համաձայն որոշ մասնագետների, նավթի արտահանումից ստացվող եկամուտները զգալի արժևորում են Իրանի ազգային արժույթը, որի արդյունքում նվազում է վերանշակող արդյունաբերության ոլորտի մրցունակությունը<sup>2</sup>:

Իրանը հանդիսանում է պողպատի ամենախոշոր արտադրողը Մերձավոր Արևելքի երկրների շարքում: Մյուս կողմից, չնայած արտադրության խոշոր ծավալներին, Իրանը համարվում է զուտ պողպատ ներմուծող երկիր: 2012 թ. տվյալներով Իրանը պողպատի արտադրության ծավալներով աշխարհում գրավում էր 21-րդ տեղը, իսկ ներմուծման ծավալով՝ 15-րդ տեղը<sup>3</sup>:

Մերձավոր Արևելքի երկրների շարքում Իրանը նաև գրավում է առաջատար դիրք ավտոմեքենաների արտադրությամբ, իսկ աշխարհում 2012 թ.՝ 17-րդ տեղը խոշորագույն արտադրողների շարքում (տարեկան մոտ 872 հազար ավտոմեքենա)<sup>4</sup>: Իրանը արտադրում է ինչպես մարդատար, այնպես էլ բեռնատար ավտոմեքենաներ: Այստեղ հարկ է նշել, որ Իրանի ավտոմոբիլաշինական գործարանները հաճախ ստիպված են արտադրության համար անհրա-

<sup>1</sup> Country Profile 2007: Iran / Economist Intelligence Unit, 2007.

<sup>2</sup> Այս մոտեցումը հիմնվում է տեսություն վրա, որը կոչվում է «Հոլանդական հիվանդություն»: Վերջինիս շրջանակներում 1977 թ. ներկայացվում է Նիդերլանդների վերանշակող արդյունաբերության ոլորտի զարգացումները 1960-ական թվականներին բնական գազի հայտնաբերումից հետո:

<sup>3</sup> International Iron and Steel Institute Statistical Yearbook, 2012 - <http://www.world-steel.org/dms/internetDocumentList/statistics-archiv/yearbook-archiv/Steel-Statistical-Yearbook-2013/document/Steel-Statistical-Yearbook-2012.pdf>

<sup>4</sup> World Motor Vehicle Production by Country and Type, Statistics for 2012 / International Organization of Motor Vehicles – <http://www.oica.net/category/production-statistics/2012-statistics> .

ժեշտ տարբեր մասեր ներմուծել այլ երկրներից, որը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ արտադրության մեջ չի կիրառվում ժամանակակից տեխնոլոգիաներ: Այդ պատճառով, չնայած արտադրության մեծ ծավալներին, ավտոմեքենաների տեղական պահանջարկը գերազանցում է առաջարկին: Նախկինում Իրանը կիրառում էր խիստ հովանավորչական քաղաքականություն ավտոմոբիլաշինության ոլորտում: 2006 թ. Իրանը զգալի նվազեցրեց ներմուծվող ավտոմեքենաների մաքսատուրքերը: Ներկայումս Իրանը ներմուծում է ինչպես մարդատար, այնպես էլ բեռնատար ավտոմեքենաներ, շինարարության և հանքարդյունաբերության մեջ օգտագործվող մեքենաներ:

1979 թ. հեղափոխությունից հետո Իրանի տնտեսության մեջ գործող բոլոր բանկերը ազգայնացվեցին, իսկ արտասահմանյան բանկերին արգելվեց գործունեություն ծավալել Իրանում: Վերջին տասնամյակի ընթացքում Իրանը որոշակի բարեփոխումներ է իրականացրել իր ֆինանսական ոլորտում, որոնք ներառում են ֆինանսական հատվածի սեփականաշնորհում և ազատականացում: 2001 թ. Իրանի Կենտրոնական բանկը հաստատեց արտոնագրեր երեք մասնավոր բանկերի համար: Ներկայումս Իրանի տնտեսության մեջ ֆինանսական հատվածում շարունակում են գերակշռել պետական բանկերը: Որոշ մասնագետների կարծիքով, Իրանի ֆինանսական հատվածը զսպում է երկրի ներսում գործարարությանը զբաղվելու մոտիվացիան և զգալի նվազեցնում երկրի գրավչության մակարդակը օտարերկրյա կապիտալի համար:

Ամփոփելով, կարող ենք նշել, որ կան մի շարք ներքին և արտաքին գործոններ, որոնցով էլ պայմանավորված են Իրանի տնտեսության զարգացման առանձնահատկությունները: Արտաքին գործոններից ամենագլխավորը, որը զգալի ազդեցություն է ունեցել և շարունակում է ունենալ Իրանի տնտեսության զարգացման վրա, դա ԱՄՆ կողմից կիրառվող տնտեսական պատժամիջոցներն են: Իհարկե, տնտեսական պատժամիջոցները բացասաբար են անդրադարձել Իրանի տնտեսության վրա: Մյուս կողմից հարկ է նշել, որ դրանք նաև Իրանին ստիպել են զարգացնել տեղական արտադրությունը և զգալի թուլացնել կախվածությունն արտաքին աշխարհից:

Անդրադառնալով Իրանի բիզնես միջավայրին, կարող ենք նշել, որ օտարերկրյա ներդրումների ցածր մակարդակը, առևտրի ֆինանսավորման դժվարությունները և նավթարդյունաբերության և զագարդյունաբերության ոլորտների զարգացման մարտահրավերները հիմնականում արդյունք են ԱՄՆ կողմից կիրառվող տնտեսական պատժամիջոցների:

Իրանի տնտեսության համար, որպես ներքին մարտահրավեր հանդիսանում է ազգային տնտեսության ոչ արդյունավետ կառավարման համակարգը, որը հիմնականում տնտեսության մեջ վիթխարի պետական հատվածի առկայության արդյունք է: 2005 թ. ի վեր Իրանի տնտեսության մեջ լուրջ աշխատանքներ են տարվում երկրի տարբեր տարածաշրջանների միջև տնտեսական զարգացման մակարդակների տարբերությունների կրճատման համար: Իրանի կառավարությունը փորձում է նավթից ստացված եկամուտները վերաբաշխելով կրճատել գործազրկության և աղքատության մակարդակները և այդ նպատակով իրականացնում է խթանող դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականություններ: Այստեղ հարկ է նշել, որ հաճախ շատ մասնագետներ քննադատում են այդ քաղաքականությունը, քանի որ ըստ նրանց դա տնտեսության մեջ բերում է

գործազրկության և ինֆլյացիայի ավելացման, այլ ոչ աղքատության մակարդակի կրճատման:

Իրանի տնտեսության մեջ ներքին մյուս մարտահրավերը դա տնտեսության կախվածությունն է նավթից ու գազից, որը հանդիսանում է կառավարության եկամտի հիմնական աղբյուրը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Իրանը չունի վերամշակող արդյունաբերության բավարար մակարդակ, երկիրը զգալի կախվածություն ունի ներմուծվող բենզինից: Այդ կախվածությունը թուլացնելու համար Իրանի կառավարությունը փորձում է ներգրավել օտարերկրյա ուղղակի ներդրումներ այդ ոլորտ:

Հարևան երկրների հետ Իրանի թույլ զարգացած արտաքին տնտեսական հարաբերությունները բացասաբար են ազդում Իրանի տնտեսության զարգացման վրա: Հարևան երկրներից կարելի է առանձնացնել հատկապես Թուրքիային: Թուրքիան բավականին զարգացած արտաքին տնտեսական և քաղաքական հարաբերություններ ունի արևմտյան երկրների հետ: Իրանի կառավարությունը մինչ օրս չի «վստահում» Թուրքիային<sup>1</sup>:

## ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում դիտարկվում են Իրանի տնտեսության զարգացումը պայմանավորող մի շարք ներքին և արտաքին գործոնները:

## АННОТАЦИЯ

### АЙРАПЕТЯН Г., АЙРАПЕТЯН В. – ВЫЗОВЫ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ ИРАНА

В статье рассматриваются современные вызовы, внешние и внутренние факторы, обуславливающие современное развитие экономики Ирана.

## SUMMARY

### HAYRAPETYAN G., HAYRAPETYAN V. – ECONOMIC DEVELOPMENT CHALLENGES OF IRAN

The article touches upon both external and internal determinants of the present development of the Iranian economy.

<sup>1</sup> Shirin Mirzeyev "Iran's Economy: On the Background of the New Sanctions" , Center for Economic and Social Development (CESD), 2012.

**ԳՐԻԳՐ ԴԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

տնտեսագիտության թեկնածու,  
ԵՊՀ միջազգային տնտեսական  
հարաբերությունների ամբիոնի դոցենտ  
Էլ. փոստ՝ [grigor.hayrapetyan@yahoo.com](mailto:grigor.hayrapetyan@yahoo.com)

**ՎԻԿՏՈՐԻԱ ԴԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

տնտեսագիտության թեկնածու,  
ՀՊ(Ս)Հ տնտեսության և ֆինանսների  
ամբիոնի ավագ դասախոս  
Էլ. փոստ՝ [hayrapetyanv@rambler.ru](mailto:hayrapetyanv@rambler.ru)

### ՏԵՔՍԻԼ ԵՎ ՀԱԳՈՒՄՏԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Թեթև արդյունաբերությունը համարվում է Հայաստանի ամենահին ոլորտներից մեկը: Խորհրդային միության տարիներին Հայաստանը համարվում էր հագուստի խոշորագույն մատակարարներից մեկը, իսկ տեքստիլ արդյունաբերությունը ապահովում էր ամենաշատ աշխատատեղերը: Տեքստիլ արդյունաբերության ոլորտում ներգրավված էին ավելի քան 115000 աշխատող, որը կազմում էր այդ ժամանակ ամբողջ աշխատուժի 25-30%<sup>1</sup>: Խորհրդային միության փլուզումից հետո, ձեռնարկությունների մեծ մասը զգալի կրճատեցին իրենց արտադրության ծավալները: Արտադրության ծավալների կրճատումը կապված էր բազմաթիվ գործոնների հետ, դրանցից հատկապես առավել ազդեցիկներն էին հումքի ձեռքբերման հետ կապված դժվարությունները, նախկին իրացման շուկաների հետ կապերի խզումը և նոր շուկաներ մուտք գործելու դժվարությունները: Լուրջ հիմնախնդիր էր միջազգային շուկայում մրցակցությանը դիմակայելը: Արդյունքում այս ոլորտի ձեռնարկությունները աշխատում էին օգտագործելով իրենց արտադրական հզորությունների միջինում 25-30%:

Հայաստանի թեթև արդյունաբերությունը բաղկացած է 3 հիմնական ոլորտներից՝ հագուստի արտադրություն (72%), կաշի կաշվից իրեր և կոշիկի արտադրություն (22%), տեքստիլի արտադրություն (6%): Հագուստի արտադրությունը բավականին մեծ ներուժ ունի արագ զարգանալու համար: Այսպես, հագուստի արտադրության ոլորտում գործող ընկերություններն իրենց արտադրանքի մինչև 100% արտահանում են, իսկ արտահանման հիմնական երկրներն են ԱՄՆ, Կանադա, Եվրոպա և ԱՊՀ երկրներ<sup>2</sup>: Ներկայումս այս ոլորտի ձեռնարկությունները սկսել են աշխատել եվրոպական և ամերիկյան գործընկերների հետ, իսկ այդ համագործակցության հիմքում ընկած են հայկական սփյուռքի կապերը և ջանքերը: Այստեղ հարկ է նշել, որ արտահանման հիմնական շուկան հանդիսանում է ԱՊՀ երկրները (հիմնականում Ռուսաստան), չնայած որ որոշ ընկերություններ,

<sup>1</sup> Textile and Apparel Industry in Armenia / Armenian Development Agency, 2012.

<sup>2</sup> Araksya Grigoryan, "Armenian Textile and clothing industry today and ways of development" Armenia Finance and Economy Journal, #6(144), 2012 - [http://www.fineco.am/pdfs/Araksya\\_Grigoryan.pdf](http://www.fineco.am/pdfs/Araksya_Grigoryan.pdf)

երբեմն, իրականացնում են արտահանում ԱՄՆ, Կանադա, Գերմանիա և Իտալիա: Այսինքն, եթե դեպի ԱՊՅ երկրներ տեղի ունի պարբերաբար արտահանում, ապա նույնը չենք կարող ասել մյուս երկրների համար: Մյուս կողմից, տեքստիլ և հագուստի ոլորտը բավականին աշխատատար ոլորտ է, որը ստեղծում է աշխատատեղեր ոչ բարձր որակավորում ունեցող և սովորաբար համեմատաբար էժան աշխատուժի համար: Ավելին, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ այս ոլորտում հիմնականում աշխատում են կանայք, ապա այս ոլորտի զարգացումը լուրջ սոցիալական խնդիրներ կարող է լուծել Հայաստանի համար:

Համաձայն ՀՀ 2012-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի արդյունաբերության առավել բարձր ներուժ ունեցող ճյուղերում, որտեղ նաև մտնում է թեթև արդյունաբերությունը, աշխատատեղերի ստեղծումը կիրականացվի հիմնականում մասնավոր հատվածի միջոցներով, իսկ պետության դերը կհանգի փոխառու ֆինանսական ռեսուրսների գնի իջեցմանը բերող քաղաքականության իրականացմանը, արտադրության և արտադրանքի որակի ապահովման և սերտիֆիկացման օժանդակությամբ, արտադրության համար անհրաժեշտ նյութերի և սարքավորումների ներմուծման գործընթացների էական պարզեցմանը և այլն<sup>1</sup>: Ռազմավարական ծրագրի մեջ նաև նշվում է, որ թեթև արդյունաբերությանը համապատասխան քաղաքականության դեպքում ունի էական ներմուծման փոխարինման ներուժ<sup>2</sup>:

*Աղյուսակ 1*

**Արդյունաբերական արտադրանքի ծավալն ըստ տնտեսական գործունեության տեսակների (մլն. դրամ)**

	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011
Ամբողջ արդյուն.	535264	651919	644862	716549	739292	669399	824430	998964
Տեքստիլ արդյուն.	2897	2300	2831	2127	1951	365	315	982
Կշիռը ընդ.	0.54	0.35	0.44	0.30	0.26	0.05	0.04	0.10
Հագուստի արդյուն.	2238	2143	2342	2649	3259	3726	3523	5575
Կշիռը ընդ.	0.42	0.33	0.36	0.37	0.44	0.56	0.43	0.56

*Աղբյուր՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2012 թ.:*

Ինչպես նկատում ենք աղյուսակ 1-ից 2004 թ. տեքստիլ արտադրանքի և հագուստի տեսակարար կշիռները ընդհանուր արդյունաբերության մեջ գրեթե եղել են հավասար: Դիտարկվող ժամանակահատվածի վերջում 2011 թ. հագուստի տեսակարար կշիռը մոտ հինգ անգամ գերազանցել է տեքստիլ արտադրանքի

<sup>1</sup> Այստեղ հարկ է նշել, որ ներուժ ունեցող ոլորտները այն ոլորտներն են, որտեղ կան արտադրական և արտահանման փորձ և համապատասխան կադրեր, և որտեղ երկիրը ունի որոշակի մրցակցային առավելություններ:

<sup>2</sup> ՀՀ 2012-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր // ՀՀ ֆինանսների նախարարություն, Երևան, 2012 թ. – <http://www.mfe.am/index.php?fi=78&lang=1>

տեսակարար կշռին: Տեքստիլ արտադրանքի թողարկման ծավալների կտրուկ նվազում է նկատվել հատկապես գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամի տարիներին: Ընդհանուր առմամբ տեքստիլ և հագուստի արդյունաբերության տեսակարար կշիռը միասին վերցրած դիտարկվող ժամանակահատվածում չի գերազանցել 1%:

## Աղյուսակ 2

### Արդյունաբերական կազմակերպությունների քանակն ըստ տնտեսական գործունեության տեսակների

	2009	2010	2011
Ամբողջ արդյուն.	2302	2484	2648
Տեքստիլի արդյուն.	18	20	21
Հագուստի արդյուն.	78	69	76

Աղբյուր՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012 թ.:

2011թ. տվյալներով տեքստիլ և հագուստի արդյունաբերության ոլորտում գործել են 97 ձեռնարկություններ (տես աղյուսակ 2): Տեքստիլ և հագուստի արդյունաբերության ոլորտում գործող ընկերությունները հիմնականում փոքր ու միջին ընկերություններ են: Այս ոլորտի խոշոր ընկերություններից կարելի է նշել «Գլորիա» (550 աշխատող), «Բազում» (300 աշխատող) և «Տոսպ» (145 աշխատող) ձեռնարկություններին: Ի դեպ, բոլոր երեք ընկերությունների արտադրանքը գրեթե ամբողջովին արտահանվում է: Այստեղ շուկան ի տարբերություն մյուս արդյունաբերության ոլորտների բավականին մրցակցային կարելի է համարել:

Եվրոպական հանձնաժողովը Էկորիս (Ecorys) ընկերության հետ 2012 թ. նոյեմբերին կնքել է պայմանագիր, որի համաձայն վերջինս իրականացրել է առևտրի կայունության ազդեցության գնահատում եՄ-ի և Հայաստանի Հանրապետության միջև խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու (ԽՀԱԱԳ) ստեղծման վերաբերյալ տարվող բանակցությունների շրջանակում<sup>1</sup>: Հետազոտության մեջ հատուկ բաժին է նվիրվել ՀՀ տեքստիլ և հագուստի արդյունաբերության ոլորտին: Այսպես, համաձայն հետազոտության ՀՀ արտահանման մեջ հենց տեքստիլ և հագուստի արդյունաբերության ոլորտին է սպասվում ամենաառաջնային աճ տոկոսային առումով (մոտ 370%): Տեքստիլ և հագուստի արդյունաբերության ոլորտի ավելացված արժեքը կաճի մոտ երկու անգամ (ավելի քան 207%), իսկ արտադրության ծավալները՝ մոտ երեք անգամ (290%)<sup>2</sup>: Ինչպես նկատում ենք այս ոլորտը զարգացման բավականին մեծ ներուժ ունի և ինչպես մենք արդեն նշել ենք, ոլորտի զարգացումը կարող է լուծել մի շարք սոցիալական խնդիրներ (աշխատատեղերի ստեղծում, հատկապես կանանց համար, ոչ որակյալ աշխատուժի ներգրավում, հատկապես գյուղական շրջաններից, տարածքի

<sup>1</sup> Սույն հետազոտության շրջանակներում Հայրապետյան Գրիգորը հանդիսացել է հայաստանյան փորձագետներից մեկը:

<sup>2</sup> Տես՝ <http://tsia.ecorys.com/armenia> - Ecorys: Ինտերնետային կայքն այցելվել է 25.09.2013 թ.:

համեմատաբար համաչափ զարգացում և այլն): Ինչպես նկատում ենք արդյուսակ 3-ից 2011 թ. տվյալներով տեքստիլ և հագուստի արդյունաբերության ոլորտում զբաղվածները կազմում էին ամբողջ արդյունաբերության մեջ զբաղվածների մոտ 3.7%

**Արդյուսակ 3**

**Արդյունաբերա-արտադրական անձնակազմի միջին տարեկան թվաքանակն ըստ տնտեսական գործունեության տեսակների (1000 մարդ)**

	2009	2010	2011
Ամբողջ արդյուն.	78.8	81.4	83.7
Տեքստիլի արդյուն.	0.2	0.2	0.2
Հագուստի արդյուն.	2.1	2.0	2.9

*Աղբյուր՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012 թ.:*

Թեթև արդյունաբերության զարգացումը կարող է ապահովել Հայաստանի տարածաշրջանների հարաբերականորեն համաչափ զարգացումը, ավելացնել զբաղվածության մակարդակը և բարելավել աշխատողների բարեկեցությունը, ինչպես նաև ստեղծել և զարգացնել փոքր բիզնես:

Տեքստիլ և հագուստի արդյունաբերության ոլորտի զարգացման հիմնախնդիրները և հնարավորությունները բացահայտելու համար մենք իրականացրել ենք հարցումներ այս ոլորտում գործող հինգ ընկերությունների հետ, ինչպես նաև որոշ հարցերի շուրջ տեղի է ունեցել քննարկում Էկոնոմիկայի նախարարության, Առևտրի և շուկաների կարգավորման վարչության պետ Քոչարյան Գագիկի հետ: Ստացված արդյունքների վերլուծությունը մեզ թույլ է տալիս ասել, որ հարցմանը մասնակցած բոլոր ընկերությունները, այլ հավասար պայմաններում, նշել են գրեթե նույն խոչընդոտները կամ հնարավորությունները տեքստիլ և հագուստի արդյունաբերության ոլորտի հետագա զարգացման համար:

Այսպես, տեքստիլ և հագուստի արդյունաբերության ոլորտում գործող ձեռնարկությունները հիմնականում չեն աշխատում իրենց արտադրական լրիվ հզորությամբ, քանի որ ունեն իրացման հետ կապված լուրջ խնդիրներ և հարկ եղած դեպքում կարող են մի քանի անգամ ավելացնել արտադրության ծավալները: Այս պարագայում հարցմանը մասնակցած ընկերությունները նոր շուկաների հասանելիությունը, հատկապես Եվրոպական շուկան լուրջ հնարավորություն են դիտարկում:

Տեքստիլ և հագուստի արդյունաբերության ոլորտի արտադրանքի հիմնական մասը արտահանվում է ԱՊՀ երկրներ ( հիմնականում Ռուսաստան): Եվրոպական շուկան կարևոր է, սակայն մեր ընկերությունների համար շատ բարդ է մուտք գործել եվրոպական շուկա: Եվրոպական շուկայում ապրանքների իրացման համար առկա են մի շարք տեխնիկական արգելքներ (հիմնականում արտոնագրեր և սերտիֆիկատներ), որի պատճառով ընկերությունները չեն կարողանում օգտվել արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգից (Generalized System of Preferences GSP+), որը տրամադրվել է Հայաստանին ԵՄ

կողմից<sup>1</sup>: Այստեղ հարկ է նշել, որ GSP+ արտոնությունների համակարգը Հայաստանին հնարավորություն է տալիս ԵՄ արտահանել 7200 ապրանքատեսակներ առանց որևիցե մաքսային վճարի<sup>2</sup>:

Տեքստիլ և հագուստի արդյունաբերության համար անհրաժեշտ ամբողջ հումքը ներմուծվում է: Ավելին, այն հիմնականում ներմուծվում է Թուրքիայից և քանի որ ՀՀ և Թուրքիայի միջև չկա որևէ միջպետական պայմանագիր արտաքին տնտեսական կապերը կարգավորելու, ապա ընկերությունները ապրանքը դեպի ԵՄ արտահանելու դեպքում չեն կարողանում օգտվել GSP+ արտոնությունների համակարգից, քանի որ չեն կարողանում ներկայացնել հումքի ծագման երկրի սերտիֆիկատը:

Զնայած տեքստիլ և հագուստի արդյունաբերության ոլորտում գործող ընկերությունների մեծ մասը իրենց արտադրանքը հիմնականում արտահանում են, նրանք կարող են նաև իրացնել իրենց արտադրանքը ներքին շուկայում: Այստեղ կա մեկ կարևոր հանգամանք: Նախ՝ տեղական շուկայում սպառողների վերաբերմունքը տեղական արտադրությանը և Թուրքիայից ներմուծվող տեքստիլ արտադրանքը և հագուստը: Վերջինս գրեթե ամբողջովին գրավել է տեղական շուկան:

Ոլորտի զարգացման հիմնական խնդիրներից մեկը շարունակում է մնալ այն, որ մենք չենք կարողանում ապահովել ամբողջական արժեքային շղթան կամ առնվազն դրա վերջին երկու փուլերը Հայաստանում: Այս ոլորտում արժեքային շղթան բաղկացած է երեք հիմնական փուլերից՝ 1. գյուղատնտեսություն, որն ապահովում է չնշակված հումքի ստացումը, 2. վերամշակող ոլորտ, որտեղ չնշակված հումքը վերամշակվում և ստանում է միջանկյալ ապրանքի տեսք և 3. վերջնական ապրանքի ստացման փուլ: Տեքստիլ և հագուստի արդյունաբերության համար անհրաժեշտ վերամշակված հումքը հիմնականում ներմուծվում է Թուրքիայից: Այսինքն՝ Հայաստանում մենք միայն ստանում ենք վերջնական արտադրանքը:

Տեքստիլ և հագուստի արդյունաբերության ոլորտում չի նկատվում կենտրոնացվածություն, ոլորտում չկան մենաշնորհային դիրք զբաղեցնող արտադրողներ: Ինչպես մենք արդեն նշել ենք, Հայաստանում տեքստիլ և հագուստի արդյունաբերության ոլորտում գործում են մոտ 97 հիմնականում փոքր ու միջին ձեռնարկություններ: Այսինքն, ոլորտում արդեն իսկ առկա մրցակցային պայմանները լուրջ հիմք կարող են հանդիսանալ ոլորտի հետագա արդյունավետ զարգացման համար:

Տեղական շուկան բավարար չափով տարողունակ չէ և ոլորտի հետագա զարգացումը միանշանակ կապված է արտահանման ընդլայնման հնարավորու-

<sup>1</sup> Համաձայն Եվրոպական Հանձնաժողովի 2008 թ. դեկտեմբերի 8-ի N938 որոշման՝ 2009 թ. հունվարի 1-ից, Հայաստանը հնարավորություն ստացավ օգտվել նաև Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգից (GSP+): Նախկինում Հայաստանը օգտվում էր միայն Արտոնությունների ընդհանրացված համակարգից (GSP): Ներկայումս համակարգից օգտվում է 16 երկիր: Այդ ընդլայնված արտոնությունները GSP կանոնակարգման ժամանակահատվածում պահպանելու նպատակով, Հայաստանը պետք է ապահովի կայուն զարգացման ու լավ պետական կառավարման վերաբերող Կանոնակարգում նշված միջազգային 27 գլխավոր կոնվենցիաների արդյունավետ իրագործումը:

<sup>2</sup> Տես՝ [http://eeas.europa.eu/delegations/armenia/eu\\_armenia/trade\\_relation/pref\\_reg\\_gsp/index\\_hy.htm](http://eeas.europa.eu/delegations/armenia/eu_armenia/trade_relation/pref_reg_gsp/index_hy.htm), Հայաստանում ԵՄ պատվիրակություն: Ինտերնետային կայքն այցելվել է 27.09.2013 թ.:

թյունների հետ: Ինչպես մենք արդեն նշել ենք, տեքստիլ և հագուստի արդյունաբերության համար ԱՊՀ երկրները ( հիմնականում Ռուսաստան) հանդիսանում են արտահանման հիմնական երկրներ: Այս համատեքստում ՀՀ հնարավոր անդամակցությունը Մաքսային միությանը (Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան) լուրջ խթան կարող է հանդիսանալ այս ոլորտի հետագա զարգացման համար:

## **ԱՍՓՈՓՈՒՄ**

Հոդվածում վերլուծվում է ՀՀ տեքստիլ և հագուստի արդյունաբերության ներկայիս վիճակը, մատնանշվում են դրա զարգացման հնարավորությունները և վեր են հանվում խոչընդոտող գործոնները:

## **АННОТАЦИЯ**

### **АЙРАПЕТЯН Г., АЙРАПЕТЯН В. – ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ ПРОИЗВОДСТВА ТЕКСТИЛЯ И ОДЕЖДЫ В РА**

В статье анализируется современное состояние производства текстиля и одежды в Армении, определяются возможные направления его развития, а также препятствующие факторы.

## **SUMMARY**

### **HAYRAPETYAN G., HAYRAPETYAN V. –TEXTILE AND CLOTHING SECTOR DEVELOPMENT ISSUES IN RA**

In the article the current situation in the Textile and Clothing Sector in Armenia is considered along with possible directions of its development revealing hindering factors.

**ԿՐԱՄԴԵՏ ԹՈՄԻԿՅԱՆ***տնտեսագիտության թեկնածու,**ԵՊՀ կառավարման և գործարարության ամբիոնի ասիստենտ**էլ. փոստ՝ karotomikyan@gmail.com***ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ  
ԳԱՂԱՏՄԱՆ ԴԻՄԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԶՅՈՒՄ**

Պետական գնումների համակարգի բարելավման գերնպատակը յուրաքանչ-յուր երկրում հանրային միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացումն է: Մեր կարծիքով, ոչ մի այլ նպատակ (ընդգծված կամ ոչ բացահայտ) չի կարող հակասել կամ խոչընդոտել գերնպատակի իրականացմանը: Հակառակ դեպքում, դա կարող է բացասական ազդեցություն թողնել նաև այլ տնտեսական երևույթների վրա:

Բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացման և տնտեսական մրցակցությանը չխոչընդոտելու նպատակով ՀՀ օրենսդրությանը<sup>1</sup> սահմանվում են պետական գնումներին մասնակցող սուբյեկտների որակական պահանջները, որոնք, ըստ էության, կարելի է բաժանել երեք խմբի՝

- մասնագիտական պահանջներ,
- տեխնիկական պահանջներ,
- ֆինանսական միջոցների առկայության պահանջ:

Կառավարության որոշմամբ՝ պետական գնումներին մասնակցող սուբյեկտների ֆինանսական միջոցների գնահատման լիազորությունը վերապահված է ֆինանսների նախարարին<sup>2</sup>: Վերջինս «ֆինանսական միջոցներ» չափանիշը որոշել է հետևյալ կերպ. այն կազմակերպությունները, որոնց համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված է պարտադիր աուդիտի ենթարկվելու պահանջ<sup>3</sup>, պետք է ունենան չձևափոխված (դրական) աուդիտորական եզրակացություն:

Վերոնշյալ չափանիշի առաջին բացթողումն այն է, որ ընկերությունները, ըստ էության, դասակարգված լինելով խոշոր և մանր կազմակերպությունների, հայտնվել են ոչ հավասար պայմաններում: Ոչ խոշոր կազմակերպությունները, որոնց համար ֆինանսական հաշվետվությունների աուդիտը պարտադիր չէ, փաստորեն, պետական գնումների տեսանկյունից ֆինանսապես չեն գնահատվում:

Երկրորդ, անհրաժեշտ է հասկանալ՝ ի՞նչ է իրենից ներկայացնում ֆինանսական հաշվետվությունների աուդիտը: ՀՀ օրենսդրության համաձայն, ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նպատակն է հնարավորություն ընձեռել

<sup>1</sup> ՀՀ օրենքը «Գնումների մասին», ընդ. 22.12.2010 թ., հոդված 5:

<sup>2</sup> «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 10.02.2011 թ. թիվ 168-Ն որոշումը:

<sup>3</sup> Ֆինանսական հաշվետվությունների աուդիտը ՀՀ-ում պարտադիր է այն ընկերությունների համար, որոնց նախորդ տարվա գործունեությունից հասույթը գերազանցում է 500 միլիոն ՀՀ դրամը, և/կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է 500 միլիոն ՀՀ դրամը:

աուդիտորին՝ կարծիք արտահայտելու այն մասին, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, կազմված են ՀՀ օրենսդրությանը համապատասխան: Աուդիտորական եզրակացությունն աուդիտ իրականացնող անձի կողմից կազմված փաստաթուղթ է, որում արտահայտվում է կարծիք՝ աուդիտի ենթարկվող անձի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ<sup>1</sup>: Գրեթե նույն սահմանումները տրված են մասնագիտական գրականությունում և աշխարհի խոշորագույն աուդիտորական ընկերությունների ինտերնետային կայքերում: Այսինքն, աուդիտորական եզրակացությունը ֆինանսական հաշվետվությունների օրինականությունը և հավաստիությունը հաստատող կամ կասկածի տակ դնող փաստաթուղթ է, ուստի աուդիտորական եզրակացությունն, ըստ էության, չի կարող գնահատել որևէ ընկերության ֆինանսական վիճակը:

Ըստ սահմանման, ֆինանսական ռեսուրսները այն դրամական ռեսուրսներն են, որոնք գտնվում են կազմակերպության տնօրինման տակ և նախատեսված են վերջինիս արդյունավետ գործունեության ապահովման, ֆինանսական պարտավորությունների կատարման և աշխատողների նյութական խթանման համար: Ֆինանսական միջոցները ձևավորվում են սեփական և ձեռք բերված դրամական ռեսուրսների հաշվին: Յուրաքանչյուր կազմակերպության ֆինանսական ռեսուրսների մեկնարկային աղբյուրը կանոնադրական (բաժնետիրական) կապիտալն է, իսկ գործող կազմակերպության ֆինանսական միջոցների ձևավորման աղբյուրը հիմնական և այլ գործունեություններից ստացված եկամուտները (շահույթը) են: Սահմագիտական գրականության մեջ տրված վերոնշյալ պարզ սահմանումներից կարելի է եզրակացնել, որ ընկերության ֆինանսական միջոցների առկայությունը և մեծությունը ոչ մի կերպ հնարավոր չէ ուղղակիորեն կապել այդ ընկերության գործունեության ֆինանսական հաշվետվությունների աուդիտի և աուդիտորական եզրակացության հետ:

Հետևաբար, մեր գնահատմամբ, չձևափոխված (դրական) աուդիտորական եզրակացությունը չի կարող արդյունավետորեն գնահատել կազմակերպության ֆինանսական միջոցները, այն, ինչի առկայությունը, համաձայն օրենսդրության, պահանջվում է պետական գնումների մասնակից սուբյեկտներից:

Վերոնշյալը հիմնավորենք հետևյալ փաստերով: Հայաստանի ամենախոշոր կազմակերպություններից մեկը՝ «Հայֆուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերությունը, 2012 թվականի գործունեության արդյունքներով ունեցել է 66,2 միլիարդ ՀՀ դրամի վնաս, որից՝ 46,7 միլիարդ դրամը գործառնական վնաս է: Սակայն աուդիտորական ընկերությունը «Հայֆուսգազարդ» ՓԲԸ ֆինանսական հաշվետվություններին տվել է դրական աուդիտորական եզրակացություն: Դա նշանակում է, որ անկախ նրանից, թե ինչպիսին է եղել տարվա ընթացքում ընկերության ֆինանսական վիճակը՝ տվյալ կազմակերպությունը գործել է թափանցիկ, և ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին:

Մյուս կողմից, մի շարք ընկերություններ 2012 թ. ընթացքում շահութաբեր գործունեություն են իրականացրել, սակայն տարբեր պատճառներով դրանց ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական եզրակացությունը կամ

<sup>1</sup> ՀՀ օրենքը «Աուդիտորական գործունեության մասին», ընդ. 26.12.2002 թ., հոդված 7, հոդված 14:

ձևափոխված է, կամ էլ վերապահումով է: Օրինակ, «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոնը 2012 թ. ընթացքում շուրջ 10 միլիոն դրամի զուտ շահույթ է ստացել, սակայն աուդիտորական կազմակերպությունը ձևափոխված կարծիք է ներկայացրել. «հիմնական միջոցները, բացառությամբ հողի, չեն վերագնահատվել, և 31.12.2012 թ. դրությամբ ներկայացված են սկզբնական արժեքով»: Իսկ 2012 թ. ընթացքում 994,7 միլիոն դրամի զուտ շահույթ ապահոված «Ռենկո Արմէստեյդ» ՍՊԸ ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական ձևափոխված կարծիքում մասամբ գրված է. «Ընկերության կողմից ներգրավված անտոկոս երկարաժամկետ փոխառությունները հաշվապահական հաշվեկշռում ներկայացված են 3,180,000 հազար դրամ գումարով, իսկ տրամադրված փոխառությունները՝ 10,387,766 հազար դրամ գումարով: Ղեկավարությունը փոխառությունները սկզբնական ճանաչումից հետո չի ներկայացրել ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, ինչը հանդիսանում է շեղում ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջներից: Նման հիմնավորում ունի նաև «Երևան հյուրանոց» ԲԲԸ ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական ձևափոխված կարծիքը (2012թ. ընթացքում ընկերության զուտ շահույթը կազմել է 424,7 մլն դրամ):

Իսկ օրինակ, «Ջրառատի թռչնաֆաբրիկա» բաց բաժնետիրական ընկերությունը, որը 2012 թ. մոտ 34 միլիոն դրամի զուտ շահույթ է ապահովել, դրական աուդիտորական եզրակացություն է ստացել, սակայն՝ վերապահումով, որովհետև ընկերությանը պատկանող հողամասերը գնահատված չեն եղել: Սուտ մեկ միլիարդ դրամ տարեկան շահույթ ստացած «Արաքս թռչնաֆաբրիկա» փակ բաժնետիրական ընկերությունը նույնպես վերապահումով դրական աուդիտորական եզրակացություն է ստացել, որում նշված է. «Ընկերությունն իրականացրել է թռչունների և պաշարների գույքագրում 31.12.2012 թ. դրությամբ: Սակայն ելնելով ընկերության հաշվապահական գրանցումների բնույթից և թռչունների ու պաշարների քանակից՝ մենք ի վիճակի չենք եղել այլ աուդիտորական ընթացակարգերի կիրառման միջոցով ինքներս համոզվել դրանց գնահատման մեջ, ինչպես նաև ձեռք բերել բավարար ապացույցներ դրանց քանակի վերաբերյալ»<sup>1</sup>:

Այսպիսով, վերոնշյալ օրինակներից կարելի է եզրակացնել, որ դրական աուդիտորական եզրակացությունը չի կարող կազմակերպության ֆինանսական միջոցների առկայության գնահատման հիմք հանդիսանալ: Եվ հակառակը, ոչ դրական աուդիտորական եզրակացությունը չի նշանակում, թե տվյալ կազմակերպությունը զուրկ է ֆինանսական ռեսուրսներից:

Իսկ ինչպե՞ս են այլ երկրներում գնահատում պետական գնումներին մասնակցող տնտեսվարող սուբյեկտների ֆինանսական հնարավորությունները: Դիտարկենք միջազգային փորձը: Նախ, նկատենք, որ ամենուր պետական գնումներին մասնակցող ընկերություններից օրենսդրությամբ պահանջվում է ֆինանսական միջոցների առկայություն: Տարբերությունը միայն վերջիններիս գնահատման մոտեցման մեջ է: Միջազգային առևտրի ոլորտում ՄԱԿ-ի համակարգի հիմնական իրավաբանական մարմինը՝ UNCITRAL-ը, մշակել է պետական կա-

<sup>1</sup> Տվյալները բերված են <http://www.azdarar.am> հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքից:

ռույցների կողմից ապրանքների (աշխատանքների) և ծառայությունների գնումների մասին տիպային օրենք, որով կարող են առաջնորդվել տարբեր երկրների կառավարությունները<sup>1</sup>: Թեև տիպային օրենքը պահանջում է պետական գնումների մասնակիցների ֆինանսական միջոցների առկայություն, սակայն դրանց հստակեցումը թողել է կառավարությունների որոշմանը:

Ֆինանսական միջոցների գնահատման գործընթացը, այնուամենայնիվ, որոշ բացեր ունի շատ երկրներում: Օրինակ, պետական գնումներին մասնակցող սուբյեկտների հնարավորությունները Ռուսաստանի Դաշնությունում կամ Ռազախստանում գնահատում են համապատասխան հանձնաժողովի անդամները: Կոնկրետ պահանջներ այս երկրներում չկան:

Սակայն, օրինակ, Ուկրաինայի օրենսդրությունը բավական հստակ սահմանում է պետական գնումների մասնակիցների որակական չափանիշները: Մասնավորապես, ֆինանսական հնարավորությունների առկայությունը նշանակում է, որ սուբյեկտը պետք է ներկայացնի հաշվապահական հաշվեկշիռ, ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների շարժի հաշվետվություններ, սպասարկող բանկից վարկային պարտավորությունների բացակայության (առկայության) մասին տեղեկանք<sup>2</sup>: Թեև այս ամենը նույնպես գնահատվում է համապատասխան հանձնաժողովի կողմից, այնուամենայնիվ, ուկրաինական օրենսդրությունը հստակ սահմանել է ֆինանսական միջոցների չափորոշման գործիքակազմ:

Եվրոպական խորհրդարանի և խորհրդի կողմից 2004 թ. մարտի 31-ին ընդունված Հրահանգում ևս սահմանվել են պետական գնումներին մասնակցող տնտեսվարող սուբյեկտների ֆինանսական միջոցները: Դրանք նույնպես որոշվում են ֆինանսական հաշվետվությունների, գործունեությունից ստացված հասույթի մեծության, վերջին 3 տարիների ընթացքում ընկերության շրջանառության ծավալների, սպասարկող բանկերից ստացված տեղեկանքների միջոցով<sup>3</sup>: Ֆինանսական միջոցների գնահատման այս մեխանիզմը գործում է մի շարք եվրոպական երկրներում, այդ թվում՝ Վրաստանում:

Հայաստանում պետական գնումների մասնակիցների ֆինանսական միջոցների չափորոշման գործընթացի հաջորդ բացասական կողմն այն է, որ այդ չափորոշման լիազորությունները, ըստ էության, վերապահված են բոլոր աուդիտորական ընկերություններին՝ անկախ վերջիններիս չափերից, գործարար համբավից, միջազգային հեղինակությունից: Իսկ աուդիտի ինստիտուտը Հայաստանում դեռ զարգացած չէ: Վերոնշյալը հիմնավորենք հետևյալ փաստով:

2013 թ. հուլիսի 15-ին ֆինանսների նախարարության աշխատակազմի աուդիտորական գործունեության հսկողության տեսչության կողմից արձանագրված խախտումների հիման վրա դադարեցվել էր «Էկոնոմիկս-Աուդիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիայի գործունեությունը: Ստուգման արդյունքներով բացահայտվել էր, որ մի շարք ընկերությունների ֆինանսական հաշվետվությունների

<sup>1</sup> UNCITRAL Model Law on Procurement of Goods, Construction and Services with Guide to Enactment, 1 July 2011, Article 6.

<sup>2</sup> Закон Украины "Об осуществлении государственных закупок", 1 июня 2010 г., статья 16.

<sup>3</sup> Directive 2004/18/EC of the European Parliament and the Council of 31 March 2004 on the coordination of procedures for the award of public works contracts, public supply contracts and public service contracts, Article 47.

աուդիտի արդյունքում տրամադրված աուդիտորական եզրակացությունները կազմվել են առանց աուդիտի ստանդարտներին համապատասխան աուդիտ անցկացնելու<sup>1</sup>: Այս հանգամանքը հետաքրքրական է թերևս նրանով, որ ֆինանսների նախարարության կողմից պարբերաբար հրապարակվող աուդիտի դրական կարծիք չունեցող իրավաբանական անձանց ցանկում կան այնպիսի ընկերություններ, որոնց աուդիտի ոչ դրական եզրակացությունը տրվել էր հենց «Էկոնոմիկս-Աուդիտ» ՍՊԸ կողմից: Փաստորեն, օրենսդրությամբ պետական գնումներին մասնակցող սուբյեկտների ֆինանսական միջոցները որոշող պետական լիազոր մարմինը՝ ֆինանսների նախարարությունը, հիմնվել է մեկ այլ սուբյեկտի կարծիքի վրա, որին հենց ինքը՝ նույն մարմինը, զրկել է համապատասխան լիցենզիայից:

Վերոնշյալ օրինակից կարելի է եզրակացնել, որ պետական գնումների արդյունավետության բարձրացման նպատակով առնվազն նախնական փուլում գործընթացի մասնակիցների որակավորման լիազորություններն անհրաժեշտ է վստահել կամ պետական մարմիններին, կամ էլ՝ տնտեսության առավել զարգացած ինստիտուտներին:

Հաջորդ բացասական էֆեկտը կապված է տնտեսական այլ երևույթների՝ մրցակցության սահմանափակման, գործարար համբավի վտանգման և երկրի ներդրումային գրավչության նվազման հետ: Հաշվի առնելով հանրային հատվածի բավական մեծ չափաբաժինը ՀՀ տնտեսությունում՝ (պետական բյուջեի ծախսերը կազմում են ՀՆԱ-ի մոտ 25 տոկոսը) կարելի է նշել, որ պետական գնումների ողջ գործընթացը զգալի ազդեցություն կարող է թողնել տնտեսական երևույթների վրա: Գնումների մասնակիցների որակական չափանիշների ոչ ճիշտ որոշումը կարող է եականորեն սահմանափակել տնտեսական մրցակցությունը: 25.09.2013 թ. դրությամբ՝ ՀՀ-ում պարտադիր ֆինանսական աուդիտ չանցած ընկերությունների թիվը կազմել է 288, իսկ աուդիտի դրական կարծիք չունեցողներինը՝ 201: Այսպիսով, մոտ 500 խոշոր ընկերություն, որոնց գործունեությունից տարեկան հասույթը գերազանցում է 500 միլիոն ՀՀ դրամը, զրկվում է պետական գնումներին մասնակցելու իրավունքից՝ ինչն էլ ինքնաբերաբար սահմանափակում է մրցակցությունն այս ոլորտում:

Բացի այդ, աուդիտորական եզրակացության հիման վրա «սպիտակ» և «սև» ցուցակներում հայտնված ընկերությունները, ըստ էության, դասակարգվում են պետական լիազորված մարմնի՝ ֆինանսների նախարարության կողմից, ինչն իրենից ենթադրում է վարկանշման գործընթաց: Իսկ պետական մարմնի կողմից տնտեսվարող սուբյեկտների վարկանշումն իրենից ներկայացնում է պետության կողմից տնտեսության միջամտության որոշակի գործիք, որի անզգույշ կիրառումը կարող է տարատեսակ բացասական ազդեցություն թողնել: Ընդ որում, այս դեպքում խոսքը վերաբերում է ոչ միայն ուղղակիորեն պետական գնումների մասնակցությանը, այլ՝ մասնավորապես, ընկերությունների գործարար համբավի վտանգմանը:

Մեկ հետաքրքրական փաստ ևս. Հայաստանում արդեն իսկ գործում է առևտրային ընկերությունների վարկանշման փորձը. վերջինս իրականացվում է

<sup>1</sup> ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական ինտերնետային կայք, <http://minfin.am/main.php?newid=2426&mode=news&lang=1>

Կենտրոնական բանկի կողմից: Ընդ որում, այդ վարկանշման մեթոդաբանական նույնպես հիմնվում է ֆինանսական հաշվետվությունների և աուդիտորական եզրակացության վրա<sup>1</sup>: 15.09.2013 թ. դրությամբ՝ Կենտրոնական բանկի կողմից վարկանշված ձեռնարկությունների ցանկում առաջին հորիզոնականը զբաղեցնում է «Ռեհնկո Արմենստեյդ» ՍՊ ընկերությունը, իսկ երրորդ հորիզոնականը՝ «Երևան հյուրանոց» ԲԲ ընկերությունը: Երկուսն էլ որոշակի ժամանակահատվածում գտնվում էին ֆինանսների նախարարության «սև» ցուցակում: Փաստորեն, տնտեսական քաղաքականություն մշակող և իրականացնող երկու խոշոր կառույց նույն մեթոդաբանական հակասական վարկանշում են իրականացնում, ինչը կարող է վտանգել տնտեսվարող սուբյեկտների գործարար հեղինակությունը:

Մյուս տեսանկյունից, հավանականություն կա, որ պետական գնումների մասնակիցների ֆինանսական միջոցների նկատմամբ ներկայացվող վերոնշյալ պահանջը կարող է բացասական ազդեցություն թողնել երկրի ներդրումային գրավչության վրա: Հիմնավորենք: «Սև» ցուցակում հայտնված ընկերությունների բաժնետերերը, պոտենցիալ ներդրողները, օտարերկրյա առևտրային գործընկերները, ովքեր ներդրում կատարելիս հաշվի են առնում պետական գնումներին մասնակցելու հնարավորությունը, կարող են արագորեն հրաժարվել այդ ընկերություններում ներդրելուց կամ համագործակցելուց: Ավելին, օտարերկրյա ներդրողների մոտ կարող է նվազել վստահությունը ՀՀ-ում գործող պետական տնտեսական քաղաքականության հանդեպ, ինչն էլ ավելի գլոբալ ազդեցություն կարող է թողնել տնտեսական զարգացման վրա:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել հետևյալը.

- աուդիտի դրական եզրակացության վրա հիմնված չափորոշման մեթոդն արդյունավետորեն չի արտահայտում ՀՀ-ում պետական գնումների մասնակից տնտեսվարող սուբյեկտների իրական ֆինանսական միջոցները,

- պետության կողմից իրականացվող տնտեսական քաղաքականության յուրաքանչյուր գործիքակազմի կիրառումը պետք է ունենա հստակ ձևակերպված նպատակ. այս պարագայում դա հանրային միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացումն է, հետևաբար աուդիտի ինստիտուտի զարգացումը, որպես նպատակ, հակասում է հիմնական նպատակին հասնելուն,

- պետական գնումների մասնակիցների ֆինանսական միջոցների չափորոշման գործող մեխանիզմը կարող է ունենալ նաև այլ բացասական ազդեցություն, մասնավորապես՝ տնտեսական մրցակցության սահմանափակում, առևտրային կազմակերպությունների գործարար հեղինակության վտանգում, երկրի ներդրումային գրավչության նվազում:

Հաշվի առնելով վերոնշյալ փաստարկները՝ առաջարկում ենք պետական գնումների իրականացման գործընթացում սուբյեկտների ֆինանսական ռեսուրսները գնահատել նրանց գործունեության ֆինանսական արդյունքների, ակտիվների և պարտավորությունների, ինչպես նաև հիմնական ֆինանսական ցուցանիշների հիման վրա: Ընդ որում, կարևոր է մշակել գնահատման հստակ համակարգ՝ հետազայում առանձին մասնակիցների նկատմամբ սուբյեկտիվ մոտեցում կիրառելու հնարավորությունից խուսափելու նպատակով:

<sup>1</sup> ՀՀ Կենտրոնական բանկի պաշտոնական ինտերնետային կայք, <https://www.cba.am/am/SitePages/oercreatingconditions.aspx>

Ֆինանսական միջոցների գնահատման համար տեղեկատվական հիմք պետք է հանդիսանան ֆինանսական հաշվետվությունները: Համաշխարհային պրակտիկայում, որպես կանոն, կազմակերպության ֆինանսական վիճակը գնահատելու նպատակով առանձնացնում են ցուցանիշների 4 խումբ, որոնք բնութագրում են ընկերության իրացվելիությունը, ֆինանսական կայունությունը, գործարար ակտիվությունը և եկամտաբերությունը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պետական գնումներին մասնակցելու տեսանկյունից ընկերությունների ֆինանսական վիճակի գնահատումն անհրաժեշտ է իրականացնել հնարավորինս հեշտ ու հստակ մեխանիզմներով՝ առաջարկում ենք գնահատման համակարգում կիրառել միայն հետևյալ ցուցանիշները.

- իրացվելիության ցուցանիշներ,
- վճարունակության ցուցանիշներ,
- ֆինանսական կայունության ցուցանիշներ:

Խոսելով իրացվելիության մասին՝ հասկանում ենք շրջանառու միջոցների այնպիսի մեծություն, որը տեսականորեն կբավարարի ընկերության կարճաժամկետ պարտավորությունների կատարման համար (թեկուզ պայմանագրերով նախատեսված ժամկետների խախտմամբ): Ուստի, իրացվելիության հիմնական բնորոշիչը կարճաժամկետ պարտավորությունների նկատմամբ շրջանառու միջոցների մեծության գերազանցումն է:

Վճարունակությունը ենթադրում է, որ կազմակերպությունը պետք է ունենա կրեդիտորական պարտքի անհապաղ մարման համար անհրաժեշտ դրամական միջոցներ և դրան համարժեք ռեսուրսներ: Հետևաբար, վճարունակության հիմնական ցուցանիշներն են՝ բանկային ընթացիկ հաշիվներին որոշակի գումարի առկայություն, ժամկետանց կրեդիտորական պարտքի բացակայություն:

Իսկ երկարաժամկետ հատվածում կազմակերպության ֆինանսական վիճակի գնահատման կարևոր բնութագրիչներից է ֆինանսական կայությունը, որը կապված է, առաջին հերթին, ընկերության ֆինանսական կառուցվածքի, փոխատուներից և ներդրողներից ընկերության կախվածության աստիճանի հետ: Այս առումով արդյունավետ ցուցանիշներ կարող են հանդիսանալ փոխառու և սեփական միջոցների հարաբերակցությունը, ընդհանուր պարտավորությունների մեջ փոխառու կապիտալի մասնաբաժինը:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Հողվածում դիտարկվում են Հայաստանում պետական գնումների մասնակիցների ֆինանսական միջոցների գնահատման առանձնահատկությունները և գործող մեթոդոլոգիայով ընկերությունների իրական ֆինանսական ռեսուրսների չափորոշման արդյունավետության մակարդակը, առաջարկվում է բարեփոխման ուղղությունը:

**АННОТАЦИЯ****ТОМИКЯН К. О. – ПРОБЛЕМЫ ОЦЕНКИ ФИНАНСОВЫХ СРЕДСТВ УЧАСТНИКОВ ГОСУДАРСТВЕННЫХ ЗАКУПОК В РА**

В статье рассматриваются особенности оценки финансовых средств участников государственных закупок в Армении и уровень эффективности определения реальных финансовых ресурсов компаний, с помощью действующей методологии. Предлагается направление её совершенствования.

**SUMMARY****TOMIKYAN K. – ISSUES OF FINANCIAL FUNDS EVALUATION OF THE PUBLIC PROCUREMENT PARTICIPANTS IN RA**

In the article the public procurement participants` financial funds evaluation peculiarities and level of efficiency by current real financial resources determination are of served methodology suggesting directions for improvement.

**ՏԻԳՐԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

*Ֆինանսահաշվային ամբիոնի ասպիրանտ  
«ՓրայսուոթերհաուսԿուլպերս Արմենիա» ՄԴԸ խորհրդատու  
Էլ.փոստ՝ Tigran\_199061@mail.ru*

**ԱՈՒԴԻՏԸ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Անցումային փուլում գտնվող ցանկացած երկրի տնտեսության հիմքը մասնավոր հատվածի առկայությունը, ձեռնարկատիրական գործունեության և ՓՄՁ-ի զարգացումն է: ՓՄՁ-ն նպաստում են մասնավոր սեփականատիրության և ձեռնարկատիրական ունակությունների զարգացմանը, ճկուն են և արագորեն հարմարվում են շուկայի շարունակ փոփոխվող պայմաններին, ստեղծում նոր աշխատատեղեր, բարձրացնում երկրի տնտեսական ակտիվությունը, ունեն էական նշանակություն արտահանման ու առևտրի ասպարեզներում: ՓՄՁ նաև զգալի դեր են խաղում նորարարական և բարձր տեխնոլոգիաների բնագավառներում. ճկունության և ստեղծագործական ունակությունների շնորհիվ դրանցից որոշները հետագայում վերածվում են խոշոր ձեռնարկությունների<sup>1</sup>:

ՓՄՁ ռազմավարական կարևորությունը պայմանավորված է դրանց բնորոշմի շարք առանձնահատկություններով, որոնցից հատկանշանականներն են.

- Առավել փոքր ներդրումների հաշվին և կարճ ժամանակահատվածում ՓՄՁ կարող են ապահովել զգալի թվով նոր աշխատատեղեր՝ լուծելով նաև սոցիալական մի շարք կարևոր խնդիրներ,

- նոր ՓՄՁ ստեղծմամբ էականորեն բարձրանում է խոշոր ձեռնարկությունների վերակառուցման և արդիականացման գործընթացի արդյունավետությունը,

- ՓՄՁ առավել արդյունավետ են օգտագործում տեղական հանքահումքային ռեսուրսները և նվազեցնում երկրի տնտեսության կախվածությունը ներմուծումից,

- ՓՄՁ համեմատաբար արագ և փոքր ծախսերով են ներդրվում ժամանակակից տեխնոլոգիաները և նորարարությունները,

- ՓՄՁ արտադրվող ապրանքատեսակները մրցակցության մեջ են մտնում ներմուծվող ապրանքատեսակների հետ՝ դրանք փոխարինելով տեղական արտադրանքով,

- շնորհիվ իրենց ճկունության՝ ՓՄՁ արագ են հարմարվում շուկայի պահանջներին՝ յուրացնելով նոր ապրանքատեսակների արտադրությունը և սպասարկման արդիական ձևերը,

- ՓՄՁ զարգացումը էապես նպաստում է տվյալ երկրում նպատակային տնտեսական քաղաքականության իրականացմանը,

<sup>1</sup>Steu Small and medium-sized enterprises in countries in transition / United Nations, 2003, p. 10.

• ՓՄՁ զարգացումը ժամանակակից հասարակության հիմքը կազմող միջին խավի ձևավորման և կայացման գրավականն է<sup>1</sup>:

ՓՄՁ առավելություններն են տնտեսական պայմաններին արագ հարմարվելու ունակությունը, գործունեության համեմատաբար մեծ ճկունությունը, որոշումների ընդունման և կատարման ազատությունը՝ պայմանավորված կառավարման ծախսերի ցածր մակարդակով, սեփական նախաձեռնությունների և հնարավորությունների դրսևորմամբ, ներդրումների համեմատաբար փոքր ծավալով, շուկայի պայմանների փոփոխությանն արագ արձագանքելով, ինչպես նաև սեփական կապիտալի համեմատաբար բարձր եկամտաբերությամբ<sup>2</sup>:

ՓՄՁ հակված են ինչպես խնայողություններ, այնպես էլ ներդրումներ կատարելուն, միշտունեն հաջողության հասնելու մեծ մոտիվացիա, ավելի լավ են պատկերացնում շուկայի պահանջումները, ինչպես նաև դրսևորում են մեծ ճկունություն ապրանքներ արտադրելու, աշխատանքներ կատարելու և ծառայություններ մատուցելու բնագավառներում:

Աշխարհում ՓՄՁ կազմում են ձեռնարկությունների գերակշիռ մասը՝ բիզնեսների 95՝ 99 տոկոսը<sup>3</sup>: 2012 թվականին Եվրոպական Միության տնտեսությունում ՓՄՁ թվաքանակը եղել է 20.7 միլիոն կամ բոլոր ձեռնարկությունների 98 տոկոսը՝ ապահովելով ՀՆԱ-ի 58 և բոլոր աշխատատեղերի 67 տոկոսը<sup>4</sup>:

ՓՄՁ-ունեն էական ՀՀ համախառն ներքին արդյունքի ձևավորման գործում: 2010 թ. ՓՄՁ տեսակարար կշիռը երկրի ՀՆԱ-ում կազմել է 43, արտահանման ծավալում՝ 17.9, իսկ ներմուծման ծավալում՝ 26.4 տոկոս: ՓՄՁ զարգացման ինդեքսը՝ որպես ընդհանրական (ագրեգացված) տնտեսական ցուցանիշ 2010 թվականին կազմել է 441.8, ինչը 2002 թվականի համեմատությամբ ավելացել է շուրջ 7.6 անգամ<sup>5</sup>:

Շուկայական տնտեսության պայմաններում բոլոր տնտեսվարող սուբյեկտները, այդ թվում նաև ՓՄՁ-ն, պայմանագրային հարաբերությունների մեջ են մտնում գույքի և ֆինանսական միջոցների օգտագործման, առևտրային գործարքների և ներդրումների իրականացման ճանապարհով: Այս հարաբերություններում վստահության ապահովման կարևորագույն պայմաններից մեկն այն է, որ պայմանագրի կողմերից յուրաքանչյուրը հնարավորություն ունենա ստանալ և օգտագործել ֆինանսական տեղեկատվություն, որի արժանահավատությունը հաստատված է անկախ աուդիտորական կազմակերպության կողմից:

Վստահելի տեղեկատվության առկայությունը թույլ է տալիս գնահատելու և կանխատեսելու տնտեսական տարբեր որոշումների հետևանքները: Տնտեսական հարաբերությունների թափանցիկության ապահովման և ՓՄՁ գործունեության արդյունավետության բարձրացման գործում չափազանց կարևոր է աուդիտորական ստուգումների դերը, քանի որ դրանց արդյունքները, ինչպես նաև օրենքի պահանջներին տնտեսվարող սուբյեկտների կողմից իրականացվող գործունեության համապատասխանության վերաբերյալ ինֆորմացիանանհրաժեշտ

<sup>1</sup> Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման քաղաքականության և ռազմավարության հիմնադրույթներ, Երևան, 2000, էջ 2:

<sup>2</sup> Ланюста М. Ф., Предпринимательство / М., 2006, с. 172.

<sup>3</sup> SMeS, Entrepreneurship and Innovation / OECD, 2010, p. 17.

<sup>4</sup> SMeS EU SMEs in 2012: at the crossroads / European Commission, September 2012, p. 9.

<sup>5</sup> Փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին աջակցության 2012 թ. ծրագիր / ՀՀ Կառավարություն, 2012, էջ 2:

են ոչ միայն հարկային և վերահսկող, այլև պետական համապատասխան իրավասու մարմիններին՝ իրենց հետաքրքրող տեղեկությունների արժանահավատությունը գնահատելու համար<sup>1</sup>:

ՓՄՁ ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների խմբերն՝ ըստ կազակերպության գործունեության մեջ ներդրման, փոխհատուցման պահանջի և վերլուծության օբյեկտի ներկայացված են աղյուսակ 1-ում: Հարկ է նշել, որ հավաստի տվյալներն անհրաժեշտ են ոչ միայն անմիջական սեփականատերերին, այլ նաև վարկատուներին՝ վարկային պայմանագրով սահմանված պարտավորությունների չկատարման ռիսկերը գնահատելու նպատակով: Մատակարարներին տեղեկատվությունը հետաքրքրում է՝ գնահատելու, թե արդյոք ՓՄՁ ժամանակին կմարի կրեդիտորական պարտքը: ՓՄՁ-ն աշխատակիցներին հետաքրքրում է գործունեության կայունության և շահութաբերության տեսանկյունից՝ սեփական զբաղվածության հեռանկարները, ինչպես նաև աշխատավարձի, հավելավճարների և պարգևների չափը գնահատելու համար: Կառավարությանը անհրաժեշտ է տեղեկատվություն տնտեսական քաղաքականություն մշակելու համար: Բացի այդ, գոյություն ունի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների մեկ այլ մեծ խումբ, որի առանձնահատկությունը այն է, որ դրանք անմիջականորեն հետաքրքրված չեն կազմակերպության գործունեության արդյունքներով: Այս խմբում ներառվում են աուդիտորական, խորհրդատվական և իրավաբանական ընկերությունները, բրոքերները և դիլերները, կարգավորող օրգանները, զանգվածային լրատվության միջոցները, գիտահետազոտական կազմակերպությունները, հասարակությունը:

*Աղյուսակ 1*

**ՓՄՁ ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների խմբերը**

Օգտագործողների խմբերը	Ներդրումը կազմակերպության գործունեության մեջ	Փոխհատուցման պահանջը	Վերլուծության օբյեկտը
1. Մենեջմենթ	Գործի իմացություն, ղեկավարման ունակություն	Աշխատանքի վարձատրություն և այլ արտոնություններ	Կառավարման համար օգտակար ողջ ինֆորմացիան
2. Անձնակազմ, աշխատողներ	Աշխատանքի կատարում՝ աշխատանքի բաշխմանը համապատասխան	Աշխատավարձ և սոցիալական պայմաններ	Ֆինանսական արդյունքներ
3. Մատակարարներ	Անհրաժեշտ նյութերի մատակարարում	Գործարքի գինը	Ֆինանսական դրությունը
4. Գնորդներ և հաճախորդներ	Ապրանքների և ծառայությունների իրացում	Գործարքի գինը	Ֆինանսական դրությունը
5. Սեփականատերեր	Անձնական կապիտալ	Շահաբաժիններ	Ֆինանսական արդյունքը և ֆինանսական դրությունը
6. Վարկատուներ	Փոխառու կապիտալ	Տոկոսներ	Իրացվելիություն

*\* Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ օգտվելով մասնագիտական գրականությունից:*

<sup>1</sup> Տե՛ս **Шермет А. Д.**, Аудит / М., 2006, с. 16.

Այսպիսով, աուդիտորական ստուգումներ անցած ֆինանսական հաշվետվություններն օգտագործողները ստանում են հիմնավորված վստահություն, որ դրանք զերծ են էական սխալներից և բացթողումներից: Արդյունքում բարձրանում է ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության աստիճանը՝ հանգեցնելով որոշումներ ընդունողների վստահության ամրապնդմանը<sup>1</sup>:

Աուդիտը շուկայական տնտեսության կարևորագույն ենթակառուցվածքներից մեկն է, որի գործունեության անհրաժեշտությունն առաջին հերթին պայմանավորված է այն հանգամանքով, որ ֆինանսական հաշվետվություններն օգտագործվում են հավասարակշռված տնտեսական որոշումներ կայացնելու համար: Ակնհայտ է, որ այդպիսի որոշումներ կայացվում են ինչպես սեփականատերերի, պոտենցիալ ներդրողների և մատակարարների, այնպես էլ պետական կառավարման մարմինների և հասարակության կողմից: Ավելին, որպես կանոն, տնտեսական որոշումներ կայացնողների մեծ մասը չի կարող գնահատել հաշվապահական հաշվառման արժանահավատության աստիճանը, քանի որ այդպիսով ձևավորված տեղեկատվությունը մատչելիության և մեկնաբանության առումով կապված է որոշակի դժվարությունների հետ: Միևնույն ժամանակ, ֆինանսական հաշվետվություններ օգտագործողների մեծ մասը զրկված է կազմակերպության ֆինանսական տեղեկատվության տիրույթ ազատ մուտք գործելու իրավունքից: Այդ իսկ պատճառով, հաշվապահական հաշվառման արժանահավատության աստիճանը հնարավոր է գնահատել միայն այդպիսի իրավունքի առկայության և համապատասխան արհեստավարժության դեպքում, երբ կիրառվում են դիտարկվող գործոնների մեկնաբանության և իրավիճակների գնահատման յուրահատուկ մոտեցումներ<sup>2</sup>:

Կազմակերպություններում, որտեղ մենեջերները և սեփականատերերը միևնույն մարդիկ են (ՓՄՁ), այսինքն՝ բացակայում է մեծ կազմակերպություններին բնորոշ շահերի բախումը, աուդիտի իրականացումը տալիս է մի շարք առավելություններ: Նշենք դրանցից մի քանիսը.

- շնորհիվ աուդիտորների կողմից գործարքների անկախ վերլուծության՝ գործընկերների միջև հնարավոր վեճերից խուսափելու հնարավորություն,
- շնորհիվ աուդիտորների կողմից կազմակերպության ֆինանսական վիճակի գնահատման մոր գործընկերների ներգրավում,
- շնորհիվ աուդիտորների կողմից հաստատված ֆինանսական տեղեկատվության՝ ֆինանսական օգնության ստացում,
- հարկային մարմինների հետ հարաբերությունների պարզեցում,
- կորպորատիվ կառավարման մշակույթի ներդրում, ռիսկերի մակարդակի նվազեցում և հավասարակշռված տնտեսական որոշումների կայացում,
- աուդիտի շնորհիվ օրենսդրական դաշտում սահմանված գործունեության ծավալում,
- տարբեր որոշումների կայացման և խնդիրների լուծման համար մասնագիտական օգնության ստացում:

Աուդիտորական ծառայությունները լայնորեն օգտագործվում են կառավարության, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կողմից: Աուդի-

<sup>1</sup> Տե՛ս **Kamal Gupta**, Contemporary auditing / Delhi, 2005, p. 9.

<sup>2</sup> Տե՛ս **Кочинев Ю. Ю.**, Аудит: Теория и практика / СПб., 2005, стр. 10.

տի տնտեսական հիմքերի ուսումնասիրությունը օգտակար է հասկանալու, թե ինչու է աուդիտը այդքան անհրաժեշտ ՓՄՁ, ինչպես նաև հասկանալու որոշ խնդիրներ, որոնց բախվում են աուդիտորները: ՓՄՁ աուդիտի անհրաժեշտությունը ցույց տալու համար դիտարկենք բանկի կառավարչի հնարավոր որոշումն որևէ ՓՄՁ-ի վարկ տրամադրելու վերաբերյալ: Որոշումը հիմնված պետք է լինի այնպիսի գործոնների վրա, ինչպիսիք են բանկի և ՓՄՁ նախկին ֆինանսական հարաբերությունները, ինչպես նաև դրա ֆինանսական վիճակը՝ արտահայտված ֆինանսական հաշվետվություններում: Եթե որոշում է ընդունվում տրամադրել վարկը, ապա վարկի տոկոսի մակարդակը որոշելիս բանկը, որպես կանոն, հաշվի է առնում հետևյալ երեք գործոնները<sup>1</sup>.

1. Ոչ ռիսկային տոկոսադրույքը: Սա գրեթե այն դրույքաչափն է, որը բանկը կվաստակեր, եթե տվյալ ՓՄՁ վարկային միջոցներ տրամադրելու փոխարեն դրանք ներդններ բարձր վարկային վարկանիշ ունեցող որևէ երկրի (օրինակ՝ ԱՄՆ, Գերմանիա) պետական պարտատոմսերում:

2. Վարկառուի տնտեսական ռիսկը: Սա կարող է դրսևորվել այն դեպքում, երբ ՓՄՁ չկարողանա մարել վարկը այնպիսի գործոնների ազդեցության հետևանքով, ինչպիսիք են տնտեսական անկումը, կառավարչական հակասական որոշումները կամ տնտեսական անսպասելի մրցակցությունը:

3. Տեղեկատվական ռիսկը: Սա կարող է դրսևորվել այն դեպքում, երբ տեղեկատվությունը, որի հիման վրա գնահատվել է տնտեսական ռիսկը, եղել է սխալ: Տեղեկատվական ռիսկի հնարավոր պատճառը ՓՄՁ ֆինանսական ոչ ճիշտ հաշվետվություններն են:

Աուդիտորները ուղղակիորեն չեն կարող ազդել ինչպես ոչ ռիսկային տոկոսադրույքի, այնպես էլ տնտեսական ռիսկի վրա, սակայն նրանք կարող են ազդել տեղեկատվական ռիսկի վրա: Եթե բանկի կառավարիչը համոզված է, որ տեղեկատվական ռիսկը բացառվում է, ապա վարկի ընդհանուր տոկոսադրույքը կարող է նվազել: Եթե նույնիսկ տեղեկատվական ռիսկը հնարավոր չէ ամբողջությամբ բացառել, ապա դրա նվազեցումը կարող է եական ազդեցություն ունենալ վարկային միջոցներ ստանալու հնարավորության, վարկային տոկոսադրույքի և հաջող բիզնես գործունեություն ծավալելու վրա:

Հարկ է նշել, որ ոչ մեծ ՓՄՁ մենեջմենթը և ֆինանսական հաշվետվություններն օգտագործողները կարող են որոշել, որ տեղեկատվական ռիսկը կարելի է պահել բարձր մակարդակի վրա, քանի որ տնտեսական արդյունավետության տեսանկյունից ավելի ձեռնառու է բարձր տոկոսադրույքներ վճարել, քան ավելացնել տեղեկատվական ռիսկի նվազեցմանն ուղղված ծախսերի մակարդակը, այդուհանդերձ համեմատաբար մեծ ՓՄՁ գտնում են, որ այսպիսի ծախսերը անհրաժեշտ են:

Գոյություն ունեն տեղեկատվական ռիսկի նվազեցման երեք հիմնական եղանակներ: Առաջին դեպքում օգտագործողը ստուգում է տեղեկատվությունը: Նա կարող է այցելել ՓՄՁ գրասենյակ և ստանալ հաշվետվությունների արժանահավատությունը հաստատող տեղեկատվություն: Այսպիսի ստուգումներ են իրականացնում, օրինակ, հարկային մարմինները: Երկրորդ դեպքում օգտագործողը մենեջմենթի հետ բաժանում է տեղեկատվական ռիսկը: Կան բազմաթիվ դատական նախադե-

<sup>1</sup> Տե՛ս **Alvin A. Arens**, Auditing: An integrated approach / New Jersey, 2001, p. 18.

պեր, որոնք հաստատում են, որ մենեջմենթը պատասխանատվություն է կրում օգտագործողներին հուսալի տեղեկատվություն տրամադրելու համար: Եթե օգտագործողները վստահում են սխալ ֆինանսական հաշվետվություններին և արդյունքում ֆինանսական վնասներ կրում, ապա դա հիմք է ծառայում մենեջմենթի նկատմամբ դատական գործ հարուցելու համար: Երրորդը՝ ֆինանսական հաշվետվությունների տրամադրումն է, որոնք ենթարկվել են աուդիտի: Հուսալի տեղեկատվություն ստանալու լավագույն միջոցը անկախ աուդիտի իրականացումն է: Այս միջոցով ստուգված տեղեկատվությունը օգտագործվում է որոշումներ կայացնելիս և համարվում ամբողջական, հավաստի և անաչառ:

Որպես կանոն, մենեջմենթը վարձում է աուդիտորին՝ օգտագործողների համար որպես երաշխիք այն բանի, որ իր ֆինանսական հաշվետվությունները հուսալի են: Եթե, ի վերջո, ֆինանսական հաշվետվությունը չի համապատասխանում իրականությանը, ապա աուդիտորը, ինչպես նաև մենեջմենթը, կարող են պատասխանատվության ենթարկվել: Աուդիտորների պրոֆեսիոնալ պարտականությունն է երաշխավորել ֆինանսական տեղեկատվության հուսալիությունը: Աուդիտորները իրենց աշխատանքի համար կրում են իրավական պատասխանատվություն:

Այսպիսով, աուդիտի դերն ու նշանակությունը հիմնականում պայմանավորված է տեղեկատվական ռիսկերի նվազեցման նպատակով գործնականում օգտագործվող նշված միջոցներով: Դրանք ընթացիկ փուլում, ըստ էության, հանդիսանում են կարևորագույն տնտեսական լծակ ՓՄՁ գործունեության արդյունավետության բարձրացման, ֆինանսական տեղեկատվության արժանահավատության ապահովման և ամենատարբեր տնտեսական որոշումների գնահատման համար:

## ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում բացահայտվում է աուդիտի դերն ու նշանակությունը փոքր և միջին ձեռնարկությունների ձևավորման, դրանց գործունեության արդյունավետության բարձրացման, տնտեսական շրջանառության մասնակիցների տեղեկատվական ապահովվածության, ինչպես նաև ընդունված որոշումների հիմնավորվածության գնահատման գործում:

## АННОТАЦИЯ

### АВETИСЯН Т. – АУДИТ НА МАЛЫХ И СРЕДНИХ ПРЕДПРИЯТИЯХ

В статье аргументируется важность аудита для формирования малых и средних предприятий, увеличения их экономической эффективности, обеспечения информацией участников экономического оборота, оценки основ принятых экономических решений.

## SUMMARY

### AVETISYAN T. –AUDIT IN SMALL AND MEDIUM ENTREPRISES

The article the role and function of the audit in forming small and medium enterprises, increasing their operating efficiency, providing information to participants of economic circulation, as well as substantiating assessment of economic decisions.

**ԼՈՒԻԶԱ ՇԱԴԲԱԶՅԱՆ**

*ԵՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի ասպիրանտ  
Էլ.փոստ՝ Shahbazyanlu@gmail.com*

### **ԱՌՌԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԴՅՈՒՄ**

Հայաստանի Հանրապետության ինտեգրացիոն գործընթացների հաջողությունը մեծապես կախված է միջազգային ֆինանսատնտեսական պահանջները բավարարող շուկայական միջավայրի ձևավորման հետ, որի կարևոր դրույթներից մեկն է հանդիսանում տնտեսական գործունեության բարենպաստ պայմանների ստեղծումը և գործունեության արդյունքների վերաբերյալ արժանահավատ տեղեկատվության մշակումն ու ներկայացումը: Նշված խնդիրների լուծման գործում իր կարևոր դերակատարումն ունի աուդիտորական գործունեությունը, ինչը, հատկապես ինտեգրացիոն և գլոբալիզացիոն գործընթացների ներկա փուլում, առավել մեծ ուշադրության է արժանի: Աուդիտի հիմնական նպատակը տնտեսական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների ֆինանսատնտեսական արդյունքների քանակական գնահատումն է, հիմնված չեզոքության և օբյեկտիվության սկզբունքների վրա: Ակնհայտ է, որ այդպիսի սկզբունքների վրա ներկայացված աուդիտորական եզրակացությունների առկայությունը, անշուշտ, կնպաստեն տնտեսավարող սուբյեկտների գործունեության նկատմամբ վստահության մակարդակի բարձրացմանը, հետևաբար նաև ներդրումային միջավայրի բարելավմանը և դրանով պայմանավորված, տնտեսության զարգացմանը: Ակնհայտ է նաև, որ նշված նպատակի իրականացումը հանրապետությունում հնարավոր է աուդիտի որակի բարձրացման, միջազգային ստանդարտներին և պահանջներին համապատասխանեցման անհրաժեշտ հիմքերի ստեղծման պարագայում միայն:

Այս առումով, կարծում ենք, որ Հայաստանի Հանրապետությունը աուդիտի ոլորտի կարգավորման հարցում պետք է հետևի զարգացած երկրների փորձին և ներդնի միջազգային պահանջներին և չափանիշներին համապատասխանող պահանջներ, մասնավորապես աուդիտորական գործունեության լիցենզավորման, աուդիտորի որակավորման, շարունակական մասնագիտական զարգացման, որակի վերահսկման, աուդիտորի անկախության և աուդիտորական եզրակացության օբյեկտիվության, տարեկան ֆինանսական հաշվետվությունների պարտադիր աուդիտի վերաբերյալ:

Եվրամիության պահանջներում կարևորելով մասնագիտական էթիկայի և գաղտնիության պահպանման պահանջը, առավել կարևորվում է անկախության և աուդիտորական եզրակացության օբյեկտիվության պահանջը: Ըստ էության նշված անկախության և օբյեկտիվության պահանջը սահմանում է, որ աուդիտ իրականացնելիս աուդիտորը կամ աուդիտորական ընկերությունը անկախ է այն սուբյեկտից, որի նկատմամբ իրականացվում է աուդիտը: Անկախության և գաղտնիության պահպանման հարցն անուղղակիորեն առնչվում է նույն ընկերությունում աուդիտ իրականացնող աուդիտորական ընկերության պարբերաբար փո-

փոխման հետ: Այս կապակցությամբ Հաշվապահների միջազգային դաշնությունը սահմանել է աուդիտորների փոփոխման համար ոչ ավելի քան հինգ տարին մեկ անգամ, իսկ աուդիտորական ընկերությունների համար՝ յոթ տարին մեկ:

ՀՀ-ում նման օրենսդրական պահանջ սահմանված չի, սակայն կարծում ենք, որ այդպիսի պահանջի առաջադրումը կնվազեցնեք աուդիտորական եզրակացության օբյեկտիվության և անկախության վտանգման ռիսկը:

Բացի վերոնշյալից, աուդիտը պետք է իրականացվի աուդիտի միջազգային ստանդարտների համապատասխան, ինչը դիտարկվել է ՀՀ-ում աուդիտի միջազգային ստանդարտների ներդրման հետ կապված հարցերի համատեքստում: Եթե աուդիտն իրականացվում է սահմանված պահանջների խախտմամբ, ապա անհրաժեշտ է կիրառել կարգապահական կամ այլ պատժամիջոցներ աուդիտորի կամ աուդիտորական ընկերության նկատմամբ: Պատժամիջոցների առումով ՀՀ իրավիճակը բավականին հստակ է: Այսինքն՝ սահմանված են տարբեր խախտումների համար, ինչպես նախազգուշացումներ և խախտումները վերացնելու հանձնարարականներ, դրամական պատժամիջոցներ, այնպես էլ հատուկ միջոցներ: Տուգանքների չափը սահմանված է 200000-600000 դրամ, որը կարծում ենք համադրելի չէ աուդիտորական ընկերությունների ստացած եկամուտների հետ:

Հայաստանի Հանրապետությունում աուդիտորական գործունեությունը, լիցենզիավորված գործունեության տեսակ, անկախությունից հետո ընկած ժամանակահատվածում, ունեցել է բավական արագ զարգացման միտումներ: Այսպես, 30.11.2013 թ. դրությամբ լիցենզավորված են 31 աուդիտորական կազմակերպություններ, ըստ որում չորսը՝ Քեյ Փի Էմ Ջի Արմենիան, Էրնսթ ընդ Յանգ, Փրայսուոթերհաուսկուպերս Արմենիա, Դելոյթ Արմենիա, Մեծ քառյակից են<sup>1</sup>: Ներկայումս ՀՀ-ում աուդիտի ոլորտում գործող ընկերությունները հիմնականում մասնագիտացված են հետևյալ ծառայությունների մատուցման մեջ՝

- բիզնես խորհրդատվություն,
- աուդիտ,
- հաշվապահություն:

Վերոնշյալ Մեծ քառյակի ընկերություններից երեքը հանդիսանում են տեղական աուդիտորական ընկերությունների գլխավոր մրցակիցներ: Ավելին, այդ ընկերությունները ընդգրկված են 2012 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսների ՀՀ հարկային ծառայության կողմից ներկայացված 1000 խոշոր հարկատուների ցանկում: Ըստ որում՝ Գրանթ Թորոնթոն 253.644,1, Քեյ Փի Էմ Ջի Արմենիա 219.081,1, Փրայսուոթերհաուսկուպերս Արմենիա 191.790,0, Փի Էյջ Փի Փարթնըրզ 92.667.0 հազար ՀՀ դրամ հարկային վճարներով (տե՛ս աղյուսակ 1):

<sup>1</sup> Տես՝ <http://www.minfin.am/index.php?hdr=209&lang=1>, կայքը այցելված է 12.12.13 թ.:

**Աղյուսակ 1**

**Աուդիտորական ընկերությունների դիրքը առաջին 1000 խոշոր հարկ վճարողների կազմում 2012 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսների դրությամբ**

N	Անվանում	Վճարած հարկերի մեծությունը/ հազար դրամ.
371	Գրանք Թորոնթոն	253.644,1
419	Քեյ Փի Էմ Ջի Արմենիա	219.081,1
473	Փրայսուոթերիաուսկուպերս Արմենիա	191.790.0
880	Փի Էյջ Փի Փարթնըրզ	92.667.0

Աղբյուրը՝ ԴՅ ԿԱ ՊԵԿ պաշտոնական կայք <http://www.taxservice.am/Content.aspx?itm=TILists>:

2012 թվականին հրապարակված ԴՅ աուդիտորական կազմակերպությունների կողմից մատուցված աուդիտորական ծառայությունների հաշվետվությունների վերլուծության արդյունքներով հնարավոր եղավ պարզել դրանցից յուրաքանչյուրի կողմից մատուցված ծառայությունների մասնաբաժինը ԴՅ աուդիտորական շուկայի կառուցվածքում, տե՛ս աղյուսակ 2:

**Աղյուսակ 2**

**Աուդիտորական կազմակերպությունների կողմից աուդիտի ենթարկված ընկերությունների թվաքանակը ԴՅ 2012 թ.**

Աուդիտորական կազմակերպություն	Ֆինանսական կազմ.	Հիմնադրամներ	Այլ կազմ.
«ՔԵՅ-ՓԻ-ԷՄ ՋԻ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ	8	0	22
«ՀԱՅԱՈՒԴԻՏ» ՍՊԸ	0	6	23
«ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ	5	8	49
«ԷՆ-ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ	3	7	77
«ԳՐԱԼԹ ԹՈՐՈՆԹՈՆ» ՓԲԸ	26	12	118
«ԱՈՒԴԻՏ-ՍԹԱՐ» ՍՊԸ	1	2	17
«ՍՕՍ-ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ	1	5	38
«ԹՄ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ	0	3	23
«ԼՈՆԴՈՆ ԲԻՋՆԵՍ ԳՐՈՒՊ» ՀՉ ՍՊԸ	0	9	17
«ԷՐՆՍԹ ԸՆԴ ՅԱՆԳ» ՓԲԸ	4	0	5
«ԷՅՎԻՍԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԸՆԴ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ	1	10	18
«ԲԵՅՔԵՐ ԹԻԼԼԻ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ	5	11	51
«ԷՅ-ԷՄ-ԷՅՋ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ	0	0	5
«ԱԿԱ-ԱՈՒԴԻՏ ՓԱՐԹՆԵՐՍ» ՍՊԸ	0	0	23
«ՓԸՐՖԵՔԹ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ	2	2	39
«ՓԻ-ԷՅՋ-ՓԻ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ	3	1	9
«ԼԵԳԱԼ-ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ	0	3	27
«ՖԻՆՏԵՆ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ	1	3	113
«ԹՐԱՍԹ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ	0	5	11
«ԷՅ ԷՖ ՋԻ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ	0	1	31

«ԱՌԴԴՏ ՍԸՓՈՐԹ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ	0	4	33
«ԷՅ-ԷՆ ԱՌԴԴՏ» ՓԲԸ	0	2	18
«ՊՐՈԳՐԵՍ ԱՌԴԴՏ» ՓԲԸ	0	9	68
«ԷԿՈՆՈՄԻԿՍ ԱՌԴԴՏ» ՍՊԸ	0	4	78
«ԶԻ ԸՆԴ ՔՈ. ԱՌԴԴՏ» ՍՊԸ	2	3	70
«ԶԵՆԵՐԱԼ ՍՏԱՆԴԱՐԴ ՔԸՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ	0	0	8

*Աղբյուրը՝ յուրաքանչյուր կազմակերպության պաշտոնական կայքում ներկայացված սպասարկած ընկերությունների ցանկից:*

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 2-ից, աուդիտորական շուկայի մասնակից ընկերություններից միայն 12 են մասնագիտական ծառայություն մատուցում ֆինանսական հատվածին: Ընդ որում՝ այդ 12 աուդիտորական ծառայություն մատուցող ընկերությունների մեջ 33 ֆինանսական հատվածում սպասարկող կազմակերպությունների քանակով առաջատար են՝ Քեյ Փի Էմ Զի Արմենիա, Գրանթ Թորոնթոն, Բեյքեր Թիլլի Արմենիա և Աուդիտ Սերվիս ընկերությունները: Սա մտահոգվելու առիթ է տալիս այն պատճառով, որ տնտեսության ֆինանսական կայունության ապահովման երաշխավոր հանդիսացող ֆինանսական համակարգը սպասարկվում է 4 ընկերությունների կողմից՝ ստեղծելով աուդիտորական ծառայությունների շուկայի ֆինանսական հատվածում գերիշխող դիրք: Հարկ է նշել, որ կազմակերպությունների գերիշխող դիրքը՝ պայմանավորված հասույթի մեծությամբ, տալիս է հակառակ պատկերը, այսինքն՝ շահույթի մեծ մասը զոյանում է ոչ ֆինանսական հատվածի կազմակերպություններին՝ աուդիտորական ծառայությունների մատուցման շնորհիվ: Ըստ 2012 թ. տվյալների վերը նշված 3 ընկերությունները, ըստ հասույթի մեծության, ստանում են 33 աուդիտորական շուկայի կողմից ստացված հասույթի մոտ 57.8%<sup>1</sup>: Ստացվում է, որ 33 աուդիտորական գործունեության շուկայում ձևավորված է խոշոր եռյակ, համապատասխանաբար՝ Գրանթ Թորոնթոն, ՔեՅ Փի ԷՄ ԶԻ ԱՐՄԵՆԻԱ և ԲԵՅՔԵՐ ԹԻԼԼԻ: Աուդիտորական գործունեության շուկայի կենտրոնացվածության մակարդակի գնահատման համար օգտագործվել է Հերֆինդալ Հիրշմանի գործակիցը: ՀՀԳ-ն, ըստ հասույթի, 2012 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ կազմել է 0.14 կան 1413, այսինքն՝ ՀՀ աուդիտորական գործունեության համակարգում կենտրոնացվածությունը կարելի է գնահատել միջին, իսկ 2011 թ. մոտ է եղել բարձրին՝ կազմելով 0,17 կան 1703:

Ընդհանրապես աուդիտորական գործունեության զարգացումը ՀՀ-ում և արտասահմանում ցույց է տալիս, որ աուդիտորներին ներկայացվում են բավականին խիստ պահանջներ: Սա մեծագույնս պայմանավորված է այդ ծառայություններից օգտվողների մեծ սպասումներով և սխալ տեղեկատվություն ստանալու ռիսկի մեծության նվազեցման ձգտումով: Այս տեսանկյունից հնարավորությունները մեծանում են այն դեպքում, երբ աուդիտորը մատուցում է որակյալ և պրոֆեսիոնալ ծառայություն: Վերոնշյալը ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ որակի արդյունավետ վերահսկողություն: Աուդիտորական ստուգումների

<sup>1</sup> Աղբյուրը՝ յուրաքանչյուր ընկերության պաշտոնական կայքում տեղադրված ֆինանսական հաշվետվությունները:

արդյունքը հանդիսանում է բազում որոշումների ընդունման երաշխավոր, հետևաբար աուդիտը զարգացած բոլոր երկրներում կարգավորվում է: ՀՀ-ում աուդիտորական գործունեությունը կանոնակարգվում է պետության կողմից: Անկախ մասնագիտական աուդիտորի կարծիքի արժանահավատության աստիճանը մեծապես կախված է աուդիտորական ընկերության որակի վերահսկման համակարգի կազմակերպումից և արդյունավետ գործունեությունից:

Ըստ էության ՀՀ-ում աուդիտի որակի վերահսկման մարմինների կազմը տարբեր է: Աուդիտի որակի առաջնային վերահսկողը պետական կարգավորող մարմինն է, հաջորդը՝ որակի ապահովման շահագրգիռ կողմ հանդիսացող մասնագիտական կարծիք օգտագործողները:

Ի դեպ Աուդիտի որակի բարձրացման նպատակով, ՀՀ կառավարության որոշմամբ, 2010 թ. ստեղծվել է Ֆինանսների նախարարության աուդիտորական գործունեության վերահսկման տեսչություն՝ որպես առանձին կառուցվածքային բաժին, որն օրենքով նախատեսված դեպքերում իրականացնում է վերահսկողական գործառույթներ աուդիտորական գործունեության իրականացման բնագավառում: Այդ տեսչության հիմնական նպատակն է աուդիտորական գործունեություն իրականացնող լիցենզավորված անձանց կողմից «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի և այլ օրենքների և նորմատիվ իրավական ակտերի պայմաններին հետևելու և պահանջները կատարելու նկատմամբ հսկողության իրականացումը: ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի աուդիտորական գործունեության հսկողության տեսչությունը իր նպատակների իրագործման համար պետք է իրականացնի աուդիտորական ծառայություններ մատուցող լիցենզավորված անձանց նկատմամբ հսկողություն, վերոնշյալ ծառայություններ իրականացնող անձանց կողմից թույլ տրված սխալների և խախտումների հաշվառում, քաղաքացիներից, կազմակերպություններից, պետական և ոչ պետական այլ մարմիններից ստացվող դիմումների ուսումնասիրություն և համապատասխան ընթացքի տրամադրում, ինչպես նաև օրենքով նախատեսված հաշվետվությունների ընդունում և ամփոփում<sup>1</sup>:

Հարկ է նշել, որ որակի վերահսկողության առումով ՀՀ պետական լիազոր մարմնի հրապարակումները շատ սուղ են, վերաբերում են միայն վերջին 5 տարիներին, և ընդգրկում հիմնականում զանձված տուրքերը և տուգանքները:

2007-2012 թթ. իրականացվել են թվով 22 աուդիտորական կազմակերպությունների գործունեության ստուգումներ: 2011 թ. ընթացքում ստուգումներ են իրականացվել երեք աուդիտորական ընկերություններում՝ «Կուտք աուդիտ» ՍՊԸ, «Սաթեն աուդիտ» ՍՊԸ և «Թրասք աուդիտ» ՓԲԸ, որի արդյունքում առաջին երկու ընկերությունների լիցենզիաների գործունեությունը դադարեցվել է<sup>2</sup>: 2012 թ. ընթացքում իրականացվել է մեկ ստուգում և մեկ վերստուգում համապատասխանաբար «ՍՕՍ աուդիտ» ՍՊԸ-ում և «Գրանք Թորոնթոն» ՓԲԸ-ում: ՀՀ տարածքում 31.08.2013 թ. դրությամբ լիցենզավորված են թվով 32 աուդի-

<sup>1</sup> Տե՛ս՝ ՀՀ կառավարության որոշում «ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի աուդիտորական գործունեության հսկողության տեսչություն ստեղծելու, տեսչության կանոնադրությունն ու կառուցվածքը հաստատելու և ՀՀ կառավարության 2008թ-ի մայիսի 15-ի N 503 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»:

<sup>2</sup> ՀՀ Ֆինանսների նախարարության պաշտոնական կայք՝

<http://www.minfin.am/main.php?lang=1&mode=hskum&partid=2&dzevid=3&iseng=1&isarm=1>,

տորական կազմակերպություններ, որոնցից մեկի գործունեությունը կասեցվել է (Ռեալ աուդիտ ՍՊԸ), 01.01.2013-31.08.2013 թթ. ժամանակահատվածում, դադարեցվել է 4 աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիայի գործողություն, աուդիտորական կազմակերպություններից գանձվել է ընդհանուր առմամբ 6.419.099 ՀՀ դրամ պետական տուրք<sup>1</sup>:

Որակի վերահսկման նկատառումներով 2010 թվականին ստեղծված աուդիտորական գործունեության վերահսկման տեսչության իրականացրած ստուգումների արդյունքում դադարեցվել և կասեցվել են մի շարք աուդիտորական ընկերությունների լիցենզիաներ: Սասնավորապես 2012 թվականին ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի աուդիտորական գործունեության հսկողության տեսչության կողմից իրականացվել է 1 ստուգում և 1 վերստուգում<sup>2</sup>: Բացի այդ պետք է հավելել նաև, որ ՀՀ Ֆինանսների նախարարի 2012 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 1027-Ա հրամանով հաստատվել է 2013 թվականին ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի աուդիտորական գործունեության հսկողության տեսչության կողմից 2013 թվականին իրականացվելիք ստուգումները, որով նախատեսվում է իրականացնել ստուգումների ծրագիրը՝ թվով 26 աուդիտորական ընկերություններում:

Այսպիսով՝ ակնհայտ է, որ հետագա տարիներին ՀՀ-ում պարտադիր աուդիտի ենթակա ընկերությունների թիվը բիզնես միջավայրի զարգացման և ընդլայնման պարագայում կմեծանա: Դա իր հետ կբերի խոշոր տնտեսվարողներին պարտադիր աուդիտի դաշտում ներգրավելու պայման և արդյունքում թույլ կտա ապահովելու ֆինանսական արդյունքների թափանցիկության մակարդակի բարձրացում, ինչպես նաև բիզնես միջավայրի բարելավում:

## ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում դիտարկվում է ՀՀ աուդիտորական գործունեության պրոբլեմային դաշտը: Առաջարկվում են բացահայտված խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներ:

## АННОТАЦИЯ

### ШАХБАЗЯН Л. – АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ АУДИТОРСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ РА

В статье рассматривается проблемное поле аудиторской деятельности РА и предлагаются меры по решению выявленных проблем.

## SUMMARY

### SHAHBAZYAN L. – ACTUAL PROBLEMS OF AUDIT IN RA

The author observes field of the auditing in RA and suggests measures to solve the revealed problems.

<sup>1</sup> ՀՀ Ֆինանսների նախարարության պաշտոնական կայքը՝ <http://www.minfin.am/main.php?lang=1&mode=blic&partid=2&dzevid=6&iseng=1&isarm=1>

<sup>2</sup> ՀՀ Ֆինանսների նախարարության պաշտոնական կայքը՝ <http://www.minfin.am/main.php?lang=1&mode=hskum&partid=2&dzevid=3&iseng=1&isarm=1>

**ԱԼԻՍԱ ՇԻՐԻՍԱՆՅԱՆ**

*ԵՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի հայցորդ  
Էլ. փոստ՝ aliceshir@gmail.com*

### **ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՁ**

«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի<sup>1</sup> ընդունման արդյունքում ներքին աուդիտի համակարգում կատարվել են արմատական լուրջ փոփոխություններ: Մասնավորապես, փոխվել են աուդիտորի ենթակայությունը, հաշվետվական համակարգը, շեշտադրվել են աուդիտի սկզբունքները՝ օբյեկտիվությունը, կարողունակությունը, գաղտնիությունը, անկախությունը և անկողմնակալությունը:

Գլխավոր ֆինանսիստն այլևս չի ղեկավարում գլխավոր աուդիտորին, փոխարենը ստեղծվել են ներքին աուդիտի ստորաբաժանումներ՝ կազմակերպության ղեկավարի ենթակայությամբ, և ներքին աուդիտի կոմիտեներ: Փոփոխություններ և լրացումներ են կատարվել նաև «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքում<sup>2</sup>, նախատեսելով, որ ներքին աուդիտորին պաշտոնի է նշանակում և ազատում տվյալ մարմնի ղեկավարը:

Առաջին հայացքից թվում է, թե ստեղծված են բոլոր նախադրյալները կատարյալ ներքին աուդիտի համակարգ ունենալու համար: Սակայն, մեր կարծիքով, տեսականորեն կարող են առաջանալ որոշակի ռիսկեր աուդիտի իրականացման ընթացքում, որոնք կարող են խոչընդոտել ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեության արդյունավետ իրականացմանը և սահմանված նպատակների իրագործմանը:

Այսպես, ներքին աուդիտի իրականացման հետ կապված ռիսկերը, համաձայն ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի ձեռնարկների և ներքին աուդիտի կանոնակարգի մշակման ուղեցույցների<sup>3</sup>, բաժանվում են երեք խմբի.

- աուդիտի ծախսողման ռիսկեր,
- սխալ հավաստիացում տալու ռիսկեր,
- հեղինակությունը վտանգող ռիսկեր (բարի համբավի վտանգման ռիսկ):

Այս ռիսկերից խուսափելու նպատակով՝ նշված ուղեցույցներում<sup>4</sup>, նախատեսվում է ապահովել ստորև ներկայացված գործընթացները.

<sup>1</sup> «Ներքին աուդիտի մասին» ՀՀ 17-Ն, <http://www.arlis.am>, <http://www.minfin.am>

<sup>2</sup> «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-272, 04.12.2001 թ., 15-րդ հոդված, 2.2-րդ կետ, [www.arlis.am](http://www.arlis.am)

<sup>3</sup> ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012 թ. «ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի ձեռնարկների և ներքին աուդիտի կանոնակարգի մշակման ուղեցույցները հաստատելու և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 934-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 143-Ն հրաման, 364-րդ կետ, <http://www.arlis.am>, <http://www.minfin.am>

<sup>4</sup> ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012 թ. «ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի ձեռնարկների և ներքին աուդիտի կանոնակարգի մշակման ուղեցույցները հաստատելու և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 934-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 143-Ն հրաման, 365-րդ կետ, <http://www.arlis.am>, <http://www.minfin.am>

1. ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատակիցների մասնագիտական որակավորումների, գիտելիքների, հմտությունների և այլ ունակությունների մանրակրկիտ ստուգման իրականացում,

2. որակի երաշխավորման և բարելավման ծրագրի իրականացում,

3. ներքին աուդիտի ստորաբաժանման ռազմավարական և տարեկան ծրագրերի արդյունավետ իրականացում, պարբերական վերանայում ու զնահատում,

4. ռիսկերի վերլուծության նպատակով կիրառվող չափորոշիչների պարբերական վերանայում,

5. աուդիտորական առաջադրանքի և գործողությունների ծրագրի արդյունքների ամփոփում և անհրաժեշտության դեպքում ռազմավարական ծրագրի վերանայում,

6. անկախության և օբյեկտիվության սկզբունքների անվերապահ պահպանում և վերահսկում,

7. ներքին աուդիտի ստորաբաժանման ռեսուրսների պարբերական վերազնահատում և պատշաճ բաշխում:

Այսպիսով, նպատակահարմար ենք գտնում ուսումնասիրել արդյո՞ք ներկայումս գործող ներքին աուդիտի համակարգում գործնականում առկա են վերոնշյալ ռիսկերը:

Սակայն մինչ այդ, անհրաժեշտ ենք համարում ուշադրություն դարձնել աուդիտի իրականացման հետ կապված ռիսկերից խուսափելու նպատակով առաջարկված 6-րդ և 7-րդ գործողություններին: Ներքին աուդիտի ստորաբաժանմանը ներկայացվող պահանջները սահմանող ՀՀ ֆինանսների նախարարի հրամանի<sup>1</sup> ուսումնասիրության արդյունքում կարելի է հանգել այն եզրակացության, որ գործնականում այն չի ընձեռում աուդիտի իրականացման հետ կապված ռիսկերի համար պատասխանատու անձանց կիրառել վերոնշյալ 6-րդ և 7-րդ կետերով սահմանված գործողությունները: Մասնավորապես, հիշյալ հրամանի համաձայն՝ ներքին աուդիտի ստորաբաժանումները ՀՀ նախարարություններում բաղկացած են առնվազն 3 հաստիքային միավորից, այլ պետական մարմիններում ու 15000 և ավելի բնակիչ ունեցող համայնքների աշխատակազմերում՝ առնվազն 2, իսկ 15000-ից պակաս բնակիչ ունեցող համայնքների աշխատակազմերում՝ առնվազն 1 հաստիքային միավորից<sup>2</sup>:

Հետագայում, այս պահանջներն ապահովելու նպատակով, արձակվեց ՀՀ վարչապետի հանձնարարական կազմակերպություններին՝ իրենց հաստիքների շրջանակներում ներքին աուդիտի ստորաբաժանում ստեղծելու մասին: Ի կատարումն այս հանձնարարականի կազմակերպությունները 2012 թվականի ընթացքում մեծ դժվարությամբ ստեղծեցին ներքին աուդիտի ստորաբաժանումներ՝ ապահովելով նվազագույն պահանջը, իսկ երբեմն շրջանցելով այն: Այսինքն, որոշ կազմակերպություններ ավելի քիչ հաստիքներ տրամադրեցին, քան սահ-

<sup>1</sup> ՀՀ ֆինանսների նախարարի 23.02.2012 թ. «Ներքին աուդիտի ստորաբաժանմանը և ներքին աուդիտի կոմիտեին ներկայացվող հիմնական պահանջները սահմանելու մասին» N-165-Ն հրաման <http://www.arlis.am>, <http://www.minfin.am>

<sup>2</sup> ՀՀ ֆինանսների նախարարի 23.02.2012 թ. «Ներքին աուդիտի ստորաբաժանմանը և ներքին աուդիտի կոմիտեին ներկայացվող հիմնական պահանջները սահմանելու մասին» N-165-Ն հրաման, 2-րդ կետ <http://www.arlis.am>, <http://www.minfin.am>

մանվել էր, մյուսները ստեղծեցին ստորաբաժանումներ, սակայն հաստիքները չհամալրեցին, իսկ որոշ պետական մարմիններ ընդհանրապես չստեղծեցին ներքին աուդիտի ստորաբաժանում՝ պատճառաբանելով, որ ազատ հաստիքներ չկան: Արդյունքում, ներքին աուդիտի ստորաբաժանումներ ստեղծվեցին 53 պետական կառավարման մարմիններում և 45 քաղաքային համայնքներում, իսկ ներքին աուդիտորի հաստիքների ընդհանուր թիվը կազմեց 246:

Նշված հրամանը սահմանել է նաև դրույթ<sup>1</sup>, համաձայն որի այն համայնքները, որտեղ հնարավոր չէ ստեղծել ներքին աուդիտի ստորաբաժանում կարող են կազմակերպել ներքին աուդիտի գործառույթի ապահովումն այլ համայնքի ներքին աուդիտի ստորաբաժանման միջոցով՝ փոխադարձ համաձայնությամբ: Այն դեպքում, երբ հնարավոր չի լինի ձեռքբերել որևէ համայնքի համաձայնությունը ներքին աուդիտի գործառույթի ապահովման հարցում, այն կարող է իրականացվել տվյալ վարչական շրջանի մարզպետարանի ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից:

Փաստորեն, ստացվում է, որ համայնքին հնարավորություն է տրված ներքին աուդիտի ծառայությունը ձեռք բերել այլ համայնքներից: Տվյալ դեպքում անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ ներքին աուդիտի որակին, եթե հաշվի առնենք, որ համայնքի աուդիտորը գործում է միայնակ, ինչի հետևանքով աուդիտի ընթացքում դրսևորած մասնագիտական գիտելիքները, սովորաբար, չեն բավարարում, և միևնույն ժամանակ աուդիտի ենթակա գործառույթները բազմաթիվ և տարաբնույթ են: Բացի այդ, նման իրավիճակում, կարծում ենք, որ ներքին աուդիտը կվերափոխվի արտաքին աուդիտի, ընդ որում այն մարմնի (համայնքի) կողմից, որը դիտարկվող համայնքի նկատմամբ հսկողության կամ ստուգման որևէ իրավասություն չունի:

Այժմ դիտարկենք համայնքին տրված մյուս այլընտրանքը, այն է. համայնքը որը չի կարող ստեղծել ներքին աուդիտի ստորաբաժանում, կարող է այդ ծառայությունները ձեռք բերել մարզպետարանից, որի վարչական սահմաններում գտնվում է: Իսկ այս դեպքում ստացվում է, որ մարզպետարանը, որը հանդիսանում է պետական կառավարման մարմին, կարող է ներքին աուդիտի իր ստորաբաժանման միջոցով ապահովել ներքին աուդիտի գործառույթի իրականացումը տեղական ինքնակառավարման մարմնում՝ քաղաքապետարանում (համայնքում): Այստեղ կարող ենք եզրակացնել, որ մարզպետարանի ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատակիցների կողմից համայնքում ներքին աուդիտի կատարման արդյունքում կազմված հաշվետվությունը կներկայացվի մարզպետին, որին նրանք հաշվետու են համաձայն ներքին աուդիտի օրենսդրության պահանջների: Այնուհետև, կարծում ենք, որ մարզպետը, ներքին աուդիտի փուլերի հաջորդականության ապահովման նպատակով, ստանալով քաղաքապետարանում կատարված ներքին աուդիտի հաշվետվությունը, միջոցառումներ պետք է ձեռնարկի հայտնաբերված թերությունները կամ խարդախությունները (եթե դրանք առկա են) վերացնելու ուղղությամբ: Գտնում ենք, որ ստեղծված իրավիճակը փոքր ինչ անհասկանալի է, քանի որ ստացվում է, որ մարզպետը պետք է պատասխանատվություն կրի քաղաքապետարանում հայտնաբերված ռիսկերի

<sup>1</sup> ՀՀ ֆինանսների նախարարի 23.02.2012 թ. «Ներքին աուդիտի ստորաբաժանմանը և ներքին աուդիտի կոմիտեին ներկայացվող հիմնական պահանջները սահմանելու մասին» N-165-Ն հրաման, 2.1. կետ <http://www.arlis.am>, <http://www.minfin.am>

վերացման համար: Միանշանակ կարելի է ասել, որ ոչ ներքին աուդիտի միջազգային լավագույն փորձը, ոչ էլ ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի, ինչպես նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի միջև իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրությունը չեն նախատեսում պահանջներ, համաձայն որոնց պետական կառավարման մարմնի ղեկավարը պատասխանատու է տեղական ինքնակառավարման մարմնում կատարված ներքին աուդիտի արդյունքում հայտնաբերված թերությունների և խախտումների վերացման համար:

Ինչ վերաբերում է հանրային հատվածի այլ կազմակերպություններին՝ ՊՈԱԿ-ներին, ՀՈԱԿ-ներին, պետական կամ համայնքային հիմնարկներին, 50%-ից ավելի պետական և համայնքային մասնակցությամբ ՓԲԸ-ներին, ապա այստեղ «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքից բխող ներքին աուդիտի համակարգի առկայության պահանջը<sup>1</sup> հիշյալ հրամանում կարգավորված է հետևյալ կերպ<sup>2</sup>. ներքին աուդիտի համակարգը նշված մարմիններում գործում է դրանց ընդհանուր կառավարումը կամ բաժնետոմսերի կառավարման լիազորություններն իրականացնող պետական մարմնի կամ համայնքի (վերադաս մարմնի) ղեկավարի ենթակայությամբ:

Որպես օրինակ կարող ենք դիտարկել «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն, որտեղ ներքին աուդիտի գործառնությունը, հրամանի պահանջներին համաձայն, պետք է իրականացնի ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության ներքին աուդիտի ստորաբաժանումը և հաշվետվությունը ներկայացնի ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարին:

Այստեղ, նախևառաջ, նպատակահարմար է անդրադառնալ «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքին<sup>3</sup>, որտեղ նշվում է, որ ներքին աուդիտի համակարգը գործում է կազմակերպության ղեկավարի ենթակայությամբ: Այսինքն, կարելի է ասել է, որ վերը նշված հրամանում սահմանված դրույթը հակասում է Օրենքում սահմանված այս դրույթին, քանի որ հիշյալ մարմիններն ունեն իրենց ղեկավարները և վերադաս մարմինների ղեկավարները չեն հանդիսանում ուսումնասիրվող մարմինների ղեկավարներ: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ նման իրավիճակում լիազորված մարմինները նշված կազմակերպություններում իրականացնում են արտաքին աուդիտ, քանի որ աուդիտորները հաշվետվությունները ներկայացնում են ոչ թե այն կազմակերպության ղեկավարին, որտեղ իրականացվում է ներքին աուդիտ, այլ վերադաս կազմակերպության ղեկավարին:

Ինչ վերաբերում է ներքին աուդիտի կազմակերպման ընթացակարգերին, ապա հրամանում<sup>4</sup> դրանց վերաբերյալ մասնավորապես նշվում է, որ վերոնշյալ

1 «Ներքին աուդիտի մասին» ՀՅ 17-Ն, 2-րդ հոդված, 1-ին կետ, <http://www.arlis.am>, <http://www.minfin.am>

2 ՀՀ ֆինանսների նախարարի 23.02.2012 թ. «Ներքին աուդիտի ստորաբաժանմանը և ներքին աուդիտի կոմիտեին ներկայացվող հիմնական պահանջները սահմանելու մասին» N-165-Ն հրաման, 3-րդ կետ, <http://www.arlis.am>, <http://www.minfin.am>

3 «Ներքին աուդիտի մասին» ՀՅ 17-Ն, 5-րդ հոդված, 1-ին մաս, <http://www.arlis.am>, <http://www.minfin.am>


4 ՀՀ ֆինանսների նախարարի 23.02.2012 թ. «Ներքին աուդիտի ստորաբաժանմանը և ներքին աուդիտի կոմիտեին ներկայացվող հիմնական պահանջները սահմանելու մասին» N-165-Ն հրաման, 4-րդ, 5-րդ կետեր, <http://www.arlis.am>, <http://www.minfin.am>

մարմիններում ներքին աուդիտի գործառույթն իրականացնում են հրավիրված անձինք: Հրավիրված անձինք, վերադաս մարմինների ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատակիցները և որպես փորձագետ ներգրավված մասնագետներն են, ովքեր ընդգրկված են Օրենքով նախատեսված որակավորված ներքին աուդիտորների ցանկում<sup>1</sup>: Վերջիններս գործուղվում են վերադաս մարմնի ղեկավարի կողմից:

Ընդ որում, վերադաս մարմնի ղեկավարը պետք է ապահովի ներքին աուդիտի ստորաբաժանման առնվազն մեկ աշխատակցի գործուղված լինելը բաժնետոմսերի հիսուն տոկոսից ավելի պետական կամ համայնքային մասնակցությամբ այն կազմակերպություններ, որոնց նախորդ տարվա շրջանառությունը կամ համախառն եկամուտը գերազանցել է 2 մլրդ ՀՀ դրամը, ինչպես նաև պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ, որոնց ընթացիկ տարվա նախահաշվի ընթացիկ ծախսերը գերազանցում են 2 մլրդ ՀՀ դրամը կամ աշխատակիցների (ներառյալ պայմանագրային հիմունքներով) թվաքանակը գերազանցում է 200-ը<sup>2</sup>:

Հանրային հատվածի կազմակերպություններում ներքին աուդիտի գործառույթի ապահովման մեխանիզմը ներկայացված է ստորև պատկերված գծապատկեր 1-ում և գծապատկեր 2-ում<sup>3</sup>:

*Գծապատկեր 1*




<sup>1</sup> «Ներքին աուդիտի մասին» ՀՕ 17-Ն, 13-րդ հոդված, 4-րդ մաս, 5-րդ կետ, <http://www.arlis.am>, <http://www.minfin.am>

<sup>2</sup> ՀՀ ֆինանսների նախարարի 23.02.2012 թ. «Ներքին աուդիտի ստորաբաժանմանը և ներքին աուդիտի կոմիտեին ներկայացվող հիմնական պահանջները սահմանելու մասին» N-165-Ն հրաման, 5-րդ կետ, <http://www.arlis.am>, <http://www.minfin.am>

<sup>3</sup> Գծապատկերները մշակված են հեղինակի կողմից:

*Գծապատկեր 2<sup>1</sup>*



Այսպիսով ուսումնասիրության արդյունքում, կարելի է հանգել այն եզրակացության, որ անկախ հրամանի վերը ներկայացված դրույթներում սահմանված պահանջներից՝ նշված ՓԲԸ-ներում և ՊՈԱԿ-ներում ներքին աուղիտի գործառույթի կազմակերպման մասով օրենսդրության մեջ, այնուամենայնիվ, առկա է հակասություն, քանի որ

1. սահմանափակվում են հրավիրված անձանց շրջանակները. ստացվում է, որ հրավիրված անձինք են համարվում միայն վերադաս մարմնի ներքին աուղիտի ստորաբաժանման որակավորված աուղիտորները.

2. վերադաս մարմնի ներքին աուղիտի ստորաբաժանման գործուղված աշխատակիցներն աուղիտորական աշխատանքներն իրականացնում են իրենց կազմակերպության ղեկավարի հսկողության, ղեկավարության և պատասխանատվության ներքո:

Իսկ ինչ վերաբերում է ՓԲԸ-ների և ՊՈԱԿ-ների վերը նշված շրջանակներում չընդգրկված մնացած կազմակերպություններում ներքին աուղիտի գործառույթի ապահովմանը, ապա հրամանում նախատեսվում է, որ գործառույթը վերադաս մարմնի ղեկավարի որոշմամբ կարող է պատվիրվել այն մասնավոր կազմակերպություններին, որտեղ աշխատում են հանրային հատվածի առնվազն 3 որակավորված ներքին աուղիտոր<sup>2</sup>:

Այստեղից հետևում է, որ նույնիսկ այն կազմակերպություններում, որոնց այս հրամանով թույլատրվում է ներքին աուղիտի ծառայությունները ձեռք բերել մաս-

<sup>1</sup> Այս գծապատկերը համապատասխանում է այն համայնքներին, որտեղ առկա է ներքին աուղիտի ստորաբաժանում:

<sup>2</sup> ՀՀ ֆինանսների նախարարի 23.02.2012 թ. «Ներքին աուղիտի ստորաբաժանմանը և ներքին աուղիտի կոմիտեին ներկայացվող հիմնական պահանջները սահմանելու մասին» N-165-Ն հրաման, 6-րդ կետ, <http://www.arlis.am>, <http://www.minfin.am>

նավոր կազմակերպություններից, այդ մասին որոշումը, ամեն դեպքում, կայացնում է վերադաս մարմնի ղեկավարը: Փաստորեն, հիմք ընդունելով վերոգրյալը, կարելի է եզրակացնել, որ ՊՈԱԿ-ներում, ՀՈԱԿ-ներում, պետական կամ համայնքային հիմնարկներում, 50%-ից ավելի պետական և համայնքային մասնակցությամբ ՓԲԸ-ներում ներքին աուդիտի համակարգի ներդրումը կարգավորող ներկայացված դրույթները վկայում են այն մասին, որ նշված կազմակերպություններն, ի թիվս այլ վերահսկողությունների, ՀՀ կառավարության կողմից ենթարկվում են ևս մեկ՝ ներքին աուդիտի ստորաբաժանմանը ներկայացվող պահանջների մասին հրամանով պարտադրված՝ վերահսկողության, որը, կարծում ենք, պարունակում է մեծ կոռուպցիոն ռիսկեր:

Մեր կարծիքով, ուսումնասիրվող հրամանում սահմանված որոշ դրույթներ նախադրյալներ են պարունակում ներքին աուդիտի ծախսողման ռիսկի առաջացման համար, քանի որ սահմանված նվազագույն հաստիքների առկայությամբ, նույնիսկ եթե դրանք առկա են և համալրված են, ինչպես նաև ներքին աուդիտի անկախության, օբյեկտիվության և գաղտնիության սկզբունքների խախտմամբ, որը բխում է կազմակերպությունների վերը նկարագրված ենթակայությունից, հնարավոր չէ ապահովել ներքին աուդիտի նպատակի իրագործումը, այսինքն՝ պատշաճ կերպով իրականացնել ներքին աուդիտ, բարելավել կազմակերպությունների գործունեությունը և ստեղծել հավելյալ արժեք:

Այսպիսով, եզրակացնելով հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի գործառույթի ապահովման խնդիրների վերլուծությունը՝ ներքին աուդիտի գործող համակարգում, մեր կարծիքով, կարելի է հստակ տարանջատել հետևյալ երեք խնդիրները, որոնք հանգեցնում են աուդիտի իրականացման ռիսկերի առկայության.

1. Ստորաբաժանումների հաստիքների քանակը չի բավարարում կազմակերպությունների ներքին աուդիտի միջավայրում ընդգրկված բոլոր գործառույթները ներքին աուդիտի ենթարկելու համար, ինչը հանգեցնում է ներքին աուդիտի օբյեկտիվության և կարողունակության խաթարմանը: Առկա է աուդիտի ծախսողման ռիսկ:

2. Ներքին աուդիտորները չեն տիրապետում անհրաժեշտ և բավարար մասնագիտական գիտելիքների, հետևաբար ներքին աուդիտորները չեն դրսևորում կարողունակություն և պատշաճ մասնագիտական վերաբերմունք: Առկա է սխալ հավաստիացում տալու ռիսկ:

3. Ներքին աուդիտի համակարգը ներդրված է Օրենքով սահմանված ոչ բոլոր կազմակերպություններում<sup>1</sup>: ՊՈԱԿ-ներում, ՀՈԱԿ-ներում, պետական կամ համայնքային հիմնարկներում, 50%-ից ավելի պետական և համայնքային մասնակցությամբ ՓԲԸ-ներում ներդրված ներքին աուդիտի համակարգը կրում է արտաքին աուդիտի բնույթ և հանգեցնում է ներքին աուդիտի անկախության, օբյեկտիվության և գաղտնիության սկզբունքների խաթարմանը: Առկա է աուդիտի ծախսողման ռիսկ:

Այնուամենայնիվ, ՀՀ Ֆինանսների նախարարությունը, որպես հանրային հատվածի ներքին աուդիտի համակարգման, կարգավորման և ներդաշնակեց-

<sup>1</sup> «Ներքին աուդիտի մասին» ՀՕ 17-Ն, 2-րդ հոդված, 1-ին կետ, <http://www.arlis.am>, <http://www.minfin.am>

ման պատասխանատու լիազոր մարմին, Օրենքով սահմանված իր լիազորությունների շրջանակներում ուսումնասիրում է ներքին աուդիտի համակարգում առկա խնդիրները և միջոցառումներ ձեռնարկում դրանց վերացման համար<sup>1</sup>:

Նշված ռիսկերը կառավարելու և վերացնելու նպատակով լիազոր մարմինն իրականացրել է ՀՀ հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի ստորաբաժանումների մարդկային ռեսուրսների մոնիթորինգ, որի արդյունքում պարզվել է, որ ներքին աուդիտի գործառույթի պատշաճ իրականացման համար անհրաժեշտ է ստեղծել հավելյալ 98 հաստիք:

Ինչ վերաբերում է ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի համակարգի աշխատակիցների մասնագիտական գիտելիքների բավարար մակարդակի ապահովմանը, ապա գտնում ենք, որ լիազոր մարմինը ձեռնարկել է դրա համար անհրաժեշտ միջոցներ: Վերջինս, 2012 թվականի ընթացքում կազմակերպել է «ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտ» թեմայով 5-օրյա դասընթացներ, իսկ 2013 թվականի ընթացքում՝ ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացներ:

Սակայն, անկախ նրանից, որ լիազոր մարմինը կատարել է լուրջ աշխատանք ներքին աուդիտի համակարգի ներդրման և գործունեության կազմակերպման համար, այդուհանդերձ, համակարգում դեռևս առկա են խնդիրներ, որոնց լուծման արդյունքում, մեր կարծիքով, ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի համակարգը կհամապատասխանի միջազգային լավագույն փորձին և ստանդարտներին:

## ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում դիտարկվում են ՀՀ հանրային հատվածի կազմակերպություններում ներդրված ներքին աուդիտի համակարգի գործունեությունը կարգավորող իրավական ակտերի դրույթների փոխադարձ անհամապատասխանությունները: Վերլուծվում են դրանցից բխող հնարավոր խնդիրների և աուդիտի գործառույթի ձախողման ռիսկերը:

## АННОТАЦИЯ

### ШИРХАНЫЯН А. - О ПРОБЛЕМАХ СИСТЕМЫ ВНУТРЕННЕГО АУДИТА В ОРГАНИЗАЦИЯХ ГОСУДАРСТВЕННОГО СЕКТОРА РА

В статье представляются несоответствия между законодательными актами, регулируемыми систему внутреннего аудита в организациях государственного сектора РА. Анализируются вытекающие из них возможные проблемы и риски провала функции аудита.

## SUMMARY

### SHIRKHANDYAN A.- ON THE PROBLEMS OF RA PUBLIC SECTOR ORGANIZATIONS INTERNAL AUDIT SYSTEM

In the article gaps and inconsistencies between legal acts regulating internal audit system in the public sector organizations of RA are discussed followed by consequent possible problems and audit function failure risks analysis.

<sup>1</sup> «Ներքին աուդիտի մասին» ՀՕ 17-Ն, 13-րդ հոդված, <http://www.arlis.am>, <http://www.minfin.am>



ԲԱԺԻՆ VIII

ՄԻՋՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



**ՆԱՐԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,  
ԵՊՀ անձի հոգեբանության ամբիոնի վարիչ  
tլ.փոստ՝ n\_khachatryan@ysu.am, xnarine@gmail.com

**ԱՐԺԵՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՍՈՉՄՈՒՆՔՆԵՐԻ ԴԵՐՈ ՀՀ  
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐՔԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ**

**Ներածություն**

Անկախացումից ի վեր Հայաստանը շատ այլ հետխորհրդային երկրների պես կանգնեց խոշոր տնտեսական խնդիրների առջև: Բազում հետազոտություններ վկայում են, որ այս երկրներում տեղի ունեցավ տնտեսության հետընթաց, իսկ դրա առանձին ճյուղերում անգամ՝ «արխայիկ հետդարձ»<sup>1</sup>, ինչն իր ազդեցությունն ունեցավ հետագայում հասարակական զարգացման վրա: Հայաստանն այսօր այլ երկրների նման կանգնած է մրցունակ և արդյունավետ տնտեսական մշակույթ ձևավորելու մարտահրավերի առջև՝ թելադրված գլոբալ քաղաքատնտեսական զարգացումներով:

Տարբեր միջազգային ուսումնասիրություններ<sup>2</sup>, որոնք գնահատում են տնտեսական համակարգը պետության ժողովրդավարացման և հասարակության փոխակերպման պայմաններում, փաստում են, որ Հայաստանի տնտեսական համակարգն իր մեջ ունի հակասություններ, ինչը բացասաբար է ազդում բնակչության կենսամակարդակի և բարեկեցության վրա: Մասնավորապես, խոչընդոտ է հանդիսանում այն, որ տնտեսական և քաղաքական համակարգերը փոխհյուսված են և ոչ թափանցիկ, առկա է օրենքի գերակայության դեֆիցիտ և համամենաշնորհային քաղաքականության ոչ բավարար իրագործում, հետևաբար, տնտեսական մրցակցության մեկնարկային հնարավորությունները հավասար չեն բոլորի համար: Բնականաբար, տնտեսական համակարգը գնահատելիս ուսումնասիրությունները միտված են վերլուծելու մակրո և միկրո տնտեսական, քաղաքական, իրավական դաշտերում գործող արդյունավետ և ոչ արդյունավետ մեխանիզմների կիրառությունը: Սակայն այդ փոփոխականների հետ զուգահեռ ժամանակակից ուսումնասիրություններում վերագնահատվում է նաև մշակույթային գործոնի դերը, քանի որ զարգացող երկրների արդիականացման ուղղությամբ իրականացվող փորձերը ցույց են տալիս, որ տարբեր երկրների տնտեսական համակարգերը զարգանում են տարբեր տեմպերով և արդյունավետության տարբեր ցուցանիշներով<sup>3</sup>: Մշակույթի դերի շուրջ ծավալվող գիտական և հանրային քննարկումները հանգում են հետևյալ հիմնական հարցադրումներին. ունի՞ արդյոք մշակույթը նշանակություն ծավալվող տնտեսաքաղաքական գործ-

<sup>1</sup> Poghosyan G. (2009) Transforming of Current Armenian Society. *Proceedings of 39th World Congress "Sociology at the Crossroads"*, Yerevan, p. 6.

<sup>2</sup> Index of Economic Freedom, BTI Transformation Index.

<sup>3</sup> Inglehart R., Welzer C. (2009) Development and Democracy: what we know about modernization today. *Foreign Affairs*, March-April, pp. 33-41.

ընթացների համար, որքանով են փոխապայմանավորված մշակույթը և երկրի քաղաքական ու տնտեսական համակարգերը<sup>1</sup>: Մշակույթի վերաբերյալ սահմանումները իհարկե շատ են և բազմազան, սակայն սոցիալական ուսումնասիրություններում մշակույթը դիտարկվում է տվյալ հասարակության մեջ գերակշռող արժեքային կողմնորոշումների, ինչպես նաև համոզմունքների և դիրքորոշումների միջոցով:

Հասարակության տնտեսական-քաղաքական հյուսվածքի և արժեքային կողմնորոշումների փոխկապակցվածությունը հասկանալուն օգնում են նաև արժեքների միջազգային համեմատական ուսումնասիրությունները: Այս ուսումնասիրության արդյունքները ցույց էին տալիս, որ շատ հետևողաբար տեսական երկրներ, հատկապես խոհրդային պետություններ, տնտեսական կրախին ու սոցիալական կարգի փոխակերպման արձագանքեցին դեպի գոյապահպանման արժեքներ միտվելով, ինչը արտահայտվեց նաև ազգայնական և կրոնական, այլ խմբերի նկատմամբ անհանդուրժողական դիրքորոշումների դրսևորմամբ<sup>2</sup>: ՀՀ մասնակցել է Արժեքների համաշխարհային հետազոտությանը (WVS) 1997 թ. և 2010 թ., իսկ 2008 թ.՝ Արժեքների եվրոպական ուսումնասիրությանը (EVS)<sup>3</sup>: 1997 թ. WVS և 2008 թ. EVS տվյալների համեմատությունը ըստ նույն ցուցանիշների մեզ թույլ տվեց տեսնել, որ 1997 թ. համեմատ ավանդականության և գոյապահպանման արժեքները շատ ոլորտներում չեն զիջել դիրքերը, իսկ որոշներում անգամ ավելի են սրվել: Մասնավորապես, առավել ցայտուն է այնպիսի ցուցանիշների փոփոխությունը, ինչպիսիք են երեխաների դաստիարակության և ավանդական ընտանեկան արժեքները, ազգային հպարտության զգացումը և կրոնի դերի մեծացումը, միջանձնային վստահության նվազումը, սեռական և կրոնական փոքրամասնությունների հանդեպ ցածր հանդուրժողությունը, տնտեսական և ֆիզիկական անվտանգության արժևորումը՝ համեմատ կյանքի որակի և ինքնաարտահայտման ազատության: Վերջիններս կարևոր դեր ունեն ժողովրդավարացման և քաղաքացիական հասարակության զարգացման համար<sup>4</sup>, ինչն էլ իր հերթին պայման է ստեղծում մրցունակ և արդյունավետ տնտեսական մշակույթի ձևավորման համար:

Խնդրի վերլուծության այսպիսի դիտարկումը անհրաժեշտություն է առաջացնում ուսումնասիրելու տնտեսական մշակույթը և տնտեսական վարքը միկրոմակարդակում, որտեղ կարևորվում է սոցիալ-հոգեբանական չափումների դիտարկումը: Այդ իսկ պատճառով մեր հետազոտությունն ուղղված է *ուսումնասիրելու Հայաստանում ընթացող սոցիալական փոփոխությունների համատեքստում անհատի տնտեսական վարքի դիրքորոշումների առանձնահատկությունները*:

<sup>1</sup> Lawrence E. Harrison, Samuel P. Huntington (Eds.) (2000) Culture Matters: How Values Shape Human Progress, Basic Book, NY.

<sup>2</sup> Inglehart Ronald & Wayne E. Baker W, (2000) Modernization, Cultural Change, and the Persistence of Traditional Values. *American Sociological Review*, 65, pp.19-51.

<sup>3</sup> <http://www.worldvaluessurvey.org> ; <http://www.europeanvaluesstudy.eu>

<sup>4</sup> Inglehart, Ronald (1997) Modernization and Postmodernization. Cultural, Economic and Political Change in 43 Societies. Princeton: Princeton Univ. Press.

ները՝ պայմանավորված նրա արժեքային կողմնորոշումներով և համոզմունքներով<sup>1</sup>:

## Ընտրանքը

Ընտրանքը կազմվել է քվոտային սկզբունքով՝ հաշվի առնելով ընդհանուր համախմբությունում բնակչության թվի համամասնություններն ըստ տարիքի, սեռի և բնակավայրի<sup>2</sup>: Ընտրանքը կազմել է 803 հարցվող՝ ներկայացնելով 33 երևան քաղաքի և չորս մարզերի<sup>3</sup> 18-65 տարեկան բնակչությունը:

## Մեթոդներ

Իրականացվել է հարցում, որում ներառվել է հետևյալ գործիքակազմը:

*Բազային արժեքների չափման հարցարան (SVS, Շվարց)<sup>4</sup>*

Հարցարանը ստեղծված է Շ. Շվարցի բազային արժեքների տեսության հիման վրա, համաձայն որի արժեքները վերաբերում են անհատի համար ցանկալի նպատակներին և հանդես են գալիս որպես վարքի կողմնորոշիչներ: Թեպետ այդ արժեքների հիմքում ընկած են ունիվերսալ պահանջմունքներ, սակայն արժեքային այս կամ այն կողմնորոշման արտահայտվածությունը, գերակայությունը տարբեր խմբերի դեպքում կախված է մշակույթից<sup>5</sup>:

Այս հարցարանը ներկայացված է 57 արժեքներով, որոնք չափում են 10 բազային արժեքներ: Արժեքները ներկայացված են երկու ցանկով. առաջին ցանկը ներառում է 30 արժեք՝ ձևակերպված որպես գոյականներ (հասկացություններ), որոնք ցույց են տալիս անհատի համար ցանկալի նպատակներ: Երկրորդ ցանկի արժեքները (թվով 27) ձևակերպված են որպես ածականներ (հատկանիշներ), որոնք արտացոլում են գործելակերպի ցանկալի եղանակներ: Հարցվողները պետք է զնահատեն յուրաքանչյուր արժեքի կարևորությունը ըստ 9 բալանոց սանդղակի:

Արժեքների 10 սանդղակներն են.

*Իշխանություն (Power)* արժեքի հիմքում ընկած է մարդկանց և ռեսուրսների վրա վերահսկողություն կամ գերիշխանություն ունենալու, սոցիալական ստատուս և հեղինակություն ունենալու նպատակը:

<sup>1</sup> Հետազոտությունն իրականացվել է Կովկասի Ակադեմիական Շվեյցարական Ցանցի (ASCN) կողմից ֆինանսավորվող «Արժեքներ, համոզմունքներ, վարք. առանձնահատկությունները և դինամիկան ժամանակակից հայ հասարակությունում» հետազոտական ծրագրի շրջանակներում:

<sup>2</sup> Ընտրանքի կազմման ընթացքում օգտվել ենք Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրության ծառայության էլեկտրոնային կայքում տեղադրված տվյալներից:

<sup>3</sup> Ընտրվել են Շիրակի, Սյունիքի, Արմավիրի, Վայոց Ձորի մարզերը:

<sup>4</sup> 2010 թ. հարցարանը ադապտացվել է պրոֆ. Շ. Շվարցի հետ համագործակցության և մասնագիտական աջակցությամբ արդյունքում արժեքների միջնաշխարհային ուսումնասիրության պահանջներին համապատասխան:

<sup>5</sup> **Schwartz, Shalom & Wolfgang Bilsky** (1990) Toward a theory of the universal content and structure of values: Extensions and cross-cultural replications. *Journal of Personality and Social Psychology*, 58, pp.878-91; **Schwartz, Shalom** (2006) Les valeurs de base de la personne: Théorie, mesures et applications [Basic human values: Theory, measurement, and applications]. *Revue française de sociologie*, 42, pp.249-288.

*Ձեռքբերում (Achievement)* արժեքի հիմքում ընկած նպատակը անձնային հաջողության հասնելն է՝ հասարակության չափանիշներին համապատասխան կոմպետենտություն դրսևորելու միջոցով:

*Չեղունիզմ (Hedonism)* արժեքի հիմքում ընկած նպատակը հաճույքը կամ զգայական բավարարվածությունն է:

*Ստիմուլյացիա (Stimulation)* արժեքի հիմքում ընկած է ձգտումը ոգևորիչ փորձառությունների, նորության, փոփոխության՝ օրգանիզմի օպտիմալ ակտիվությունն ապահովելու նպատակով:

*Ինքնուղղվածություն (Self-Direction)* արժեքի հիմքն են կազմում վարքի և մտքի ազատության, ստեղծագործելու, որոնելու ձգտումները:

*Ունիվերսալիզմ (Universalism)* արժեքի հիմքն է կազմում մարդկանց գնահատելու և հասկանալու, հանդուրժողականության, մարդկանց բարօրությունն ու բնությունը պահպանելու ցանկությունը:

*Կամեցողություն (Benevolence)* արժեքի հիմքում ընկած է հարազատների, մտերիմների, սեփական խմբի բարօրության պահպանումը և ավելացումը:

*Ավանդականություն (Tradition)* արժեքի հիմքում ընկած է մշակութային և կրոնական սովորույթների և գաղափարների նկատմամբ հարգանքը, դրանց ընդունումը և պահպանումը:

*Կոնֆորմություն (Conformity)* արժեքի հիմքում ընկած է սոցիալական սպասելիքներին և նորմերին չհամապատասխանող, ուրիշների համար անախորժ կամ վնասակար գործողությունները, հակումները զսպելու ձգտումը:

*Անվտանգություն (Security)* արժեքի հիմքում ընկած է անվտանգության, կայունության և ներդաշնակության ապահովումը հասարակության մեջ, հարաբերություններում և սեփական անձում:

#### *Սոցիալական արքսիոնների հարցարան.*

Այս հարցարանը հիմնված է Բոնդի և Լեունգի կողմից առաջարկված սոցիալական արքսիոնների գործոնային կառուցվածքի վրա: Սոցիալական արքսիոնները մարդկանց, սոցիալական խմբերի և ինստիտուտների, ֆիզիկական միջավայրի կամ հոգևոր աշխարհի, ինչպես նաև առհասարակ սոցիալական իրողությունների և ֆենոմենների մասին ընդհանրացված համոզմունքներ են: Այդ համոզմունքները արտահայտվում են որպես պնդումներ երկու հասկացությունների կամ երևույթների միջև կապի մասին (Bond & Leung 2002, p. 289)<sup>1</sup>:

Կիրառվել է սոցիալական արքսիոնների հարցարանի կրճատ տարբերակը (39 հարցից բաղկացած), որը դուրս է բերում հետևյալ հինգ սոցիալական արքսիոնները<sup>2</sup>.

*Սոցիալական ցինիզմը (Social Cynicism)* արտահայտվում է մարդկային բնույթի վերաբերյալ բացասական տեսակետով, (հատկապես՝ իշխանություն

<sup>1</sup> Leung, Kwok, Michael H. Bond, Reimel de Carrasquel, et al. (2002) Social axioms: The search for universal dimensions of general beliefs about how the world functions. *Journal of Cross-Cultural Psychology*, 33, pp.286-302.

<sup>2</sup> Ստուգելու համար հարցարանի վալիդությունը հայկական ընտրանքի համար իրականացվել է կոնֆիրմատոր գործոնային վերլուծություն, որը ցույց է տվել, որ սոցիալական ցինիզմ գործոնը կիսվում է երկու գործոնի. գործոններից առաջինը ընդգրկում է միայն սոցիալական ցինիզմ գործոնի հարցեր, իսկ երկրորդը՝ հավասարապես սոցիալական ցինիզմ և սոցիալական կյանքի բարդություն գործոնների հարցերը:

ծեռք բերելիս հեշտությամբ փչանալու իմաստով), որոշ խմբերի հանդեպ կողմնակալ, բացասական տեսակետով, սոցիալական ինստիտուտների հանդեպ անվստահությամբ, ինչպես նաև նպատակին հասնելու համար բարոյական նորմերի/սկզբունքների անտեսմամբ:

*Սոցիալական կյանքի բարդության (Social Complexity)* համոզմունքում արտահայտված է այն, որ չկան անփոփոխ օրենքներ, որ որևէ բանի հասնելու մի քանի ճանապարհներ կան և որ մարդու վարքի փոփոխականությունը բնականոն երևույթ է:

*Ջանքերի դիմաց հատուցումը (Reward for Application)* արտահայտվում է այն ընդհանուր համոզմունքով, որ ջանքը, գիտելիքը, մտածված պլանավորումը և այլ ռեսուրսների անձնական ներդրումը կրթերի դրական արդյունքների և կօգնի խուսափել ձախողումներից:

*Կրոնականությունը (Religiosity)* արտահայտում է համոզմունք վերբնական ուժերի գոյության մեջ և այն բանում, որ կրոնական հավատքը օգտակար դեր ունի:

*Ճակատագրի վերահսկումը (Fate Control)* արտահայտվում է այնպիսի համոզմունքներով, որ կյանքի բոլոր իրադարձությունները կանխորոշված են, ինչպես նաև այն, որ մարդիկ ինչ-որ ձևերով կարող են ազդել դրանց վրա:

#### *Քաղաքական և տնտեսական վարքային պատերձների հարցարան*

Հարցարանը բաղկացած է 18 հարցից և ենթահարցերից: Հարցվողը պետք է ընտրություն կատարի կամ արտահայտի իր համաձայնության նշանը առաջարկվող հարցերին, որոնք դուրս են բերում քաղաքական և տնտեսական վարքի դիրքորոշումներ և նախընտրություններ: Ներկայացնենք միայն տնտեսական վարքին վերաբերող հարցերը.

Տնտեսական վարքին վերաբերող հարցերը խմբավորված են հետևյալ բլոկերով՝

- 1) Հետաքրքրվածություն ՀՀ տնտեսական հարցերով (3 հարց ենթահարցերով)
- 2) Վարկային գործարքի /տնտեսական ռիսկի գնալու պատրաստականություն (2 հարց ենթահարցերով)
- 3) Տնտեսական իրավիճակի և զարգացումների սուբյեկտիվ կանխատեսում (2 հարց)

Ուսումնասիրելու համար քաղաքական և տնտեսական վարքի դիրքորոշումների կանխորոշման/պայմանավորվածության հավանականությունը վերը դիտարկված արժեքներով և համոզմունքներով՝ կիրառվել է բազմաստիճան ռեգրեսիա (*stepwise multiple regression*) ինտերվալային սանդղակների համար և երկանդամ լոգիստիկ ռեգրեսիա (*binomial logistic regression*) նոմինալ կամ անվանական սանդղակների համար: Քաղաքական և տնտեսական վարքը սահմանող բոլոր բնութագրիչները դիտարկվել են որպես կախյալ փոփոխականներ, իսկ որպես կանխորոշիչ փոփոխականներ (*predictor variables*) առաջին փուլով դիտարկվել են դեմոգրաֆիկ տվյալները (տարիք, սեռ, բնակավայր), երկրորդ փուլով՝ տասը բազային արժեքները, իսկ երրորդ փուլով՝ սոցիալական աքսիոմները:

## Արժեքների և համոզմունքների կանխորոշող դերը տնտեսական վարքի դիրքորոշումներում. ռեգրեսիոն վերլուծության արդյունքներ

### *Հետաքրքրվածություն 77 տնտեսական հարցերով*

Տնտեսական հետաքրքրվածություն փոփոխականի համար ռեգրեսիոն մոդելը ( $R^2=.117$ ,  $F$  change=4.038) ցույց է տալիս, որ երկրի, համայնքի տնտեսական հարցերով հետաքրքրվածության աստիճանը ունի պայմանավորվածություն բնակավայրի ( $\beta=.165$ ,  $p\leq 0.001$ ), սեռի ( $\beta = -.123$ ,  $p\leq 0.01$ ) և տարիքի ( $\beta=.168$ ,  $p\leq 0.001$ ) գործոնների հետ: Այսպես, տղամարդիկ, տարիքով ավելի մեծերը և մարզերում բնակվողներն ավելի շատ են հետաքրքրված տնտեսական հարցերով, քան կանայք, տարիքով ավելի երիտասարդները ու երևանաբնակները: Ռեգրեսիոն վերլուծությունը ցույց տվեց նաև, որ տնտեսական հարցերով հետաքրքրվածությունը աճում է *ինքնուրույնության* ( $\beta=.103$ ,  $p\leq 0.01$ ) և նվազում է *կամեցողություն* ( $\beta=-.091$ ,  $p\leq 0.05$ ) արժեքի և *սոցիալական ցինիզմ* արժեքի ( $\beta=-.140$ ,  $p\leq 0.01$ ) արտահայտվածության դեպքում:

### *Վարկային գործարքի/տնտեսական ռիսկի գնալու պատրաստականություն*

Վարկային գործողության և տնտեսական ռիսկի գնալու պատրաստականությունը ուսումնասիրել ենք երեք փոփոխականի միջոցով, որոնց համար առանձին կազմվել են ռեգրեսիոն վերլուծության մոդելներ: Այդ փոփոխականներն են՝

1) Կենցաղային պայմանները բարելավելու համար վարկ վերցնելու պատրաստականություն

2) Սեփական գործ սկսելու համար վարկ վերցնելու պատրաստականություն,

3) Սոտ ապագայում տնտեսական ռիսկի դիմելու պատրաստականություն:

Ռեգրեսիոն վերլուծության մոդելը ( $R^2=.061$ ,  $F$  change=4.299) ցույց է տալիս, որ կենցաղային պայմանները բարելավելու համար վարկ վերցնելու պատրաստականությունը պայմանավորված է տարիքով ( $\beta=-.221$ ,  $p\leq 0.001$ ): Այսպես, երիտասարդներն ավելի հակված են կենցաղային պայմանները բարելավելու համար վարկ վերցնել, քան տարիքով ավելի մեծերը: Ռեգրեսիոն վերլուծությունը ցույց տվեց նաև, որ տվյալ վարքի ձևի դրսևորմանը նպաստում է *իշխանության* արժեքը ( $\beta=.104$ ,  $p\leq 0.01$ ):

Ռեգրեսիոն մոդելը ցույց է տալիս, որ սեփական գործ սկսելու համար վարկ վերցնելու հավանականությունը ( $R^2=.073$ ,  $F$  change=4.257) պայմանավորված է տարիքով ( $\beta=-.080$ ,  $p\leq 0.05$ ), սեռով ( $\beta=-.084$ ,  $p\leq 0.05$ ) և բնակավայրով ( $\beta=.155$ ,  $p\leq 0.001$ ): Այսինքն, երիտասարդները, տղամարդիկ և մարզերում բնակվող մարդիկ ավելի շատ են պատրաստ օգտվելու վարկային հնարավորություններից սեփական նախաձեռնությունները իրականացնելու համար: Վարկ վերցնելու հավանականությունը պայմանավորված է *ստիմուլյացիայի* արժեքի

( $\beta=.095$ ,  $p\leq 0.05$ ), ինչպես նաև *ճակատագրի կառավարում* ( $\beta=.076$ ,  $p\leq 0.05$ ) և *կատարված ջանքերի դիմաց հատուցում* ( $\beta=.082$ ,  $p\leq 0.05$ ) համոզմունքների դրսևորմամբ:

Ռեգրեսիոն վերլուծությունը ցույց է տալիս, որ մոտ ապագայում տնտեսական ռիսկի գնալու հավանականությունը ( $R^2=.133$ ,  $F$  change=6.369) պայմանավորված է տարիքի ( $\beta=-.168$ ,  $p\leq 0.001$ ), սեռի ( $\beta=-.137$ ,  $p\leq 0.01$ ) և բնակավայրի ( $\beta=.096$ ,  $p\leq 0.05$ ) գործոնների հետ: Կրկին, ավելի երիտասարդները, տղամարդիկ, ինչպես նաև մարզերում բնակվողները ավելի հաճախ են նշում, որ մոտ ապագայում հավանաբար կդիմեն տնտեսական ռիսկի: Ռեգրեսիոն մոդելը ցույց է տալիս նաև, որ *ավանդականության* արժեքը ( $\beta=-.140$ ,  $p\leq 0.01$ ) չի նպաստում, իսկ *իշխանության* արժեքը ( $\beta=.096$ ,  $p\leq 0.05$ ) նպաստում է տնտեսական ռիսկի դիմելուն: Միևնույն ժամանակ, *կրոնականությունը* ( $\beta=.128$ ,  $p\leq 0.01$ ) կարող է պայմանավորել ռիսկի գնալու հավանականությունը, մինչդեռ սոցիալական *կյանքի բարդություն/սոցիալական ցինիզմ* արժեքը ( $\beta=-.089$ ,  $p\leq 0.05$ ) ունի հակառակ ազդեցություն:

*Տնտեսական իրավիճակի և զարգացումների սուբյեկտիվ կանխատեսում*

*1. Երկրի տնտեսական իրավիճակի կանխատեսում*

Ռեգրեսիոն վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ բնակավայրն է ( $\beta=.113$ ,  $p\leq 0.01$ ) ունենում ազդեցություն երկրի տնտեսական վիճակի գնահատման փոփոխման վրա ( $R^2=.076$ ,  $F$  change=5.316): Այսպես, մարզերում ավելի շատ են հակված լավատեսական կանխորոշումների, քան մայրաքաղաքում: Ռեգրեսիոն վերլուծությունը ցույց տվեց նաև, որ *կամեցողության* արժեքը ( $\beta=.069$ ,  $p\leq 0.05$ ) նախապայման է հանդիսանում տնտեսական իրավիճակի դեպի լավը փոփոխության գնահատման համար, իսկ համոզմունքների պարագայում տեսնում ենք հետևյալ պատկերը. *սոցիալական ցինիզմի* ( $\beta=-.150$ ,  $p\leq 0.001$ ) դեպքում մարդիկ հակված են վատատեսական, իսկ *ճակատագրի վերահսկման* ( $\beta=.112$ ,  $p\leq 0.01$ ) դեպքում լավատեսական գնահատականի:

*2. Սեփական ընտանիքի տնտեսական վիճակի կանխատեսում*

Սեփական ընտանիքի տնտեսական վիճակի մոտ ապագայում փոփոխման մասին արդյունքների ռեգրեսիոն վերլուծությունը ( $R^2=.065$ ,  $F$  change=7.066) ցույց է տալիս, որ բնակավայրը շարունակում է մնալ պայմանավորող գործոն ( $\beta=.087$ ,  $p\leq 0.05$ ), սակայն ավելանում է նաև տարիքի գործոնը ( $\beta=-.176$ ,  $p\leq 0.001$ ): Այսպես, մարզերում բնակվողները, ինչպես նաև երիտասարդները հակված են ավելի լավատեսորեն գնահատել իրենց տնտեսական վիճակի փոփոխությունը: Ռեգրեսիոն վերլուծությունը ցույց է տալիս, որ *սոցիալական ցինիզմի* հետ աճում են սեփական ընտանիքի տնտեսական վիճակի վատատեսական գնահատականները ( $\beta=-.103$ ,  $p\leq 0.01$ ), իսկ *ջանքերի դիմաց հատուցումը* ( $\beta=.094$ ,  $p\leq 0.05$ ) նպաստում է լավատեսական գնահատականներին:

## Եզրակացություններ և ամփոփում

Ստացված արդյունքների հիման վրա կարելի է անել որոշ դիտարկումներ, ինչը թույլ կտա հասկանալ մեր հասարակության մեջ տարբեր խմբերում տնտեսական դիրքորոշումների և դրանց հիմքում ընկած վարքի կարգավորման հոգեբանական գործոնները: Այսպիսով դիտարկենք, թե ինչպիսի արժեքային կողմնորոշումներով և համոզմունքներով են ամրապնդվում տնտեսական վարքի մտադրությունները:

Տնտեսական հարցերով հետաքրքրվածության դեպքում կանխորոշիչ դեր ունեն ազատ խոսքի և գործելակերպի, նոր փորձ ձեռք բերելու կարևորումը: Սակայն միևնույն ժամանակ խմբի հետ կապվածության, խմբի անդամների բարօրության մասին հոգ տանելու կարևորումը բացասական է ազդում տնտեսական հարցերով մարդկանց հետաքրքրվածության վրա: Տնտեսական հետաքրքրվածության վրա հակառակ ազդեցություն ունեցող այս արժեքային կողմնորոշումները բացատրում են վարքի կարգավորման ակտիվության և պասիվության միտումները: Այսպես օրինակ, ինքնուրույնությունը, որը կարող է արտահայտվել տնտեսական հարցերի վերլուծություններով, կարծիքներ արտահայտելով, տնտեսական լուծումներ որոնելով, զսպվում է առաջնային խմբի հետ (ընտանիք, հարազատներ, ընկերներ) կապվածության գերաթեքով: Կարելի է եզրակացնել, որ այս դեպքում մարդն ապահովագրում է իր հարազատներին նոր փորձությունների անկանխատեսելի հետևանքներից: Ընդ որում, տնտեսական հարցերով հետաքրքրվածությունը աճում է տարիքով պայմանավորված, արտահայտվում է տղամարդկանց, ինչպես նաև մարզերում բնակվողների դեպքում:

Տնտեսական ռիսկի գնալու և վարկային հնարավորություններից օգտվելու պատրաստականությունը պայմանավորված է մի կողմից դիրք, հեղինակություն ձեռքբերելու, իսկ մյուս կողմից՝ նոր փորձ, ռիսկի գնալու ցանկությամբ և արժևորմամբ: Սակայն համոզմունքների մակարդակում վերլուծությունները ցույց են տալիս, որ տնտեսական ռիսկին են նպաստում վերանձնային բնույթ ունեցող համոզմունքները (կրոնականություն, ճակատագիր), իսկ սոցիալական ինստիտուտների նկատմամբ վստահության պակասը և սոցիալական կյանքի բարդությունը բացասական ազդեցություն են ունենում մարդկանց բարեկեցությանն ուղղված մտադրությունների վրա: Վերոնշյալ համոզմունքների այս հակադարձ ազդեցությունը ցույց է տալիս, որ եթե մարդը պատրաստ է գնալ ռիսկի, ապա հավանական է, որ նա կառաջնորդվի ոչ այնքան կշռադատելով և գնահատելով սոցիալական իրողությունները կամ հաշվի առնելով ֆորմալ և ոչ ֆորմալ «խաղի կանոնները», այլ զուտ հավատալով գործարքի դրական ելքին: Այսպիսով, կարելի է ենթադրել, որ տնտեսական որոշումներ ընդունելիս վարքը կարգավորվում է հույս ներշնչող բնույթի համոզմունքներով, օրինակ՝ *«Աստված մի դուռ կբացի»*, *«մեկ էլ տեսար մի բան կստացվի»* և այլն: Այն պայմաններում, երբ սոցիալական վստահության պակաս է նկատվում հասարակությունում, անշուշտ այս կարգի համոզմունքները օգնում են մարդկանց դիմակայել դժվարություններին և ձեռնարկել որոշ գործողություններ նպատակներին հասնելու համար, սակայն նմանատիպ համոզմունքները կարգավորում են տնտեսական վարքը պատահականության, արտաքին ուժերին (իրական կամ ոչ իրական) ապավինելու սկզբունքով, ինչը թույլ չի տալիս գնահատել ռիսկերը, գործել դրանց համապատասխան, և հետևաբար շատ դեպքերում՝ արդյունավետ: Վարկային հնարավորու-

թյուններից օգտվելու հավանականությունը և տնտեսական ռիսկի գնալու պատրաստականությունը կրկին արտահայտվում է տղամարդկանց և մարզերում բնակվողների դեպքում, սակայն միևնույն ժամանակ ընտրանքի ավելի երիտասարդ հատվածի մոտ:

Սեփական խմբի հետ կապվածության արժևորումը, ճակատագրին հավատալը, ինչպես նաև համոզմունքը նրանում, որ գործադրված ջանքերը կստանան հատուցում մեծացնում է լավատեսական դիրքորոշումները տնտեսական կանխատեսումներում: Միևնույն ժամանակ սոցիալական անվստահության համոզմունքը մարդկանց և սոցիալական ինստիտուտների նկատմամբ նպաստում է երկրի և սեփական ընտանիքի տնտեսական վիճակի բարելավման հոռետեսական կանխատեսումների: Տնտեսական կանխատեսումներում ավելի լավատես են երիտասարդները և մարզերում բնակվողները:

Այսպիսով, կատարված վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ տնտեսական վարքում առավել ակտիվ դիրք ունեն երիտասարդները և մարզերում բնակվող մարդիկ: Երիտասարդների դեպքում ակտիվ տնտեսական վարքի մտադրությունները կարելի է մեկնաբանել տարիքային առանձնահատկություններով՝ ձեռքբերումներ ունենալու, կյանքում կայանալու ցանկություններով: Մարզերում արտահայտվող ակտիվ տնտեսական վարք ենթադրող դիրքորոշումները, ի տարբերություն մայրաքաղաքի, կարծում ենք առավելապես պայմանավորված են մարդկանց գոյապահպանման, առաջնային կարիքները բավարարելու անհրաժեշտությամբ, քանի որ ակնհայտ է մարզերի և մայրաքաղաքի միջև տնտեսական հնարավորությունների և բնակչության կենսամակարդակի տարբերությունը: Այս առումով կարծում ենք, որ հոգեբանական և սոցիալական կարիքներով պայմանավորված այս խմբերի՝ տնտեսական վարքի արդյունավետ իրագործման համար անհրաժեշտ են հատուկ աջակցող սոցիալական ծրագրեր, որոնք կամրապնդեն մեր հետազոտության արդյունքում դուրս բերված այն արժեքային կողմնորոշումները և համոզմունքները, որոնք կանխորոշում են տնտեսական վարքում ակտիվ դիրքորոշումները և կնվազեցնեն տնտեսական նախաձեռնությունն արգելակող արժեքների, համոզմունքների դերը: Այդպիսի սոցիալական ծրագրերը կարող են ուղղված լինել բնակչության՝ տնտեսական գործարքների և դրանց հետ կապված անհրաժեշտ գործողությունների վերաբերյալ իրազեկման մեծացմանը, կոոպերատիվ ծրագրերի ներմուծմանը, տարբերակված տոկոսադրույքների քաղաքականության կիրառմանը և այլն: Այդպիսի ծրագրերի միջոցով մարդկանց սոցիալական ներգրավումը կարծում ենք կարող է նվազեցնել տնտեսական մտադրություններում առաջացող իրական և ոչ իրական ռիսկերը, մեծացնել մարդկանց որոշումներում վերլուծական բաղադրիչի դերը, նպաստել ակնկալվող արդյունքների իրատեսական գնահատմանը:

## ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում ռեզրեսիոն վերլուծության միջոցով նույնականացվում են այն բազային արժեքները և համոզմունքները, որոնք նշանակալի ազդեցություն ունեն տարբեր խմբերի տնտեսական վարքի դիրքորոշումներում, հիմնվելով Երևանում և ՀՀ չորս մարզերում անցկացված հարցման արդյունքների վրա:

**АННОТАЦИЯ****ХАЧАТРИАН Н. – РОЛЬ ЦЕННОСТНЫХ ОРИЕНТАЦИЙ И УБЕЖДЕНИЙ В УСТАНОВКАХ ЭКОНОМИЧЕСКОГО ПОВЕДЕНИЯ НАСЕЛЕНИЯ РА**

В статье с помощью регрессионного анализа идентифицируются те базовые ценности и убеждения, которые имеют значимое влияние в установках экономического поведения у разных групп населения, на базе опроса, проведённого в Ереване и в 4 марзах РА.

**SUMMARY****KNACHATRYAN N. – ROLE OF VALUE ORIENTATIONS AND BELIEFS IN RA POPULATION ECONOMIC BEHAVIOR ATTITUDES**

In the article the basic values and beliefs, which have significant influence on attitudes of economic behavior among different groups, are identified through regression analysis of data provided by survey conducted in Yerevan and four marzes in RA.

**ՄԱՔՍԻՄ ՄԱՆԱՅԱՆ**

*աշխարհագրական գիտությունների դոկտոր,  
ԵՊՀ սոցիալ-տնտեսական աշխարհագրության  
ամբիոնի պրոֆեսոր  
էլ.փոստ՝ mman@rambler.ru*

**ՅԱՅԿ ՄԱՆԱՅԱՆ**

*ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի  
մագիստրատուրայի ուսանող*

**ՀՀ ԼԵՌՆԱՅԻՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ  
(ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՕՐԻՆԱԿՈՎ)**

Տարբեր մեծության տարածքների սոցիալ-տնտեսական համալիր զարգացման գաղափարները տնտեսագետ-աշխարհագետները զարգացրել են դեռևս տասնամյակներ առաջ: Ավելի ուշ՝ կապված գիտության էկոլոգացման հետ, նրանք տարածքի հավասարակշիռ և համալիր զարգացման դեպքում, տնտեսական և սոցիալական կողմերից բացի, կարևորում են նաև էկոլոգիական կողմերը (1): 20-րդ դարի վերջերին այս գաղափարները համաշխարհային հնչեղություն ստացան և համաշխարհային հանրության կողմից զարգացան որպես կայուն հասարակական զարգացման հայեցակարգ: Ազգային-պետական մակարդակով այդ հայեցակարգի զարգացման գործում զգալի ներդրում է կատարել պրոֆ. Կ Դանիելյանը (2): Բնապահպանական նոր ռազմավարության հիմքում դրվում է նոր կարգախոսը՝ «Տնտեսական աճից դեպի կայուն զարգացում»: Դրա իմաստն այն է, որ երկրի տնտեսական վիճակը և զարգացման մակարդակը որոշելու համար լոկ տնտեսական ցուցանիշները բավական չեն: Պետք է հաշվի առնել շրջակա միջավայրի որակը, գնահատել այն ծախսերը, որոնք անհրաժեշտ են երկրահամակարգերը պահպանելու համար:

Կայուն հասարակական զարգացման հայեցակարգը տեսական և մեթոդաբանական առումներով դեռևս թույլ է մշակված տարածաշրջանային (մարզային) մակարդակում: Մինչդեռ ցանկացած երկրի, նաև՝ ՀՀ կայուն հասարակական զարգացումը զգալի չափով պայմանավորված է հասարակության տարածքային կազմակերպման բնույթով, բնակչության, արտադրության և սպասարկման հնարավորինս համաչափ տեղաբաշխումով, տարածաշրջանների համամասնական և կայուն զարգացումով: Հասարակության կայուն տարածական զարգացման նպատակն է հասարակության անդամների կենսագործունեության էկոլոգիական, սոցիալական և տնտեսական առումներով համեմատաբար բարենպաստ և գրեթե միանման միջավայրի ապահովումը, անկախ այն բանից, թե որ տարածաշրջանում կամ ինչ մեծության բնակավայրերում են ապրում նրանք: Կայուն տարածաշրջանային զարգացումը նշանակում է տարածաշրջանի տնտեսական, սոցիալական և էկոլոգիական բաղադրիչների համալիր և փոխկապակցված ներդաշնակ զարգացում: Այսինքն՝ մարզի կամ այլ տարածաշրջանի տնտեսական աճը պետք է ուղեկցվի բնակչության կենսապայմանների բարելավմամբ, նյութական միջոցների

արդար բաշխմամբ և էկոլոգիական վիճակի բարելավմամբ:

Սյունիքի մարզը առանձնահատուկ տեղ է գրավում ՀՀ տարածաշրջանային զարգացման գործում: Ընդ որում, մարզի դերը ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման ներկա փուլում էականորեն աճում է: Դա պայմանավորված է նրա բազմազան և հարուստ բնական ռեսուրսներով, քաղաքաաշխարհագրական և տնտեսաաշխարհագրական առանձնահատուկ դիրքով, մասնավորապես ՀՀ՝ Իրանի հետ սահմանակից լինելու կարևոր հանգամանքով: Միևնույն ժամանակ, ամբողջ ՀՀ բնորոշ շատ հիմնախնդիրներ Սյունիքի մարզում դրսևորվում են առավել ընդգծված սրությամբ (3): Դրանք պայմանավորված են՝

- ծայրամասային դիրքով, Երևանից և ՀՀ այլ խոշոր տնտեսական կենտրոններից մեծ հեռավորությամբ,

- տրանսպորտային ուղիների նոսր ցանցով, տրանսպորտային հաղորդակցության այլընտրանքային միջոցների բացակայությամբ,

- սահմանամերձ, լեռնային և բարձրլեռնային, սակավահող և սակավամարդ բնակավայրերի մեծ թվով (բնակավայրերի շուրջ 3/4-ը)<sup>1</sup>,

- ուրբանիզացման բարձր մակարդակով (67%), բնակչության և բնակավայրերի ցածր խտությամբ, մարզի տարածքային, բնառեսուրսային, սոցիալ-տնտեսական մեծ ներուժին համապատասխան տարածաշրջանային-կազմակերպիչ խոշոր կենտրոնի բացակայությամբ,

- արդյունաբերության միակողմանի՝ ռեսուրսաօգտագործող ճյուղերի զարգացումով. բավական է նշել, որ մարզի արդյունաբերական արտադրանքի կառուցվածքում հանքագործական արդյունաբերության մասնաբաժինը 85% է, իսկ մշակող արդյունաբերությանը՝ ընդամենը 5%,

- տնտեսության և բնակչության խիստ անհամաչափ տեղաբաշխմամբ, դրանք հիմնականում կենտրոնացած են գետահովիտներում և միջլեռնային գոգավորություններում,

- բնակչության սեռատարիքային կառուցվածքի զգալի անհամամասնություններով, արտազաղթի մեծ ծավալներով և բնական աճի ցածր ցուցանիշներով բնութագրվող ժողովրդագրական իրավիճակով,

- էկոլոգիական իրավիճակի վատթարացմամբ, ջրային, օդային ավազանների աղտոտմամբ, անտառային տարածքների կրճատմամբ, կենսաբազմազանության նվազմամբ,

- տարբեր ծառայություններով մարզի բնակավայրերի և բնակչության ապահովվածության ոչ հավասար մակարդակով և պայմաններով:

Մարզի կայուն զարգացումը ենթադրում է առկա սոցիալ-տնտեսական և էկոլոգիական վիճակների բարելավում, առկա հիմնախնդիրների լուծում: Դրանք մեծապես պայմանավորված են արտադրական մեծ ներուժի, հանքային և այլ բնական ռեսուրսների արդյունավետ և համալիր օգտագործման, նոր ենթակառուցվածքների կառուցման, տարաբնակեցման կատարելագործման, բնապահպանական անհրաժեշտ միջոցառումների իրականացմամբ:

<sup>1</sup> Հոդվածում ներկայացված ցուցանիշներն ու տվյալները և դրանց հիման վրա կատարված հաշվարկների համար աղբյուր են հանդիսացել ՀՀ ԱԿԾ տեղեկագրքերը, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով ՀՀ ԱԿԾ տեղեկագրքերը, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2001 թ., 2005 թ., 2012 թ., 2013 թ., Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2012 թ., ինչպես նաև <http://www.armstat.am>

Սյունիքը բարձր լեռնային, խիստ մասնատված մակերևույթ ունեցող և զգալի երկարությամբ պետական սահմաններ ունեցող մարզ է: Մարզի ժողովրդագրական, սոցիալական, տնտեսական և էկոլոգիական բնույթի հիմնախնդիրները առավել մեծ սրությամբ են դրսևորվում սահմանամերձ և բարձրլեռնային գոտիներում, որտեղ բնակլիմայական և սոցիալ-տնտեսական դժվարին և առանձնահատուկ պայմաններն ավելի հրատապ և արդիական են դարձնում հիմնախնդիրների լուծումը և գրավում կառավարության հատուկ ուշադրությունը: Սյունիքում առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրներից են բնակչության արտագաղթի դադարեցումը, բնակչության ծերացումը, բնական վերարտադրության ցածր ցուցանիշները, լքված և սակավ բնակեցված տասնյակ գյուղական բնակավայրերի բնակեցումը: Ընդհանրապես, Սյունիքի մարզի տարածքում բնակավայրերի ցանցի կայունացումը և տեղական ու տարածաշրջանային մակարդակներով տարաբնակեցման համակարգաստեղծ գործընթացների ակտիվացումը մարզի կայուն զարգացման գլխավոր պայմաններից են, հաշվի առնելով այն հանգամանքը, որ տարաբնակեցումը հանդես է գալիս որպես տարածքը համախմբող կարևոր գործոն:

Ինչպես ողջ երկրում, այնպես էլ՝ Սյունիքի մարզում մեծ չափերի է հասնում բնակչության արտագաղթը: Վերջին տասը տարիներին նույնիսկ բնակչության բնական աճը ի զորու չէր լրացնելու այն պակասը, որը առաջանում էր բնակչության արտագաղթից: Բավական է նշել, որ միայն 2001 թ. և 2011 թ. մարդահամարների տվյալներով մարզի մշտական բնակչության թիվը նվազել է շուրջ 11 հազարով կամ մոտ 8%-ով, իսկ առկա բնակչությունը նույն ժամանակահատվածում նվազել է 14,2 հազարով կամ 10,6%-ով: 2001-2011 թթ. պակասել է ինչպես մարզի քաղաքային մշտական բնակչությունը՝ 8,6%-ով, այնպես էլ՝ գյուղական մշտական բնակչությունը՝ 4%-ով: Եթե հաշվի առնենք պաշտոնական վիճակագրության կողմից ներկայացված տվյալները բնակչության բնական վերարտադրության վերաբերյալ, ապա կարող ենք ճշգրիտ տեղեկություններ ունենալ բնակչության արտագաղթի իրական մասշտաբների մասին: Ուսումնասիրվող ժամանակահատվածում Սյունիքի մարզում բնակչության բացարձակ բնական աճը կազմել է 4667 մարդ, որը նշանակում է, որ մարզի սահմաններից 2001-2011 թթ. ընթացքում տարեկան միջինը մեր հաշվարկներով դուրս է եկել շուրջ 1500 մարդ: Այսինքն՝ յուրաքանչյուր տարի մարզի բնակչության ավելի քան 1%-ը արտագաղթում է, մեծ մասամբ՝ ՉՉ սահմաններից դուրս: Սյունիքի մարզի բնակչության բնական աճի ցուցանիշները (0,2-0,4%) հետագոտվող ժամանակահատվածում զգալիորեն ցածր է միջին հանրապետական ցուցանիշներից (0,4-0,6%): Բնակչության արտագաղթի և ցածր բնական աճի հետևանքով ստեղծվում է ծայրահեղ լարված ժողովրդագրական իրավիճակ: Խախտվում են բնակչության սեռատարիքային կազմի համամասնությունները, մեծանում են կանանց և ծերերի բաժինները: Ժողովրդագրական նմանատիպ փոփոխությունները հատկանշական են մարզի ընդհանուր գյուղական բնակչությանը և գրեթե բոլոր քաղաքային բնակավայրերին: Արտագաղթը տեղի է ունենում մարզի գրեթե բոլոր քաղաքային և գյուղական բնակավայրերից՝ անկախ դրանց մեծությունից, տեղանքի բարձրությունից և մարզկենտրոնից ու մայրուղիներից ունեցած հեռավորությունից: Վերջին տասնամյակում (2002-2012 թթ.) նվազել են մարզի բոլոր քաղաքների բնակչության թվաքանակները, այդ թվում՝ Կապան, Գորիս և Սի-

սիան քաղաքներինը՝ շուրջ 2-3 հազարով: Իսկ եթե հաշվի առնենք նաև քաղաքների բնակչության բնական աճի ցուցանիշները, ապա միայն վերջին տասը տարվա համար Կապանի միգրացիայի բացասական մնացորդը (սալդոն) մեր հաշվարկով կազմել է շուրջ 3610 մարդ, Գորիսինը՝ 3460 մարդ, Սիսիանինը՝ 2580 մարդ: Վերջին տասը տարիներին միգրացիայի բացասական մնացորդը կազմել է Մեղրի և Ագարակ քաղաքների բնակչության շուրջ 10-15%-ը: Այս առումով վիճակը համեմատաբար բարվոք է աշխատատեղերով ապահովված Քաջարան քաղաքում, որտեղ գործում է ՀՀ արդյունաբերական խոշորագույն ձեռնարկություններից մեկը՝ Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը:

Ինչպես ամբողջ երկրում, Սյունիքի մարզում ևս նկատվում են գյուղական բնակչության արտագաղթի աճի միտումներ: Վերջին տասնամյակում միգրացիայի բացասական մնացորդը բնորոշ է եղել նաև գյուղական բնակչությանը, որը մեր մոտավոր հաշվարկներով կազմել է շուրջ 3500-4000 մարդ: Ընդ որում, գյուղական բնակչության բացարձակ թվաքանակի նվազումը պայմանավորված է ոչ միայն արտագաղթով, այլև բնակչության ծերացման հետևանքով ստեղծված լարված ժողովրդագրական իրավիճակով: Խիստ անբարենպաստ ժողովրդագրական իրավիճակ է ստեղծված մարզի փոքր գյուղական բնակավայրերում, որոնց մի մասը վերացման եզրին է: Մարզի 102 գյուղական համայնքներից միայն 13-ը ունեն 1000-ից ավելի բնակչություն: Հատկապես լեռնային տարածքներում գերակշռում են փոքր գյուղական համայնքները: Բավական է նշել, որ մարզի 19 գյուղական համայնքների բնակչության թիվը չի հասնում 100-ի, իսկ 10 գյուղեր 1988 թ. հետո լքված են և դեռևս չբնակեցված: Դրանց մեծ մասը գտնվում է Կապանի ենթաշրջանում: Բնական է, որ դրանք, որպես կանոն, լեռնային, տրանսպորտային ուղիներից հեռու, վարելահողերով վատ ապահովված, դպրոցներից ու բնակչության ամենօրյա կենսագործունեության համար անհրաժեշտ շատ այլ հիմնարկներից զուրկ գյուղական համայնքներ են: Համայնքների փոքրության հետևանքով անարդյունավետ են օգտագործվում պետական միջոցները, դժվարություններ են առաջանում բնակչությանը կրթական, առողջապահական և այլ ծառայություններով ապահովելու գործում: Համայնքների չնչին բյուջեները բավարար չեն նույնիսկ սոցիալ-կենցաղային ամենափոքր հիմնախնդիրները լուծելու համար: Բացառությամբ մի քանիսի, գյուղերում վերջին 20-25 տարիներին բնակչության թիվը նվազել է ավելի քան 1,5 անգամ:

Մեր կարծիքով, հրատապ հիմնահարց է դարձել Սյունիքի որոշ հատվածներում համայնքների խոշորացումն ու միջհամայնքային միավորումների ստեղծումը: Դա հնարավորություն կտա ամրապնդել համայնքների ֆինանսական և տնտեսական բազան, բարելավել բնակչության կենսապայմանները, ավելի արդյունավետ օգտագործել պետության և միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված միջոցները, հաստատել տարածքի հողօգտագործման, ջրօգտագործման, ենթակառուցվածքների օգտագործման, բնապահպանության փոխհամաձայնեցված և ընդհանուր ռեժիմ: Փոքր համայնքների միավորման միջոցով համայնքների խոշորացումը անհրաժեշտ է իրականացնել մարզի այն տարածքներում, որտեղ փոքր գյուղերը (մինչև 200 բն.) գտնվում են միմյանցից ոչ մեծ հեռավորության վրա (մինչև 5 կմ) և տեղաբաշխված են ոչ մեծ գետահովտի կամ գոգավորության սահմաններում, ունեն ընդհանուր արտադրական և

սոցիալական ենթակառուցվածք, տարածքի ռեսուրսների օգտագործման ու տնտեսության համատեղ օգտագործման ավանդույթներ:

Սակայն համայնքների խոշորացումը և որոշակի լիազորություններով օժտված միջհամայնքային միավորումների ստեղծումը բավական չեն գյուղական համայնքների բազում հիմնախնդիրները լուծելու համար: Անհրաժեշտ են մարզի համայնքների տնտեսական և ֆինանսական պայմանների բարելավման, նոր աշխատատեղերի ստեղծման ուղղությամբ պետության կողմից իրականացվող միջոցառումներ: Դրանցից են՝ ա) բնակչության որոշակի խմբերին, տնտեսվարող սուբյեկտներին հարկային արտոնությունների տրամադրումը, փոքր, լեռնային և սահմանամերձ համայնքներին ՀՀ պետական բյուջեից լրավճարների հատկացումը, բ) ազատ ձեռներեցությամբ զբաղվելու համար համայնքի անդամներին ու վերաբնակիչներին արտոնյալ պայմաններով վարկերի տրամադրումը, միջազգային տարբեր ծրագրերով ստացված ֆինանսական միջոցների որոշակի մասի նպատակաուղղումն արտադրության կազմակերպմանը, գ) համայնքների տարածքային զարգացման և կառուցապատման հիմնական ուղղություններն ամրապնդելու նպատակով համայնքների հատակագծերի մշակումը՝ ընդգրկելով բոլոր ենթակառուցվածքները, դ) գյուղատնտեսական, արդյունաբերական, սպասարկման ոլորտի ձեռնարկությունների վերագործարկման, նոր աշխատատեղերի ստեղծման գործում համայնքներին օժանդակումը, ե) շուկայական տնտեսության զարգացմանը նպաստող ներդրումային, բորսայական, բանկային մարզային կառույցների ստեղծման խթանումը, մատակարարող-գնորդ-սպառող ենթակառուցվածքների ստեղծումը:

Ընդհանրապես, տարաբնակեցումը, կախված լինելով բնական, տնտեսական, սոցիալական, և այլ գործոններից, համակարգաստեղծ և կայունացնող զգալի դեր է խաղում տարածաշրջանային զարգացման գործում: Տարածքի տնտեսական համալիրի համեմատ լինելով ավելի իներցիոն, այն հնարավորություն է տալիս տարբեր տարածական մակարդակներում համադրել և միավորել տարածաշրջանային կայուն զարգացումն ապահովող երեք՝ տնտեսական, սոցիալական և էկոլոգիական բաղադրիչները: Սյունիքի մարզի տարաբնակեցման արդի համակարգը դեռևս չի բավարարում մարզի կայուն զարգացման պահանջներին: Դեռևս թույլ են արտահայտված տարաբնակեցման համակարգաստեղծ գործընթացները տարածաշրջանային և տեղական մակարդակներով: Մարզկենտրոնի ծայրամասային աշխարհագրական դիրքն ու սոցիալ-տնտեսական ոչ մեծ ներուժը, տեղական կենտրոնների ոչ բավարար զարգացած ցանցը տարածաշրջանային կայուն զարգացմանը խոչընդոտող գործոններ են: Հեռանկարում մարզկենտրոնի սոցիալ-տնտեսական ներուժի հզորացումը, այլ քաղաքային կենտրոնների զարգացումը, Հյուսիս-Հարավ ավտոմայրուղու և երկաթգծի կառուցումը, մարզային նշանակության արտադրական և ենթակառուցվածքային նոր ձեռնարկությունների ստեղծումը կարևոր նախադրյալներ կհանդիսանան մարզի կայուն և հավասարակշռված զարգացման համար:

Ցանկացած մեծության տարածաշրջանի կայուն զարգացման հիմքը նախ և առաջ տնտեսության, նրա տարբեր ճյուղերի փոխկապակցված և համալիր զարգացումն է: Սյունիքի մարզը տալիս է ՀՀ արդյունաբերական արտադրանքի 17,7%-ը (2012 թ.) և այդ ցուցանիշով ՀՀ մարզերի մեջ գրավում է առաջին տեղը: Սակայն, ինչպես արդեն նշել ենք, այն ունի զարգացման միակողմանի՝ հանքա-

գործական բնույթ: Թեպետ մարզի գլխավոր արդյունաբերական ձեռնարկությունը՝ Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը, զգալի դեր է խաղում մարզի տնտեսության մեջ և ունի մուլտիպլիկատորի ազդեցություն՝ ստեղծում է իրեն օժանդակող և սպասարկող ձեռնարկություններ մարզի տարբեր բնակավայրերում, սակայն դա բավական չէ մարզի կայուն զարգացման համար, մանավանդ, որ նման զարգացումն ընթանում է ի հաշիվ մարզի հանքային ռեսուրսների չարդարացված խոշորամասշտաբ և անարդյունավետ օգտագործման և օդային և ջրային ավազանների և հողածածկույթի աղտոտման և անտառային զանգվածների ոչնչացման:

Վերջին տասը տարիներին (2002-2012 թթ.) Սյունիքի մարզի արդյունաբերական արտադրանքի ծավալը աճել է մոտ 6,7 անգամ, ինչը երկու անգամ բարձր է երկրի միջին ցուցանիշից: Սակայն դա տեղի է ունեցել բացառապես հանքագործական արդյունաբերության հաշվին, որի բաժինը մարզի ընդհանուր արդյունաբերական արտադրության մեջ է՛լ ավելի է մեծացել: Արդյունաբերության զարգացման թեև բարձր տեմպերը, բայց միակողմանի ուղղվածությունը չի հանգեցրել մարզի սոցիալ-տնտեսական բազմաթիվ հիմնախնդիրների (աղքատություն, գործազրկություն, արտագաղթ, բնական միջավայրի աղտոտում, գյուղերի վերացում, ենթակառուցվածքների բացակայություն և այլն) լուծմանը: Դա են վկայում աղքատության, գործազրկության և արտագաղթի մեծ մասշտաբները մարզի գրեթե բոլոր ենթաշրջաններում ու քաղաքային և գյուղական բնակավայրերում:

Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի հսկայական դերը ՀՀ տնտեսության մեջ անժխտելի է: Կոմբինատը երկրի խոշորագույն արտադրողն ու հարկատուն է: Հիմնականում կոմբինատի արտադրանքի հաշվին Սյունիքի մարզին բաժին է ընկնում ՀՀ-ից արտահանվող ապրանքների արժեքի 1/5-ից ավելին: Կոմբինատի արտադրանքի ծավալների մեծացմամբ պայմանավորված մարզի արդյունաբերական աճը նպաստում է Քաջարան և մասնակիորեն՝ նաև Կապան ու Ազարակ քաղաքների սոցիալ-տնտեսական զարգացմանը՝ բնակչությանն ապահովում է կայուն և համեմատաբար բարձր վարձատրվող աշխատատեղերով, ինչպես նաև մասնակցում է վերոհիշյալ քաղաքների բարեկարգմանը և ենթակառուցվածքների ստեղծմանն ու զարգացմանը: Սակայն կոմբինատի աշխատանքի պատճառով հատկապես մեծ չափով տուժում է Կապանի ենթաշրջանի բնությունը, օդի, ջրի, հողի, մշակաբույսերի՝ ծանր մետաղներով և մթնոլորտային արտանետումներով աղտոտվածության հետևանքով զգալիորեն ավելացել են որոշ հիվանդություններ (հատկապես կապված արյան և արյունաստեղծ օրգանների գործունեության հետ), մեծացել է մահացությունը Քաջարան քաղաքում (4): Հետևաբար, նույնիսկ Քաջարան քաղաքի համար կոմբինատի դերը միանշանակ դրական գնահատել չի կարելի: Միանշանակ չէ կոմբինատի կատարած դերը նաև մարզի կայուն զարգացման գործում: Մի կողմից՝ ստեղծվում են նոր աշխատատեղեր, ենթակառուցվածքներ և հարակից նոր արտադրություններ, իսկ մյուս կողմից՝ զնալով սրվում են մարզի միակողմանի արտադրական զարգացման ու անհամաչափ տեղաբաշխման, հանքային ռեսուրսների ոչ խնայողական օգտագործման և շրջակա միջավայրի աղտոտման հիմնախնդիրները:

Այդ են վկայում նաև մարզի սոցիալական զարգացման տեմպերն ու մակարդակը բնութագրող մի քանի ցուցանիշներ: Մարզի բնակչության աղքատության մակարդակը վերջին տասը տարիներին մի փոքր նվազել է, թեպետ 2008-2011

թթ. այն 20,3%-ից բարձրացել է 26,8%-ի, և դեռևս զգալիորեն ցածր է միջին համարապետական և շատ այլ մարզերի համապատասխան ցուցանիշներից: Սակայն դա արդյունք է մարզի ընդամենը մի քանի լեռնահանքային կենտրոններում բնակչության զբաղվածության և կայուն եկամտի ապահովման: Ընդհանուր առմամբ, մարզի տարածքի մեծ մասում, հատկապես սահմանամերձ և լեռնային շրջաններում, աղքատության մակարդակը և բնակչության սոցիալական վիճակը այնպիսին են, ինչպես ՀՀ այլ լեռնային և սահմանամերձ շրջաններում:

Մարզի սոցիալական ոչ բարվոք վիճակի և զարգացման միտումների մասին են վկայում նաև բնակչության զբաղվածության վերաբերյալ վերջին տարիների պաշտոնական վիճակագրական տվյալները, ըստ որոնց՝ վերջին 4-5 տարիներին մարզում նվազել է զբաղվածության ընդհանուր մակարդակը (միաժամանակ մոտ 2%-ով ավելացել է գործազրկության մակարդակը), ինչը հատկապես վերաբերում է մարզի հյուսիսային մասի քաղաքներին (Գորիս, Սիսիան) և գյուղական շրջաններին: Ներկա պահին մարզի քաղաքների աշխատանքային ռեսուրսների շուրջ 40%-ը չի օգտագործվում (գյուղական վայրերում այդ ցուցանիշը զգալիորեն ցածր է՝ 26%): Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ մարզի աշխատանքային ռեսուրսների կրթական մակարդակն ավանդաբար բարձր է: Հետևաբար, մարզի աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը տնտեսության տարբեր ոլորտներում, հատկապես վերամշակող արդյունաբերության, զբոսաշրջության և սպասարկման ոլորտի այլ ճյուղերում, տնտեսության համաչափ տեղաբաշխման և կայուն զարգացման կարևորագույն պայմաններից մեկն է:

Թեև վերջին տասը տարիներին շուրջ 1,5 անգամ ավելացել է մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքը, սակայն նրա բաժինը ՀՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալում 2002-2012 թթ. 9,2%-ից նվազել է 6,3%: Ընդ որում, զգալիորեն նվազել է բուսաբուծության բաժինը, դրա հետ կապված՝ անասնապահության արտադրանքի ծավալը սկսել է գերազանցել բուսաբուծության արտադրանքի ծավալին: Զգալիորեն նվազել է մարզի հիմնական մշակաբույսերի՝ հացահատիկի (5,5 հազ.հա) և կարտոֆիլի (400 հա) ցանքատարածությունների մակերեսը: Քանի որ նշված մշակաբույսերը հիմնականում մշակվում են Սիսիանի և Գորիսի ենթաշրջաններում, ապա դա ևս վկայում է մարզի զարգացման տարածքային անհամաչափության աճի մասին:

Սակայն գյուղատնտեսության արտադրանքի ծավալների հետագա աճը պետք է տեղի ունենա մարզի իրական տնտեսական համալիրի ձևավորման, նրա տարածքային և գործառության կառուցվածքների բարելավման ուղիով: Մասնավորապես՝ մարզի հյուսիսային մասի գյուղատնտեսության զարգացման հնարավորությունների և ռեսուրսների արդյունավետ օգտագործումը հնարավորություն կտա զգալիորեն ավելացնել անասնամթերքի և հացահատիկի արտադրության ծավալները և ստեղծել դրանց (մսի, կաթնամթերքի, ալյուրի և այլն) վերամշակման ձեռնարկություններ: Իսկ մարզի հարավային մասում աճող մերձարևադարձային մրգերի (թուզ, նուռ և այլն) և անտառների վայրի պտուղների և հատապտուղների (հոն, մոշ և այլն) հիման վրա հնարավոր է զարգացնել պահածոների արտադրությունը: Դա ոչ միայն մարզը կդարձնի ինքնաբավ հիմնական պարենամթերքների գծով, ինչը շատ կարևոր է հեռավոր և ծայրամասային մարզերի համար, այլև զգալիորեն կկրճատի մարզի կայուն զարգացմանը խոչընդոտող տարածքային անհամաչափությունները:

Մարզի բնակավայրային և տրանսպորտային ցանցերի նոսրությունը լեռնային բարդ ռելիեֆի պայմաններում դժվարացնում է տարբեր (տեղական, շրջանային, մարզային) նակարդակներում միջբնակավայրային կապերի զարգացումը, տարաբնակեցման համակարգաստեղծ գործընթացների ակտիվացումը: Այս պայմաններում կարևորվում է առանձին, հատկապես բարձրլեռնային և սահմանամերձ բնակավայրերի ինքնաբավ և կայուն զարգացումը: Այս ենթատեսքստում մարզի և նրա բնակավայրերի կայուն զարգացման կարևոր գործոն է դառնում մարզի բնակչության ապահովվածությունը տարբեր ծառայություններով և ըստ բնակավայրերի մեծության և տեղադիրքի դրանց համաչափ և համամասնական տեղաբաշխումով: Բավական է նշել, որ վերջին տասը տարիներին մարզում մանրածախ առևտրի շրջանառությունը թեև ավելացել է 2,1 անգամ, իսկ ծառայությունների ընդհանուր ծավալը՝ մոտ 4,6 անգամ, սակայն երկու ցուցանիշներն էլ զիջում են միջին հանրապետականին: Չնայած այն բանին, որ հետազոտվող ժամանակահատվածում մեկ շնչի հաշվով ջրով և գազով բնակչության ապահովվածության աստիճանով մարզը զգալիորեն մոտեցել է հանրապետության միջին ցուցանիշներին, սակայն այս և բնակչության կենսապայմաններին վերաբերող շատ այլ ցուցանիշներով հեռու է բավարար լինելուց: Թեև, մարզի մեկ բնակչին ընկնող բնակարանի ընդհանուր մակերեսը վերջին տասնամյակում 22 քառ.մ-ից դարձել է 27,3 քառ.մ, քաղաքներում՝ 17,7 քառ.մ-ից՝ 20,9 քառ.մ, սակայն այն երկու դեպքում էլ շարունակում է զիջել երկրի միջին ցուցանիշներին:

Այսպիսով վերջին տասնամյակում մարզի միակողմանի հանքագործական զարգացումը չի նպաստել և չէր կարող նպաստել մարզի ողջ տարածքի տնտեսության համալիր զարգացմանը ու համախմբմանը, մարզի բնակչության եկամուտների աճեցացմանը և սոցիալական զարգացմանը: Դեռ ավելին, սոցիալական զարգացման մի շարք կարևոր ցուցանիշներով նկատվել է նահանջ: Մարզի տարածքի և բնակչության մեծ մասը արտադրական-տնտեսական և սոցիալական զարգացման առումներով դեռևս չի մտել զարգացման գործընթացների մեջ:

Տարածաշրջանային կայուն զարգացման կարևորագույն բաղադրիչներից մեկն արդյունավետ և խնայողական բնօգտագործումն է և բնության պահպանությունը, ինչը ենթադրում է, որ երկրի կամ տարածաշրջանի զարգացումը պետք է ընթանա ոչ թե ի հաշիվ բնության, նրա ռեսուրսների անխնա օգտագործման, այլ հօգուտ բնության, նրա պահպանման և ռեսուրսների հնարավորինս վերականգնման: Սյունիքում է գտնվում ՀՀ մետաղային հանքային ռեսուրսների (պղինձ, մոլիբդեն, երկաթ և այլն) զգալի մասը: Սյունիքը երկրի ջրային, այդ թվում՝ ջրաէներգետիկ, հողային, անտառային և ռեկրեացիոն ռեսուրսներով առավել ապահովված մարզերից է: Բնական հարուստ ռեսուրսները և բնական պայմանների մեծ բազմազանությունը բարենպաստ նախադրյալներ են ստեղծում բազմաճյուղ տնտեսության զարգացման համար: Ընդ որում, տարբեր տարածական զուգակցություններով տեղաբաշխված բնական ռեսուրսները բավարար հիմք են հանդիսանում մարզի տարբեր մասերում տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման համար:

Բացի գյուղատնտեսությունից, ջրաէներգետիկայից, տեղական արդյունաբերական և գյուղատնտեսական հումքի վերամշակման ճյուղերի զարգացումից, մարզի գերակա զարգացման ուղղություններից է զբոսաշրջությունը: Մարզի գեղեցիկ լեռնային լանդշաֆտները, հսկայական անտառային տարածքները,

բնության բազմազանությունը և տեսարժան վայրերը, բազմաթիվ պատմական և ճարտարապետական հուշարձանները, զանգեզուրցիների ավանդական հյուրընկալությունը, հոգևոր և նյութական մշակութային արժեքները բարենպաստ պայմաններ են ստեղծում զբոսաշրջության բազմաթիվ տեսակների (ճանաչողական, էկոլոգիական, գյուղական, մարզական և այլն) զարգացման համար: Այս հեռավոր մարզի զբոսաշրջության զարգացման համար խիստ կարևոր են նաև զբոսաշրջային ենթակառուցվածքների, հատկապես հյուրանոցային ցանցի և որակյալ ճանապարհների ստեղծումը և ընդլայնումը: Սակայն զբոսաշրջության զարգացմանը խոչընդոտում է մարզի հարավային մասում ստեղծված լարված էկոլոգիական վիճակը:

Մարզի հանքագործական ձեռնարկությունների, հատկապես Ջանգեզուրի կոմբինատի կեղտաջրերը և կոշտ թափոնները աղտոտում են Ողջի գետը և մյուս մակերևութային ջրերը, գյուղատնտեսական հանդակները և հատկապես Քաջարան և Կապան քաղաքների շրջակա, ռեկրեացիոն առումով շատ արժեքավոր տարածքները: Կապանից ներքև կառուցվել է 130 մլն խոր. մ տարողությամբ մնացորդների խոշոր պահեստ, որտեղ կուտակվում են ոչ միայն Կապանի, այլ նաև Քաջարանի կոմբինատի թափոնները: Այդ նպատակով կառուցվել է Քաջարանից սկիզբ առնող 34 կմ երկարությամբ մնացորդամուղ, որը կեղտաջրերից ազատում է Ողջի գետը և, շրջանցելով Կապան քաղաքը, դրանք հասցնում է մնացորդապահեստարան՝ գտելու, մաքրելու համար:

Բավական է նշել, որ Սյունիքում 2001-2011 թթ. ընթացքում մթնոլորտային արտանետումները մեկ բնակչի հաշվով ավելացել են ավելի քան 22,7 անգամ (ՀՀ-ում՝ 5,2 անգամ), իսկ նույն ժամանակահատվածում մթնոլորտ արտանետված փոշու քանակը մարզում ավելացել է ավելի քան 3,3 անգամ (ՀՀ-ում՝ 1,4 անգամ): Կան նաև որոշ դրական տեղաշարժեր, մասնավորապես այն, որ 2003-2011 թթ. ընթացքում, հանքագործական արտադրության մասշտաբների զգալի ավելացման պայմաններում, թափոնների զանգվածը մեկ բնակչի հաշվով ավելացել է «ընդամենը» 1,1 անգամ, թեև 2011 թ. տվյալներով այն շուրջ 21 անգամ գերազանցում է ՀՀ միջին ցուցանիշ: Որոշակի առումով դրական կարելի է համարել նաև փաստը, որ առանց մաքրման կեղտաջրերի ծավալները նույն ժամանակահատվածում նվազել են մոտ 35 անգամ, և եթե 2003 թ. դրանք կազմում էին ՀՀ առանց մաքրման կեղտաջրերի 77%-ը, ապա 2011 թ.՝ 1,5%-ը: Դրական պետք է գնահատել նաև այն, որ հետազոտվող ժամանակահատվածում (2001-2011 թթ.) բնապահպանական և բնօգտագործման վճարները մարզում մեկ բնակչի հաշվով ավելացել են 9,1 անգամ (ՀՀ-ում՝ 6,5 անգամ) և ներկայումս կազմում են ՀՀ-ում կատարվող ընդհանուր վճարների շուրջ 63%-ը, իսկ բնապահպանության ընթացիկ ծախսերն ավելացել են 11,9 անգամ (ՀՀ-ում՝ 4,4 անգամ), որը կազմում է ՀՀ բնապահպանական ամբողջ ծախսերի ընդամենը 13,5%-ը: Չնայած բնապահպանության ոլորտում առկա որոշ դրական տեղաշարժերին, մարզում դեռևս շարունակվում է բնական տարբեր ռեսուրսների՝ հանքային (մետաղներ, շինանյութեր), անտառային, ջրային ոչ խնայողական և չիմնավորված օգտագործումը, որը հանգեցնում է հանքանյութերի սպառմանը, անտառային տարածքների և գյուղատնտեսական արժեքավոր հողահանդակների կրճատմանը:

Այսպիսով՝ վերջին տասը տարվա վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ ինքնատիպ, ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող, բնական և մարդկա-

յին ռեսուրսներով բավականաչափ ապահովված, բազմազան բնական պայմաններով աչքի ընկնող Սյունիքի մարզի զարգացման տեմպերը, ուղղությունները, կառուցվածքային տեղաշարժերը հեռու են բավարար լինելուց և չեն նպաստում մարզի կայուն և հավասարակշռված զարգացմանը, սոցիալ-տնտեսական և էկոլոգիական բազում խնդիրների լուծմանը: Անհրաժեշտ է իրականացնել տարածաշրջանային գիտականորեն հիմնավորված պետական քաղաքականություն՝ հաշվի առնելով ՀՀ մարզերի տեղային առանձնահատկությունները, նոր մոտեցումներով և սկզբունքներով մշակել տարածաշրջանային կայուն զարգացման հայեցակարգի վրա հիմնված սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրեր, որոնցում կտրվեն մարզի տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական, քաղաքաշինական հեռանկարային զարգացման հիմնական ուղղություններն ու պարամետրերը՝ հաշվի առնելով բնության պահպանության շահերը:

### Գրականություն

1. Մանասյան Մ., Աշխարհագրության ներածություն / Եր., 2012, - 460 էջ:
2. Даниелян К. Концепция устойчивого человеческого развития: теория и практика / Ер., 1996.
3. Մանասյան Մ., Գրիգորյան Ա., Պոտոսյան Ա., Սյունիքի մարզ. բնությունը, բնակչությունը, տնտեսությունը / Եր., 2002. – 158 էջ:
4. Քաջարան. բնությունը և էկոլոգիան / Եր., 2009 թ., 160 էջ:
5. Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը քվերով, ԱՎԾ. Վիճակագրական ժողովածու / Եր., 2001, 2005, 2012, 2013:
6. Հայաստանի ժողովրդագրական ժողովածու / Եր., 2012 թ.

### ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննարկվում են Սյունիքի զարգացման հիմնախնդիրները կայուն հասարակական զարգացման հայեցակարգի տեսանկյունից, ըստ տնտեսական, սոցիալական և էկոլոգիական բաղադրիչների: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում տարաբնակեցման և ժողովրդագրական գործընթացներին:

### АННОТАЦИЯ

#### МАНАСЯН М., МАНАСЯН А. – ПРОБЛЕМЫ УСТОЙЧИВОГО РЕГИОНАЛЬНОГО РАЗВИТИЯ ГОРНЫХ РЕГИОНОВ РА (НА ПРИМЕРЕ СЮНИКСКОГО МАРЗА)

В статье с точки зрения концепции устойчивого общественного развития рассматриваются проблемы развития области Сюник, в экономическом, социальном и экологическом аспектах. Особое внимание уделяется проблемам расселения и демографии.

### SUMMARY

#### MANASYAN M., MANASYAN H. – PROPLEMS OF SUSTAINABLE DEVELOPMENT OF MOUNTANIOUS REGIONS OF RA (ON THE EXAMPLE OF SYUNIK)

In the article the problems of Syunik region sustainable social development are discussed according to economic, social and environmental components analyzed seperately and jointly. Special importance is given to the settlement and demographic processes.

**ԱԿՍԵԼ ՊՈՏՈՍՅԱՆ**

*աշխարհագրական գիտությունների թեկնածու,  
ԵՊՀ սոցիալ-տնտեսական աշխարհագրության  
ամբիոնի դոցենտ  
aksel.Potosyan@yandex.ru*

**ՇՈՂԻԿ ՔՈԼՅԱՆ**

*Երևանի թիվ 105 ավագ դպրոցի ուսուցչուհի*

### **ՀՀ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ժամանակակից պայմաններում գյուղական տարաբնակեցման հետագա զարգացումը, վերափոխումն ու կատարելագործումը տեղի է ունենում բնական, արտադրատնտեսական, ֆինանսական, սոցիալ-ժողովրդագրական, վարչատարածքային ու ուրբանիզացիոն և այլ գործոնների ազդեցության տակ: Գյուղական տարաբնակեցման համակարգի զարգացման վրա այդ գործոնների ազդեցության ուսումնասիրումը հնարավորություն է տալիս բացահայտել ինչպես առանձին գյուղական բնակավայրերի, այնպես էլ գյուղական տարաբնակեցման համակարգի զարգացման միտումները և վերափոխման ու կատարելագործման ուղիները:

Ցանկացած տարածքում բնական համալիրի տարրերից գյուղական տարաբնակեցման և առանձին գյուղական բնակավայրի զարգացման վրա իրենց ազդեցությունն են թողնում ռելիեֆային և կլիմայական պայմանները, հողաբուսական ծածկը, ջրագրական ցանցը և տեղային այլ գործոններ, որոնք ենթակա են փոփոխության տեղից-տեղ՝ կախված աշխարհագրական լայնությունից և ծովի մակարդակից ունեցած բարձրությունից:

ՀՀ համեմատաբար փոքր և լեռնային մակերևույթ ունեցող տարածքում բնական համալիրի տարրերից առանձին գյուղական բնակավայրերի և տարաբնակեցման համակարգի զարգացման ու վերափոխման վրա ազդող ինտեգրալ ցուցանիշ կարելի է համարել տեղանքի ծովի մակարդակից ունեցած բարձրությունը, քանի որ վերջինիս փոփոխմամբ, որպես օրենք, փոփոխվում են նաև բնական համալիրի մյուս տարրերը: Ընդ որում, գյուղական բնակավայրերի ծովի մակարդակից ունեցած բարձրության աճմանը զուգընթաց ընդհանուր առմամբ վատանում են բնակչության կենսագործունեության պայմանները և նվազում են գյուղական բնակավայրերի զարգացման հնարավորությունները:

Ժամանակակից պայմաններում գյուղական տարաբնակեցման վերափոխումն ու կատարելագործումը և առանձին գյուղերի զարգացումը մեծապես կախված են ֆինանսական և արտադրատնտեսական գործոններից: Դրանց թվում առավել մեծ դեր ունեն գյուղական համայնքի վարչական բյուջեի փաստացի եկամուտները, համայնքի բնակչության բյուջեի սեփական եկամուտները, գյուղական բնակավայրի գյուղատնտեսական հողատարածքներով և մասնավորապես՝ մշակելի հողատարածքներով ապահովվածությունը:

Վարչատարածքային ու ուրբանիզացիոն գործոններից գյուղական բնակավայրերի և տարաբնակեցման համակարգի զարգացման և վերափոխման վրա առավել մեծ ազդեցություն են թողնում տարածաշրջանային, մարզային և հանրապետական նշանակության կենտրոններից գյուղական բնակավայրերի ունեցած հեռավորությունը: Որպես այդպիսիք հանդես են գալիս նախկին վարչական շրջանների կենտրոնները, մայրաքաղաք Երևանը և տարաբնակեցման համակարգի տեղային այլ կենտրոններ:

Բացի նշվածներից գյուղական բնակավայրերի զարգացումը և տարաբնակեցման համակարգի վերափոխումն ու կատարելագործումը մեծապես կախված են սոցիալ-ժողովրդագրական և այլ գործոններից: Դրանցից առավել մեծ դեր ունեն գյուղական բնակավայրերի ապահովվածությունը սոցիալ-մշակութային ծառայություններով և առկա ժողովրդագրական իրավիճակը՝ բնակչության սեռատարիքային կառուցվածքը, վերարտադրության և միգրացիոն գործընթացները, սոցիալ-հոգեբանական այլ գործոններ:

ՀՀ տարբեր մարզերում, տարածաշրջաններում և նույնիսկ առանձին գյուղական համայնքներում ու գյուղերում վերը նշված գործոնների խմբի և առանձին գործոնների ազդեցությունը գյուղական բնակավայրերի զարգացման և տարաբնակեցման համակարգի վերափոխման ու կատարելագործման վրա դրսևորվում են տարբեր կերպ: Այսպես՝ հանրապետության բարձրադիր-լեռնային շրջաններում (բնակավայրերում) գյուղական բնակավայրերի զարգացման վրա դեռևս էական դեր ունեն բնական համալիրի տարրերը, սահմանամերձ շրջաններում՝ առկա տարածաշրջանային իրավիճակը, քաղաքաաշխարհագրական և տնտեսաաշխարհագրական դիրքը, մայրաքաղաքային ռեգիոնում՝ տրանսպորտային ցանցի խտությունը, մայրաքաղաքից ունեցած հեռավորությունը և տրանսպորտային կապով ապահովվածության աստիճանը: Դրա հետ միաժամանակ, ինչպես առանձին գյուղական համայնքների ու գյուղերի, այնպես էլ տարաբնակեցման համակարգի հետագա զարգացումը, վերափոխումն և կատարելագործումը կախված են վերը նշված գործոնների խմբի համալիր ազդեցությամբ:

Հաշվի առնելով ՀՀ գյուղական տարաբնակեցման զարգացման ժամանակակից առանձնահատկությունները, ինչպես նաև նկատի ունենալով մեր հանրապետությունում առկա սոցիալ-տնտեսական և տարածաշրջանային իրավիճակը, ելնելով համապատասխան վիճակագրական տվյալների ձեռքբերման հնարավորությունից ու առկայությունից, առանձնացրել ենք այն հիմնական գործոնները, որոնք ունեն առավել մեծ դեր ինչպես առանձին գյուղական բնակավայրերի, այնպես էլ տարածաշրջանների և ողջ հանրապետության գյուղական տարաբնակեցման զարգացման, վերափոխման և կատարելագործման համար: Այդպիսի գործոններ են համարվում գյուղական համայնքի (բնակավայրի) ծովի մակարդակից ունեցած բարձրությունը, վարչական բյուջեի փաստացի եկամուտները, մշակելի հողատարածքների և գյուղատնտեսական ընդհանուր հողատարածքների մեծությունը, նախկին շրջկենտրոններից և մարզկենտրոններից ունեցած հեռավորությունն ու ուրբանիզացիայի մակարդակը, ինչպես նաև գյուղական բնակավայրի հեռավորությունը գյուղատնտեսական և առևտրային մեծ շուկաներից, մայրաքաղաք Երևանից:

Նշված գործոնների ազդեցությունը տարածաշրջանի գյուղական տարաբնակեցման վրա դրսևորվում է տարաբնակեցումը բնութագրող այնպիսի ցուցա-

նիշներով, ինչպիսիք են գյուղական բնակավայրի միջին մարդաքանակը, տարածաշրջանի գյուղական բնակչության և բնակավայրերի խտությունը:

Գյուղական տարաբնակեցման հիմնական բնութագրերի վրա նշված գործոնների ազդեցությունը պարզելու համար կոռելյացիոն վերլուծության մեթոդով կատարել ենք հետազոտություն և բացահայտել ենք յուրաքանչյուր գործոնի ազդեցությունը գյուղական տարաբնակեցումը բնութագրող ցուցանիշների՝ մասնավորապես գյուղական բնակավայրերի մարդաքանակի վրա: Վերջինս՝ գյուղական բնակավայրի մարդաքանակը, ըստ էության, ինտեգրալ այն ցուցանիշն է, որն ընդհանրական ձևով արտահայտում է գյուղական տարաբնակեցման ընդհանուր պատկերը և գյուղական բնակավայրի զարգացման ու վերափոխման արդյունքը:

ՀՀ գյուղական տարաբնակեցման տարածաշրջանային ընդհանրական ցուցանիշների՝ *գյուղական բնակավայրերի միջին մարդաքանակի, գյուղական բնակչության և գյուղական բնակավայրերի խտության վրա* առանձին գործոնների ազդեցության վերլուծությունը կատարել ենք ՀՀ նախկին վարչական շրջանների կամ ներկայիս տարածաշրջանների կտրվածքով, իսկ մնացած դեպքերում հետազոտության առարկա են համարվել նույն այդ տարածաշրջանների մեջ մտնող գյուղական համայնքներն ու բնակավայրերը՝ տարաբնակեցման համակարգի սկզբնական միավորները:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ՀՀ տարածաշրջանների գյուղական բնակչության խտությունը սերտ կապ ունի այդ շրջանների ընդհանուր տարածքում գյուղատնտեսական հողատարածքների մասնաբաժնի հետ: Դրանց միջև աստիճանային կոռելյացիայի գործակիցը կազմում է 0,57: Դա նշանակում է, որ ՀՀ-ում, և մասնավորապես առանձին տարածաշրջաններում, գյուղական բնակչության թվաքանակի մեծությունը և դրանով պայմանավորված գյուղական բնակչության խտությունն անմիջական, սերտ կապ ունի բնակավայրերի զարգացման հիմնական արտադրական բազայի՝ գյուղատնտեսական հողատարածքների մեծության հետ: Միաժամանակ պետք է նշել, որ առանձին տարածաշրջանների գյուղատնտեսական հողատարածքների հարաբերական մեծությունների և գյուղատնտեսական հողատարածքների հաշվով գյուղական բնակչության խտության ցուցանիշների միջև կապը համեմատաբար թույլ է (կոռելյացիայի գործակիցը հավասար է 0,24-ի): Դա բացատրվում է այն հանգամանքով, որ ՀՀ տարբեր տարածաշրջաններ ունեն ոչ միայն ընդհանուր տարածքում գյուղատնտեսական հողատարածքների տարբեր տեսակարար կշիռներ, այլ նաև գյուղատնտեսական հողատարածքների կառուցվածքում մշակելի հողատարածքների և արոտավայրերի ու խոտհարքների տարբեր չափաբաժիններ, որոնք տարբեր տարածաշրջաններում գտնվում են ծովի մակարդակից զգալիորեն մեծ տարբերություններ ունեցող բարձրությունների վրա և ունեն հողակլիմայական պայմանների նկատելի տարբերություններ: Թույլ կապ կա նաև նախկին վարչական շրջանների գյուղատնտեսական հողատեսքերի մասնաբաժինների և այդ շրջանների գյուղական բնակչության թվաքանակի միջև՝ 0,314: Դրա պատճառը ևս ՀՀ տարբեր տարածաշրջանների բնաաշխարհագրական և ագրոկլիմայական զգալիորեն մեծ տարբերություններ ունեցող պայմաններն են, որոնց պատճառով այդ տարածքներում կարող են ձևավորվել և զարգանալ տարբեր մեծության և քանակի գյուղական բնակավայրեր: Այսպես, օրինակ,

Արմավիրի և Ամասիայի տարածաշրջաններում գյուղատնտեսական հողատարածքների մասնաբաժինը կազմում է 67-ական տոկոս, սակայն Արմավիրն ունի 37 գյուղական բնակավայր 2119 մարդ միջին մարդաքանակով, իսկ Ամասիան՝ 26 գյուղական բնակավայր, 277 մարդ միջին մարդաքանակով:

Ցանկացած տարածաշրջանի գյուղական տարաբնակեցման համակարգի զարգացման և վերափոխման գործընթացները մեծապես կախված են նաև գյուղական տարաբնակեցումը բնութագրող մեկ այլ ցուցանիշից՝ գյուղական բնակավայրերի խտությունից, որն արտահայտվում է 100 կմ<sup>2</sup> տարածքին կամ էլ 100 կմ<sup>2</sup> գյուղատնտեսական հողատարածքին բաժին ընկնող գյուղերի քանակով (երբեմն գյուղական բնակավայրերի խտությունն արտահայտում են գյուղական բնակավայրերի միջև միջին հեռավորությամբ):

ՀՀ-ում վարչական տարածաշրջանների գյուղատնտեսական հողատարածքների հարաբերական մեծությունների և գյուղատնտեսական հողատարածքների հաշվով գյուղական բնակավայրերի խտության միջև կոռելյացիոն կապ գրեթե չկա (0,02): Դրա պատճառը հանրապետության տարբեր տարածաշրջանների գյուղատնտեսական հողատարածքների հողակլիմայական պայմանների և ագրոկլիմայական ռեսուրսների զգալիորեն մեծ տարբերություններն են, որոնք այս կամ այն տարածաշրջանում ստեղծում են տարբեր քանակի և մեծության գյուղական բնակավայրերի ձևավորման և զարգացման համար միանգամայն տարբեր նախադրյալներ: Օրինակ, Արտաշատի և Սևանի տարածաշրջաններն ունեն գյուղատնտեսական հողատարածքների գրեթե հավասար հարաբերական մեծություններ, սակայն Արտաշատի տարածաշրջանում գյուղատնտեսական հողատարածքների հաշվով գյուղական բնակավայրերի խտությունը մոտ երեք անգամ գերազանցում է Սևանի տարածաշրջանի համապատասխան ցուցանիշը:

Հանրապետության գյուղական տարաբնակեցումը և տարաբնակեցման համակարգի զարգացման մակարդակը բնութագրող մյուս կարևորագույն ցուցանիշը գյուղական բնակավայրերի միջև հեռավորությունն է, որը բավական սերտ կապ ունի ՀՀ վարչական տարածաշրջանների գյուղատնտեսական հողատարածքների հարաբերական մեծությունների հետ: Դրանց միջև աստիճանային կոռելյացիայի գործակիցը հավասար է 0,605-ի: Սա այն իրողության ապացույցն է, որ ինչքան մեծ է գյուղատնտեսական հողատարածքների տեսակարար կշիռը, այնքան շատ են և խիտ են տեղաբաշխված գյուղական բնակավայրերը:

ՀՀ տարածաշրջանների գյուղական տարաբնակեցման մյուս կարևոր բնութագրիչը՝ գյուղերի միջին մարդաքանակը, որոշակի կախվածություն ունի այդ տարածաշրջանների գյուղատնտեսական հողատարածքների մեծությունների հետ: Դրանց միջև աստիճանային կոռելյացիայի գործակիցը կազմում է 0,36: Դրա պատճառը նույնպես այդ տարածաշրջանների գյուղատնտեսական հողատարածքների կառուցվածքի, հողակլիմայական պայմանների և ծովի մակարդակից ունեցած բարձրությունների զգալիորեն մեծ տարբերություններն են, որոնք ստեղծում են տարբեր մեծության գյուղական բնակավայրերի ձևավորման համար բնաաշխարհագրական և արտադրատնտեսական միանգամայն տարբեր պայմաններ:

Գիտագործնական առումով մեծ կարևորություն և նշանակություն ունի նաև գյուղական տարաբնակեցման զարգացման և վերափոխման վրա ազդող գործոնների վերլուծությունը գյուղական համայնքների կամ բնակավայրերի մակար-

դակով: Դա հնարավորություն կտա բացահայտել տարաբնակեցման համակարգի սկզբնական օղակի միավորների վրա ազդող հիմնական գործոնները:

ՀՀ գյուղական բնակավայրերի զարգացման և տարաբնակեցման վերափոխման ու կատարելագործման գործում մեծ դեր ունեն գյուղական համայնքների վարչական բյուջեի փաստացի եկամուտները: Հանրապետության 37 տարածաշրջաններից 22-ում վարչական բյուջեի մեծության և գյուղական համայնքի բնակչության թվաքանակի միջև կոռելյացիոն կապի գործակիցը անցնում է 0, 90-ից, Ամասիայի տարածաշրջանում այն կազմում է 0,11, իսկ մնացած տարածաշրջաններում տատանվում է 0,7-0,9-ի սահմաններում (մանրամասն տես աղ. 1):

Մեր հանրապետության գյուղական համայնքների ու բնակավայրերի և տարաբնակեցման համակարգի զարգացման վրա մեծ ազդեցություն ունեն մշակելի հողատարածքները: Դրանց չափերից և արդյունավետ օգտագործումից է կախված գյուղական բնակավայրերի մարդաքանակը: Բացառությամբ Մեղրու, Անիի, Ամասիայի և Բաղրամյանի տարածաշրջանների, մյուսներում գյուղական համայնքների մշակելի հողատարածքների չափերի և գյուղերի մարդաքանակի միջև կոռելյացիոն անմիջական կապ կա: Այդ կապն առավել սերտ է Նոյեմբերյանի, Գավառի, Էջմիածնի, Սևանի, Տաշիրի, Արագածի, Աշոցքի և Ստեփանավանի տարածաշրջաններում, իսկ համեմատաբար թույլ է Արթիկի, Թալինի, Կապանի, Սպիտակի, Նաիրիի, Վարդենիսի, Մասիսի, Արմավիրի և Եղեգնաձորի տարածաշրջաններում (աղ. 1): ՀՀ 15 տարածաշրջաններում գյուղական համայնքների ու բնակավայրերի մարդաքանակը մեծապես կախված է ընդհանուր գյուղատնտեսական հողատարածքների չափերից (աղ.1): Կոտայքի, Նաիրիի, Հրազդանի և Մարտունու տարածաշրջաններում այդ երևույթների միջև կապը գրեթե բացակայում է, Բաղրամյանի տարածաշրջանում այդպիսի կապը գրեթե հակադարձ է (-0,72), իսկ Արարատի, Եղեգնաձորի և Ամասիայի տարածաշրջաններում նշված մեծությունների միջև աստիճանային կոռելյացիայի գործակիցը տատանվում է -0,42-ի - (-0,22-ի) սահմաններում:

Չնայած որ լեռնային երկրներում ծովի մակարդակից ունեցած բարձրության ավելացմանը զուգընթաց նվազում է բնակչության թիվը և խտությունը, սակայն ՀՀ-ում գյուղական համայնքների ծովի մակարդակից ունեցած բարձրության և գյուղերի մարդաքանակի միջև կապը թույլ է: Այդպիսի կապն առավել սերտ է Ամասիայի (0,80), Եղեգնաձորի (0,75), Վարդենիսի (0,70), Կոտայքի (0,59), Նաիրիի (0,63), Բաղրամյանի (0,69), Արարատի (0,54) և Ախուրյանի (0,51) տարածաշրջաններում: Անիի տարածաշրջանում այդպիսի կապը մոտ է հակադարձին, իսկ մնացած տարածաշրջաններում կամ թույլ է կամ էլ գրեթե բացակայում է (աղ. 1):

Ցանկացած տարածքում տարաբնակեցման համակարգի զարգացման վրա մեծ ազդեցություն են թողնում տարածքի ուրբանիզացվածության մակարդակը, քաղաքային բնակավայրերի թիվը և տարածաշրջանային ու տեղական կենտրոնների զարգացման մակարդակը: Մեր հանրապետության ժամանակակից գյուղական տարաբնակեցման համակարգի զարգացման վրա բավական երկարատև ժամանակաշրջան իրենց ազդեցությունն են թողել տարածաշրջանային կամ վարչական շրջանների կենտրոնները, որոնք այդ շրջանների սահմաններում կատարել են վարչական, տնտեսական, առողջապահական և մշակութային ոլորտների կազմակերպիչ կորիզի դեր: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ՀՀ նախկին վարչական շրջանների կենտրոններից ունեցած հեռավոր-

րության և գյուղական բնակավայրերի մարդաքանակի միջև կա որոշակի կապ: Հանրապետության քսանչորս տարածաշրջանում տարածաշրջանային կենտրոնից ունեցած հեռավորության և գյուղական բնակավայրերի մարդաքանակի միջև աստիճանային կոռելյացիայի գործակցի ցուցանիշները փոքր չեն 0,3-ից: Այդ կապն առավել սերտ է Անիի, Աշոցքի, Աշտարակի, Գորիսի, Իջևանի, Գավառի, Մարտունու, Վարդենիսի, Արարատի, Արտաշատի և Եղեգնաձորի տարածաշրջաններում (աղ.1): Արթիկի, Մեղրու, Թումանյանի, Սպիտակի, Նաիրիի, Մասիսի և Վայքի տարածաշրջաններում այդ կապը համեմատաբար թույլ է (0,2-0,3 սահմաններում), իսկ Ապարանի, Արագածի, Ստեփանավանի և Տաշիրի տարածաշրջաններում նախկին շրջկենտրոններից ունեցած հեռավորության և գյուղական բնակավայրերի մարդաքանակի միջև կապը գրեթե բացակայում է:

Ներկայումս ՀՀ և առանձին տարածաշրջանների ու մարզերի գյուղական տարաբնակեցման վրա իրենց ազդեցությունն են թողնում նաև մարզկենտրոնները: Հետազոտության արդյունքները վկայում են այն մասին, որ ՀՀ 21 տարածաշրջանում մարզկենտրոնից ունեցած հեռավորության և տարածաշրջանի գյուղական բնակավայրերի մարդաքանակի միջև աստիճանային կոռելյացիայի մեծությունը տատանվում է 0,3--0,7-ի սահմաններում: Այդ ցուցանիշն առավել մեծ է Ախուրյանի, Ամասիայի, Աշտարակի, Ապարանի, Իջևանի, Գավառի, Վարդենիսի, Արտաշատի, Արարատի և Եղեգնաձորի տարածաշրջաններում: Աշոցքի, Արթիկի, Արագածի, Թումանյանի, Սպիտակի, Տաշիրի, Մարտունու, Սևանի, Մասիսի և Վայքի տարածաշրջաններում այդպիսի կապը գրեթե բացակայում է, իսկ Գորիսի, Մեղրու, Տավուշի և Նաիրիի տարածաշրջաններում այն ավելի շատ հակադարձ է, էջմիածնի տարածաշրջանում՝ շատ թույլ:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ մարզկենտրոններում և նախկին շրջկենտրոններում վարչական գործառույթին զուգահեռ տնտեսական, սոցիալական, մշակութային, առողջապահական և այլ ծառայությունների բազմազան ձևերի, ինչպես նաև ուրբանիզացիոն գործընթացների համաչափ զարգացումը էական դեր կունենա գյուղական բնակավայրերի զարգացման ու առաջընթացի և տարաբնակեցման համակարգի կայունացման և կատարելագործման համար:

ՀՀ նման փոքր տարածք ունեցող երկրներում գյուղական բնակավայրերի և տարաբնակեցման համակարգի զարգացման վրա իր նշանակալից ազդեցությունն է թողնում նաև երկրի մայրաքաղաքը: Այդ ազդեցությունն ավելի մեծ է լինում մայրաքաղաքային ռեգիոնում և աստիճանաբար թուլանում է մայրաքաղաքից ունեցած հեռավորության ավելացման համեմատ:

*Աղյուսակ 1*

**ՀՀ գյուղական համայնքների (բնակավայրերի) մարդաքանակի և բնական, արտադրա-տնտեսական, ֆինանսական և վարչատարածքային ու ուրբանիզացիոն գործոնների միջև աստիճանային կորելյացիայի գործակիցը ըստ տարածաշրջանների**

Տարածաշրջանները	Կորելյացիոն կապը մշակելի հողատարածքների և գյուղերի մարդաքանակի միջև	Կորելյացիոն կապը գյուղատնտեսական հողատարածքների և գյուղերի մարդաքանակի միջև	Կորելյացիոն կապը գյուղական համայնքների վարչական բյուջեի և գյուղերի մարդաքանակի միջև	Կորելյացիոն կապը գյուղերի բացառման բարձրությունների և դրանց մարդաքանակի միջև	Կորելյացիոն կապը գյուղերի մարդաքանակի և նախկին շրջակայքներից ունեցած հեռավորության միջև	Կորելյացիոն կապը գյուղերի մարդաքանակի և մարդկենտրոններից ունեցած հեռավորության միջև
Ախուրյանի	0,75	0,34	0,97	0,51	0,41	0,59
Ամասիայի	0,09	-0,42	0,11	0,80	0,28	0,70
Աշոցքի	0,78	0,30	0,77	0,06	0,45	-0,03
Արթիկի	0,45	0,65	0,97	-0,38	0,20	-0,10
Անիի	0,09	0,664	0,88	-0,78	0,76	0,32
Աշտարակի	0,61	0,28	0,97	0,42	0,44	0,44
Ապարանի	0,54	0,45	0,95	0,16	-0,05	0,46
Արագածի	0,77	0,53	0,97	-0,28	0,04	-0,17
Թալիների	0,43	0,50	0,96	0,05	0,26	0,34
Գորիսի	0,61	0,68	0,98	0,19	0,52	-0,40
Կապանի	0,38	0,49	0,85	0,10	0,29	0,29
Մեղրու	-0,03	0,22	0,70	0,57	0,19	-0,32
Սիսիանի	0,79	0,48	0,89	0,34	0,32	0,35
Իջևանի	0,54	0,46	0,99	0,26	0,43	0,43
Լոյենքերյանի	0,92	0,77	0,97	-0,12	0,34	0,07
Տավուշի	0,57	0,57	0,98	0,02	-0,20	-0,45
Գուգարքի	0,72	0,56	0,92	-0,08	0,32	0,26
Թումանյանի	0,59	0,41	0,75	0,40	0,19	0,07
Սպիտակի	0,41	0,68	0,99	-0,11	0,16	0,05
Ստեփանավանի	0,76	0,19	0,93	0,15	0,06	0,35
Տաշիրի	0,80	0,25	0,92	-0,10	0,00	0,04
Կոտայքի	0,21	-0,06	0,83	0,59	0,41	0,31
Լաիրիի	0,43	-0,06	0,96	0,63	0,63	-0,36
Հրազդանի	0,75	0,05	0,89	0,32	0,39	0,39
Գավառի	0,90	0,94	0,95	0,02	0,51	0,51
Կրասնոսելսկի	0,69	0,69	0,91	-0,28	0,42	0,35
Մարտունու	0,35	0,08	0,84	0,23	0,55	-0,10
Սևանի	0,87	0,67	0,82	0,21	0,37	0,02
Վարդենիսի	0,49	0,24	0,90	0,70	0,43	0,56
Արտաշատի	0,72	0,68	0,95	0,25	0,43	0,43
Արարատի	0,59	-0,22	0,96	0,54	0,56	0,68
Մասիսի	0,44	0,40	0,80	-0,30	0,22	0,00
Էջմիածնի	0,81	0,72	0,98	-0,28	-0,28	0,19

Արձափրի	0,49	0,6	0,97	0,21	0,30	0,30
Բաղրանյանի	0,02	-0,72	0,89	0,69	0,28	0,34
Եղեգնաձորի	0,49	-0,29	0,96	0,75	0,61	0,61
Վայքի	0,78	0,41	0,80	0,03	0,25	0,02

*Աղբյուրը՝ ԳՀ Տարածքային կառավարման նախարարության կողմից հեղինակին բարեհոգաբար տրամադրված գյուղական համայնքների 2012 թ. բնակչության թվաքանակի, գյուղատնտեսական և մշակելի հողատարածքների, վարչական բյուջեի եկամուտների, նախկին շրջկենտրոններից և մարզկենտրոններից ունեցած հեռավորության վերաբերյալ տվյալները:*

Ժամանակակից պայմաններում, երբ ՀՀ-ում աստիճանաբար զարգանում և խորանում են շուկայական տնտեսական հարաբերությունները, գյուղական տարաբնակեցման և առանձին գյուղական բնակավայրերի զարգացման վրա զգալի ազդեցություն են թողնում մոտակա մեծ առևտրային և գյուղատնտեսական շուկաները: Վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հանրապետության բոլոր մարզերում գյուղական բնակավայրերի համար մոտակա մեծ առևտրային և գյուղատնտեսական շուկայի դեր են կատարում մարզկենտրոնները և տարածաշրջանային կենտրոնները, մայրաքաղաքին սահմանակից մարզերի առանձին գյուղերի համար այդպիսի գործառույթ է իրականացնում նաև Երևանը, իսկ որոշ դեպքերում նման դեր են կատարում տարածաշրջանային նշանակության քաղաքային բնակավայրերը և տեղական կենտրոնները: Ստացվում է, որ մարզկենտրոնները և տարածաշրջանային կենտրոնները ժամանակակից պայմաններում բացի վարչակազմակերպչական գործառույթից, գյուղական բնակավայրերի համար ունեն նաև արտադրատնտեսական և առևտրային կենտրոնի նշանակություն և մարզկենտրոններից ու տարածաշրջանային կենտրոններից գյուղական բնակավայրերի ունեցած հեռավորությունն էական նշանակություն ունի ինչպես առանձին գյուղական բնակավայրերի, այնպես էլ տարաբնակեցման ողջ համակարգի զարգացման և վերափոխման համար:

Այսպիսով, կատարված հետազոտության և վերլուծության շնորհիվ ստացված արդյունքները հնարավորություն են տալիս մեզ կատարել որոշակի եզրահանգումներ.

1. Ժամանակակից պայմաններում ՀՀ գյուղական տարաբնակեցման զարգացումը, վերափոխումը և կատարելագործումը տեղի է ունենում բնական, արտադրատնտեսական, ֆինանսական, սոցիալ-ժողովրդագրական, աշխարհաքաղաքական (տարածաշրջանային) և վարչատարածքային ու ուրբանիզացիոն գործոնների ազդեցության տակ, որոնք ՀՀ տարբեր մարզերում, տարածաշրջաններում և գյուղական համայնքներում ու բնակավայրերում դրսևորվում են տարբեր կերպ՝ կախված դրանց աշխարհագրական դիրքից, բնատնտեսական առանձնահատկություններից, սոցիալ-ժողովրդագրական ու տարածաշրջանային իրավիճակից:

2. ՀՀ տարածաշրջանների գյուղական տարաբնակեցման ընդհանրական ցուցանիշներից գյուղական բնակչության խտությունը և գյուղական բնակավայրերի միջև հեռավորությունը սերտ կապ ունեն տվյալ տարածաշրջանի գյուղատնտեսական հողատարածքների բացարձակ և հարաբերական մեծությունների հետ, հետևաբար ինչպես առանձին գյուղական բնակավայրերի, այնպես էլ

առանձին տարածաշրջանների ու ողջ գյուղական տարաբնակեցման համակարգի հետագա զարգացումը, վերափոխումն ու կատարելագործումը նախ և առաջ պայմանավորված են վերջինիս հիմնական արտադրատնտեսական բազայի՝ գյուղատնտեսական հողատարածքների արդյունավետ օգտագործումից, կամ որ նույնն է՝ գյուղատնտեսական արտադրության ինտենսիվացումից:

3. Հանրապետության տարածաշրջանների մեծ մասում գյուղական համայնքների ու բնակավայրերի մարդաբանակի և դրանց ծովի մակարդակից ունեցած բարձրության միջև կոռելյացիոն թույլ կապը վկայում է գյուղական տարաբնակեցման զարգացման, վերափոխման և կատարելագործման գործում բնական գործոնների դերի աստիճանական նվազման և այլ գործոնների դերի մեծացման մասին:

4. ՀՀ գյուղական համայնքների բնակչության թվաքանակի ավելացումը, սոցիալական ու տնտեսական շատ խնդիրների լուծումը մեծապես կախված են գյուղական համայնքների վարչական բյուջեի եկամուտներից և դրանց նպատակային օգտագործումից: Հանրապետության հարյուրավոր գյուղական համայնքներում վարչական բյուջեի փաստացի եկամուտները պակաս են ընդունված բյուջեի մեծություներից: Այդ հարցի լուծումն իր անմիջական դերը կունենա գյուղական համայնքներում սոցիալ-տնտեսական մի շարք խնդիրների իրագործման գործում:

5. Եթե հանրապետության գյուղական տարաբնակեցման ընդհանրական ցուցանիշներից գյուղական բնակչության բացարձակ թիվը, խտությունը և գյուղական բնակավայրերի միջև հեռավորությունը սերտ կապ ունեն տարածաշրջանների ընդհանուր գյուղատնտեսական հողատարածքների մեծությունների հետ, ապա մյուս կարևորագույն ընդհանրական ցուցանիշը՝ գյուղական համայնքների (բնակավայրերի) մարդաբանակը մեծապես կախված է գյուղական համայնքների մշակելի հողատարածքների մեծությունից: Մշակելի հողատարածքների նպատակային օգտագործումն ու դրանց արդյունավետության բարձրացումն էական դեր կունենան գյուղական բնակավայրերի կայունացման ու ամրապնդման և սոցիալ-տնտեսական առաջընթացի համար:

6. ՀՀ բոլոր մարզերում և տարածաշրջաններում գյուղական տարաբնակեցման զարգացման վերափոխման և կատարելագործման վրա էական ազդեցություն կունենան մարզային և տարածաշրջանային կենտրոնների դերի բարձրացումը և համապատասխան տարաբնակեցման համակարգերում դրանց գործառույթների լիարժեք ու արդյունավետ իրականացումը: Դրանք կհանգեցեն մարզկենտրոն-գյուղական բնակավայր, տարածաշրջանային կենտրոն գյուղական բնակավայր կապերի ամրապնդմանն ու կայունացմանը և տարաբնակեցման տեղական համակարգի զարգացմանը:

7. Ժամանակակից շուկայական տնտեսական հարաբերությունների պայմաններում մարզկենտրոնները, տարածաշրջանային կենտրոնները, առանձին քաղաքային բնակավայրեր և տեղական նշանակության կենտրոններ ՀՀ գյուղական բնակավայրերի համար հանդիսանում են նաև մոտակա մեծ առևտրային և գյուղատնտեսական շուկաներ: Այդ կենտրոնների և գյուղական բնակավայրերի միջև կայուն տրանսպորտային հաղորդակցության ապահովումն ու զարգացումը կնպաստեն գյուղական բնակավայրերի տնտեսական բազայի ամրապնդմանը և ի վերջո բոլոր գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական առաջընթացին:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մանասյան Մ. Գ., ԶԶ տարաբնակեցման համակարգը / Ե., 2005:
2. Պոտոսյան Ա. Ջ., ԶԶ գյուղական բնակչությունը և բնակավայրերը / Ե., 2013:
3. Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2012 թ., Վիճակագրական ժողովածու / Ե., 2012:

### ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում կոռելյացիոն վերլուծության մեթոդով բացահայտված է առանձին գործոնների ազդեցությունը գյուղական տարաբնակեցումը բնութագրող ցուցանիշների վրա:

### АННОТАЦИЯ

#### **ПОДОСЯН А., КОЛЯН Ш. – РЕГИОНАЛЬНЫЕ РАЗЛИЧИЯ ОСНОВНЫХ ФАКТОРОВ РАЗВИТИЯ И ПРЕОБРАЗОВАНИЯ СЕЛЬСКОГО РАССЕЛЕНИЯ РА**

В статье методом корреляционного анализа выявлено воздействие отдельных факторов на показатели сельского расселения.

### SUMMARY

#### **POTOSYAN A., QOLYAN SH. – REGIONAL DIFFERENCES OF MAIN FACTORS AFFECTING RA RURAL SETTLEMENT DEVELOPMENT AND TRANSFORMATION**

The article reveals the impact of different factors on the indicators of the rural settlements with the help of correlation analysis.

**РУБЕН КАРАПЕТЯН**

*кандидат исторических наук,  
руководитель отдела диаспоры Института  
археологии и этнографии НАН РА  
эл. почта: roubenkarapetyan@rambler.ru*

**СОНА НЕРСИСЯН**

*магистр,  
м.н.с. в отделе диаспоры Института  
археологии и этнографии НАН РА  
эл. почта: nesona@bk.ru*

**ЭКОНОМИЧЕСКИЕ ВЗАИМОСВЯЗИ АРМЕНИЯ – ДИАСПОРА В  
РОССИИ И РОЛЬ СОЦИАЛЬНЫХ СЕТЕЙ<sup>1</sup>**

Экономическая деятельность этнического меньшинства, которое обычно сформировано из мигрантов разных периодов и их последующих поколений, является результатом адаптации его отдельных групп в новом социальном пространстве. И от того, откуда набирался этот контингент, из каких социальных слоев и какими профессиональными навыками они обладают и кроме того (что очень важно) в какие условия они попадают (экономическая структура данного поселения, наличие готовых социальных сетей и т.п.), зависит интенсивность этого процесса с одной стороны, с другой – тип социальной или экономической ниши которую они осваивали. В последующем, в зависимости от крепости наследованных и приобретенных социальных сетей и формируется мотивы деятельности в сфере связей с родиной.

Армянская диаспора в России - одно из крупнейших армянских сообществ, образовавшихся вне территории этнической родины: она весьма многочисленна, социально и экономически продвинута и диверсифицирована, так как вобрала в себя все звенья армянского этноса постсоветского пространства, развитие потенциала которых происходило как в своей этнической среде, так и в инонациональном окружении. В формировании российского сегмента армянской диаспоры участвовали большинство звеньев армянского этноса, расселенных на территории бывшего СССР (далее – БС): из Армении, Азербайджана, Грузии, республик Средней Азии, Прибалтики, Украины, Белоруссии и самой России.

По данным первой всероссийской переписи 1897 года доля горожан среди армян проживавших тогда на территории Российской империи составляла более 23 процента, а по последней всесоюзной переписи населения 1989 года – в Армении около 69%, в соседних республиках 71 %, в России - 78 %, в республиках Средней Азии – 97%, в западных республиках – 93-96%. Очевидно, что социальная структура этноса была весьма сложной и диверсифицированной, обусловленной высоким

---

<sup>1</sup> Статья представляет собой сокращённый вариант главы из коллективной монографии “Армянская диаспора в контексте экономических связей Россия-Армения”, готовящейся к печати в Москве.

уровнем урбанизированности армян, следовательно превалированием в ней “городских” профессий.

При этом, по данным всех переписей населения, вне своей республики армяне отличались высокой долей лиц, компетентной в русском языке. Именно поэтому русскоязычная среда городов РФ для них была близкой в языковом и видимо не только в языковом отношении.

Инфильтруясь в новое социальное пространство, если позволяют условия новой среды, мигранты выбирают ту сферу деятельности и ту профессию, в которой они сведущи и имеют навыки. Именно поэтому учет регионального фактора в нашем исследовании представлялся наиболее важным в оценке экономического потенциала диаспоры именно в качественном отношении, в котором следует учесть не только величину капитала и сферу деятельности, но и наследованные социальные сети, в контексте которых и функционируют взаимосвязи родина-диаспора. Экономическая составляющая этих взаимосвязей, помимо простой помощи родным и родственникам, может детерминироваться собственным профилем деятельности самого предпринимателя.

Учет этих факторов весьма важен в оценке диаспорального ресурса, исходя как из интересов межгосударственных отношений двух стран, так и из необходимости учета потребностей самой республики. Необходимо понять, что диаспора способна не только помочь Армении восстановить ее прошлый экономический потенциал, но и во многом детерминировать характер ее развития: в зависимости от доминирования в той или иной области деятельности (например банковского дела) она может превалировать в республике со всеми вытекающими из этого экономическими, социальными и политическими последствиями.


Опираясь на информацию, содержащуюся в [1], нами был проделан контент-анализ, который позволил несколько сориентироваться в составе этой категории диаспоры.

Более трети представителей деловых кругов армян России по рождению являются россиянами (на графике она обозначена как РУ) во втором и третьем поколении, несколько менее трети – собственно из Армении (АМ), четверть – из Грузии (ГЕ), почти столько же – из Азербайджана (АЗ) и где-то 15-18% - других постсоветских стран (БС), в значительной мере из стран Средней Азии и Украины.

Как показывают материалы этносоциологических исследований, проведенных в течение 30 лет, у почти всех групп эмигрантов-армян имеются родные и родственники в Армении не только выходцы из РА, но и из Азербайджана и Грузии. По этим же данным зафиксировано, что определенная часть городского населения РА являются выходцами из этих стран и имеют родственные связи с российской диаспорой.

Рис. 1

**Наличие живущих вне Армении родственников у уроженцев городов РА и различных групп мигрантов – выходцев разных стран.<sup>1</sup>**




Как видно из представленного графика независимо от региона происхождения значительная часть жителей городов Армении имели родных и родственников вне республики. Причем у мигрантов извне республики больше близких родственников зарубежом, чем у местных. Так у почти 75% репатриантов имеются близкие родственники, из городов БС – 60%, в то время как у местных – где-то в пределах – 40%. Исходя из этого можно предположить, что половина представленных на графике предпринимателей могут иметь семейно-родственные связи с Арменией.

Отраслевая структура предпринимательской деятельности крупных бизнес-групп армян России представлена по той классификации, которая определялась реальными показателями отрасли приложения этой деятельности. Четверть этого капитала сконцентрирована в финансовой сфере (банки, страховые компании и т.п.), около трети – в промышленность (химической, газовой, нефтяной, авиации, судостроения, а также в пищевой), 15 % - в ИТ и коммуникации, почти 10% в строительство и недвижимость..... – см. рис.2.

<sup>1</sup> Все рисунки основываются на материалах лонгитюдных этносоциологических исследований городов РА, проведённых в 1980-2007.

Рис. 2

**Отраслевая структура предпринимательской деятельности представителей крупных бизнес групп армянской диаспоры в России**




Кроме того, каждая группа предпринимателей, в зависимости от страны выхода, по разному должна быть мотивирована на такую деятельность, которая могла бы быть связана с развитостью той или иной области экономики стран, откуда они мигрировали.

Каждый второй выходец из Армении вовлекался в строительный бизнес, половина выходцев из Азербайджана – в нефтехимическую промышленность, а почти половина грузинских армян – в банковское дело. В отраслевом плане наиболее диверсифицированной оказалась предпринимательская деятельность у армян – выходцев из самой России, которые почти в равных пропорциях представлены в трех позициях – в высоких технологиях, в банковском деле и нефтехимической промышленности.

Рис. 3

**Отраслевая структура предпринимательской деятельности российских армян, выходцев из разных стран БС.**



За российскими армянами следуют грузинские, у которых высокие позиции в сферах финансов, высоких технологий и несколько ниже – в нефтехимической промышленности, торговли и половины выходцев из Армении две трети занимают финансисты и одна треть – специалисты по высоким технологиям. Половина выходцев из Азербайджана в равной мере распределены в остальных трех отраслях (кроме высоких технологий).

Таким образом данные по составу бизнес элиты армян России показывают, что республика в лице своей диаспоры в России располагает весьма мощным потенциалом, который вследствие своей социальной, культурной и политической близости и эмоциональной приверженности к родине, может сравнительно легко преодолеть барьеры местного уровня и войти в Армению.

Весьма важный фактор, обуславливающий эмоциональное содержание мотивов участия армянской диаспоры России в экономических отношениях двух стран бывшего СССР (БС) связан с институтом кровного родства, который, в силу традиции большой семьи - “гердастана”, присутствует в ценностной системе семейно-родственных отношений. Представляется, что именно в контексте этих ценностей образуется та *социальная сеть* [5, 7], внутри которой происходит интенсивный информационный обмен, традиция взаимовыручки и т.п. Именно поэтому следует рассмотреть роль традиционных ценностей на формирование современных социальных сетей между пространственно диффузированными родственниками, затем выявить этносоциальную составляющую экономических связей в призме отношений диаспора-родина.

Представления о содержании, основанных на родственных привязанностях, пространственно диффузных социальных сетях, характере их функционирования и потенциальных возможностях осознаются подавляющим большинством людей. Это проявилось во время этносоциологических исследований<sup>4</sup>, когда нами была зафиксирована поразительная осведомленность респондентов о жизни бывших жителей данного поселения, проживающих в других местах, в столице и вне пределах республики. В лице своих родственников, земляков у них складывается образ реальной социальной сети, обладающей серьезным ресурсом обеспечения своих интересов как в своем поселении, так и за ее пределами. Причем в представлениях респондентов эта **сеть обладает пространственной протяженностью, силой связей и потенциалом возможностей.**

Для них пространство выступает, в одном случае, лишь в качестве препятствия и причиной издержек (связанных с пересечением границ, получением гражданства, обустройством жилья и т.п.) в достижении поставленных целей, в другом, как поле деятельности, которое в зависимости от содержания взаимосвязей внутри сетей может расширяться или, наоборот, сужаться (*“Если здесь условия не позволяют мне продвигаться - социально расти или обеспечиваться материальными благами, то лучше уехать к какому-либо родственнику, который своим положением позволил бы мне достичь желаемого, независимо от того, где он живет – в другом поселении или в другой стране”*). В обоих случаях пространство представляется ими как некое абстрактное явление, а социальная сеть, участником которой они себя представляют, вполне реальной (*“Важно не то, где я живу, а важно то, как я живу. Для меня важно то обстоятельство каким ресурсом обладает мой родственник, а не где он*

живет”). Граница кровнородственной группы весьма динамична, так как в данной сети с разной интенсивностью могут присутствовать актуализированные или отложенные, подлежащие или не подлежащие реанимации, непосредственные или опосредованные связи и взаимоотношения. Сила связей в данном контексте воспринимается как совпадение целей и мотиваций, намерение или уже участие в каком-либо совместном предприятии, “проекте”. Это дополняется интенсивностью межличностных контактов, позволяющим этим связям наполняться более глубоким содержанием.

Материалы нескольких этносоциологических исследований, проведенных в течение почти 30 лет, указывают на все большую пространственную концентрацию сети родственников, показывают весьма динамичную картину происходящих в кровнородственном институте изменений. В частности при сравнении данных первых и последних исследований они указывают на завершающую стадию цикла миграционного движения, когда в начальной стадии происходит сепарация, а затем, через определенное время, объединение членов семьи “под одной крышей”. Другим следствием миграции стало ограничение круга лиц по признаку родства.

Из всего массива находящихся вне Армении представителей кровнородственной группы, около 40% являются членами семей, из которых одна треть приходится на семьи, сегментировавшиеся по вертикальной межпоколенной линии –родители – дети, а две третих– отделившихся родных по боковой линии –братьев или сестер. Частота связей между ними, в значительной мере зависит от возраста общающихся. Наиболее подвижными в плане межгосударственных поездок выглядят лица, имеющие родителей вне Армении и родителей, живущих в Армении, т.е. частота общения в большей степени присутствует у родных по вертикальной линии, нежели по боковой. Это весьма знаменательно. Крепость родственных связей среди жителей (нынешних и бывших) Армении в значительной мере обусловлена присутствием родителей, при отсутствии которых она ослабляется.

Пространственная сеть родственников сегодня охватывает различные регионы РФ, США и европейские страны. К этой сети родственников, вследствие миграции армян из крупных колоний в Армению, сегодня уже добавляются страны Ближнего Востока и Иран. Тем самым вне Армении (что не исключает и в самой Армении) образуется сеть, с помощью которой члены этих сообществ находят работу, жилье, продвигаются по социальной лестнице. При этом отношения внутри сети родственных групп имеют поступательное движение, они расширяются, охватывая другие социальные сети, где тот или иной родственник становится связующим звеном как между участниками этой сети в данном городе, так и вне ее, в особенности на родине [8]. Этим определяется некоторая инерция пространственного движения населения.

Это иллюстрирует способность кровнородственной составляющей социальной сети создавать собственное поле деятельности (поддержки, мобилизации усилий, формирование и тиражирования социальных ценностей и т.п.), которое функционирует независимо от пространства и интенсивности контактов.

Каждый тип поселения имеет свой сетевой потенциал родственных связей, соответственно которому и можно исследовать возможные сопровождающие или исходящие из этого процессы дальнейших передвижений, финансовых потоков,


обмена технологиями, экономическими изменениями и т.п. Рассмотрим их по порядку.

В первую очередь следует выявить этот потенциал. В целом, закономерность такова: чем больше поселение, чем выше оно расположен в местности, чем ближе к крупным городам, тем выше данные о присутствии родных и близких вне республики.

По данным исследований пяти городов и 25 сельских поселений он весьма сильно варьируется и зависит от множества факторов. Так среди пяти городов Армении наибольшее количество лиц, имеющих близких родных проживающих вне республики выделяется Гюмри – более половины опрошенных (55%). Как обычно, в результате эмиграции молодого поколения, этот процесс приводил к сепарации семей. По данному показателю ближе всего к Гюмри стоит Гавар, который вместе с окрестными селами отличался от других регионов давними традициями экономических (трудовых) связей с Россией.

Рис. 4

#### Наличие живущих вне Армении родственников населения пяти городов РА




Затем идет Капан, переживший тяжелые годы бомбардировок, коллапса промышленного производства. Ниже всех оказались показатели Иджевана и Еревана.

Что связывает этих людей с родиной помимо родных и родственников? По всей видимости оставленное ими в Армении имущество – недвижимость, предприятие, бизнес. Наличие или отсутствие этих признаков связи может свидетельствовать с одной стороны, о полном отрыве от места выхода (решимости не возвращаться) или наоборот, оставления при выезде из Армении “на всякий случай” запасного аэродрома в случае неудачи на новом месте. С другой стороны, наличие имущества

может свидетельствовать об активном стремлении иметь на родине недвижимость, производство, бизнес, все это может обуславливаться присутствием в Армении родственников, которые выступают в качестве гаранта сохранности этого имущества, управления бизнесом и т.п. Последнее по всей видимости и является видом помощи родным и родственникам оставшимся на родине (удочка). Не случайно первые составляют две третьих среди лиц, оставивших имущество в Армении, а вторые – лишь десятую часть. И не случайно также, что выходцы из Армении, живущие в России больше имеют имущество на родине (более две третьих из опрошенных родственников эмигрантов), чем живущие в Европе, БС и в США, Канаде. Здесь действует фактор расстояния, прозрачности границ (возможности ее пересечения), исторической близости Армении с этими странами.

Рис. 5


**Оставленное эмигрантом в Армении имущество  
в зависимости от страны проживания**



Последний процесс очевидно зависит от адаптации мигранта на новом месте. Так, если у мигрантов проживших в новом месте до двух лет доля лиц имевших имущество на родине составляет 75%, а более 10 лет – 33%, т.е. в два и больше раза. Причем до 10 лет этот процесс почти незаметен, но после 10 лет он резко активизируется.

Рис. 6

## Длительность эмиграции и наличие имущества в Армении



Примерно подобная закономерность отмечается по данным исследования в показателях оценки помощи оставшимся в Армении родственникам во взаимосвязи с длительностью пребывания вне Армении. Она такова - чем дольше этот промежуток, тем выше доля лиц не оказывающих своим родственникам в Армении какой-либо помощи. Так у лиц, находящихся вне Армении до 2-х лет вообще не оказывающих помощь своим родным и близким составляет 40%, а более 10 лет - 60%.

Вид помощи своим родным и родственникам зависит от уровня достижений эмигранта на новом месте. Если они ощутимы, то помощь оказываемая родственникам может стать не только денежной, но и более предметной, как например в виде предприятия, недвижимости и т.п.

## Заключение

Капитал армян-предпринимателей России остается в России, частично - в оффшорных зонах, а в Армению может присутствовать в виде инвестиций, которые на фоне больших объемов частных трансфертов весьма малы и не диверсифицированы. Таким образом, более чем двадцатилетний опыт взаимодействия Армении с диаспорой показывает, что существует множество коллизий, препятствующих развитию этих отношений в экономической области.

Тот факт, что невозможно преодолеть препятствия для инвестиций в Армению из-за рубежа, вследствие малого рынка сбыта, высоких транспортных издержек, коррупционных рисков, отсутствие гарантий сохранности вложений и т.д., влечет потерю экономического интереса к Армении со стороны деловых кругов РФ и ведёт к большему участию государственных структур России в управлении стратегическими отраслями Армении. При этом участие диаспоры в развитии родины минимизируется. Во всяком случае, пока она не приобрела современную экономическую мощь.

Как показало наше исследование, именно это обстоятельство, а также приобретение опыта управления крупными компаниями, вовлечение в них все более интел-

лектуальных управленцев, привело к формированию новых идей и подходов к своей родине. Так, по мысли одного из виднейших представителей профессионально подготовленных деловых кругов диаспоры в России – Рубена Варданяна, диаспора должна реализовывать в Армении те инвестиционные проекты, которые помогут Армении перейти от модели выживания, которая сегодня доминирует, к модели процветания на 20-30 лет вперед. Тем самым, образование новых генераций деловых людей в армянской диаспоре России внушает некоторый оптимизм относительно дальнейшей судьбы экономического развития Армении.

### Լիտերատուրա

1. Армянская бизнес-элита России. Биографический справочник / Ер.: Научно-образовательный фонд «Нораванк», 2009.
2. **Կարապետյան Ք.** Миграционные процессы в городах Армении / Ер.: Гитутюн, 2013.
3. **Կարապետյան Ք.Տ.** Армянская семья в контексте переходного периода // Ընտանիքի հետազոտման հիմնախնդիրները, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2001, էջ 55:
4. **Կարապետյան Ք.Տ.** Этнические особенности семьи // Население Еревана. Этносоциологические исследования, Из-во АН АрмССР, Ереван, 1986.
5. **Կастельс Մ., Կиселева Յ.** Россия и сетевое общество // Россия в конце XX века: Тез. докл. Междунар. конф. в унив. Стенфорда, 5-7 ноября 1998 / Մ., 1998, сс. 36–48.
6. **Юдина Л.** Социология миграции. Академический проект, М., 2006.
7. **Barnes J.** Networks and political process // Social networks in urban situation. Analyses of personal relationships in central African towns. Ed.J.C.Mitchell.Manchester, 1969.
8. **Boyd M.** Family and personal networks in international migration: Recent developments and new agenda // International Migration Review. 23(3), pp. 238-270.

### ԱՆՈՏԱԿ

В статье характеризуется структура экономической деятельности армянской диаспоры и её отношения с родиной, с учётом сетевого потенциала родственных связей.

### ԱՍՓՈՓՈՒՄ

**ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Ք., ՆԵՐՍԻՍՅԱՆ Ս. – ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՐՔ-ՈՒՄԱՍՏԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐՈՒ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՅԵՐԻ ԴԵՐՈՒ**

Հոդվածում բնութագրվում է հայկական սփյուռքի տնտեսական գործունեության կառուցվածքը եւ նրա հարաբերությունները հայրենիքի հետ, հաշվի առնելով բապետական կապերի ցանցային պոտենցիալը:

### SUMMARY

**KARAPETYAN R., NERSISYAN S. – ECONOMIC CONNECTIONS BETWEEN ARMENIA AND DIASPORA IN RUSSIA AND THE ROLE OF SOCIAL NETWORKS**

In the article the structure of economic activity of Armenian diaspora and its connections with homeland are characterized taking into account social network potential of family relations.

**ԷԼԻՆԱ ԱՍՐԻՅԱՆ**

*հոգեբանական գիտությունների թեկնածու,  
ԵՊՀ ընդհանուր հոգեբանության ամբիոնի դոցենտ  
էլ.փոստ՝ elina.asriyan@gmail.com*

### **ԿՈՄԵՐՑԻՈՆ ԳՈՎԱԶԴԸ ՈՐՊԵՍ ԸՆՏԱՆԻՔԻ ՄՈԴԵԼԻ ՄԱՍԻՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ԳՈՐԾՈՆ**

Թեև ողջ աշխարհում այսօր նկատվում է բնակչության բնական աճ, որոշ երկրներում, մասնավորապես ՀՀ-ում, այլ գործընթացներ են տեղի ունենում, որոնք հանգեցնում են դեպուպուլյացիայի: Դեմոգրաֆիական իրավիճակի վատթարացումը վաղ թե ուշ հանգեցնում է երկրի սոցիալ-տնտեսական զարգացման իրավիճակի վատթարացմանը և դասվում է պետական անվտանգությանը սպառնացող գործոնների շարքին: ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունների տվյալների համաձայն աշխատունակ տարիքից բարձր մարդկանց չափաբաժինը երկրի ընդհանուր բնակչության թվից մեր երկրում կազմում է 11,5%, մինչդեռ ՄԱԿ-ի գնահատականների համաձայն, երկրում ծերացման գործընթացը սկսված է համարվում, եթե վերոհիշյալ ցուցանիշը գերազանցում է 7-8 %-ի շեմը: Նման գործընթացը պայմանավորող գործոններից է ծնելիության ցածր մակարդակը: 2012 թ. ՀՀ բնակչության բնական աճի ցուցանիշները 0,3%-ով նվազել են 2011 թ. և 0,9 %-ով 2010 թ. համեմատությամբ: Դեմոգրաֆիական աճի ցուցանիշներով Հայաստանը 229 երկրների շարքում գրավում է 205-րդ տեղը<sup>1</sup> և նույնիսկ այսօր ստեղծված իրավիճակը պահպանելու համար անհրաժեշտ է, որպեսզի յուրաքանչյուր ընտանիքում ծնվի առնվազն երկու երեխա, կամ հոգեբանական տեսանկյունից անհրաժեշտ է ստեղծել պատկերացումներ և դիրքորոշումներ ընտանիքի նման մոդելի մասին:

21-րդ դարը կարելի է համարել տեղեկատվական տեխնոլոգիաների հզոր զարգացման դարաշրջան, երբ յուրաքանչյուր մարդ սոցիալիզացիայի ճանապարհին ենթարկվում է բազմաթիվ ինֆորմացիոն ներգործությունների, արյունքում այդպիսի ներգործությունների ներքո (զլն, գովազդ և այլն) ձևավորվում են տարբեր պատկերացումներ, սոցիալ-հոգեբանական համոզումներ մի շարք նշանակալի երևույթների մասին:

Այսօր գովազդը համարվում է զանգվածային մշակույթի անբաժան մասը: Հետազոտողները համարում են, որ ցանկացած երկրում գովազդը և դրա բովանդակությունը արտացոլում են հասարակության մշակութային կերպարը, արժեքներն ու նորմերը: Ամերիկացի սոցիոլոգ Դ. Բուրստինը մատնանշելով այդ կապը ասում է «Ցույց տվեք ինձ որևէ երկրի գովազդ, և ես շատ բան կսեսեմ այդ երկրի մասին» [4]: Մյուս կողմից անվիճելի է այն փաստը, որ գովազդը իրենից ներկայացնում է անձի վրա հոգեբանական ներգործության միջոց, որը նոր վարքի մոդելներ է առաջ բերում նրա մոտ: Ցանկացած գովազդ սուզեստիվ բնույթ ունի,

<sup>1</sup> Стu Демографическая ситуация в Армении вызывает серьезное беспокойство – <http://novostink.ru/armenia/6849-demograficheskaya-situaciya-v-armenii-vyzyvaet.html>

որի արդյունավետությունը պայմանավորված է այն հանգամանքով, թե որքանով է անձը հակված ինֆորմացիայի ոչ քննադատական ընկալմանը: Քիչ փորձառություն ունեցող մարդիկ և երեխաները, ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, ավելի ներշնչվող են, և այս առանձնահատկությունը հաճախ օգտագործվում է գովազդ ստեղծողների կողմից համապատասխան վարքի մոդելներ ձևավորելու նպատակով:

Գովազդում բավականին հաճախ կիրառվում են խորհրդանիշներ ենթագիտակցական ներգործությունը ապահովելու համար, այդպիսի խորհրդանիշներից է ընտանիքի կերպարը: Ընտանիքի մասին պատկերացումների ձևավորման գործընթացը սկսվում է տարիքային զարգացման նախադպրոցական փուլում և այդ պատկերացումների ձևավորման վրա ազդող ցանկացած գործոնի ուսումնասիրությունը պայմանավորում է երկրի դեմոգրաֆիկական քաղաքականությունը և մեծ կարևորություն է ներկայացնում ինչպես հոգեբանության, այնպես էլ տնտեսագիտության համար: Տվյալ հոդվածը նվիրված է հենց այդ գործոններից մեկի՝ գովազդի ուսումնասիրմանը:

Մեր առջև դրված էր հետևյալ նպատակը՝ ուսումնասիրել ընտանիքի պատկեր պարունակող գովազդը՝ որպես նախադպրոցականի մոտ ընտանիքի մասին առաջնային պատկերացումների ձևավորման գործոն: Տվյալ հիմնախնդրի արդիականությունը բխում էր այն վիճակագրական տվյալներից, որ այսօր ամբողջ աշխարհում նկատվում է ընտանիքի և ամուսնության ոլորտում բացասական երևույթների աճ, ինչպիսին են ծնելիության անկումը, ամուսնության թվի կրճատումը և բաժանությունների թվի մեծացումը, միազավակ ընտանիքի մոդելը դարձել է իդեալական:

Հոգեբանները փաստում են, որ ցանկացած տեղեկատվություն ազդելով մարդու վրա, կարող է ձևավորել սոցիալ հոգեբանական դիրքորոշում, որը բնորոշվում է որպես մարդու այս կամ այն գործողությանն ուղղված ներքին հոգեբանական պատրաստակամություն:

Ընտանիքը հասարակության սոցիալական կառուցվածքի ամենասկզբնական ելակետային տարրն է, նրա փոքր խումբը, որի գլխավոր դերը մարդկային սերունդը շարունակելն է [5]: Ընտանիքի մասին պատկերացումների ձևավորման գլխավոր գործոնը ինֆորմացիոն ներգործությունն է: Ժամանակակից աշխարհում սա թերևս ամենահզոր գեներն է համարվում ինչպես պատկերացումների, այնպես էլ կարծրատիպերի, կյանքի ոճի և այլն ձևավորման գործընթացում: Զանգվածային ինֆորմացիոն միջոցներով ներկայացվող ընտանիքի իմիջը շատ հաճախ բնորոշում է ընտանեկան վարքի ակտուալ մոդելները, ստեղծում է ընտանիքի տիպականացված պատկեր – էտալոններ, որոնք վերջին հաշվով ուղեկցում են մարդուն ամբողջ կյանքում և ազդում նրա աշխարհայացքի վրա:

Տեսական և կիրառական տվյալները վկայում են, որ գովազդը «մեծ հեղինակություն» է վայելում երեխաների շրջանում: Այն գրավում է երեխային իր գունային, ձայնային, պատկերային ինտենսիվությամբ: Արագ փոխվող պատկերները մեծ տպավորություն են թողնում երեխայի վրա: Երեխան ճշմարտացի է համարում իրեն ցուցադրվող ամենը և չունենալով քննադատական մտածողություն՝ դրանք ընդունում որպես վարքի ընդունված կաղապար: Ապացուցված է, որ մարդուն բնորոշ է միանալ այն վարքային մոդելներին, որոնք ներկայացվում են զանգվածային ինֆորմացիոն միջոցների կողմից որպես լավագույն:

Ընտանիքի իրական մոդելի տարրերն են պատկերացումները ընտանիքի կազմի, կառուցվածքի, երեխաների քանակի, ընտանիքում դերաբաշխման, ընտանիքի արժեքային համակարգի մասին: Բայց այս ամենի հետ մեկտեղ գոյություն ունի նաև ընտանիքի ցանկալի իմիջ, որն արտացոլում է ընտանիքի ձգտումները և ձևավորվում է հիմնականում զանգվածային ինֆորմացիոն միջոցների կողմից: Այն առաջարկում է վարքային նորմեր, մոդելներ, որոնք ցանկալի են հասարակության համար և ուղղված են այն հանրության, որն ուզում է լինել այդպիսին, ունենալ այդպիսի ընտանիք: Այստեղ խնդիր է առաջանում հատկապես այն առումով, որ զանգվածային ինֆորմացիոն միջոցները սկսում են ձևավորել արժեքային համակարգ, իսկ նրա բացասական լինելը չի բացառվում և նույնիսկ շատ հնարավոր է [7]:

Գովազդի դերը ընտանիքի մոդելի ձևավորման գործընթացում բացահայտելու համար մեր կողմից իրականացվեց հետազոտություն, որին մասնակցեցին նախադպրոցական երկու խմբի երեխաներ՝ յուրաքանչյուր խմբում 20 երեխա. ընդհանուր քանակը 40 երեխա:

14 օրվա ընթացքում ուսումնասիրվեցին հայկական երեք ամենառեյտինգային համարվող հեռուստաալիքները, ինչի արդյունքում ստացանք հետևյալ արդյունքները. ցուցադրվող գովազդների գումարային թիվը կազմեց 295 գովազդային հոլովակ, որից 34-ը այսինքն 11,5%-ն էր ընտանիքի պատկեր պարունակում, և դրա միայն 5%-ն էր կազմում (15 հոլովակ) հայկական գովազդ որոնք էլ ենթարկեցինք կոնտենտ վերլուծության ըստ հետևյալ կատեգորիաների՝ գովազդում ներկայացված անդամների թիվ, նկարագրվող իրավիճակ, հուզական կապեր անդամների միջև:

Ստացված արդյունքները ներկայացված են ստորև տոկոսային հարաբերակցությամբ:

Ըստ գովազդում ներկայացված անդամների թվի.

Ուսումնասիրված 15 գովազդներից 6-ում (40%) ներկայացված էր 2 անձից բաղկացած ընտանիք, 7-ում (47%) 3 անձից բաղկացած ընտանիք, և միայն 2-ում (13%) չորս և ավելի անդամ ունեցող ընտանիք:

Ըստ գովազդում ներկայացված իրավիճակի.

Ստացված արդյունքները հետևյալն են. 15 գովազդային հոլովակներից 2-ում (13, 3%) պատկերված է հանգիստ/ժամանց, 7-ում (46,7%) ճաշելու գործընթաց, 3-ում (20%) ներկայացված է ուրախ հուզական մթնոլորտ, իսկ 2-ում (13,3%) գնումների գործընթաց:

Ըստ գովազդում ներկայացվող հուզական կապերի.

Ուսումնասիրվող գովազդային հոլովակներից 12-ում (80 %) ջերմ հուզական փոխհարաբերություններ էին, իսկ 3-ում (20%)՝ չեզոք:

Այսպիսով, կոնտենտ վերլուծության արդյունքներից ելնելով կարող ենք ասել, որ ընտանիքի պատկեր պարունակող հայկական գովազդներում խրախուսվում է միջուկային ընտանիքը, առավել շատ ներկայացվում է ճաշելու գործընթաց և մեծ տեղ է տրվում ջերմ հուզական կապերին:

Ստացված տվյալները փորձեցինք համեմատել Եվրոպայում և Ռուսաստանում կատարված նմանատիպ հետազոտությունների արդյունքների հետ: Ռուսաստանում նմանատիպ հետազոտությունների արդյունքում պարզվել էր, որ ընտանիքի պատկեր պարունակող գովազդներում 47%-ը խրախուսվում է մեկ երե-

խայով ոչ լիարժեք ընտանիք (մայր) , 27%-ը՝ լիարժեք ընտանիք մեկ երեխայով, 12% -ը լիարժեք ընտանիք երկու երեխայով, 10,4%-ը ոչ լիարժեք ընտանիք մեկ երեխայով (հայր) և 3,6%-ը բազմազավակ ընտանիք [5]:

Այսինքն, կարող ենք ասել, որ եթե ընտանիքի պատկեր պարունակող ռուսական գովազդում խրախուսվում է ոչ լիարժեք ընտանիքը, ապա հայկական գովազդների վերլուծության արդյունքների համաձայն վերոհիշյալ տոկոսային հարաբերակցությունն այլ պատկեր է կրում, մասնավորապես կարող ենք ասել, որ միջուկային ընտանիքն է առաջին տեղում (46,7%-ով, անպայման երեխայի առկայությամբ: Այսինքն, հայկական գովազդներում չի խրախուսվում ոչ լիարժեք ընտանիքը, ինչը էթնոհեգեթանական առանձնահատկություն կարող է համարվել:

Մեր հետազոտությունը համեմատեցինք այլ եվրոպական երկրներում կատարված նմանատիպ հետազոտությունների հետ: Այստեղ պատկերը բոլորովին այլ էր: Արտասահմանյան նմանատիպ հետազոտության արդյունքում պարզվել էր, որ ընտանիքի պատկեր պարունակող գովազդների 57,7%-ում ներկայացված է միազավակ ընտանիք (միջուկային), 37%-ում ներկայացված է անզավակ ընտանիք և 5,3%-ում՝ բազմազավակ ընտանիք: Այսինքն, կարող ենք ասել, որ այնտեղ միջուկային ընտանիքը առաջին հորիզոնականում է:

Հետազոտության հաջորդ փուլում ուսումնասիրվեց համապատասխան գովազդների ներգործության աստիճանը նախադպրոցականների ընտանիքի մոդելի առաջնային պատկերների ձևավորման գործընթացի վրա: Առաջին խմբին ցուցադրեցինք մեր կողմից հետազոտության առաջին փուլում կոնտենտ վերլուծության ենթարկած 15 հայկական գովազդները՝ որպես ստիմուլային նյութ: Գովազդները ցուցադրելուց հետո, երեխաներից պահանջվեց կատարել «ընտանիքը իմ աչքերով» պրոյեկտիվ մեթոդիկան: Երեխաների հետ անհատական զրույց անցկացրեցինք և վերլուծեցինք յուրաքանչյուր նկարը: Երեխաների 70%-ը պատկերել էր 2 անձից բաղկացած ընտանիք, 25%-ը՝ 3 անձից բաղկացած ընտանիք և 5%-ը 1 մարդուց բաղկացած ընտանիք: Երեխաների 70%-ը պատկերել էր անդամների միջև դրական հուզական կապեր, իսկ 30% -ը չեզոք կապեր:

Այսինքն, ստացված փվերից կարող ենք ենթադրել, որ գովազդ դիտած երեխաները հիմնականում պատկերել են միջուկային ընտանիք՝ դրական հուզական կապերով: Համեմատելով այս փուլում ստացված արդյունքները իրենց կողմից դիտված գովազդների կոնտենտ վերլուծության արդյունքների հետ, անշուշտ ակնհայտ երևում է դրական փոխապայմանավորվածություն, այսինքն՝ տվյալները զրեթե ամբողջությամբ համընկնում են: Ստացված տվյալները վկայում են այն մասին, որ երեխան պատկերել է այնպիսի ընտանիք, ինչպիսին իրեն ցուցադրվել է գովազդի միջոցով: Իհարկե, չենք բացառում նաև այն փաստը, որ երեխան նախապես ուներ ընտանիքի մասին որոշակիորեն ձևավորված սեփական, գովազդով չմիջնորդավորված պատկերացում, բայց այն փաստը, որ գովազդը որպես ստիմուլային նյութ ազդեց երեխաների վրա, մեր կողմից բացահայտվեց նաև զրույցի արդյունքում: Երեխաները իրենց նկարի նկարագրության ժամանակ տալիս էին գովազդի հերոսների անուններ, գովազդում ներկայացված իրավիճակներ օգտագործում: Ներկայացված բազմաթիվ նկարներում պատկերված էին հենց գովազդի հերոսները: Այսինքն, երեխան ընտանիքի պատկեր էր համարում իր վրա ամենաուժեղ ազդեցություն թողած գովազդում պատկերված ընտանիքը:

Այնուհետև, հետազոտություն հաջորդ փուլում, նախադարձական տարիքի երեխաների մյուս խմբին խնդրեցինք նկարել ընտանիք այնպիսին, ինչպիսին իրենք են պատկերացնում: Այս դեպքում գովազդներ չէին ցուցադրվել, նպատակն էր հասկանալ, թե արդյունքների ինչպիսի տարբերություններ կլինեն երկու հետազոտված խմբերի մոտ:

Երկրորդ խմբի երեխաների նկարների վերլուծության և անհատական գրույցների արդյունքում ստացանք հետևյալ արդյունքները. երեխաների 30%-ը պատկերել էր 6-ից ավելի անդամ ունեցող ընտանիք, 25%-ը չորս անդամից բաղկացած ընտանիք, 25%-ը 3 անձից բաղկացած ընտանիք, 10%-ը 2 անձից բաղկացած, և 10%-ը 1 անձից բաղկացած ընտանիք: Երեխաների 90%-ը պատկերել էին անդամների միջև դրական հուզական կապեր, իսկ 10%-ը՝ չեզոք:

Այսինքն, ստացված տվյալները վկայում են, որ գովազդ չդիտած երեխաների նկարները, անշուշտ, տարբերվում էին նախորդ խմբի նկարներից: Երկրորդ խմբում առկա էին ընդլայնված ընտանիք պատկերող նկարներ, բացի այդ մատնանշված չէր որևէ գովազդի հերոսի անուն կամ գովազդում նկարագրվող իրավիճակի պատկերում:

Այսպիսով, կարող ենք ենթադրել, որ գովազդի ազդեցությունը նախադարձական տարիքի երեխաների վրա ակնառու է և բավականին մեծ, և իր հերթին ընդունակ է նպաստել ընտանիքի էտալոնային մոդելի մասին առաջնային պատկերացումների ձևավորմանը: Հարկ է հասկանալ, որ երկրի համար, որը կանգնած է դեմոգրաֆիական ճգնաժամի եզրին, նման նեգատիվ բնույթ կրող ստիմուլյացիան, տվյալ դեպքում կոմերցիոն գովազդը, վերանայման կարիք ունի:

### Գրականություն

1. **Анашкина Н. А.**, Режиссура телевизионной рекламы / М.: ЮНИТИ-ДАНА, 2008. - 208 с.
2. **Андреева Т. В.**, Психология современной семьи / СПб.: Речь, 2005. – 256 с..
3. **Грошев И.**, Образ пола в рекламе // Пасхи, 1998, № 2.
4. **Кармин А. С.**, Психология рекламы / СПб.:Изд-во ДНК, 2004. – 512 с.
5. **Ковалев С. В.**, Психология современной семьи / М., 1988. – 208 с.
6. **Лебедев-Любимов А.**, Психология рекламы / СПб.: Питер, 2002. – 368 с.
7. **Плесси Э.**, Психология рекламного влияния. Как эффективно воздействовать на потребителей / СПб.: Питер, 2007. – 272 с.

### ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ուսումնասիրվում է կոմերցիոն գովազդը որպես նախադարձականների մոտ ընտանիքի մոդելի մասին առաջնային պատկերացումների ձևավորման գործոն, կապված դեմոգրաֆիական վերարտադրության միտումների հետ, հիմնվելով անցկացված հարցման արդյունքների վրա:

**АННОТАЦИЯ****АСРИАН Э. – КОММЕРЧЕСКАЯ РЕКЛАМА КАК ФАКТОР, СПОСОБСТВУЮЩИЙ ФОРМИРОВАНИЮ ПЕРВИЧНЫХ ПРЕДСТАВЛЕНИЙ О МОДЕЛИ СЕМЬИ**

В статье анализируется коммерческая реклама, как фактор формирования первичных представлений о модели семьи среди дошкольников, в связи с тенденциями демографического воспроизводства, на основе данных проведённого автором опроса.

**SUMMARY****ASRIYAN E. – COMMERCIAL ADVERTISING AS A FACTOR CONTRIBUTING TO FORMATION OF FAMILY MODEL PRIMARY CONCEPTS**

In the article the commercial advertising is analyzed as a factor of family model primary concepts formation among preschoolers are analyzed in connection with tendencies of demographic reproduction on the based of survey data.

**ДАВИД АЙРАПЕТЯН**

*кандидат психологических наук,  
доцент кафедры общей психологии ЕГУ  
эл.почта: davidhaiarm@ysu.am*

**ГАЙК ВАРОСЯН**

*выпускник факультета философии и психологии ЕГУ  
эл.почта: haghbad@gmail.com*

## **ЭВРИСТИЧЕСКАЯ РЕГУЛЯЦИЯ ПРОФЕССИОНАЛЬНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ РИЭЛТОРОВ**

### **Постановка задачи**

Тема взаимоотношений покупателя и продавца обсуждается в экономике, психологии, социологии, менеджменте и т.д. Однако большая часть исследований направлена на сферу розничной торговли: есть многочисленные работы, связанные с поведением и потребителей, и продавцов.

Все известные руководства рекомендуют позволить клиенту покупать в таком стиле, который ему наиболее близок. Поэтому широкое распространение в продажах и рекламе получили методы нейролингвистического программирования и организация на этой основе эффективного взаимодействия с ним. Специфицируя системы представлений, людей можно подразделить на три основных типа:

«Визуалы» – люди, мыслящие преимущественно зрительными образами. Таким покупателям лучше «один раз увидеть, чем сто раз услышать», и увидеть необходимо самому. Но их можно также «показать» товар словами, употребляя такие выражение, как: «вот видите...», «смотрите на ...» и т.д.

«Аудиалы» мыслят преимущественно словами, представляют мир с помощью слуховых образов.

«Кинестетики» воспринимают окружающий мир с помощью ощущений, вкуса и обоняния. Их можно привлечь словами «почувствуйте...» и т.д.

Чаще всего встречается комбинированный тип с преобладанием одного компонента. Опытный торговый агент знает, как распознавать типы, и кому из клиентов красочно описывать свойства и преимущества товара, а кому – просто положить на стол каталог и распечатанное на принтере коммерческое предложение [8].

Психологические исследования в области недвижимости проводятся редко, поскольку данная область по своим экономическим и товароведческим признакам принадлежит в основном к сфере экономики. Однако для действующих в нашей стране организаций на данном этапе более, чем когда-либо стало важным повышение эффективности профессиональной деятельности риэлтеров. Это связано с лицензионной оплатой, введённой в 2013 году, из-за чего многочисленные организации оказались теперь на пороге закрытия.

Наше предыдущее исследование, предпринятое в рамках дипломной работы од-

ного из авторов, показало, что **риэлторы, оценив объект недвижимости с профессиональной точки зрения, оставляют без внимания желания покупателей**, которые зачастую совершенно противоположны их желаниям. Однако желания покупателя играют немаловажную роль в процессе принятия решения относительно покупки. И это несоответствие приводит к резкому сокращению объемов продаж.

В рамках данного исследования нашей **целью** является изучение особенностей взаимодействия стилей принятия решений в профессиональной деятельности риэлторов и эвристических регуляторов поведения, а также их влияние на процесс принятия решения покупателем.

Предполагается, что стиль принятия решения риэлторами и их модальность восприятия выступают в качестве механизмов эвристической регуляции профессиональной деятельности, которые в свою очередь обуславливают особенности переговоров при купле-продаже и принятия потребительского решения.

Говоря о субъектах системы взаимоотношений «продавец-покупатель», необходимо уточнить, кого мы конкретно называем покупателем и продавцом. На практике продавцом может быть тот, кому принадлежит продаваемый товар или кто-либо третий - посредник - который реализует сам процесс купли-продажи. Под покупателем понимается тот человек, который покупает данный товар. Образ посредника (в дальнейшем - продавца) является одним из самых важных составляющих в организации торговли. Именно его образом обусловлена целостность восприятия товара [1, 2, 7].

Рассмотрим несколько моделей поведения продавца в ходе общения с покупателем, выделяемых Виктором Сороченко в материалах авторского тренинга «Психология розничных продаж» и представленных в таблице 1.

*Таблица 1*

**Модели поведения продавца во время взаимодействия с покупателем**

Функции продавца	Типичные выражения
<b>1. Вопросительное поведение</b> — выявить потребность покупателя:	- Какой цвет вам больше нравится? - Что вы думаете об этой вещи? - Не правда ли, удобная штука?
<b>2. Пояснительное поведение:</b>	- Мне кажется, что вы сомневаетесь в том, что... - Правильно ли я вас понимаю...?
<b>3. Помощь и поддержка:</b> рассеять сомнения, побороть внутреннее сопротивление; если нужно — успокоить	- На вашем месте я бы не колебался... - Уверен, вы не пожалуете... - У вас прекрасный вкус... - Вам это очень идет...
<b>4. Позиция понимания:</b> внимательно выслушивать, чтобы сказать в нужный момент:	- Я вас прекрасно понимаю. У моей племянницы (сестры, брата, подруги) такие же проблемы. Они нашли такой выход (предлагается подходящий товар)... - Зачем вам тратить лишние деньги? Возьмите вот эту модель. И подходит больше, и сэкономите...

*Источник: [6].*

При этом, следует отметить, что не случайно в варианте "вопросительного" поведения пропущены такие обычные выражения, как "что вы хотите", "что Вас заин-

тересует?". Эффективный продавец должен четко понимать и чувствовать, когда клиент нуждается в помощи, когда его глаза останавливаются на каком-то товаре и предложить свою помощь в нужный момент.

Искусство общения с покупателем предполагает четкое осознание важности собственного образа. А именно, первое впечатление связано с внешним обликом продавца, в частности одежды, которая всегда должна быть чистой и представительной. Клиенты часто считают, что опрятно и чисто одетый, полный энергии, доброжелательный продавец более быстро и хорошо обслуживает и такие продавцы пользуются популярностью среди клиентов.

Но рынок недвижимости имеет свои особенности и, естественно, **требования, предъявляемые риэлтору, носят некие модификации**. Например, в отличие от розничной торговли, риэлторская деятельность требует совершенного знания как внутренних, так и внешних особенностей товара. Несмотря на то, используются эти знания или нет, их присутствие позволяет "свободу маневра" представления продукта, акцентируя те факты, которые являются более важными для покупателя.

Самый главный, можно сказать ключевой момент в деятельности риэлтора – изучение и познание поведения покупателя. Дело в том, что, хотя большинство покупателей и перечисляет множество критериев для желаемого продукта, однако эти требования еще не ориентированы на конкретный товар. **Первичная задача риэлтора - выделение главных критериев из перечисляемых**. Это обусловлено тем, что приобретение недвижимости относится к стратегическим покупкам, что повышает ответственность и мешает процессу принятия решения. Но для конкретизации этих требований нужно непосредственное присутствие товара (в данной ситуации - недвижимости) в процессе ориентации [4, 5].

### Методика экспериментального исследования

Наше экспериментальное исследование было сформировано на основе существующих теоретических подходов взаимоотношений «продавец-покупатель», теории перспективы Канемана, а также - теоретических подходов к рынку недвижимости. Исследование проводилось в два этапа.

На первом этапе исследование было проведено методом тестирования и была использована анкета для выявления стиля принятия решений по системе MBTI разработанная П. Наттом и Д. Марсином. Участвовали 18 риэлторов, имеющие опыт работы 5 и более лет. Цель этого этапа заключалась в выявлении представителей 4-х стилей принятия решений (SJ, SP, NT, NF) по вышеуказанной методике, с которыми был проведен второй этап экспериментального исследования. Основной целью этого этапа было выявление хотя бы одного представителя от каждого из 4-х стилей принятия решения для второго этапа исследования.

Представители SJ типа внимательные к деталям, могут предсказать последствия действий и решений, эволюционный путь предпочитают революционному: ценят организованность и структуру. Представители SP направлены на деятельность в настоящее время, имеют тенденцию к переформулировке проблемы, во время принятия решения предпочитают интегративный подход в решении проблемы. Представители NT предпочитают научный, системный подход в решении проблемы и направ-

лены на будущее, они замечают перспективу развития. Принадлежащие типу NF озачены справедливостью принятых решений и обращают внимание на требования людей.[3]

Второй этап исследования осуществлялся по методу наблюдения, анализа документов, case study (изучение конкретных ситуаций). На основе первого этапа были отобраны 4 риэлтора - по одному для каждого стиля принятия решений. С каждым из них было проведено по одному case study. В конце XX столетия кейс-стади обрел широкую популярность в качестве научной стратегии гуманитарных исследований (в социологии, экономике, политологии, истории, психологии, педагогике, антропологии, культурологии и т.п.). Все шире он применяется в зарубежной лингвистике, в частности в когнитивной лингвистике. Кейс-методология может варьироваться между описательной и объяснительной стратегиями, концентрироваться на единичном либо множественных случаях, вовлекать разнообразные методики сбора данных и подходы к их анализу. В целом кейс-метод - это довольно свободная, демократичная методологическая среда, вполне отвечающая плюралистическому, открытому настрою современной науки. К числу основных преимуществ кейс-методологии относят следующие черты: 1) выделенный объект, называемый случаем, ситуацией, или, на английский манер, кейсом, носит проблемный характер; 2) кейс-стади является полноценным научным исследованием, начинающимся с постановки проблемной задачи и завершающимся ее решением; 3) кейс-стади характеризуется когнитивной целостностью, включающей различные уровни познавательной активности – как эмпирический, направленный на сбор и первичный анализ данных, так и теоретический, связанный с их интерпретацией; 4) кейс-стади не обладает жесткой схемой, а позволяет вносить необходимые коррективы в процесс исследования, что наделяет его гибкостью, адаптивностью; 5) кейс-стади полезен в исследованиях сложных систем, так как реализует холистический подход, направленный на изучение явления в его целостности; 6) кейс-метод подходит для изучения динамики явлений, так как позволяет рассмотреть их в непосредственном окружении и, следовательно, учесть изменения среды и последствия их влияния на кейс [9, стр 2].

По соглашению покупателя и риэлтора исследователь был включен в процесс представления квартир и должен был составить протокол встреч. Для минимизации фактора скованности не использовались видео или звукозаписывающие устройства.

### **Анализ результатов**

Во время первого этапа, как упоминалось выше, было протестировано 18 риэлторов, стаж которых был более 5-и лет. Этот порог, по нашему мнению и мнению экспертов, обеспечивает профессиональную компетентность в сфере продажи недвижимости. Тестирование выборки дало следующие результаты. В выборке доминирует стиль принятия решения NT – 8 чел., за ней следуют стили SP и NF, по 4 чел. На последнем месте стиль принятия решений SJ – 2 чел. При этом в нашей практике уже во второй раз сталкиваемся с такими результатами.

Далее, из вышеотмеченных 18-и были выбраны 4 риэлтора для участия во втором этапе исследования. Выбор был сделан на основе наблюдений во время

предварительных отборов. Были отобраны те представители стилей, которые максимально соответствовали описанию данного стиля принятия решения.

#### **Стиль принятия решений SP**

Во время представления одной квартиры было использовано 121 слово (в случае, когда среднее число для 4-х стилей составляет 155,75 слов (мин = 99, макс = 223)), из которых 7 представляют определенную модальность. У представителей стиля SP средняя длина предложения в речи составляет 12 слов (в том случае, если средние для 4 стилей составляет 15,86 слов (мин = 12, макс = 22,3)):

#### **Стиль принятия решений NT**

Во время представления одной квартиры было использовано 99 слов, из которых 6 представляют определенную модальность. У представителей стиля NT средняя длина предложения в речи составляет 14,4 слов.

#### **Стиль принятия решений NF**

Во время представления одной квартиры было использовано 180 слов, из которых 21 представляют определенную модальность. У представителей стиля NF средняя длина предложения в речи составляет 15 слов.

#### **Стиль принятия решений SJ**

Во время представления одной квартиры было использовано 223 слов, из которых 10 представляют определенную модальность. У представителей стиля SJ средняя длина предложения в речи составляет 22,3 слов.

Кроме сравнения результатов друг с другом, важно их сопоставление с уровнем успеха при заключении сделки (см. Таблицу 2.)

**Таблица 2**

#### **Количественные характеристики речи риэлтора**

N	Стиль ПР	Общее число слов	Средняя длина предложения (слов)	Общее число предложений
+	SP	121	12	10
+	NT	99	14.14	7
±	NF	180	15	12
-	SJ	223	22.3	10
<b>Среднее</b>		<b>155.75</b>	<b>15.86</b>	<b>9.75</b>

+ Успешная сделка    ± Незаконченная сделка    - Несостоявшийся сделка

Получается, что при представлении объекта недвижимости длина речи обратно пропорциональна уровню успеха сделки. и действительно, представители стиля NT, у которых речь короче, примерно, в два раза, чем речь представителей стилей NF и SJ, успешно завершили сделку. Почти такая же картина наблюдается у представителей стиля SP. Хотя он употребляет больше слов, но имеет преимущества в длине предложений. Его предложения в основном пропорциональны, что способствует лучшему пониманию речи и придает речи "комфорт". Но у представителей стилей NF и SJ наблюдается обратная тенденция: слишком длинная речь приводит к отрицательным

результатам - к задержке или отмене сделки. Однако возможно ли, основываясь только на количественных показателях, сделать такие выводы? Для избежания возможных ошибок обобщения, мы использовали еще два фактора. Во-первых, мы попытались выяснить какая модальность является доминирующей у каждого стиля ПР (см. таблицу 3).

Из таблицы видно, что такими выражениями больше всего насыщена речь представителя стиля NF. То есть средняя частота использования выражений, принадлежавших какой-либо модальности, приблизительно равна одному слову из девяти. По этому показателю представители стиля NF превышают остальных в 2-2,5 раза. Вероятно, это тоже имеет какое-то влияние, в зависимости от индивидуальных особенностей покупателя. В нашем случае, влияние скорее всего отрицательное (решение о покупке еще не принято).

Таблица 3

## Взаимосвязь стиля ПР и модальности

N	Стиль ПР	Общие число слов	Модальность			Среднее част. %
			Аудиал	Визуал	Кинестетик	
1	SP	121	1/±	3/+	3/+	5.8
2	NT	99	1/±	1/±	4/+	6.0
3	NF	180	3/-	10/+	8/±	11.6
4	SJ	223	2/-	3/±	5/+	4.5

Выраженность (считается по общему количеству у данного человека)

+ Высокое                    ± Средние                    - низкое

Следующим шагом в качественном анализе было наблюдение представления объекта недвижимости, связанного с собственно критериями представленного товара. Вкратце представим основные результаты наблюдения.

Риэлтор со стилем принятия решения SP при презентации объекта недвижимости говорил лишь о внутренних особенностях - игнорируя внешние особенности, сначала сформировав стратегию «от плохого к хорошему». Риэлтор со стилем принятия решения NT в основном презентовал внутренние особенности объекта недвижимости, также игнорируя внешние: концентрация на внутренних особенностях была обусловлена уверенностью риэлтора, что покупатель обращает большое внимание на ремонт. Риэлтор со стилем принятия решения NF более скрупулезно презентовал те критерии, которые были озвучены покупателем. Риэлтор со стилем принятия решения SJ во время всей встречи направлял на другую квартиру: он смог понять действительные потребности покупателя и строил речь об объекте недвижимости исходя из этого. Однако его пристрастность помешала выполнению транзакции.

**Выводы и практическая значимость для рынка**

Анализ экспериментальных данных привел к следующим **выводам**:

- на профессиональную деятельность риэлторов так или иначе действуют особенности сенсорной системы личности - модальность, а конкретнее - ее совмещение с стилем принятия решения. В частности, в стилях NF и SJ значительно чувствуется эмоциональная насыщенность при представлении и спад рациональных элементов, что приводит к непониманию требований покупателя,
- прослеживается сходство в профессиональной деятельности риэлторов соответственно стилей принятия решений SP, NT и NF, SJ. Сходство отмечается особенно в общей стратегии и в построении речи презентации объекта недвижимости,
- особенности стилей принятия решения обуславливают классификацию критериев оценки объекта недвижимости. У риэлторов с одинаковым стилем принятия решения иерархии критериев оценки объекта недвижимости совпадают,
- стиль принятия решений является эвристическим регулятором в профессиональной деятельности риэлтора, обуславливая стратегию выбора во время профессиональной деятельности.

В заключении можно отметить, что психологические исследования день за днем все более проникают в сферу экономики, позволяя объяснить те стороны поведения экономического агента, которые не подчиняются канонам экономической рациональности. Это исследование - еще один маленький шаг в сторону всестороннего изучения экономических агентов, в нашем случае - риэлторов, как связующего звена между продавцом и покупателем объекта недвижимости.

Применение результатов исследования на практике (в виде тренингов и обучающих программ) позволит риэлторам, в зависимости их психологических особенностей, более всесторонне представить товар и, тем самым, повысить объем продаж.

#### Литература

1. **Анурин В.** Маркетинговые исследования потребительского рынка / СПб., Питер, 2004. – 270 с.
2. **Денисова Е.С.** Поведение потребителей / М., 2005, - 111 стр
3. **Кузнец Н.** МВТИ: полное руководство по интерпретации / М.: Бизнес Психология, 2010. – 256 с.
4. **Трухаев Р.И.** Модели принятия решений в условиях неопределенности / М.: Наука, 1981. – 254 с.
5. **Battman J.R., Luce M.F., Pain J.W.** Constructive Consumer Choice Processes // Journal of consumer research, Vol. 25, December 1998, pp.187-217.
6. **Молчанов И.** Мерчандайзинг: обслуживание покупателей в торговом зале. – <http://psyfactor.org/merchan4.htm>
7. **Мазилкина Е.** Поведение потребителей. – [http://www.e-reading-lib.org/chapter.php/100266/14/Mazilkina\\_-\\_Povedenie\\_potrebitelei.\\_Shpargalka.html](http://www.e-reading-lib.org/chapter.php/100266/14/Mazilkina_-_Povedenie_potrebitelei._Shpargalka.html) //
8. Курс “Поведение потребителей” - <http://www.madrace.ru/psichologiya-kommertsii/kurs-povedenie-potrebiteley>
9. **Бронник Л.В.** Метод кейс-стади и его применение в когнитивно-синергетических исследованиях // Теория и практика общественного развития. – 2011. – № 2. – <http://teoria-practica.ru/-2-2011/filologiya/bronnik.pdf>

**АННОТАЦИЯ**

В статье рассматриваются особенности и факторы эффективности продажи объектов недвижимости риэлторами, представляющими четыре основных стилей принятия решений (NT, NF, SJ, SP), в соответствии с системой MBTI, с применением экспериментального и кейс-методов.

**ԱՍՓՈՓՈՒՄ****ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Դ., ՎԱՐՈՍՅԱՆ Դ. – ՌԻԵԼՏՈՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎՐԻՍՏԻԿ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ**

Հոդվածում դիտարկվում են MBTI համակարգի համաձայն որոշման ընդունման չորս հիմնական ոճերի ներկայացուցիչ (NT, NF, SJ, SP) ռիելթորների կողմից անշարժ գույքի օբյեկտի վաճառքի առանձնահատկությունները և արդյունավետությունը ապահովող գործոնները, օգտագործելով փորձնական ու քեյս-եղանակները:

**SUMMARY****HAYRAPETYAN D., VAROSYAN H. – HEURISTIC REGULATION MECHANISMS OF REALTORS' PROFESSIONAL ACTIVITY**

The article concerns features and effectiveness factors of real estate sale by realtors representing four main decision making styles (NT, NF, SJ, SP), in accordance with MBTI system with the usage of experimental and case-study approaches.

**ՄՐՍԵՆ ԼՈՔՅԱՆ**

*բժշկական գիտությունների թեկնածու,  
ՀՀ ՊԿԱ կառավարման հոգեբանության ամբիոնի դոցենտ  
Էլ. փոստ` arsen.lokyan@paara.am*

**ՌՈՒԲԵՆ ԱՂՈՒՋՈՒՄՅԱՆ**

*հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր,  
ՀՀ ՊԿԱ կառավարման հոգեբանության ամբիոնի վարիչ  
Էլ. փոստ` rvaghuzumtsyan@list.ru*

**ՀԱՄԱՑԱՆՑԻՑ ԿԱԽՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՁՆԱՅԻՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ**

Վերջին երկու տասնամյակները բնորոշվում են մասնագիտական գործու-  
նեությունում և կենցաղում համացանցի արագ տարածմամբ: Այս հանգամանքով  
պայմանավորված՝ կարևորվում է համացանցի պաթոլոգիկ օգտագործման  
խնդիրը: Համացանցից կախվածությունը կարելի է բնորոշել որպես ոչ քիմիա-  
կան կախվածություն՝ համացանցի օգտագործման կաչուն պահանջունք և հա-  
մացանցից ժամանակին անջատվելու հիվանդագին անընդունակություն [5, էջ.  
4]: Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել ՀՀ պետական կառավարման ա-  
կադեմիայի մագիստրանտների մոտ համացանցից կախվածության և անձնային  
հոգեբանական առանձնահատկությունների փոխկապվածությունը:

Համացանցից կախվածության ծագումը չի ենթարկվում չի ենթարկվում ավանդական կախ-  
վածությունների, օրինակ՝ ծխախոտից, թմրանյութերից, ալկոհոլից կախվածու-  
թյան ծագման օրենքներին: Համացանցից կախվածության բնույթն այլ է. ֆիզիո-  
լոգիական բաղադրիչն ամբողջությամբ բացակայում է, իսկ հոգեբանականը  
շատ վառ է դրսևորվում [4, էջ. 89-100]: Համացանցը բավարարում է օգտվողների  
գիտակցական և ենթագիտակցական շատ պահանջունքներ: Դա համացանցի  
նկատմամբ հակվածությունը պայմանավորող հիմնական պատճառն է:

Ժամանակակից կառավարման համակարգում ավելի շատ են օգտագործ-  
վում տեղեկատվության նոր աղբյուրներ, և տնտեսության արդյունավետության  
հարցը կախված է հենց այդ գործոնից: Բարձրացնելով արդյունավետությունը՝  
մարդու գործունեության համակարգչայնացումը առաջ է բերում մի շարք հոգե-  
բանական, ֆիզիոլոգիական և առողջական խնդիրներ, որոնք, իրենց հերթին,  
կարող են իջեցնել տնտեսության կառավարման արդյունավետությունը: Այդ  
պատճառով շատ կարևոր են այն հետազոտությունները, որոնք բացահայտում  
են համակարգիչների բացասական ազդեցությունը մարդու վրա և հնարավորու-  
թյուն են տալիս գիտական հիմունքներով կազմակերպել նրա գործունեությունը:

Համակարգչային կախվածության հոգեբանական ուսումնասիրում առաջին  
անգամ իրականացրել են կլինիկական հոգեբան Կ. Յանգը և հոգեբույժ Ի. Գոլդ-  
բերգը: 1994 թ. Կ. Յանգը մշակել է համացանցից կախվածության փաստորոշման  
հարցարան: Ըստ Յանգի՝ համացանցից կախվածությունն ընթանում է փուլերով:  
Առաջին փուլում տեղի է ունենում ծանոթացում և հետաքրքրվածություն համա-  
ցանցի նոր հնարավորություններով, երկրորդ փուլում համացանցը խառնվում է

կյանքի նշանակալի կողմերին, երրորդ փուլում կարելի է խոսել բուն փախուստի մասին (մարդը փախուստի է դիմում իրական աշխարհից և իր կյանքից, նա ապրում է ինչ-որ այլ աշխարհում):

Առաջին փուլում օգտվողը ծանոթանում է համացանցին, տեղեկատվություն ստանում նրա հնարավորությունների մասին և ընտրում իր համար հարմար վիրտուալ իրականության տեսակը: Աստիճանաբար մարդու մոտ ձևավորվում է համացանցից օգտվելու իր սեփական ոճը, որը լրացնում է նրա մոտ շփումների և տեղեկատվության այն մասը, որը նրան պակասում է իրական կյանքում:

Այնուհետև տեղի է ունենում հեռացում իրական կյանքից, համացանցից օգտվողն սկսում է ավելի շատ ժամանակ անցկացնել այն իրականությունում, որը նա ընտրել է նախորդ փուլում: Օնլայնում գտնվելու ժամանակահատվածը մեծանում է: Այս փուլում մարդը դադարում է օգտագործել համացանցը կյանքի նպատակներին հասնելու համար, տեղի է ունենում այդ նպատակների փոխանցում վիրտուալ իրականություն:

Երրորդ փուլը կայունացնողն է: Այս փուլում մարդը վերադառնում է իրականություն, սակայն դա անում է առանց իր ցանկության: Համացանցից կախվածությունը պահպանվում է, բայց արդեն ոչ ակտիվ ձևով, և ակտիվանում է սթրեսի կամ նոր հետաքրքիր թեմաների ի հայտ գալու ժամանակ [8, էջ. 89-100]:

Բացի հոգեկան և իմացական ոլորտների խանգարումներից՝ համացանցից կախվածությունը վտանգավոր է նաև ֆիզիկական հիվանդությունների առաջացման առումով: Անցկացնելով երկար ժամանակ համակարգչի էկրանի մոտ՝ օգտվողը փչացնում է իր տեսողությունը, հանգեցնում է ողնաշարի և հոդերի ամենատարբեր հիվանդությունների, սիրտ-անոթային պաթոլոգիաների և շատ այլ հիվանդությունների:

Համացանցից կախվածությունը կարող է դառնալ ընտանեկան հարաբերությունների խանգարման պատճառ (ծնողների և երեխաների, ինչպես նաև ամուսինների միջև):

Կախվածությունը համացանցից ծագում է մի շարք պատճառներով և կարող է արտահայտվել ամենատարբեր ձևերով: Այսօր համացանցից կախվածության հարցի ուսումնասիրությամբ զբաղվող հոգեբանների ու հետազոտողների կողմից առանձնացվում է համացանցից կախվածության հինգ հիմնական տեսակ:

- Համացանցից կախվածության ամենատարածված ձևը համարվում է անընդհատ շփման անհրաժեշտությունը: Դրանք կարող են լինել ֆորումները, սոցիալական ցանցերը և ամենատարբեր չաթերը:

- Ինֆորմացիոն ինտերնետ-կախվածություն, կամ ինֆորմացիայի անընդհատ հոսքի անհաղթահարելի պահանջումը:

- Համացանցից կախվածության մյուս տեսակը խաղային կախվածությունն է: Այս դեպքում մարդը նստում է համակարգչի առջև և չի կարողանում կտրվել օնլայն խաղից:

- Ինտերնետից կախվածությունը, որը կապված է օնլայն ազարտային խաղերի հետ, շատ նման է իրական կյանքում կառուցվող ազարտային խաղերին:

- Համացանցից կախվածությունների հիմնական տեսակների շարքը կարելի է լայնացնել՝ ավելացնելով հակերությունը, օնլայն խանութներից իրեր գնելու անհագ ցանկությունը և այլն [5, էջ. 89-100]:

Մագիստրանտները հանդիսանում են համացանցից ամենաշատ օգտվող խումբը, այդ պատճառով էլ հասարակության այս խմբում համացանցից կախվածության ռիսկը ամենամեծն է: Տեղեկատվության անընդհատ պահանջը, բարձր ճանաչողական մոտիվացիան, սոցիալական մեծ ակտիվությունը և ժամանակի պակասն ուսանողների մոտ պայմանավորում են նրանց՝ համացանցից ամենաշատ օգտվող խումբ լինելը [6, էջ. 42-44], [7, էջ. 193]:

Հենվելով տեսական հիմքի վրա՝ մենք իրականացրել ենք ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրանտների մոտ համացանցից կախվածության բացահայտմանն ուղղված հետազոտական աշխատանք: Հետազոտական աշխատանքում ընդգրկվել են ՀՀ պետական կառավարման ակադեմիայի 80 մագիստրանտներ: Հետազոտվողներին առաջարկվել է համացանցից կախվածության մակարդակի ախտորոշման հարցարան, որը մշակվել է Պիտսբուրգի համալսարանի հոգեբանության դոկտոր, պրոֆեսոր Կիմբերլի Յանգի կողմից: Տվյալ հարցարանը բաղկացած է ինտերնետից օգտվելուն վերաբերվող 20 հարցերից, որոնց ուսանողները պատասխանել են բալային սանդղակի օգնությամբ: Հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ հետազոտվողների 30 %-ը համացանցում անցկացնում է մինիմալ ժամանակ և համացանցը նրանց կյանքում ոչ մի դժվարություն չի առաջացնում: Հետազոտվողների 70%-ը հանդիսանում է ինտերնետից միջին օգտվողներ: Նրանք ժամանակ առ ժամանակ կարող են համացանցում ավելի երկար գտնվել, քան անհրաժեշտ է, բայց տիրապետում են իրավիճակին:

Կետտելի 16 գործոնանոց անձնային հարցարանի և ինտերնետից կախվածության տեստի արդյունքների միջև կորելյացիոն վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ համացանցից կախվածությունը բացասական կորելյացիոն կապի մեջ է գտնվում հուզական անկայունություն-հուզական կայունություն ( $r=-0.57$ ), բարոյական նորմատիվություն ( $r=-0.57$ ), հանգստություն-տազնապայնություն ( $r=-0.62$ ), իմպուլսիվություն-ցանկությունների վերահսկում ( $r=-0.67$ ) և դրական կորելյացիոն կապի մեջ է գտնվում վստահելիություն-կասկածամտություն ( $r=0.65$ ) ցուցանիշների հետ: Սա ցույց է տալիս, որ որքան բարձր է ինտերնետից կախվածության մակարդակն մագիստրանտների մոտ, այնքան բարձր է հուզական անկայունությունը, բարոյական նորմատիվությունը, տազնապայնությունը, հույզերի իմպուլսիվությունը, կասկածամտությունը և ավելի թույլ են արտահայտված այնպիսի անձնային առանձնահատկություններ, ինչպիսիք են հուզական կայունությունը, բարոյական նորմատիվությունը, հանգստությունը, ցանկությունների վերահսկողությունն ու մարդկանց վստահելու ունակությունը:

Այսպիսով, տվյալ հետազոտության արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ ինտերնետից կախվածության տարբեր մակարդակներով ուսանողներին հատուկ են բնորոշ խնդիրներ և անձնային առանձնահատկություններ, որոնք ազդեցություն են գործում նրանց վարքի վրա:

Կատարված հետազոտության արդյունքների մշակումը թույլ տվեց նաև բացահայտել, որ հետազոտվողների մեծ մասը (70%) համացանցից օգտվում է ամեն օր: Հետազոտվողների 16%-ը համացանցից օգտվում է յուրաքանչյուր 3 օրը մեկ, իսկ 14%-ը համացանցից օգտվում է շաբաթական մեկ անգամ:

Այսպիսով, կատարված վերլուծական աշխատանքի արդյունքում պարզ է դառնում, որ համացանցից կախվածությունը որոշ առանձնահատկություններով

բնորոշ է մագիստրատուրայում սովորողների համար: Սակայն սահմանային դրսևորումներ չկան և համացանցը ուսանողների համար հանդիսանում է առաջին հերթին տեղեկատվություն ստանալու և մասնագիտական կրթության գործընթացն արդյունավետ դարձնելու միջոց:

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Աղուզումջյան Ռ. Վ., Խաչատրյան Ա. Ռ.**, Կառավարչի հոգեբանական դիմանկարը որպես գործունեության արդյունավետության հիմք/ Տարեգիրք, 2012, Եր., ԵՊՀ հրատ., 2013. - 570 էջ:

2. **Աղուզումջյան Ռ. Վ.**, Մագիստրանտների ուսուցման արդյունավետությունն ապահովող հոգեբանական գործոնների ուսումնասիրում/ Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները IV միջազգային գիտաժողովի նյութեր. – Երևան, Էդիթ Պրինտհրատ., 2013. – 455 էջ:

3. **Խաչատրյան Ա. Ռ.**, Կառավարչի անձի ձևավորումը որպես մասնագիտական կրթության խնդիր/ Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները IV միջազգային գիտաժողովի նյութեր. – Երևան, Էդիթ Պրինտ հրատ., 2013. – 455 էջ:

4. **Бабаева Ю. Д.**, Психологические последствия информатизации / Ю. Д. Бабаева, А. Е. Войскунский // Психологический журнал. 2005, №1.

5. **Вересаева О.**, Психология и интернет на пороге XXI века // Психологическая газета. 1996, № 12.

6. **Залесский П., Спектор М.**, Сколько нас? Какие мы? Портрет российской Интернет-аудитории // Мир Internet. 1999, № 7-8 (34-35).

7. **Лисовский В. Т.**, Социология молодежи: учеб, пособие / СПб., 2006.

8. **Янг К. С.**, Диагноз — Интернет-зависимость // Мир Интернет. 2000, № 2, с. 24-29.

### ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում վերլուծվում է համացանցից կախվածության կապը հոգեբանական առանձնահատկությունների հետ, մագիստրատուրայում սովորողների համար:

### АННОТАЦИЯ

#### ЛОКЯН А., АГУЗУМЦЯН Р. – ИССЛЕДОВАНИЕ ВЗАИМОСВЯЗИ ЗАВИСИМОСТИ ОТ ИНТЕРНЕТА И ЛИЧНОСТНЫХ ПСИХОЛОГИЧЕСКИХ ОСОБЕННОСТЕЙ

В статье анализируется связь зависимости от Интернета и личностных психологических особенностей учащихся в магистратуре.

### SUMMARY

#### LOKYAN A., AGHUZUMTSYAN R. – AN INVESTIGATION ON INTERCONNECTION BETWEEN DEPENDENCE ON INTERNET AND PERSONAL PSYCHOLOGICAL FEATURES

In the article the interconnection between dependence on Internet and personal psychological features is analyzed for magister program students.

ԲԱԺԻՆ IX

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ



\* \* \*

Տարվա ընթացքում շարունակվել են ՀՀ Կենտրոնական բանկի հետ համատեղ **սեմինար-քննարկումները**, որոնց կազմակերպիչը և պատասխանատուն ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի ֆինանսահաշվային ամբիոնի վարիչ Հայկ Մնացականյանն էր:

2013 թ. ապրիլի 16-ին ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետում տեղի ունեցավ հանդիպում ՀՀ Կենտրոնական բանկի ներկայացուցիչների հետ. խորհրդի անդամներ Արմենակ Դարբինյանի և Արթուր Ստեփանյանի, Դրամավարկային քաղաքականության վարչության աշխատակիցներ Վահագն Գրիգորյանի, Շահանե Հարությունյանի, Քնարիկ Այվազյանի և Անձնակազմի կառավարման վարչության պետ Գայանե Խաչատրյանի մասնակցությամբ: Տնտեսագիտության ֆակուլտետից հանդիպմանը մասնակցեցին՝ դեկան Հայկ Սարգսյանը, ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչներ և ուսանողներ: «ՀՀ տնտեսության փաստացի զարգացումները 2012 թ և մակրոտնտեսական կանխատեսումները միջնաժամկետ հատվածում» զեկույցով հանդես եկան ԿԲ Դրամավարկային քաղաքականության վարչության մակրոտնտեսագետներ Շահանե Հարությունյանը ու Քնարիկ Այվազյանը: Հետազոտությունների վերաբերյալ ծավալվեց քննարկում, ՀՀ ԿԲ ներկայացուցիչները պատասխանեցին հարցերին:

2013 թ. նոյեմբերի 26-ին ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետում տեղի ունեցավ սեմինար-քննարկում ՀՀ Կենտրոնական բանկի պատվիրակության հետ, որի կազմում էին խորհրդի անդամ Արմենակ Դարբինյանը, ֆինանսական կայունության և զարգացման վարչության պետ Անդրանիկ Գրիգորյանը, նույն վարչությունում բաժնի պետեր Արտակ Ասատրյանը և Կարինե Համբարյանը, անձնակազմի կառավարման վարչության պետ Գայանե Խաչատրյանը: Հանդիպմանը ներկա էին նաև ֆակուլտետի դեկան Հայկ Սարգսյանը, ամբիոնի վարիչներ, պրոֆեսորադասախոսական կազմի մի շարք ներկայացուցիչներ, ինչպես նաև ֆակուլտետի հարյուրից ավելի ուսանողներ: Կ. Համբարյանը և Ա. Ասատրյանը՝ ՀՀ ԿԲ ներկայացուցիչները ներկայացրեցին գիտական զեկույց «Ֆինանսական կայունության հաշվետվություն» թեմայով: Հանդիպման ընթացքում բարձրացվեցին տարբեր խնդրահարույց հարցեր, ծավալվեց ակտիվ քննարկում:

\* \* \*

2013 թ. հոկտեմբերի 1-ին ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետում տեղի ունեցավ **հանդիպում-քննարկում** ՀՀ Կենտրոնական բանկի պատվիրակության հետ, որի կազմում էին ՀՀ ԿԲ նախագահի տեղակալ Ներսես Երիցյանը, խորհրդի անդամ Աշոտ Մկրտչյանը, ՀՀ ԿԲ աշխատակիցներ: Հանդիպմանը ներկա էին ֆինանսահաշվային ամբիոնի վարիչ Հայկ Մնացականյանը, ֆակուլտետի բարձր կուրսերի և մագիստրատուրայի հարյուրից ավելի ուսանողներ: Հանդիպումը

նվիրած էր 2013 թ. համագործակցության շրջանակներում ՀՀ տնտեսության ներկայիս վիճակի վերաբերյալ քննարկումների կազմակերպմանը, ՀՀ Կենտրոնական բանկի գործառույթների և Իսահակ Իսահակյանի անվան կրթաթոշակի լուսաբանմանը: Քանի որ կրթաթոշակի մրցույթին մասնակցել ցանկացողները պետք է ներկայացնեին հետազոտական աշխատանք, ՀՀ ԿԲ ածնակազմի կառավարման վարչության պետ Գ.Խաչատրյանը ներկայացրեց մասնակցության պայմանները, ինչպես նաև շնորհանդես «Իչպես գրել հետազոտական աշխատանք» թեմայով: Ներկաները լսեցին ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության վարչության մոդելավորման և կանխատեսումների բաժնի մակրոտնտեսագետ Հայկ Ավետիսյանի դասախոսությունը «Արժուքային ճգնաժամերի կանխատեսման վաղաժամ ազդանշանային համակարգերը ՀՀ-ում» թեմայով: Հանդիպման ընթացքում կրկին անգամ ծավալվեց ակտիվ քննարկում կապված ՀՀ արտաքին պահուստների և այլ հարցերի հետ: Ֆակուլտետի դեկան Հայկ Սարգսյանի նախաձեռնությամբ ձեռք բերվեց համաձայնություն հանդիպումներն ու քննարկումները պարբերական դարձնելու մասին:

\* \* \*

Իսահակ Իսահակյանի անվան կրթաթոշակ ստանալու հայտեր կայացրած վեց ուսանողներ 2013 թ. դեկտեմբերի 17-ին հրավիրվեցին ՀՀ Կենտրոնական բանկ՝ պաշտպանելու ներկայացված հետազոտական աշխատանքները: Պաշտպանությանը ներկա էին ՀՀ ԿԲ առաջին նախագահ Իսահակ Իսահակյանը, ԿԲ խորհրդի անդամներ, վարչության պետեր, ԵՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի վարիչը, ինչպես նաև Կենտրոնական բանկի մի շարք մասնագետներ և աշխատակիցներ:

2013 թ. դեկտեմբերի 21-ին տեղի ունեցավ արդյունքների ամփոփում: ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի վեց ուսանողներից երեք հարյուր հազարական դրամ կրթաթոշակ և ՀՀ ԿԲ-ի հետ համագործակցության հնարավորություն ստացան 2 ուսանող:

1. Սարգիս Սաղաքյան՝ «ARCH/GARCH մոդելները՝ որպես ֆինանսական շուկայի հետազոտության գործիքներ»:

2. Արսեն Հաիրյան՝ «Արագ մեկնարկի էֆեկտի համամասնային սահմանափակման հիփոթեզ»

Մյուս չորս ուսանողներն արժանացան հուշանվերների.

1. Րաֆֆի Ալեքսանյան՝ «Հայաստանի տնտեսության տատանումների և կայունության գնահատումը Կլեյնի մոդելի հիման վրա»:

2. Ժիրայր Մխիթարյան՝ «ՀՀ գնաճի և դրամավարկային քաղաքականության մոդելավորման որոշ հարցեր»:

3. Դավիթ Աբգարյան՝ «Համեմատական առավելությունների տեսությունը շատ ապրանքների և շատ երկրների դեպքում»:

4. Աննա Հարությունյան՝ «Ցիրկուլյար միգրացիայի զարգացման ուղիները ՀՀ-ում»:

\* \* \*

**Հայկական տնտեսագիտական միության տարեկան գիտաժողով:**

2013 թ. հոկտեմբերի 19-20-ին Երևանի պետական համալսարանում և Հայաստանի ամերիկյան համալսարանում կայացավ Հայկական տնտեսագիտական միության 2013 թ. գիտաժողովը:

Ձեկույցները և հետազոտությունները վերաբերում էին համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքներին, տնտեսական զարգացման հիմնախնդիրներին Հայաստանում և Հարավային Կովկասում, առևտրի ու տարածաշրջանային համագործակցության միտումներին և այլ ոլորտների: Ներկայացվում էին ինչպես տեսական, այնպես էլ՝ գործնական բնույթի գիտական աշխատություններ:

Գիտաժողովին բացման խոսքով հանդես եկավ ՀՀ վարչապետ Տ. Սարգսյանը, ԵՊՀ պրոռեկտոր Գ. Գևորգյանը, ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Դ. Սարգսյանը և ՀՏՄ 2013 թ. գիտաժողովի նախագահ Դ. Ջուլֆայանը:

Գիտաժողովի բաժանումներն էին.

- Մաթեմատիկական և քանակական մեթոդներ,
- Միկրոէկոնոմիկա, տնտեսության առանձին ճյուղեր,
- Մակրոէկոնոմիկա և դրամավարկային տնտեսագիտություն,
- Միջազգային տնտեսագիտություն,
- Ֆինանսներ ու բանկեր,
- Հանրային տնտեսագիտություն,
- Աշխատանքի տնտեսագիտություն, ժողովրդագրություն, առողջապահություն, կրթություն և սոցիալական վիճակ,
- Տնտեսական աճ, տնտեսական զարգացում և անցումային տնտեսություններ,
- Գյուղատնտեսական, բնական ռեսուրսներ և շրջակա միջավայրի տնտեսագիտություն,
- Տարածաշրջանային զարգացում և ուրբանիզացիա, գյուղական բնակավայրերի զարգացում,

Գիտաժողովի հիմնական զեկուցողն էր Դարոն Աչեմոջլուն, Մասաչուսեթսի Տեխնոլոգիական համալսարանից (առջանց): Գիտաժողովին մասնակցեցին տնտեսագետներ Հայաստանից, ԱՄՆ-ից, Չեխիայից, Վրաստանից, Գերմանիայից և այլ երկրներից:

\* \* \*

Ֆակուլտետում գործում է «Ռեսուրսաօգտագործման արժեչափման ու արդյունավետության» ճյուղային գիտական սեմինար (ղեկ. պրոֆ. Դ. Սարգսյան), որին մասնակցում են ֆակուլտետի դասախոսներ, ասպիրանտներ և մագիստրանտներ, հրավիրված մասնագետներ:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՈՒՆ

### Հայաստանի տնտեսության արդիական խնդիրներ

Մինասյան Ա. - Արտագաղթի նվազեցման և ներգաղթի խրախուսման հրամայականը.....	5
Սարգսյան Հ. - Հողօգտագործման ու ջրօգտագործման ազգային ծրագրի մշակման հարցի շուրջ.....	11
Ավետիսյան Ս., Ծպնեցյան Հ., Ավետիսյան Ա. - ՀՀ պարենային անվտանգության հնարավոր ռիսկերը Մաքսային միությանն անդամակության պայմաններում....	27
Եղոյան Կ., Գաբրիելյան Վ., Ստեփանյան Ա. - ՀՀ հողօգտագործման որոշ հիմնախնդիրներ.....	34
Ղարիբյան Գ., Իսահակյան Ռ. - Միգրացիան արտագաղթի տեսակ և դրա զարգացումները Հայաստանի Հանրապետությունում .....	55
Սարգսյան Հ., Անտոնյան Զ., Խաչատրյան Կ. - ՀՀ բնակչության արտագաղթի հակվածության գործոնային վերլուծություն.....	71
Սարգսյան Հ., Մարկոսյան Ա., Ավագյան Բ. - ՀՀ և ԼՂՀ արտաքին առևտրի վրա տնտեսական միությունների ազդեցությունների հիմնախնդիրները.....	92

### Քաղաքատնտեսություն

Ղահրամանյան Հ. - Կայունության առաջնահերթությունները. դրամավարկային, թե՞ ֆինանսական.....	121
Սարիբեկյան Ա. - Հասարակական-տնտեսական գործընթացների կառավարման արդի հիմնախնդիրները Հայաստանում.....	130
Միքայելյան Մ., Գապոյան Գ. - Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը՝ որպես ՀՀ ամբողջական պահանջարկի աճի գործոն .....	141
Հովսեփյան Վ. - Ներդրումները և տնտեսական աճը Հայաստանում .....	148

### Տնտեսական քաղաքականություն

Ղարբինյան Ա., Աբրահամյան Մ. - Բանկային համակարգի կարգավորման արդի խնդիրները և դրանց լուծման ուղիները.....	159
Աթոյան Կ. - Առողջապահության ֆինանսավորման համակարգը և դրա կատարելագործման ուղիները ՀՀ-ում .....	171
Ղարիբյան Գ., Եղիազարյան Մ., Իսահակյան Ռ. - Բնակչության առողջությունը՝ մարդկային կապիտալի բաղադրամաս. կորուստները եւ կանխման հիմնախնդիրները.....	180
Զնդոյան Շ. - ՀՀ առողջապահական ոլորտի ֆինանսավորման և դրա արդյունավետության գնահատման խնդիրները.....	194
Բոստանջյան Վ., Մուսայելյան Տ. - Հայաստանի Հանրապետության տնտեսության մրցունակության բարձրացման հիմնախնդիրները .....	204

**Միքայելյան Մ., Միքայելյան Գ.** - Տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրական կարգավորման հարցի շուրջ ..... 218

**Հարությունյան Հ.** - Ֆինանսական համահարթեցման հարցի շուրջ ..... 224

**Բոստանջյան Վ., Հովակիմյան Թ., Ղուկասյան Գ.** - Հայաստանի Հանրապետության պետական պարտքի կառավարման հիմնախնդիրները ..... 233

**Սարգսյան Ա.** - ՀՀ ապահովագրական շուկայի զարգացման որոշ հիմնախնդիրները ..... 245

**Ավագյան Ա., Ղամբարյան Գ.** - ՀՀ տնտեսության ճյուղային կառուցվածքի կատարելագործումը որպես մրցունակության բարձրացման նախապայման ..... 252

**Կարապետյան Լ.** - Օտարերկրյա ներդրումների դերը ՀՀ արտահանման խթանման գործում ..... 263

**Մարկոսյան Ա., Սարգսյան Հ., Խաչատրյան Լ.** - Ներքին շուկայի պաշպանության և մրցակցության զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում (պարենամթերքի առանձին տեսակների օրինակով) ..... 273

**Կիրառական տնտեսագիտություն**

**Սարգսյան Հ., Մարկոսյան Ա., Խաչատրյան Լ.** - Պարենի առանձին տեսակների արտադրության, արտահանման և գնագոյացման միտումները համաշխարհային շուկայում ..... 319

**Ղարիբյան Գ., Համբարձումյան Ա.** - Գործազրկությունը եւ մարդկային կապիտալի կորուստները Հայաստանի Հանրապետությունում ..... 354

**Պողոսյան Ս.** - Կապիտալի միջազգային շուկայի արդի զարգացումները ..... 367

**Թորոսյան Թ., Սարգսյան Լ.** - Իրանի Իսլամական Հանրապետությունը տարածաշրանային տնտեսական համակարգում ..... 378

**Գրիգորյան Ս.** - Աշխատանքի շուկան ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում (Ադրբեջանում, Հայաստանում, Վրաստանում) ..... 388

**Հայրապետյան Լ.** - ՀՀ բանկային համակարգի ֆինանսական կայունության հիմնական ցուցանիշների միտումները և կառավարելիությունը ..... 400

**Աբրահամյան Վ.** - Արտադրության վերակառուցման հիմնական ուղղությունները ՀՀ մեքենաշինական կազմակերպություններում ..... 410

**Մաթեմատիկական մեթոդներ**

**Ավետիսյան Ռ., Մխիթարյան Ժ.** - Օպտիմալ տնտեսական աճի երկսեկտոր մոդելը և նրա կիրառությունը ..... 423

**Առաքելյան Ա., Մխիթարյան Ժ.** - Հայաստանի Հանրապետությունում գնաճի ժամանակային շարքի սպեկտրալ վերլուծություն ..... 437

**Սահակյան Մ., Թումանյան Գ.** - Գովազդային տեսահոլովակների բաշխումը ըստ հեռուստաալիքների ..... 443

**Սահակյան Մ., Թումանյան Գ.** - Գովազդարշավի պլանավորում և արդյունավետության գնահատում ..... 450

**Խալաթյան Ա., Կակոսյան Ա.** - Էլեկտրաէներգիայի և բնական գազի սպառման վերլուծությունը էներգետիկ անվանագոթյան տեսանկյունից ..... 459

<b>Մարուխյան Վ., Կակոսյան Ա.</b> - Մատակարարման շղթայի ցանցային մոդելի կառուցումը ՀՀ էլեկտրաէներգետիկ ոլորտում.....	465
<b>Հովհաննիսյան Թ.</b> - Ապագա կառավարիչների և վարձու աշխատողների ձեռնարկատիրական ծիրքի համեմատական վերլուծություն.....	477
<b>Առաքելյան Ա., Մելքոնյան Ն.</b> - Ավտոմեքենաների ապահովագրավճարների և վթարներով պայմանավորված կորուստների փոխկախվածությունը .....	491
<b>Թադևոսյան Հ.</b> - Վարկային պորտֆելում ժամկետանց պարտավորությունների ռիսկայնության գնահատումը մարկոլյան շղթաների մշջոցով.....	497

### Գիտամեթոդական նյութեր

<b>Ղավոյան Ս.</b> - Տարբեր երկրներում իրականացրած վերափոխումների համեմատական արդյունավետության գնահատումը.....	507
<b>Մանուկյան Ս.</b> - Ձանգվածային հարցումներում տնային տնտեսությունների բարեկեցության ինդիկատորների համեմատական ադեկվատության գնահատում.....	521
<b>Ղանթարջյան Ս.</b> - Ռիսկերի նույնականացումն ինովացիոն նախագծերում.....	537
<b>Ղանթարջյան Ս.</b> - Մտավոր սեփականության օբյեկտների առևտրայնացման հիմնախնդիրները ՀՀ-ում.....	542
<b>Սիքայեյան Մ.</b> - Տնտեսագիտական մի քանի եզրույթի օգտագործման մասին .....	547
<b>Զաքոյան Հ.</b> - Իրացվելիության ռիսկի կառավարման մեթոդական հիմնահարցեր .....	553
<b>Խառատյան Ա., Սարգսյան Ս., Հովակիմյան Ա.</b> - Արիեստական նեյրոնային ցանցերի կիրառումը տնտեսա-մաթեմատիկական մոդելավորման մեջ (ՀՀ-ում գնաճի կանխատեսման օրինակով).....	561
<b>Մարտիրոսյան Ա.</b> - Տնտեսվարող սուբյեկտի ռացիոնալ վարքագծի ինստիտուցիոնալ ընկալումը .....	574
<b>Զուրաբյան Կ.</b> - Եկամուտների և ծախսերի հաշվառումն՝ ըստ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության .....	580

### Գիտագործնական ակնարկներ

<b>Մանասերյան Թ.</b> - Տնտեսական դիվանագիտություն. տեսությունից դեպի իրական կյանք .....	597
<b>Ղազարյան Վ.</b> - Հարկային և մաքսային օրենսդրության փոփոխությունների ազդեցությունը բիզնես միջավայրի վրա.....	612
<b>Հայրապետյան Գ., Հայրապետյան Վ.</b> - Իրանի տնտեսության զարգացման մարտահրավերները.....	618
<b>Հայրապետյան Գ., Հայրապետյան Վ.</b> - Տեքստիլ և հագուստի արդյունաբերության զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում .....	624
<b>Թոմիկյան Կ.</b> - Պետական գնումների մասնակիցների ֆինանսական միջոցների գնահատման հիմնախնդիրները ՀՀ-ում .....	630
<b>Ավետիսյան Տ.</b> - Աուդիտը փոքր և միջին ձեռնարկություններում .....	638
<b>Շահբազյան Լ.</b> - Աուդիտորական գործունեության արդի խնդիրները ՀՀ-ում ...	644

**Շիրխանյան Ա.** - ԲՀ հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի գործառույթի ապահովման խնդիրների շուրջ ..... 650

**Միջմասնագիտական ուսումնասիրություններ**

**Խաչատրյան Ն.** – Արժեքային կողմնորոշումների եւ համոզմունքների դերը ԲՀ բնակչության տնտեսական վարքի դիրքորոշումներում ..... 661

**Մանասյան Մ., Մանասյան Զ.** - ԲՀ լեռնային տարածաշրջանների կայուն զգարգացման հիմնահարցերը (Սյունիքի մարզի օրինակով) ..... 671

**Պոտոսյան Ա., Քոլյան Շ.** - ԲՀ գյուղական տարաբնակեցման զարգացման եւ վերափոխման վրա ազդող հիմնական գործոնների տարածաշրջանային տարբերությունները ..... 681

**Կարապետյան Ռ., Ներսիսյան Ս.** - Հայաստան-Սփյուռք-Ռուսաստան տնտեսական կապերը եւ սոցիալական ցանցերի դերը (ռուսերեն) ..... 691

**Ասրիյան Է.** - Կոմերցիոն գովազդը որպես ընտանիքի մոդելի մասին պատկերացումների ձեւավորմանը նպաստող գործոն ..... 701

**Հայրապետյան Դ., Վարոսյան Զ.** - Ռիելթորների մասնագիտական գործունեության էվրիստիկ կարգավորման մեխանիզմները (ռուսերեն) ..... 707

**Լոքյան Ա., Աղուզումցյան Ռ.** - Համացանցից կախվածության եւ անձնայն հոգեբանական առանձնահատկությունների փոխկապվածության ուսումնասիրում ..... 715

**Գիտական կյանք** ..... 721

## СОДЕРЖАНИЕ

### Актуальные вопросы экономики РА

<b>Минасян А.</b> - Императив сокращения эмиграции и стимулирования иммиграции.....	5
<b>Саргсян Г.</b> - К вопросу о разработке национальной программы земле- и водопользования.....	11
<b>Аветисян С., Цпнецян Г., Аветисян А.</b> - Возможные риски для продовольственной безопасности РА в условиях вступления в Таможенный союз .....	27
<b>Егоян К., Габриелян В., Степанян А.</b> - Некоторые проблемы землепользования в РА.....	34
<b>Гарибян Г., Исаакян Р.</b> - Эмиграция как тип миграции и её тенденции в РА.....	55
<b>Саркисян А.Л., Антонян К.А., Хачатрян К.Г.</b> - Факторный анализ миграционной склонности населения РА .....	71
<b>Саргсян Г., Маркосян А., Авакян Б.</b> - Проблемы влияния экономичвских союзов на внешнюю торговлю РА и НКР .....	92

### Политическая экономия

<b>Каграманян А.</b> - Кредитно-денежная или финансовая стабильность?.....	121
<b>Сарибекян А.</b> - Актуальные проблемы управления общественно-экономическими процессами в Армении .....	130
<b>Микаелян М., Гспоян Г.</b> - Развитие малого и среднего предпринимательства как фактор роста совокупного спроса в РА.....	141
<b>Овсепян В.</b> - Инвестиции и экономический рост в РА .....	148

### Экономическая политика

<b>Дарбинян А., Абрамян М.</b> - Актуальные вопросы регулирования банковской системы и направления их решения.....	159
<b>Атоян К.</b> - Система финансирования здравоохранения и пути её совершенствования в РА .....	171
<b>Гарибян Г., Егиазарян М., Исаакян Р.</b> - Здоровье населения как компонент человеческого капитала: потери и проблемы их предотвращения.....	180
<b>Джндоян Ш.</b> - Проблемы финансирования здравоохранения РА и оценки его эффективности.....	194
<b>Бостанджян В., Мусаелян Т.</b> - Проблемы повышения конкурентоспособности экономики Республики Армения .....	204
<b>Микаелян М., Микаелян Г.</b> - К вопросу о законодательном регулировании защиты экономической конкуренции.....	218

<b>Արտյունյան Օ.</b> - К вопросу о финансовом выравнивании.....	224
<b>Бостанджян В., Овакимян Т., Гукасян Г.</b> - Проблемы управления государственным долгом Республики Армения.....	233
<b>Саргсян А.</b> - Некоторые проблемы развития страхового рынка РА.....	245
<b>Авагян А., Гамбарян Г.</b> - Совершенствование отраслевой структуры экономики РА как предпосылка повышения конкурентоспособности.....	252
<b>Карапетян Л.</b> - Роль иностранных инвестиций в стимулировании экспорта РА.....	263
<b>Маркосян А., Саргсян Г., Хачатрян Л.</b> - Вопросы о проблемах защиты и развитии конкуренции в РА (на примере определенных типов продовольственных товаров).....	273

### Прикладная экономика

<b>Саргсян Г., Маркосян А., Хачатрян Л.</b> - Тенденции производства, экспорта и ценообразования отдельных видов продовольственных товаров на мировом рынке.....	319
<b>Гарибян Г., Амбарцумян А.</b> - Занятость, безработица и потери человеческого капитала в РА.....	354
<b>Погосян С.</b> - Современные тенденции развития международного рынка капитала.....	367
<b>Торосян Т., Саргсян Л.</b> - Исламская Республика Иран в региональной экономической системе.....	378
<b>Григорян М.</b> - Рынок труда в условиях финансово-экономического кризиса (Азербайджан, Армения, Грузия).....	388
<b>Айрапетян Л.</b> - Тенденции основных показателей финансовой устойчивости и управляемость банковской системы РА.....	400
<b>Абрамян В.</b> - Основные направления реорганизации производства на машиностроительных предприятиях РА.....	410

### Математические методы и модели

<b>Аветисян Р., Мхитарян Ж.</b> - Двухсекторная модель оптимального экономического роста и её приложение.....	423
<b>Аракелян А., Мхитарян Ж.</b> - Спектральный анализ временного ряда инфляции в РА.....	437
<b>Саакян М., Туманян Г.</b> - Задача распределения рекламных телероликов по каналам.....	443
<b>Саакян М., Туманян Г.</b> - Задача планирования и оценки эффективности рекламной кампании.....	450
<b>Халатян А., Какосян А.</b> - Анализ потребления электроэнергии и природного газа с точки зрения энергетической безопасности.....	459
<b>Марухян В., Какосян А.</b> - Моделирование цепи поставок электроэнергии в РА.....	465
<b>Оганесян Т.</b> - Сравнительный анализ предпринимательской склонности будущих менеджеров и наёмных работников.....	477

<b>Արակեյան Ա., Մելկոնյան Ն.</b> - Взаимосвязь автомобильных страховых премий и потерь, вызванных авариями .....	491
<b>Թադեвоսյան Գ.</b> - Оценка рискованности просроченных обязательств в кредитном портфеле посредством марковских цепей .....	497

### Научно-методические материалы

<b>Դավոյան Տ.</b> - Оценка сравнительной эффективности реформ в различных странах.....	507
<b>Մանուկյան Տ.Ա.</b> - Оценка сравнительной адекватности индикаторов оценки благосостояния в массовых опросах .....	521
<b>Կանտարձյան Տ.</b> - Идентификация рисков в инновационных проектах.....	537
<b>Կանտարձյան Տ.</b> - Проблемы коммерциализации объектов интеллектуальной собственности в РА.....	542
<b>Միկաելյան Մ.</b> - Об использовании некоторых экономических терминов .....	547
<b>Զակոյան Ա.</b> - Методические проблемы управления риском ликвидности .....	553
<b>Ջարատյան Ա., Տարկիսյան Տ., Օսակիմյան Ա.</b> - Применение искусственных нейронных сетей в экономико-математическом моделировании (на примере прогнозирования инфляции в РА) .....	561
<b>Մարտիրոսյան Ա.</b> - Институциональное восприятие рационального поведения хозяйствующего субъекта.....	574
<b>Զուրաբյան Կ.Ա.</b> - Учёт доходов и расходов в соответствии со сводным отчётом о финансовых результатах.....	580

### Научно-практические обзоры

<b>Մանասերյան Թ.</b> - Экономическая дипломатия: от теории к реальной жизни .....	597
<b>Կазарյան Վ.</b> - Влияние изменений в налоговом и таможенном законодательстве на бизнес-среду .....	612
<b>Այրապետյան Գ., Այրապետյան Վ.</b> - Вызовы экономического развития Ирана .....	618
<b>Այրապետյան Գ., Այրապետյան Վ.</b> - Проблемы развития производства текстиля и одежды в РА .....	624
<b>Թոմիկյան Կ. Օ.</b> - Проблемы оценки финансовых средств участников государственных закупок в РА.....	630
<b>Ավետիսյան Թ.</b> - Аудит на малых и средних предприятиях .....	638
<b>Տախաբազյան Լ.</b> - Актуальные проблемы аудиторской деятельности РА.....	644
<b>Տիրխանյան Ա.</b> - О проблемах системы внутреннего аудита в организациях государственного сектора РА .....	650

**Междисциплинарные исследования**

<b>Хачатрян Н.</b> - Роль ценностных ориентаций и убеждений в установках экономического поведения населения РА.....	661
<b>Манасян М., Манасян А.</b> - Проблемы устойчивого регионального развития горных регионов РА (на примере Сюника).....	671
<b>Подосян А., Колян Ш.</b> - Региональные различия основных факторов развития и преобразования сельского расселения РА.....	681
<b>Карапетян Р., Нерсисян С.</b> - Экономические взаимосвязи Армения – диаспора в России и роль социальных сетей (на рус. яз.).....	691
<b>Асриян Э.</b> - Коммерческая реклама как фактор, способствующий формированию первичных представлений о модели семьи.....	701
<b>Айрапетян Д., Варосян Г.</b> - Эвристическая регуляция профессиональной деятельности риэлторов (на рус. яз.).....	707
<b>Ломян А., Агузумцян Р.</b> - Исследование взаимосвязи зависимости от Интернета и личностных психологических особенностей.....	715
<b>Научная жизнь</b> .....	721

## CONTENTS

### Current issues of RA economy

<b>Minasyan A.</b> - The priority of emigration reduction and immigration stimulation .....	5
<b>Sargsyan H.</b> - On the question of land and water usage national program elaboration .....	11
<b>Avetisyan S., Tspnetsyan H., Avetisyan A.</b> - Possible risks of RA food security by membership in Custom Union .....	27
<b>Yeghoyan K., Gabrielyan V., Stepanyan A.</b> - Several problems of land usage in RA .....	34
<b>Gharibyan G., Isahakyan R.</b> - Emigration as a type of migration and its development trends in RA.....	55
<b>Sargsyan H.L., Antonyan K.A., Khachatryan K.G.</b> - Factor analysis of migration propensity of RA population.....	71
<b>Sargsyan H., Markosyan A., Avagyan B.</b> - Issues on the influence of economic unions on the external trade of RA and NKR .....	92

### Political economy

<b>Ghahramanian H.</b> - Monetary or financial stability? .....	121
<b>Saribekyan A.</b> - Current problems of social-economic processes management in Armenia.....	130
<b>Mikayelyan M., Gspoyan G.</b> - Development of small and medium enterprises as a factor of aggregate demand growth in RA .....	141
<b>Hovsepyan V.</b> - Investments and economic growth in RA.....	148

### Economic policy

<b>Darbinyan A., Abrahamyan M.</b> - Current problems of banking regulation and their solution directions .....	159
<b>Atoyan K.</b> - The system of health care financing and ways of its improvement .....	171
<b>G. Gharibyan, M.Eghiazaryan, R. Isahakyan</b> - Public health as a component of human capital: losses and problems of their prevention .....	180
<b>Jndoyan Sh.</b> - Some issues of health system financing and its effectiveness estimation in RA.....	194
<b>Bostanjyan V., Musaelyan T.</b> - The problems of the Republic of Armenia economy competitiveness improvement.....	204
<b>Mikayelyan M., Mikayelyan G.</b> - On the question of the legislative regulation of the economic competition protection .....	218
<b>Harutyunyan H.</b> - On the question of financial alignment.....	224

<b>Bostanjyan V., Hovakimyan T., Gukasyan G.</b> - The problems of public debt management of the Republic of Armenia .....	233
<b>Sargsian A.</b> - Some problems of RA insurance market development .....	245
<b>Avagian A., Ghambarian G.</b> - The improvement of RA economy industrial structure as the precondition of competitiveness rising .....	252
<b>Karapetyan L.</b> - The role of foreign investments in export promotion in RA .....	263
<b>A. Markosyan, H. Sargsyan L. Khachatryan</b> -Issues concerning internal market defense and competition development in RA (by the example of specific kinds of food).....	273

### Applied economics

<b>H. Sargsyan, A. Markosyan, L. Khachatryan</b> - Current situation and development trends on world food market.....	319
<b>Gharibyan G., Hambardzumian A.</b> - Employment, unemployment and losses of the human capital in RA .....	354
<b>Poghosyan S.</b> - The recent developments of the international capital market....	367
<b>Torosyan T., Sargsyan L.</b> - Islamic Republic of Iran in the regional economic system .....	378
<b>Grigoryan M.</b> - Labor market during the Financial-economic Crisis (in Armenia, Azerbaijan, Georgia) .....	388
<b>Hayrapetyan L.</b> - Tendencies of the financial stability indicators of Armenian banking system.....	400
<b>Abrahamyan V.</b> - The main directions of machine-tool organizations reconstruction in RA.....	410

### Mathematical methods and models

<b>Avetisyan R., Mkhitarian Zh.</b> - The two-sector model of optimal economic growth and its application .....	423
<b>Arakelyan A., Mkhitarian Zh.</b> - Spectral analysis of inflation time series in RA.....	437
<b>Sahakyan M., Tumanyan G.</b> - Allocation of TV commercials between channels .....	443
<b>Sahakyan M., Tumanyan G.</b> - Advertising campaign planning and its effectiveness estimation.....	450
<b>Khalatyan A., Kakosyan A.</b> - Electricity and natural gas consumption analysis from energy security viewpoint .....	459
<b>Marukhyan V., Kakosyan A.</b> - Modelling of electricity supply chain network in RA.....	465
<b>Hovhannisyan T.</b> - The comparative analysis of future managers' and wage employees' entrepreneurial inclination .....	477
<b>Arakelyan A., Melkonyan N.</b> - The interconnection between car insurance premiums and crash conditioned losses .....	491
<b>Tadevosyan H.</b> - In loan portfolio overdue loans risk modeling with Markov Chain .....	497

### Scientific-methodical materials

<b>Davoyan S.</b> - The Assessment of The Comparative Efficiency of The Reforms for Different Countries .....	507
<b>Manukyan S.</b> - Evaluation of comparative adequacy of households' surveys' welfare indicators .....	521
<b>Khantardjyan S.</b> - Identifcaton of risk in innovative projects .....	537
<b>Khantardjyan S.</b> - Problems intellectual property commercialization in RA .....	542
<b>Mikaelyan M.</b> - On the usage of some economic terminology .....	547
<b>Zakoyan H.</b> - Methodical issues of liquidity risk management .....	553
<b>Kharatyan A., Sargsyan S., Hovakimyan A.</b> - The usage of Artificial Neural Networks in Economic-Mathematical Modeling (on the example of inflation forecasting in RA) .....	561
<b>Martirosyan A.</b> - Institutional perception of rational behavior of the economic entity .....	574
<b>Zurabyan K.</b> - Income and expense accounting according to statement of comprehensive income .....	580

### Scientific-practical surveys

<b>Manasserian T.</b> - Economic diplomacy: from theory to real life .....	597
<b>Ghazaryan V.</b> - The influence of tax and custom system changes on business environment .....	612
<b>Hayrapetyan G., Hayrapetyan V.</b> - Economic Development's Challenges of Iran .....	618
<b>Hayrapetyan G., Hayrapetyan V.</b> - The problems of the Textile and Clothing Sector's Development in RA .....	624
<b>Tomikyan K.</b> - Issues of financial funds evaluation of the public procurement participants in RA .....	630
<b>Avetisyan T.</b> - The Audit in Small and Medium Entreprisis .....	638
<b>Shahbazyan L.</b> - Actual Problems of Audit in RA .....	644
<b>Shirkhanyan A.</b> - On the problems of RA public sector organizations internal audit system .....	650

### Interdisciplinary researches

<b>Khachatryan N.</b> - The role of value orientations and beliefs in RA population economic behavior attitudes .....	661
<b>Manasyan M., Manasyan H.</b> - The problems of sustainable development of mountainous regions of RA (on the example of Syunil) .....	671
<b>Potosyan A., Qolyan Sh.</b> - The regional differences of main factors affecting RA rural settlements development and transformation .....	681
<b>Karapetyan R., Nersisyan S.</b> - Economic connections between Armenia and diaspora in Russia and the role of social networks (in Russian) .....	691
<b>Asriyan E.</b> - Commercial advertising as a factor contributing to formation of family model primary concepts .....	701

---

<b>Hayrapetyan D., Varosyan H.</b> - Heuristic mechanisms of realtors professional activity regulation (in Russian) .....	707
<b>Lokyan A., Aghuzumtsyan R.</b> - An investigation on interconnection between dependence on Internet and personal psychological features .....	715
<b>Scientific life</b> .....	721

# ՏԱՐԵԳԻՐՔ 2013

Համակարգչային ձևավորումը՝ Ա. Աղուզունցյանի  
Կ. Չալաբյանի  
Տեխ. խմբագրումը՝ Լ. Հովհաննիսյանի

Չափսը՝ 70x100 1/16: Տպ. մամուլը 46:  
Տպաքանակ՝ 200:

ԵՊՀ հրատարակչություն

---

ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1

